



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Ռ Ա Փ Ա Յ Ե Լ
Պ Ա Տ Կ Ա Ն Յ Ա Ն

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1980

«... ազատությունը երբեք չի շնորհվի. նա կամ կիսվի բաշարյունով, կամ կվաստակվի շանն ու ճիգով: Շնորհած ազատությունը, ինչպես և ժառանգություն ստացած փողը, շատ վատ գնահատվում է և շատ շուտ կորցվում է...»:

Ռ. Պատկանյան

ՌԱՓՈՒՅՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

Պատկանյան, Ռ.:

Պ 292 Երկեր— Եր.: Սովետ. գրող, 1980.— 664 էջ

Ժողովածուում գետեղված են հեղինակի չափածո և գեղարվեստական արձակ գործերը: Առաջին բաժնում «Արաբի արտասուրը», «Մայրախաղախում կրթած հայ երիտասարդ», «Մայրախաղախում կրթած հայ աղջիկ» հանրահայտ բանաստեղծություններից բացի, գետեղված են մյուս հայրենասիրական, ազգային-ազատագրական, սիրային և մանկական բանաստեղծություններն ու պեմները:

Արձակ բաժնում տեղ են գտել մեծ ժողովրդականություն վայելող «Փառասեռ», «Ծա նշանած էի» և այլ վիպակներ. ինչպես նաև նոր-նախիջևանյան պատմվածքները, որոնք հայ երգիչական գրականության մեջ ունեն իրենց ուրույն տեղը:

Ժողովածուն ամփոփվում է հեղինակի հոդվածներով ու նամակներով:

Պ 4702080100 80

Ար 1

796 (01) 80

ԳՄԴ 84.21

«Նա, որ ժամանակի միակ ժողովրդականացած բնաբեզակն էր, որի «Մայր Արաբի...»-ն երգվում էր, «Բողոք առ Երևան»-ը արտաստեղծում բեմերի վրա ու տներում ամենուրեք, ուր կար միայն մի բռուն հայություն, որի անունը երիտասարդության բերնում ազգային պարծանքի առաջիկա էր... իր արձակ գրվածքներով մի Զահարան Սվիֆա էր: Նույնչափ բունավար, կծու և անողոք, բեռն ոչ անգրիական երգիծարանի շափ հանճարեղ!»:

«Կյանքի բռնից» մեմուարների՝ Ռափայել Պատկանյանին նվիրված հատվածում հստակ արտահայտվում է Շիրվանգաղեի ստոր վերաբերմունքը նրա անձի հանդեպ: Ոստի բնավ էլ չափազանցության արդյունք չէր բարձր գնահատությունը. Պատկանյանի անունը իրոք «...ղորդում էր Բաֆֆիի փայլուն անվանը հավասար»: Բայց Շիրվանգաղեն սխալվում էր նշելով, թե նրա անունը իբրև բանաստեղծ չիացել է ասպարեզից: Պատկանյանի գրական ժառանգությունը դարձել էր հակապատմական աղավաղումների ասպարեզ: Այսուհանդերձ, ժամանակի արդար դատի առաջ այն հաստատել է իր նշմարիտ տեղն ու նշանակությունը հայ գրականության դարավար հոլովություն:

1

Ռափայել Պատկանյանը ծնվել է նոր-նախիջևանում, 1830 թվականի նոյեմբերի 8-ին (հին տամարով): Սկզբնական կրթությունն ստացել է հոր՝ Գաբրիել Պատկանյանի (1802—1889) դպրոցում: Պատկանյանների տոհմը նշանակալի հետև է բազել հայ

1 Շիրվանգաղե, երկերի ժողովածու, հ. 8. էջ 184, 186, 191, 193:

մշակույթի պատմության մեջ: Ռափայելի պապը՝ Սերովբե վարժապետը հայտնի մանկավարժ ու բանաստեղծ էր, տիրապետում էր մի քանի լեզուների: Նրա հորը (հրապարակախոս, պատմաբան, բանասեր, գրող, քարգմանիչ) աշակերտել է նաև Միֆայել Նալբանդյանը: Հորեղբայրը՝ Միֆայել Պատկանյանը (1810—1895) համարվում է կենցաղային կոմեդիայի հիմնադիրը հայ գրականության մեջ, մյուս հորեղբայրը՝ Տեր-Պետրոս Պատկանյանը հայտնի մանկավարժ էր, սրա որդին՝ Քերովբե Պատկանյանը (մտք կողմից Հարություն Ալամդարյանի թոռը) ակնաավոր հայագետ էր, բանաստեղծ, քարգմանիչ, եղբայրը՝ Հովհաննեսը նկարիչ էր: Ահա այս հիանալի տոհմի խոշորագույն ներկայացուցիչը՝ Ռափայելը, 1843-ին մեկնեց Մոսկվա, Լազարյան նեմարանում ուսուցիչ շարունակելու: Նրա վրա անջնջելի տպավորություն է թողնում հատկապես Մկրտիչ էմինի կերպարը (տե՛ս «Մանկական հիշողություններ պ. Մ. էմինի մասին»): 1850-ին Ռափայելը գնաց Քիֆլիս: Ներսիսյան դպրոցում հայրը տեսուչ էր նշանակված, իսկ ինքը ուսուցիչ լեզու էր դասավանդում, մասնակցում հոր հրատարակած «Արարատ» շաբաթաթերթի աշխատանքներին, տպագրելով իր առաջին բանաստեղծությունները: 1851-ին նա Գորպատում է, հայ ուսանողների շրջանում, 1852—55-ին Մոսկվայում, ուր կազմակերպում է Գամառ-Քաթիպա գրական ընկերությունը (Գամառ-Քաթիպա՝ կազմված է հիմնադիր անդամների անունների ու ազգանունների սկզբնատառերից. Գ. Քանանյան, Մ. Քիմուրյան, Ռ. Պատկանյան): 1855-ին Պատկանյանը մեկնեց Պետերբուրգ, ուր 1860-ին ավարտեց Համալսարանի Արևելյան բաժինը՝ արևելյան լեզուների թեկնածուի աստիճանով: Այստեղ էլ հրատարակվեցին «Գամառ-Քաթիպայի արձակ ու շափաբերական աշխատությունները», հինգ տետր մինչև 1857-ը: Ընկերության ցրվելուց հետո Գամառ-Քաթիպան դարձավ Պատկանյանի ամենահայտնի գրական ծածկանունը: Այդ տարիներին նա հրատարակում է «Ազգային/երգարան հայոց», «Նոր այբբենարան հայոց» (երկուսն էլ 1856-ին, հետագայում տպագրել է «Մայրենի բարբառ», 1881-ին և «Այբբենարան հնչական ոճով», 1884-ին, դասագրքերը), իր քարգմանած «Ռոբինզոն Կրուզոն» (1857), «Եզովպոսի առակները» (1859), «Պատմություն Մեծին Պետրոսի» աշխատությունը (1863):

1863-ին Պատկանյանը հիմնեց «Հյուսիս» շաբաթաթերթը, ուր յույս տեսան նրա մի քանի արձակ երկեր: Մի տարի անց հրատարակվեց նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն: 1867-ին Պատկանյանը վերադարձավ Նոր-Նախիջևան, ուր կնոջ՝ Օլգա Ամիդիի (Պետերբուրգի Համալսարանի արաբերենի դասախոս Ամզեցի Հովհաննես Մելիք-Չարմյանի դուստրը) հետ պանսիոն բացեց (գործել է մինչև 1873-ը): Այնուհետև, մինչև 1879 թ. նա տեղի թեմական դպրոցում մայրենի լեզվի ուսուցիչ էր: 1879-ին նա նշանակվեց Նոր-Նախիջևանի Արվեստական դպրոցի տեսուչ, մինչև կյանքի վերջը մնալով այդ պաշտոնում:

Պատկանյանը բազմաժանր գրող է: Նրա հարուստ գրական ժառանգության մեջ գեղարվեստական արժեքով իրար շեն զիջում բանաստեղծություններն ու պոեմները, պատմվածքներն ու պատկերները, համակներն ու հողվածները, վիպակներն ու սիեսները: Չեն գտնված «Փամեղչիֆի աղջիկ» և «Նորհրդավոր» վեպերը (որոնք նա հիշատակում է 1892 թ. մարտի 6-ին Վարվառե Քանանյանին ուղղված նամակում, ցավով հայտնելով նաև ձեռագիր մի շարք բանաստեղծությունների կորուստը): Լայն ժողովրդականություն վայելող, գրական վիթխարի ժառանգություն ստեղծած, իր ամբողջ կյանքը ազգին անմնացորդ նվիրած գրողը կյանքի մայրամուտից առաջ գրում էր. «Տկարությունս օրե օր սաստկանում է. անգույք մանր արագ ֆայլերով մոտենում է. այդ ես պարզ տեսնում եմ. մահը չի սարսափեցնում ինձ. սարսափեցնում է ապագա որբիկներիս անմխիթար վիճակը, մա՛նավանդ 11-ամյա Մարիամ ֆանֆարավոր աղջկասս վիճակը, որի վրա նայելով՝ ավելի և ավելի կատաղում է տկարությունս...»: Մի այլ նամակում նա հայտնում էր, որ մեկնում է բուժվելու. «...գրպանուս ունենալով 18 մանեթ, իսկ ուրբ հոգին բաղկացած ընտանիքիս բողնում եմ միայն 12 մանեթ... Չգիտեմ ի՞նչ հնարով պիտի ազատվին ռոդոմելիները սովամահե, եթե մի աստվածային հրաշք չհանդիպի նոցա»: «Մշակում» այս աոիքով տպագրվեց Գր. Չալխուշյանի նամակը. «Հիվանդ, հոգնած աշխարհի ամենօրյա կովից, լվված... հուսահատ, նա գնաց բժշկվելու, բողնելով այստեղ մեծ գերդաստան, նյութական ամենակարոտ վիճակի մեջ, որից երբեք ազատ եղած չէր նա, որ երգել էր ուրիշների ցավերն ու վշտերը իր ցավերն ու վշտերը թափեցնելով...»: Լարված աշխատանքը, պայքարը, կյանքի դժվարությունները ֆայլայել էին նրա առող-

չափանք: Ես առաջարկում եմ բախտատու: 1902 թվականի օգոստոսի 22-ին (հինգ ամսարով) Ես վարձարանվեց կաթվածից:

2

...«առջևդ կա երկու նանապարհ. մեկն է՝ դեպի ֆու ահն, որի վերջը կորուստ է հոգով և մարմնով, մյուսն է՝ դեպի ազգը, որի վերջը ամենիդ հայտնի է. ազգային փառք, պարծանք ամեն մի խելով հայի, պարծանք մարդկության, և Աստված վերեն պիտի ասե՝ «Իս է որդին իմ սիրելի, ընդ որ հանեցավ»: Այս խոսքերը իդեալ ունեցող մարդու խոսքեր են, արվեստագետի, ֆաղաֆաջու խոսքեր, որը գործունեության մեծ ծրագիր ունեն և իր ծրագիրն իրականացնելու, ազգության ազատագրության գաղափարական առաջնորդ դառնալու կամք ու կորով: Իսկ ամեն ինչից առաջ նա իր ժողովրդի լավագույն իդեալներն նվիրյալ գիտնոր էր, Եղիշի, Աբովյանի ավանգաձ պայքարի ուղու անընկճելի ուղևոր, ինչպես իր սերնդակից նախանդյանը, ինչպես Բաֆֆին: Նրանք փոխեց գաղափարական կերպով մի նմանություններով ու տարբերություններով հանդերձ հերոսական կերպարներ են, որոնց անունն ամեն անգամ հիշելիս ասվում է ավելին, քան կարող էր ասել աստված: Երեմն էլ ընդգծում էին, որ 19-րդ դարը հայության «մեկ ամբողջ ազգ կազմելու» գար է և հայ ազգը «այստանետև ունի ապագա»:

19-րդ դարի ուղիղ կեսին տասնիննամյա Ռաֆայելը գրում է «Չարմայր նահապետի մահը» պոեմը: Տրոյական պատերազմում ընկած լեզեդար գինձորի հերոսական նահատակության բանաստեղծական պատկերումը վեոական և որոշիչ փաստ էր իր առաջին փայլուն էջերն ստեղծող պատանու համար: Իսկ նաև առաջին երգումն էր «կարոտյալ Հայրենիքին», մի նոր վավերացումը՝ «Մահ ի՞նչացյալ անմահություն է...» պատգամի: Հերոսական նահատակության գաղափարը հայ ժողովրդի պատմական հազարամյա ծանր փորձությամբ ձեռք բերված, տոկալու, գոյատևելու, սեփական հոգևոր թոշիկները իրագործելու, ազգ լինելու՝ ազատության անկասկածելի իրափունք ունենալու գաղափար էր: Պատկանյանի ստեղծագործության մեջ դա դրսևորվում է ուղիղ և սուր. նրա տողերի մեջ գեներալ շառաչ, հաստա հարված կա:

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարները, հայության նվիրական տենչուն ստանալուց հետո Պատկանյանը աշխարհ

առաջ կանգ չի առնում, խոսքը նետի նման ուղղվում է նշանակետին: Եսթետիկական ներբայությունների, լիրիկական հարգաբանեցումների, բանաստեղծական խոսքի անբերի դաշնավորման համար նատուկ մտահոգություն չունի բանաստեղծը, ֆանգի ժամանակը չի սպասում, իրադարձությունները կարող են հուժկու, անմիջական, աննետաձգելի արձագանքի: Պատկանյանի հայտնի ծրագրային ստեղծագործության՝ «Երկու բանաստեղծի» մեջ, ներկայացվում է անիծյալ «պովետրին» կերպարը, որին շատ բնորոշ է «նախ ֆաղաֆաջի ապա բանաստեղծ» սկզբունքը: Սա, որ վայելիքներ է, գովեստների «ֆաղգրախոս պովետրի» հակապատկերն է, ասես ուղղակի իրեն՝ Պատկանյան-բանաստեղծի կերպարն է խաացնում.

Որին բարձր ստեղծող մեծ
Մարդկության ցեղի անվանեցին ցեղ:
Դա՛ն էր վիճակը. դա՛ն էր կոչումը
Այդ տարաբախտին. դրո՛ւմ՝ ո՛չ տունը
Ուներ նա հանգիստ. ծրերդյան օրից
Միտ մի նշան չի տեսավ միտից:
Կգում-մահաբույն սաացին մարդիկ,
Ճարտար իտովածի-չարության գառի՛ն,
Եվ այն հաննարը, որ նորա բաժին
Տվավ ի վերուստ, — մարդիկ շահ արին
Թողել ցեխի մեջ իրանց վատ կենաց,
Որի մեջ ինձյան էին բարխված:

Իհարկե ինքը Պատկանյանը վաղ շրջանի պոեզիայում երգեց վարդ և բլրուլ, կյանք և մահ, ունայնություն և վայելք, սեր և գիհի, քեֆ, ուրախություն, անակրեոնյան տաղեր ստեղծեց, բայց երկար շտեյց այդ տրամադրությունը, եթե շնորհալի նաև, անակրեոնյան տաղերի հետ արդեն լույս աշխարհ էին գալիս սուր ֆաղափարական բանաստեղծություններ, անիծյալ պոետի կծու խոսքեր: «Շուշան, մեխակ ու նունուֆար» աղջկա («Հայ աղջիկ»), «Ինձ պատվիրեց Անակրեոն լինել յուր ընտիր ժառանգ» («Իմ բնարին»), «Ա՛յ իմ վարդին» («Վաղը բացվել ա») երգերի կողմին հայտնվեցին «Արաֆսի արտասուրը», «Հայ և հայություն», «Օրոր Հայաստանի»: Մրանից անկախ, «անակրեոնյան» երգերը ինքնաներկապակ-հեղուներստական արվեստի խաղեր չէին, այլ, ըստ էության, դարավոր աշխարհիկ այն ոգու արձագանքները, որոնք վերջնականորեն պետք է ֆանգիին կրոնական միջնադարյան մտայնության կապանքները: Իսկ սա երկրորդական խնդիր չէ:

եկեղեցու հաշրերի ներշնչած բմրուքունը ազգակործան մի երե-
վույթ էր, որի դեմ բանաստեղծն ընդվզեց դեռևս 1856 թվականին.

Շուտ շուտ զրբկե փարոզիչներ
Սևագլուխ, մրբավոր,
Որ հորդորեն ապրել նոցա,
Քեկ սարուկ, բայց անդորր:

«Օրորվ Հայաստանին» ուղղված էր ոչ միայն միջնադարյան
բմրության, եկեղեցու, այլև ազգային սնապարծության, անցյալի
փառքերի փոշիների տակ ներկան բաղելու դեմ: Նոյան տապանի
լեզենդը, հնօրյա հերոսների սխրանքը, անցյալի մշակույթի գան-
ձերը և կուշտ ուտելն ու ճեղք, նոյս ապրելն ու ինքնագոհ բթու-
քյունը Պատկանյանը համադրում է անողոք հեզնանքով, որը արդ-
յուն է խոր անհանգստության՝ ազգության պատմական բախտի
հանդեպ: Այդ պատմությունը նա չի հյուսում միայն անցյալից,
անցյալ-ներկա-ապագա ժամանակների շղթան է տալիս պատմու-
քյան նշմարիտ պատկերն ու ազգության հարատևման մեծ ու ծա-
նր խնդիրները: Մեծ ու ծանր. այսօրվա ընթերցողը թող չմտածի
երբեք, թե տարված իր ողորմանտիկական երազներով, իր պաթոսին
հլու, նա ինչ-որ տեղ, ինչ-որ շափով կորցնում էր ռեալիզմու-
քյան զգացողությունը, պայքարի էլնելու կոչեր անում, չմտածե-
լով հետևանքների մասին: Գործի մեծության հետ նա լիովին գի-
տակցում էր նաև գործի ծանրությունը: Համոզվելու համար բա-
վական է կարդալ Մարիամ Ափիմյանին ուղղված նամակը 1891,
հունվարի 31. «...իրաց հանգամանքը այնպես ծախողակի է դր-
ված, որ մեզ, բացի ազգովին կորստեն, ոչինչ ուրիշ էլ չի մնում:
Առջևից 300000 մարգակիրք և սպառազինված բշնամի, ետևից
200000, իսկ նոցա մեջ միայն 25—50 հազար անկիրք, անփորձ,
գծած զինվորած անձնագոհ հայ պատերազմողներ... եթե լոնեք,
մեր բարոյական, թեև դանդաղ մահը անխուսափելի է. եթե սոփի
կանգնենք ազգովին պիտի մորթվինք»: Եզրակացությունը միակ
հնարավորն էր. թող ինքը ազգը օրհասական վտանգի մեջ որոնի
և գտնի փրկության նախապահը: Արդ, բանաստեղծը պայքարի
կոչ էր անում, լրջորեն կշռելով հանգամանքները: Պատմությունը
ցույց էր տվել, որ խոհեմությունը նորանոր դժբախտությունների,
աղբերգությունների պատճառ է եղել: Միաժամանակ անհույս էր
թվում օրե է դիմադրություն: Կա՛մ զոհվել անմոռնչ ու ծեղաչո՛ւ,
հաշտվելով ստրուկից էլ վատ վիճակի հետ, կա՛մ զոհվել մարտի

դաշտում («մի՞թե... սպանդանոց վագելը փառություն է»): Նամա-
կը վերջանում էր այսպես. «Իսկ մենք ամենես կատարենք մեր
սուրբ պարտքը վերաբերմամբ ազգիս... մնացածը թողնենք
նախախնամությանը»:

Նախախնամությանը չհանձնվելու, անելանելի վիճակներից
դուրս գալու բազմաթիվ օրինակներ, այնուամենայնիվ, տալիս էր
դարավոր պատմությունը: Եվ իր ժամանակի բարդ, հաճախ ան-
լուծելի թվացող հարցերի պատասխանը գտնելու համար դիմելով
անցյալի դասերին Պատկանյանը կանգ է առնում Ավարայրի հե-
րոսամարտի վրա: Հայրենի երկրի թեկուզ ոչ երկարատև, բայց
խաղաղ աշխատանքի, ծաղկման շրջանները, հաղթանակների փառ-
քով օծված հերոսները էական տեղ չգրավեցին նրա ստեղծագոր-
ծության մեջ: Բնավ չհամընկնելով ներկա իրավիճակի հետ, դա
կարող էր վերածվել անցյալի ինքնանպատակ, ավելին՝ վնասակար
գովաբանության: Մինչդեռ Վարդան Մամիկոնյանի զոհաբերու-
թյունը հանուն ազատության, այնպես էր ներդաշնակվում ներ-
կային, որ Պատկանյանի պոեմում պատմական միջավայրն ու
կերպարները ասես կորցնում են իրենց հատուկ կոնկրետությունն
ու ընկալվում իբրև այսօրվա դեպքերի բանաստեղծական արտա-
հայտություն: «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմում հաս-
տատվում է մի գաղափար, որին հանգում են բոլոր նշված ու
փոքրաթիվ, բայց արժանապատվությունն ու ռզու մեծությունը
չկորցրած ժողովուրդները.

Մենք էլ հետևող նախնաց ավանդին,
Ըստուրկ չենք լինիլ երբեք օտարին:
Կա՛վ է մեր կյանքը կարճանա սրով,
Քանց, հավի, մաշվի թոշմանու լրծով:

Պատկանյանի ողջ ստեղծագործությունն իր տենդենցներով,
գաղափարներով, իր կերպարներով ու պատկերներով կառուցվում
է մի առանցքային, որոշիչ հասկացության շուրջը՝ ազգության:
Ազգության ազատագրության երազանքը շողկապում էր երկու
բառ՝ ազատություն և կամ մահ, զոհաբերությունը գերադասելով
ստրկական գոյությունից:

Անձնագոհ նվիրումով Պատկանյանը պայքարեց այն ամենի
դեմ ինչը հակառակ էր, թշնամի էր հայ ազգության արդար ճրգ-
տություններին, հույներ պահանջելով ողջ հայաստանից.

Պատան ինչ պատիվ. կոռնեհաս դու հարգ,
Ու կրթունեմ ինչ ազնիվ մարդոց կարգ,
Երբ օրորանեց մինչի գերեզման
Միակ ծրգամունճրդ լինի Հայաստան:

Սա «Հայերուս բուրբ» բանաստեղծության վերջին բառատողն է, որից առաջ դիմելով Հայաստանին անօգտակար վանառականին, զինվորականին, գրողին, ֆաղափագետին, արհեստավարին, ֆարագչին, գիտնականին առանց վարանելու և առանց մտահոգվելու, պոետիայի համար անսովոր խոսքերով նրանցից յուրաֆանչյուրին վերադարձնում է լեռներ:

Երկինճ շնորհեցին ինչ լեզու նարտար,
Քարոզչի սուսցար կրաչակ աւ նաննար,
Բայց թե լեզվեց շան շունի Հայաստան,
Քղեկ եմ էու այ. լեզվից այ վրան:

Ուրեմն էլ անսովոր, անգամ կուպիտ էր մարդկանց բանաստեղծությամբ դիմելու այս ձևը (հազիվ թե նախորդ շրջանի ողջ գրականության մեջ նման մի բան գտնվի), նույնքան ինֆանթալիս, բնական և արդարացի էր, նիշտ այնպես, ինչպես տասնամյակներ հետո խոր դառնությունից, հուսահատությունից ու անամոք վրչտից ծնված մի այլ նշանավոր տող:

Ո՛վ մարդկային արդարություն, թույլ տուր բրե՛նեմ էու նակատին...

Պատկանյանի, նրա ժամանակակիցների և նրանց հոգեորդիների մոտ, որոնցից մեկն էլ Սիամանթոն էր, այդպիսի նմանությունները ասես նակատագրային, պատմությամբ նախորոշված նմանություններ են: Քսանթերոզ դարասկզբին իր վերելքն ապրող հայկական նեոռոմանտիզմը նոր ուժով ու արվեստի նոր միջոցներով բուրբոնում էր ազգային-ազատագրական պայքարի այն իդեալները, որոնք ավանդել էր դասական ռոմանտիզմը: Իգուր չէր Քսանթյանը մյուսներից ոչ պակաս դառնությամբ ընդգծում, սուրվագծելով հայ գրականության անցած նանատագրեր, թե մեզ ստիպել են երգել արյան երգեր:

Ընդունելով սակայն սոփածո իրաժողովությունը, չօրեմ է մոռանալ. նաև, որ համանման իրավիճակներ ապրել են նաև այլ ժողովուրդներ: Ավելի ուշագրավ է ներգու զեպնում այն, որ ազգային-ազատագրական պայքարի արտացոլումը օտնաշարի դարձավ տարբեր ժողովուրդների ռոմանտիկական գեղարվեստի համար:

Նաում Բերկովսկին՝ ռոմանտիզմի խոշորագույն նկատարողներից մեկը, այդ ուղղության գլխավոր հասակակիչը համարելով ձգտումը դեպի այն, ինչ պետք է լինի, մարդկային իրական ազատության իդեալի նակագրումը գոյություն ունեցող անընդունելի պայմաններին, աշխատեց որպես հավերժական ստեղծագործություն դիտելը, գրում է. «Ազատագրական շարժումը Եվրոպայի հարավում և հարավ-արևելքում, սկսած Նապոլեոնի դեմ իսպանական պատերազմից. վերջացրած բուրժական իմպերիայի դեմ բալկանյան ժողովուրդների ապստամբություններով, Իսպիայի պայքարով հանուն իր ինֆանտությունը, ռոմանտիզմում կրկին բացված են նրա խոր և նախահիմնային բովանդակությունը, վերագրված էլով դեպի մարդկային ազատության և անսահմանափակ ստեղծագործության մոտիվները»¹:

3

Պատկանյանի ռոմանտիզմն ունի հայ գրականության ընթացքով պայմանավորված յուրահատկություններ: Ժամանակը և միջավայրը պահանջում էին, շարունակել լուսավորականության սկսած պայքարը դեռևս պահպանվող միջնադարյան մտայնության մնացուկների դեմ, լուսավորականության որոշ խնդիրներ մնում էին գաղափարական պայքարի առաջին գծում: Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից և միացումը Ռուսաստանին (1828), ապահովելով հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, կուլտուրական զարգացման նախադրյալներ էր ստեղծում: Այսուհանդերձ, լուսավորության գաղափարները արմատավորվում էին մեծ դժվարություններով: Պահպանողականությունը և հետամնացությունը ձեռք ձեռքի տված անհաշտ կոնկ էին մզում ընդդեմ առաջադիմական ամեն մի ֆայլի: Ս. Մանդրինյանը «Մեղու Հայաստանի», Մ. Մարյանը «Ճոռափղի», Գ. Ալվազովսկին «Մայայց աղավնի», Ն. Տերոյենցը «Երևակի» էջերից հարձակման անցան լուսավորիչների դեմ: Եթե Ն. Էմիր, Ն. Աբամդարյանը, Մ. Քաղիադյանը, Խ. Աբովյանը, Գ. Պատկանյանը ծանր պայմաններում բարձրացնում էին ազատագրության, գիտության, մշակույթի լուսավորական ծրագրերը, ապա նրանց անմիջական հաջորդներ Նալբանդյանը, Ավանյանը, Պատկանյանը և Բաֆֆին գործելով

¹ Проблемы романтизма, 2, М., 1971, стр. 17.

այն պատմաշրջանում, երբ բուրժուազիան առաջատար դիրք էր գրավում հասարակական կյանքում, շարունակում էին պայքարը հանուն մի կողմից լուսավորական դեռևս հրատապ խնդիրների իրագործման, մյուս կողմից ազգային բուրժուազիայի հակամարդկային գործելակերպի, ժողովրդի ազատության ներքին և արտաքին կեղեքիչներից:

Բանավիճելով Մսեր Մսերյանի հետ, պաշտպանելով այլ լուսավորչալ ազգերի նման առաջադիմելու անհրաժեշտությունը, Պատկանյանը նշում էր աշխարհիկ լեզվի նշանակությունը հայ ժողովրդի կյանքում. «...լուսավորությունը և եվրոպական ֆաղափակրությունը անշուշտ միջնորդությամբ աշխարհիկ լեզվին պիտի տարածվին մեր ազգի մեջ»: Ժողովրդի միտքը հագեցնելու և դեպի լուսավորություն նախապատրաստելու, կրթության օգուտը ցույց տալու խնդիր էր դնում նա իր հրատարակության պատրաստվող «Հյուսիս» լրագրի առաջ:

Իր վրա վերցնելով լուսավորիչների սկսած մեծ գործը Պատկանյանը շամփոփվեց դրա սահմաններում: Առաջ անցնելով իր ստեղծագործական և գաղափարական սկզբունքներում, նա լուսավորականության կենսունակ տարրերը շաղախում էր կյանքի և գեղարվեստի առաջադրած նոր խնդիրներին:

Հայ գրականության պատմության ուշագրավ երևույթներից է Պատկանյանի ստեղծագործական մեթոդի խնդիրը: Ռամանտիզմի ցայտուն ներկայացուցիչ լինելով, մի կողմից, ինչպես տեսնում ենք, նա ամուր կապված է նախորդ շրջանին՝ լուսավորականությանը, մյուս կողմից (դա նկատելի է հատկապես Նոր-Նախիջեվանի բարբառով գրված արձակ գործերում), հաջորդ շրջանին՝ դասական ռեալիզմին: Նման համադրումներ նկատվում են հայ նոր գրականության և՛ առաջին սերնդի, և՛ երկրորդ սերնդի մի շարք ներկայացուցիչների գրական ժառանգությունում: Մեր կարծիքով հարցը նիշտ է մեկնաբանված Ս. Սարինյանի «Հայկական ողմանտիզմ» գրքում, ուր Պատկանյանի ստեղծագործության ռեալիստականությունը համարելով նախառեալիզմ (իսկապես դա դասական ռեալիզմի յուրատեսակ նախնական ձևավորման վիճակ է ողմանտիզմի սահմաններում)¹, գրականագետը գրում է. «Օրինաչափն այն է, երբ գրական տիրապետող ուղղությունը զարգացման մի որոշ աստիճանում սկսում է իր պոետիկայի մեջ ներառել այն-

¹ Այս հարցին անդրադարձել է Հր. Մուրադյանը: Ըստ ամենայնի գնահատե-

պիսի տարրեր, որոնք պատկանում են հաջորդ ուղղությանը»:

Մրանով սակայն չի սպառվում խնդիրը: «Ես նշանած էի», «Փառասեր», «Տիկին և նաժիշտ» վեպերում ողմանտիզմին համակրցվում է սենտիմենտալիզմը: Հուզական լարված մթնոլորտով պարուրված կերպարներն իրենց փոխհարաբերություններով արժեկրթվում են բարու և չարի, երջանկության և դժբախտության բևեռներում: Հեղինակի դիրքորոշումը վնասականորեն ուղղություն է տալիս սյուժեի ծավալմանը, որոշում կերպարների նկարագիրը: Հեղինակային միտումը ինչպես կախարդական մի ուժ գործողություններին տալիս է անսպասելի ընթացք, ֆատալիստական, կրտուրուկ շրջադարձեր անում, պատահականությունը, առեղծվածը գալիս են հաստատելու կանխակալ պարտադրված միտումի. «Իրավացիությունը»: Սերը, մահը, բարեկամությունը, մարդկային կյանքի վայրիվերումները, հաշոդությունն ու անհաջողությունը դիտված են կերպարների անձնական աշխարհի պատմմանից: Զգացմունքային հագեցվածությունը, այդ վեպերում, որոշ շափով նպաստելով կերպարի ներաշխարհի դրսևորմանը, այնուամենայնիվ, հոգեբանական խոր վերլուծության հնարավորության չի վերածվում, ֆանդի հեղինակին հետաքրքրում է ոչ թե հատկապես դա, այլ բարոյական-գաղափարական իր սկզբունքները, որոնց մարմնավորման համար նա պետք է դիմեր պատկերման ողմանտիկական եղանակին, հրաժարվելով իրականության օրինաչափ, տիպական ընթացքի ընդգրկումից: Այդ ընթացքը ավելի շատ հակառակ էր ապացուցում, իրար հետևից խորտակելով բոլոր ազատամտական ու վերացական-բարոյախոսական պատրանքները: Աղքատ, առաքինի, ազնիվ մարդկանց անսպասելի բարձրացումն ու հաղթանակը, հարուստ, ստոր, փառասեր, նենգ տիպերի անկումն ու ստորացումը, իշականության օրյեկտիվ, օրինաչափ ընթացքին ոչ բնորոշ, նման բաներ էր ուզում ապացուցել Պատկանյանը իր այդ վեպերում: Վերջին հաշվով, տարված իր հերոսներ-

ով նրա կատարած գործը Պատկանյանի գրական ժառանգության նշմարիտ վերագնահատման ուղղությամբ, միաժամանակ պետք է նշել, որ նրա գիրքը կառուցված է ստեղծագործական երկու մեթոդների մեխանիկական համատեղման սկզբունքով. «Պոզիտիվ ողմանտիզմն ու ֆենադատական ռեալիզմը Պատկանյանի ստեղծագործության մեջ ընթանում են զուգահեռ» (տե՛ս Հր. Մուրադյան, Ռափայել Պատկանյան, Ե., 1956, էջ 110):

² Ս. Ն. Մարինյան, Հայկական ողմանտիզմ, Ե., 1966, էջ 340:

րի անձնական կյանքով, գրողը հեռանում էր էադաֆացիական իր բարձր դիրքերից, ընկնելով սենթիմենտալ խրատաբանության գիբկը: Բոլոր նման թերություններով հանդերձ, գեղարվեստական այդ էջերը գրված են վարպետի ձեռքով, այսօր էլ հանույժով ընթերցվում են և շատ ուշագրավ են որպես գրապատմական երեվույթ:

Վերադառնալով ռեալիզմի հարցին, պետք է նշել, որ կենցաղային, երգիծական պատկերներ, որոնք կարծես արտափին ռեալ շրջադրության ցայտուն և ամփոփ ցալապատկերներ են, կան նաև Պատկանյանի պոեզիայում. «Աղեն տա՛նն է», «Մայրաֆաղաֆում կբքած հայ երիտասարդ», «Մայրաֆաղաֆում կբքած հայ ազգիկ», «Մեր նոր սերունդը», «Նոր-Նախիջևանի բնարի» մի շարք գործեր: Այս բանաստեղծությունները որքան էլ նշմարտացի են տալիս կյանքի պատկերը, հատկանշվում են իդեալի և իրականության սուր հակադրությամբ, որով էլ պայմանավորված է երևույթների երգիծական պատկերումը: Պատկանյանը ձաղկում է ազգային-ազատագրական իր փայփայած իդեալների բարձրությունից, բացառում՝ ի հաստատումն այդ իդեալների:

Նրա արձակ գործերում ձուլնպես, կյանքի փաստերի նշմարտացի նկարագրությունը շրջանակվում է ռոմանտիզմին հատուկ ծրագրային որևէ խնդրի ուղիղ շարադրանքով, որևէ գաղափարի արժարժումով, որը ձգտում է բխեցնել բուն գեղարվեստական պատումից, բայց և որը մնում է մի տեսակ անկախ վիճակում:

Պատկանյանի արձակը դժբախտաբար դեռևս չի արժանացել համաժողովրդական այնպիսի նանաչման, որին արժանի է: Նաև չի գնահատվել և լուսաբանվել ըստ ամենայնի: Այդ արձակի արդիական նշանակությունը մեծանում է թե՛ իր բարձրացրած խրեդիրներով, թե՛ գեղարվեստական յուրահատկություններով: Նկատի ունենե՛ք հատկապես Նոր-Նախիջևանի բարբառով գրված երկերը: Դրանք ստեղծվել են Քերովբե Պատկանյանի խնդրանքով: Ուշագրավ է, որ դրանցում պետք է պատկերվեր Նոր-Նախիջևանի իրականությունը (ինչպես Ք. Պատկանյանն է գրում. «բնությունից նկատագրել... ստեղծել այնպես, ինչպես որ աստվածը ուներ յուր հանձնարումը ստեղծել նախշվանցուն»): Պատկերը կատարվեց բարբառային այդ երկերը ուղղակիորեն կապված են տվյալ իրականության հետ, արտացոլում են նաև իրողություններ: Այս հանգամանքն էլ ռեալիստականություն է հազորում այդ արձակին:

Հայտնի է, որ ոչ ամեն գրչի տակ հավասարի, անգամ շատ հեռաֆրբի իրողությունները կարող են վերածվել իսկական արվեստի. ավելի հանախ պատահում է հակառակը: Բայց Պատկանյանը ոչ միայն աշխատում է պահպանել հավաստիությունը, այլ ավելի շուտ՝ ստեղծել հավաստիության պատրանք, որն ավելի համոզիչ է արվեստի տեսակետից:

Նա դիմում է մի շարք պարզ միջոցների՝ վարպետությանը կիրառելով. կատարվածի մասին պատմում է որևէ գործող կերպար, ասես թե այնպես ինչպես կպատմեր կյանքում, իսկ արձակագիրը ուղղակի գրի կառնե: Ավելին, Ք. Պատկանյանին այդ առիթով գրած նամակներում նա ընդգծում է, որ ամեն հնար դրել է թե՛ լեզվի նշտությամբ, թե՛ անցքի նշմարտությամբ հավատարիմ մնալու լսածին, կամ պաշտպանել է ներկայացնել կատարվածը ինչպես այն կա սկզբունքը, կամ վերջապես գրել է իր տեսածը, լսածը, զգացածը. «...ահա իմ արժանավորությունը որ դու կոչում ես ֆանֆար, հանճար. այդ ամեն մարդ կարող է անել»! Դրանով չբավարարվելով, պնդում է նաև, որ պատվերով կատարված բոլոր այդ գործերը «գրեթե ПОД ДИКТОВКУ» գրած է, ուրեմն ինքը ամենեկին էլ հեղինակ չէ, որ երախտիքը միայն առաջի բնորությունն է և գրելու աշխատանքը:

Դրողն անկասկած սխալվում էր, նրա գործը չէր սպառվում միայն նյութի բնորությամբ, որ ինքնին արդեն բացահայտում է հեղինակի հայացքը: Պատկանյանի բարբառային երկերը հանդես են բերում ռեալական, պատկերային այնպիսի ընդհանրություններ, առաջնորման եղանակի սկզբունքային հույնություն, պատումի կառուցման այնպիսի միասնականություն, որ կասկած չի կարող առաջանալ հեղինակության հարցում: Զե՛ որ պատմող կերպարները (կամ պատմող ականատեսը) տարբեր են, իսկ նյութի գեղարվեստական մատուցումը զարմանալիորեն ինքնատիպ-նույնական է բոլոր գործերում: Դեպքերը զարգացվում են այնպիսի կենդանի ընթացքով, դրվում այնքան ներդաշնակ կառուցվածքի մեջ, շաղախվում կոնկրետ-անհատական-հեղինակային այնպիսի մարդկայնությամբ, ներկվում արվեստագետի հագու երանգներով, հույզերով, մտքերով, այնքան ինքնաբերական ու օրգանական, որ իրողու-

թյունները (իսկ մեզ ճշգրտորեն հայտնի է այդ հանգամանքը) ընկալվում են որպես գեղարվեստական իրականություն:

Կրկնում ենք, փաստագրության զգացումը գեղարվեստական խարկանք է. այդ զգացմանը արձակագիրը հասել է ոչ թե այն պատճառով, որ ստրկամտորեն գրանել է ուրիշների պատմածը, այլ այն պատճառով, որ պանպանել է շարադրանքի անկաշկանդ պարզությունը, բառերի ճշգրիտ կիրառման իր սկզբունքը, կայուն, հանդարտ, զսպված ուրիշը (ռոմանտիկական պոթիվումներ չկան, ուժեղ, ծանր ապրումներն անգամ դրված են էպիկական զսպանակների մեջ), դրվագների հմուտ միահյուսումը երկի կյանքային բնականությանը, ուր չեն նկատվում առանձնապես գրողի երեվակայության, ստեղծագործական հնարների, «գրչի» հետքերը:

Այսպիսի գծերով բնութագրվում է առաջին հերթին «Չախուն», որը հայ գրականության մարգարիտներից է: Պատմվածքում բարձրացվում է շատ կարևոր հարց կապված լուսավորական ծրագրերի հետ, ուղղված սխուլաստիկայի, եկեղեցական կրթության, դաստիարակության դեմ, որը ծեծի, վախի, կրոնական անհեթեթությունների վրա հենված շարիֆ է: Գպոցը գործնական, նշմարիտ գիտական հիմքերի վրա դնելու պահանջը, որ առաջադրվում է ոչ թե ուղղակի միտումի ձևով, այլ գեղարվեստական հյուսվածքի մեջ, պատճառ է դառնում մեծ ընդհանրացման, մարդկային ողբերգության կերտման, վերածվում հզոր բողոքի ճակատագրին ընդդեմ. «կենդանիների մեջ ո՞րը ավելի է շարժառ... աղամորդուց ավելի դիմացկունը չի եղել... մարդկանցից էլ էն ամենադիմացկունը հայր չէ՞: Խոսքի վրա, իմ տեղս մի ուրիշ ազգի մարդ, դազախ, լոդայ, ֆրանցուզ, գերմանացի որ լինե, գլուխը ծած, էտքան մարդոց վատությունին, թշնամությունին կդիմանա՞ր, թե «թեև եմ վրաներդ» կասե որ գլխի ճարը կը տեսե, խելքը կտրածի պես... էտ հրաման տվողը ինչի՞ բանը էն տեղն է հասցնում, որ ողորմելի մարդը աշխարհիս վրա ապրելը մեռնելուց վատ է նանաշում»:

«Չախուն» իրական դեպքի նկարագրություն է, որը ցնցող տպավորություն է թողել Պատկանյանի վրա. «Բայց չկարծեմ, որ այսուհետև կենդանի կյանքից շատ բան գրեմ, վասնզի պատմածը լսելիս սաստիկ ցնցվում եմ, մի անգամ էլ գրելիս»¹:

¹ Բ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 400, Ե., 1970:

Արվեստագետի մեծության առաջին նախապայմանը մի՞թե իր ապրած խոր ցնցումը մարդկանց հաղորդելու կարողությունը չէ: «Չախուն» տալիս է պատկերն այն իրականության, ուր հետևողականորեն և անխնա տրորում են մարդուն, ճգնում նրա կատարյալ մարդկային, ստեղծագործական էությունը և այնքան ավելի անկասելի ու դաժանորեն, որքան ավելի ցայտուն, տաղանդավոր աննատականության հետ գործ ունեն: Ինչպես հեղինակն է նշում իր նամակում. «էլի մեկ զոհ մեռ կյանքի անհարմար սարքվելուն»:

Այսպիսով, անհատական դժբախտության փաստը լայն ընդհանրացման, հասարակական կյանքի օրինաչափության հայտնաբերման միջոց է դառնում: Եթե արվեստը միշտ էլ ծանր նաև պարհորդություն է դեպի երևույթի խորքը, ապա նույնիսկ սեփական աշխարհայացքային սահմանափակությունները հաղթահարելու, ստեղծագործության ուժով իրեն գերազանցելու հատկությունը բնորոշ է մեծ արվեստագետներին: Այդպիսին է նաև Պատկանյանը: Իր մի շարք երկերում (օր. «Պաց ազպար», «Աղբյուր», «Խոռթխախ», «Նոր տուն ու հին տուն», «Օձի խածած») նա փորձում է պաշտպանել որոշ միամիտ պատրանքներ, նույնքան միամիտ մեկնաբանություններ տալով հարցերին. հորդորում է հարուստներին՝ օգնել աղքատներին, դիմում է նրանց խղճմտանքին, պահանջում, որ շխաբեն, անազնիվ միջոցների շղիմեն, շկորցնեն իրենց մարդկային բարի համբավը, պնդում է, որ բարեգործություն չանելու դեպքում հարստությունը դառնում է շարիֆ, խեղդելով իրենց՝ հարստության տերերին, զցելով դժոխքի սառսափների մեջ:

Բայց նույն գործերում իսկ հստակորեն երևում է, որ այդ ամենը անպատու բարոյախոսություն է, որ բարի հիշատակ թողնելու, մոռացության անդրաշխարհի փոշու և թշվառների անեծքի տակ շկորչելու համար պետք է հրաժարվել հարստանալու, բարձրանալու, իշխելու տենչից, ֆանգի հաշողության հասնելու գրավականը ստոր, խաբեբա, աներես լինելն է, նպատակին հասնելու համար միջոցների մեջ խորություն չդնելը: Չէ՞ որ ջրկիր Մարտիրոսի եզրակացությունը դրա ապացույցն է. «մեզ ո՞վ է ասել, թե գաղը լինենք, որ գայլերը մեզ ուտեն»:

Ասպարեզ հանելով գիշատիչներին և նրանց անմեղ զոհերին, Պատկանյանը այնպիսի սրությամբ և խորությամբ է դնում հար-

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ

1850

ՁԱՐՄԱՅՐ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՀԸ

Ամպը եկավ ծածկեց սարերն ու ձորեր,
Չէր տեսնվիլ պատերազմի դաշտերը,
Մեզ մառախուղ կիջներ Իդա լեռներեն,
Գիշերային մութը պատեց դիերը:
Հյուսիսային հողմը փչեց սաստկագին,
Հազարամյա կաղնին շարժեց դողացուց,
Ամպի միջեն փայլատակեց փայլակը,
Ակոսի պես պատուեց խավար երկինքը,
Դիակներու հըռնչունը շէր լսվիր,
Քամին հեռու կտաներ սաստիկ փչելով,
Ամպի գոռալն կողբողեր երկիրը,
Մրրիկ, կայծակ խառնակված էր օդումը:
Հեռվանց կու գայր լաց ու սգո ձայները,
Տրոյացվոց և կամ հունաց բանակին,
Ամենեքյան յուրյանց մեռելն կ'պտոեն,
Այն շար օրը շատ կոտորվածք էր եղել:
Ճրագներով, լապտերներով կու պտոեն,
Մարդոց, որդվոց մարմինները կանայքը,
Ոմանք շալկած կը տանեին մեռելը,
Որն որ առաջ կու գտնեին արյան մեջ,
Ով ուներ տեր կու գտնվեր դիակը,

Դագաղներով կը տանեին այրելու,
Մայրը, քույրը, կինը, դուստրը միապահ,
Յուր մեռելի կու տան վերջին պատիվը:

Ամպերու մեջ շկան աստղեր, խավար է,
Սե քող պատշաշ սգավոր է երկինքը,
Քամին փշեց լապտերներուն՝ մթնացավ,
Պատերազմի տեղը բռնեց լուսթյուն:
Բայց հեռուեն այն ի՞նչ լույս որ կերևի,
Իդա սարի կողմեն մեկ լույս կը փայլե,
Լույսն անդադար շարժման մեջ է քամիեն,
Այլ կվառվի և շորս կողմը լույս կու տա:
Սարի տակը կու երևի մեկ ճրագ,
Որ լապտերով կախված էր այն կաղնիեն:
Արդյոք ո՞վ կա այն մութ գիշեր այն տեղը,
Երևի որ պտոռղ շունի, անտեր է:
Կաղնո տակը փռած էր մեկ լայն մորթի,
Կամ առյուծի էր այն, ընձու, կամ վագեր,
Վրեն պառկած էր կարեվեր քաջ վինվար,
Մահու քրտինք տվել էր բոլոր մաբմինք:
Երկու ձեռքով բռնել էր յուր մեկ կողքը,
Կամենում էր յուր արջունը դադարեցնել...
Միտքը բերեց յուր սիրելի Հայաստան:
Հոգվոց հանեց ցաված սրտի խոր տեղեն:
Միտքը բերեց յուր կարոտյալ հայրենին,
Նորագվեցան յուր խոցերու ցավերը:
Արյունը հորդ բխեց խոր-խոր խոցերեն,
Այլ շմնաց այնուհետև կենաց հույս:

Վեր նայեցավ, տեսավ լուսով լապտերի,
Ծառի ճյուղքեն կախված էր յուր աղեղը,
Կապարճը լի նետյուք ընկած գետինը,
Աւեր մոտն էր, բայց անպիտան՝ յուր տիրոջ:
Մտքը կանգնած էր միայն յուր երիվայր,
Շուտ-շուտ շնչով խորխնջալով կը փշեր,
Ութով հողը փորփորելով վեր ու վայր:
Յուր տիրոջը ցավոց կլիներ ցավակից:

Առանց ձայնի, առանց լեզվի, որպես լե
Կասեր տիրոջ հավատարիմ կենդանին.
— Մի՛ պռակիր գու այս մութ, խավար դաշտումը,
Մի՛ մնար գու այս կաղնու ասեկ այս գիշեր:
Վե՛ր կաց, հեծիր շուտ իմ վրեն, ի՛մ իշխան,
Ես կը տանեմ քեզ քո երկիր հայրենի,
Ես շորս ոտքըս կը տարածեմ գետինը,
Կը ցածացնեմ մեջքս, որ դու հեշտ նստիս:
Ես բերնովս կը բռնեմ քո թևիցը,
Կը բորձրացնեմ, կը լինիմ քեզ օգնական,
Մի՛ մնար այս օտար, հեռի երկրումը,
Երթա՛նք հասնինք քո հայրենին Հայաստան:

Ա՛խ քաշեց այն սաստիկ խոցված Զարմայրը,
Հուր բոց բխեց խորոց հոգվույն և սրտին:
Վազեց արյուն լայնաբերան խոր խոցեն,
Խավար մահու պատեց աչքին և սրտին:
— Ասաց՝ արի՛, իմ քաջ ընկեր մտերբիմ,
Արի՛, ազնիվ իմ երիվար, իմ նրժոռք,
Ես չեմ կարող մյուս անգամ քեզ հեծնել,
Թամբիդ վերա առաջվա պես այլ նստել:
Ասպանդակիդ այլ չեմ կարող ոտ փնել,
Եվ ոչ ձեռքով սանձդ բռնել մետաքսյա.
Այլ չեմ կարող քեզ հետ շրջիլ սար ու ձոր,
Պիտի մնամ կարոտ կանանչ դաշտերուն:
Քանի՞ անգամ մենք պատերազմ ենք տեսած,
Քեզ հետ մտել, քեզ հետ ողջամբ դուրս եկած,
Ինձ շատ անգամ ծառայել ես մտերիմ,
Մեկ անգամ ևս կատարյա իմ պաշտոնը,
Մեկ մոտ արի, ա՛ռ իմ հետին ողջույնը,
Մանձդ առնում այդ աներկյուղ քո զվեսն,
Մեկ համբուրիմ արտասովալից աչքերդ,
Իմ ողջույնս տար հայրենի մեր երկիր:
Գնա՛, դարձի՛ր, շուտով հասիր Հայաստան,
Որտե՛ն կարոտ պիտի մընամ այս տեղը:
Գընա մեր առն, Արմավիրին տար համբավ,
Քր շրտպասն յուր իշխանի գառնալույսն:
Քրդի՛ր այս տեսնես, առա՛ջ շունիտ այլ գու հայր,

Հայաստանն է այսուհետև քո ծնող,
Ասա՛ հայոց ձեր նահապետը Ջարմայր,
Գետին դրեց յուր երկսայրի սուսերը:
Ասա՛ հայոց ձեր նահապետ Ջարմայրը
Ձեռին շունի ահեղ գեղարդ և վահան,
Ասա՛ հայոց ձեր նահապետ Ջարմայրը,
Այլ չէ կարող հրբաման տալ յուր զորաց:
Ասա՛ հայոց ձեր նահապետ Ջարմայրը,
Զէ առաջնորդ քառսուն հազար բանակի.
Քաջ հայերը ցիրցան եղան դաշտի մեջ,
Ոչ ոք տեսավ յուր իշխանի մեռնելը:
Բայց երբ տեսնես դու նորահարս սևորած,
Որ գրկի մեջ մեկ հատ տղա ունենա,
Որ աչքերեն թափում լինի արտասուք,
Ու դաշտի մեջ պտտում լինի գերեզման,
Ու իմ անունս հիշում լինի անդադար,
Ու երեխին ասում լինի մշտապես,
Թե դու որք ես ու հայր շունիս աշխարհի,
Այսուհետև քեզ չի ճանչընար Հայաստան.
Այսուհետև դու մի՛ տեսնիր Արմավիր,
Այսուհետև մի՛ հիշիր դու այն օրը,
Որ քեզ իշխան ազգի կոչեց Հայաստան,—
Իմացի՛ր, որ նա իմ կինն է խղճալի:
Մենակ նրբան մի՛ պատմիր դու իմ մահը,
Նա չէ կարող լսել այդ սև համբավը,
Թող չկաթեն նորա աչքեն արտասուք,
Թող թաց շանն նա արտասվոք սև հողը:
Նրբան ասա՛, իմ սիրական սիպտակ ձի,
Թե քո մարդը օտար երկիր հեռավոր,
Ա՛յլ գեղեցիկ աղջրկան հետ պրսակվեց,
Քեզ մոռացավ, ո՛չ հիշեց քո անունը:
Ասա՛ նրբան, իմ սիրական սիպտակ ձի,
Թե քո մարդը Իդա սարի տակումը,
Նըշանածին առավ գիրկը պառկեցավ,
Աչքը խըփեց, քաղցր քնով քնեցավ:
Ասա՛ նրբան, իմ սիրական սիպտակ ձի,
Թե քո մարդը փեսայի պես պառկեցավ,

Հարսանիքն էր Իդա լերին հովտաց մեջ,
Հարսնարանը դիակներով զարդարած,
Առագաստն էր երկնից կապույտ կամարը,
Ճրագները՝ հրեղեն փայլակ և կայծակ,
Անկողինն էր սառն ու խավար գեջ հողը,
Նվագարան՝ ամպոց ահեղ գոռայր:
Մատանին էր լայնաբերան գեղարդը,
Հարսնացուն էր անհաղթելին Աքիլես,
Փեսավերն էր հին բարեկամ Մեմնոնը,
Եվ հարսնաքույր՝ Պանթազելե Ամազոն:
Իմ զարդարանք եղավ կարմիր արյունը,
Ողջագուրանք՝ դիոց մահու հրորնչյուն,
Նշանվեցա սուր սլաքոք նետերու,
Պսակվեցա պողովատիկ սուսերով:

ՅՐԱԿԱՆԻ ԱՌԱՂՈՅՑՆԵՆ ԵՐԳԸ

Ա՛յ ինչորք ալսոր շուտ թըն եցար, ննջեցիր,
Առաջտարան հոսի ժամանակն անցացիր.
Արեգա կը ծովի՛ն ծալրեն. ծագեցաւ,
Ջերմութիւնսն ծորն ու դաշտը փրփրեցաւ:

Ընկերները փառ արտերը գնացին,
Յորեն, գարին փրփրանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդին որշտովը,
Նըստան հանգչից քաղցրին հովանը:

Ա՛յ մարդ, վե՛ր կաց, սառը ջրով լվացվի՛ր,
Գոտիդ կապե, գերանդիդ ա՛ռ, դաշտ հասի՛ր,
Քանի հով է՛ հունձըդ արա արտովըդ,
Հունձըդ հընձե, մի՛ ծուլանար գործովըդ:

Խուրձըդ կապե, բարդըդ բարդե, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձըդ կատարի.
Բե՛ր գերանդիդ, կախե՛ պատեն քո տանը,
Ես իրիկվան կը պատրաստեմ սեղանը:

Ա՛ մարդ, հերիք ինչ որ այսօր քնեցար,
Աչքըդ մեկ բա՛ց, տես թե ո՛րչափ ուշացար,
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջեն,
Վաղ լըռել է մեր զգիրը ձայնելին:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քնել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դրան,
Մի՛ ծուլանար ժամանակդ խնայե՛,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրե:

ՇԻՆԱԿԱՆԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԵՐԳԸ

Մարդըս եկավ, եկավ դաշտից՝ դաշտիցը,
Կանաչ դաշտից, դարար դաշտից տուն եկավ,
Տուն եկավ ու դուռը դըրեց՝ նըստեցավ,
Շալկին խուրձ էր, խուրձ՝ ցորենի արտիցը:
— Խուրձըդ վե՛ր դիր, թո՛ղ բաց անեմ թուկերը,
Մեջքեդ առնում այդ սուր, այդ սուր գերանդին,
Սուր այդ, սուր այդ գերանդիով հնձել ես,
Հընձել ես ու խուրձ կապել ես ցորենը:
Ա՛խ, ճակատըդ թաց է եղել քրտինքով,
Թո՛ղ ճակատըդ, թող որ սըրբեմ իմ ձեռով.
Իմ ձեռովըս գոտիդ բացեմ՝ խուրձըդ առնում իմ ձեռով,
Խուրձըդ առնում՝ ծանրը բեռըդ շալակեդ:
Սառը ջրով ձեռըդ լըլա՛, ոտքըդ լվա, երեսըդ,
Ձեռքիդ, ոտքիդ ես ջուր կածեմ, երբ լվանաս երեսըդ.
Սըրբե՛ ձեռքով քո երեսեդ քրտինքըդ.
Գլուխդ լվա՛ սառը ջրով, ձեռքըդ, ոտքըդ, երեսըդ:
Ես քեզ համար հաց թխեցի, սիպտակ, փափուկ գարեհաց,
Ես քեզ համար պատրաստել եմ կաթն ու կարագ ու պանիր,
Գառան մըսեն շամփրի վըրա խորոված,
Կասկարայով գառան միսը տապակած:
Կուժը լիքը կարմիր գինին դըրած է,
Իմ ձեռագործ կըտավ սուփրան փրփած է.
Ձեռըդ լվա՛. հանգստացի՛ր իմ սիրական ամուսին
Լուսնյակը երևում է երկնքումը փայլելով,
Պատուհանեն լույս է ձգել սուփրի վըրա շոգալով,
Երևում է հացն ու կաթը, պանիրը,
Երևում է կարմիր գինին սափորը.
Մեկ ես, մեկ դու, մեկ պահապան հրեշտակը,
Ուտենք, խմենք, ու դժամանք արարչեն,
Հանգստանանք աղիտանքեն, որ քաշեցինք քեզ կը:

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՅՐԻ ԿՆՈՋ

Քրնե՛, քրնե՛, սիրուն որդի, քու մոր սրբտին ըսփոփանք,
Քեզ օր կասեմ տրխուր ձենով, օր-օր, օրեր ու շատ կյանք:
Օրորոցըդ ձեռով շարժեմ, բերնով երեսդ համբուրեմ,
Քեզ շատ օր-օր, քեզ շատ օրեր, քեզ շատ արև կու երգեմ:
Աչքըդ փակե՛, այդ լուսափայլ աստղի նրժան փայլածը,
Որ մինչև այդ երկնքումը երևում է ցուլածը:
Աչքիդ շողը սիրտս է ծակում, նորոգում է իմ խոցը,
Աչքըդ փակե՛, իմ սիրական հերի՛ք սրբտիս այրածը:
Աչքըդ փակե՛, քաղցր քրնե՛, քեզ օր կասեմ ես լալով,
Հորըդ բանը իմաց կանեմ, դու ականջ դիր նիրհելով.
Հայրըդ զորեղ երիտասարդ, առավ բակեն գուժանը,
Լըծեց երկու զույգ եզները իր սրածայր արորը.
Գրնաց դաշտը երգ հնչելով, երգ ասելով և լալով:
— Ինչի՞ համար սուգ ես անում, սուգ արտասվոք և լալով,
Ասաց հորըդ հարևանը՝ աչքեն առուք վազելով.
Եզներըդ գեր, գեր ու պարարտ վազ ի վազ են դեպ դաշտը
Շա՛տ կու վարեն, շա՛տ կու հերկեն, շա՛տ կու կամեն քու արտը,
Արեգակը մայր չի մտած դու կը դառնաս արորեն,
Քեզ Զանանը առաջ կու գա գրկում բրնձած երեխեն:

Գորգին երգով հարևանին այսպես տվեց պատասխան.
«Եզներըս չեն ինձ մնալու, իմ աչքի լույս հարևան.
Օրավարըս ես չեմ կարող այսօր վերջը հասցընել,
Պիտի մնա հող ու արտըս անվարուցան, անայցել.
Գիակիս մոտ գեր ու պարարտ իմ եզները վիզը ծուռ
Պիտի մնան, թե ո՞վ նոցա երեկոյին կու տա ջուր»:
Հարևանը աչքը արցունք մեզ սև համբավը բերեց.
Թե՛ շու՛տ արեք, եկեք տեսեք, թե ձեզ Գորգին ի՞նչ արեց:
Ի՞նչ ես արել, գանք ու տեսնենք, վա՛յ մեր անբախտ աչքերուն,
Նևտը ցրցված է սրբտիդ մեջ, տակըդ ճապաղ քու արյուն:
Նևտը ցրցված քու սրբտի մեջ, օղը ճեղքեց, գիծ արավ.
Գիծը սև էր երկնքումը, աչքըս ծառի մոտ տարավ,
Մառի հետնեն թաք կեցած էր մեր գեղացվոց թըշնամին,
Մեր գեղացվոց հին ատելին, տավարի գող Եզիդին:

Դու սիրական սիրուն որդի, քրնե՛, քրնե՛, զորանաս,
Քու մոր համար մըխիթարիչ ու ըսփոփիչ մեծանաս:
Միտքըդ պահե քու հոր արտը, գեր ու պարարտ եզները.
Միտքըդ պահե մաճն ու սամիք և սրբածայր արորը.
Երբ մեծանաս, երթաս դաշտը, ուզես վարել քու արտը,
Քու մոր համար ուսով բերել ցորնի՛ խուրձը ու բարդը,
Առաջ գրնա՛, գետը անցիր այն սրբահոս Արաքսեն,
Գրնա՛ գրտի՛ր այն Եզիդուն, որ այն ծառի ետևեն
Նևտը քաշեց, օղը պատռեց, քու հոր կյանքը սև արեց.
Թո՛ղ Գորգիի եզները տա, որ այն օրը փախցըրեց:
Գեր ու պարարտ քու եզները սայլի՛ն լծե, սիրական,
Դարձի՛ր սրբե՛ քու մոր աչքեն այս արտասուք տրտմության:
Քաղցր ձենով երգ հնչելով, երգ երգելով տու՛ն արի...
Ա՛խ, ե՞րբ կըլնի, որ մեծանաս—իմ բաղձանքը կատարի:
Այժմ քրնե՛, աչքըդ խըփե՛, հանգստացի՛ր, օր-օր-օր.
Թող քու մայրը աչքեն թափե արտասուքը յուր հորդոր:

ՌԻՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԻՐՄ

Ի՞նչ ես ջարդում անձրոյ, է՛յ մարդ, ցափերով,
Դիխիդ բարդում գանձրոյ անթիւք նաւերով.
Արի՛, աղբեր, իմ խրատին դու մի՛տ դիր,
Հոգս ու ջաֆեդ ա՛ն քեզանից ու ե՛տ դիր:

Մերկ ու թեթև դու էս աշխարհ՝ եփել ես
Բեռան տակը մեջքրոյ ինչո՞ւ թեքել ես,
Փանգ արծաթի խաթրին դու քեզ քեթել ես,
Դեղին ոսկու սիրուն հոգով մեռել ես:

Դիպակ շորեր, անգին քարեր, գանձ ու գանձ
Ծ՞րբ ես տեսել, որ մարդուս անեն անմահ,
Նահախ պըտում ես արծաթի մազանը,
Որ արժան է օխտը գաղ քու քաթանը:

էսօր, էգուց քեզ կու գրկե պատանքը
Ու չի փրկիլ մահից ոսկին, ո՛չ հանքը:

ԳԱՆԳԱՏ ԲԱՂԴԵՆ

Ա՛յ իմ շար բախտ, քեզ ի՞նչ ասեմ, արդոյք քեզ ի՞նչ անուն տամ,
Թե կույր ասեմ՝ իրավ կույր ես, բայց այդ դեռ չէ բավական.
Դու անմիտ ես, դու հիմար ես, նախանձոտ ես չափազանց,
Դու աստված չե՛ս, ինչպես կոչեց քեզ հին դարը դուրսագանց,
Կույր է և քո թշվառ կյանքը և այդ պաշտոն տվողը,
Ոչ բախտ, այլ ազր քեզ չէի տալ՝ պարարտացնել կոշտ հողը,
Այդպե՛ս խրդճով կատարում ես Արամազդա պատվերը,
Ա՛խ, թե իչներ նա երկնիցը, տեսներ առատ հունձերը
Քու այլանդակ սերմնացանին, էլ ի՞նչ սուր-սուր նա սլաքներ
Պիտի շաղ տար քու գրլխին...
Քեզ շատ անգամ ես տեսել եմ երիզապինդ աչքերով,

Կու՛յր ես արդոյք, թե՞ գիտությամբ ման ես գալիս այդ կերպով.
Բայց կուզեի, որ դու մեկ օր հանգամանքե ըստիպված՝
Այս աշխարհքը ծայրե ի ծայր մեկ ժուռ գայիր աչքաբաց,
Ի՞նչ ահարկու տեսարաններ պիտի բացվեր քո աչքին
(Յընորամիտ արարքովըդ լի են երկիր ու երկին).—
Կը տեսնեիր մոլի վագրեր հովիվ գրած հոտերուն,
Նենգ աղվեսներ, անհագ գայլեր միշտ անպակաս մոտերուն.
Կը տեսնեիր դու ժիր մեղվանց բունը՝ արջի քանդելը,
Բյուր մի անմեղ միջատների հացք՝ ծուլլի ուտելը.
Կը տեսնեիր դու վարուժան մենակ վու՛-վու՛ն կարգալիս—
Նա իր սիրուն աղունակի կարճիկ կլանքիկն է լալիւ,
Ամպի մեջեն վեր սլացավ սրբաշ շահեն դեպի ծառ,
Բոնեց սիրուն աղունակին, անխիղճ արավ շորս պատանո
Թողնեք մի կողմ անբաններին՝ բանականի մեջ մտնեք,
Նույն զըրկանքը, նույն նեղության անշուշտ, և հոն կը գտնենք.
Տե՛ս դու, թշվառ հողագործի գարնանային վաստակը—
Լափիլզեցին մարախները ցարնու նործիլ հասակը.
Դորա ներհակ՝ նավահանգիստ մտավ նավը փարթամին,
Ո՛չ մի վնաս չի հասցրուց նորան ուտուցիկ քամին:
Տե՛ս այս խզճուկ իմ կրտսիճիս— առույզ, պարկեշտ ու գիւտուն,
Բայց հորական փող շունելով՝ հաճելի չէ՛ ամենուն.
Սորան հավասար չեն հարգում իշխանին կամ հարստին,
Բացեիբաց հեռանում են, որ սորա մոտ չի նըստին,
Այլ նստում են նորա մոտը, որի քիքը սովի կա,
Չեն ամաշիլ աստված ասել հարստին, թե խոսքի գա...
Ասա՛, խնդրեմ, ինչո՞վ մեղավ այն խեղճ գիտուն պատանին,
Մի՞թե աղքատ աշխարհ գալը մարդիկ հանցանք համարին.
Դըղմագլուխ իշխանորդին ինչո՞ւ ի վեր դասեցավ,
Սոկրատեսի՛ արդոյք լեզվով հանկարծակի խոսեցավ...
Ահա՛, այսպես շարունակում լցրել ես գու աշխարհքը,
Մի՞թե չես գալ սարսափանքի՛ տեսնելով քս արարքը:

ԻՄ ՔՆԱՐԻՆ

Արի՛, քնա՛ր Ափրոստիտա, հնչե նորեն իմ ձեռքին,
 Ինչո՞ւ ընդ վայր կախ ես կեցած դու գլխաբաշ մունջ պատին,
 Ինձ պատվիրեց Անակրեոն լինել յուր ընտիր ժառանգ.
 Եվ այն անմահ յուր տաղերուն տալ անընդհատ արձագանք.
 Բայց ի՞նչ դու շուտ վհատեցար, կոշտ խուժանի խոսքերեն,
 Որք եղել են միշտ անարդար հենց Արամի օրերեն.
 Ուշ մի՛ դնիլ դատաստանին խակամիտ <հիմա>րին,
 Քե չէ, դու էլ ընկնելու ես, խղճուկ սոխակի օրին.
 Հնչե՛ ազատ, քեզ չէ դրած՝ ո՛չ նեղ սահման, ո՛չ կոպար,
 Չայնդ ձրգե, դեպի երկինք, թող քեզ լսե դիփ աշխարհ,
 Քո՛ղ ծիծաղի և կամ թո՛ղ լա, թո՛ղ սարսափի, զմայլի,
 Իսկ անազատ մեր աստղիկը միշտ վառ ու վառ կըփայլի.
 Նա կփայլի քանի ամպը նորան չի՛ ծածկել քողով,
 Մի գարհուրիլ, շուտ կըցրվի թեթև ամպը մեղմ հողմով,
 Ա՛նձն իմ, օրհնե՛ այն աստվածք, որ շնորհել է քու բաժին՝
 Ո՛չ գանձ, ո՛չ թագ, այլ յոթնադի անուշ քնար մուսային:

ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
 Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
 Քառամուս եմ ես այս օտար երկրումը,
 Մենակ բըսած ծաղկի նման դաշտումը:
 Կամաց-կամաց տարիները անցնում են,
 Մեզ նորոգած գարուն ամառ դարձնում են.
 Միայն մեր խեղճ կյանքը շունի ոչինչ նոր,
 Ինձ երեկը կըրկընվում է միշտ այսօր:
 Ասպարեզիս նեղ է ճամփան ու փըշոտ,
 Խեղճութունս համարում եմ ինձ ամոթ.
 Իմ վիճակին կարեկցություն մարդ չունի,
 «Իա, ասում են, իր կյանքումը դարդ չունի»:

Ես դարդ ունիմ, շարդըս մեծ է ու պես-պես,
 Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես:
 Երբ ես մըտա անհյուրընկալ այս աշխարհ,
 Քանի ըստե բախտը ժրպտաց ինձ պայծառ.
 «Հա, ասացի, դարձել է իմ անիվը,
 Լըրացել է իմ վատ բախտի շար թիվը»:
 Հանկարծ՝ փըլեց անտուժելի հյուսիսին,
 Քառամեցուց վարդ, մանուշակ մայիսին.
 Այսպես շորցուց իմ նազելի հասակը,
 Իմ անողորմ, անագորույն վիճակը:
 Ա՛խ, մոտեցիր, օրհասական օ՛ր մահվան,
 Բե՛ր քու հետը սև հող ու նեղ գերեզման,
 Քո՛ղ սառ լինի իմ նոր տանը հատակը,
 Ծանր քարե՛ վրաս ծածկած վերմակը:
 Բայց, ա՛խ, երբ որ կանցնի ամիս ու տարի,
 Կը մամոտի գերեզմանը այն քարի,
 Հետը անգամ չի մընալու իմ խաչին,
 Իմ անունը, իմ հիշատակ—կըկորչին.
 Բայց կուզեի թողնել այստեղ մի արձան,
 Որ դարեդար մընար ամուր, անկործան...
 Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
 Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ.
 Մի՞թե այնքան անզուժ կլինի Լետա գետ,
 Որ անունըս անգամ կանե նա անհետ:

ԵՐԿՈՒ ՔՈՒՅՐ

Նմանություն

Նվեր Սիմիոն Ամբարոսյանին

Մեզնից շա՛տ առաջ կար մի թագավոր,
 Հոգվով գեռ արի, գլխով ալևոր,
 Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
 Ոսկի ասացին գիտունք այն դարը,
 Ունե՛ր նա երկու մատաղհաս աղջիկ,
 Մի՛նը խիստ տգեղ, մյուսը՝ գեղեցիկ:

Մի օր տգեղը ասաց մյուսին.
«Երթանք ծովի ափ, քույրի՛կ, միասին»:
Սիրունը գնաց առաջից տրտում,
Տրգեղը հետնից ոխ պահած սրտում.
Հագիվ թե ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քրրոջ գրլորեց նա ցած:
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
«Քուրի՛կ իմ, քուրի՛կ, փրկե՛ ինձ մահից.
Ծա ունիմ տանը գեղեցիկ մանյակ,
Ա՛ռ, էն քե՛զ լինի, պարգևե ինձ կյանք»...
— էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկություն դու բնավ մի՛ հուսալ—
«Քուրի՛կ, թե այդ էլ քեզ չէ բավական,
Կուտամ քեզ ոսկի պրսակ պատվական»:
— էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկություն դու բնավ մի հուսալ—
«Քուրի՛կ, մի թողնիլ դու ինձ անտերունչ,
Քեզ սիրուն փեսաս կուտամ անտրտունջ»:
Տրգեղի սիրտը դարձել էր ժեռ քար,
Քրրոջ խնդիրքը թողեց անկատար:
Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բրունեց մարմինը սիրուն աղջրկան...
Ջրրից հանեց, դրեց ափի մոտ,
Շատ ծաղիկ ցանեց վրբան ու շատ խոտ:
Մի աշուղ անցավ, տեսավ աղջրկան,
Հացեց ու առավ, դրեց ուսի վրան,
Տարավ իրա տուն այդ անգին գյուտը,
Չորացուց նորա մարմնու դիփ հյութը:
Գեղեցիկ տավիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հյուսեց մագերից.
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գրնաց արքունիք տավիղը ձեռքին:
Երբ մտավ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսավ տրգեղին փեսի մոտ կայնած.
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հյուրերի առջև քաղցրաձայն երգեց.
«Հընչե՛ իմ տավի՛ղ, հնչե՛ համարձակ,

Հարազատ քույրու խըլեց իմ պսակ-
կրսե՛, իմ ծնո՛ղ, լրսե՛ սիրակա՛ն,
Հարազատ քույրս խլեց իմ փեսան.
Կրսե՛ ծողովու՛րդ, լրսե՛ անխրո՛ով,
Հարազատ քույրու գրլորեց ինձ ծով»:

Մյուս օր դահիճքը խարույկ շինեցին,
Մահապարտ քրրոջ մեջը գլորեցին.
Հուրը պրկվելաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար աստված ինձ պատժեց»:

ՕՐՈՐՈՅԻ ԵՐԳ

Քու՛ն էղիր, պալաս, աչքըդ խուփ արա,
Նախշուն աչքերուդ քուն թող գա վրբա.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Օսկի խաչ վզիդ՝ քեզի պահապան,
Նարոտ կապիլ է ծարեն տեր-պապան.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Մավի հիւուններ կախիլ իմ ես ալ,
Նազար շիս առնուլ, քու՛ն եղիր, մի՛ լալ.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Աս քանի՞ մորըդ անքուն աչքովը
Անցիլ է օրեր օրոցքիդ քովը.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Օրոցքըդ օրրիմ, օրով բոյ քաշիս,
Մըղկրտան ծանով սիրտըս չի մաշիս.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Գուն ալ քուն էղիր, ինծի ալ քուն տուր,
Սուրբ աստվածամայր (այս անունին) քուն տուր:
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

ԱՂԵՆ ՏԱՆՆ Է

(Նմանություն)

Ձարմանք բան է, հենց գիտենաս
Աղեք տանը շեն նըստում.
Իսկի շեղավ վուր մի գըթնիմ
Աղալոին իր տընում:

— Մի՛ արմանա, պարուն Սարգիս,
էս աշխարքի աղաթին,
Իշխանք, գանա, դու խաբար չի՞ս,
Վուր քասիբին կու ատին:

Առ օրինակ, թե մեծավուր,
Ապալետնիրը ուսին,
Գա դըրան մոտ, հարցնե աղին,
«Տա՞նն է».— տանն է, կոսին:

Նըրա էղնից մի փեշաքար,
էլի էն նոքրին հարցնե.
«Տա՞նն է աղեն».
Կընծին տալով
Խեղճին իսկույն դուս կոնե:

Թե աղի մոտ լավ շուրերով
Կու գաս՝ տանը կու գըթնիս.
Վա՛յ թե շուխեղ հընացած է,
Լավն էս է, տուն չի մըտնիս:

Թե սալոպով աղչիկ պարոն
Կու գա՛ թող ներս հրամայե,

Թե դաթիպով պառավ Ձալոն
Հարցնե՛ կոսին տանը չէ:

Թե վնիր ձեռնիդ քիսա բըռնած,
Պարոնին փուղ բերիլ իս,
Փառք ու պատվով ներս մըտնում իս,
Գլխի վրա տիղ ունիս:

Թե դուքանդար իս, հիսաբով
Փուղի էղնից իս էկի,
«Տա՞նն է աղեն».
Կոսին—հալա
Ժամիցը տուն չի էկի:

էս է հիմիկվա աղաթը.
Կուզիս շիգրից տըռաքի.
Թե քասիբ իս՝ ջուրը նընկի,
Թե խոջա իս՝ տուն մըտի:

ՀԱՅ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,
եվ կամ՝ որի մականունը հանգում է յան մասնիկով,
Որ ուտում է ամենայն օր ճաշին տղմա ու փըլավ,
Կամ՝ պարծանոք միշտ հագնում է հայի գըղակ ու հալավ:

Ո՞վ է հայը, մի՞թե նա է, որ գընում է հայի ժամ,
Ու տարենը հաղորդվում է խիստ սակավից՝ չորս անգամ,
Որ կյանքումը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նույնպես,
Հորանջելիս խաչ է կընքում՝ բաց բերանն ու երես:

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ տեսնելիս տերտերին
«Օրհնյա ի տեր» պատրաստ ունի ամեն բուպե իր բերնին,
Որի համար մեծ ամոթ է, նաև մեղք է մահացու,
Թե գատիկի թաթախմանը չուտե թերխաշ կարմիր ձու:

Չէ, սի՛րելիս, ազգությունը չէ արտաքին արարմունք,
Հայ ծընելըդ անգամ չի տալ քեզ հայության իրավունք,

Ով կամ թե յան մականուննիդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձվով կամ թե անձու կատարում ես զատիկը:

Քալլա-փաշա կամ թե բորշ է ամեն օրվա կերածըդ,
Սեռտուկ, պայլտո կամ թե շուխա է վերայի հագածըդ—
Ողջը մին է. ծեսով շեռ տալ ազգիդ վրնաս կամ օգուտ,
Տեղը մընա ազգութունը, այդ նաև վարձ չէ հոգուդ:

Թե դու հայ ես՝ հայութունդ պիտի հարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի հուսոտ աստղը քեզ համար.
Օտարինը դու մի առիլ, մի էլ սիրիլ կուրորեն,
Բայց դու հայի օգուտները միշտ վեր դասն ամեննն:

Արվեստ, ուսում, շրջեղարվեստ տարածե՛ հայ ազգի մեջ,
Բայց բընությամբ միշտ հեռացուր նորա մեջեն կրոնի վեճ.
Քեզ ի՞նչ շահ է, թե դու կասես՝ հոգին բըխել է հորից,
Կամ թե որդին հոգվով սրբով անսերմ ծընունդ է մորից...

Թող, սիրելի, այդ խընդիրքը, աչքըդ դարձուր դեպ հարավ,
Բյուր-բյուր հոգիք դու կըտեսնես կորած դորա պատճառով,
Բայց մինչ այսօր այդ խընդիրքը մընացել է անվըճիտ,
Թույլ խելթովդ աշխատում ես քակել անբակ այդ կընճիտ:

Սիրե՛ ազգըդ ոչ լոկ խոսքով, սիրե ինչպես քու անձը,
Նորա օգտին, թե պետք լինի, զոհե բոլոր քո գանձը.
Մի խնայիլ կյանքըդ անգամ, արյունըդ բեր նորան զոհ.
Ոչ այն հուսով, որ քու ազգը իսկույն լինի քեզնից զոհ:

Իստակ սերը չի պահանջում ամեննին տըրիտուր,
Թե տվածը ետ առնվի՝ դորան կասեն առուտուր.
Բայց վայ նոցա, որք անըզգա են յուր ազգի վիճակին,
Հազար անեճք նոցա վերա, էրնեկ շան պես սատակին:

Թե դու հայ ես՝ գիտե՛ս արդյոք՝ ով էր ազգիդ նախահայր,
Ռ՛րտեղ, ո՞ր կողմ նա ընտրել էր ազգիս համար հայ աշխարհ.
Քանի՞ տարի անկախ մընաց հայը օտար ազգերից,
Ի՛նչ էր պատճառ, որ նա ընկավ իր առաջվա փառքերից:

Ո՛ւր ցըրվեցավ քու խեղճ հայը, ունի՞ այժմ օգնական,
Կա՞ մի հընար, միջոց կամ հույս սորա կրկին նորոգման.
Թե կա հընար՝ դու պատրա՞ստ ես անձըդ ազգիդ զոհ անել,
Խիստ կըտըտանք, սաստիկ տանջանք, սով ու ծարավ
միշտ տաննել:

Դու պատրա՞ստ ես թողնել կայքըդ, ծնողք, եղբարք սիրական,
Սիրելվույդ տեղ կըրծքիդ սեղմել միշտ մահառիթ հըրացան.
Դու պատրա՞ստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դեմ,
Սարսափելի մահըդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադեմ:

Այդ ժամանակ քեզ Հայ կասեմ

Բայց թե փորըդ տուլմաներից կամ փըլավից տըռաքի,
Հավատացի՛ր, ուտելովդ օգուտ չես բերիլ ազգի:

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Նվեր Գևորգ Բանանյանին

Մայր Արաքսի ասիերով
Քայլամուրր գրնում եմ,
Հին-հին դարուց հիշատակ
Ալյաց մեջը պըտրում եմ:

Բայց նորա միշտ հեղհեղուկ,
Պըղտոր շրով եղերքին
Դարիվ-դարիվ խփելով
Փախում էին լալագին:

— «Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար շես բռնում մանկական,
Դու դեռ ծովը շի հասած
Սըգավոր ես ինձ նըման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քո սեզ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախում ես
Այդ հարազատ ասիերից:

Մի՛ պըղտորիլ հատակըդ,
Հանդարտ հոսե խայտալով,
Մանկությունը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դեպի ծով:

Վարդի թըփեր թող բըսնին
Քու հյուրընկալ ասի մոտ,
Սոխակները նոցա մեջ
Երգեն մինչև առավոտ:

Մըշտադալար ուտիներ:
Սառ ծոցի մեջ քու ջըրին
Ճկուն ոստըն ու տերև
Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մոտ երգելու
Հովիվք թող գան համարձակ:
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մըտնին միշտ արձակ»:

Մեջքը ուցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Անպի նման գոռալով
էսպես խոսեց հատակից:

— Եիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարևոր
Վըղովում ես, նորոգում
Իմ ցավերը բյուրավոր:

Սիրելիի մահից ետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գըլուխ պըճնվի
Իր զարդերով թանկագին:

Որի՞ համար զարդարվիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ...

Իմ ազգակից գիժ Քուրը,
Թեև այրի ինձ նման,
Ստրկորեն կրում է
Գայթակղիչի կուռ շղթան:

Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես հայ, հայիս կճանչնամ,

Օտար փեսա չուզելով,
ես միշտ այրի կմնամ:

Կար ժամանակ, որ ես էլ՝
Շրթեղազարդ հարսի պես
Հազար ու բյուր պըրբանքով,
Փախչում էի ամենքես:

Հատակս պարզ ու վճիտ,
Կոհակներըս ոլորուն,
Հուսաբերը մինչև այդ
Ջրիս միջին էր լողում:

Ի՞նչըս մնաց էն օրից,
Ո՞ր ջրբամոտ գեղերըս,
Ո՞րը իմ շեն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս:

Տուրքը ջրի ամեն օր
Իր սուրբ ծոցին Արարատ
Մայրախրնամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ:

Բայց ես այս սուրբ ջրերով
Սուրբ Ակոբի աղբյուրին
Պիտի ցողեմ արտորա՞յքն
Իմ ատելի օտարին:

Մինչ իմ որդիք,— ո՞վ գիտե—
Մարավ, նոթի, անտերունչ
Օտար աշխարհաժում են
Թույլ ոտքերով կիսաշունչ...

Հեռու՛, հեռու՛ քըշեցին
Բնիկ ազգըն իմ հայկյան,
Նորա տեղը ինձ տվին
Ազգ անկրոն, մուկկան:

Գոցա՞ համար զարդարեմ
Իմ հյուրընկալ ամենքը,
Եվ կամ դոցա՞ հրապուրեմ
Ճըպոտտ, պըրշած աչերը:

Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մընան պանդուխտ,—
Ինձ միշտ սըզվոր կը տեսնեք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»:

Էլ չի խոսեց Արաքսը,
Հորձանք տվեց ահագին,
Օղակ-օղակ օձի պես
Առաջ սողաց մուկկին:

ՆԿԱՐԻՉ

Նվեր Հովհաննես Պատկաճյանին

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՞ւր ես մըտքով մոլորած,
Ներկ ու վըրձիններ ցիր ու ցան առաջիդ,
Վշյա կըտավը քու հանդեպ փըռած:

Շո՛ւտ տուր աչերդ, նայե՛ դես ու դեն
Տե՛ս, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը,
Ջարթի՛ր, սիրելի, այդ անու՛շ քընեն,
Գոնե մի անգամ հանե՛ քու ոխը:

Բայց դու ներում ես նոցա վե՛հ հոգով,
Խույ ես աշխարհի ունայն շըշուկին...
Հանկարծ աչերըդ փայլեց սուրբ շնորհքով,
Հըսկայի սիրտըդ թընդաց խիստ ուժգին:

Առիք վըձինը, թաց արիք ներկով,
Շունչ տվիր անշունչ կուպիտ կըտավին:

Երկնից խորհուրդը մեկնեցավ քեզմով,
Քեզ անկարելին անհայտ է բնավին:

Սեր, ատելություն, հանճար, բարկություն
Տըվիր պատկերին մատիդ շարժվածքով,
Ինչ որ չի հայտնեց ճարտարի լեզուն,
Գու պարզ հայտնեցիր անձայն խոսվածքով:

Ապշեց ամբոխը. վազեց, հառաչեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց,
Մեկաչոք զմուռս ու հալվե խնկեց,
Գոչեց մեծաձայն՝ «դա՛ է իմ Աստված»:

Բայց ա՛խ, քու անբուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հազիվ գին դրին.
Ստեղծողը դարձար քու խեղճ խըրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին:

ՀԱՅ ԱՂՋԻԿ

Գու տեսե՛լ ես երկնքումը:
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ թե կանաչ տերևի մեջ
Կարմիր ծիրան փայլելիս:

Գու տեսե՛լ ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փըթըթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար
Զորս բուրբը պար բռնած:

Բայց լուսինը խիստ խավար է,
Հայ աղջրկա առաջին,
Միրան, մեխակ ու նունուֆար
Զարժե նորա մեկ պաշին:

Երկու թըշին վարդ են նստել,
Ճերմակ ճակտին՝ մեկ շուշան.

Ժպիտը բերնից ցած չի գալիս—
Անմեղուության է նշան:

Տե՛ս, նա առավ կարմըրելով
Իր ընկերից դահիրան,
Դրըմդրըմբեցուց փափուկ մատով
Ու սկսեց լեզգիներկան:

Նագուք մեջքը ծառի նրման
Տատանում է գեղեցիկ.
Մեկ՝ թըռչում է նա անգուման,
Մեկ՝ գընում է խիստ հեզիկ:

Հալվում է խեղճ կըտրիճների
Սիրտը՝ նորան տեսնելով,
Մերը իրան անիծում է,
Որ ծերացավ խիստ շուտով:

ՔՅՈՌՈՂՈՒ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

(Աճկատար)

1. ՆԱՆԵՐԳ

Անկա՛ջ արեք, թարիֆ անեմ Քյոոզլուի քաջ արարքը,
Քյոոզլուին շատ են սիրել մեր պապերը ու մեր հարքը.
Ո՛վ չգիտի Քյոոզլուի անմահական գործքն ու բարքը,
Մինչ էս օրըս աշուղները մեջլիսի մեջ նըրա վարքը
Պատմելով՝ մոռացնում են լըսողներուն դիփ աշխարհքը:
Մայիսի բըլբուլ էին նըրա շունգրի անուշ լարքը,
Նըրա նետը դանադ ուներ՝ դուզ հասնում էր մինչ ամպերը,
Նըրա թուրը աղամանդի՝ կըտորում էր արկաթները,
Հայելու պես պըսպըղում էր նըրա հատու սուր խաները,
Ի՛նչ է ծանգը՝ չէին խաբար նրա զենք ու գրահները.

Մինչ էս օրըս սարսափում են Սուլթանի խեղճ նոքարները,
 Հիշելով Քյոնոզլուի անցած գրնացած արարքը:
 Նրբան անկեղծ սիրում էին հայը, թուրքը ու պարսիկը,
 Թե դուշմանը, բարեկամը, շահել տղեն ու աղջիկը:
 Սրխրագործությանը նրբա ու մեծանձնության խաբրիկը
 Բարձր Յալբուզ սարից բռնած՝ անցել էին մինչ Ննդիկը,
 Հազար հոգի անջաղ ունեք նրբա հեծվոր քաջ զընդիկը,
 Աշխար կաներ տակնուվրա, թե չէր խավրել շուտ աստղիկը:
 Անկա՛ջ արեք քյոտ աշուղիս՝ ձեզ հրաշալի բան եմ ասում,
 Զահել տըղե՛րք, լավ ուշք դըրեք,՝ զարմանալի բան եմ ասում,
 Սիրուն կուսանք, լավ միտք դըրեք, արտասովելի բան եմ ասում,
 Հարգո ծերեր, ինձ լըսեցե՛ք, ձեր պապերու բանն եմ ասում,
 Հայ քրիստոնյայք, ազգի իշխանք, խորհրդավոր բան եմ ասում,
 Ուշկով միտքով ականջ դըրեք, ձեզ ամենիդ բան եմ ասում:

2. ԱՇՈՒՂ

Աշուղի լեզուն դըրիստն է ասում ամեն մի բանին,
 Իր ամենը հոգին ոսկով չի ծախում նա Մամոնային:
 Միշտ մեկն է ասում նա՝ թեկուզ յարին, թեկուզ դուշմանին,
 Չի վախում խոսել դրիստն առաջի ահեղ ատենին:
 Աշուղն ամենի խաթրին գըլուխը զուրբան է դընում,
 Տըխրած որ տեսնի՝ ինքն էլ նրբա հետ անկեղծ է տըխրում:
 Միծաղողի հետ ինքն էլ է իսկույն ուրախ ծիծաղում:
 Հաղով ծընել է մորը արգանդեն, հաղով է մեռնում:
 Աշուղը թեկուզ յաշովն իլի հարուր տարեկան,
 Նրբա միամիտ պարզ հոգին մընում է միշտ մանկական:
 Խոշա ու քյասիք, տեր ու ծառա են նրբա սիրական,
 Հավասար մարդ են՝ թեկուզ քրիստոնյան, թե մահմեդական:
 Վառ արեգակը ամենի համար լուս է ու պայծառ,
 Միայն աշուղին ցերեկվա մեջն էլ մութ է ու խավար,
 Մութն է աչքերը, բայց լուս է հոգին, սիրտն է բոցավառ,
 Քանց գրրագետեն լեզուն ունի նա անուշ ու ճարտար:

էն բարձր ժեռուտ սարի գագաթին բազա՞ է նըստած,
 Թե՞ էժը վայրի ջըլոտ ոտներով է էնտեղ հասած:
 Ամպի կտո՞ր է կրպել երկնամերձ էդ սարի ծայրին,
 Թե՞ ծառ կամ մացառ բըսնում, աճում են անբընակ վայրին:
 Ո՛չ ծառ և ո՛չ բույս, ո՛չ հավ թևավոր և ո՛չ անասուն
 Կարող են հասնել ոտով կամ թևով էդ սարի գըլխուն:
 Էդ սարի օդեն մենակ մեկ մարդու գոշըն է ծըծել,
 Էդ սարի գըլխուն մենակ մեկ մարդու ոտըն է կոխել:
 Սըրընթաց Ռաշտի ոտքըն էդ սարում ճամփա է բացել
 Ու Ռաշտի նալը՝ նրբա կըշտերից կըրակ է հանել:
 Բայց այժմուս չի կա ո՛չ մարդը, ո՛չ ձին՝ էդ սարի վըրեն,
 Լոկ քամին ազատ իջնում է էնտեղ ամպի մեջերեն,
 Ու լուսնի շողքը պայծառ գիշերուն հանդարտ ու հեզիկ,
 Մարդոցմե թաքուն պար են բոլորում՝ զինչ անմեղ մանկտիք:
 Ու սարի քաջը գիշերվա մըթին վըհուկներու հետ
 Ճըշում, ոռնում են, հետո հորինում կաքավ անհեթեթ:
 Մոլորված ճամփո՞րդ, շուտով հեռացի՛ր ահավոր տեղեն:
 Քըշե՛ ձիդ առաջ, խանջերըդ հանե՛ արծաթ պատենեն,
 Տեսնո՞ւմ ես բերդը էդ սարի գըլխին. շար գևի նըման
 Հազար բոցեղեն շանթեր կու շաղե բիրդեն քու վըրան:
 Զըգիտես յանի, որ դիվաբընակ էդ սարի գըլխուն
 Քաջ լաշքյարովը իր բունն է դըրել ահեղ Քյոնոզլուն:
 Ծամփեղ երկար է առաջիդ, ո՛վ մարդ, սրտանց աղոթե՛,
 Որ քու աստվածը մեղավոր հոգիդ մահե ազատե:

4. ԲԱՋՄԱԿԱՆՔ ԽՆԴՐԱՄ ԵՆ ԱՇՈՒՂՆ

Աշուղ, բըլբուլն է քեզ ավանդել իր քաղցր լեզուն,
 Քերովբե՞ն է դիպել իր սուրբ մատերով քու սիմ լալերուն,
 Քու սուր բերանո՞վն յարաք խոսում է արքան իմաստուն,
 Անցածն ու գալուն քեզ ո՞վ է հայտնել, ո՞վ անուս գիտուն:
 Դիպչե՛ մատերով արծաթ յարերուն խոսնակ շունգուրին,
 Անշունչ թելերուն շունչ տուր, խոսեցու՛ր լեզվով մարդկային:
 Թո՛ղ պատմե մեզի գործըր գյուցազանց անցած դարերին,
 Ո՞վ էր բնակիչը էդ դիվաբընակ վայրի սարերին:

5. ԱՇՈՒՂԸ ՊԱՏՄՈՒՄ Է

Սուլթան Մահմուդ բռնավորը օրես երկու դար անցած,
 Ղըզըլբաշի մեծ տերութեան ոսկեգահուլքն էր նըստած.
 Նըրա ղոշում նոքարներու շիկար թիվը, հեսաբը,
 Անպատմելի զալըմ մարդ էր, ասում է հին քիթաբը:
 Հե՛ր է խըռով ժողովորդը գոռոզ Մահմուդ Սուլթանին,
 Մեկգմեկով խըռնված են ինչո՛ւ պաշտողք Ղուրանին.
 Ի՞նչ է հարցնում բազմութունը էդ խուժադուժ իրարից,
 Զիլի՞ Շահին շար խաբար է հասել իշխան խաներից,
 Զիլի՞ քուրդը վըրա տվել, թալանել է Հերաթը,
 Զիլի՞ Վիրքը ղոշում առած՝ հասել է մինչ Սեհրաթը:
 Մեկանց երեսն ուրախ, զվարթ, մյուսներին խիստ տըրտում,
 Կեսը հա՛յ-հա՛յ, կեսը վա՛յ-վա՛յ ասում, լալիս ու խընդում.
 Ղըզըլբաշն է հա՛յ-հա՛յ ասում, վա՛յ ասողը խեղճ հայն է,
 Վա՛յ վագախը մեր խեղճ ազգի քամբախտ կյանքի կես փայն է.
 Վա՛յ ասելով՝ օրը մաշեց, լուս արևը մըթացուց.
 Վա՛յ ասելով՝ թագը կորցուց, ձեռի թուրը բըթացուց.
 Ա՛խ ազգի, վա՛յ, ի՞նչ ողբ կարդամ էդ անիծած քու ձենին,
 Քեզ ո՞վ ցանեց հայու երկրում, որ պինդ կըպար մեր սըրտին:
 Կուլի՞ յարաբ մեկ օր, երբ դու իսպառ կորչես մեր մեջեն,
 Կուլի՞ օր մի, երբ ցավք ու դարդք հայի հոգին չի տանջեն...
 Ամա... աչքըդ շո՛ւ առուր, նայե՛ դու էս երկու քամբախտին,—
 Մեկի աչքը արտասովալի, արնաշաղախ մյուսին.
 Որ լալիս է արտասուքով թըխամազ է ու շահել,
 Իսկ մեկելի զըլխուն վաղուց տարիքն իր ձյունն է ցանել...
 Պատմութենիս միտքը կարճ է. Շահը խիստ էր բարկացել
 Իր նոքարի վըրա, իսկույն հրամայել էր կուրացնել.
 Կուրացնել էր նա հրամայել, սըրատեսին կույր դարձնել,
 Ա՛խ, գիտե՞ք դուք, հասկանո՞ւմ եք, թե ի՞նչ բան է կույր ասել

6. ԿՈՒՐԻ ՀԱՂԸ

Չունգուր իմ խոսուն, դու թարիֆ արա՛ խեղճ կուրի հալը,
 Օրենը քանի՞ անիծում է նա իր աշխարհ գալը.
 Ի՞նչ է պետք նըրան աշխարհքիս գանձը, հարբաստի մալը,
 Մագամ չե՞ն հավասար թե փշրած շուշեն, թե անգին լալը:

Արևի շողքը կուրի էրեսը էրում է, էրում,
 Կուրը արևի տեսքին համաշա հասարաթ է մընում.
 Երկիր ծաղկազարդ, երկինք աստղազարդ՝ երազ են թըվում
 Խեղճին հավասար մութ են լույս ցերեկ, խավար իրիկուն:

Գարունն է գալիս, փըռում է գետնին նախշուն խալիչան,
 Կոշունք է անում, մեջլիս են գալիս հավեր զանազան.
 Մաղկունքն էլ գալիս կանաչ ու կարմիր՝ նոր հարսի նըման,
 Գարնան մեջլիսին անհրավեր մընում է կույրը միայն:

Օրը մթնում է, թուխպը քողում է երկնից դիմակը,
 Հագար կամարից շախմախ է տալիս ամպից կեծակը,
 Կանաչ-կարմիրը կամար է կնպում ծագաց ի ծագը,—
 Միայն խեղճ կուրի համար անտես է աստծո փառքը:

Հերն ունի որդի, մերն ունի աղջիկ՝ նազլու ու սիրուն,
 Զավակը ծնողաց երեսն նայելիս՝ խընդում է, ցընծում,
 Մնողը զավակի վըրեն նայելիս՝ ինսան է տեսնում.
 Ի՞նչ շահ է կուրին, թե ունի զավակ՝ տեսնել չէ կարում:

7. ԶՐՈՒՑ ՀՈՐՆ ՈՒ ՈՐԴՈՒ ՄԵՋ

Մերը ասաց ջահել տըղին.— «Տե՛ս աշխարքիս քոռ բախտին,
 Քըսան տարվա աշխատանքիս վարձն ա՛յս էր, վա՛յ իմ գըլխի՛.
 Որդյակ, ինչ որ հիմի տեսար՝ մըտքիդ պահե՛ հավիտյան,
 Եվ ինչ որ քեզ պատմելու եմ չի մոռանաս ցօր մահվան:

Լըսե՛ իմ որդի, լըսե՛, սիրական,
 Սրտի դարդերը հորըդ շուռուական,
 Լըսե՛ դու ուշքով հորըդ զըրուցին
 Ու մի՛ մոռանար մինչ շունչըդ վերջին:
 Վառվում է սիրտըս բոցով գեհենին,
 Արունըս եռում դամարիս միջին.
 Հոգուս մեջ ոխը դադար չէ տալիս
 Ինձ ո՛չ օր ցերեկ, ո՛չ ժամ քընելիս:

Ա՛խ, ես այս օրվա՞ն պիտի հասնեի,
 Գուշմանիս մինչ վերջ հաղթող տեսնեի,
 Ինչո՞ւ պակսեցավ ուժը իմ սըրտեն,
 Որ սուր շառի ձեռս գուշմաններուս գեմ:
 Քանց այսպես թըշվառ օրեր անցնելը
 Բյուր պատիկ լավ չէ՞ր փառքով մեռնելը...
 Ո՛հ, որդյա՛կ, որդյա՛կ, անիծիր դու մի՛
 Ալևոր հորըդ օրեն ցավալի.
 Բա՛վ է, որքան ես գըլուխս եմ լացել.
 Արուն արցունքով մահիճս եմ թացել.
 Մի՛ դու էլ նորից անիծիր ինձ, մի՛,
 Արևուդ մատաղ, ազիզ իմ որդի.
 Լըսե՛, իմ որդի, լըսե՛, սիրական,
 Սըրտի դարձերը հորըդ շուտական...

ԱՆՎՆԱՍ ՄԱՐԳ

ՓՈՒՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նվեր ՄԵ. Քիմուրյացի

Живя согласно со строгою
 моралью
 Я никому не сделал в
 мире зла.
 Некрасов

Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
 Ես կյանքումըս մարդու վընաս չի արի.
 Արժանացա մեծ-մեծ պատվո ու փառաց,
 Որ միմիայն նըպատակն էր իմ կենաց.
 Տունըս առատ ազգի ազգի ուտեստով,
 Սընդուկներըս լի թանկագին ըզգեստով,
 Մառաններըս մունջ, միշտ հըլու հրամանիս,
 Անպակաս էր ոսկի, արծաթ գըրպանիս:
 Բայց ո՞վ տեսավ երկրիս վըրս անփուշ վարդ,
 Այսպես հավերժ փառքով լըթյալ չի կա մարդ.
 Այո՛, հասան ինձ էլ օրեր դառնագին,

Բայց ի զու՛ր, զի հանցավոր չէր իմ հոգին.
 Ես մընացի Տիրոջ կամքին հընազանդ,
 Աղոթելով տիվ և գիշեր ջերմեռանդ:
 Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
 Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր ծառաս կոտրեց իմ մեծ հայելին,
 Որ կարծենար քիչ-քիչ հազար ֆիորին.
 Ես շասացի նորան խոսքեր անվայել,
 Այլ ստիպեցի վեց ամ ձըրի ծառայել.
 Այս գիպվածը նորան խըրատ կը լիներ,
 Թե որ մինչև յոթներորդը նա ապրեր:
 Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
 Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր եկավ իմ մոտ մի խեղճ պատանի,
 Խընդրեց, որ ես դընեմ նորան մի բանի.
 Խիստ շափավոր էր թըշվառի խընդրածը,
 Բայց էն տարի շատ թանկագին էր հացը.
 Չընդունեցի. նա էլ զընաց ջուրն ընկավ.
 Ափսո՛ս տըղա, որ նա էզպես շուտ մեռավ:
 Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
 Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր տեսա մի ալևոր մուրացկան,
 Որ վեց տարի առաջ այգիումս էր վարձկան.
 Խոշբեշ արի հետը, սիրով խոսեցի,
 Սրանից սավալ՝ ո՞նց է քեֆըդ, հարցուցի.
 Բայց նա հանկարծ ինձնից խընդրեց մեկ մանեթ.
 Ես վարձացա սաստիկ ու շուտ դարձա ետ:
 Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
 Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր որդիս իրա կամքով, անհրաման,
 Սընդուկիցըս հանեց հինգ թե վեց թուման.
 Ես իմացա, վըբա հասա բըռնեցի,
 Ձեռքը կապած՝ դատափորին մատնեցի.

Շատ շի անցավ վախից խեղճը թույն կերավ:
Ահա՛, էսպես միակ հույսը իմ կորավ:
 Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
 Ես կյանքումըս մարդու վրնաս շի արի:

Իմ Շուշանի սիրտը կըլավ Օհանին.
 էդ Օհանի ծընողք շունքի խեղճ էին,
 Ես Շուշանիս տվի հարուստ քոռ Գոգուն,
 Որ համրանքով շրգիտեր շափն իր ոսկուն.
 Բայց քամբախտ էր ծընած օրից խեղճ Շուշան,
 Վեց ամիսից մըտավ թաց, սառ գերեզման:
 Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
 Ես կյանքումըս մարդու վրնաս շի արի: -

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹԱԾ ՀԱՅ ԵՐԵՏԱՍԱՐԴ

Տեղը եկավ՝ հայ է նա, տեղը եկավ՝ այլազգի,
Իրոք ո՛չ այդ և ո՛չ այն է, այլ ծընունդ մի նոր ազգի:
Հագնվում է նա միշտ en grand, ման է գալիս á la chigue,
Ճաշ է ուտում, ո՛ւր եք կարծում, chezDussean կամ Dominigue
Կարդում է նա Morninng, Débats ոչ Բազմավեպ, ah! Fi, dond
Ֆրանսերեն է կտրատում, հայերենն է moivais ton,
Ջարթում է նա ուղիղ մեկին, անկողնի մեջ թեյ խըմում,
Նախաճաշիկն է երեքին, գաղիացի պանդոկում,
Վեցին քառորդ՝ ճաշի ժամ է շընաշխարհիկ մեր հային,
Ոչ թե ստիպված է այդ անել, այլ որ վերան շատ խոսին:
Ուշի-ուշով հետևում է Պետերբուրգի լուրերուն,
Դերձակից էլ ճիշտ տեղյակ է НОВОМОДНЫЙ շորերուն.
Թեև զուրկ է մուզիկայից, բայց опера սիրում է,
Бозно-ի անուշ ձենից սորա խելքը գընում է,
Պինդ խոսում է, ինչ որ կանխավ feuilleton-ում է կարդել,
Խոսքով աշխարհ կործանում է մեր պարոնը անարգել.
Նեպիր, Դունդաս ու այլ անձինք են նյութ նորա զըրույցին,
Պախարակում է Hugo-ին ու սիրում է Դիկկենսին:
Նա սիրում է, նա ատում է ո՛չ սեփական իր խելքով,
Նա խըմում է, նա ուտում է ոչ իր բերնի ճաշակով:

Նրա խելքը feuilleton-ն է preйc-кyрант-ն ճաշակը,
Ու Գիտությանց ճեմարանը է, ո՛ր ասես պանդոկը:
Քանի տարի քաշ է գալիս Պետերբուրգում բյս կերպով,
Ու ետ դառնում իր հայրենիք՝ դատարկ խելքով ու ջիբով:
Այնուհետև պահանջումընքը նորա մեծ են անհեթեթ,
Միայն ինքն է խելոք, գիտուն, իսկ այլք՝ կոպիտ ու տըգետ:
Այդ ի՛նչ զարմանք, որ հիմարը ուզե պատիվ իր անձին,
Նա է հիմար, որ անարժան տա պատիվը հիմարին.
Բընութենեն խելազուրկին Պետերբուրգը խելք շի տալ,
Մեծ հունար շէ փողոցներում աննըպատակ միշտ ման գալ:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹԱՅ ՀԱՅ ԱՂՋԻԿ

Շուշան, շուտով, դեմքը ծածկե՛, ձյուն դու թվիր մբրոտած,
Տե՛ս, սիգանեմ ման է գալիս հայ աղջիկը մեր կրթված.
 Վարդի գույնը *уж не в моде: то-ли дело бледный лик!*
 Այստեղումը *бледный են դիփ՝ համ աղջրկունք, համ կնանիք:*
 Ի՛նչ է գաղտնին *бледный* ության, այդ հայտնի չէ ոչ ոքին,
 Միայն կասեն, որ շատուց է կավիճն ունի բարձրը գին:
 Առավոտ է. մեր աղջիկը հայլիից չի հեռանում,
 Նորա ծրնողը այսօր ճաշի ցարդեւ են ըսպասում.
 Գարդեւ է, լա՛վ միտք արեք, հայ չէ, անշնորհ ու տրգետ,
 Գարդեւ է, փայլուն շորով, ուսին դրած *эполет.*
 Տուն կմըտնի, գըլուխ կրտա այնպե՛ս սիրուն, շնորհաշուք,
 Որ մեր կրթած հայ աղջրկա սիրտը կանե *тук-тук-тук!*
 Հնդուր համար նա հայլիից օրն ի բուն չի պուկ գալի,
 Գարդեւ-ին դուր չի գալը խիստ է նորան ըզգալի:
 Ո՛չ լուկ դեմքով պիտի դուր գա, այլ և անուշ խոսքերով,
 Ինչպե՛ս, ի՛նչ կերպ, դուք կը հարցնեք, այդ էլ չըզիտե ոչով:
 Բարձի տակը պահած ունի նա *George Sande-ի roman-ը.*
 Գիշերները մորից թաքուն կարդում է մինչ շորս ծամը.
 Անհատական այդ աղբյուրից նա քամում է անդադար
 Սիրո զգացմունք, սիրո խոսքեր—կանանց սըրտին մխիթար:
 Նա գրտավ յուր *идеал-ը,* այսօր ճաշին կըտեսնե
 Նա յուր անտես սիրահարին, ում որ սիրտը տվել է:
 Հայո՛ց աղջիկ, հայո՛ց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ,
 Бледный դեմքըդ, շինծու խոսքըդ ովի՞ն ասես չի խաբիլ:
 Գարդեւ-ին դուր չես գալի,—ի՞նչ ափսոսանք, ի՞նչ վընաս,
 Քեզ սիրահար *гусар, улан, артиллерист* կունենաս:
 Դու փո՛րձ փորձե նորից դուր գալ, անուշ ժպտա՛ ու խոսե՛,
 Քրսանմեկըդ արդեն մոտ է, տե՛ս, առաջիդ մեծ փոս է:
 Բայց մի՛ թողնիլ դու *George Sande-ին,* *идеал-իդ* մի ուրանալ.
 Քե ոչ չահիլ, գոնե ծերով կառնե քեզ ոուս *генерал.*
 Բայց զգուշացի՛ր դու հայերից, գին չեն դնիլ, չեն սիրիլ

Քեզ, ինչպես դու ցանկանում ես: դու քեզ հային մի՛ մատնիլ
 Փորձ փորձեցիր ու դուր չեկար ո՛չ *улан-ին, гусар-ին,*
 Քրսանհինգըդ մոտենում է, հայ՛ աղջիկ, վա՛յ քու հային:
 Հայո՛ց աղջիկ, հայո՛ց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ,
 Бледный դեմքըդ, սիրուն խոսքըդ ովի՞ն ասես չեն խաբիլ:
 Տարիներըդ ակոս ձրգեց քու շնորհալի երեսին,—
 Վընաս չի կա,—*подруг-ներըդ* դորա համար ճար ունին.
 Երբ որ տանն ես՝ մի՛ հրամայիլ տըղոց քեզի մոտենալ,
 Դուրս գնալիս՝ *лик-իդ* ձրգե՛ դու կըրկնածալ հաստ *буаль,*
 Հարցնողներից ուշի-ուշով ծածկե՛ տարիդ ծընընդյան,
 Ու ամենին հավատացու՛ր, որ տասնութ ես տարեկան:

ԲԱՐԻ ԽՐԱՏ

Նվեր Գարրիել Պատկանյանի

Դեռ չի գըրած՝ առաջ դու լա՛վ միտք արա,
 Ո՛վ է խեղճիդ գըրվածները առնողը.
 Հետո՛ւ և այն մասին փոքր-ինչ հո՛գս արա.
 Որ քեզ սիրե քու հարգելի կարողը:

Դու այս երկու հանգամանքը լա՛վ հիշե,
 Քու քանքարի վըրա շատ հույս մի՛ դընիլ,
 Եզի՛ր թեկուզ նորենացի, Եղիշե,
 Զըսիրելով քեզ՝ գըրքերդ չեն գընիլ:

Գըրքիդ մեջը պարսավանք մի՛ տալ հային,
 Հայը խըրատ (թեև խելոք) ատում է՝
 Մի՛ ծիծաղիլ նորա տխմար գործերին,
 Որ նա ավանդ հորենական կարծում է:

Մի՛ դու հային իր խոր քընեն արթնացնիլ,
 Բարոյական քունը նորա անուշ է.
 Կամ անցյալը նորա առջև մի՛ հիշիլ,
 Այդ անցյալը նորա աչքին սուր փուշ է:

Գողե՛ նորա այն սրբալի արարքը,
Որ խեղճ հայր երազումն էլ չի արել,
Նորա ամոք բնությունը ու բարքը,
(Սուտ պարծանքը հայերի խելքն է տարել):

Գրե՛, թեկուզ լինի լեզուդ սանսկրիտին,
Հայր շատ ուշք կարդացածին չի դընում.
Նա լըսում է մի քանիսի դատմունքին,
Քե ի՞նչ կերպով պարոն Յհանն է դատում:

Յհաններն են Հայոց դատմանց փորձաքար,
Որոնց խոսքը ու վըճիոր անփոփոխ
Միշտ մընում են նոցա համար դարեդար.
Յհաններին քեզ սիրել տուր, խե՛ղճ գըրող:

Այդ երկնածիր քու քանքարը ի՞նչ օգուտ.
Քե խոսածըդ անապատի բարբառ է.
Հայի համար քու ասածը խիստ է մութ,
Նորա սիրտն էլ քու զգացմանցը սառ է:

Սու՛տ ըսփոփանք, թե դու կասես, որ մի օր,
Նա կըսթափի իր դարևոր խոր քընեն,
Քարմ զորություն հոգու մեջեն ու կյանք նոր
Պիտի վազեն երբեք նորա երակեն:

Եվ դու՛, պովետ, ընկճըվել ես, վըհատել,
Երկինք թողած՝ երկիրումն ես քարշ գալի.
Միրել գիտես, գիտցի՛ր, գիտցի՛ր դու ատել,
Ինչ որ հոգիդ վըկայում է ատելի:

Դու նըմանիր ազատախոս թըռչնակին,
Որ երզում է անանձնասեր հույսերով.
Ինչո՞ւ ձիրքը քու երկնային ու հոգին,
Զբաղեցնում ես երկրի շընչին գործերով...

ՎԱՐԴԸ ԲԱՅՎԵԼ Ա...

Վարդը բացվել ա ծաղկոցին,
Ամպի ցողը շողա ծոցին.

Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին.
Դաստա դրախտին:

Քերթիկները դուզ փռել ա,
Նազուք գըլուխը ծըռել ա.
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դրախտին:

Չես համբերել, վա՛րդ մայխսին,
Դուքս ես եկել մարտի ամսին.
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դրախտին:

Կու թառամիս, կը շորանաս,
Մինչ մայխս թե չի դիմանաս,
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դրախտին:

Դաժան քամուն շես համբերի,
Զազիր ճըճվին կըլի՛ս գերի.
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դրախտին:

Չես տեսնելու թիթեռնակին,
Ոչ ավետման ծիծեռնակին.
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դրախտին:

Կուգա բըլբուլը թեմանեն,
Քեզ կուկանչե գերեզմանեն,
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դրախտին:

Կու գանգատե իր սև բախտեն,
Քե որը մընաց կարմիր վարդեն.
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դրախտին:

ԲՌՆԻ ՊՍԱԿ

Լուսադեմին աղբյուրի մոտ գրնացք,
Սառք չըրով ձեռքս, երեսքս լվացի,
Հանգստացա ծառի թափուտ ստվերումը.
Քրոշունները ճլվում էին վերումը:
Մին նոցանից տրխուր, մընջիկ երգում էր,
Ու երգելիս մարդու ձենով ասում էր.
«Ետեղճի՛կ նազլու, քեզ բերել եմ սև համբավ,
Այսուհետև քու քաղցր արևը կորավ.
Քու հերիկը արծաթասեր, քարեսիրտ,
Չի խնայելու անգին օրերը խեղճիդ.
Մերուկ կընճատ նա քեզ փեսա ընտրել է,
Քու փեսան քեզ հորեզ փողով գրնել է:

— Մերի՛կ, ինչե՛ր եմ ես լսել, վա՛յ գլխուս, —
«Աղջի՛կ, հորըդ գործըն է այդ, աչքի լուս»:
— Հերիկ ղո՞րդ է, ինչ լսեցի, վա՛յ գլխուս, —
«Քող աղբերըդ ղորդը ասե, աչքի լուս»:

— Աղբեր, ինչո՞ւ տալիս են ինձ ծերուկին. —
Արծաթասեր մեր հոր գործն է, իմ անգին...
Քիտով ոսկին ջըհուդ ծերը տուն բերեց,
Անգին բըրոջ, աղիկ բըրոջ նա գերեց»:
Մընա՛ք բարև, տուն, ազգական, հավիտյան,
Ոսկի օրըս սեցնելու է իմ փեսան.
Դուք երկնային ազատ թըռչունք մի՛ երգեք,
Անցած օրերս դուք ինձ ի հուշ մի՛ բերեք.
Այսուհետև իմ կյանքն է ինձ գերութուն,
Մահը միայն տալու է ինձ փրկություն:



— Ա՛ն աթոռը, նըստե՛, ուտենք միասին,
Ասաց զոռոզ ծերուկ փեսան նոր հարսին.
Մազն ու ունքը նորա ճերմակ ինչպես ձյուն.
Ու աչքերը բոց կըրակի պես փառան.

Ես քեզ շուտուց սիրում էի վառ սիրով.
Արդ՝ դու իմն ես, ու ես հանգիստ եմ հոգվով:
Ե՛կ, քեզ ցույց տամ իմ պահած փողն ու գանձը,
Քեզ կընծայեմ այն բոլորն ու իմ անձը: —
«Քա՛վ, քե՛զ պահե բոլոր քու փողն ու գանձը,
Դու սեցուցիր անբախտցուցիր իմ անձը»:
— Երթա՛նք, մատան, խըմենք անուշ գինիներ: —
«Գինին ի՞նչ շահ, երբ սրտիս մեջ չի կա սեր.
Քանց քու գինին անուշահամ, պատվական,
Սիրում էի մեր տան ջուրը սոսկական»:
— Երթա՛նք շուկա, առնունք ակեր թանկագին: —
«Ակը ի՞նչ շահ, երբ արցունք է իմ աչքին.
Անգութ հորըս դու փող տվիր ինձ առիթ,
Ո՛չ ամուսին, այլ դու գերի ինձ արիր»:
«Երկնի՛ց թըռչունք, դադարեցե՛ք երգելից,
Եղե՛ք սըրտիս ցավերուն դուք կարեկից.
Ես էլ էի ձեզ պես մի օր խընդագին,
Գընաց կորավ ազատ կյանքը իմ անգին:
Քըռե՛ք, տարե՛ք վերջին խոսքս իմ ծնողաց,
Քե նազլուի վիճակն է այժմ սուզ ու լաց,
Ասե՛ք մորս, որ տվավ ինձ կյանք, արև,
Քե խեղճ նազլուն ուղարկում է քեզ բարև.
Մեր տունը, ուր անցավ կյանքըս մանկության,
էլ նազլուին տեսնելու չե՛ հավիտյան:
Հորըս ասե՛ք, քու խեղճ, թըշվառ աղջիկըդ
Բոլոր սըրտից ներում է քու շար գործըդ»:

Երեկոյան պահուն, մայիս ամիսին,
Սնողք նըստած ծառի տակը միասին,
Անմեղ թըռչնոց լըստմ էին երգերը.
Մին էլ հանկարծ թոթափեցան ճյուղերը.
Բուեճը նըստավ ծառի վըրա ու գոռաց.
Հորը, մորը պատճառելով սուզ ու լաց.
«Ձեր աղջիկը անբախտ նազլուն չե՛ կենդան,
էլ դուք նորան տեսնելու չե՛ք հավիտյան,
Քըռավ կորավ արև խըղճուկ որբուկին,
Երկնից տիրոջ աճանդեց նա իր հոգին»:

ՔԱԶ ՎԱՐԳԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ՄԱՀԸ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարեկամական ճգեր Մկրտիչ Մանասարյանին

1

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ո՛վ լուսի՛ն, լուսի՛ն, էլ քանի՞ էդպես
 Դալկացած, տրժգուլն, տրխուր երևես.
 Այդ թխպոտ ամպե՛րն քեզ զարհուրեցին,
 Բոցոտ կայծակնե՛րն քեզ այլայլեցին.
 Երկնից կամարի գեղը դու ես լոկ,
 Աստեղց մեջ շրկա քեզ նրման ոչ ոք.
 Մի՞թե նախանձից թափել է գուլնըդ,
 Չէ՛, ուրիշ գաղտնիք ունիս սրտումըդ:
 Ասա՛ ինձ, լուսին, ասա սրտաբաց,
 Ինչո՞ւ է, ինչո՞ւ, դեմքըդ այլայլած.
 Է՛րբ մենք սև օրվան ունինք կարեկից,
 Ասում են, կեսն է պակսում մեր ցավից.
 Թըշվառին թըշվառն է միշտ մըխիթար,
 Ո՞րտեղ կըզըտնիս դու քանց իս թըշվառ.
 Քեզ պես մըտատանջ, քեզ պես անտերունչ,
 Սըրտումս գաղտնիք, բայց լուռ, անմըռունչ—
 Անցնում են օրերս, վա՛յ զըլխուս տալով,
 Մարդկանց մեջ ուրախ, միայնակ լալով:
 Լալիս եմ, լալիս արցունքըս հորդոր
 Ցողում, վազում են աչքիցս ամեն օր.
 Չեն պակասում, չեն, հառաչանք ինձնից,
 Եվ այս սև օրվան շունիմ կարեկից:
 Ամեն շընշավոր ունի մի ընկեր,
 Միմիայն ինձնի՞ց պիտի պակսի սեր,
 Եթե դու էլ ես թըշվառ ինձ նրման,

Իմ քաղցր խոսքը կլինի քեզ դարման.
 Սըրտիդ խորհուրդը բա՛ց արա անկասկած
 Ինչո՞ւ է, ինչո՞ւ, դեմքըդ այլայլած:

2

Լուսինը դող-դող ամպեր ձեղքելով,
 Ինձ պատասխանեց լալագին ձայնով.
 «Լըսե՛, մուսային պարկեշտ որդեգիր,
 (Թե զըլխուս անցքին ես հետաքրքիր),
 Շատ դար դես ու դեն ունայն շըրջելով,
 Քեզ միայն զըտա ըզգայուն հոգվով:
 Բայց մինչև այսօր չի զըտա ոչ ոք,
 Որ իմ տխրության տաներ քիչ մի հոգ.
 Ոչ ոք չը խըլեց դարդը իմ սըրտից,
 Շատ դար ինձ ոչ ոք շեղավ կարեկից.
 Շատ դար եմ պահել մայրագու՞թ խնամով
 Օտարի գաղտնին սըրտիս մեջ. բայց ո՛վ
 Մի օր բարձրացուց աչքերը երկին
 Ու կարեկցաբար հարցուց—«ո՛վ լուսին,
 Ինչո՞ւ ես տըխուր, գունաթափ դիմոք,
 Ի՞նչ ցավ է սըրտումդ, ի՞նչ վիշտ, ի՞նչ մորմոք»:
 Գոհ եմ, գոհ քեզնից պարկեշտ բանաստեղծ:
 Ինձ ըսփոփեցին քու խոսքերն անկեղծ,
 Ինձ՝ որ համ-աշխարհ կարծում է անբան,
 Միայն քեզ համար կբացվի իմ բերան,
 Քու անուշ խոսքին և ես փոխարեն
 Կըպատմեմ, ինչ որ անցավ իմ զըլխեն:
 Դու այն կըպատմես բանիվ ներդաշնակ,
 Հետևորդք կը հյուսեն քեզ դափնյա պըսակ.
 Թո՛ղ քեզ խուժանը ատե, անարգե,
 Նաև այդ՝ անվան քու շուք ու փառք է.
 Ի՞նչ սեր ես իրնդրում մարդկության ցեղից,
 Ե՞րբ վարդ է քաղվել տատասկոտ տեղից,
 Սերը նրմանից պետք է պահանջել:

ԼՈՒՍՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ի հոն են ծնել մեր հարթն առաջին,
Որք ետ Ազամա գասոված օրհնեցին:

Նահապետ:

Գե՛հ, լըսե՛: Մի օր կապուտակ կամարն
Ողջ ծածկել էին աստղեր անհամար,
Ես էլ հարսի պես նոցա մեջ փրոված,
Հանդարտ գնում էի՝ դեմքըս քող առած:
Անցա լողալով ծովը Պոնտոսի,
Անցա քերելով կատարք Կովկասի:
Տեսա երեսըս Գեղամա ջրումը,
Ձովացա փոքր-ինչ ձրկնոտ վանումը,
Լույս տալով անցա շատ սարեր, դաշտեր,
Ուր խոր լըռություն, հանգիստ պատել էր:
Անխոնջ մըշակը հողի վրա պառկած,
Ձովություն խընդրում էր մարմնուն հոգնած
Եզն ու գըրաստը նույնպես վաստակած,
Խաղաղ դաշտի մեջ էին տարածած:
Հայո՛ց աշխարհիկ՝ բերկրության տեղիք,
Հայո՛ց բընություն, ա՛խ, հայ մանկըտիք,
Գեղորե՛ք, ավա՛նք, դաշտք ու արտորա՛լք,
Քաղա՛քք մարդաշատք, շե՛նք ու վանորա՛լք,
Ո՛ւր եք, ո՛ւր, հիմի ինչո՞ւ շուտ կորաք;
Ո՛վ ձեզ կործանեց, ո՞ր ձեռը վայրագ...
Այն գիշեր երնե՛կ էր հայոց երկրին,
Աստղերն էլ երկնից նորան փառք տվին;
Ու ես անցնելով նորա վըրայից,
Չէի կըշտանում վըրան նայելից:

4

Ուղիղ շորս շաբաթ այն օրից անցան,
Կատարեցի ես դարձյալ մի շըրջան,

Կշտապով անցա քաղաքներ, գեղեր,
Կեններ, ծովակներ ու շատ-շատ տեղեր,
Կարոտով մըտա Հայաստան աշխարհ:
Դարձյալ գիշեր էր. մըռայլ ու խավար
Տիրել էր հայոց առատ դաշտերը.
Բայց ա՛խ, ուր էին հունձք ու արտերը,
Ո՛ւր էր այն հայոց անխոնջ գեղջուկը,
Ո՛ւր էր հաստավիզ նորա գոմշուկը,
Ո՛ւր էին խեղճի արորն ու սամիք,
Կամ ո՛ւր մըշակի պարտեզն ու այգիք:
Սև ծուխ է պատել հայոց երկրնքին,
Գեղեր, քաղաքներ տված կըրակին,
Անողորմ էրվում, տոշորվում էին,
Բոցեղեն լեզուքն հասնում ամպերին,
Դժոխք էր տեսիլն խեղճ հայոց երկրին...
Բայց քեզ ո՛վ նյութեց այդքան մեծ շարիք.
Երկնացող պարտե՛զ, հայոց աշխարհի՛կ.
Նախանձ էր տիրել այդ մարդի սըրտում,
Թե՛ օձ էր բընել նորա շար հոգում...
Այո՛, նախանձ էր, նախանձ դարևոր,
Որ մարդու սիրտը այրելով բոլոր,
Իսկ և իսկ սաստիկ, ահեղ ճայթմունքով
Դուրս ցայտում, վաղում է մեծ հոսանքով.
Ինչպես այն սարերն դըրսից հանդարտիկ,
Որոց վըրա հալվում չէ՛ փափուկ ձընիկ,
Հանկարծ կայծակներ ծընում են ծոցից,
Քաղաքներ ամբողջ այրվում են բոցից.
Այդպես նախանձի սերմունք սըպըրդած
Հազկերտ արքայի սըրտի մեջ, հանկարծ
Հարյուր հարյուրով պտուղներ ծընուցին,
Պըտս՛ւղք—արժանի գեհենի հընձին:

5

Տեսա Ավարայր սարսափած ահից,
Անթիվ զորք նորա տիրել էր պարսից.
Հայոց գընդիկն էր համարձակ ու քաջ

Քրոժիժաղ դեմքով կանգնած էր առաջ:
Ծագեց արևը. կատարք շողշողուն
Երևան եկան հայոց սարերուն,
Անոսր ամպերը կարմիր, ծիրանի
Գույներով ներկած՝ զարդ էին երկնի:
Ավետիս կարդաց նորեկ արևուն
Քաղցր տաղերով արտույտն արտերուն.
Տըղմուտը հեռվանց անուշ խոխոջով
Քերում էր ափերն փրոված վարդերով:
Հանդես էր բնության. միմիայն մարդը
Այն օր չէր կազմում բընության զարդը.
Ուրիշ մըտածմունք էր նորա հոգում,
Չար ոխ, շար նախանձ ու ատելություն.
Ճակատ ճակատի կանգնած անվեհեր,
Հայոց քաջորայք, պարսից կըտրիճներ,
Պատրաստ են շափել ուժերը բազկին:
Արյամբ կըշտացնել ծայրը նիզակին.
Սանձակոժ ձիանք, անճոռնի փրղեր
Հողն էին փորում ոտով անհամբեր...
Հանկարծ քանակից դուրս եկավ ՎԱՐԳԱՆ
Ու ահեղ կըռվին տվեց նա նըշան:

6

Հառաչ մատիք ինձ լսել,
Շառավիղք քաջին Հայկա,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Չաղգասեր գործ Վարդանա:
Գարբիել Պատկանյան

ՎԱՐԳԱՆ-գորավար իր ազգեն ընտրած,
Արյան դաշտի մեջ ՔԱՋ հանդիսացած,
Սըրտացավ Հայոց դառը վիճակին,
Ոտք հանեց նոցա ընդդեմ գոռ պարսկին:
Չըկարաց տանել նորա վեհ հոգին
Կրոնի հալածմունք սիրելի ազգին,
Թըրովն ու խաչով տվեց մեծ հրդում:

Հաղթել կամ փառքով ընկնել գոռ դաշտում:
Եվ զորքը նույնը երգմամբ կըրկնեցին,
Մարմինքն ու հոգիքն ազգին գոհեցին:
Վերին ներշնչմամբ Վարդան քաջ գիտեր,
Որ օրհասական այն օր վերջինն էր.
Բայց նա ըստրկի կյանք վարել լընտրեց,
Ծընընդով ազնիվ՝ ազնիվ մահ խընդրեց:
Չէ՛ր նա կուրացած նըշույլով բախտին.
Բայց չէր էլ զըզվել օրերով կյանքին.
Նա քաջ էր մարմնով, հոգով էլ վեհանձ,
Կիրքերը նորա բնավ չէին անսանձ.
Առտընին կյանքում ծընող բազմագույթ,
Բանակի մեջը զորավար հըմուտ:
Պարիսպ ամրակուռ հայրենյաց համար,
Ամեն մի հայի հույսն ու մխիթար:
Բայց իր թշնամյա՞ց... ահեղ հալածիչ,
Դեմ ու դեմ կովող, բայց ո՛չ նենգ պատրիշ:
Քանի որ ոստիս թուր ունեք ձեռին,
Վարդանն էր նորա ահեղ թըշնամին.
Բայց հրը գընեք նա զենքըն իր գետին,
Վարդանն էր նորա պաշտպան առաջին.

.....
.....
.....
.....
.....

Թընդաց սըրտերը արի հայերուն,
Սանձերը թողած նըժույզ ձիերուն,
Աչ ձեռքին թըրեր, ձախերին՝ վահան,
Քաջ-քաջ վազ տվին պարսից հանդիման:
Գըրոհն էր ահեղ սըրտոտ հայերուն,
Գետերի նըման թափեցին արյուն,
Մահը անփախուստ էր նոցա աչքին,
Խիստ թանկ ձախեցին մահերը պարսկին,
Երկար լըտեց այս անգամ կոիվը,

Շատ շուտ քիչացավ հայերու թիվը,
Մընացորդք քաջաց նախանձ բերելով,
Ընկան կոտորած պարսից թըրերով.
Մընաց լոկ վարդան իր բուռ քաջաց հետ.
Սորա առաջ գունդք պարսից անհեթեթի.
Զըսարսեց նորա վեհանձըն հոգին,
Տեսնելով անշուշտ վրտանդ առաջին,
Սըրեց պեխերը, նայեց աչ ու ձախ,
Իր բուռ քաջերուն ասաց դեմժիժադ.
«Տըղե՛րք, ահա մեզ մի կարճ ճանապարհ,
Որով այս երկրից երթանք նոր աշխարհ,
Ուր մեր քաջ նախնիք կան մեզ անհամբեր
Փառաց պըսակով շատ ու շատ դարեր.
Տա՛նք վերջին բարեն աշխարհին հայոց,
Որ սընուց գըթով մեզ տղա տիոց.
Առանց հայրենյաց մեզ մութ է աշխարհ,
Հայաստան էր մեր միակ մըխիթար.
Կորավ Հայաստանն, էլ ի՞նչ հույս մընաց,
Մեր կյանքըն ի՞նչ է, թե ոչ սուգ ու լաց.
Այո՛, տանն ունինք ծնողք, ընտանիք,
Թո՛ղ կորչին, երբ որ կորավ Հայրենիք.
Գո՛նե մեր հետնորդք կասեն մեզ համար,
Արցունք թափելով աչքից անդադար,
Երանի՛ էր ձեզ, ո՛վ որդիք փառաց,
Որ դուք շըտեսաք կորուստն հայրենյաց.
Զեր կյանքն էր ազնիվ՝ ազնիվ մահ առիք,
Զեզմով կըպանծա հավետ Հայրենիք,
Զեր կյանքն կլինի հետնոց օրինակ,
Ինչպես մեռնելը ձեզնից սովրեցանք.
Ինչ որ ունեիք՝ ազգին արիք զոհ,
Ազգն հավիտյան կըմընա ձեզ զոհ,
Քընից հառնելիս կամ քուն մըտնելիս,
Միշտ ձեզ կըհիշենք մենք աղոթելիս,
Մեր անմեղ մանկանց տըխուր օրորով,
Զեր գըլխու անցքը կըպատմենք երգով:
Զեր անկման տեղը կըոնասեր մարդիկ
Կդարձնեն անշուշտ աղոթո տեղիք.

Զեր մարմինն ամեն մի հայի համար
Կըդառնան մասունք սըրբոց փըրկարար.
Հանգե՛ք, դուցազունք, հանգե՛ք հավիտյան,
Զեզ միշտ կըհիշե՛ ձեր մայր-Հայաստան»:
Ասաց ու լըռեց: Երկու աչերից
Յողացին արցունք՝ ինչպես ցող երկնից.
Ուժգին ա՛խ քաշեց անվեհեր սըրտեն
Բայց այդ ախը չէր թըշնամու ահեն:

8

Բայց ինչո՞ւ լացեց այդ արի մարդը.
Որին անծանոթ էր ահն ու դարդը.
Գու՛ցե թե հիշեց նա այդ ըրպեխին
Տանը անպաշտպան թողած ընտանին,
Որ շուտով կընկնին ձեռքը թշնամուն,
Այդ ազատ կյանքեն կերթան գերություն.
Զեռակապ, քաղցած ու հազար շարիք
Անմեղ տանելով խեղճ Հայոց կնանիք,
Պարսից որերույն պիտի հարճը լինին,
Կամ կույր հետևողք Ջըրադաշտի կրոնին:
Կանցնին սև օրեր, կանցնին և տարիք,
Այդ զեղջ կյանքումը կմոռանան շարիք
Իրանց հալածչաց, կմոռանան Հային,
Որք նոցա սիրույն այդքան ցավ տարին.
Այն թըռչնուն նըման, որ և՛ վանդակում,
Անտառեն զըրկված՝ գըտավ խընդություն,
Անուշ երգերով, հորերեն սովրած,
Ունկը փաղաքընց իր շար թըշնամյաց...
Գու՛ցե նա լացեց Հայի վիճակին,
Անկումը գահին, կորուստը թագին,
Որ հազար ու բյուր կըրելով ցավեր,
Անկործան պահեց նոցա շատ դարեր.
Ինչո՞ւ... որ մի օր հիմարի կամքից
Անդա՛րձ գըկվի հորական փառքի՛ց...
Ա՛խ, դառն էր նորա հըսկայի սըրտին
Տեսնել հաղթանակ պարսից ռեսերմե:

Կարծիք կա, որ հաջիւն ունի մի
զաղտնի գործարարն յաւ ապագա վի-
ճակը նախագգալու:

Ան-սև պատկերներ՝ սև քողի նրման
վերդոված մըտքին եկան հանդիման,
Տեսավ Հայաստան ոտնակոխ արած,
Քաղաք մարդաշատ իսպառ ավերած.
Երբեմն բնակիչք տեր շատ ազգերի,
Այժմ կրոնամուլ պարսկին են գերի,
Փակած են դռներ նոցա ժամերուն,
Անդ էլ չի հընչում սըրբոց ալելուն,
Եվ նվիրական նոցա նուրբ տեղիք
էլ չեն այցելում կրոնասեր մարդիկ:
Այրուծին հայոց, այն քաջ այրուծին,
Ո՛չ Հային պաշտպան կլինի, այլ պարսկին,
Եվ գանձք լեռներուն, բերք առատ երկրին,
Ողջ պիտի լափե անհաշտ թըշնամին:
Հայր անճարակ՝ կըմոռնա ազգը,
Կրոնն, կ' լեզուն, կ' հորանց փառքը:
Հայկ, Արամ, Տիգրան և այլ դյուցազունք
Կերևին նոցա պատիր շողփաղփունք.
Եվ կամ՝ լըսելով մեծ գործք ներսիսին
Գուցե զավակունք նոցա կասկածին.
Հըրաշյա, Զարմայր և Վահագն արին
Երբեք չեն անցնիլ նոցա մըտքերին:

Նա լուռ էր. բայց այդ լռութունն խորին
Նրման էր անհուն ու անդորր ծովին,
Որ մեղմ ծըփալով, նավաստյաց սըրտում,
Հաջողակ ճամփու հույսեր է ծընում:

Բայց վա՛յ է խեղճիկ անփորձ նավորդաց,
Քե հասու չեղան նորա պատրանաց.
Կըվերցնե ալիք մինչի ամպերը,
Խաղալիք կլինին նորան նավերը,
Կուլ կերթան անհագ, փըրփըրած ծովին,
Ո՞վ դեմ կը կենա կատաղած հովին...
«Քաջե՛ր, ասաց նա, ինչո՞ւ եք տըխուր,
Հոգնա՞ծ են ձեռներդ, թըրե՞րըդ չեն սուր,
Նո՞ր է մեզ համար նիզակ խաղացնել,
Հայոց թըշնամու կյանքը կարճացնել.
Սարսեցա՞ք պարսկի անթիվ զորքերից, —
Մի հայը քաջ է նոցա հարյուրից.
Հիշեցե՛ք Հայկին, որ բուռ քաջերով
Դեմ կեցավ Բելին, հոգին անխոով
Զարդեց, կործանեց, մընացողք ցըրիվ
Եղավ հայերից, ինչպես չոր խըռիվ:
Մահի՞ց վախեցաք, ամոթ է հային
Իր ազատ կյանքը փոխել ըստրկին.
Մա՛հ, մա՛հ, ե՛կ շուտով, սևցու՛ր իմ կյանքը,
Ինչպես սեացավ հայերու փառքը.
Դե՛հ, վերջին անգամ հորանց տաղերով
Կովենք ու մեռնինք պարսից թըրերով»:

ՋՆՆՎՈՐՆԵՐԸ ԵՐԳՈՄ ԵՆ

Զինվոր էի հայոց ազգին մըտերիմ,
Երբ Հայաստան քարքանդ արեց թըշնամին.
Պինդ-պինդ ցավեց սիրտը արի հայերուն,
Այդ օր նոքա թափել տվին գետ արյուն:

Շատ-շատ քաջեր ընկան ասդից ու անդից.
Ես էլ ընկա թշնամիի սուր նետից.
Իմ մարմինը դաշտի միջին է ընկած,
Քրիստոսնեի սուրբ օրենքով չէ՛ թաղած:

Դուն մի մնար աչքըդ արցունք օրն ի բուն
Սիրականիդ, ի՛մ սիրական, մըտի՛ր քուն,

Առտուն կուգա շարագուշակ գուժկանք,
Սուգ, ողբ, կըսկիծ նա կը նյութի իմ տանք:

Երբ որ լսես վաղածամիկ իմ մահը,
Ա՛ն երկու թի ու երկաթի սուր բահը,
Ա՛ն քու հետը մի ըսպիտակ մեծ պատան,
Փորե խորին ինձի համար գերեզման:

Գերեզմանիս վերա բըսնի վարդենին,
Վարդը բացվի, աչքը գրավե ամենին,
Սոխակին էլ թո՛ղ գրավե նա հոգին,
Քաղցր տաղեր թո՛ղ ներշնչե սոխակին:

Թո՛ղ սոխակը անցքը պատմե ամենուն,
Թո՛ղ լըսողը ողորմիս տա՛ իմ հոգուն:

ՎԱՐՈՒԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՛լ լըռենք, եղբարք, հիմի է՛լ,
Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,
Իր օրհասական սուրը մեր կըրծքին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին.
Ասացե՛ք, եղբարք հայեր, ի՞նչ անենք,—
Հիմի է՛լ լըռենք:

Հիմի է՛լ լըռենք երբ մեր թըշնամին,
Գավով, հրապուրանքով տիրեց մեր երկրին,
Ջընչեց աշխարհքից Հայկա անունը,
Հիմքից կործանեց Թարգոմա տունը,
Խըլեց մեղանից թագ և խոսք, և զենք,—
Հիմի է՛լ լըռենք:

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թըշնամին
Խըլեց մեր սուրը—սլաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Այգ սուր ու խոփից մեր շղթան կըռեց,
Վա՛յ մեզ, շըղթայով կապած գերի ենք,—
Հիմի է՛լ լըռենք:

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թըշնամին՝

Սոսկալի զենքը բըռնած մեր զիւին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղեխարշ բողոք վազուց ապիրատ.
Մեր գըլուխ լալու Եփրատ ու՛ր պըտտենք,—
Հիմի է՛լ լըռենք:

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թըշնամին
Լիրբ գոռոզությամբ լըցրած իր հոգին,
Արդարության ձայնն հանած իր սըրտից
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդո՛ւխտ, հալածյա՛լ, եղբարք, ո՛ւր գիմենք,—
Հիմի է՛լ լըռենք:

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թըշնամին,
Անհոգ մեր բերած ծանր զոհերին,
Յուր լիթք նըզոված ձեռքը կարկանոց,
Ազգության վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մոտ է, ի՞նչ անենք,—
Հիմի է՛լ լըռենք:

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թըշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղավ,
Գառնազգեստ գայլին մեզ գըլուխ դըրավ,
Սուրբ խորան շունինք, արգ ու՛ր աղոթենք,—
Հիմի է՛լ լըռենք:

Հիմի է՛լ լըռենք, մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խոսեն.
Չե՞ն ասիւ, որ հայք արժանի էին
Այդ ըստփակական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնյաց գործերը գիտենք,—
Մինչև ե՛րբ լըռենք:

Թո՛ղ լըռե մունչը, անգամալուծը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,

Ե՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խըլենք—
Ու այնպես լըռենք:

11

Մոտ էր արևը իր մորը մըտին
Խիտ-խիտ նետում էր ճաճանչն իր հետին.
Տեսնողը կասեր, այս անգամ արևն
Տալիս էր երկրին իր վերջին բարև:
Վերջինն էր, այո՛, բայց ո՛չ ամենուն,
Վերջինն էր այն խեղճ, կըտրիճ հայերուն.
Նորա շողի հետ նոցա վե՛հ հոգին
Պիտի սըլանար դեպ պայծառ երկին:
Դարձյալ գրո՛հ տվին հայք ուժգին-ուժգին,
Թընդացին շարքերն թշնամյաց զորքին,
Ապշած մընացին պարսիկք տեղերը,
Թովիչ կարծեցին հայոց խեղճերը:
Մեծ էր կոտորածն հայոց քաջերուն,
Ցույց տվին պարսից ուժը ձեռներուն.
Ավարայր դարձավ արյան ճապաղիք,
Դաշտը գիշերով լըցուցին պարսկիք,
Մարդ, փիղ, ձի, կառք, զենք մեկմեկով էին,
Ո՞վ կը խիզախեր դեմ կենալ հային:
Ինչպես լեռ ալիք ծովին՝ անարգել
Ուզում են քարե եզերք խորտակել,
Վազում են առաջ ահեղ գոռալով,
Դըժոխքի վայել երգ հորինելով,
Խըփում են, իզո՛ւր, ու ետ են վազում.
Այդպես և պարսից ճիզըն էր ունայն,
Երբ նոցա առաջ պինդ կանգնած էր հայն:
Բայց չի կար արգելք խիզախ, քաջ հային.
Ո՛չ թուր և ո՛չ նետ, ո՛չ շարք փըղերին.
Նա որդեկորույս առյուծի նրման
Արգելք չէր տեսնում աշաց հանդիման.
Բըլրածև փըղեր գլորում էր գետին,
Մըժեղ էր թըվում նորան արյուծին,

—72—

Այն քաջ արյուծին, որից որ շեղեն
Մակամուտ եղավ միմիայն ահեն:

12

Օրն էր տարածամ, մարտիկք դադարած,
Փողը հընչեցին՝ մարտին կատարած.
Մուժը տարածվեց, աստեղք ցուացին,
Երկնից ցողն իջավ արնալից գետնին:
Մըթնասեր թըռչունք ձայներով խըռպոտ,
Գուշակում էին մարդկանց սուզ ու բոթ:
Ետ դարձան պարսիկք իրանց բանակը,
Նորից նոր սըրել սուրն ու դանակը,
Որ այգուց կանուխ, լույսը չի ծագած
Վըրա հարձակվին հայոց՝ կատաղած:
Բայց ա՛յլ տեսարան էր հայոց միջին,
Վըրդոված, տըխուր էր նոցա հոգին.
Ոչինչ չէր լըսվում, թե ոչ սուզ ու լաց,
Մեծ կորուստ արին, կորուստն էր անդարձ,
Վարդան չի դարձավ դեպ իր քաջերուն:
Ո՞վ գիտե, ու՞ր է նա այս իրիկուն.
Գերի՞ է տարել նորան թըշնամին,
Թե՞ մահ է ստացել նա դաշտի միջին.
Ոչ ոք չը գիտե: Տըխուր ու տըրտում
Ամեն տեղ նորան են հայք պըտըրտում,
Հոգվոց հանելով, վայ գըլխուն աւլով,
Աչքերից աղի արցունք թափելով:
Ավարայր դաշտը տակն ու վրա արին,
Ավա՛ղ, հայտ չեկավ դյուցազն արին.
Պինդ-պինդ ձայն տվին. «Ո՛ւր ես, ու՞ր, Վարդան»:
Արձագանքն կըրկնեց Վարդա՛ն ու Վարդա՛ն:
Որբերի աչքին քունը չի մոտում,
Քունը հի՛նչ սփոփանք, թե դարդ կա սըրտում,
Թե լինի գիշերն մեզ քիչ մըխիթար,
Առավոտն, ավա՛ղ, կը լինի վատթար:
Արթուն մընացին, չի մըտան բանակ,
Մինչև որ խոսեց երեք հետ խոսնակ:

Հանկարծ լրսեցին ձիան տրոփ հեռվանց.—
 «Այս ո՞վ է, տղե՛րք, ասին հայք միմյանց.
 Գիշերվա ժամին ուզեց թըշնամին
 Վրեժխընդիր լինել ցերեկվա անցքին»:
 Բայց չէ՛, վա՛յ նոցա, վատթար տեսարան
 Ապշած աչքերուն եկավ հանդիման.
 Չէր արթուն հայոց անկոչ այցելուն
 Սարսած թըշնամին տարածամ պահուն.
 Վարդանն էր, որին հուսահատ, տըրտում
 Որբացած հայերն էին պըտըրտում:
 Վարդանն էր... բայց ի՞նչ վիճակի հասած.
 Արյունաթաթավ, սըրտին նետ ցըցված,
 Աչքերը մըթնած, երեսը տըծգույն,
 Վերքիցը ծործոր կաթում էր արյուն.
 Երկու մանկլավիկ բըռնած կըռներից
 Կիսամահ քաջին իջուցին ձիից.
 Բայց այն սուրբ աչերն, դեմքը հրաշալի
 Չէին կրում հետք մահվան երկյուղի:
 Նորա թուլացած բազկից այն ժամին
 Չար մահ կստանար նորա թըշնամին,
 Թե որ խիզախեր գալ նորա առաջ.
 Այսպես մոտ մահվան նա միշտ մընաց քաջի
 «Տըղե՛րք, ասաց նա ձայնով դողդոջուն,
 Ուզացի ձեզ տալ իմ հետին ողջույն,
 Ձեզ հետ գըրկախառն, ձեզ համբույր տալիս,
 Հանգիստ ավանդել այս շունչը վերջիս:
 Ժա՛մ է, ժա՛մ, թողնել ավեր Հայաստան,
 Ուր քար չի մընաց պինդ քարի վըրան,
 Մենք էլ հետևողք նախնյաց ավանդին,
 Ըստրուկ շենք լինիլ երբեք օտարին:
 Լա՛վ է մեր կյանքը կարճանա սըրբով,
 Քանց հալվի, մաշվի թըշնամու լըծով:
 (Իմ հինգ տարեկան հասակես ի վեր
 Այսպես տալիս էր ծնողս իմ պատվեր):
 Ցավում է սիրտըս, ոչ նետի խոցից,

Ցավում է, որ շուտ գընում եմ ձեզնից,
 Որ չեմ կարենում ձեզ հետ միասին
 Արյան դաշտի մեջ փըշիլ իմ հոգին:
 Վա՛յ թե դուք մենակ վըհատիք աճից,
 Դողաք, սարսափիք վերահաս մահից,
 Թուրն ու ասպարը մի կողմ գըլորեք,
 Պարսկին կամավոր ձեզ գերել թողնեք:
 Ախ, քաջ իմացեք, ես, թեև թագած,
 Պիտի վեր կենամ հոգից կստաղած,
 Նորից նոր առնում ձեռքըս թուր ու տեգ,
 Ու ձեզ անողորմ խոզխոզեմ մեկ-մեկի:
 Անեժք եմ թողնում ես այն վատ հային,
 Որ ոչ ոխ, այլ սեր ցույց տա գոռ պարսկին,
 Այդ անհաշտ ոխը հիմկուց ցեղեցեղ
 Պիտի տարածեն հայքըն ամեն տեղ:
 Թո՛ղ կորչին ազգեր երկրի երեսից,
 Հայք միշտ անհաշտ պիտ մընա պարսից.
 Ըստվերըս երբեք չի՛ մընալ անգորք,
 Այս թըշվառ դաշտում կը շըբջի մուր
 Մինչև այն ժամը, ժամ օրհասական,
 Երբ պարսիկն կամ հայն կը լինի կործան՝
 Արյան դաշտի մեջ մորթելով իրար.—
 Լոկ այն ժամանակ կառնեմ ես դադար:
 Դե՛հ, մընաք բարև, տեր առ իմ հոգին.
 Ազատ կյանք կամ մահ ազնիվ տուր հայինք:
 Լոեց, ու իսկույն նետը մահաբեր
 Հանեց աներկյուղ՝ կողից կարեվեր:

Առ ժամ մի որբիկ տարաբախտ հայեքն
 Ապշած, վարհուրած մընացին տեղերն,
 Զիժացան՝ տեսի՞լք է այս, թե՞ անուրջ:
 Մեռած դյուցազին խուռքն կանգնած շուրջ՝
 Ո՛չ լալիս էին, ո՛չ սըզալ կարում,
 Իրանց աչքերին չէին հավատում:
 Ինչպե՞ս հավատան իրանց աչքերին,

Երեկ չէ՞ր, որ պինդ կար հըսկա կազնին,
Որ քանի դարեր հարվածը հողմին
Զեփյուռ էր կարծում փըշած մեղմագին.
Այսօր միջաբեկ ու թավալզըր
Կար նոցա առաջ. աչքերով մոլոր
Տեսնում են քաջին գետնին տարածած,
Զրլոտ ձեռները ցամբած, կարկամած,
Կեսխուփ աչքերը շունին առաջվան
Ո՛չ բոցը, փայլը՝ ջուխտ աստեղց նըման:
Դեմքը գունաթափ, գիծքը անմեկին,
Ո՛չ ոխի նըշան, ո՛չ սիրո—ունին:
Տեսած կա՞ս մեկ օր, երբ բոցոտ շանթը
Երկնուց ցած իջնե մինչ խաղաղ դաշտը,
Ահեղ որոտամբ, փայլ արծակելով՝
Արթուն հովիվին զարնե, տա գետնով.
Անմեղ գառնուկներն որբիկ մընացած,
Ապաստան չունին, անտեր են թողած,
Ահից վազում են թուլիկ ոտներով,
Հովվին սուզ կարգում տըխուր ձեներով:
Ո՞վ է նոցա տերն, ո՞վ խընամողը,
(Որբերի սփոփիչն է լոկ սև հողը)
Մա՛հ, մա՛հ խնդրեցին հայերն միաբան,
Քաջից հետ չի կար էլ հույս փըրկության:

15

Խուտըն կան հայերն մի փոսի առաջ,
Սըրտից անդադար հանում են թառանչ,
Դառն արտասուքը նոցա աչքերին
Հոսում են առատ ամալի գետնին:
Դասք քահանայից դաշտումը չի կան,
Որ սուրբ աղոթքով հողին հողը տան,
Կընդրուկ ու զըմուռս նախնյաց ավանդով,
Այդ անշուք թաղման չի խընկում ոչով.
Կալական կանայք կրծքին ծեծելով,
Ողբի չեն շարժում դառըն հեծելով:
Լուռ են հայերը, աչքերը պըղտոր,

—76—

Դեմքերը անշարժ, մըտքերը մոլոր,
Հագիվհազ նոցա շըրթունքը դեղնած
Շարժելով տալիս են նըշան կենաց:
Արդյոք աղո՞թք է, որ նոքա կարգում,
Թե՞ արյան վրիժու տալիս են երգում
Իրանց դյուցազնի դիակի առաջ,
Որին խոստացան մեռնել քաջաբաջ:
Կարգե կարգ, լըռիկ, մինը հետ մյուսին
Վերջին համբույրը տվին դյուցազնին.
Եվ երբ որ փայլեց առաջին շողը,
Քաջին մարմինը կըլլեց սև հողը:

16

Կորավ Դյուցազնը, կորավ Հայաստան,
Զի հայոց միակ հույսն էր քաջ Վարդան.
Քըշվառ հայ ազգին նորա վեհ սիրով
էլ այնուհետև չըսիրեց ոչով:
Դարք հետև-հետև գընացին, անցան,
Հիշատակ Քաջին յուրքը մոռացան,
Հեշտության կենաց և գանձի մուար
Աղնիվ նըպատակն մոռացան իսպառ:
Իրանց սըրբազան տեղիք պարծանաց
Թուլին, մատնեցին խուժադուժ ազգաց,
Եվ հողը, գընած գընով սուրբ արյան
Հարանց՝ արին շար թըշնամիք կոխան:
Մոռացան վըրեժն այն նվիրական,
Որ ավանդել էր նոցա քաջ Վարդան
Եվ ատելության փոխանակ՝ պարսկին
Ցույց տվին միշտ սեր և հարգանք խորին:
Սըրեցին վիզերն պարսից լըծի տակ,
Դյուրությամբ դարձան հըլու հըպատակ:
Ա՛խ, արգարացավ տեսիլն Վարդանին,
Որ նախատեսավ անկումըն ազգին:
Հայը հետամուտ չէր ազնիվ մահուն,
Որ հետնոց թողներ պանծալի անուն.
Վասակաց թիվը շատացավ դարեդար,

—77—

Ձուտ ազնիվ հոգիք շերեցան իսպառ.
 Գործիք եղեռան դարձան օտարաց,
 Ոչ ոք դարմանիչ չէր ազգին շարյաց...
 Քո՞ղ լըռե՛մ, լըռե՛մ, ազնիվ պատանի,
 Այս թըշվառ անցքեն միտքըս սասանի,
 Քանի կը հիշեմ՝ սիրտըս խոցոտի,
 Ու ճըմլած հոգիս վրիժու բոցոտի:
 Մոլեկրոն պարսը կա մի՞չալ աշօր,
 Ունի թագ ու գահ շըքեղ, փառավոր,
 Ունի նա լեզու ու անուն փառաց.
 Քաղաք բարեշեն, տեր է շատ ազգաց.
 Իսկ չա՛յր... վա՛յ նրա դառը օրերուն.
 Ի՞նչ ունի, բայց թե լոկ ևեթ անուն,
 Որը և հաճախ ինքը ամոթից
 Զըզված մերժում է իրա վըրայից:

17

ՎԵՐՋԱՐԱՆ

Լըռեց: Ամպերը եկան ծածկեցին
 Երկինքն ու լուսինն աչքես խըլեցին.
 Մընացի մենակ՝ հոգիս վրդոված,
 Ձեռներըս ծոցիս, գլուխս քարշ արած:
 Եվ այնուհետև ամեն իրիկուն
 Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
 Նորա տըխրամած դեմքը նայելիս՝
 Հիշում եմ թըշվառ վիճակը ազգիս:
 Ա՛խ, ցոլա՛, փայլե՛, տըխրադեմ լուսին,
 Գուցե, քու փայլից փայլ տաս և հային.
 Պատմե՛ շատերուն Վարդանի մահը,
 Կամ՝ ի՛նչպես կորավ հայ ազգի գահը,
 Կամ ի՛նչ վե՛հ սիրով սիրում էր Վարդան
 Մայրենի հողը—աշխարհ Հայաստան:

ԱՂԱՍՈՒ ՄՈՐ ԵՐԳԸ

Նվեր Խաչատուր Աբովյանի
 անմահ հիշատակին

Զարթի՛ր, մանու՛կ իմ նազելի, բա՛ց այդ պայծառ աշերը,
 Քերթերունքեղ քունը թոթվե՛, գիրկը հանգիր քու մորը.
 Բավ քեզ որքան բարի հրեշտակք հեքիաթ ասին երազում,
 Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ տեսնես աշխարհում:

Զարթի՛ր, որդյակ, քանի՞ քընես,
 Բաց աչքերըդ այդ նախշուն,
 Ուր որ մայրըդ յուր բախտ, փառքը,
 Կյանք ու արևն է տեսնում:

Դուն կրմեծանաս, բոյ կը քաշես, շինար բոլիդ ես դուրբան,
 Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ վարդան.
 Իմ մատներով մի ոսկեթել մեջքիդ գոտի եմ կարել,
 Գոտիցըդ թուր կը կապեմ, այն էլ ինքըս եմ սըրել:

Զարթի՛ր, որդյակ, քանի՞ քընես,
 Բա՛ց աչքերըդ այդ նախշուն,
 Ուր որ մայրըդ յուր բախտ, փառքը,
 Կյանք ու արևն է տեսնում:

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մընում անհամբեր,
 Զարթի՛ր, որդյա՛կ, քանի՞ քընես, ա՛ն քու թուրը մաճաբեր.
 Քու Հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շըղթայած,
 Քու եղբայրը գերության մեջ... քա՛ջ, միայն դո՞ւ ես քընած...

Զարթի՛ր, որդյակ, քանի՞ քընես,
 Բա՛ց աչքերըդ այդ նախշուն,
 Ուր որ մայրըդ յուր բախտ, փառքը,
 Կյանք ու արևն է տեսնում:

Չէ, իմ որդին շուտ կրգարթի, ձին կըճեծնն սանձակոծ,
Հայի արցունքը կըսըրբն, կըդադրեցնն լաց ու կոծ,
Հայ եղբայրներ, քիչ էլ կացեք, իմ Ազապին դարթեցա՛վ,
Գոտին կապեց, թուրը կախեց ու իր նժույգ ձին նըստա՛վ:

ԳԵՎ ՄՐՈՒՍ

(ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)

Այդ ի՞նչ շրժոթ, ի՞նչ աղմուկ, հուսակըտուր վայ ու լաց
Առհասարակ տիրել է Տարտարոսի զավակաց.
Ավերվե՛լ են Գեհենի այն պարիսպը սաբերն.
Զախշախվե՛լ են շրժաթը աղամանդյա քարերն:
Թե՛ Ստիքսը ցամքել է, թե՛ Աքերոնն է հիվանդ,
Թե՛ Կերբերի տեսիլը ծերութենեն այլ չէ ժանտ:

Ո՛չ, գեհենի պատերը պինդ, անխախուտ են կանգնած,
Ոչ շրժաթն են ջախջախվել և ոչ Ստիքսն է ցամաքած.
Առաջվա պես Կերբերը դուռը արթուն է պահում,
Աքերոնը անցուղարձ նավով Ստիքսն է անում:
Այդ փանաքին առթերեն չէ՛ Գեհենի աղմուկը,
Այդ փանաքին առթերեն չէ՛ դեերու լաց սուզը:

Դժոխքի մեջ դահլիճ կա—խորհրդական է շարձոց,
Յոթն աթոռի մեջտեղը կըլոր սեղան է դրած,
Թ՛վով յոթն են բազմականք՝ յոթն մեղաց համարավ,
Մին մինի մոտ լուռ ու մունջ տրխուր նըստած են կարգավ:
Թեև լուռ են, բայց անխոս խորհուրդ խորհին շարերը,
Թե խորհուրդը գործ դառնա՝ կը կործանվին սարերը...

«Ծղբա՛րք, ասաց վերջապես Բեհեզգեբուղ ծերունին,
Ձեր ցանկությամբ և կամոք ես այց ելա մեր երկրին,
Ինչ կար չրկար նորա փրա՛ ամեն աչքն անցուցի,
Բուլոր տեսածս ու լըսածս՝ մանրամասն գրեցի.
Իմ գրքվածքի մեծ մասը վաղուց եմ գրով հաղորդել,
Մընացորդը ուզում եմ բերանացի Ձեզ պատմել:

Հայաստանն էր վերջին իմ այց ելած աշխարհքը,
Այլ ազգերի խիստ տարբեր է հայոց վարքն ու բարքը.
Ժողովուրդն է միամիտ, կըրոնասեր, հեզ, խոնարհ,
Խաղաղասեր, ժըրաջան ու շատ սիրում են իրար.
Հոգևոր հարց հարգելով՝ սատաներքին են ատում,
Խունկ ու զըմուռս ծըխելով՝ սաստիկ են մեզ հալածում:

Թասով գինին խմե՛լիս՝ հայք միշտ Աստված հիշում են,
Խըռովարկու հարբողին խընջույթիցը քըշում են.
Երգ սիրում են—հոգևոր, խաղ տիրում են,—բայց անմեղ,
Միով բանիվ՝ և՛ ըզգաստ, և՛ խելոք են ամեն տեղ.
Այժմ ասն՝ ք սիրելիք, ի՞նչ հույս ունինք այն ազգեն,
Որի ամեն անհատը գիտե փախչել մեր ձեռքեն»:

— Դեհեզգեբուղ դու հիմա՛ր, Անամելիքը ասաց.
(Որ խորհրդի ժամանակ լուռ անմըռունչ էր նըստած),
Ձարմանում եմ քու խելքին, որ այդ շընչին համբավով
Շըփոթեցիր ամենիս ու լըցուցիր տազնապով.
Ասենք թե՛ հայք ըզգաստ են, իրանց կրոնին մըտերիմ,
Միթե ուրիշ հնար չի կա՞, որ հայք դառնան մեր գերին:

Չորսինակ՝ հայերը բընությամբ խիստ տըռփոտ են,
(Ե՛վ ու՛մ սիրտը անթափանց է սիրո սուր նետերեն)
Թ՛եւլլազեյեն շնորհաշուք զան Հայաստան աղջիկներ,
Այնուհետև տե՛ս քանի՞ պիտի քանդըվին տըներ.
Ուր սեր էր՝ անդ քեն կլինի, սուրը կշարժի իր տեղեն,
Սար ու ձորեր կը լըցվին հայոց արյան հեղեղեն:

Հա՛ հա՛ հա՛ հա՛, ծիծաղեց Բեհեզգեբուղ ծերունին,
(Նորա բարձր ծիծաղեն դրունք սարսեցան Գեհենին).
«Գեղեցկութունն հայ կընկա բաղատելով այլ ազգաց՝
Այնպես գիտցի՛ր, ինչպես որ լուսինն հանդեպ աստեղաց.
Շըքեղ, նազուկ հասակավ, թուփ ու զանգուր մազերով,
Կես ամսվա լուսնի պես շողշողում են պատկերով:

Մի՞թե Հային կույր գիտես, կամ թըշնամի իր անձանց,
Որ սոսկ քարը գոհարեն կարծեն նոքա գերազանց:

Զէ՛, այդպէս չէ՛, սիրելիս, հայի աչքը շատ սուր է.
Հային հիմար կարծողը՝ երկու աչքով էլ կուր է.
Ուրիշ միջոց, ուրիշ հնար եկ աշխատենք զըտնելու,
Այդ բաներով չէ՛ երբեք մեզնից հայը խաբւելուս:

Այս լըսելով դեերեն մինը՝ Մըրուս անունով,
Որ զըպիրն էր ատենին, տեղեն ելավ անխըռով.
Աչքը դարձուց իր շորս գին սովակատող վագրի պէս,
Գըծոխաշունչ բերանեն անեծք թափեց լիպպէս,
Նորա լայնգիր ճակատը գահ էր յոթից հանցանաց.
Սոսկավիթխար հասակը ահարկու էր Ա՛ դիվաց:

Սա այն շարկամն էր ազգիս, որ Արամ օրերեն
Խըղճուկ հայը օր շունի նորա անողորմ ձեռնէն.
Սա այն ծնունդն էր անիծից, որ նոր պեսպէս դիմակավ
Հիմն ի վեր կործանելու շուտ-շուտ Հայաստան եկավ.
Մե՛րթ վասակ էր անունը, մե՛րթ Պապ էր, մե՛րթ Մերուժան,
Մե՛րթ Հազկերտ էր կրակամու, մերթ մուկգին Չարմաղան:

Դրախտանմանն Հայաստան ըսպանդ դարձուց սոսկալի
Ու անհովիվ հոտի պէս թողուց հայոց ցավալի,
Որք արգավանդ դաշտերում կարոտ էին շոր հացին,
Աղբերառատ այն երկրում ծարավատանջ մընացին,
Արտասուքով ցողեցին կանաչազարդ ձորերը,
Անմեղ արշան հեղեղով սողեցին փոսերը:

Հայի բնութեանը տեղյակ՝ նա գուժկանի խոսքերեն
Չայլայլեցավ այլոց պէս. միայն ելավ իր տեղեն,
Խոսքը դարձուց դեերուն, մըխիթարեց, ըսփոփեց,
Փոքրիկ մի ճառ կարդալով՝ խոսքը այսպէս ավարտեց.
«Մի՛ք երկնչիլ, բարեկամք, քանի որ կամ ձեր միջին,
Շատ մահացու վերքերով կըխոցոտենք մենք հային»:

Պըրծավ այսոց ատյանը: Ամենեքին միամիտ
Դարձան իրանց գործերուն ու խորհրդին շարամիտ:
Իսկ Մըրուս անհապաղ ու հապճեպով մըտավ կառք,
Տարտարոսի խավարեն իսկույն ելավ լույս-աշխարհք.

Միծաղելով աչքերը դարձուց դեպի Արարատ,
Ասաց, «աստ իմ մանգաղին ըսպասում է հունձ առատ»:

Նա քաջ գիտեր, որ հայը հանուն իր սուրբ հավատին
Միշտ պատրաստ է զոհելու զանձը, տունը և որդին.
Ավանդութեան մըտերիմ իր պաշտելի հին նախնայաց՝
Համահավասար սըրբերուն հարգում է հոգևոր հարց.
Ուստի՛ հագավ Ֆարաջա, աչ ձեռումը գավազան,
Տերողորմյան ձախումը, այսպէս մըտավ Հայաստան:

Սա իր ճերմակ մազերով ու բընութքովը խոնարհ,
Մըռած վիզով, հեզ դեմքով ու մարմնովը նիհար
Շուտ գըրավեց ամենի խելքը, միտքը ու հոգին.
(Այսպէս միշտ հեշտ խաբւել է հայը ձեռով արտաքին):
Դե Մըրուսի հըռչակը՝ Սուրբ Գրիգորին հավասար,
Սավալվեցավ, սըփոնեցավ ամեն հեռավոր աշխարհ:

Արդ՝ Մըրուսը ի՞նչ արավ: Նա իր խոսքը կատարեց,
Տարտարոսի երկյուզը տասը տարում փարատեց.
Ուր որ զըրեց իր ոտքը՝ աղմուկ դարձուց ամեն տեղ,
Հորն ու որդուն կըովեցուց, ինքը մընաց միշտ անմեղ,
Անթիվ կասկածանք ցանեց նա միամիտ սըրտերում,
Սեր ու հաշտութեան տեղը թողեց նախանձ, շարութուն:

Հայք իրարմ հեռացան, առանձնութուն սիրեցին,
Չանձրութունը ու վիշտը շատ մոլութունք ծընուցին.
Զվարթ բարքը առաջվա իսպառ կորավ հայերից,
Ուրախութեան սիրտ երգ հատավ նոցա բերանից:
Եղբա՛րք, ինչո՞ւ տիրել են մեզ այսքան վիշտ, այսքան ցու՛ղ...
էնդուր համար, որ մեր մեջ Մըրուս-դէր հայտնեցավ:

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ ԵՐԳՈՒՄ Է

Հայկ ու կեռնին մոռանանք, եղբարք,
Թափ տանք մեզանից փոշին հրնության,
Վերածնենք մեր մեջ նոր կյանք ու նոր բարք,
Կեցցե՛ շատ օրեր մանուկ—Հայաստան:

Կեցցե՛ շատ օրեր մանուկ—Հայաստան,
Նա՛ որ դեռ միայն մեր սըրտի խորքում
Ունի յուր հիմքը, ո՛չ տուն, ո՛չ կայան
Չունի տակավին բուն Հայաստանում:

Եղբա՛րք, բանը դեռ անշոշափելի
Այժմում մեր մըտքին՝ ցընորք չի կարծենք,
Բանը կմարմնանա ու տեսանելի
Կը լինի շուտ, միայն մենք վըստահ լինենք:

Մեր հույսը միայն մեր վըրա լինի,
Չեն պետք մեզ նըպաստ մեծատունների,
Ողորմությամբ թող մուրացիկն ապրի,
Մուրացողըն միշտ ստրուկ է օտարին:

Կեցցե՛ Հայաստան, որ երազական
Կարծում են ծերերն. իրոք չէ՛ այդպես.—
Մեր հայրենին դեռ չէ չվառական,
Քանի որ ունի քաջ որդիք մեզ պես:

Բա՛վ է, օտարին շատ ծառայեցինք,
Ըստրկի վիճակն չէ՛ հավերժական
Ազատության գինն մենք քաջ սերտեցինք,
Էլ չենք հավատալ օտարի խոստման:

Օտարի շահը թույն է մահաբեր,
Աչք է կուրացնում, միտք է պըղտորում,
Գերի է դարձնում մարդ ազատասեր,
Ոսկի շըղթայով ձեռք ոտք է կապում:

Կըփըշրեմ շըղթաս, կերթամ Հայաստան,
Կըպագնեմ նորա հողը անարատ,
Կասեմ. «Եկել եմ որդիդ չվառական,
Գըրկիդ մեջ ինձ առ, մայր իմ հարազատ:

Չունիմ ես ոսկի, այլ ոսկու մադան,
Ջըլոտ ձեռք ջուխտակ ու սիրտ անվեհեր,
Ձեռքումըս ունիմ բահ ու հըրացան,
Սըրտումըս ունիմ ազնիվ խորհուրդներ:

Քու հողն արգավանդ, ես մըշակ արի,
Մենք հաշտ կու ապրինք շատ ու շատ տարի.
Ուրջուներեդ քեզ ոչինչ շահ չըկա,
Թույլ տուր, որ բըռնի հալածեմ նոցա:

Գու որդիք ունիս չորս միլիոն ու կես,
Թե հանկարծ գաղթեն՝ նոցա տեղ ունե՞ս,
Ըստինքիդ կաթը խնայե օտարեն,
Գալու որդիքըդ քաղցած, ծարավ են...»:

Հարավ, հյուսիսեն փոշի վերացավ...
Չայն, տրոփ, խոսք, շըշուկ գիլ-գիլ լըսվեցավ...
Մասսա ճակատեն մեզը հեռացավ...
Մանուկ—Հայաստանն ոտքի կայնեցավ...

ԵՐԳ

Նվեր Փղնդապետ վարդապետի

Երբ տըրտում ես, բարեկամ,
Զախորդության օրերըդ,
Թո՛ղ ամեն ինչ, երգարան
Ազգային դու ա՛ն ձեռըդ:

Երգե՛, երգե՛ դարզն ազգիս,
Երգե՛ ամուր, անդադրում,
Հոգվով մը տքով կըստփոփվիս,
Հավատա՛ ինձ, մեկ պահում:

Երբ խընդում ես, բարեկամ,
Հաջողության ժամերուն,
Երգե՛ երգ դու ցընծության
Մեր պաշտելի պապերուն:

Քու խընդության խընդակից,
Աղնիվ գործից քաջալեր՝
Կլինին հողի խոր տակից՝
Մեր պանծալի նախորդներ:

Երգե՛ հարսին քո գրկում,
Երգե՛ խընջույքի միջին,
Ե՛վ սուրբ ահեղ ճակատում,
Ե՛վ բանտումը խավարչտին:

Երգով հիշե՛ մեր նախնյաց,
Երգով թո՛ղ քնե քո որդին,
Երգն է մարդուն անգին գանձ,—
Լոկ շար մարդիկ երգ շունին:

Սոսկալի, մըռայլ, գիճին գետնափոր,
Վեր, վայր, ամեն խորշ լի զեռուններով,
Դրունք երկաթիք, ծղինք ժանգոտք,
Գահճիճ-դռնապանք քանց վագրը վայրագ:

Հազար բյուր տեսա պես-պես տանջարան.
Գետնի վրա ցըրիվ բեկած են աստ-անդ՝
Մտրակ ու աքցան, խթան, մանգլիտն.
Ահա եոր գըծոխք—կասվի տաճկի բանտ:

Պատերեն կախված անթիվ շղթաներ,
Ամեն շղթային կըպած է մի մարդ.
Չէ՛, չէ՛, դա մարդ չէ՛, այլ հավետ կըմախք,
Ստվեր է սոսկալի, ո՛չ աստծո պատկեր:

Ասե՛ք, ի՞նչ է մեղքն այս թշվառներին,
Կողոպտե՛լ են, գողցե՛լ են, մա՛րդ են սպանել
Չէ՛, չէ՛...

Բանտերը լըցվեցան անմեղ հայերով,
Կրակ, աքցան ու թույն եկան ի հանդես,
Մովամույն կըլինին հայք հազարներով,
Իսկ Եվրոպ տնտարբեր, լուռ ազանատես:

ՄՇԵՅՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ

Վիգերըս ճրկած՝ սրբտով խոնարհ ենք,
Տիրասեր հպատակ լինինք ու ծառա,
Նորա անունը աղոթքով հիշենք,
Խրղճուկ հայ ազգիս գուցե մեղքանա:

Քրրտինք-վաստակի մեր տասանորդը
Տանք նորա զորքին, որ նա կըշտանա,
Ըլլանք Սուլթանի մըտերիմ ճորտը,
Խրղճուկ հայ ազգին գուցե մեղքանա:

Թո՛ղ նա մեր որդոց անմեղ արյունով
Հաճույքի համար սուրբ լըվանա,
Սըրտերուս կըսկիծն զըսպինք խընամով,
Խրղճուկ հայ ազգին գուցե մեղքանա:

Թո՛ղ պարկեշտասուն մեր աղջիկներով
Սուլթանի տոփոտ պասքը հագենա,
Մեր ոսկին սերայ տանինք փեշերով,
Խրղճուկ հայ ազգին գուցե մեղքանա:

Ցուցնունք, որ հայը չէ տաճկին ոսոխ,
Այլ բարյացակամ սերտ ընկեր է նա,
Նորա գովողն է, ո՛չ շարախոսող,
Խրղճուկ հայ ազգիս գուցե մեղքանա:

— Լուռ կաց, խեղճ հայ մարդ. սընտոփ հույսեր
Քեզ շատ խաբեցին, էլ մի՛ հավատալ.
Կանցնին ու կերթան շատ ու շատ դարեր,
Հայ ազգիս վըրա թուրքը չի խըղճալ:

Ինչո՞ւ կը մոռնաս Փըրկչի ասածը:
«Դուրը չի բախած՝ ոչ ոք չի բանալ»:

«Ո՞վ ըստացել է լուր չի հայցածը»,—
Հայ ազգի վերա թուրքը չի խըղճալ:

Ազատ լալ կուզես, գիտեմ փափազըդ:
Բայց դու մի՛ հուսալ հասնիլ այդ օրին:
Ո՞ւր է, դու գիտե՞ս, բախտըդ ու փառքըդ
Ու ազատ կյանքըդ:— Ի ծայր քո սուրին...

ՎԱՆԵՅԻ ՄՈՐ ԵՐԳԸ

Պըզտի տըղա, շե՛մ օրորիլ օրորանքըդ, որ քուն լաս,
Հայ աղբարքըդ ոտքի ելան, մենակ դո՛ւ ետ պիտ մընաս.
Զարթե՛, հոգիս, անուշ քունեղ, թո՛ղ աշքերըդ լուս տեսնին.
Արևմուտքեն արև ծագեց, բախտը բանեց հայ ազգին:

Զար Սուլթանի ոսկի թախտը շարդվեցավ, վար ինկավ,
Թախտի տակեն հազար ազգաց ազատություն ծագեցավ.
Ով որ շուտով ոտքի ելլե, ազատություն կը գըտնե,
Միրուն որդի՞ս միթե մենակ շար լուծի տակ պիտ մըտնե:

Մենք Սուլթանին շատ խընդրեցինք կողկողագին ու լացինք,
Աղի-աղի արտասուքով ձեռք ու ոտը լվացինք.
Բայց նա շանսաց պաղատանքին ողորմելի հայերուն,
Այժմ, նայինք, նա կը լըսե՞ շառաշյունը սուրբուն:

Տու՛ր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Ու այդ թուլիկ աշիդ մեջը մի պողպատե սուր դընեմ,
Ըստրուկ զընա՛ արյան դաշտը, վերադարձի՛ր ազատված.
Արդյոք մի օր պիտի լըսե՞ս մեր խընդիրքը, ո՞վ աստված:

ՎԱՆԵՅԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղոթարանը բացվեցավ, ժամանակ է զարթելու.
Էրթամ ախոռ, գումշուկներըս լըծեմ՝ գութան վարելու.
Գե՛հ, գումշուկներ, ելե՛ք, ելե՛ք, արտը երթանք աշխատինք.
Հարկ ու խարճի վատեն մոտ է. ոթենք արուն ու քրտինք:

Հայի՛ գութան, հայի՛ գութան, որի՛ համար կը ջանաս,
Ո՛վ քեզիմով՝ կը տանջըվի, որի՛ն գու կուշտ հաց կուտաս:
Այն օր, երբ քեզ ձեռքս առի՝ ազատ օրըս կորուցի,
Անվախ սիրտըս վըհատեցավ, հոգիս թուրքին մատնեցի:

Բա՛վ է, գութան, մեր տանջանքը, համբերությունն վերջ ունի
Դուն տեսա՛ր, որ մեր գուշմանը ամոթ, խելք ու գութ չունի:
Արի՛ փըշտեմ ես քու խոփը, տանք դարբինին կոնու,
Կըռենք-կոփենք սուր ու սուսեր՝ գուշմանի դեմ կովելու:

Սղբարք հայեր, առե՛ք խոփը, տվե՛ք դարբինին կըռելու:
Կըռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փըրկելու:

ԲՈՂՈՔ ԱՌ ԵՎՐՈՊԱ

Ձեռքերըս կապած, ոտքերըս շըղթա,
Կասե Եվրոպան. «Հե՛ր շելաք ոտքի.
Ձեզ ազատություն, ձեզ օրենք չի կա,
Տարե՛ք, կըրեցե՛ք դուք կյանք ըստրկի»:

Վեց հարյուր տարի մեր երակներեն
Կա՛թ-կա՛թ ծորեցավ մեր վերջին արյուն,
Եվրոպան կասե. «Շուտ գանք հայերեն,
Հայի մեջ չի կա ուժ ու քաջություն»:

Ամբողջ Հայաստան ասեղ չէր մնացել,
«Հայք, կասեն, ինչո՞ւ թուր չի վերուցին»,
Մի՞թե վառողի հոգս պետք էր անել,
Թե՞ պետք էր բըրդել շոր հաց քաղցածին:

Եվրո՛պ, մոռացա՛ր երբ Ձըրադաշտը
Ձեռքը թուր՝ կուզար շիտակ քու ծոցը.
Բայց հայի ահեղ Ավարայր-դաշտը
Շիջուց մոլեռանդ այն կրոնի բոցը:

Եվրո՛պ, մոռացա՛ր այն կուռ հարվածը,
Որ պատրաստել էր Իսլամ քու որդոց.
Հայք շուգեց քու արտոսը ու լացը,
Քաղաքաց հըրդեհ, խողխողանք մարդոց:

Երկհարյուր տարի արյուն թափելով,
Դեմ տվեց ահեղ, ուժգին այն գրոհին,
Մինչև որ ձեր կյանքն դարձավ ապահով,
Մինչև որ ուժեն ընկավ թշնամին...

Եվրո՛պ, մոռացա՛ր, երբ քու քաջերը
Անապատի մեջ մընացին քաղցած.
Ի՞նչ պիտ օգնեին նոցա ղենքերը,
Թե որ հայք նոցա չը տային կուշտ հաց:

Ապերա՛խտ Եվրոպ, հիշե՛ հայերուն,
Դու շատ մի՛ խաբվիլ սուրի շաշունե.
Արյուն սթեղն չէ՛ առաքինություն
Եվ ո՛չ նա ազատ ոգու նըշան է...

Մենք խաղաղություն փըրկչեն սովորեցանք,
Նեղիչին ներել— Ավետարանեն,
Մի՞թե մենք այսօր պատուհասեցանք,
Մի՞թե խաբվեցանք մեր բարերարեն:

Ինչերո՞ւ էր պետք առաքինի վարք,
Է՞ր շեղանք Հայքըս սրիկա, մարդասպան,
Անշուշտ կը դասեր մեզի ազգի կարգ
Արյունածարավ գոված Եվրոպան:

ՀԱՅԵՐՈՒՄ ԹՈՒՔԸ

Գուն խելոք, հաշվով վաճառական ես,
Մյուլք, փող ու ապրանք, կասեն, շատ ունես.
Բայց թե փողեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վըրան:

Քաջ ես, լըսել ենք, ինքըդ մեծավոր,
Անուն հաղթողի ունիս փառավոր.
Բայց թե թըրեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, թըրիդ ալ վըրան:

Ի վերուստ քանքար քեզի տված է,
Հեղինակ անունըդ աշխարհ փըռված է.
Բայց թե գըրչեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, գըրչիդ ալ վըրան:

Հեռատես մըտքով դուն վարդարեցար,
Հըզոր իշխանի սիրելին դարձար.
Բայց թե մըտքեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, մըտքիդ ալ վըրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կըհորինես թանկագին բաներ.
Բայց թե ձեռքեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վըրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հրուշակ ու հանճար.
Բայց թե լեզվեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, լեզվիդ ալ վըրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լըցված է մարդոց բերան,
Թե ուսումեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ուսմանդ ալ վըրան:

Կուտամ քեզ պատիվ, կունենաս դու հարգ,
Ու կըղընեմ քեզ ազնիվ մարդոց կարգ,
Երբ օրորանեդ մինչի գերեզման
Միակ ձըգտմունքըդ լինի Հայաստան:

ՆՈՐ ՏԱՐԻ

Երևե՛կ, թե այս նոր տարին
Վերջ տար հայի ցավերուն.
Չարք կորչեր, ու բարին
Բուն զըներ մեր սրբտերուն:

Երևե՛կ, թե այս նոր տարին
Ազատ շքնչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլելին արտ-անդաստան:

Երևե՛կ, թե այս նոր տարին
Ռաբի կանգներ Հայաստան,
Եվ կիսաքանդ մեր Կարին
Լիներ քաղաք մեր ոստան:

Երևե՛կ, թե այս նոր տարին
Հայ սրտի մեջ ուժ հոսեր,
Ապալինած յուր սրբին,
Հայը բյուրդեն շի սարսեր:

Երևե՛կ, թե այս նոր տարին
Հայ ազգ ի մի գումարվեր,
Ի գլուխ Կարնո հայ ամրին,
Հայի գրոշակ ծածանիր:

Հայն՛ր, երբեք չերկմըտինք,
Կրկատարվի այդ ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրոգություն մեր սրբտեն:

ՀԱՅԵՐՈՒՍ ԲԱՂՁԱՆՔԸ

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ տեսնել մեր հային
Ազատ, ապահով, կըրթյալ, ինքնագոհ,
Ամեն հայի տուն՝ զըրախտ երկնային...
Լոկ այդ բանն ինձնից շուզենար մեկ զոհ:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատված թըշնամու ձեռքեն,
Հայի երկիրը, հայի սեփական...
Լոկ այդ շի բաժաներ ինձ իմ կուպեկեն:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ, որ մեր հայերուս
Արժարժվեր սերը, ուսման, գիտության,
Հայի մեջ շի մնար մի հատիկ անուս...
Լոկ հեռի ինձնից թուղթ ստորագրության:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ, որ հայ պատանիք
Գեպ համալսարան խըմբով վազեին,
Եվ Չվիցերիա երթար հայ աղջիկ...
Լոկ ինձնից նոքա կուպեկ շուզեին:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ, որ մեր զեյթունցին
Միթոայլոց, շասպո, որմբկեն ունենար,
Չարդ ու բուրդ աներ քուրդ ու չերքեզին...
Լոկ ինձնից զենքի նա փող շուզենար:

Երբ մեր հայրենին հրաշքով ազատվեր,
Մերոնք էլ ազատ կյանք-օր վարեին,
Ա՛խ, ինչպե՛ս, ինչպե՛ս լավ բան կըլինեք,
Երբ հայք ինձ իրանց իշխան ընտրեին:

ՀԱՅԻ ՎԻՇՏԸ

Գիտեմ, խեղճ հային չեն տալ Հայաստան,
Մեղ ազգ կազմելու ամենքն են խափան,

Նախանձ, քեն ու աճ տիրել է հոգին
Դեպի հայերուս շատ ու շատ ազգին:

Թե թուր վերցնեինք՝ մեզ պիտ մորթեին,
Ոչ ոք պիտ ելներ պաշտպան խեղճ հային.
Երբ որ լուս կեցանք մենք խոհեմաբար,
Ասին. «Մեռել եք հոգեպես իսպառ»:

Ի՞նչ անենք ուրեմն, ինչպե՞ս փրկվելինք,
Մեզ հալածողեն մենք որտե՞ղ փախչինք.
Հայության անվան խարանած կընիք,
Հայի ճակատին կոխել են մարդիկ:

Վեց հարյուր տարի մենք կիսակենդան՝
Կըսողանք տրորած ճրճուի նըման,
Փոխան շիջելու նախանձը մարդոց՝
Սաստակացավ, աճա՛ղ, գերզ հըրզե՛հ ու բոց:

Կուզեն որ հայքըս մեր սուրբ հավատքեն
Հրածարվինք, ինչպես մահացու մեղքեն,
Մեր լեզուն, մեր ծնոսք՝ նըշանք ազգության,
Երբեք չըհիշվին ի մեզ մարդկության:

Կըրնա՞մ ուրանալ ես իմ պապերուս,
«Մորդ ատե՛» — խրատել հարադատ որդուս,
Իմ ձեռքով պըղծել իմ սուրբ ավազան,
Ազգուրացն, ասե՛ք, չե՞ վայրի գազան:

Ինչպե՞ս կը կըրնամ ես տալ մոռացման
Քո սուրբ հիշատակն, Մամիկոն վարդան:
Ո՞ր ազգի պատմիչք չորս-հինգ հատ ցուցին
Նըման մեր անմահ Ղևոնդ Երեցին:

Չէ՛, անհընար է ազգեն հրածարվել,
Ինչպես որ միսը ոսկորեն բաժնել.
Սինըբոր կըմնամ, ըստոր ու ատած,
Բայց ես չեմ լինիլ երբեք ազգուրաց:

Երբ պանդուկումն եմ, ու իմ հանդիման
Կան կերակուրներ թանկ ու պատվական,
Մի՞թե չեմ հիշում վիճակն իմ ազգին,
Չեմ ասում... «Հայե՛ր, օգնեցե՛ք հային»:

Թատրոնում նըստած՝ առաջին կարգում,
Ու մըտքիս պես-պես խորհուրդ են ծագում,
Դըպրոց... թեատրոն... հայոց զորք... ուսում...
Չե՞մ ասում «Հայե՛ր, գաղթեցե՛ք Արզրում»:

Կալվածատեր եմ. տընտեսը իմ տան
Հավաքեց բերեց ինձ փող բավական.
Ես չե՞մ հասկանում ազգիս հանգամանք,
Չե՞մ ասում. «Վանին խիստ պետք է մի բանք»:

Մահի՛նս կակուղ, վըրես տաք վերմակ,
(Ես շատ բարի եմ քընի ժամանակ),
Մանավա՛նդ երբոր փորս էլ է տըկոած
Չե՞մ ասում. «Հային տվե՛ք խորշ ու հաց»:

Օրն է միգապատ, տափը թաց ու ցեխ.
Բեռնակիր մշակը ոտքին չունի տրեխ.
Տաք տեղից ասած չե՞մ հազար անգամ
«Հե՞ր երկաթուղի չունի Հայաստան»:

Կընկաս չորս կանգուն կերպասե ագին
Որքա՛ն լավ խորհուրդ բերեց իմ մըտքին.
Չասացի՞ հային. «Ձեզ համար ժըլատ,
Իսկ եղբարց համար պիտ լինել առատ»:

Դուստըրըս ինսթիթուիթ, որդիս՝ քուսուսում,
— Ականջիդ կասեմ՝ այդ է զուտ ուսում —

Բայց երբ գրնում եմ ես Քուրթի-Մայդան,
Հայ դրպրոցներին ես չեմ միշտ պաշտպան:

Այսպես՝ տարիներ և ամբողջ իմ կյանք
Արեւ եմ միայն ես լող շաղփաղփանք.
Իսկ դուք միամիտ, շուտ-խարժող հայեր,
Անունըս դրրիք... խելոք ազգասեր:

1880

ՔԱԱՆԱՆ ԳԵՂ

Մուխը ամպի պես կելլեր դեպի վեր,
Տընտըղի նման բոցը կը քալեր.
Տուն, եկեղեցի, պարտեզ ու այգի
Անսիրտ, անհոգի մատնած են կրակի:

Հայերն հոտի պես սաքսած կը վազեն,
Անցնող-գարձողեն օգնություն կուզեն.
Օգնություն: Խեղճե՛ր: Կատարած օմանլին
Զար մահ կը սպառնա պարհուրած հային:

Մայրը կականով կը փընտրե աղշիկ,
Աղջըկան գերի տարավ շար տաճիկ,
Իր որդուն կուզե հալքը շրվարած,
Որդուն կը տեսնե խաղուխի դրած:

Հայի հավաքած մալը աղբատին
Հեյալ փայ եղավ անկըշտում քյուրդին,
Խեղճը հուսահատ կ'աշե երկընթին,
Կըսպասե նըպաստ հրեշտակաց զորքին:

Խաբուսի՛կ հույներ... Դեռ շատ ու շատ դար
Պիտի խարվիս, հա՛յ, ինչպես խարվեցար:
Թե ինքըզ շանես քու գըլխու ճարը,
Ե՛րբ պիտի օգնե քեզի օտարը...

Խե՛ղճ մարդ, մի անգամ մեռնելի վախցար,
Մինչ մահվան օրըզ հաղար մահ տեսար
Հազար մեռնելըզ հազար ցավերով
Զավակիդ փոսը ձեռքովդ փորելով...

Դու միշտ եղբորդ անտերունչ թողիր,
Մատիգ ծայրովը նորան շօգնեցիր.

Գլուխն առավ խեղճը, գրնաց հեռացավ...
Հայաստան ձեռքեղ ամայի դարձավ:

Դու կարծեցիր թե՛ ոսկին մեծ բան է,
Ամեն մի ցավի, դարդի դարման է.
Ապա հե՞ր ոսկիդ քեզի չի օգնեց,
Կընկադ, զավակիդ մահն չի փրկեց...

Ա՛ր, հայե՛ր, հայե՛ր, թե որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհվեր հօգուտ հայ աղգին,
Առմիշտ կըդադրեր ձեր լացն ու կական
Ու դրախտ երկրավոր կըլլար Հայաստան:

ՄԵԾ

Գրնա՛, իմ որդյակ, աշխարհքըս անցի՛ր,
Պանծալի անուն Մեծի դու ստա՛ցի՛ր:

Ու գրնաց որդին, շատ քրտինք թափեց,
Մեծ հարբստություն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

— Չէ՛, չէ՛. թեև դու բորսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Նա գրնաց մըտավ իմաստնոց տաճար,
Եղավ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

— Չէ՛, չէ՛. թեև դու գիտությունն ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Պահով, աղոթքով մըտավ անասլատ,
Քուրձ հագավ մարմնուն, հրաշքներ գործեց շատ,

Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

— Եդեմա դրախտին էլ լինիս դու զարդ,
Ես քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գրնաց որդին, դարձավ զորավար,
Խելքով, քաջությամբ տիրեց շատ աշխարհ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

— Չէ՛, չէ՛. թեև դու գոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Ու գրնաց որդին մի երկիր օտար,
Հրեշք ու ցավերե մաքրեց այն աշխարհ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

— Օտար աշխարհի թեև եղար զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Ու գրնաց որդին... Հա՛, սարն էր գլորման...
Դեմ տըվեց ուսը, չը թողեց անկման...
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

— Դյուցազների մեջն էլ լինիս դու զարդ,
Բայց քա՛վ ինձ ասել քեզ համար մեծ մարդ:

Ու գնաց որդին գրլխակոր, տըրտում,
Հոգին վըրդոված, ցավ ու դարդ սըրտում,
Մաշվում էր խեղճը, գոռ տալով խելքին՝
Հե՞ր շարժանացավ հոր գովասանքին...

Նորա եղբայրը գերի էր տարած,
Թըշնամու ձեռքով տունը ավերած.

Ճիգ արավ, գլուխը վրտանգի ձրգեց...
Ազատեց եղբորն ու տունը կանգնեց...

Հանկարծ... սար ու ձոր, ծով դրզրդեցան,
Բյուրք բյուրոց բերեով գոչեց ազգ մարդկան.
«Լեծ Մարդու անուն դու ա՛յժմ ըստացար,
Եղբորդ հիշեցիր ու քեզ մոռացար»:

ՀՈՒՅՍ

Թո՛ղ փրչե քամին պազ-պազ, երեսիս,
Վերեն ամպերեն սաստիկ ձյուն թող գա.
Որքան որ կուզե՛ թող փրչե Հյուսիս,
Հուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գա:

Թուխպը թող պատե երկինքը պայծառ,
Թանձըր մառախուղ երկիր թող փակե,
Տարերք աշխարհիս խառնըվին իրար,
Հուսով եմ, վաղ-ուշ, արև պիտ ծագե:

Թո՛ղ գա փորձություն, թո՛ղ գա հալածանք.
Խավա՛ր թող դառնա անաղոտ լույսը,
Սարսափելի չեն հային տառապանք՝
Միայն... չի հատնիր խրդճուկի հույսը:

ԱՄԻՐԱ

Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Քանի որ բաներն այս ճամփով կերթան
Մարդ չի գրտնվիլ ճարպիկ քեզ նրման,
Որ ջուրը կրակին հետ միավորեր,
Ու հըմուտ ձեռքով աշխարհըս վարեր
Քանի որ բաներն այս ճամփով կերթան,

Դու միակ տեր ես աշխարհիս վրդան,
Մարդիկ շրվարած, այլաչլած բնավին,
Քեզանից հեռի՝ փրկություն չունին:
— Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Չի՛ դադրիլ մարդոց քու գովասանքը,
Օրեօր կանի քու փառք-պարծանքը,
Աստղեր ու խաչեր ու շրթանըշան
Չեն տեղավորիլ քու կըրծքի վրդան...
Կը փարթամանաս տափով ու հողով,
Մեծ-մեծ տըներով, գանձով ու փողով.
Որդիքըդ կլինին մի-մի մեծատուն,
Կուտաս դու նոցա պանծալի անուն:
— Մի՞թե չեմ կարող, մարգարե, չեղած
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Մարդահաճները, սողունի նրման,
Փորաքարը կուզան քեզի հանդիման,
Օտարի կեղծի, սըտախոս լեզուն
Մըտքեդ կը հանն խեղճ հայի անուն.
Փառաց ու պատվի այսքան ծուխ-բուրկեն
Քու պայծառ միտքը, ավա՛ղ, կըփակեն:
Կը մոլորեցնե քեզ անցուկ փառքը,
Կը մոռացնե քու սըրբազան պարտքը:
— Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Կանցնի ժամանակ՝ օր, ամիս, տարի,
Ճրրագի նրման կյանքըդ կը մարի,
Քու անշունչ մարմնուն կուտան շուք վերջին,
Սուտ լացով հողին կավանդեն գիճին...
Գուցե բարեկամք մի քանի անգամ
Իրանց մեջ հիշեն քեզի կես-բերան,
Բայց, ավա՛ղ հինգ-տաս տարի դեռ չանցած,
Հազիվ կը հիշվի անունըդ գոված:

—Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Բայց բախտը ավել էր մեզ խոստացել,
Պանծալի անունդ քու անմահացնել,
Երջանիկ վիճակ՝ սպասած դարերով,
Տալ խեղճ հայ ազգին քու հուժկու ձեռով...
Եվ որքա՛ն-որքա՛ն հայերըս և դո՛ւ
Պիտի կարմըրինք միշտ «առ ամթիւ»:

1881

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Արի՛, իմ սոխակ, թո՛ղ պարտեզ մերին,
Տաղերով քուն բեր տըղիս աչքերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին շուզե տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղածա՛գ, թո՛ղ արտ ու արոտ,
Օրորե տըղիս, քընի է կարոտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին շուզե արեղա դառնալ:

Թո՛ղ դու, տատրակի՛կ, քու ձագն ու բունը,
Վուժուով տըղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակի՛կ, մի՛ գալ,
Իմ որդին շուզե սըզավոր դառնալ:

Կաշաղա՛կ, ճարպիկ, գող, արծաթասեր,
Շահի գըրուցով որդուս քունը բեր,
Բայց նա լալիս է, կաշաղա՛կ, մի՛ գալ,
Իմ որդին շուզե սովղաբար դառնալ:

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասի՛րտ բազե,
Քու երգը գուցե իմ որդին կուզե...
Բաղեն որ եկավ՝ որդիս լըռեցավ,
Ռազմի երգերի ձայնով քընեցավ:

ՏԱՃԿԱԼԱՅԵՐԻ ՕՐԿԱՍ

Գիտուն, թո՛ղ գիրքը, ժամ չէ կարգալու,
Գեղըուկ, դու էլ թո՛ղ եղներն ու գութան,
Տեր-հայր, դագարե՛ մեռել թաղելու,
Երկունքի մեջ է մայր մեր Հայաստան...

Երկունքի մեջ է Հայաստան աշխարհ,
Մեզ պիտի շնորհե մի նոր գոյություն,
Փափաքով սպասած ամենեկն շատ դար՝
Հայոց աշխարհի սուրբ ազատություն:

Մասանանք պահ մի հին հաշիվները,
Թողնենք առօրյա անձնական շահը,
Հանենք սրբտերես մեր պիղծ կըրքերը,
Հանենք սրբտերես ըստըրկի ահը:

Քրիստոնյա ենք մենք և սերունդ Հայկի,
Այսբան բա՛վ է: Է՛լ լուսավորչական,
Կամ պապադավան և կամ լոթրանգի
Ազգը չի բաժնենք՝ ի սեր հայության:

Մանրը երկունքի մեջ է Հայաստան,
Տա՛նք թեթևություն նորա ցավերին,
Նորա ծընելու գեղեցիկ մանկան,
Թույլ շրտանք խեղդել թըշնամիներին:

Նորածնի առջև բանանք մեր գանձը.
Հարուստը՝ ոսկի, ուժը՝ պատանին,
Հարսը՝ յուր փեսան, քաջը՝ յուր անձը,
Կոնդակի շանթեր՝ սուրբ էջմիածին:

Աստված մեզ խըղճաց վերջին այս նվազը,
Բացեց մեր պառավ մոր ամուլ արգանդ,
Թե հայը մարդ է՝ կազատվի ազգը,
Թե չէ՛, Հայաստան կը լինի քարքանդ:

ՄԻ ԿԱՐԾԵՔ ՈՐ ԵՍ...

Մի՛ կարծեք որ ես սին փառքի համար,
Իմ հառաչանքով լըցրի <հայ> աշխարհ.
Այս հեք ամբոխի ծափին ու գովքին
Կարոտ չէր բընավ իմ հըպարտ հոգին...

Այո՛, իմ քնարի տըխուր ձայները
Ցընցեցին հայի հոգու լարերը,
Արյուն էլ ազնիվ սըրտե քամեցին,
Կրտրիճի աչքե քունը փախուցին:

Ինչո՞ւ, շգիտեմ: Ասե՛ք, հե՛ր բարդ-բարդ
Բացվում է դարնան կարմիր, հոտոտ վարդ,
Լեռնիվայր ինչո՞ւ անուշ կարկաչով.
Վազում է առուն դալարի միջով:

Չեփյուռը ինչո՞ւ տերև-տերև
Անցնելով, ասես, տալիս է բարև,
Ինչո՞ւ սոխակն էլ մոտ կանաչ թըփին
Անմըտունչ ձայնում է յուր մեղեդին...

Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻՆ

Նորա 25-ամյա հորեկյանի առթիվ

Ազգիս շարավոտ վերքը լըվանալ,
Լիրբ մեծատունին անվախ ապտակել,
Գոհարով ծածկած կեղտերը բանալ,
Կեղծավորների դիմակը պոկել,
Ու խեղճ կինտոլին դընել մարդու շար՝
Այս ամենը դորեց միայն քո՛ հանճար:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՔՆԱՐ

1879

ԱՂԱՅԻՆ ՍՅՈՒՐԵՓԸ

Աղա ըլալը խոլայ շի կիտնաս,
Աղաութիւնը ունի շատ ֆենտեր,
Ուրիշ ֆաստնի խելք պիտ ունենաս,
Աղա՛լալն ունի շատ քար ու պատեր:

Ան ի՞նչ աղա է, որ կարդալ կիտնա,
Աղան, ատեթը, պիտ՛լա անուտում.
Մեր հալխը շիտի՞ք, տայմա կըխընտա,
Եփ տեսնե տիմացն խելոք ու կիտուն:

Աղային սիրտը շար պիտի ըլա,
Ինքը անկուշտում միլք ու ըստըկի,
էրեսը տայմա թիթիզ ու շըրա.
Աղան շիպիտի ունենա հոգի:

Աղան պիտ նայե խեղճ հալխին վըրան,
Ինչպես օշխարին կընայե շոպան.
Պուրդը պիտ կըտուե, կաթը պիտ կըթե
Ու անկե էտե կաշին սըկըրտե:

Աղան խըղճմըտանք պիտ շի ունենա,
Հավատն ալ պիտ՛լա շատ низкий проб-ի

Տիմացը դրախտը պացված պիտ կիտնա,
Եփ պասին ուտե սըսեո ու լոպի:

Աղային օրդին, ատեթը, կըլա
Զըոթմաճի, տենքսըզ, փուշ ու հովարտա...
Լե՛վենտ, աղեկ է շըվանե կախվիս,
Աղայի աղջկա հետ շի կարգըվիս:

Ան ի՞նչ աղա է, որ հեշ օլմասա,
Մոսկոֆին օխտը ժում խաբած շիլա,
Մինք հեշ շինք ասիլ՝ հարամի ու կող
Մարդուն, որ ծոցը ունի նոմա փող:

Աղան, ատեթը, շի մեխկընալ հեշ,
Հաղարներ վոթել կեր ու խումի մեջ.
Ամա լավ գործի զոհելու ըլա,
Քապիկին վըրա տիր-տիր կը տողա:

Աղան շատ կատե ազգային թատրոն,
Զերե սյուրեթը կը տեսնե նա հոն,
Մեմալ ուտուֆը կը վերնա մարդուն,
Տիմացը որ տան կաղեթի անուն:

Ի՞նչ էրկան-պարակ խոսքըս երկընցնում,
Ու ձեր կոլոխը լաֆով հոտեցնում,
Քանի անպակաս է մեր մեջ աղան,
Սըրայի գալու չէ՛ խեղճ նախըվան:

Զարմանք քաղաք է մեր Նոր-Նախշը վան,
Վո՞վ ասիս կուզե լալ մեր կոլովան,
Հե՛մ պուրթոտ կոլոխ, հե՛մ տըպըզ-քաշալ,
Հե՛մ փալապըլըխ, հե՛մ միրուք մաշալ,
Հե՛մ Մոսկոֆին հետ տայմա կըտըրվող,
Հե՛մ խեղճ ժամերուս ստակ ճըպըթ-անող,
Հե՛մ սուտ զուրուցը, հե՛մ ալ սուտխաբան,
Հե՛մ փիթուն տարին փիրփիրի հարբան,
Ասիմ, շամչընամ՝ վերջին տիրացուն
Աս միջոցիս է մեր կոլովացուն...

Ամո՞թ քեզ, ամո՞թ, Նախշը վան քաղաք,
Որ չունիս մեջըդ շենքով հասարակ.
Որ հալխին ֆայտան աղեկ մը ճանչնար,
Քյուզհանիննրուն ձեռք մեզի չի տար...

Ընտոինք կոլովա ա՛ն շենքով մարդուն,
Որ սիրեր, մեղքնար մեր զավակներուն,
Քաղաքիս ստակը ճեպը չի կրոներ,
Հա՛պա մեր հալխին պակսորդը լըցնելու:
Հայ ժողովուրդով իլինք հինգ գեղեր
Նախշը վանին հետ մեկ գեմսթվա աներ.
Քաղաքըս մըտցներ ծախս ու առուտուր,
Քաղցած աղքատին տար կուշտ կերակուր,
Տար մեր զավակին անպես վարժատուն,
Ալ Ռոստով չերթար նա օրը չորս ժուս.
Տարին եթմիշ մարդ՝ աչքերը արցունք,
Չօգտե տալ սալտաթ առանց իրավունք:

Աս սե օրերուն, որ մեզի հասան,
Պատճառ էր մենակ անխելք կոլովան.
Կօգտե, հասարակ, խելքերըս ժողվինք,
Ու գալու թոնթին շենքով մարդ ընտոինք...

Ընտոության օրը կուգամ ես դոսման,
Կասին վո՞վ է մեր ընկերն ու դուշման:

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐ ՏՆՐԻ

Ահա՛ հասավ Նոր տարի,
Հետք բերեց նոր բարի,
Մանրը տըղոց՝ ուրախ օր,
Բարի զավակ՝ հորն ու մոր:

Մանրը տըղայք են ուրախ,
Ունին կաղին, կողինախ,
Սալորի շիր, շամիշ, թուզ,
Փըշատ, ունար ու ընկույզ:

Մանրը տըղայք՝ չի մոռնաք,
Աշխարհքումըս շեք մենակ,
Ուրիշ շատ խեղճ տըղայք կան:
Աղքատ և անօգնական:

Նոքա հայր և մայր չունեն՝
Սև շոր հացի կարոտ են.
«Աղքատներին ողորմած
Նղե՛ք», կասե ձեզ աստված:

ՉՄԵՌ

Զրդիտեմ՝ ինչո՞ւ ձըմեծվա օրը
Հիշուս եմ ես միշտ իմ հայ-եղբորը,
Ասում եմ՝ արդյոք չունի՞ նա կարիք,
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք.

Ունի՞ տաք հալավ, ունի՞ նա մուշտակ,
Ամո՞ւր է տունը, կըտուրը շէ՞ ծակ...
Ու այնպես ևս միշտ ճըմեռվա օրը
Միտս բերում եմ իմ հայ-եղբորը:

ԳԱՐՈՒՆ

Կարոտ ենք տեսքիդ, աննրման դարուն,
Շո՞ւտ արի մեզի, բե՛ր ծաղիկ սիրուն,
Բե՛ր պայծառ արև, բե՛ր մեղ տաք օրեր,
Ճըմեռող թըռչուն. բե՛ր կանանչ դաշտեր:

Բա՛ց մեր դրոները, բա՛ց մեր պատուհան,
Թող բացվին, ծաղկին, վարդ, մեխակ, շուշան.
Փակված սենյակեն ելնինք, ազատվինք,
Կանաչ դաշտ երթանք, խաղանք, գլորվինք:

ԱՆՁՐԵՎ

Անձրև, անձրև՝ ցած արի,
Բըսցուր ցորեն ու գարի,
Բըսցուր ծաղիկ, կանանչ խոտ,
Ավլե՛ փոշի, մաքրե՛ օդ:

Անձրև, անձրև՝ ցած արի,
Գալըդ ամենուս բարի:

ՄԻԾԵՌՆԻԿ

Մարտն անցավ, հասավ ապրիլ գեղեցիկ,
Հեռու աշխարհքե եկավ ծիծեռնիկ,
Բարո՞վ դուն եկար, գարնան կարապետ,
Բուն շինողներից ամենից վարպետ:

Կըռունկը թըռավ, գրնաց վերերեն,
Սոխակն ալ փախավ մեր պարտեզներեն,
Մեկ դու մընացիր ճընճղուկների հետ,
Սիրուն ծիծեռնիկ, գարնան կարապետ:

Պատուհանիս մոտ շինե քու բունը,
Անուշ ճըմեռողով երգե գարունը,
Ածա ձու, հանե գեղեցիկ ձագեր,
Մընա մեր մոտը մինչի սեպտեմբեր:

ԶՅՈՒՆ

Երբ որ ձյուն կուգա՝ ևս կուրախանամ,
Որ դուրս պիտ ելնեմ, դահուկ պիտ խաղամ...
Բայց տեղս որքան աղքատ տըղայք կան,
Որ տաք հալավի կարոտ կը մընան:

ՊՏՈՒՂՆԵՐ

Հավ պրտուղներ են՝
Տանձ, կեռաս, սալոր,
Մոր, ելակ, հաղարջ,
Գեղձ, բալ ու խընձոր:

Բայց երբ տեսնում եմ
հաղող ու ծիրան,
Ինչո՞ւ հիշում եմ
ես միշտ Հայաստան:

ԳԱՌՆՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդըդ սպիտակ ու փափուկ,
Գաշտ վազելով ու արոտ,

Մորը քաշում ես կարոտ,
Մի լար, գառնուկ սիրական,
Փոքրիկ տղի դու նրման,
Կու գա մայրըդ, հետը շատ
Կը բերե քեզ անուշ կաթ:

ԽԵԼՈՔ ԵՐԵՆՍԱ

Խելոք երեխան այսպես պիտ լինի.
Կանուխ պիտ զարթե, շուտ քուն պիտ մտնի.
Պիտի չի մաշե սիրտը հորն ու մոր,
Դըպրոց պիտ երթա, կարդա ամեն օր:

ԱՇՈՒՆ

Աշունը եկավ, թափվեցավ սաղարթ,
Էլ մի փընտրիլ դու մանուշակ ու վարդ,
Բնությունը տխուր, պարտեզը տըրտում,
Ձմեռվա հոգան է մարդոցը սրտում:

Նրեխան փակված մենակ սենյակում,
Պատուհանիցը պարտեզ է նայում,
Միտքը բերում է գարնան օրերը,
Մարգերի վրա զըվարթ խաղերը...

Մի՛ տըրտիլ, տըղա, թո՛ղ անցնի մարտը,
Նորից կը բացվին նարգիզն ու վարդը,
Նորից սոխակը պիտի գա հանդես
Նորից խաղալու դու կերթաս պարտեզ:

ՎԱՐԺԱՏՈՒՆ

«Մայրիկ՝ ինչո՞ւ այս խեղճը
Ման է գալիս գըջըլտած,
Ոտքը բոբիկ, գըլխաբաց,
Ինքն էլ գրեթե միշտ քաղցած»:

— Որդյակ՝ դա էլ քեզ նրման
Մի օր տըղա էր փոքրիկ.
Բայց թողուցին անխընամ
Նորան մոտի վատ մարդիկ:

Չուղարկեցին վարժատուն,
Բարի խըրատ չի տըվին,
Մընաց խեղճը անուսում,
Մույլ ու անգործ բընավին...

Ինքըդ դատե, բըրետեն
Օգուտ ոնի՞ մեղվանոց.
Նույնպես գիտցիր՝ տըգետեն
Նրեք չիկա շահ մարդոց:

Այն ժամանակ մեզ կուտան
Մարդիկ հալավ, տուն ու հաց,
Երբ որ նոքա կըստանան
Մեզանից շահ՝ փոխադարձ...

Այս պատճառով՝ այդ մարդը
Ման է գալիս գըջըլտած,
Ոտքը բոբիկ, գըլխաբաց,
Ինքն էլ գրեթե միշտ քաղցած:

«Մայրիկ՝ չուզեմ ես նրման
Լինել թըշվառ այդ մարդուն.
Այսուհետև պիտ երթամ
Ամենայն օր վարժատուն»:

ԿԱՏՈՒ

Կատուն եկավ փիսիկ-փիսիկ,
Հազար նազով ինչպես հարսիկ,
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց շանչիկներով.
— Կատո՛ւ, կատո՛ւ, հե՛ր ես տըրտում,
Թե՞ մկներն են այսօր զարթուն:

ԲԱԴԻԿ

Բադիկ-բադիկ,
Կարմիր թաթիկ,
Ո՛ւր ես գընում կամաց-կամաց,
Ձագուկներդ շորս կողմը առած,
— Ես գնում եմ ջուր գտնելու,
Ձագուկներին լըվանալու,
Ձագուկներըս մաքուր-մաքուր,
Տղոց երեսն ազտ է ու մուր:

ԳԱՐՈՒՆ

Արի, գարուն,
Արի, սիրուն,
Բեր պարզ արև,
Առատ անձրև.
Լնդրե տերեւ
Հաճար, ցորեն,
Ձմեռն էր մեծ
Ողջ ըսպառեց.
Ամբոյ, մանան,
Դատարկ դառան:

ԱՐԵՎ

Արև, արև, արի դուս
Քեզ բերել ենք աչքի-լուս,
Քու քուրիկը լուսինկան
Բերեց շամիչ մեկ աման,
Ամպը Լկավ, մութ արավ,
Չամիչն աչքերես կորավ.
Բաց երեսըդ, արեգակ,
Մեկ բուռ շամիչ քեզ կուտանք...
Օ՛խ, արևին խաբեցինք,
Ամպի տակեն հանեցինք:

ԾՈՒՅԼ

Մինչի հորձակ քուն եղար
Քընետ ելար՝ հաց կերար,
Հաց կերար ու կըշտացար,
Կըշտացար ու պառկեցար,
Այսպես տարիներ կեցար...
Հետո ինչո՞ւ գանգատ կանես,
Որ ապրուստի ճար չունես:

ՁՅՈՒՆ

«Ախ, ինչո՞ւ-ինչո՞ւ կուզա պաղ ձյունը,
Նորից ամիսներ պիտ մընամ տունը,
Տեսնելու չեմ ես կանանչ ծառ, արոտ,
Հոտոտ ծաղիկեն պիտ մընամ կարոտ»:
— Ձյունը որ կուզա երկնքեն ի վար,
Իմացիր, մեծ բախտ է մարդու համար,
Վերմակի պես տաք կը ծածկե գետին,
Որ բույսի արմատը դիմանա ցրտին.
Նա հողին կուտա հյութ, պարարտություն,
Դաշտին ու արտին մեծ առատություն:
Մի՛ տրտնջալ, մարդ, դու բընութենեն,
Թե տաք և թե ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են:

ՄԱՆԻՇԱԿ

Դեռ ո՞ւր է ծիծեռ, դեռ ո՞ւր է սոխակ,
Գարնան կարապետ եկավ մանիշակ.
Երկնային խունկը շորս կողմը բուրեց,
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց:

Երկինքն է անամպ, շողշողուն արև,
Տանք մանիշակին, երեխերք, բարև,
Որ մեր դաշտերին բերեց նոր գարուն,
Նախշուն հավերով, ծաղկով զարդարուն:

ՏԵՍՏԻԲ ԵՐԵՆԵԱ

Նրբ որ ծագեցավ պայծառ արեգակ,
Աքար, աղավնի, հավ ու ծիծեռնակ,
Զի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով
Գնացին իրանց գործին ըշապով:

Միայն ծուլ տրդան չի գնաց զբարոց,
Գիրքը շրպըրտեց ու փախավ փողոց.
Էրիկուն ամենքն ետ դարձան ուրախ,
Միայն տրդան էր տրբտում, դիտակախ:

ԺՐԱԶԱՆ ՏՂԱ

Տրդան սիրում է ձեզ շատ, արեգակ,
Դաշտ ու պարտեզում ճրովըող թռչնակ,
Ճյուղերից կախ-կախ պտուղներ հասուն,
Բայց ձեզնից ավել պիտ սիրե ուսում:

Ուրեմն թողե՛ք, նախ զբարոց հրթա,
Ընկերների հետ դասերը նա տա,
Եվ երբոր իր սուրբ պարտքը կատարե,
Որքան որ ուզե՛ թող նա ձեզ սիրե:

Իչնուհետև ցուա՛, պայծառ արեգակ,
Աչնուհետև երգե՛... դու նախշուն թռչնակ,
Ու անուշ համը հասուն պրտուղին
Թող լինի վարձը ժրաշան տրդին:

ՎԱՆԻՉԿԱ

Վանիչկային շատ են գովում,
Որ լավ աշակերտ է նա,
Որ ֆրանսերեն վարժ է խոսում,
Ճանաչում է Եվրոպա:

Բայց մայր լեզու հայրենի
Մեզը մունջ է ու տգետ,
Զի ճանաչում Հայաստանի
Ոչ մի քաղաք, ոչ մի գետ...

Ո՛չ մարդ, կրկու է քու վանյան,
Որ սեփական շունի բուն.
Թութակ է քու գոված տրդան,
Որ չը գիտե իր լեզուն:

1880

ԵՍ ՆՇԱՆԱՍ ԷՒ

(Ճշգրիտ անցք իմ հիշատակարանից)

185* թվականի ձմեռը այնպիսի ցրտեր էր անում, որ մինչև քաղաքիս վաղուցվա բնակիչները զարմանում էին, և նոցա մըտքին չէր գալիս, որ այդպիսի ցուրտ եղանակ նոցա ժամանակները պատահած լիներ: Ձյունը ցրտութենեն կարծրացած, պնդացած՝ ման եկողի ոտերի տակ ճրգճրզում, ճոնչում էր, մարդոց բերնեն գոլորշիքը այնպիսի առատությամբ էր դուրս գալիս, որ աչքի առաջ թանձր մեղ էր ձևացնում և խափան էր լինում յուրմեն երկու քայլափոխ կեցած առարկաները շոկելու, զանազանելու: Մարդ չէր համարձակվում յուր մարմնու որևիցե մասը դուրս հանել. թե՛ ձեռքի մատները, թե՛ քիթը, թե՛ ականջները, եթե տաք չլինեին փաթաթած, երկու րոպեում սառում-փետանում էին: Դժվար էր շունչ առնելը. ամեն շունչ առնելիս՝ ասես թե կայծակներ էիր կոպ տալիս: Ոտով ման եկողը չէր գնում յուր սովորական քայլվածքով, այլ զորությունը հասածի շափ վազում էր, որ ոտերը ցրտին շտար:

Այս այն շարաշուք ձմեռն էր, երբ քաղաքումս գոհի ցավը և խուլեռան իրար հետ դաշնակից էին դարձել և սաստիկ կոտորած էին անում սոսկացած ժողովրդի մեջ: Եթե մարդը համբերություն ունենար կանգնելու նորաշեն քարե կամրջի վրա (որ քաղաքը վառիլի կղզիի հետ միավորվում է) և առավոտից մինչև մթնակողը մնար այնտեղ՝ հավատացնում եմ, որ մինչև երկու հարյուր հուզարկավորություն կհամբեր զանազան աստիճանի և կոշման մեռելներու. բայց մանավանդ մեռնող աղքատներու թիվը շատ էր

այն ձմեռ: Թեպետ այսպիսի մեծ և բազմամարդ քաղաքումը, ինչպես որ Պետերբուրգն է; առանց մահատարածամի էլ մեռնողներու թիվը շատ է, բայց թե հետաքրքրություն անելիք և հարցնելիք ամեն մոտեղ անցկացրած հանգուցյալը ի՞նչ մահով է մեռել, համարձակ կարող եմ ասել, որ հիսունից մեկը հազիվ բնական մահով կլիներ մեռած, մնացյալները կամ գոհիով, կամ խուլեռայով կլինեին բռնված:

Երկու ամսվա հասած էի քաղաքս, Եղոպոսի ծղբիղի նման՝ ձմեռվա համար վաղօրոք չէի հոգս տարել. մի թեթև շուխայի վերարկու առանց աստառի, մի ուսանողական հին նշանազգեստ, — այս էին ահա իմ մրսոտ մարմնու պաշտպանները, միանգամայն պանդուխտ էի այս օտար տեղումն. բացի քանի մի չքավոր հայ ուսանողներն՝ ոչ ոքի հետ ծանոթություն չունեի. ոչ մեկի հետ գնալ-գալ չունեի. ի՞նչ եմ ասում. կարոտություն ևս ունենալու չէի ոտս տնեն դուրս կոխելու, եթե բնակարանիս տաքության աստիճանը դրսի եղանակին չհավասարեր: Բայց այնպիսի բնակարան, ինչպես որ մերն էր (ես կենում էի Գեղարվեստից ձեռարանի աշակերտի հետ, անունը Հովհաննես, ազգավ հայ), կասկածելի է, որ հյուրասիրություն խոստանար նաև բուն հյուսիսումն ծնածին, այսինքն ցրտի սովորած մարդու: Մեղք է ասելը, որ հնոցը չէին վառում կամ վառելիքը խնայում էին, ո՛չ. բայց երբ որ տանը չորս պատից, տափից և վերևից փչում էր քամին, երբ որ հնացած պատուհաններից ծեփը փշրվել ցած էր ընկել և նոցա թողած ծակերից ցուրտը ազատ ներս էր մտնում՝ ի՞նչ վառելիք կղիմանար այդպիսի ախոռին: Ծարերս ի՞նչ էր. ո՛չ ես և ո՛չ ընկերս փող ունեինք, որ կարողանայինք բնակարաններս փոխել. բայց այս, ուր կենում էինք՝ ձի էր մեզ տված մարդասիրությամբ մեկ բարերարի...: Ո՛վ գիտե, գուցե ասում կլիներ մտքումը, «խեղճ հայեր են... տունը դատարկ կա... թող կենան իրանց համար...»: Եվ մենք կրկնելով առածը թե՛ անճարը ուտում է բանջարը, կենում էինք, վա՛յ էն հալին: Ահա՛ այն ձմեռն էր, որ ստացա հազը, որն որ մինչև այս օրս շարչարում է կուրծքս...

Ինչպես ասացի, բոլոր այն ձմեռը գրեթե շարունակ չորս ամիս սաստիկ ցուրտը կայնել էր. ուրեմն և այն օրը, որտեղից սկսում եմ փոքրիկ պատմությունս, նմանապես ցուրտ էր:

Ցերեկվա ժամը 11-ն էր, որ վազեվազ հոգնած տուն էի շտապում Գաբրիել Ա...ի մոտից: Նոր կամրջին որ հասա՝ առաջ գնալը

արգեն անհնարին էր. մի հարուստ հանգուցյալ էին տանում Թա-
զկու. կառքերը, ստով գնացողները այնքան շատ էին, որ պետք
էր կես ժամ սպասել, որ նորա անցնեին և ապա թե ազատ կա-
րողանայի առաջ գնալու: Գրեթե կամրջի կեսին էի հասել, մին էլ
տեսնեմ հետևիցս վազեմազ մեկ ուրիշ մեռելակառք էր գալիս.
Երևի որ աղքատ հանգուցյալ էր գորա մեջինը, որովհետև բացի
երկու պառավե և մի մատաղահաս աղջկանն՝ ուրիշ ոչ ոք չէր հու-
զարկավորում նորան: Պառավները իրար հետ պինդ-պինդ խոսում
էին, ինչպես կարծում եմ, իրանց առօրյա ապրուստի վրա, և ու-
քան կարողացա նկատելու՝ նոքա ամենեկին կարեկից չէին հան-
գուցյալին, այլ ասես թե ակամա էին կատարում այդ սրբազան
պարտավորությունը:

Բայց ուրիշ մտածողություն կաներ ով և իցե, եթե մեկ բա-
րակ նայեք աղջկա վրա: Ճշմարիտ է, որ նա աղիողորմ ձայնով
չէր լալիս, մազերը չէր փետփետում, երկինք, գետին, ծով ու սա-
րեր չէր կանչում, կարեկից իր սրտի վշտին. բայց նորա տխուր և
անմխիթար կերպարանքին, նորա արշուկոխ աչքերի մեջ պարզ
նկարված էին այն ներքին պատերազմը, այն կսկծեցուցիչ դար-
գը, որ նորա հոգին էին տանջում:

Զգիտեմ, ինչո՞ւ գրավեց սիրտս այս տեսարանը, որովհետև
կենալով Սմոլենսկու գերեզմանատան մոտերումը՝ պատուհանես
ամեն օր տեսնում էի հարյուրավոր այգպիտի տխուր ծեսեր և աչքս
արդեն սովորած էր այդ բանին: Բայց մեկ գաղտնի ձայն ասում
էր ինձ՝ «դու էլ գնա այդ մեռելակառքի հետևից. կարեկցիր ոչ այն-
քան հանգուցյալին, որ արդեն երկրավոր օգնություն կարոտ չէ,
որքան այս մենավոր որբուկին, որ գուցե յուր վերջին ապավենը
տանում է հողին ավանդելու»:

Ի՞նչ ասեմ, քրիստոնեական պարտավորությունն էր արդյոք,
թե՞ միայնակ մատաղահաս աղջկա ներկայությունը, որ ստիպեց
ինձ, բայց ես առանց ինքս ինձի հաշիվ տալու գնացի այդ աղքատ
հուղարկավորության հետևին: Ո՛չ ազդիկը, և ո՛չ պառավները
ուշադրություն դարձուցին վրաս. ամենքն էլ իրանց մտքերովն
էին զբաղված:

Ժամանակ առ ժամանակ աչքերս ծածուկ դարձնելով աղջկա
վրա, տեսա որ նա գեղեցիկ էր. հասակը բարձր, իրանքը նազուկ և
ճկուն, երեսի գծագրությունը ազնիվ, խելոք և բարի, մազերը
թուփ, աչքերը սև (հյուսիսային երկրումը հազվադեպ է այդ),

ունքը կամարածե, գնացքը հունձնապատան: Եթե նորա արտա-
քին հանգամանքեն եզրակացութուն անելու լինեի՝ աղջիկը աղ-
քատ հոր ու մոր զավակ պիտի լիներ, իսկ եթե նորա գեմքեն բան
ուզենայի հասկանալու՝ նա ազնիվ գերդաստանն պիտի լիներ: Մի
անթափանցելի գաղտնիք կար, որ ես իզուր աշխատում էի մեկ-
նելու. բայց այն ներքին ձայնը, որ ամեն ծանրակշիռ պարագա-
յում մարգարեաբար խոսում է մեզս և որ երբեք չէ խաբել ինձ,
ասում էր թե՛ արդեն մեկիս մեկի վիճակը վճռվել է. բայց զեպի
բարին կամ շարն՝ ոչ ոք չէր կարող նախագուշակելու այն միջո-
ցին:

Այսպես՝ չորս հողի լուռ ու տխուր հասանք մի՞նչի մտքանեի
կամուրջի մոտ. այս այն տեղն է, ուր ճանապարհը երեք ճյուղի է
բաժանվում. մեկը տանում է դեպի ռուսաց գերեզմանատունը,
մյուսը հայոց, իսկ երրորդը՝ կաթողիկի և լուտերականաց: Կառա-
պանը—երևի թե առաջվանե խրատած չէր,—մեռելակառքը ուղիղ
դեպի ռուսացն էր տանում:

Պառավներեն մեկը ասաց մյուսին. «Կարծեմ որ հանգուցյալը
ռուս չպիտի լինի. խոսելից երևում էր որ նեմբա՛ էր, ինչո՞ւ առաջ
կառապանը դեպի ռուսաց գերեզմանատուն է տանում»:

— Զգիտեմ,— պատասխանեց մյուս պառավը,— կարելի է որ
կնքված է մեր հավատին:

— Ուրեմն լավ է, որ աղջկանեն հարցնենք: Լսե՛, աղջիկ, դու
ի՞նչ հավատի ես:

Աղջիկը յուր տխուր մտածություն մեջ բնկղմված՝ ուշք չէր
դարձնում, թե ինչ էր կատարվում նրա շքա կողմը: Պառավը յոթ
հարցումները առավել պինդ կրկնեց և այս անգամին ռուսի գուհիկ
ժողովրդին սեփական կոպտությունը քաշեց նորա թիկնոցի փեշը
և ավելացուց. «Սատանան գիտե, թե ինչպես հիմար ազգ է այս
նեմեց ազգը. ռուսերեն պարզ ասում եմ՝ չի հասկանում, անիծաճ-
ե՛նք, տե՛ր, դու ներե իմ մեղքը»:

Աղջիկը շվարած նայեցավ նոցա երեսին և պատասխան
չտվեց: Ես հասկացա իսկույն, որ նա ռուսերեն չէ խոսում և հար-
ցուցի գաղղիներեն:

Նկատելի է, որ մինչև այժմ ռուսաց հասարակ ժողովուրդը անխորհր անձաց
է կոչում ամեն մի եվրոպացուն, և ամենեին տարբերել չգիտե անգլիացիին իսա-
րացիին, գաղղիացիին գերմանացիին և այլն: (Մ. Ն.):

— Mademoiselle, ces dames ignorent la religion de la défunte et elles sont dans un grand embarras (Օրիորդ այս կանայքը չգիտեն, հանգուցյալը ի՞նչ կրոն էր դավանում, այդ պատճառով մեծ վարանաց մեջ են):

— Ma mère était luthérienne (մայրս լուտերական էր), — ասաց և նորից ընկավ յուր առաջվա հոգեկան թիրության մեջ:

Իսկույն հրամայեցի կառապանին, որ ձիերը դարձնե և տան գեպի լուտերականաց գերեզմանատունը, որից փոքր-ինչ հեռացել էր: Կառապանն էր հարբած, անիվներն էին ծուռ, թե ձիերը շշկրված, չգիտեմ, միայն թե կառքը դարձնելիս մազ մնաց, որ շշկրված, չգիտեմ, միայն թե կառքը դարձնելիս մազ մնաց, որ դադարը ցած ընկներ, և եթե ես աչքս անդադար նորա վրա չունե՝ նայի՛ անշուշտ կառքը և նորա վրայի մեռելով դազաղը գետնին պիտի գլորվեին: Ժամանակ չկորցրած, իսկույն վագեցի, աչ ուս գեմ տվի մեռելակառքին և ձեռով դազաղը բռնեցի և այդպես մտացի, մինչև որ կառապանը հաջողությամբ դարձուց կառքը: Բայց երբ որ վտանգը անցավ, և մենք մտանք գերեզմանատան բակը՝ ի՞նչ տեսնեմ, հալավս արյունով թափախվել էր, երևի թե դազաղը բռնելու ժամանակ՝ անզգուշությամբ ձեռքս սուր երկաթի էի կրկցրել, որովհետև լայն խոցված կար վրան:

— Mein Gott sie sind verwundet (Աստված իմ, դուք վիրավորված եք), — ասաց ինձ աղջիկը գերմաներեն:

— Մի՛ վախենաք, թեթև քերթված է, — պատասխանեցի, ցավից ատամներս կրճտելով, որովհետև խոցի բերանը ցրտին չգիտանալով՝ այնպես կսկծում էր, որ ցավը ուղեղս էր հասնում: Ձեռս տարի գրպանս, որ թաշկինակս հանեմ և փաթաթեմ խոցը, բայց ավա՜ղ, Գաբրիելի տանն էի մոռացել: Աղջիկը հասկացա՞վ կարոտությունս, կարմրելով հստեց տվավ իր բեհեզյա թաշկինակը և ժամանակ չտվավ շնորհակալություն անելու, իսկույն գնաց մինչև մեռելակառքի կանգնած տեղը: Այս բոլոր անցքը այնպես շուտ կատարվեց, որ պառավները չնկատեցին նորա բացակայությունը, և երբ որ գլուխները դարձուցին՝ աղջիկը արդեն նոցք ժոտ էր: Վիրավորված ձեռքս թաշկինակով փաթաթելիս՝ տեսա նորա վրա M. V. տառերը ասեղնագործած կարմիր թելերով: Քիչ մնաց որ խելքս գլխիցս թռչեր. այս ի՞նչ անթափանցելի գաղտնիք է, մտածեցի: մի՞թե իմ և նորա անվանց և մականվանց սկզբնատառերը՝ միևնույնն են: մի՞թե կույր դիպվածը ուզում է ծիծաղել

վրաս. մի՞թե նախախնամությունը անտեսանելի ճանապարհներով իմ և այս աղջկա վիճակը միավորում է. ինչպե՞ս մեկնեմ կամբըջի վրա իրար հանդիպելներս, իմ կարեկցելը այս աղջկան (որ ուրիշ անգամ կարելի է առանց տպավորության կթողնեի մոտեսանցներու), իմ ասպետական անձնազոհությունը՝ կառքը և դադարը գլորվել և ազատելիս, և վերջապես՝ իմ անունը և մականունը դրոշմած այս շնաշխարհիկ աղջկա թաշկինակի վրա: Կրկին և կրկին անգամ նայում էի տառերու վրա, և աչքերուս չէի հավատում. կարծում էի, որ այդ ամենը երազ էին: Բայց ո՛չ. ամեն բան առաջվա պես էր. լուտերականաց գերեզմանատունը, մեռելակառքը դազաղով, սիրուն աղջիկը տխուր դեմքով, ես՝ վիրավորված ձեռքով, ցրտից սառած մարմնով...

Ուզում էի երթալ աղջկա մոտ և այս տարօրինակ պատահմունքի մեկնությունը խնդրել, բայց հետո խելքս գլուխս ժողովելով՝ զսպեցի ինքս ինձի. մի՞թե ներելի է, մտածեցի, այսպիսի հանդիսավոր ժամանակ իմ անտեղի և տխմար հետաքրքրությունը լցնելու և, դիտավորությունս թողի ուրիշ և առավել հաջողակ ժամանակվա:

Երբ որ մոտեցա կանանց՝ նոքա վարանաց մեջ էին, թե ինչպես ցած առնուն դազաղը մեռելակառքին: Թեպետ բակը մարդիկով լիքն էր, բայց ամենքը իրանց գործով և մտածմունքով զբաղած՝ ոչ ոք չէր շտապում վերջին պարտավորությունը հատուցանելու անտեր մեռելին: Աղջիկը անհանգիստ աչքերը դարձուց իր շորս կողմը, ու ես իսկույն հասկացա նորա մտքի խորհուրդը: Խնդրեցի կառապանին, որ բռնե դազաղի մեկ ծայրը, մյուսը ես առի ձեռս և այնպես դյուրությամբ ցած դրինք դազաղը, այնպես թեթև էր, որ եթե կառապանն ևս շոժարի օգնելու՝ ես մենակ կարող էի բարձրացնել. երևի, կարծեցի մտքումս, երկարատև ծյուրախտով տանջվել է իեղճ հանգուցյալը: Հետո նորից բարձրացուցինք դազաղը, տարինք դրինք նոր փորած գերեզմանի մոտ: Այն օրը գերմանացուց գերեզմանատանը տասնից ավելի մեռելներ կային թաղելու. պատտրը գլուխը կորցրել էր. չգիտեմ որի՞ն առաջ թաղեր. ի՞նչ ասել կուզե, որ մեր անտերունչ հանգուցյալը միանգամայն երեսն ընկած մնացել էր:

Գնացի պատտրի մոտ, ամեն բան մեկնեցի և խնդրեցի, որ շտապե մեկ վերահասություն անելու՝ կարեկցելով աղջկա ցավալի վիճակին: Պատտրը կարճ և անհամբեր կերպով ասաց. «Ո՞ր մե-

կից հասնեն... մի՞թե ազատութիւնը իրավունք է տալիս լրբա-
նաբու... համբերեցեք, կամ եթէ ավելի լավը ուզում եք՝ ինքնիշխան
առանց ինձ թաղեցեք, ես հետո կուզամ և կկարգամ հանգստյան
ազատքը. մի՞թե չեք տեսնում, որ ժամանակը ստիպողական է...»

Երեկ գոցա սովորութիւնը այսպես է, ասացի ինքս ինձի ու
գնացի ազդկա մտտ և կրկնեցի նորա առաջ պատահարին լսածս։
— Ինչպես գիտե՞ք՝ այնպես արե՞ք, — ասաց աղջիկը։

Երկու պատուէր անհամբերութեամբ առաջ ու ետ ման էին գա-
լիս և ամենևին միտք չէին անում այս դժվարութեանը օգնութեան
հասցնելու։ Նոցա ճմուռտած և գեղնած շուրթերից անորոշ և ան-
կապ խոսքեր էին գուրս գալիս, և ես կարծում եմ, որ շատով
անեծք լինեին, քան թէ հանգստյան ազոթք խեղճ մեռելի վրա։ Ար-
դեն զորութեան շունքի գիմանալու. սիրտս սկսով մղձկալ, ար-
տասաւքը պլլաց աչքերես և ստանցավ երեսիս վրա, ձայնս գոգ-
գողաց։ Զգիտեմ, ի՞նչ քարե սիրտ պիտի լինեիր, որ շարժեր այս
պիտի արտասովեկի վայրկեանին. խեղճ հանգուցայլը հեռի ամենաթի
սիրելի բարեկամն, (գուցե) օտար երկրումը, մարդկային վերի
օգնութեանն զրկված և կամ, որ առավել վատթար է՝ այս անգամ,
անսիրտ պատանկների հոգսին ձգած. այս թշվառ որբուկը՝ յոյ
մոր առջև կանգնած, թորած հոգով և մարմնով, նմանապես, հե-
ռու կարեկից արտե, որի թեթև հագուստը ամենևին չէին արգանում
դառնաշունչ ցրտին նորա քնքուշ մարմինը փետացնելու... Ա՛խ,
բամանկի էր այս պատկերը, որ, տարաբախտաբար, շատ սովո-
րական է մայրաքաղաքումս։ Բայց պետք էր վերջ գնել գորան։

— Օրի՜ն՛րգ, — ասացի աղջկանը, — տվեք վերջին մնաս բարեկ
Ձեր հանգուցայլ մորը, ժամանակն է արդեն թաղելու։

Կարծես թէ խորը քնից զարթեցավ թշվառականը, կարծես թէ
այս ամենը երագումն էր տեսել։ Մոլորված աչքերը դարձուց
վրաս. Was wollen sie?՝ ասաց, չճանաչելով ինձ։ Ես կրկնեցի
ասածս և մատով ցույց տվի նորան մոր դագաղը։

— Und ist das wahr, dass meine Mutter gestorben ist?
(Քորեմն ճշմարիտ է, որ մայրս մեռած է), — ասաց նա կազո-
ղապին ձայնով, ընկավ դագաղի վրա, պինգ գրկեց և թալկացավ
Պառավները առաջվա պես անշարժ և անզգա մտիկ էին անում
այս սրտաշարժ տեսարանի վրա, — ոչ մի կարեկից խոսք, ոչ մի

1 Թ՛նչ էք կամենում։

մարդասեր գործ։ Հինգ ըոպեի շափ մնաց աղջիկը այդ գրութեամբ։
Ես արդեն սկսա երկյուղ կրելու, ընի՛ն՛ թե աղջկան մեկ շար գիտ-
ված պատահի. ուժս մեկ արի, մոտեցա և սկսա մխիթարական
խոսքեր ասելով՝ կամաց-կամաց ուշքի բերելու։

Առանց մեկ դիմադարձութեան աղջիկը հեցավ ուրիս վրա և
ոտքի կանգնեցավ. արդեն երեսի վրա շէր երևում այն հուսահատ
տխրութեանը, որ բանի մի ժամանակ առաջ երեւել էր։

Իմ բախտից գերեզմանը խոր շէր փորած, մտա մեջը և նորից
խնդրեցի կառապանին, որ ինձ օգնե դագաղը փոսի մեջ իջեցնե-
լու։ Երկար ժամանակ ցրտովը կենալով՝ մատերս փետացել,
անզգայացել էին. և երբ որ դագաղի օղակը բռնեցի՝ քիչ մնաց որ
ձևոքես բաց էի թողնում, այնքան անզորացել էին մատերս։ Այս
անգամ գերեզմանի մեջ ավելի դժվարութեամբ իջեցրինք դագաղը,
քան թէ փոքր առաջ՝ մեռելակառքից. բայց ինչ և ինչե՞ երկու հո-
գի արինք այն, որ ուրիշ և առավել հաջողակ դիպվածներումը
տասը-քսան հոգի են կատարում։ Շեղ փոսի մեջ հազիվճազ տե-
ղավորվում էր դագաղը, բայց և այնպես ես ստիպված էի նորա
մեջ առաջ ու ետ շարժիլ, որ դագաղին վայելուչ դրութիւն տամ.
ինչ որ ես այն ժամանակ քաշեցի՝ արյունհածարավ ընձամիտս շնձ
ցանկանում...

Վերջապես ամեն բան կատարելուց հետո՝ դուրս եկա փոսն,
եռանկունակս՝ (այն ժամանակ տակավին սաստիկ արգելված էր
ուսանողներուն զրակ հագնելը)՝ լցրի հողով և առաջարկեցի աղջը-
կանը, որ մոր վրա հող ածն։ Աղջիկը հանեց ձեռքի թաթիկները
և երեք անգամ լիքը ազուտով հող ցածեց մորը վրա. Auf wie-
derschauen, meine gute Mutter!՝ ասաց հազիվ լսելի ձայնով, ձու-
նըրդդ արեց փոսի մոտ. գլուխը դրավ գետնին և սկսավ աղոթք
անելու։ Քամին, որ անդադար փչում էր, այն ըոպեին այնպես
սաստեղացավ, որ հարյուրամյա եղևինները սկսեցին շարժիլ, և
նոցա ճյուղերից շատ եղջամ թափվեցավ և կիսով շափ ծածկեց
աղջկանը. երանի չէ՛ր լինիլ, որ մի անգամով թաղել էի այս եր-
կու թշվառականներն, որոնցից մեկը մեռած էր, մյուսը կիսամեռ.
Ա՛խ, կան ուրեմն մարդուս կյանքումը այնպիսի ըոպեներ, երբ
ես մահը առավել մեծ երջանկութիւն է համարում, քան թէ

1 Трейолька — ուսանողական զրակ։

2 Թանութեան, իմ լավ մայր։

կյանքը... Կարդացող, ինչո՞ւ զարմանում ես դու, որ ես այդ աղջիկանը մահ էի ցանկանում, դու որ արդեն սկսել ես նկատել իմ սերը դեպի նա, մի՞թե չես կարծում, որ այդ ցանկությունս խնայացնորություն էր: Կսե՛ ուրեմն իմ արդարանալը: Ես՝ որ աչքես չէի բաց թողնում աղջկա ամենափոքրիկ շարժումները, մորը վրա հող ածելու ժամանակ տեսա նորա մատին մի ոսկյա մատանի, որ պարզ նշան է նորա հարսնախոսությունը: Զգիտեմ ինչո՞ւ, բայց այն բուսկին եթե աղջիկը տեղն ի տեղ մեռել էր՝ ես ինձի ամենաերջանիկ մարդը կհամարեի աշխարհիս երեսին: Հանկարծ թուլացավ կարեկցությունս դեպի նա. նախանձը արդեն սպրդել էր հոգուս մեջ. քանի մի ժամանակ առաջ ես կարծում էի, որ նորա միակ տերը և պաշտպանը ես եմ. բայց ոսկե մատանին ցույց տվավ, որ կա մեկ ուրիշը, որ առավել իրավունք ունի նրա երախտագիտության. թերևս (կարծում էի) այս բուսկիս ծունր դրած մորը գերեզմանի առաջ՝ նա սոսկալի երդումներ է տալիս հավատարիմ մնալու յուր սրտի ընտրածին... Այսպիսի անհիմն կասկածներով թունավորում էի հոգիս և պղծում էի այս վեհ բուսկներու մեծահանդիսությունը:

Աղջիկը տեղեն վեր կացավ, արտասուքը սրբեց թիկնոցի փշով, բայց գլուխը քարշ արած անդադար նայում էր ձյունաթաղ դագաղի վրա և մտքով մնաս բարև էր անում յուր մորը: Նորա երեսը նայելիս՝ միանգամայն ցրվեցան իմ սև կասկածանքը. մի՞թե կարծում էի մտքումս, այս անմեղ հոգին թաքցնել գիտե հոգու շարժումները. մի՞թե բացի այդ օրհասական մատանիեն ուրիշ ապացույց չէի կարող նկատել նորա վրա. եթե դա սիրում է՝ ո՞ր է ապա նորա սիրո առարկան. ինչո՞ւ թողել է իր նազելիին բախտի կամացը և այս երկու ջատուկներու հոգացողությունը. եթե դա փեսա ունի՝ ինչո՞ւ ապա այս ցուրտ եղանակին այսպես աղքատ հալավ է հագած... այս անհիմն եզրակացությունները բավականին մխիթարեցին վրդոված երևակայությունս, ու ես նոր եռանդով սկսա հոգս տանել աղջկա վրա:

Փոսի մոտ կար մեկ թի ու մեկ բահ. բահը ես առի, թին տվի կառապանին և միասին սկսանք գերեզմանը հողով լցնել: Անհամբեր պառավները կամենալով շտապեցնել այս տխուր ծեսի մերջը՝ ոտերով հողը շարտում էին գերեզմանի մեջ: Ամբողջ կես ժամ հազիվ կարողացանք փոսը լցնել: Պառավները չապասեցին պաս-

տորի գալուն և հեռացան մեզանից. կառապանը նմանապես գլուխարկը հագավ ու գնաց իր բանին: Մնացինք ես և աղջիկը:

Եկավ պաստորը, իր ձեռքը բռնած գրքից ի՛նչ ասես կարդաց, փոքրիկ մխիթարական ճառ ասաց ժողովրդին (այսինքն՝ ինձ և աղջկանը) իբր թե՛ մահը անհրաժեշտ ամենիս հասնելու է. առաքինին համբերում է, միայն ցնորամիտը հուսահատում է, և այլն, և այլն, և կարծելով որ աղջկա հոգու մեջ լիովին թափեց հոգեշահ բալասանը՝ ինքն իրմեն բավական, գնաց շարունակելու յուր կոչումն ուրիշ հանգուցյալներու վրա:

Քամին սաստկագին փչում էր, գետնին նոր ընկած ձյունը հավաքում էր ու բարձր դեպի երկինք էր ձգում. գերեզմանատան շիրիմներու և ծառերու մեջ պտուտակվելով՝ հազար կերպ անճոռների նվազներ էր հորինում, որ խիստ հարմար էր այսպիսի տխուր ժամին: Արդեն ժամը երեքի մոտ էր. այլևս զորություն չկար վրաս ցրտին դիմանալու. երեսս պնդացուցի ու ասացի աղջկանը:

— Օրիորդ, այսուհետև ոչինչ օգնել չէ կարելի՝ ձեր ցավին՝ լալով և հուսահատվելով այստեղ. պետք է ձեր վրա ևս փոքր-ինչ հոգս անեք. եղանակը անտանելի ցուրտ է. ձեր վրայի թեթև հալավը հյուսիսի դառնաշունչ եղանակի համար կարած չէ՛... Եվ միտս չէ՛ էլ ի՛նչ դորա նման բանեք ասացի, որոնք խիստ անտեղի էին այսպիսի սրտաշարժ պարագայում:

Աղջիկը աչքերը ցած խոնարհած պատասխանեց.

— Այժմ ես չեմ կարող գտնել իմ կեցած տունը. տանտիկինս թողուց ինձ այստեղ և միտք շարավ, որ ես ամենևին չեմ ճանաչում Պետերբուրգի փողոցները. ամիս ավել չկա, որ այստեղ եմ:

— Գոնե գիտե՞ք, ո՞ր փողոցումն է ձեր բնակած տունը:

— Ո՛չ:

— Ունի՞ք որևէ ծանոթ կամ բարեկամ:

— Ո՛չ:

Ի՛նչ անեի, ո՞ր քարին տայի գլուխս, ո՞ր տանեի, ո՞րին հանձնեի այս որբուկ թշվառականին այնպիսի ապականված տեղումն, ինչպես որ Պետերբուրգն է, որի պիղծ շնչից խամրում, թառամում է ամենայն դալար հոգի:

Ինչպես վերը ասացի, իմ բնակարանը Սմոլենսկի գերեզմանատան մոտերումն էր, ուրեմն շատ մոտ էր մեր կեցած տեղին:

— Երթանք, — ասացի աղջկանը, զուցե աստուծո օգնությամբ մեկ բան կարողանամ մտածելու այս դժվար հանգամանքումն:

Ուսանողին պատշաճ քաղաքավարութեամբ՝ աչ կուսա առաջարկեցի աղջկանը և խնդրեցի, որ փոքր-ինչ շուտ ման գա և միտսին գնացինք դեպի իմ կեցած տունը: Երբ հասանք դրան մոտ՝ խնդրեցի նորան, որ փոքր-ինչ սպասե, խոստանալով որ շուտ հետ կդառնամ:

Մտա ներս: Ընկերս մեջքի վրա պառկած անկողնակալի վրա, ձեռքերը գլխի տակ դրած, աչքերը դեպի վեր դարձուցած՝ աշխատում էր թուրք առիթին հասցնելու:

— Էդ ի՞նչ ևս անում, շովհաննես, — ասացի՝ նորա տարօրինակ պարապմունքի վրա ծիծաղելով:

— Ոչինչ, մեկ սահաթ է որ՝ էս անպիտան տառաքանին ուզում եմ թքով ցած ձգել:

— Մեկ պահ թող որսդ, լսե, բան ունիմ քեզ ասելու:

— Ասա էլի, որսս քեզ ի՞նչ վարար է տալի. — ու նորից բսկրսավ թքերը բերնեն դեպի առիք արձակելու:

— Մոտոք քսան կոպեկ շունի՞ս, — ասացի, թեև առաջվան հաստատ գիտեի, որ «չէ» պիտի ասեր:

— Ո՞ր քսան կոպեկն է քու ասածը, — պատասխանեց շովհաննեսը զարմացած. — Ես կարծում էի, հետոք գոնե վեց կոպեկ կրերես՝ երեքը ճրագի համար և երեքը՝ երկու գրվանքս սև հացի մի՞թե շղիտես, որ երեկվանե մեկ կտոր հաց էր մնացել, որ այսօր առավոտը թեյի հետ կերա. ժամը 11-ից բերանս բան դրած չեմ. ես քու դալուն սպասում էի, ինչպես ջհուղները Մեսիայի գալուն. շաքար էլ չունինք. վերջի ծխախոտն էլ երկու ժամ առաջ քշեցի պրծա:

Աչքս դարձուցի դատարկ սենյակի շորս խորշերին, բացի քանի մի գրքի և համալսարանական ձեռագրերներես՝ ոչինչ չտեսա: Աչքս դարձուցի վրաս... ո՞վ սքանչելիք... խելացնորի պես դուր թոա սենյակեն:

— Միքայել՛, սպասի՛ր, բան եմ ասում, — ասաց ետեսն շովհաննեսը, բայց ես չսպասեցի նորա ասելու բանին, և երբ որ գուրսն էի՝ ականջիս հասնում էին խեղճ սոված ընկերոջս կողի-դապին աղաչանքը, որ ետ դառնամ և լսեմ նորա խնդիրքը, որ ըստ հրեւոյթին այս պիտի լիներ. «Ինչպե՞ս ճարենք փոքր-ինչ ճրագ, փոքր-ինչ հաց և փոքր-ինչ ծխախոտ». ուսանողի ե ուսանողի նման մարդոց չափավոր պիտույքը աշխարհիս երեսին:

Ավա՛ղ, իմ ականջը խլացել էր ու սիրտս փակվել էր ընկերոջս համար: Ուրիշ հոգացողութուն ծնել էր մեջս, որ մինչև այն օրը ինձ միանգամայն չէր հայտնի: Եթե իմանայի, որ նեայի փոքր հատակումը քանի մի ուրբի փող կա՝ առանց երկար միտք անելու, մահը գլխովս առած, կվազեի ու կհանեի...

Գուցե՛ կարգացողը կհարցնի, թե ի՞նչ է պատճառը, որ ես խելագարի պես սենյակես գուրս փայտա. ի՞նչ հույս ունեի ցավիս ճար ու դարգիս դարման անելու: Ահա՛, կարճ խոսքով մեկնեմ շտապով տնից դուրս վազելուս պատճառը:

Գաբրիելի մոտ որ էի՝ դուրս գալիս սխալմամբ իմ հին կրկնակոշիկի տեղ՝ նորա նորը հագու ոտիս, և երբ որ աչքս ընկավ նորա վրան՝ զլիսումս բա՛ւ ծագեցավ: Հիմի հասկացա՞ք միտքս: Կարծում եք. թե ծախել էի ուզում. ոչ: Առանց ծախելու ես կարելի էր նորան դեպի բարին գործածել: Այս տեղումը մեկ առօրյա սովորութուն կա, որ ընդհանրապես տարածված է ուսանողաց և ուսանողի նման մարդոց մեջ. այդ սովորութեան անունը գրավ դնել է. զոր օրինակ, եթե գիտես, որ ծանոթիդ մեկը ունի ժամացույց, մատանի, կրծքի քորոց և այլն. եթե մեկ օր տեսար այդ ծանոթիդ առանց այդ իրեղենների՝ հենց իմացիր, որ հարցմունքիդ՝ թե «ո՞ւր է այս կամ այն ինչ առարկադ», պատասխան ստանալու ես «ուսում առնելու եմ տվել», որ ուրիշ խոսքով նշանակում է՝ թե «ջհուղի մոտ գրավ եմ գրել»: Հիմի հասկացա՞ք, որ ոտիս նոր կրկնակոշիկները միևնույնն էին, թե գրպանումս մանեթ կամ մանեթուկես ունենայի:

— Գնա՛նք, — ասացի աղջկանը. աստված մեկ օգնեց. այժմ ամեն բան դեպի լավը կերթա:

— Անմեկնելի շնորհակալ եմ ձեզնեն. ինչո՞վ արժանացել էի ձեր այդպիսի մեծահոգութեանը, — ասաց նա այնպիսի քաղցր ձայնով, որ ես միանգամայն մոռացա այն շարշարանքը, որ կրել էի ամբողջ շորս ժամ՝ այս ցուրտ եղանակին բաց օդի տակ ծնալով:

— Կառապա՛ն, շո՛ւտ, — ասացի այնպիսի հրամայական ձայնով, որ ով գիտե ինքը հարուստ է... Մ...քը արտասանած շիներ յուր կյանքումը:

Մեկ ակնթարթում շորս հինգ կառապան վազեվազ եկան, մեկը մյուսի ձին պարսավելով և յուր ձիուն արագտնութունը գո-վելով՝ պառաջարկեցին յուրյանց ծառայութունը:

Արդեն մեկ ոտս սահնակի մեջն էր և մյուսը գետնին, որ
հտեհս մեկ ծանոթ ձայն կանչեց.

— Միքայել, էս ո՞ւր, քանի վախտ ա հառա եմ տալի՝ շե-
յարմ: էս ի՞նչ ա իլի բեզ, հմպարտացել ես... էս դուշը հորտեղա՞ն
ես խփել:

— Ա՛, Ալեքսան, դու ես...

— Ախպեր, տրիտն ասեմ՝ հորսդ լավ ես արել...

— Խնդրեմ, թող էդ խոսքերը, դրա վախտը չէ. քեզ մեկ ասե-
լու բան ունեմ:

— Հրամայի՛ր, մատաղ:

— Ասա, պաժալտա (խնդրեմ), ո՞ւր ա կենըմ էն ջհուղը, որ
գրավ ա վեր առնըմ,— ասացի, նորա Հաշտարխանի ոճին նմա-
նեցնելով խոսակցությունս:

— Վա՛հ, մոռացե՞լ ես. Большой мещанск-ումը в до-
ме Глазунова, էնտեղ դվորնիքը շանց կտա: Ի՞նչ ա, գրավ տի-
նեյի պան ունեա ի՞նչ ա:

— Հա՛, կոլոշներս ուզում եմ գրավ տինել:

— Հե՛ր ես էնտեղ տանըմ, էս պոտտեռնի չէ՞ (ասաց ցույց
տալով գարեջրի խայնութթը). նրա տերը իմ ճանաչն ա, ուզո՞ւմ ես
տանեմ, գրավ տինեմ նորա մոտ: Ինչքա՞ն է պետք:

— Ինչքան շատ՝ էնքան լավ,— պատասխանեցի՝ ոտես կըրկ-
նակոշիկները հանելով և նրան տալով:

— էս խոմ թափ թափ կոլոշներ են. ո՞վ ա խաբար, բալթամ
երկու կոլոր (մանեթ) տա. ի՞նչ ես ասըմ:

— Լավ, էնքան ա, որ շո՞ւտ արա. վախտ շունիմ սպասելու

— էս դուշին հո՞ր... ես տանըմ,— ասաց եղայի աչքերով:
Փարշելի թվեց այս լիրբ և անպարկեշտ հարցմունքը և մանա-
վանդ այն կասկածը, որ առանց մեկ հիմնավոր պատճառի, բե-
կավ խեղճ որբուկի վրա:

— Գնա՛, գնա՛ խելքիդ շատ զոռ մի տալ, բան ես անըմ՝ բան
արա, թե չէ խո՞՛ գլուխդ քարը՝ առանց քեզ էլ յուլա կերթանք:

— Ինչ փալանդ վեր քցար. քեզտ խոշտապ անել չի՞ կարելի,
ինչ ա: Դա խո սոխ ա, պան չի հասկանըմ. քու գորա ի՞նչ:

Բայց ես նորա փիլիսոփայությունը ընդմիջեցի՝ փոքր-ինչ ան-
թաղաքավարի քոռու տալով և շտապեցնելով դեպի գարեջրի վա-
ճառանոցը:

Քանի որ նա այնտեղումը գրավի համար հոգացողություն է
անում՝ ես կաշխատեմ ընթերցողներիս կարճաոտ կերպով ի մո-
տն. ծանոթացնել այս շնաշխարհիկ արարածի հետ, որի տեղական
անունը տեսնատա է, որ կնշանակե նեղություն: Ի՞նչ մարդ է այս
մարդը, ինչո՞ւ նորա մականունը այդպես է՝ կիմանաք հետագա
տողերես:

Օրես տասը-տասնըմեկ տարի առաջ՝ շփտեմ ո՞ր քամին, ո՞ր
պեղից և ի՞նչ նպատակով բերել ձգել էր Պետերբուրգումը այս հայ
տղին: Եթե նորա խոսքերին հավատաս՝ դա տոռտուրի մտքով,
իրբ թե, եկել է այստեղ. բայց ես, որ ի բնե այնքան դյուրահա-
վար չեմ, ճշմարիտը ասեմ՝ չեմ հավատում, որ նա միայն այդ
բարի դիտավորությամբ եկած լիներ. առավել հավանականը այն
է, իմ կարծիքով, որ այս պարոնը լսած կլիներ մայրաքաղաքի
անթիվ անհամար զբոսանքը, որ հայաբնակ քաղաքներումը, ծա-
նոթ բարեկամներե ամոթ քաշելով՝ գրեթե անհնարին է արձակ
համարձակ վայելելը. լսել է, ո՞վ իմանա, թե ինչ զվարճություն է
ազատ գլուխ մարդու համար, մանավանդ երբ որ փոքր-ինչ էլ
փող կա գրպանումը, Պետերբուրգի բազմաթիվ և բազմատեսակ
պանդոկները, Տյուրանոցները, սրճանոցները և շատ ուրիշ անվա-
նի և անանուն տեղեր քաշ գալը. լսել է, ո՞վ իմանա, նեակի պրոս-
պեկտի հոչակավոր անունը, նորա լուսավորված սալարկները
(թոթուար), որ գիշեր ցերեկ ժվժվում է ժողովրդի բազմությու-
նը... լսել է վերջապես, թե ինչպես շատերը եկել են այստեղ գրե-
թե մեկ շապիկով և քանի մի արասիով գրպանումը և հետ են դար-
ձել յուրյանց տեղը՝ հարստացած, փառք ու պատվի հասած (օրի-
նակները քիչ չեն): Ավա՛ղ, Պետերբուրգի հոչակը շատ բախտա-
խընդիրներու գլուխ է պտըտցրել, ուրեմն ի՞նչ զարմանք, որ մեր
պախոնն էլ նույն փայլուն հույսերը աչքի տակ ունենալով, ճան-
կը ձգած կլինեն քանի մի թուման ու վազեվազ եկած հասած այս-
տեղ՝ իր բախտը որսալու: Բայց խեղճը մոռացել էր, որ Պետեր-
բուրգը ամենի համար միատեսակ հաջողակ չէ. նա չէ իմացել
անաջվանե, որ բախտախնդիրները այս երկու հատկություններից
մեկը պիտի ունենան, որ մայրաքաղաքումս բախտ կարողանան
որսալ, որ է՝ ուստայություն և շնորհալի դեմք. տարաբախտաբար

բամ: Մեր տղերքը քաղցած գելերի նման ընկան վերես, մոռնու ես կերթայիմ ու սուփրեն կպերեիմ, որ աղավարի ստուի վրեն փռեմ, որ մարդավարի նստենք ուտենք... կամ ի՞նչ տեսնեմ— աչ հաց կա մեյդանրմ, ոչ սուճուղ. ատա՛, ծուն չկըճպած էին կե- քել, ա՛յ պան: Ատա՛ էսպես շշկլած մնացել էի: էտ խո էտ, որ փորերի ճճուն մեքիչ հանդարտեցրին, Մեխակը հարցնում ա, թե արդա՞նց ճարեցիմ էտքան պանը: Հորտեղան հորտեղ միտքս եկավ ալ ասացիմ՝ դուքանդարի հետ տեսնատա՛ սարքեցիմ: Ախպեր, մեր տղերքը մեկ ծրծաղ են ծրծաղում, մեկ ծրծաղ են ծրծաղում, որ փորերը ուզում ա տոաքի, տեսնատա... խա՛ խա՛ խա՛ խա՛, տեսնատա՛... խա՛ խա՛ խա՛ խա՛, տեսնատա՛... տեսնատա՛... էնքան ասացին, էնքան ծրծաղան, որ էտ օրվա օրից անուս մը- նաց տեսնատա՛:

Քանի մի ըուպից Ալեքսանը եկավ տվավ ինձ երկու մանկի և ասաց, որ խանութպանը շատ թեթև տոկոս նշանակեց, այսինքն ամսական մանեթի գլուխ տասնհինգ կոպեկ: Ես շտապով շնորհակալութուն արի նորան և հրամայեցի կառապանին, որ հասցերի ատյանը տանե:

(Հասցեի ատյան ասելով ես ուզում եմ հասկացնել այն կառավարութունը, որ ուսները կոչում են Адресный стол: Ռուսաստանի մանրաքաղաքներումը շիկա այդպիսի կառավարութուն. արեմն զարմանալու չէ, որ իմ կարդացողներեն քանիսը, որոնք էրբեք չեն եղած մայրաքաղաքումը, չիմանան դորա ինչ լինելը: Հասցեի ատյան նշանակում է այնպիսի կառավարութուն, որ կարելի է գտնել մայրաքաղաքումս բնակող ամեն մի մարդու կեցած տեղը՝ եթե միայն գիտես այդ անձին անունը և մականունը):

Երբոր հասանք հասցեի ատյանը՝ հարցուցի, աղջկանը, ինչպես է անունը և մականունը:

— Մարիա Վեռդեո է,— պարտասխանեց նա:

— Այս ըուպիս կիմանամ, ասացի, ձեր բնակած տեղը և հետ կուզամ:

Տեսնատա խոսքը, որ ուսներն նշանակում է նեղվածք, նեղութուն մայրաքաղաքի մայրիկների (քահակատ) լեզվով նշանակում է խելացի հար (Մ. 6.):

Վազելազ գնացի բարձրացա մինչի շորրորդ դատիկունը (ուր է ատյանը) և իմացա, որ աղջկա կեցած տեղը Օֆիցերակի փողոցումն էր Գամսի տանը № 16. և որովհետև մեր այժմյան տեղեն շատ հեռու չէր, մանավանդ որ երկուսիս ոտներն էլ ցլտից փե- տացել էին, առաջարկեցի, աղջկանը մինչի նորա տունը ոտով (հետի) երթալու: Կառապանին արձակեցի. նորից կուռ կոի տվինք ու գնացինք: Սրճանոցի մոտից անցնելիս իսկույն միտքս եկավ՝ որ ո՛չ ես և ո՛չ աղջիկը ամբողջ 7—8 ժամ շարունակ բերաններս բան չէինք դրել, անթոթութեցս վրաս զորութուն չէր մնացել ման գալու, անդամներս միանգամայն թուլացել էին, խոսել ան- դամ զժվարանում էի:

— Կարելի է դուք մեկ բան կկամենայիք անուշ անելու,— ասացի աղջկանը, քայլերս պինդ դեպի սրճանոցը ուղղելով:

— Ուտելու այնքան ախորժակ չունիմ,— ասաց նա, բայց սաստիկ ծարավ եմ, ինձ շատ կպարտավորեցնեիք, եթե մի բա- ժակ-չուր ճարեիք խմելու:

Մտանք սրճանոցը՝ Սպասավորին հրամայեցի, որ նախ և առաջ մեկ բաժակ լիմոնադ բերե և ապա մեկ-մեկ գավաթ սուրճ և մի հատ ծխաթուղթ: Երբ որ սպասավորը բերեց-դրավ այդ սմենը սեղանի վրա ու ինքը գնաց, խնդրեցի աղջկանը, որ նստե բաղմոցի վրա և ինքս նորա մոտ աթոռի վրա նստա:

— Ներեցեք համարձակությանս, օրիորդ, ես կամենում եմ մի քանի բան հարցնել ձեզանից,— ասացի նորան գերմաներեն (սենյակի մեջ ոչ ոք չկար):

— Հարցուցե՛ք պարոն,— ասաց աղջիկը ամոթխածութենեկ աչքերը ցած խոնարհած:

— Դուք, ինչպես նկատում եմ, այս տեղացի չէք, կարո՞ք եք ինձ ասել, ո՞րն է ձեր մայրենի երկիրը և դուք ո՞վ եք...

— Ես շվեյցարացի եմ. ամիս ավել չի կա, որ ես և մայրս այստեղ էինք եկել:

— Ինչո՞ւ թողիք ձեր երկիրը ու այստեղ եկաք:

1 Խնդրեմ մեր պարկեշտ և տնասեր հայ կանայք շնորհաբար նուճուն, որ նա նոցա ավանդությանը հակառակ է շարժում. այստեղի սովորու- թյունը այսպես է, որ կանայք (մանավանդ դրսեցիք) ազատ ել ու մտա են անում սրճանոց կամ Տյուրանոց, առանց կապածանքի սովոր ձգելու իրանց անբժ վա- րուց վրա: Սովորութունը՝ բնավոր է: (Մ. 2.):

— Նորոս եանչել էր մեզ:

— Այլ ոչ ոք չէիմ ձեր հայրը:

— Մեր Պետերբուրգ հասնելից ութ օր առաջ մեռել էր ես այստեղ, նույնիսկ սենյակի մեջ, ուր մայրս վախճանվեցավ:— ասավ նա խորը հոգոց հանելով:

— Ի՞նչ գործի էր այստեղ ձեր հայրը:

— Նորան մեկ հարուստ ռուս իշխան՝ անունը Ա... հրավիրել էր կալվածքը կառավարելու: Հայրս կես տարիի շափ մնաց այստեղ, իշխանը շատ սիրեց հորս նորա հավատարմութեան և բանիտեան, իշխանը շատ սիրեց հորս նորա հավատարմութեան և բանիտեան, և վերջապես առաջարկեց, որ յուր գերդաստանը ևս բերել տա և խոստացել էր ապահովեցնել մեր ապագան: Հայրս նամակ գրեց մեզ, շատ գովեց Ռուսաստանը և նորա կառավարութիւնը, մանավանդ այն հակամիտութիւնը, որ ռուսները ունին գեալի արևմտյան ժողովուրդը: Թեպետ հորս հրավիրական նամակը ստանալով մենք շատ ուրախացանք, բայց ոչ առանց ակոսասլու թողիք մեր սիրական հայրենիքը. ինչու որ մենք շատ մարդոցմե լսել էինք, շատ գրեբրու մեջ կարողացել էինք Ռուսաստանի ցուրտ օդի, անպտուղ երկրի և անկիրթ ժողովրդի մասին անհաճո լուրից և միայն այն միտքը, որ մեր սիրուն հայրենիքը պիտի փոխենք այդ օտար, անհյուրընկալ երկրի հետ, միայն այդ միտքը, ասում եմ, սոսկացնում էր իմ և մորս կանացի երեւակայութիւնը: Եվ հիրավի, ո՞վ պիտի տար մեզ մեր կանաչազարդ դաշտերը, մեր ազատ սարերը, մեր խոխոջուն վտակները, մեր անամպ և կապուտակ երկինքը և վերջապես՝ մեր հյուրասեր և մարդասեր ժողովուրդը (այս խոսքերը լսելիս միտքս եկավ մեր սիրուն Հայաստանը, որ միայն գրեբրից էի ճանաչում): Ի՞նչ կուտար ա՛խ... խոսքը չկարողացավ վերջացնել, սիրտը մղձկեցավ, աչքերը կարմրեցան և լցվեցան արտասուքով... ա՛խ, ինչո՞ւ չէ լսեցիք մեր սրտի նախազգացմանը, ինչո՞ւ թողիք մեր հայրենիքը... Ի՞նչ էինք պարում անհայտ երկրումը պանդուխտութեան մեջ: Պարո՛ն, ներեցեք ինձ, որ ես չկարողացա զսպել հոգուս դսկի՞ծը, հասկացեք իմ դառն վիճակը և ներողամիտ եղեք փոքրագութեանս, որ ես ցույց եմ տալիս այս հուսահատ գրութեան մեր եկեղս թնոնում է զլիխցս, քանի որ միտք եմ անում՝ թե ի՞նչ պիտի լինի իմ վիճակը աչսուհետև:

— Դուք ազգական ունի՞ք ձեր տեղումը:

— Այ, իմ հայրը գաղղիացի վարատական էր՝, 1830 թվականի հեղափոխութեան ժամանակ նա փախավ յուր դահիճներու ձեռքին. բոլոր ինչքը ու կալվածքը թողավ Գաղղիայումն ու գնաց բնակեցավ Եվեյցարիու Բազել քաղաքումը: Այնտեղ առաջին անգամ ծանոթացավ մորս հետ, որ մի աղքատ, բայց համեստ որրուկ էր, որ յուր օրական ապրուստը կար ու ասեղովն էր ճարտու: Ինչպես տեսնում եք՝ ես աշխարհիս երեսին անտեր որր եմ. երեք օր առաջ վերջի նեցուկս կորցրի այս անծանոթ տեղումն: Հիմի հավատո՞ւմ եք, որ ես իրավունք ունիմ ինքս ինձի ամենաթըշվառ մարդը կարծելու:

— Մի՛ այդքան հուսահատվիք, — ասացի նորան, — ամեն տեղ կան բարի մարդիկ. ասածու աչքը որբերու վրա միշտ հովանավոր է: Ես չեմ ասում, որ ձեր ներկա վիճակը թշվառ չէ, արտասովալի, սոսկալի չէ, ո՛չ. բայց միտք բերեք ձեր մորը, քանի որ նա ձեր սիրական հորը չէր ճանաչում, ինչպե՞ս էր ճարում նա յուր ապրուստը... Իհարկե, դուք էլ նույն համեստ հնարով կարող եմ պարկեշտ վիճակ վայելնլու: Գուցե՞ դուք ևս կարողանաք... — ասացի, բայց խոսքս վերջացնելու չհամարձակեցա. աչքիս տակով նայեցա աղջկա երեսին, երկուսիս աչքերը իրար հանդիպեցան, երկուսս էլ շփոթվեցանք ու աչքներս խոնարհեցինք:

— Անուշ արեք ձեր գավաթով սուրճը, թե չէ՛ կատի, — ասացի նորան, կամենալով այդ շփոթը փարատելու, ու ինքս կպցրի ծխաթուղթը ու սկսա քաշել ու խմել: Փոքր լռելուց հետո՝ աղջիկը հարցուց ինձ.

— Դո՞ւք որտեղացի եք, ներեցեք հետաքրքրութեանս, բայց ինձ երևում է, որ չպիտի ռուս լինիք:

— Ձեր կարծիքը ուղիղ է. ես էլ ձեզ պես պանդուխտ եմ այստեղումը. ես ազգով հայ եմ:

— Ուրեմն մենք երկուսս էլ մի կրակով ենք այրվում, — ասաց նա ժպտալով, հետո ավելացուց. ձեր անունը ինչպե՞ս է:

— Միքայել է անունս, մականունս Վայելչյան, — պատասխանեցի ու վիրավորված ձեռքս հետ արի նորա տված թաշկինակը և առանց մեկ խոսք ասելու մատով ցույց տվի ասեղնագոր-

1 Վարատական (Էմիգրան) ասվում է այնպիսի մարդ, որ մի քաղաքական հեղափոխութեան պատճառով թողնում է յուր հայրենիքը և գնում բնակվում է օտար երկիր: (Յ. 2.):

ժած Մ. Վ. տառերի վրա: Դուք չե՞ք զարմանում, որ իմ և ձեր անվան և մականվան սկզբնատառերը միևնույնն են. չե՞ք կարծում, որ այստեղ մի գաղտնիք կա, որ նախասահմանությունը առ ժամանակ մի թաքցնում է մեզանից:

— Ինձ էլ այդ տառերը միշտ առողջական ու խորհրդավոր են նրանք. ես միշտ աշխատել եմ այդ երկու տառերի մեջ իմ վիճակի որոշումը գտնելու: Մեկ բան ասեմ՝ չե՞ք ծիծաղել վրազ: Մի օր (դեռևս այստեղ չէինք եկել) մայրս եկեղեցի էր գնացել, տանը մնացել էի ես ու մեր պառավ աղախինը. այսպես մենակ նստած սենյակումը աչքս երկու տառերի վրա դարձուցած՝ ըստ սովորությանս աշխատում էի զանազան հարմար բառեր պարտելու. շատ կերպ համառոտ նախադասություններ կազմեցի այդ երկու տառի վրա, բայց ոչ մինը ինձ հավան չեկավ, վերջապես երկու խոսք միաբա եկան, որ պինդ տպավորվեցան երևակայությանս մեջ և այդ օրհասական ժամեն միտքես դուրս շեն գալիս, և ասես թե սարսափելով, բայց անհամբերությամբ սպասում եմ նոցա կատարվելուն:

— Ինչպե՞ս են այդ խոսքերը, — հարցուցի:

— Այդ խոսքերը ֆրանսերեն են՝ Mort par venin (մահ թույնից). ու այնուհետև խելքս մտել է, որ իմ կյանքը թույնով պիտի վերջանա:

— Թողեք, ի սեր աստուծու, այդ ցնորական նախազգացումները, որ կարող էր գալ միայն երեխայի գլուխը, և ոչ ձեզ պես կրթված աղջկա... բայց ի՞նչ կասեք ինձ, եթե ես այսպես մեկնեի՝ մաղամ կամ Մարի Վայելլյան, — ասացի ծիծաղելով:

— Այժմ իմ հերթն է ձեզ ասելու՝ թողեք խնդրեմ այդ ցնորական գուշակությունը, որ կարող էր գալ մի հաճոյախոս երիտասարդի գլուխը, և ոչ ձեզ պես կրթված ուսանողին. — ասաց նա մինչև ականջները կարմրած. հետո ավելացուց, նայելով պատուհանին. Ա՛խ, տեր աստված, արդեն մութը կոխել է. պետք է տուն երթալ. ի՞նչ կկարծե տանտիկինս, որ ես այսքան ուշացա: Խնդրեմ, պարոն, ինձի ճամփա ձգեք մինչև բնակարանս, — ասաց ու վեր կացավ տեղեն: Ես, թեև ափսոսալով, բայց նմանապես տեղես վեր կացա, զանգակը խփեցի, ծառան եկավ, ինչ որ հարկն էր տվի իրան ու աղջկա հետ միասին դուրս եկանք սրճանոցն:

— Օրի՜որդ, — ասացի աղջկանը, երբ որ արդեն փողոցում էինք, — ի՞նչ միտք ունիք անելու:

— Ես ինքս էլ մոլորված եմ այդ մասին և չգիտեմ, թե էգուցվա օրը... խոսքը չպրծավ: Բայց ես հասկացա նորա ասելուն ու մտքիս մեջ շարունակեցի. «չգիտեմ թե ի՞նչ ուտեմ և որտե՞ղ բնակվիմ»:

— Եթե այդպես է՝ ուրեմն կընդունի՞ք իմ փոքրիկ օգնությունը, որ ես ի բոլոր սրտե ձեզ առաջարկում եմ: Ահա ձեզ մեկ մանեթ. մինչև էգուց ցերեկվա 12 ժամը ինչպես և իցե բավականացեք դորանով. մնացածը, աստուծով, մեկ կերպ կկարգադրենք:

— Ախ, պարոն, ի՞նչ իրավունք ունիմ ձեր վերջին կուպեկը առնելու ձեզանից, ես գիտեմ, որ դուք ինքներդ չբավոր եք. տանն ևս ոչինչ չունիք, կարծում եք ես չնկատեցի՞, որ դուք ձեր ոտից հանեցիք ձեր կրկնակոշիկները ու ծախեցիք այն բոշային, որ ինձ օգնություն անեք: Ես չգիտեմ՝ կարող եմ արդյոք երբևիցե հետ դարձնել ձեզ նախ այն լավությունը, որ դուք ինձ արիք արդեն՝ ձեր կարողութենեն վեր գոհ բերելով:

— Օրի՜որդ, եթե այդպիսի խոսքեր կասեք՝ այդ կնշանակե, դուք իմ վրա շատ վատ կարծիք ունիք. մի՞թե դուք կարծում եք, որ ես մի թեթև և չնչին գոհի ևս ընդունակ չեմ, և վերջապես՝ որտեղի՞ց գիտեք, որ իմ ունեցած չունեցածը այդ կրկնակոշիկն էր. փառք աստծո, ես այնքան... ուզում էի ասել՝ հարուստ եմ, բայց չհամարձակվեցա այդպես լրբաբար ստելու և խոսքս կուլ տվի:

— Եթե ինձ պատվում եք՝ մի՛ համոզեք ձեզանից գոհեմ ստանալու:

— Եթե իմ առաջարկած օգնությունը չընդունեք՝ այդ ասել է, որ ինձ հետ առհասարակ ծանոթ մնալ չեք ուզում. կամքը ձերն է, — ասացի ձևանալով իբր թե սիրտս սաստիկ ցավել է նորա խոսքերից:

— Ո՛չ, ո՛չ, պարոն, ես չէի ուզում այդ ասել... բայց դո՛ւք դուք էլ խո էգուցվա համար ուտելու բան չունիք, — ասաց նա այնպիսի հրեշտակական կարեկցությամբ, որ քիչ մնաց՝ մոռանալով նորա սուզը և ցավալի ներկա վիճակը՝ տեղն ի տեղ առաջարկեի սիրտս և ձեռքս (մի՛ զարմանաք և մի՛ դատապարտեք, իմ պատվական կարողացողներ, որովհետև այն ժամանակ ես տասնեկին տարեկան էի):

— Խնդրեմ ինձ համար հոգս մի՛ անեք. եթե կամենում եք, որ ես ձեզ հետ սրտաբաց խոսիմ, ահա՛ լսեցեք: Ծշմարիտ է, որ ես հարուստ չեմ, ո՛չ ոռճիկ և ո՛չ արդյունք ունիմ. ծնողքս նմա-

նույն աստիճանի ունեւորը չեն, որ կարողանային ինձ օգնել: Բայց փոխարեն այդ ամենին՝ ես այնպիսի գանձ ունիմ, որ համարձակ կարող եմ անհատական անվանել, այդ գանձը — իմ բարեկամները են, որոնք թեև այստեղ չեն, բայց մեկ տող որ գրեցի՝ իրանց փերջին ունեցածը ինձ կուտան: Այժմ հավատում եմ, որ ես այն քան աղքատ չեմ, որ երևում եմ արտաքին հանգամանքովս:

— Ա՛խ, պարոն, դուք ինձ ստիպում եք մինչև կյանքիս վերջին շունչը ձեզ փրախտապարտ մնալու: դուք ինձ ստիպում եք մեր ծանոթության հենց առաջի օրեն ձեզ ինչպես իմ հարազատ եղբայրը, ինչպես իմ մտերիմ բարեկամը ճանաչելու: Բայց և այնպես՝ ձեզ օգնությունը ես միայն այս երկու պայմանով կընդունեմ, նախ՝ որ ինձ կիսոստանաք, որ երբ ինքներդ կարոտության ժեզ լինիք՝ առաջինը դեպի ինձ կդառնաք:

— Ահա իմ ձեռքը, — ասացի ի նշան համաձայնությանս: — Այժմ մտիկ արեք: զրպանումս կա մանկեթ ու տասնհինգ կոպեկ, այս տասնհինգ կոպեկով ես ինչպես որ լինի գիշերս կլուսացնեմ, էգուց եթե ստացա փող՝ լավ, թե չէ՝ կուզամ ու ձեզանից երեսուց կոպեկ կառնում: հոժա՞ր եք:

— Հոժար եմ, — պատասխանեց աղջիկը:

Այս վերջին խոսքերը գրեթե նորա տան մոտ ավարտվեցավ:

— Կամենա՞ք մտնել իմ բնակարանը, — հարցրեց աղջիկը այնպիսի անմեղուկությամբ և միամտությամբ, որ ամենակասկածոտ և բծախնդիր մարդու երկմտությունը կարող էր փարատել:

— Ա՛խ, շատ կցանկանայի տեսնել ձեզ ապրուստը, — ասացի նորան, նմանապես հեռի ամենայն պարսավելի մշտեբեր:

Երեկոն արդեն վրա էր հասել: մութ և ցեխոտ սանդուղքները չէին լուսավորված, ու մենք պատե պատ խարխափելով հազիվ գտանք նորա բնակարանը: Ինձ արդեն ծանոթ պատավանդներն մեկը բացեց դուռը և ճրագը երեսիս մոտեցնելով՝ ուզեց իմանալ, թե ես ո՞վ եմ: Աղջիկը երկչոտությամբ բարեկեց նորան: Բայց պատուր սառը կերպով ընդունեց նորա ողջունը ու հեզնությամբ փնթփնթաց:

— Ա՛յ քեզ տրաքոց, մոր մարմինը դեռևս չի սառել գետն տակ՝ աղջիկը արդեն սկսել է փողոցն մարդիկ ներս բերելու:

Փոխանակ պատասխանի՝ ես խստությամբ մատով սպանացի պատավանդի ու հազիվ կարողացա զսպելու բարկությունս: Բայց մտածեցա նորան ու կես ձայնով ասացի անկանչին. «Եթե մյուս ան-

գամ լսել եմ այդպիսի խոսքեր՝ իմացած լինես, որ բերնուդ իմացած երկու ասամն էլ դուքս կհաննիմ: լսո՞ւմ ես, թե չէ: բարխա՞վոր համարե քեզ, որ աղջիկը չհասկացավ քո ասած լիրբ խոսքերը: Թե չէ հենց իմացիք որ պատահանեն դուքս պիտի գլորվեիք»:

Ո՛չ այնքան խիստ խոսքերս, որքան փայլուն կոճակներս ահ ձգեցին այս ուսմիկ ոռու քավթառի սրտի մեջ: Ասացի ու խկոյն մտա աղջկա սենյակը: Սենյակը վայ էն հալին, լուսավորված էր մոմի աղոտ լույսով: Երեք թե չորս կոտորատած աթոռ, մեկ հին սեղան, խորշումը մեկ պայուսակ: այս էին ահա նորա բնակարանի կահ կարասիքը: Բայց այս աղքատ կեցության մեջ ինձ զարմանալի թվեց մի պատվական ընկուզի փայտե շինած դաշնամուր՝ երեկելի վիթեռի ձեռագործը:

Հանեցի թիկնոցս ու նստա աթոռի վրա: աղջիկն ևս նստավ փոքր ինչ հեռու ինձանից: Սկսա աչքս պտտացնել սենյակի շորս պատին: Աղջիկը կամենալով խզել այս լուսությունը, ասաց.

— Դուք զարմանում եք, կարելի է, որ այստեղ չեք տեսնում ո՛չ մահճակալ, ո՛չ անկողին, ո՛չ բարձեր և շատ ուրիշ առարկաներ, որոնք ոչ միայն հարկավոր, այլև կարևոր են ամենաթշվառ մարդուն: մի՞ զարմանաք, դուք արդեն ունիք իրավունք իմ ամեն հանգամանքը տեղյակ իմանալու: ես ձեզ, ինչպես իմ հարազատ եղբորը, ամեն բան մանրամասնաբար կպատմեմ: Այսօր առավոտ այց ամեն բաները կային այստեղ, բայց դազաղագործը մինչև որ վեց մանեթը շառավ՝ չհոժաքեցավ մորս դազաղը տալ: նույնպես մեռելակառքի տերը մինչև առաջվան չի ստացավ ութը մանեթը՝ չհոժաքեցավ մորս թաղել տանելու: Մորս մահից հետո մնացած ամեն բաները նոցա տվի, միայն թե ինձ օգնեն վերջին պարտքը հատուցանելու խեղճ ծնողիս:

Հետո իմացա որ առավել քան թե հարյուր մանեթի բաներ առել էին գազան վաճառականները այս անփորձ աղջկանն, բայց ի՞նչ կանես, անցածք չէր կարելի հետ դարձնել:

— Ի՞նչ պատահումներով ապա մնացել է այս գեղեցիկ դաշնամուրը, հարցուցի աղջկանը:

— Ա՛խ, պարոն, մի՛ հարցնեք: այս օտաք տեղումն որ բնակում էինք ես և մայրս՝ դա մեր միակ մխիթարությունն էր աշխարհքիս երեսին: Ես չի խնայեցի ո՛չ հալավներս, ո՛չ զարդերս, ո՛չ գրքերս, ո՛չ անկողինս, բարձս, վերմակս, վրայիս տաք թիկ-

նոցը անգամ տվի առանց արհեստալու, միայն որ քանի մի օրով ուշ երթա ձեռքես այս սիրական դաշնամուրս, իհարկե վաղ կամ ուշ դա էլ դնալու է ձեռքես, երբ որ կարոտությունը կստիպի, բայց ես ինքս ինձի խոսք եմ տվել, որ այս ոսկե մատանին որ մայրս մեռնելու ընկալին մատից հանել ինձ էր տվել, առավել շուտ ծախեմ, քան թե այդ դաշնամուրը... Տեր աստված, մի՞թե պիտի հասնե այն թշվառական օրը, երբ մորս վերջին հիշատակը պիտի...

Երբ իմացա, որ մատանին յուր մորը տված հիշատակն էր և ոչ նորա հարսնախոսությունն նշանը՝ այնպես հանդարտեցա մըտքով, որ ասես թե մեջքիս վրայն մեկ ծանր բեռ ցած դրի:

— Մի՛ վախենաք, ասացի, աստված մինչև այդ աստիճան չի հասցնիլ, իմ սիրտը վկայում է, որ դուք շուտով պիտի ազատվիք այդ թշվառ վիճակեն, և պիտի ազատվիք՝ ազնիվ ու գովեցի հնարով:

— Աստված տա, որ ձեր սրտի վկայությունը կատարվի Պարոն Միքայել, եթե ես այսուհետև էլ աստվածանից գոհունակ չլինեմ, ե՞րբ ապա պիտի կարողանամ նորա ողորմությունը ճանաչել. կարո՞ղ էի ես կարծել, որ այս անծանոթ երկրում, ծնողներես զրկված, աղքատ, անտեր, որք մնացած՝ հանկարծ կգտնեմ ձեզ պես անձնանվեր բարեկամ.— ասաց ու ձեռքը դեպի ինձ ձգեց:— Ենորհակա՛լ եմ, պարոն Միքայել, իմ ազնիվ բարեկամ. հավատացեք որ այսուհետև եթե սար ու ծովեր էլ բաժանեին մեզ՝ ձեր բարի հիշատակը մինչև ի մահս անթառամ պիտի մնար սրտիս մեջ:

Այս խոսքերը ինձ միանգամայն շփոթեցրին, պապանձեցրին, շնորհակալություն անգամ չկարողացա անել. խելացնորի պես շշկվել մնացել էի. եվ ի՞նչ զարմանք, այս առաջին աղջիկն էր, որ բացեց իմ առաջ յուր անբիծ և կուսական սիրտը, առաջին անգամն էր, որ հետս խոսեցան այն անխարդախ լեզվով, որի ամեն մի խոսքն առանց երկամտության, առանց զննելու հավատում է մարդու Անիծելով անիծեցի և՛ ինքս ինձի, և՛ իմ բախտը, և՛ հազարումեկ դիպվածներ, որ պատճառ էին եղել ինձ՝ սիրտս բանալու անարժան սիրու և անզոսնելի ախտերի համար... Անագան, բայց արգյունավետ ստրջանք:

Հանկարծ վրաս մահազուշակ տրտմություն եկավ. հոգիս, ասես թե, դժոխքի մեջ այրվում տանջվում էր. խղճմտանքը բարձ-

րածայն աղաղակում էր մեջս: Այս աղջկա սենյակումը այլևս մեզ չէր՝ նշանակում էր ոտնակոխ անել նորա կուսական սրբությունը... Առի եռանկյունակս, մոտեցա աղջկանը. աչքս չհամարձակելով նորա երեսին բարձրացնելու՝ սկսա մնաս բարով անել: Աղջիկն էլ վեր կացավ տեղեն, ձեռքը ինձ ձգելով, ասաց.

— Արդեն գնո՛ւմ եք... կարող ե՞մ հուսալ, որ այս ձեր վերջին այցելությունը չէ... ե՞րբ կտեսնվինք, իմ հավատարիմ բարեկամ...

— Ինչպես ասացի՝ էգուց ժամը 12-ին: Բայց ~~եթե ուրախ~~ երեկոյանը սպասեցեք, այսպես՝ յոթնին ութնին:

Շտապով ձգեցի վրաս. թիկնոցն. ու խելագարի պես գոգոս ընկա:

Գ

Պարզկա գիշերվա ցրտությունը որ ճակատիս չի տվավ՝ ականթաթափել ցրվեցավ երևակայությանս խառնաշփոթ մտքերը: Վախենալով որ քրտնած մարմինս հանկարծ ցրտեն չի սառի՝ սկսա շուտ-շուտ և գրեթե վազելով առաջ գնալու: Մինչև բնակարանս հասնելու՝ չորս վերստի շափ տեղ պիտի անցնեի. բայց կարդացողիս հայտնի է, որ իմ բոլոր հարստությունը տասնհինգ կոպեկ էր. ուրեմն սահնակ վարձելու համար մտածելն անգամ խելացնորություն էր: Ես հավաստի գիտեի որ ընկերս մինչև այժմ անհամբերությամբ սպասում կլիներ ինձ (ժամը արդեն ութն էր երեկոյան), հուսալով որ նորա համար քաշելու և ուտելու բան կբերեմ հետս: Ես գիտությամբ առաջ քաշելու ասացի և ապա ուտելու. որովհետև ուսանողը և ուսանողի պես մարդիկ փորի քաղցածությունից այնքան չեն շարշարվում, որքան ծխախոտի ծոմ պահելից:

Ջարմանք երևույթ. ինչո՞ւ այդպես հզոր ազդեցություն ունի ծխախոտը այն մարդոց վրա, որոնք առավել են տված հոգու, քան թե մարմնու վայելքի: Այդ չժխող մարդիկը չեն ճանաչում այն վայելքը, որ անուն չունի և որ բնական ազդեցությամբ հասկանում է պատանեկության հասակը, այն անգործունյա գործունեությունն եմ ասում, երբ հոգին, առ ժամ մի կոտորտով մարմնու շղթաները՝ ազատ թռչունի նման թռչում, հեռանում, ճախրում է երևակայության. աշխարհի անսահման զավառներու մեջ...:

Երբ որ տանս մտեցա՝ մտա մանրավաճառի խանութը, հրա-
մայլեցի խանութպանին որ տա երկու գրվածքս և և հաց, մեկ մամ,
երեք կոպեկի թեյ, շորս կոպեկի շաքար, մնաց մեկ կոպեկ. ծխա-
խոտի համար փող չունեի: Կարոտությունը մայր է հնարից,
ասում է առածը:

— Մխախտ էլ ունի՞ս, հարցուցի:

— Ինչպես չէ, ունիմ ձերդ ազնվություն, — ասաց sui generis՝
քաղաքավարի խանութպանը. ո՞րն եք կամենում, ունիմ Միլլեռի-
նը, Կադիբեքինը, Պողոտովինը, բանի՞ հատ է պետք ձեր պայծա-
ռափայլությանը:

— Թեկուզ տասը հատն էլ ինձ բավական կլինեն մինչև էգուց
առավոտը. բայց տեսնում ես, սիրականս, բանը ինչ է. տնից
դուրս գնալիս կարծում էի, թե գրպանումս շատ փող կա, բայց
մի՞ ասիլ որ տասնհինգ կոպեկից ավելի չունիմ հետս. ահա քեզ
մեկ կոպեկ, մնացած իննը կոպեկը էգուց առավոտ լուս ու մութին
կհասցնեմ քեզ ծառայիս ձեռքով. կհավատա՞ս ինձ իննը կոպեկ...
— Համեցե՛ք, պարոն, համեցե՛ք, — ասաց միամիտ խանութ-
պանը:

Արջը կապեցինք, ասացի մտքումս: Վեր առա գնած ապրան-
քըս և տասը հատ էլ Միլլեռի ծխախոտը և ուրախությունիցս պա-
տերազմական մատչ սուկելով տուն գնացի: Ներս որ մտա, Հով-
հաննե՛ս, ասացի տա՛նն ես: Ձայն չիկար: Հովհաննե՛ս, ասացի
նորից ավելի պինդ ձայնով:

— Հը՛մ, — ասաց քնած տեղից Հովհաննեսը, — Միքայել՛ն
դո՞ւ ես:

— Ե՛ս եմ, ե՛ս, — պատասխանեցի. ինչո՞ւ մութ տեղումը
պառկել ես, — հարցրեցի, մտքումս ծիծաղելով:

— Ինձ լույս ո՞վ էր տվել, — ասաց խեղճ ընկերս:

— Վե՛ր կաց. վե՛ր. քեզ համար հա՛մ ճրագ եմ բեքել, հա՛մ
հաց, հա՛մ թեյ:

— Քաշելու բան ունի՞ս, — հարցուց քրաթաթախ ընկերս:

— Դեռ վե՛ք կաց տեղեդ. արի՛ ճրագ վառե՛ք:

— Բո՞ւոռ. ամմա ցուրտ է հա, տանը, — ասաց Հովհաննեսը.
դրսումք ինչպե՞ս է, էի ցո՞ւրտ է առավոտվա պե՞ս:

՝ Իր տեսակի, յարահատակ կերպով:

— Հա՛. կարծեմ որ մեկ բան էլ ավելի լինի, — պատասխա-
նեցի ես:

Այդպես մի ժամ ավելի հյուսիսայգը սաստիկ վրդովում էր
երկինքը (նկատելի է, որ այն ձմեռ հյուսիսայգները հաճախ էին
երևում երկնքումը):

— Ես կարծում էի, թե դու կես ճամփումը սառած կլինիս...
Ա՛ տղա, ինչո՞ւ էսքան ուշացար... հա՛, էն ի՞նչ էր առավոտվա
շշկվածի պես տուն մտնելդ ու կապելու գիծի նման դուրս փալո-
չելդ... Ի՞նչ է եղել քեզ:

— Դեռ էդ թողնենք. քեզ պատմելու շատ բաներ ունիմ:

Վուցկիբը քնեցի պատին, վառեցի ճրագը: Հովհաննեսը ամե-
նից առաջ ընկավ ծխախոտի վրա, հապճեպով պատուց կապոցը.
հանեց մեջեն մեկ հատը, առավ բերանը և ճրագին մոտեցրեց.
մեկ կուշտ ներս քաշեց ծուխը և հետո ասաց. «Օխա՛ւ, սիրտս տե՛-
ղը եկավ. ա՛ տղա, ցերեկվա 11-ից մինչև այս րոպես առանց քա-
շելու էի, գիտե՞ս. թե որ մեկ-երկու էլ այսպես օրեր լինեն՝ ինձ
համար խղեռա պետք չէ, առանց նորան էլ կմեռնիմ»:

— Մի՛ վախենալ, շես մեռնիլ. ինձ Մոսկովից գրում են, որ
առաջին սուրհանգակով երեք գրվանքա թիֆլիսի ծխախոտ կու-
ղարկեն...

— Գիտենք, գիտենք, վաղուց ենք լսում այդ մխիթարությու-
նը, քեզ Մոսկովից շատ բաներ են ուղարկելու, — ասաց, ծաղրե-
լով խոսքերուս վրա. — բայց մինչև այնտեղից քու ծխախոտը և
շատ ուրիշ բաներ ստանալը՝ ես ու դու դեռ շատ օրեր պիտի անց-
նենք այսօրվա նման:

— Հովհաննես, դու ինձ վիրավորում ես՝ երկբայելով իմ խոս-
քերին...

— Ա՛խ, — ասաց Հովհաննեսը, խոսքս կտրելով, — ես շե՛մ
երկբայում, որ քու ասածը ճշմարիտ է. բայց դու, դու ես խաբ-
վում հույսերովդ:

— Խնդրեմ՝ թողնենք այս խոսակցությունը, որ գրեթե ամեն
օր կրկնվում է: Եկ առաջ ինքնատեղը դնենք, մեկ ազավարի թեյ
խմենք, հետո քեզ հետ շատ բան ունիմ խոսելու:

— Ա՛խ, Միքայել, գիտե՞ս ինչ, — ասաց Հովհաննեսը շտա-
պավ խոսելով. քիչ մնաց, որ մոռանայի: Պահա՛ւ մեկ սարսափե-
լի երազ տեսա, երազումս իբր թե դու ու մեկ աղջիկ խոր փոսի
առաջ կանգնած՝ պար էիք գալիս: Միքայել, ասում եմ, ի՞նչ տեղ

ես գտել պարելու, շե՞ս տեսնում առջևիդ փոսը. դու իմ խոսքին
ուշք չէիր դնում ու առաջվա պես պար էիր գալիս: Հանկարծ աղ-
ջիկը դուրս պրծավ գրկիցդ, մոտեցավ փոսի ափին, մեկ հետ շուտ
եկավ, նայեցավ երեսիդ ու թռավ փոսի մեջ: Դու լեղապատառ
վագեցիր, մեկ պինդ աղաղակեցիր, ու նորա հետենն գլորվեցար,
բայց հետո կամաց կամաց վեր բարձրացար՝ կարծես թե թեկ
ունենիր ու տիրուր եկար կայնեցիր մոտու:— Ի՞նչ եղավ աղջիկը—
հարցրի: «Կերավ փոսի մեջ. չի գտա նորան» ասացիր դու: Ես
վախիցս զարթնեցա:— Փոքր ինչ լռելից հետո՝ ասաց ընկերս:—
Ի՞նչ պիտի նշանակե այս երազը:

— Օրը բարի է, երազն ի բարին կատարի,— ասացի ծիծա-
ղելով և միտքս բերելով Մոսկվայումը սպած օրացույցի իմաս-
տուն հեղինակներին:

— Հանաքը դե՞ն՝ երազները երբեմն կատարվում են, գիտե՞ս,
— ասաց իմ միամիտ ընկերը:

— Իհարկե կատարվում են,— ասացի. զոր օրինակ՝ քանի մի
օր առաջ ես էլ էի մի երազ տեսել. երազումս իբր թե ձեռք տա-
նում եմ գրպանս և ի՞նչ տեսնեմ. բուռ բուռի քամակից ոսկինեք
եմ հանում, այնքան հանեցի, որ ձեռք հոգնեցավ, բայց շուտ
զարթեցա: Առավոտը աչքերս որ բացի՝ խանութպանը իր տղան էր
ուղարկել մեր առած ապրանքի փողը պահանջելու: Լավ մեկնու-
թյուն չէ՞ր իմ տեսած երազին...

— Զգիտեմ, Միքայել, ի՞նչ պատասխան տամ այդ խելոք
խոսքերիդ. թե ինձ հարցնես՝ իմ կարծիքն այն է, որ երբեմն երա-
զը կատարվում է:

— Իհարկե կատարվում է, ո՞վ է ասում, թե չէ կատարվում,
զոր օրինակ՝ քնած ժամանակ մարդ ինչ ասես երազ է տեսնում,
առավոտից մինչև երեկո մարդու ինչ էլ որ հանդիպի՝ այդ երազի
կատարումն է,— այդպես չէ՞: Ես հազարից ավել անգամ երա-
զումս չոր տեսած կամ. երբեմն վատ՝ երբեմն՝ ոչինչ համբավ չեմ
լսել, այլ անակնկալ փող եմ ստացել, իսկ երբեմն ունեցածս էլ
ային օյլին բանի տվել, փչացրել եմ, երբեմն կուշտ-փոր ճաշի եմ
մեծարվել, իսկ երբեմն ամբողջ օրս քաղցած ու առանց ծիս-
խոտի եմ անցկացրել, ինչպես որ դու այսօր: Երեկ թե դու էլ երեկ
երազումդ չոր էիր տեսել,— ասացի ծաղրելով նորա վրա:

— Է՛հ, Միքայել, քեզ հետ խոսել չի կարելի, դու միշտ մեկ

պատճառ կգտնես վիճելու կամ մեկի վրա ծիծաղելու: Թողնենք
երազը, հիմի դու պատմի ի՞նչպես անցուցիր օրդ:

Ես նորան ամեն բան մանրամասնաբար. պատմեցի, միայն
թե աղջկա կեցած տեղը չհայտնեցի:

— Օ՞՞՞ մեր տղա, ինձնից թաքուն թաքուն սեր ես վայն-
ում: Էն ա, ասում էի, էս ի՞նչ է իլել մեր Միքայելին, խելը տա-
նու է տվել, ի՞նչ է:

Բայց ինքնաեռը սկսավ ուրախ ուրախ խշխշալ ու ետ գալ ու
միտքերս ձգեց, որ մենք առավոտվանն ի վեր կարգով բան չէինք
կերել, վեր կացա տեղես, թեյամանի մեջ թեյ ածեցի և վրան եռ-
ջուր՝ ու դրի ինքնաեռի վրա: Հաց ու շաքարը կոտորեցի ու եր-
կուսս նստանք աղավարի ճաշ ու ընթրիք վայելելու:

— Նո՛ւ, Միքայել, լավ շարշարվեցա, այսօր,— ասաց Հով-
հաններ, սև հացը թաթախելով թեյի մեջ ու Շարա նահապետի
ախորձակով ուտելով, լավ շարշարվեցա, ավելացուց. եթե աստ-
ված վրաս քուն չի բերեր՝ չգիտեմ ի՞նչ պիտի լիներ իմ հալը:

Ես էլ Հովհաննեսից պակաս քաղցած չէի, թեև ճշմարիտ է
սրճանոցումը փոքիս նեղու փոքր ինչ հանդարտեցրել էի, բայց
մեծ մխիթարություն չէր մեկ զավաթ սուրճը և նորա հետ երկու-
երեք հատ պաքսիմատ ստամոքսի համար, որ նույնքան կուշտ
ճաշի երես էր տեսնում, որքան մայրաքաղաքս, աշնան օրերումն,
արեգակի երեսը: Բայց այդ իմ առտնին գաղտնիքն է և կարդա-
ցողին հետաքրքրական չէ իմ ներքին հանգամանքն իմանալը...

— Ետո՛ւ, Միքայել, էլ ի՞նչ նոր բան կասես,— ասաց ընկերս
երեք քաժակ թեյ խմելից և հինգ շերտ հաց ուտելից հետո:

— Ի՞նչ նոր բան ասեմ, ասելու բան շատ կա,— նոցա կա-
տարելն է դժվար: Մեկ որ՝ սիրահարված եմ, ինչպես տեսնում
ես, երկրորդ որ՝ աղջկանը խոսք եմ տվել էզուց անպատճառ մեկ
հնար տեսնեմ նորան օգնելու, երրորդ...

— Միքայել, խոսքդ շաքարով կտրեմ,— սերը լավ բան է, ով
է ասում, մանավանդ սերը անմեղ, անարատ աղջկան՝ ինչպես որ
քու նոր ծանոթն է, բայց, հոգիս, դու միտք արա, որ այդ սերը
մեծ զոհեր է պահանջում, որի համար ունի՞ս արդյոք դու և՛ նյու-
թական, և՛ բարոյական զորություն: Աշխարհքումս շատ թշվառա-
կաններ կան, որոնցմե եթե $\frac{9}{10}$ մասը անարժան ևս լինի կարեկցու-
թյան, գոնե $\frac{1}{10}$ մասը արժանի է, որ մենք մեր կյանքը զոհեմք և
նոցա դարդին զարման անեմք: Եղբայր, մի՛ մոռանալ որ՝ մենք

Պետերբուրգումն ենք, մեր թեթև գլխու վրա հոգս անել չենք կարողանում, ո՛ր մնաց, որ փափկասուն, կրթված և պարկեշտ ազգայն վիճակը ապահովացնենք... երբ որ դու խոստացար այն աղջկան քու օգնությունը՝ երեկ կարծում էիր որ... և... Մ...-ի որդին ես. բայց մոռացել էիր, որ այս օրվա օրս հուշար Մոսկովի բարեկամներու վրան է,— ասաց հեգնաբար։

— Այդ խոսքերովդ ի՞նչ ես ուզում ինձ հասկացնել,— ասացի բարկանալով.— կամենում ես, որ ես նորան կույր բախտի կամքին թողնեմ, որ աղջիկը քանի մի ժամանակ քաջությունը կուզելով աղքատության և ամեն կերպ զրկանքի հետ, ի վերջո ամենայնի յուր վիճակը բարվոքե՛լ բարոյականը ղոհելով... հա՛, ա՛յդ է քու ցանկությունը, ա՛յդ է ինձ տալու բարի խորհուրդդ...

— Կամա՛ց, կամա՛ց, մի այդքան տաքունալ, արյունդ կ՛զրկատրես, քեզ ով ասաց, որ ես քու սրտի ընտրածին այդպիսի վիճակի եմ ցանկանում հասցնել. իմ կարծիքը այն է, որ դու ուրիշ հնար գտնես, առանց քեզ ծանրություն տալու՝ նորան այդ նեղ գրությունից ազատելու։ Դու ասացիր, որ նա կրթված է։ Ի՞նչ է քու խոսքդ, որդիս, գիտե՞ արդո՞ք լեզուներ, երաժշտություն, նորա կրթությունը, գիտե՞ արդո՞ք լեզուներ, երաժշտություն, ասեղնագործություն, որ կարողանա մեկ տեղ դաս տալ, վարժապետություն անել և կամ վերջապես մեկ հարուստ գերդաստանում մանր երեխերի դաստիարակուհի դառնալ։

— Ես նորան քննություն չեմ արել, բայց հավաստի եմ, որ դաստիարակուհի դառնալու համար գիտություն ունի. բայց ես առաջ աչ ձեռս կղենեմ դահճի սրի տակ, և ապա թե խորհուրդ կուտամ նորան այստեղումը դաստիարակուհի լինելու։ Դու գիտե՞ս այստեղի դաստիարակուհիների վիճակը։ Չգիտե՞ս. լսե՛ ուրեմն Մատաղահաս և անփորձ աղջիկը մտնում է օտար գերդաստան. նորա պարտավորությունն է մանր երեխերքին ոչ միայն ուսում տալ և դաստիարակել, այլև նորա ծնողաց հրամանով երես տասն տղերքի ամենաչնչին կամքը կատարել. նա ստիպված է նոցա հետ փողոցն փողոց ման գալ, նոցա ամեն հիմար շարժանքի պատասխանատու լինել. տղան ցած ընկավ, վրայի հալավը կեղտոտեց՝ դաստիարակուհին է մեղավոր, տղան աչքածակություն է տեսնում, շափից ավելի է ուտում, հիվանդանում է ու սկսում տրեմանում, շափից ավելի է ուտում, հիվանդանում է ու սկսում տրեմանում է մեղավոր, դաստիարակուհին. հետո ասանտիկնոջ խելքը ո՛վ է մեղավոր, դաստիարակուհին. հետո ասանտիկնոջ խելքը մտնում է երթալ խանութ խանութ, փողոցն փողոց քաշ գալու՝ ո՛վ պիտի ընկերակցի նորան շան պես,— դաստիարակուհին. այ

նա բազմական չէ. ասանտիկնոջ տանը չեղած ժամանակը՝ նորա պատվական ամուսնի ձանձրությունը փարատելու համար՝ էլի խնդճ դաստիարակուհին պարտավորված է նստել ու նորա հետ ըստակա խաղալ։ Էլի ուզո՞ւմ ես որ ասեմ, մոռացիր ինձի (այդպիսի բաները միայն ականջին են ասվում)... հիմի հասկացա՞ր. բայց եթե ո՛չ՝ տնից ամոթով դուրս է ընկնում խեղճ դաստիարակուհին։ Այժմ ինքդ պարզ տեսնում ես որ... և դաստիարակուհի մեջ տարբերությունը շատ քիչ է. մեկի ամսական գինը 100—500, իսկ երկրորդին՝ 10—25 մանեթ։ Հավատո՞ւմ ես ինձ այժմ, որ ես իրավունք ունեի ասելու՝ լավ է ձեռքս կտրեմ, քան թե այդ անարատ աղջկանը խորհուրդ տամ դաստիարակուհի դառնալու։

— Թե այդպես է, ուրեմն արա՛ ինչպես որ գիտես, իհարկե ես քու հոգու ազնվությունը երբեք չէի երկբայում, բայց, դու էիր մեղքս գալիս, հիմի էլ ասում եմ՝ այնպես արա՛, որ հետո չփոշմանես։

— Է՛հ, եղբայր, եթե մենք ազնիվ գործերումն էլ որ փոշմանինք՝ կնշանակե ազնվորդ է աշխարհքիս երեսին մեր կենալը, մեղալամ, ասա, ջուրը ընկնենք էլի՞։

Հովհաննեսը լուռ էր։ Երկրորդ ծխախոտը կպցրուց ու առաջ ու հետ սկսավ ման գալ սենյակի մեջ։

— Հովհաննես, — ասացի, — դու շատ ժամանակ այստեղ ես, ուրեմն պիտի լավ ճանաչես այստեղի հայերուն. ասա, խնդրեմ, ովի՞ց կարելի է քանի մի ուրելի կարճ ժամանակով փոխ առնել։

— Ի՞նչ ասեմ քեզ։ Թեև, ղորդ է, ես ինքս էլ շատ անգամ սաստիկ կարոտության մեջ եմ եղել, բայց քաշվել եմ հայերից օգնություն խնդրելուց. և ոչ ոք էլ նոցանից կարեկցություն չի ցույց տվել իմ վիճակին, թեև հագած շորերես դժվար չէր իմանալ իմ արպիսությունը։ Երեկ թե սառ երկիրը ազդում է նոցա հոգու ջերմաշափին։ Բայց դու փորձ փորձե, կարելի է, որ իմ նկատմունքը առհիմն են. հարուստ մարդիկ շատ կան՝ Բ...-ը, Գ...-ը, Դ...-ը և այլն։

— Դու լսե՞լ ես, այստեղում մեկ հայ կա՛ մականունը Հովսեփյան, որ ասում են շատ բարեհոգի մարդ է, և ինչ հայ կուզե լինի, ամենին անխտիր օգնում է, արդո՞ք...

Սոսքս բերանումս էր, որ դռնապանը բացեց դուռը, ներս մտավ՝ ձեռքին մի թուղթ բռնած. «Ձերդ ազնվություն, — ասաց ինձ,

— ահա հայտարարութիւնն ձեր անունով եկած. նամակատանից փող ունիք ստանալու:

— Փո՞ղ է, — հարցրեցի վաղելով դեպի դռնապանը. — շո՞ւտ, շո՞ւտ, տուր այստեղ... շնորհակալ եմ: Չախ ձեռքով պինդ բռնած՝ աչք ձեռքովս դողդողալով կոտրեցի կնիքը, բացի և տեսա, որ Մոսկովից 30 մանեթ եմ ստանալու:

Դռնապանը դուրս գնաց:

— Հը, տեսա՞ր, — ասացի ուրախութիւնիցս թռչտելով: Ինչպե՞ս է քու մարգարեութիւնը. կարելի՞ է երբեմն հուսալ բարեկամների վրա: Ես քեզ չէի՞ ասում, որ իմ բարեկամները ազնիվ ազգերք են: Փա՛ռք աստուծու, այժմ ոչինչ բանից վախ չունիմ, ապաստանեմ կարող եմ պարզերես երթալ իմ Մարիի մոտ և ապահաւորութիւնս կարող եմ նորա ոտների մոտ դնել իմ բոլոր հարստութիւնը և ասել որ...

— Բաս մեզ համար ոչինչ չի՞ մնալ, — հարցուց Հովհաննէսը իր ձեռքի ձայնով:

— Ա՛խ, ներե՛, հոգիս, ես միանգամայն շշկուկ եմ. ինչպե՞ս կարելի է որ մեզ համար ոչինչ չթողնեն. իհարկե՛, որ մեզ համար էլ մասն կհանեն մայնտեղեն: Հենց որ փողը ստացա, նախ և առաջ կերթամ մեզ հարկավոր բաները կանեն, տուն կբերեմ, և ապա կերթամ իմ նազելիին ուրախացնելու: Լավ չէ՞:

— Երևա՛ լավ է, խիստ լավ, — ասաց ուրախացած ընկերս, — ասա տեսնենք, ինչպե՞ս պիտի կարգադրես, ի՞նչ ու ի՞նչ բանի պիտի առնու:

— Հայտնի բան է ինչ կառնում. կառնում տասը գրվանքս շաքար, մեկ գրվանքս թեյ, երկու գրվանքս ծխախոտ, սուրճ, կրշիկ, պանիր... բոլորը բոլորը կառնում: Սև օրվա համար էլ մոտ կպահանջեմ հինգ մանեթ: Լավ չէ՞ կարգադրութիւնս:

— Երևա՛ լավ է, խիստ լավ. մեկ մանեթ էլ ինձ կուտա՞ն:

— Ինչի՞դ է պետք:

— Նկարելու համար թուղթ չունիմ. մատիտներս էլ գրեթէ մաշվել, պրծել են. էնդուր համար է, որ էս քանի օրերս ձեմարան չեմ գնում:

— Հա, ինչո՞ւ չէ, մեկ մանեթ էլ քեզ կուտամ:

— Այսօր կոշկակարը ու լվացարարը եկել էին, մեկը կրե մանեթ ու կես էր պահանջում, մյուսը ութսուն հինգ կոպեկ. ի՞նչ ես կարծում, պե՞տք է նոցա տալ, թե ո՞չ:

— Իհարկե՛, իհարկե՛, անպատճառ կուտամ:

— Մանրավաճառը գլուխս տարավ էս քանի օրը. երկու մանեթ յոթանասուն հինգ կոպեկ էլ նորան պետք է տալ:

— Ի՛նչ ասել կուզե՛, որ նորան էլ անպատճառ պետք է տալ. գիտե՞ս խո՞ եթէ նորա աչքը մեկ անգամ վախեցավ՝ շատ օրեր ծով կպահենք:

— Կաթ ծախող կնիկը նմանապես պահանջում էր հիսուն կոպեկը:

— Անպատճա՛ռ կուտամ, անպատճա՛ռ, չի կարելի յտալ, մեկ որ խեղճ կնիկ է, հենց մեկ էն կովն է որ շատ անգամ թեյ ու շաքար չունեցած ժամանակներս, գիտես խո, նորա բերած կաթովն էինք օրներս անցկացնում, ումին տամ շտամ՝ դորան անպատճառ կուտամ:

— Խա՛-խա՛-խա՛, — ծիծաղեցավ ընկերս. եթէ աչքբան ճիշտ հաշիվ կտեսնես, — ասաց, — բաս մեծ դո՞ճ չես բերիլ սրտիդ ընտրածին:

— Ինչո՞ւ, — ասացի զարմացած, — երեսուն մանեթը քի՞չ փող ես կարծում:

— Երեսուն մանեթը այն մարդու համար քիչ փող չէ, որն որ ամեն ամիս ավել պակաս գրեթէ էլի այդքան է ստանում. բայց քեզ համար, որ ներկայիդ և ապագայիդ բոլոր հույսը այդ է՝ ոչինչ բան է երեսուն մանեթը, մասնավանդ որ այժմ դու կես տնավորված ես:

— Է՛հ, Հովհաննէս, Հովհաննէս, աստված ինչե՞ր տվող չէ, կարելի է որ այս խեղճ աղջկա աղոթքով իմ բախտի շարիքը դեպի բարին շուտ կուգա. ո՞վ գիտե:

— Աստվա՛ծ տա, աստվա՛ծ տա:

Երկուսն էլ պես-պես մտածողութիւնս մեջ ընկանք:

Հետո Հովհաննէսը ասաց ինձ. «Կարծեմ, Միքայել, քեզ ժամանակ է քնելու, որ առավոտը շուշանաս: Իմ քունը չի տանում: Ես ուզում եմ այս գիշեր և եթ պրծացնել * — ի պատկերը, — կարելի է դորա համար մեկ քանի մանեթ ձեռք ընկնի:

Չորդ որ աչքերս ծանրացել էին. հոգուս ու մարմնուս ցնցումը սաստիկ խոնջացրել էր ինձ, այնպես որ լեզուս դժվարով շարժում էի բերանիս մեջ: Երեք աթոռ մեկմեկու մոտ շարեցի, նշանազգեստըս և ուրիշ հալալներս ծալեցի դրի բարձի տեղ, թիկնոցս առի վրաս ու պառկեցա, և քունը անմիջապես իջավ վրաս:

Չգիտեմ քանի ժամանակ այսպես քնած մնացի, մին էլ հանկարծ զարհուրած քնես վեր թռա՝ մոլորած աչքերս զարձուցի շորս կողմս. Հովհաննեսը նստած էր սեղանի առաջ քնթի տակով մի երգ երգելով, մատիտը ձեռին նկարում էր. ճրագը գրեթե պրծել էր:

- Հովհաննես՝ս,— ասացի,— քանի՞ ժամը կլինի այժմ:
- Ժամացույցս մոտս չէ, սպասե փոքր ինչ, կերթամ շնուդ մոտ, կհամանամ ու քեզ իմաց կուտամ, ասաց ծիծաղելով:
- էլի՛, էլի՛, ի՞նչ ես կարծում. շա՛տ ժամանակ քնած էի:
- Հա՛, կլինի էսպես երեք ժամ:
- Ա՛ տղա, գիտե՞ս ինչ. մեկ սարսափելի ելազ տեսա, մինչև հիմի վախիցս ուշքս վրաս չի գալիս:
- Թե՞ երազի շէիր հավատում:
- Ես քեզ ասացի՞ որ հավատում եմ:
- Ապա ինչո՞ւ վախեցար այդքան:
- Միթե ես գիտեի՞, որ երազումս տեսածս— երազ էր:

Ուզում ե՞ս պատմեմ ինչ տեսա:

— Պատմե, պատմե, այսօրվա համար Մոսկովումը տպած օրացույցի մեջ ասած է, որ օրն շար է, երազն տասներհինգ օրն կատարի:

Մտեա մեջ դող ընկավ: Մարդուս կյանքումը այնպիսի բազմեթիվ կան, երբ նա ակամա սնապաշտ է դառնում: Եթե միաբնորդ բերեք (կարգացողը, ձեզ եմ ասում) այն խորհրդական հանգիստումը, որ ունեցա Մարի վեոդենի հետ, այն անցքը, այն պատմությունը, որ նորանեն լսեցի, ինձ հանկարծ փող պետք չիներ և այդ հուսահատ դրություն ժամանակ ասես թե երեսուն մանեթը ինչպես երկնքից ընկներ, և վերջապես այն երազները, որ գրեթե միևնույն պարունակությամբ տեսանք ես և Հովհաննեսը— այն ամենը՝ ինչ ասել կուզե, որ ժամանակավոր թեթե տպավորություն կարող էին ունենալ մի երիտասարդ տղի վրա: Բայց ես ամոթիցս աշխատեցա հանդարտ երևել ընկերոջս աչքին ու սկսա այսպես պատմել.

— Երազիս մեջ տեսա, իբր թե, ես և Մարին ման էինք գալիս Ամառվա պարտեզումը. ես իմ հասարակ ուսանողական հիշողություն ունեի վրաս, բայց Մարին այնպես զաբոսարկած էր, որ նորա քնական գեղեցկությունը մեկմեկով էր ավելացել: Մոտերես անցնողները հիանալով նայում էին նորա վրա. թեև Մարին աս-

նարյուն և անաարբեր էր այդ ընդհանուր զարմանքին. բայց ինձ շատ անդուրեկան էր, երբ ո՛վ ասես իր լիրբ աչքերը զարձնում էր նորա վրա: Մին էլ հանկարծ մի զինվորական վազելով եկավ ետևներես, բրունեց Մարիի կոնեն և բռնաբար խնց ինձանից: «Մի-քայել, ասաց Մարին կողկողազին ձայնով, հասի՛ր ինձ օգնության, արի՛, արի՛»: Միրտս արշուն կոխած վազեցի ետևներեն. բայց նոքա այնպես շուտ էին գնում, որ անհնարին էր նոցա հասնելը: Պարտեզեն դուրս գնացին դեպի Նևա, բայց ես դեռևս շատ հեռու էի նոցանից, զինվորականը գնաց գետի ափը, վարձեց նավակ, բռնությամբ մեջը նստեցուց աղջկանը,— ես միայն այն ժամանակ մոտեցա գետին, երբ նոքա արդեն Նևայի մեջտեղումն էին: «Մարի՛, Մարի՛, կանչեցի, աղաղակե՛, օգնություն կանչե՛»: Բայց ձայնս չէր հասնում նորա ականջին: Ուրիշ նավակավարները ծիծաղելով նայում էին վրաս ու ասում էին. «Ի՞նչ է, պարոն, տաբա՛ն թռչունը. տո՛ւր հարյուր մանեթ՝ ետևներիցը կհասնենք, թե չէ՛ կորա՛վ ու կորա՛վ աղջիկը»: Եվ ոչ ոք չէր կամենում ինձ կարեկցել: Մարդկանցմե օգնություն չունեի. բարկությունիցս կրակված աչքերս երկինք բարձրացուցի, ի՞նչ տեսնեմ, օդի մեջ Մարին թռչում էր և նորա ետևից նույն զինվորականը ընկել էր, ուզում էր բռնել: Մարի՛, Մարի՛, կանչում էի ցածից, իմ մոտ իջի՛ր, ցա՛ծ իջիր: «Չէ, ասաց նա, ես երկինք կերթամ, երկրումը շար մարդիկ են կենում»: Մարի՛, շարունակում էի աղաղակել, իջի՛ր իմ մոտ, իջի՛ր, ոչ ոքից մի վախենալ: «Չեմ իջնիլ. վախենում եմ, այդտեղ ամենքը ինձ վնասել են աշխատում»: Մարի՛, ինձ չե՞ս սիրում, Մարի՛, ինձ մոռացա՞ր, ի սեր աստուծո, իջի՛ր ցած, երկինք մի՛ երթալ: «Դու ինձ չե՞ս սպանիլ», հարցուց Մարին ցած իջնելով: Չէ՛, չէ՛, չեմ սպանիլ, պատասխանեցի: Մարին հոգնած էր և հազիվ կարողանում էր թռչել, հանկարծ ուժը թուլացավ և օդի մեջ պտուտ գալով գլխիվայր գետին գլորվեցավ ոտերիս մոտ: Կոացա, տեսնեմ՝ անշարժ էր, երեսի գույնը սպրդնած, շունչ չի կար վրան: Ա՛խ, մեռավ, մեռավ աղջիկը, ասացի ու զարթեցա:

— Ի՞նչ ես կարծում, Հովհաննես... ի՞նչ պիտի նշանակե այս երազը:

— Դու մեկ իմաստուն տղա ես, մի՞թե այդպիսի բաներուն կարող ես հավատալ. շորս-հինգ ժամ տոռաջ չէ՞ր, որ ինձ բարի խրատ ավիր երազին չի հավատալ. այժմ իմ մեկնությունն ես

Տանկցնում, որ հետո էլի վրաս ծիծաղես: Չէ՛, ես այդքան չեմ հի-
մարանալ,— ասաց սիրտը ինձանից ցաված:

— Հիմի ի՞նչ եղավ քեզ, ինչ զարմանք մարդ ես եղել. հա-
նաք էլ չի կարելի անել քեզ հետ:

— Ուզես հանաք արա՛ ուզես մանաք. իմ կարծիքը այն է, որ
երազի ու խնկության մեջ անմեկնելի կապ կա, ե՛րբազը թեև ոչ
միջոտ և ոչ ամեն ային-օյին հանգամանքումն, բայց երբեմն կա-
տարվում է, և այդ այն ժամանակ, երբ որ մարդուս կյանքումը մի
մեծ և նշանավոր փոփոխություն է լինելու: Աստված տա, որ
ասածներս սուտ դուրս գան,— ես հոգովով շափ ուրախ կլինիմ.
բայց... հոգիս վկայում է, որ այդ ճանչվորությունը աղջկա՛ հեռ՝
երկուսիցդ մինի գլխուն մեկ փորձանք պիտի բերես: Էլի եմ ասում՝
աստված անե, որ գուշակությունս չկատարվի: Միքայել, արի՛
այս անգամ չես իմ բարի խրատը, թո՛ղ այդ աղջկան իր բախտին,
մի՛ խառնվիր նրա գործերի մեջ, մի՛ շարունակիր սկսած ճանչվո-
րությունը, միանգամայն ձե՛ռք վեր առ նորանից. ոչ դու առանց
բռնան, և ոչ նա առանց քեզ— չեք կորչիլ: Երեւակայե՛, որ դու քա-
ռորդ ժամ կամ առաջ կամ հետո անցնելու լինելի կամրջի վրա-
յով— չպիտի խո տեսնելի նորան, եթե չտեսնելի՛ չի պիտի ընկ-
նելի ետևից. եթե ետևից չընկնելի՛ չէիր սիրահարվիլ, կնշանակե,
որ նա քեզ չէր ճանչնալ և առանց քու օգնությունը կազատեր
գրուխը այդ նեղ դրութենեն: Աստված ողորմած է. բարի մարդիկ
ամեն տեղ կան, և նա մեկ կերպով կգտնե ճար իր ցավին:

— Ես լուռ էի. երազս ինձ այնպես շփոթել էր, որ կիսով շափ
համոզվեցա ընկերոջս խրատեն և խոսք զտա նորան պատասխա-
նելու:

— Ասա՛, խնդրեմ,— շարունակեց Հովհաննեսը,— դիցուք թե
խելո՞ք մարդիկ երազը այսպես են մեկնում թե՛ մարդ արթուն ժա-
մանակը ինչ բանի վրա որ մտածե, խոսքը կամ ուշկը դարձնե՛
գրեթե նույն բանը մոտ ի մոտո տեսնում է երազումը: Այդ ես
հասկանում եմ և հավատում եմ: Բայց ինչպե՛ս կմեկնես իմ տե-
սած երազը. ես խո չգիտեի, որ դու այդ ճանչվորությունը արել ես
կամ անելու ես, այն ևս կարծել չես կայող, որ ես մտքիցս եմ
հնարել այդ երազը, ինչու որ՝ դու տակավին աղջկա հետ ծանո-
թանալդ ինձ չէիր ասել, որ ես քեզ պատմեցի տեսած երազս:

— Փոքր ինչ լուռությունից հետո՛ նորից ասաց.

— Չէ՛, չէ՛, չէ՛, ինչ ուզես կարծե, ի՛նչ ուզես մտածե՛ այդ

աղջկա գլխուն մեկ փորձանք պիտի գա քու պատճառով: Ես թեև
տեղով չեմ կարող ասել, թե նորա անբախտությունը ուրտեղաց
պիտի ծագի և ինչո՞վ պիտի վերջանա, բայց գլուխս կուտամ
կտրելու, եթե նախազգացմունքս չկատարվի. ա՛յ, կտեսնես:

Ճրագը հալվել, պրծել էր, միայն տակի փաթաթած թուղն էր
վառվում որ մեկ մեծ լույս էր տալիս, մեկ խավարում էր:— Հով-
հաննեսը վեր կացավ տեղեն, հանվեցավ ու պտակեցավ: Բայց իմ
աչքերես քունը իսպառ փախել էր: Ճրագը սկսավ շրթ-շոթալ ու
հանգավ, սենյակը լցվեցավ նորա խեղդաշունչ ծխովը:

— Բարի գիշեր,— ասաց ընկերս, շուտ եկավ անկողնի մեջ.
սկսավ փսսալ, շվշվալ, խոխալ ու վերջապես անուշ-անուշ քուն
եղավ:

Մոլորած երեւակայությունս սկսավ առաջիս հաղարունեկ գա-
նազան պատկերներ նկարել՝ մեկմեկե քստմունքի, մեկմեկե դար-
հուրելի: Ո՛չ երազ էր տեսածս, ոչ տեսիլ, այլ երկուսին էլ նման
մի բան: Այս մութ տեղումը, այս գերեզմանական լուռության մեջ՝
Հովհաննեսի գուշակությունը սաստիկ ազդում էր ինձ: Դագաղներ,
շիրիմներ, սուգի հալավներ, մեռելաթաղներու շահեր, մարգու-
կմախքներ էին անդադար երևում աչքիս ու սանդարմետական
ժափ ծիծաղով պտուտ ու պար գալիս շորս կողմումս: Մահվան
քրտինք իջավ վրաս: Վախիցս գլուխս ծածկեցի թիկնոցով. բայց
այնտեղ էլ դադար չունեի. շնչիցս տաքացած օդը խեղդում էր ինձ:
Ամոթս գալիս էր ընկերոջս զարթեցնելու, որ փոքրոգությունս չի-
մանա նա և չծիծաղի վրաս: Այսպես հինգ թե շորս տաժանական
ժամ անցուցի,— թշնամիս չհանդիպի՛...

Վերջապես՝ լույսը սկսավ կամաց կամաց պատուհանեն ներս
մտնել, զանգակները տխուր ղողանջում էին հեռվից, ու աքաղաղ-
ները ժամանակ առ ժամանակ բարեւում էին լուսագալը: Այլևս
միտս չէ, երեի թե այդ միջոցին բունս տարել էր:

Մյուս օր, առավոտը, երբ որ տնից դուրս եկա ու փողոց
մտա, ի՛նչ ասել կուզե, որ առաջին գործս եղավ ուղիղ և գրեթե
վազեվազ դեպի նամակատուն երթալ (դռնասյանը արդեն վավե-
րացրել էր տվել հայտարարությունը թաղապետի գրասենյակում):
Դիտցողը գիտե, որ Սմոլենսքեն մինչև նամակատուն առ սահալը

կրինի երեք վերստ, որն ես անցա կես ժամվա մեջ: Ավագ, որ ոչ խեղճ Հովհաննեսի կարիքը և ոչ մինչև անգամ իմ լցնելու համար էր այդ շտապ տագնապս, այլ մի օտար աղջկա համար, որին արդեն սիրել էի առաջին անշահասեր ու անկեղծ սիրով: Զգիտեմ, այժմվա երիտասարդներին հայտնի՞ է արգոյք առաջին սիրո զգացմունքը: Եթե հայտնի է, նոքա ինձ կհասկանան, և իմ վրա ոչ կծու ծաղրով և ոչ արհամարհական ժպիտով կնայեն. բայց եթե հայտնի չէ... բայց եթե նոցա սրտի վարդը բաշտվել գրեթե ոչ սոխակի երգի, այլ ոսկու ձայնի համար, այն ժամանակ ես նոցա ասելու ոչինչ չունիմ: Վա՛յ նոցա:

Աղջիկ, խոսքս քեզ եմ դարձնում: Երբ որ մի երիտասարդ սևորակ աչքերը քու սիրտը թափանցեց ու մեջը մի ջերմ հեղուկ լցրեց. եթե մի մատաղահաս թարմ և առույզ պատանիի՝ ձեռքը օձկանը քու երակների մեջ էլեկտրական զորություն մտցուց. եթե մի երիտասարդի քու մտքից անցնելը, ասես թե, ետևեն վարդ ու մի երիտասարդի քու մտքից անցնելը, ասես թե, ետևեն վարդ ու մի երիտասարդի քու սիրտը նվաղի ու մարմնուղ մեջ մի դուրեկան սարսուռ ընկնի,— իմացի՛ր որ այդ քու առաջին, սուրբ անկեղծ և աստուծո օրհնած սերն է. անվախ գնա նորա առջև, բռնա՛նք այդ սրբությունը ու էլ ձեռքից բաց մի՛ թողնիլ: այդ քու ճակատագիրն, այդ քու բախտն է. մի՛ դավաճանիլ առաջին զգացկառագիրն, այդ քու բախտն է. մի՛ դավաճանիլ առաջին զգացմունքդ, առաջին սերդ, իմացի՛ր որ դու արդեն միավորված ես մտքով, և երկինքը օրհնել է քու ընտրությունը: Բայց... նայն, զգուշացի՛ր այդ առաջին սերդ փոխելու գահի, հարստության, ոսկու, փառքի, կյանքի հարմարության հետ: Մի՛ ծախի հոգիդ, ապա թե ո՛չ դառնապես կղղջաս մի օր. ինքզ քեզ ծախելը այնուհետև սովորական բան կդառնա քեզ համար:

Այո՞, ես սիրել էի արդեն Մարիին,— խոստովանում եմ այդ աշխարհի առջև և այժմ ոչ միայն չեմ զղաջել կամ ամաչում եմ պատանեկան զգացմունքես, այլ ընդհակառակն, պարծենում եմ, մխիթարվում եմ, որ ես ևս սրտիս մեջ կրել եմ աստվածային կայծ... Սերը, ինչպես և ամեն առաքինություն, աստուծո առանձին շնորհն է. ամեն մարդու «խելքի բան չէ» ջերմ և անկեղծ սիրտը: Լուկ սիրելու առարկան և ոչ թե նորա ածանցական մասնիկները՝ օժիտի, ապագա ժառանգության, շահաբեր ազգակցության, հովանավորության և այլն, և այլն, և այլն անուններով:

Յամակատնումը ձեռքս տվին, ինչպես հայտարարության մեջ

ևս նշանակած էր, երեսուն ութը: Գ. Ք. և Մ. Ք. բարեկամներն էր. այդ փողով պիտի տպելի մեր շարագրությանը ժողովածույթի առաջին տետրը:

Այն օրն ինձ այնպիսի բան պատահեցավ, որ մինչև այժմ ինքս ինձի մեկնել չեմ կարողանում, և եթե պատմեմ, գիտեմ, շատերին անհավատալի պիտի երևի, այսուամենայնիվ դա այնքան ճշմարիտ է, որքան ճշմարիտ է արեգակի ամեն ցերեկ, ու աստղերու ամեն գիշեր երկնքի վրա փայլելը: Գիտեմ՝ կասկածամիտ մարդիկ այս պատմելու միջնավեպս պիտի համարեն իմ մտացածին deus ex machina-ն՝— այդ շատ լավ գիտեմ, բայց ի՛նչ փուլթ. իրողությունը կմնա, թեկուզ անմեկնելի էլ լինե՛ր նա մարդոց համար: Ո՞վ չգիտե Շիլլերի ասածը, թե՛ աշխարհիս երեսին դեռևս շատ անմեկնելի գաղտնիք կան: Իմս էլ նոցա թվումը համարեցեք:

Լսած կա՞ք արդոյք Պետերբուրգի ШУКИН ДВОР ասած վաճառանոցի մասին, որին հայերս Գող-բաղար էինք ասում, ուր կուպեկանոց լաթեն բռնած մինչև հազար մանեթանոց սամուրի մուշտակ կարող էիր գտնել, ուր Суздаль-ի БОГОМАЗ-ների² պատկերներն մեջ հնագեղեղ կարողացել է փոշիի տակից դուրս հանել Ռաֆայելի, Քորբելլի ու Վան-Դելսթի անգին պատկերները, ու ամեն տեսակ հին, ժանգոտած, կոտրատած, պատառոտած երկաթներ, հալավներ, գրքեր, շալեր, ինքնաեռներ, կոշիկներ, միով բանիվ՝ ինչ որ սիրտդ ուզենար, կարող էիր ձարել, գրպանումդ գտնված մի հնավաճառ խանութպանի մոտ վաղուց մի հնաձև գրասեղան էի հավանել, որն ոչինչ աչք շլացնող արտաքին տեսք չունե՛ր, ոչ նորաձև էր և ոչ էլ հարմար էր գործադրության համար. ինքը մի հաստափոր, կարճտանի ու ճնոցի մեծությամբ մի սեղան էր, վրան ու մեջը անհամար զորոցներ կային՝ ո՛րը թանաքամանի, ո՛րը բանալիների, ո՛րը ծիրախոտի, ո՛րը այս և ո՛րը այն— հազար տեսակ մանր-մունր առարկաների համար: Ես էլ չգիտեմ թե՛ ինչի՞ն էի հազմանել. յուր տգեղությունով ու անճոռնիությունով, հավատացնում եմ, ներս մտցնելու կարասի չէր, բայց ամեն անգամ որ Գող-բաղար էի պատահում՝ մի անհայտ զորություն, կարծես թե, քաշում էր ինձ այդ հնավաճառ խանութպանի մոտ, և ամեն մո-

¹ Մարբված բան, շինծու:
² Սրբապատկերներ նկարող անշնորհք նկարիչ:

տենալիս՝ անպատճառ ծախս էի անում այդ գրասեղանը, թեև շատ անգամ գրպանումս կոպեկ էլ չունենայի:

Հենց որ բարեկամիս ուղարկած երեսուն մանեթը ձեռքս առի, իսկույն միտքս եկավ շնաշխարհիկ գրասեղանը. և ի՞նչ եք կարծում. ո՛չ դիպի Մարին շտապեցի, ո՛չ դեպի Հովհաննեսը, այլ ուղիղ գնացի հնավաճառի խանութը և, ըստ սովորությանս, սկսա հազարերորդ անգամվա ծախսս:

— Կարժե՞ որ ձեզ հետ գլուխ մաշեմ,— ասաց այս անգամ վերավորված խանութպանը. դուք ինչպես նկատել եմ, միայն ծամանակ անցնելու համար եք գալիս ու ծախս անում, գնել խո ա՛նհե՛նկին մտադիր չեք,— ասաց ու խստադեմ երես արավ:

«Չէ՛, չէ՛, ասացի, անպատճառ միտք ունիմ գնելու, եթե աժան տաս»:

— Առանց նորան էլ չնշին գին է պահանջածս,— ասաց մարդը, որ ինքն էլ, ինչպես երևում էր, սաստիկ զզվել էր այդ գրասեղանեն, որն նորա փոքրիկ խանութի գրեթե կես մասն էր բռնել.— մանեթ ու կեսը ի՞նչ փող է, որ խնայում եք... հավատացնում եմ ձեզ, որ վրան մանեթեն ավելի փայտ կա, եթե վառելու լինես. իսկ գամե՛րը, իսկ պտուտակնե՛րը, իսկ կղպակներն ու բանալիները... ի՞նչ եք ասում, գրեթե ձրի եմ տալիս, դուք էլի ծախս եք անում...

«Վաթսունհինգ կոպեկի կուտա՞ս»,— ասացի: (Ուրիշ անգամները հիսուն կոպեկից ավելի չէի տալիս: Աչքս վախեցել էր ոռս վաճառականներից, պատճառ որ՝ մի որևէ բան գնելիս նոցա պահանջած գնի քառորդն եմ վճարել ապրանքի համար և այնուամենայնիվ դարձյալ միշտ խաբվել եմ):

— Հավատացնում եմ ձեզ, որ ինձ ավելի թանկ արժե,— ասաց ըստ սովորության ոռս վաճառականների. ինքս մանեթ ու քսանհինգ կոպեկ եմ տվել. մի՞թե քսանհինգ կոպեկ շահ պիտի չունենամ, չորս տարից ավելի է, որ խանութիս մեջ տեղ է բռնում.— ասաց ու բարկություն բերց հավանած գրասեղանի վրա, ու հետո ավելցուց՝ էլի քանի ժամանակ կսպասեմ, եթե ծախեցի՞ լավ. թե չէ՛ ահա երդվեցա, կառնում կացինի տակ կդնեմ ու ինչպես որ կա՝ փշուր-փշուր կանեմ ու հնոցը կձգեմ:

Ճշմարիտ պետք է ասեմ, որ շատ կոպտատարազ ու անճոռնի շինված բաներ էի տեսել, բայց այս գրասեղանի նման այլանդակ

բան կյանքումս տեսած չէի, ինչի՞ն էի հավանել, թեկուզ մեռցընեք՝ մեկնել չեմ կարող:

Խանութպանը շարունակեց՝ կուտա՞ք մեկ մանեթ: Ասաց ու ափը ափիս խփեց, ինչպես որ այս ծեսը սովորական է ծախող ու գնողի մեջ:

Ես էլ նորա ձեռքը առի՝ ահա քեզ յոթանասուն կոպեկ ու մեկ գոռ չեմ ավելացնիլ,— ասացի ու ափս ափին խփեցի:

Նորից առավ նա իմ ձեռքս՝ իննսունհինգ կոպեկ կուտա՞ս,— ասաց, ու ափը ափիս խփեց:

Եվ այս կերպ փոխ առ փոխ մեկ մեկի ափին խփելով՝ բանը հասուցինք ութսուն կոպեկի:

— Возьмите его к чорты!— ասաց հնավաճառը, ապրանք խո չէ. խայտառակություն է խանութիս մեջ: Խեղճ մարդու երեսից քրտինքը կարկտի պես թափվում էր: Փողը տվի խանութպանին:

Չարմանալու բան. բնավորությամբ ես ոչ ժլատ եմ և ոչ փողասեր. բայց չգիտեմ ինչու սաստիկ սիրում եմ խանութպանների հետ համառությամբ ծախս անել:

Վարձեցի սալլապան. երեք հոգի հազիվհազ կարողացանք սալի վրա դնել այս փայտաշեն եգիպտական բուրգը, որն տարինք զիարդ և իցե տեղավորեցինք մեր սենյակի մեջ: Հովհաննեսը դեռևս Գեղարվեստական Ճեմարանեն վերադարձած չէր:

Ինչպես որ ասել էի, գրասեղանը անթիվ անհամար մանր ու խոշոր զգրոցներ ուներ, նորա վրան և կողքերին հարյուրեն ավելի պղնձագլուխ գամեր կային՝ իբր թե զարդի համար, բայց բոլորը ժանգոտված, կանանչ գույն ստացած. սեղանի վրայի շուխան (մահուդ), նորա փայտեղեն մասունքը բոլորովին շպարված էին չորացած թքով, տղմով ու հազար տեսակ կեղտերով. սենյակի օդը մի րուպի մեջ ապականվեցավ, խոնավ, բորբոսած մառանի հոտ ստացավ: Իսկույն գնացի մի կոնք (լագան) ջուր բերի, թաթախեցի մեջը սպունգը ու սկսա լվանալ. երեք անգամ կոնքի միջի ջուրը փոխեցի, չորրորդ անգամն էլ նա թանաքի պես սև էր: Ինչպես և իցե փոքր ինչ մաքրություն տվի սեղանիս տախտակեղեն մասին ու հետո սկսա գամերի ժանգը մաքրել. առի շուխայի կտոր, թաթախեցի քացախախառն կավիճի մեջ ու սկսա պինդ պինդ գամերին քսել: Գամերից միևն յայս կերպով մաքրելիս հանկարծ մի թիկոց լավեցավ. նայեմ՝ մի գաղտնի զդրոցի կափարիչը բացվել է. մի՛ ասիլ, որ իմ վերջին մաքրած գամը և այդ բաց-

ված գզրոցի կափարիչը իրար հետ կապակցութուն են ունեցելը
ինչ և իցե: Այս կերպով առջևս մի նոր գզրոց բացվեցավ, որի
մեջ տեսա մեծ ու փոքր շատ կապոցներ ու ծրարներ. սկսա նո-
ցա բանալ ու մեջերի գտնվածը աչքե անցնել: Որի մեջ հին ձեռա-
գիր թղթեր էին, որի մեջ գրիչներ, մատիտներ, կնիքներ, կնքա-
մոմի կտորներ, իսկ ուրիշների մեջ կային ականակուռ մատանի-
ներ, մարգարտի շարոցներ, ոսկի ու ակնահեռ քթախոտի տուփեր,
և մի կապոցում «դիփ-նոր» խոշոր ոսկի դահեկաններ, Մարիա
Քերեզա կայսերուհի՞ն օրով տպած լատինական գրերով, թվով
հինգ հարյուր հատ: Մալ մնաց. որ խելքս պիտի թռչեր գլխես:

Առաջին նվագ կարծում էի թե՛ երազի մեջ եմ, և որովհետև
երազումս փող գտնելը ինձ շատ անգամ պատահել էր, և որով-
հետև կարծում էի թե՛ այս ևս երազ է, ստուգելու համար, սկսա
մազս քաշել ու միսս կճմեմ: Տեսնում եմ որ ցավում է, կնշանա-
կե՛ այս բանը երազ չէ, այլ ուրախալի իսկականութուն: Մի րո-
պեի մեջ հազար տեսակ անելիք բաներ մտքովս անցան: Վերջի
որոշմունքս այս եղավ, որ իսկույն հրավիրեմ բնակած տանս մեջ
ամեն գտնվողներին և ցույց տամ այս գտած բաներս: Ինչպես որ
մտածում էի այնպես էլ կատարեցի: Տան մեջ ով կար շկար,
ամենքին հրավիրեցի, գտած առարկաներս մի առ մի ցույց տվի
նոցա և հայտնեցի, որ անհապաղ պիտի տանեմ և ներկայացնեմ
քաղաքապետին:

Ներկա գտնվողները, ո՛րը ինձ Դոնքիխոթ էին անվանում, ո՛րը
անփորձ երիտասարդ, որը թերևս խելագար էին կարծում. շա-
տերը խորհուրդ էին տալիս հետ կենալ այս տղայամիտ որոշ-
մունքես և օգուտ քաղել բախտի այցելութենեն, որ մարդուս կյան-
քումը կամ մի անգամ է պատահում, կամ ոչ երբեք. բայց ես ոչ
մի բուպե շտատանեցա իմ հաստատ որոշման մեջ և ոչ մի ան-
գամ շփոշմանեցա: Եթե գործիս մեջ մի գովելի բան կա, դորա
համար ո՛չ ինձ, այլ իմ պատվական ծնողներին պետք է «շեն կե-
նաս» ասել: Այդ, հավատացնում եմ, ո՛չ դպրոցի, ո՛չ համալսա-
րանի և ո՛չ հասարակական կյանքի ազդեցութուն է, այլ առտնի
գառտիարակության: Ինչևիցե:

Հինգ հարյուր ոսկին, ակնահեռ մատանիները, մարգարտի
շարոցները, ոսկի տփերը, ձեռագիր թղթերը, միով բանիվ ինչ որ
գտել էի գաղտնի գզրոցի մեջ, բոլորը մի անագին կապոցի մեջ

դրինք. ու թաղապետի— որին մի հրամանով դնապանը հրավի-
րել էր— հետ նստանք կառք ու տարինք ուղիղ քաղաքապետին:

Երբ որ քաղաքապետը բանի էութունը իմացավ, ասաց ինձ,
«Պարո՛ն ուսանող, դուք հարո՛ւստ մարդու որդի եք»:

— Ո՛չ,— ասացի, իմ հայրս մի հասարակ... է, և այս րո-
պեիս...

«Ափսո՛ս, ափսո՛ս,— ասաց քաղաքապետը,— բայց բանը
այն չէ. խոսքս դարձնում եմ ձեր վրա, մի՞թե չգիտեիր, որ դուք
այն ժամանակ պարտավոր էիք այս առարկաները ինձ ներկա-
յացնելու, երբ փողոցի մեջ գտած լինեիրք. բայց որքան իմ խելքս
կտրում է, այս առարկաները ո՛չ կորցրած են և ո՛չ գտած. դուք
սոցա գնել եք, թեև շատ աժան գնով, ուրեմն դոքա ձեր լիակա-
տար սեփականութունն են. թղթերից ես տեղեկացա, որ սոցա
տերը կնցել է Ելիզավետա Պետրովնա կայսերուհիի օրով, ուրեմն
ես մինչև անգամ շեմ համարձակում մի բուպե ձեզ շքնդունել այս
թանկագին առարկաների անձնիշխան տերը. իմ կարծիքով դոքա
ուրիշ տեր պիտի շունենան. երկբայում եմ, որ սոցա մի ժամա-
նակվա տերը այժմ ժառանգներ ունենա»:

— Այս առարկաները ես առաջարկում եմ տերությանը այն
հիման վրա, ինչ հիման վրա որ գետնափոր գանձերն ու հնագար-
յան հազվագյուտ առարկաները հրամայած է տերությանը ներ-
կայացնել,— ասացի:

«Այդ շուկ բան է,— պատասխանեց քաղաքապետը.— Ես վըս-
տահ եմ, որ տերությունը ձեզ չի զրկիլ և այս առարկաները,
առանց ձեզ առատաձեռն վարձատրելու, իրան չի սեփականիլ.
կամ կհրամայի ձեզ վերադարձնել, կամ կգնե ձեզանից յուր թան-
գարանի համար: Այսպես, թե այնպես առ ժամանակ մի թող մը-
նան սոքա իմ մոտ. իսկ դուք թողեք ինձ ձեր հասցեն. ես այսօր
եեթ ա՛մեն պետք եղած կարգադրութունները կանեմ: Բայց որով-
հետև ձեր խոսքերեն նկատեցի, որ դուք չբավոր եք, ուրեմն ձեզ
անշուշտ փող պետք կլինի: Ահա՛ ձեզ առ ժամանակ (ծոցից հա-
նեց թղթակալը) հազար հինգ հարյուր մանեթ. իսկ ձե՛ գյուտը,
հուսամ տասը հազար ոտբլի ավել կարժե. ուրեմն ինչ որ տերու-
թյունը կզնահատե և կնշանակե, այն անկորուստ ձեզ կհասցնեմ,
վստահ եղեք»:

Եվ այսպես, ես մի բուպեի մեջ եթե ոչ հարստացա, գեթ պատ-
վական կերպով ապահովվեցա. մի խելճ ուսանողի համար սո-

ձեռն պատրաստ 1500 ուրլին և ապագայի 10,000-ի հույսը ուղն-
չով պակաս չէ վաճառականի գուտ միլիոն մանեթից:

Մեր, փող ու ջահելութուն, ի՞նչ կախարդական ու հոգեպա-
րար խոսքեր են, շատի՞ն այցելում է այդպիսի բախտ:

Ես ունեցա այդ բախտը և վայելեցի ուղիղ... Երեք օր:

Ն

Մյուս օր մայրաքաղաքի լրագիրների սյունակները լցրած էին
այս անցքի մանրամասն նկարագրություններով, իսկ հետևյալ
օրը քաղաքի մեջ լուր փոփեցավ, որ իմ ծանոթ հնավաճառը յուր
խանութի վերնասնունը վզին չվան ձգել ու կախվել է: Բայց թող-
նենք այս միջանկյալ մանրամասնություններն ու դատնանք վե-
պիս գլխավոր առարկային:

Քաղաքապետին թողած՝ իսկույն կառք բռնեցի և ուղիղ գնա-
ցի Милютинский ասված նպարավաճառանոցը: Ինչ որ աչքիս
չնկավ՝ ապուխտներ, երշիկներ, տեսակ-տեսակ պանիրներ, կոն-
սերվներ, դյուշես տանձեր, թեյ, սուրճ, շաքար, շոկոլատ, պաք-
սիմատ ու հազար տեսակ այսպիսի ուտելու պաշար ու շոր խոր-
տիկներ գնեցի, նորա մի մասը առտելչիկի ձեռքով Սմոլենսք բնա-
կարանս ուղարկեցի, իսկ մյուսը հետս առած գնացի Մարիի տուն:
Ինչ մեղքս պահեմ, Ելիսեևի գինեվաճառանոցն ևս հանդիպեցի ու
քանի մի շիշ շաթո-իքեմ, շաթո-լաֆիթ ու շամպայն գնեցի:

Մարին տրտուտ նստած էր. երեսը երեկվանե ավելի գունառ
ու նիհար: Հացի փշրանք անգամ չի նկատեցի նորա սեղանի կամ
շավերած գետնի վրա. թեյի կամ սուրճի, կամ առավոտվա նա-
խաճաշիկի հետք չէր նշմարվում, թեև ժամը երկուսի մոտ էր.
ակներև էր որ խեղճ աղջիկը այնքան ժամանակ դեռևս մի կտոր
բան չէր գրել բերանը: Պառավները իմ գալուստ սկսան քթերի
տակ փնթփնթալ, թեև չէին համարձակվում կոպիտ խոսքեր ասել.
Երեկվա սաստս, ինչպես երևում էր, բավականին ազդել էր նո-
ցա վրա:

— Ինքնա՞ն, իսկո՞ւյն,— կանչեցի այն ժամանակվա զինվո-
րականների ձայնով:

Մեր ժամանակ ուսանողները դեռևս այնպես պատվարկ չէին
ստորակարգ ժողովրդի աչքում, ինչպես որ վերջերը եղան. ուսա-
նողը յուր եռանկյունիով, սուրով ու ցուլուն կոճակներով հարգանք
էր ազդում խաժամուժին ու նորընտիր անփորձ զինվորներին, և
այս վերջինները միշտ զինվորական պատիվ էին տալիս մեզ, որից
մեր սիրտը մի մատ եղ էր կապում, և այդ մանավանդ այն ժա-
մանակ, երբ մեզ, փողոցներումը զբոսնելիս, ուղեկից էին կար-
կարող բարեկամուհիներս: Է՛հ, ջահելութուն է՛լի:

Երբ որ ուտելիքներին հոտը առավ Մարին, կարծես թե յուր
խորունկ թմրութենեն սթափվեցավ. տեսնում էի, ինչպես խեղճ
աղջիկը, թեև թաքուն, բայց թուքերը անդադար կուլ էր տալիս.
Հայտնի նշան էր նորա սաստիկ անոթությանն ու գրգռված ախոր-
ժակին...

Վատ բան է քաղցածությունը, աստված թշնամիիս չի տա:
Պետերբուրգի չքավոր աղջիկներու կես մասը զոհ է գնում քաղցի
բուսեական հանդարտեցնելուն, հավատացնում եմ ձեզ: Պետեր-
բուրգի քաղցը մի ուրիշ, ճնշող, հալումաշ անող, տակավ առ տա-
կավ սպանող զորութուն ունի: Այդ ես փորձույս գիտեմ...

Հայե՛ր, հայե՛ր, միշտ արթուն աչքով հսկեցեք ձեր արեհա-
կից աղքատ ուսանողների վրա, որոնց բախտը ձգել է Պետեր-
բուրգ, մի՛ խաբվիք նոցա վայելուչ արտաքինեն ու նոցա ինքնա-
զոհությամբ լի խոսքերեն. առաջինը նոցա ծաղիկ հասակի նշանն
է, իսկ երկրորդը՝ նոցա ազնիվ հպարտության... Եթե ինձ հարց-
նեք, ես կասեմ որ ամեն հայի վրա սուրբ պարտավորություն կա
յուր կամավոր տուրքը (հայր ի բնե ողորմած է, այդ աներկբայելի
է) այս աստիճաններու վրա բաժանել. յուր առաջին օգնությունը
պիտի հասցնե նա ուսանողներին, երկրորդը՝ ազգային գործերու,
երրորդը՝ եկեղեցին, իսկ չորրորդը՝ տեղական չքավորներուն, աղ-
քատներուն և յուր տնանկ ազգականներուն: Ուսանողի ամենա-
քատներուն և յուր տնանկ ազգականներուն: Ուսանողի ամենա-
փոքրիկ պիտույք լցնելը սուրբ պարտք է ամեն մի կուլտ-փոր հա-
յի... և ի՞նչպես կարելի է անխնամ, երեսի վրա ձգած թողնել մեր
ազգության ծաղիկները, մեր ամենաազնիվ կրտսեր եղբայրներուն,
որոնք մի օր պիտի լինին մեր ազգի համար այն, ինչ որ չկարո-
ղացան լինել ո՛չ ոսկիի մեջ խեղդված վաճառականները, ո՛չ պատ-
վախաչերով ծանրաբեռնած մեծավորները և ո՛չ բերանները լի
աստվածային օրհնությամբ հոգևորականները: Հայոց ուսանողու-
թյունը կամավոր ողջակեզի գառն է ազգային սեղանի համար:

Գուժ, գուժ և շատ գուժ խեղճ հայ ուսանողներին:

Հական թոթափել՝ շերտ-շերտ կտրտեցի փափուկ հացք, ապուխտը, պանիրը, երշիկը, պատրաստեցի մյուս խորտիկները ու համեցեք արի Մարիին: «Մինչև ինքնաեռի եփ գալը, այս պանիրից մի փոքր խմեցեք», ասացի ու բացի լաֆիթի շիշը ու երկու բաժակ փրփրացուցի ու ինքս էլ սկսա ոչ թե ուտել, այլ խժոնել:

Երբտասարդի ուտելու մեջն անգամ բանաստեղծություն կա, ինչպես և նորա ամեն մի խոսքի, գործքի ու շարժումների մեջ, և թե միայն նա երիտասարդ է և ոչ թե սևամազ ծերուկ:

Չառամած հայ-կրեստոս, միլիոնիդ ո՞ր մասը կուտայիր, կյանքիդ այդ վերջին բույները էլի գեթ մի անգամ ուսանողի ախորժակով ուտելու, խմելու... Արդյոք— շատ անգամ մտքիցս անցնում է— այդ անպտուղ և անզոր նախանձը չէ՞, որ քու սիրտը քար է դարձնում ուսանողին օգնության հասնելու համար: Խոսք չունիմ, ժամանակե ժամանակ դու շինում ես եկեղեցի, դու կանգնեցնում ես դպրոցի շենք, դու անդամալուծներին ապաստարան ես տալիս. այդ շատ գովելի առաքինություն է. բայց դու այն էլ շատ լավ գիտես, որ ո՞չ քարաշեն եկեղեցին, ո՞չ քարաշեն դպրոցը և ո՞չ քարաշեն անկելանոցը ունի սուր փղոսկրյա ատամներ, երկաթ մարսեցնող ստամոքս ու աշխարհքի ամեն բերկրությունը կուլ տվող ախորժակ: Այսուամենայնիվ, ես քու առջև ծնկաչառ կանգնած, աղաչում եմ քեզ, ով հայ ծերունի կրեստոս, խրդա խեղճ հայ ուսանողի վրա.— դու էլ մի օր երիտասարդ ես եղել, գոնե քու ամենաթանկագին օրերդ հիշե և հանուն նոցա փարատե սրտեդ այդ տնաքանդ նախանձը: Ես քեզ շատ լավ ճանաչում եմ, դու ավելի նախանձոտ ես, քան թե ժլատ:

Խոսքս դարձնում եմ դեպի մեզ՝ Մարիին և ինձ:

Շերտ-շերտի ետևե կուլ էին գնում հազար տեսակ հանաքներով ու ծիծաղներով այն թանկագին խորտիկների պաշարքը, որոնց հինգ մասերը աշխարհիս, իրանց բոլոր արվեստի ուժը՝ գործ դնելով, պատրաստել էին մայրաքաղաքների ատամնազուրկ և ապականված ստամոքսով մեծատունների համար: «Տեր աստված, տեք աստված»,— ասում էի անդադար մտքիս մեջ՝ ո՞ւմ ես տվել փրկված և ո՞ւմ իշտահճ: Երեկվա թաղումը, այսօրվա քաղցածությունը, վաղվա անտերունչ վիճակը— ամենք, ամենը մոռացել էր Մարիին մեկ պանիր կտոր էր ծամում, մեկ՝ երշիկ, մեկ՝ դյուշես, մեկ՝ շաթո-թթիմ էր խմում. մեկ՝ նորից պանիր էր. առնում բերանը, և

այսպես, անվերջանալի ծամել, կուլ տալ, ծիծաղել, շաղակրատել ու խմել:

Են՞դճ աղջիկ, երևի օրինավոր ծոմ էր պահել ոչ միայն երեկ և այսօր, այլև շատ օրեր սորանից առաջ:

Ախ, գարշելի աղքատություն, թեև, ինչպես ասում են, դու մոլորություն չես, բայց ամեն մոլորությունների մայրն ես:

Մինչ այս, մինչ այն, խշխշալի ինքնաեռն էլ ներս եկավ և պատվելի խանութի նման բազմեցավ սեղանի վրա: «Թե՞ կխմեք. թե սուրճ,— հարցրի:— Սուրճ, եթե կարելի է, ասաց Մարին:

Իմ գնած պաշարեղենների մեջ պատրաստի սուրճ (բոված ու աղած) ևս կար. պակաս էր միայն սերը, որ իսկույն բերել տվի քավթառին:

Հոտավետ տաք սուրճն էլ որ խաշտեցինք՝ էլ մեր քեֆին քեֆ չէր հասնիլ:

Հանկարծ աչքս ձգեցի դաշնամուրի վրա: «Մարի՛, ասացի, չէիք արդյոք հոժարիլ ինձ համար մի բան նվագելու, թեև»...

— Ինչո՞ւ չէ. մեծավ ուրախությունք,— ասաց ու նստավ դաշնամուրի առջև: Գուց սիրո՞ւմ եք Մոցառթի հորինվածքը, ավելցուց նա:

«Թեև երաժշտություն չգիտեմ, բայց շատ սիրում եմ նվագներ, մանավանդ գերմանական, իսկ Մոցառթը, Բեթհովենը, Մենդելսոնը իմ աստվածությունն են. ես ուրիշ ոչինչ բարեպաշտ ծամ չեմ ճանաչում, բացի մեծ մարդոց հորինվածքի ականջ դնելեն»:

Մարին սկսավ անգիր նվագել Մոցառթի աշխարհահռչակ Requiem-ը՝ և երբ որ հասավ շորրորդ ~~պլատան~~ Rex tremendae majestatis-ին, արդեն ինքս ինձի մոռացա. չգիտեմ՝ շրջապատող հանգամանքն էր պատճառը, թե՞ այն տխուր նվագը շարադրողի հանճարը, թե Մարիի արվեստը (պետք է ասել, որ հիանալի աժում էր), չգիտեմ, չգիտեմ, միայն այս գիտեմ, որ իմ սիրահարությունը պատշաճավոր օհոհմանն անցավ, և եթե այլևս քանի մի բույնը աշրպես մնար՝ անշուշտ խելքս կթոցնեի: Նստած տեղիցս, պե աշրպես մնար՝ անշուշտ խելքս կթոցնեի: Նստած տեղիցս, ասես օձի խայթածե, վեր թռա, վազեցի ընկա Մարիի ոտներին ու ասես օձի խայթածե, վեր թռա, վազեցի ընկա Մարիի ոտներին ու խելազարբի նման սկսա նորա ծնկները պագնել: Մարին ո՞չ զարթելու և ո՞չ վիրավորվեցավ, այլ հանդարտ ձեռքը վեր առավ

1. Փաղման երաժշտություն, մահերգ. Մոցառթի վերջին դուրսգործոցը:

դաշնամուրի քլավիրներեն ու սկսավ մազերս յուր մատների վրա ոլորել ու դեպի ինձ կոանալով՝ քանի-քանի անգամ պագեց գլուխըս: Աչքս բարձրացուցի ու տեսա որ՝ աչքերից թեև արտասուք էր գալիս, բայց երջանկության ժպիտը երեսին խաղում էր: Այդպես միևնույն ժամանակ համ աչքը արտասուք, համ երեսը ժպիտ կարող է ունենալ միայն բախտավոր մատաղահաս մայրը յուր անդրանիկի օրորոցի առջև:

Ա՛խ, ինչո՞ւ ինձ տված չէ Ռաֆայելի վրձինը. ես գիտեի, ինչպե՞ս պետք էր նկարել կնկա երջանկությունը այս անցավոր կյանքումը:

«Մարի՛, ասացի, այնպես չէ՞ որ ես քոնն եմ և դու իմը. այնպես չէ՞, որ այս Requiem-ը քու տրամադրությունն է վերջին արտահայտությունն է, և դու այսուհետև ինձ հետ ուրախ ու բախտավոր կլինիս»:

— Ա՛խ, ինչպես կուզեի, ասածիդ պես լինեիր,— ասաց նա և խորունկ հեկեկաց:

«Մարի, ի՞նչ ասել է այդ «կուզեին»... մի՞թե ուզելը և կատարելը քու ձեռքումը չէ. մի՞թե դու ազատ չես՝ սիրել որին և հավանես»:

Պատասխանելու տեղ Մարին նորից հեկեկաց ու երեսը շուտ տվեց:

Այս անգամն նա լալիս էր:

Ես կարծեցի թե մոր սուզը տակավին շարունակվում է. բայց հետո իմացա, որ սխալված էի:

Մին էլ հանկարծ տեղեն ելավ, հուսահատ շարժմունքով եկավ փաթաթվեցավ ինձ ու ամուր ձայնով ասաց.— ինչ լինելու է՞ թող լինի, բայց այժմ բախտավորացուր ինձ, ինչպես որ գիտես: Ասաց ու շուրթը շուրթիս կպցուց ու էլ պոկ չէր գալիս:

Զարմացա. այդ շափազանց էր: Կայծակի արագությամբ ետև ետև երկու միտք ծնան մեջս. «կամ այս աղջիկը այն չէ, ինչ որ ես սպասում էի, կամ գինին ազդել է նորա ներդերու վրա»: Թե այս լինեիր և թե այն՝ երկուսն էլ ինձ համար մխիթարական չէին:

Երկու հարյուր տարվա մեծնողի թողած հարստությունը սեփականել շուգեցողը կարո՞ղ էր գողանալ մի անմեղ միամիտ աղջկա բարոյական գանձը:

Մարին դեռևս գրկիս մեջ էր, կամ առավել ճիշտ ասեմ՝ ես նորա գրկի մեջ էի. գլուխը ուսիս վրա դրած աղավնիի նման մրմրե-

լում էր ականջիս. «Ա՛խ, Միքայել, որքան սիրում եմ ես քեզ, և որքան ես անարժան եմ քու անկեղծ ջերմ սիրուն... ախ, իմ գանձըս, (Schätzchen), ինչո՞ւ մենք միմյանց հանդիպեցանք... դու ինձ կսպանես...»:

Այս խոսքերը ինձ բուրբուրեցրին շղկացուցին: Այս տենդահույզ գրկախանությունը, այս սիրո բաղձանքը, այս արտասուքը, այս երկյուղը— ամենևին իրար հետ չէին շողկապվում. այդ միջոցին այդ ամենը ինձ առեղծանելիք էր երևում, որի լուծումները երբ որ գտա՝ բանը բանից արդեն անցել էր:

«Միքայել, — ասաց, — գիտե՞ս արդյոք որքան ես քեզ սիրեցի երեկ և որքան սիրում եմ այսօր և ինչպես դժվար է ինձ կամավորապես քեզ անձնատուր լինելս. բայց դու իմ հոժարությունը մի՛ սպասիլ, դու ինձ գողացի՛ր, դու ինձ հափշտակե՛, փախցրո՛ւ ինձ հեռու, հեռու, ոտնակոխ արա ինձ, ջնջե՛ ինձ, բայց գողացի՛ր, հասկանո՞ւմ ես, գողացի՛ր...»

Ասում էր ու պազնում էր:

Բոլոր ասածներեն ես ոչինչ չի հասկացա, ևս առավել համոզվեցա առաջվա ենթադրությանս մեջ թե՛ այս ամենը գինիի ազդեցությունն է երկար միջոց պաս պահած ստամոքսի վրա:

Ի՞նչ էք պահանջում մի երիտասարդի, որ մանկական խաղերեն, դպրոցի դասերեն ու համալսարանի դասախոսներեն ու դասադրքերեն զատ ոչինչ տեսած չէր կյանքումը: Կյանքի փորձը երբեք մարմին ու արյուն չդարձավ իմ մեջ: Ինձ պես երեխա բնավորությամբ երիտասարդ հազիվ թե կգտնվեր: Ծանաչողները ասում են թե՛ ես այժմ էլ նույնն եմ մնացել, ինչ որ էի շատ ժամանակ առաջ, այդ վայելչյան տոհմի թերությունը կամ արժանավորությունն է,— ո՞րը կուզեք՝ հասկացեք: Կա մարդ, որ ասես թե, մորը արգանդեն փորձառու, բանբարակ է ծնում. կա և մարդ, որ մինչև գերեզմանի դուռը անփորձ ու չի խրատված է հասնում, ևս ու՛րիմ պապերը, ինչպես երևում է, երկրորդ դասակարգին ենք վերաբերվում:

— Մարի, — ասացի, — իմ դեպի քեզ ունեցած սերին դու երկբայել չես կարող. իսկ քու դեպի ինձ ունեցածին ես համոզված եմ. ես ոչ թե քեզ կամ քու պատիվը, այլ և քու մի թելիկ մաղը հողանալու հոժար չեմ, դու ո՛չ իմ սիրուհին, այլ իմ պատվավոր, օրինավոր ամուսինը կլինիս այս օրեն բռնած տասն օր հետո: Այժմ իմ խնդիրս քեզ այս է, որ դու այս օրվանեն սկսես նախապատ-

բաստովելու այն ծանրակշիռ դերին, որն զրադ պիտի առնուս թե՛ ինչպես կին և թե՛ ինչպես... ասացի ու խոսքս շկարողացա վերջացնել. երկուսս էլ աչքներս խոնարհեցինք ու խնձորի նման կարմրեցանք:

«Ա՛խ, Միքայել, որբան ես քեզ սիրում եմ,— ասաց նա՝ բուռը խոսքիս պատասխան.— Ի՛նչպես լավ կլինեիր, եթե դու ինձ բախտավորացնեիր, շթողնեիր, որ ինձ քու գրկեն խլեիր մարդեկ բայց ես վախենում եմ, որ մենք միմյանցմե անմխիթար կբաժանվինք»:

— Միայն մահը կբաժանե մեզ այսուհետև, իսկ մարդիկ ու հանգամանքը՝ ո՛չ երբեք,— պատասխանեցի ես:

«Ես էլ այդպես եմ կարծում»,— ասաց Մարին ժպտալով, բայց այդ ժպտի միջից դուրս ցուլանում էր անմեկնելի հոգեկան վիշտ:

— Մարի՛,— ասացի,— թեև այս րոպեիս ես հարուստ եմ և շատ հարուստ, բայց դու պատրաստ ես արդյոք ինձ հետ տանել անհաղորդություն, թշվառություն, չբավորություն և շատ ուրիշ կյանքի փորձանքներ:

«Երանի չէ՞ր լինի, որ քեզ հետ կյանքս անցնեի միշտ, թեկուզ փավարչտին բանտի մեջ, թեկուզ դժոխքի անշեջ կրակումը»:

Պատասխանի տեղ գրկեցի նորան, և այս անգամ երկար ժամանակ իրար գրկե դուրս չեկանք:

Հոգեկան ցնցումները, որ այս կարճ միջոցումը մին մինի քամակից հետևեցան, սաստիկ հոգնեցուցին թե՛ հոգիս և թե՛ մարմինս: Մի փոքր հանգստություն էր ինձ պետք, ապա թե ոչ վախենում էի, որ կհիվանդանամ, մանավանդ որ՝ ժամանակե ժամանակ մարմինս առանց մի պատճառի սկսում էր սարսռել, ասես թե աննոր վրաս էր հասնում: Առի Մարիի ձեռքը, քանի-քանի անգամ պինդ-պինդ պագի, նա էլ գրկեց ինձ, մեկ վիզս էր պագնում, մեկ գլուխս, մեկ աչքերս ու մեկ պոռնգներս, ու անգաղար բարեմաղթություններ էր տալիս ինձ, ինչպես որ մայրը յուր փոքրիկ որդուն ճանապարհ ձգելիս: Մարին չափազանց բարեպաշտ աղչիկ էր: Արտիս մեջ գոհ էի, որ եթե աստված մի օր մեզ ամուսնությունը օրհնե, նա իմ զավակներին իսկական կրթնի և ոչ թե սնտախապաշտություն, կամ մոլեռանգության և կամ անկրթության մեջ կտեսուցանե:

Գոհ սրտով տուն վերադարձա:

Ժամը մեցն էր երեկոյան: Հովհաննեսը վաղուց վերադարձել էր անմարանեն: Տեսնատան, Միքայել (Մեխակ) Ամատունին, Նիկոլայ Տրիֆանովը, Հարություն Ղուզանյանը, Գաբրիել Ա. և շատ ուրիշները ժողովված քեֆ էին արել իմ ուղարկած թանկագին պաշարեղեններով, որ իմ կարծիքով գոնե մի ամբողջ շաբաթ պիտի բավականանար մեզ, այն ինչ այժմ ապուխտի ոսկորը, երջիկների մաշկը, պանիրների կծեպը ու սարդինկաների թիթեղե ամաններն էին մնացել: Հալալ իրանց: Լավ ախորժակով երիտասարդներ էինք ամենքս, մեղք է ասելը:

Հինգ հարյուր ոսկիի ու մյուս թանկագին իրեղենների պատմությունը նորա վաղուց արդեն լսել էին դռնապանեն և տան ուրիշ բնակիչներեն, այնպես որ՝ ես նոցա ուրիշ ոչինչ նոր բան չի պատմեցի, բացի քաղաքապետից փող և ուրիշ փողի էլ խոստումնք ստանալես: Ամենքը անկեղծորեն ուրախ էին, մանավանդ որ՝ ամենքն էլ վստահ էին, որ հավասար չափով պիտի բաժանեի նոցա մեջ, եթե ոչ մայր գումարը, գեթ փողով ձեռք բերված ամեն կերպ վայելչությունը: Երանի՛ այն ժամանակին, երբ ամենիս գրպանը ու քսակը հասարակաց էր: Տեսնատայի ուրախությունը ուրախություն չէր հասնիլ:

«Մատաղ, Մեխակ ջան,— ասաց նա,— կհավատա՞ս, էս քրիստոսը վկա, որ իմ սիրտը քանի վախտ ա, մալում էր անքո՛ւ, որ դու նըպրեմեննա մեկ Փանոսի— պատին պետք ա կպնես, տեսա՞ր— կատարվավ: Ախր գիտե՛ս մատաղ, ինչե՞ր չի տվող աստված ա հայի աստվածը, դուրբան գնամ նրա զորքին, թե որ աստված տալու իլի դուռնից չէ որ՝ փանջարայից էլ կտա, հապա, մատաղ ջան: Ախր էս բանին դու ի՛նչ ես ասում, ես էլ էսօր ինձ համար գլուխս քաշ արած՝ գրնմ էիմ. մին էլ բիրդան, հորտեղան-հորտեղ մի օմքին ծուռնի մուռնի գնում ա. վերջից վարավորդ հորտեղ մի օմքին փիս խաթած ա: Մտքիս մեջ ասացիմ՝ «Հը՛, Ալեքսան՝, նեղեվայ»: էնա, կնացիմ, աղբեր, անձեն ձեռքս ջիրը դիրամ, մի լավ բաղդագի աղլուխ դուս հանամ, փայամ ջիրս: Մարդը բանից բխարար մնաց: Հետովան, մեկել ջիրը բաց թողամ ձեռքս,— էս տեղից էլ դուս հանամ պոտտոնեն. էն էլ դիրամ ջիրս: Հետովան, մատաղ ջան, գնացիմ հետը թուտա սյուտա, քուշի քուշի աննլով բարեկամացամ, տարամ պոտտոնոյ. լավ հանգի փիվեն ու արա-

դը դիրամ քթին,— ողորմելի աշքերը շարդաղ բարձրացան. էնա՛ ձեռքս տարամ ժիւետի ջիբը, սահաթը ու ցեպոչկեն աղավարի պլոկեցիմ:— Բաս դու ի՞նչ ես կարծում: Էս օրվա դատմըս քիչ-քիչ որ ասեմ՝ հիսուն կողոլ կիլի էսպես ա, քո մատաղըդ գընամ, աս՝ ծու բանը: Եփոր տալու իլի՛ կտա դուռից չէ որ, փանջարից էլ կտա: Ամա որ իմանայիր, սաբահի տեղերիցս որ վեր կացամ՝ ինչպե՞ս տաք-տաք աս՞նու աղոթք եմ արել քի՛ տեր աստված, դու գիտես... ասված էլ աղոթքիս գորա մուրազս բացավ... Բա՛ս, մատաղ-ջան, էն կոլոշների բանը ինչպե՞ս կիլի, գրավից կհաննե՞ս, թե՞ կմնա էնպես»:

— Նա քեզ երեք մանեթ, ասացի, ինչ որ պետք ա՛ տուր ջնուդին. խորդան ու կալոշները քե՛զ առ:

Հետո բարեկամներիս մանրամասնաբար պատմեցի թե՛ երեկվա և թե՛ այսօրվա գլուխս եկած բոլոր անցքերը: Ո՛չ միևն շհավանեցավ իմ դիտավորությանը մի որբ և անծանոթ օտարուհիի հետ պսակվելու. ամենքը գուշակում էին ինձ եթե ոչ անբախտություն, գեթ մեծամեծ անհաջողություններ և կյանքի ամեն վայելքների զրկանք: Ամենից ավելի Տեսնատան էր տրտում ու անբավական. «բաս Սեռաֆիմե՞ն, բաս Կատկե՞ն, և այլն. ի՞նչ կիլի նրանց հայր»: Բայց ողորմելին չգիտեր, որ Մարիի բարեկամությունը իմ բարոյական մկրտությունն էր երիտասարդական ամեն խենեշուփենես: Անցյալս ինձ արդեն երևում էր մի գարշելի երազ, օրի հիշատակը ամեն կերպ աշխատում էի արմատախիլ անել մտքես: Մինչև այժմ չգիտեմ՝ լա՞վ արի, թե վատ, բայց բացի Հովհաննեսեն ոչ ոքի չխոստացա և ամենչի խնդիրը բացե ի բաց մերժեցի Մարիի հետ ծանոթացնելու. ինձ այնպես էր երևում, որ այս խառնափնթոր բարոյականությամբ երիտասարդների հայացքը անգամ պիտի արատեր Մարիի հրեշտակային հոգին:

Բարեկամներս չհասկացան իմ իսկական կարծիքը այս բանի մասին և առգրեցին իմ վախը կամ զգուշությունը՝ հաջողկոտության: Ես շատ ուրախացա, որ այդպիսով վերջացավ նոցա կարծիքը իմ մասին:



Նույն երեկոյին քաղաքապետեն հրավեր ստացա մյուս օր առավոտյան ժամը 9-ին նորա գրասենյակը ներկայանալու: Այն

գիշեր ես և Հովհաննեսը գրեթե քուն չեղանք: Հովհաննեսն էլ այդ միջոցին սիրահարվել էր մի գաղղիացի աղջկա վրա, որի անունը նմանապես Մարի էր, որի ծնողքը, մի շնչին պատճառով, չէին հոծարում այդ երկու սիրահարներին իրար հետ միանալու, և այդ շնչին պատճառն էր՝ թե՛ Մարիի և թե՛ Հովհաննեսի փող շունե՛նալը:

Այդ գիշեր ես խոստացա Հովհաննեսին՝ թե՛ մոտս պանված և թե՛ ստանալու փողես, որքան որ պետք է, մասն հանել, որ նորա պսակի բանը դյուրացնեմ և ապագա ապրուստը ապահովացնեմ: Եվ շատ ուրիշ կյանքի ծրագրություններ արիք և օգային ամրոցներ շինեցիք այդ բոլորովին ուրախ գիշերը: Աքաղաղները արդեն երրորդ անգամ խոսել էին, որ մեր աշքերի կոպքերն էլ սկսան ծանրանալ և մենք կամաց-կամաց նախ նիրհեցանք և ապա անուշ ու խոր քնեցանք ու ոսկի երազները սկսան թռչտել մեր գլուխների վրայով:

Առավոտվա 8-ը ժամն էր, որ Հովհաննեսը տեղերից վեր թռավ, սկսավ պինդ-պինդ ինձ զարթեցնել, ասելով «Միքայել, Միքայել, վե՛ր կաց, վե՛ր կաց, նայե շմոռանաս քաղաքապետը քեզ սպասում է»:

Հապճեպով տեղես ելա. խշխշալի ինքնանոր ներս բերին, հոտոտ սուրճը, պինդ սերը, շաքարոտ պաքսիմատը, որ վաղուց մեր ձգնարանը (կամ բանտը) մտած չէր, նորից հազար ու մեկ նյութ տվին մեզ մեր այսուհետև վարելու ապագա փափուկ և երջանիկ կյանքին: Սուրճը ավարտելից հետո, ես գնացի քաղաքապետի մոտ, իսկ Հովհաննեսը գնաց ձեմարան:

Քաղաքապետը ինձ հայտնեց, որ իմ գտած առարկաների համար ինձ նշանակած է 25.000 մանեթ (մասնագետները այդպես էին գնահատել), և այդ գումարը ես կարող եմ, երբ և կամենամ, ստանալ տերության գանձարանեն. իսկ առարկաները, ինչպես հազվագյուտ իրեղենք, պիտի պահվին թանգարանների մեջ: Թղթերից երեկ է, որ գրասեղանի տերը բոլոր կյանքը ամուրի է մնացել և յուր կենդանության ժամանակ ևս ազգականներ ունեցած չէ. ինչպես որ ասում են՝ չոր գլուխ մարդ է եղել, նորա պարապմունքը վաշխառություն է եղել և այլն: Ուրեմն այդ բոլոր հարբստությունը, ըստ ամենայն իրավանց և արդարության, իմ լիակատար սեփականությունն էր:

Քանի որ քաղաքապետը այս մանրամասնությունը պատմու՛ւ էր ինձ, ատենադպիրը բերեց մի պաշտոնական թուղթ, որի տակ քաղաքապետը ստորագրեց յուր անունը և ինձ տվավ, ասելով. «Այս թուղթը կտանեք տերություն զանձարան և կատանաք ձեզ պատկանած քանհինգ հազարը (իհարկե, առանց այն հազար հինգհարյուր մանեթին, որն երեկվա օրը ստացել էիք ինձանից)»:

Առի թուղթն ու իսկույն գնացի զանձարան, ստացա բոլոր փողը ու տարի պահ տվի լուծալատուն և ստացա անդորրագիր:

Այս ամենը քանի մի ժամու բան էր: Ճաշելու համար դեռևս շատ կանուխ էր: Գնացի, ման եկա խանութները, գնեցի զանազան կերպասներ, կտավներ և այլ կանանց հարկավոր բաներ, ինչպես՝ գլխարկ, թիկնոց, մուշտակ և այլն: Մսխեցի մոտ 1000 մանեթ, և ահագին կապոցներով շտապեցի Մարիի տուն: Ճանապարհին չի մոռացա մի դերձակուհի հանդիպել, որին հայտնելով Մարիի հասցեն, պատվիրեցի անհապաղ գալ այնտեղ: Ներս որ մտա, Մարին երեկվանն ավելի գունատ էր:

«Բարով, Մարի, ասացի, ինչպե՞ս է առողջությունդ. ինչու այդպես գունատ ես. մի՞թե անհանգիստ անցուցիր գիշերս»:

Պատասխանելու տեղ Մարին փաթաթվեցավ վզիս ու ձեռք ժամանակ համբուրում էր գլուխս, աչքս, ճակատս, ու հետո սկսավ աղիողորմ լալ:

— Մարի՛, Մարի՛, ի՞նչ եղավ քեզ, ի՞նչ,— հարցուցի:

Մարին ոչինչ պատասխան չի տվեց: Ներդական շարժումներով պինդ բռնեց ձեռքես, նստեցուց աթոռի վրա ու ինքն էլ նստավ գրկումս: Արյունը խփեց գլխիս:

— Ի՞նչ է այդ արածդ,— ասացի. Մարի՛, Մարի՛, խելք վրա՞դ է:

«Ապա ինչու՞ ինձ չես փախցնում, չես զողանում... Ես քեզ ասացի և էլի կասեմ՝ բռնի խլած, հափշտակած՝ ես քուկդ եմ, իսկ իմ կամքին թողած՝ երկբայելի է, որ երբևիցե քեզ պատկանի: Ենթ չունիս դու, Միքայել, հասկացի՛ր ինձ. դորանից ավել ես քեզ ոչինչ ասել չեմ կարող. առանց նորան էլ ես քեզ ավելի ասացի, քան կարելի էր. իմ քեզ հետ խոսելս, քեզ հետ բարեկամանալ՝ արդեն մեծ ուխտագրծություն էր իմ կողմանն. իսկ այս սերը, ո՞ր ծագեցավ մեր մեջ, արդեն ինձ հավասարեցնում է ամենա... Միքայել, Միքայել, դու ինձ չես սիրում...»

— Մարի... մի՞թե երկբայում ես իմ սիրուն... ինչու՞ պայացուցանեմ քեզ, որ սիրում եմ:

«Կատարե խնդիրս»:

— Ասա տեսնեմ՝ ի՞նչ է քու խնդիրդ, ինչու՞ թաքցնում ես ինձանից:

«Ինձ գողացիր, ինձ հափշտակե, ինձ փախցուր. թքե վրաս, մրե ինձ, սր մի ուրիշը տեսնե այդպես կեղտոտված՝ ինձ արհամարհե, որ ես քեզ մնամ»:

— Մարի՛, ես քեզ շատ եմ սիրում, որ կարող լինիմ այդպիսի ցածուցյուն կատարել... Ես չեմ ուզում, որ աստուծո՞ւ սեղանի առջև կանգնած ժամանակդ ամաչես ու կարմրես. և չեմ ուզում որ՝ երբ և իցե խիղճդ տանջե քեզ. ես չեմ ուզում, վերջապես, որ քու ամուսինը քու առջև չարագործ լինի:

«Չէ՛, Միքայել, եթե դու ինձ սիրեիր, ինձ տիրելու համար չարագործություն ևս հանձն կատենէր, թեև իմ առաջաբկության մեջ ոչ չարագործություն կա և ոչ ամոթալի գործ, դու միայն հրաժարվում ես իմ մեղքի կեսը վրադ առնելու. մեր նախահայր Ազգամբ, ինչպես երևում է, ավելի էր սիրում եմվային, քան թե գու ինձ...»:

— Մարի՛, մի՞թե տասը, իննի, յոթը, վերջապես երեք օր ու՞՞ շունիս...

«Ա՛խ,— ասաց Մարին.— սորանից ավելի սրտաբացություն դու ինձանից մի՛ սպասիր... Աստված տա, որ իմ «հոգեառը» ճամփին ուշանա մինչև մեր պսակի կատարվիլը. աստված տա, որ իմ շարագուշակ նախազգացումները չկատարվին. այն ժամանակ ես բոլորովին բավական կմնամ և ուրախ կլինիմ, որ ոչ դու իմ խոսքին, այլ ես քուկին հետևեցա. ի՞նչ ասել կուզե, որ խաղաղ, ուրախ, սուրբ պսակը մեծ առճավատաշյա է երջանիկ և անդորր ամուսնական կյանքի համար... բայց եթե, աստված հեռի անե...»:

Ասաց ու սաստիկ հոգետանջ մտածումների մեջ ընկղմեցավ խեղճ աղջիկը:

— Մարի՛, ասացի, երկար ժամանակ սպասելեն հետ, ես արդեն սկսում եմ կասկածել, որ քու կյանքի մեջ մի սոսկալի բան կա, որն դու ուշի ուշով թաքցնում ես ինձանից... ի՞նչ է այդ գաղտնիքը, ասա ինձ, ես քու ոտքի հողը լինիմ:

«Անհնարին է այդ, սի՛րական Միքայել, եթե ասեմ, իմացիք որ, ինքս պիտի հրաժարեմ քեզ իմ ներկայությունեն. բայց քեզանից»

հեռանալու, առանց քեզ ապրելու արդեն ուժ չի կա մեզու: Միքայել, հավատա ինձ, ես պարկեշտ, ամոթխած ու կույս եմ, բայց... միայն հանցանքը կարող է ինձ քեզ հետ միավորել: Միքայել չան, մի՞թե ես մեղավոր եմ, որ քեզ սիրեցի: մի՞թե շատ տարի առաջ ես գիտեի, որ դու կաս աշխարհիս երեսին: մի՞թե իմ ծնողքը գիտեին, որ նոցա դուտորը այնպես հզոր սերով պիտի սիրե մի անծանոթ, օտարազգի երիտասարդի, որպիսի սիրով, գուցե աշխարհքիս ստեղծմանն ի վեր ոչ մի աղջիկ սիրած չէ: Լսե ու հասկացիր, Միքայել. ես քեզ սիրում եմ, ես քեզ պես ասպետ բնավորությունով երիտասարդ դեռևս տեսած չեմ, եթե տեսած լինեի, ինչ ասել կուզե, որ ես այստեղ չէի լինիլ այս բուպեիս— կարծեմ որ՝ այս խոսքերս շողոքորթություն չես համարում— ես քեզ հավանեցա, սիրեցի և ուզում եմ ամփոշտ քուկդ լինել, բայց... հոժար կամքով ես քեզ ընտրել չեմ կարող. դու պետք է քիմ հոժարությունս ոտնակոխ անես. իմ ազատ կամքը պիտի բռնաբարես, ես ամոթես կարմրում եմ, բայց ի՞նչ անեմ, հարկավ պետք է հետդ սրտաբաց լինիմ, խոսքս էլի կրկնում եմ, ինձ պիտի մրտես, ցեխտես, որ մարդիկ արհամարհեն ինձ, որ այդ հնարով ես քու կինդ դառնամ, ապա թե ոչ... ես քեզ ավել ոչինչ չեմ ասիլ, ու մեկնություն դու ինձիմեն մի՞ սպասիլ: Իսկ եթե երբևիցե զաղտնիքը իմացար, այն ժամանակ իմ մահվան բոթն ևս կլսես»:

— Թե՞ դու նշանած ես,— ասացի, ասես թե այդ բուպեին մի մարդարեական ոգի իջավ իմ վրա:

«Ինչ որ քեզ ասացի՝ այնքանը բավական է. ավել ոչինչ չես իմանալ ինձանից. մանավանդ որ՝ ես կխնդրեի քեզ, որ իմ անցյալի մասին հարցուփորձ շատ շանեիր ինձ... մահագուշակ մտքերը պաշարել են ինձ... ա՛խ, ինչպես ես տարաբախտ եմ...»:

Աչքս դարձուցի Մարիին, և ինչ տեսնեմ. ճակատի վրան, ասես թե, մահու դատակնիքը խորունկ ու պարզ դրոշմած էր: Բժիշկները ու քահանաները շատ լավ գիտեն կարողալ մարդուս երեսին այդ զաղտնիքը, և հաղիվ թե տասնեն մի անգամ կվրիպին: Օրհասական մարդու աչքերի ցոլքը ու երեսի տիպաբը, ճանաչողի համար, հայտնի նշաններ ունին. ահա այդպիսի նշաններ նշմարեցի Մարիի երեսին:

— Թող, Մարի՛, դատարկ բան է ասածդ,— ասացի,— եկ մեր խոսակցության նյութը փոխենք... ճաշը կերե՞լ ես, թե չէ: Հագվե, երթանք Դյուսոյին, մի լավ ճաշ ուտենք: Ես էլ, ի դեպ

ասեմ, բավական լավ ախորժակ ունիմ: Հա՛, մոռացա քեզ ցույց տալու. նայե՛, կհավանի՞ս իմ ճաշակին և ընտրությունը:

Ասացի և առջև դրի գնած առարկաներս:

Մարիի երեսի ոչ մի գիծը չի փոխվեցավ, ուրախության ոչ մի նշան չի նշմարեցի վրան. միայն ի նշան շնորհակալության ձեռքս սեղմեց ու ծանր հոգվոց հանեց, իբր թե՝ ասել կուզեր՝ «շատ լավ է, բայց ո՞վ պիտի վայելե»:

Առինք կառք և ուղիղ գնացինք Դյուսոյի հյուրանոցը:

Վաղուց լսել էի քսանհինգ մանեթանոց ճաշերի անունը, բայց դեռևս կերած չէի. ուզեցի գոնե մի անգամ փորձել: Ներս որ մտանք, ծառան բերեց կերակուրների ցուցակն ու ես նորա մեջեն ընտրելով հորինեցի ճաշը, որն եթե ասեմ, թե ի՞նչ կերակուրներից էր բաղկացած, անշուշտ գաստրոնոմը պիտի ծիծաղե վրաս: Բուլոր պահանջած կերակուրներիս անունները միտքս չէ, հիշում եմ միայն հետևյալները՝ կրիայի թան, պաղ թառափ (осетр), փասյան խորոված, աքլարե սոուս, անանաս, և շատ ուրիշ այսպիսի հազվագյուտ (իհարկե մայրաքաղաքի համար) բաներ, վրայից էլ շամպայն:

Ճաշի ժամանակ ես խոստացա Մարիին, որ երեք օրեն կլինի մեր պսակը, ավելի շուտ ամենևին չէր կարելի, նախ որ՝ այդ միջոցին ես պետք է խնդիր տայի և դուրս գալի համալսարանեն և գրվեի ազատ ունկնդիր. երկրորդ՝ պիտի պատրաստեի թե՛ ինձ և թե՛ Մարիի համար հարսանիքի հալավներ. երրորդ՝ պիտի վարձեի բնակարան, զարդարեի հարկավոր կահ-կարասիքով, գնեի տան զանազան պիտույք. միով բանիվ՝ Մարին համոզվեցավ, որ հետաձգելու ո՛չ համառությունես էր և ո՛չ էլ քիմահաճությունես. մանավանդ իմ համալսարանեն դուրս գալը ավելի համոզեց նորան. եթե ինչպես ուսանող պսակվեի՝ այն ժամանակ ես կարող էի օրինազանց երևել և անվանարկ մնալ բոլոր կյանքս,— այդ բանին ամենևին հոժար չէր նա:

«Ա՛խ, Միքայել, ինչո՞ւ այդպես ուշ, շատ կարելի է, որ այդ միջոցին...» ասելու խոսքը շավարտեց:

— Ի՞նչ կարող է պատահել այդ երեք օրվա մեջ, հարցուցի ես:

«Ոչինչ, ես այնպես ասացի»: Ասաց ու նորից յուր տխուր մտածմունքի մեջ խորասուզվեցավ, ու ժամանակից ժամանակ ինքն իրան մրմնջում էր՝ «կարելի է... գուցե աստված տա...»:

գեղք... Ախ, տեր աստված, շնորհակալ եմ քեզանից, որ դու ինձ բախտ տվիր և մեծ բախտ տվիր. բայց ինչո՞ւ ինձ երևում է, որ ես այդ բախտին հասնելու չեմ»:

— Մարի, ասացի,— գիտե՞ս ինչ. ես այս բոլորիս կերթամ ու կգնեմ երկու հատ մատանի, մինը՝ քեզ և մյուսը ինձ համար, կուզե՞ս մատենափոխության ծեսը այսօրենք կատարենք, որ դու միամտվիս (ես կարծում էի, թե նորա անհանգստության պատճառը սրտի վախեն էր, որ չլինի թե ես փոշմանեմ խոսքս փոխեմ ու չի պսակվիմ վրան): Ես շատ լավ գիտեմ, որ՝ այդ մի դատարկ ծես է, առանց նորա էլ աստված կօրհնե մեր պահպան, բայց ի՞նչ կարիք ունենք արհամարհելու այդ թեկուզ դատարկ ծեսը, որն ամեն ազգ ունի և ուրախությունը կատարում է:

Այս որ լսավ Մարին, ևս առավել գունատվեցավ, նորա հեզ աչքերեն, ասես, կայծակներ թափեցան ու մի անմեկնելի վշտալի ձայնով ասաց. Չէ՛, չէ՛, այդ բոլորովին անհնար է. ես ուխտադրուժ լինել չեմ կարող...

— Ո՞ր ուխտադրությունն է քու ասածը, ի՞նչ ես ասում,— ասացի վրդովված հոգով ու կասկածս սկսավ ստուգվելու:

«Այդ մեր պսակեն հետո կիմանաս... Ա՛խ, ինչո՞ւ օրերը չեն անցնում բոլորի արագությունը... կհասնե՞մ արդյոք այդ երջանիկ օրվան»:

Ու հետո, խոսքը ու ձայնը անակնկալ կերպով փոխելով,— ասաց.— Միքայել ջան, գիտե՞ս ինչ, ես սաստիկ զգայուն սիրտ ունիմ, ճանճի սատկելուն անգամ չեմ կարող անտարբեր նայել. բայց այս բոլորիս շատ ու շատ կցանկանայի մի մարդու մահը:

— Այդ ի՞նչ տարօրինակ ցանկությունն է,— ասացի.— Չե՞մ կարող արդյոք իմանալ այդ մարդու անունը, ո՞վ է նա:

«Մեր պսակեն հետո կիմանաս»,— կարճ կտրեց Մարին:

— Ինչո՞ւ այժմ չէ,— ասացի ես:

«Էնդուր համար որ մեռնել շուգեմ. էլի եմ կրկնում՝ իմ այս զաղտնիքը հենց որ իմացար— իհարկե մեր պսակեն առաջ— ես կմեռնեմ: Հա՛, քեզ մոռացա ասելու, նայե՛, գոնե այս խնդիրս կատարե. երբ որ մենք կպսակվինք, դու, եթե պետք լինի, պարտավոր ես ասելու որ, ինձ բունի տարիք ժամ ու պսակվեցար հետո, կամ՝ քանտով սպանացար, իբր թե պարտքիս համար ե կամ սոցա նման մի բան պիտի հնարես: Հա՛, կանե՞ս, սիրական»:

Ասաց ու այնպես քնքշությամբ փաթաթվեցավ ձտիս, որ

ու թե այսպիսի անմեղ ստույգուն, այլ ինձ երևում էր որ՝ Բառու Յոն-Մյունխահուզենի բոլոր պատմությունների տակ կատարագրեի անունս, իբր թե այդ ամեն ստապատիր արկածը իմ գլխովս լինելին անցած:

Պանդոկեն որ տուն գնացինք, ժամը արդեն երեկոյան 8-ին մոտ էր: Փոքր ինչ ժամանակեն ցուլուն ինքնաեղը ներս եկավ (Մարիին արդեն պատվում էին ինչպես հարուստ մարդու հարս և նորա ամենաշնչին հաճույքը ստրկաբար կատարում էին): Նստանք թեյ խմելու. երկարորեն խոսեցանք հարսանիքի հալավների մասին, հետո՝ մեր ապագա ապրուստին, հետո... երեխաներիս դաստիարակության և, վերջապես, զավակներին պսակեցինք ու մենք ինքներս պապ ու նանի դարձանք:

Մնաս բարեի ժամանակ Մարին կես ծիծաղ, կես ծանր դեմքով ասաց. «Գիտե՞ս, Միքայել, ես ինչ նկատել եմ. այստեղ Ռուսաստանումը ժամանակը ավելի համր է անցնում, քան թե մեր Զվիցերիայումը»:

— Եթե Զվիցերիայումը լիներ մեր պսակը, կարծեմ, այնտեղ էլ նա կհամարացներ յուր քայլափոխերը, ասացի ես:

Խեղճ Մարի. նա կարծում էր թե՛ միայն ինքն էր ուզում շուտ միավորվել իմ հետ. իսկ իմ հալեն խաբար չէր նա, թե ամեն մի բոլորին ինչե՞ր կարծելին ինձ համար:

է

Տուն որ գնացի, մեր Հովհաննեսը ուրախ-ուրախ ման էր գալիս սենյակի մի խորշից դեպի մյուսն ու ամեն անգամ, խորշին հասնելիս, անպատճառ թքում էր:

«Հը՞, Վանյուշ, ի՞նչ ես անում»,— ասացի:

— Ի՞նչ անեմ, ման եմ գալիս ինձ համար. Դո՞ւ ինչ ես անում, դեռ չի կշտացար Մարիիդ պղատոնական սիրովը: Այսօր ամբողջ օրը որտե՞ղ անցկացրիր:

«Նախ ես գնացի քաղաքապետին»...

— Հա, հա մոռացա հարցնելու՝ քաղաքապետին գնացի՞ր, ի՞նչ պատասխան ստացար:

«Ես էլ քեզ էն էի ուզում ասել, դու խոսքս կտրեցիր»...

— Դե, առա, մյուս անգամ խոսքդ չեմ կտրիլ:

«Չեմ կտրիլ ասում ես, էլի կտրում ես»:

— Հիմի սուս եմ, ինչո՞ւ չես պատմում:
«Դե, լսե. դնացի քաղաքապետին. նա իմ գտած առարկաները գնահատել էր 25,000 մանեթի»...

— Պա. քու տղիս-տղա, էդ խո դու մեկ օրվա մեջ մոթշիլդեղար պրծար... Միքայել, դորդ ե՞ս ասում, թե՞ հանաք ես անում:
«Օրհնած, ես հիմի հանաքի ժամանակ ունիմ... Քաղաքապետի հրամանով գանձարանեն ինձ այլևս 23 հազար 5 հարյուր ռուբլի տվին, որն տարի մի ապահով տեղ պահեցի. հետո դնացի Մարիի համար հալավցու ճոթեր գնեցի. հետո նորա հետ դնացի Գյուսոյի հյուրանոցը ու լավ բարաթի ճաշեցինք ու ավել լավ բարաթի սիրտերս վերածեցինք. հետո՝ տուն եկանք ու միասին թեյ խմեցինք, հետո՝ պաշպեցանք...»:

— Պաշպեցա՞ր... ես քեզանից ավել բաներ արի այսօր:

— Ապա տեսնենք:

«Նախ՝ դնացի ճեմարան, առաջին անգամ կուշտ նստա աշխատելու, Բելվեդերի Ապոլոնի պատկերը ավարտեցի, եթե չեմ սխալվում, բավական լավ, և եթե աստված պոռֆեսսորիս սիրտը գուժ և արդարութուն ձգե՛ այս անգամին անպատճառ արծաթե մեղալը պիտի ստանամ: Այս մեկ: Երկրորդ՝ գնացի Մարիի ծնողների տուն, հայրը չիկար, մենակ մայրն էր տանը. ասացի որ Հնդկաստանի բիճաս մեռել է— թաշկինակս ցամաք աչքերիս տարի ու չեղած արտասուքները սրբեցի, որպեսզի ցույց տամ թե շատ քնքուշ սրտով երիտասարդ եմ— և ինձ բավական հարուստ ժառանգութուն է թողել, որո հիման վրա խնդրեցի, որ Մարիին առանց այլևայլության ինձ կնության տան. բայց փուշ քավթառը, որ ինքն էլ տակավին համով կտորների ախորժակը կորցրած չէ. և մանավանդ որ, կարծելով թե՛ առջևը դեռևս բավական ժամանակ կա ապաշխարելու ու մեղքերը քավելու, հասկանում ես խո. մա՛խլաս. կտրողաբար հայտնեց ինձ, որ մինչև Մարին քսաներկու տարեկան չլինի՝ մարդու գնալու չէ, իսկ այժմ նա միայն տասնվեց տարեկան է. կնշանակե Հովհաննես աստուծո ծառան, այդ քավթառի հաճույքի համար, ուղիղ վեց տարի ծոմ սխտի պահե, որ ինչպես տեսնում ես, խելքի մոտ բան չէ: Ես բանը այսպես որոշեցի. կամացուկ Մարիին աչքով արի թե՛ բան ունիմ քեզ հայտնելու. հնար գտա ու ականջին փսփսացի թե՛ Լս կերթամ «Վարդ» հյուրանոցը, դու էլ փախիր արի: Հետո մորը մնաս բարև ասացի, առի գրակս ու դուրս եկա: Դուրս եկա՝ ուղիղ գնացի

«Վարդ» հյուրանոցը, վարձեցի մի սենյակ, խոհարարին երկու հոգու համար պատվական ճաշ ապսպրեցի, հետև էլ բավական գինի. քանի մի ժամանակից Մարին էլ եկավ: Մարին որ ներս մտավ, աղբեր ջան, առի գրկիս մեջ, ոչ թե քեզ նման չոր ու ցամաք, այլ լավ հանգի պաշպեցի-պաշպեցի, սրտիս սեղմեցի, այնպես որ աղջկա արյունը երակների մեջ եռ բերի. հետո նստանք ճաշի... Երկու երեք ամսեն, հավատացնում եմ որ՝ Մարիի ծնողք ինքները կուգան, կաղաչեն կպաղատեն, որ ես պսակվիմ նոցա աղջկա հետ... բայց, խնդրեմ, ինչ որ բարեկամաբար ասացի քեզ, թող մեր մեջ մնա, մարդու բան մի՛ ասիլ:

— Քեզ խոսք եմ տալիս, որ մարդու բան չեմ ասիլ, բայց մի օր կգրեմ,— ասացի:

— Գրե՛, ինչ եմ հոգում, բայց ի՞նչ լեզվով պիտի գրես,— հարցուց նա:

— Իհարկե հայերեն— պատասխանեցի:

— Եթե հայերեն պիտի գրես, վախ չիկա. ուզում էի իմանալ՝ ո՞վ է քու հայերենի կարդացողը:

— Ալուր ըլի, թե չէ՝ մկներ կգտնվին,— պատասխանեցի առածով:

— Իսկ դու ինչո՞վ վերջացուցիր քու «սիրո արկածը»:

— Ես երեք օրեն պիտի պսակվիմ, և հուսամ որ՝ դու իմ խաչեղբայրը կլինիս:

— Ինչու չէ, լավ, եթե միայն պսակվելու լինիս. բայց «կուտիս ծվում է», դու ոչ այդպես վաղ պիտի պսակվիս և ոչ այդ աղջկա վրա:

— Կտեսնենք:

— Կտեսնես:

Փոքր մի սպասելից հետ Հովհաննեսը նորից սկսավ.

— Արե՛, Միքայել, դու էլ իմ օրինակին հետևե. ի սկզբանե ես քեզ պես կարծում էի թե՛ առանց տերտերի օրհնելուն մեր սերը սիրո չի նմանիլ, և այդ պատճառով շատ աշխատեցա, որ Մարին իմ օրինավոր կինը դառնա, բայց երբ տեսա, որ նպատակիս չի հասցնելու համար մարդիկ առջևս քար ու պատեր են դնում, ես առանց արտաքին ծեսերի էլ «յուլա գնացի» և տեսնում եմ, որ դորանով սերս դեպի Մարին ոչ փոխվեցավ և ոչ սառեցավ:

— Բայց հարգանքը դեպի նա, որ ամուսնական կյանքի ամենակարևոր պայմանն է, ասացի ես:

— Է՛հ, դու էլ, զարմանալի մարդ ես եղած. ամեն կատարելություն միասին ե՞րբ են գտնվել, որ այժմ գտնվին:

«Վա՛յ այն սերին, որի կեսը հարգանք չլինի, ասացի ես մարդարիտը անգին բան է, բայց հենց որ կոտրեցիր՝ դինը գոռ է: Ախտավոր կնկան հավանել կարելի է, խոսք չունեմ, դեպի նա կիրք ու տագնապ եւ կարելի է ունենալ, այդ էլ աներկբայելի է, բայց սիրել՝ «ոչ երբեք»:

Դու ինչ կուզես ասա. բայց ինձ այնպես է թվում, որ ես ավելի սեր ցույց տվի իմ Մարիին, քան թե դու՝ քուկիդ: Իմ կարծիքով սիրել՝ նշանակում է աշխատել տիրելու. ես Մարիիս արգեն տիրեցի, այսուհետև ոչ ոք նրան ձեռքես չի խլիլ, նշանակում է, որ ես նրան սիրում եմ:

— Հովհաննես, գիտե՞ս ինչ, ասացի, Chaque baron a son gout.

Եվ սորանով մեր վեճը վերջացավ:

Կենցաղաչիտական կողմից կարելի է, որ Հովհաննեսը իրավացի էր. մանավանդ որ ինքը Մարին եւ դրա նման մի բան ակնարկում էր ինձ իհարկե, կույր-զկույրյան հետևելով նորա կամքին ու պահանջմունքին, ես առավել երջանիկ կլինեի, բայց ի՞նչ անեի, երբ մեզս ուժ չի կար ծնողացս ներշնչած սկզբունքները հանկարծ ու այդպես կոշտ կերպով քանդելու: Ես մինչև այժմ չգիտեմ լա՞վ էր արածս, թե վատ: Ես գուցե ընդունակ էի... Սոկրատես, Շիլլեր, Գյոթե, մինչև անգամ Շեքսպիր լինելու, բայց բայց Ռիշելիյո՝ ոչ երբեք:

Ը

Մյուս առափոտ որ գնացի Մարիի բնակարանը, գաղղիացի գերձակուհին նորա մոտ էր ու պատկի հալալն էր վրան շափոթի Մինչև այն օրը Մարիին միշտ միևնույն անպաճույճ հալալով կի տեսել. բայց այս անգամ, որ պերճ, քղանցքավոր թանկագին սպիտակ կերպասե հագուստով տեսա՝ հիացած մնացի. ոչ թե կենդանի կին, այլ երեւելի նկարիչների պատկերների վրա անգամ տեսած չէի այսպիսի զմայլեցուցիչ գեղեցկություն. բայց շատ անակագույն ու թավ մազերը ճոխ ճոխ փունջերով ցրված էին

ուսերի, մեջքի ու լանջերի վրա. իրանքը ախպես քնքուշ, փափուկ ու շնորհաշուք էր, ասես թե կաշիի փտե ոչ բակոր կար և ոչ միս, այլ լցրած էր այն հյուսիսաբաղին (tara) փետրով: Թր ու կես էր մնում պսակիս. Հովհաննեսի ասածի պես, Հովք երանելիի համբերությունն էր պետք, որ մարդ խելքը չի թոցներ գլխեն, այսպիսի գեղեցիկ արարած առջևը տեսնելիս: Քանի քանի անգամ թերահավատել էի, միտք անելով թե՛ մի գուցե Հովհաննեսը ավելի իրավացի էր յուր բեալական հայացքով իրերի վրա, քան ի՞նչ ես իմ պլուրիզմով:

Մարին եկավ գրկվեցավ, գլուխը դրավ կուրծքիս ու ասաց՝ «Միքայել, ասա ինձ ճշմարիտը, իրա՞վ ես այնպես սիրուն եմ, ինչպես որ ասում է ինձ հայլին»:

— Այո՛, ասացի, մի բան էլ ավելի: Հայլի մեջ ցուլացածը ո՛չ հոգի ունի, ո՛չ մարմին, իսկ դու երկուսն էլ ունիս, հետը միասին Սոկրատեսի խելքն էլ:

«Միքայել, եթե աստված տա, քանի մի ժամանակեն քու կինը լինիմ, հավատացնում եմ, որ շատ կբախտավորացնեմ քեզ. ամեն հնարք ցորձ կդնեմ, որ դու ուրիշի ամուսնական կյանքին չնախանձիս: Ծ՛. դուր գալու ինչ ու ինչ գաղտնիքներ ես գիտեմ»:

Կանգնած տեղերս նա շարունակում էր փիլիսոփայություն անել: «Եթե կինը խելք է, նա բոլոր հույսը չի պիտի դնե յուր մարդու տված խոստմունքի ու հավատարմության երդման վրա. այդ շատ թույլ առհավատշյա և ապահովություն է ընտանեկան անդորրության ու բախտի համար. կինը ամեն ռոպե դուրեկան, հավանելի պիտի լինի յուր մարդուն և, եթե կարելի է այսպես ասել, մինչև վերջը պիտի մրցե յուր շուրջը գտնված ծանոթ կանանց հետ ոչ միայն բարոյականության, այլև ամեն մանր մունր կանացի հրապույրքների կողմանե, որով նա դեպի իրեն ձգում է ամուսնու սիրտը և անտեսանելի շղթաներով ամուր կապում է յուրիկի հետ: Եթե ինձ հարցնես, տրամարդոց անհավատարմության մեջ մեծավ մասամբ կանանքն են մեղավոր— իհարկե խոսքս անառակների վրա չէ, այլ փոքր ի շատե օրինավորներին— սիրուն լինելը մեզանից կախյալ չէ. բայց դուրեկան լինելը ամեն կնկա պարտքն է ու նոցա առանձին արժանավորություններից միներն է: Կանանց անհավատարմության համար ես խոսել անգամ չուզեմ. առնացի կինը ոչինչ արդարություն չունի յուր անհավատարմության համար, ո՛չ մարդու սառնությունը, ո՛չ չբավորությունը

և ոչ նորա ընկերների գեղեցկությունը... ընկած կինը կարող է առաջարկել զղջումն, ապաշխարանք, արտասուք, ափսոսանք, բայց չքօնեղություն, արդարություն՝ ո՛չ երբեք, ինչպես և ո՛չ մի գող կամ մարդասպան կարող է յուր հանցանքը ու ոճիրը արդարացնել աղքատությունը: Ժորժ Սանը թեև ինքը կին էր, բայց շատ վատ իմաստասիրել էր օրինավոր կնանիքի բարոյական սկզբունքները. նա թույլ փաստաբան էր թեթևաբարո կանանց: Ժորժ Սանին կարդալը և՛ կարելի է, և՛ պետք է բայց նորանից խելք ու խրատ սպասելը հիմարություն է»:

Թեև շատ բանի մեջ համաձայն չէի Մարիի հետ, այնուամենայնիվ շատ ուրախ էի, որ նա այսպիսի ծանր հարցի մեջ, ինչպես որ ամուսնական հարաբերության հարցն է, յուր սեփական, գրքե չի քաղած կարծիքն ունի. ես ինքս ինձի մխիթարում էի, որ ժամանակով կարող կլինենք միասին ավելի խոր և հիմնավորապես զննել կանանց հարցը:

— Շատ լավ ես դատում,— ասացի Մարիին, բայց որովհետև ես դեռևս շատ գործ ունիմ կատարելու այս օրուկեսվա մեջ, այդ պատճառով ամուսնական կյանքի խորհրդածությունը թողնում եմ ավելի ազատ և բարեհաջող միջոցի: Դե՛, ցտեսությունս ես այժմ պիտի երթամ համալսարան՝ վկայականներս հետ ստանալու. հետո պիտի երթամ բնակարան վարձելու. հետո ինձ համար աշխարհական հալավ ապսպրեմ. հետո տան համար ամենակարևոր կարասիք ու խոհանոցի համար «աման-չաման» զննմ, վերջապես՝ հայ քահանայի հետ ևս պետք է ինչ ասես խոսիմ մեր պսակի համար և այլն, և այլն. մեկ խոսքով՝ անելու բան շատ ունիմ: Հուսամ որ այս վերջին անգամն է քեզ մնաս բարև ասելս. մի անգամ էլ որ տեսնվինք՝ այնուհետև հավիտյան չենք բաժանվիլ իրարե: Ասացի ու, ասես թե սրտիս մեջեն մի բան կտրվեցավ ցած ընկավ. մի անմեկնելի վիշտ պատեց սիրտս: Գնա ու այսուհետև մի՛ հավատար հոգվո վկայություն: Զէ՛, ո՛վ ինչ կուզե թող ասե, բայց մարդուս շուրջը մի բան կա, որն մենք մեր հինգ զգայարանքով բռնել չենք կարողանում. բայց նա կա ու կա, թեկուզ քարը տրաքի:

«Ցտեսություն, իմ աննման Միքայել»,— ասաց Մարին, ու այնպես պինդ փաթաթվեցավ վզիս, որ ասես թե, է՛լ անհնար էր միմյանցե պոկ գալ. արտասուքը նորից գոհարի պես ցուլացին

աչքերին, բայց այս անգամն ուրախության արտասուք չէին նորա. երեսի մեջ դարձյալ նույն մահու գատակնիքը կարողացի:

— Մարի, ի՞նչ եղավ քեզ, ինչո՞ւ այդպես տխուր ես,— հարցուցի:

«Ոչինչ, սիրական Միքայել,— պատասխանեց նա, հանկարծ չգիտեմ ինչ պատճառով ինձ այնպես թվեց, որ մահս մոտեցել է, իբր թե հասնելու չեմ իմ պսակի օրվան... էհ, ուշադրություն մի՛ դարձնի իմ վրա. դու երևի շատ սակավ ճանաչում ես մեղ շվեցարուհիներին. մենք թեև հուշակված ենք ինչպես կրթյալ դարգացած ու խելոք կանայք, բայց սնտիապաշտութենն, որ ասես թե ամեն կնկա բնածին է, ազատ չենք: Դա ուշք մի՛ դարձնի իմ ամեն մի արտասուքի ու նախազգացմունքի վրա, դու քու բանն արա, ինչ որ պետք է պատրաստե՛, ոչ մի հարկավոր բան բարձի թողի մի՛ անիլ. բայց հենց որ գործերդ ավարտեցիր՝ իսկույն շտապե գալու. ես թեև կաշխատեմ սիրտս ամուր պահել, բայց դու ինձ երկար ժամանակ մի՛ թողնիլ. անմեկնելի մահագուշակ վիշտով լցված է սիրտս: Դեհ, սիրական գանձս, իմ մեկ հատիկ ուրախությունս աշխարհիս վրա, գնա, շուտ, շուտ էլ վերադարձիր, ոչ մի րոպե չի դադարիս իմ վրա մտածելու»:

Թողի Մարիին ու սենյակեն դուրս գնացի. բայց դեռևս նախասենյակեն չէի ելել— թիկնոցս ու գալոշներս էի հագնում— հանկարծ ներսի դուռը զղրղոցով բացվեցավ, Մարին դուրս պըրծավ. խելագարի նման փաթաթվեցավ վզիս ու նվաղեցավ. հագվիվհազ երեսին ջուր սրսկելով ու ճակատին ու քունքերուն քացախ քսելով՝ կարողացանք ուշքը վրան բերել:

— էլի ի՞նչ եղավ քեզի,— ասացի բոլորովին շփոթված. Մարի՛, Մարի՛, հնար չի կա, որ դու կա՛մ մի սոսկալի գաղտնիք ունիս, կա՛մ թե հիվանդ ես:

«Ոչինչ, ոչինչ,— ասաց նա,— միամիտ գնա քու բանիդ. միայն թե երկար մի՛ թողնիլ ինձ մենակ... մի՛թե դու չգիտես, որ շվեցարուհին սիրելը այնքան հեշտ բան չէ,— ասաց, խոսքը հանաքի դարձնելով ու զորաքի երեսը ուրախ ձևուցնելով.— մենք շվեցարուհիներս այդպես ենք, եթե մեկին սիրեցինք՝ մեր բոլոր գոյությունով կսիրենք, և մեր սիրո առարկայեն բաժանվիլը ահա այդպիսի հետևանքներ ունի, որն որ տեսար»,— ասաց, և տենդաճուլոց ցնցմունքներով սկսավ ամուր ծիծաղել:

Ես հանգստացա, բայց կհսով չափ: Նորից առի զդակս ու դուրս գնացի:

Բակ որ մտա, մի օտարական, ըստ երևույթին արտասահմանցի գերմանացի՝ ինչ որ հարցնում էր դռնապանին ու ես, թեև վրան մի առանձին ուշադրություն չի դարձուցի, բայց կարծես թե ականջիս «Մարի» անուն լսվեցավ նոցա խոսակցութենեն: Տունը, ուր կենում էր Մարին, մի փոքրիկ քաղաքի մարգարեակութուն ունեւր. հավատս մի չէ, քսան-երեսուն զանազան Մարիներ լինեին նորս մեջ. այդ պատճառով օտարականի հարցուփորձը բանի տեղ չի դրի ու գնացի կառապան վարձելու:

Մինչև որ համալսարանեն վկայագիրները հետ կօտանայի, մինչև որ դերձակին հալալներս կապսպրեի, մինչև որ հարմար բնակարան կգտնեի, մինչև որ կահ-կարսսքները ու ամանիքը կգտնեի,— շատ ժամանակ անցավ ու գիշերվա տասը ժամը եղավ: Արդեն ուշ էր Մարիին հանդիպելու. քունս չէր տանում. տուն էլ երթալ չէի ուզում: «Արի երթամ,— ասացի ինքս ինձի, քահանայի հետ խոսեմ՝ առաջիկա պակի մասին ու էգուց, ամեն բանը աւարտած, հանդիստ հոգով, բոլոր օրը միասին կանցնեմ Մարիի հետ»: Էգուց չէ մյուս օր նշանակած էր մեր պակը:

Քահանային տանը չի գտա. իսկ վարդապետը տանն էր: Մերունի Եփրեմ վարդապետը (որ այսպիսի բախտախնդիր արկածքների համար շատ պատվական ու հարմար մարդ էր, աստված ողորմի հոգուն) զարմացավ իմ այդպիսի ուշ ժամանակվա այցելությանը: Կարճ խոսքով, ես մեկնեցի բանի բոլոր հանգամանքը:

— Այդ ամենը շատ լավ է,— ասաց նա, դիցուք թե դու սիրո համար զոհում ես համալսարանը, քու ապագան, քու պատանեկութունը— այդ ամենը դեռևս հասկանալի է. բայց ես ինքս ինձի ինչպե՞ս մեկնեմ կամ դու ինչպե՞ս ինքներդ ձեզի թույլ եք տալիս այդպիսի անհարմարություն, որ բոլորովին հակառակ է ու միայն պարկեշտություն, այլև իրզմատանքի. քու ասելով հարսդ աչն ինչ Յ օր է, որ թաղել է յուր մորը... օրհնածնե՛ր, զոնե ողորմելի հանգուցյալի քառասունքն էլս կատարեիք, հետո... էգ ի՞նչ անժուժկալություն է...

Ու սկսավ գլխուս այսպիսի հոգեշահ գալլի շարականներ կարդալ, մասամբ թեև սավրոսեն (որն շատ սիրում էր կարդալ, բայց մեջի խրատքները ինքն էլ շատ չէր կատարում), մասամբ էլ քով

հորինածներն: Վարդապետ ասածդ ի բնե խրատատու է, բայց ո՛չ խրատակատար:

Ծս պատասխանեցի, որ մենք ստիպված ենք մեր պակը շուտացնել մի մեծ վտանգե աղատվելու համար. իսկ ինչ որ կվերաբերի հանգուցյալի հիշատակը ըստ արժանվուն հարգելուն, թս խոսք եմ տալիս, նախ՝ պակիս թագը վեր շառնել զլիսես և նաբոտը վզես չի հանել զոնե մի ամբողջ տարի:

«Այդ շոկ բան է,— ասաց ժպտալով Եփրեմ վարդապետը ու հանգստացավ:— Ուրեմն կարող եք պակվիլ»:

Պ

Բոլորովին հանգստացած տուն վերադարձա: Հովհաննեսը դեռևս եկած չէր, ո՛վ գիտե ո՛ր բարեկամի հետ պանդոկումը թեյ խմում կլինե՞ր՝ երգեհոնի ածած նվագները լսելով, որն առ ի շոքյե լավագույնին, շատ սիրում էինք երկուսս էլ՝ Քերոբն էլ մեր հետ:

Հոգվով մարմնով վաստակած, շորերս հագիս, ընկա բազմոցի վրա ու բույե շանցած քնեցա: Բայց ինչ քուն: Կհավատա՞ք. տասն անգամից ավելի ահ ու սարսափով տեղիցս վեր եմ թոել այն գիշեր. մինը մյուսից քստմենլի երազները բոլոր այն գիշերը դժոխային արհավիրքներով տանջեցին ինձ. դաշույն, արյուն, թույն, ատրճանակի պայթյուն, դազադ, գերեզման, պատանքած մեռել— ո՞րը կուզես:

Գնա ու այսուհետև նախազգացումների, հոգու վկայության «պարզատեսության» մի՛ հավատար:

Այս բոլոր պատմածիս մեջ մի հովտ սուտ, կամ մտացածին բան, կամ զարդարանք չի կա. ինչ որ գրում եմ՝ բոլորը լուսանկարի ճշտությամբ եղած պատահած բաներ են:

Թեև առավոտը ծառան ինքնաեղը ներս բերեց, բայց ես տան թեյ խմել չուզեցի. ասես թե մի աներևույթ զորություն ինձ քաշում էր դեպի Մարին: Գրակա առի, թիկնոցս վրաս ձգեցի ու դուրս թռա: Կառապանը սայլադրանս մոտ կանգնած էր: Մախս շարած նստա կառքը, ու կառապանին հրամայեցի ձին քշել: Թեև խեղճ կենդանին բավական արագ էր վազում, բայց բույեները ինձ մի-մի տարի էին թվում: «Շո՛ւտ արա, քշե՛, զա՛րկ ձիին», հրամայում էի անդադար կառապանին, ու անհամբերութենես ուզում էի դուրս թռչել՝ կառքեն ու ոտով վազել, կարծելով թե՛ այդպես ավել շուտ

կհասնեն: Վայնաշարին, վերջապես հասանք Մարիի տան առջև Գոնապանը ինձ որ տեսավ, շփտեմ ի՛նչ փնթփնթաց, բայց ես նորա խոսքի վրա ուշք չդարձուցի ու վազեվազ սանդուղքներեն դեպի վեր բարձրացա: Նախասենյակումը շատ մարդոց արագախոս և խառնաշփոթ ձայներ լսվում էին. ոստիկանություն քանի մի զինվորներ էին կանգնած, աստիճանավորների թիկնոցներ ու գրակներ ձեռքերումը բռնած: Զարմացած մնացի, թե այս ի՞նչ էր նշանակում: Հանկարծ առջև եկավ Մարիի բնակարանի տանտիկինը ու երեսը սպրդնած, ասաց ինձ. «Մարին հրամայեց ձեզ երկար ապրել»: Առաջին նվազ նորա խոսքերեն ես ոչինչ չհասկացա. խելագարի նման մի բան էի:— «Ի՛նչ ես հաչում»— ասացի բարկացած, կարծում էի թե՛ գիշերվա երազներես շարունակությունն է:

«Հա՛, ջահել պարոն,— հաստատեց մյուս պառավը, Մարին— աստված հոգին լուսավորե— այս գիշեր թույն խմել է ու մեռել Մենք բան չգիտեինք, բայց առավոտս որ ինքնաեռը ներս տարանք, նայենք դեռևս տեղերումն է, զարթնած չէ. այդպես երբեք պատահած չէր. նա միշտ վաղ էր զարթնում, խղճուկը. երբ որ մոտեցանք անկողնին և ուզում էինք զարթեցնել, տեսնենք՝ երեսը դեղնած է, աչքերը կիսաբաց ու չորս կողմը կապտած, մարմինն էլ սառած, փետացած: Իսկույն դռնապանին...

Այլևս չկարողացա նորա պատմածը լսել, այլալլած ներս մտա, ինչ տեսնեմ...

է՛հ, այդպիսի բանը կզգացվի, բայց չի պատմվի:

Թաղապետի ձեռքումը մի կնքած ծրար կար, հասցեն իմ վրա ուղղած: Հասցեկազմ, բայց դողդոջուն մատերով կոտրեցի կնիքը ու մոլորված աչքերով կարդացի նամակը, որի բովանդակությունը այս էր.

«Ներե՛ ինձ, սիրական Միքայել, որ իմ բարեկամությունը, բացի վիշտ ու թախիծեն, ուրիշ ոչինչ չի տվավ քեզ այս հինգ օրերը: Բայց իմացիր թե՛ որքան ես քեզ պիտի սիրեի, որ ուրիշին չի պատկանելու համար, քու անունդ հիշելով՝ մեռնում եմ: Հայրս ու մայրս, երբ դեռևս իմ երեսայություն ժամանակ, խոսք էին տվել ինձ ամուսնացնել իրանց հինութ բարեկամի միակ որդու հետ, որին ես փեսա էի ճանաչում— քեզ չի պատահած մինչև անգամ կարծում էի, թե սիրում եմ նորան— տասը տարից ավելի: Երեկ հենց որ դու գնացիր իմ փեսան էլ ներս մտավ, ու հիշեց

մեր ծնողաց ուխտը և իմ երդումները: Բոլոր ժամանակ որ նա ինձ մոտ էր, ես լուռ էի, ոչ մի խոսք չարտասանեցի: Մերժել նորան՝ ուխտազանցություն էր. հոժարել նրա առաջարկությանը՝ զորութենես վեր էր. դեպի քեզ ունեցած սերս ամեն սահմաններև անցել էր... Մնաս բարև, իմ սիրական, իմ աննման Միքայել. մի՛ անիծիլ ինձ. իսկ եթե կարող ես՝ երբեմն հիշե անբախտ Մարիին: Այժմ հասկանո՞ւմ ես, անփորձ երեխա դու, ինչո՞ւ թախանձագին խնդրում էի քեզ գողանալ, փախցնել, բանի կինդ շինել ինձ... դու համառությունը մերժում էիր իմ խնդիրս, դու չհամարեցար, առանց մի վայրկյան կորցնելու, ինձ քու կինը դարձնել (ժամանակը շատ կարճ էր) ինձ կինդ անել քու ձեռքն էր, բայց քու հարսդ լինել ես չէի կարող— ես նշանած էի»:



Որի՞ն ի՛նչ բան, թե որքա՛ն վշտացել եմ, որքա՛ն լացել եմ, քանի՞ տարի խորին սուգ պահել եմ ես Մարիի համար: Այդ ամենը, ինչպես նվիրական գաղտնիք, թող մնան իմ մեջ:

Մյուս օրը իմ ձեռքով հողը դրի թշվառական աղջկա մարմինը. ու իմ առաջին սերը: Սզավոր (գուցե և հետաքրքիր) հանդիսականներեն թաքուն՝ դադադի մեջ սպրդեցուցի լուսնայատան պահ տված բոլոր փողս:

Մարիի նման շնաշխարհիկ գանձը կորցնելու հետ՝ ժանգոտ ոսկին ի՛նչ արժեք պիտի ունենար իմ աչքումը:

1864-ի հուլիսի ամսու մեջ կովկասի կողմերեն մի տասնհինգը—բասն տարեկան հայ երիտասարդ եկավ Պետերբուրգ՝ համալսարան մտնելու: Տարեկան, այսինքն կուրսն կուրս փոփոխելու ուսանողական քննությունները նոր ավարտած էին. իսկ նորասմտանների քննության ժամանակը շատ հեռու էր, որովհետև նորքա, ինչպես հայտնի է իրենց քննությունները տալիս են հետամուտք արձակուրդին, որ կատարվում է երբեմն օգոստոսի վերջերը, իսկ շատ անգամ սեպտեմբեր ամսու սկզբանն. այնպեսով, մեր հայ երիտասարդը առջև գրեթե երկու ամիս ազատ ժամանակ ուներ: Նորա այսպես շուտ մայրաքաղաք գալը կարող էր երեք պատճառն հառաջացած լինել. կամ նա ուզացել է առաջիկա քննությունների համար երկարատև և լավ պատրաստվիլ կամ ուզացել է նա ուսանողական պայմաններին վաղորոք ծանոթանալ և կամ Պետերբուրգի գոված ամառնային դաստակերտական կյանքը վայելել, որ ըստ մեծի մասին լիքն է լինում ուսանողական արկածներով, որք չափազանց հրապուրիչ են գովառքնակ երիտասարդներուն, և մանավանդ նոցա, որոնց երակների մեջ հորդ վազում է հարավային եռացող արյունը:

Բայց այդ հիշած երեքեն ոչ մինը չէր իսկական պատճառը մեր հայ երիտասարդի ժամանակն առաջ Պետերբուրգ գալուն: Նա ուրիշ հաշիվ ուներ և նորա հաշիվը այս էր: Չբավոր ծնողքի զավակ լինելով՝ նա շունեն հնար յուր սեփական հաշիվով շորս կամ հինգ տարի, ինչպես ուսանող ապրելու մայրաքաղաքի մեջ ի բն հպարտ և անձնասեր գոլով՝ նա չէր ուզում, յուր շատ համազգի երիտասարդների նման, մտնել ի թիվս այն երիտասարդների, որոնք լուկ օրական ապրուստի համար, իրանց ամենաթանկագին գանձը— իրանց համոզմունքը— դնում են կեղծ ազգասիրության դիմակի տակ... Չէ, մեր նորեկ երիտասարդը շատ բարեկիրթ էր այդ անտանելի պայմանին ինքն իրան ենթարկելու համար: Թիֆլիզի գիմնադիայի մեջ նա առաջին մաթեմատիկն էր այն շափով և սահմանով, որքան վարժապետները ավանդում էին համաշխարհային պատմություն, աշխարհագրություն, լատին լեզու, և այլն, նա այնպես լավ սովորում էր և լավ գիտեր, որքա-

յուր քաղաքի մեջ ամենաբնական աշակերտն էր համարվում, օրենք ամբողջ տասներկու ժամ յուր դասերով պարապելը նորա համար մի սովորական բան էր դարձել. իսկ ինստիտուտի վերին դասարանի աշակերտուհիները նորա մեջ պինդ արմատացրել էին համոզմունքը թե նա ունի չքնաղ դեմք ու իրանք: Այսպիսի բանտար և ստացական գեղեցիկ հատկություններով ամոթ չէ՞ր մի փառասեր երիտասարդի՞ յուր գլուխը ծռել մի քանի հեթ մեկենասների առջև, գլուխը՝ որ վարդարած էր արջնաթույր, ցուլուն և գանգուր մազերով, շուխտակ խոշոր, կրակոտ, այրող աչքերով ու անտիկական սիրուն երեսով: Չգիտեմ ինչպես ուրիշը, բայց այդպիսի մանր ու շնչին շնորհի համար շատ անձնասեր էր մեր հայ երիտասարդը: Այո՛, Ալթմազովի միակ պակասություններին էին— անձնասիրությունը և փառասիրությունը:

Հարություն Ալթմազովի... Լսո՛ւմ եք՝ Ալթմազով և ոչ թե Ալթմազյան... Նորա փոքր հասակեն՝ խոհեմ հայրը հավատացրել էր, որ այդ շնչին «յան» մասնիկը կարող էր շատ խոշ ու խուժ գնել նորա առջև՝ կենցաղույս ալեկոծյալ ծովի մեջ և երբ միաժամ ժամանակ երեսան հորը առջև բերում էր թե՛ այդ մասամբ իվիք կնշանակե ուխտագրուծ լինել ազգային զգացմունքին, և հիշեցնում էր այն անհարմար «յան»-ները, որոնք փոքր առ փոքր, բայց անդադրում հայտնվում են այս և այն երիտասարդների մականվանց ետևներեն— խոհեմ հայրը ավելի համոզիչ օրինակ էր բերում մայրաքաղաքի քանի մի պաշտոնատարների «ով» լինելը, որ ամենևին արդեւ չէ նոցա ժամանակ-ժամանակ արժանագին ազգասիրական երախտիքներ անելով ազգի մեջ պանծալի ազգասերների հուշակ վայելելու: Ես շարունակում եմ պատմությունը: Հարություն Ալթմազովը ծնել էր Երևանա գավառի անհամար գյուղերից մինի մեջ. նորա հայրը մուլքադար էր և ուներ մի ջաղացք և մի փոքրիկ այգի, որ ամենը միասին տալիս էին նորան տարեկան հազար մանեթի շափ արդյունք, որով նա շատ համեստ կերպով կենում է յուր բազմանդամ գերդաստանովն. բայց մի կոպեկ ավելի շունեք յուր սիրական Հարությունին օգնելու, որ յուր յոթը տարվա Թիֆլիզի գիմնադիայում սովորելու միջոցին մի բմբուլի ծանրություն չի տվեց ծնողքին: Առաջին տարին նա կենում էր մի հեռավոր ազգականի տանը, մյուս տարիները նա արդեն ճարել էր մասնավոր դասեր, որից ստացած փողովն ոչ միայն անդորր ապրում էր, այլև մի պառավ օտարուհու ամաս-

կան տասներկու մանէթ տալով՝ սովորում էր նրա մոտ ֆրանսերէն, գերմաներէն և երաժշտութիւն, որը շարունակեց մինչև գիմնազիային դուրս գալը: Տասնինը տարեկան լավ սովորած գիմնազիստ, սիրուն, բարեկիրթ— ո՞ր աշխարհքի մեջ կարող էր կորչել, որ Պետերբուրգի մեջ կորչեր, ուր երիտասարդների մեջ, երբեք այնքան շատ լավ պայմաններ չեն ամփոփվում, որքան որ ամփոփված էին Ալթմազովի մեջ: Ալթմազովը վաղուց արդեն սովորել էր առաջնակարգ աշակերտ համարվելու. շատ դժվար էր նորան այդ համոզմունքեն ու գիտակցութենէն հրաժարվելու՝ կուզեր նորա կեցած քաղաքը Թիֆլիզ լինել, կուզեր Պետերբուրգ, կուզեր Լոնդոն: Անձնասպանութիւնը արդեն նորա մեջ խորունկ արմատներ ձգել էր:

Պետերբուրգ գալով, ինչպես շատերին և գրեթե միշտ պատահում է, նա չի շվարեցավ, չի մոլորվեցավ, ինքնիրան չի կորուց. նա յուր կենցաղի և ապագա գործունեութեան ծրագրերը ազդեց վաղուց արել էր: Մայրաքաղաք հասած չի հասած, իսկույն հրամայեց կառապանին՝ տանել իրան Մեծ Մորսկոյ ասած փողոցը, ուր երկելի հյուրանոցներեն մինումը սենյակ վարձեց: Հետքացեց պայուսակը, հանեց մեջեն պահածու հալամները, հագավ, ծոցը դրավ Թիֆլիզի գիմնազիային ստացած վկայութեանը և իսկույն գնաց համալսարան. դռնապանեն հարցուց մի քանի, իրան պետքական պրոֆեսորների անունները ու հասցենները և սկսավ այցելութիւն անելու. քանիսին տանը չի գտավ,— նոքա կամ արտասահման էին գնացել, կամ ամառանոց տեղափոխվել— միայն մինին գտավ տանը, որ տեսնելով նրա շնորհալի դեմքը, շափազանց անձնապատան խոսակցութիւնը, թղթի միջի վերժայտները գովասանական վկայութիւնը, եթե ոչ համակրութիւն, գոնե ակամա ակնածութիւն զգաց դեպի այդ ապագա գիտնականը: Ալթմազովը նորանից խնդրեւմ էր յուր համար գտնել մի լավ ընտանիքի մեջ դասեր: Պրոֆեսորը կոկիմալով «ստիպենդիայի»¹ անուն տվեց, որով ուզում էր հասկացնել նորան, որ դրամական օգնութիւնը, որ տալիս է համալսարանը խեղճ ուսանողներին, մասամբ իրանից կախված է, եթե միայն նա, Ալթմազովը, աշխատասեր, հառաջադեմ և օրինապահ ուսանող լինի: Երբ որ ստիպենդիայի անուն լսեց՝ Ալթմազովի ցոլուն

աչքերեն կայծ ու կրակներ թափվեցան: Ոտքեն մինչև գլուխ չափեց պրոֆեսորին. ստիպենդիա՞, օգնութիւն, ողորմութիւն, այն էլ որի՞ն, մի քաջառողջ հաղթանդամ երիտասարդի, որի հասակը քիչ-քիչ երեք գագ էր, որի երեսատիսարքը ասիական Ապոլոնին էր նման և որի գիտութիւնը մի փոքրիկ գավառական համալսարանի պրոֆեսորի կհավասարեր... Պրոֆեսորը տեսավ, որ մեծ անմարդավարութիւն արավ ստիպենդիայի անուն տալով այդպիսի երիտասարդի առջև, որ եթե ասեր թե՛ Ավդանի Յազուր խանի որդին եմ, ոչ ոք երկմտելու չէ՛ր, նորա դեմքի վրա այնքան խրոխտ հպարտութիւն ու անձնապատանութիւն էր նկարված: Իսկ սիրունութիւնը, աչքերի ցոլքը, թթի անտիկական կտրվածքը, ճակատի չքնաղ համաշափութիւնը, ասես թե Ֆիդասի կարկինով նախագծած... Յուր ակամա սխալը ուղղելու համար պրոֆեսորը ամենաքաղաքավարի խոսքերով նստեցուց Ալթմազովին, երկարբարակ խոսեցավ հետը, հարցուփորձ արավ Կավկասի և Հայաստանի վիճակի մասին, թեթև ու աննկատելի կերպով քերվեցավ նորա առտնին պարագաներեն և երբ որ Ալթմազովը առավ գդակը ու պատրաստվում էր երթալու, պրոֆեսորը ամենաքաղաքավարի խոսքերով միամտեցնեց նորան, որ այսօր ևեթ մի երկու բարեկամների կհանդիպի և անպատճառ կաշխատե նորան բավարար պատասխան տալու: Պրոֆեսորը շնորհագով հարցնել նորա հասցեն և ապա ճամփա դրավ, և երբ յուր առանձնասենյակը մտավ և ուշքը մի փոքր վրան եկավ, խեղճ մարդը ասաց իրան. «Այս ի՞նչ սատանա էր, խելքս չի հասնում. այդ ի՞նչ մարդ էր, որ ես տեսա,— իշխանա՞ն էր, թե ավագակապետի որդի. այսքան հպարտութիւն, այսքան համարձակութիւն, այսքան արտաքին շնորհք... Եվ այդպիսի որդիներ ունեցող ազգը հարյուրավոր տարիներ ի վեր ընկճված է կեղտոտ, աղքատ, տխմար, տգետ, անճոռնի թաթարներ և քրդեր— անհասկանալի՞ է: Չէ՛, հայ ազգի բնութեան մեջ մի տակավին չի լուծված առեղծանելիք կա»: Եվ երկար ժամանակ խեղճ պրոֆեսորի մտքեն չէր դուրս գալիս Ալթմազովի ցոլուն, խոշոր ու մի փոքր արյուն-կոխած աչքերի արած կախարդական ներգործութիւնը յուր վրա:

Ալթմազովը գնաց յուր հյուրանոցը: Ժամը ճաշի էր: Ծառան հարցուց նորան: «Որտե՞ղ կբարեհաճելիք ճաշ ուտելու. ձեր սենյակի՞ մեջ, թե հասարակաց ճաշարանումը:— Հասարակաց ճաշարանումը,— ասաց Ալթմազովն ու գնաց այնտեղ: Ծառանի

¹ Стипендия (stipendium), — նպատ, օգնութիւն փողով:

մեջ մի երկար սեղանի առջև արդեն շատ մարդիկ նստած էին— եկավոր բարձր աստիճանավորներ, զինվորականներ, օտար տե-
րութեան գործակալներ և շատ ուսու և օտարազգի ազնիվ կնանիք:
Երբ որ Ալթմազովը յուր սովորական ազատ բռնվածքով ու քայլ-
վածքով գնաց և մի ազատ սպասքի առջև նստավ, ամենքը և մա-
նավանդ կնանիք զարմացած՝ աչքերը նորա վրա դարձուցին և
շատերեն մինչև անգամ ակամա հիացման բացազանչություն
գուրս թռավ. Mais mon Dieu quelle beaute! Աստված իմ, որ-
պիսի՜ գեղեցկություն:

Ալթմազովը չի շփոթվեցավ, այդպիսի բացազանչություննե-
րի և ավելի խորունկ և համոզիչ արտահայտությունների նա ար-
դեն վաղուց բնակեցացած էր. նա թերևս կզարմանար, եթե մար-
դիկ, և մանավանդ կանայք առանց ուշադրության թողնեին
նորան, բայց ամենևին չի զարմացավ, երբ նորա ար-
տաքին շնորհքին հարկավոր հարկը հատուցին: Թիֆլիզի ինս-
տիտուտականներն էին մեղավորը, որ նա այդքան երես
առած էր:

Ճաշը վաղուց սկսվել էր և արդեն վերջանալու վրա էր: Մի
տարեց խաթուն կին, որ սաստիկ ուզում էր նորա հետ խոսք բա-
նալ, բայց չիմանալով ինչպե՛ս, ասաց նորան ֆրանսերեն. «Պա-
րոն, եթե կներեք իմ, գուցե անտեղի, հետաքրքրությունը, ասա-
ցեք, խնդրեմ, սպանիացի չե՞ք արդյոք:— Ոչ տիկին... պատաս-
խանեց Ալթմազովը նույն լեզվով:— «Ուրեմն իտալացի՞ եք»,
շարունակեց անծանոթ կինը:— Իտալացի ևս չեմ, ասաց Ալթմազո-
վը: «Ես գիտեմ, ասաց մի շոր-շոր, նիհար, բայց ազնիվ դեմքով
կին,— պարոնը հնդկաստանից է. հնդիկ ուշա՛յի որդի»— Այդ
ևս ոչ, ասաց հայ երիտասարդը: «Ես գիտեմ, ասաց գերմանե-
րեն երրորդ կինը, որ ամենեն մատաղահասն էր. պարոնը հարա-
վային Ֆրանսայեն է, թերևս Մարսիլիացի»:— Կսխալիք ամենքդ
ալ, տիկիններ, ասաց Ալթմազովը ամուր և համարձակ. ես կով-
կասիցն եմ, և մի փոքր կակազելով ավելցուց թույլ ձայնով. ես
հայ եմ:— «Հա՛յ եք», ասացին երեք կնանիքը և իրար երես նա-
յեցան:— «Ի՞նչ զարմանալու բան է որ, ասաց կամաց ձայնով
անգլիացի կինը, բայց որը լսեց Ալթմազովը. կավկասյան ցեղ որ
ասում են, այդ ես շատ նոր կարդացի թայմզ լրագրի մեջ, ոչ այլ
ինչ է, եթե ոչ բուն հայերը, որոնց մտավոր զարգացումն, կատա-
րելագործության ընդունակությունը և արտաքին գեղեցկությունը

միշտ և հանապազ գոված է եղել ամեն ազգերի մեջ: Եվրոպացիք
իզուր առգրում են այդ հատկություններն թեթևամիտ վրացիե-
րուն, կիսաթուրք, կիսամոնգոլ շերքեզներուն, այդ սխալ է...
Հայտնի բան է, մի քանի ազգերի նախանձն է, որ քաղաքական
դիտմունքներե գրգոված, պարզապես մերժում են և չգիտցողս
ձևանում են պատմական ճշմարտությունը: Փոքր Ասիայի ապագան,
նույն և Ստամպուլին, այդ խոմ մեր լորդ Դերբին վաղուց ասել է.
պատկանում է հայերին, եթե նոքա Թաղեսի երկու խոսքը հաս-
կանային— «Մանիր գթեզ»: Այդ թշվառ ազգի բոլոր անբախտու-
թյունը այն է, որ 1500 տարիեն ավելի է, որ ինքն իրան ճանա-
չել չի կարողանում: Հայերին ինքները իրանց չի ճանաչելը, իրանց
արժեքը չիմանալը շատ ձեռնտու է Տաճկաստանին, և այդ ազգը,
յուր սեփական շահերի համար, ամեն հնար գործ է դնում, ուրիշ
գիպվածներումն խորամանկ, բայց այդ տեղում թեթևամիտ հա-
յերին հավիտենական ագիտության ու կուրության մեջ պահելու-
նախնայց պատմությունը իմաստասիրելը, որ միշտ հետնորդնե-
նախնայց պատմությունը իմաստասիրելը, որ միշտ հետնորդնե-
րի աչքը բացել է, ուշի-ուշով աշխատում են հայերից հեռացնել՝
իբր զուր ժամանակի կորուստ և անօգուտ աշխատանք. մինչ՝
իբր հայերու բախտը, ամեն գիտություններեն առաջ, դորանից է
կախված: Խե՛ղճ ազգ»:

Այս խոսքերը, հարևանցի ասած, մեծ օգուտ կուտային Ալթ-
մազով երիտասարդին, եթե այն բոլոր նա յուր անձով շափա-
զանց զբաղված չլիներ: Այդ ու այդպիսի խոսքերը, նա «յան»
մասնիկի հետ միասին վաղուց հանել էր մտքեն, ինչպես «կեն-
ցադույս ծովի մեջեն դուրս ցցված խութքերը», որ կարող էին
նորա նավին վնաս հասցնել, ինչպես որ օր ու գիշեր խրատել էր
նորան զավակասեր ծնողը:

Ճաշեն հետ կնանիք և մի քանի օտարազգի երիտասարդներ
գնացին մյուս սենյակը, ուր կար դաշնամուր, և սկսան՝ ո՛րը եր-
գել, և ո՛րը նվագել: Ալթմազովն էլ գնաց խառնվեցավ նոցա մեջ:
Ամեն տեղ նկատված է, որ զանազան կողմերե ժողովված օտար-
ազգիներ՝ թե՛ նավի, թե՛ շոգեկառքի և թե՛ հյուրանոցի մեջ, առա-
վել՝ շուտ և սերտ կբարեկամանան, կմիավորվին, քան թե իրանց
սեփական քաղաքումը, իրանց սեփական օճախի առջև, որն ամեն
մարդ հաշաղկոտ աչքով պահպանում է օտարի ասպատակութե-
նեն: Հյուրանոցի օճախն այն առանձին հատկությունը ունի, որ

ամեն ազգի մարդոց բերում, միավորում է յուր հյուրընկալ շքապատր:

Կուշտ և թեթև ճաշեն հետ ամենքը տրամադրված էին զվարճութան. դաշնամուրի առջև առաջինը նստավ անգլիացի կինը և սկսավ Սկոտլանդի սարերու ուրախ ու խաղացկուն արծազանքները հնչեցնել. հետո նստավ (դաշնամուրի առջև) գերմանացին ու սկսավ Ստոաուտի վալսերը ածելու, որ դարձյալ դեպի պար էր հրավիրում, բայց լսողին գրեթեխենների հետ, լուսնյակ գիշերով, Քյուրնէբուրգի այսերով ու վճուկներով լցված անտառումը: Հերթը հասավ ֆրանսիացի կնոջը, որը նվագեց Ga ira-ն և Marseillaise-ը¹, որն լսելիս մարդ կատաղում էր:

Անգլիացի կինը դարձավ Ալթմազովին ու հարցուց. «Պարոնք սիրո՞ւմ է արդյոք երաժշտություն» — Ոչ միայն սիրում եմ, այլ մի փոքր գիտեմ ևս, ասաց նա և համարձակ գնաց նստավ դաշնամուրի առջև: Այս համարձակությունը ծիծաղելի լրբություն կարող էր երևել հյուրերի աչքին, եթե հենց առաջին ակորդները առնելիս, նոքա շնկատեին, որ Ալթմազովը ոչ միայն սիրուն երիտասարդ է, այլև լավ երաժիշտ է, եթե ոչ նվագահանդեսներում նվագելու համար, գեթ տնական ընկերության մեջ: Մի անհղահնչյուն ներածությունից հետո, Ալթմազովը նվագեց պոպուրի Կովկասի սարերու մեջ երգված տաղերեն, որոնք թե՛ իրանց նորությունը և թե՛ մեղեդիների ինքնուրույնությունը, հյուրերի վրա եթե ո՛չ հրապուրիչ, գոնե շափազանց ցնցող, ապշեցնող ազդեցություն արին: Երիտասարդ հայի մատերի արագությունը, երաժըշտության ինքնուրույնությունը, ունկնդիրների նյարդերի թուլությունը, նվագողի կրքոտ բնությունը միասին առած, այնպիսի ապավորություն արին կանանց վրա, որը կարող էր միայն աստվածաշնչի օժի՛ մեր նախամոր ականջին փսփսած ձայնին համեմատել: Mais c'est la perfection que ce jeune arménien là² — ասաց ֆրանսիացի կինը, կրքոտ աչքերը Ալթմազովի վրա նետելով:

— Das ist gefähreich³, — ասաց գերմանացի կինն ու աչքերը խոնարհեց:

¹ Ֆրանսիական հեղափոխական երգեր:

² Բայց կատարելություն է այս երիտասարդ հայը:

³ Հիանալի է:

— Անպատճառ Բագրատունիի ցեղեն պիտի լինի սա, ասաց անգլիացի կինը. այսքան կատարելություն մի մարդու մեջ՝ ակնեռև նշան է նրա կամ լորդի, կամ արքայական ցեղե լինելուն:

Երբ որ հյուրերը կամաց-կամաց հեռացան, Ալթմազովն էլ գնաց յուր սենյակը և ուզում էր փոքր-ինչ հանգստանալ: Հանկարծ սեղանի վրա թատրոնի երկու հայտարարություն տեսավ՝ մինը ռուսաց կոմեդիայի ներկայացման էր, իսկ մյուսը բալետի: Իհարկե երիտասարդը, և այդ՝ երակների մեջ հարավային արյուն ունեցողը կգերադասե երկրորդը: Սիրուն վճուկների նման աղչիկներ, բեմի վրա ձևացուցած առասպելական աշխարհ, հանդիսատեսների ճոխ ու շքեղ հագուստն ու թանկագին զարդարանքը, ամեն տեղ գեղեցկություն և երիտասարդություն, արյունի խաղ երեսների վրա, կրքերի արտահայտություն աչքերի մեջ, հոգեկան արբեցումն, մարմնո գրգռը, թմբրի թուպեական գիրկ, որից հետո սպասում է անողոր մահ ու, չգիտեմ ո՞ր իսկական երիտասարդի երևակայությունը չէր հրապուրիչ այսպիսի շքնաղ հեռանկարը. և ի՞նչ զարմանք, որ մեր համազգին նախադասեց արյուն եռացնող բալետը՝ կրքերը պաղեցնող խրատական կոմեդիային: Նա գնաց բալետ և նստավ բազկաթոռների երրորդ կարգը: Առաջին նվագ հանդիսատեսներեն ոչ ոք նրա վրա ուշք չդարձուց. բայց երբ որ վարագույլը բարձրացավ ու մայրաքաղաքի սիրական առաջնակարգ դերասանուհին գետնից մի կանգնաչափ թուլրտելով՝ եկավ ու ոտքի մատերի ծայրերի վրա կանգնեցավ բեմի մեջտեղը և հազարավոր ձեռների ծափահարության ուզում էր իր շնորհակալությունը հայտնել զլիսու քնքուշ խոնարհելովն ու ձեռների շնորհալի շարժելովը, — հանկարծ աչքը ընկավ Ալթմազովի վրա և քանի մի ակնթարթ անշարժ, ապշած մնաց: Այդքանը բավական էր, որ հանդիսատեսները հասկանային նորա ապշության պատճառը. թուպե շանցած՝ շատերի բինոկլները ուղղվեցան Ալթմազովի վրա: Ալթմազովը իսկույն հասկացավ, որ այս թուպեիս երկու ճանապարհ է բացվում նորա առջև, կամ մնալ թատրոնի մեջ և Պետերբուրգի առյուծների շարքը ընկնել, կամ՝ փախչել ու իր առաջադրած նպատակեն շտոտորվել: Հորը խրատները նորա մեջ խոր արմատներ էին ձգել: Նա կամացուկ թողեց թատրոնը և հեռացավ: Բայց թե ի՞նչ խրատներ էր տվել նորա հայրը՝ ասել չեմ կարող, եթե ցանկանայի ևս. բայց կար-

Պատմական ընթերցողը, շնորհալից որ այս ամեն բանը, որ ևս քեզ պատմեցի, պատահեցան իմ հերոսի՝ մայրաքաղաք զալու առաջին օրը. և եթե, դու այդպիսի լիակատար ստորագրութիւնն նորա ամեն մի քայլափոխին սպասում ես ինձանից նորա շորտարվա կյանքի Պետերբուրգի մեջ— խիստ կսխալիս: Ես աշխատեցա այս օրվա անցքերով փոքր ի շատե քեզ ծանոթացնել Ալթմազովի ո՛չ միայն մինչև այժմ անցուցած տարիներու հետ, այլև այն բանին, թե այսուհետև մոտ ի մոտո ի՞նչ դերեր խաղալու ընդունակութիւն ունի նա: Կարողացա՞ արդո՞ք քեզ հասկացնել, թե դա ինչ երիտասարդ է և կամ նորա մուլքադար հայրը ի՞նչ բնավորութիւն տեր մարդ է եղել, կյանքի վրա ի՞նչ հայացք է ունեցել ինքը կամ ազգել է յուր որդուն: Ես քեզ սոցա հոգեբանական խնդիրներու լուծումները չեմ անիլ, ևս իմ սեփական եզրակացութիւնները չեմ անիլ, ևս քեզ զանազան կենցաղական խրատներ չեմ տալ և ազգաշահ խորհրդածութիւններ չեմ անիլ: Նախ որ կամենայի ևս, ևս չէի կարող. երկրորդ, ևս գիտեմ, որ ամեն մարդու ավելի հաճելի է իրեն ծամելը, քան թե ուրիշի ծամածը կու տալը. գիրքը, որ խրատում է, երբեք չի տալ այն օգուտը, որ կուտա այն գիրքը, որի վրա կարդացողը մի փոքր խելք պիտի մաշե: Ինձմե պատվելի կարդացողը շատ պահանջմունք թող չի ունենա. բավական է, որ արդարասեր պատմաբանի պարտքը բարեխղճութամբ կատարեմ. իսկ դու, կարդացող, իմ պատմածը քու խելքով հասկացի՛ր ու դատե:

Ալթմազովը որ տուն եկավ, հրամայեց մի թաս թեյ տալ իրան, որն ծառան իսկույն բերեց. և քանի որ նա խմում էր՝ գնաց նորա անկողինը հարդարեց և ապա հեռացավ: Նորա գնալեն հետ, Ալթմազովը պառկեցավ և քանի ընկնէ՞ խորունկ քնեցավ:

Պետերբուրգը հայաստանցի երիտասարդների փառասիրութիւնը երկու մարդու օրինակներով գրավում է. առաջին օրինակը տվեց Ղարախանովը. իսկ երկրորդը վրացի իշխան Վաչինաձեն: Ղարախանովը մի զարաբաղցի տղա էր, շատ սիրում էր պառակ ու հարուստ այրիներուն Բոքաչիոյի հարյուր վեպքը պատմելու, որո փոխարեն ստանում էր նոցանից «ի հիշատակ խորին հար-

գանաց» ոչ միայն թանկագին մատանիներ, այլև մեծագումար բանկային տոմսակներ. բանի վերջը այն եղավ, որ խեղճ երիտասարդին «բարի գործելու համար» Սիբիր ուղարկեցին. իսկ Վաչինաձեն մի սիրուն վրացի էր, որ մեր Ալթմազովի նման, երբեմն բարի մտքով եկել էր Պետերբուրգ համալսարան մտնելու, որն շնացողվեցավ նորան. վասնզի գիմնագիտ եղած ժամանակը, երևի, սա ավելի հաճախ հայելիի էր նայել, քան թե յուր դասագրքերու վրա, և ավելի շատ՝ աղջիկներու գովասանքին էր ականջ դնում եղել, քան թե վարժապետի դասախոսութիւններին. մեկ խոսքով՝ նորա գիտութիւնը շատ տկար է եղել համալսարան մտնելու համար: Երբ «իմաստութիւն տաճարի» դռները փակվել են աշխարհասեր վրացի երիտասարդի առջև, նա բարի է համարել զինվորական ասպարեզ թեկոխելու, որ տվել է նորան արտոնութիւն՝ սիրուն նշանազգեստներ հագնելու. և երբ մեր պատմելի իշխան Վաչինաձեն յուր սիրուն դեմքով և սիրուն նշանազգեստովն շրջում է եղել (դու աշտանակիլ հասկացի՛ր) մայրաքաղաքի փողոցների մեջ՝ հանկարծ մի հարուստ ուսուցիչի աչքը ձգել է մասամբ նորա սև մազերի ու բեղերի և մասամբ նորա իշխանական տիտղոսի վրա, և մի պատմական օր մեր աղքատ վրացին հարուստ իշխան գարձավ:

Յավ է ասելը, մեր Ալթմազովը, հոր խրատներն համողված, յուր առջև օրինակ ուներ միշտ այս վրացի իշխանին: Թեև ամենքը գիտեն, որ Վաչինաձենի վերջը շատ արտասովալի եղավ, բայց այդ բանը ոչ ոքի չի խրատեց, մանավանդ հայերուն, և Ալթմազովի հայրը կարծում էր, որ այդ վատ հետևանքին նրա որդին երբեք չի հանդիպիլ. հայրը ի բնե վրացիի պես, շուտ, թեթևամիտ չլինելով, երբեք չի վատնիլ յուր ձեռքի հարստութիւնը. իսկ հարստութիւնը— այդ բանի մեջ ամեն հայ համոզված է, աշխարհիս երեսին ամեն բարիք վեր է, հարստութիւն, որ թեկուզ ձեռք բերած լինի մոլութիւն և ոճրի գնով:

Ինչ և իցե: Ալթմազովը եկել էր Պետերբուրգ ոչ միայն գիտութիւն և ուսումնական աստիճան ստանալու այլև մի ահագին օժիտով աղքատ հետ պաակվելու: Այս խորհուրդը նորան ներշնչած էր գրեթե օրորոցի մեջն: Գիմնագիտում սովորելը և լավ սովորելը, Պետերբուրգ գալը՝ ուսումն շարունակելու համար, խոհանութիւնը իր բարոյականութիւնը անբիծ պահելը ոչ թե կյան-

¹ Այսինքն նկարագրութիւն:

քի նպատակ, այլ միշտ էր նորա աչքում— հարուստ (բայց շատ հարուստ) աղջկա վրա պսակվելու համար:

Որքան հերոսական միջոցներ՝ մի շնչին՝ մանր, եսամուկ նպատակի համար:

Ախ, հայ, դու միշտ այդպես եղել ես, ե՛ս և պիտի, գուցե, երկար ժամանակ լինես: Ինչո՞ւ զարմանում ես, որ ազգերու առջև արհամարհված ես. ինչո՞ւ ուրեմն սիրտդ ցավում է, երբ օրինավոր ազգերու ընկերությունեն, ճիվեղ բռնած, քեզ միշտ դուրս են հանում:

Երբ որ Ալթմազովը մյուս օրը զարթեցավ, ծառան մի տոմսակ բերեց տվեց նրա ձեռքը: Տոմսակի մեջ մոտ ի մոտոտ այսպես էր գրած.

«Պարոն Ալթմազով,

Համաձայն Ձեր ցանկությունը, ես երեկ իսկույն, Ձեր հեռական հետ, շրջեցի իմ ծանոթներին. նոցանից մինը— որովհետեւ ես շատ գովասանական բաներ էի ասել Ձեր մասին— հոժարեցավ Ձեզ տնական վարժապետի պաշտոն տալու: Կավ և նշանավոր մարդ է իշխան Կաբիլքինը: Հուսամ որ նորա ընտանիքի մեջ Ձեզ լավ կլինի: Երեխայքը, որքան ես ճանաչել եմ, համեստ և ընդունակ են, իսկ նոցա ծնողքը հարուստ, և որ գլխավորն է, լուսավորյալ մարդիկ են. ուրեմն Ձեր աշխատանքը շի կորչիլ և դուք, թերևս, նորա տան մեջ Ձեր նպատակին կհասնիք: Հասցեն Անգլիական գետափի վրա, սեփական տան մեջ: Շտապեցեք:

Մնամ Ձեզ բարիք կամեցող X. Z.»:

Յուր նպատակին այսպես շուտ հասնելը այս անգամ էլ չզարմացուց Ալթմազովին, որին բախտը գրեթե օրորոցեն այնքան երես էր տվել, որ նա տակավին չգիտեր ի՛նչ ասել է ձախորդությունը: Կաբիլքինի հոժարությունը նա վերաբերեց իր հակությունը և ո՛չ ազնիվ պրոֆեսորի բարեխոսությունը. մտքի մեջն անգամ շնորհակալ չեղավ այդ բարի մարդուն: Քանի-քանի առանդներ ամիսներ և տարիներ սպասել են և չեն հասել շնչի վարձատրության՝ բոլոր իրանց պատրաստությունով հոգով չափ աշխատելու, միայն թե մի փոքր ապահոված լիներ նոցա օրական ապրուստը և տաք բնակարանը: Բայց ի պատիվ Ալթմազովի, այն էլ պետք է ասել, որ նա ոչ միայն յուր շքնաղ արտաքինով, այլև յուր գիտությունը շատ ու շատ գերազանց էր թե՛ համազգի և թե՛ օտարազգի ուսանողներեն: Չորս տարվա ընթացքում, որ

Պետերբուրգ անցուց, Ալթմազովը շուներ յուր ախոյանը ուսանողների մեջ. այն շեմ ասում, որ մայրաքաղաքումը արտաքինը ոչ միայն մեծ նշանակություն ունի, այլև միակ հատկություն է հաջողություն ունենալու համար:

Մերունի Ալթմազովի իր որդուն տված խրատներեն մինն էլ այս էր, որ ծախսի առջև երբեք կանգ չառնու. իր սեփական պետքի համար երբեք փող չի խնայե. «շատ մսխողը, ասում էր նա, շատ դատել (վաստակել) կհիմանա. միայն հեք բնությունով մարդիկն են, որ փող դատելը և գումար շինելը խնայողության և իրանց մանր-մունր բաների մեջ զրկելումն են տեսնում»: Հյուրանոցի դռնեն դուրս գալով, մի սիրուն ձիով կառապան տեսավ ու մատով արավ:— «Ո՛ւր կհրամայեք», ասաց կառապանը:— Անգլիական գետափը, ասաց Ալթմազովը: «Եթե մեկ մաթեն շեք խնայիլ, թոչունի նման կտանեն, — ասաց սիրուն և լպստած երեսով կառապանը: Ալթմազովը ոչինչ չպատասխանեց ու նստավ կառքը. և իրավ որ դարդիմանդ կառապանը սանձերը մի թեթև թափ տվեց, ձին թոչունի նման սլացավ ու թուցրեց մեր գեղեցիկ պատանիին:

Առավոտվա ժամը 9-ն էր, որ Ալթմազովը մոտեցավ Կաբիլքինի տանը և քաշեց դռան զանգակը: Քանի որ դռնապանը դուռը կբանար, նա քսակեն հանեց մի մանեթանոցը և ձգեց կառապանի առջև: «Կհրամայե՞ք որ ձեր պայծառափայլություն սպասեմ», — ասաց կառապանը գղակը հանելով:— Կուզես՝ սպասե, ասաց Ալթմազովը, — ես կարելի է շուտ դուրս կուզամ, բայց կարելի է կես ժամի չափ մնամ ևս: «Ոչինչ, ես ձեզ կսպասեմ», ասաց կառապանը: Ալթմազովը չպատասխանեց նորան ու ներս մտավ, վասնզի դռնապանը արդեն բացել էր դուռը:— Իշխանը տա՛նն է, հարցուց Ալթմազովը: Գոռոզ դռնապանը, փոխանակ նորա հարցմունքին ճիշտ պատասխան տալու— «Ձեր մասին ինչպե՞ս հայտնեմ նորին պայծառափայլության», ասաց:— Նա ինձ սպասում է, ասաց ոչ պակաս գոռոզությամբ, վրայի պալտոն դռնապանի ձեռքը ձգելով. հետո քաշեց հանեց աչ ձեռքից ձեռնոցը, գղակը ձախ ձեռքը առավ ու աշով շքեղ գանգուրները շփելով, սկսավ մարմարյա սանդուղքների վրա բարձրանալու, որի ամեն մի աստիճանը դարդարած էր հախճապակյա թաղարների մեջ տնկած հազվագյուտ ծառերով ու ծաղիկներով: Դռնապանը բերանը բացած, զարմանալով երիտասարդի ետևեն էր նայում: «Երևի օտար տե-

րության գործակալ է կամ դեսպանության քարտուղար է», ասաց մտքի մեջ: Նախասենյակումը հանդիպեցավ մի ուրիշ սպասավոր, որ նույն հարցմունքը արավ, ինչ որ դռնապանն էլ արել էր: «Ալթ. մազով կովկասեն», կարճ կտրեց մեր երիտասարդը և խոժոռ նայեցավ նորա աչքին: Սպասավորը գնաց և շուտ վերադարձավ, ասելով՝ «համեցեք», և նորա առջև բացեց առանձնասենյակի դուռը:

Իշխան Կաբիլքինը քառասունհինգ տարեկան բարձր աստիճանավորի գեմքով մարդ էր. թեև վրայի քնազգեստը մի փոքր հնացած էր և կերպասի գույնը թուած, բայց սենյակի առաստաղեն կախված ջահը, խորշերումը պատվանդաններու վրա դրած մարմարիոնյա արձանները, սեղանի վրա շարած raticles de Paris՝ ասած հաղար տեսակ ոսկին, փղոսկրե, կրիայի խեցիե շինած թանկագին մանր-մունր իրեղենքը, զուտ սաթե կես կանգնալափ մունդղթունքները ակներև ապացույց էին նորա հարստության. էլ չհիշեմ թանկագին գորգերը, որ փռված էին գետնի վրա, ուր մարդուս ոտքը, ինչպես բարձր արոտի մեջ, խրվում էր, էլ շասն արբանոս փայտե շինած և ոսկի թիթեղով պատած աթոռները: Երբ Ալթմազովը ներս մտավ՝ նույն լակոնական ռճովն ասաց. «Ալթը մազով կովկասեն»:

— Այո՛, այո՛, — ասաց իշխանը, տեղեն բարձրանալով. — ինձ պարոն պրոֆեսորը շատ լավ բաներ ասաց ձեր մասին. շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ. համեցեք նստեցեք, — ասաց և ցույց տվեց մի փոքր հեռվումը կեցած մենավոր աթոռ կարմիր փայտե

Ալթմազովի համար այդ բոպեն կտրողական էր. նա կայծակի արագությամբ հասկացավ, որ իշխանը երկու տեսակ այցելուների հետ գործ ունի սովորաբար. մինը խնդրողը և մյուսը հովասարք: Այդ ցույց տված մենավոր կարմիր փայտե աթոռը անշուշտ նշանակած էր խնդրողների համար, որոնց կարելի էր «մի փոքր չի պատվել». իսկ հավասարների համար՝ ի՞նչ ասել կուզե, նշանակած էին թանկագին ոսկեզօծ աթոռները: Ալթմազովը մեծքիթ տղա էր, մի փոքր էլ լիրբ. նա գդակը կարմիր աթոռի վրա դրավ, իսկ ինքը իշխանազնի համարձակությամբ, բայց բարեկիրթ երիտասարդի համեստությամբ նստավ նորա առջև ոսկենկար և դիպակով ծածկած բազկաթոռի վրա: Իշխանի երե-

սին մի զարմանքի և տհաճության զգացումը նկարվեցավ, բայց և շուտ անցավ: Կաբիլքինը ոչ նոր, այլ օխտը պորտով արիստոկրատ էր, արտաքին և մանր-մունր բաներու մեջ մեծահոգի ձեռնաչը (որով շատ խաբվում են հասարակ մահկանացուները) մե. 7, այսինքն մուսաստանի մեծատուններու տարիներով սերտած աշխարհածանոթությունն է: Բավական երկար տևեց նոցա մեջ լուսթյունը:

— Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտավետ լինել, — ասաց վերջապես իշխանը, որ կամենում էր այդ ձանձրալի լուսթյանը վերջ տալ, մանավանդ որ Ալթմազովը յուր կրակոտ, անվախ աչքերը ուղիղ ցցել էր նորա մի փոքր կարճատես աչքերին:

— Մի՞թե պրոֆեսորը խոսած չէ իմ մասին, — ասաց Ալթը մազովը:

— Դուք արդեն ուսանո՞ղ եք:

— Կարծեմ այո՛, վասնզի իմ վկայագիրը տալիս է ինձ իրավունք՝ առանց քննության մտնելու համալսարան, — պատասխանեց Ալթմազովը լավ ռուսերեն առողանությամբ:

— Այո՛, այո՛, այդ ինձ պսել էր պրոֆեսորը, — ասաց իշխանը, որ ավելի և ավելի կորցնում էր յուր կախարդանքը մի «խեղճ խնդրողի» վրա:

Դարձյալ լուսթյուն: Ալթմազովը յուր խոշոր աչքերը հարցական իմաստով տնկել էր իշխանի վրա: Այդ բոպին դուռը բացվեցավ և թագուհու քայլվածքով ներս մտավ հիանալի դեղեցկությամբ՝ Բայլզակի գոված տարիքով մի կին:

Իշխանը ողի առավ. նա նման էր Սոլֆերինոյի ճակատամարտի մեջ պատերազմող նապոլեոնին, որին ասացին թե՛ ահա Մակ-մահոնը գալիս է քեզ օգնության:

Իշխանուհին ներս մտավ. շնորհալի շարժվածքով ձեռքը պարզեց մարդուն, ունքով պատասխանեց Ալթմազովի ողջունին և նստավ իշխանի մոտ: Ալթմազովը ուզեց յուր աչքերի կախարհությունը իշխանուհու վրա ևս փորձել, բայց իշխանուհին շուտ հասկացավ մեր երիտասարդի «ֆոկուս-փոկուսները» և այնպիսի քիթ ու պոունկ արավ, որ պ. Ալթմազովը յուր ամենահաղթ դենքը խոնարհեցուց:

Իշխանուհին փորձառու և կանոնավոր դաստիարակություն ստացած կնիկ էր. նա վաղուց լսել էր մանր ու կեղտոտ հաղթությունների մասին, որ կովկասցի երիտասարդները, ի վնաս իրանց

¹ Փարիզում պատրաստվող պերճանքի առարկաներ:

առողջութեանը, և գեղեցկութեանը, կատարում են պարզամիտ ռուս աղջիկների, այրիների և պառավների վրա. նա այդպիսի զարշնի անբարոյականութեան համար ի բոլոր սրտե ատել էր Կովկասը և նորա բնիկներուն: Երբ որ իշխանը տեսավ, որ նորից լուսնային սիրապետեց, խոսքը կենդանացնելու համար, ասաց Ալթմազովին. — «Կարո՞ղ եմ հարցնել ինչ ազգից եք դուք»:

Իշխանուհին ժամանակ չտվեց Ալթմազովին պատասխանելու և իսկույն դարձավ մարդուն և ասաց.

— Mais, mon Dieu, que vous êtes naïf certainement que monsieur est arménien!

Ալթմազովը միայն դիտով արեւ, որ նշանակում էր, թե իշխանուհին իրավացի է՝ բայց և հասկացավ իսկույն, որ նա վերջապես գտավ յուր այսույնը: Ալթմազովը, որ գրեթե ծնած օրեւ տեսած էր մարդոց երեսի վրա բացի սերեն և հարգանքեն ուրիշ զգացումներ և այժմ նկատելով իշխանուհու աչքերի և ձայնի մեջ անհրաժեշտ ատելություն դեպի իրան — չի վճատեցավ. ինքն իրան երդում արավ մինչև վերջը պատերազմել, եթե հնարը գտնեն՝ հաղթել, ասպ թե ոչ՝ հաղթվել՝ ծունր իջնել նորա առջև, ոտերը համբուրել, նորա ստրուկը դառնալ, բայց... չի հեռանալ: Ինչու՞ Ով գիտե, գնա իրան հարցուր: Շա՞ն զգացումներ, — լիզնի զարնող ձեռքը:

Հայեր, Ալթմազովի այս բնավորութենեն ամենիս մեջ փոքր փոքր շիկած արդյոք:

Իշխանուհին դուրս գնաց և իսկույն ասաց աղջկան. — «Հորդ սենյակումը մի այնպիսի գեղեցիկ երիտասարդ կա, որի նմանը ոչ իրական կյանքի, ոչ երևակայության մեջ և ոչ պատկերի վրա տեսել ես, կամ պիտի տեսնես. Բեկվեդերի Ապոլլոնը դորա առջև ոչինչ է. բայց ափսոս որ հայ է. հայ է ոչ միայն ծնունդով, այլ բնավորությունով: Մի՛ վախենար, դու չես սիրաւարվիլ, վասն զի դու ռուսի СТОЛБОВАЯ ազնվուհի ես, իսկ նա — առմիաշքա է»:

Աղջիկը այնպես պինդ ծիծաղեցավ, որ ձայնը մինչև Ալթմազովին հասավ: Նա թեև մոր ու աղջկա իրար հետ ունեցած խոսակցությունը չսես, բայց այդ ծիծաղի ձայնը հասկացավ, որ այն տունը չէ, ուր նա մտադիր էր յուր հոր խորհուրդները էացնելու: Բայց անձնապատանությունը, համառությունը և յով

խորամանկության ամենակարողությունը նորա մեջ խոր արմատներ էին ձգել:

Քանի ժամանակից հետ աղջիկն էլ ներս մտավ, նա էլ տեսավ, որ Ալթմազովը երեւի սիրուն երիտասարդ էր. նորա խոսակցությունեն նկատեց, որ յուր տարիքի համար շափազանց մեծ գիտություն և փորձառություն ունի. քանի՞-քանի՞ անգամ նորա աչքերին չի դիմանալով՝ յուրերը խոնարհեց և երբ որ հեռացավ՝ սրտեն խորունկ ախի հանելով, ասաց. — Մեղք որ հայ է». բայց մի փոքր հետո ավելացուց. — «Ախ, ինչու՞ մայրս ատում է Կովկասցիներուն. այդ ի՞նչ նախապաշարմունք է. մի՞թե ամենքն էլ Ղարախանովներ ու Վաչինաձեններ են. խեղճ երիտասարդը դեռես տասնինը տարեկան է, դեռես երեխա է, ազնիվ պրոֆեսորներուն դասախոսությունները, ազնիվ մարդոց բարեկամությունը, ազնիվ երիտասարդների կենսակցությունը և... ազնիվ օրիորդների ընկերությունը մի՞թե չեն կարող բնավորության մի քանի անհարթությունները ուղղելու... բայց այդպիսի ցուլուն, խոշոր աչքեր, այդպիսի գեղեցիկ, անտիկական երեսի տիպարք... չէ՛, չէ՛ մայրս սաստիկ սխալվում է, մորս աչքը վախեցած է»...

Իշխան Կաբիլքինը ոչինչ պատճառ չունի Ալթմազովի առաջարկությունը մերժելու, մանավանդ որ նորա մտտիկ բարեկամ, մաթեմատիկայի պրոֆեսորը մեծ գովասանքով խոսել էր նորա հաջող գիտության մասին, գրեթե ամեն գիմնազիական առարկաների մեջ. հայտնել էր նորան և այն կարծիքը, որ նա ոչ այնքան փողի համար է պաշտոն փնտրում, որքան մի ազնիվ գերդաստանի մեջ բնակվելու. վասնզի ինքն էլ, թեև չբավոր է, բայց ազնիվ սերունդ է, և չէ ուզում, շատ ուրիշ յուր համազգիներու նման, ընտանիքը դուրս բնակվելով, նույնիսկ մայրաքաղաքի մեջ անցնել կիսավայրենի կյանք՝ հեռու ընտանեկան անմեղ վայելություններ, հեռու քաղաքային և ընտանեկան կյանք, որից միշտ զուրկ են վարձած սենյակներումը բնակվող երիտասարդները:

Իշխան Կաբիլքինը նշանակեց նորան յուր տան մեջ մի զարդարուն սենյակ, ճաշ, թեյ, սուրճ, նախաճաշիկ, լվացք, ծառա և ամսական հարյուր մանեթ ռոճիկ: Մեկ ուրիշ ուսանողի այսպիսի պայմանը երջանկություն կերևեր, բայց Ալթմազովը բավականին քիթը կախած վերադարձավ յուր հյուրանոցը, որ յուր պայուսակը ու մյուս բաները բերե. իշխանուհի լուր պատերազմը՝ նորա սիրտը «որոտ» ձգեց: Կառապանը անհամբերությամբ սպասում էր

Վ. Բայց, աստված իմ, որքան միամիտ եք. պարոնը հայ է անշուշտ:

Նորան, որ այս անգամն ևս ստացավ նորանեն մի ուրիշ մանե-
նաթոց: Հյուրանոցումը նախաճաշիկը նորից ժողովեց երեկվա
հյուրերուն: այս անգամ Ալթմազովին երեք օտարուհիները և նո-
ցա հետ ուրիշները՝ ինչպես հին բարեկամի բարեկեցին: Դարձյալ
միասին կերան ու խմեցին, դարձյալ հետ սեւեւանին, գնացին մյուս
սենյակ երգելու և նվագելու, դարձյալ Ալթմազովը յուր շարադրած
ասիական մեղեդիներեն մինը նվագեց նոցա առջև, նորից ծա-
փահարեցին նորան, նորից իրանց մեջ փոփոստով, բայց նորա
անկանջին հասցնելով, զովեցին նորա երաժշտական քանքալը,
գեմքի ու իրանքի գեղեցկությունը, բարեկրթությունը, բայց,
սովա՞ղ, նորա տրամուխունը փարատել չի կարողացան: Իշխա-
նուհին նորա անձնասիրությունը անբուժելի խոց էր հասուցել
Երկու ձայն նորա մեջ բարձրաբարբառ խոսում էին. «Փոխե՛ նպա-
տակդ, թո՛ւք գոռոզ իշխանուհու վրա, աղնի՛վ եղիր, ուղիղ ճամ-
փով առաջ գնա»։ Իսկ մյուսը ասում էր. «Հիշե՛ հորդ խրատները,
խորամանկ եղիր, ինչ հնարով կուզե լինի՛ հասիր նպատակիդ—
փողի, փողի և փողի»:

Նույն օրը մնաս բարև ասաց նա յուր նոր բարեկամներին,
հավաքեց յուր իրերը և գնաց տեղավորվեցավ իշխան Կաբիլբինի
տանը: Նորա պատուհանները դարձած էին նևալի վրա. համալ-
սարանը գրեթե ղեմուղեմն էր:

Իշխանը ընդամենը երկու զավակ ուներ, մի որդի՝ ինը տա-
րեկան, որին Պաժերի վարժարանի համար պետք էր պատրաս-
տել, և մի դուստր, տասնվեց տարեկան, որին արգեն մի փոքր
ճանաչում ենք. որդու անունն էր Միշա, իսկ աղջկանը Եվդոքիա:

Ալթմազովի պարապմունքի համար ես շատ բան չեմ ասիլ
ինչպես որ պատմությանս սկզբանը հիշել էի, նա արդեն տասնը-
մեկ տարեկան հասակեն սկսել էր զանազան հասակի և բնավո-
րության աշակերտների հետ պարապելու, գրեթե ամեն զինաս-
զիական առարկաներեն, ուրեմն մանկավարժության մեջ նա շատ
հմուտ և փորձառու էր: Նորա գիտության համար խոսելն ևս
ավելորդ է, վասնզի նա, յուր աշակերտության միջոցին, ո՛չ մի
վարժապետի խոսք, ո՛չ մի դասագրքի տող առանց ուշադրության,
առանց քաջ սերտելու թողուցած չէր: Երբ որ փորձի համար առա-
ջին դասին ներկա էին իշխանը և իշխանուհին, նոքա մի ժամի
մեջ համոզվեցան, որ Ալթմազովը նոցա զավակներին, եթե նո-
քա բոլորովին ծույլ, բթամիտ և ուսումնատյաց չլինեին, անպատ-

ճառ մի բարի վերջի կհասցնեն: Ալթմազովը խոսում էր ամենա-
հասկանալի լեզվով. քերականական կանոնները, մաթեմատիկա-
կան դիլեմաները այնպես պարզ առաջներն էր դնում, որ աշա-
կերտը գրեթե առանց վարժապետի օգնության հասկանում էր
վաղվա դասերը այսօր լավ բացատրում էր աշակերտներին, որ
մինչև անգամ նոքա կարիք չունեին դասագրքեն մյուս անգամ սո-
վորելու կամ ինքներն իրանց ստուգելու: Առաջվանից ասենք.
Ալթմազովը գրեթե շորս տարի մնաց նոցա մոտ: Միշելը քանակեց
քննվող աշակերտների մեջեն առաջինը հանդիսացավ և մտավ
վարժարան և մնացած երեք տարին ետև ետևի փոխում էր դասա-
բանները (Ալթմազովը միշտ վարժատուն էր գնում և դասերը քաղ-
վածք անել էր տալիս): Իսկ Եվդոքիան հետևյալ տարին փառա-
վոր քննություն տվեց համալսարանումը, և մնացած ժամանակը
կատարելագործվում էր մաթեմատիկայի և ընդհանուր պատմու-
թյան մեջ:

Ալթմազովը յուր վարժապետական պաշտոնը ամենափառա-
վոր կերպով կատարեց իշխան Կաբիլբինի տանը, որ քանի քանի
անգամ պատրաստ էր նորա ոտնիկը կրկնապատկելու, եթե երի-
տասարդը հոժարեր: Բայց նա բացի ի բաց հեռացնում էր իրմեն
այդպիսի վարժատրություն. նորա փառասիրությունը ավելի լայն
հորիզոն ուներ, քան թե որքան կարելի էր սպասել մի խեղճ վար-
ժապետու:



Այժմ ես ուզում եմ մի քանի միջավեպեր պատմել նորա կյան-
քից, որ անցավ նորա շորս տարվա ուսանողության ժամանակ:

Եթե Ալթմազովը հյուրանոցումը հանդիպած անդիլացի կնոջ
խոսքերի վրա լավ ուշադրություն դարձրած լիներ, գուցե հոր
տված խրատներն և յուր աշխարհայեցողությանը շինած կյանքի
ծրագրեն կհրաժարվեր ոչ միայն ինչպես մի խելացնոր և երազա-
կան, այլև ինչպես վնասակար և ապարդյուն գաղափար: Նա
կհասկանար, որ հայերուն՝ նոցա որևէ նպատակին չհասցնելու
համար, հազարավոր արգելքներ դրված են ամեն կողմանե. նոցա
անունը նախապաշարմունքով շրջապատված է, նոցա քանքարը և
գործունեությունը շարակամությունով, նախանձով, ինչպես էրեն
ցանցով՝ փաթաթված է. փառքի և պատվի դոները նոցա առջև

փակած են և դեպի այն տանող ճանապարհը փուշ ու տատակով լցված է. հայի առջև երեք ազատ ճանապարհ՝ բաց են՝ մինը դեպի մոլորութուն, մյուսը դեպի ոշնշութուն և երրորդը դեպի կորուստ: Նա, խեղճը, չգիտեր, որ հային մինչև անգամ հրամայված չէ յուր աստվածատուր խելքը ի գործ դնելու. նորան միայն թույլ տված է խելքի տեղ խորամանկութուն գործածելու. խորամանկութուն, որ ատելի, անգոսնելի և բարեմիտ մարդոցմե հալածած ստրկի հատկութուն է: Նա չգիտեր, խեղճը, որ իշխանները դափնիներով գարդարել են բանաստեղծներին, որոնք իրանց քնարը լարել են դեպի հայը՝ ատելութուն, նախանձ, շարակամութուն և ծիծաղ շարժող զգացմունքով: Այս ամեն արգելքին նա պիտի հանդիպեր այն ժամանակ, երբ նորա զգացմունքը լինեին ազնիվ, սուրբ, նվիրական գոնե այն ժամանակ նա սուրբ զոհ կլիներ յուր սուրբ գաղափարին և զգացմունքին: Բայց, ավաղ, Ալթմազովի ո՛չ նպատակն էր սուրբ, ո՛չ գաղափարը և ո՛չ զգացմունքը: Ինչպե՞ս կարելի էր, որ նա և՛ յուր կյանքի հետ ունեցած պատերազմի հաղթանակը առներ, և աշխարհի առջև պարզերես մնար: Նայենք այսքան հազվագյուտ հատկութուններու տեր Ալթմազովին կհավանի՞ իմ ընթերցողը. նայենք, նա իր անկման միջոցին մի հատիկ կարեկից սիրտ կգտնե՞:

Հուլիս ամիսն էր: Այն ամառ իշխան Կաբիլքինի սեփական դաստակերտը նորոգվում էր Պավլովսկումը, և այդ պատճառով նորա գերդաստանը ուշ տեղափոխվեցավ ամառանոց: Ալթմազովի հռչակը այն թատրոնի երեկոյնն արդեն քաղաքի մեջ տարածվել էր. ամենքն ուզում էին նորա հետ ծանոթանալ, բայց այդ բախտը շատ քչերին էր հաջողում. պատճառը այդ է, որ նա մեծագույն մասը օրվան կա՛մ զբաղված էր իր աշակերտներին սովորեցնելով, կամ Կաբիլքինի հյուրերի հետ խոսելով, որոնք Ալթմազովի պաշտոն մտնելեն հետ՝ սկսել էին սովորականեն ավելի ստեպ այցելութան գալու և մանավանդ կանանց սեռը՝ «հայ Ապոլոնին» տեսնելու համար, իշխանի տունը ուխտատեղի էին դարձրել. ամենքը ուզում էին նորան տեսնել, հետը խոսել, ծանոթանալ, նորա կարծիքը և նվազը լսել. կարճ՝ սիրել նորան և սիրվել նորամեն: Խեղճե՛րը, նոքա չգիտեին, որ Ալթմազովը իր մանկական հասակեն սկսած արդեն խրատված էր հորեն՝ «ճարել մի անվանի և շատ հարուստ տանն աղջիկ, պսակվել հետը, և պսակի միջոցով արիստոկրատի անուն շաղացնել»: Կարո՞ղ էր

խեղճ երիտասարդը հոր բաղձանքը և իր սեփական ուխտը փոխել՝ ներկայումս քանի մի րուպեի մարմնավոր վայելչութան և ապագայում հավիտենական ստրջանքի համար: Խեղճ կնանիք. ձեր անկեղծ զգացմունքը, ձեր սրտի գորովանքը պիտի ընդհարվին այդպիսի սառն հաշիվների և դուք պիտի դարմանաք, թե ինչպես է կարելի, որ այդպիսի գեղեցիկ մարմնու մեջ այդպիսի կոշտ հոգի լինի դրած: Բայց և շատ խիստ մի՛ լինիք ձեր դատմունքի մեջ: Ալթմազովը իր ծնած տեղի և նորա պարագայի արտադրությունն է: Հայաստանը այն պայմանի մեջ, ուր որ է՝ ուրիշ տեսակ զավակներ չէ՛ կարող ծնանիլ: Փոխեցե՛ք կաղապարը, կփոխվին և նորա տակեն դուրս եկած կերպարանքները: Ո՞վ է մեղավորը:

Ալթմազովը հենց որ իշխան Կաբիլքինի տունը մտավ, իսկույն գրպանեն հանեց երկու հատ տասը մանեթանոց, մինը տվեց դռնապանին և մյուսը սպասավորին և շսպասեց, որ նոքա խոնարհաբար շնորհակալութուն ասեին. թողեց և հեռացավ նոցանեն. մի օր էլ, երբ եվզոքեայի նաժիշտը արծաթե ափսեի վրա նամակ բերեց նորան՝ երրորդ տասը մանեթանոցն էլ նորան ընծայեց: Այս ամեն կյանքի մանր-մունր ֆոկլունները հայրը նորան սովորեցուցել էր՝ իբր տասնևիններորդ դարուս կենցաղագիտության ամենահարկավոր գաղտնիքը: Երբ այս և այսպիսի լուրերը իշխանուհու ականջն էին հասնում, նա սրտեն խոր հոգոց անելով, ասում էր՝ «տեր. աստված, տեր աստված, այսքան մատաղահաս և այսքան ապականված»: Եվ խստիվ հրամայում էր ծառաներին՝ ղգուշանալ խորամանկ հայեն: Խեղճ երիտասարդը, որ կարծում էր իր ապագա շենքի հիմքը ամուր դրած, չգիտեր, որ եկած օրեն արդեն այն քանդվել էր:

Իշխան Կաբիլքինի ընտանիքը երկու ամիս ամառանոցումը մնաց, և այդ երկու ամիսը Ալթմազովի համար «Հազար ու մի գիշերի» արկածներ էին: Նա շրջապատված էր չքնաղագեղ կնանիքներու և աղջիկներու սիրով, հարգութունով, պատվով, հրավերքով: Օր չէր անցնում, որ նա հրավիրված չլիներ կամ մի կոմսուհու, կամ մի իշխանուհու, կամ մի մեծատան կնոջ տուն հացկերևոյթի, երեկոյթի, նվագահանդեսի, հեռավոր մի անտառ կամ ամրոց, կամ ծաղկոց՝ ճեմելու, կամ ձիով զբոսնելու. օր չէր անցնում, որ նորան մի բուրած նամակ չի գար, կամ թե կաթոգին ձեռաց սեղմումն չի պատահեր, կամ քնքուշ հայացք չընծայվեր:

Իշխանութիւն տեսնում էր այդ ամենը և ամեն Տնար գործ էր դնում, որ Եվզոքիան թույլ շտա իրեն այդ կրքերի Տեղեղատին մատնելու: Բայց ի՛նչ կանես. կարելի՞ է հրամայել կրակի մոտ կեցած վառողին, որ չի բռնկի. կամ ասել սառույցին՝ կեցիր արեգակի տակ և մի՛ հալչիր: Գեոևս դաստակերտնն քաղաք շէկած՝ Եվզոքիան պինդ սիրահարվեցավ Ալթմազովի վրա, և նույն շաբաթ երեան գրվեցավ այսպիսի բովանդակութեամբ նամակ: «Ամեն բան զեպի լավն է գնում. իշխան Կաբիլքինը 40,000 օրավար հող ունի, բանկում 4,000,000 մանեթ նաղդ փող և, ոչ մի կոպեկի պարտք. իշխանութիւն պահարանների մեջ տառաջելի քան թե 500,000 մանեթի ակնեղեն, ոսկե զարդեր և արծաթե սպասներ ունի. իսկ աղջիկը իմ վրա մինչև ականջները սիրահարված է»:

Օգոստոս ամիսն էր, որ մամլեմատիկայի պրոֆեսորը, որի հետ պատմութեան սկզբումը ծանոթացանք, մի օր եկավ և ասաց. «Արդեն ժամանակն է խնդիր տալու և մտնելու համալսարան»: Հետևյալ օրը Ալթմազովը գնաց համալսարան, խնդիր գրեց և ներկայացավ դեկանին, որ միամտեցուց նորան, ասելով՝ «ձեզ առանց բնութեան կրնդունենք»: Այս կողմանն ևս միամտեցած, Ալթմազովը վերադարձավ դաստակերտ և այնուհետև լիպակա անձնատուր եղավ ամեն կերպ վաշիլչութեան:

Քանի մի ժամանակն ամառանոցի եղանակը վերջացավ, մարդիկ Տեղեղատե քաղաք քաշվեցան. իշխան Կաբիլքինն էլ գնաց քաղաք յուր ընտանիքով:

Իշխանութիւն շափե դուրս խելոք կնիկ էր. նա շատ լավ գիտեր, որ Ալթմազովը երբեք չէ կարող նորա աղջկա մարդը լինել, որ ինքը միշտ կգտնէ Տնար նոցա փոխադարձ սերը կա՛մ սառեցնելու, կա՛մ բռնի բաժանելու, բայց կարծում էր, որ Եվզոքիան, սիրելով նորան, միշտ նորա տված դասերը առավել խորունկ կտպավորե մտքի մեջ և առավել կորոճա, և այդ պատճառով թույլ էր տալիս որքան կարելի է՝ երկար տեի օրվա մեջ սոցա պարապմունքը: Եվ գարնանալու բան. Եվզոքիան, որ առաջները ոչ միայն չէր սիրում ուսման առարկաները, այլև երաժշտութուն, որը պարի հետ միասին, ինչպես հայտնի է, ոուս օրիորդի լուսավորութեան առաջին պայմանն է,— այժմ Ալթմազովի ազդեցութեան տակ գիշերներ լուսացնում էր մի տեորեմայի կամ մի սիմֆոնիայի վրա, որ յուր փեսացուի աչքին հաճելի երէի: Քանի-քանի անգամ իշխանութիւն, սրտն ախր քաշելով, ասել է յուր մարդուն.

«Ինչո՞ւ այս գեղեցիկ և քանքարավոր երիտասարդը ոուս կամ եվրոպացի չէ. ինչպե՞ս մեր Եվզոքիան բախտավոր կլիներ»:

— Ինչո՞ւ այդպես սխալ ես դատում.— պատասխանում էր իշխանը.— մի՞թե հայը լավ մարդ լինել չի կարող:— «Ինչո՞ւ չէ,— ասում էր նորան իշխանութիւն,— հայն էլ լավ մարդ կարող է լինել, բայց նա հայպպես լավ մարդ կը լինի և ոչ ուսապես»:— Չեմ հասկանում. ի՛նչ ուղում ես ասել, պատասխանում էր իշխանը: Իշխանութիւն ասում էր «լավ հայը երբեք չի ուսանալ, իսկ վատ հայն վատթար մարդ չի կա աշխարհիս երեսին: Ուրեմն որ կողմ կուզես շո՛ւտ տուր, Եվզոքիան հայի հետ պսակվիլ չի կարող և չլիտի պսակվի»:

Իշխանութիւն յուր մանկութունը անցուցել էր մի հայաբնակ քաղաքի մեջ, ու նորա հայրը զավտապետի պաշտոն էր կատարում, այդ պատճառով նա կարծում էր, թե հայի բնավորութունը շատ խորունկ իմաստասիրել էր:



Թեև Ալթմազովը շատ լավ դաշնամուր էր նվագում, բայց նա հանձնառու չեղավ աշակերտներին երաժշտութուն սովորեցնելու, և այդ մանավանդ այն պատճառով, որ Եվզոքիայի վարժապետը երևելի Հենզելթն էր, որի հետ բաղդատվելով, իհարկե, նա համբակ կարող էր համարվել: Մի օր Հենզելթը իշխանութեան հայտնեց, որ ինքը շուտով արտասահման է գնալու, բայց վախենում է, միգուցե նրա բացակայութեան ժամանակ Եվզոքիան մի անհրճուտ վարժապետի ձեռք ընկնի և փշացնի յուր կանոնավոր նվագելը: Այդ պատճառով խորհուրդ տվեց մի փորձառու և ընտիր վարժապետ որոնել: Իշխանութիւն պատասխանեց թե՛ «գուցե ես վարժապետի ընտրութեան մեջ սխալիմ, չէի՞ք կամենալ արդյոք մեզ ձեր ընտրութեամբ մի վարժապետ առաջարկել, ձեր բացակայութեան միջոցին»:— Ինչո՞ւ չէ,— պատասխանեց Հենզելթը,— շատ ուրախութեամբ ես ի նկատի ունեմ մի մատաղահաս երաժշտութեան վարժուհի, ազգանունը միտս չէ, բայց իմ ընտիր աշակերտներն է. երթալու ժամանակ ես նորան կուտամ մի հանձնարարական նամակ, որն ստանալով՝ իսկույն կընդունիք նորան, բայց նայեցե՛ք, ի՛նչ վարձ որ ինձ եք տալիս՝ նույնը անշուշտ և նորան պիտի տաք. երաժշտութեան արվեստի մեջ եթե

այդ վարժուհին ինձանից լավ չլինի, վատ երբեք չէ:— Իսկ ինքը
Հենդելթը դասի գլուխ ստանում էր տասը մանեթ:

Այդ վերջին անգամն էր, որ Հենդելթը եկավ իշխանի տունը: Երկու շաբաթ վրա անցավ, ոչ ինքը եկավ և ոչ էլ նորա հանձնա-
բարած վարժուհին ներկայացավ: Արդեն կարծում էին թե նա մո-
ռացել է յուր խոստումները և հանձնարարական նամակը վարժու-
հուն շտված՝ գնացել է արտասահման:

Մի օր, ճաշից հետո, երբ ամենքը նստած էին դիվաննոյ
ասած սենյակումը, հանկարծ զանգակը հնչեց. ծառան շտապելով
զնաց և շուտ հետ եկավ, ասելով. «Մի կին կամենում է տեսնել
իշխանուհուն»: Իշխանուհին ասաց ծառային. «Ներս համեցեք
արա»: Դուռը բացվեցավ և մի թխիկ երեսով, բայց գեղեցիկ տի-
պարքով աղջիկ ներկայացավ և տվեց իշխանուհու ձեռքը մի նա-
մակ, ասելով. «Հենդելթից»:— Գիտեմ, գիտեմ,— պատասխանեց
իշխանուհին,— խնդրեմ նստեցեք: Բայց ես ձեզ երկու շաբաթ է,
որ անհամբերությամբ սպասում եմ: «Ներեցեք ինձ,— պատաս-
խանեց անծանոթ աղջիկը ամաչելով,— ես մի փոքր տկար էի»:—
Ենդրեմ նստեցե՛ք,— ասաց նորից իշխանուհին և հետո ավելցուց.
— կարո՞ղ եմ հարցնել ձեր անունը: «Անունս Սուսաննա է», պա-
տասխանեց աղջիկը, աչքերը խոնարհելով:

Համեստությամբ նստեց օրիորդ Սուսաննան և մի կարճ մի-
ջոց լուսնուն թագավորեց սենյակի մեջ. ինչպես ասում են՝ «հրեշ-
տակ խաղաղության թոռավ»: Նստողները սկսան մին մինի երես
նայելու: Ալթմազովն էլ նայեցավ Սուսաննայի վրա, Սուսաննան
էլ նայեցավ Ալթմազովի երեսին, բայց իշխանուհին, որ այդ րո-
պեին երկուսի վրան էլ նայեցավ, հետագա նկատողությունը
արավ, որ Ալթմազովը հենց առաջին վայրկենում առանց մեկ հիմ-
նավոր պատճառի, ատելով ատեց այդ խեղճ թխիկ աղջկանը, իսկ
Սուսաննան դորա հակառակ, ջերմ և անհրաժեշտ սիրով սիրեց
այդ գեղեցիկ պատանուն: Ինչո՞ւ: Ո՞վ կարող է այդպիսի հարցի
պատասխանը տալ: Ուրեմն մենք էլ թողնենք այս հարցը ան-
պատասխան. նայենք, զուցե իրերի ընթացքը կլուծեն այս հոգե-
բանական առեղծանելիքը: Բայց այսքանը իմանանք, որ իսկա-
յան սերը և իսկական ատելությունը մի րոպեի մեջ է ծնում. իսկ
այն, որ ժամանակով է ծնում, նոցա անունը սեր և ատելություն
չեն, այլ գնահատություն:

Իշխանուհին չափազանց մեղքացավ խեղճ աղջկան, որ օտար
դերդաստանի մեջ, ամոթեն լուռ մնացած, ով գիտե ի՞նչ հոգեկան
տանջանքի մեջ էր այն րոպեին. և կամենալով այդ ճնշող, անհա-
ճո լուսնունը վերջ տալ, առաջարկեց Սուսաննային իրենց մի
փոքր զվարճացնելու համար, չի՞ կամենալ արդյոք դաշնամուրի
առջև նստել և նվագել. բայց և ավելացրեց. «Օրիորդ, չլինի թե՞
իմ առաջարկությունս ընդունիք իբր ցանկություն ձեզ քննադա-
տելու Պ. Հենդելթը ձեր մասին մեզ արդեն այնպիսի զովասանք-
ներ է տվել, որ ձեր մատերի ամեն մի շարժվածքը մենք նվագա-
հանդեսի տեղ պատրաստ ենք ընդունելու»:

— Մեծապես շնորհակալ եմ ձեր՝ իմ մասին կազմած այդ-
պիսի շողոքորթիչ կարծիքի համար,— ասաց կարմրելով Սուսան-
նան,— բայց ես վաշտուց է, որ կտորներ նվագած չեմ. երկու շա-
բաթ ձեռքս դաշնամուրին դիպած չէ. դուք գիտեք, այդ բավական
ժամանակ է, որ մատերը իրանց սովորական արագությունը կորց-
նեին:

— Չէ՛, չէ՛, խնդրենք,— ասաց իշխանուհին,— նվագեցեք մի
բան: Մենք խիստ դատաքննիչ լինելու ոչ գիտություն ունինք, ոչ
ճաշակ... զուցե պ. Ալթմազովը...

— Պարո՞նը ևս նվագում է,— ասաց Սուսաննան կարմրելով
և աչքերը դարձնելով ուսանողի վրա:

— Այո՞, մի փոքր,— պատասխանեց Ալթմազովը այնպիսի
արհամարհական ձայնով, որ առավել վայելուչ էր մի անպիտան
կառապանի, քան թե մի համեստ աղջկա վերաբերմամբ:

Ամենքը նկատեցին այդ շար կոպտությունը. Եվդոքիայի աչ-
քեն մինչև անգամ արտասուք կաթեցավ. խեղճ աղջիկը մի րոպեի
մեջ երկու անգամ կարմրեցավ և տժգունեցավ: Իշխանուհին նշա-
նավոր հայացք ձգեց իշխանի վրա, որ կնշանակեր՝ «Հը, ինչպե՞ս
ես, չէի՞ ասում քեզ, որ հայը միշտ հայ կմնա»: Ամենքը նկատե-
ցին այդ անտեղի կոպտությունը. միմիայն միամիտ Սուսաննան
չի նկատեց:

— Այդ «մի փոքրը»,— ասաց Ալթմազովին,— շատ և շատ
նշանակություն ունի. բայց հուսամ, դուք ներողամիտ կլինիք, ես
երկու շաբաթ հիվանդ էի, այժմ ևս բավական կազդուրված չեմ.—
Ասաց և մատերը վազեցուց կլավիշների վրա: Փոքր մի ֆանտա-
զիա անելեն հետ՝ նվագեց Քոնթսկիի երևելի «Առյուծի սթափու-
մը», որ այն ժամանակները նորաձև երաժշտական հատվածներից

մինն էր. և ո՞ր իսկական պետերբուրգցին չէր լսել նույնիսկ հեղինակի նվագածը:

Առյուծի զարթելից մի փոքր ատաջ Սահարա անապատի լուսթյունը, նորանից հետո՝ առյուծի քանի-քանի անգամ ամպրոպաձայն մոնչելը. հետո՝ ավելի և ավելի սաստկացնելը յուր ահեղ մոնչյունը, հետո՝ արյունոտլուտ հարձակման պատրաստությունը, հետո՝ սպառազինված որսորդներին հանդիպելը, հետո՝ կատաղի այատերազմը երկուստեք, հետո՝ հրացանների ճայթմունքը խառն առյուծի մոնչելուն, հետո վիրավորված և հոգեվարք գազանի ոռնալը և վերջապես՝ որսորդների հաղթության էրզը— այս ամենը այատկերացան լսողի երևակայությանը մեջ՝ Սուսաննայի ճարտար և խոսուն մատերի զորությամբ: Մեծ և կախարդական էր նորա լատարած ազդեցությունը լսողների վրա: Իշխանուհին և Եվգոբիան սրտերի փղձկունման ակամա արտասովեցան, իշխանը մնացել էր հիացած. ամենքը քաղցր ապշության մեջ էին, միայն Ալթմազովը մնաց անզգա: Իշխանուհին նայեցավ նորա վրա, և գլուխը շարժելով, ասաց մտքի մեջ.— «Այս զեղեցիկ մարմնու մեջ հոգի չկա»: Եվ իրավ որ՝ բնությունը ամեն բան առատ ձեռքով տվել էր նորան, բացի հոգիեն:

Սուսաննան երեխայի անմեղությունով նայում էր Ալթմազովի վրա ու սպասում էր նորանից թեկուզ մի խոսք, թեկուզ մի հիշոց, բայց մի խոսք, մի մարդկային խոսք. սպասում էր խեղճ աղջիկը, եթե շամաշեր՝ գուցե նա կխնդրեր, կաղաչեր, մի խոսք կպաղառեր նորանից: Ավա՛ղ, Ալթմազովը ոչ մի խոսք չասաց, և հեռացավ:



Ալթմազովը սկսավ համալսարան երթևեկելու: Հենց առաջին օրեն ընդհանուր ուղադրությունն իր վրա դարձուց՝ և՛ մեծավորների, և՛ ուսուցչասխտների, և՛ ուսանողների՝ թե՛ յուր արտաքին բռնվածքով և թե՛ յուր հիանալի ընդունակություններով: Ինչպես որ նա մի անգամ ինքիրան խոսք էր տվել, այստեղ ևս յուր խոստմունքը չի դրժեց. ամենայն կողմանե նա համալսարանի մեջ ընտիր ուսանողն էր համարվում: Սկզբունե ամենքը սիրում և պատվում էին նորան, իսկ ինքը ոչ ոքի ո՛չ սիրում էր և ո՛չ պատվում. այս որ նկատեցին՝ ուրիշներն էլ դադարեցան նորան սիրելու:

բայց միշտ հարգում էին նորան՝ հազվագյուտ հատկությունների համար. իսկ երբ որ նա մի պարահանդեսի մեջ, պաշտպանելով մի ուսանողի պատիվը, երկու ապտակ տվավ մի գնդապետի ու նույն հետայն մենամարտության հրավիրեց և սիրտը վախ ձգելով, ստիպեց բոլոր ուսանողների առջև ներողություն խնդրելու— այն ժամանակ ընկերները մեծ հարգանք զգացին դեպի «բայց հայ ուսանողը»: Սրախաղության մեջ ախոյան շուներ Ալթմազովը, իսկ քառասուն ջայլափոխեն խաղաթղթի ասին խփելը ասորճանակեն՝ նորա համար մի շնչին բան էր: Շատ կարելի է, որ կարդացողներս արդեն համարում են Ալթմազովին մի նոր Գոն-ժուան: Չէ, սխալ են նոքա. հավատացնում եմ, որ բոլոր իր համալսարանական ընթացքի միջոցին նորա մեջ ո՛չ մի պազուտ խորհուրդ չի մտավ. մայրաքաղաքի ոչ մի առյուծուհին չէր կարող պարծենալ, որ նորան յուր երկրպագուն կարողացել է դարձնել. ոչ մի օրիորդ, մինչև անգամ Եվգոբիան, չէին կարող ասել, որ Ալթմազովը նորա վրա սիրահարվել է. մայրաքաղաքի փորձանքներից շատ հեռու պահեց իրան խելոք Ալթմազովը. նորա մարմինը անբիծ, անարատ մնաց, բայց հոգի՛ն: Այդ ուրիշ խնդիր է:

Նա երրորդ դասընթացուն (cours) էր, որ հորը մի եամակ գրեց այսպիսի բովանդակությամբ.

«Իմ վիճակս արդեն որոշված է. իշխան Կաբիլբինը ինձ սիրում է, հավատում է. նորա դուստրը ոչ միայն սիրում է, այլ սիրահարված է վրաս. մենք արդեն մեր մեջ թաքուն մատանեփոխություն արել ենք. Եվգոբիան ասում է թե՛ եթե մայրս կամենա մեր պսակին հակառակելու, ես թաքուն կպսակվիմ քեզ հետ, և նա վաղ կամ ուշ կներե ինձ և չի զրկիլ ժառանգութենե. ուրեմն կարող ես ինձ նպատակիս հասած համարել»:

Բոլոր այդ ժամանակ Սուսաննան շաբաթը երեք անգամ գալիս էր երաժշտության դասեր տալու Եվգոբիային:

Արդեն երեք տարի էր, որ Ալթմազովը և Սուսաննան վարժապետություն էին անում իշխան Կաբիլբինի տանը, բայց երբեք պատահած չէր, որ ամենքը միասին ժողովվեին և ընդհանուր խոսակցություն ունենային. մանավանդ Ալթմազովը միշտ աշխատել էր բացակա լինելու, երբ Սուսաննան յուր զբաղմունքեն ազատ ժամանակը խոսակցել էր Եվգոբիայի, իշխանուհու կամ իշխանի հետ: Մի անգամ Սուսաննան ճաշի էր հրավիրված՝ բախտի բերմամբ այն օրը Ալթմազովն էլ այնտեղ էր: Հանկարծ իշխանուհին,

խոսքը դարձնելով Սուսաննային, ասաց.— «Ահա քանի ժամանակ է, որ մենք մին մինի ճանաչում ենք, բայց երբեք պատահած չէ, որ ես ձեզ հարցնեմ— թեև շատ անգամ մտքես անցել է— դուք ի՞նչ ազգե եք. թեև դուք պատվական ուսերեն խոսում եք, բայց ձեր երեսի տիպարքը սլավյանի չէ»:

— Ապա գտեք,— ասաց Սուսաննան ծիծաղելով. ես ի՞նչ ազգե եմ:

— Զգիտեմ,— ասաց իշխանուհին. գուցե սպանիացի եք, կամ իտալացի:

— Ո՛չ, ո՛չ,— ավելի ծիծաղելով ասաց Սուսաննան,— ոչ սպանացի եմ և ոչ իտալացի. գրավ կուզամ, որ մինչև շասեմ՝ ամենևին չեք գտնի:

— Ես գիտեմ,— ասաց Եվդոքիան,— դուք Փոքր-Ռուսաստանցի եք:

— Զի գտաք,— ասաց նորան արդեն ծիծաղեն կլկլալով Սուսաննան.— աստված վկա, որ չեք իմանալ: Ապա զոր արեք, գտեք ի՞նչ ազգից եմ,— շարունակում էր նա յուր հանաքը:

— Ֆրանսիացի՞ չեք արդյոք,— ասաց իշխանը, առանձին ուշադրությունով նայելով նորա երեսին:

— Դուք էլ չի գտաք. ես Ֆրանսիացի ևս չեմ,— պատասխանեց Սուսաննան, և շարունակում էր անօնդ երեխայի նման հաշաք անել, որ ոչ ոք յուր առաջարկած դժվար առեղծանելիքը լուծել չի կարողանում: Եվ վերջապես ասաց բառի վանկերը իրարմե բաժանելով. «Ես-հայ-եմ»:

— Դուք հա՞յ եք,— պատասխանեցին նորան ամենքը նույնպես վանկերը բաժանելով և դարմացական ձայնով. ամենքը ասացին այդ, բացի Ալթմազովեն, որին այդ գաղտնիքը վաղուց, հենց առաջին օրեն հայտնի էր: «Մի՞թե դուք հայ եք. եթե շատեիք, աստուծո անունով երզվում ենք, որ ամենևին չէինք գտնիլ,— ասաց իշխանուհին, կարծես թե սաստիկ ուրախացած մի թանկագին գյուտի համար.— ուրեմն այսօր մեր սեղանի վրա երկու հայ հյուր ունինք՝ մինը դուք և մյուսը պարոն Ալթմազովը»:

Երբ որ Սուսաննան լսեց Ալթմազովի հայ լինելը, յուր սրտի ուրախությունը բռնել չի կարողացավ, քիչ մնաց նորա գիրկը պիտի ընկներ, բայց ինքնիրան զսպեց, և ձեռքը նորան պարզելով, բռնեց նորանը յուրի մեջ, և երկար ու ամուր սեղմելով և երեսի վրա անհուն սեր, ուրախություն և երջանկություն հայտնելով,

ասաց.— Ա՛խ, որքան ես ուրախ եմ, որ դուք հայ եք, որ ես իմ համազգիներես մի հոգի տեսա, վերջապես...

— Մի՞թե դուք հայր-մայր, քույր-եղբայր, ազգականներ չունիք,— հարցրին տանուտերերը, ցավակցելով:— Ոչ,— պատասխանեց Սուսաննան,— ևս բոլոր Պետերբուրգի մեջ միայնակ և որք եմ:

Եվ նա պատմեց իր մասին հետագա սլատուությունը.—

«Հայրս Աևաստպուլի դուցազներեն մինն էր, որ պաշարման տասներորդ ամիսը, ութակոթույթյան ժամանակ մահաբեր վերք ստացավ և մեռավ: Նորա մահվան բոթը ստանալով, խեղճ և ցավագար մայրս է՛լ ավելի տկարացավ և չորս ամիս տանջվելով՝ մեռավ: Ես մնացի միայնակ, վեց տարեկան երեխա: Հորս տերությունը ցույց տված երախտիքի համար՝ ինձ զետեղեցին արքունի վարժարան, ուր տասը տարի մնալով, ավարտեցի ուսմանս ընթացքը, բայց ոչ մի մեթավոր ազգական չունենալով, վարժարանի պատերեն գուրս չեկա: Բարի տեսչուհին, որ ինքը երբեք զավակ ունեցած չէ, ինձ յուր հարազատ աղջկա նման սիրեց, ինչպես և ես նորան մորս նման սիրել եմ, և վարժարանեն դուրս գալով, նորա բնակարանի մեջ տեղավորվեցա, ուր այժմ ես կենում եմ: Թեև մայրացուս ասում է, որ ծնողներս ինչ ու ինչ է մնացել, բայց ես երբեք հետաքրքրություն արած և հարցուցած չեմ՝ թե ի՞նչ է և որքա՞ն է. ինչի՞ս է պետք հարստություն. իմ աշխատածիս կեսն անգամ մսխել կարողացած չեմ, թեև, ինչպես տեսնում եք, ես ոչինչ բանն ինձ զոկած չեմ: (Պետք է ասել, որ Սուսաննան միշտ ճոխ և թանկագին հագուստով էր հայտնվում իշխանի տանը): Մայրացուս էլ, տիկին Նումմելը, ասում է միշտ, որովհետև աստված ինձ շարժանցուց մայր լինելու, ուրեմն ցույց իմ զավակը և ժառանգը կլինես: Բարի պատավը ինձ շատ է սիրում. ոչինչ չի խնայում ինձ համար, մինչև անգամ սաստիկ անբավական է ինձմեն, որ ես դասեր եմ տալիս ո՛չ փողի, այլ օրեր ու ամիսներ անգործ չի մնալու ու տան խորշումը շնտելու համար»:

Իրավ որ ամենքը նկատել էին նորա անշահասիրությունը Շատ անգամ ամիսներ էր անցնում, իշխանը կամ իշխանուհին նորան փող տալու մոռանում էին, իսկ ինքը երբեք չէր խնդրում. եթե տված փողը հաշվետետրումը չի գրեին տանուտերերը՝ ինքը Սուսաննան երբեք չէր իմանալ՝ հարյո՞ւր ունի ստանալիք. թե՞

երկու հարյուր: Միով բանիմ՝ Սուսաննան շահագանց անշահաւ սեր աղջիկ էր երևում: Բայց հազվածք, ինչպես վերը հիշվեցավ, միշտ նորածն, նուրբ ճաշակով և հագուստի նյութը պատվական կերպասներն էր. մատներին հազած ունեք միշտ հինգ-վեց մատանիք, ականջին օդեր, ամենը մեծագին և հազվագյուտ գոհարներով հեռված:

Սուսաննան շարունակեց իր պատմութիւնը.

— Իմ անունս Սուսաննա չէ, այլ Շուշան է (այսպես է գրած ծննդական վկայագրիս մեջ), որն ուսաները չգիտեմ ինչ խորհրդորով, իրանց կերպի փոխել են, իսկ ազգանունս Արդ...յան: Հայրս աստիճանով գնդապետ էր և արդեն գեներալութիւն էր ներկայացուցած. նա այդ բարձր աստիճանը, ասում են, անշուշտ եւսանար, եթէ այդ շարաշուք պատուհարին չհանդիպեր... Եեղճ հայրիկս»:

Ասաց ու արտասովեցավ. բայց տեսնելով, որ լսողները ամենքն էլ տխրեցան, իսկույն երեսի վրա մի քաղցր ժպիտ փայլեցուց ու ասաց. «է՛հ, ի՛նչ անենք, ինչ որ եղավ՝ եղավ. տխրելով ու լալով անցածը հետ չի դառնալ»:

Տխուր խոսակցութիւնը փոխել կամենալով, իշխանուհին ասաց.

— Ասացեք, խնդրեմ, օրիորդ Սուսաննա, կամ ինչպես որ հայերդ ասում եք, Շուշան, մի՞թէ դուք միշտ ամուրի պիտի մնաք, մի՞թէ ձեր մտքեն երբեք չի անցնում պսակվել, տուն-տեղ օւնենալ, կին և մայր լինել. մինչև ե՞րբ այդպես շոր-գլուխ պիտի մնաք, միայնակ ու ձանձրալի կյանք պիտի անցնեք:

— Ինչո՞ւ չէ, ես ուրախութեամբ կպսակվեի. բայց ո՞վ ինձ պիտի առնու: Դուք գիտեք խո, մինչև աղջկան երիտասարդը չհավանի և չսիրե, աղջիկը երբեք իրավունք չունի,— եթէ շուտ չուր պատիվը կորցնել— ո՛չ հավանել և ո՛չ սիրել, ասաց նա ու աչքի ծայրով նայեցավ Ալթմաղովի վրա: Բայց Ալթմաղովը, որ բոլոր ժամանակը նորա վրա էր նայում, հենց որ Սուսաննայի աչքը նորանին դիպան, իսկույն, իբր թէ զզվանքով չուր աչքը հեռացուց նորանեն: Միամիտ Սուսաննան այդ ևս չնկատեց. բայց այդ բանը նկատեց դարձյալ իշխանուհին ու մտքի մեջ ասաց.— «Այս ի՞նչ հրեշ է. ասես թէ սորա սրտումը օձեր ու կարիճներ լինին նստած. այս ի՞նչ անհասկանալի ատելութիւն է, որ ունի սա գեպի այ՞ պատվական օրիորդը, չեմ հասկանում»:

Նա կը հասկանար, եթէ հայի բնավորութեանը քաջ տեղյակ լիներ. խեղճ կինը չգիտեր, որ հայը դեպի յուր համազգին ունեցած ատելութեան մեջ փնտրում է ուժ, վայելչութիւն և հոգեկան մխիթարութիւն:

Թեև առաջները կասկածում էր, բայց այդ օրը իշխանուհին համոզվեցավ, որ Սուսաննան սիրում է Ալթմաղովին. նմանապէս համոզվեցավ նա, որ Սուսաննայի մեջ ավելի կանացիութիւն, քնքրութիւն, բանաստեղծական հոգի, աշխույժ կա, քան թէ իբր հարազատ եվդոքիայի մեջ. և եթէ երբեկցե երկուսը ներկայանային մի օրինավոր, լուսավորյալ, առողջամիտ, մարդկային արժանավորութիւն ճանաչող երիտասարդի, անշուշտ նա նախամեծարութեան արմավենին Սուսաննային կտար: Իշխանուհին ամենեին չէր կարողանում հասկանալ, թէ ինչպե՞ս է կարելի, որ Ալթմաղովի պես անհոգի, շարսիրտ երիտասարդն էլ հայ լիներ, Սուսաննայի նման քնքուշ սրտով զգայուն հոգով-կայտառ, ուրախ, բարի աղջիկն էլ լիներ նույն ազգի ծնունդ: Բայց նա մոռանում էր, որ միւր ասիացու ձեռքումն էր դաստիարակված, իսկ մյուսը եվրոպացու. նա արյունին ավելի գերազանցութիւն էր տալիս, քան թէ դաստիարակութեան: Այդ թերիան որքան էլ ճշմարիտ լինի վերաբերութեամբ կովերի, ձիերի, խոզերի, շների և հավերի, այսուամենայնիվ, մարդու վերաբերութեամբ միշտ էլ սխալ հետևանքների է բերում: Երեսան ոչ նորա համար է վատ, որ վատ հորե ու մորե ծնած է, այլ նա նորա համար վատ է, որ վատ հոր ու մոր ձեռք է մեծացած, վատ ծնողներից է դաստիարակված: Ահա ինչի վրա մեծ և առանձին ուշադրութիւն պիտի դարձնեին մեր հայր և մայրերը... Բայց ո՞ր հայր ու մայր կասե, թէ «ես վատ եմ»:



Մի անգամ իշխանուհին, ըստ դիպաց չուր մարդու բարձրագույն պարզե ստանալուն, մտադիր եղավ մի փառավոր պարահանդես տալու, ուր հրավիրված էր նաև Սուսաննան, որին իշխանը և իշխանուհին արդեն այնքան սիրում էին, որ ոչ մի մերձավոր ազգականներն ստոր չէին դասում: Պարահանդեսն մի շաբաթ առաջ Սուսաննան երեսը կարմրած, աչքերը ուրախութենե ցուլալով մոտեցավ ու ասաց Ալթմաղովին.

— Պարոն համազգի, ձեր կարծիքով ինձ ո՞ր գույն հալածը ավել կվայելի (կսազի):

— Իհարկե հարդագույնը (de paille).— ասաց Ալթմազովը գրեթե ակամա.— այդ ո՞վ չզիտե որ:

— Իսկ դուք ո՞ր գույնը ավելի կհավանիք,— շարունակեց Սուսաննան:

— Իմ սիրած գույնը մանիշակագույնն է,— ասաց Ալթմազովը և ուզում էր հեռանալ:

— Ասացեք, խնդրեմ, պարահանդեսի մեջ դուք որի՞ն միտք ունիք հրավիրելու առաջին կադրիլին,— ասաց Սուսաննան, որ կարծես թե ոչ նրա համար է խոսում, որ յուր հետաքրքրությունը հագեցնե, այլ իբր թե կարոտ է նորա ձայնին, որ նորա խոսք ու գրույցը փափագով լսե:

— Իհարկե իշխանուհիին,— պատասխանեց Ալթմազովը հորանջելով և ասես թե սաստիկ գարշելով խեղճ աղջկա անմեղ ճովողեն:

— Իսկ երկրորդը— պնդում էր Սուսաննան:

— Կարծեմ որ քաղաքավարությունը պահանջում է,— պատասխանեց Ալթմազովը, քիթ ու պոտնկը ծոմոելով, իբր թե մի շատ հիմար մարդու հետ է խոսում,— որ Եվդոքիային հրավիրեմ. ինչպե՞ս եք կարծում:

— Իսկ երրորդը,— չէր դադարում Սուսաննան, երեսը գունատած:

— Ես ի՞նչ իմանամ՝ ի՞նչ երեկի տան աղջիկներ կլինեն այնտեղ. իհարկե մինին արժանի կգտնեմ հրավիրելու:

Սուր և թունավորված դաշույնը սրտի մեջ ցցած այնքան կըսկի՛ծ չէր պատճառիլ խեղճ աղջկան, որքան այս կծու, արհամարհական ու գոռոզ խոսքերը: Իսկույն աչքերեն կաթ-կաթ սկսան արտասուքը գետին թափել:

— Մի՞թե ինձ համար նաև ամենափոքր ուշադրություն թողած չեք ձեր հիշողության մեջ, պարոն Ալթմազով,— ասաց աղջիկը, արդեն բոլորովին լալով.— մեղք է ձեր հոգուն, մեղք է... ես ձեզ այնքան անկեղծ սիրել էի... աստված տա, որ մի ուրիշը տա ձեզ այն երջանկությունը, որ ես երազում էի երբևիցե տալ ձեզ:

Այլևս չկարողացավ զսպել սրտի փղձուկը և թաշկինակը աչքերին բռնած՝ դուրս փախավ:



Պարահանդեսի երեկոն, երկու զինվորական՝ մինը սիրուն դեմքով և գեղեցկակազմ մարմնով գնդապետ և մյուսը ծեր գեներալ, զարդարուն ճրագավառ դահլիճի մեջ կանգնած խոսում էին:

— Ասացեք, խնդրեմ, ո՞վ է այն օրիորդը, որ սյունի մոտ կանգնած, իշխանի դստեր՝ Եվդոքիայի հետ խոսում է,— ասաց սիրուն գնդապետը:

— Ո՞րն է, ո՞րն է,— հարցուց կարճատես գեներալը, աչքերի կոպերը սեղմելով:

— Ահա այն աղջիկը, որ մանիշակագույն ժապավեններով դարդարած հարդագույն ձորձ ունի հագած, գլուխը նայել՝ արեգակի պես վառվում է գոհարներեն, որ կենդանի շուշանի հետ խասն, այդպիսի կախարդական գեղեցկություն են տալիս նրան:

— Հա՛, հա՛, այժմ տեսա, բայց շեմ ճանաչում:

— Շատ սիրուն աղջիկ է, երեսի տիպաբքը իտալուհու կասեի, բայց դորանն ավելի շնորհալի և մեղմ է և շունի այն լիրբ գծերը, որով պարծենում են Ապենինյան թերակղզու կնանիք և որոնք, եթե ինձ հարցնես, ավելի զարդարում է Հեթերային, քան թե համեստ տանտիկնոջ: Ինչ խելոք նայվածք ունի այս աղջիկը, ինչ սիրուն իրանք, ինչ հագուստի ճաշակ, որքան գեղեցկություն բոլոր արտաքինի վրա և դորա հետ միասին որպիսի անմեղություն դեմքի: Տեր աստված, տեր աստված, կա՞ն խո այնպիսի բախտավոր մահկանացուներ, որոնք այսպիսի գանձի տեր են լինում:

— Այո՛, այո՛, հոժարեցավ գեներալը, սիրուն օրիորդ է. ո՞վ գիտե ո՞ր իշխանի կամ կոմսի աղջիկն է:

— Պետք է հնար գտնել մեկ կերպով հետը ծանոթանալու,— ասաց սիրուն գնդապետը, թողեց գեներալին և գնաց խառնվեցավ բազմության մեջ:

Պատվելի կարդացողս, հուսամ, արդեն հասկացար, որ գնդապետի գոված աղջիկը մեր ծանոթ Սուսաննան էր, որ այժմ շրջապատած շատ երիտասարդներով, կադրիլները, վալսերը և պոլլ-կաները բաժանում էր, բայց շատ խնայողությամբ և ընտրությամբ: Արդեն առաջին կադրիլի նշանը տված էր, բայց Ալթմազովը գեռուս դամ չէր գտել: Իշխանուհիին Բարոն Փ-ն էր հրավիրել. Եվդոքիան էլ խոսք էր տվել յուր մորեղբոր որդի իշխան Ս-ի հետ պարելու. իսկ օտար օրիորդները մի անծանոթ կավալերի և այն

էլ՝ տան գուլերնյորի հետ պարե՞լ արիստոկրատիկական պարա-
Շանդեհսուր... a h quelle horreur!:

Սուսաննան տեսավ խեղճ երիտասարդի այգպիսի նեղ վիճա-
կը. իսկույն թողեց յուր կավալերի ձեռքը, շտապով մոտեցավ նո-
րան և ասաց.

— Պարոն Ալթմազով, դամ չունի՞ք, չեք պարո՞ւմ:

— Ոչ, ասաց նա, առաջին կադրիլը կարծեմ պար չեմ գալ
գլուխս մի փոքր ցավում է:

— Չէի՞ք կամենալ արդյոք ինձ հետ պարել, — ասաց Սու-
սաննան, իբր թե շիմանալով նորա նեղ դրությունը:

— Բայց դուք, եթե չեմ սխալվում, արդեն հրավիրված եք, —
պատասխանեց Ալթմազովը, աչքերը վար խոնարհած:

— Ի՞նչ փուլթ, եթե ինձ հետ պարելը ձեզ անհաճո չէ, ասա-
ցե՛ք միայն. կավալերիս ճամփա դնելը մի շնչին բան է. կասեմ
նորան, որ ձեզ արդեն վաղուց խոստացել էի, բայց մտքից
գեացել էր. ներողություն կխնդրեմ, և պրծավ գնաց. հա՛, ո՞ւզում
եք:

— Եթե կկամենաք՝ համեցեք, — ասաց Ալթմազովը. — բայ
ես վիզավի էլ չունիմ, որտեղե՞ն կգտնենք. այժմ կսկսեն պարել
ժամանակ չկա...

— Այդ էլ կհոգամ, դարդ մի՛ անիք, — ասաց Սուսաննան,
թալունի պես թուավ ու գնաց:

Մի րոպեի մեջ Շթուրեհին (ծեր գեներալի հետ խոսողին) տված
խոսքը ետ առավ, չքմեղ բերելով յուր մոռացկոտությունը, և կուս
Գիլյոնին ձեռքերեն բռնած՝ ծանոթացրեց Ալթմազովի հետ և
չբանց վիզավի կանգնեցրեց: Նույն րոպեին էլ երաժիշտները նվա-
գեցին, գույգերը տեղերեն շարժեցան, պարողների ոտքի տրոփը
կանանց կերպասե հագուստների շփշփոցը, զինվորականների
խթանների զընգզընգոցը, տղամարդկանց խոսքը, կանանց ծիծա-
ղը միասին խառնվեցան, և այս ուրախ իրականությունը տեղ
գոնե կես ժամ:

Բայց, այդքան մարդոց մեջ ո՞վ էր ամենից բախտավորը, գի-
տե՞ք: Գլուխս մի՛ ցավացնեք, չեք իմանալ: Ամենից բախտավոր
էր միամիտ և անմեղ Սուսաննան, որ իր սիրական Ալթմազովի
ակներև խայտառակութենեն ազատելով, կարծում էր թե՛ յուր մե-

ծահոգությամբ նորա սրտի մեջ մի փոքրիկ խորշիկ տիրապետել է.
բայց որքան մոլորված էր նա: Բոլոր պարի ժամանակ թեկուզ մի
քաղցր, մի քաղաքավարի խոսք ասեր Ալթմազովը նորան: Նորա
աղավնիի նման շորս պտուտ գուրգուրալուն թեկուզ մի պատաս-
խան տար: Բայց Սուսաննայի ի՞նչ հոգն էր, որ նա անքաղաքա-
վարի էր դեպի իրան, լուռ էր նորա ամեն քնքուշ խոսքերին, խո-
ժոռողեմ նայում էր նորա երեխայական ուրախությանը... Քո
մեղաց տերը լինիմ, եթե նա բոլոր այդ մեծամեծների և նոցա
զարդարուն կանանց բազմությունը յուր անձկալիի մազի թելի
հետ փոխեր: Երբ որ պարը վերջացավ, Սուսաննան հարցրեց
Ալթմազովին.

— Երկրորդ կադրիլի համար դամա ունի՞ք:

— Կարծեմ... տեսնեմ... կարելի է... կովմաց Ալթմազովը:

— Եթե ունիք, — ասաց Սուսաննան, — լավ, ապա թե ոչ՝ ես
դարձյալ ձեզ հետ կպարեմ:

— Լավ... տեսնենք... — պատասխանեց նա բռնի հորանջելով,
որ ծածկե յուր խայտառակությունը և ներքին շփոթը, որ երեսին
պարզ նկարած էր:

Ալթմազովը այն փոքրոգի մարդոցմեն էր, որք իրենց հզոր,
ակներև թշնամիների վրեժը հանում են անմեղ, տկար և շատ ան-
զամ իրանց մոտիկ մարդոցմեն — իրանց ընտանիքեն, իրանց բա-
րեկամներեն: Փոխանակ բարկանալու և արդար վրեժը հանելու
իշխանուհիեն, Եվդոքիայեն և ուրիշ ծանոթ կանանցմե, նա յուր
վրիժու և ատելության բոլոր թույնը աշխատում էր թափել խեղճ
անմեղ աղավնյակի վրան, որ յուր ամեն ճիգը թափում էր նո-
րան մխիթարելու, հովանավորելու և պաշտպանելու:

Երկրորդ, երրորդ և չորրորդ կադրիլներուն, երբ Ալթմազովը
գնաց դամա հրավիրելու և ոչ ոք չհոժարացավ նորա հետ պար
գալու, և խոով խոով եկավ տեղը նստավ՝ երեք անգամ հետզհետե
եկավ մոտեցավ նորան Սուսաննան և առաջինի նման սկսավ հե-
տը պարել, յուր զվարճ խոսակցություններովը աշխատում էր փա-
րատել նորա թախիժը և մի րոպե չէր թողնում, որ հյուրերը նկա-
տեին հասարակաց արհամարհանքը դեպի նա: Սուսաննան շատ
լավ գիտեր, որ արիստոկրատները միշտ այդ կերպ պատժում են
այն մարդոց, որոնք իրենց ստոր աստիճանեն ջանք են անում
դուրս գալ և մեծատունների կարգը անցնել:

Բայց խեղճ աղջկա բոլոր ջանքը, բոլոր քաղաքավարությունը,

Ա՛խ, ինչ սոսկալի բան:

բուրքանմեղ ու անկեղծ սերը, բոլոր մարդավարութիւնը իզուր կորան: Սուսաննան պարզ տեսավ, որ յուր գրկածը ո՛չ մարդկային տաք սիրտ, այլ մի կոտոր սառույց էր. հոգնեցավ, վհատեցավ ու հուսահատեցավ խեղճ աղջիկը: Ոչ մի քաղցր խոսք չի լսեց նորա բերնէն ամբողջ երեկոն:

Պարահանդեսը դեռևս վերջացած չէր. հանդիսականներ հառաչեալ շատ պարեր, շատ դվարճութիւններ դեռևս կային այն գիշերը, բայց Սուսաննան արդեն կորցրել էր յուր զվարթ տրամադրութիւնը. գնաց նստավ մի հեռավոր խորշ և ընկղմեցավ յուր տըրտում մտքերի մէջ: Ետև ետևե շատերը մոտեցան— Սուսաննան այն հազվագյուտ արարածներէն էր, որ նորա բացակայութիւնը ամեն տեղ նկատելի էր լինում— նորան պարի հրավիրելու. բայց նա որին՝ հոգնել եմ, ասում էր, որին՝ գլուխս ցավում է, որին՝ արդեն խոսք եմ տվել, և այդպիսով զխիցը ցանում էր նոցա. և մինչև պարահանդեսի վերջը մնաց տխուր ու տրտում: Միայն Ալթմազովը շեկավ նրա մոտ և ոչ մի քաղցր ու մխիթարական խոսք չասաց նորան, թեև ինքն էր միակ պատճառը յուր համազգի խեղճ ու որբ աղջկան տրտմութեանը:

Ինքն Ալթմազովը նմանապես մի ուրիշ խորշում, թեև հոգով և մարմնով առողջ, բայց տխուր ու տրտում նստած, ոչ թե կարեկցութիւն, մինչև անգամ ոչ ոքի հետաքրքրութիւնը չշարժեց: Ինչպես որ կար, այնպես էլ մնաց բոլոր գիշերը, հյուրերի մեջն իրա համար նորանոր հարսնացուններ ջոկելով՝ հազարավոր օրավար հողով և միլիոնական մայր գումարով. նա արդեն պարզ տեսնում էր, որ Եվդոքիան ձեռքն փախել էր: Ի լրումն յուր թշվառութեան, նա հետագա տեսարանին հանդիսատես եղավ:

Երկու տարեց կին նորա մոտից անցնելիս՝ իրար հետ այսպես էին խոսում.

— Ուրեմն այսօրվա պարահանդեսը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Եվդոքիայի նշանախոսութիւնը. թեև երիտասարդ իշխան Ուն նախանձելի փեսա է ամեն աղջկա համար, բայց ասում էին թե Եվդոքիան մի հայ ուսանողի...

— Զարմանալի թեթևամիտ ես դու, cousine¹, մի՞թե իշխանուհին այնքան խելք չունենր, որ փոքրիկ կրթի համար զո՛հ չբերեր աղջկա ապագան...

¹ Հորաքրոջ կամ հորեղբոր աղջիկ:

Կնանիք հեռացան, խեղճ հայ երիտասարդի սրտի մեջ — ունչն ցցելով և գննքը վերքի մեջ թողնելով: Կարծես իրար խոսք տվածի պես, այն գիշեր ոչ ոք նորան չմոտեցավ, մինչև անգամ իշխանը, իշխանուհին և Եվդոքիան.— ասես թե ոչ ոք չգիտեր նորա ներկայութիւնը պարահանդեսի մեջ. միայն ընթրիքն հետ, հյուրերի տուն գնալու ժամանակ Սուսաննան մոտեցավ նորան և կարեկցաբար հարցուց.— Պարոն Ալթմազով, ինչո՞ւ բոլոր գիշեր տըրտում մտատանջ էիք. ինչո՞ւ ինձ չմոտեցաք, հետս խոսել չուզեցիք. մի՞թե ինձ խոսք ու զգացմունք կպակասեր ձեզ մարդապես կարեկցելու, ձեզ մխիթարելու. մի՞թե այս օտար մարդոց ընկերութիւնը, որ մեր ազգի շահնրը ամենեկին ճանաչել չի ուզում, երկու համազգի, չպիտի մոտեցնենք...»:



Այս վերջին անգամն էր, որ տեսան Սուսաննային. այնուհետև նա բուրդովին դադարեցավ իշխան Կաբիլքինի տունը հաճախելու՝ Եվդոքիային երաժշտութեան դասեր տալու համար:

Չմեռը անցավ: Ապրիլ ամիսն էր: Մի օր Եվդոքիան մի փոքրիկ նամակ գրեց և Ալթմազովից հետ պահանջեց իր մատանին (իհարկե, Ալթմազովի մատանին էլ դրել էր նույն նամակի մեջ) ասելով, որ նա չէ կարող իր մոր կամքն դուրս գալ, որ հիմարութիւն է երեխայութեան ժամանակ տված խոսքը չափահաս տարիքին կատարելը, որ ռուս արիստոկրատին մահացու մեղք է, որնէ զգացմունքի համար, յուր բարձր դասակարգն դուրս գալ և ստորինը մտնել, որ նա թողնելով մայրաքաղաքի պալատների զվարճութիւնքը, ի՞նչ օր պիտի տեսնե փոքրիկ գավառական քաղաքի խրճիթներն մեջ, ուր մարդիկ և կովերը մի կտուրի տակ են կենում, որ նա, Եվդոքիան այնքան ուժ չունի, որ կարողանա մի օտարազգի և աննշան երիտասարդի բռնի մտցնել բարձր ազնվականների կաճառը, որ այսպիսի անհավասար պսակը ամեն հանցանքներն աննեղելի է խելոք և բարձրաստիճան մարդոց աչքում, որոց կարծիքը արհամարհելը շատ վտանգավոր է, և այլն:

Նույն օրը իշխան Կաբիլքինը մի ծրարի մեջ 500 մանեթ դրած և հետը մի փոքրիկ նամակ, ծառայի ձեռքով հասցրեց Ալթմազովին. նամակի մեջ գրված էր. «Եվդոքիայի ուսումնառութիւնը վերջացած պետք է համարել. այսուհետև նա ուրիշ կյանքի համար

պիտի պատրաստվի. ուրեմն ձեր իմ տան մեջ իբր ասուցիչ մնալը՝ այսուհետև ավելորդ է: Այսօր եթե պիտի ազատեք ձեր կեցած սենյակը, ուր պիտի հյուրընկալեմ իմ ազգականին, որ այսօր պիտի գա իմ տունը՝ ճեռավոր քաղաքից, և ինչպես ձեզ հայտնի է, տանս մեջ բացի նորանից, ուրիշ ազատ սենյակ չունիմ, իսկ այս 500 մանեթը ստացե՛ք ինձանից՝ կուզեք ինչպես ընծա, կուզեք ինչպես կանխիկ ձեր ուճիկը մինչև սեպտեմբերի ամսին, որով կլրանա մեր շորս տարվա պայմանագրությունը:

Իշխան Կարիլիին»



Վրա անցավ երկու տարի: Ալթմազովը թեև համալսարանական ուսման ընթացքը ավարտեց և մաթեմատիկայի առաջին կանգիտատը եղավ, բայց նա իր նպատակին հասած չհամարեց իրան. նորա գլխավոր նպատակն էր, մայրաքաղաք գալով, ո՛չ գիտություն, այլև փող և մեծ փող ձեռք բերել. բայց այն անիծած փողը, այդ ժանգոտ մետաղը չընկավ նորա ձեռքը: Ալթմազովի սիրտը «խոր մնաց», նորա ուխտը չկատարվեցավ. ամոթ չէ՞ր նորան վերադառնալ Երևան կամ Թիֆլիզ՝ առանց արիստոկրատ կնիկա, առանց միլիոնավոր օժիտի. ի՞նչ պիտի ասեին մարդիկ: Ալթմազովը համառությամբ մնաց Պետերբուրգ և սպասում էր յուր բախտի անիվի շուտ գալուն:

Մի անգամ բարեկամներեն մեկից լսեց, որ գերմանացի ծեր մի ամուրի կա, որ շատ ուզում էր յուր եզքոր՝ տարիքը անցած աղջկան մարդու տալու, որին ասում էին ամենքը միաբերան, թեև այժմ մեծ օժիտ չի տալ, բայց պառավ աղջիկը նորա միակ ազգականը գալով, ծերունու մեռնելեն հետ հարկավ պիտի ժառանգի նորա անբավ հարստությունը, որն ասում էին, ութը միլիոնեն ավելի է և ապահով կեցած է տերության բանջուռ:

Ալթմազովը խնդրեց բարեկամին, որ իրան ծանոթացնե թե՛ այդ հարսնացու աղջկա և թե՛ նորա ծերունի հորեղբոր հետ: Շատ ժամանակ վրա շանցած, նա երկուսի հետ ևս ծանոթացավ, և ինչ որ լսել էր նոցա մասին, իրավ որ այդպես էր. աղջիկը երեսուն տարեկանն ավելի շոր-շոր, բարձրահասակ, բավականին ցանկացառ, գեղին ու նոսր մազերով, երկայն. երկսով գերմանուհի էր:

Իսկ ծերունի հորեղբայրը մոտ յոթանասուն տարեկան հիվանդոտ մարդ էր, որը, ինչպես ասում են, «քթեն բռնեիր՝ հոգին պիտի փչեր»:

Ալթմազովը յուր կրակոտ աչքերով և գեղեցիկ երեսովը շուտ կարողացավ տաքացնել այն սիրտը, որ արագ-արագ սկսել էր հանգչել սիրո համար: Ողորմելի Մարիխենը չգիտեր ո՞ր աստվածներուն փառք տար այսպիսի անակնկալ բախտի համար. երեսուն տարեկան հասակումն քսանհինգ տարեկան բոցոտ ասիացու սե՞ր— այդ խոմ հեքիաթի մեջ գրվելու բան է: Ինքն իրան հանգստացնելու համար՝ Մարիխենը ձեռնում է, իբր թե կասկածում է Ալթմազովի սիրո անկեղծության մասին: Ալթմազովը երդումով հավատացնում է, որ բացի անխարդախ սերեն, ուրիշ ոչինչ չի փնտրում նորա մեջ:

— Կարելի է դուք կարծում եք, որ հարուստ ծերունին իմ հայրս է և կամ ես նորա հոգևոր զավակն եմ. ո՛չ, ես մի խեղճ որբ եմ և մի կտոր հացի համար կենում եմ նորա տանը:

— Ի՞նչ փուլթ, ես ոչինչ ուրիշ բան չեմ ուզում, բացի ձեր սրտեն և ձեռքեն,— հանգստացնում է նորան Ալթմազովը:

— Պարոն Ալթմազով, կարելի է դուք կարծում եք, որ ինչպես իմ համազգի գերմանացի կնանիքը կամ աղջիկները, ես երեկի ուսումն ունիմ կամ հմուտ եմ տնտեսության մեջ, այդտեղ ևս կսխալիք. ծնողներս վաղ զրկվելով, ես ո՛չ ուսումն ստացա և ո՛չ տնտեսություն կարողացա սովորելու. իսկ հորեղբայրս շատ ժլատ էր, որ նա իմ կրթության համար տար տարեկան մի քանի հարյուր ռուբլի: Այժմ ես կարող եմ միայն,— նայեցե՛ք, առաջվանե եմ ասում,— ապահովյալ մարդու կնիկ լինել, ավելի ոչինչ:

Ալթմազովը ծոցին հանեց համալսարանե ստացած վիսյաթ-թուղթը և ասաց.

— Ահա այս թուղթը կուտա մեզ շատ փող և կատարյալ ապահովություն, իսկ ձեզ, քնքուշ օրիորդ, կմնա այդ փողը ձեր ուզածի պես մսխել և իմ տաք սրտի մեջ մինչև այժմ փրկարած բախտը գտնել:

Արդարակորով գերմանուհին, տեսնելով որ յուր ամեն պակասությունները հայտնելեն հետ, չկարողացավ հեռացնել իրանից այս սիրահար երիտասարդին, և մյուս կողման միտք անելով թե՛ ի՞նչ շահ է այսքան ժամանակվա կամավոր կուտությունը, խոսք տվեց Ալթմազովին, ո՛չ առանց ցիրլիխ-մանիլլիխ (ziereicht-

manirlich)¹ շարժումների՝ նորա հրաբորբոք փափագին հասցնելու, և նույն երեկոյին, թեյի ժամանակ պատմեց յուր հորեղբորը այս անակնկալ բախտը: Հոբելզրայրը երկու ձեռքը mit Andacht (բարեպաշտութեամբ) բարձրացնում է երկինք ու ասում.— Փա՛ռքեզ, աստված (Cott sei Dank), թեև մի փոքր ուշ, բայց վերջը վերջը լսեցիր դու իմ աղոթքը, ես խոստացել էի ողորմած հոգի եղբորս, քու հորդ, որ մինչև քեզ մի արժանաշուր մարդու կին չի տեսնեմ, ոչ կպսակվիմ և ոչ կմեռնիմ: Ես ի՛նչ անեի, որտեղե՞ն գտնեի քեզ համար արժանավոր փեսա. դու գիտես մեր ժամանակվա երիտասարդները մի-մի սրժաթասեր Հուզա Իսկարովտացիներ են, որ ամեն բան, մինչև անգամ իրանց սուրբ զգացումները պաշարատ են փողի գնով ծախելու. նոցա ո՛չ կենաց անբաժան ընկե՛ր, այլ ոսկիով լցված սնդուկ է պետք. այս է պատճառը, որ քու պսակը ein Bisschen (մի փոքր) ուշացավ, իմ սիրեկան Մարիխեն: Գե՛հ, ուրեմն էգուց ճաշի հրավիրե հերցցենս լիբլսենիդ², որ ես էլ մի փոքր հետը խոսիմ, տեղեկանամ և միամտանամ, որ ապա թե կարողանամ նորա նավանդելու իմ շեցխննին (զանձին):

Մյուս օր, իրավ որ, Ալթմազովին հրավիրեցին գերմանացի Կրեստսի մոտ ճաշի: Wildbraten-ի մեջ, տասներկու կոպեկանոց զարեջուրի առջև սկսվեցավ երեսուն տարեկան գերմանուհու հարսնախոսութիւնը քանհինգ տարեկան շքնաղ հայ երիտասարդի հետ: Երունի Շմիդտը յուր ականջով լսեց Ալթմազովի անշահասեր առաջարկութիւնը և անշիջանելի սերը դեպի Մարիխենը, որի վրա, իբր թե, վեց տարիէ ի վեր սաստիկ սիրահարված է: Զգիտեմ հավատա՞ց ծերունին, թե՞ հավատացող ձեռքով, միայն թե հոժարեցավ նոցա ամուսնութեանը: Ծաշին հետ երկուսին էլ յուր առանձնասենյակը հրավիրեց, ինքը վրան հինավուրց բարեպաշտ Կահայեանների դերը առավ և սկսավ պես-պես խրատներ տալ, որը քաղել էր գող-բազարի մեջ գնած արժանագին գերմանական դրքերէն. հաղորդեց նոցա՝ իրար սիրել, աչքերը օտար մարդոց վրա չի տնչել և շատ այսպիսի հոգեշահ խրատներ տվեց նոցա, որոց համար, ինչպես ամենքը գիտեն, ժլատ մարդիկ խիստ առատաձեռն են: Ես, հեղինակս այս վեպին, իմ կողմանն

կարող եմ հավատացնել, որ Մարիխենը այդ ամեն խրատները ճշտութեամբ կկատարէ:

Այսպես, ամեն կողմեն միամտված, ծերունին Աբրահամի, Իսահակի, Հակովբի և Տոբիտի օրհնութիւնները թափում է (գերմանացին շատ սիրում է աստվածաշունչ կարգալ, այդ գիտե՞ք ամենքդ) այս սիրահարներու գլխուն:

Մի շաբաթից, տեր Գրիգորը— աստված լուսավորե հոգին— Սմոլենսկի եկեղեցումը. լռելայն կատարում է սոցա պսակի ծեսը, և նույն օրը Պետրոս-Պողոսի եկեղեցում գերմանական արարողութեամբ կատարվում է նույն բանը երկրորդ անգամ: Մյուս օր ծերունի Շմիդտը 3500 ռուբլի Մարիխենի անունով դնում է պետական բանկը, իսկ շաբաթ շանցած ինքն էլ պսակվում է մի աղքատ, բայց շատ սիրուն և քսաներկու տարեկան գերմանացի աղջրկա վրա. և բանը սորանով կպրծներ, եթե մի տարուց հետո ծերունու նորահարսը մի զավակ չընծայեր ծերունուն:



1870 թվականին ես վարչավ էի գնացել իմ մասնավոր գործերի համար, և այնտեղ ոչ մի ծանոթ շունենալով, հյուրանոց էի իջել. նույն հյուրանոցումը, ծառաներին իմացա, իջել է նաև մի հայ քահանա: Որքան որ հայերը իրանց կեցած քաղաքումը աշխատում են իրարմե հեռու լինել, այնքան էլ օտար տեղը նոցա իրար մոտեցնում է: Ես շուտ ծանոթացա այդ քահանայի հետ և իմացա, որ նա հատկապես Մոսկովին է եկել՝ մի գերմանացի գեներալի որդին հայ կնքելու: Հետաքրքրութիւնս շարժվեցավ և քահանան ինձ պատմեց հետագան.—

Մի պարահանդեսի մեջ գերմանացի դնդապետ, աղգանունը Շթուբե, սաստիկ սիրահարվում է մի սիրուն որբ հայ աղջկա վրա, անունը Շուշան, Արդ...յան իշխանական տոհմեն, որ գրեթե ոչինչ ծանոթութիւն չունենալով յուր հանգուցյալ ծնողաց մասին— որովհետև շատ փոքր հասակի մեջ որբացել է— վարժուհու պաշտոն է կատարում եղել: Երբ որ գնդապետը հնարը գտնում է նորա հետ բարեկամանալու և նորա մորացուի տունը, ինչպես փեսացու, հրավիրվելու, վերջինն, այսինքն մորացուեն իմացել է, որ այդ կարծեցած խեղճ որբը բավականին նշանավոր ժառանգութիւն ունի իր մեռած ծնողներեն՝ կալվածքներով և ոսկեղեն-

¹ Նուրբ, կոտրատվող, սեթեթոզ:

² Սրտի սիրածիդ:

ակնեղեններով: Բարի պառավը հայտնել է գնդապետին, որ Շուշանը ո՛չ միայն իր հանգուցյալ ծնողաց, այլև յուր ժառանգորդն է, և ցույց է տվել նորան յուր հոգեզավակի անունով հարչուր հազար ութուստ քանկային տոմսակ: Պսակի ծեսը շկատարած, Շուշանը յուր փեսայի հետ օրինավոր պայմանաթուղթ է շինել, որով իրն ծնած գավակները, թե՛ տղա, թե՛ աղջիկ անպատճառ հայ պիտի կնքվին և հայ պիտի դաստիարակվին: Գնդապետը հոժարել է ստորագրվել այս պայմանին և ապա կատարվել է նոցա պսակի ծեսը: Շուշանի ամուսինը այժմ գեներալ է և վարչավայի մեջ ծանրակշիռ տերութեան պաշտոն ունի:



Իսկ բախտախնդիր Ալթմազովը ի՞նչ եղավ:

Նույն օրը, որ տիկին Շմիդտի հղութեան ավետիսը հասնում է նորա ականջին, նա ինքը իրան խոսք տվել է, հենց որ երեխան ուզո և առողջ աշխարհ գա՛ նույն վայրկյանին ատրճանակը իր ճակատին տրաքացնել: Կատարե՞ց արդյոք նա յուր խոստմունքը, թե ոչ՝ չգիտեմ. վաղուց Պետերբուրգն լուր չունիմ:

ՏԻԿԻՆ ԵՎ ՆԱԺԻՇ

Վ Ե Պ

ՏԵՏՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարվա եկավոր ժողովուրդը այնքան շատ էր էսենթու- ըումը, որ ամեն փոքրիշատե օրինավոր տուն, բնակարան կամ հյուրանոցի սենյակ կրակի գին ուներ, այնպես, որ երեք ամսվա տալու վարձով կարելի էր այնտեղ և եթ մի փոքրիկ սեփական տուն շինել՝ հիմքից մինչև կտուրը. ուրեմն կամա ակամա ստիպ- վեցա բավականալու մի փոքրիկ խցիկով, որը վարձեցի մի պա- ռավ ուս կնոջմե: Առավոտ և երեկո այդ պառավը պարտավոր էր ինձ համար ինքնաեռ դնելու և այդ բանի համար պիտի տալի նորան ամսական երեսուն մանեթ: Սաստիկ դժգոհ էի, բայց ի՞նչ անեի այս մեկ ժամանակավոր հարկ էր, որ ամենքս (հանքային ջրերով բժշկվողներս) ստիպված էինք տալու կովկասյան բժշկա- րար ջրերուն:

Մի օր այս պառավը, ձեռքը մի հաստ տետրակ բռնած ներս մտալ ու ասաց ինձ.

— Պարո՛ն, հրամանքդ ոտ՛ւս ես, թե այլազգի ես, մեր հա- վատեն չես:

— Իս հայ եմ, պատասխանեցի:

— Եթե հայ ես, ուրեմն այլազգի ես, մեր հավատեն չես:

— Հա՛, այդպես է, ասացի, ես ո՛չ ձեր ազգեն եմ և ոչ ձեր հավատեն. ի՞նչ ես ուզում ինձանից:

— Զես կարող արդյոք իմանալ՝ այս ի՞նչ լեզվով գրած է, (ցույց տվեց ձեռքի տետրակը), ոմանք ասում են վրացերեն է, այլք ասում են՝ թաթարերեն է, ուրիշները ասում են՝ չերքեզերեն է, բայց աեղյակ ոչ ոք չգիտե: Դու որովհետև ուսու չես, այլազգի ես, անշուշտ պիտի կարողանաս կարդալու: Շատ անգամ՝ ուղեցել եմ հնոցը ձգել այրել, կամ ձմեռվա պատուհաններս թղթել, բայց հետս փոշմանել եմ ու միտք արել՝ թե կարելի է մի մարդ գտնվի. որին դա պետք գա, ինչո՛ւ փշացնեմ այս տետրակը. անշուշտ մեկ

մարդ սորա վրա աշխատութիւնն թափել է ու օրերով աչքը խավարացրել է, գրել է: Նայե՛, պարոն, ինչպես հաստ տետրակ է:

Չեղքս առի տետրակը. նայեցա՛ տեսնեմ հայերեն է. շատ ուրախացա:

— Մայրիկ, ասացի, եթե այս տետրակը քեզ պետք չէ, ծախե ինձ. ես քեզ լավ փող կուտամ:

— Ինչի՞ս է հարկավոր, ասաց պառավը. բայց եթե փող կուտաս ու կառնես այդ ինձ համար ավելի լավ է, ես խեղճ կնիկ եմ, մեկ քանի կոպեկը երբեք ինձ համար ավելորդ փող չէ:

— Կուզե՞ս տասը մանեթ տամ:

Պառավի աչքերը վառվեցավ ազահությունից, ալոյպիսի առատ վարձատրութիւնն երբեք չէր սպասում նա մի անպիտան տետրակի համար, որ ամեն րոպե պատրաստ էր եղել հնոց ձգելու ու այրելու: Բայց արի՛ տես որ մարդկային ազահությունը սահման չունի եղած:

— Տո՛ւր տասնհինգ մանեթ, ասաց պառավը ինքն էլ վախենալով այս շահագանց պահանջմունքեն, ու առ քեզ տետրակը:

— Լա՛ւ է, մայրիկ, կուտամ քեզ տասնհինգ մանեթ և կառնում տետրակը. բայց ասա, խնդրեմ, ի՞նչ կերպով դա քու ձեռքը ընկել է:

— Դու ուզում ես իմանալու ի՞նչ կերպով իմ ձեռքը ընկել է այս տետրակը, ասաց պառավը, ահա՛ լսե: Ես մեկ փեսա ունեի, որ վեց-յոթը տարի առաջ հյուրանոցի մեջ սպասավորութիւն էր անում: Այն տարի մի օտարազգի բժիշկ եկավ էսենթուկ և վարձեց այդ հյուրանոցումը մի սենյակ, և քանի մի ամիս կեցավ. երբ որ նա յուր տեղը գնաց, սենյակը մաքրելու ժամանակ, փեսաս գտավ այդ տետրակը պահարանի մեջ և, կարծելով որ մի օր սորա տերը կսկսե պտրելու և գտնողին վարձ կխոստանա՝ պահեց յուր մոտ: Բայց փեսաս շուտով մեռավ. աղջիկս էլ նորանից ետ շատ շապրեցավ. նոցանից մնացած մեկ քանի լաթերի ու հին հալավների հետ միասին այս տետրակն էլ ինձ մնաց: Ահա՛ այս տետրակի բոլոր պատմութիւնը: Տո՛ւր փողը և բարի վայելե՛:

Ես իսկույն տվի տասնհինգ մանեթը և տետրակը իմ սեփականութիւնը դարձրի:

Տախ-ջուր. հունիսի 10.

Շատ ձախորդ պարագաներով մտա Տաք-ջուր: Ճեպակառքը, որն մեզ «Հանքային ջրերեն» բերեց այստեղ՝ դուրս թափեց ամենիս փողոցի մեջտեղը և ինքը գնաց հեռացավ: Մանր, սառն, թափանցիկ անձրևը անդադար շաղում էր, գետինը թաց, տեղ-տեղ ջրշեղջներ կանգնած. ծառերից ամեն մի քամի փշելիս հորդահոս թափում էին խոշոր կաթիլներ. մարդիկ գեմքերին հոգս նկարած՝ շտապում էին իրանց գործին. խանութի տղերքը ծուլ-ծուլ կանգնած էին խանութների դռան մոտ, անցուղարձ անողներին մինչև անգամ չէին հրավիրում ապրանք գնելու, իմանալով որ՝ ամեն մարդ այժմ մի բան է ցանկանում, որ է՝ պատսպարվել այս անտանելի օդին:

Այսպես իմ մուտս բարեկեց Տաք-ջուրը:

Մի հայ խանութպանի օգնութիւնով քաղաքի ետ ընկած թաղի մեջ ծանր գնով վարձեցինք մի հավաքույն և փոքրիկ պայուսակս ու իրեղեններս ներս տարի: Եվ շատ ուրախ էի, որ գոնե ցուրտ անձրևեն կարողացա ինքս ինձի ազատելու:

«Տաք-ջուրի երեք ամիսը կերակրում է նորան ամբողջ տարին»: Որպիսի ահագին հարկ պիտի տա ամեն մի ճանապարհորդ, որ կշտացնե մի ամբողջ քաղաք. բնակարանի վարձեն բռնած մինչև վերջին իրը քառապատիկ գին ունի այստեղ՝ համեմատելով ուրիշ տեղերի: Դիցուք թե հարուստ մարդը կարող է զիարդ և իցե տանել այդ ծանրութիւնը. ի՞նչ անե ողորմելի չքավորը: Ահա խնդիր, որն վճռելու համար շատ փիլիսոփաների գլուխներ պիտի ցավին ունայն:

Մեր կողմի մարդոց շատ հայտնի Բ. գտել է այստեղ յուր շոպչւ ապրուստը բավականացնող առատ աղբյուր: Նորա անհագ ստամոքսը լցնելու համար որքան նիհար քսակներ ու գրպաններ պիտի քամվին:

Այսօր պղտոր եղանակի պատճառով երաժիշտների խումբը նվագելու չէ. ուրեմն ճեմելիքների մեջ զբոսնող ժողովուրդը չի լինիլ: Կոնամ տանը և շփոթված գլուխս ու պայուսակիս մեջի իրերը կարգի կբերեմ:

Ինչպես կուզեի իմանալ՝ եկե՞լ է «նա», թե ո՛չ. և կամ՝ այս-

տե՞ղ է, թե՞ գնացել է էսենթուք, կամ Քթու-ջուր, կամ Երկաթ-ջուր...

Հունիսի 11.

Այսօր բոլոր օրը անցուցի ճամբարների, հասարակական գրասարանների մեջ և լողարանների մոտերը ման գալով, հույս ունեի կա՛մ «նորան» տեսնել, կա՛մ նորա հորը, կա՛մ նաժիշտին և կա՛մ ծառաներին մեկին. բայց իմ մանրակրկիտ հետազոտությունները իզուր կորան. նա դեռևս եկած չէ՛: Եստ կառապանների էլ հարցուցի՝ արդյոք այս ու այս նշաններով մարդիկ բերե՞լ են հանքային-ջրեր ասված իջևանեն. նոցա պատասխաններեն եզրակացուցի, որ իմ պտրածներին նոքա ո՛չ տեսել են և ո՛չ հանդիպել են: Ինչո՞ւ այսքան ուշացան, ի՞նչ է պատճառը, ի՞նչ արգելք է հանդիպել: Իմ կարծիքով նոքա ոչինչ պատճառ պիտի ունենային Ռոստով այդքան երկար մնալու:

Քուսեբը թեև մայիսի առաջին օրերին սկսված են, բայց ժողովուրդը շատ սակավ է: Ասում են թե այժմ՝ Կովկասի ջրերը այցելելը ավելի թանկ է նստում, քան թե արտասահման երթալը: «Կույրն էլ գիտե, որ կիրակին տոն օր է»: Երբ որ լուր տարածվեցավ, որ մեր մեծամարդիկը Կովկասի ջրերը տվել են բախտախընդիր Բ. ձեռք, ամենքը միաբերան ասացին, որ ջրերու բանը պրծավ. ժողովրդի նախագուշակությունը շուտ և ճիշտ կատարվեցավ, թեև Բ. դորանից ոչինչ վնաս չունի: Ո՛վ գիտե նա յուր տան խորշում նստած և հազարները համարելով ջրի տակից որքան կուշտ ծիծաղում կլինի. ասելով.

«Թող իմ բանը աչի, ով կուզի հաչի»:

Քաղաքի իսկական անունը՝ խաբարդացիների լեզվով Ըսուր-Սու է, որ նշանակում է տաք ջուր, իսկ ռուսաց Փյաթիգորսք անունը տված է Բեշ-Քավ սարեն, որ հիրավի հինգ գագաթ ունի և որ քաղաքիս հյուսիս-արևելյան կողմումն է 8-10 վերստ հեռավորությամբ: Ինքը քաղաքը հիմնած է Մաշուխ սարի լանջի վրա, նորա ստորոտը և այն ձորի մեջ, որն կազմվել է Մաշուխի ծոցեն լեռնոց հանքային ջրերու փորելեն:

Հանքային ջրերու բժշկարար գորություն ունենալու մասին, մեր օրերում, երկարորեն խոսիլն անգամ ավելորդ աշխատանք է. իսկ Կովկասի հանքային ջրերու օգտագործությունը խորին հետ-

թյանը ևս հայտնի էր. Ռայց ևս մի տարրօրինակ կարծիք լսեցի, որին թեև չեմ հավատում, բայց այստեղ հիշելը ավելորդ չեմ համարում: Ինձ շատ տեղացի ծերեր ասացին որ՝ առաջվա ժամանակները Տաք-ջուրի բժշկարար ուժը ավելի էր. հենց որ նոքա սկսան նորանոր կարգերը մտցնելու՝ ջրերն էլ քանի գնաց ավելի և ավելի կորցրին գորությունը: Դարձալ կրկնում եմ, այս խոսքերին ևս հավատ չեմ բնծալում, բայց նոցա տակը ամուր գծում եմ: Սուրա նման մի ուրիշ կարծիք կլսեք Քիֆլիսի ծերերից եղանակի ցրտանալու մասին: Այս ի՞նչ բան է:

Հունիսի 13.

Երկու օր անտանելի օդեր էին՝ տոթ, քամի և փոշի. բոլոր այդ ժամանակը ոտքս սենյակես դուրս չի դրի. ինքս ինձի տկար էի գգում: Էսենթուքի ջուրը մարդուս շատ արթուն է պահում, այնպես, որ՝ նորա խմողը յուր բնակարանեն շատ պիտի չհեռանա:

Այսօր որ դուրս եկա՝ առաջին գործս եղավ հարց ու փորձ անել Սոֆիայի մասին. երբ որ իմացա, որ տակավին եկած չէ՛ գնացի ու առաջին անգամ մաս Տաք-ջրի երևելի ծծմբային լողարանը. թեև միայն տասը բույե մնացի մեջը, բայց երբ որ դուրս եկա՝ ասես թե կյանքիս վերա տասը տարի ավելցուցած զգացի: Երանի՛ այն մարդոց, որոնք աստվածային այսպիսի շնորհը տարին-առանձնակու ամիս ջրերի տակ ունին... Բայց ի՞նչ կասես, որ Հայաստանն էլ մի օր լլիքն է եղել բնության այսպիսի անգին գանձերով: Ասում են թե՛ Անիի բազանիքի մեջ հինգ ջուկ հատկության հանքային ջրեր բերված են եղել զանազան տեղերի:

Աստվատները բազմությունը ժողովվում է Եղիսաբեթյան աղբյուրի կամ ինչպես շենքի վերա գրած է՝ Եղիսաբեթյան արածի մեջ. սաք յոթ ժամեն մինչև ութը նվազում է երաժշտաց խումբը: Հավանական շատերը այդ միջոցին են խմում ո՛րք մի և ո՛րք երկու բաժակ ծծմբային ջուր և մաքսելու համար ամբողջ ժամ առաջ ու ետ ման են գալիս արածի մեջ: Երբ որ երաժիշտները դադարում են նվագելը, բազմությունն էլ ցրվում է: Այնուհետև սովորաբար սկսում է ժողովրդի կամ ավելի ճիշտ ասեմ՝ հիվանդների մեծ մասը լողարաններումը լվացվելու:

Երբ որ աղբյուրին մտակցա, որ հանքային ջրեն խմեմ, մի լիտրի դեմքով, բայց բազմությունն օգնեցիկ երեսով և բարեկազմ

մարմնով երիտասարդ սպա ինձ ետ մղեց և յուր բաժակը ինձանից առաջ տվեց աղբյուրեն ջուր հանող առջկան, որ լցնե ջրով: Ես վրդոված նայեցա սպայի երեսին. նա էլ նայեցավ վրաս պայքար հրավիրող կերպարանքով. ասես թե մեղավորը ոչ նա, այլ ես էի: Ես լռեցա, սպան քաշակերվեցավ և առավել համոզվեցավ, որ «համարձակությունը քաղաքներ առնող է»: Այս սպան ինձ բռնորովին անձանոթ չէր: Ես շատ անգամ տեսել էի սորան երկու մայրաքաղաքի մեջ: Օրեկներ ի մեջ մեծածախ հաշի կամ խորակի մասնակցող, գինարբուքի մեջ շիշ ու գավաթ փշրող, ծառա ծեծող, հայելի կտորող, թատրոնումը չհավանած դերասաններին և դերասանուհիներին թրջած խնձոր ձգող, լիխաշով չափ-տվող մայրաքաղաքի հռչակավոր Բոֆոններ էտեից և այլն, և այլն, միով բանիվ՝ այնպիսի «չքեղ ստահակություններ» անող, որոնց համար մինչև այժմ, այսինքն մինչև տասնևիններորդ դարս չի կարմրում այսպիսի սպան: Ասում են թե՛ այս սպան մի առանձին հատկություն ևս ունի, որն հետն բերել է Փարիզեն յուր վերջին ճանապարհորդությունեն, այսինքն՝ լավ վարձով ալֆոնսություն անել: Այս նորամուտ բառ է եվրոպական լեզուների մեջ. եթե սորա ճիշտ մեկնությունը կուզեք իմանալ՝ հարցուցե՛ք հարուստ այրիներին... Այս երիտասարդ սպայի անունը Վլադիմիր Դոնդուով էր:

Սիրտս վրդոված գնացի նստա բազմոցի վրա, իսկ Դոնդուովը մի ուրիշ սպայի հետ կուռ-կուի տված՝ քանի-քանի անգամ առջևիցս անցավ և ես երկու-երեք անգամ լսեցի նորա բերանից առմյալջախ խոսքը: Ազգային հպարտությունը բարձրաձայն խոսեցավ մեջս. նայեցա շորս կողմս, հեռվումը տեսա երեք-չորս հայ, որոնք արդեն քանի օր է, իրար հետ ականջ ականջի հայերեն փոփոխում են. իսկ հրապարակավ, ժողովրդի մեջ պինդ պինդ ռուսերեն են կտորատում: Եթե հաստ վզերը, կլոր երեսները, տեղած փոքերը ու կարճ ոտերը չլինե՛ր՝ նոցա կարելի էր բռնորովին եվրոպացի համարելու, վասնզի նոցա վրայի հագուստը ավելի եվրոպական, այսինքն վերջին ձևով կարված էր, քան թե նույնիսկ եվրոպացիները: «Մեկ մարդը դաշտի մեջ մարտիկ չէ՞» ասացի մտքիս մեջ ու կուզ տվի Դոնդուովի այս նախատինքը:

Ութ ժամին, երբ որ երաժիշտները դադարեցան նվագելու և ժողովուրդը խումբ խումբ սկսավ վերեն վայր իջնելու, ես էլ միայնակ տխուր սկսա իջնել և ուղղեցի քայլերս դեպի բնակարան: Երմալովի լողարանին որ հասա՝ հանկարծ առջևս երեք ֆայտան

սրընթաց անցան, վերջին երկու ֆայտոնները ծանր բեռնավորված էին, մեջերը նստողներ չկային, իսկ առաջինի մեջ նստած էին շորս հոգի, երեքի երեսը շտեսա, բայց նոցանեն մինին ես նամանեցուցի կատային— Սոֆիայի հայ նաժիշտին: Սիրտս սաստիկ թունդ առավ. մոռացա Դրոզդովին էլ, իմ այն առավոտ կրած անարգանքն էլ— բռնորը մոռացա. Սոֆիայի ներկաձուլությունը ասես ին բռնոր քաղաքի մեջ երջանկության հոտ և լույս տարածեց. ծանրն է՛լ ավելի գեղաժիծաղ էին երևում, մարդոց երեսն է՛լ ավելի բարի և ազնիվ, ազգ անպատվող հայերն էլ երևում էին ինձ առավել անբարտ, քան թե ցածահոգի:

Գաղտնիք չէ՛, որ ես սիրահարված եմ Սոֆիայի վրա և գլխավորը՝ սիրահարված եմ առանց հույսի: Սոֆիան որ կա՝ միլիոնատերի միակ ժառանգն է, իսկ ես հայաստանցի մի խեղճ երիտասարդ, համալսարանեն հենց այս ամառ արձակած բժշկի վկայագրով: Երկինք ու երկիր իրար ավելի մոտ են, քան թե ես ու Սոֆիան:

Հունիսի 18.

Հինգ օր անդադրում գիշեր ցերեկ անձրևներ են գալիս, ո՛չ մի վայրկյան չի պարզեցավ երկինքը, ու գետինը շցամաքեցավ, որ ես կարող լինեի ոտքս շեմքես դուրս դնելու ու Սոֆիայի մասին, ինչ ու ինչ իմանալու, իրա՞վ նա էր եկողը, թե՞ ես խաբվեցա մի օտար աղջիկ կատայի տեղ ընդունելով. և այդ շատ հավանական է:

Չանձրությունը և հոգեկան վիշտը խեղդում է ինձ, սիրտս ուզում է տրաքել: Գիրք չունիմ, որ կարդամ, ծանոթներ չունիմ, որ հետերը նստիմ, խոսակցիմ, սիրտս բացվի, եղանակը պարզ չէ, որ փողոց իջնեմ, մարդ տեսնեմ: Բանտարկյալի նման շորս պատի մեջ փակված, հորանջելով և հեկեկալով մնացել եմ:

Որովհետև առջևս պարապ ժամանակ կա (մինչև Սոֆիայի գալը) և ես մեկ ուրիշ օգտավետ գործ չունիմ կատարելու, հիշեմ իմ անցյալը, որն այս ներկայիս հետ անխզելի կապ ունի:

Համալսարան մտած տարիս՝ հայրս մեռավ, հորեղբայրներս, որոնք հորս կենդանության ժամանակ նորա խանութի մեջ հասարակ սպասավորներ էին, չգիտեմ ի՞նչ խարդախություն բանեցուցին, որ մեռելը դեռևս սեղանի վրա կեցած՝ հայտնեցին, որ հորս

մեծ հարստություններն բացի հիսուն հազար մոսկովցիների պարտքեն ուրիշ բան մնացած չէ: Մայրս, քույրս և ես մնացինք որք և աղքատ: (Հորս մահեն ետ սորա էլ շատ շագրեցան, մի տարիից մեռավ քույրս և տարի ու կեսից մեռավ մայրս): Քանի մի ժամանակեն ազբատ հորեղբայրներս դարձան մեր քաղաքի առաջնակարգ հարուստները, իսկ մայրս և քույրս իրանք իրանց աղքատիկ ապրուստը ստիպված են եղել կար-կարկատով ճարելու: Այսպես՝ ես Մոսկովումը օխտն-օտար ազգի մեջ, հեռի մայրենի քաղաքես, հեռի սիրելի բարեկամներես, մնացի անտեր, լքված և օրական հացի կարոտ:

Այն ժամանակները Մոսկվա մի բարի քահանա կար՝ անունը Մովսես: Այս տեր-Մովսեսը, իմանալով իմ նեղ վիճակը, առանց ինձ բան ասելու, գնացել է մի հորեկ հարուստ հաշտարխանցի հայ վաճառականի մոտ և պատմել է իմ որպիսությունը: Իսկ և իսկ այդ վաճառականին էլ յուր միտկ աղջկա կրթության համար այդ միջոցին պետք է եղել մի վարժապետ: Եվ այդ կերպով տեր-Մովսեսը և Ասատուր-աղան իրանց մեջ պայման են դրել՝ ամսական տասներկու մանեթ ոռեկով ինձ կարգել վարժապետ: Երբ տեր-Մովսեսը ինձ հայտնեց այս բանը, այս նեղ դրությունս մեջ այս պայմանն էլ երևեցավ ինձ աստուծո ամենամեծ ողորմություն, թեև այդ ամենամեծ ողորմությունը ամեն օր խլում էր իմ թանկագին ժամանակից ամբողջ երկու ժամ, որն ուսանողի համար անփոխարինելի կորուստ է: Մ՛չ միայն այդքան, այլև Ասատուր-աղան աչ ու ձախ քարոզում էր, թե նա մի հայ ուսանողի մեծ բարերարություն է անում, այսինքն՝ տալիս է նորան ապրուստ. սաից զլուխ հագցնում է և լցնում է նորա բոլոր պիտույքը և խոհանոթյամբ լուում էր իմ ծանր աշխատանքի մասին:

Սոֆիան (Ասատուր-աղայի տասներեք տարեկան աղջիկը) բազմաթիվներն երես-առած աղջիկ էր. և մինչև որ նորան դասի կարողանում էի նստեցնել՝ իմն էլ ինձ էր հասնում: Առանց մեկ պատճառի կամ գլուխն էր ցավում, կամ արամադրություն չէր ունենում՝ պարապելու, կամ դասերը պատրաստած չէր լինում, կամ գրքերը կորցրած էր լինում, և թե՛ խրատում կամ աղաչում էի սկսում էր լալու ու հազարումեկ նազեր էր ծախում: Ստուն քրտինք էր գալիս վրաս մինչև կարողանում էի ամեն բան կարգի բերել ու նկատելի առջև հանդիստ նստեցնել: Աշխարհագրության, կրե՛ քերականության, կամ թվարանության դասերի ժամանակ

ամեն անգամ ստիպված էի անտեղի հարցումների պատասխաններ տալու: «Աղջկան ի՞նչ հարկավոր է, թե Լոնդոնը Թեմս դետի կամ Վոլգայի վրա է. աղջկան ի՞նչ հարկավոր է, որ թագավոր բառի սեռականը թագավորի է և ո՛չ թագավորա. աղջկան ի՞նչ հարկավոր է, որ մեկ փութի մեջ կա երեք հազար ութը հարյուր քառասուն զոլտոնիկ. մայրս խո այդ ամենը ո՛չ սովորել է և ո՛չ գիտե, բայց նա շատ լավ մայր է»: Եթե ես նրան մեկնում էի թե՛ նորա մոր աղջկության ժամանակ այդ ներելի էր, այժմ ուրիշ ժամանակ է, և աղջկանից ավելի է պահանջվում, նա իսկույն ասում էր. «ուրեմն իմ մայրը հիմար է, ուրեմն իմ մոր ծնողքը անպիտան մարդիկ էին, որ չէին կրթել նորան»: Շատ անգամ խաթուն Օսաննան (Սոֆիայի մայրը) ևս ինձանից սիրտը ցաված էր լինում, և ես ստիպված էի լինում գլուխս ցածացնել արդարանալով այնպիսի գործերում, ուր ամեննին հանցանք չունեի:

Զգիտեմ կա՞ արդյոք աշխարհիս երեսին ավելի ստոր և ապերախտ պաշտոն, քանց հայ երեխաների դաստիարակիչ լինելն: Այդ միջոցին հազար անգամ սոսկալի երդումներ եմ կերել, որ եթե ես երբևիցե հայր լինիմ՝ անեծք կգնեմ իմ զավակների վերա՝ ո՛չ հայի քահանա և ո՛չ հայի վարժապետ լինել, տասնապատիկ գերազասելի է կառապան կամ փողոց ավելող մշակ լինել, քան թե հայոց քահանա կամ վարժապետ: Այն թշվառ կոպեկները, որ հայը շարտում է յուր քահանային կամ վարժապետին, ոչինչով ավելի պատվավոր չեն այն կոպեկներեն, որ նա տալիս է մի մուրացիկ աղքատի. թե՛ այս և թե՛ այն գիպվածում նա յուր տվածք համարում է ապարգյուն ծախք: Հայը հավատում է լուսավորության ուժին, բայց ո՛չ այն լուսավորության, որն ստանում է մեկ հայից, այլ որն տալիս է նորան պաշտոնատարը, աստիճանավորը՝

Ջարտանալի՛ բան, քանի՛ ավելի տանջում էր ինձ Սոֆիան, այնքան ավելի սաստկանում էր համակրությունս դեպի նորան. համակրությունս ժամանակով սերի դարձավ, իսկ սերս փոխադրվեցավ կրքի: Այո՛, այս երես-առած աղջկանը ես կրավոր կերպով սիրեցի: Օրե-օրե նա զարգանում էր մարմնով. առողջությունը խոշոր կալականերով կաթում էր նորա թշերից, լայն լանջերից ու բավականին բարձր իրանքից. և երբ լրացավ նորա տասնյոթը տարին և ես հիւզեբորոգ դասարան մտա՝ Սոֆիան արդեն հարսնացու էր: Սերի կամ սովորության նման մի բան նախ կոզմից ես

նկատում էի արդեն դեպի ինձ. բայց ծնողաց հոժարութեան մասին բոլորովին հուսահատված էի: Եվ ունեի պատճառ:

Մի օր Ասատուր-աղայի մոտ Հաշտարխանից հյուրեր էին եկել, Երեկոյան թեյ էին խմում: Ես եկա Սոֆիային դաս տալու Այդ միջոցին Սոֆիան տասնվեց տարեկան կլիներ, ես էլ շորորոգ դասարանի ուսանող էի: Հյուրերեն մինը հարցուց (երևի ականջը փոքր ինչ խուլ էր, վասնզի նկատած էի, որ խուլը կարծելով ուրիշին էլ խուլ՝ միշտ պինդ է խոսում)— էս ի՞նչ մարդ աս, հա՞յ աս:

— Հա, հայ աս:

— Ի՞նչ գործի աս:

— Աղջկանս վարժապետն աս, սովորցնում աս:

— Շատ ջահել աս, չես վախենը՞ մ:

— Քու տունը աստված չի քանդի, ինչի՞ց պետք աս վախենամ. Սոֆիակես էն հոր-մոր զավակ աս, որ էդպես անփոխանների վերաթքել չի ուզիլ, չէ թե մեկ ուրիշ բան:

— Նայի՛ր, սա՛խտ կացիր, Բուղդան Նիկիտիչ. կրակն ու բարոժը մին-մինի մոտ շեն տինում, մին էլ տեսնիս բիրդան կտռաքի, հա:

— Չէ, Սիմոն Մալխասիչ, էտ դումանից դու միամիտ կացի՛ր:

— Սոֆիական իմ մեկ հատիկ զավակն աս, աչքիս լուսն աս, իմ միլիոնի ժառանգն աս, ես գի՞ժ եմ, որ էս անփոխանին տամ. ի՞նչ եմ հոգում, որ նա բժիշկ աս, գլուխն էլ քարը, հիմա էտպես քանավալներով քուշաները մոստիտ են անըմ. պալկովնիկներ, գեներալներ, գուբեռնատորներ քի՞չ են, ի՞նչ, Ռուսաստանըմը...

— Աղա՛ Ասատուր, մի՞թե աղջկանդ ուսի կտաս. հայի՞ք չէ՞: էդ խոմ չիլավ, հաու՞թունը մեղալամ կը մոռանա...

— Շատ պետք է ինձ քու հաու՞թունը,— ասաց քիթ պոռնկը ծուռեղով Ասատուր-աղան,— ի՞նչ աս, ուսը կոպալ՞շտ աս, ինչ աս, նա էլ խոմ մեզ նման քրիստոնյա յա, բալքի մի զատ էլ ավելի... Թողե՛ք... պաժալըստա, ձեր ազգասիրությունը, ինչ ասես փիս բան՝ էդ ազգասիրութիւնի մեջն աս: Մեկ օր (դուք կացե՛ք) ամենքիդ կը փռնեն, Սիբիր կուղարկեն, էն ժամանակ կիմանաք թե ինչ անշանակըմ՝ ազգասիրությունը, հաու՞թունը: Չէ՛, աղա-ջան, իմ Սոֆիակեն աղավարի յա պոլկովնիցա կիլի, յա եներալա, յա գուբեռնատորա, դու գնա էլի քու ազգասիրությունը արա...

— Հալբաթ,— ասաց Սիմոն Մալխասիչը,— Սոֆիակայի բանը

չոկ աս. սաղ աշխարհքը որ պտրես, Սոֆիակայի նման բարիշնա յա մեկը քթնես, յա էրկուր:

Այդ միջոցին Սոֆիան գիրքը առած ներս մտավ, ես դուռը փակեցի ու էլ չի լսեցի այս անբարոյական խոսակցութունը երկու պատվավոր հայերի:

Ասացի որ՝ ես Սոֆիայի վրա սիրահարված էի, բայց սաստիկ կսխալին մարդիկ, եթե կկարծեն որ նորա հոր հարստութունը իմ սիրո մեջ մի որևէ դեր էր խաղում. ամենևին ո՛չ: Աստուծո առջև կարող եմ ասել, որ ոչ մի բոպե նորա հարստութունը ինձ չէր շլացրել, և ես ոչինչ ցանկութուն չունեի երբևիցե տեր լինելու այն միլիոնին, որ նա մի օր յուր հորից պետք է ժառանգեր: Իմ պատմածից երևում է, որ Սոֆիան մի առանձին հոգեկան արժանավորություն ևս չուներ, որով կարող լիներ ինձ հրապուրելու Ո՛չ. ես (թեև ամոթ է խոստովանելը) շատ սոսկական կերպով սիրել էի նորա գեղեցկակազմ, շնորհալի արտաքինը: Քանի որ նորան տեսնում էի՝ աչքս մութ էր կոխում, արյունս եռ էր գալիս, սիրտս պինդ-պինդ բաբախում էր ու ջիլերս քաշքշվում էին: Եվ ի՞նչ զարմանք, ինքս էլ այն ժամանակ քսաներկու տարեկան էի: Հոգի իմ մեջ էլ չէի նշմարում. ի՞նչպես կուզե՞ք, որ ուրիշի մեջ որոնեի: Ես բոլորովին համոզված եմ, որ «առաջին սեր» ասած զգացմունքը իսկ և իսկ այն է, ինչ որ ես զգում էի այդ պատանեկական հասակիս մեջ: Այս, ինչ որ ես ասում եմ, գուցե ուրիշները չասեն. բայց այդ ոչինչ չէ նշանակում, այդ միայն ապացուցանում է, որ նոքա ինձ նման սրտաբաց չեն:

Բոպեի մեջ սիրել չէ՛ կարելի, բայց սիրահարվիլ կարելի է. բոպեի մեջ երևում է մարդուս արտաքինը և ոչ թե հոգին: Հոգի ճանաչելու համար շատ տաքիներ են պետք: Մենք սիրահարվում ենք արտաքինի և ոչ թե հոգու վերա: Հավանիլ, սիրահարվիլ, սիրել— պատանեկի և աղջկա համար միանշան գաղափարներ են. միայն չափահաս տարիքը կարողանում է որոշել և ամենին յուր տեղը և աստիճանը տալ մարդկային հարաբերությանց մեջ: Ստում է տղան, եթե ասում է թե այս ինչ աղջկա հոգին սիրեցի, նույնպես և աղջիկը տղի համար, մի՛ հավատաք. նոքա հավանել են միմյանց աչքը, ճակատը, մարմնու գույնը և այլն: Պատանիի կամ դեռահաս աղջկա բերանումը հոգին մի անորոշ գաղափար է այնպես, ինչպես որ ազգասիրություն խոսքը մեր ժամանակակից հայերից շատերի շրթեբուսն: Կարճ՝ ես սիրահարված էի Սոֆիայի

վերա, բայց նույնը չեմ կարող ասել Սոֆիայի կողմից: Իհարկե, շորս տարվա ընթացքում, գրեթե ամեն օր շորս-հինդ ժամ միաբեռն անցնելով, նա եթե չի զգար էլ դեպի ինձ սեր, գեթ ընտելացել էր իմ ներկայությունը: Ինձ տեսնելով՝ ուրախ էր լինում, եթե երեք-չորս օր հիվանդությանս պատճառով չերեայի նորա աչքին, հարցրնում էր՝ ինչո՞ւ եկած չէի... և այսքանը: Ծրբեք նկատած չէի, որ նորան վշտացներ իմ բացակայությունը և կամ թե մեծ ուրախություն պատճառեր իմ ներկայությունը:

Մի երեկո, բստ սովորությանս, գնացի նորան դաս տալու, բայց տանը չի գտա. հոր ու մոր հետ միասին շփուեմ ո՛ւր էր գնացել: Որովհետև հոգնած էի՝ շուգեցի, Իսկույն բնակարանս վերադառնալու, ու մնացի նորա սենյակի մեջ: Պատի վերա կախած էր նորա լուսանկար պատկերը, աչքս դարձուցի վերան ու երկար ժամանակ նայում էի. հանկարծ վերաս մի անմեկնելի տրտմություն եկավ. աչքերես ակամա սկսավ արտասուք գալու: Հանեցի գրպանես թաշկինակս, սրբեցի աչքերս ու նորից անհագաբար նայում էի պատկերի վերա. դարձյալ բխաց աչքերես արտասուքի աղբյուրը: Այդ միջոցին մի մարդ դուռը բացեց, ներս մտավ, բայց ես ուշք չիզդրի այդ բանի վերա. դարձյալ և դարձյալ, աչքս պատկերին հառած, լալիս էի: «Պարոն, ինչո՞ւ ես լալիս, պարո՞ն, մեղք ես դու, պարո՞ն կարժե՞՞ էդ աղջիկը, որ դու նրա վերա մաշվում ես», ասաց ինձ մի քնքուշ և ողորական ձայն: Ես դարձա և տեսա որ՝ առջևս կանգնած էր Կատյան, Սոֆիայի նաժիշտը:

Կատյան տարիքով հասակակից էր Սոֆիային, շար լեզունները (դուք նկատե՞՞լ եք, որ շար լեզունները մեծավ մասամբ ճշմարտախոս են լինում) — շար լեզունները ասում էին, որ Կատյան Ասատուր-աղայի մոտավոր ազգականներից մեկի որբն է, Մուկով գալիս առել, բերել են հետները: Ուրեմն շորս տարից ավելի էր, որ ամեն օր տեսնում էի նորան, բայց զարմանք բան, ոչ մի անգամ արժանի համարած չէի նորան իմ ուշադրությունը, տեղեկացած չէի թե՛ ի՞նչպես է կենում, ի՞նչպես է զարգանում, ի՞նչ պիտի լինի սորա ապագան, մինչև անգամ մտադրությամբ նայած չէի երեսին և շփտեի սիրո՞ւն է, թե ազեղ, և եթե փոզոցի մեջ հանդիպեի նորան, շատ կարելի է որ չի ճանաչեի ևս:

Երբ որ Կատյայի ձայնը ականջիս հասավ՝ առաջին անգամ նայեցա երեսին և ի՞նչ տեսնեմ. առջևս կանգնած էր, թեև աղքատի հագուստով, բայց շատ գեղեցիկ աղջիկ. հասակը երկու-երեք

մաս բարձր Սոֆիայից, երեսի գույնը առավել վարդագույն և առողջ, լանջերը ավելի ճոխ զարգացած, մազը ավելի թավ, վարսը ավելի հաստ և երկայն, բազուկները մոտ, առողջ և ուժեղ. մեկ խոսքով՝ Կատյան այն հազվագյուտ կանանցմեն էր, որոնք հաջողակ դիպվածներին հսկաների մայրեր են լինում: Բայց, ուշադրություն չդարձրի, աչքիվ ուսանողին շատ անվայել էր շքեղ բամբիշին փոխել մի մրոտ աղախինի վերա:

Անհամբերությամբ սպասում էի մայիս ամսին, երբ հարցաքննություններս ավարտած, բժշկի վկայականը ծոցս, օրինավոր քաղաքացի դարձած՝ պիտի ներկայանայի Ասատուր-աղային և նորա պատվական Օսաննա խանութին և հայտնեի, որ ես ի վաղուց հետե հավանել եմ նոցա աղջկանը. ահա՛ այժմ ուսաց պետություն աստիճանավոր եմ, ապրուստս լիովին ապահոված է, առաջվա պես ողորմելի երիտասարդ չեմ, ուրեմն, խնդրում եմ նոցա աղջկա, գեղեցիկ Սոֆիայի ձեռքը: Այս մասին քանի անգամ խոսել էի Սոֆիայի հետ, և որքան միտս էր գալիս, թեև նորա կողմեն մեկ հրճվալի ցնծության նշաններ տեսած չէի, բայց «չէ, չեմ ուզում քու կինը լինել» ևս լսած չէի նորա բերանեն, այնպես որ, կարծում էի թե՛ մեր ամուսնությունը ոչինչ արգելք չունի, գոնե իմ և Սոֆիայի կողմանե:

Վերջապես մայիսը հասավ, և ես վերջին հարցաքննություններս փառավոր կերպով տվի պրծա. վկայականս ծոցս զրի և ուրախ-ուրախ վաղեցի Սոֆիայի ծնողաց մոտ:

— Հը՞, ի՞նչ ա, բարեկց ինձ Ասատուր աղան:

— Պրծա՞, պրծա՞, ասացի նորան ուրախ-ուրախ:

— Շատ լավ ա, շատ լավ, ասաց նա. հիմի ուրեմն մեր հինգ տարվա արած լավությունը փուճ տեղը չգնաց, մենք էլ փա՛ռք ասծու, պրծանք մեր պարտքից: Հիմի ինչպես գիտես՝ էնպես կառավարվիր. էլ այսուհետև ուսուսող մեր վերա մի՛ տիներ. ինքդ քու գլխու ճարք արա...

— Ես ամենևին այսպիսի պատասխան չէի սպասում. այս խոսքերը լսելով, ասես թե գլխու սառը ջուր՝ թափեցին: Բայց ես ինքքս ինձի ժողովեցի ու հեռոտ ասացի.

— Մեծապես շնորհակալ եմ՝ ձեզ՝ իմ վերա ունեցած ամեն երախտիքի՛ համար, բայց ես՝ ձեզ մի ուրիշ խնդիրը ունիմ հայտնելու:

ինդիքի անուն որ լսեց, Ասատուր-աղայի երեսի գույնը թը-
ռավ:

— Հինգ տարի էսքան լավություն անելից հետո՞ էլի՞ բան ա
մընրմ, ասաց նա դժկամությամբ:

— Այժմվա խնդիրս փողի բան չէ՞, ասացի:

— Ապա ասա՞, տեսնենք, ի՞նչ խնդիր ա:

— Ասատուր-աղա՞, ասացի կմկմալով, ձեզ հայտնի է, որ ես
այժմ անկախ մարդ եմ, այսուհետև ինձ ո՛չ առուտուր է պետք,
ո՛չ դես ու դեն ման գալ՝ աշխատանք ու ապրուստ ճարելու հա-
մար, ոչ պետք է հոգամ թե վաղը ի՞նչ պետք է ուտեմ կամ մյուս
օր ի՞նչ պետք է հագնեմ, փա՛ռք ասածո, այժմ իմ առջև ամեն
դոնեք բաց են, իմ կյանքը և ապրուստը բոլորովին ապահա-
ված է...

— Լաաա՛վ, ասաց Ասատուր-աղան ձայնը ձգելով ու ճակա-
տի տակից երեսիս նայելով, էտի որ ասում ես՝ հետո ի՞նչ ես ու-
զում հասկացնի...

— Այն եմ ուզում հասկացնել, որ ես այժմ ազատ մարդ եմ...

— Թե որ ազատ ես, շատ բարի, քու ձեռը հով ա փրոնրմ...
գնա՛ ուր որ ուզում ես, ո՞ւր ես մարդու բեզարացնրմ. ասաց ու
բարկությամբ երեսը շուռ տվեց և ուզում էր հեռանալ...

Տեսա որ՝ ի՞նչ ուզում էի հասկացնել՝ խոսքերիցս այն դուրս
չեկավ ու շփոթվեցա, բայց ուժս վրաս ժողովելով, նորից սկսեցի.

— Ասատուր աղա՛...

— Էլ ի՞նչ, հալա չի պրծա՞ր...

— Ես մեկ բան ունեմ ձեզ հայտնելու...

— Ասա տեսնեմ, ի՞նչ ես ուզում հայտնել, — ասաց ու երեսը
և մարմինը կես դարձուց դեպի ինձ:

— Ասատուր-աղա, մի՛ բարկանաք վրաս, ես ձեզ մի գաղտ-
նիք պետք է հայտնեմ...

— Փիչ է է է՞, սպանեցիր վեր տիրար, օրթնած մարդ, էս
բանի՞ վախտ ա. ականձ եմ տինրմ՝ դատարկ խոսքերից դայրադ
բան չեմ լսիմ. ասա՛ պրծի՛ր, ես ժամանակ չունեմ քու տոհմաբա-
թյունները միտիկ անելու...

— Ես... ես... ես սիրում եմ մազմուռազել Սոֆիային... հո-
ժա՞ր եք, որ նա իմ կինս լինի...

Ասատուր-աղայի երեսը սպրդնեցավ, մեռելի գույն եղավ.
աչքերը արյուն կոխեց, ճակատը քրտինք տվավ:

— Գո՛ւն... Սոֆիային... դո՛ւն... իմ, իմ, իմ Սոֆիային... իմ
Սոֆիան քու կինը իլի՞... իմ Սոֆինկեն, միլիոններ աղա Ասատուր
Բեյթումալովի աղջիկը մեկ էշի զբխու սալմաստեցի— խոյեցիի
կընիկ իլիիի՞... ատա՛ խելքդ տանե՞լ էս տվել, թե՞ ինձ գիժ ես
կարծում... Քեզ հո՞վ իրավունք տվավ եղպես անամոթ, լիք բա-
ներ մտքից անց կացնելու: Միտիկ արա՛, պարոն հեքիմ, դու հա-
լա ջահել ես. էս անգամին կիլի քեզ ներել, ամա թե մյուս ան-
գամ էսպես անմարդավարի, պիապուս խոսք լսել եմ բերանիցդ
էն վախտ, ինդրեմ, ինձանից բեղամաղ չիլես. նոքարներիս կհրա-
մայեմ վզակոթիդ տալով՝ տանիցս դուրս անեն: Հիմի էլ, խընդ-
րեմ, վախտ բե վախտ տունս մի գալ. այսուհետև վարժապետու-
թյունդ պրծավ, էլ դու ո՛չ Սոֆիայի վարժապետն ես, ո՛չ էլ Սո-
ֆիան քու աշակերտը: Հիմի գնա՛ քու բանին, կուզես՝ դուլլուզ
մտի՛ր, կուզես՝ էնպես հեքիմություն արա՛, կուզես քու վաթանը—
Սալմաստ ու Ղարաբաղ ա, ինչ մաբաքա յա— գնա՛ ու քու գոր-
ծիդ իլի՛ր. էս էլ լավ իմանաս, որ Սոֆինկան քու բերանի թի-
քան չի. նրա վերա խոսողը՝ առաջ մեկ լավ բերանը պետք ա լվա-
նա, իստակի, ապա թե իրավունք ունենա խոսելու:

Այսպիսի անպատիվ վարմունքից ու խոսքերից ետ՝ ինձ ի՞նչ
էր մնում անելու: Գնացի փակվեցա իմ փոքրիկ սենյակի մեջ և
ժամերով աղիողորմ լաց եղա: Սոֆիայի հիշատակը ինձ անուշամի-
հալածում էր. աչքս թե փակ լիներ և թե բաց՝ նորա երեսը կեն-
դանի կեցած էր իմ առջև, և ասես թե մեղադրելով ինձ ասում էր.
«Այդպե՞ս ուրեմն, տկար է քու սերը դեպի ինձ. մի՞թե մի ծեր
մարդու երկու-երեք կշտամբանքը կարողացան սառեցնելու քու
սերը, որն ես ամբողջ հինգ տարի արծարծել ու բորբոքել էի»:

Իսկույն տեղից վեր թռա. մի նամակ գրեցի նորան, այն օր-
վա նորա հոր հետ ունեցած խոսակցությունս բառ առ բառ գրեցի
և հարցուցի նորա խորհուրդը թե՛ ի՞նչ պետք է անեմ այսուհետև:
Նամակը որ պրծա՛ կնքեցի ու գնացի Ասատուր-աղայի տուն,
ետևի սանդղքով մտա խոհանոց, և կամացուկ սպրդեցուցի Կատ-
յայի ձեռքը, խնդրելով, որ իսկույն Սոֆիային հասցնե: Կատյան
ոչինչ չասաց. մեղքանալով նայեցավ աչքերիս մեջ ու դուրս գնաց
խոհանոցից: Ես էլ գնացի բնակարանս:

Երեկոյան թեյի ժամանակ կամացուկ ներս մտավ Կատյան, ու
տվեց ինձ մի փոքրիկ թուղթ, ուր մատիտով գրած էր բուսերեն.
«Այս օրերս մենք գնալու ենք Տաք-ջուր, եթե կարող ես՝ արի՛

այնտեղ, կարելի է դիպված գտնես մեկ հնարով հորս հետ հաշտվելու: Իմ վերա հույսեր մի՛ դնիլ, ես քեզ ոչինչով օգնել չեմ կարող. նմանապես չեմ կարող ծնողացս կամքեն դուրս գալու. այդպիսի դո՛հ ինձանից մի՛ պահանջիլ»: Նամակի տակը ստորագրություն չի կար:

Կատյան սպասում էր:

— Լա՛վ է, շնորհակալ եմ, ասացի, պատասխանելու բան չունիմ: Ներե, որ քեզ անհանգստություն պատճառեցի:

Կատյան տեղիցը շարժվեցավ: Ես տեղես ելա նորից շնորհակալություն ասացի նորան, բայց նա դարձյալ անշարժ կեցած էր, ու աչքը արտասուք ուղիղ աչքիս մեջ էր նայում: Ես զարմացա:

— Կատյա, ի՞նչ եղավ քեզ, ինչո՞ւ ես լալիս:

— Աղա՛, ես քեզ խնայլմ եմ, դու մեղք ես, իզուր տանջվում ես. Սոֆիան քու ոտքի հողին շարժե. նա փուճ աղջիկ ա. նահապ ես պատիվդ ոտնատակ անում:

— Ի՞նչ ես ուզում ասել, Կատյա ջան, ասացի. ինչո՞ւ ես վատաբանում քու խանութին. էստեղ նա ի՞նչ մեղք ունի, եթե կա մեղավոր՝ էդ նրա հերն է, Սոֆիան բոլորովին անմեղ է:

— Չէ՛, աղա, դու սխալվում ես, թեպետ աղա Ասատուրը մեզավոր ա, ամա Սոֆիան տասնապատիկ ավելի ա մեղավոր. թե Սոֆիան ուզեր՝ քեզ էս օրին չէր հասցնիլ. ամեն բանի մեղավորն Սոֆիան ա, նա քեզ գժվացնում ա. նա քեզ չի սիրում. նա դայրադ իրան ոչ-ոքի չի սիրում:

Նորից ու նորից զարմացա, որ այս մունջ Կատյայի բերանից այսպիսի համարձակ խոսքեր էին դուրս գալիս: Հինգ տարվա մեջ ես մեկ բառ լսած չէի սորանից: Ասեիր՝ տա՛ր՝ կտաներ, ասեիր՝ բե՛ր, կբերեր, ամեն հրաման առանց մեկ խոսք ասելու, անաբրտունջ և լուռ կաներ: Ոչ մի գանգատ, ոչ մի անտեղի, լերք ծիծաղ լսած ու տեսած չէի նորանից: Այսօր մի հրաշք էր պատահել նորան. մեր հինգ տարվա մունջը պերճախոս հռետոր էր գարձել:

Ես գլուխս կախեցի և արտասուքը ակամա վազեցին աչքերես: Կատյան կառնաց, բայց այնպես կամաց, որ ես ամենևին չնկատեցի, մոտեցավ ինձ, ետևիցս գլուխս յուր կրծքին սեղմեց, սպացեց և ասաց՝ նույնպես լալով (նորա արտասուքը մազերիս վրայն գլորվելով՝ կրեպիս վերա ընկան). Ա՛խ, ազա ջան, էս ի՞նչ դժոխք աշխարհ ա. դու Սոֆիայի համար ես էրվում, ուրիշ

քու կրակովն ա խորովվում, Սոֆիան էլ, ով գիտե, ում ոտքին մի օր դուրբան պետք ա գնա: Աղա ջան, աղա ջան, հրամայե, ես քու ոտքերի տակ կտառկեմ... Ա՛խ, ինչո՞ւ ես իրավունք չունիմ քեզ սիրելու, դուն էն ժամանակ կտեսնեիր՝ թե ի՞նչպես պետք է սիրել քեզպես հոգիով տղամարդին:

— Կա՛տյա, գիտե՞ս ինչ, դնա՛ շուտով տուն, չլինի թե Ասատուր-աղան գա ու քեզ տանը չի գտնե. նա վատ մտքեր կունենա քո մասին:

— Աղա ջան, ի՞նչ եմ հոգում, որ նա իմ վերա վատ մտքեր կունենա. այսուհետև թեկուզ սև հողն էլ մտնեմ, հաշաթս չէ՛,— ասաց աղջիկը լալով ու դուրս թռավ:

Երբ որ Կատյան գնաց՝ խղճի խայթի նման մի բան սկսավ ներսս կրծելու:

— Սոֆիա՞, թե՞ Կատյա, Կատյա՞, թե Սոֆիա, հարցնում էի ինքս ինձի, ու պատասխանը չէի գտնում:

Մի շաբաթից ճանապարհ ընկա դեպի Տաք-չուր, բայց Ասատուր-աղան արդեն երկու օր առաջ գնացել էր այնտեղ:

Հունիսի 20.

Երկու օր դարձյալ անպտուղ կորցրի հյուրանոցներու, վարձու տալու տներու և բնակարաններու մեջ հարց ու փորձ անելով՝ արդյոք՝ Մոսկովից այս ու այս նշաններով ընտանիք եկե՞լ են թե ոչ: Ոչ ոք ինձ մեկ բավարար պատասխան տալ չկարողացավ: «Երևի, միտք արի, ես իրավ սխալվել եմ, մի օտար աղջիկ նմանեցնելով Կատյային»:

Այսօր երեկոյան դեմ, ժամը 6-ին, ես գնացի այստեղի ճեմելիքը՝ ուր սովորաբար երաժիշտները նվագում են և ժողովուրդը թառն բազմությունով զբոսնում է:

Ճեմելիքի մեջ տեղ-տեղ դրած են դեղձանիկի վանդակի մեծ փոքրիկ խանութներ, ուր վրաստանցի հայր ծախում է թորձ պտուղներ, գերմանուհին՝ օտաք-օտաք՝ գրդակներ, ուրիշ մարդ՝ լրագիրներ և գրքեր. տեղ-տեղ սեղաններ էլ կան, ուր ծախվում են արծաթազլուխ ցուպեր, կնիքներ, բոստե և լավան շինած կանանց զարդեր, «նորաշեն հնություններ և նորատիպ հին գրառներ», այս սեղաններից մինի առջև կանգնած են երկու-երեք պարտիկներ և ծախում են ակեր ու մարդաբիտներ:

Ես առհասարակ սաստիկ հակակրօթյուն ունիմ դեպի ականավաճառները, և նկատել եմ— և իմ նկատումները շատ սակավ սխալ է հղել— որ ականավաճառները ըստ մեծի մասին լինում են խարդախ, խորամանկ, ստախոս, մարդահաճո, շողոքորթող և խաբեբա մարդիկ: Պատճառը շատ պարզ և հասկանալի է. նախ որ՝ «մութ ապրանք» է, նա որոշյալ գին շունի, նորա գինը կտրվում է ծախողի ճարպիկությունով և գնողի թեթևամտությունով, և երկրորդ՝ ակը առօրյա պետքական բան չէ. այլ զեխության առարկա է. նորա գնողը հարկավ ունենոր մարդ պիտի լինի, իսկ ունենոր մարդու ձեռքից շատ փող դուրս հանելու համար՝ վաճառականը պիտի ունենա այն հատկությունները, որ քանի մի տող վերը հիշեցի, այսինքն՝ խորամանկություն, մարդահաճություն, ստախոսություն, շողոքորթություն, խաբեբայություն և խարդախություն:

Ինչպես ասացի, ձեռքի մեջ շարած սեղանների մինի առջև կանգնած էին պարսիկներ ու թանկագին ակեր և ակնակուռ զարդեր էին ծախում: Հանկարծ աչքս դարձնեմ ու ի՞նչ տեսնեմ. Ասատուր-աղան մի մեծ կարմիր զմրուխտ է ծախս անում. պարսիկը պահանջում է վեց հազար մանեթ, իսկ Ասատուր-աղան տալիս է չորս հազար հինգ հարյուր մանեթ:

Համալսարանումը ես առանձին ուշադրությամբ լսում էի հանքաբանության դասախոսությունները և մեր պրոֆեսորը ակերու վերա խոսելիս՝ միշտ սովորեցնում էր մեզ զանազան հնարներ՝ թե ի՞նչպես պետք է խարդախ ակը իսկականից ջոկելու. իսկ կարմիր հակինթի մասին— այս օրվա պես միտս է— երկարորեն պատմել էր:

Եվ ճշմարիտ պետք է ասել, որ այնպիսի ընտիր ակ, ինչպես որ պարսիկն էր ծախում, ես կյանքիս մեջ տեսած չէի՝ թե՛ ցուքի, թրաշի, և թե՛ խոշորության կողմանե: Թագավորին էլ որ ընծայեիր, չէիր ամաչիլ,— այնքան գեղեցիկ էր: Հանկարծ հոգուս մեջ երկամտություն մտավ չլինի՞ թե այս խարդախ ակ լինի. վասնզի— ես կարծում էի— եթե նա իսկական ակ լիներ՝ առսակավը տասնհինգ հազար մանեթ պետք է արժենար. իսկ մեկ քննուտ պարսիկ ձեռք ի՞նչ գործ ուներ այդպիսի գումարի ահագին ապրանք: Արդեն պարսիկը զիջել էր ութ հարյուր ուրբլի և Ասատուր-աղան ավելացրել էր հինգ հարյուր ուրբլի. տարբերությունը այնքան չնչին էր, որ փոքր ժամանակից ետ անպատճառ նոցա ծախսը սրտի վերջանար և ակը պիտի ծախվեր: Սիրտս չհամբերեց. ու-

զացի ստուգել իմ կասկածը. մոտեցա Ասատուր-աղային, բարեկեցի (իբր թե մեր մեջ երբեք գծություն պատահած չէր), հարցուցի նորա առողջությունը (Սոֆինկայի մասին մի խոսք չհիշեցի) և հետո հարցրի, թե ի՞նչ է ծախս անում:

— Էս չաղութը ուզում եմ առնել, ի՞նչ կասես՝ լավ բան ա՞. և ցույց տվեց ինձ այն սիրուն ակը, որ փստուղի մեծության կլիներ:

Ձեռքս առի, դարձրի դեպի արեգակն ու ակի մեջտեղը երկայն ժամանակ և ուշադրությամբ նայեցա: Մի աննշմարելի գիծ տեսա նորա մեջը որն անփորձ մարդը հարյուր տարի էլ որ նայեր՝ չէր տեսնիլ, ու դառնալով պարսկին, ասացի.

— Քանի՞ ուզում ես ծախել այս ակը:

Պարսիկը կեղծի ժպիտով ասաց.

— Ես պահանջում եմ հինգ հազար երկու հարյուր մանեթ. իսկ այս աղան (ցույց տվեց Ասատուր-աղայի վերա) տալիս է հինգ-հազար. մնում է որ ձեզպես լուսավորյալ և հմուտ մարդը մեզ հաշտեցնե այս երկու հարյուր մանեթի համար, ասաց ու խոնարհաբար գտակը հանեց առջև:

— Այս խարդախ ակ է, ասացի պարսկին: Դու ի՞նչ իրավունք ունիս հրապարակի մեջ և այդպիսի լրբությունը միամիտ մարդոց խաբելու: Դու չգիտես՝ որ՝ այս Ռուսաստան է, ուր կա օրենք և դատաստան. դու քու Պարսկաստանը չգիտենաս, ուր կարելի է օր ցերեկով խաբել, խարդավանել և սպանել, ու անպատիժ մնալ:

Պարսկի և Ասատուր-աղայի երեսները սպրդնեցան, մինի՞նը վախից, իսկ մյուսինը բարկությունից:

— Ատա՛, էլի՞ քու անմարդավարությունը շանց տվար, էլի՞ տեղդ դինջ մնալ չկարողացար. էս ի՞նչ բիաբուռ, թոկից բաց-ընկած մարդ ես իլած, մեղա յասժու մեղա, ասաց ինձ Ասատուր-աղան:

Նորա բարկությունից խրախուսված՝ պարսիկը հարձակվեցավ վրաս.

— Պա՛րոն, երևի դու ի՞նքդ կարծում ես, որ այս երկիրը Ռուսաստան չէ՛, այլ մեկ վայրենի անպատ է. եթե դու օրենքի հետ ծանոթ լինեիր, անշուշտ կիմանայիր, որ Ռուսաստանի մեջ դրոսյարտիչը նույն պատիժն է ստանում, ինչ որ պետք է ստանար հանցավորը: Այժմ ես քու օձիքդ (յախադ) ձեռքես բաց չեմ թող-

նիլ, եթե չապացուցանես, որ ես խարդախ մարդ եմ, օրենքը կուտա քեզ այն պատիժը, որն պիտի ստանա խարդախը:

— Թո՛ղ այդպես լինի, ասացի ես, կա՛մ Սիբիր կերթամ՝ աքսոր, կամ կհաստատեմ, որ այս ակը խարդախ է, և դա ոչ թե հինգ հազար երկու հարյուր մանեթ, այլ մեկ գրոշ չի արժիլ:

Այս որ ասացի. վառեցի մի լուցափայտ ու բոցը մոտեցրի ակին. երբ որ ակը մի փոքր տաքացավ՝ իսկույն երկու կտոր սիրուն տաշած և հղկած հասարակ ապակի դարձավ, որի մեջ ներկ էր քսած՝ կարմիր գույն սալու համար ու եկերքները սոսնձով կպցրած:

Ասատուր աղան պապանձված մնաց. իսկ պարսիկը ամոթիցը ու բարկությունիցը շփտեր ի՛նչ աներ:

— Տե՛ս, տե՛ս, ի՛նչպես խաբվել եմ ես. այս անպիտան հասարակ ապակիի համար տվել եմ հինգ հազար մանեթս. ափսո՛ս, հազար ափսոս իմ կորցրած փողիս, ասաց պարսիկը, հուսահատված ձևանալով:

— Ա՛յ բան, ասաց, ծիծաղելով Ասատուր-աղան, ամա լավ բաբաթի պետք է խաբեր ինձ էս շ. ո. պարսիկը, եթե դու չիլեիր... Նո՛ւ, պարոն Վարդան, մեռնելս մտքիցս կանցնեի, բայց էսպես ղոշաղությունդ ամենևին մտքիցս չէր անցնիլ: Էսօր դու ինձ հինգ հազար մանեթ բաշխեցիր. մեծապես շնորհակալ եմ: Թե էդպես ա՛րի՛ր՝ զնանք մեր տուն՝ մեկ տեղ հաց ուտենք. բայց խնդրեմ եմ, մյուս անգամ էլ էն հին գծություններդ մի՛ անիլ: Էս անգամն էլ քեզ կբաշխեմ:

Պարսիկը կամացուկ հավաքեց ապրանքը, փակեց ապակի կափարիչով արկղը ու հեռացավ. մենք էլ գնացինք Ասատուր-աղայի տունը: Այս կերպով նորս ղոնները. նորից բացվեցան իմ առջև:

Ճաշի վրա ո՛չ Սոֆիան կար և ոչ նորա մայրը Օսանան, կատային էլ շտեսա: Երեկոյան ժամը 5-ին սիրոս կոտրած վերադարձա իմ խրճիթը:

Հունիսի 23.

Ի՛նչ եմ բուզում ես Ասատուր-աղայից, ի՛նչ եմ սպասում Սոֆիայից, այս հարցմունքներին մինչև ցայժմ ինքս ինձի ուշացած չեմ ճիշտ պատասխան տալու. Ասատուր-աղան որ կո՛մ մի ինքնահավան, կամակօր, փառամոլ մարդ է. նա ինքը իր խելքով, իր

աշխատանքով (արդար, թե անարդար ճանապարհով՝ այդ ջոկ բան է) կարողացել է միլիոնի տեր լինելու. այդ՝ Ասատուր-աղայի և նորա նմանների կարծիքով մի այնպիսի սխրագործություն է, որի առջև պիտի ոչնչանան ամենայն ինչ մարդկային արժանավորություններ և առաքինություններ. գիտություն, իմաստություն, քաջություն, քանքար, հանճար՝ ի՛նչ չնչին բաներ են հարստության առջև: Ասատուր-աղան արդեն սիրահարված է յուր խելքի վերա. կամակորությունը խորունկ արմատ ձգել է նորա մեջ: Ասատուր-աղան հարուստ է, ուրեմն աշխարհքի ամեն բարիքը հասնելի են նորան. փողով նա կարող է մեծամեծ, արքայավայել պալատների մեջ բնակել, իրա շրջապատը շքեղ դարդարել, ծանոթություն ունենալ ամեն պատվավոր, քանքարավոր և բարձր աստիճանավոր մարդոց հետ, գնել մարդոց խղճմտանքը, գնել, մինչև անգամ, չքնաղազեղ կանանց եթե ոչ սերը, պեթ նոցա կեղծի գորովը և հրապույրքը: Ես՝ մի աղքատ և աննշան բժիշկ, այն էլ հայ բժիշկ, ի՛նչ պիտի կարողանամ նորան տալու, ինչո՞վ գրավելու նորա կոշտացած սիրտը: Նորան պետք է բարձրաստիճան, անվանի, երևելի ազգատոհմի փեսա, որի վերա նայելով նա կարող լինի պարծենալու թե՛ ահա ինչպես ումնի տվել եմ իմ աղջկանը: Ես ի՛նչ մեկ այդպիսի աչք-բնկնելու արժանավորություն ունիմ, բացի համեստությունես և աշխատասիրությունես,— որով հազեմար նորա սնամիտությունը: Այժմ դառնանք Սոֆիային: Ինչո՞ւ ինձ պետք է սիրե Սոֆիան. նորա՞ համար որ ես նորան սիրում եմ. ի՛նչ մեծ փառք և երջանկություն է իմ սերը նորա համար: Գեղեցիկ, դեռահաս, և որ գլխավորն է՝ հարուստ աղջկան ո՞ր երիտասարդը չի սիրել: Ո՛ր է իմ այն արտաքին գեղը, որի վերա ամեն աղջիկ հաճությամբ նայում է. ո՞ր են իմ փայլուն ուսադիրները՝ փայլուն օձիքները, շրխաբաբալի թուրը և խթանները, որոնք հրապուրում են ամեն աղջիկա աչք ու ակնաչ: Չէ՛, ո՛չ Ասատուր-աղան և ո՛չ Սոֆիան կարող են սիրել ինձ այնպես, ինչպես որ ես կկամենայի: Եթե իմ մեջ կա ինչ ու ինչ արժանավորություն՝ նա այնքան փոքր է, որ խոշորացույցով պիտի նայես վերան, որ տեսնես, իսկ խոշորացույցը չի կա ո՛չ Ասատուր-աղայի և ո՛չ Սոֆիայի աչքերին... Այս էլ ասենք, եթե Սոֆիան մի հասարակ մարդու աղջիկ լիներ, արդյոք ես կսիրեի՞ նորան և նա ինձ գեղեցիկ ու հրապուրիչ կերեա՞ր... իսկ կատայն... Չէ, հեռացիք ինձանից՝ զննողակա՛ն ոգի, քեզ յուր մեջ ունեցողը երբեք բախ-

տավոր չի լինիլ: Չեմ ուզում իմ զգացումները կշիռքի վերա դնելու... Ես սիրում եմ Սոֆիային. ես ամեն հնար գործ պիտի դնեմ առաջադրյալ նպատակիս հասնելու և... կհասնեմ:

Այսօր բոլոր օրը անձրև էր գալիս. ամբողջ օրը տնիցս դուրս գալու հնար չի գտա. երեկոյան դեմ թեև անձրևը դադարեցավ, բայց գետինը այնքան խոնավ էր, որ հազիվ թե ժողովուրդը զբոսնելու ճեմելիք երթա: Անհնարին բան է, որ Սոֆիային թողած լինեն տնից դուրս գալու, հայրն ու մայրը դողում են նորա վրա ու աչքերի լուսի պես պահում են: Չէ, նա ճեմելիք չի երթալ: Մենակ նստած եմ սենյակիս մեջ ու սրտնեղութունիցս պատուհանիցս դուրս եմ նայում: Շատ սակավ տուն կգտնվի Տաք-չուրի մեջ, որի դիրքը այնպես կենդանանկար լինի, ինչպես իմը, թեև բնական փողոցս շատ տգեղ անուն ունի (Խոզի ձոր). բայց այն տեսարանը, որ փոված է առջև՝ ի՞նչ ասես կարծես: Հարավից երևում է գալարազարդ պարտեզների և անտառների ծով. առավել հեռուն Փողբուսոք գետակը, օձի նման պտույտքելով, անցնում է դաշտերի, անտառների ու սարերի միջով, ավելի հեռուն միջին բարձրության բլուրներ ծածկած են ծառերով, որոնք ինձ դալար խոտ են երևում հեռավորության պատճառով նոցա ետևից էր յուր ալեզարդ կրկնակի գազաթները «տաշած աղամանդի» նման բարձրացնում է Նալբուզը: Արևմտյան պատուհանիցս երեվում են հայոց Նորաշեն եկեղեցիի զմբեթն ու Բեշթավի հինգ գազաթներեն մինը: Ամբողջ քաղաքը լողում է ծառատունկների մեջ. կարմրակատարներն ու խաղատունիկները նոցա սաղարթների մեջ պահված՝ օդը լցնում են իրանց դայլայլիկովը. խոտերի ու ծառերի տերևների վերա ծիածանի ամեն գույներովը փայլում են անձրևի շիթերը. օդը այնպես մաքուր է, որ ամեն մի շունչ առնելիս՝ կարծում ես թե կյանքը լայն հոսանքով թափվում է մեզը: Անկո՛ւշտ մարդ, ահա քեզ բախտ, ահա քեզ գեղեցկութուն, որն քեզանից չի պահանջում ոչ գոհ և ոչ հոգեկան տանջանք. վաչելե՛՛ք, բախտավոր եղիր. ինչո՞ւ վազում ես անցավոր մութի ու անշոշափելի սովերի ետևից: Մի՞թե քեզ սիրող Կատյան խրճիթի մեջ քեզ պակաս բախտ կբերե, քան թե քեզ արհամարհող Սոֆիան ճոխ ապարանքումը...

Լա՛ն, լա՛ն, առողջամտությո՛ւն, ես քու ձայնը չեմ ուզում լսել. ես սիրում եմ Սոֆիային, և ձեռքես եկած ամեն հնարը գործ կածեմ, որ նա էլ ինձ սիրե և իմը լինի:

Քնեցա, և անհանգիստ երազները սաստիկ տանջեցին ինձ ամբողջ գիշեր. մյուս օր որ դարթեցա՝ մարմինս հոգնած և տանջված էր:

Հունիսի 25.

Այսօր հասարակաց մատենադարան էի գնացել. ուզում էի կարդալով ձանձրույթս մի փոքր ցրվելու. բայց ո՛չ կերմոնտովը, ոչ Տուրգենևեր, ո՛չ Տոլստոյը և ո՛չ ժամանակակից հաստ օրագիրները կարողացան փարատելու տրամությունս: Թեև Տաք-չուր եկած օրերս ոչ մի անգամ տեսած չէի Սոֆիային, բայց հենց որ գիրքը բացում էի էջքերի մեջ գրվածքի տեղ տեսնում էի նորա պատկերը. բայց, զարմանալի՜ բան, Սոֆիայի ետևից էլ երևում էր աչքիս Կատյայի երեսը, որ տխուր նայում էր վրաս և զլուխը շարժելով, ասես թե մեղադրում էր ինձ... ինչո՞ւ...

Չեղ մեկ բան ասե՛մ, լսեցե՛ք: Տեսնում եք, որ ես Սոֆիային սիրում եմ, այսուամենայնիվ, նորա սիրտն ու հոգին գրավել չեմ կարողանում, ինչո՞ւ: Մյուս կողմից, ես համոզված եմ, որ Կատյան ինձ սիրում է, և հոգիս վկայում է, որ այդ տգետ, ծառա աղջիկը վաղ կամ ուշ կգրավե ինձ և կտիրապետե... ինչո՞ւ:

Իսկական մաքուր, անկեղծ սերը միշտ կհամոզե ու կհաղթե:

Ի՞նչ, ինչ ասացի՜ ե՛ս... Կատյայի՞ն... սիրե՛մ... ե՛ս նորան... իմ կի՞նը... անե՛մ... Երբե՛ք, ես շուտով ինքս ինձի կտամ կսպանեմ, քան թե շքեղ, քնքուշ Սոֆիային թողած, այդ սպասավոր աղջկան սիրեմ և վրան պսակվիմ: Թո՛ղ այն օր ինձ սև սուգի օր լինի, երբ ես Կատյայի մարդը լինիմ: Մի՞թե՞ ես այդ բանի համար իմ պատանեկության ամենազեղեցիկ հինգ տարին զոհեցի, ամեն տանջանք, նվաստություն և զրկանք համբերեցի, որ, վերջապես, ծաղիկ հասակս և փայլուն ապագաս նվիրեմ մեկ նաժիշտի... Ա՛խ, Կատյա, Կատյա, այս ի՞նչ ես անում ինձ հետ, քու մաքուր և անկեղծ սերը դեպի ինձ առավել վտանգավոր է, քան թե վիշապ օձի խեղդող օղակները:

Թողի գրքերն ու գնացի հասարակաց դահլիճը (նիկողայոսյան ռեսճարը), որ կից է մատենադարանին, որ էսենթուքի ջուր խմողները ժամ կամ ժամ ու կես ման են գալիս. հանկարծ ի՞նչ տեսնեմ, Սոֆիան և Կատյան ման եկողների մեջն էին, երբ որ հակառակ պատին հասած՝ ետ դարձան ու երեսները շուռ տվին՝ մենք

միմյանց հանդիպեցանք: Ինձ որ տեսավ Սոֆիան՝ սպրդնեցավ, իսկ Կատյան շառագնեցավ: Իրար բարև տվինք, ձեռք սեղմեցինք (Խհարկե, Կատյան ինձ ձեռք տալու շհամարձակվեցավ) ու սկսանք (խհարկե, Կատյան ինձ ձեռք տալու շհամարձակվեցավ) ու սկսանք սովորական խոսակցութուն՝ օդի և ջրերու ներգործության և այլ սովորական խոսակցութուն՝ օդի և ջրերու ներգործության և այլ աշխարհի աննշան առարկաների մասին: Կատյան թեև չէր խոսում, բայց աչքիցս պուկ չէր տալիս: Սոֆիան թեև հետո էր սում, բայց ամենևին չէր նայում վրաս, այլ նայում էր մեկ խոսում, բայց ամենևին չէր նայում վրաս, այլ նայում էր մեկ սպայի վերա, և այդ սպան էր... Դոռոզովը, որն պահարանի առջև կանգնած՝ հանքերն էր նայում:

Սիրտս տակնուվրա եղավ. նախանձը օձի խայթոցի նման լցվեցավ սրտիս մեջ և անողորմաբար տանջում էր ինձ:

— Այս ի՞նչ սիրուն սպա է, ասաց ինձ Սոֆիան, չգիտե՞ք արդյոք ի՞նչպես է նորա անունը:

— Անունը Վլադիմիր է ասացի:

— Վլադիմիր, ա՛խ, ինչ սիրուն անուն է:

— Մի՞թե Վարդանը— իմ անունս— Վլադիմիրից վատ է:

— Ո՞վ է ասում, Վարդանն էլ վատ անուն չէ, ասաց ու թիտակից ծիծաղեց: Վարդան, Վարդան. «Հայը թակե Վարդանին, թուրքը, թակե Վարդանին», հա՛, հա՛, հա՛, հա՛. բայց Վլադիմիրը ավելի գեղեցիկ է: Ինձ այնպես երևում է, որ՝ ով որ Վլադիմիր անուն է կրում՝ անպատճառ պետք է լինի սպիտակ երեսով, կարմիր թշերով, բարձր հասակով, կապույտ աչքերով և գեղձան մազերով մեկ քաջ երիտասարդ...

— Ինչպես որ այս Դոռոզովն է, այնպես չէ, օրիորդ:

— Մի՞թե սորա մականունը Դոռոզով է. այդ էլ շատ գեղեցիկ մականուն է... Վլադիմիր Դոռոզովը,— մրմնջաց կամացուց...— շատ սիրուն երիտասարդ է:

Սոֆիայի աչքերը զոհարի նման ցուլացին, երեսը շառագնվեցավ և դեմքի վերա անմեկնելի երջանկություն փայլում էր:

Այդ րոպեին ես այնպես ատեցի Սոֆիային, ինչպես որ մարդ կարող է ատել յուր ծնողաց կամ զավակների սպանողին. բայց, ավա՛ղ, այդ ատելությունը նման էր այն ատելության, որն զգում է թուշունը, որ կեցած է խորամանկ օձի առջև, ողորմելին թովձած է թունավոր սողունի աչքերեն. նա ակամա մոտենում է նորա բացած բերանին, և ատելով՝ նորա զոհն է դառնում: Այսպիսի կախարական ուժով Սոֆիան քաշում էր ինձ դեպի իրան: Մի՞թե այս սեր է: Եթե այդ սեր ևս լինի, գոնե այն սերեն չէ, որն մար-

դուս երջանկացնում է: Եթե Կատյան Սոֆիայի հանգամանքի մեջ լինեք՝ նորան էլ աշպե՛ս կսիրեի արդյոք, թե ո՛չ: Ահա խնդիր, որն լուծելու համար առողջ դատողութունս հրաժարվում էր ինձ օգնելու...

Սոֆիան յուր անզգույշ վարմունքով բանը այն տեղը հասցուց, որ Դոռոզովը նկատեց, որ աղջկա վերա ազդեցություն է գործել յուր արտաքին տեսքովը: Քանի-քանի անգամ նորա վերա շինծու անուշ աչքեր ձգեց, և մի անգամ էլ իբր թե պեխերն է շփում, մատի ծայրովը համբույր ուղարկեց նորան: Զգիտեմ նկատե՞ց այդ Սոֆիան, թե ո՛չ, միայն թե ամենևին վիրավորված չցուցուց իրան, այլ ընդհակառակն, միշտ ինձ հետ պինդ-պինդ ոտսերեն խոսելով, աչքը նորանից չէր հեռացնում, և խոսակցության նյութը ավելի հետաքրքրելի էր Դոռոզովին, քան թե ինձ:

Կատյան, ինչպես ստում են, կեցած տեղը անկրակ այրվում էր ամոթից ու դժկամութունից:

Ի՞նչ պիտի կարծեր Դոռոզովը իմ վերա, ի՞նչ զաղափար պիտի կազմեր օրիորդ Սոֆիայի և առհասարակ ամեն հայերի վերա:

Ես աղջիկներին մինչև նոցա տան դուռը ճանապարհ ձգեցի, բայց քաղաքավարությամբ ներս չի մտա. սպասում էի, որ Սոֆիան կհրավիրե. բայց նա չհրավիրեց, և ես մնաս բարև ասացի ու հեռացա:

Տխուր վերադարձա ձեռքեր: Թեև ժամանակը ուշ էր, բայց շատ զբոսնողներ կային: Նստարաններից մինի վերա սպաները պինդ-պինդ խոսում ծիծաղում էին: Հեռվից գալիս էր Դոռոզովը: Սպաներեն մինը ասաց.

— Պարոններ, աչքերդ այն կողմը դարձրեք: Թամբովի այգրոն է գալիս:

Սպաները բարձրաձայն ծիծաղեցան: «Շատ սիրուն և հարմար անուն է մեր Դոռոզովի համար», ասացին քանիսը, «Թամբովի այգրոն, Թամբովի այգրոն» կրկնեցին:

Երբ որ Դոռոզովը մոտեցավ՝ ոչ մի սպա նորան ձեռք չի ափեց. ինչպես երևում էր՝ նա նոցա առջև խեղդատակի դեր էր խաղում:

— Պարոններ, ծիծաղեցե՞ք վրաս, ծիծաղեցե՞ք, ասաց նա կես ծիծաղով և կես ծանրադեմ. ձեր շի հավանած Թամբովի այգրոն մի այնպիսի ասիացի գամբիկ է գտել, որի համար շատերդ ուրախությամբ կհոժարեիք ինձ նման այգրոն լինելու:

— Ո՞ւր է կենում այդ զամբիկդ, ո՞րտեղ կարող ենք նորան տեսնելու, ասացին մի քանի երկտասարդ սպաներ:

— Որտեղ կեցածը դեռևս ինքս էլ չգիտեմ, բայց կարծում եմ, եթե պարզ եղանակներ լինին, նորան միշտ կարելի է ճեմելիքում տեսնել: Բայց այդ չէ՛ գլխավորը, այն է (ինձ մի ատմեալքա պտղավաճառ ասաց), որ նա մի շատ հարուստ հայի աղջիկ է, թեև ցեղը, ինչպես տեսնում եք, ասիական է, բայց ֆրանսիացիից ավելի ազատամիտ դաստիարակված է. ուրեմն «մեր դաշտի պտուղներին է»: Կեցցե՛ լուսավորությունը:

— Շնորհավորենք, շնորհավորենք այդ գյուտդ. բայց հետո մեզ էլ մաս կհասնի՞, ասացին մի քանի կարմիր ու կապուտ քիթերով սպաներ:

— Պա՛րոններ, դուք շատ լավ գիտեք, որ ես եսամուլ չեմ: Իմ սիրած բանս է կանանց սրտերի մեջ ճանապարհ բանալ. հետո արդեն ես չեմ հոգում՝ ով անցուղարձ պիտի անե այդ ճանապարհի վերա:

Սպաները ծիծաղեցան. բայց իմ սրտես արյուն կաթեցավ: Եվ ի՞նչ զարմանք. եթե ինքդ չգիտես պատիվ պահելու, ի՞նչ իրավունք ունիս պահանջելու, որ ուրիշները պահպանեն:

Գլուխս կախած տուն վերադարձա:

Հունիսի 26.

Առավոտը որ վարթեցա՝ առողջությունս տեղը չէր. լեզուս պղտոր էր, աչքերիս սպիտակուցը դեղնագույն և մի փոքր էլ արյուն կոխած, բազկերակս անկանոն, բերանս դառն, ասես թե լեզուի էի խմել. բայց շատ լավ գիտեմ՝ որ գիշերս մրսած չէի, և ո՛չ երեկվա օրն ստամոքսս ավերած: Այսպես ուրեմն, պրոֆեսորներիս ասածը արդարացավ, թե հոգու ստացած հարվածները միշտ ցուլանում են մարմնու վրա: Այսօրվա տկարությունս անշուշտ հետևանք են երեկվա անախորժ անցքերին:

Այժմ արդեն երկբայությունս տեղի չիկա, որ Սոֆիան ինձ չ՛ սիրում. բայց այդ բավական չէ, ես այժմ մինչև անգամ կասկածում եմ, որ նա երբևիցե և որին ևիցե կարող լինի սիրելու: Կինը սիրո համար ստեղծած է, վասնզի կինը ինքը անձնավորած սեր է. կինը որ չսիրե՛ նա յուր կնությունը կորցնում է, մի խրտվիլակ, մի հրեշ է դառնում: Աղջիկը, որ պղատոնական սիրով չսիրե մի

զաղափարական պատանիի, հարս որ չսիրե յուր փեսային. կողակից որ չսիրե յուր ամուսինին, մայր որ չսիրե յուր զավակին— այս անհասկանալի է ամեն ազգի մեջ: Գիտեմ, հոգիս վկայում է որ եթե երբևիցե Սոֆիան իմ կինը լինի՝ նա իմ գլխուն մեծ անբախտություն պիտի բերե. աշխարհիս երեսին ամենաթշվառ արածը պիտի դարձնե ինձ. բայց այնուամենայնիվ, նորա պատկերը մտքիցս հանել չեմ կարող: Շատ թանկ կտալի այն մարդուն, որ ինձ պարզեր՝ արդյոք հինգ տարվա սովորությունս հետևա՞նքն է այս, թե՞ ես իսկապես սիրում եմ նորան: Նմանապես շատ կուզեի իմանալ՝ թե Սոֆիան ևս սիրե ինձ, ինչպես որ ես սիրում եմ նորան՝ արդյոք իմ սերը մի փոքր չէ՞ր պակսիլ և կամ բողբոջի չէ՞ր անհետանալ սրտես: Արդյոք արգելքները գլխավոր դեր չե՞ն խաղում սիրո կապերի մեջ: Արդյոք մենք մեր համառությունը չե՞նք ընդունում սիրո եռանդի տեղ... Ո՞վ ինձ կմեկնե այս, իմ տարիքի համար, դժվարալույծ խնդիրները:

Կեսօրի ժամանակ տոթը աստկացավ. փոքրիկ սենյակիս մեջ շնչելու օդ չէր մնացել, խեղդվում էի. սրտմաշուկ ճանճերը տարմովին թռչում նստում էին մերթ առիթի, մերթ սեղանի և մերթ գլխուս վրա, նոցա բզզոցը դժոխային երաժշտություն էր ականջներիս համար: Էլ հնար չիկար տանը մնալու, կես հիվանդ, կիս առողջ հազվեցա թեթև ու գնացի ճեմելիք: Մարդիկ կամացկամաց, ամեն կողմից, գալիս հավաքվում էին, շատերը իրանց պատվիրած թիվը բաժակներին խմել էին ու լոգարանները ընդունել էին, մնացածն էլ ինձպես տանը մնալու հնար չունենալով՝ գալիս էին ճեմելիք զբոսնելու. ճաշելու էլ դեռ շատ վաղ էր:

Տաք ջուրի ճեմելիքները սկսում են Մաշուխի բարձրագույն լանջեն, այսինքն իսկ և իսկ այնտեղեն, ուր կա Եղիսաբեթյան սրահը և իջնում են դեպի վայր, և գնալով միշտ դեպի արևմուտք, վերջանում են քաղաքի սահմանումը: Երբ որ Եղիսաբեթյան սրահին հասար՝ դեպի ձախ կողմի վերևումը կտեսնես մի կանաչ սարդեպի ձախ կողմի վերևումը կտեսնես մի կանաչ ներկած հովանոց, ուր երբեմն եղել է էլոյան տավիղ, որ այժմ հանած է, ավելի ցած՝ գտնվում է կերմոնտով բանաստեղծի քարայրը և մեջը նորա կիսարձանը. իսկ սրահը մեջ ընդ մեջ անցնելով, եթե երթաս դեպի հյուսիսային-արևմուտք, մի վերսթ հեռավորությամբ կա այն երեկվի փուլը, որը լցված է ծծմբային տաք ջրով, դեպի ուր այժմ տանում է մի գետնափոր ճանապարհ:

Ահա այսպես, ետև ետև ճեղքվեցին անցնելով, հասա մինչև Եղիսարեթյան սրահը, այնտեղ մի փոքր կանգ առի, հարավումը տեսա ահագին Եայրուզը, որ ութսուն վերստ հեռվից մի ահագին սառույցի նման փայլում էր առջևս, և հետո քայլերս ուղղեցի դեպի փուլը:

Շանապարհի կեսը անցած էի, որ տեսնեմ հեռվից մի կին է գալիս, երբ որ մոտեցավ տեսա որ Կատյան էր, որ փուլից վերադառնում էր:

Իրար բարևեցինք:

— Երևի փուլ էիք գնացել,— ասացի:

— Այո՛, փուլ էի գնացել թամաշա անելու,— ասաց նա:

— Ափսո՛ս, որ ես մի փոքր ուշացա և կամ գուցե մի փոքր շտապեցիք, թե չե՛մ փաստն էլ բեհայիք, ճանապարհը երկուսիս էլ ձանձրալի չէր լինիլ, ասացի:

— Ի՞նչ հաշիվ, ես չապրած չեմ, պարոն Վարդան, եթե կկամենաք՝ ես ձեզ հետ նորից կերթամ, ասաց Կատյան:

Երկուսս էլ սուտ ասացինք, երկուսս էլ մին միմի ասելու բաներ ունեինք, բայց չէինք ուզում խոստովանելու, երկուսիս էլ փուլ երթալը (ես քանիցս արգեն տեսել էի) մի վաշխուշ պատրվակ էր:

— Ուրեմն, Կատյա, եթե ձեզ ծանրովայն չի չինիլ, երթանք միասին, ասացի ու կոտո տվի իրան:

Խեղճ ազդիկը, կյանքի մեջ երևի այսպիսի քաղաքավարություն տեսած չէր. ո՛ր պիտի ուրախությամբ ձեռք բռնկալ գուտիս, ո՛ր պիտի քնքուշ շարժվածքով սիրուն գլուխը խոնարհեց գեպի աջ ոտս, հավատացեք, ոչ մի ավագորդարի կամ իշխանի կին կամ դոստր չէր կարող այդպիսի շքնազ պատկեր ձեռքանելու յուր անձուկ: Նորա գլուխը հասնում էր մինչև անկանջիս քլիպակը, հաստիցը հասնակս և կազմվածքը կազմվածքիս այնպես հարմար էին գալիս, որ ասես թե անզուտ ի վերուստ մենք մեկմեկի համար էինք աշխարհք եկած: Աչքիս ծայրով նայեցա նորա երեսիկ և տեսա նորա լիովին երջանկությունը և անձնաբավահանությունը: «Տեր Աստված, տեր Աստված, ասացի մտքիս մեջ, երբեմն ինչ փոքր բանով կարելի է մարդ երջանկացնել, նոր կյանք տալ նորան և փոխադարձ՝ ինչ փոքր բանով կարելի է նորան թշվառություն անգունդ գրորել ու բարոյապես սպանել: Իհարկե, այդ թուպին Կատյայից երջանկի կին չիկար աշխարհիս երեսին: Մի փոքր որ առաջ գնացինք, ես կանգնեցա ու ասացի նորան.

— Ես քեզ մի բան ասե՞մ, Կատյա, փուլը ես արդեն քանի-քանի անգամ տեսել եմ, դու էլ այս թուպիս այնտեղ էիր. եկ այս մտաբեկ նստարանի վրա նստենք ու խոսենք. մին էլ ի՞նչ այս տոթին, փոշի կուլ տալով, իզուր պիտի երթանք ու վերադառնանք:

Առաջարկությունս ուրախությամբ ընդունեց Կատյան, ու մենք բաց դաշտի մեջ, մի վայրի տանձի ծառի տակ նստանք: Մեր կեցած տեղը բարձրաբանդակ էր. դեպի արևելք խորունկ ձոր էր՝ գահավիժ ավերով. ավելի հեռուն երևում էին Փողբաւմար գետակը և շատ առկներ, որոնք թաղված էին սաղարթախիտ պարտեզների և տնտեսների մեջ: Մարի կրճիցը զո՞ղ ու անուշ բամբին ուղիղ փչում էր մեր երեսին:

— Ի՞նչ նոր բան կա ձեր տանը, ինչպե՞ս է առաջընթացը Առատուր-աղային, Յուսանա խաթունին և օրիորդին, սկսեցի ես, խոսակցության ավելի հարմար նյութ չի գտնելով գիրուս մեջ:

— Փառք աստուծո, լավ են, պատասխանեց Կատյան:

Երկուսս էլ լավ հասկանում էինք, որ ոչ ես այն եմ հարցնում, ինչ-որ ուզում եմ, և ոչ նա տալիս է ինձ այն պատասխանը, ինչ-որ ինձ կարող է բավականացնել: Եվ այս աննշանակ հարց ու պատասխանից ես երկուսս էլ բավական ժամանակ լուռ մնացինք. երկուսիս բերանների վրա ես կար մեկ խոսք, որն ասելու քաշվում էինք: Վերջապես ես խոսի այս տաղանկալի լուսնային:

— Առա, ինչդրե՞մ, ինձ ճշմարիտը, Կատյա, Ասֆիան ինձ սիրո՞ւմ է, թե ոչ: Տար-ջուր պաշտ գնաք ես նորա մեջ մեծ փոփոխություն եմ տեսնում դեպի ինձ, ի՞նչ է պատահել նորան...

— Պարտե վարդան, որովհետե որով ինձանից ճշմարիտն եր ուզում իմանալ, ես ինձ համար մեղք կհամարեմ, եթե ձեզ մտորեցնեմ Սոֆիայի մասին:

Սոֆիան ձեզ ոչ Մոսկովումն է սիրել և ո՛չ այժմ այստեղ սիրում է, ինչպե՞ս որ նորա հայրն ու մայրն են միշտ առում՝ նա էլ այնպես է կարծում, որ նորան արժանի փեսաներ չիկան հայերի մեջ: Նա ուզում է մի ջահիլ գեներալի կամ գալբեանատարի կեղծ լինել. այդպիսի մարդ չունքի հայերի մեջ չիկա, Ասֆիան էլ կամաւակամա օտարագրի պետք ա գնա: Սոֆիան, իր հար նման, հայերին իսկի չի սիրում, միշտ ժիժաղում է նոցա վրա: Շատ դժար էր ինձ ձեզ այս բանը հայտնելը, բայց չունքի դուք կամեցաք ճշմարիտ իմանալու, ես էլ ձեզ ինչ որ ճշմարիտ բան գիտեի՝ ամենը ասացի:

— Մի՞թե,— ասացի հուսահատաբար և զլուխս կրծքիս վրա խոնարհեցի և արտասուքը ոլոռ ոլոռ կաթում էր աչքերեսս:

— Պարոն Վարդան, ինչի՞ եք տրտում, ինչի՞ եք լալիս, մի՞թե Սոֆիան կարծե ձեր արտասուքին. մոռացե՞ք նորան. աստուծո ղյառք տվեցեք, որ ձեր պսակի բանը զլուխ չեկավ. Սոֆիան մի օր Եեզ անպատճառ քանքախտ կաներ...

— Ա՛խ, Կատյա, Կատյա, մի՞թե սորանից էլ մեծ անբախտություն կա աշխարհիս երեսին...

— Կա, պարոն Վարդան, կա. դորանից էլ մեծ անբախտություն կա. բայց աստված ուզում է ձեզ ազատել նորանից, և այդ անբախտությունն է՝ Սոֆիայի նման աղջկա մարդը լինելը: Հավատացե՛ք ինձ, պ. Վարդան, որ Սոֆիան ամուսնական կյանքի համար ստեղծած չէ. նորա խելքը միտքը Փարիզներ, Վեննաներ, պարահանդեսներ, դիմազահանդեսներ, զարդեր և սիշուն դինվորականներ են. ի՞նչ սազ կհա համեստ հայ երիտասարդին այդպիսի կնիկը:

Այն ըոպեին ես կարծում էի Քե՛ն՝ Կատյային այսքան շարախտություն, այսքան բամբասանք թելադրողը նորա նախանձն է դեպի հարուստ Սոֆիան և, զուցե, մի փոքր էլ պատվասիրական ձրգտումն դեպի ինձ. բայց թե որպիսի անարդար կարծիք էր այդ խեղճ ու անմեղ աղջկա մասին— այդ ես հետո իմացա: Իսկ այն ըոպեին ես լուռ մնացի, և միայն երեսիս ծոմռելով հասկացուցի նորան, որ այդպիսի խոսքերը Սոֆիայի մասին ինձ շատ անախորժ են:

Կատյայի երեսը մառախուղով պատեցավ. հազիվ նշմարելի արտասուք ցոլաց նորա աչքերի մեջ. իմ պատասխանը, ինչպես երևում էր, խորունկ խոցեց նորա սիրտը: Դառնալով ինձ, ասաց նա:

— Պարոն Վարդան, շատ կարելի է դուք կկարծեք, որ ես ատում եմ Սոֆիային, կամ՝ նախանձում եմ նորան կամ մեկ շարություն եմ կամենում. աստված մի արասցե. բայց ես մեղքանում եմ ձեզ, որ մինչև այժմ հասկացած չեք նորան: Ես Սոֆիային փոքր ժամանակից ճանաչում եմ, դեռևս այն ժամանակ, երբ նորա հայրը այժմվա պես հարուստ չէր, իսկ իմ հանգուցյալ հայրը Հաշտարխանի մեջ առաջին մարդն էր. գուրեհոնատորը ու սրբազան առաջնորդը ամեն կիրակի մեր տանը ճաշի էին լինում. Սոֆիան փոքր ժամանակից շունքի հոր ու մոր մեկ հատ աչքի լույսի պես

զավակն էր՝ շատ երես էր առած. ամեն բան ուզում էր, որ իրա կամքով լինի. հենց որ մեկ թարս բան ասեիր՝ իսկույն ի՞նչ ձեռք հասավ՝ կոտրում, փշրում, գետնե գետին էր տալիս, գլխի մազերը պոկում էր, զլուխը պատին էր տալիս ու ձեռքերն էր կծոտում: Այսպես իրա ասածի աղջիկ էր: Հերն ու մերը ասում էին՝ թե կմեծանա՝ կխելոքանա ու իսկի չէին աշխատում դրստելու Մեծացավ, ամա տեսա՞ր որ բնությունը չի փոխվեցավ: Հիմի արդեն նորա դրստելը անկարելի է և կամ՝ շատ աշխատություն և շատ ժամանակ է պետք դորա համար: «Էլ ո՞ւր հեռու գնանք. երեկ միասին էինք ման գալի բուլվարումը. մին էլ բիրդան մեր դարձու էկավ էն Դոռոզով օֆիցերը ու էրկուսիս չեստ տվավ: Սոֆիան փոխանակ զլուխ տալու ու մոտից անձեն անցնելու, ի՞նչ անի լավ ա,— սկսավ հետը խոսելու. խոսան, խոսան, ման եկան ման եկան ու, վերջապես առանց հոր ու մոր հրամանին՝ տուն ձեն տվավ իրիկնաշայի: Դոռոզովի գորա ինչ. նա տղամարդ ա, ամոթ, պատիվ, խալխի բամբասանք նրա համար ոչինչ բան ա: Եկավ տուն, բարեկամացավ Ասատուր-աղայի ու Օվսաննա խանումի հետ. խելի վախտ նստավ ու գիշերի շատ ուշ ժամանակ գնաց տուն: Խոսածներն էլ ի՞նչ. ամենը դատարկ, հայվարա բաներ էին,— Փարիզի քեֆերի, բեաբուր կնանիքի վրա: Մեր Սոֆիան էլ ամաչելու, կարմրելու տեղ, բերանը բացած՝ ծիծաղում էր: Ապա հիմի ինքզ ասա՝ ի՞նչպես չի բարկանամ ախրը— նրա վրա. մատաղ-ջան, էսպիսով հայ քրիստոնյայի անըմը կոտրվում ա ախրը օխտըն օտարի աչքումը»: Այս բոլոր մենախոսությունը հաշտարխանցի հայ կնոջ արագախոսությամբ, շունչ շառած, նկատեց դժկամած Կատյան: Այդ ըոպեին շատ գեղեցիկ էր նա, հայ կնոջ բնական խելքը, պարկեշտությունը և արդարամտությունը փայլում էին նորա դեմքին:

Նա լռեց. ես ոչինչ պատասխան չի տվի:
Տեղերես ելանք ու Եղիսաբեթյան սրահի միջովն գնացինք դեպի ճեմեղիք: Ժամը երկուսի մոտ էր. ճաշելու ժամանակն էր. ճեմեղիքի մեջ գրեթե մարդ չէր մնացել, ամենք իրանց տներն էին քաշվել: Ես ճանապարհ ձգեցի Կատյային մինչև Ասատուր-աղայի տան մուտքը: Ներս չի մտած, Կատյան ինձ հարցուց.

- Այս իրիկուն կգա՞ք աղայի մոտ:
- Կարծեմ որ չեմ գալ, ասացի:
- Ես ու իմ հոգին՝ շատ էլ լավ կանեք. ինչո՞ւ է ի զուր ձեր

ստորանալը մի թեթևամիտ աղջկա և մի անհոգի ծերունիի առջև
Բայց ես խոսքս չի բռնեցի, ու շարաշար պատժվեցա:

Երեկոյան ուղիղ յոթը ժամին գնացի: Ասատուր-աղան քանի
մի ուսու բարձրաստիճան պաշտոնատարների հետ պատշգամբի
վրա նստած թեյ էր խմում. իսկ Սոֆիան Դոողդովի հետ մի փոք-
րիկ բազմոցի վրա նստած շատ կամաց խոսում էր. Դոողդովի աչ-
քերը արյուն էին կոխած: Սոֆիան շառագնած, աչքերը խոնարհած՝
աշադրութայաբ լսում էր նրա խոսածը: Ի՞նչ էին խոսում նոքա՝ ոչ
լսեցի և ոչ իմացա, բայց հավաստի գիտեմ, որ նոցա ամեն մի
խոսքը դաշունի մահաբեր հարված պիտի լիներ ինձ համար: Ժամ
ու կես մնացի Ասատուր-աղայի տանը, անոնցմե ոչ ոք մի խոսք
չապաց ինձ, ոչ ոք բարևս չընդունեց, ոչ ոք ինձ ձեռք չպարզեց,
մինչև անգամ երկբայելի է, որ իմ ներկայութունը նկատած լի-
նեին: Չայը քթիս տակից անցնելով՝ տալիս էին հյուրերին, իսկ
ինձ ոչ առաջարկեցին և ոչ հարցրին՝ կկամենա՞մ, թե ոչ: Առ-
գդակս, և խոր խոցված գնացի տուն: Շատ փոշմանեցա, որ կառ-
յայի խոսքին ականջ չի դրի:

Հունիսի 30.

Չորս ամբողջ օր վրա-վրա տանս փակված մնացի: Ոչ ոք ինձ
չայցելեց՝ ո՛չ բարեկամներ և ո՛չ հիվանդներ, թեև, ըստ օրինակի
ուրիշ բժիշկներուն, տեղական լրագրի մեջ հայտարարել էի, որ
«պատիվ կունենամ հիվանդներ բժշկելու»:

Քաղաք հասած օրես ի վեր դեռևս ոչ մի հիվանդ դիմած չի
իմ օգնությանը, բացի կատյայեն, որն թերևս մենակ հավատում է
իմ բժշկական հմտությանը: Ո՞վ է հարցնողը, թե այսպիսի ես
ընկած փողոցի մեջ մի նորավարտ հայ բժիշկ կա Վարդան Հու-
կանյան անունով կամ չեկա, մինչ Բառթեթ, Վիցցեր, Սմիռնովներ,
Միլլուտիներ, Խալեցկիներ արեգակի նման փայլում են ահա քա-
նի տասնյակ տարիներ:

Այստեղ ևս ավելի մեղադրում եմ հայ բժիշկներին, քան թե
ժողովրդին: Ըստ մեծի մասին բժիշկները և հայ բժիշկը մանա-
վանդ՝ իրանց գործի վրա ինչպես հարստացնող արվեստի վրա են
նայում: Երբ որ մեկ մարդու նպատակ հարստանալ է՝ արդեն
հնարներու ազնվութունը և անազնվութունը նորա աչքեն փախ-
չում են: Երեք պաշտոն կա, ուր փողի սերը մաշողուս համար դառ-

նում է աններելի մալություն. դոքա են պաշտոնները քահանայի,
մանկավարժի և բժշկի: Ես չեմ ասում, որ այս երեքին փող և ապ-
րուստ պետք չեն. ամենևին ոչ. բայց եթե սոցա աչքում փողը
առաջին կարգումն լինի, նոցա զարշելի կդարձնե մարգոց աչքում:
Ամենքս ներողամիտ աչքով նայում ենք արծաթասեր վաճառա-
կանի վրա, եթե մեկ գինվորական սիրե ճոխ և զեխ ապրուստ՝
մենք ամենևին նյութ չենք դարձնում մեր խոսակցությանը նորա
այդ թուլությունը, բայց եթե մեկ քահանա, կամ մեկ մանկավարժ,
կամ մեկ բժիշկ սիրե ճոխ ուտել-խմել, շոտլա ապրել, պերճ հագ-
վել ու վարդարվել՝ մենք արդեն մեր մտքի մեջ նոցա կարգա-
զուրկ և պաշտոնանկ ենք համարում, չենք հավատում նոցա օգ-
տաբերությանը, և չենք գնահատում նոցա հմտությունը իրանց
արվեստի մեջ: Ինչո՞ւ: Այդ ամենին էլ հասկանալի է, ամենքն էլ
գիտեն: Թե՛ քահանան, թե՛ բժիշկը և թե՛ մանկավարժը պաշտոն
մտած օրից պիտի շարունակ սովորի և կատարելագործվի. դրա
համար ժամանակ է պետք, իսկ եթե նոքա անձնատուր լինին փող
ճարելու և ճոխ ապրուստ վայելելու՝ նոցա թանկագին ժամանակը
իրանց ընտրած արվեստի համար անպտուղ կկորչի, և նոքա ո՛չ
միայն չեն կատարելագործվի, ոչ միայն իրենց ստացած գիտու-
թյունը կպահպանեն, այլ օրեօր կմոռանան այն և կտգիտանան:
Երկրորդ պատճառ ևս կա, որ ժողովուրդը չի ներում այդ երեք
պաշտոնին նվիրված մարգոց արծաթասիրություն և ղեխություն:
Քահանան, մանկավարժը և բժիշկը ոչ միայն խոսքով պարտավոր
են խրատելու ժողովրդին, այլև իրենց անձնական համեստ կյան-
քով լինել նորան օրինակ, որն ավելի կհամոզի, քան թե ամենա-
ճարտար լեզուն:

Մեծագույն մասը հայ բժիշկներին սովորություն ունի, հենց
որ թողեց համալսարանական նստարանը, իսկույն հետամուտ լի-
նել, որ յուր ապրուստը ապահովացնե: Ընթերցանություն, պարապ-
մունք, ուսումնական փորձեր, կատարելագործություն, հետախու-
զություն.— բոլորը ցնդում են նորա մտքեն, նորա բոլոր իմաս-
տությունը սահմանափակվում է այն կիսակատար գիտությամբ,
որ նա յուր պատանեկության օրերը օրամեջ քաղել էր պրոֆեսոր-
ների դասախոսություններեն և տարվա վերջին ամիս ու կես վայ-
նաչարին քաղվածք էր արել յուր ճզմաճած տետրակներովը: Թեև
ամեն ազգի մեջ կան այսպիսի թերուս բժիշկներ, բայց միևնույն
ժամանակ ամեն ազգ ունի հմուտ, կատարելագործած, առաջնա-

կարգ բժշկապետեր, տարաբախտաբար հայ ազգը շատ ունի առաջիններեն և գրեթե ոչ մինը երկրորդեն:

Այս է պատճառը, որ հայ հիվանդը սակավ հավատ է քնծայում բժշկին: Եթե նորա տկարությունը փոքր ի շատե ծանր է՝ նա երբեք չի դիմիլ հայ բժշկին, այլ միշտ կհրավիրե օտարազգիին, հենց այն պատճառով, որ հային առանց այլևայլություն վատ է ճանաչում, իսկ օտարազգիին՝ ոչ: Ո՞վ է մեղավորը: Իհարկե, շատ օգնում է մեր ազգակործան մոլորությունը, որ է օտարասիրություն, որով վարակված է գրեթե ամեն հայի— մեծից բռնած մինչև փոքրը: Ազգասեր, հայասեր խոսքը, որ մեր օրերում սաստիկ տարածված է մեր մեջ, հայի բերանումը նույն ծիծաղաշարժ նշանակությունը ունի, ինչ որ հարյուր հազարը կամ միլիոնը մի մուրացիկ ազգատի բերանումն: Մեր ազգի ո՞ր մեկ պակասությունը վրա խոսիմ, երբ որ մենք ծայր ի ծայր պակասություններով լցված ենք: Անմխիթա՛ր վիճակ:

Երեկոյան դեմ, ժամը այսպես վեցին, գնացի ճեմելիք. սպաները մեծ խումբ կազմած՝ ծիծաղելով դեպի վեր էին նայում ու անպարկեշտ կատակներ էին անում իրանց մեջ նոցա մասին, որոնց վրա նայում էին, իսկ նայում էին նոքա Դոռզդովի և Սոֆիայի վրա, որոնք կուռ-կոռի տված՝ գնում էին դեպի վերի ճեմելիքները:

— Ա՛յ կտրիճ.— ասում էր սպաներեն մինը,— որքան և անպիտան է, որքան և անամոթ է, բայց կարողացավ խո ճանկը ձգելու այդ թռչունին...

— Օ՛, Դոռզդովը մեծ ոմն է փոքր գործերումը,— պատասխանեց մյուսը,— բայց մեկ հին և խելոք առած կա, որ ասում է, «Դու ասա՛ ինձ ո՞վ է բարեկամդ, ես էլ քեզ կասեմ դու ինքզ ո՞վ ես»: Դոռզդովին ճանաչելով՝ մենք պետք է երևակայենք, թե նորա ձեռք ձգած աղջիկը ի՞նչ պտուղ է...

— Չէ՛, պարոններ. ի՞նչ կուզեք ասել, բայց աղջիկը բավական սիրուն է, հորը համար էլ ասում են, թե շատ հարուստ մարդ է:

— Ո՞րքան կուզե հարուստ լինի, բայց Դոռզդովին Փարիզի մեջ մեկ տարի մսխելու փող չի ունենալու, վասնզի նա յուր հորից մնացած միլիոնը և հորաբույրից մնացած հարյուր հազարները երկու տարվա մեջ այնպես փճացուց, որ գրեթե մերկ ետ եկավ:

— Մի՞թե աղջկա ժլատ հայրը յուր բոլոր ունեցածը կաննի կուտա նորան. չէ՛, Դոռզդովը թո՛ղ յուր ախորժակը պահե մինչև նորա մահը...

— Եթե չի տալ՝ Դոռզդովը կզողանա, դրամարկղ կուտրել բանալ, սուտ մուրհակ տալ, թղթախաղի մեջ հազար տեսակ խարդախություններ անելը նորա համար նոր բան չէ՛:

Ավելի շկարողացա համբերելու, թողի ու գնացի առաջ. բայց Սոֆիային ևս հանդիպել չէի ուզում, ուստի մեծ, լայն ճանապարհը թողած՝ կողմնակի նեղ ճանապարհներով խորացա ծառատունկի մեջ, որ սարի լանջի վրա էր գետեղված: Այստեղ ծառերը, թփերը ու մարդաշափ խոտերը այնքան խիտ էին, որ շորս քայլափոխ հեռի կեցողին անհնար էր տեսնելը: Հանկարծ ականջիս շշուկի ձայն եկավ, ուշքս գրի, տեսնեմ Սոֆիայի ձայնն է, բայց շատ կամաց արտասանած.

— Պարո՛ն Դոռզդով, ի՞նչ եք անում, թողե՛ք, մարդ կտեսնե, ամոթ է:

— Չէ՛, հոգիս, ոչ ոք չի տեսնիլ, մի՞թե ինձ չես սիրում, էլի մեկ համբույր տո՛ւր, այն ժամանակ ես կիմանամ, որ դու ինձ սիրում ես:

Ու լսվեցավ մի բարձրաձայն համբույրի շրխկոց:

— Բավական չէ՞ր, էլի՞ ես շարունջուն անում, թող, թե չէ, կկանչեմ...

Ես դիտմամբ ամուր հազացի, որ ձայնս լսվի ու այս խայտառակ տեսարանին վերջ լինի: Այնպես էլ եղավ: Երբ որ ձայնս լսեցին՝ իսկույն թփերի միջից ճանապարհի վրա գնացին, և ես գուցե ազատեցի Սոֆիային այնպիսի անկումե, ուր կինը կյանքի մեջ զլորվում է մի անգամ ու էլ ոտքի կանգնել չէ կարող: Բայց ի՞նչ օգուտ. Դոռզդովը որ կար՝ երևելի շար որում էր, իսկ Սոֆիան նորա համար ամեն րոպե պատրաստ պարարտ հող:

Երբ որ ստորին ճեմելիքը եկա՝ սպաների խումբը աղաղակ, աղմուկ բարձրացուցած շրջապատել էին Դոռզդովին, իսկ հեռվումը Սոֆիան նորան էր սպասում, երեսը հակառակ կողմը դարձուցած: Սպաներից մինը ասաց.

— Դոռզդով, պիտի շնորհավորենք քու օրինավոր պսակը,— ու ծիծաղեցավ, հետև էլ ծիծաղեցան մյուս սպաները:

— Օրինավոր պսակի համար դեռևս ոչինչ ասել չեմ կարող,—

պատասխանեց Դոնդոզովը,— բայց քաղաքական պսակս պատիվ կուեննար շնորհավորելու:

Սպաները ավելի պինդ ծիծաղեցան, ու մի քանիսը մինչև անդամ աղաղակեցին. «Կեցցե՛ Քամբովի մատակախանձը, կեցցե՛ նստացի դամբիկը»:

Էլ մի՛ հարցնեք, ի՞նչ կրակի մեջ էր իմ հոգին: Լավ է որ այս խոսքերը չհասան Սոֆիայի ականջը:

Բայց այս օրվա «ափուրն շարք» այս ամոթալի միջազնկո՞վ չի պիտի վերջանար: Մի գաղտնի, անմեկնելի զորութուն ինձ քաշում էր գեպի Ասատուր-աղայի տունը, ուր թեև գիտեի, որ բացի անախորժութենն ուրիշ բանի հանդիպելու չեմ, այսուամենայնիվ, ուղիղ գնացի այնտեղ:

Այս անգամ Ասատուր-աղան մենակ էր իր գրասենյակի մեջ: Մոտեցա նորան. ձեռքս պարզեցի, բայց նա չգիտեմ, շտեմա՞վ թե չուզեց ինձ ձեռք տալու, միայն թե իմ խոնարհ ողջունիս ունքի թեթև շարժումներովը պատասխանեց:

Լուռ մունջ նստա մի հեռավոր աթոռի վրա:

Ես տարօրինակ ստեղծված եմ. երբ որ մարդիկ իմ սիրտը ջավեցնեն, սաստիկ վիրավորեն՝ բարկանալու տեղ, ես առավել ևս կկակուղանամ, կընկճվիմ, կոչնչանամ, մինչև անգամ՝ ինքս պատրաստ եմ՝ նորանից ներողութուն խնդրելու. ուրիշ բան է, եթե իմ առջև թշնամանեն մի բարեկամիս, կամ մեկ անմեղ և մանավանդ մի տկար մարդու. այն ժամանակ ես կկատաղեմ, իմ բարկությունը շափ և սահման չի ունենալ. չգիտեմ ո՞րտեղից վրաս քաշություն կուզա և իմ վրեժը սոսկալի է, որքան որ զենք ունիմ՝ բոլորը հանգես կհանեմ: Ի՞նչու է այդպես, ի՞նչ է սորա պատճառը:— Սորա պատճառը այն է, որ իմ մանկութենն ինձ սովորեցրած չեն իմ ձեռքը ազդեցի և հնազանդության հետ միասին նաև իմ միջի մարդկային արժանավորությունը ճանաչելու և պաշտպանելու. իսկ վերջերսումը իմ ստացած լուսավորությունը տվել է ինձ քաղաքացիի առաքինություններ, որոնց թվին է նաև պաշտպանել անմեղին և տկարին:

Իմ տեղ մի անզլիացի կամ մի ամերիկացի լիներ, հազար անգամ թքած կլիներ Ասատուր-աղայի ու Սոֆիայի նրեսներին և Դոնդոզովի թշերը ապտակներով կուռեցներ. բայց ընդ նմին և ըզտ արժանավունց կպատվեր և կզնահատեր Կատյային, և ոչ թե ինձ նման օրը տասն անգամ փոքրողությունը նորա սիրտը կկոտորեր:

Մեծող ձեռքը շան նման լիզելը ո՛չ թե խոնարհություն, այլ ամենագարշելի ցածություն և ամենանուրբ կեղծավորություն է: Տե՛ր աստված, տե՛ր աստված, եթե մեր հայկական բարոյականությունը լավ զննես՝ որքան առաքինություններ մոլությունք պիտի ճանաչվին: Այս խորհրդածությունները արի իմ մեջ քանի որ Ասատուր-աղան լուռ կեցած էր ու տեր սղորմյան համբու՞մ էր: Վերջապես գլուխը բարձրացուց ու ասաց ինձ.

— Խաբա՞ր ես, ախրը մենք Սոֆիային պետք ա նշանենք. ուղող կա:

— Հա՞, բարի սահաթի լինի: Կարո՞ղ եմ իմանալ՝ որի հետ,— ասացի:

— Էստեղ մեկ հարուստ պամեշչիկի տղա կա, չգիտեմ մայր է, թե պողպուկովնիկ. մալխաս ջահիլ, սիրուն, բոյսով-բուսով տղա ա, շատ հավանել ա մեր Սոֆիային: Հերը, ասում են, երկու երեք միլիոն ունի, տոտինկեն— էլ ա էտքան յա մե վատ պակաս, դայրաղ քանի քանի հազար դեսյատին հողից, լեսից ու Մոսկովի ու Պետերբուրգի եքա եքա տներից: Մեկ խոսքով՝ շատ խոջա տղա յա, թագավորի էլ, ասում են, աչքի լուսն ա. դվարդիումն դուլլուդ ա անրմ: Ի՞նչ ա, լավ ա՞:

— Ինչո՞ւ չէ, շատ լավ է,— պատասխանեցի ես:

— Էդ ա դա՞. դու ապա ի՞նչ էիր թահմին անրմ. բաս Սոֆիկիս շիտայի մեկ պարտքի մեջ խեղդված դուքանդարի. յա մեկ անփոխան հայ շինովնիկի, էսի չե՞ն առնիլ,— ասաց, մատերին մի օտարոտի ձև տալով:

Ես ծիծաղեցա՝ ո՛չ նորա խոսքերի, այլ իրա Ասատուր-աղայի վրա. բայց նա իմ ծիծաղի իսկական միտքը չհասկանալով՝ ես առավել ոգևորվեցավ:

— Դու ի՞նչ ես կարծում, ես ի՞նչ մարդ եմ, ի՞նչ մարդու դավակ եմ: Հորս վրա բան լսած չե՞ս, լսած չե՞ս Մկրտում աղայի անունը: Իմ հերս էնպես մարդ էր, որ սաղ Հաշտարխան նրա առաջ ձեռքերը խաչ կապած կայնրմ էր: Նրա նավերը դրզըլթաշի տեղից դեպի մեր կողմերը ապրանք էին բերում, էստեղից էլ էնտեղ ոռոտի ապրանք էին տանում: Մեկ օր խաբար բերան քի՛ էրկու նավըդ բաթմիշ ա իլել ծովի վրա: Հերս իսկույն հրամայել ա տասը ոչխար տանեն ժամին դուռը մատաղ բաժանելու խալխին: Հարցրել են թե՛ էդ ինչ աչքալուսանքի համար ա մատաղդ. նա ասել ա քի՛ շատ ուրախ եմ որ էրկու նավս ա բաթմիշ իլել և ո՛չ թե տաս-

ներկուսը. էլի շահս մեծ ա: էսպես զոչաղ մարդ ա իլել ողորմած հոգին: Մեկ օր էլ եներալներ, պուկովնիկներ, մայրոներ, չգիտեմ, ո՞ր թագավորի կենացը շամպանսկի խմում են իլել. էդ միջոցին էլ հերս կառեթով անց ա կանում իլել էն տան շարշից, ուր էդ մեծավորները քեֆ են անում իլել: Գուբեռնատորը որ փանջարից տեսնում ա հորս՝ ձեն ա տալիս թե, «Նիկիտ Ամբակումիչ, Նիկիտ Ամբակումիչ, արի էստե՞ղ, թագավորի կենացը մի բաքալ շամպանսկի անուշ արա՞»: Հերս էլ կառեթիցն պատասխան ա տալիս. «Ես չեմ գալ ձեզ մոտ. լավն էն ա՝ դուք կամպանիով էկեք իմ տուն. սամավար տինիլ կտամ, լավ բաքաթի կնստինք ու թագավորի կենացը տաք տաք շայ անուշ կանենք»: Մեր գուբեռնատորը կատողն ա. «մինց թե թագավորի կենացը շայ կխմես. դու ի՞նչպես համարձակար էդպես օրենքի հակառակ խոսք բաց թողնելու բերանիցդ. չգիտե՞ս որ թագավորի կենացը մենակ կարելի ա շամպանսկի խմել. ես հիմա քեզ փողսուղ կտամ, վրեղ դատաստան կբանամ ու տնով-տեղով Սիբիր կուղարկեմ»: Հերս բան չի ասում. գրնում ա տուն: Գուբեռնատորը ինչքան որ բազմութուն կա մոտը, ամենին առնում ա, դուփ ու դուզ գալիս ա նրա ետնից, ուզում ա մարդուն մեղալամ կորցնի: Հերս որ իմանում ա, թե գուբեռնատորը եկել ա իրա տուն՝ իսկույն հրամայում ա ներս բերել արծաթի սամավարը ու սանդուկներից հանում ա պաշկա պաշկա ասիգնացիաները, քրցում ա մեջը ու վառում ա. ու եքս սամավարը խշխշջընում ա մենակ ասիգնացիաներով: Գուբեռնատորը ու հետի մեծամաս մարդիկ էսի որ տեսնում են, պելլված՝ էնպես են զարմանում: Մկրտում աղեն, իմ հանգուցյալ հերը, ասում ա էն վախտ. «Հիմա տեսցի՞ք, պարոններ, որ իմ մեկ թաս շայը մեր ողորմած թագավորի համար ավելի թանկագին պատվավոր ա, քան թե ձեր բութիլը հինգ ուրբանոց շամպանսկին: էն ժամանակ գուբեռնատորը ու հետի մեծամարդիկը տեսնում են, որ զորդ ա իլել մարդու ասածը քի՛. «Իմ շայը ավելի պատիվ կրբերի մեր թագավորին, քան թե ձեր շամպանսկին», ինչու որ նոցա խմած մեկ-երկու ստաբան շայի համար նա էրել ա երկու-հարյուր հազար մանեթից ավելի:

— Հիմի տեսցի՞ր, պարոն բժիշկ, թե Սոֆիաս ինչ երեկելի օջախիցն ա: Հիմի դու ու քու հոգին՝ ախր մարդ ի՞նչպես զրմըռի էսպես ազիզ մեծացրած աղջկանը առնի ու մեկ հասարակ հայի կնիկ անի:

Ս Ես տեսա որ Ասատուր-աղայի հետ վիճելը բուրոսովին ավելորդ է, անհնար էր նորան սովորեցնել, թե ո՞ր գործը ավելի է և ո՞րը ոչ, ի՞նչ բան մարդու բարձրացնում է և ի՞նչ բան ցածրացնում. մեր կարծիքը իրար այնքան հակառակ էին, որքան որ կրակը ու ջուրը:

— Շատ լավ,— ասացի,— բայց, Ասատուր-աղա, դուք հավաստի գիտե՞ք, որ Դոռոզովը հարուստ կալվածատեր հայր ունի. հավաստի՞ եք, որ նորա հայրն ու հորաքույրը կենդանի են և այդքան մեծ հարստութուն մի օր նա պետք է ժառանգե. արդոք այդ ամենը սուտ, հնարած պատմութուններ չե՞ն:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես հայվարա հայվարա խոսում, ի՞նչ ես լոբի կերած դուս տալիս. թե որ ես մեկ բան եմ ասում, լավ իմացած իլիր, որ նահախ չեմ ասիլ: Նախանձը՞մ ես, ի՞նչ, էն օֆիցերին. թե՞ կամենում ես որ միլիտնչիք մեծավոր տղին թողնեմ ու աղջկաս քեզ տամ, որ դու էլ էն խեղճ երեխին տանեիր Հայաստանի գումանները, կարմիր թմբան հագցնեիր ու նրա օրարկը սևացնեիր լվոտ ու օշլոտ հավաքունների մեջ: Զարմանում մընում եմ էս հայի փուճ խասիաթի վրա, մեկ բան թե իրանց ասածի պես շիլավ, թեկուզ ջուր գա աշխարհք տանի՝ նրանց համար մեկ բան ա: Պարոն Վարդան, ամո՞թ ա, ամո՞թ, թո՞ղ հայի էդ փշանալու աղաթը, մարդու շկամութուն, մի՞ անիլ, փիս բան ա: Ես հաղար անգամ ասել եմ ու էլի կասեմ, իմ Սոֆինկայի նասիք ջահել տղա չկա հայերի մեջ. աղա-լազարովանց մեջ խո տղերք իսկի չկան. նրանցից ցած մարդու տալ չեմ զրմըռում. ճարը կըտրած ուսների զրման պետք աչքս շուտ տամ,— ի՞նչ ես ասում:

— Ասատուր-աղա, ինչի՞ ես բարկանում, ես քեզ դորա հակառակ ի՞նչ եմ ասել որ, ո՞վ կարող է քու ձեռքից հայրական իրավունքդ խլելու. միայն թե...

— Ի՞նչ միայն թե, ինչ միայն թե,— ասաց ինձ տնազ տալով,— էդ միայն թե՞ ովդ ի՞նչ ես ուզում ինձ հասկացնել: Վլադիմիր Դոռոզովը գնաց-եկավ՝ քեզանից էլ պակաս մարդ իլավ, գլո՛ւխդ մեռնի ոչ...

էլի ուզում էր այս տեսակ անախորժ խոսքեր ասելու, հանկարծ, թուրը ու կոշիկների խթանները շխկշխկացնելով ներս մտավ Դոռոզովը, շնորհալի ձևով բարևեց Ասատուր-աղային, ձեռքը սեղմեց ու մոտը նստավ, և սկսավ սուտ-ղորդ Պետերբուրգի ավագորայի և կայսերական դրան բաները պատմելու, ոչ ինձ

բարևեց և ոչ ձեռք տվա՛վ, և Ասատուր-աղան մինչև անգամ ավելորդ համարեց մեզ իրար հետ ծանոթացնելու, ինչպես՝ որ այդ սովորութիւնն է ամեն բարեկիրթ ընկերութեանց մեջ: Նոր էր ներս մտել Դոստոյովը, մին էլ տեսնես, հակառակ դռնից, երեսը կարմըրած, դեմքը այլայլված, արեգակի նման աչքերը ցուլալով ներս մտաւ Սոֆիան ու այնպես մտերմաբար բարևեց նորան, ասես թէ ետքա շորս-հինգ տարուց այլ ու կիս լինէին: Ասատուր-աղան էլ, հայր Աբրահամի դերը վրան առած՝ ներողամիտ աչքով ու անդորր ռոգով նայում էր Սահակի ու Ռեբեկայի վրա:

Անձնապատմութիւնը, ազնիվ հպարտութիւնը պահանջում էին, որ ես թքեի ու դուրս գալի այս գարշելի որջեն, բայց, ավաղ, պատիվը ու հպարտութիւնը վաղուց թմբել էին մեզս: Ես դարմանում եմ, թէ մինչև ո՞ր աստիճան մարդս կարող է ինքն իրեն մոռանալ և քոտրանալ: Հաստատուն կամք բոլորովին մնացած չէր մեզս. այնպես կարծում եմ, որ եթէ այդ րոպեին Դոստոյովը գար թքեր հրնսիս կամ ապտակներ՝ ես լուռ կ'մնայի ու համբերութեամբ կտանէի, միայն թէ ինձ չի գրկեր Սոֆիայի երեստեսութեանն: Ի՞նչ զգացմունք էր այս, սե՛ր էր: Չեմ կարծում: Խելագարութեան նման մի ցավ չէ՞ր արդո՞ք: Վերջին ենթագրութիւնն շատ հավանական է. վասնզի բժշկական փտութիւնը ամենեկին չի մերժում այսպիսի ժամանակավոր, րոպեական խելագարութիւն, մանավանդ բնութեամբ թույլ և սիրտը փափուկ մարդոց:

Հանկարծ Դոստոյովը դղակի միջից մի փոքրիկ կապոց հանեց, եղալի աչքերով մոտեցա՛վ Սոֆիային ու ասաց.

— Օրիորդ, խնդրեմ ընդունեցե՛ք ինձանից այս փոքրիկ ընծան:

Սոֆիան ուրախ-ուրախ առա՛վ կապոցը. դեմքի վրա անպատմելի ուրախութիւն ցույց տալով, միջից դուրս հանեց մի փոքրիկ տուփ, ուր կար բուստե զույգ օղ և մի քորոց: Ամենը միասին կարծիք վեց կամ յոթը մանեթ: Ե՛վ նա, որի պարանքը լիք էր կաղնի մեծութեան մարգարիտներով, ադամանդներով, զմբուխաններով և ուրիշ գոհարներով, մի նաժշտի վայելուչ ընծայի համար չգիտեր արտի ուրախութիւնը ինչպես հայտնե՛ր:

— Ա՛խ, պարոն Դոստոյով, ինչպես շնորհակալ եմ ձեզանից, ա՛խ, ի՞նչպես սիրուն բան է, ի՞նչպես ընտիր ճաշակ ունիք դուք: Իսկույն մոտեցա՛վ հայելին, շուտ շուտ հանեց ականջներին ու դեմ ձգեց լուր օղերը, որոնք առսակա՛վը երկու հազար կարծիք

ու հազար այդ նորերը, իսկ քորոցը չգիտեր կուրծքի ո՞ր կողմը ցցեր՝ վեր, թէ ցած, աչ, թէ ձախ, ասես թէ խնայում էր ձեռքից հանելու:

— Ա՛խ, ինչ հիանալի զարդեր են, քանի՞ տվիք, որի՞ց գնեցիք, մինչև մահս դոցանից չեմ բաժանվի:

— Գնի համար մի՛ հարցնեք, շատ շնչին փող եմ տվել, բայց գնեցի կավկազի կողմերից եկած մի «առմեաշկայից»:

Այս վերջին խոսքը մի այնպիսի հասարակ, սովորական բառ երևացա՛վ Ասատուր-աղային, որ ասես թէ նա ծնած օրից ուրիշ անուն չէր լսել հայի ազգութեանը: Բայց իմ համբերութիւնն սպառեցա՛վ: Տեղիցս ելա.

— Պարոն Դոստոյով, — ասացի, — դիցուք թէ դուք հայերի՞ն չեք սիրում, ասում եք. դիցուք թէ ինձ էլ արհամարհում եք. բայց դուք ի՞նչ իրավունք ունիք անպատվելու այն տունը, ուր դուք գտնի եք հյուրասիրութիւն և ավելի քան թէ հյուրասիրութիւն՝ պատիվ և սեր. ա՛յդ է ապացույցը ձեր ազնիվ ծնողաց զավակ լինելուն. որով այս պարզամիտները (մատով ցույց տվի Ասատուր-աղայի և Սոֆիայի վրա) պարծենում են, ա՛յս է քաղաքավարութիւնը, որն սուրբ պարտավորութիւնն է ամեն սպայի...:

— Պարո՛ն, — ասաց ինձ Դոստոյովը գոտողութեամբ, — դուք ինձ չեք ճանաչում, նմանապես ես էլ ձեզ չեմ ճանաչում, և ինձ նման մարդը ամենեկին հարկավորութիւն չունի ձեզ նմանների հետ ծանոթ լինելու, ուրեմն ձեք անտեղի հարցմունքը ես անպատասխան կթողում...:

— Ա՛խպեր, քո՞ գորա ինչ, էլի սկսա՛ր... — ասաց Ասատուր-աղան:

Բայց ես նորա խոսքը բանի տեղ չի գրի ու շարունակեցի ասելու Դոստոյովին.

— Եթէ դուք ինձ նախատած լինե՛ք, ես ձեզ մարդապես կարող էի ներել. բայց որովհետև իմ ազգս նախատեցիք...:

— Միտք ունիք ինձ պատժելու՞, — կարեց խոսքս Դոստոյովը:

— Պարոն Վարդան, խնդրեմ ձեռք կտրի՛ր, — ասաց Ասատուր-աղան, թէ չէ ես...:

Բայց ես դարձյալ նորա խոսքը բանի տեղ չի գրի ու՝ դառնալով Դոստոյովին, ասացի.

— Այս, կպատժեմ և սաստիկ կպատժեմ:

— Զո՞րօրինակ...— ասաց նա երեսը սպրդնած և շինծու ժպիտով թաքցնելով սրտի երկյուզը:

— Մենք կմենամարտինք,— ասացի վճռողաբար, խոսքս ծանր-ծանր արտաբերելով, ասես թե բառիս ամեն մեկ վանկը տապարի սուր-սուր հարվածներ լինեին ու բուռերս սնդամած Դոողղովի վրան վազեցի, որ մի քանի ապտակ տամ: Դոողղովը հասկացավ միտքս ու թուրը մերկացուց, և մերկացուցած թուրը ձեռքին, քաշվեցավ Սոֆիայի ետևը՝ երեսը նորա ճոխ շինիննի մեջ թաքցնելով: Ասատուր-աղան սաթե կտուցով ծխամորճով— նա պապիրոս քաշելու սովորութուն չունեեր— վրաս վազեց:

— Պարոն Ասատուր,— ասացի կատաղած, եթե էլի մեկ քայլ ես արել դեպի ինձ՝ հենց կեցած տեղդ կխեղդեմ:

Սոֆիան բարկացած երեսը ինձ դարձրած և ձեռքերը բարձրացած՝ անվախ կանգնած էր առջևս ու պատրաստ էր մինչև վերջին շունչը պաշտպանելու Դոողղովին:

— Գնա՛ կորիք մեր տնից, ցա՛ծ հոգի,— ասաց ինձ,— ի՞նչ ես ուզում մեզանից. գնա՛, գնա՛, մենք քեզ ատում ենք՝ թքում եմ քու վրա. այո՛, այո՛, ամենքդ էլ առմեաշկաներ եք, դու էլ առմեաշկա ես...

Մեկ ըոպե ևս շփոթվեցա. ձեռքերս թուլացան և լեզուս պապանձվեցավ, բայց այդ շփոթս տևեց միայն մի ըոպե, ճիգ արի, ուժս ժողովեցի ու...

— Օրի՛որդ,— ասացի,— եթե այդպես է՝ ես էլ քեզ արհամարհում եմ, դու ազգուրա՛ց ես, հայության սուրբ անունը ափսոս է, որ քեզ նման ապականված կնոջ վրա լինի: Թո՛ւք, մո՛ւր և խայտառակությո՛ւն այս անիծված տան վրա: Ու հետո՛ խոսքս դարձնելով Դոողղովին՝ ասացի.

— Դոողղով, դու ինձ հետ պիտի մենամարտես, և որքան շուտ՝ այնքան լավ...

— Ես չեմ մենամարտիլ ձեզ հետ,— ասաց նա ետև ու ետև քաշվելով:

— Չէ՛, կմենամարտիս, անասո՛ւն դու,— ասացի ու վրան վազեցի:

— Չէ՛, չեմ մենամարտիլ,— ասաց նա,— այժմ սաստիկ արգելած է մենամարտությունը: Եթե ինձմեն անբավական եք, հաշտարարին հայտնեցե՛ք:

— Ես քեզ կստիպեմ մենամարտելու,— ասացի, վրան վազե-

ցի ու ապտակ տվի, բայց սաբաբախաբար, այդ միջոցին Սոֆիան այնքան մոտիկ կանգնած էր Դոողղովին, որ ձեռքս նորա երեսին կպավ: Շինիոնը թռավ գլխեն, Դոողղովի բնծայած օղերեն մինը ականջե պուկ եկավ ու զլորվեցավ դեպի տան խորը և խեղճ աղչկա երեսին էլ հինգ մատիս հետքը կարմիր գույնով տպվեցավ: Տեսնելով որ Դոողղովը պիտի ազատվի ձեռքես, մի կողմ մղեցի Սոֆիային, բռնեցի նորա մերկացուցած, բայց գուլ թո՛ւրը և երեք շաղ-շաղ ապտակներ ձեփեցի նորա թխիկ թշերին:

— Հիմի կմենամարտի՛ս,— ասացի:

Այդ միջոցին Ասատուր-աղան սենյակից դուրս էր գնացել մարդիկ օգնություն կանչելու. մինչև նա մարդիկ կժողովեր, մինչև կվերադառնար, ես սենյակից դուրս գնացի: Նախասենյակում կանգնած էր Կատյան՝ վերարկուս ձեռքին:

— Ղոչա՛ղ, Վարդան-ջան, ջա՛ն Վարդան, օխա՛, մեկ էս ա, որ շիգրեքս հանեցիր,— ասաց ու ուսերիս ձգեց վերարկուս— Աղա, էն դռնից մի՛ երթալ, մարդիկ կան, կբռնեն, եկ էս գումանից դուրս գնա,— ու ցույց տվեց այն դուռը, ուստի ծառաներն էին ելումուտ անում: Երբ որ հեռավոր դռնով Ասատուր-աղայի բնակարանից դուրս եկա ու մտա փողոց՝ տեսա շատ մարդիկ, որ ժողովված էին նորա դռան առաջ:

Շփոթս փարատելու համար մի դարաբաղցի վարձեցի ձի ու գնացի դեպի գերեզմանոց կոլոնիան և մինչև գիշերվա մութը աննպատակ շափ էի տալիս Տաք-ջուրի շրջակա սարերի, ձորերի ու անտառների մեջ: Կես-գիշերը անցած էր, որ քաղաք եկա, մտա սենյակս և պայան գիշեր առաջին անգամ հանգիստ ոգով մտա անկողինս:

Հուլիսի 8. Էսենտուկ:

Ահա քանի օր է, որ էսենտուկումն եմ՝ մի հյուրանոցի սիրուն սենյակի մեջ տեղավորված. բայց ո՞վ ինձ այստեղ բերեց-չգիտեմ: Մառան ասում է թե՛ երեք օր ուշաթափ էի. բժիշկները կարծել են թե անպատճառ կմեռնեմ— անգամ վտանգելի հիվանդ եմ եղել:

Վերջին անգամ որ Ասատուր-աղայի տանից աղմկով կոփով դուրս գնացի՝ բուրբ գիշերը անցուցի խոնավ օդի մեջ ու թեթև հագված, գիշեր որ տուն եկա հոգնած՝ իսկույն քնեցա, բայց մյուս

առաջատ միայն զգացի, որ կովկասի անիծած դողցուցը ինձ բռնեւ է. հայեւիին մտեցա, տեսնեմ՝ երեսիս գույնը մեռելի գույն է: Շուտ-շուտ հագվեցա (բոլոր ժամանակը բառաւս ատամիս շէր գիպլում, այնպէս սաստիկ դողում էի), մտա Բայթի գեղանոցը, բավականին մեծաքանակ քինաքինա կալ ափի ու զնացի Դոող-դովի տան առջև կանգնեցա ու սպասում էի նորա գուրս գալուն: Քեկ ամբողջ երկու ժամ անպտուղ սպասեցի, բայց պատրաստ էի այլևս տասներկու սպասելու, որ նորա չրբութունը անպտուղ հաս չթողնեմ: Ժամը տասնին, տեսնեմ սանդխտից ցած է իջնում նա: Արախութունից սիրտս սկսավ սաստիկ բարբախելու: Երբ որ նա փողոց մտավ, ես էլ իսկույն եկա կանգնեցա նորա առջև:

— Պարոն Դոողդով, զենքդ հետդ է,— հարցուցի,— ժամանակ է մեր մենամարտութունը վերջացնելու:

— Պարոն, ես ձեզ արդեն պատիվ ունեցա հայանելու, որ շեմ մենամարտի, օրենքը խտտիվ արգելում է մենամարտութունը,— պատասխանեց ցած ձայնով Դոողդովը:

— Պարոն Դոողդով,— ասացի, բայց նույն օրենքովն նմանապէս սաստիկ արգելված չէ՞ր նախատինք անելու այն ազգին, որն բացի լավ գործերն ոչինչ արած չունի յոր պատմական կյանքի մեջ, զեթ մուսայ իշխանության տակ. եթէ գու մեկ օրենքին այդքան հեռադեմ է, ինչու՞ մյուսը այնպէս լրբաբար անակոխ արիր:

— Ես չեմ մենամարտի,— ասաց Դոողդովն ու ձայնը, ասեց թէ արդեն փորձեցն էր գուրս գալիս:

— Բայց ես քեզ կստիպեմ՝ մենամարտելու, մասցի ես, ու արյունս սկսավ նորից ետ գալու:

— Չե՞ք կարող ինձ ստիպել. օրենքը ձեզ կգատապարտե. ձեզ կբանտարկեն, կաքորեն...

— Թող զնեն ինձ բանա, թող աքսորեն ինձ, ասացի կատաղած, զնա՛, զանգատե՛ վրաս ո՛ւր ե ուզես, ո՛ւմ ե ուզես, ու սկսեցի կարկոտի նման թափեցնել նորա թշեթին, գլխին, սւսին, կրծքին, վզին ապտակներ և մուշտիներ:

Երբ որ վրեժս հանդարտացրի ու ձեռքս էլ թուլացավ, Դոողդովը գետնից բարձրացուց ընկած գռակը, վրայի ճմոթած հալավը հարգաբեց, շորս կողմը նայեցավ ու ասաց. գլուխ է որ ոչ-ոք չաւսալի ու փախալի:

Այն էր, որ նորան տեսել էի, էլ աչքիս շերտեցավ շատ երկար ժամանակ:

Կամաց-կամաց զնացի դեպի ճեռելիք և դժվարով հասա նրատարանին: Երեկ այդտեղ եեթ թալկացել ընկել եմ, և բարի մարդ գտնվել է, որ բերել հասուցել է ինձ այստեղ:

Հուլիս 15.

Հիվանդութունս շարունակվում է. զրույս ցավում է. ականջներս մեջ մեկ՝ սամավարի խշխշոց է լսվում, մեկ՝ զանգակի ձայներ. լեզուս պղտոր է. երեսիս գույնը դեղնած՝ կանաչ ցուրով:

— Է՛հ, եղած-չեղածը մեկ մահ չէ՞. կրեռնիմ ու կարծենեմ աշխարհիս ցավ ու դարդերից... Տե՛ր Աստված, մի՞թէ պիտի մեռնիմ. տակավին ի՞նչ կյանք վայելել եմ, որ այդպէս շտապով թողնեմ՝ աշխարհքս ու հեռանամ: Հիկ տարիս անցավ ծանր աշխատանքի և կենամաշ չբավորության մեջ. եթէ առջև խաբուսիկ հույսեր չլինեին՝ կյանքը ինչու՞ պիտի զանազանվեր հանցավորի արգելանքից և կամ նորա բռնադրոս տաժանական աշխատանքից. միայն հույսն էր, որ փոքրիշատե պահպանում էր իմ ոգին և տալիս էր ուժ ամեն օրվա զրկանքս համբերությամբ տանելու այժմը այն հույսն էլ կորուսվ. այսուհետև էլ ի՞նչ կապում է ինձ այս կյանքի հետ: Ես Սոֆիային շեմ մեղադրում իմ թշվառության մեջ և ոչ Աստուր-աղային. նոքա ինձ երբեք ստապատիր հույսերով սնուցած չէին: Ես Դոողդովին էլ շատ շեմ մեղադրում. իմ գժտությունը Դոողդովի հետ բուրբուրեց ուրիշ աղբյուրն բխեցավ. միայն թե ոչ ոք չզբոտե այդ: Ո՞րի համար կենամ. որի՞ն պետք է իմ կյանքը... Իսկ Կատյա՞ն... Չէ՛, Կատյան իմ սրտի մեջ այն տեղը չէ կարող բռնել, որն պիտի բռներ Սոֆիան: Ինչու՞ ինքս ինձ խաբեմ. ես Կատյային միշտ կսիրեմ ինչպես բարեկամ, ինչպես քույր. բայց ինչպես կին սիրել չեմ կարող նորան. եթէ ասեմ թե կսիրեմ, խեղճ աղջկանը խաբած կլինեմ: Մեր մտավոր զարգացումը զանազան է. մենք միմ միմի հաճասար չենք. նա ինձ ընկեր-կին, բարեկամ-կին լինել չէ կարող, նա իմ ստրուկը կլինի: Ստրուկին կարելի է մեղադրել, դեպի նա գութ ունենալ, խնայել, բայց սիրել երբեք չէ կարելի. բայց նա ինձ սիրում է, և ինչպե՞ս քնքուշ սիրով, արդար սրտով է սիրում... Խե՛ղճ ազգիկ: Ժամանակից-ժամանակ միտքս է գալիս, թե ո՞րքան նա տրտում էր, երբ որ ինձ փոքր է

շատե սիրում, պատվում ու գուրգուրում էին Ասատուր-աղայի տանը և ի՛նչ ուրախութուն էր սկսում ցուլալ նորա աչքին, երբ ակներև արճամարճանք էին ցույց տալիս նոքա ինձ:

Այս խորհրդածութունների մեջ էի, որ մի հասարակ ոռու մարդ ձեռքս մի նամակ տվավ: Բացի ծրարը, նամակը կարդալու չի սկսած, ուզացի իմանալ ո՞վ էր գրողը, նայեմ՝ ստորագրված է Էատարինե Մերզանյան. Ա՛, ասացի, Կատյայից է ուրեմն այս նամակը, նայենք ի՛նչ է գրում:

(Սիրեկան Եղբայր Վառդան)

Ես գիտեմ, որ հրամանքդ ձեռքդ հազիր փող շունես Մոսկով և կամ քու տեղը գնալու, եթե երթաս էլ իսկույն զուլուղ շես զրտեհիլ, ուրեմն մի փոքր ժամանակ փողի նեղութուն պետք ա քաշես: Ես էսպես միտք արամ, որ դու լավն էն ա ինձ պարտք մնաս, քանց մինի-մյուսի առաջ զլուխդ ծռես: Էդ պատճառով ես նամակիս մեջ տիրամ 200 ոտրլի (և իրավ որ նամակի հետ այդքան փող կար), որն ունեիմ փայած իմ ժալովներից: Ես դուրս եկամ աղա Ասատուրի տանից, հիմի գընըմ եմ Հաշտարխան: Խընդրըմ եմ չի բարկանաս վրես, որ համարձակվեցա քու գործերի մեջ խառնվելու: Ինձանից քոմակ ստանալը դու քեզ համար ցածութուն մի՛ համարիլ. բալքի մեկ օր էլ դու ինձ պետք դաս. «տաք հացը փոխ ա» — ասըմ ա հայի խոսքը: Երեկի, Ասատուր-աղայի տանը նրա աղջկա Սոֆիայի նշանտուքը կատարվեցավ Ֆլան Դոռզղով աֆիցերի հետ. բավական շատ վայենըլներ կանչած էին, հայ ո՛ր մեկ հոգի չկեր. քահանեն էլ ոռուսի էր: Աֆիցերները շատ խման, շատ անհամ բաներ արան. իրանց էնպես պահըմ էին Ասատուր-աղայի տանը, կարծես թե դաբազըմը իլեին. Սոֆիայի երեսին էին ծիծաղըմ, ասելով՝ «բախտավոր պսակի արժանի լինիս»: Դոռզղովն էլ փիս քցած էր. հետվան ինձ հետ էլ ուզում էր լիրք վարվիլ. ամա ես շատ շիհամբերամ, քեզ նման ես էլ նրան մեկ լավ սիլլա տըվամ ու փախամ: Հիմիկ գաստիննիցումն եմ. մեկ նումրա եմ փըռնել առ ժամանակի, և մեկ սահաթից գնալու եմ Միներալնըլ ստանցին: Դե՛հ մնաս բարով, Վարդան ջան, դոշաղ կացիր, ումուտդ մի՛ կտրիլ աստվածանից, որ ես էլ քու բախտավորութունդ լսելով՝ միշտ ուրախանամ:

Մնամ խոնարհ աղախին քո

Եկատերինե Մերզանյան

Տաֆ-ջառ

18** հուլիսի 14.

Նամակաբերին որքան և աշխատեցա հարց ու փորձ անելու Կատյայի մասին ինչ ու ինչ կարևոր գիտելիք, բայց նորանից ոչինչ չիմացա, բացի այն թե՛ մի աղջիկ տվել է նորան այս նամակը և պատվիրել է ինձ հասցնելու. ինքն էլ պատրաստված է եղել գնալու յուր քաղաքը. այժմ, անշուշտ, Տաք-ջուրից դուրս ելած պիտի լինի: Ավել ոչինչ չկարողացավ պատմելու, վասնզի ինքն էլ ավել բան չգիտեր: Այս էլ ավելացրեց նամակաբերը, որ աղջիկը իրան էլ ընծայել է հինգ մանեթ:

Աչքերիս չէի հավատում: Առանց այլևայլության այս նամակը Կատյայի իրա գրածն էր. բայց ես հինգ տարվա մեջ իմացած չէի, որ նա գրել-կարդալ գիտե, ո՞վ և ե՞րբ սովորեցրել էր նորան — խելքս բան չէ կտրում: Ես սովորեցրած չեմ, այդ շատ լավ միտս է, եթե Սոֆիան սովորեցներ, անշուշտ, հաղար անգամ արդեն ինձ ասած կլիներ: Երևի ինքն իրան էր սովորել. թաքուն առնելով Սոֆիայի գրքերը և պատի ետևից լսելով Սոֆիային ասածներս ու միտք պահելով: Բայց այս փո՞ղը: Մի խեղճ նաժիշտ խնայողությամբ, մսից կտրելով, կոկորդից խլելով, յուր աղքատիկ ոռճիկը կոպեկ-կոպեկի վրա դնելով՝ երկու հարյուր մանեթ դարձնել (որ մի որբ աղջկա համար անհագին գումար է) և այդ հինգ տարվա աշխատանքի պտուղը մի օտար մարդու տալ — այս ոչ թե սիրո, այլ կանացի դուրցադնության նշան է: Ա՛խ, Կատյա, Կատյա՛, ինչո՞ւ քեզ ուղ ճանաչեցի. ինչո՞ւ իմ աչքերս մինչև այժմ կույր էին. ո՞րպիսի մեծ հոգի ունիս դու ամփոփված մի համեստ անձնավորության մեջ, ո՞րքան փոքր եմ ես քու առջև...

Այժմ ես սկսա կամաց-կամաց հասկանալու, թե ինձ Տաք-ջուրից էսենտով ո՞վ բերած պիտի լիներ, ո՞վ վարձած պիտի լիներ, այս սենյակը և ո՞վ պիտի ժողոված և այստեղ բերած լիներ իմ առարկաներս:

Գնացի տանտիրոջս մոտ և հարցուցի.

— Ասացե՛ք, խնդրեմ, ինձ հիվանդ-հիվանդ ո՞վ այստեղ բերեց և ո՞վ վարձեց այս սենյակը:

Տանուտերս ասաց.

— Մի դեռահաս կնիկ բերեց ձեզ այստեղ, վարձեց ինձանից այս սենյակը և մի ամսվա բնակարանի և կերակուրի վարձը կանխիկ վճարեց. շայ, շաքար, սուրճ, ճրագ, օճառ ևն. նմանապես նա

բերեց ձեզ համար: Ձեր կտավիբը նա ժողովեց, տվեց չվացարարին լվանալու, որի համար փողը նմանապես կանխիկ վճարեց նորան, և ամենիս խստիվ պատվիրեց, որ ձեզանից երբեք փող չպահանջենք, անհանգիստ շանենք ձեզ: Եթե գուց ամսոսից ավելի մնալու լինիք՝ պատկանչալ փողը նա կհասցնե մեզ: Բայց շասաց յոր անունը, և աղաչեց որ նորա մասին ձեզ ոչինչ չասենք:

Այսպիսի քնքուշ վարմունք, այսպիսի մարգավարություն, այսպիսի մարդասիրական ընթացք միայն կարելի էր կրթյալ եվրոպացի կնոջն սպասել, բայց մի հայ աղախինն՝ որի սպասավորությունը մի հարուստ վաճառականի տան մեջ ոչինչով չի գանաղանվում անբարոյականացնող ստրկությունից, առաջացած, այդ ամենը, պետք է հոժարել որ՝ գրեթե մի անհավատալի մեծագործություն է: Ես արդեն դադարեցա Կատչայի վրա նայելու ինչպես մի հասարակ հայ կնոջ վրա. ես նշմարում էի նորա մեջ երկու անգնահատելի հատկություններ՝ կորովամտություն և ազնիվ արյուն: Այդ կոպիտ կեղևի մեջ, եթե աշխարհք էլ ինձ հավատացներ, որ անազնիվ սերմ կա՝ ես չէի հավաստալ: Մարգուս մեջ կան այնպիսի հատկություններ, որոնք պատահական և ստացական չեն, այլ ծննդական ժառանգություն են ծնողներեց: Այժմ որ Կատչան աչքերես հեռացավ, ուրեմն և նորա հիշատակը ինձ համար թանկ է՝ միտքս բերելով նորա ամեն խոսքը, վարքը և բնավորությունը՝ սկսում եմ գնահատելու նորան և բարձր դասելու Բայց անագուն ստրկութենից ի՞նչ շահ, գուցե մյուս անգամ երբեք նորան չտեսնեմ. գուցե նա ինձ արդեն արհամարհում է ինչպես անզգա, ապերախտ և պակասամիտ մարդ: Ի՞նչ պետք է մեղքս ինքս ինձմե՞ն թաքցնեմ, ես ևն ապերախտությունը հատուցել եմ Կատչայի ամեն մի մարդավարի վարմունքը ինձ հետ: Ձէ՛, ինքս ինձի խոսք եմ տալիս՝ հենց որ առողջացա, խեղճն գտնել այդ աղջկան և...

Սոֆիայի հիշատակը ոչ թե ջնջվել է մեջս, ո՛չ, այլ նա երկվում է իմ կյանքի թերթերի մեջն իբր ազճատած, արատավորած ու զզվելի թերթ, ուր գրված է իմ բարոյական անկումը, իմ անթալի ախտերը և իմ ամենամեծ թշվառությունը: Միայն այժմ ես լիապես հասկացա, թե կիրքը մինչև ո՞ր աստիճան կարող է մարդու ստորացնելու, կուրացնելու. ես միայն այժմ հասկացա, որ սարսափելի անբախտություն է այն ամուսնությունը, ուր խոհեմ սիրո տեղ թագավորում է կույր կիրքը:

Նույնի 29.

Երբ որ առողջութունս մի փոքր կազդուրվեցավ առաջին գործը այն եղավ, որ նորից գնացի Տաք-չուր (էսենթուքից 12 վերստ հեռի է), ամբողջ շաբաթ գործածեցի պտերևով Կատչային, էլ ո՛չ մի տուն, ո՛չ մի բնակարան, ո՛չ մի հյուրանոց չթողի, ո՛չ մի ծառ, ո՛չ մի աղախին, ո՛չ մի կառուպան չթողի, ամեն տեղ և ամենին հարցուցի, հարց ու փորձ արի, փնտրեցի, բայց չկարողացա Կատչային գտնելու: Ո՛չ մի ճեպակառքի քոնդուքթոր և ո՛չ մի կառուպան չկարողացավ ինձ տեղյակ պատմելու թե՛ այս ինչ նշաններով աղջկա ուր և իցե տարել է: Նամակներ թուրքի մերձավոր իջևանները, հեռագիրներ քաշեցի զանազան քաղաքներ, բայց ոչինչ բավարար պատասխան չի ստացա. «չը գիտենք, լսած չենք», ահա այս այն պատասխաններն էին, որն ես ստանում էի իմ աղաչանքով լցված ամեն մի նամակին: Կորա՛վ, կորա՛վ ինձ համար Կատչան և ինձ շարժանացուց գեթ խոսքով շնորհակալիքս լսելու: Հաշտարխանցի բարեկամներս էլ ինձ ծանուցին, որ այդ անունով աղջիկ չեն ճանաչել երբեք և այժմ էլ Հաշտարխանի մեջ չի կատե Թեև Կատչայի մասին ոչինչ տեղեկություն ստանալ չի կարողացա, բայց Սոֆիայի մասին շատ բաներ լսեցի, և այժմ ես հետըզհետե յսում եմ:

Այն օրը տեղի ունեցած չէ՛ մատանեփոխությունը Դոողզովի հետ, բայց երեք օրից, ինչպես որ Կատչան էլ հիշում էր յուր նամակի մեջ, մեծ խայտառակությունով կատարվել է: Ասատուրաղան ասել է Դոողզովին որ ճես հայեր հրավիրելու չեմ. ես այսուհետև նոցա հետ ամեն բարեկամական և արեևակցական կապերս կտրելու եմ. դու հրավիրե քու ծանոթներին և բարեկամներին իմ տուն, և միասին ուրախությամբ կատարենք դստերս հարսնախոսություն ծեսը ուսաց քահանայի օրհնությունը»: Իսկ Դոողզովը գնացել է մի քանի յուր նման սպաների մոտ և ծիծաղելով հրավիրել է նոցա «մի ճոխ գինեբուրքի», որն պիտի կարապետե նորա ճբաղաքական ամուսնությունը». և քահանային պատվիրել է, որ զա և յուր տիրացուների հետ միասին ճբազում ամք» բարեմաղթե վլադիմիրին և Սոֆիային, մատանեփոխության մասին ոչինչ հիշված չէ՛: Թեև սպաները այդ օրը շատ խայտառակ վարել են իրանց, բայց Դոողզովը աշխատել է թեթևացնել նոցա հանցանքը՝ պատճառաբանելով գինիի առատությունը: Այսպես բոլոր տնեցիք

խարվել են և կարծել են թե օրինավոր կերպով կատարվել է Սոֆիայի մատենափոխության ծեսը, և միամտվել են:

Մի քանի օրից եկել է Դոնոզդովը Սոֆիայի մոտ և ասել է թե՛ եթե հայրս իմանա, որ ես մի հասարակ հայ աղջկա վրա պետք է պսակվիմ՝ երբեք չի տալ յուր հոժարությունը և օրհնությունը, իսկ եթե ես հակառակ նորա կամքին երթամ՝ անպատճառ կզրկե ինձ այն միլիոններեն, որն պիտի ժառանգեմ ետ նորա մահվան. բայց եթե ես գաղտնի կերպով պսակվիմ և հետո գամ ընկնեմ նորա ոտքերը՝ նա ինձ կնեղե, չի զրկիլ ոչ օրհնությունեն և ոչ ժառանգությունեն. ուրեմն՝ այժմ մեզ ուրիշ բան չի մնալ անելու, բայց եթե փախչել Փարիզ և այնտեղ պսակվել: Այժմ դժվարությունը այն է, որ ես այդ ճանապարհորդության համար փող չունիմ: Եթե դու ինձ անկեղծ և մտերմաբար սիրում ես՝ պարտավոր ես ինձ մի աննշան զոհ բերելու, որ է՝ հորդ դրամարկղը թաքուն բանալ և միջից որքան կարելի է շատ փող առնել, և ժողովել քու թանկագին զարդերը ու ակնեղենները ու գիշերով փախչել տանից»:

Սոֆիան առանց ընդդիմախոսության հոժարել է նորա առաջարկությանը, հավաքել է յուր բոլոր և մասամբ մոր ակն ու մարգարիտները, դրել է մի արկղիկի մեջ, թաքուն բացել է հոր դրամարկղը, միջից հանել է քսան հազար մանեթ և նույն օրն Դոնոզդովի հետ միասին փախել են Ստավրոպոլ, այնտեղ մի պանդոկոմ մնացել են երեք օր և ապա շինծու անցագրով գնացել են Փարիզ:

Հայրը իմանալով այս փախուստը (Սոֆիան բոլոր այս հանգամանքը նամակով հայտնել է նորան) ամենևին շփոթված և բարկացած չէ, այլ ընդհակառակն, անցնող-դարձողին պատմել է թե՛ արիստոկրատների մեջ այդպիսի ուժանտիքական պսակը շատ սովորական բան է և հաճախ կպատահի, և բոլորովին հանգիստ սրբտով սպասում է եղել յուր սիրական դստեր և ազնիվ փեսայի վերադարձը քանի մի շաբաթից:

Այստեղ վերջանում է բժիշկ Վարդան Հուսիկյանի հիշատակարանը, որ ես էսենտուկի պառավից գնեցի տասնհինգ մանեթով: Բայց, ինչպես ներողամիտ ընթերցողս տեսնում է, պատմությունը թերակատար է մնում: Ինձ շատ հետաքրքիր էր իմանալ՝ արդյո՞ք այս ճշգրիտ դեպքը ինչո՞վ վերջացել է, ի՞նչ եղան ազնվահոգի Կատյան, թեթևամիտ Սոֆիան, հայատյաց Ասատուր-աղան և ան-

բարոյական Դոնոզդովը. կենդանի՞ են, ո՞ւր են. ի՞նչ վիճակի մեջ են. եթե մեռած են, արդյո՞ք ի՞նչը կարճեցուց նոցա կյանքը այդ ծաղիկ հասակի մեջ (հիշարկե, բացի Ասատուր-աղայից), նոքա էլի միմյանց հանդիպեցան, թե՛ առ հավիտյան բաժանվեցան իրարմ և մյուս անգամ մեկ մեկի երես չտեսան:

Հայկական կյանքը ցայն աստիճանի միաձև, առօրեական և ձանձրալի է, որ փոքր ի շատե սովորականեն դուրս կենցաղ վարող հայր միշտ շարժել է իմ հետաքրքրությունը. ես միշտ ցանկացել եմ իմանալու՝ ի՞նչ է եղել պատճառը, որ նա ընդհանուրի օրինակին հետևած չէ՝ և հայկական կյանքի սովորական ճանապարհեն խոտորվել է: Այդպիսի անձինք թե՛ առաքինի լինեին և թե՛ մուսկան, միշտ գրավել են իմ կարեկցությունը:

Շատ հարց ու փորձից հետո, մի օր հանկարծ հիշեցի, որ Ռուսաստանի բոլոր բժիշկների ցուցակը կա, որն ամեն դեղադոզ պարտավոր է ունենալու: Երբ որ այդ ցուցակը ձեռքս առի և այբուբենի կարգով գտա Վարդան Հուսիկյանի անունը. կարողացի որ նա Վ. քաղաքումը քաղաքական հիվանդանոցի զխավոր բժշկապետն է:

Բժիշկ Վարդանի բնակության տեղը իմանալեն ետ, արդեն դժվար չէր նորա և նորա ընկերների պատմությանը տեղեկանալու. պետք է միայն մի քաղաքավարի նամակ գրել նորան և հարցնել մանրամասն տեղեկություն տետրակի մեջ հիշած անձանց մասին, որ և արի իսկ: Իսկույն նստա ու մի նամակ գրեցի Վարդան Հուսիկյանին, որի բովանդակությունը այս էր, թե՛ պարոն բժիշկ, քու հիշատակարանը պատահամաբ ընկավ իմ ձեռք, որի համար փող վճարելով իմ սեփականությունը դարձրի: Բայց, ինչպես գիտեք հիշյալ հիշատակարանը պարունակում է քու, Կատյայի, Սոֆիայի, Դոնոզդովի և Ասատուր-աղայի կյանքի առաջին մասը, բայց ի՞նչպես շարունակվում է կամ վերջացել է մնացած մասը՝ ես չգիտեմ, բայց ինձ շատ հետաքրքիր էր իմանալ այդ: Եթե արքունական պաշտոնեղ ազատ ժամանակ ունիս, քեզ շատ կխնդրեմ, վրադ ծանրություն առնուս, մանրամասնաբար գրես վերը հիշած անձանց կյանքի մնացորդը, ուստի և ես կարողանայի եզրակացնել, թե ինչպես վերջացավ ձեր հարաբերությունը: Քեզ խոսք եմ տալիս, որ այդ պատմությունը ինչպես և այն տետրակը, որ մոտս է, մարդոցմե առմիշտ ծածուկ կմնա (պատվական կարդացողս տեսնում է, թե ինչպես ճիշտ կատարեցի խոստումներս):

Այս էր իմ երկար նամակի բովանդակութիւնը:
Երկու ամսից ստացա մի փոքրիկ տետրակ և հետը մի նամակ,
որն բառ առ բառ այստեղ առաջ կբերեմ:

ՊԱՐՈՆ ՍՅՈՒՅՈՒՆ:

Ձեր հիշած տետրակը իրավ ևս կորցրել էի, բայց չգիտեի որ նորան մոռացութեամբ թողել էի էսենթուրի Նյուրանոցի պահարանի մեջ: Եթե փող վճարել եք ու գնել եք՝ կնշանակե որ նա ձեր անկողնուստի սեփականութիւնն է և ես իրավունք չունիմ ձեզանից պահանջելու: Ճշմարտութեամբ հարկավորութիւնն էլ չունեմ: Եթե ձեզ, պետքական է՝ պահեցեք ձեր մոտ, միայն թե ցույց մի տաք մարդոց՝ ևս չուզեի որ հաշտարխանցիների բարոյական թերութիւնները, որն ևս անխնայարար մտրակել եմ, հոշակվի մյուս հայերի մեջ, թեպետև գրավոր կերպով մարդկութեան պակասութիւնները ցույց տալը, բացի օգուտին, ուրիշ բան հառաջացուցած չէ՛:

Թեև ինձ շատ դժվար էր մտքով վերանորոգել տխուր անցյալիս հիշատակարանները, բայց որովհետև դուք համոզիչ խոսքերով խնդրում եք ինձ՝ ևս չկարողացա մերժել ձեր խնդիրը, ուր դուք նյութական շահ չունիք: Բայց եթե այս նոր հիշատակարանիս մեջ հայկական լեզվի դեմ սխալներ գտնեք՝ շատ մի՛ մեղադրեք ինձ: Այս քանի տարի է, որ ես ո՛չ հայի գիրք առել եմ ձեռս, ո՛չ հայի երես եմ տեսել և ոչ հայի ժամերգութիւն եմ լսել: Միայն կատյաս է, որ իմ հայ լինելս միտս է ձգում: Եթե նա չլիներ՝ կրոն, ազգային ծեսեր և ավանդութիւններ և հայոց լեզու բոլոր ցնչած կլինեին իմ մեջնն:

Չեմ ուզում ձեզանից թաքցնել. ես սաստիկ դառնացած եմ հայերից: Առաջները ես կարծում էի թե՛ անհնար է միայն հայ ազգի բահանա և վարժապետ լինելը. այժմ տեսնում եմ, որ հայ բժշկին հայ քաղաքի մեջ պաշտոն վարելն ևս դժվար է, եթե չաւան անհնար է: Այդ ևս բավական չէ՛ մի հայ աշխատավորի հայ քաղաքի մեջ յուր գիտութիւնը մշակելն ևս դժվար է: Ես ինձ համար մեկ առած եմ շինել, որի կազմվածքը թեև բանաստեղծական ոճի գեղեցկութիւն չունի, բայց նորա մեջ բովանդակած իմաստը զուտ ճշմարտութիւնն է «եթե հայից ապրուստ սպասես, ունեցած քանքարդ անօգուտ կդարձնես»: Հայի մեջ գործող լինելու համար

մեկ կարի հարկավոր պայման է պետք, և այդ պայմանն է՝ հարստութիւնը: Հարուստ հայը, եթե կամենա, հայ ժողովրդի մեջ միշտ օգուտ կբերե, վասն զի հայ ազգը միայն հարստի խոսքին սովորել է հավատալու և հնազանդելու: Չբավորի խոսքը երբեք արձագանք գտած չէ՛ և գտնելու էլ չի՛ հայի սրտի մեջ:

Երբ որ ես բժշկապետութեան հարցաքննութիւնս ավարտեցի, քանի քանի հայաբնակ քաղաքներ գրեցի չէի՞ն կամենալ արգոյք ինձ քաղաքական բժշկի պաշտոն տալ. և բոլոր նամակներս անպատասխան մնացին: Երբ որ ուսաց քաղաքներ գրեցի, գրեթե ամենից հրավերներ ստացա, մինը մյուսից օգտավետ պայմաններով: Ես ընտրեցի Վ. քաղաքը, ուր ահա վեց տարի է, որ փառքի, պատվի և ճոխութեան մեջ ապրում եմ իմ փոքրիկ հայ ընտանիքովն: Բայց ինչո՞ւ ես այս մասնավոր նամակիս մեջ թափում եմ իմ սրտի ցավն ու դարտը. էրկու տետրակներովը բավականին գրել եմ այդ ծանձնալի նյութի վրա... Կատյաս ձեզանից հոգով շահի շնորհակալ է, որ դուք նորա և իմ կյանքովս հետաքրքրվում եք:

Ողջ և հաջող եղեք:

Բժ. Վարդան Հուսիկյան

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՏՐՈՆ

Ամիս ու կես իզուր պտրելով Կատյային և ամեն աշխատանքս կորած տեսնելով՝ ես բոլորովին ատեցի կյանքը, վասնզի կյանքը մեզ այն ժամանակ է քաղցր, երբ որ նա մեկ թանկագին էակի կամ մեկ քաղցր հուշի հետ կապված է. իսկ եթե ոչինչ սուրբ կապեր չունի՝ կյանքը դառնում է մարդու համար անտանելի բեռ:

Մի օր տխուր նստած էի սենյակի մեջ, ուսանողական տարիներս հիշողութեանս առջև կարգավ անցնում էր. հանկարծ պրոֆեսորներիցս միին խոսքը միտքս եկավ թե՛ ձանձրույթի դեմ ամենահզոր դեղը աշխատանքն է: Իսկույն մտքիս մեջ խորհուրդ ծագեցավ. «արի նորից գնամ Մոսկով, առաջի ինքս ինձ, շարունակեմ ուսումս և բժշկապետի հարցաքննութիւն տամ: Եթե մի առանձին շահ էլ չունենամ դորանից, գոնե կմեղմացնեմ ձանձրույթս և վիշտըս, որ մաշում եմ իմ կյանքը»: Ինչպես ասացի, այնպես էլ արի: Նույն երեկոյին ժողովեցի իրեղեններս, դրի պայուսակի մեջ, մյուս

առավոտ կանուխ զարթեցա, թեյս խմեցի ու ընկա ճանապարհ: Զորս օրից հասա Մոսկով, Մոսկով— գետակի մյուս կողմը վարձեցի բնակարանս ու վերանորոգած աշխուժով սկսա մասամբ քաղվածք անելու բժշկական գիտությունն առարկաները և մասամբ այցելելու լսաբանները և մասամբ թեթև վարձատրությունով մերձավոր թաղերի հիվանդներին դարմանելու: Ստացածս շատ չէր. բայց իմ այս ժամանակվա սակավապետ կյանքիս համար բավական էր: Ժամանակիս մեծ մասը անցնում էր սովորելով: Այդ միջոցին շարագրությունս էլ բավականին հառաչացել էր:

Բժշկապետության աստիճան ստանալու համար ես ինքս ինձի երկու տարի ժամանակ էի որոշել, տարի ու կեսը պարապելու և հարցաքննություն տալու, իսկ մնացած կես տարին ուսումնական շարագրությունս գրելու, մշակելու և պաշտպանելու համար. տարի ու կեսը անցել էր և ես մի քանի առարկաներե հարցաքննությունս հաջողակ տվել էի: Այդ միջոցին մեկ աշնան գիշեր հանկարծ դուռս ծեծեցին և հրավիրեցին ինձ մի ծննդկանի մոտ: Հիվանդը չբավոր էր, հետևա կառք չէին ուղարկել. և որովհետև հենց այն օրը կրկնակողմիկներս կարկատելու էի ուղարկել՝ ստիպվեցա թաց ու ցեխոտ փողոցների միջից բարակ կոշիկներով անցնել: Երկու ժամ շարշարվելից ետ, երբ նորածինին ընդունեցի ու առավոտյան ժամը երեքին ազատվեցա հիվանդից, դարձյալ ստիպված էի ոտով տուն վերադառնալու, վասնզի այդպիսի ուշ ժամանակ Մոսկովի հեռավոր և սակավամարդ փողոցների մեջ երբեք կառապաններ չեն լինում, իմ անբախտությունից վերելից էլ մանր և սառ անձրև էր գալիս, վրայիս բոլոր հալավը, կոշիկներս, գուլպաներս թաց էին, ջուրը, ինչպես ասում են, մինչև ոսկորներս էր հասել: Երբ որ տուն եկա, թեև իսկույն հանվեցա, կտավիքս փոխեցի, անկողինս մտա ու տաք-տաք ծածկվեցա, բայց բանը բանից արդեն անցել էր. մեկ սարսուղի դողում էի, մեկ կրակի մեջ էրվում էի բոլոր գիշեր քուն չեկավ վրաս և անդադար բանդագուշում էի. էլ ոչինչ չեմ հիշում: Երբ նորից աչքս բացի, ինձ տեսա պառկած քաղաքական հիվանդանոցի մեջ: Յոթ օր (մոտիս պառկած մեկ հիվանդի ասելովն) բժիշկներն ամենևին հույս ունեցած չեն, որ ես կենդանի կմնամ. մահճակալիս տախտակի վրա գրած էր լատիներեն Typhus recurrens, որն այդ միջոցին Մոսկովի մեջ սաստիկ կոտորած էր անում:

Ես, ինչպես տեսնում եք, թեև շփեռա, բայց իմս էլ ինձ հասավ. մարմինս բոլորովին հալել էր. վրաս մնացել էր միայն ոսկոր և կաշի. եթե ինձ կշռեին՝ փութ ու կես կամ լինեի, կամ ո՛չ: Այսպես անցան աշունը և ձմեռը. սկսեցավ գարունը: Բայց իմ տկարությունս անփոփոխ մնաց. ո՛չ վատթարանում էր առողջությունս, որ մեռնեի, և ո՛չ բարվոքվում էր, որ ազատվեի հիվանդանոցի անտանելի օդեն, սպասավորների ձանձրալի երեսներեն և իմ հիվանդ ընկերների սրտմաշուկ պատմություններեն,— ամենքը ինձ իրանց միևնույն ցավերն ու դարդերն էին պատմում ամեն օր, ասես թե իմերը ինձ բավական չէին:

Վերջապես հասավ ապրիլ ամիսը. ձյունահալքը սկսեցավ. արեգակը արձակեց յուր կենսատու ճառագայթները գետնի վրա. երկաթի նման կարծր սառույցները լուծվեցան ու քայքայվեցան. ձյունները հալեցան ու խոխոջալով հեղեղներ կազմեցին ու գլորվեցան դեպի գետը, օդը լցվեցավ տեղափոխիկ թռչունների և հավերի ձայներով, որոնք օրհնեցում էին նորածին գարնան գալուստը. ձյունի տակից գլուխները բարձրացուցին ձյունածաղիկը, արջի ախանջը, մանիշակը, վայրի քրթումը և բյուր տեսակ դալարիք և ծաղիկներ: Վեր, վայր, աջ ու ձախ— ամեն տեղ ուրախություն և բերկրանք էր. միմիայն իմ սրտումը յուր արմատները խոր տարածել էր վիշտը: Ո՞վ յուր ուշքը պիտի դարձնե մի խեղճ պանդխտի վրա, ո՞վ պիտի հոգար նորա մասին, ո՞վ մի թեթև ախպիտի քաշեր նորա անբախտ վիճակի վրա: Լուռ ու անտրտունջ արագ քայլերով մոտենում էի առջևս վաղ փորված գերեզմանին:

Մի այսպիսի պայծառ օր մեզ հիվանդներիս թույլ տվին ման գալու հիվանդանոցի պարտեզի ու բակի մեջ: Զբոսնելու ժամանակ հանկարծ տեսա մի գեղեցկադեմ, թանկագին հալավներ հագած կին, որ հեռվից ուղիղ դեպի իմ կողմն էր գալիս. երկու աղախին էլ կտավիքով լցրած մի ահագին կողով բերում էին նորա հետևից. երբ որ կինը ինձ մոտեցավ՝ աչքերիս չհավատացի, կարծում էի թե երազիս մեջ եմ. «Կատյա», ասացի. այդ դո՞ւ ես, ո՞րտեղից ես գալիս, ի՞նչ գործ ունիս այս անիծած տեղը, ուր ամեն ծակոժուկ զանազան տեսակ մահերով է լցված»: Իմ ձայնս երևի շատ փոխվել էր և խոպոտ էր դարձել, որ կատյան լսելով՝ սաստիկ վախեցավ:

— Տե՛ր աստված,— ասաց կատյան,— վարդա՛ն, մի՞թե դուք այստեղ էիք. այս ի՛նչ ողորմելի վիճակի մեջ եք. այս ինչպե՛ս

նության ձեռք կարկառեցի, երբ ականերն փաստերով ցույց տվի, որ քու կարծածի շափ անպիտան անարժան աղջիկ չեմ, այն ժամանակ դու սկսար առջև սողալու»: Իհարկե, եթե նա այսպես կարծեր կամ ասեր՝ պիտի մեղանչեր իմ առջև, վասնզի ես երբեք հարստության առջև ծունր դրած ու երկրպագություն արած չեմ. բայց միայն կանանց արտաքին փայլեն խաբվել են իմ աչքերը և ես այնքան խորագիտություն ունեցած չեմ, որ կոշտ կեղևի տակից նշմարեմ թաքուցած թանկագին ակր: Հայաստանի կիսավայրենի քաղաքագլուղի մեջ մեծացած, աչքս ճշխության և զեխության փայլին շնորհաբաժնի, կյանքի ամեն գեղեցկություններն զրկած՝ մի՞թե զարմանալի բան է, եթե Սոֆիայի արտաքին փայլն ինձ լուսավորության արգասիք երևեր ու ես բոլոր պատանեկական եռանդով անձնատուր լինեի նորան, ինչպես մեկ շնաշխարհիկ, եթերական էակի: Սիրելու համար պետք է բավականին հոգեկան զարգացումն. արդյոք ունեի՞ ես այդ, իսկ մարդու կիրքը շարժելու համար— կիրքը՝ որք շատերը, և գրեթե ամենքը մեր համազգիներեն ընդունում են զուտ սիրո տեղ— պետք է դեռահաս տարիք, եռացող արյուն, երեսի նախշուն տիպարք, աղվաշ աչքեր, թարմ թշեր— ահա պատրաստ է ասիական սերը, որի համար վարդն էլ յուր թերթիկները բացում է, սոխակն էլ արևազալից մինչև արևի մուտքը հնչեցնում է յուր դայլայիկները, սյուզն էլ հրեշտակի բերանից դուրս եկած ման ու ման է գալիս դալարազարդ ծառի պտուտը...

Իհարկե, ես այժմ զարդում եմ Սոֆիայից, և այս զարդանքի մեջ կա կշիռ և գիտակցություն. ես և միայն ես գիտեմ, թե մինչև ո՞ր աստիճան անբարոյական, անուղղա ու թշվառ արարած է նա. ես հրաժարվում եմ այն զգացումներին, որ անխոհեմաբար սնուցանում էր մեջս դեպի նա... Բայց այդ ամենը կհավատա՞ արդյոք հարստացած և յուր գինը արդեն ճանաչող Կատյան... Տեր աստված, տեր աստված, ինչպես անբախտ մարդ եմ ես. իմ սիրտը տակավին սիրո համը ու հոտը շռտած՝ պիտի ջախջախվի և անպտուղ թառամի. ինչո՞ւ, ինչո՞ւ: Մի՞թե՞ քսանհինգ տարեկան հասակիս մեջ ես արդեն աշխարհքես խաբված, նորա ամեն քաղցրութենեն զրկված պիտի համարեմ ինքս ինձ: Ինչո՞վ մեղանչել եմ մարդոց առջև: Կատյան վաղուց ինձ սիրում էր, և իմ հոգիս վկայում էր, որ նա մի օր ինձ պիտի հաղթե, ինձ էլ սիրել պիտի տա իրան— ինչպես որ կատարվեցավ իսկ.— բայց արդյոք մի օր նա

իմ երեսով չի՞ տալ այսքան ժամանակվա սառնությունս դեպի նորան և ձգտումս դեպի Սոֆիան. նորա հոգու մեջ բույն չի՞ դնիլ արդյոք հավիտենական կասկածը, որ իմ սիրտը կիսված է արդեն, կուսական անարատություն չունի... Ո՛չ, ո՛չ, Կատյան թող վստահ լինի (այս ամենը ես նորան հենց այսօր կասեմ), որ իմ սիրտը ամբողջ է, կիսատ չէ՛, ապականված չէ. այո, Սոֆիան նորան խոցոտեց, բայց չի կտրեց ու կեսը հետը չի տարավ: Այժմ իմ սիրտը բոլորովին բուժած է, ամբողջ է ու ազատ է. որին ես կուտամ՝ ամբողջ և առողջ կուտամ, և կուտամ, իհարկե... Կատյային վասնզի...

Այդ միջոցին Կատյան ուրախ դեմքով մոտեցավ ինձ.

— Դե՛հ, սիրական վարդան. զնա ներս ու պատրաստվիր, ես կերթամ, քեզ համար ինչ ասես հարկավոր բաներ կպատրաստեմ և իսկույն կվերադառնամ, որ քեզ ազատեմ այս ապականված, ձանձրալի տեղեն, որ քու կյանքը ամեն ռոպե ավելի և ավելի թուլանավորում է: Շատ համբերել ես, էլի մի փոքր համբերե, սիրտդ պինդ պահե՛՛ զվարթ կաց. տկարությունդ թող չի ընկճե քեզ. միայնակ եմ, անտեր եմ է՛լ մի՛ ասիլ. երկու առողջ ձեռքեր ամեն օր կաշխատեն քեզ համար և մեկ տաք սիրտ էլ ամեն ռոպե պատրաստ է քու արենաթոր, հիվանդոտ սիրտը գրկելու ու նորա մեջ կենսատու ջերմություն մտցնելու...

— Կա՛տյա ջան, Կատյա ջան, մի՞թե ես արժանի եմ քու այդքան գորովին,— ասացի ու ոտքերին փաթաթվեցա. Կատյա՛, մի՞թե դու ինձ կարող ես ներել: Մի՞թե ես արժանի եմ, որ իրավունք ունենամ ուղիղ աչքիդ մեջ նայելու. մի՞թե դու բացի արհամարհանքեն ուրիշ բան կը զգաս դեպի ինձ: Չէ՛, չէ՛, դու ինձ մի՛ խաբիլ, դու ինձ երբեք չես սիրել, վասնզի ես քու սիրտը խոր խոցել եմ,— ասացի ու երեսայի նման լալիս էի:

— Ի՞նչ իլավ քեզ, ի՞նչ իլավ, վարդան ջան, երեսա մի՛ լինիլ, մարդիկ կան, նայում են մեր վիրա, ամոթ է, տղամարդ իլիր, ղոշաղ կաց, այդ ի՞նչ փոքրոգություն է,— ու գրկեց ինձ, գետնեն բարձրացուց.— նի՛ստ այստեղ, հանգստացի՛ր (նստեցուց ինձ մի մոտավոր նստարանի վերա): Դու ինձ ի՞նչ վնաս ես արել. ե՛րբ և ինչո՞վ ես իմ սիրտը ցավցրել. ընդհակառակը, դու դեպի ինձ միշտ քաղաքավարի և մարդասեր ես եղել: Եթե երկու տարի առաջ հավանել էիր Սոֆիային՝ մի՞թե այդ մեկ հանցանք է, Սոֆիան չի կարողացավ քեզ հասկանալու և սիրելու, այժմ ես եմ քեզ սիրում:

Տխրելու, լալու, հուսահատվելու տեղ, դու, ընդհակառակն, պետք է ուրախ լինիս և զվարճանաս: Դե՛հ, երբեքս մի՛ լինիլ, դո՛ւ չ'դ կաց, ես շուտ կվերադառնամ ու կառնում, կտանեն քեզ:— Ասաց ու համբուրեց ճակատս. ես առի նորա ձեռքը ու երկար ու տաք համբույր կնքեցի վրան:

Կատյան զնայց. ես էլ մտա հիվանդանոցի դահլիճը. հրամայեցի հալազներս բերելու— այնտեղ արդեն գիտեին, որ ես դուրս պիտի գամ այսօր— հալազեցի իրեզենքս, զրի պաշտուակիս մեզ, ինքս էլ հազվեցա: Բոլոր հալազներս պարվի նման կախ-կախ էին վրաս, ցայն աստիճան նիհարացել էի: Ժամ ու կես անցած-չանցած Կատյան եկավ, միասին նստանք կառք ու զնայցինք:

Կատյան ինձ համար մի մեծ, մաքուր, փափուկ վահկարասիքով դարդարած սենյակ էր վարձել, ֆեյ, սուրճ, ճաշընթիրք— քոլորը հետք. ամեն օր նշանակած ժամանակին այցելում էր մի գերմանացի բժիշկ և դարձանում էր ինձ: Թժշկի խնամքը, բնակարանիս մաքրությունը և հարմարությունը, կերակուրների արտասովոր և մանավանդ Կատյայի հաճախ այցելությունը շուտ փրադարձուցին իմ կորսված առողջությունը, այնպես որ մի շաբաթից ես արդեն սենյակիս մեջ ազատ և հաստատուն քայլերով կարողանում էի թան գալ, երկու շաբաթից՝ օրենը քանի մի ժամ թույլատրած էր ինձ քաղաքական պարտեզների և ճեմերիքների մեջ գրոսնելու, իսկ մի ամսից արդեն կատարելապես առողջացա:

Մի օր Կատյային ասացի՝ «Կատյա, ես վաղուց ուզում եմ քեզ մի գաղտնիք հայտնելու, բայց չեմ համարձակում»...

— Ասա՛ տեսնենք ի՞նչ գաղտնիք ունիս ինձ հայտնելու, — ասաց Կատյան այնպես սիրուն երես անելով, ասես թե մի քնքուշ մայր յուր փոքրիկ երեխայի թոթովանքն է պատրաստվում լսելու

— Ես բժշկապետությունս հարցաքննության կեսը արդեն ավարտել եմ, այժմ մնում է մյուս կեսը...

— Այդ ի՞նչ գաղտնիք է, — ասաց Կատյան ծաղրը երեսին. — եթե հարցաքննությունդ կիսակատար մնացել է, ինքն իրան հասկացվում է, որ պետք է ավարտես, այստեղ ի՞նչ գաղտնի բան կա...

— Գաղտնիքը այն է, որ՝ եթե հարցաքննությունս ավարտած և բժշկապետ լինիմ՝ որի՞ն ինչ օգուտ տված պիտի լինի: Աշխարհքիս համար բոլորը մեկ չե՞ թե ես ուսյալ բժշկապետ եմ,

կամ հասարակ բժիշկ, կենդանի եմ, կամ մեռած. ո՞վ իմ ուրախությունս ուրախակից պիտի լինի և տխրությունս ցավակից...

— Ի՞նչ ուզում ես ասել, — ասաց Կատյան կարճերեւով:

— Այն ուզում եմ ասել, ինչ-որ սիրուդ էլ քեզ այս վայրկյանիս ասաց. կա՞ տյա, այն ժամանակ կարո՞ղ եմ հուսալ, որ դու ինձ սրտանց կներես և ինձ կսիրես այնպես, ինչպես որ մի ժամանակ սիրում էիր...

— Մի՛ թե աբժի ես քեզ չեմ սիրում:

— Այո, սիրում ես, բայց քրոջ պես...

Պատասխանի տեղ, շփտեմ ինչպես եզրով, որ երկուսս էլ մին մինի աստիքակալեն ավելի մոտեցանք, զրկեցանք, և շրթունքներու թուան շատ տաք համբույրներ:

Հունիսի վերջին ավարտեցի հարցաքննություններս և հուլիսի մեջերը համեստ կերպով կատարեց մեր պսակը նույն բարեսիրտ Մոփսես քահանայ:

Պատկիցս քանի մի շաբաթ անցած ես դանազան հայարնակ քաղաքներ խնդրեցի ուղարկեցի, որ ինձ քաղաքական բժշկի պաշտոն տան. բայց ոչ մեկ տեղև հրավեր չի ստացա: Եստ սպասելից ես՝ ուրիշ քաղաքներ ուղարկեցի խնդիրներ և ամեն կողմից ստացա հրավերներ: Ես ընտրեցի Վ. քաղաքը: Կատյան յուր գործարանը ծախեց երեսուն հազարի (վերջին տարին նա տաք հազար վուտ տարեկան արդյունք ուներ) ինքն էլ մտա քան հասկար աշխատած ունեի գրամարկզի ոճը. ամենք միասին պետապես դրամանոցը դրեց— նեղ օրվա համար— և տեղափոխեցանք Վ. և ահա վեց տարի է, որ աշատեղ կենում ենք հանդարտ, առողջ և հաշոդակ:

Աստված մեզ երեք զավակ պարգևեց, երկու որդի ու մի դուստր. նոցա անուններն են՝ Վահան, Աշոտ և Բրաբիոն:

Ահա՛ ինչ և Կատյայի պատմության շարունակությունը և վերջը:

Բոկ եթե կամենում եք իմանալ ի՞նչ եղավ Սոֆիան, ահա՛ լսեցեք: Երբ որ Գոռգոթը նորան փախցրեց, նախ գնացին նոքա Ստավրապոլ, ուր հյուրանոցումն երեք օր մնացին, հետո, ճարելով մի շինծու անցազիր, զնացին Փարիզ: Փարիզ հասնելով, Գոռգոթով հայտնել է Սոֆիային, որ նորա հետ պսակվելու ամենևին դիտավորություն չունի, այլ «միասին կենանք, ասել է, այնպես, ինչպես որ այժմեվա նիկիլիստներն են կենում, այսինքն՝ որ»

քան որ մեր փոխադարձ սերը կտևի. մեկ մեկից ձանձրանալից ետ՝ էլ միասին ապրելը անհնար է. ես կերթամ իմ ճամփով, դու էլ կերթաս քու ճամփով»։ Բայց այդքան ևս կարողացած չէ յուր խոստմունքը կատարելու. հենց առաջին շաբաթից սկսել է կամաց կամաց խաբելով ձեռքից փողերը առնելու ու անառակ երիտասարդների ու լկտի կոկետաների հետ Փարիզի պանդոկներումը և զբոսարաններումը զվարճանալու։ Երբ որ Սոֆիայի քսան հազար մանեթը մսխել պրծել է՝ այնուհետև սկսել է Սոֆիայի ակնեղենները գողանալ և ծախել, այս ևս երկար տևած չէ։ Մեկ պատվական օր Սոֆիային հանձնել է յուր անառակ բարեկամներից մեկին, և ինքը փախել է, ոչ ոք չի իմացել, ո՛ւր։ Այս կերպով Սոֆիան կարձ միջոցումը ակամա սիրուհի է դարձել մի անպիտան ֆրանսիացի երիտասարդի, որ ժամանակե ժամանակ, երբ փողի պակասությունը շատ նեղում է եղել նորան, Սոֆիայի սերը ու գիրկը ծախում է եղել այս կամ այն վավաշոտ ծերուկին և ստացած փողովն երկուսը միասին ապրում են եղել քանի մի ժամանակ։ Այսպիսի կյանքի ձանձրացած, մի օր Սոֆիան փախել է այդ ֆրանսիացիի մոտից և մտել է այնպիսի տուն, ուստի կինարմատը երբեք կենդանի չի դուրս գալիս, նա մեռնում է՝ թե ֆիզիկապես և թե՛ բարոյապես։

Այս շար լուրը հասնում է Ասատուր-աղայի ականջին. առաջին նվագ նա ամենևին չի ուզում հավատալ, բայց սաստիկ վերդովվում է։ Բարեկամների խորհրդով մի նամակ է գրում Փարիզում բնակվող ռուսաց հյուպատոսին և մանրամասնաբար հայտնում է նորան յուր լսած անախորժ լուրերը և հարցնում է նորան՝ ճշմարի՞տ են արդյոք այդ ամենը։ Հյուպատոսը ստանալով նորա նամակը, յուր գործակալներից միինն ուղարկում է տեղեկանալու, արդյոք ճշմարի՞տ է այս շարաբաստիկ եղելությունը։ Գործակալը աչքով տեսել է, որ մարդոց պատմածի մեջ ոչինչ ստույթուն չիկա։ Այդպես էլ ծանուցել է հյուպատոսը Ասատուր-աղային։ Այս բոլոր ստանալով, նույն գիշեր կաթվածը երկու անգամ զարկել է նորան, և մյուս առավոտ նա արդեն անկողնեն դուրս չի կարողացել դնել ոտները։ Բժիշկների խորհուրդը պարզապես հայտնել է, որ նորա կյանքը վտանգի մեջ է։

Ասատուր-աղան յուր բոլոր ահագին հարստությունը կտակել է, որ ետ մահվանը ընծայվի պետական գանձարանին և կտակի մեջ այսպես գրել հրամայել է. «Տուր զկայսերն կայսեր», և ինքը

շուտով մեռել է։ Մեռնելից առաջ փոխե՞լ է հավատը, թե ոչ, այդ ոչ ոք չգիտե, միայն այս գիտեն, որ նորա մարմինը հայ քահանաներով չի թաղվում։

Այսպես եղավ Ասատուր-աղայի վախճանը։

Մի երեկո, նոր էի վերադարձել հիվանդանոցից և Կատյայի ու երեխեքիս հետ նստել էինք թեյի սեղանի առջև, հանկարծ նախասենյակումը մի շփոթ բարձրացավ, մեկ մարդ ներս է ուզում մըտնել. բայց ծառաս թույլ չի տալիս. մարդը տալիս է իմ և Կատյայի անունները, բայց դարձյալ չի թողնում նորան ներս գալու, ասելով. Куда такая дрянь лезет к господам? Ведь срам, ей богу!

Շտապով դուրս գնացի տեսնեմ՝ թե ինչ է։ Հանկարծ ծառայի ձեռքից փախ ընկած ներս թռավ մի պատահոտած հալավով, ցիրցան եղած մազերով, կարմիր խոցերով ծածկված երեսով մի այլակերպ կին. րոպեի մեջ սենյակը օղիի գարշելի հոտով լցվեցավ. ներս մտնող կինը սաստիկ հարբած էր։

— Պարո՞ն վարդան, Կատյա, այսքան միայն կարողացավ սսել նա, և հետո սկսավ մեկ լալու և մեկ ծիծաղելու։

Ես և Կատյան ապշած նայում էինք և չէինք կարողանում իմանալու, թե ո՞վ պիտի լիներ այս թշվառականը. վասնզի չէինք հիշում, որ երբեկցե, ուր և իցե այսպիսի կնոջ հետ ծանոթությունեցած լինեինք։

— Պարո՞ն վարդան, Կատյա, ինձ չճանաչեցի՞ք... ես Սոֆիան եմ...

Բավական է. չեմ ուզում նկարագրել այս գարշելի և ցավալի պատկերը։

Սոֆիան սաստիկ հիվանդ էր։ Իսկույն տարի հիվանդանոց և պատվիրեցի օգնականիս, որ ամեն կերպ հանգստացնե ողորմելի աղչկանը։ Ամբողջ վեց ամիս թափեցի վրան իմ բոլոր բժշկական հմտությունը, և հազիվհազ կարողացա ապաքինելու նորա խորունկ և հնացած զազրելի խոցերը։ Բոլոր այդ ժամանակ Կատյան հայթայթում էր նորան ամեն պիտույք, շայ, շաքար, սուրճ, կաթ, կարագ, մեր խոհանոցում պատրաստած կերակրից— մեկ խոսքով՝ ինչ որ պետք էր, առատ-առատ ուղարկում էր նորան։ Երբ որ բուրդովին առողջացավ, ես հարցուցի Սոֆիային, թե ի՞նչ միտք ունի ձեռնարկելու. «կամենաս՝ մնա՛ իմ տանս, ասացի, կամենաս՝ գնա Հաշտարխան— ես քեզ ամեն կերպով պատրաստ

եմ օգնելու: Գուցե մի օր մի լուսի մարդ գտնեն՝ պատկզի՛ր, քո օժիտը ես կպատրաստեմ...»:

— Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեցավ Սոֆիան, բախտի դոներն աչտուհետև իմ առջև հավիտյան փակված են: Ես ձեզանից միայն շնորհք եմ խնդրում, որ է՛ թույլ տաք ինձ, որ ես ձեռք տան մեզ նաժիշտ թիւիմ: Այս է իմ մեկ հատիկ փափագը, ձեզ երկուսից ծառայութեան անելի գատ ուրիշ բախտ չի՛կտ ինձ համար:

Եստ գոր արի, որ հրաժարվի այդ ցնորական դիտավորութենէն, բայց համարել չկարողացա. ու դիզանելով նորա աղաչանքին ու արտասուքին, վերջապէս հոժարեցանք նորան մեր տան մեզ դայակի պաշտոն տալու:

Ամբողջ տարի շերմեռանդությամբ կատարեց Սոֆիան յոյ վրա առած ստոր պարտավորութիւնը. ոչ մեկ աշխատութեան նրա համար ծանր, տաղտկաբի կամ նվաստացուցիչ չէր երևում, ոչ մի անգամ նա թույլ տված չէ՛, որ կամ ես, կամ Կատյան, կամ երեխաներս իրանից անգոհունակ մնայինք. ինչ որ ինքը կարողանում էր անելու, երբեք թույլ չէր տալիս, որ ծառաները անեին. տանս մեզ ոչ մեկ անկարգութիւն չի նկատեցի ամբողջ մի տարի, ամեն բան յուր տեղումն էր. ամենայն ինչ սենյակի մեջ մաքուր էր. երեխերքս միշտ մաքուր հագնված էին: Բոլոր օրը ոտքի վրա էր Սոֆիան. մեկ կահկարասիքի փոշին էր սրբում, մեկ սենյակներն էր ավելում կամ հավաք-տեղակ անում, մեկ երեխիք պատռոտած հալավներն էր կարկատում, մեկ նոցա ցխոտած կոշիկներն ու մաշիկներն էր սրբում, մեկ լվացք էր անում, մեկ ծծի՛ երեխիս էր օրոքում, միով բանիվ՝ միշտ գտնում էր տան մեջ գործելու մի գործ. նա չգիտեր՝ թե ինչ է նշանակում մի րոպե նստել ու հանգստանալ: Որքան էլ կանուխ զարթնի՝ Սոֆիան միշտ արթնացած էր ու տան աշխատանքով էր արդեն զբաղված. որքան էլ գիշերը ուշ վերադառնայի տուն՝ նա դարձյալ արթուն էր և դարձյալ մի աշխատանք կունենար: Եթե աշխատելու բան չլիներ՝ նա սկսում էր երեխերքիս համար գուրպանիք գործելու: Քանի՛ քանի անգամ Կատյան և ես ասել ենք. «բավական է Սոֆիա ջան, այդ որքան աշխատես. ինքդ քեզ խնայե, մի փոքր էլ նիստ, դադար տուր ոտքերիդ ու ձեռքերիդ»:

— Ա՛խ, պարտն կամ տիկին, ասում էր նա, այս ի՞նչ աշխատանք է որ իմ արածը, եթե դուք տեսնեիք օտար աշխարհի կնանիք ինչպես աշխատել գիտեն, այն ժամանակ դուք ինձ մեկ րո-

պե ձեռք տանք մեզը չէիք պահել: Բե նորանապ ետանդով շարունակում էր յուր ընդմիջած գործը:

Սոֆիայի գաղտըր ասեա թե՛ մի բարեբար գեղեցիկ ճառագայթ փայլեցավ իմ տան մեջ. քանի՛ քանի անգամ այս խոսքերը ինձ ասել է Կատյան: Երեխայքս խո մոր պես սիրում ու պատվում էին նորան. նորա գրկից ցած չէին իջնում. «Սիրուն Սոֆիա, բարի Սոֆիա, ոսկի Սոֆիա»— այս էր նորա անունը երեխերքիս բերանումը:

Ոչ մի անգամ չհիշեց Սոֆիան ոչ յուր և ոչ մեր անցյալը. չհիշեց յուր ծնողաց անունները. չհիշեց յուր բախտավոր և շարաբաստիկ օրերը. ասես թե Սոֆիան անցյալ շուներ և նորա կյանքի սկիզբը այն օրն էր, երբ առաջին անգամ իբրև նաժիշտ մտավ նա մեր տուն: Կուզեք հավատացե՛ք, կուզեք՝ չէ, բայց ես այս նոր Մագդաղինացի Մարիամին շատ անարատ կույսերի հետ չէի փոխել, եթե ամուրի երիտասարդ լինեի:

Թեև ես ստանում եմ հայոց լրագիրներ՝ «Մեզու Հայաստանի», «Մշակ», «Երձագանք» և այլն, բայց ամենեկին ժամանակ չունիմ նոցա կարդալու. բայց Կատյաս ոչ մի թվահամար չի թողնում չի կարդացած: Նորա լրագիրը կարդալու ժամանակն է տասնըմեկից մինչև տասներկուսը, իսկ և իսկ այն ժամանակ, երբ ես անպատճառ հիվանդանոցումն պիտի գտնվիմ: Կատյայի ասելովն, Սոֆիայի աշխարհքիս երեսին մի հատիկ սիրած բանը եղել է լսել Հայաստանից ստացված լուրերը: Վերջին ժամանակները, երբ տաճիկների կասկածը շատացավ և քղերի ավազակութիւնն ու մարդասպանութիւնը սաստկացավ, Սոֆիան արդեն տեսողահույզ անհամբերութեամբ սպասում է եղել լրագիրների գալուն:

Մի օր, երբ Կատյան ու ես նստած էինք, ներս մտավ Սոֆիան ու ասաց մեզ. «Երեք օրից ես պետք է երթամ աշտուղից, դուք ձեզ համար մեկ նաժիշտ պատրաստեցեք»:

— Ի՞նչ կողակ քեզ, Սոֆիա ջան, ասաց Կատյան երեսը սպրդեան, ինչով մեզանից անբավական ես, ո՞վ ցավեցուց քե սիրտը:

— Ամեն բանով բավական եմ ձեզանից, տիկին, իմ սիրտը ոչ ոք ցավեցրած չէ. բայց ես պետք է երթամ:

— Ո՛ւր պիտի երթաս. ինչի՞ պիտի երթաս, Սոֆիա ջան, մենք մեր մոտ, բավական է տանջվածդ,— ասաց Կատյան:

— Պետք է երթամ,— ասաց Սոֆիան, թեև վրայից երևում էր:

որ հազիվ կարողանում է բռնել սրտի փղձուկը և աչքերի արտասուքը:

— Կասե՞ս մեզ վերջապես, ո՞ւր պիտի երթաս, ինչո՞ւ պիտի երթաս,— ասացի ես:

— Վան պիտի երթամ, ասաց Սոֆիան, այնտեղ մեր հայ եղբայրները և քույրերը տանջվում են աղքատության և անողորմ թշնամիների մեջ, իսկ ես այստեղ փափուկ և հանգիստ կյանք եմ անցնում: Կերթամ նոցա հետ կապրիմ, նոցա հետ կտանջվիմ, կարելի է նոցա հետ էլ կմեռնիմ: Այս քաղաքը շատ լավ քաղաք է, բայց հայի չէ՛. ես կերթամ հայերի մեջ կկենամ, հայերի մեջ էլ կուզեմ թաղվելու:

Երբ որ այս խոսքերը վերջացուց, էլ չկարողացավ արտասուք բռնելու ու կողկողագին ձայնով լացեց: Ես, Կատյան և երեխերքս նմանապես լացինք:

Ինչպես որ ասաց, այնպես էլ արավ Սոֆիան: Երեք օրից հեռացավ մեզանից և հետը առավ միայն յուր ոռճիկը— ու բացեիրաց հրաժարվեցավ, երբ որ ես և Կատյան առաջարկեցինք նորան բարեկամական ընծա առնելու մեզանից հազար մանեթ:

Մեկ ամսից Արզրումից մի համառոտ նամակ ստացանք, որ հայտնում էր նա, որ հեկեյալ օրը ճանապարհ պետք է ընկնի գեպի Վան: Եվ ահա՛ ութն ամսից ավելի է, որ Սոֆիայից ոչինչ լուր չունենք. կենդանի՞ է, թե մեռած՝ չգիտենք: Քանի՞ քանի անգամ մեր հյուպատոսին նամակ գրեցի և մանրամասն նշանակելով Սոֆիայի բոլոր հանգամանքն, խնդրեցի, որ ինձ տեղեկություն տա նորա մասին: Նամակներին պատասխանը շուտ եկավ, բայց Սոֆիայի մասին հյուպատոսը ոչինչ բան չգրեց, վասնզի ինքն էլ ոչինչ տեղեկություն ստանալ կարողացած չէ: Սպանե՞լ են արդյոք քրդերը, կամ չերբեզները, կալանավորե՞լ են նորան— ոչինչ չիմացանք:

Առ ժամս այս է Սոֆիայի վախճանը:

Իսկ Դոողղովի մասին ձեզ այս կասեմ: Տարի ու կես սորանից առաջ պաշտոնական գործերով Պետերբուրգ էի գնացել: Մի անգամ Ցելիբեկի խանութումը Կատյայիս և երեխերքիս համար ոտնամաններ էի ընտրում. հանկարծ ներս մտավ ցնցոտի նշանազգեստով, մի ոտին պատառոտած կոշիկ և մյուս ոտին՝ գութափեռոչ կրկնակոշիկ հագած, արբշուրեանից քիթը կարմրած ու կապուտկած, գլխու մազերը թափած, ինքն էլ սաստիկ հարբած

մի սպա և մոտեցավ ինձ, մասամբ ոռուերեն և մասամբ ֆրանսերեն ասաց. «Պարոն, ձեր առջև կանգնած է ոռուաց քաջ զորքի ազնիվ սպան. ես ձեր երեսից տեսնում եմ, որ դուք բարի և ազնիվ մարդ եք. եթե մի քանի ուրբի կարող են բախտավորեցնել ոռուաց քաջ զորքի ազնիվ սպային, խնդրեմ, մի՛ խնայեք, վասնզի տանս մեջ մայրս մեռած է, սեղանի վրա դրած է, թաղելու փող չունիմ. կինս հիվանդ պառկած է, ճարի փող չունիմ, յոթը երեխայքս սովից մեռնում են, հացի փող չունիմ»: Խանութի տեր պառոն Ցելիբեկը լսելով այս ճառը, ասաց. «Պարոն սպա՛ այս քանի տարի է, որ դու միևնույն երգն ես երգում, եթե ասածդ ճշմարիտ տարի է, որ դու միևնույն երգն ես երգում, եթե ասածդ ճշմարիտ լինե՞ր՝ մայրդ վաղուց հող դարձած պիտի լիներ, կինդ և յոթը զավակներդ էլ մեռած: Առ այս հինգ կոպեկն ու գնա. օղիի համար քեզ այսքանից ավել հարկավոր չէ»:

Ուշադրությամբ նայեցա սպայի երեսը և խսկույն ճանաչեցի իմ ախոյան Վլադիմիր Դոողղովին: Բացի քսակս, մեջից երեք մանեթանոց հանեցի ու տվի իրան: Տեսնելով այսպիսի անակնկալ բախտ, Դոողղովը բռնեց ձեռքս և ուզում էր պագնել. բայց ես զորով ետ քաշեցի: Այս վերջին անգամն էր, որ նորան տեսա: Սոցա նամանների վախճանը հայտնի է. ձմեռվա մի ցուրտ գիշեր անշուշտ սառած կտեսնեն սորան կամ օղետան մատերը կամ մեկ խուլ փողոցի տան պատի տակ:

Սոֆիայի մայրը, Օսաննան, մինչև այժմ կենդանի է, և կենում է Մոսկվայի անկեղանոցների միևնի մեջ: Նորա սիրած խոսակցությունն է, ասում են, հայերին հայհոյելը, որոնք իբր թե նորան այս անբախտության հասցրել են:

ՄՈՆԹԵՆ ՄԻՆՉԵՎ ՎԵՐ

«Ա՛յ տղա, դու իմ կյանքը սեւացրիր, իմ ումր ու արեւը կե-
րար. ա՛յ փուճ, ա՛յ անպիտան, ա՛յ թակից փախած աժազակ՝ ն՛րբ
պետք է խելքդ գլուխդ գա, որ դու մի փոքր հանդարտվիս, ինձ էլ
հանգստութիւն տաս: Երեկ մեկ հարեանս էր գանգատվում, որ դու
նրա կտուրի կղմինդրները բոլորը կոտորատել ես՝ աղա՛վնիների
վրա քարեր ձգելով. այսօր ուրիշ հարեանս էր գանգատվում. որ
դու պատի վրայից գնացել ես նրա պարտեզը ու խակ խճճորներով
և տանձերով լցրել ես գրպաններդ. էլի այսօր երրորդ հարեանս էր
գանգատվում, որ դու մտել ես սրա հավաքունը, հավերի տակից
գողացել ես ձուերը: Ա՛դա ամթ շես քաշո՞ւմ. ախր ես էլ քու
պատճառով ամենի առջև սևերես մնում ու ամաշում եմ, որ քեզ
նման անառակ որդի ունիմ: Ե՛րբ պետք է մի փոքր հանդարտիս
ու բոլոր մեր թաղի մարդոց հանդարտութիւն տաս: Քու շարու-
թիւնները ամենեին նման չեն ուրիշ տղայոց շարութիւնը, նրանք
ցխի փոշիի մեջ վազվզում, հալա՛վները պատառոտում են, գետն են
գնում լողանալու, և այն: Դորդ է, վատ բաներ են այդ, բայց գո-
նե գրանից ուրիշին վնաս չիկա. գոնե մարդիկ գանգատելու տեղ
չունին: Քու շարութիւնները մարդոց վնասակար շարութիւններ են
և այդ պատճառով անտանելի են: Գողանալ, վնասել, խայտառակ
խոսքեր բերանից հանել, ամթթալի ու տարիքիդ անհարմար գոր-
ծերով պարապել՝ ահա քու ամենօրյա շարութիւնները: Ի՛նչ կլինի
քու վերջը, հավատա՛ Մինաս. խելքս չի հասնում. միայն այսքան
գիտեմ ու հոգիս էլ այսպես է վկայում, որ դու մի օր կա՛մ ավա-
զակ կլինիս և կա՛մ դրա նման մի բան. ճակատիդ վրա գրած չէ,
որ դու երբևիցե օրինավոր մարդ լինիս:

Այսպես կշտամբում էր մի այրի կին իր ութ տարեկան որ-
դուն: Գրացի կնանիքը եկան մխիթարելու մորը, և խորհուրդ տվին,
որ տանն մտցնեն տիրացու խաչատուրի դպրոցը, հավատացնելով,
որ այդ խիստ վարժապետը խրատով ու ճիպտով շուտ խելի
կբերե փուճ-կենդանի Մինասին:

Եվ հիրավի որ, հետևյալ օրը այրին բնից որդու ձեռքն ու
տարավ տիրացու խաչատուրի դպրոցը. խնդրելով՝ որ որդուն մարդ
շինե: Տիրացուն խոստացավ նրան իր եռանդը թափել, որ մոր
ցանկացած նպատակին հասցնե այս ութամյա ստահակին, կղմին-
դրներու, պտուղներու ու ձուերու աժազակին:

Մինասը այնպիսի տղա էր, որ իր բազաքի մեծացածների մեջ
ևս երևելի էր իր հազվագյուտ շարութիւններով: Տղի բարոյակա-
նութիւն վրա շատ հանգամանքներ ունի ազդեցութիւն, որք են՝
ծնողաց և հասակակիցների օրինակը, ժառանգական հատկութիւն-
ները և կյանքի հաջողակ կամ ձախողակ պարագաները: Թշվառ
Մինասի վրա այս ամենը և շատ ուրիշները միեւնոյն ժամանակ
ազդել էին դեպի վատը: Նրա հայրը կենդանութիւն ժամանակ,
հայտնի գող, ստախոս, կովարար, ավազակաբարո մարդ էր: Այն
հետ ընկած փողոցը, ուր կենում էր Մինասը իր ծնողաց հետ, լիքն
էր աղքատի տղոցմով որոնք ամբողջ օրը միասին անցնելով իրենց
կյանքը, միմյանց բարոյականութիւնը ապակաւում էին: Հայրը
օրն ի բուն հարբած լինելով, ոչ միայն պատիվ շունք իր ազգա-
կանների և ծանոթների առջև, այլ շատ անգամ ծեծ ևս ուտում էր
նրանցից, և իր վրեժը թափում էր կնոջ և Մինասի վրա. մայրն ևս
ամեն օր ծեծ ուտելով իր արբշիտ և ծուլ մարդից՝ իր վրեժը թա-
փում էր Մինասի վրա: Մինասին ընկերներն էլ չէին սիրում, հորը
և նրա վատութիւն պատճառով: Այսպես ձախողակ պարագաների
մեջ զարգացած՝ Մինասը գրեթե մօր կաթի հետ միասին դայրա-
ցած բնավարութիւն էր ծծել իր ներսը: Նա միշտ խելք էր մաշում,
որ իր վրեժը մեկ մարդումն հանե. բայց որիմե՞ն և ինչպե՞ս՝ չգի-
տեր: Թեպետ ընկերներին մեկիկ մեկիկ կարող էր հաղթել, բայց
տարաբարտաբար, ամենքը նրանից զգուշանալով, միշտ նրա վրա
ընկերովի էին հարձակում և այդպիսով, իհարկե, միշտ հաղթում
էին. ծեծում էին, զրկում էին, հիշոցներ էին տալիս և սիրտը խոր
խոցած՝ տուն էին քշում: Մինասի մաղերը միշտ փետփետած էին,
հալա՛վները պատրոտած ու ձեռքն ու թշերը ճանկոտած: Ծներե
հալածված գայլի նման ապրում էր Մինասը իր մայրենի բազաքի
մեջ: Ծուն ծեծել, նրա մարմինը ասնդ կամ մեխ (գամ) ցցել, դրա-
ցիների հավերի վրա քար քաշել, ոտերը կոտրել, կատուններին ու
հնգուհավերին ողջ ողջ ջրհորը ձգել, հարեանի պատերի վրա շո-
բանալու համար կախած կտավիքը կոպի աղբով ապականել—
եղավ նրա համար ամեն օրվա խաղը և վրեժխնդրութիւն առաք-
կան:

Այսպիսի ստահակ տղին պիտի խրատեր և մարդ շիներ տի-
րացու խաչատուրը:

Առաջին օրը Մինասը գնդակ (թոփ) խաղալու ժամանակ նոր
ընկերներն էրկուսի հետ կովեցավ ու ծեծկվեցավ, որի համար

տիրացու խաշատուրը կես ժամ շոքեցուց նրան: Հազիվ թե այս պատժից ազատվել էր, մի աշակերտից գողացավ պանիրի կտոր և կոշիկի սրունքի մեջ պահեց, որ չգտնեն, բայց ընկերները գտան, տիրացուին դանդատեցան, և նա մեկ ամբողջ ժամ շոքեցուց ու մի փոքր էլ ականջները ոլորեց. նույն օրը աշակերտի տետրակի վրա դիտմամբ թանաք կաթեցուց. և դարձյալ պատժվեցավ. և վերջապես երեկոյին, ուսումը ավարտելուց հետո, ճանապարհին կովեցավ և ծեծկվեցավ ուրիշ աշակերտների հետ, և սաստիկ ծեծ կերած և քթից արյուն վազելով գնաց տուն, և սրտի ոխը հանգստացնելու համար կամացուկ կոտրեց հարևանի պատուհանի ապակին:

Երեք շաբաթ մնաց Մինասը տիրացու խաշատուրի մոտ, այդ ու բենը հազիվ կարողացավ ճանաչել. բայց փոխարեն դրա, նրա շարությունները այնքան անտանելի եղան, որ այլևս հնար չիկար նրան վարժատան մեջ պահելու. և մյուս աշակերտների ծնողքը սպանում էին տիրացու խաշատուրին, որ իրենց որդոց անպատճառ կհանեն դպրոցեն. եթե նա իր մոտ երկար պահե Մինասին: Մի օր տիրացու խաշատուրը, համբերությունը հատած, ձայն տվեց այրիին և Մինասի բոլոր շարությունները մի առ մի պատմելով, ասաց որ՝ այլևս կարողություն չունի նրան իր դպրոցի մեջ պահելու, ապա թե ոչ հարկադրված կլինի բոլորովին զրկվել աշակերտներեն և գրեթե առանց ապրուստի մնալ:

Մայրը այստեղ ևեթ մի լավ ծեծեց Մինասին, ամաչեցուց, երեսին թթեց և հետո, ձեռքեն բռնած, տարավ տուն: Նորից սկսավ իր անբախտ գլուխը լալու ու սգալու թե՛ այս ի՞նչ անբախտ կնիկ է նա, որ ոչ իր ծնողներին, ոչ հանգուցյալ մարդու մեն և ոչ այժմ այս անառակ որդու մեն: Դարձյալ հարևան կնանիքը նրա գլխուն ժողովեցան և դարձյալ խորհուրդ տվին մի ուրիշ տիրացուի մոտ ուսման տալու: Այրին լսեց նրանց խորհուրդը և խրատը և քանի մի օրեն տարավ Մինասին մի ուրիշ դպրոց:

Թեև դպրոցը փոխվեցավ, բայց Մինասը անփոփոխ մնաց. նույն ստահակությունները, նույն շարությունները, նույն անառակ վարքը այդ նոր դպրոցի մեջ ևս շարունակ: Աշակերտների հետ կռիվ անել, ծեծկվել, իրար վրա գրգռեցնել նրանց, ստել, խաբել, գողանալ, իր և ընկերների հալավները պատուտել, ինքը բան չսովորել, ուրիշին էլ սովորել չթողնել, — այս էր նրա հինգ ամսվա բոլոր գործունեությունը այդ երկրորդ դպրոցի մեջ, ուր բացի այն, որ օրենը վեց-յոթ անգամ շոքում էր, շաբաթը մի-մի անգամ ֆա-

լախա ևս կերավ և վերջը-վերջը խեղճ տիրացուի (մի ժամանակ ազգիս բոլոր մանկավարժները տիրացուներ էին) հուսահատությունը վերջին աստիճանին հասցնելով, երկրորդ անգամ արտաքրսվեցավ դպրոցեն: Երբ որ այս տիրացուն էլ խեղճ մորը կանչեց դպրոց և պատմեց որդու բոլոր անպիտանությունները, ողորմելի կնիկը պատասխան տալ չկարողացավ, այլ միայն դառնապես լալով ասաց՝ «իմ մեծ մեղքերիս համար աստված քեզ աշխարհք է բերել, երբեք դու օրինավոր մարդ լինելու չես, կամ ավազակ կլինիս, կամ դրա նման մի բան»:

Այն քաղաքում, ուր կենում էր այս թշվառ այրին, իր անառակ որդու հետ, կար մի վարժապետ, որ բոլոր քաղաքին հայտնի էր ոչ այնքան իր մանկավարժական հմտությունով, որքան որ իր անսահման խստությունով. տղայոց պատժելը և ծեծելը ասես նրա համար կյանքի քաղցրություն և երջանկություն էր. նրա տան բոլոր պատերը կախած էին վանազան տեսակ երկայն և կարճ, հաստ ու բարակ ճիպոտներով, քանոններով և ֆալախաներով, որոնցից յուրաքանչյուրը նշանակած էր աշակերտաց վանազան աստիճանի շարությանց համար: Տղան ինչպես կուզեր ստահակ լինել, բայց երեք շաբաթ մնալով նրա վարժարանի մեջ՝ դառի նման հեղ կղառնար: Ամենաքաջ մարդը չէր կարող դրա աչքի մեջ ուղիղ նայելու. վագրի ու հովազի աչքերը ավելի ահարկու ու սարսափելի չէին: Մեկ խոսքով բոլոր քաղաքի արհամարիքն էր տիրացու Ստեփանը:

Երբ որ Մինասի թշվառ մայրը հուսահատաբար նստած էր իր տան մեջ և հարևան կանայք նրա գլխին հավաքված էին, նրանցից մինը հիշեց տիրացու Ստեփանի անունը և հիշեց նրա ամեն հրաշքները՝ կատաղի տղայոց խելքի բերելու մասին: Բայց ինչ փուլե լինի, մայրը միշտ մայր է, այսինքն՝ իր զավակին մեղքացող: Այրին քանի-քանի օր ամենևին հոժար չէր իր անառակ որդուն այդ հրեշ-մանկավարժի մոտ տանելու, բայց մեր Մինասը վերջը-վերջը ստիպեց մորը այդ վերջին հնարն ևս փորձելու:

Երկու օրվա դուրս ձգած էր վարժարանեն, որ նա գիշերվա ժամանակ թռավ պատի վրայեն, մտավ հարևանի բակը, կամացուկ դրավ սանդուղք աղավնու բունին, բարձրացավ և մտավ մեջքը, գողացավ տասներկու հատ գլուխները թագով և ոտները բոբդոտ աղավնիներ և ծախեց մի ուրիշ հարևանի: Մյուս գիշեր մտավ մի ուրիշ հարևանի պարտեզ, քաղեց պտուղները և երեք լիքը պարկ ծախեց մի գող պտղավաճառի: Երրորդ գիշերը մկնդեղով

սատկեցուց հարևանի շունին, մտավ նրա հավաքունը և գողացավ տասնչորս հատ հավ և երկու աքլոր և ծախեց մի մարտաբազ հավաճածառի: Չորրորդ օրն էլ նա մի այգախոսի ստահակութուն կանեց, եթէ երեք հարևանները ակներև ապացույցներով չամբաստանեին նրան և շխառտաւորեին:

Նորից դառն գանգաւորներ և անեծքներ խեղճ այրի կնոջ գլխին և թաղեցիք արդեն սպանում էին արտաբանու նրան քաղաքեն, եթէ նա իր անպիտան որդուն ուղղելու մի հնարք չի գտնի: Այն ժամանակ այրին ստիպված եղավ իր որդուն տիրացու Ստեփանի վարժատուներ տալու: Թեև տիրացու Ստեփանը մանկադասարանի մեջ հմուտ էր, բայց Մինասը ավելի հմուտ էր շարութեան մեջ: Վեց ամսվա մեջ տիրացու Ստեփանի պատերի վրա ոչ մի ճիւղատ, ոչ մի տող և ոչ մի ֆալախա չմնաց, բոլորը կտրատվեցաւ, գզգզվեցաւ ու անպետքացաւ Մինասի ձեռքերի ախերի, ոտքի ներքանի և հետույքի վրա. տիրացուի ձեռքերի ուժը գնաց, թուլացաւ՝ օրերը հարչուրավոր և հազարավոր հարձածներ տալով, Մինասի, բոլոր մարմինը պալարներով և սուռյցներով ծածկվեցաւ, բայց նա ինքը խելոքանալու տեղ՝ տասնապատիկ ավելի կատաղեցաւ:

Վեց ամսից տիրացու Ստեփանն էլ հոգիս ապաստան եղած, արտաքսեց նրան իր դպրոցից. ասելով՝ «Դասլին ավելի շուտ կարելի է գառ դարձնել, քան թէ քու որդուդ մարդ: Քու որդին մի օր կա՛մ ավազակ կլինի, կա՛մ գրա նման մի բան»: Բայց մեր ներողամիտ կարգացողները կտեսնեն, որ ո՛չ տիրացու Ստեփանի նախագուշակութունը կատարվեցաւ և ո՛չ մտրը. այդ երկու պարզամիտները չգիտեին, որ հայի մեջ ամենապատվավոր, ամենապաշտելի, ամենաուրբ պաշտոնները շատ անգամ ընկնում են ամենանաւպիտան մարդոց ձեռք՝ ինչպես հին ժամանակները, այնպես և մեր օրերը, գուցե և... ապագայումը լինի նույնը:

Երբ որ թշվառ այրին այս անգամ տուն բերեց իր անառակ որդուն, որ երեք վարժարան փոխելով, այբբենարանի երեք երեսը չէր անցած տակավին, նորից հարևան կնիկները ժողովեցան նրա գլխուն և նրան մխիթարելու համար ամեն տեսակ խորհուրդներ էին տալիս: Այդ հարևանների մեջ մի պառավ կին կար, որ ֆաբ բանալ գիտեր: Նրա ֆալի պակլաները իրա ասելով, Երուսաղեմի մեջ Քրիստոսի գերեզմանի վրա էին դրած, և այդ պատճառով, դարձյալ պառավի ասելովն, երբեք չէին ստում. բայց ավա՛ղ, բացի այդ ֆալի պառավից, ամենքն արդեն հավատները կորցրել էին

այդ մղղեախիճալեն: Եվ ունեն իրավունք. ասացեք թե ինչո՞ւ այդ երևելի ֆալի խոսքով ո՛չ մի գողացած իր, ո՛չ մի կորցրած կով, ո՛չ մի փախած կամ փախցրած ձի տաճիպիւն դանձար չէր. ո՛չ մի հարսնախոսութուն կատարված չէր. և ինչ որ գուշակել էր միշտ նրա հակառակն էր կատարվել: Օրինակ՝ ֆալի ասելով Եփեսոսի անպատճառ պիտի անն Տրանդուլենց Դավիթը հենց այս ձմեռնամուտին. բայց իրոք դուրս էր դալիս որ՝ խեղճ աղջիկը պսակվում էր Աթալաշենց Օհանի հետ ուղիղ հինգ տարիից հետո: Գիցուք թե պառավի ֆալը ասել է թե՛ այս ինչ երիտասարդ ֆրանի այգիումը մեծ փող պիտի գտնի. բացց իրոք նույնիսկ այգիումը խեղճ երիտասարդին չավ հանգի քսակում են ու վրայի հալածվեցին էլ պատարոսով են, և այլ այգախոսի անակնկալ դեպքեր: Աշտուտենայնիվ, հենց որ կանանց բանը փթուր էր լինում՝ միշտ դիմում էին այդ ստախոս ֆալին: Բայց այս անգամ, ինչպես կտեսնենք, նախախնամութունը խղճացել էր պառավի ֆալի վրա, որն Երուսաղեմի ուխտազանցութունից դեռ առաջին անգամ նրան ճշմարիտ խոսել էր ապիտ. բայց ավաղ, թեև ֆալը ճշմարիտ ասաց, բայց այս անգամ էլ տարաբախտաբար մարդիկ չհավատացին նրա խոսքերին: Փալը ասաց, որ Մինասի բախտը իրաչ ու ավետարանից կլինի:

«Վույ քու գուլխուն,— ասաց մայրը, երեսը ծովառած ու արհամարհանքով ձեռքը թափ տալով որդու գլխին վրա. վայ քու գլխուն, որ դու մի օր տիրացու կամ տերտեր պիտի չլինիս. այդ ա՛ր անխժած ձեռքը քեզ տերտեր պիտի օժն, ո՛չ կարողալ գիտես, ո՛չ դրել ո՛չ էլ մարդու շնորհք կա վրադ. շոբան կլինիս, շոբան և ո՛չ տերտեր. բացի շոբանութունից, քու առջև ուրիշ ճանապարհ չկա»:

Մյուս օր այրին բունեց որդու ձեռքին և տարավ մեկ մանրունք ծախողի (բախալ) մոտ և խնդրեց, որ Մինասին խանութի մեջ Թառախութուն անել տա: Մանրավաճառը հազար չէ-մեծով առավ նրան, վաճառքի Մինասի ամեն վատութունների լուրը արդեն հասել էր նրա ախանջին:

Հայի խանութը եթէ ինձ կհարցնեք մեր ազգի համար այնպիտի պաշտոն է կատարել, որ կատարած չեն մինչև այժմ ոչ մեր աղգային եկեղեցին, ոչ աղգային դպրոցը, ոչ աղգային մամուլը և ոչ մեր ընկերական ժողովները: Հազարավոր և բյուրավոր անպիտան տղայք, որոնք մանկութեան օրերը ոչ աստված են ճանա-

չել, ոչ որդիական հնազանդութիւնն են սովորել դեպի ծնողքը հայրական կտրի տակ, ոչ գիր-կարդում են սովորել դպրոցներումը և ոչ մարդավարութեան են ընտելացել իրենց ծանոթ-բարեկամների մեջ, երբ մտել են խանութ՝ գրեթե առաջին օրն են նրանց վրա աստուծո պատկեր է եղել: Ես չգիտեմ, խանութատերները իրենց հարազատ որդոց վրա ունեցե՞լ են արդյոք փրկավետ ազդեցութիւն, բայց այդ ճիշտ գիտեմ, որ նրանք օտարի զավակների համար եղել են հրեշտակ պահապան: Մեր խանութպանների այս մեծ երախտիքը ուրանալ չի կարելի: Ես չեմ ասում, որ սրանք իրենց ծառաներին այնպես դաստիարակում և կրթում են ինչպես, օրինակ, դաստիարակում և կրթում են երեխայք անգլիական և գերմանական բարեկարգ դպրոցների մեջ. բայց այն կարող եմ ասել, որ եթե հայր ունի մի փոքր ժամասիրութիւն, գիտե մի փոքր գրել-կարդալ, ունի մի փոքր ազգութեան գաղափար, փոքր ի շատե ապրուստի ապահովութիւն, միով բանի՞վ՝ այն հատկութիւնները որ համառոտապես քաղաքացիութիւն է ասվում՝ հայր ստացել է այս խանութի մեջ, որն մեր օրերումը շատ անգամ մեր թեթևամիտ հեղինակների բամբասանքի տակն է ընկել:

Բայց վա՛յ, ավա՛ղ ու եղո՛ւկ, մեր Մինասը հայի խանութների մեջ ևս չթողեց իր ստահակութիւնները, ինչպես որ թողած չէր այն ո՛չ հայրական տան և ո՛չ տիրացուների դպրոցներումը: Ներողամիտ ընթերցողը հետևյալ տողերես կտեսնեն, որ ասածներս ճշմարիտ են:

Չորս ամիս մնաց Մինասը մանրավաճառի խանութը մի փոքր գրել կարդալ սովորեցավ. բայց երկարատև չի կեցավ այնտեղ: Ամեն օր խանութը փակելուց հետո, գրպանները լցրած տուն էր գնում. երբեմն տանում էր բրինձ, երբեմն շամիչ, շատ անգամ կաղին և ընկուզ, ուրիշ անգամ զանազան բաներ, երբեմն էլ շայ ու շաքար. մեկ խոսքով՝ նրա այրի մոր համար ապրուստի հորդահոս աղբյուր էր բացվել այդ շորս ամիսը: Թեև առաջին անգամ աղբատ կնիկը մի փոքր վախեցավ գողութիւնը բացվելուց, մի փոքր էլ դժոխքի արհավիրքը հեռվից սպառնացավ նրան, մի փոքր էլ խրղճմտանքի ձայնը կամացուկ ծվաց նրա մեջ, բայց այդ ամեն «նախապաշարմունքները» շուտ փարատվեցավ նրա սրտեն, երբ Մինասը հավատացուց նրան, որ ոչ ոք չտեսավ և խանութատերը ամենևին բան չի կասկածում: Այնուամենայնիվ, համեղ ապրանքները որդու ձեռքն առնելիս, բարեսիրտ մայրը միշտ ասում էր

նրան՝ «ի սեր աստուծո, Մինաս ջան, զգուշ եղիր, մարդ չտեսնի, եթե ոչ՝ հարևանների առջև կխայտառակվենք»: Երբ իմանում էր թե՛ բրինձի, քիչմիշի, շաքարի, և այլն, և այլն, գողութիւնը մարդ իմացած չէ՝ իսկույն հանգստանում էր, և իր աշխատավոր որդու համար կամ եղալի դաբու-փլավ էր եփում, կամ ճուտով բորանի, կամ լըխըրթմա և կամ սրան նման մի անուշ կերակուր: Ժամանակից ժամանակ (դուք հասկացեք զոնե շաքարը երկու անգամ) դախլից Մինասը կամացուկ թոցնում էր երեսուն, քառասուն, հիսուն կոպեկ և երբեմն մանեթ էլ: Միով բանի՞վ մանրավաճառի խանութ մտած օրից աստուծո առատութիւնը լայն հոսանքով սկըսավ թափելու այրիի խրճիթը: Չորս ամիս այսպես շարունակվելուց հետո, վերջապես Քոստաթը պարկից դուրս ցցվեցավ», այս սինքն խանութպանը բռնեց Մինասի գողութիւնը, մի լավ քոթկեց ու մեծ խայտառակութիւնով դուրս ձգեց խանութից:

Դրանից հետո Մինասը քանի քանի անգամ մտավ երբեմն կաշեվաճառի, երբեմն գինեվաճառի, երբեմն գրավաճառի, կոշկարկարի, դերձակի, հացագործի, մի անգամ էլ ջրկիրի մոտ. բայց ամեն տեղից շուտ արտաքսվում էր գողութեան կամ մեկ ուրիշ անառակ գործի համար: Արդեն քաղաքի մեջ ամենքը զգուշանում էին նրանից, ոչ ոք ո՛չ թե խանութ կամ արհեստանոց չէր ընդունում նրան, այլ միինչև անգամ շուկայի միջից անցնելիս գեղերից ապրանք բերողներն երկու աչքերը շորս էին անում, որ Մինասը մեկ հնարով շթոցնեն նրանից հավ, պանիր, ձմերուկ կամ մի ուրիշ ուտելու պաշար:

Այսպես մեր Մինասը բավականին ժամանակ անգործ մնաց իր մայրենի քաղաքի մեջ: Նրա մայրը, քանի որ միտք էր բերում դաբու-փլավի, բորանի ու լըխըրթմի համը՝ ծանր ծանր հառաչում էր անուշ պատանների տեղ թուքն էր կուլ տալիս: Տեսնելով որ իր մայրենի քաղաքի մեջ անգործ մնալով ոչինչ չի գոյանալ, Մինասը ստիպված եղավ հեռավոր օտար տեղ երթալ և այնտեղ մի անծանոթ և միամիտ հայի խանութ մտալ: Ինչպես որ գայլը, որ ուր էլ երթա՝ իր ատամները հետն է տանում, այնպես էլ Մինասը իր վատ սովորութիւնները շմուռանալով, քանի քանի անգամ գողութիւն արավ, բայց վերջապես բռնվեցավ ու մեծ խայտառակութիւնով արտաքսվեցավ խանութից: Հետո արդեն բան ու գործ էր արել երբեմն մտնել միին մյուսի մոտ, մի քանի օր կամ շա-

բաթ մնալ, դուրս գալ կամ դուրս ձգվիլ, քանի մի ամիս անգործ մնալ մոր մոտ, նորից տեղ մտնել և նորից դուրս ձգվել:

Նորից սկսվեցավ մոր գանդատները. անեծքները, և վայ վաղ-լախը, թե աստված նրան միայն պատուհասելու համար տվել է այսպիսի անստակ որգի: Նորից հարևան կնանիք ժողովեցան և սկսան իրենց կարծիքները հայտնելու և խրատներ տալու թե ուրիշ ի՞նչ պետք է անել:

Այդ միջոցին Մինասը արդեն տասնվեց տարեկան պատանի էր. և մի փոքր էլ հմտացել էր կարգալ գրելուամբ:

Այրին կնքահայր ուներ, որ նույն քաղաքի եկեղեցիներից մի-նի երեցփոխանն էր, որն բացի այդ պաշտոնեն ուներ նաև մի խանութ: Այրին զնաց այդ կնքահոր տունը ու լալով, արտասուքով խնդրեց, որ որդուն իր խանութն առնու, գանդատեցավ, որ Մինասը տասնվեց տարեկան է (այդ հասակում, հայ պատանին արդեն ծնողական տունն է կառավարում և քույրերին է մարդու տալիս) ոչ միայն ոչնչով չի օգնում, այլև ինքը նրա վրա ծանր բեռ է դարձել: Եվ շատ այսպիսի գանդատներ արավ նրան Մինասեն:

Կնքահայրը պատասխանեց՝ «Ես քու գող, ազաղակ, փոռ որդուն իմ խանութը չեմ մտցնիլ երկու պատճառով, նախ որ՝ ինձ կկողոպտեն և երկրորդ՝ խանութիս ու առևտուրիս անունը կկոտրեն Բայց եթե կհոծարիս, ես թույլ կտամ նրան իմ ժամի մեջ սպասավորություն անելու»:

— Մի՞թե իմ որդին կարող է ժամի մեջ սպասավորություն անել, պատասխանեց այրին զարմացած. նա հազիվ՛հազ կարող է իմանում. իսկ գրածը էլ մի՛ հարցնիլ, ասես թե ճանճը թանաքոտ ոտերով թղթի վրա ման է եկել:

«Վնաս չունի,— պատասխանեց կնքահայրը, էդպես շատ փուճերը կան իմ ժամի մեջ. մի՞նն էլ որ նրանց վրա ավելանա՞ ժամից բան չի պակասիլ: Եթե այդպես անպիտաններին էլ տիրացու ու տերտեր չանես՝ ապա ո՞ւր կախես նրան»:

Մյուս օրվանից մեր փուճ-կենդանի Մինասը մտավ ի շարք հայոց հոգևորականաց և եղավ մոնք:

Լսած կա՞ք եկեղեցիի մեջ տղայոց փոխ առածը, ուր տանքը շատ վատ են արտասանվում (տնօրինություն— անօրենություն, տղա— աղա), խոսքերը իրար հետ կապ չունին, ու բոլոր կարգացածից բան չի հասկացվում: Այսպես էր մեր մոնք Մինասի փոխ ասելը կամ ատենին կարգալը:

Լսած կա՞ք, երբ շարականները երգում են անհամ եղանակով, ահանջ խլացնող ձայնով, երբ մարգու ուզում է դուրս փախել ժամից ու միանգամ չգալ: Այսպես էր մոնք Մինասի եկեղեցվո մեջ երգեցողությունը:

Տեսած կա՞ք, երբ ժամի մեջ ժողովրդին մղելով, պինդ պինդ կանչելով, լիբ լիբ ժպտալով, հազար կերպ անպարկեշտ վարվելով մանր տիրացուները ու խոշոր տղայքը, ձեռքերը պղնձե կամ փայտե սկուտեղներ (ղաբախ) բռնած՝ փող են հավաքում էջմիածնա կամ Երուսաղեմի, կամ սուրբ Գարապետի համար, երբ համոզված եք, որ այդ աղքատի լուսանների մեծագույն մասը պիտի թուչե նրթա մանացնողի գրպանը: Այսպես էր մեր մոնք Մինասի կողմնակի արդյունքը:

Տեսած կա՞ք, երբ ժամի դռանը մատաղ նվիրելիս հանկարծ ամբողջ ոչխարի կեսը աներևութանում է և նրա մորթը կախած է լինում քաղաքի հեռավոր թաղի մեջ գտնված պատերից մինի վրա շորածալու: Այսպես էր մոնք Մինասի ծառայությունը հայոց եկեղեցվո մեջ:

Տեսած կա՞ք... Է՛հ, էլ ո՞րն ասեմ. հայոց ժողովուրդը, որ իր հոգևորականների ձեռքից այրվել խորովվել է, իր հարազատ եկեղեցիից ստոծել, դղվել, ձանձրացել է, իր հոգու փրկությունից թերահավատվել է, իր եկեղեցիների ուղղվելու, բարվարելու մեջ հուսահատվել է, և եթե մի բարակ թելով տակավին կապված է նրա հետ՝ սրա պատճառը ոչ այլ ինչ է, եթե ոչ ամոթ իր հարևանից... ապա թե ոչ՝ նա վաղուց հրաժարվելով պիտի հրաժարվեր... Այս ամենի պատճառը է և պիտի լինի Մինասների և նրա նմանների հայոց եկեղեցվո մեջ պաշտոն վարելը...

Նշխարը շինելիս՝ մեկ կամ երկու ֆունտ ալյուր տուն տանել, պատրաստած նշխարքը գողանալ ուտել և կամ մեկ բանի հետ փոխել, զատկի տոնին քահանայի հետ խաչ ու ավետարանով տնե տուն ման գալ, ներկած ձուեր կամ եղոտ բլիթներ հավաքել, ծննդյան տոնին «այսօր տոնե»-ի ման գալ, փող ու շոր միրգ հավաքել, գերեզման օրհնելիս՝ գինի ու արաղ (օղի) կոնծել, շահիներ հավաքել, խունկ ու մոմ գրպանը դնել, քելիխի (հոգոցհաց) ժամանակ ազահաբար ուտել (խժոել) հարիսա և ուրիշ կերակուրներ և մեկ մասն էլ ամաններով տուն տանել. մեռելի կողոպուտը կռվ-ղալմաղալով ստանալ մեռելատերից և կապոց-կապոց տուն տանել, միով բանիվ այնպես վարվել, իբր թե բարեպաշտ ժողո-

վրդի տունը համարել մեկ հաղթված թշնամի քաղաք, որն զորապետի հրամանով թույլ տված է թալանելու: Այս ամենը այնպիսի գրավիչ բաներ էին մոնթ Մինասի համար, որ նա զարմանում էր թե՛ ինչո՞ւ այս խելքը վաղուց չէր եկել նրա վրա և նա փոխանակ դպրոցներ և խանութներ մտնել և աքսորվելու, անհապաղ եկեղեցի չի մտել, ուր կարողանում է անպատիժ անել այն, ինչու համար նրա վարժապետները և խանութպանները շարաշար պատուհասում էին:

Մինասի եկեղեցի մտած օրից նրա անմխիթար մայրը մեկ մեկ ազատ շունչ քաշեց և նրա բերանը կուշտ հացի երես տեսավ և չգիտեր ի՞նչպես հայտներ աստծո իր երախտագետ սրտի զգացմունքը: Մանր փող՝ կոպեկներ, շահիներ, արասանոցներ միշտ անպակաս էին նրա պահարանի մեջ, որն «Տիշխիթի գանձանակը» ամեն շաբաթ օր, կիրակի և տոներին հայթայթում էր նրա Մինասը: Եթե մարդ էր մեռնում՝ մեռելի հալավները դիզադեզ թափվում էր նրա տունը. եթե ժամի դրանը մատաղ էր լինում՝ ոչխարի լավ մասից քանի քանի գրվանքա հայտնվում էին նրա խոհանոցումը, բացի եփած պատրաստած մատաղի խոշոր կտորներից, եթե զատիկ էր լինում՝ նրա տան մեջ հաղարներով ներկած ձուկ էին զլորվում գալիս. գաթա, հարիսա, զերտե, կորկոտ և այլն՝ գրեթե շաբաթ մի անգամ անպատճառ հայտնվում էին նրա սեղանի վրա. գինին ևս անպակաս էր, վասնզի ամեն բարեպաշտ մարդ ցանկանում էր, որ իր այգիի կամ մառանի պատվական գինիով, որից անշուշտ, ուղարկում էր եկեղեցին՝ երկու-երեք շիշ:

Վրա անցավ երեք տարի: Մեր չքավոր այրին վաղուց դադարել էր իր զանգատներեն և տրտունջներեն: Որդու ստահակությունները թեև վերջացած չէին, բայց նրա համար ո՛չ ծեծում էին նրան և ո՛չ խայտառակում, այլ մի փոքր տրտնջում էր ժողովուրդը, այն էլ ո՛չ ուղղակի Մինասի, այլ ընդհանրապես բոլոր հոգեվորականոց վրա. իհարկե, ամենից առաջ Սուրբ Աթոռի հոգևորականների վրա. որին համարում էին դրդիչ և սկզբնապատճառ հայ եկեղեցականների խառնագնաց վարքին. իսկ Մինասները և նրա նմանները լուելյայն ապրում էին սուրբ էջմիածնա հովանավորության ներքո:

Մինասը արդեն տասնինը տարեկան սև մրքով, թավ ունքերով, ցուլի նման աչքերը արյուն կոխած պատանի էր. վիռ հաստ— փորը միշտ տկոած, թշերը՝ գերությունից ու մատու-

թյունից ասես թե տրաքել էին ուզում: Մայրը նայում էր իր սիրական Մինասի վրա և մտքի մեջ ասում էր՝ «Ժամանակը արդեն հասել է սրան մի առողջ կնիկ ճարելու, թե չէ Մարիամ, Նինո, Զապել այրիների մոտ շուտ-շուտ ելումուտ է անում. վախենում եմ մի օր կխայտառակվի»...

Այս հոգսերի մեջ էր այրին և ուզում էր իր սիրեկան Մինասի ամուսնություն համար խորհրդակցել կնքահոր հետ, հանկարծ ներս մտավ մի ծառա և ասաց որ՝ կնքահայրը ուզում է նրա հետ մի հարկավոր բան խոսել: Այրին անհապաղ գնաց կնքահոր տուն և նրանց մեջ տեղի ունեցավ այս խոսակցությունը:

— Սանաօայր՝ ես քեզ վաղուց մի բան ուզում էի հայտնել, բայց հարմար ժամանակ չէի գտնում: Ասա, խնդրեմ, քանի՞ տարեկան է Մինասը:

— Արդեն տասնինը լրացավ, քսան մտավ: Ի՞նչ է, բա՞ն ունիս ասելու:

— Ասելու բանս այս է՝ մինչև ե՞րբ նա մոնթ պիտի մնա. ժամանակ չէ՞ նրան նախ սարկավազ և ապա տերտեր ձեռնադրելու...

— Ո՛ւր է, եթե այդպես մի լավ բան լիներ. իր բախտից ո՞վ կփախչի...

— Բայց դու գիտե՞ս, որ սարկավազ ձեռնադրելիս առաջ պետք է որդիդ տնավորվի. մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի օրենքով՝ եթե տղան կին չունի՝ նրան սարկավազ չեն անիլ...

— Ես էլ այդ մասին վաղուց մաշվում եմ, բայց ինչ անեմ, ինքս էլ չգիտեմ...

— Թե որ այդպես է, ուրեմն քու որդու հոգսը ես կհոգամ, մի անգամ արդեն սկսել եմ նրան հովանավորելու, պետք է որ բարերարությունս մինչև վերջը հասցնեմ...

— Վերը աստված, վարը դու, ինչպես գիտես այնպես արա, ես մեկ քամբախտ, հիմար կնիկ եմ, իմ խելքը ի՞նչ կարող է կրտրել, դու մեր տերն ես, մեր հերն ես, ինչպես որ կասես՝ այնպես էլ թող լինի...

— Շատ լավ ես ասում, սանամեր. դու լսե՞լ ես, մեկ խոսք կա, որ ասում է՝ «Որ խոնարհեցուցանե զանձն իւր՝ բարձրացի»: Այդ խոնարհությանդ և հնազանդությանդ համար ես էլ ուզում եմ քեզ ու քու որդուդ բախտավորացնել: Դեհ՝ գնա հարսիդ համար մեկ սիրուն մատանի պատրաստե. այսօր որդուդ նշանտուրը կլինի: Խեղճ այրին սրտի ուրախությունից երկինք կթռչեր, եթե...

թևեր ունեհար. և քաշվելով կմկմալով, կակազելով հարցուց կըն-
բահորը.

— Կարո՞ղ եմ արդյոք իմանալ՝ ո՞վ է իմ հարսնացուն:

— Բիժուս (հորեղբորս) աղջիկը՝ Գոհարը, — պատասխանեց
կնքահայրը:

Ասես թե մի կարաս սառը ջուր թափեցին խեղճ այրի կնոջ
գլխին:

— Գոհարը, ասաց նա զարմացած ու սարսափած: Բաս Գո-
հարի համար ասում են թե՛ երկու տարիից քառասուն տարեկան
կլինի. աչքերը ասում են, շիլ է. աչ ոտն էլ ձախից կարճ է. բե-
րանն էլ ասում են...

— Գատա՞րկ խոսքեր են, հարևանի բարձրասանքներ են,
ասաց կնքահայրը բարկացած:

Այրին կամացուկ կուլ տվեց իր արտասուքն ու տրտունջը, ու
նույն երեկոյին կատարվեցավ Մինասի նշանադրությունը: Մի ամսից
պակվեցավ նա երեսունութամյա անարատ կուսի վրա և երկու
ամսից ձեռնադրվեցավ սարկավագ:

Կնքահայրը, ինչպես որ շատ ուրիշ, այնպես էլ այս գործի
մեջ վարվեցավ ինչպես վայել էր խոհեմ վաճառականին, որն
առանց հաշվի ու շահի ոչ մի քայլափոխ չի անում: Նբա հաշիվը
այսպես էր. Գոհարը չինեղով նրա ազգականը, քանի որ տունը
մնացած աղջիկ էր՝ անտանելի բեռ և խղճի խաչք էր մեր հոգե-
սեր երեցփոխանի համար. խոհեմությունը պահանջում էր որ նա
մեկ հնարով իր օձիքից թափ տար նրան, որ հարևանների կասե-
կոսեից ազատվեր: Գոհարի տարիքի ու մարմնի պակասություն-
ներին նայելով, փեսաները զանազան քանակի օժտագրամներ էին
պահանջում — ո՞րը ութ հազար, ո՞րը հինգ և ո՞րը շորս. ամենա-
քրճոտ փեսան երեք հազարից վայր չէր փչեում: «Աստվածդ
կսիրես, միտք էին անում փեսաները. պաս ուտինք պաս ուտինք՝
էն էլ թան ու սպաս ուտինք», այսինքն մի պատավ, շիլ, կազ
և բերանը... հարս առանց փողի, կամ քիչ փողով առնո՞ւմք. էջ
էլ խոմ սուրբ Կարապետ գնալ չէ, որ ուխտեսս ընդունական լի-
նի»: Այսպես էին դատում Գոհարի փեսացուները:

Բայց մեր երեցփոխան-աղայի հաշիվները ուրիշ էին. — նրան
շատ ծանր էր երեք հազարից բաժանվելը. և, վերջապես ինչո՞ւ
երեք հազար պիտի տար այն բանի համար, որն կարող էր երեք
հարյուրով գլուխ բերելու:

Վրա վեց ամիս շանցած, Մինաս սարկավագը գնաց մի թե-
մական եպիսկոպոսի մոտ և ձեռքը համբուրելով, տվեց նրան
երեցփոխանից մի նամակ, որի ծրարի ստորին կողմը այսպես էր
գրված. «Ներքազյալ երեք հարյուր ուրբի և այլն, և այլն»:

Եպիսկոպոսը սկսավ քննելու Մինաս սարկավագին:

— Քանի՞ աստված կա:

— Երեք աստված կա՝ հայր որդի և հոգի սուրբ. և մի հատ
էլ աստվածածին:

— Հայոց եկեղեցին քանի՞ խորհուրդ է ընդունում:

— Երեքեցիի բանի խորհուրդ ընդունածը շարժում, բայց եկե-
ղեցվո խորհուրդները դրանք են՝ երեխա մկրտել, տղացկանի տու-
նը փարատել, պսակ կատարել, մեռել թաղել, տարին երկու ան-
գամ տնօրհնեք քալել, ժողովրդին տոնի օրը շնորհավորել, գե-
րեզման օրհնել, թաթավ (անձրև) շեկած տարին՝ չոք կատարել.
մեկ խոսքով այն ծեսերը, որոնց համար ժողովուրդը շահում է իր
ծխատերին: Հա, մտապա ասելու՝ ատեն-ատեն ալ հիվանդին վրա
նարեկ կամ ավետարան կարդալ:

— Հայոց եկեղեցիի ո՞ր սուրբ նահատակներին է տանում:

— Հայի սուրբ նահատակները դրանք են՝ սուրբ Գրիգոր Լու-
սավորիչ, սուրբ Թորոս, սուրբ Գևորգ, սուրբ Գաբուստ, սուրբ Հա-
բարձում, սուրբ Խաչ, սուրբ Հրեշտակապետ, սուրբ Հարություն,
սուրբ Մկրտիչ, սուրբ Կարապետ, սուրբ Խոր-վիրապ: Ան մեկալ
սուրբերը՝ Արամ, Արշակ, Գագիկ, Աշոտ, Յմբատ, Տիգրան, Սե-
նեքերիմ — ան պոշ սուրբեր են, նրանց ո՞չ տեր-Աբրահամյանի
օրացույցը կընդունեն և ո՞չ քահանաները տոնշնորհավոր կբալեն:

Շատ ժամանակ շանցած՝ բոլոր քաղաքի մեջ անպիտան, ան-
ընդունակ, վնասակար — սրիկա ճանաչած երիտասարդը դարձավ
հայոց քահանա: Քրիստոսի բանվոր հոտի հովիվը և աստվածոր-
դու տեսանելի պատկերը նրա հետևողաց աչքում՝ ի փառս սուրբ
էջմիածնի և ի մխիթարություն հայ ժողովրդի:

Ես իմ պատմությունս գրեթե ավարտեցի: Ներողամիտ ընթեր-
ցողը առանց իմ ասելու էլ կարող է եզրակացնել թե՛ մի ժամա-
նակվա ստահակ, սրիկա Մինասը, այժմ տեր-Մինաս դարձած՝
ինչ սխրագործություններ պիտի կատարե ժողովրդիս մեջ, ո՞րքան
մարդիկ պիտի թերահավատացնեն, ո՞րքան անդորր ընտանիքի մեջ
շփոթ և աղմուկ պիտի մտցնեն: Ամեն հայաբնակ քաղաք և գրեթե
ամեն հայ եկեղեցի ունի իր սեփական տեր-Մինասը: Իսկ մեր

տեր-Մինասը, շորս տարի մնալով իր ծնած քաղաքի մեջ, ետևե՛լ այս հիշատակները թողեց:

Ամբողջ շորս տարի հայոց լեզվի և հայոց կրոնի դասատու էր տղայոց և օրիորդաց վարժարանների մեջ. այսինքն՝ հընթացս շորս տարվան նրա ձեռքի տակ մեծանալով ավելի քան թե հազար հայ մանկունք, գուրկ մնացին հայոց լեզվի և կրոնի գիտութենեն, վասնզի ի՛նչ պիտի սովորեցնեն նա, եթե ինքը ոչինչ սովորած չէր և ոչինչ չգիտեր (վասնզի ժողովուրդ մուրհեցնելը, փորը պարարելը, փողի ազահելը, պաշտոնակիցներին դավաճանելը, մատնություններ անելը և ուրիշներին էլ դեպի այդ դրդելը խո գիտություն չէ): Եվ, վերջապես, այն վրդովմունքներով, որով նա զբաղված էր՝ ամբողջ քաղաքը տակուվրա անելով, ունե՛ր նա ժամանակ կամ ձեռքը գիրք առնելու և կամ ուրիշին կարդացնելու:

Թեև նա դասատվության կողմանե բոլորովին անօգուտ էր ժողովրդին, բայց տեղական առաջնորդեն և նրա հաջորդեն խաչ ծաղկյա փիլոն և կամիլավքա պահանջողներից առաջավորն էր: Տեր Մինասին անհայտ չէին այն հնարները, որոնք ստիպում էին մի քանի արժանավոր քաղաքացիներին նրա համար բարեխոսելու և միջնորդելու ևս:

Զգիտեմ՝ ի՛նչ հնարներ գործ դրեց տեր-Մինասը, որ հավատացուց իր մեծավորին, թե ինքը շատ ազգասեր և գիտնական անձն է, և հոգով սրտով անձնատուր էր ազգիս նյութական և հոգևոր զարգացմանը, և այդ պատճառով նշանակվեցավ տեսող շրջակա գյուղօրեից դպրոցներուն: Այս նոր պաշտոնը ստանալով, նրա տնից արդեն գյուղական առատությունները՝ ոչխար, կովի խայմախ, մածուն, պանիր, կաթ, ցորեն, հավ-ձիվ, և այլն, և այլն անպակաս էին:

Յուր կնոջ պառավությունը և յուր քաջառողջ կազմվածքը նրան ներելի համարեց նաև... բայց նրա այս արարքի վրա ստվար բող ձգենք, խնայելով կարդացողի պարկեշտությունը: Քարշելի խոցերը ցույց տալը ոչինչ օգուտ չունի, եթե նրանք անբուժելի են: Տեր-Մինասի պես անբարոյական մարդիկ երբեք չեն ուղղվել՝ թեկուզ խոսքով մտրակե, թեկուզ իսկական մտրակով: Այդ տեսակի մարդիկ ամենից առաջ անամթ, լիբբ և հանդուգ են լինում և այդ հատկությունները միամիտ ժողովուրդը համոզման և քաջասրտության տեղ է ընդունում: Ի՛նչ պետք է անել տեր-մինասներին. չգիտեմ, միայն այս գիտեմ, որ եթե հանցանքը

անուղղելի է, հանցավորին առ միշտ պիտի աքսորել Սևան, ո՛ր, նրա համար, որ այնտեղ ուղղվի, ոչ. այլ որ ժողովուրդը ազատվի նրանից: Առյուծին, վագրին ինչո՞ւ գառադեղի մեջ են փակում— ուղղվելո՞ւ:

Ասում են թե՛ նա շատ անգամ կնունքե, հարսանիքե, թաղումե, հոգու հացե (քելիխ), տոնշնորհավորե, տնօրհնեքե, և այլն, և այլն, հարբած վերադառնալով գրեթե միշտ ծեծում էր իր հիվանդոտ կնկան, որ շորս տարի նրա ձեռքից նահատակության ամեն նուրբ լվանքը կրելով, վերջապես մեռավ, և այն ժամանակ տեր-Մինասը իր բարքի տեր մարդոց կարծիքով մի տեսակ արտոնություն ստացավ առավել ապերասան վարք ունենալու, քան թե իր կնոջ կենդանության միջոցին: Արդեն նա չէր շատանում աղախիններով և այրիներով. այլ աչքը առավել անուշահամ պատառների վրա էր ձգում... Այն ժամանակ քաղաքի աղաները ոտքի ելան և ուզում էին մի մասնավոր սարքելու և էջմիածին ուղարկելու, որ տեր-Մինասին Սևան աքսորել տան. բայց նրա բարեկամները (դուք կարծում եք թե՛ տեր-Մինասի պես մարդիկ բարեկամներ չև՛ն ունենում, ավա՛ղ. դուք սաստիկ սխալվում եք) խորհուրդ տվին յուրակամ շվել դեպի էջմիածին և կուսակրոն վճակ ընդունել: Նա այդպես էլ արավ:

էջմիածնի մեջ անպիտան հոգևորական շիկա. ամենքի համար այնտեղ պաշտոն կգտնվի. եթե վարդապետը գիտնական է՝ գրագիր կանեն, եթե շատախոս է՝ քարոզիչ կկարգեն. եթե լոսկյաց է՝ Մինոդի անդամ կընտրեն. եթե վիճասեր կամ կովասեր է՝ կուղարկեն անթոռապատկան հողեր հետ առնելու նրա սուտ տերերից. եթե հեղահոգի է՝ հյուրընկալ— կանեն: Եթե, ո՛ր միևր ասեմ մեկ խոսքով՝ էջմիածնի մեջ ոչ ոք անպիտան անօգուտ չէ (բայց եթե էջմիածնի մեջ ևս մարդ պիտանացու չլինի, չգիտեմ, ո՛ր կոյանոց պիտի ձգել նրան), անպատճառ մեկ բանի պետք կուզա: Մեր տեր-Մինասին նախ արեղայական կարգ տվին և ապա մաճնատան վրա տեսուչ կարգեցին, ուր կա 75—100 կով ու 7-10 կնանիք: Առաջինները կաթ պիտի տան և երկրորդները այդ կաթից յուղ, պանիր և մածուն պիտի պատրաստեն էջմիածնի սեղանատան և վաղարշապատի ամոթխած խաթունների համար:

Չինց տարիից մեր Մինաս վարժապետը աստծու ողորմությամբ և իր աչքաբացությունով երեք հազար ոտքելու տեր եղավ: Երբ այս լուրը հասավ մի սպասավորի ականջ, որ մի նշանավոր

անձի մոտ զանազան անորոշ ծառայություններ էր անում, իսկույն սկսավ խնամախոսություն անել՝ չէ՞ կամենում արդյոք հայր սուրբը իր վարդապետական աստիճանը եպիսկոպոսականի դարձնել:

Հենց որ Մինաս վարդապետը եպիսկոպոս ձեռնադրվեցավ, քանի մի ամսից բոթ (թե ավետիք) տարածվեցավ, որ կաթողիկոսը մեռել է: Հայաստանի բոլոր եպիսկոպոսանք պետական հույսերով լրջվեցան՝ մի օր իրենց սրբոց Թադևոսի, Բարդղիմեոսի և Գրիգոր Լուսավորչի աթոռի վրա բազմած տեսնելու:

Այդ ցնորքները մեր Մինաս եպիսկոպոսի մտքովն ևս անցավ: Կլինի կաթողիկոս կամ ո՛չ չգիտեմ, բայց այն հավաստի գիտեմ, որ նա այսօր չէ վաղը կստանա առաջնորդական թեմ, և կսկսե հովվելու արգեն ոչ թե մի ծուխ կամ թե կառավարել մի եկեղեցի, այլ ըստ կամս իր աչ ու ձախ պատույտ տալ տաճարակ քաղաքներ ու գյուղեր, հարյուրավոր եկեղեցիներ ու դպրոցներ ու բյուրավոր ժողովրդականք և մանավանդ նրանց վավականք՝ մեր ազգի ապագա հույսը...

Ես խոսքս վերջացրի:

Ներկա տարվույս մայիսի 1-ին (այսպես է սրբազնագույն Սինհոզոսի հրամանը) պիտի ընտրվի էջմիածնա մեջ ամենայն Հայոց կաթողիկոս: Ը՛վ կլինի այդ կաթողիկոսը՝ ես չգիտեմ (բայց ասում են թե՛ գիտցողներ արդեն կան) ո՛վ էլ լինի, աստված շնորհավոր անե նրա ընտրությունը:

Երբ այդ ցանկալի ընտրությունը կվերջանա, երբ նորընտիր կաթողիկոսի լսելիքը կհոգնին նրան շրջապատող մարդոց կեղծի բարեմաղթություններեն և ստորաքարշ շողորթություններեն, երբ վրա քանի-քանի ամիսներ կանցնին և նա կառաջանա կամ իր վեհարանի կամ Բյուրականի ամարանոցին մեջ, այն ժամանակ նա թող մի թեթե հայացք ձգե իմ այս երկտող խոնարհ աղերսագրույս վրա: Ես այդ նորընտիր կաթողիկոսեն շատ ու մեծամեծ սխրագործություններ չեմ պահանջում, չեմ պահանջում նաև նորամեն «Հայոց եկեղեցվո կերպարամափոխությունը ոտից մինչև գլուխ»: չեմ պահանջում անուն անմահացնող և հռչակի փառավող կոթողներ, արձաններ և արձանագրություններ, այդ ամենը չեմ պահանջում նրանից, վաճառի նրանց մեջ սզգիս համար մեկ առանձին օգուտ չեմ տեսնում: Ես կխնդրեմ մի փոքրիկ բան և այդ փոքրիկ բանը այս է. նախ՝ մեր ճովանքը աղատեր՝ տեր-Մի-

նասներե և հետո ապագայուէր տեր-Մինասներ շատացներ հայ ժողովրդի մեջ: Տեր-Մինասներն են, որ քայքայեցին մեր խեղճ էջմիածնի հիմվանքը, տեր-Մինասներն են, որ 30 միլիոնյա հզոր ազգը 3¹/₂ խեղճ ժողովրդի դարձրեցին: Եթե շերքեզները և քրդերը քանդեցին հայի ժամերի և տների պատերը, տեր-Մինասները հիմնահատակ արին բոլոր Հայաստանի տաճարները, թաղավորական գահույթը և անհամար մարդոց բարեկեցությունը: Հիշե՛ք միայն տեր-Կիրակոսին և Նիկոլ հայր սուրբին:

Վեհափառ տեր՝ ազատե՛ ազգս տեր-Մինասներե, և բու անունը օրհնած, գոված և փառաբանած Գլխի:

ՌՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ

(ՄԵԳՐԻՑ ԱՆԾԷ)

Տասնհինգերորդ դարուն, երբ որ տաճիկները արդեն տիրել էին Հունաց կայսրութեան մեծ մասին և սպառնում էին վերջին հարվածը տալ Ստամբուլին, հունական Արքիպողագոսի մանր կղզիներից մեկի վրա հետագա անցքը կատարվեցավ:

Մի հույն քահանա մասնատուփը բռնած, հանգստյան աղոթքներ կարդալով, անցնում էր մի փոքրիկ քաղաքի աղքատ փողոցի միջով: Անցնող դարձողքը բարեպաշտութեամբ գրակաները հանելով՝ մոտենում էին նրա աջը համբուրելու: Հետո քահանան կանգ առավ մի գծուծ տան առջև, դուռ բացվեցավ և նա ներս մտավ, և մի քանի աստվածապաշտ մարդիկ գնացին նորա հետևից: Նոցա մտած սենյակը փոքրիկ էր, միջի կահ կարասիքը հին և մաշած, որ հայտնի նշանակ էր բնակողների չքավորութեանը: Հին մահճի վրա պառկած էր մի հիվանդ կնիկ, որին արդեն պատրաստ էր մահը խելու: այնպես ուժգին տպավորված էր մահու տագնապը նորա կապուտկած երեսի վրա: Երբ որ քահանան մոտեցավ նորան, որ նորա վրա կատարե վերջին ծեսը, այսինքն՝ այն ծեսը, որ այս ժամանակավոր կյանքից տանում է դեպի անանց և գերագույն կյանքը, կինը բարձրացուց յուր ծանրացած արտևանունքը, ճիգ արավ, որ անկողնի վրա կարողանա նստած մնալու, ձեռքը երկարացուց տան մի խորշին ու նշանացի կանչեց յուր զավակներին, որոնք լաց ու արցունքով կանգնած էին: Նոցանից մինը տասնհինգ տարեկան պատանի էր, իսկ մյուսը նոցանից երկու տարիով կրտսեր աղջիկ: Տղան ու աղջիկը շտապով վազեցին դեպի անկողինը, աղիողորմ ձայնով ծունր դրին հիվանդի առջև և աչնպես մնացին, քանի որ տեևց այդ տխուր արարողությունը: Երբ որ հոգևոր հովիվը խոստովանեցուց հոգեվարքին, երբ որ նորա մարմնու վրա կատարեց վերջին սրբազան օծումը և երբ որ կարդաց նորա վրա սովորական աղոթքները և խրատները, մեկ խոսքով, երբ որ յուր կոշման և խղճմտանքի պարտքը բոլորովին հատցուց, դռնից դուրս գնաց և նրա հետ միասին գնացին այս

տխրալի տեսարանի հանդիսատեսքը՝ բարեպաշտ և հանդիսավոր լուսթյամբ:

Պատանու վրա նայողը կասեր թե նա յուր հասակից ծեր էր. երկայն ու սև մազերը փունջ փունջ ընկնում էին նորա թուխ և անտիկական երեսի վրա, ուր դուրս էր ցուլանում նորա հոգու արիությունը, նորա կայտառ և թափանցող աչքերը արտասուքով լըցված կայծակների պես փայլում էին. նորա արտաքին կերպարանքը լիովին ցույց էին տալիս նորա անվահերուցությունը և քաջությունը: Սորա անունը Քոմաս Բոցարիս էր. դա եղբայր է այն աղջկան, որի ձեռքը յուր ձեռքումը բռնած ուներ: Հեղինեն անօրինակ գեղեցիկ էր. նորա երեսի գծադրությունից երևում էր նորա շափազանց զգոնությունը և նորա հրեշտակական հեղությունը. նորա դեմքի վրա մի օտարոտի դյուրաշարժություն կար, որ նորա հոգու մեջ ծնած ամեն մի խորհուրդը ճշտիվ ցուլանում էր նորա երեսին: Ավա՛ղ, Հեղինեն մորեծնունդ մունջ գոլով— այդ էր թշվառականի միակ խոսք ու զրույցը: Ինչպես ասացի՝ Հեղինեն երկու տարիով յուր եղբորից կրտսեր էր:

— Բո՛ցարիս, ասաց հոգեվարքը, ահա՛ քու խնամքին եմ հանձնում քու քույրը. բացի քեղնից, աշխարհի երեսին նա չունի ուրիշ տեր և պաշտպան. խոսք տուր ինձ այս րոպեիս որ նորան անտեր չես թողնիլ:

— Մա՛յր իմ, ասաց պատանին, երզվում եմ, որ քու խնդիրքը անշուշտ կկատարեմ, միամի՛տ եղիր:

— Բարի՛ է, որդյա՛կ իմ:

Այս որ ասաց, առավ Բոցարիսի և Հեղինեի ձեռքը, իրար հետ միավորեց և մեղմ ձայնով սկսավ աղոթք մրմնջալու:

Նույն րոպեին դրսից սկսան դուռը ծեծելու: Բոցարիսը շտապով տեղեն վեր կացավ, գնաց ու բաց արավ դուռը: Ներս մտան տաճկաց փաշայի սպասավորները, լրբաբար եկան կանգնեցան սենյակի մեջտեղը և սկսան սաստկաբար պահանջելու նոր հարկ, որ Սուլթանը դրել էր յուր տիրած երկրների վրա:

Բոցարիսը նշանց տալով յուր մոր վրա՝ աղաչում, պաղատում էր շվրդովել նորա կենաց վերջին վայրկյանները. բայց իզո՛ւր. նորա արտասովախառն աղերսանքը չկարողացան անհավատների սրտի մեջ կաթիլ մի գուլթ շարժելու:

— Ախա՛, ախա՛՛ կրկնում էին նոքա անդադար, ապա թե ոչ, տան մեջ ինչ կա չիկա— բոլորը կհավաքենք կտանենք:

¹ Արծաթ, փող:

— Գործ երկարատե հիվանդութիւնը մեր առեւն ունեցածիցն զրկեց մեզ,— ասաց Բոցարիսը,— աղաչում եմ ձեզ, քանի մի օր ևս սպասեցեք, ինչ որ հարկն է, բոլորը կհասուցանեմ:

Բայց անողորմ սպասավորները ո՛չ նորա իրավացի խոսքին և ո՛չ աղաչանքին ակամջ դնելով՝ սկսան տան միջի բոլոր գոռոճ կարասիքը կողոպտելու և դռարս տանելու. փերջապես կամենում էին այն մահճը ևս առնելու, որի վրա պատկած էր հոգեվարք կնիկը, և արդեն սկսել էին թշվառականի տակից քաշել հանելու, հանկարծ Բոցարիսը հուսահատաբար հարձակվեց անօրեններու վրա, սաստիկ կոխվ, թակ ու շարդ բացվեցավ նոցա մեջ, և հիվանդը շկարողանալով տանելու այդ քամեղի տեսարանը, կողկողազին միշ արձակեց և ավանդեց հոգին...

Հաժանական է, որ այս սոսկաղի դեպքը քանի մի ժամով անապարեցուցած լինէր նորա մահը:

Բոցարիսը և Հեղինեն լսելով հասաշելով ընկան յուրյանց մոր անշնչացած մարմնու վրա: Այս արտասովելի տեսարանին ներկա գտնվող անհավատները առ ժամ մի կանգ առին ու դադարեցան յուրյանց գարշելի գործքին:

Ինչ որ տան մեջ կար շիկար՝ բոլորը ժողովեցին նոցա և հետները առած, գորտ: Գնացին, տան մեջ թողնելով միայն հարգալից մահճը, որի վրա կար դին: Բոցարիսը տեղեն փեր կացավ, գլուխը բարձրացուց. հոռուկտար ձայնով աղաղակեց «Վա՛յ ձեզ, անհավատներ, վա՛յ ձեզ, երբ դուք շուգեցիք իմ հոգեվարք մորը վրա խղճալու և նորա նվիրական վերջին վայրկյանները հարգելու կենդանի է աստիճած, կուգա այն օրը, երբ դուք պատասխանատու կլինիք իմ մոր համար, սաստիկապես հաշիվ ու համար կուտաք մեր սուրբ հավատը և մեր սրաշտելի հայրենիքը ոտնակոխ անելներով համար...

2)

Վրա անցավ մեկ տարի, ու թոմասը յուր մոր տված խոսքը ճշտիվ կատարեց: Կարողութիւնը հասածի շար խնամք տարավ Հեղինեի վրա և յուր արթուն հովանավորութիւնը անպակաս արավ նորանից: Նոքա երկուսը իրար այնպես էին սիրում, ինչպես որ եղբայր ու քույր միմյանց կարող են սիրելու: Բոցարիսը ձկնորս էր՝ Յուր պաշարըր տանում էր քաղաք և այնտեղ շուկայում ծախում

էր: Երբ որ օրական վաստակից դադարած տուն էր դառնում, անում էր հետը Հեղինեին և նորա հետ միասին գնում էր ծովի ափը՝ հստակ օդ շնչելու: Մտնի գովարար ասովերի արակ նստած, ուրախուրախ նայում էր նորա երեսին և աշխատում էր նորա մտքի ամենամանր խորհուրդները իմանալու: Երբեմն Բոցարիսի երեսի վրա սրտամոթեցան ամպ էր իջնում, և այդ շատ վախեցնում էր Հեղինեին. և նա քրոջ միտքը խաղաղացնելու համար դանադան նըշաններով հասկացնում էր, որ տաճիկների բռնոր օրէօր առավել աստկանում է նոցա վրա. նոցա քոսք ասանարմեքը պղծում են և Ստամբուլից գալու օգնութեան հույար օրիօր նվազանում է:

Մի օր Բոցարիսը սովորականից աստիճել տխուր էր, նոր որ տան փարձամ, աչքերը գես ու գեն ձգեց և սկսավ քրոջը սխտրեցու, որ սովորաբար նորա առաջն էր վաղում. բայց Հեղինեն չկար. հետո դան դոտ վազեց, կանչեց, հարցուց անցնող դաժողներին, բայց նորա խուլքը և խնդիրը անպատու մնացին. Հեղինեն չկար ու չկար: Վերջապես տան տափի վրա աստիճալ ասպարոշ (չարմա) ու հանկարծ մտքով վրա եկավ առակալի ճշմարտութեան. — նա իմացավ, որ տաճիկները եկել վասխցրել են նորան. և նոցան բոպեփն սոսկալի երդումներ տվավ ինքն իրեն, որ այնու պետք չէ մնալու և համբերելու, և հաստատ որոշեց յուր հավատի և հայրենյաց թշնամիներուն խորտակել և հալածել:

3)

Մեծահանգես տուն էր: Հունաց փոքրիկ քաղաքի փողոցները և հյուպարտիկները լիքն էին բազմախուռն ամբոխով: Հանկարծ Բոցարիսը եկավ կանգնեցավ ժողովրդի մեջ և տեղն ի տեղն պատմեց յուր գլուխն եկած աղետալի անցքը. ամենուն ցույց տվավ ապարոշը, որով իմացվեցավ, որ Բոցարիսի տունը մտնողը և նորա Հեղինե քրոջ փախցնողը տաճկաց դատին՝ պիտի լինէր:

Այդ միջոցին ինքը դատին մի հեծած և շատ սպառազինած սպասավորներով պատած, անցնում էր նոցա մտտից:

— Մի ինձ օգնել կուզե, — աղաղակեց հանկարծ Բոցարիսը, հանեց գոտիից դաշնակը և տաճկի կուրծքը միսեց. — թող գա իմ հետեից: Ժամանակը հասել է, որ մենք մեր թշնամու վրեժն առնունք: Կորչի՛ անհավատը, կեցցե՛ մեր հայրենիքը, կեցցե՛ մեր

¹ Հոգեք գատալը մահեղականների մեջ:

կրոնը, մեր Պալեոլոգ կայսրը. նրա իշխանութիւնը և Քրիստոսի խաչը:

Այն քաղաքի մեջ մի մարդ չի կար, որ շճանաչեր նորա սրտի արիւթիւնը, քաջութիւնը և նորա հոգւոյ ազնւութիւնը. ու շղարձենելով նորա մատաղ հասակին, ամենքը վստահ էին նորա վրա և սիրում էին: Նորա քրոջն ևս ճանաչում էին կղզեցիքն և սիրում էին, և համոզված էին, որ նա աստուծոյ առանձին հովանավորութեան ներքո է:

Ժողովուրդը Բոցարիսի օրինակին հետեւելով՝ հարձակվեցավ տաճիկներին վրա և սաստիկ ջարդ և կոտորած բացվեցավ նոցա մեջ: Ծաճիկները շղարողացան երկար դիմադրութիւն անելու, նոցա մեծ մասը սպանած մնաց փողոցի մեջ, մյուսները փախան և ցրվեցան: Այս հաղթութենովն քաջալերված՝ ամբողջ անհապաղ գնաց դեպի դատի բնակարանը, ազատեց շեղիններն և հանձնեց եղբորը. խեղճ աղջիկը տխրութենէն և ուրախութենէն գրեթէ կիսամեռ տուն դարձավ: Այս դեպքից հետո կղզեցիքը ոտքի ելան տաճիկներու դեմ, ապստամբեցան և իսպառ հերքեցին նոցա տիրապետութիւնը և յուրյանց հալածիչներին բոլորովին արտաքսեցին յուրյանց կղզիներն:

Բայց պետք էր մի գլուխ, մի մարդ, որ մինչև Ստամբուլ իմացում տալը և այնտեղեն նավերով օգնութիւն հասնելը՝ կարողանար կառավարել քաղաքացիներուն և կղզին ներքին և արտաքին թշնամիներեն և երկպառակութենէն պաշտպանել: Այն ժամանակ կղզեցիքը միաբերան աղաղակեցին. «Թող նա լինի մեր կառավարիչը, որ մեր թշնամի՝ խորտակեց և հալածեց»: Եվ այսպես տասներկու տարեկան Բոցարիսը կղզիի ժամանակավոր կառավարիչը նտրվեցավ:

Երբ որ այս պատանի դշուցազնի սխրագործութեան համբավը հասավ մայրաքաղաք՝ մեծից մինչև փոքր ամենքը առհասարակ ուրախացան, տեսնելով՝ որ տակավին նոցա մեջ միանգամայն չմարած չէր նախնի Հունաստանի դշուցազանակ ոգին. բայց կայսրը և նորա ավագանին տերութեան ուրիշ ծանրակշիռ հոգսերով զբաղված՝ չուզեցան ամբողջ աշխարհի վիճակը թողնել և մի անշշան կղզիի վրա դարձնել յուրյանց ու յիստքը: Բոցարիսը կղզիի գլխավոր կառավարիչը մնալով՝ ամեն կերպ ջանաց նրան ամրացնելու և քաղաքացիներին մեջեն փոքրիկ զորք գումարեց: Երբ տաճիկներն իմացան, որ կղզեցիք ոտքի են ելել և արտաքսել

են յուրյանց հայրենակիցներին, շատ բարկացան և կամեցան նոցա շարաշար վրեժխնդիր լինելու՝ պատերազմիկ նավեր կազմեցին ապստամբիչներուն. բայց երբ որ թշնամու նավախումբը մոտեցավ կղզիի ափերին՝ հույները առաջվա պես անպաշտպան չէին. Բոցարիսի նորակազմ զորքը նոցա դեմ ելավ սաստիկ դիմադարձութիւն արավ և մեծ վնասով հետ քշեց տաճիկներուն:

Ինչպես որ հայտնի է պատմութենէն, այդ կանգ-ժամուրի սոսկալի հրոսը ասպատակելով Տաճկաստանը, հաղթեց Բայազետի զորքը, իրեն Սուլթանին գերի առավ և երկաթե վանդակի մեջ պահեց. փոքր-ինչ հետո տաճիկ սուլթանները հետզհետե պատերազմներ մղելով հունաց ազգի հետ և պատրաստվելով նոցա աշխարհը տիրապետելու՝ յուրյանց բոլոր մտադրութիւնը դարձուցել էին Բյուզանդիոնի պաշարման վրա. այդ պատճառովն էր ահա, որ նոքա մոռացել էին կամ գոնե առ ժամանակ մի թողել էին ապստամբած կղզին, որո բնակիչքը Բոցարիսի կառավարութեան տակ երկար միջոց վայելում էին անվրդով խաղաղութիւն և երջանկութիւն:

4

Այսպես շատ տարիներ անցան, Բոցարիսը յուր պատանեկութեան հասակէն մտավ այրականը. բայց ո՛չ տարիք և ո՛չ բարձր աստիճանը կարողացան նորա առաքինութիւնը խախտելու. ինչպես որ էր՝ այնպես մնաց, — միշտ մարդասեր, բարի, ընկերահաշտ և խոնարհ, և այդ գովանի բարքովը նա սիրելի և հարգելի մնաց յուր քաղաքակիցներին, որոնք միշտ հնազանդ էին նորա հրամանին:

Բայց ուրեկեց շարերը պակաս չեն աշխարհիս երեսին. այնպիսի մարդիկ գտնվեցան, որոնք շար աչքով էին նայում նորա հառաջադիմութեան վրա և ամեն կերպով աշխատում էին խել նորանից կամ նսեմացնել այն փառքը, որ նա ստացել էր յուր քաջասրտութեամբը և այն երախտիքով, որ հասուցել էր յուր ազգին և հայրենյացը:

Մի օր շեղիններն եղբորը սափորով գինի տվավ, որն որ Բոցարիսի տանը շեղած ժամանակ մի անձանթ մարդ նորա համար ընծա էր բերել: Վա՛յ քեզ, շեղինե՛, դու չգիտեիր, որ այդ սափորով քու եղբորը թույն էիր տալիս, դու չգիտեիր, որ շար բախտը

— 321 —

գործի էք ընտրել քեզ քու եղբոր աղետալի մահովան... Միամիտ
Բոցարիսը օրհասական անոթը բերանին աարած շտարած՝ հան-
կարծ աչքերի մեջ կատաղութուն ցույց, երեսի տխարաբք սկսան
ժամովելու, բերանը փրփրաց և նորա ամեն մի շարժվածքի մեջ
դիվահարության նշանները ակնհայտն էին երևում։ Սոսկացավ
Հեղինեն, մագերթ փետտեղով՝ ընկավ եղբոր ոտերին։ Բայց նա
քոջը չճանչցավ և յուր արածը չգիտեր, և շատ ժամանակ շան-
ցած սոսկալի տանջանքներով Հեղինեի գրկի մեջ փչեց հոգին։

Հուզարկավորության տխրալի ծեսի ժամանակ, երբ որ ժողո-
վորդը սուգ անկելով տանում էր Բոցարիսի մարմինը, խեղճ Հե-
ղինեն անմեկնելի հուսահատությունը երեսին գծագրած՝ ոչ մի
բուսի աչքը չէր դարձնում դագաղից, ուր անձայն և անշարժ կար
նորա նագելի եղբայրը։ Վերջապես երբ որ մեռելի մարմինը բե-
րին գերեզմանատուն և խցուցին գերեզմանի մեջ, ժողովուրդը լուս
ու մուսջ հեռացավ և տուն դարձավ։ Բայց Հեղինեն շուգեց յար
եղբորեն հետանալ և մնաց այնտեղ, որ ամփոփված էր նորա
մարմինը. պինդ գրկեց խաչքարը, որ բաղմությունը դրել էր նո-
րա գերեզմանի վրա. ու մնաց, ու ասես թե կապվել միավորվել էր
քարի հետ։ Մյուս օր, երբ որ երախտագետ քաղաքացիքը հանգու-
ցելո հիշատակը պատվելու համար եկան նորա գերեզմանի առաջ,
ի՞նչ տեսնեն. Հեղինեն նույն դրությամբ էիցած էր։ Խեղճ աղջիկը
չէր կարողացել առանց եղբոր ապրելու։

Բոցարիսի մեռնելովը կղզեցիք կտրուսին յուրյանց ապահա-
վությունը, ապատությունը, անդաբր և երջանիկ էյանքը։ Տաճիկ-
ներն ևս իմացան այդ, յուրյանց համար ուրախալի անցքը, և այ-
նուհետև ստեպ ստեպ առապատակներ անելով՝ անդադար ավերում
և կողոպտում էին կղզեցիներու ինչքը և կայքը։ Բոցարիսը չի
կար, որ ժողովրդին միացներ, խրախուսեր, ոգի և զորութուն
տար նոցա հետ միասին հետ մղեր թշնամիների հարձակմունքը։

Շուտով Բյուզանդիան ևս տապալվեցավ Մեհեթեց Բ-ի ուժգին
հարվածներեն, և այնուհետև այս փոքրիկ կղզին կրեց նույն դան
վիճակը, որն որ Տաճիկները պատրաստել էին ամեն քրիստոնյա
երկիրների համար։ Կոնստանդնու քաղաքը և նորա ամեն զավա-
ները հեծեծում էին և սուգ էին անում անհավատների ծանր լուծի
տակ՝ մինչև որ լուսավորյալ Արևմուտքը հիշեց Հունաց նախկին
փառքը և սխրագործությունը և ի հիշատակ նորա թողուցած ան-
մահ հուշակին՝ ոտքի կանգնեցուց նորա սրգվացքը։

ՆՈՐ-ՆԱԽԻԶԵՎԱՆՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

1875

2 Ա Խ Ա Ի

Ջրկիր Մարտիրոսի պատմածը

Գարունը դեռ հասած չէր, բայց էն տարին շոգը էնպես վաղ
էր կոխել, որ փետրվարի տասնհինգին—քսունին արգեն գալար
արոտը, բանջարը գետնից մեկ թիզ վեր էր էլել։ Մարտի սկզբին
արգեն տարժեքը եկել էին հեռու տեղերից և տանիքների կրա-
միտների մեջ սկսել էին իրենց բույնը շինել, կուսակները, վայրի
սագերը երամ-երամ, կոկոսով Դոն գետի կողմից դեպի Ռուսաս-
տան էին թաչում գնում։ Էլ վախ չկար հանկարծակի ցրտերից։ Մի
քանի օր էլի անցավ, արարի՜չ Աստված, էնպիսի շագեր արավ,
որ բոլորովին հունիտի տոթ ու տազն էր... շորությունից գետինը
սկսեց նաբճքել, ձյունի թողած խոնավությունը վաղուց անցել ան-
հետացել էր. հողագործները Աստված, Աստված էին կանչում։
Եթե էլի մի քանի օր էզպես շարունակվելու շիներ, ամբողջ ցորև-
նը պիտի թառամեր, փչանար։

Էդ ժամանակները ինչպես կլինի որ ձիս ոտքը վեռանել էր.
ոչ միայն բեռ քաշելու, ասքի վրա կանգնելու ուժ չուներ անա-
սունը։ Բայց այգիս անպատճառ ջրել էր պետք, թե չէ՛ էնքան
տարվա աշխատանքս մեկ շաբաթվա մեջ պիտի գնար։ Ուզեի-
չուզեի, մեկ ջրկիր պիտի բանեի, պետք է գետից— նկատված է,
որ աղբյուրի շուրջ պատրեղին օգուտ չի տալիս— տակաւ-տակաւ
ջուր կրել ու դուլլերով ծառերի տակը լցնել տայի։ Էնպես էլ արի-
բանվորիս հատկապես ջրկիր Մարտիրոսի ետեից զրկեցի, որ
վաղվանից սկսի գետից ջուր կրել։

Մյուս օրը բազար գնացի և մինչև կեսօր, ինչպես սովորութիւնս էր, խանութումս մնացի: Երբ կեսօրվա ճաշին տուն վերադարձա, Մարտիրոսը երկու ձեռքին երկու դուլլ անդադար տակառից ջուր էր քաշում և պարտեզիս տակառիկներն էր լցնում, բանվորս էլ— երիմից նոր ծառեր էի ապսպրել— տեղ-տեղ փոսեր էր փորում: Հացից դեռ նոր էի վեր կացել, մեր Մարտիրոսը էլի մեկ տակառ էր բերել գետից և պարտեզս ջրելու վրա էր, որ ես էլ էն-տեղ գնացի՝ նայեմ, բանվորս ի՞նչ բանի վրա է:

Հին ծիրանի ծառս էն ձմեռ ցուրտը խփել շորացրել էր, բանվորիս պատվեր էի տվել, որ արմատով հանի և նորից այնտեղ մի փոս փորի, որ ծառ տնկեմ: Երբ պարտեզս մտա, հենց էդ փոսը փորելու վրա էր բանվորը: Գնացի կանգնեցի էդ փոսի ափին և թմրածի պես մնացի. շատ կեցա էդպես, քիչ կեցա, չգիտեմ. միայն բավական ժամանակ մնացած պիտի լինեմ, քանի որ Մարտիրոսը այդ նոր բերած տակառն էլ արդեն դատարկել էր և սուսփուս ետև կանգնել էր, միտքը երևի փող ուզենալն էր, բայց երեսը չէր բռնում ինձ ասելու, ձեռքը խաչ կապած կանգնել էր խեղճ մարդը: Մեկ էլ ետ դառնամ, ի՞նչ տեսնեմ, էդ մեր Մարտիրոսը սառած, քար կտրած կանգնել է, աչքը փոսից շի հեռացնում, ուղիղ մեջն է նայում, ու աչքից առատ-առատ արտասուք է վազում ու գետնին է թափվում...

«Հա՛ժե, ի՞նչ եղավ քեզ»,— հարցնում եմ: Բան չի ասում:

«Հա՛ժե, Մարտիրոս,— ասում եմ,— գովել ե՞ս, ի՞նչ է, էդ հասակի մարդ լաց կլինի՞ որ, շե՞ս ամաչում, երեսիդ գուլնին մեկ նայիր, բոլորովին մեռել ես ո՞ւր»: Մարտիրոսը էլի սուս կանգնել է, փոսի մեջն է նայում: Էդ ժամանակ բանվորս հողը փոսից հանեց ու մի կողմ շարտեց, հողի հետ մի փտած փայտի կամ ոսկորի պես բան էլ կար, որն որ գլորվեց հենց ոտքիս հասավ: Հանկարծ մեր Մարտիրոսը խելագարի պես վրա ընկավ էդ փտած ոսկորին, շտապով գետնից վերցուց ու դիվահարի ձայնով սկսեց կանչել.

«Յա՛նկա, յա՛նկա, վա՛րպետ, վա՛րպետ, Մկրտիչ վարպետ, ահա՛ ձեր կորած շախուն, ահա էն շախուն... գտնվեց... Մեռնեմ անունիդ, սուրբ Մինաս, վերջը վերջը դու լույս հանեցիր իմ կորուստը»...

Կանգնած տեղս սառած մնացի, էսպեսի զարմանալի բանի դեռ իսկի հանդիպած չէի, աչքովս շտեմնեի ու ուրիշից լսեի բո-

լորովին չէի հավատա, որ Մարտիրոսի պես ծանր բնութքով մարդը— տասնհինգ-քսան տարուց ի վեր նրան ճանաչում էի— էդպես խենթ-խենթ դուրս տա: Ի՞նչ մեղքս պահեմ, խեղճ մարդուն խելագարված կամ բռնված կարծեցի, բայց, երբ բանը տեղով իմացա, մտքիս մեջ մեղայի եկա և ետ կարծիքս փոխեցի:

Մարդուն հազիվհազ խելքի բերի, թե չէ՝ խեղճը հարբածի պես բան եղել էր: Էդ փտած ոսկորը ձեռքը ամուր բռնած, հայհայ պատերն է բարձրանում, «յա՛նկա» է կանչում, «վա՛րպետ» է կանչում, մեկ էլ լուտ է, մինչդեռ Մկրտիչ վարպետի մեռնելը քսան տարուց ավելի է, նրա կնոջ մեռնելն էլ քառասուն տարուց պակաս չի լինի:

Էս տունս, որտեղ այժմ ես կենում եմ, ժամանակով տիրացու Մկրտիչինն էր: Էդ տիրացու Մկրտիչը սրանից հիսուն տարի առաջ էս տան մեջ կարդացնելիս է եղել: Ինչ էլ լինի, մեկ խոսքով, բանի եղելութիւնը էս էր: Բայց դու արի ու հիմա հարցրու թե՛ ինչո՞ւ ջրկիր Մարտիրոսը փոսի առջև սառած մնացել էր ու լաց էր լինում, ինչո՞ւ փտած ոսկորը տեսավ թե չէ, գժի նման գետնից վերցրեց ու սկսեց «յանկա» ու «վարպետ» փնտրել: Էդ էլ ջրկիր Մարտիրոսը իր բերանով թող պատմի:

«Սրանից հիսունհինգ տարի առաջ, էս քո կեցած տան մեջ կենում էր Մկրտիչ անունով մի տիրացու և քանի որ էս տիրացուն իր ընկերակիցների մեջ ամենից գիտունն էր հիշվում— այսինքն՝ ասել եմ ուզում թե՛ քիչ-քիչ գրել-կարդալ գիտեր, մյուսները էն էլ չգիտեին— իր համար պարապմունք էր արել աշակերտներ սովորեցնելը: Ես էլ էդ ժամանակները կլինեի գուցե տասը տարեկան: Մեկ անգամ պապաս թևիցս բռնեց ու տարավ տիրացու Մկրտչի մոտ աշակերտ տվեց:

Պապաս— Աստված հոգին ողորմի— շար բնութքով մարդ էր: Ինքը որովհետև մինչև պսակվելու օրը հոր ձեռնափայտից դողացել էր, էնպես էլ ինձ էր ուզում խիստ պահել: Պարծանք չլինի ասածս, իմ բնութքս ավելի մամայիս բնութքին էր նման՝ սուսուսփուս, վիզս ճուկ: Բայց էդ չօգնեց. երբ որ պապաս առաջին անգամ տարավ ինձ Մկրտիչ վարպետին տվավ, նախ և առաջ մեկ լավ ականջս ոլորեց. հետո մեկ ապտակ էլ շխկացրեց երեսիս ու ասաց. «նայիր, վարպետ, որդուս բերել եմ, կաշին քեզ, ոսկորը ինձ. ինչ կուզես արա՛, ուզում ես՝ խեղդի, ուզում ես, քերթի, ու-

գում ես մորթի, էնքան է, որ հիմար եմ տալիս, խելոք պիտի առնեմ»:

Վարպետ ասածս բանդ մեր ժամանակները, ինչ ասեմ քեզ, թե որ ասեմ գայլ-դաղանից էլ սասանական էր, արդյոք դորթ ասած չե՞մ լինի: էդ հիմա է, որ երեխին վախեցնել որ ուզում են «Ա՛յ արջը եկավ. ա՛յ վիշապը եկավ, ա՛յ մրտմրտապը եկավ» են ասում, որ երեխան մի քիչ սքտի մեջ վախ ունենա ու իր շարու-թյունից ձեռք վերցնի: Մեր ժամանակները «վարպետի» անունը որ տալին, լեզուներս կպատուեք, փախչող-փախչողի կլինեհիք, որս գուլաբը կմտներ, որս ծալքի մեջ կուշ կգար, ժամերով կկենար, ձայն ծպտուն չէր հանի— էդպես սասան-սասանի կգայինք:

Երբ ես ավելի փոքր երեխա էի, վարպետի անունը լսելիս, մեկ ձիգ հասակով, երեսը շոր-շոր, սուր մորուքով, շալե կապալով, մեկ ձեռքին տեղ ողորմյան, մեկ ձեռքին կարմիր ճիպոտ— էզպիսի մի հրեշ էի երևակայում: Երբ որ պապաս ձեռքիցս բռնեց, տարավ վարպետի տուն և ինձ հանձնեց նրան— իր ձեռքով ականջս քաշածը ու ապտակ տվածը էն ոչինչ— մտքիս մեջ էնպես կարծեցի, որ ողջ-ողջ ինձ պատանքեցին և սև հողը դրին... Որբի պես վիզս ճուկ կանգնել եմ, իսկը այն կապած-կապկպած մատաղի գառը, որ մինչև ժամկոշի դանակ սրելը՝ սուս-փուս պառկել է նրա ոտքի տակ...

Մկրտիչ վարպետը ծալապատիկ նստած էր մեկ քառակուսի պատիկ մինդարի վրա— մեր ժամանակները հիմիկվա պես վարպետի տանը աթոռներ, նստարաններ, սեղաններ չկային— երեսունհինգ-քառասուն աշակերտներ էլ կողք-կողքի, մեջքները պատերին արած, իրենց մինդարների վրա նստած, ձեռքերին մի-մի պնակիտ¹ կամ քերական² դասերն էին սովորում. այն սասանական «ճիպոտը» վարպետի առջևն էր, էսօրվա պես միտքս է. երկայնքը հինգ շարեք կլինեն, բուր մատիս հաստությանը, ծայրին ծակ ուներ, ծակի մեջն էլ թել էր անցկացրած, որ պատից կախվի: Աշակերտներից մի երկուսին ճանաչում էի, բայց շատերին առաջին անգամն էր տեսածս:

«Ձէ, ինչո՞ւ,— ասաց Մկրտիչ վարպետը,— գուցե որդիդ ուշադիր է լինում, դասը լավ է սովորում, գուցե խեղճը իսկի շարու-

¹ Տախտակի վրա կպցրած այրուքնն:

² Այրբենարան

թյուն չի անում: էն ծեծը որ կա, շարերի ու ծուլների համար է... Գու իսկի լսած չե՞ս. Տեր մեր Հիսուս Քրիստոս ասե (երեսը խաշ հանեց, պապաս էլ ետևիցը), օրհնյալ է փայտն (ճիպոտը վերցրեց և ցույց տվավ աշակերտներին) որով լինի արդարություն... Գե՛հ, էդ էլ էդպես...

— Ձէ,— ասաց պապաս,— իսկի էդպիսի բան կլինի՞... էն ավետարանի խոսքը կա ու կա, բայց երեխան որ առանց ձեծի մեծանա, մեկ օր ինքը— հեռու տանից տեղից— հորն ու մորը վրա ձեռք կբարձրացնի: Աշխարհս էդպես է, էդպես էլ պիտի գնա: Հիմա դու, ի՞նչ է՞ վարպետ ես, մեր հնուց կարգերը ոտքի տակ պիտի տա՞ս, ի՞նչ է... Իհարկե կարգդ Աստված հաստատ պահի... Բայց երբ լսել եմ թե որդու երես ես տալիս, վախով շեւ պահում, երախտիքդ խնայում ես նրանից, սիրտդ թող չցավի, թքել եմ ես քո գոված իմաստությունիդ վրա... Ի՞նչ է, դու կարծում ես, թե ես որդու տիրացու կամ վարդապետ եմ ուղո՞ւմ անել... Սո շեմ ուզում,— ասաց պապաս և բուր մատը խցկեց կողքի երկու մատների մեջտեղ... Տերտեր, վարդապետ, տիրացու, ժամկոշ— էս ամենը մեկ տեսակի բաներ են:

Նայաց սիրով հայրդ գթած.

Քաղցած ենք, տուր մեկ կտոր հաց...

Իհարկե, գրոց լեզուն գիտես, քերական, ճարտասանություն, աստվածաշունչ— ամենը կարդացել ես, բայց ասելուցս ինձնից քեզ խրատ չլինի... «էդ Աստված պապան Ադամ-Եվային որ ստեղծեց, թե որ գրել կարդալը լավ բան էր, ինչո՞ւ իսկույն առջևները մեկ քերական չդրեց, շասաց թե «էդ լավ բան է. սովորեցեք»: Ինչպե՞ս է որ ողորմած Աստված հատուկ իր ձեռքով ստեղծած ազամորդուն լավություն չէր կամենալ... Հը՞, ինչպե՞ս ես, դորթ է ասածս, թե չե՞... Բայց ես քեզ դրանից էլ խելոք, խելքի պառկելու բան ասեմ: էդ գրել-կարդալ ասածդ ուրիշ հաշիվ ունի... էդ պատիկ երեխան որ կա, կատարյալ մի վայրենի գազան է. ինչպես որ գազանին դնչկալով, շղթայով կղսպեն, գառը կդարձնեն, հենց էնպես երեխաներին էլ գրել կարդալով կղսպեն, հոգիները ջանից կհանեն, աչքերի լույսը կմարեն, կմաշեն. ահա դրանից հետո երեխան օրինավոր մարդ կդառնա, վիզը կծոխ, սրտի մեջ ահ կունենա, մեծի առջև ձեռքը խաշկապած կկանգնի, մարդու սիրտ ցավացնելու տեղ՝ սիրտը շահել կաշխատի, հարուստի ու իշխանի պատիվը կճանաչի... Ապա, ջանս, դու գիր կարդացող ես,

իմաստունն ես, բայց քեզնից տեղով գիտեմ գրել-կարդալու
օգուտը:

Ասաց ու տեղից ելավ:

— Է՛հ, ինչպես որ ասի, էնպես էլ կանես. վարձդ էլ ինչ որ
է՛ շորս ամիսը մեկ կառնես:

Վարպետի վարձ, տարեկան պիտի տայինք երկու ոտքի
ասիզնացի, հիսուն հատ հավկիթ, մեկ փութ ալյուր, մեկ հավ և
մեկ բար:

Պապան գնաց, ես մնացի: Վարպետս դարձավ ինձ և ասաց.
«Հա՛ծե, պստիկ, անունդ ի՞նչ է»: «Մարտիրոս է»,— ասի,— ձա-
յնքս փորիցս էր դուրս գալիս: «Հա՛ծե, Մարտիրոս,— ասաց,— էս
երկայն ճիպոտը տեսնո՞ւմ ես, հետո մինդարի տակից հանեց մի
Ֆալախա, «էս Ֆալախան էլ տեսնո՞ւմ ես», ասաց: Ողջ մարմինս
փուշ-փուշ եղավ. երբ որ կարմիր ճիպոտն և հաստ ֆալախան
տեսա, կարգին շերմով բռնվածի պես ամբողջ մարմնով դողացի
«Հը՞, վախեցա՞ր, ասաց վարպետս, իշտե լավ իմացիր, որ շա-
բությունն արել ես, թե չէ, տապանիդ կաշին կպլոկեմ»,— ասաց ու
ճիպոտը ժը՛վ, ժը՛վ, ժը՛վ թափ տվեց:

— Հետդ քերական բերե՛լ ես,— հարցրեց հետո:

— Հա,— ասի ու քիսայիցս հանեցի մի հասարակ գիրք կար-
միր կազմով ու պղնձե կոճակներով:

— Էս ի՞նչ է,— ասաց վարպետը,— բեր մեկ տեսնեմ:

— Պապաս տվեց, ասի ու գիրքը իրեն տվի:

— Հա՛ծե, ապուշ, սա քերակա՞ն է, որ ձեռքդ տվել են: Սա
Նարեկ է ո՞ւր:

— Պապաս տվեց, ասի նորից, ուրիշ բան չգտա ասելու: Ինչ
նրա քերականը գիտի, ի՞նչ Նարեկը. էն բոպեին բացի ճիպոտից
ու ֆալախայից ուրիշ բան չէի տեսնում աչքիս առջև: Ինձ էնպես
էր երևում, որ տան շորս պատերից ամեն տեղ ճիպոտներ ու ֆա-
լախաներ են կախած, տղաների ձեռները մեկ-մեկ ճիպոտ էին երե-
վում ինձ, ոտներն էլ մեկ-մեկ ֆալախա: Առաջին անգամն էր
վարպետի մոտ գնալս: Աստված կսիրես, ես ի՞նչ գիտեի՝ ի՞նչ
տեսել է կարդալ, գրել, քերական, Նարեկ:

— Անշնորհք,— ասաց Մկրտիչ վարպետը,— տղան որ վար-
պետի մոտ է գալիս, էն գլխից ձեռքը քերական կտան, քերականը
որ վերջացնի, պստիկ-սաղմոս կտան, էն էլ որ վերջացնի՝ մեծ-
սաղմոսը կտան. նրանից հետո ժամագիրք կտան, հետո ավետա-

րան կտան, էն վերջը Նարեկ կտան, էն էլ որ ավարտի, ասել է՝
օրթնավոր կարդալը վերջացրած կլինի, վարպետից էլ դուրս կեր-
թա: Բայց ապուշի գլուխ, արի նայենք, այսքան բան դու ե՞րբ պի-
տի ավարտես, որ Նարեկը կարողանաս կարդալ... Նայիր էդ տյա-
ներին. ո՞րը շորս տարի է մոտս, ո՞րը երեք տարի է, մեջները կե-
պեսներն էլ կան, որ հինգ տարի են սովորում, բայց մեկի ձեռքը
Նարեկ տեսնո՞ւմ ես... Ձէ՛, տղաս, գիր կարդալը էդ տեսակ հեշտ
բան չէ, էս ներկարարի կաթսան չէ, որ տղային մեջը խոթես հա-
նես ու հոր ձեռքը տաս. «ահա՛, որդիդ պատրաստ է»: Է՛յ, որդիս,
որդիս, դեռ շատ պիտի աշխատես, ձեռքիդ ափն ու ոտքիդ ներ-
բանը դեռ շատ պիտի բշտի ու քանի՛-քանի՛ անգամ կաշին սյի-
տի փոխի, մինչև որ Նարեկին հասնես...

Ես գլուխս կախած լսում էի, ասածից էսքանը հասկացա, որ
մկան պես թակարդ եմ ընկել, միջիցը ազատվելու ճար չունեմ,
մեկ կողմից խիստ հայրս, մյուս կողմից դեկ պես վարպետս, էս
կողմը կրակ, էն կողմը բոց. որտեղ որ դառնայի՝ դժոխք էր:

Բայց դու Աստծու ողորմությունը տես— մեռնեմ նրա սուրբ
անունին: Վարպետս պատից առավ պնակիտը, հինգ հատ գիր
ցույց տվեց՝ այբ, բեն, գիմ, դա, եշ, «Մինչև կեսօր էսքանը կսո-
վորես. դասդ շտերտած տեղիցդ վեր չկենաս ու տուն էրթալ չհա-
մարձակվես»:

Կարծեմ մինչև կեսօր ժամ կամ ժամուկես էր մնում, ասել է՝
բավականին ժամանակ կար: Սկսեցի սերտել. էնպես սիրով կար-
դացի, էնպես սիրով սովորեցի որ— սուտ շասեմ— քառորդ ժամ-
վա մեջ էն դասը սերտեցի: Գնացի կանգնեցի վարպետիս առջև,
«դասս գիտեմ»,— ասի: «Տեսնե՛մ», ասավ: Ժը՛վո, ժը՛վո ջրի պես
ասի:

— Ա՛յ ապրիս,— ասաց,— հինգ հատ գիր էլի որ տամ,—
ասաց,— կարո՞ղ ես սովորել:

— Տեսնեմ, գուցե կարողանամ,— ասի:

— Մեկ տեսնեմ շնորհքդ,— ասաց,— գան, էն, ըթը, թոն
ու ժեն տվեց: Կհավատա՞ս, քառորդ ժամ անցած շանցած, էն էլ
սերտեցի ու գնացի բլբուլի պես կարդացի վարպետիս առջև:

— Շեն կենաս,— ասաց վարպետս,— ա՛յ էդ լավ է, շատ
ապրես, Մարտիրոս, աֆերիմ քեզ: Էլի հինգ գիր տա՞մ, էն էլ
կարո՞ղ ես սերտել: Ես սիրտ առա:

— Ինձ համար էն ի՞նչ բան է,— որ,— ասի,— թեկուզ տասնը-հինգն էլ տուր,— ասի,— արդեն հանգստացած:

— Չէ, տասնուհինգը շատ է. մեկ անգամից կըշկլվես. տառը հատն էլ բավական է. ահա քեզ՝ ինի, լյուն, խե, ծա, կեն, հո, ձա, դատ, ճե, մեն, հի. հերիք է էսքանը:

Գնացի տեղս նստեցի, բայց սիրտս սեղմվեց, մտքիս մեկ կասկած ընկավ՝ իսկ եթե չկարողանամ: Աստված հոգին լուսավորե, մամաս ինձ մեկ բան սովորեցրել էր. «Երբ որ մեկ բան ետևից ես ու նրան հասնել ես ուզում— ասել էր մամաս— մըտքիդ մեջ սուրբ Սարգսին կանչիր. «Սուրբ Սարգիս դուն նեղիս հասնես», ու երեք անգամ երեսդ խաչ հանիր: Հիմա ես մտքիս մեջ էդ աղոթքը ասի, բայց երեսս խաչ հանել թե ամաչում էի կ թե՛ վախենում: Պատիկ էի, բայց էլի ճարտար էի. կամացուկ ձեռքս վարտիքիս գրպանը կոխեցի և էնտեղ խաչ հանեցի ու միամըտված սկսեցի երրորդ դասս սերտել: Հինգ անգամ իրար ետևից կարդացել էի՝ կարդացած չէի— դու էս հրաշքին մտիկ արա— էդ էլ ջրի պես սովորեցի:

Հիմա բանը էնտեղ է հասել, որ ինքս ինձ շեմ հավատում. մտքիս մեջ ասում եմ. «էս երազ հո չէ՞, քնիս մեջը հո չե՞մ»: Զեքքս ծոծրակս եմ ասնում, գլուխս քորել եմ ուզում, մինչդեռ երկ մամաս ինձ տաշտը նստեցրել է, լավ լվացել է, գլուխս էլ սանրով էնքան քերել է, բայց միտքս էն է, որ եղունգովս ծոծրակս կամթեմ, որ տեղով իմանամ՝ երա՞զ է էս, թե իրականություն Մոծրակս կամթում եմ. եղբայր, ցավ եմ զգում: Ա՛, ասում եմ, մտքիս մեջ, երազ չէ եղել: Ես էլ էդ էի ուզում... վերջապես կիրթամ վարպետիս առջև ցցված կկանգնեմ, «դասս գիտեմ», կասեմ ու ուղղակի մարդու աչքի մեջ կնայեմ: Վարպետս տեղից վեր է թաշում, «էս ինչպե՞ս շուտով սովորեցիր», ասում է: Ես սոսկ կանգնել եմ, մտքիս մեջ խնդում եմ վրան: Մի քիչ կենալուց հետո, «Չլինի՞ թե,— ասում է,— էն գլխից գիտեիր այբուբենն ու հիմա գիտեցած դասերդ եկել ես նորից ես տալիս», ասում է: Ձե՛ Աստված վկա,— ասում եմ,— էսօր առաջին անգամն է պնակիտ ձեռքս»,— ասում եմ: «Ղո՞րթ»,— ասում է մարդը: «Հա»,— ասում եմ: Մարդը զարմանում է:

Ախար դորթ էլ զարմանալու բան էր. քաղաքի հիմքը պցելուց ի վեր էսպիսի բան տեսնված էլ չէր, լսված էլ չէր: «Որ էնպե՞ս արի նայեմ, դասդ ասա»: Զրի պես դասս ասի»:

— Հիմա թարս կարդա. մեկ տեսնենք,— ասում է,— այսինքն հի, մեն, ճե, դաթ, ինչ որ է:

Թարսից էլ կարդում եմ. մարդը էլ ավելի զարմանում է:

— Մյուս դասերդ էլ մի՞տղ են, մոռացե՞լ չե՞ս,— ասում է:

— Չէ, մոռացած չեմ,— ասում եմ:

— Ասա՛,— ասում է:

էն էլ առանց շունչ քաշելու զվը՛ռ զվը՛ռ ասում եմ:

— Թարս կարդա,— ասում է:

— Թարս էլ կարդում եմ: Մարդու երեսը մեկ տեսակ կլինի Սոցից ժամացույցը հանում է, նայում է— մինչև կեսօր էլի ուղիղ մեկ ժամ է մնում:

— Մինչև դպրոց արձակելը պնակիտդ վերջացնել կարո՞ղ ես,— հարցնում է: «Տեսնեմ, գուցե կկարողանամ»,— ասում եմ:

— Է՛, գնա սովորիր, ասում է, ու սկսում է մյուսների դասերը նայել: Ճիպտուն ու ֆալախան տեղերից շարժվում են ու իրենց շնորհքը ցույց են տալիս: Տղաների ձիչ ու աղաղակների, լաց ու գոշումի մեջ ես մնացած բոլոր գրերն էլ սովորում, վերջացնում եմ այբ սե=աս, վե՛վ աքք=վա, ասվա, ծա ինի մեն=ծիմ=ասվածիմ, էդ էլ կապում եմ, բոլորովին պատրաստ գնում նորից վարպետիս առջև կանգնում, էն էլ պատասխանում եմ: Մարդու լեզուն պապանձվում է, խոսք չի կարողանում ասել, և մենակ էս է ասում. «Մարտիրոս, մեկ օր դու մարդ պիտի դառնաս»:

Ուրախ-ուրախ տուն եմ գնում և տեղն ու տեղով մամայիս եմ պատմում: Մամաս սրտի ուրախությունից հա՛յ-հա՛յ ճաքվում է կինամարդը, ինքն իրեն բռնել չի կարողանում ու իսկույն գնում է հարևանների մոտ և ասում է թե՛ էսպես, էսպես որդի ունեմ, ու իմ պատմածի վրա տասնապատիկ իրենից է ավելացնում, հնարում թե՛ կես ժամվա մեջ որդիս էնպես բան է սովորել, որ տիրացուի շափ, գուցե ավելի էլ գիտի, ես ինչ գիտեմ, շտե, հոգեվոր կառավարությունից ուրար պիտի տան ինձ ու, առաջնորդը ինձ գրագրության համար իրեն մոտ պիտի վերցնի ու, ասում է շտե, բան չունես. կինամարդ չէ՞, մայր չէ՞, սրտի մուրագնեքը եղած պրծածի պես ասում է, պատմում է մի կողմը քաշվում:

Բայց պապաս մեկ անգամից շհավատաց. «Սուտ է ասում շան ցնգածը»,— ասաց, երբ որ մամաս նրան էլ պատմեց իմ հրաշքները: «Այբուբենը ծայրեծայր վերջացնելու համար քիչ-քիչ երեք ամիս պետք է, էն էլ սուր մտքով տղի համար: Էդ որ մենք

արհեստավոր ենք՝ ասենք գրի երեսը տեսած չե՞նք, ի՞նչ. մենք էլ խո երեխա ժամանակներս վարպետի մոտ գնացել ենք: Մեկ երկու անգամ ֆալախայի համը շառած՝ լսված բան է, որ տղան այբբենը վերջացնի: Պարծենում է, շտե, բոլ-բոլ սուտեր է փշում, դուն էլ կանխիկ փողի տեղ ես ընդունում: Նա գիտե, թե ես կծուլանամ վարպետի մոտ գնալու և սուտը բռնելու: Գիր կարդալը հանա՞ք է կարծում, ի՞նչ է... Ափսո՞ս, ափսո՞ս, մեկ քերական չկա, որ կարդալ տայի ու սուտը բռնի: Հետո դարձավ ու ասաց. «Հածե՛, էն տված գիրքս ի՞նչ արիր, մո՞տդ է»:

Ես նարեկը հանեցի քիսայիցս, իրեն տվի ու ասի՝ վարպետը ասաց, որ էս կարդալը դեռ վաղ է, դեռ քերական պիտի վերջացնեմ, հետո սաղմոս, մյուսներն էլ շտե իրենց կարգով:

Պապայիս վրայից նկատելի էր, որ կամաց-կամաց սկսել է հավատալ, որովհետև տեղից ելավ, գտակը առավ, դուրս գնաց ու մի քիչ ժամանակից հետո ետ դարձավ ձեռքը մի բարակ գիրք բռնած. «Ահա՛ քեզ քերական, ասաց, զգուշ ճղիր, չկեղտոտես, չպատռես, թե չէ՛ կաշիդ կպլոկեմ. երեք շահի եմ տվել մանրավաճառ Սարգսին»: «Մեր ժամանակները— չգիտեմ հիմիկ ինչ պե՞ս է— գիրքը, թուղթը, գրիչը, թանաքը մանրավաճառների խանութում կծախվեր»:

Քերականը որ ձեռք առա, ախորժակս բոլորովին կորավ. առավոտվանից բան կերած չէի, բայց սեղանին բերանս բան դնել չկարողացա, խելքս միտքս վարպետիս տանն էր, ֆալախայի ճիպոտի վախը սրտիցս դուրս էր ելել:

Վարժատուն որ գնացի, դեռ տղաները հավաքված չէին, վարպետս էլ պարտեզ դուրս էր եկել— ահա էդ տեղերը, ասաց ու մատով ցույց տվեց զինչիրմեյիս ծառի տեղը— բոլթա կտար ինձ՝ որ տեսավ՝ «Հածե, ինչո՞ւ էդպես շուտ ետ դարձար, հարցրեց, կերակուր չկերա՞ր, ի՞նչ»: «Չէ, կերա» ասի: «է՛յ, մի քիչ էլ հանգստանայիր դեռ», ասաց: «Հանգստացա» ասի: «Լավ, ասաց, ուզում ես՝ էստեղ խաղա, թե չես ուզում՝ գնա սենյակը նստիր»: Քերականս ցույց տվի իրեն. «ահա՛, պապաս առավ»,— ասի: «Լավ:— ասաց,— տղաները որ գան՝ կսովորես»: Չէ՛, ես հիմա եմ ուզում սովորել: Դաս տուր ինձ», ասի... «Ի՛, ասավ, ինչո՞ւ էդքան շտապով: Չլինի շուտով սովորել, խալֆա լինել ես ուզում, որ ինձպես երեխաներ կարդացնես»,— ասաց հանաք անելով: Ես բան չասի, սուս կեցա, որովհետև իսկի մտքովս անցած շէր վար-

ժապետ կամ տիրացու կամ տերտեր լինել. էնքան ուզում էի՝ մամայիս, հարևանների առջև պարծենամ թե՛ նայեցեք վրաս, ես ինձ համար մեկ բան եմ: Երեխությո՞ւն, էնպես չէ՛:

Վարպետս ձեռքիցս առավ քերականս, մեկ երեսը դարձրեց— էն արդեն պնակիտի վրա սովորել էի. «ահա քեզ դաս»,— ասաց ու՝ այբ խե շա, բեն ծա պեն դասը տվեց. «գնա սերտի՛ր, ասաց, երեխաները որ հավաքվեն ես էլ որ տեղս նստեմ, դասդ կպատասխանես»:

Գնացի սենյակ, տեղս նստեցի ու սկսեցի կարդալ: Ի՞նչ տեսնեմ, իսկի դժվար չէ եղել, էլի նույն այբ-բեն-գիմ-դան էր. էդ էլ շուտ սովորեցի: Վարպետս դեռ պարտեզումն էր, զաֆոսանգի տերևներն էր փետում ու մեկ տուփի մեջ շարում: Գնացի մոտը. «դասըս գիտեմ»,— ասի: Մարդը ապշեց, բայց բան չասաց, առանց մեկ սխալի դասս ծայրեծայր պատասխանեցի: «Լավ, ասաց. այժմ էս առ՝ այբ ժե ճե ու, բեն ինի մեն սե, ինչ որ է»: Նորից գնացի տեղս. աչքի անցկացրի նոր դասս, տեսնեմ՝ էն էլ հեշտ է եղել, էլի իմ գիտցածս այբբենգիմդան է, էնքան որ գրերը մեջեմեջ շարված են: Նորից գնացի վարպետի մոտ, դասս լավ պատասխանեցի: Ի՞նչ խոսքս երկարացնեմ. դեռ տղաները նոր էին սկսել հավաքվել— սուտ ասած չլինեմ— գուցե տասը դաս պատասխանեցի ու հասա ա-փե-նե-զերին, ու մինչև երեկոյան զանգերը գրեթե գրքի կեսը անցա:

Պապայիս ասի, պապաս չհավատաց, կարծում էր թե սուտ էի ասում. բայց երևում էր, որ սկսել էր արդեն ավելի ինձ սիրել, վրաս տաքանալ: Ո՞վ գիտե, գուցե մարդը— Աստված ողորմի հոգուն— միտք էր անում. «էս լակոտի ասածի քսաներորդ մասն էլ զորթ որ լինի, էլի վատ չէ»: Մամաս խո խեղճը տեղ չի գտնում նստելու. սրտի խնդովից ինչ անի շանի, իսկույն իր տոնական մետաքսե շորերը քանդում է ու ինձ համար ս. Գևորգի օրվա գեղեցիկ շոր է ձևում, տատս էլ իր ծածուկ սնդուկից հանեց մեկ թանկագին թաշկինակ, գույնը վարդի պես կարմիր, վրան՝ սիրամարգի պոչի պես կանաչ-կապույտ նախշերով, ու ինձ փողպատցու բաշխեց. պապաս էլ խոսք տվեց, որ վաղը առավոտյան կանուխ բազար գնա, վարտիքացու կապույտ նանկա առնի ու մեկ ջուխտ դեղին սափիանե կոշիկ գնի:

Մարդուս լեզուն կարո՞ղ է սրտի խնդուրը խոսքով մեկնել... կհավատա՞ս, էն րուպեին ինձ մեկը թագավորություն տար— աղա-

մորդու հաճար դրանից լավ էլ ի՞նչ բախտ կա.— ես էնքան ուրախ չէի լինի, ինչքան որ էն երեկոյան ուրախ էի... Վերջապես, մյուս օրը մինչև կեսօր քերականս ծայրեծայր ավարտեցի ու բերի պապայիս տփի, «աճա, պապա, ասի, անվնաս հանձնում եմ քեզ քերականս, ասի, էլ ինձ պետք չէ, հիմա կարգը եկավ պատիկ սողմոսին»:

Պապաս որ լսեց, ապշած, բերանը բաց մնաց: «Հաճե՛, զո՞րթ ես ասում»: «Ապա սուտ պիտի ասեի՞, ի՞նչ», ասի: «Հանաք ես անում, շան ցղնած»: «Ինչո՞ւ հանաք պիտի անեմ, ասի պարծենալով, շե՛ս հավատում, գնա վարպետիս հարցրու»:

«Հայդե, էրթանը» — ասաց մարդը — Աստված ողորմի հոգուն — ու գրահն առավ, շտապ-շտապ գնաց, ես էլ ետևից գնացի: Երբ որ վարպետիս տունը մտանք. «բարև՛, վարպետ, — ասաց, — զո՞րթ է սրտ ասածը թե՛ երեկ ու այսօր հա՛մ պնակիտը վերջացրել է, հա՛մ էլ քերականը»: «Հա, ասաց Մկրտիչ վարպետը, զո՞րթ է զո՞րթ, հիմա նրա համար մեկ պատիկ սաղմոս պիտի գնես, էլի մեկ դաստա թուղթ, որովհետե՛ս, մեր կանոնով, քերական կարդացող սղան դեռ գիր չի գրի, բայց պատիկ սաղմոսը որ սկսի, գրելուն էլ պետք է սովորի: Էսպես է մեր կանոնը: «Հա՛, թանաք ու գրիչ էլ առ ու տուր իրեն, դրանք էլ պետք են գրելու համար»:

«Հա՛յ, շան կաթ կերած, ասաց պապաս սրտի ուրախութունից, ա՛յ, ապրե՛ս, Մարտիրոս, ապրե՛ս, մեռնելը կհարծեի, էջ տեսակ իմաստուն եղածդ չէի կարծի... «Տիրացու ախպեր, դարձավ նա վարպետիս, խեղճը ասում էր, ասում էր, ես չէի հավատում, մի՛ ասիլ, որ ասածը զորթ է եղել: Հա՛յ, մայրդ մեռնի, էսպիտի էլ զարմանալի բան... Չի՞մա, վարպետ, ախր քեզ էլ մեկ բանով շնորհակալ պիտի լինե՞նք, թե չէ...»: «Է՛յ, ինչ, — ասաց վարպետը — սուտ մուտ քաշվելով, — առջններս օրեր շատ, մեկ օր հալբաթ ումեն բա՛ն իր կարգը կգտեի... «Կարգս ո՞րն է, հենց էստեղից ուղղակի ոտկերչի մոտ պիտի գնանք, մեկ տեսք արծաթի մատանիք պիտի պատվիրենք»: «Ի՞նչ ես էսպես վռազում... գե... Աստուծով... տեսնենք... գուցե...»: Մարդը սրտի ուրախութունից խելքն ու գլուխը կորցրել էր:

Ինչպես որ ասել էր, էնպես էլ արավ պապաս. իսկույն գնաց ոսկերիչ Մեղրոնի մոտ, մեկ հաստիկ, վրան կնիքով մատանիք առավ, հետո գնաց մանրազածա Սարգսից մեկ պատիկ-սաղմոս

գնեց, — հետև էլ պարծեցում մամայիս պես, մեկի վրա տասը ավելացնելով, և տասն բերեց: «Աճա ըող պատիկ-սաղմոս, — ասաց, — բայց շա՛ն երես, ան՛ս, շուտ շարժենս, թե չէ՛ փողս դրոքիդ հեթեք կանիք», — ասաց հանաք անկողնի խնայուն գիրքը ձեռքը առաւ, բաց արի և սկսեցի ինձ համար կնիքազով կարգալ: Մկրտում մի քիչ դժվար երեացին վանկ-վանկ շարած իսաքերք, բայց կարդալով՝ բավականին ընտելացա ու մինչև կերակուրի պատրաստ լինելը՝ գիրքը ձեռքիցս վախ շարի:

Կեսօրից հետո որ վարպետիս մաս գնացի, փքված հպարտ-հպարտ՝ վարպետիս մատեցա, էն արծաթե մատանին ձեռքը տվի, «պապաս բարե՛ աբավ, ասի, էս էլ քեզ գրկեց, բա՛րթ վաչքե՛ս: Էս պատիկ-սաղմոսն էլ ինձ համար առավ», ասի: «Ե՛ն կենա, ասաց վարպետս ու մատանին մատին հագավ ու ինձ էլ նոր առած գրքից դաս տվեց, էս մի քիչ դժվար կլինի, ասաց. բայց որ աշխատես, կամաց-կամաց կվարժվես»:

Գնացի, տեղս նստեցի ու սկսեցի կարգալ. շորս անգամ ար ետև ետևից կարգացրի դասս, համարյա թե բերան սովորեցի: Եկա վարպետիս առև, էն տերաբերեց եղանակով «երանցալից» որ կարդացի, մարդը բռնորովին ապուշ կարվեց, բերանը բաց մնաց: Երկու դաս օր էլի սրտաախտանեցի. «Հերթք է՛ս ասաց վարպետս, հիմա թուղթ առ, ծալիք, տետրակ կալիք, բեր ինձ, քեզ համար տողեմ, օրինակ էլ տամ, որ գրես»: Էնպես էլ արի: Բայց գրածս կարդալուս պես շնորհքով չէր՝ «դ» «դ» «ը» «ը» «ն» «ն» խոտ շարձարեցին ինձ. օրինակին որ նա բան էր, հարձեն հեշտ կերակույն, բայց երբ գրիչս ձեռքս առա ու սկսեցի գրել, մատիս տակից ուրիշ տեսակ բաներ էին դարձ գալիս, օրինակին իսկի չէին նմանում: Մեկ էլ էս, որ առաջին անգամից իսկի չէի կարողանում տողի վրա ուղիղ գրել. կամ գրիչս էր դեպի վեր գնում, որևիցս վերևի տողերին էին կաշում, կամ էնպես ցած էր գնում, որ ներքևի տողին էին հասնում: Հապիվ՛նաղ մեկ երես բան գրեցի հա՛ր-հա՛յ երեկոյան զանգի ժամանակները, տետրակիս երեսին հինգ-վեց տեղ թանաք էր թափվել, տետրակ էլ գրածիս վրա երեսիս քրտինքն էր կաթել, թանաքը փռվել էր, արիչ տեղ էլ թաց-թաց գրածս թնդս ջնդե էր, վերջապես ջնջաջի պես մեկ կեղտոտ բան տարի ցույց տվի վարպետիս: Դրածս տեսավ թե չէ՛ վարպետս կարծես ուրախացավ «Ապա՛, ջանս, դու կարծում էիր թե գրել-կարդալը հե՛շտ բան է. չէ՛ բախա, էջ հեշտ, շուտով վերջացնելու բան չէ՛. մենք

բան է, դրանցից մարդուն ոչ մի օգուտ չկա, կամ դրա միտքը վարպետս ինքն էլ չգիտի»:

Մեկ օր, ինչպես կլինի՝ որ վեր եմ կենում, վարպետիս ասում. «էդ քերականությունից,— ասում եմ,— մաքը թնչ է սովորում», ասում եմ: «էդ քո խելքի բանը չէ,— ասում է,— երբ կմեծանաս, ասում է, էն ժամանակ կիմանաս», ասում է: «Թե ոք—ես էլ դառնում եմ իրեն ասում— թե որ մեծանալուցս հետո պիտի հասկանամ,— ասում եմ,— ավելի լավ չէ՞ որ,— ասում եմ,— թող դեմեծանամ և հետո սովորեմ. չհասկացած բանը սովորելը ի՞նչ շահ», ասում եմ: «էստե՛ղ արի, էստե՛ղ» ասում է վարպետս: Մտաբան եմ գնում: «Ձեռքիդ ափը բաց արա», ասում է: Վախենալով, բայց էլի բաց եմ անում ափս... Մեկ խփում է էն ճիպոտով, մեկ էլ է խփում. «շտե՛ք քերականությունն մեկնությունն ու օգուտը. հիմա հասկացա՞ր: Գնա տեղը նստի և մեկ էլ խելքիդ կտրած չկրտածը դուքս շտաս...»:

Ափս գնդակի պես ուռեց. կապույտ հետքերը շորս-հիւսկ ամօրից հաղիվ անցան, շաբաթներով չէ թե գրեկ, մեկ ասեղ է է չէ կարող վեցնել— էնպես կսկծում էր ձեռիս ամեն մի սկզբը: Երբ ուս կեցա, պապայիս, մամայիս բան չասի: Հարցրին. «ինչո՞ւ ձեռք ուռել է», ասի թե՛ «վարպետիցս ետ գալու ժամանակ ոտքս քարին դեմ ընկավ, սալի ճանապարհի վրա գտնվեցի, էդ միջոցին մեկ սալ մատերիս վրայով անցավ»:

Կես տարուց հետո քերականությունն էլ ծալքեծալք վերջացրի, հերթը հասավ տրամաբանությունը. բայց էդ գիրքը մանրավաճառի մոտ չգտնվեց, եղած շեղածը քաղաքի մեջ մեկ հատիկ կար, էն էլ Օ...ողուի մոտ էր: Կամա ալկամա պիտի Ստամբուլից ապսպրվեի: Մինչև որ գիր գրեցինք, փողը զրկեցինք, մինչև որ տրամաբանությունը ձեռներս հասավ, անցավ կես տարի: Էդ միջոցին ես մեկ անգամ էլ ծայրեծալք քաղվածք արի Չամչյանի քերականությունը:

Ես գիտեի թե տրամաբանությունը որ գա էդ, անօգուտ «փառ, փառի, փառու, փերեալ եմ, փերեալ ես, փերեալ է» դերբայի: Կոչական, ածական, իգական-ից կազատվեի: Բայց երբ տրամաբանությունը ձեռքս առա ու սկսեցի երես երեսի ետևից բերան սերտել՝ էն ժամանակ տեղով հասկացա, որ գրել-կարգալը հեշտ արհեստ չէ եղել ու մեկ երկու տարվա մեջ չի վերջացվի: Դժվար էն չէր, որ օրը կամ երկու կամ երեք երես բան բեքան անեի, և

դատարկ բան է. էն ժամանակ էնպես սուր միտք ունեի, որ ավետարանից կամ ուսովածաշնչից գլուխ-գլուխ բերան սերտելը ինձ համար մի գաղտնի ջուր խմելու պես մեկ բան էր: Դժվարն էն էր, որ բերանս կրթվար, գլուխս չէր մտնում, չէի հասկանում— հիմա էլ էդպես է հո՞— բայց էն ժամանակները մեջս ուրիշ կրակ կար, մեկ անկշտում ծարավ կար նոր-նոր բաներ իմանալու, ամեն բանի իսկը գիտենալու, խոսքի վրա՝ ինչո՞ւ մեր ձեռքը բուր ու սառնամանիք է, իսկ Երուսաղեմում— մղդսիների ասելով— իսկի ձեռք չկա. ինչո՞ւ մեր տեղը ամառը տաք է, իսկ Սիբիրի կողմերը, դեռ էն կողմերն էլ, ասում են թե՛ ամառ բոլորովին չի լինում, տարին-տասներկու ամիս ձմեռ ու բուր է, ինչո՞ւ գարնանը կուռնկները, վայրենի սագերը, արագիլները հարավից դեպի հյուսիս են գնում, ինչո՞ւ աշնանը էլի նորից ետ են դառնում, ինչո՞ւ ծովի ջուրը աղի է, ինչի՞ց է գոցանում փայլակն ու կայծակը, ձյունը, անձրևը ու կարկուտը. դորթ է՞ էդ ծեր մարդկանց ասածը, թե ամառ Եղիա մարգարեի սալի ալեբից է գոռում, ինչպե՞ս են գործում փարշան, մախմուրը, ինչպե՞ս և ինչից են շինում էս մեր պատուհանների աղակի՞ն... հարցնելու, իմանալու, սովորելու բան չա՞տ, ո՞ր մեկը ասեմ... բայց ո՞ւմից իմանայի, ո՞ւմը հարցնեի, թե՛նչ հնարով սովորեի... Երևի, ինքս ինձ միտք էի անում, կա էնպիսի մարդ, որ էդ ամենը գիտի, կա էնպիսի գիրք, որտեղ էս ամենը գրված է, բայց որտե՞ղ գտնեմ էդ մարդուն, ո՞ւր է էդ գիրքը, ծովի ո՞ր անդունդից հանեմ... Մեկ էլ՝ որ գիրքը գտնեի՝ ի՞նչ օգուտ, որ հասկանալու չեմ, որովհետև էնքան գիրք որ համարյա թե ամենն էլ բերան սերտեցի, ինչպես կասեմ՝ հո՞ւմ-հում կերա ու միջից բան չհասկացա, էն գրքից էլ ի՞նչ պիտի հասկանամ... Կա՞րողոք աշխարհքիս նրեսին էնպիսի մի մարդ, որ կարողանար ինձ գիրք հասկանալ սովորեցնել... Թե՛ ամենքն էլ ինձ պես գիրքը չհասկացած բերան սովորել են և հետո անունները իմաստուն, վարպետ, տիրացու, վարժապետ է եղել:

Էսպիսի մտածումներն էր մեջ էի գիշեր-ցերեկ... Հաղվում էի, մաշվում էի... շորս կողմս մեկ խելոք մարդ չկար, որ սրտիս դարդը առջևը ո՞րքի, որ էս կատակածները կա՞մ հաներ հարցիցս, կամ մեկ ուրիշ ճար ցույց տար: Մտավոտյան անկողնից վեր կկենայի, մամայիս կտեսնեի, Երեկոյան աչքիս առջև միշտ պապաս էր. էդ ողորմելիներից ի՞նչ պիտի հարցնեի, ի՞նչ պիտի սովորեի: Մամաս— Մատված ողորմի հոգուն— ոխուս շահել որ ուղենար, հառ-

ներ ձեռքով փախլավա, խուռապիա, տեսակ-տեսակ հալվաներ կեփեր, կղներ առջև, կարծում էր, թե դրանով ինձ մեծ բախտի հասցրեց. էն ասենք՝ խեղճի ձեռքից ավելի ի՞նչ կգար: Պապա էլ— Աստված հոգին լուսավորե— բերանից կկտրեր ու ինձ համար գրքի, թղթի, գրչի փող չէր խնայի— խեղճ մարդու վաստակածը քանի՞ կոպեկ էր որ— նա էլ կարծում էր, թե դրանից ավելի որդի սիրել չի կարելի, հետո երկուսն էլ վարմանում էին, թի ինչո՞ւ ես ժամանակ-ժամանակ սրտիս նեղութունից հայ-հայ մի օքս եմ ուտում...

էսպիսով կես տարի էլ անցավ:

Գարնան ժամանակներն էր: Մեկ օր առավոտյան վաղ վարժատուն գնացի: Վարպետը պարտեզում փոս էր փորում, հենց էտեղ, որտեղ բանվորդ էս բոպեխս փորում է, և ուզում էր մի աղնիվ ծիրանի ծառ տնկել, նրա կնիկն էլ պատի մոտ մաղաղանու, թարխուն ու տեսակ-տեսակ ուտելու կանաչեղեն էր որոնում: Մտեցա ու՝ «Վարպետ, — ասի, — հոգնել ես, ինձ տուր բահը, քի էլ ես փորեմ»: «Աո», — ասաց, տվեց ինձ բահը, ու ինքը գնաց շուշանների, կակաչների, սմբուլների վրայի հողը շուռ ու մուտալու, որ ջահել տերևները դուրս գան: էդ միջոցին հարևանի զոնակից մի կինարմատ գլուխը ներս խոթեց. «հաբա՛, Անուշ, էտե՞ղ ես», հարցուց: «Հա, էստեղ եմ», — ասաց տանտիկիներ: «էտեղ արի մեկ բոպե, բան պիտի ասեմ», — ասաց հարևանի կնիկը: «Գալիս եմ, գալիս, ասաց յանկան ու շտապով բերեց դռբախով կանաչեղենը, վրան էլ մեկ սիրուն, ճերմակ ոսկորե կթով շախու ու դրեց փոսի ափին և ասաց ինձ. «փոսը որ փորե պրծնես, էդ դաբախը խոհանոց կտանես», — ասաց ու շտապով վազեց դեպի դռնակը: «էս ի՞նչ սիրուն դանակ է», — ասի ու էլ իմ բանս եմ շարունակում: Փոսը փորեցի պրծա, բահը դրի փոսի ափին ու ինքս գնացի սենյակը դասս սերտելու, մտքիցս բոլորովին ելավ կանաչեղենով դաբախը խոհանոց տանելը:

Անց է կենում ժամ-ժամուկեա: Մեկ էլ տեսնեմ յանկան, լիզին պատռած, ներս է մտնում: «Հա՛՛՛՛՛, Մարտիրոս, — ասում է, — դաբախը խոհանոց շտարա՞ր», — ասում է: «Զէ, յանկա, ասում եմ, մտքիցս ելավ, ասում եմ, — էս բոպեխս կբերեմ»: Գնում եմ դաբախը առնում ու տանում տալիս յանկային: «Զախուն ապսորտե՞ղ է», — ասում է: Այն ժամանակ մենակ նկատում եմ, որ դանակը չկա: Վազելով գնում եմ պարտեզ, փոսի մեջ եմ նայում,

բերանի հողն եմ շուռ ու մուռ տալիս, քրքրում, անցած ճանապարհս եմ տնտրում, դես ու դեն ընկնում— դանակը չկա: Գալիս եմ յանկայիս մոտ, էսպես-էսպես բան է, ասում եմ, դանակը կորել է, ասում եմ: «Ի՞, — ասում է, — իսկի էդպիսի բան կլինի՞», ասում է. իսկի լույս ցերեկով ահագին դանակը կկորչի՞, ասում է, քորո՞ց է, կեռի՞կ է, ի՞նչ: Շուտով գնա գտիր, թե չէ զլխիդ էնպիսի բան կբերեմ, որ մինչև սև հող մտնելդ չմոռանաս»: Ասաց էլ, արավ էլ անօրեն անհավատալի կինամարդը:

Մեկ էլ գնացի պարտեզ, ամեն ծակ ու ծուկ փնտրեցի, ամեն բարի, տերևի, ճյուղի տակ նայեցի, չկա, չկա ու չկա էդ դանակը, ոտով գլխով կորավ, գետին մտավ: Նորից գնացի խոհանոց. «Յանկա՛, ասի, ամբողջ պարտեզը քրքրեցի, տեղ չմնաց, որ շնայեի, հոգնեցի, բայց շախուն չգտա... Ի՞նչ ուզում ես արա... «Թե դու չգտար, ես կգտնեմ, ասաց, ու էնպես խոթոռ աչքով նայեց վրաս, որ կարծես կանգնած տեղս հոտ-հոտ ուտել էր ուզում ինձ: «է՛յ, գտիր, տեսնեմ՝ ինչպես ես գտնում», ասի սիրտ ելած: Ասի ու դուրս եկա խոհանոցից:

Կատաղած երեսով վազեց կինամարդը վարպետիս մոտ: Ի՞նչ խոսեցին, չգիտեմ: Վարպետը մնաց սենյակում, կնիկն էլ խոհանոց գնաց: Երկու-երեք բոպեից երկու աշակերտ գդակները առան, փողոցի դռնից դուրս գնացին (ես դեռ բակում կանգնած եմ): Երբ որ երեսուները փողոց գնացին, ես էլ մտա ներս ու տեղըս նստեցի, սիրտս էլ էնպես վատ է, որ կարծես մահս եկել է. էս է՛ կմարեմ, սիրտս կանցնի: Ընկերներից մեկը կամացուկ ինձ ասաց, որ վարպետս պապայիս ետեից ղրկեց էն երկու տղաներին: Վախենում եմ, բայց չեմ երեցնում:

Կես ժամ շանցած տղաները վերադարձան, պապաս էլ նրանց ետեից ներս մտավ: Վարպետս տեղից վեր կացավ:

«Ես քեզ ձայն էի տվել, ասաց, որ որդուդ վատ, անազնիվ բնավորությունը աչքովդ տեսնես ու հասկանաս: էս անպատկառին, էս անպիտանին— մատով վրաս ցույց տվավ— ինչքան կարողացա սովորեցրի, Աստծու առջև կարող եմ ասել, որ ոչ մեկ աշակերտիս էնպես սրտով կպած չեմ եղել, ինչպես էս լիրբ շանը: Իսկի սուտ ասած չեմ լինի, եթե ասեմ, թե հարազատ որդուս պես խնամք եմ ունեցել վրան... Բայց էսքան տարվա տանջանքիս փոխարեն որդիդ, էս հարամ-սատկելու տղադ ինչո՞վ վճարեց... Ականջդ բաց արա ու մեկ լավ լսիր: Մեկ որ էս անզգամը

ինձ չի հավանում, ինձ խենթ, բան չիմացող, իրենից ցած, անպետք մարդ է համարում. դորթ է, բերանով չի ասում, բայց նշանով, աչքով ցույց է տալիս, էդ էն նրա շարժումներից եմ նկատում: Մեկ էլ աշակերտներին սիրտը ինձնից սառեցնում է. «Ի՞նչ է մեր վարպետը, ոչ մի բան չգիտի ինքը, ի՞նչ է գլխին մեկ ահագին խումբ աշակերտ հավաքել»: Շտե էսպիսի բաներ. էգ էլ ես վրայից, շարժումներից, քիթ ու պոունգից նկատում եմ — չկարծես թե ականջովս լսել եմ, չէ, սիրտս իմանում է, որ էդպես պիտի լինի: Ղորթ է, ապացույց բերել չեմ կարող — մեղքը ի՞նչ առնեմ — ինքրս չեմ լսել, մարդ էլ չի ասել, բայց գիտես՝ որ ասածիս մեջ ոչ մի սուտ չկա: Վրա երեքն էլ էս, որ որդիդ գող-ավազակին մեկն է. էդ արդեն կարող եմ ապացուցել: Էսօր առավոտ որդիդ խիստ վաղ վարժատուն է գալիս, երբ որ հաստատ գիտի, որ էդ ժամանակ աշակերտները դեռ հավաքված չպիտի լինեն: Ի՞նչ է դրա պատճառը, մտքում վատ բան չունե՞ր, ով գիտի՝ ինչե՞ր էր միտքը դրել անելու իմ քնած ժամանակը տունս մտնել ուղեցել է, ինձ կամ կնկասս դեղ տալ ուղեցել է, ես ինչ գիտեմամ, ախպեր. Աստված չեմ, որ սիրտը մտնեմ, մեջը եղածը տեսնեմ — թե՛ ադամորդու սիրտը, թե՛ ծովի անդունդը, երկունս էլ մեզ համար մուրթ են. էս մեկ: Ես ինձ համար փոս էի փորում: Որդիդ մոռեկավ, աչքիս լավ մարդ երևալու համար՝ «տո՛ւր,— ասում է,— վարպետ, բահդ ինձ, դու հոգնել ես՝ ես փորեմ»: Դրան ո՞վ էր ասել՝ Աստված կսիրես, արի ինձ օ՞գնիր: Համարյա քսան տարի վարժապետություն եմ անում, էդ քսան տարվա մեջ քչից-քչից ձեռքիս տակից վեց հարյուր երեխա է անցել, իսկի մեկ անգամ եղած չէ, որ աշակերտներիցս մեկը գար ու ասեր. «Վարպե՛տ, բահդ տուր, փոս փորեմ»: Ինչպե՞ս է որ հենց Մարտիրոսն է ասում ինձ էդ խոսքը: Եթե աթածը լավություն էր, էդ վեց հարյուր աշակերտներիցս ոչ ոք ինձ լավություն կամեցած չէ՞, ի՞նչ բոլորն էլ ինձ թշնամի՞ էին, բոլորն էլ անաղնիվ, վատ տղանե՞ր էին: Իսկ որդիդ նրանց միջից առաջինը եղավ, որ ասաց. «գու հոգնել ես, արի քեզ օգնեմ»: Ասել է, որ միտքը ծուռ էր. էս երկու նշանածո նրան տալիս է կանաչեղենով դաբախ ու ասում է՝ «թափույն այս դաբախը տար, խոհանոց գիրք»: Թե որ որդիդ լավ մարդ է, մտքի մեջ վատություն չկար, ինչո՞ւ իսկույն շտապ՝ ու ժամերով գցում է գետնի վրա, ինչո՞ւ է էդպես անում: Մոռացա՞վ, կասես, բայց Մարտիրոսի սուր միտք ունենալը ես

երկու տարուց ի վեր գիտեմ, էդ ինչպե՞ս է, որ ժամագիրք, ավետարան, քերականություն, տրամաբանություն ծայրեծայր բերան է սովորում՝ չի մոռանում ու մեկ շուխտ խոսքը մոռանում է. իսկի հավատալ կարելի՞ է էդ բանին... Ասել է՝ որ «մոռացա» ասածը սուտ է, էդ մեկ դատարկ պատրվակ է. նա մոռացած չէ, այլ գիտմամբ էդպես արել է, մտքի մեջ վատություն է ունեցել: Էս բեզ երեքս վերջ ի վերջո նշանածոս պապայից մնացած թանկագին ինգլիզի շախուն, որը երկուսս էլ աչքերիս լույսի պես սիրում էինք, դաբախի վրայից գողանում է, ո՞վ գիտի որտեղ է թաքցրել ու մեկ ասում է, թե կորավ: Իսկի էդպիսի բա՞ն կլինի, ախպեր... աշկարա բան է, որ որդիդ վաղուց մտքում դրել է էդ դանակը գողանալ, բայց առիթ ունեցած չէ, էսօր առիթը պատահել է. էլ ձեռքից բաց չի թողել: Եթե որդիդ գողանալու միտք ունեցած չէ, ապա ինչո՞ւ նշանածոս ասել է՝ «էդ ինչ սիրուն դանակ է». երևի հավանել է որ գովել է, էդ ծծի երեխան էլ գիտի, որ գողը իր հավանած բանը կգողանա... Շտե ասելս էս էր: Ահա՛ որդիդ, ահա՛ ես, դու եղիր մեր դատավորը:

Պապաս տեղն ու տեղը սառավ. երեսը մեկ ձյունի պես սպիտակում էր, մեկ կրակի պես կարմրում էր. հա՛ իմ վրաս էր նայում, հա՛ վարպետիս: Ի՞նչ աներ խեղճ մարդը. հավատար՝ մեղավորը որդին էր. չհավատար՝ դանակի կորչելը շատ կասկածավոր բան էր:

«Հածե, Մարտիրոս, ասաց ինձ, էս սհաթիս սրտեղից ուզում ես՝ դանակը հանիր ու վարպետիդ տուր»:

— Պապա,— ասի,— շուտած բանը ինչպե՞ս տամ, չպահած բանս որտեղի՞ց գտնեմ:

«Մարտիրոս», կանչեց պապաս էնպիսի սասանական ձայնով, որ քիչ մնաց խելքս կորցնեի:

— Պապա, իսկի չհավատաս, բոլորը սուտ է: Ես գող չեմ, մի՛ հավատալ, ես չեմ գողացել: Վարպետս իմ վրա չիգր ունի, երկու տարի է: Համարյա վարժարան մտնելու օրից ինձ վատություն է ուզում, բայց որ սիրտդ չկտորվի, քեզ բան չէի ասում: Մի՛ հավատալ էդ մարդուն: Զգիտեմ ի՞նչ է եղել շախուն, գուցե մեկը ծածուկ պարտեղ մտել է, գողացել, գուցե ազոավը ոսկոր կարծեղով թոցրել է, ես ի՞նչ գիտեմ, բայց կուրանամ, կույր ման գամ, որ ես առած չեմ... Պապա, վարպետս քեզ հիմարացնում է, նրա

միտքը դանակը չէ, այլ դանակի պատրվակով իր հին ոխը ինձ-
նից հանել է ուզում:

Ըսպիսի շատ բաներ ասի, բայց ո՞ւմը կասես, պապայիս աչ-
քը մութ էր կոխել, խոսքը ականջը չէր մտնում, նա էլի մեկ բե-
քան «հանիր շախուն» էր ասում:

Վերջը վերջը ես էլ վերկացա ու՝ «պապա, ասի, քեղ մեկ բան
ուսե՞մ ասի. ես տեսնում եմ, որ էսօր մահս եկել է. ինչ կուզես
արա, ես պատրաստ եմ»:

«Մարտիրոս, կանչեց պապաս, երեք անգամ քեղ կասեմ՝ կհա-
նե՞ս շախուն թե չէ»:

— Չախուն վերցրած չեմ,— ասի:

«Չախուն կհանե՞ս թե չէ»,— ասաց երկրորդ անգամ:

— Չախու չկա մոտս,— ասի ես նորից:

«Վերջին անգամ եմ ասում քեզ, շախուն կհանե՞ս թե չէ»:

— Պապա, ոտքդ պագնեմ, շախուն չեմ վերցրել,— ասի ու
պապայիս ոտքերն ընկա:

«Բերեք ֆալախան»,— ասաց պապաս:

Հայտնի երևում է, որ մարդու խելքը վրան չէր:

— Վա՛յ, մամա,— կանչեցի,— փրկիր որդուդ, ինձ պետք է
մեացնեն էսօր:— Երնեկ թե դորթ մեռցրած լինեիր:

Ֆալախան վաղուց պատրաստ է, երկու ճիպոտ էլ հետը:

Երեք հատ ուժեղ տղաներ վրաս թափվեցին, ինչպես որ դա-
ռարը կոճին, էնպես էլ նրանք ինձ վայր գլորեցին, կոշիկներս,
փաթթոցներս ոտքիցս հանեցին, ֆալախայի պարանը ոտքիս ձիգ
ուլորեցին ու էնպես բռնած պահեցին, մեկ ճիպոտը պապաս առավ,
մեկելը՝ վարպետս... էլ միտքս չէ...

Երեք օրից որ ուշքի եմ գալիս, տեսնում եմ, որ անկողնիս
մեջ պառկած եմ, մամաս ու մեծաս, մեկը մեկ կողմս, մեկելը մե-
կել կողմս, աչքերը ուռած, կեցել են, երեսս են նայում: Տեղիցս
շարժվել չեմ կարողանում, ամեն ժած-եկածիս՝ կարծես հազար
բիզ են խրում ողջ մարմինս: Ոտք ունեցածս չեմ հասկանում,
կարծես կտրել են, դեն են գցել: Կամաց-կամաց միտքս վրա եմ
հավաքում ու անցած բաները մեկ-մեկ, մեկ-մեկ միտքս են գա-
լիս:

Մեկ էլ տեսնեմ մյուս սենյակից սասանական մի ձայն է գա-
լիս. չգիտեմ մարդու է, չգիտեմ՝ գազանի ու շղթայի գնդգնդո՞ց
«էս ի՞նչ է», հարցնում եմ մամայիս:

— Սուս,— ասում է,— պապադ է,— ասում է:

Խեղճ պապաս, խելքը կորցրել էր ու կատաղել:

Յոթն ամիս տեղաշորերից շեմ վեր կացել, հինգ ամիս էլ նս-
պես տկար եմ լինում, որ պատերին քսքսվելով կամ նստարան-
ները բռնելով հազիվհազ ման եմ գալիս սենյակի մեջ: Էդ միջո-
ցին պապաս էլ մեռնում է— Աստված գերեզմանը լույս իջեցնի—
երեք հոգի՛ ես, մամաս ու մեծաս մնում ենք որք ու մեկ կտոր սե
հացի կարոտ: Մամաս լուսե լուս ժողովրդի կարն է կարում, մե-
ծաս էլ դալալություն անելով, ֆալ բանալով, շար-աչք աղոթելով՝
կտոր մտոր փող են վաստակում. դրանով շտե գլուխներս ապրեց-
նում ենք:

Քաղաքի մեջ անունս շախուի գող է դուրս գալիս:

Ես էլ տասնչորս տարիս եմ մտնում:

Էդ միջոցին աղա Լազարովից էստեղի մեկ աղայի վրա գիր է
գալիս թե՛ «եթե մեկ էնպիսի գրել-կարդալուն սեր ունեցող աղ-
քատ տղա կա էստեղ, խնդրեմ վերցնես ուղարկես Մոսկով, հայի
ձեմարան»: Էս որ լսում եմ՝ իսկույն գնում եմ էդ աղայի մոտ,
ոտներն եմ ընկնում. «արի էդ լավությունը արա ինձ, ասում եմ,
հա՛մ որք եմ, հա՛մ աղքատ եմ, հա՛մ էլ կարդալու սեր ունեմ»,
ասում եմ շտե՛ ինչ որ բերանս գալիս է: Նա էլ— Աստված բանը
աջողե— խոսք է տալիս. «Երկու շաբաթից պատրաստ եղիր,—
ասում է,— գնացող որ լինի, հետը կդնեմ, կուղարկեմ»: Չեռքը
պաշում եմ, դուրս եմ գնում, ուրախությունից վեր-վեր եմ թըռչ-
կոտում, բայց մերոնց բան չեմ ասում: Երեք շորս օրից մի քա-
ղաքային պահապան է գալիս մեր դուռը ծեծում. «Մարտիրոս
անունով էսպես-էսպես տղա կա՞ էստեղ»,— ասում է: «Ես եմ»,
ասում եմ: «Հայդա, արի հետս, աղան քեզ կանչում է», ասում է:
Մամաս կարծում է, թե էլի ո՞վ գիտի ինչ փորձանք պիտի գա
գլխիս, խեղճը քիչ է մնում խելքից զրկվի: «Մի՛ վախենար, մա-
մա,— ասում եմ,— ու մի երկու խոսքով հայտնում եմ բանի եղե-
լությունը: Որ էդպես է, աստվածամայրը բախտդ բանա, բալաս,
ասում է ու ճամփա է գցում, մեծաս էլ շտապով ֆալան է առնում,
որ առաջուց իմանա, թե ի՞նչ լուր պիտի բերեմ: Գնում ենք աղա-
յի մոտ. մարդու խոժոռած երեսից հասկանում եմ, որ ասելուն
ուրախ բան չպիտի լինի:

«Հածե՛, ասում է, դու ի՞նչ երեսով էիր ուզում աղա Լազա-
րովի վարժարանը մտնել. մեկ-երկու շախու էլ որ էստեղ գողա-

նաս, էդ հո բոլորովին կկեղտոտես նախիջևանցու մաքուր անու-
նը, ասում է՝ երբ որ պոչը էդքան կեղտոտած էր, դու ինչպես հա-
մարձակվեցիր գալ ու խնդրվել ինձ: Գեհ, աչքիցս կորիւր, գող-
ավազակ, մեկ էլ երեսդ շտեմանմ...»:

էսպես ինձ իր սնից դուրս վռնդեց մեր աղան:

Լալով-լալով տուն եկա: Խեղճ մամաս, աչքը դուանը պահե-
լիս է եղել, թե որդին ի՞նչ ուրախ լուր պիտի իրեն բերի ու ծերու-
թյունը մխիթարի. մեծայիս ֆալն էլ դուրս է եկել շուտով ճամ-
փա, շատ փող, աղուհաց ու տեսակ-տեսակ բարություններ: Էս
որ լսեցին ողորմելի կինամարդիկը, ավելի մեծ տրտուության
մեջ ընկան:

Մեկ օր մեծայիս մեկ տուն թեթև թափելով կանչեցին: Էդ
տան տերը տարվա մեջ ինն ամիսը Ստավրապոլ էր կենում իր
առուտորի պատճառով, տասներկու տարեկան որդուն էլ հետը
առել էր ու էնտեղի թագավորական վարժատունն էր սովել կար-
դալու: Մեծաս վարժարանի անունը որ լսում է, կինամարդոց ու-
րերն է ընկնում թե էսպես-էսպես մի թոռ ունեմ, ասում է, կար-
դալու շատ սեր ունի, ինքը պատիկ է, բայց մեծ մորուքով տեր-
տերից, վարժապետից ավելի բան գիտե, գովում է մի խոսքով
ինձ, էնքան է ասում, էնքան է աղաչում, պաղատում, որ կինա-
մարդկանցից խոսք է առնում որ ինձ էլ Ստավրապոլ ղրկեն Մա-
թեոս աղայի մոտ, որ նա էլ վարժատուն տա: Էս որ սարքով է
պրծնում, շտապով տուն է գալիս, «աչքդ լույս, Մարտիրոս,—
ասում է,— շարը խափանեցավ, բարին կատարվեցավ», ու մեկի
մեկիկ պատմում է ինձ, ինչ որ խոսվել էր իմ մասին: Ամենքս էլ
ուրախանում ենք:

Բայց օրեր են անցնում՝ բան չկա, շաբաթ է անցնում բան
չկա, վերջը վերջը ամիս է անցնում, էլի բան չկա: Մեկ օր մեծաս
վեր է կենում, ասում է. «էս ի՞նչ դարմանք բան է, ասում է, էս-
քան ժամանակ մեկ խաբար չի լսվում, ասում է, մոռացե՛ն են թե
խաբեցին մեզ, ասում է. էսպիսով բան դուրս չի՞ գալ, վեր կենամ
մեկ ինքս գնամ իմանամ. ծանրը կեցած քարի տակից ջուր լի՞

¹ Հիվանդություն կամ թուլություն ունեցողի հին շորի մեջ կխայրելու մոմե
են բերում եկեղեցուց, հիվանդի գլխի տակն են դնում. մյուս օրը ամանի մեջ հա-
լեցնում են և հետո թափում ջրով լցված պնակի մեջ՝ երեք անգամ գլխի վրա բը-
նած, երեք անգամ սրտի, երկու անգամ ծնկների և մեկ անգամ ոտների վրա: Էդ-
րե թե սրտով հիվանդը բժշկվում է:

վազիլ», ասում է՝ ու ֆարաջան հագնում է, գլխին թաշկինակ է
փաթաթում, փայտը ձեռքն է առնում, տպտպալով ուղիղ դեպի
Մատթեոս աղայի նշանածն է գնում: Իրիկնադեմին ճրագ վառելու
ժամանակները ոտները քստքստացնելով, ուրախ երեսով ետ է
գալիս:

«Ի՞նչ մաղարիչ ես տալու»,— ասում է ինձ:

— Առաջին տարվա ոտճիկս ամբողջովին քեզ երուսաղեմի
ճամփի փող,— ասում եմ:

«Է՛յ, բալաս, ասում է մեծաս, էն օրը որ գա, ո՛վ գիտի ու-
կորներս էլ փտած կլինեն: Ավելի լավ է, էգուցվա բանը տեսնենք:
Ահա քեզ ուրախ խաբար. վաղը չէ մեկել օր Մատթեոս աղային
էստեղից երեք սալ բաղկալի ապրանք պիտի ղրկեն: Եթե շեւ
վախենում— որովհետև էն ժամանակները ավազակ չերքեզներից
վախ կար— նստիր և գնա. մնացածն էլ Աստված կտա»:

Ինչպես որ ասում է, էնպես էլ սնում ենք: Մեծաս դուռնե-
ղուս ման է գալիս, մեկից հին մուշտակ է խնդրում, մյուսից տաք
մեսթ՝ է մորում, մեկ ուրիշից էլ մորթե գդակ է առնում, փաթաթ-
վում եմ, կապկալվում եմ, մեկ պատիկ բոխչա՝ ինչ ասես շորե-
րով, ճամփի պաշարով, կուան տակս եմ դնում, գնում եմ՝ սայլն
եմ նստում ու ճամփա ընկնում:

Ինչ օրից Ստավրապոլ ենք հասնում: Գնում ենք էդ Մատթեոս
աղայի մոտ, գլխիս եկած ամեն բանը պատմում եմ, որ ասես
մեկ բան չեմ թաքցնում՝ լավս էլ ասում, վատս էլ ասում: Բայց
տեսնում եմ, որ մարդու երեսը մեկ տեսակ է լինում, երևում է,
որ պատճառիս չի հավանում, կարծես դժվարանում է, բայց էլի
չեն կենա— բան չի ասում:

Մեկել օրը ինձ վերցնում է, տանում է մեծավորի մոտ և
խնդրում, որ վարժատուն առնի:

«Գլխագիր ունե՞ս, հարցնում է ինձ մեծավորը: Հանում եմ
ծոցից, իրեն եմ տալիս:

«Տասնչորս տարեկա՞ն ես»,— հարցնում է:

— Հա,— ասում եմ:

«Ռուսերեն գիտե՞ս»,— ասում է:

— Չէ՛, սովորած չեմ,— ասում եմ:

«Փվարանություն գիտե՞ս»,— ասում է:

¹ Փափուկ կաշվե (սափիանե) գուլպա:

— Չէ՛, սովորած չեմ,— ասում եմ:

Էլի մի քանի շտովորած բաներս է հարցնում: Ո՛րը հասկա-
նում եմ, ո՛րը՝ չէ: Մեծավորը քիթուպոունգ է անում:

Մատթեոս աղան կարմրում է:

«Օրենքով վարժատուն առնել չէր կարելի քեզ, բայց,—
ասում է,— Մատվեյ Կարպիչի խաթեր համար ուզեմ-չուզեմ պետք
է ուվաժիտ անեմ, ասում է մեծավորը, բայց ամենավարի դասա-
րանը պետք է քեզ նստեցնեմ»,— ասում է: Ուրախությունից չզի-
տեմ՝ ի՞նչ անեմ. մեր աղաթով գնում եմ մեծավորի ձեռքն եմ պա-
շում. մարդուն դուր է գալիս»:

«Վրայից երևում է մաքուր սրտով տղա է, բնավորությունն
էլ դեռ փշացած չէ»,— ասում է Մատթեոս աղային, վրաս աչքով
նշան անելով. «Կաշխատե՞ս, լավ կսովորե՞ս»,— հարցնում է ինձ:

— Սովորելու որ չլինեի, ինչո՞ւ ամայի շուրեր կընկնեի, կգա-
յի էստեղ, ասում եմ:— Ծիծաղեց մարդը. մի քիչ էլ մնացինք ու
վեր կացանք տուն եկանք:

Ճամփին Մատթեոս աղան դառնում է ինձ և ասում.

«Հա՛ձե, գլուխդ գովում էիր, թե շատ բան գիտես, տեղը որ
եկավ, ինչո՞ւ պոչդ քաշեցիր, ինձ էլ ամոթով թողիր»:

Ես բան չասի, սուս կեցա: Ախպեր, ի՞նչ ասեի. իմ տարինե-
րով սովորածս էստեղ բանի պետք չեկավ, դրանց սովորեցրածն
էլ ես սովորած չէի: Տեսա, որ Մատթեոս աղան առաջին օրից
վատ աչքով նայեց ինձ, բայց բան չասավ, էն էլ շնորհակալ եմ:

Մեկել օրը առավոտյան վաղ գնացի վարժատուն, մինչև կես-
օր մնացի, երկու վարժապետ եկան, երկուսն էլ դաս տվին, կես-
օրից հետո մեկ էլ գնացի, էլի երկու ուրիշ վարժապետ եկան, նը-
բանք էլ դասեր տվին: Մյուս օրը բացի նրանցից, էլի շորս ուրիշ
վարժապետներ եկան, ամենքն էլ ուրիշ-ուրիշ դասեր տվին,
գնացին: Գիրք չունեի, ի՞նչ անեի, ո՞ւմն ասեի, ումի՞ց աղաչեի
առնեի: Եթե Մատթեոս աղային ասեի, թե ինձ ութը հատ գիրք է
պետք, հաղիվ թե առնեի տար, որովհետև վրայից երևում էր, որ
ինձ տաք աչքով չէր նայում, էնքան էր որ մեկ փոք հաց խնայի-
լու քաշվում էր: Նրա որդուց ուզեի՞, էն էլ գիտեմ, որ խոսքս զոպ
պիտի անցներ, քանի որ նա առանց իմ ասելուն էլ գիտեի գիրք
չունեցածս, բայց մեկ բերան խոսք շասաց թե՛ ինչի՞ վրա դասե-
րըդ պիտի սովորես. երևում էր, որ նրան էլ դուր չէր գալիս վար-
ժատուն մտնելս:

Դասատան մեջ մի քանի բարի երեսով ոռու տղաներ նկա-
տել էի, հարցնելով-հարցնելով գնացի գտա նրանց տունը. ամեն-
քից էլ մեկ-մեկ կամ երկու-երկու գիրք վեցրի, եկա տուն, քաշ-
վեցի մի անկյուն և սկսեցի ինձ ու ինձ սովորել: Միտքս, փառք
Աստծու, սուր էր. էդ կողմից միամիտ էի. դասերս էլ ո՛րը վեց
տող էր, ո՛րը՝ ութ տող— էդ ինձ համար մի բան չէր. թվաբանու-
թյան վարժապետը ոչինչ տված չէր սովորելու, նրանը՝ սև տախ-
տակի վրա տեսակ-տեսակ հաշիվներ էին, էդ ոչինչ. դեռ դասարա-
նից դուրս չեկած՝ գիտեի:

Մեկել օրը, երբ վարժատուն գնացի և հերթը ինձ հասավ,
դասերս էնպես լավ պատասխանեցի, որ վարժապետներս զար-
մացած մնացին, իրենց ձեռքի թղթի մեջ անունս ու ազգանունս
գրեցին և գովեցին. էդ թղթի անունը մեկ տեսակ էր, բայց վա-
ղուցվա բան է, մոռացել եմ՝ գնացել է: Մեծավորը
եկավ, էդ թուղթը աչքի անցրեց, «մալադեց Սվաճիկով, ասաց,
աշխատիր, ասաց, մեկ օր մարդ կլինես»,— ասաց:

Երեսից երևում էր, որ լավ մարդ էր: Ախպեր, ժողովուրդը ինչ
կուզե թող ասի, բայց էդ կազակ ազգը հարբան է, ինչ է, ինչ չէ,
էլի սիրտը մաքուր է, մեզպես նախանձոտ, շարկամ, բամբասող,
մարդու միսը ուտող չէ...

Էսպիտով կես տարի գնացի եկա վարժատուն. պարծանք չի-
նի ասածս, օրեցօր ավելի ու ավելի լավ էի սովորում և վարժա-
պետներին ու մեծավորին աչքն էի մտնում. ոռու ընկերներս ինձ
սիրում էին, շեն կենան, գիրք, տետրակ, թուղթ, գրիչ, քարեգրիչ,
ինչ որ պետք էր, ամեն բան տալիս էին, ես էլ որին դասն էի սո-
վորեցնում որին էլ ձեռքիցս եկած պատիկ մատիկ լավություններ
էի անում, մեկ խոսքով՝ եղբայր եղբոր պես էինք ապրում: Բայց
Մատթեոս աղայի որդին հետս լավ չէր. նայել չէր ուզում, ամա-
շում էր հետս խոսել, խաղալ կամ դաս սովորել, ամեն պատահո-
ղին ասում էր թե՛ ես վատ ազգից, աղքատ, ուսմիկ տղա եմ...
պապան էլ էսօր էգուց տնից փախցնել է ուզում, էնքան է որ՝ մեկ
պատճառի է ման գալիս:

Ասում էր, բայց նրա խոսքը բանի տեղ դնող չկար:

Ամառ եկավ, բնությունները սկսվեցին: Ինձ առաջին դասա-
րանից երկրորդը տարան— ընդամենը կես տարի մնացի առաջին
դասարանում— լավ սովորելուս ու գովելի բարքիս համար անու-

ներս կարո՞րք տախտակի վրա գրեցին, մեկ հաստ էլ գիրք բաշխեցին:

Մեկի տարին դաւատան մեջ էլ առաջին աշակերտն էի հիշվում, էդպէս էլ մնացի մինչև դուրս գալս. դաւատուն դաւատան ետեկց փոխեցի ու Մտավորացոյ գալուս երբորդ տաքին արդեն շորորդ դաւատանն էի:

Գեո նաք էի շորորդ դաւատունը անցել, որ գլխիս նորից փորձանք եկավ:

Մեկ օր Մատթեոս աղան տոնավաճառից ուշ տուն է գալիս, հանվում է, ծոցի փողը— իրեն ասելով— քսակով սեղանի վրա է դնում, ճրագը հանգցնում է, պառկում: Մյուս օրը որ անկողնից վեր է կենում, քսակը փնտրում է— քսակը չկա: Խանութի տղավերից մեկն էլ չկար, ամենքն էլ ատնավաճառն էին. ծառա էլ չունեինք— նոր գուրս էր գնացել— տանը ես էի, ինքն էր և որդին էր երեքիցս մեկն ու մեկը գողացած պիտի լինեք, բայց ո՞վ. պարզ չէ. կասկածը խկսւցն ինձ վրա է ընկնում. էտ շախուի բանն է նորից աշխարհ է գալիս: Ես երդում պատառ եմ լինում, երկերի ամեն սուրբերի անունն եմ տալիս, վկա եմ բերում, բոլորն էլ Մատթեոս աղան հրամայում է, որ շուտով փոխու-չուփու գուր է: Մատթեոս աղան հրամայում է, որ շուտով փոխու-չուփու գուրս հավաքեմ, վեր կենամ նախիջևան գնամ: Լաց լինելով գնոմ եմ մեծավորիս մոտ, էսպէս էսպէս բան է, ասում եմ: Նա էլ ի՞նչ անի խեղճը: «Ժա՛լկը- ժա՛լկը.— ասում է,— բայց ցա՛վիս դարձան չի գտնում: Թղթերս ձեռքս է տալիս ու հա՛յ վախ հա՛յ...

Նորից նստում եմ սայլը, գալիս եմ նախիջևան:

Մամաս որ իմանում է էս նոր անբախտութիւնս, թուլանում ընկնում է. քացախով, ջրով, նաշագրով հազիվ ուշքի են բերում ողորմելի կինարձատին: Մեծաս ֆալ է բաց անում ու ասում է «Փողը անպատճառ պիտի գտնվի ու անմեղութիւնս լույս պիտի գա. ինձ էլ նորից պիտի տանեն Մտավորացոյ:

էս անգամ մեծացիս ֆալը դորթ է դուրս գալիս, բայց միտի կեւը, էդ կորած քսակը Մատթեոս աղայի վարտիքի գրպանից է դուրս գալիս: Սիրտս շահելու համար նշանածին նամակով պարսպրում է, որ ինձ երկու ֆունտ շափիչ, երկու ֆունտ խուրձա, քսակ կոպեկ էլ ան փող տան ձեռքս ու ճամփեն: Ինչպէս է լինում, որ մեծաս նրանց տունն է գնում. էդ նամակը ասելը կարգում են, շափիչն ու խուրձան թղթի մեջ են փաթաթում, ձեռքը տալիս, փող էլ ծոցն են դնում:

«Մեծա, ասում եմ, ինչո՞ւ ապիք, ասում եմ, էդ բոլորը մեկ է, քե իմ անմեղութիւնս ծախածի պէս բան եղավ», ասում եմ:

— Ար շառնելի,— ասում է մեծաս,— անմեղութիւնդ բոլորովին ձրի տված պիտի լինելիք հո,— ասում է:

Լավ որ միտք անեա, մեծացիս ասածը դորթ էր, բայց միայն հայերիս մեջ: Չախուի բիծը կար հո վրաս, քսակով փողինն էլ որ կպավ, բոլորովին արատավորվեցի, էլ երես շանեկ քաղաքի մեջ մնալու, շատով մի հնար պիտի գտնվեր նախիջևանից էլնելու, բայց որտե՞ղ երթայի, ո՞վ իր տանը կանոնք աշխարհս երկու գողութիւնների մեջ բանված տղին...—

Մեր ազգը է բնի էրպես է. վատ բան ըսելու երկու սոր կանոն ունի, լավ բանի համար՝ ոչ մեկը: Փսակով փող գողացածս ամենքին էլ լսել էին, բայց քսակի Մատթեոս աղայի վարտիքի գրպանից ելածը՝ մեկ մարդ էլ լսած չէր. ինչպէ՞ս ախր շարաքվես...—

Մեկ օր տան դանակի առջև կանգնած եմ ինձ համար, հայտն եմ՝ առջևիցս մի սուս մարդ է անցնում, գտակը հանում է և գլուխ է տալիս. «էս ինչ մարդու տունը ո՞րն է», հարցնում է:

«էսպէս էսպէս գնա, կգտնես»,— ասում եմ. հետո իրեն եմ դառնում և հարցնում. «Գու ո՞վ ես»:

— Ես նրա շորանն եմ,— ասում է:

«Որտեղից ես գալիս»,— ասում եմ:

— Ծե ծովի ափերից,— ասում է:

«Զիդ-սայրդ ասրա որտե՞ղ է»,— ասում եմ:

— Զի-սայր չունեմ,— ասում է,— ոտքով եմ եկել,— ասում է:

Իսկապէս միտքս բան է ընկնում: Մարդք գնում է:

Մյուս օրը մերանց բան չեմ առում, կառնացուկ տնից դուրս եմ գալիս, ողորակի գնում, ուստ եկողին հարցնելով, ճիշտ երկու շաբաթից ոտքս Եկատերինս դուր եմ դնում: էս հային եմ գնում, էն հոջին եմ գնում, վերջը մեկին գտնում եմ, տարին երեսուն է հինգ ոտքի վարձով, էն ժամանակինքը փողը դեռ ասիգնացիայով կհամարեին, խանութի աշակերտ եմ ժամանում: Թրանդ տվարածա, ինչ գիտեցածս, ո՞ւմ որդին եղածս ոչ մեկին էլ չեմ ասում— հրեարարութիւնը ասելու համար մեկ անգամ ասել էի:

Վեց տարի մնացի տիրոջս խանութում. էդ միջոցում մեկ անգամ թարս խոտք ասել չտիք, մեկ օր հաշվիս մեջ մի գրոշ պակաս չեկավ— հարցարներ հո ավելի էր ձեռքիցս անցնում— էն ոչինչ:

խանութպանը էնքան վստահացել էր ինձ, որ ամիսներով ոտքը խանութ չէր դնում... Եղած շեղածը մի տասներեք-տասնչորս տարեկան աղջիկ ուներ, տեղն եկած ժամանակ միշտ ասելիս է եղել մոտիկ մարդկանց. «Կատինիս թող տարիքը լրանա, կաննեմ Մարտիրոսին կտամ, խանութս էլ նրա վրա կգրեմ, դրանից հետո հայր-որդու պես բան կլինենք»: Լսողներն էլ իսկույն լուրը ինձ կրեբեին: Ես էլ հուսով կեցել եմ, թե էսօր չէ վաղը քառասուն հազարանոց խանութի տեր պիտի լինեմ: Վարձս էլ չեմ առնում, թե ինչ է՝ երբ էլ որ լինի՝ ամենն էլ իմն է...

Ի ու մեկ նայի դեռ գլխիս ինչեր կան գալու...

Տերս վաղուց նախիջևան գնացած չէր: Մեկ օր էլ վեր է կենում և ասում ինձ. «Հածե՛, գիտե՞ս ի՞նչ, ասում է, սիրտս մեկ նախիջևան գնալ է ուզում, — ասում է. ի՞նչ ես ասում», — ասում է: Ես բան չասի, բայց սիրտս սեղմվեց: «Էդ ամենը մի հարյուր հիսուն ութուր բան չէ՞, — ասում է տերս, — թքել եմ վրան, հայդե արի երթամ... Ետ որ գամ, Աստուծով, նշանդ էլ կդնենք՝ աղջիկս էս է՛ տասնհինգ տարեկան կլինի. եկող տարի էս ժամանակները պի՛տի ներդ էլ կհամբուրեմ ու՛ մաղս էլ պատից կկախեմ... Հերիք է ինչքան շարշարվեցի, հանգստանալու ժամանակն է, մի քիչ էլ դու տանջվիր...»

Կուզեի ասել՝ «մի՛ գնա», տեղով էլ գիտեի, որ խոսքս կլսեր, բայց չասի, «ինչ լինելու է՝ թող լինի», — ասի մտքիս մեջ... Ինչ ես կարծում, հոգուս զգացածը հո զուր չեղավ...

Էդ իմ տերս որ նախիջևանից ետ դարձավ, էլ առաջվա մարդը չէր, բոլորովին փոխվել էր. մեջը սառնություն էր մտել: Առավոտվանից մինչև երեկոն կգար խանութում կոնար, ամեն րոպե մատչանս աչքը կանցներ, դախլի մանր փողը կհամարեր, շթի ու ապրանքի թուփերը չափել կտար: Շուտ հասկացա քամու որտեղից փչածը, բայց սուս կեցա. տեսնեմ՝ դրա վերջը ինչ կլինի, ասի մտքիս մեջ:

Անցնում է էսպես շաբաթ ու կես... Մեկ օր տեսնեմ, տերս մի ամուրի նախիջևանցի տղա է բերում խանութ ու խանութի բարին ամենը նրան հաշվով է տալիս, ինձ էլ նրա ձեռքի տակ դնում: Էլի սուս կեցա, տեսնեմ սրա վերջն էլ ինչ կլինի, ասում եմ մտքիս մեջ: Մեկ էլ ի՞նչ լսեմ. տերս էդ նոր խանութի տղին խոսք է տվել իր աղջիկը նրա հետ նշանելու... Էդ էլ կուլ տվիք:

Երբեմն մտքիցս կանցնի, թե կենդանիների մեջ ո՞րն է ավելի շարժալու, դիմացկունը. մի՛ ասիլ որ ադամորդուց ավելի դիմացկունը չի եղել, ուրիշ անգամն էլ էսպես միտք եմ անում՝ յարաբ ասում եմ, մարդկանցից էլ էն ամենադիմացկունը հայր չէ՞: Խոսքի վրա, իմ տեղս մի ուրիշ ազգի մարդ, զազախ, նողայ, ֆրանցուզ, գերմանացի որ լիներ, զուխը ծոած, էդքան մարդուց վատությունին, թշնամությունին կդիմանա՞ր, թե՞ «թքել եմ վրաներդ», կասեր ու գլխի ճարը կտեսներ, խելքի կտրածի պես: Ասողներ կան — գուցե գրքի մեջ էլ գրած է, ով գիտի — որ ինքն իրեն մեռցնելը հոգուն մեղք բան է, դրա համար, ասում են, Աստված մեր հոգին դժոխք է տանում. որ էդպես է, ապա ինչո՞ւ մարդս անբախտ է, ուզում եմ ասել թե՛ էդ հրաման տվողը ինչի՞ բանը էն տեղն է հասցնում, որ ողորմելի մարդը աշխարհիս վրա ապրելը մեռնելուց վատ է ճանաչում ու — մեղա Աստծու, մեղա — կամ դեղ կիսի, կամ պարանը վզին կցցի, կամ շուրը կընկնի, կամ ճակատին գնդակ կտա... Չգիտեմ, ախպեր, խելքիս բանը չէ... Մեկ օր խանութում նստել եմ, վիզս ճուկ: Միտք եմ անում, գլխիս անցած բաները շարան-շարան աչքիս առջևից կանցնեն ու ինքս ինձ կհարցնեմ՝ արդյոք անբախտությունս վերջացա՞վ. մեկ էլ զուխս բարձրացնեմ, ի՞նչ տեսնեմ, տերս դիմացս կանգնել է, վրաս է նայում:

«Հածե, Մարտիրո՞ս», — ասում է:

— Համե՛, աղա, — ասում եմ:

«Գիտե՞մ մեկ բան ունեմ քեզ ասելու», — ասում է:

— Ի՞նչ է ասելուդ, — ասում եմ:

«Ես քեզ ճամփա դնել եմ ուզում», — ասում է:

Սարսափս գալիս է:

— Ինչո՞ւ, — ասում եմ:

— Միրտս շտե էնպես կուզե, ասում է. էս խանութի տերը ես չե՞մ...»

— Պատճա՞ռը, — ասում եմ:

Երեսը դարձնում է նոր եկած խանութի տղին ու ասում է — իսկ խոսքը ինչ է, գիտե՞ս. «Մեկ էս լիրբ անամոթին տես, երեսը կաշի է արել ու ինձնից պատճառներ է ուզում իմանալ, ամեն տեղից հանած-վարածը դեռ համարձակվում է ուղիղ աչքիս մեջ նայել»:

Հետո դառնում է ինձ և ասում...

«Գու պատճառը կուզես իմանալ, հա՞, պատճառը էս է— դու գող ես»:

— Ե՛րբ գողութիւնս բռնել ես,— ասի:

«Մենակ ես չեմ բռնած քո գողութիւնդ, հազար մարդ բռնել է: Գու չէի՞ր վարպետիցդ շախու գողացողը, դրա՞ համար չէր որ քեզ վարպետիդ մոտից փախ տվին, քո պատճառով չէ՞ր որ պապադ խեցավ, հետո էլ մեռավ ողորմելին, աղա լազարովի ուսումնաբանից քեզ դուրս շա՛րին: Ստավրուպոլ Մատթեոս աղայի քսակով փողը դո՞ւ չէի գողացողը. դրա համար քեզ թագավորական վարժատանից չվճնդեցի՞ն, անամոթ շուն... Մեղքդ որ գիտես, գոն վարժատանից չվճնդեցի՞ն, անամոթ երեսիդ թքեմ— շտե քեզ պատճառ. գող ես, շտե՛ գող ես: Ես խանութիս մեջ գող մարդ ունենալ չեմ ուզում, հասկացա՞ր, գլուխդ մտա՞վ: Շտե քեզ պատճառ»:

— Լավ,— ասի,— տուր վեց ու կես տարվա վարձս, երթամ:

«Ի՞նչ վարձ, ի՞նչ բան, ի՞նչ փստան... Ո՞ւմ ես հիմարացնում: Քեզ պես աշկարա գողը իր վարձը վաղուց առած կլինի, գուցե ավելով էլ... Շուտով ե՛լ խանութիցս, թե չէ՝ ոստիկաններով կհանեն ու ձեռքդ ոտքդ շղթայակապ անել կտամ, էնպես ոտքով կուզարկեմ նախիջևան: Էս օտար քաղաք է, դու նախիջևան չգիտենաս, էնտեղ մենք զգուշ պիտի կենանք, թե չէ մեկ օր հայերիս անունը կտորվի, մեկ էլ ուղղելու դուրը չկա. դրա համար շտե չեմ ուզում գլխիդ դալմադալ բանալ... Դե, հա՛յդե, որտեղից եկել ես, էլի էնտեղ գնա»...

— Աղա,— ասի,— առանց փողի ինչպե՞ս երթամ, ո՞վ ինձ կտանի. ճամփին ախր ուտել-խմել պետք է, ո՞վ ինձ ձրի հաց, ջուր, պառկելու տեղ կտա: Մեկել որ նախիջևան գնացել եմ, գիտե՞ս հո,— դանակ ու քսակ գողանալս քեզ ասողը էդ էլ երեկ ասած կլինի— էնտեղ ծեր մայր ու մեծ մամա ունեմ, ինչ ասեմ երթամ, նրանց ծերութիան նեցուկ լինելու տեղ՝ գլուխներին ծանրութիւն երթամ... Աղա, ոտքդ պագնեմ, մի անի էդ վատութիւնը, անիցդ փախ մի տալ ինձ մի՛ խայտառակիլ: Վեց տարվա երախտիքս ինչո՞ւ մոռացար, սրանից երկու ամիս առաջ...

էջ չկարողացա բան ասել, արջունքս հայ-հայ խեղդում էր...

Տերս քսակը բացեց, միջից տասը հատ կապույտ թուղթ փայլահայտ, առջև շարտեց ու ասաց.

— Էս քեզ չէ, ծեր մորդ, մեծայիդ է. քեզ էն էլ բավական է, քեզ որ վրայիդ շորիդ ու ժիլետիդ աստառի մեջ կարել ես, թաքցրելս:

Առի հիւսուն ուրբին, պաշեցի տիրոջս ձեռքը և ելա խանութից: Իսկույն բազար գնացի, վրայիս մահուղե շորը ծախեցի, տեղը առա մուծիկի կոշտ շորը առա, հագա և ոտքով եկա նախիջևան: Մեծաս մեռել էր, մամաս էլ իրեն ծեր տեղով մեկի մյուսի լվացքն անելով օրն էր անցկացնում, էսօր կուշտ, վաղը քաղցած:

Նախիջևան որ եկա, քսաներեքիս մեջն էի: Ճիշտ էն տարիքս էր, երբ մարդ դեռ նոր աշխարհք է մտնում և աշխարհքի համն է տեսնում: Բայց դու արի տես, որ էս ծաղիկ տարիքիս մեջ աշխարհքիս բանից պրծել, ձեռք էի վերցրել ու կյանքիս թուշը պիտի ուտեի ու լեղին խմեի... Ա՛խ, աշխա՛րհք, աշխարհք:

Իմ բախտից էս վեց ու կես տարվա մեջ երեսս էլ փոխվել էր, էն դանակի ու քսակի պատմութիւնն էլ մոռացվել էր: Իմ ուղածս էլ էդ էր:

Մեկ օր քաղար ելա, մի հատ էժան ձի առա, հետո պատահմամբ մի տակառասայլ և ձիու սարք առա և էն օրից ի վեր մինչև էսօր— ճիշտ քառասուն և երկու տարի է— ջրկիրութիւն եմ անում...

Մի քիչ հետո ասաց.

«Աղա մտոդ մանր փող շունե՞ս, հինգ տակառ ջուր եմ բերել, մի մանեթ կանի... Ձիուս համար մի քիչ խոտ գարի պտի առնեմ, հալվանս երեկվանից ի վեր քաղցած է, տանն էլ խեղճերը քանի ժամանակ է ինձ են սպասում, մի-մի կտոր հաց նրանց էլ պիտի տրվի»:

— Ահա քեզ քսան մանեթ,— ասի ու ձեռքը կուզեի երկու տասնոց դնել,— մեկ մանեթը ջրիդ համար, տասնինն էլ պատմածիդ համար:

«Ի՞նչ ես անում,— ասավ Մարտիրոսը,— վարձս ինչ որ է՛ էն տուր. դրա համար էլ շնորհակալ կլինեմ: Վաթսունհինգս լրանում է, աղքատութիւնից աչք բացած չեմ, բայց էլի մարդու ձեռքըս մեկնած չեմ, սրանից հետո ոչ թե առնթ, հոգուս մեղք էլ է մուրալը: էսօրվա օրս ջրկիր եմ— սրանից ցած էլ ի՞նչ արհեստ կա— բայց էլի մտքիցս դուրս չի գալիս, որ մեկ օր ազնվական տղաների հետ կողքե կողք նստել եմ ու լավ-լավ մարդկանցից բան սովորել եմ... Վաղուց է մոռացել էի էս շախուի պատմութիւնը, կարծում էի թե սրտիս վերքը արդեն փակվել էր, բայց էսօր

հիսուն ու հինգ տարվա կորուստս որ գտա՝ նորից արյունը սկսեց կաթիլ... Հե՛յ ժամանակ, ո՞ւմ մտքից կանցներ, որ էս ժանդոտած շախուն, որ գրոշ շարժե, ժամանակով մի շենքով օջախ քանդել է...»:

— Մարտիրոս,— ասի,— քեզ մի բան հարցնեմ, դորթը կասե՞ս,— ասի:

«Մեկ տեսնենք ի՞նչ պիտի հարցնես, ասաց. թե որ կարողանամ կասեմ, ինչո՞ւ չէ»:

— էդքան անբախտությունիդ մեջ ո՞ւմն ես ավելի մեղավոր ճանաչում,— ասի:

— Ես քեզ մի դորթ բան ասե՞մ,— ասաց:— Երբ որ դու ուղիղը կուզես իմանալ,— ասաց,— իմ անբախտությունիս մեջ մեղավորը՝ մենակ ես եմ»:

— Ինչպե՞ս,— ասի, զարմանալով,— ապա Մկրտիչ վարպե՞տդ, ապա Մատթեոս աղա՞ն, ապա խանութպա՞նը...

«էս ամենը դատարկ բան է, նրանք ոչ մի մեղք չունեն, նրանք էն արին, ինչ որ խելքները կտրեց, ես էլ էն պիտի անեի, ինչ որ իմ խելքն էր կտրում: Ես քեզ կարճ ասեմ. աշխարհքս էսպես է. ուզո՞ւմ ես, որ քեզ չկծեն՝ նախ ինքդ կծիր ամենքին, կուզե՞ս, որ վրադ չհաչեն, նախ ինքդ ամենի վրա հաչի, ուզո՞ւմ ես որ անունդ չսևացնեն՝ ոսստ եկողի անունը սևացրու. էդ ամենը ես վաղուց գիտեի... բայց մեջս մի բան կար, էդ բանի անունը խղճատանք է, շտե նա էր իմ էն ամենավատ թշնամիս, նա էր իմ պիտին էս ամեն վատությունը բերողը... Ախպեր, մեզ ո՞վ է ասել թե գառը լինենք, որ գալիներ մեզ ուտեն»:

ՊԱՅ ԱԶՊԱՐ՝

(Հոռոմսիմայի պատմությունը)

Անցյալները բարեկամիս մեկի մոտ էի գնացել. ինքը տանը չէր, չգիտեմ ո՞ւր էր գնացել. դարբասից ելա ու շորս կողմս եմ նայում, թե՛ էլ ո՞ւր գնամ: Առջևս մի բաց բակ կար, բայց ուրիշ բաց բակերի իսկի նման չէր. մեջը շինություն, տուն, գոմ— այդ՝

պիսի բաներ չկային, բայց պարզ երևում էր, որ կենդանիներ վաղուց է, ինչ դուրս էին եկել. շինությունն էլ, երևում էր, գյուղացու պիտի ծախած լինեին, քանի որ, եթե կրակ ընկած լիներ, այնուամենայնիվ այրվածի հետքեր կլինեին. խոսքի վրա՝ վառվածի մնացորդներ, քանդած օջախներ, քարի, աղյուսի, հողի դեզեր, ինչպես որ հո գիտեք, հրդեհ ընկած ուրիշ վայրերում լինում է. խոսքս ի՞նչ երկարացնեմ, պարզ երևում էր, որ այստեղ եղած տունը վերուցած, տարած էր: Բակում, հարևանի պատին մոտիկ, մեծ-մեծ ծառեր կային՝ ակացի, թթի, սալորի, նրանց մեջտեղերն էլ՝ տեղ-տեղ հաղարջի, սալորի, վարդի թփուտներ. դեպի փողոցը, ուղիղ այնտեղ, որտեղ նախկին տան պատուհանները պիտի լինեին, մի բարձր, գեղեցիկ, կանաչ թթի ծառ կար:

Շատ բաց բակեր էի տեսել, մոտերից անցել, առանց միտք անելու, թե ո՞ւմն է. ո՞վ է մի օր մեջն ապրել, ո՞րտեղ են հիմա նրանց տերերը, բայց այս բաց բակը, ճիշտն ասեմ, ինձ միտք անել տվեց: Հեռվից նայում եմ վրան ու մտքովս տեսակ-տեսակ բաներ են անցնում. արդյո՞ք, ասում եմ, անզավակի մեկն է իր ծերությունը ախուժախով անցկացրել այստեղ, ումբր—արևի հետ մեկտեղ տան պատերն էլ փտել են. նրա մեռնելուց հետո տունն անտեր է մնացել, դռները՝ բաց, պատուհանները՝ քանդված. ցուրտ-բորան ձմեռը որ վրա է հասել, մուրթ գիշեր ժամանակ դրացիները եկել, տախտակ-տախտակի ետևից քաշել տարել են, իրենց օջախները վառել. թե՛ մտածում եմ, ամուսինը մեռել է՝ ով գիտե որ ստանիցայում, ջահել կինը մնացել է երկու-երեք զավակով. դժբախտը շատ է շարշարվել՝ ամոթը երեսին տունտեղը կառավարելու համար, բայց աղքատությունը հաղթել է, նա էլ, խեղճը, տունը տվել է, ո՞վ գիտե ո՞ր հյուսնին կամ ատաղձագործին, տարին քսանութ մանեթի, ինքն էլ վեր է կացել, տեղափոխվել մոր տունը. աչքը բաց ատաղձագործն էլ այսօր պատուհանի փեղկերը շուկա է տարել, վաղը պատի տախտակներից սեղան ու քուրսի է պատրաստել, շուկայում ծախել. հետո, պարզ չէ՞, որ հատակի տախտակներն էլ իրար ետևից կացնի ու ռնդայի տակ են ընկել. վերջն էլ մեր հնարագետ հյուսնը կամ մեր գետափին կամ Պահաթիի կողմերը իր համար տնատեղ է գնել ու կամաց-կամաց այս անտեր տունն այնտեղ է տեղափոխել. մնացածն էլ աստվածասեր ու պասերին ուշադիր դրացիների օգնու-

¹ Բաց բակ— գործածված է ավերված տան իմաստով:

Թյամբ է քանդակել... Ա՛խ, ա՛խ, տուն շինե՛լն է դժվար, թե՛ չե՛ քանդակուց հեշտ բան կա՞ որ:

Այս մտքերի մեջ էի, որ հեռվից մի պառավ կին, գավազանք ձեռին, կամաց-կամաց գալիս է ու առջևիցս անցնում: Առաջ մեկ անգամից շճանաչեցի, բայց հետո, երբ մի լավ տնտղեցի՝ տեսնեմ՝ զրիմցի Հոռոմսիման է:

Հոռոմսիմա-ճիճան՝ յոթանասունհինգ տարեկան կնիկմարդ է, բայց քայլվածքը, արագ-արագ խոսելը, կրակոտ աչքերը որ տեսնես, խաշը վկա, հիսուն էլ չես տա. ինքը՝ առույգ, խոսքը՝ կտրուկ, դատունքը՝ իսկական տղամարդու. հագի շրջազգեստը որ շիներ՝ նրան ո՞վ կնոջ տեղ կդներ. այնպես լեզվի տակ շմնացող կին է որ՝ տասը տղամարդու հավասար: Ինչպես է պատահում, որ մի օր նրան մագիստրատ² են կանչում. մեր Հոռոմսիմա-ճիճան գնում դատավորների առջև այնպես ճարտար է խոսում, որ մարդկանց բերանը բաց է մնում. երեսին են նայում, թե՛ այս ինչ բան է: Մի օր էլ նրա տունը գողեր են մտնում. ինքը տան մեկ բուխ պես մեն-մենակ է. գողերն սկսում են նիզերով, երկաթնե-բով դուռը կտրել. մեր Հոռոմսիմա-ճիճան հապճեպ անկողնից վեր է ցատկում, իսկույն անկյունից գավազանն առնում ու ձայն տալիս. «Ա՛յ տղա, Սիմոն՝, Քափոն՛լ, Մաթիո՛ս, Ստեփան՛, Ասվատո՛ւր,— այսպես մոտ մի քսան մարդու անուն է տալիս,— շուտ ելե՛ք, կացիներն առե՛ք, թոկերը բերե՛ք, գողեր են եկել կապեցե՛ք, մորթեցե՛ք, մեռուցե՛ք»: Գողերն էլ, նրանք ի՞նչ իմանան Հոռոմսիմայի խորամանկությունը, տեսնում են, որ տան մեջ մի գունդ մարդ է մնում. այնինչ խելքները որ գլուխները լինեն՝ գլխի կրնկներն, որ այդ փոքր տան մեջ այդքան մարդու համար իսկի տեղ չկար, թողնում, խուճապով փախչում են: Ահա այսպիսի անվախ, խելք կին է Հոռոմսիմա-ճիճան:

«Բարև, քույրիկ»,— ասի: «Աստու բարին»,— ասաց: «Քրտեղի՞ց ես գալիս»,— հարցրի: «Հիվանդի էի գնացել»,— ասաց:

Հա՛, մոռացա ասել, որ Հոռոմսիմա-ճիճան գիր-կարդում չգիտե, բայց վարպետ-հեքիմ է. խոտի վրա պառկեցնել, շաքարաջուր խմացնել, թանչի դեղ անել, երեխոց ջղազարությունը բու-

ծել, հագաք տեսակ կանանց հիվանդությունների ճար անել: Խիստ վարպետ հեքիմ է: Գիտեմ, պիտի ծիծաղեք վրաս, բայց ես էլի իմ խոսքս եմ ասում. երեսաներս, երբ շոգերն ընկնում էին, փորլուծ էին քնկնում. Կի՛նս էլ երեք տարի իրար ետևից ջերմից ամբողջովին հալվե՛լ մաշվել էր խեղճը: Ականջը կանչի, ոսկերիչ Արու՛թի-նի աղջիկը՝ աղյուսագործ Սահակի հարսը՝ «այսպես, այսպես զրիմցի մի կին կա, ասաց, անունը Հոռոմսիմա. մի կանչեցե՛ք, ասաց, գուցե չփոշմանեք»: Ճիշտն ասեմ, մեր տեղի հեքիմներից բան չէի հասկանում, գալիս են, ախպեր, կրունկների վրա ման են գալիս, ի՞նչ տեսակ դեղատոմս ասես խզվում են— ես ի՞նչ իմանամ— դարակներս ապտեքի շիշերով լցվեցավ. բայց ես նրանց գիտությունից բան չհասկացա: Մարդ զրկեցի, կանչեցի այդ Հոռոմսիմա-ճիճային: Հավատո՞ւմ եք, երեք օր շանցավ, կնոջըս ջերմը կտրվեց, երեխոցս փորլուծն էլ անցավ, ահա շորս տարի է, որ տանս մեջ հիվանդություն չկա: Ձեռքը թեթև է, ասա, դեղի վարպետ է, ասա, այնպես մի պատահունք էր, ասա, բայց մինչև այսօր իմ տան հեքիմը Հոռոմսիմա-ճիճան է: Տվածս էլ ի՞նչ է որ՝ տարին հինգ մանեթ կամ տամ կամ՝ չէ: Մեղ մոտ եկած օրը երեսաներիս համար տոն ու զատիկ է: Այնպե՛ս անուշ լեզու ունի, այնպե՛ս սիրտ շահել գիտե, որ, խաշը վկա, թագավոր լինեի՝ նրան վեղիրս կանեի:

— Հիվանդություն ինչպե՛ս է քաղաքիս մեջ,— հարցրի:

— Մի՛ ասի, ջանս,— ասաց Հոռոմսիմա-ճիճան,— քաղաքիս բանը լիովին վերջացել է. տասը տարի էլ որ այսպես գնա, մեր քաղաքը մի մեծ ավերակ կդառնա, կվերջանա... այս ի՞նչ տեսակ-տեսակ հիվանդություններ, այս ի՞նչ խելքից դուրս մահեր. ժամերի գամբերը կտրվեցան մեռելների համար զանգ զարկելով. փոս փորոզի բահը մաշվեցավ դերեզման փորելով, տախտակը թանկացավ մեռելների համար դազաղ շինելով, խելքս չի հասնում՝ ի՞նչ է քինելու մեր հայի հալը:

— Ի՞նչ է,— հարցրի,— չգիտե՞ս այսքան հիվանդությունների պատճառը:

— Պարզ չե՞ որ,— ասաց Հոռոմսիմա-ճիճան,— մեր մեղքի պատիժն է քա. ի՞նչ լավ բան արած ունինք մեր ստեղծողի առջև, որ հատուցումն էլ լավ լիներ: Գողը,— աստվածդ կսիրես,— մենք ենք, կեղծ փողի մեծ վարպետը՝ մենք ենք. թշվառների վերջին շապիկը վրայից բաշղը— հանողը՝ մենք ենք. որբի ժա-

¹ Մեծ քույր:
² Երբ-Նախիջևանի ինքնավար կառավարություն:

ոանգութունը ուտողը՝ մենք ենք. լավ մարդու անունը կոտորողը՝ մենք ենք. էլ ի՞նչ է մնացել, որ մենք շանենք մեր շահի համար. Իսկի չպիտի զարմանանք, որ ողորմած Աստված մեզ այսպես պատժում է. խիստ լավ է անում, խիստ տեղին է անում. մեռնիմ նրա սուրբ անունին. զարմանալին այն կլինի, երբ որ նա մեզ առանց պատիժի թողնի. այն ժամանակ ո՞վ գիտե ի՞նչ Սողոմոն մեղքեր պիտի գործեինք— հիմի էլ հո պակաս չենք անում: Ա՛յ տղա, լսել ես, չէ՞...-ի հարսի մասին ասում են, թե... էրիկն իմանում է, պսակի առաջի օրը վրան ատրճանակ է քաշում. բայց գնդակը կողքով է անցնում, չի դիպչում. դրանից է, որ կնկանը է՛լ ազգականների տունը չի թողնում...

Տեսա որ Հոռոմսիմա-ճիճան տաքացավ. իմ ուզածս էլ այդ էր. նա որ սկսեք զրույցը՝ էլ դադարում չունի. խոսքը աղբյուրի պես կբխի բերանից և, քանի գնար, ավելի առատ, համով ու անուշ:

— Այդ չէ, բայց,— ասի,— Հոռոմսիմա-ճիճա, կես ժամ կլինի, այս բաց բակին եմ նայում, շեմ կարողանում իմանալ՝ ո՞ւմ տունն է եղել այստեղ, ինչո՞ւ տերը միջից ելել է, ինչո՞ւ տունը վերցրել են, մեջի կեցողը ո՞ւր է գնացել: Դու հին կնիկմարդ ես, քաղաքիս ամեն ծակուծուկը մտել-ելել ես, անշուշտ այդ էլ կիմանաս. հարկավոր գործ թե չունես, ջանս, Հոռոմսիմա-ճիճա, պատմի այս բաց բակի առաջվա կեցողների մասին՝ ինչ որ գիտես:

Հոռոմսիմա-ճիճան աչքը դարձրեց բաց բակի կողմը. մի լավ նայեց, գլուխը տարուբերեց. «Ա՛խ, որդի՛, որդի՛, ասաց, այ տան հեքիաթը երկար է, առաջվա հեքիաթների պես օխտը օր օխտը գիշեր պիտի պատմես, որ ծերին հասնես»:

«Այս պարապ-դատարկ տեղը, ինչպես հիմի ես տեսնում, միշտ այսպես չէր. մի ժամանակ այստեղ փոքրիկ, բայց գեղեցիկ, փայտից, բայց ամուր, կարգին, լավ պահված տուն կար: Ի՞նչ անեմ հիմիկվա աղյուսի տները, որ դրսից պալատներ են նմանում, իսկ ներսից իսկական գերեզմանոց են: Հնուց մի խոսք կա՝ «Թուլամեջը նստողը կուլա»: Այս դատարկ տեղը, նայի այստեղ, ասաց, մատով ցույց տալով գետինը. այս թթի ծառի դիմաց, հինգ պատուհանով, կանաչ փեղկերով, կարմիր կտուրով մի տուն կար. նրանից քիչ ներքև, մինչև այն աքասիները— տեսնո՞ւմ ես— ահա այդտեղ մի մարագ կար. տան ու մարագի մեջտեղը մի խոհանոց և մոտն էլ՝ մի հավաբուն. այստեղ, դարբասի աջ կողմը:

դեպի վար, մի ծանծաղ ջրհոր կար, ասաց Հոռոմսիմա-ճիճան և սկսեց փնտրել ջրհորը, բայց ջրհոր չէր երևում: «Մեղա՛, այս ի՞նչ տարօրինակ բան է. տեսնո՞ւմ ես, ջրհորը կորել է, այս ի՞նչ բան է. այսօրվա պես միտս է, որ այս կանգնածս տեղը անուշ, թեթև ջրով, ոչ խոր մի ջրհոր կար, ի՞նչ է եղել. մեղա՛, ամեն բանի կորչելը լսել էի, բայց ջրհորի կորչելը հեշ չէի լսել»:

Քիչ լռելուց հետո Հոռոմսիմա-ճիճան վար իջավ, գավազանի ծայրովը հողը փորփրեց ու ասաց. «Տեսնո՞ւմ ես գեղեցիկ ջրհորը. շարածճի երեխաները կղմինդրով, քարով, հողով լցրել, կուցրել են. ափսո՛ս, ափսո՛ս. բայց ի՞նչ. գլուխը կտրելուց հետո մորուքի վրա չեն լալիս: Այս էլ այսպես. ջրհորն ի՞նչ հորս ցավն է, որ ափսոսամ. մեղքը խեղճ մանրավաճառ Սարգսին ու նրա ընտանիքին եղավ»:

— Ճիշտը գիտե՞ս, որ այստեղ աթթար՝ Սարգսի տունն էր,— հարցրի,— տես՝ մոռացել էի: Բայց ի՞նչ եղավ աթթար Սարգիսը, որտեղ է հիմա. կա՞, թե՞ չկա այդ մարդը. ընտանիքը որտե՞ղ է. մի գեղեցիկ աղջիկ ու մի տղա էլ ունեք, ո՞ւր են հիմի... Այն ժամանակները ես դեռ երեխա էի. մեր տունը մի հաճի-մամա էր գնում-գալիս. նա մեզ շատ բաներ էր պատմում աթթար Սարգսի մասին. գովում էր նրա տուն-տեղ կառավարելը. նրա կնոջ գովասանքն էր անում. նրա զավակների մասին ի՞նչ լավ բաներ ասես պատմում էր: Ամառները մրգի ժամանակ, գնում էր նրանց տունը, տեսակ-տեսակ միրգ էր քաղում բաղից, գրպաններն էր լըցնում և մեզ բերում. սա, ասում էր, խաղողի նման բալ է, սա մեղրահամ կեռաս է, սա շամ-սալոր է, սա՝ քրքում խնձոր է, սա՝ գինճրիսի-տանձ է— ո՞ւմ միտքն է՝ մրգի տեսակները շատ են: Այդ ժամանակից ի վեր աթթար Սարգսին ճանաչում էինք: Երբ տան համար պետք էր լինում ամեն տեսակի մանր-մունր բաներ, մայրս ինձ փող էր տալիս, և ես միշտ Սարգիս-աղայի խանութից էի առնում զմուռս, արջասպ, վարդի մուրաբայի համար ծծումք, խունկ, քույրերիս համար սուրբ Կարապետի մաստաք, ահա այսպիսի բաներ:

Շատ էի սիրում աթթար Սարգսին, հանդարտ մարդ էր. երևալը միշտ խնդում էր: «Ի՞նչ ես ուզում, տղաս»,— ասում էր, երբ նրա խանութն էի մտնում: «Մամաս բարև արավ, ասում էի, մի

1 Ժողովրդական գեղագործ, մանրավաճառ:

գրողի մեղրամոմ ուզեց թեև մոմեղու համարս: «Տամ, տղաս, տամ»,— ասում էր, և թղթի պես բարակ տաշած փայտե կտր արկղներից հանում էր մեղրամոմը, դանակը թքոտում, որ մեղրամոմին չկպչի, կտրում, թղթի մեջը փաթաթում, տալիս: Հետո դարակից վերցնում էր մուրաբայի մի մեծ բանկա, միջից մի կտոր նեպեթ-շաքար էր հանում. «այս էլ քեզ, տղաս,— ասում էր,— կե՛ր, դա հազի դեղ է»: Երբեք չի պատահել, որ նրա խանութից բան առած լինեմ ու դատարկ ձեռքով ետ դառնամ: Նեպեթ-շաքարը ձմեռներն էր տալիս. ամառները խանութի մեջ մի դամբյուղ էր ունենում, տեսակ-տեսակ մրգերով լիքը, «երբեմն՝ բալ, երբեմն՝ ծիրան, սալոր, տանձ, խնձոր: Հայտնի բան է, որ իր բաղից էր: Աթթար Սարգսի բաղն այն ժամանակները— ասած կլինի սրանից մոտ 30—35 տարի առաջ— խիստ գոված բաղ էր Ի՛նչպես է լինում, մայրս ինձ էլի նրա խանութն է ուղարկում. խաչը վկա, լավ միտս չէ, կարծեմ փլավի համար զաֆտան պիտի առնեի: Փողը տվի. մայրս ինչ-որ պատվիրել էր՝ ասի իրեն. փաթեց տվեց: Աչքս լիքը մրգով զամբյուղից չէի հեռացնում: Աթթար Սարգսի միտքս հասկացավ. «այսօր, ասաց, իմ բաղից քեզ միլլ կուտեցնեմ, դու մեր տունը գիտե՞ս ո՛րտեղ է»: «Հա՛, գիտեմ, ասի, Աստվածածնի փողոցումն է, չէ՞»: «Հա, տղաս, գտար,— ասաց,— այդտեղ հինգ պատուհանով, կանաչ փեղկերով տուն է առջևն էլ մի թթի ծառ կա: Այս զամբյուղն առ տար տիկիններ իր կնոջը՝ ուզեց հասկացնել— տուր իրեն ու ասա՝ «Սարգսի աղան հրամայեց,— ասա, որ Թորոսի հետ— նրա որդին էր— բաղը մտնեք և սրտներդ ինչ ուզենա՛ ուտեք»: Չեուս մի նոր զամբյուղ տվեց. մեջը նայեմ՝ լյարդ կար: Լյարդը որ տեսա՛ ասե սատկած շուն տեսածի պես եղա, այնպես զզվեցի: Այն ժամանակները— չգիտեմ հիմի ի՛նչպես է— լյարդ ուտողի վրա այնպես էին ծիծաղում, որ գողից-հարբեցողից, կեղծ դրամ շինողից ավելի: Լյարդը ուտողը տնով-տեղով ծաղրելի մարդ էր. կարգին մարդիկ հետը երթուզալ չէին անում: Բոլորովին մոռացա աթթար Սարգսի լավ մարդ լինելը, նրա գոված բաղը, նրա գեղեցիկ աղջկան— հաճի մամայից լսել էի այդ աղջկա գովասանքը— ի՛նչ խոսքս երկարացնեմ, լյարդը բոլորովին փչացրեց իմ բարեկամությունը աթթար Սարգսի հետ: Այդ բանը աթթար Սարգսի հասկացավ: «Ինչո՛ւ այդպես մեկեն իմեկ տխրեցիր», հարցրեմ էլի առաջվա պես խնդում երես: «Դուք բախում շուն ունե՛ք»:

հարցրի նրա խոսքին ուշադրություն չդարձնելով: «Չէ, չունեմ»,— ասաց: «Հապա այս լյարդը ո՛ւմ պիտի տաք»,— ասի: «Ոչ ոքի էլ տալու չենք»,— ասաց,— մենք ինքերս պիտի ուտենք»: Աչքս աթթար Սարգսին դարձրի՝ արդյոք կատակ չի՞ անում, արդյոք վրաս չի՞ ծիծաղում, բայց չէ. երեսի վրա կատակի հետք չնկատեցի: «Դու լյարդ ես ուտում»,— հարցրի: «Հա՛, ուտում եմ»,— ասաց: «Ճի՛շտ ուտում ես»,— հարցրի: «Ինչո՛ւ ես դարմանում որ,— ասաց նա,— լյարդը չի՞ ուտվի, ի՛նչ է»: «Դա կատաղած շներն են ուտում»,— ասի սիրտս ցաված: «Դու իսկի չե՞ս կերել»,— հարցրեց ինձ աթթար Սարգսի: Ես լռեցի, բան չասի և երեսս դարձրի խոռվածի պես: Այդ րոպեին խեղճ Սարգսի-աղան աչքիս մեռելի միս ուտող կամ մարդակեր թվաց:

Այս խոսքի վրա էինք, որ ներս մտավ սիրուն, իմ հասակակից մի տղա: «Մայրս զրկեց,— ասաց,— որ շուկայից ինչ-որ առել ես, ինձ տաս, տուն տանեմ. օջախը երկար ժամանակ է՛ վառվում է»: Իմացա, որ ներս մտնողը նրա որդի Թորոսն էր, որի մասին հաջի մամայից գովասանքներ շատ էի լսել:

Այս պատմածս ժամանակները մեր քաղաքում ութ-ինը տարեկան մաքուր-կարգին երեխա շատ քիչ էր պատահում. ոտաբորբիկ, գրպանները վեզերով լիքը, վարտիքի փողքերը պատառոտած, գլուխները՝ բաց, երեսները փոշոտ, ճանկոտած, բերանները հազար տեսակ հայհոյանք, այսպես էին երեխաները չորսից մինչև տասներեք տարեկանը. մեր ժամանակը խելք, քաղաքավարություն, բարի վարք՝ խանութի մեջ էին սովորում. տանը— ուզում եմ ասել՝ թաղերում, փողոցներում— ամեն տեսակ այլանդակություն էր՝ հարստից սկսած մինչև վերջին աղքատի երեխան: Թորոսի երեսից երևում էր, որ նա տանը նստող խելոք տղա է: Սրտով սիրեցի նրան: «Ահա, տղաս»,— ասաց աթթար Սարգսին ու նրան տվեց իմ նետած զամբյուղը: Թորոսը մեջը նայեց. «Այսօր կարկանդակ կունենանք»,— ասաց ու գլխարկը դրեց, ուզում էր գնալ: «Ա՛յ տղա, Թորոս,— կանչեց աթթար Սարգսի, — արի, հետդ առ Մելքոնին, տար մեր տունը՝ ախպար-ախպար խաղացեք»: Մտքումս ուրախացա, մեկ որ՝ Թորոսի պես լավ տղայի հետ պիտի խաղայի, մեկ էլ որ՝ նրանց գոված բաղը պիտի տեսնեի. մի ուրիշ պատճառ էլ կար ուրախանալու, բայց չեմ ասում, թե խելք ունե՞ք՝ հասկացեք: Զարմանք բան է մարդու բնությունը. երեխա կա, որի խելքը տասնութ տարեկան հասա-

կում է բացվում, երեխա էլ կա, որ հինգ տարեկան հասակում այնքան բան է հասկանում, ինչքան ծերերը: Մարդու բնությունը մեծ բան է: «Հապա զավճոա՞նս»,— հարցրի Սարգիս-աղային: «Դա քու բանդ չէ,— ասաց:— Ինձ տուր, մեկին կտամ՝ կտանի, դու միամիտ եղիր»: Շատ ուրախացա, որ դրանից էլ ազատվեցի, և վազելով ես ու Քորոսը գնացինք դեպի ցած: Քորոսը սուս-փուս գնում էր, կարծես ինձանից քաշվում էր: Առաջինը ես խոսք բաց արի: «Ա՛յ տղա, դուք լյա՞րդ եք ուտում, հա՞»,— հարցրի նրան: «Հա, կարկանդակով»,— կարճ կտրեց խոսքը Քորոսը: «Բա ասում են, թե լյարդը շներին են տալիս ո՞ւր... ասի ես, շան կերած բանը հեշ մարդ կուտե՞»: «Շունը հավի միս էլ է ուտում, դրան որ նայես՝ մենք հեշ բան ուտելու չենք»,— ասաց Քորոսը, և, երեսից հասկացա, որ սիրտն ինձանից ցավել է: Հայտնի բան է, որ հարցմունքս անվայել էր: Լյարդի մասին է՛լ խոսք չեղավ:

Այսօրվա պես միտս է. փողոցի դռնից որ ներս մտանք, կարծես մի նոր աշխարհ մտածի պես եղա. բակը մաքուր. մի շուգ չկար. ճերմակ, գեղեցիկ հավեր, բադեր, հնդկահավեր իրենց ճուտերով ման էին գալիս. տան կտուրին գեղեցիկ, ցեղական աղավափներ կային. բակի մեջ տեղ-տեղ վայրի ծառեր էին տնկված կանաչ, թարմ, մատղաշ. տան սանդուղքը և պատշգամբը մաքուր, գեղեցիկ, ջրհորդանների տակ ներկած տակառներ կախն անձրևաչրի համար, և բոլորը մաքուր: Պատուհանների վրա ճերմակ ծաղկամաններով տեսակ-տեսակ ծաղիկներ կային. պատը գամբում կախված մաքուր վանդակներում երգող թռչուններ՝ դեղձանիկ, սոխակ, կարմրակատար— մյուսների անունները չգիտեի— մի խոսքով ինչ բանի վրա աչքս դարձի՝ ամենը մաքուր, համեստ, գեղեցիկ:

Բակում շուն չկար. էլի լյարդը միտս ընկավ. հիմա հավատացի, որ իրենք պիտի ուտեն: Խոհանոցում, ճիշտ է, կրակ էր վառվում: Մուխը քուլա-քուլա բարձրանում էր ծխնելուցից: Խոհանոցում մի կին կար. երևում էր, որ Սարգսի կիներն է: Աթթար Սարգսի կիներ կլինեին մոտ երեսուն տարեկան, ինքն առո՞ղջ, այտերը կարմիր, մարմինը ամո՞ւր, օջախի դիմացը կանգնած շատ ավելի էր կարմրել, ինչպես ասում են՝ ալը թշերից կաթում էր: Պատշգամբում, նստարանին նստած էր, հին սովորությամբ գլուխը մուգ կարմրագույն ընտիր կերպասի ֆեսով մի աղջիկ... Գեղեցիկ շատ աղջիկներ եմ տեսել, ավելի գեղեցիկ գեմբեր եմ տե-

սել, բայց ինչ որ այն օրը տեսա, կյանքումս այնպիսի աղջիկ տեսած չեմ: Մ՛վ գիտե, գուցե այն ժամանակ երեխա էի, շատ գեղեցկուհիներ տեսած չլինելով, նա ինձ հիանալի բան երևաց, ու քանի գնաց՝ մտքիս մեջ ավելի գեղեցկացրի, ո՞վ գիտե: Բայց դրանից հետո է՛լ, ոչ մի աղջկա գեղեցկություն ինձ այդպես չհիացրեց, շսիրահարեցրեց: Ասում են, և դա ճիշտ է եղել, թե մարդ իր կյանքում մի անգամ է սիրում: Այն օրը ես առաջին ու վերջին անգամ սիրեցի: Աղջկա անունը Քազուշ էր:

Քորոսի մոր հրամանով պարտեզ մտանք, տեսակ-տեսակ ծաղիկներ քաղեցինք, միրգ կերանք, ճաշի ժամանակ Սարգիս-աղան խանութից եկավ, լյարդից պատրաստած կարկանդակը՝ փեբավ. տեսա, որ երբեմն մարդկանց գովածը հիմար բան է լինում, երբեմն էլ վատ ասածը՝ լավ: Արդյո՞ք կարկանդակն էր համեղ պատրաստած, արդյո՞ք մանկությունս էր նրան համ տվողը, թե՞ Քազուշի վրա նայելս... ա՛խ, անմոռաց տարիներ, ափսո՞ս, հաղա՛ր ափսոս, որ այդպես շուտ կորաք, գնացիք...

Երկու-երեք ամսից Չորնամոռ գնացի, և, դրանից հետո ուղիղ քսանչորս տարի ոտս քաղաք չդրի: Այն, ինչ որ պատմեցի՝ աթթար Սարգսի և նրա ընտանիքի մասին՝ մի վայրկյանում մտքովս անցավ: Հոռոմսիմա-ճիճան ջրհորի առաջ գավազանով դեռ կոտորած կղմինդներն էր դես-դեն գցում, կարծես դրանց միջից ավերված տան նախկին շինությունն էր ուզում լույս աշխարհ հանել:

Նորից հարցրի նրան. «Հետո՞, ճիճա, հիմա որտե՞ղ է աթթար Սարգիսը, որտե՞ղ է նրա ընտանիքը»: Ուզում էի դեռ մի ուրիշ բան էլ հարցնել, բայց հիշեցի, որ դրանից երեսունհինգ տարի է անցել:

— Դու նրան ճանաչո՞ւմ էիր, ի՞նչ է,— հարցրեց Հոռոմսիմա-ճիճան:

— Հա՛, մի քիչ ճանաչում էի,— ասացի:

— Ուրեմն հայրդ ու մայրդ գնալ-գա՞լ ունեին աթթար Սարգսի ընտանիքի հետ:

— Չէ՛,— ասացի,— մի անգամ այնպես, պատահաբար եղել եմ նրանց տանը, երեխա ժամանակս, երբ ութ տարեկան կլինեի: Հոռոմսիմա-ճիճան սկսեց մատնեղով համարել ու մտքի մեջ փրնթփրնթալ, հետո ասաց. «Հա՛, բա՛, այդ ժամանակները խեղճ մարդու ամենալավ տարիներն էին: Օ՛ֆ, ի՞նչ քեֆեր, ի՞նչ ուրախ

օրեր ենք անցկացրել այս բաղի մեջ... առաջին երես աշտակաւ էր որ... Այն գեղեցիկ բաղի ու տան հետքն էլ չի մնացել... այստեղ խոհանոցն էր, այստեղ՝ հավաքունը, այստեղ՝ գեղեցիկ սառնար, այստեղ՝ մարազը, այստեղ՝ շրհորը, այստեղ՝ բաղի ցանկապատը... աստու էր Հոռոմսիմա-ճիճան և տեղից տեղ անցնելով՝ գավազանը գեռնին էր խփում. ասածների ո՛չ միայն հիմքը, հետքն անգամ չէր մնացել. կարծես թի ի բնե, աշխարհիս ստեղծման օրից, այդ ամայի տեղը մարդու ոտքը չէր կոխած: Բայց ի՞նչ երեկվա պես միտս է այս բաց բակի առաջվա տեսքն ու մեջն ապրողների բախտավոր կյանքն ու ուրախութիւնը:

— Ա՛խ, տղա՛ս, ով որ այս խեղճ, միամիտ, Աստծու օրհնած ժարդկանց այս օրը գցեց, ով որ նրանց տունը բանդեց, ընտանիքը ցիրուցան արավ, ոչխարի հոտի մեջ մտած գայլի նման մտավ այս անմեղ ընտանիքը, Աստված անե նրա դատաստանը... Չէ՛, ես այդ մարդուն վատութիւն չեմ ցանկանում. ես նրա առատուրին վնաս չեմ ցանկանում. նրա տանը մահ չեմ ցանկանում. բայց թե որ վերեն Աստված կա, այդ մարդը թող իր տանը մեջ հանգիստ չունենա, զավակներով չուրախանա. տան շորս պատի մեջ Աստծու վառած օջախով շտաբանա. ինչպես որ ինքն արի խեղճ-անմեղների տունը տակնուվրա արավ, նրանց շորս քամոք բերանը տվեց և նրանց վաղածամ մահվան պատճառը եղա՞ծ ինքն էլ, Աստված տա, դատարկուն շրջի աշխարհքիս երեսը անուշ քնի կարոտ մնա. հարստութիւն ավելանալու հետ՝ ցավ ու դարդն էլ ավելանա. երկաթե սնդուկի վրա պահապան կանգնի, զողի ու ավազակի ահից տարին-տասներկու ամիս սիրտը դող լինի. անկշտութիւնը քանի գնա ավելանա մեջը, ուետ՝ շկշտանա, խմե՛ ծարավը չկտրի, քանի հարստանա՝ ոսկու և փողի պապակի այնքան ավելանա: Ամենակարող Աստված, ե՛րբ կլինի՝ մի օր այդ անիծած սերնդին ոսկու մեջ թաղված տեսնեի:

Հետզհետե խեղճ կինն ավելի ու ավելի էր տաքանում. խոտքը բերանից հեղեղի պես էր հոսում, դադարում չունեք...

— Ճիճա, — ասի, — եթե շտապ գործ չունես, արի՛ այս ախաջու ստվերի տակ նստենք, — օրն էլ տաք էր, կարծես երկնքից կրակ էր թափվում, — իրար հետ զրույց անենք, հին բաները մըտքներս բերենք. մեռնողների վրա խոսք բաց անենք, որովհետև ինչ որ նոր է, ինչ որ կենդանութիւն ունի, հավատա՛, հենքի ոտի փոշին շարժե: Եթե մարդու սիրտը բացվելու լինի՝ հենքի արած

լավ գործերի հիշատակովը կրօնցվի. մեր օրվա մարդիկ զգլանքից ավելի բանի արժանի չեն:

— Ճիճա է ասածդ, — ասաց Հոռոմսիմա-ճիճան, — քսանհինգ-երեսուն տարի եղավ, որ մեր քաղաքը փոխվեց. աստծու վախը կորավ, ժամի սերը խափանեցավ. ծերերի պատիվը ոտի տակ գնաց: Նոր մարդիկ դուրս եկան, նոր բաների հետեից ընկան, նորին շհասան, բայց հին սովորութիւնները, ծեսերը, մտապան, ձեռից բաց թողեցին և ծաղրուծանակ եղան աշխարհի առջև: Վա՛յ դրանց գլխին. դրա՛նք պիտի քաղաք կառավարեն, դրա՛նք պիտի ուրիշի տանը նեցուկ դնեն, երբ որ իրենց ստան հիմքը այսօր-վաղը պիտի քանդվի: Ավելի վա՛յ դրանց կանանց գլխին. իրենց մայրերի պես համեստ մնալ չցանկացան, կարծում էին, թե գլուխները բանալով իշխանուհի կդառնան, տիրուհի կլինեն. դու մի ասի՛ գլուխները չբացած... աշխարհի առջև խայտառակ եղան: Վաղուց փորձված բան է, որ երբ մի ազգ, մի ընտանիք կամ մի մարդ իր հավատից սառչում է, իր պապերի ծեսերից դուրս է գալիս, նրա բանը վերջացած է, նա մարդաշարքից դուրս է գալիս. քանի գնա՛ ճահճի մեջ խորունկ կխրվի: Քիչ առաջ հարցնում էիր՝ ինչի՞ցն է, որ մեր ժողովուրդը կոտորվում է. մի լավ միտք արա՛՛ դա առանց իմ ասելու էլ լույսի պես պարզ է: Այդպիսիների համար հին մի խոսք կա. մի տան մեջ, ասում են, լինում են մի սագ ու մի հավ. հավը տեսնում է, որ իր ածած ձվերը սագի ձվերից փոքր են. մտքում նախանձում է ու Աստծուն առաջում, որ մեկ էլ ածելիս սագի պես խոշոր ձվեր ածի: Աստված էլ, ասում է զրույցը, լսում է խենթ հավի խնդիրքը. մյուս օրը հավն սկսում է կշկշալ ու տնքալ. սագի ձուն, որ փորի մեջն է՝ զոռում, զոռում է՝ դուրս չի գալիս, զոռում, զոռում է՝ դուրս չի գալիս. մեկ էլ որ հավը զոռում է, ձուն դուրս է գալիս, բայց հավի փորն էլ պատռվում է: Սրա նման է և մեր խալիսի բանը: Բայց այդ փորը պատռելը տեսակ-տեսակ է լինում. այսօր մեկը կընկնի կմեռնի՝ սա մի տեսակն է. վաղը մյուսը կգոծվի՝ այս էլ մյուս տեսակն է. մյուս օրը մի ուրիշը կսնանկանա, անունը կխայտառակե՛՛ այս էլ ուրիշ տեսակն է. մյուսն էլ չի՛ մեռնի, չի՛ սնանկանա, բայց ուրիշների մահվան, սնանկանալու, ընտանիքի աղքատանալու պատճառը կլինի. այս էլ... փոր պատռելու մի ուրիշ տեսակն է: Դրա տեսակները շատ են: Բայց դու տես որ՝ մեջտեղը ազգերս կորչելու վրա է: Մի տես՝ քաղաքներս ավերակ եղավ...

խալիք մի ծայրից դուրս է գնում, դուրս է գնում— ետ դարձող չկա... օ՛Ֆ, օ՛Ֆ, քանի միտք անես, այնքան միտք անելու բան կա. շատ տաղ գիտեմ, բայց ձայն չունեմ, լսող էլ չկա:

«Աթթար Սարգսին ես վաղուց եմ ճանաչում. ես նրան դեռ փոքրուց գիտեի. քու տեսած ժամանակը նա քառասուն տարեկանից ավելի կլինեիր. բայց ինչպես որ տեսել էիր, ի բնե այդպես էր. սուս, խոնարհ, ժամասեր, գեղջուկին, աղքատին ողորմացող՝ Մ՛շ մի օր չի եղել, որ իր կնոջ վրա բղավի. մի անգամ որդոց վրա ձեռ վերուցած չի: Ինչ որ ունեցել է՝ դրանով Աստծուն փառք է տվել. «ունեցածս քիչ է»՝ ասած չէ, ազահուլթյուն արած չէ. դրացիների ունեցածի վրա աչք տնկած չէ, շատ է ունեցել՝ շատ է կերել, քիչ է ունեցել՝ քիչ է կերել: Ահա՛ այսպիսի օրհնած մարդ է եղել աթթար Սարգսիսը: Նրա կինն էլ՝ իր նման: Կինը երեխա ժամանակ որբացել է. մոր կողմի ազգականներն իրենց մոտ են պարել և, վայ նաչարին, մեծացրել են: Վա՛յ որբի արեկին, Հոր-մոր մեռնելուց հետո ժառանգությունն էլ չի օգնի: Ճիշտ է թե սուտ, ասում են, նրա հայրը մեռնելիս խանութի մեջ երեք հազարի կաշվեղեն ապրանք է թողել, սնդուկումն էլ՝ երկու հազար հաս կարմիր ոսկի: Երբ որ հայրը ընկնում-մեռնում է, ազգականները խեղճին իբր տեր կանգնող են լինում, ապրանքն ու կարմիր ոսկիները հափշտակում են: Աղջիկը որ հասնում, տասնչորս տարեկան է դառնում՝ ուզող-ուզողի ետևից են լինում, բայց երբ որ օժիտ են փնտրում ու օժիտ չեն գտնում՝ մեր խնամախոսները սուս ու փուս պոչները քաշում են, և խեղճ աղջիկը վիզը ծուռ է մնում: Բանն աշողի, աթթար Սարգսիսը կանգնում է, թե՛ ես, — ասում է, — ինձ ընկեր եմ ուզում, ես նրա օժիտի վրա աչք չունիմ, — ասում է: Սևսիրտ ազգականներն էլ, իսկույն վերցնում են ու խեղճ որբի առջևն են նետում ինչքան ասես հին-հին լաթեր, կոտրած, փտած կահ-կարասիք են տալիս, մի քանի հատ էլ ոսկի. «այս էլ ասում են, հորից մնացած օժիտը». ձեռից էլ թուղթ են առնում, թե՛ հորից մնացածը, ամեն ինչ լրիվ հանձնեցինք, և հոգսից ազատվում են:

Այդ ժամանակները Սարգսիսը դեռ ոչինչ չի ունենում, կնոջ պես ինքն էլ, խեղճը, մերկ ու բոբիկ է լինում՝ խանութի աշակերտ. ստացածն էլ, ո՛վ գիտե, հարյուր կամ հարյուր հիսուն ուրբի էր. այն ժամանակները դեռ փողը թզթազրամով էին հաշվում: Հիմիկվա փողով որ հաշվես, ով գիտե, քառասուն մանեթ

կամ լինի կամ՝ չէ: Հնուց մի խոսք կա, լսե՛լ ես. «Երկու մերկը մի բաղնիսի մեջ կսազեն»: Իսկը դրանց բանն էլ այդպես էր. էրիկը՝ չունիմ, կնիկը՝ չունիմ. դրանց ո՛վ տեր պիտի կանգնեիր: Բայց դու Աստծու ողորմությանը նայե, որ մարդու հաշվից դուրս է: Այն տարին Սարգսի հայրը ընկնում-մեռնում է. խանութը կտակով գրում է տղի վրա, որ տարին այսքան ու այսքան տալով, վերջ ի վերջո, ինքը տեր դառնա: Մեր այս որբ Սարգսին էլ, երեք տարի չի անցնում, որ խանութի տեր է դառնում, պարտքն էլ մաքուր վերջացնում է: Նրանից հետո քանի գնում գործերը հաջող են գնում, խառութն ապրանքով լցվում է: Հորից մնացած գետնի վրա — ահա այս մեր կանգնած տեղը — մի գեղեցիկ փայտե տուն է շինում, ինքը այդտեղ տեղափոխվում: Այդ տարին էլ Աստված մի աղջիկ զավակ է տալիս, անունը Քազուչ են դնում՝ տատի հիշատակին. չորս տարուց էլ Աստված մի արու զավակ է ընծայում, դրա անունն էլ Քորոս են դնում՝ պապի հիշատակին:

Ահա՛ այսպես, մեր երկու որբը տուն-տեղ են լինում, մարդու շարք մտնում: Առաջվա վրաները խնդացողները այդ ժամանակ կամաց-կամաց մոտենում են, գնալ-գալ են սկսում, շոյում, շողորբոթում են՝ «Սարգիս վար, Սարգիս վեր»: Բայց Սարգիսը մնաց էլի առաջվա օրհնած Սարգիսը. մեկին գեշ խոսք չասաց. ազգականներից մեկի երեսուվը չզարկեց, թե՛ այսպես-այսպես զրկել եք. լուռ մնաց. ո՛չ միայն կնոջ ազգականներից օժիտը չպահանջեց, այլև ձեռից եկածի չափով նրանց չավություն արավ, քանի որ այն օժիտը նրանք վաղուց էին կերել ու նորից աղքատություն էին քաշում: Ախր, հո գիտես, մի խոսք կա՝ «կուտես միրաս» — կմուրաս»: Իսկը այդպես եղավ ազգականների վերջը:

Ինչպես ասի, Սարգիսը ոչ մեկից երես չզարձրեց, որի՛ աղջիկը պսակեց, տեղավորեցրեց, որի՛ որդուն գործի գրեց, հացի տեր արավ, որի՛ն ծերությունը օգնեց, որի՛ն այս արավ, որի՛ն այն արավ, մի խոսքով՝ ամենին հասավ: Ինչպես որ իր սիրտն էր մաքուր, այնպես էլ կնոջ սիրտն էր: Ազգականների համար նրա արածը հո՛ կա ու կա. դա ոչինչ. հատուկ խմոր էր հունցում, փուռ վառում, սինիներով տեսակ-տեսակ խմորեղեն խանութի ծառայի ձեռքով բաժանում էր գուռ-գրացուն, աղքատներին, որ-

¹ օժիտ:

պեսզի, չլինի թե, ասում էր, անուշ հոտը խեղճերի քթին գիպելու սրտներն ուղեկնա:

Այդ ժամանակ մարդս, Աստված ողորմի հոգուն, դուն շատ ապրիս է լինում, մեռնում է, ես էլ չոր գլուխ եմ մնում: Սարգիս աղայի կինն ասում է ինձ. «Ինչո՞ւ պիտի մեն-մենակ մնաս տանդ մեջը, — ասում է, — տունդ քրեհով տուր, ինքդ էլ արի մեզ մտառ: Ես էլ շատ միտք չեմ անում. ինչպես որ ասում է, այնպես էլ անում եմ. ունիմ-չունիմս՝ մի մեծ սնդուկի մեջ եմ լցնում, վեր եմ կենում, փոխադրվում նրանց տուն ու երկու քրոջ պես ենք լինում: Այդ ժամանակ Քազուշը հինգ տարեկան կամ կլիներ, կամ՝ չէ: Թորոսը դեռ կուրծք էր ուտում: Տասը տարի կեցա դրանց տանը: Հարցրու, թե այդ տասը տարվա մեջը մի թթու խոսք լսե՞լ ես նրանցից, մեղա՞ Աստծու, մի անգամ շասին, թե՞ դու մեր հացն ես ուտում, մեր ջուրն ես խմում, մեր շորն ես հագնում, ընդհակառակը, ամենապատվավոր տեղն էին նստեցնում, հարգում, շահում: Աստծու համար պիտի ասեմ՝ ես նրանց ի՞նչն էի որ, չույր չէի, զոքանչ չէի, սկեսուր չէի, մայր չէի, ազգական չէի, փողոցից եկած մի օտար կնիկմարդ... Այդ դեռ ոչի՞նչ. մի օր չհարցրին ինձ, թե դու ո՞վ ես, ո՞ւմ զավակն ես, խալխի մոտ ի՞նչ համարում ունեւ. հեռո՞ւ տնից-տեղից՝ գուցե ես գող եմ — ճակատիս վրա հո գրած չէ՞ իմ ու՛ վ լինելս — գուցե անունս ելած կնիկմարդ եմ, գուցե մի ուրիշ պակասության տեր եմ, մեղա՞ աստծու: Ժամանակ առ ժամանակ էլ սիրտս լցվում էր ու նրանց ասում էի. «Ա՛յ աղամորդիք, ախր դուք էլ մարդ եք, այդպես միամիտ լինել կլինի՞, այդ ի՞նչ է արածներդ. և մի լավ բարկանում էի, աչքներդ բացե՛ք, ասում էի, թե չէ՞ մարդիկ կբանան, բայց այն ժամանակ բանը բանից անցած կլինի»: Նրանք էլ ծիծաղում էին:

Ահա այսպիսի Աստծու օրհնած մարդիկ էին խեղճերը, ինչպես որ իրենք արդար սիրտ ունեին, այնպես էլ ամենքին արդար էին համարում, բայց հոգիս վկայում էր, որ այս բանը լավ չի վերջանալու: Ես միշտ նրանց աչքի առաջն էի բերում գլխներից գալիքը, որ մի քիչ այդ միամտությանը վերջ տային, աչքերը բանային. բայց ո՞ւմն ես ասում: Նրանք էլի իրենց սաղն էին ածում: Մաքուր մարդ, կատարյալ քրիստոնյա ուզո՞ւմ ես — հենց դրանք էին:

Քաղցր երազի պես անցավ տասը տարիս այս արդար մարդ

կաթ կերածների տանը. ո՛չ ցավ գիտեի, ո՛չ դարդ գիտեի, ո՛չ պարտատերերս մի օր դուռս զարկին, ո՛չ վաղվա ուտելիքս էի հոգում, ո՛չ վաղվա հագնելիքս. ինչպես որ Աստծու ձեռքն առաւ է, նրանց տունն էլ այդպես մի բան էր ինձ համար: Տարին տասնհինգու ամիս ճախարակ էի մանում, ձեռագործս էի անում: Իմ գործն էլ այդ էր: Այդ տասը տարվա մեջ մի օր չեղավ, որ ձեռս տաք ջրից հանեմ պաղ ջուրը դնեմ. ամեն կարիքս հոգում էին, առջևս դնում, կե՛ր, խմի՛, նստի՛ ու փա՛ռք տուր ստեղծողիդ:

Ե՛ր օր, ամառվա շոգերի ժամանակ — Քազուշս էլ նոր էր տասնհինգը լրացել՝ տասնվեցը մտել — իրիկվան կողմը բազում գորդ ենք փռել, հին սովորությամբ սեղանն էլ վրան ենք դրել, մենք էլ ամենքս շորս կողմը բոլորած մեզ համար թեյ ենք խրմում: Մաքուր ցոլցուն սամովարը խլթխլթալով եռում է. արևն էլ նոր է մայր մտել: Բալը, կեռասը, վաղուց հասել են. ձվի շափ սալորն ու ծիրանը նոր են սկսել կարմրել. ցայգածաղկի, ռեհանի, անանուխի ու տեսակ-տեսակ ուրիշ ծաղիկների հոտը աշխարհք է բռնել. լուսինն էլ ցոլուն պղնձի սինիի պես ելել երկնքի վրա փռվել է: Այսօրվա պես միտս է այդ իրիկունը:

Քազուշս թեյ էր լցնում: Տիկին Մարիամը՝ Սարգիս-աղայի կինը, գավաթը վերցրեց, թեյը ափսեի մեջ լցրեց, ձախ ձեռքն առավ ու դեռ շաքարը բերանը շտարած՝ վայր ընկավ. ընկածին պես ափսեն էլ ձեռից վայր ընկավ, մեջի թեյը թափվեց շորի վրա: Ես մի տեսակ եղա. սիրտս գլխի գալիքը վկայեց. մտքիս մեջը՝ «չարը խափանի, բարին կատարի»: — ասի, ու թաքուն, դոգնոցիս տակ, երեսս խաչ հանեցի: Քազուշիս երեսը նայեմ՝ նա էլ, խեղճը մի տեսակ եղավ. անշուշտ արդար երեսայի հոգին վկայում էր, որ սա մի դատարկ բան չէ. բայց Մարգսի ու Մարիամի հեշ պետքը չէր. նրանք այդպես բաների հեշ չէին հավատում: Դու շատ էլ մի հավատա, բայց որ գլխիդ գա՛: Մաքու՛մը լաթն առավ վրան սրբեց: Քազուշն էլ նորից թեյ լցրեց՝ «գուցե անուշ լեզվով մարդ պիտի գա, ասաց Սարգիս-աղան ծիծաղելով, աղջի՛, շուտ վեր կաց, վրայիդ թաց շորը փոխե, թե չէ, որ մարդ գա՛ կամաչես»: «Այս ժամին ո՞վ պիտի գա որ, ասաց Մարիամը ծիծաղելով, թե գա էլ՝ վնաս չունի. բանի գնում՝ մթնում է, թեյի թափածը չի նկատվի»:

Խոսքը դեռ բերանն էր, որ մեկ էլ տեսնես բաղի դուռը գլըր-գոցով բացվեց. շլլապայով մի մարդ ներս մտավ. ներս մտածին

պես սկսեց բարձր, խզված, այծի ձայնով, արագ-արագ խոսել. «Բարև, բարև, ի՞նչ եք անում... թեյ եք խմում, հա՞... լավ եք անում, լավ եք անում... ես էլ եմ սիրում բաց օդում թեյ խմելը... այս ի՞նչ լավ բաղ է... այս բալն ուտե՞մ, հա՞... ի... լավն է, ո՛ւ... այս կեռասի համը տեսնեմ... ո՛ւՖ, ինչ հրաշալի կեռաս է... Սրանից մի թաշկինակ տաք՝ երեխոցս, նշանածիս տանեմ... այս ի՞նչ լավ ծիրան է... Սարգիս-աղա, քեզ մի բան ասեմ. արի տունըդ ինձ ծախի... չէ՛, այդպես մի անի... արի քեզ մի լավ բան ասեմ... խանութս արի... գիտե՞ս հիմա որտեղ եմ... մի մեծ, երկու հարկանի տուն որ շինել եմ, հենց դրա ցածի հարկումն է... արի այնտեղ... աղայավայել կնստենք կանտոնիս առջևը, Մոսկվայի ֆարբիկաների մասին զրույց կանենք... ախպեր, դա ի՞նչ է...»

Պաղած մնացինք: Շատ խենթ, շատ շատախոս տեսել էի, շատ թեթևամիտ մարդ տեսել էի, բայց այդպիսի Աստծու ցուցանք առաջին անգամն էր, որ տեսնում էի: Գիտե՞ս ով էր եկողը Մայասիլին իվանուշը:

Այս անունը որ լսեցի՝ սիրտս ելավ: Այդ խելքի աղքատը: Իր խենթ տեղովը, ինձ էլ մի այնպիսի փոսի մեջ էր գցել, որ դեռ միջից չէի կարողացել ելնել. բայց Հոռոմսիմա-ճիճային բան չասի, լուռ մնացի, շճանաչող ձևացա:

— Լսե՛լ ես, կամ տեսե՛լ ես այս Աստծո պատիժին,— հարցրեց Հոռոմսիմա-ճիճան:

— Չէ՛,— ասի,— չե՛մ ճանաչում:

— Քաղաքումս չե՞ս ապրում, ի՞նչ է,— ասաց նա,— մարդ կա՞, որ այս նոր-մոդնի խաբեբային շճանաչի: Գնա՛ այն քրեհով ապրողներին հարցրո՛ւ, տեղովը նրանցից կիմանաս: Քանի՛ մարդու խաբելով, հորենական տնից տեղից զրկեց, միջից հանեց: Ենդճերը այս բոպեին ո՛րը քրեհով տնից տուն է ման գալիս, ո՛րն էլ ունեցած-չունեցածը գցել, քաղաքից գնացել է և ուրիշ գյուղերում է թափառում. այդ բոլորը Մայասիլին իվանուշի գոհերն են: Դեռ սպասե. նա դեռ շատ խաղեր պիտի խաղա մեր գլխին: Վաղուց փորձած է, որ Մայասիլին իվանուշին հետ գործ բռնողը վերջ ի վերջո ողբալի մարդ պիտի դառնա, ունեցած-չունեցածից զրկվի: Դու տեսե՛լ ես որսորդների լոր բռնելը. ի՞նչ հնարքներ են բանեցնում, շվի են փչում, խաբում. այսպիսի հնարների վարպետն է Մայասիլին իվանուշը՝ մեր միամիտ ջա-

հել-տղերանց իր ցանցը գցելում: Այսօր խե, բան չհասկացող կճեանա, վաղը՝ խելոք ու բան հասկացող, մյուս օրը՝ միամիտ, Աստծու գառ, հետո՛ ժլատ, հետո՛ առատ, հետո՛ մեղմ, հետո՛ խիստ, շորս բոլորն այնքան ման կգա աղվեսի պես պոչը խաղացնելով, որ վերջ ի վերջո ճանկերը կխրի միամիտների մարմինը՝ ու էլ պրծնելիք չկա. կամ հավիտենական պարտական պիտի մնան ու տոկոսներից աչք բանալու չպիտի թողնի, կամ թե՛ իսկույն կաշիդ-մաշիդ կբերթե, կթողնե-գնա՛ մամայիդ բարև արա:

— Բարո՛վ եկար, բարո՛վ եկար,— ասաց Սարգիսը, տեղից ելնելով ու ձեռքը երկարելով,— այս ո՞ր քամին փչեց մեր կողմերը: Աղջի՛, Մարիամ, մի դավաթ թեյ լցնես մեր պատվելի իվանուշ-աղային...

— Սարգիս-աղա, գիտե՞ս ես ինչի՛ եկա քեղի... Ա՛յ տղա, աշխարհքը գովասանքովդ լցված է. Սարգիս-աղա են ասում՝ Սարգիս-աղա լսում: Ասի՛ արի մի գնամ նայեմ, ի՞նչ մարդ է այդ Սարգիս-աղան... ահա եկա... թողութ՞յո՛ւն արա համարձակութանս... ես ահա այսպես եմ... հե՛ն մեր տեղի գոռոզ մարդկանց շեմ նմանվում... ում որ հավնեցա, ինքս առաջ կգնամ, կնկրկայանամ, ծանոթություն կանեմ. տունս կտանեմ-կբերեմ. ես այսպես մարդ եմ, ահա՛. ով ուզում է՝ թո՛ղ խնդա վրաս, ահա ես այսպես եմ:

Ես էլ մտքումս ասում եմ՝ «վա՛յ, ծուղակն ընկար, խե՛ղճ Սարգիս, դուն էլ, ընտանիքդ էլ»:

Այդ միջոցին Մարիամը թեյը լցրեց. դրեց մատուցարանի վրա, Թագուշը Մայասիլովին առջևը տարավ դրեց. նա էլ իսկույն առավ, ափսեով, գավաթով բերանին տարավ. «Այս թեյը ումի՞ց եք առնում»,— ասաց,— թեյ ուզում եք՝ իմ խանութս, գիտե՞ք որտեղ է. այն նոր շինած մեծ տունը չկա՞, այնտեղ է խանութս, ի՞նչ տեսակն ուզեք՝ տամ, գինն էլ՝ էժան. Կարգի՛նկի՛նի երկու մանեթանոց թեյը, ձեր խաթեր համար, հարյուր իննսունհինգով կտամ, թեկուզ, Աստված վկա, վնաս եմ անում: Այս ի՞նչ անպիտան թեյ է ձեր խմածը, այս տեսակ թեյ իմ ծառան էլ չի խրմում, ասաց ու ագահաբար մի բոպեում մեծ գավաթը դատարկեց:— Ես էլի կսմեմ,— ասաց,— այս օղը մարդու ախորժակ է բացում: Երբ որ ախորժակով թեյ խմել եմ ցանկանում, միշտ հատուկ լծել եմ տալիս ձիս՝ ու դեպի Սուրբ Խաչ. այնտեղ բաց

օգին, երկու-երեք բաժակ աղայավայել խմում եմ, պրծա՛վ զընաց: Ես ահա այսպես եվրոպեակի բաներ եմ սիրում:

— Խոնե՛, անուշ լինի քեզ,— ասաց Սարգիս-աղան:

— Հետո՞, Սարգիս-աղա, վաղը ինձ մոտ կգա՞ս:

— Նայենք:

— Նայենքս ո՞րն է. թե գալու ես՝ արի. մեզ համար, տոան-ձին կանտոռի առջև կնստենք, թեյը դիմացներս կքաշենք, հա՛ խմեմ, հա՛ խոսիմ, մեջե-մեջ էլ՝ զանազան եվրոպեակի բաներ էլ կխոսենք՝ բուխալտեր, Բոքլ, Գարվին, Մակոլեյ, կազեթ-բան, ահա այսպես բաների մասին... Ան չէ, բայց լսե՛՛լ ես, Առսկովի համալսարանից մի ջահել գրագիր է եկել. լսել էի, որ լավ ուսումով տղա է. գնացի, հետը ծանոթացա. ի միջի ալլոց, դրան խանութս ներս քաշեցի, վաթսուն մանեթի զանազան ապրանքի՝ կտորեղեն-բան սաղացրի, հաշիվը ներկայացրի. մատի մատանին ու գրպանի ժամացույցն էլ հավանեցի, ու դրանք էլ ձեռք առա, պահեցի. ախպեր, ո՞վ գիտե դրանց միտքը, վատ ժամանակ ենք ապրում, փողը գուցե Մակարիայի տոնավաճառին ուշացրեց, կամ հանկարծակի ընկավ-մեռավ... Ողորմած հոգի հայրս ասում էր՝ ավելի լավ է ասում էր...

— Հիմի հրամանքդ վաճառանոցում չե՞ս, ինչ է,— հարցրեց Սարգիս-աղան:

— Չէ, այնտեղից վաղուց եմ դուրս եկել ես հիմի, ինչպես ասի, այն մեծ, նոր շինած տանն եմ... արի՛ մեզ մոտ, ինչո՞ւ չես գալիս...

— Կգամ, ի՞նչ վոազ է, առջևներս օրեր շա՛տ...

— Ան չէ, բայց կարծեմ զնալու ժամանակ է, դեռ մի-երկու տեղ էլի ունեմ:

— Այս ժամին էլ մարդու տուն գնա՞ն. գուցե ժամը տասն էլ լինի... Աղջի՛, Քագուշ, ճրագը վառի, ժամը նայենք:

Քագուշը գնաց, խոհանոցից բերեց վառած ճրագը: Սարգիս-աղան բաճկոնի գրպանից հանեց ոսկի ժամացույցը, ճրագին մոտեցրեց. «Քեզի շասի՛»,— ասաց,— նայի, տասին քառորդ է մընում»: Մայասիլին իվանուշը նայեց ժամացույցին, բայց ուշք ժամն իմանալու վրա չէր:

— Սարգիս-աղա, տեսնեմ, այդ ի՞նչ լավ ժամացույց է. որտեղի՞ց ես առել այդ ժամացույցը. աչքիս շատ լավն է երևում, տեսնե՛մ, տեսնե՛մ:

— Այս ժամացույցը,— ասաց միամիտ Սարգիս-աղան պոր-ժենալով,— մեր ողորմած Քագավորից նվեր Կոն ստացել, լսել չե՞ս, ինչ է: Այն տարիները ողորմած հոգի կայսրը Քիրման՝ էր եկել. քիրմանցիները մի գեղեցիկ ձի էին ուզում նվեր տալ, բայց լավ, Քագավորին վայել թամբ չէին գտնում: Ես այնպես, մի պատահմունքով ձեռք էի գցել մի այդպիսի թանկնոց թամբ: Չգիտեմ ի՞նչպես է լինում, որ իմանում են լավ թամբ ունենալս, գալիս աղաչում-պաղատում են՝ «այսպես-այսպես բանի համար է»,— ասում են: Ես էլ իսկույն կառք եմ վարձում, այդ պատվական թամբը հետս եմ վերցնում և ուղիղ գնում մեծավորի մոտ. «Հրամանքդ թամբ էի՞ք որոնում»,— ասում եմ: «Հա՛, ի՞նչ է, ունե՞ս»:

«Ահա քեզ թամբը»,— ասում եմ: Ծնորհակալութուն, հայրիկ, ասաց ու ձեռս սեղմեց մարդը: Հետո տարավ իր սենյակները, ա՛յ բա՛ն ի՛սկը թագավորավայել պալատ— նստեցրեց, թեյ խմեցրեց, հետը հավասար հացի նստեցրեց, վերջապես՝ լա՛վ պատիվ արավ: Վերջն էլ գնալուս ժամանակ սեղա՛ի դարակից մի ընտիր արմասե մատանի հանեց տվեց. «Սա քեզ ինձանից նվեր լինի»,— ասաց,— ինչ որ թագավորից ստանամ՝ այն էլ քեզ կըտամ»:

Սարգի ասածն ասած էր: Թագավորը, ինչպես որ ասել էր, երբ որ գալիս է, այդ թամբը տալիս են, ձին էլ հետը. շատ շնորհակալ է լինում. ինձ էլ մի ոսկի ժամացույց է նվիրում: Ահա սա է, որ կա: Տե՛ս, ի՞նչ գեղեցիկ, պատվական ժամացույց է,— ասաց ու իվանուշին ցույց տվեց:

— Ճիշտ որ՝ այս ի՞նչ գեղեցիկ բան է. տո՛ւր մոտիկից նայեմ, շղթան քանդեմ, մի լավ նայիմ: Ի՞նչ լավ ժամացույց է, ասաց ձեռքի մեջ շուռ ու մուռ տալով...— Մատանին էլ մո՞տդ է, հա՞... այդ էլ կարող եմ նայել, հա... բեր մի նայեմ, հոգիս, ինչ բան է գա... Ես շատ եմ սիրում այդպիսի բաներ նայել... մանավանդ երբ մեծամեծ մարդկանց նվեր է լինում...

— Մատանին կամողը չէ՞ որ,— ասաց Սարգիս-աղան՝ երեսը Մարիամին դարձնելով:

— Հա՛, կամողն եմ պահել,— ասաց Մարիամը վախենալով, կարծես հոգին բան էր վկայում,— մեկ էլ ո՞վ պիտի քրքրի գտնի:

— Տիկին Մարիամ, հոգի՛ս, գլխացավանք էլ լինի, մի բերես՝ տեսնեմ ինչ տեսակ բան է այդ մեծավորի նվիրած մատանին. երևում է, որ պատվական բան պիտի լինի: Հոգի՛ս, նեղութուն քաշի, բեր: Այդ տեսակ թանկնոց բաների անուն որ լսում եմ կամ տեսնում՝ սիրտս զող է ընկնում: Ինձ համար աշխարհք արժե այդպիսի բաները ձեռքս բռնել նայելը: Մի բերե՛ս, ջանա:

Այս խոսքերն ասած ժամանակ աչքս Իվանուշի երեսին դարձրի... մոտիս մարդկանցից որ շամաշեի, Աստված վկա, երեսին մի լավ կթքեի, այնպե՛ս զզվեցի այդ անամոթ սրիկայից... Իմ տունս լինե՛ր՝ ավելը կառնեի և գլխուն-արևուն զարնելով կվռնե-տեի, բայց Սարգիս-աղան մի Աստծու օրհնած մարդ էր, երեսը փափուկ, համոզվող: Զգուշ նրան եմ մոտենում, լավ է, որ մութն էր, — արմունկն կամթում եմ ու կամաց ականջին ասում. «Այդ ի՞նչ ես անում, ա՛յ մարդ, այդ թանկնոց ժամացույցը ինչո՞ւ ձե-ոք տվիր, ի՞նչ ես ուզում մատանին էլ ցույց տալ. տե՛ս ասում եմ, նրա միտքը գեշ է. երդում եմ ուտում, որ դա գլխիդ մի խաղ կխաղա, անկշտում աչքերը շե՛ս տեսնում. տնով-տեղով ձեզ կոզ տալ է ուզում: Բայց ո՞ւմ ես ասում, մեր Սարգսին բան հասկաց-նել կլինե՞ր որ: Այդ տարիքին հասած, էլի երեխայի պես մի բան էր խեղճը, բոլորին էլ իր նման էր կարծում... Բայց ի՞նչ. երկ խեղճ-ողորմելու ճակատագիրն էր. փորձանք էր, գլխներին պի-տի գար:

Մարիամը ներսից բերեց տուփի մեջ դրած մատանին: Անի-բավ Իվանուշը տեսածին պես իսկույն խլեց ձեռքից, արագ-արագ բացեց տուփը, մատանին միջից հանեց, մատը մեջն անցկաց-րեց. այդ էր, որ տեսանք: «Այս ի՞նչ գեղեցիկ, շեղած-չտեսնված մատանի է, այս ինչ ցուլուն արմաստ է. ի՞նչ տամ այս մատանուն, խաշը վկա՛՝ ճիշտ եմ ասում, արեք, ինձ ծախեցեք... կամ այսպես անենք՝ ես ձեզ խանութիցս էժան-էժան ապրանք տամ. մեռնեմ, թե մի կոպեկ օգտվեմ, Ֆարբիկայի գնով կտամ... գեռ եթե ուզում եք՝ ուրբուց տասը կոպեկ էլ կիջնեմ...»

— Չէ՛ հոգիս, — ասաց Մարիամը քաշվելով, — հեշ այդպես բան կլինի՞, թագավորի ու այնպիսի մեծավորի հիշատակը կամ ծախենք, կամ փոխենք. մենք մարդ շե՛նք, որ մի քանի կտոր գե-ղեցիկ բան շունենանք սնդուկներիս մեջ պահած... Իվանուշ-աղա՛, այդ ի՞նչ տարօրինակ բաներ ես ասում. վաղուցվա հարուստն ես ու մի ոսկի ժամացույց կամ արմաստ մատանի տեսած շե՛ս, ի՞նչ

է, մեղա՛, այդ էլ նոր սովորություն է դարձել. ո՛ւմ ձեռքը բան տեսնեն «ծախիր ինձ», — ասում են: Չէ՛, հոգիս, մեր ունեցածին աչք մի՛ տնկի, քու ունեցածդ բարի վայելի:

— Տիկին Մարիամ, ինչո՞ւ այդպես հանկարծ տաքացար որ, մի՞թե ձեզ հետ հանաք անել չի կարելի...

Ես էլ այն կողմից՝ «Դա ի՞նչ հորս ցավի կատակն է, — ասի, — ծառերը տեսար, քիչ էր մնում կոտորեիր, գայլի պես մրգի վրա ընկար. բաղը տեսար՝ «բաղդ ծախի» ասում ես. ժամացույցը տեսար՝ «ժամացույցդ ծախի», մատանի տեսար՝ «մատանիդ ծա-խի, կամ ապրանքիս հետ փոխի»... Այդ ի՞նչ է ասածդ. կամ ին-քըդ ոտով-գլխով խե ես, կամ մարդու խեի տեղ ես դնում. ճիշտ են ասում՝ պատուը ծառից հեռու չի ընկնում»:

— Հոռոմսիմա-ճիճա, քու սիրտդ էլ ելավ. մի՞թե հանաքը շե՛ք հասկանում...

— Կա՛վ, լա՛վ, գիտենք, լա՛վ գիտենք քո հանաքները: Տեպ-նիի հետ էլ այդ հանաքներով սկսեցիր, բայց մարդը հիմի վայ տալու է դարձել. խեղճ-ողորմելին, քանի որ ձեզնից հեռու էր՝ մարդ էր մարդու պես. բայց հիմի տես, որ ձեռ շնորհքով փողո-ցի մեջն է մնացել կնոջ-երեխաների հետ: Բա Տապանին Միքի՞-թը, նրա հետ էլ հո՞ հանաքով սկսեցիր. հարյուր հիսուն մանեթ զոռով մարդու բուռը խոթեցիր, մի քանի տարուց տունը-տեղը խլեցիր, տիրացաք: Պիճիճի Մելքոնի հետ էլ էիք ուզում նույն հանաքներն անել, բայց, Աստված բանն հաջողի Սալպինի Հա-կոբջանին, մարդուն հազիվ ձեր ճանկերից ազատեց...

Այսպես աճա, մենք, կնիկամարդ տեղներովս այդ նոր մոդնի խարեբայի գլուխը լվացինք. բայց Սարգիսը այդ միջոցին մի բե-րան շբացեց, մի բառ շասաց. ինչպես որ ձեռիս այս զավազանը լուռ է, նա էլ այնպես մունջ էր կտրել, մնացել էր. ա՛խր, ա՛յ աղամորդի, քեզ էլ Աստված լեզու է տվել, մի երկու խոսք դու էլ ասա. իսկը մի կտոր փայտ. ձայն-ծպտունը շեկավ: Կեցած տեղս քիչ էր մնում ճաթեի...

Իսկ այդ անխիղճ-անամոթը էլի նույնն է ասում. «Մի՞թե հա-նաք չեք հասկանում, մի՞թե հանաք չեք հասկանում»: Այս ի՞նչ հորս ցավի հանաք է. մարդուն ուզում է խաբել՝ անունը հանաք է դրել: Դա երես չէ, թմբուկի կաշի է. երեսի մեռունը կարծես թե, մեղա՛ Աստծու, մագործի սպունգով լվացած, հանած է: Հիմի տեսա՛ր ինչպե՛ս են մարդիկ հարստանում, կայքի, ապրանքի,

հարստութեան տեր դառնում: Ամոթո՞ղ մի կո՞ղմ դիր, երեսիդ կաշին հաստացրու, խղճմտանքդ մեզդ խորունկ թաղե, դրսից ձեռք քանդիր. երեսիդ թքն՝ մայիսի անձրև՝ է, ասա. հայհոյանք, անպատվութիւն տան, հանաքի դարձրու, մի օր անշուշտ, կհարստանաս. բայց այս բաները, հոգիս, սովորելը հեշտ չի. մարդ, երևի, այդպես է ծնվում. խա՛ղը վկա՛ խելքս չի հասնում... հավատո՞ւմ ես. այդքան ավել-պակաս խոսքեր ասեինք, մնաց, որ թեից բռնենք, վռնտենք. այդ խելքի աղքատը լուռ է, քթի տակ ծիծաղում է, կարծես ասածներս ո՛չ թե իրեն՝ ուրիշի համար է: Մենք ասինք, ասինք՝ վազն եկանք, բայց նրա պետքն էլ չէ. ո՛ր գրպանից ժամացույցն է հանում, ո՛չ մատից՝ մատանին: Ես էլ մտքումս ասում եմ՝ «արի սուս մնամ, տեսնենք դրա վերջն ինչ կլինի»:

Մի քիչ լուռ մնալուց հետո այդ անամոթը մեր Սարգսին ի՞նչ ասե՞լ լավ է. «Այս ժամացույցդ ու մատանիդ շատ հավնեց. ի՛նձ տուր մի երկու ամսով, իբր, ասում է, Մոսկով դրկեմ, ճիշտ սրանց նման պատրաստել տամ, հետո, գործս վերջացնեմ՝ նույնութեամբ կվերադարձնեմ», իբր: Սարգսին էլ երեսը չի բռնում չի ասելու, համաձայնում է միամիտը. «Ա՛ն, ասում է, բայց ջան, Իվանուշ, զգուշ եղիր, որ չկորչի,— ասում է. նա էլ՝ «ի՛, ի՛նձ եմ, ի՛նչ է, նեուժելի ես...» և այլ այդպիսի գայլի շարականներ:

Քիչ լռելուց հետո, ի՛նչ ասի, լավ է. «Դուք չիթ ումի՞ց եք առնում. արշինին քանի՞ էք տալիս. շապիկացու քաթանի արշինը քանիսո՞վ եք առնում. մահուղի արշինին քանի՞ էք տալիս. մետաքս թաշկինակն ո՞ւմից եք առնում. թավիշի արշինին քանի՞ էք տալիս». ո՞ր մեկն ասեմ. ահա այսպես շատախոսում է...

Սարգիս-աղան էլ, ինչ որ ճիշտն է, ասում է,— մենք, ասում է, ճոթեղենը Տեղիներին Սարգսից ենք առնում. թե՛ չթի արշինին տասնյոթ կոպեկ ենք տալիս, քաթանին՝ քառասուն, մահուղի՝ Կուշայից ենք առնում, արշինը՝ երեքուկես, թավիշը՝ Սընապցից ենք առնում, դե ես ի՛նչ իմանամ, ասում է ճիշտը՝ ինչպես որ է՝ «Են եք, ինչ է, ասում է Իվանուշը, մարդ հեշ Տեղիներին Սարգսից կամ Կուշայից, կամ Սընապցից ապրանք կառնե՞», նրանց քաթաններ լինելը չգիտե՞ք, ի՛նչ է. ինձնից ինչո՞ւ չեք առնում. ես ձեռք նրանցից երկու անգամ էժան կտամ...»: Սարգիսն էլ՝ «Մեկ էլ որ առնելու լինենք, քեզնից կառնենք»,— ասում է, բայց ես աճող գիտեմ, որ նրան հեշ քան պետք չէ. բան է, դե, ասում է, որ քե-

քն ազատի: Բայց Իվանուշը կա՛մ չի հասկանում, կա՛մ սուս չհասկացող է ձեանում:

«Չէ՛, դու այդպես մի՛ անի,— ասում է,— վաղը ինձ մոտ արի,— ասում է,— հավնած ապրանքդ ա՛ն,— քեզնից ավելի՞ պիտի առնեմ, ի՛նչ է,— ասում է. թո՛ղ մնա պահարանումդ. Այս էլ քեզ ասեմ, որ այս տարի ապրանքը Մոսկովայում շատ էժան էր, ես էլ լավ վրա հասա ու համարյա կես գնով առա: Այս տարվա մեջ ապրանքը գնողների համար այնպես հարմար տարի է, որ առնեք՝ ուրբուն ուրբի վաստակած կլինեք: Ա՛ն, ասում եմ քեզ, ա՛ն, ո՛չ թե արշինով, թոփով էլ որ առնես՝ սխալված չես լինի: Ուզո՞ւմ ես քեզ մի հինգ-վեց թոփ զանազան շթեղեն դրուկեմ»: «Չէ՛, ասաց այն կողմից Մարիամը, ի՛նչ շտապ բան է դարակներս լիքն է շորացուներով. վրաներիս շորն էլ՝ դեռ նոր է. պետք որ լինի, ինքներս կղրկենք, կառնենք»: «Չէ՛, ինչո՞ւ ես այդպես անում, տիկին, ասաց Իվանուշը, ինձ չե՞ս հավատում, ի՛նչ է, այս տարի, ասում եմ, ապրանքից, ամենաքիչը ուրբուն ուրբի, գուցե ավելի էլ, շահ ունենաք. ձեզի էլ որ պետք չլինի՞ դրացիներից տվեք. խաղը վկա՛ լավ օգուտ կանեք. այդ շեշին բանի համար ձեզ սո՞ւտ պիտի ասեմ. ախր, դուք ինձ ի՛նչ մարդ եք կարծել... Այդ չէ, բայց, Սարգիս-աղա, ես քեզ դեռ մի ուրիշ բան ասեմ. այս տարի ես հարմար գնով խալմուխ՝ շայ առա. ուզո՞ւմ ես մի քանի արկղ դրկեմ. ա՛ն, խանութը դիր, թող մնա... դու մի ձմեռը տե՛ս՝ ինչպես գինը կբարձրանա. ապրանքը կմացած տեղը ուրբուն ուրբի կվաստակե... խալմուխ շայ առածդ ապրանք չէ, հո, զուտ ոսկի է, դու մի Ստավրոպոլի կորթերե՞ ուզարկի, ուրբուն ուրբի թե չվաստակես՝ թո՛ւք երեսիս... հետո՞, դրուկե՞մ, Սարգիս-աղա»: «Ի՛նչ ասեմ, ջանս, Իվանուշ, վախենում եմ նոր առուտորի ձեռք զարնելուց. խալմուխ շայը իմ բանը չէ. հենց առաջուց ինձ դժվար է երևում... Ես դրա առնողներին էլ չեմ ձանաչում, ապրանքից էլ բան չեմ հասկանում... ապա եթե ապրանքը ձեռքս մնա՞, կամ մնալով փչանա՞...»: «Ի՛նչ դատարկ բաներ ես խոսում. հենց որ իմանան, թե խալմուխ շայ ունես, կթողնեն, որ դու հաճախորդ փնտրես. իրենք խանութդ կթափեն, առնող-առնողի կլինի. շաբաթ, շաբաթ ու կեսում ապրանքից հեշ բան չի մնա. քեզ ասում եմ՝ այս տարի Սիպիից շատ բան բե-

¹ Կամիկական թեյ:

րած չեն, այն էլ, համարյա ձեռքս անցավ... Ես էլ, չկարծես թե հաճախորդ եմ փնտրում. մեղա՛յ աստծու. լավ մարդ լինելը որ իմացա, մտքիս մեջ ասի՝ արի այդ մարդուն մի քանի կոպեկի վաստակ ցույց տամ. ես որ ուզենամ՝ հաճախորդի պակասություն չի լինի... Հետո՞, Սարգիս-աղա, ղրկե՛մ, հա՛...» «Եսաչը վկա, Իվանուշ, խելքս չի հասնում, ի՞նչ ասեմ. վախենում եմ, գուցե...»

Ավելի բան չկարողացավ ասել խեղճը... այնքա՛ն ամոթով մարդ էր. մարդուն մերժելը, չէ՛ ասելը, կարծես, նրա համար չէր: «Դատարկ բան է,— ասաց Իվանուշը,— դու այդ մեծ գործը, սկսե, դու այդ կոպեկնոց մանր առուտորից, առ ու փոխից մի վազն արի՛ ու եվրոպեակի առուտուր սկսե, տե՛ս, թե մի օր ինձ ինչպե՛ս շնորհակալություն անես. ախր, ես քեզ թշնամի՞ եմ, ի՞նչ եմ. մի՞թե ես քու վնասը կկամենա՞մ: Դատարկ բան է, դատարկ բան է ասածդ. վաղը ես քեզ մի քանի արկղ բան կուղարկեմ, դու խանութիդ մեջ աղայավայել շարե. հետո կիմանաս, որ Իվանուշ Մայասիլովը մարդու վատություն կամեցող չէ... Ես քեզ ավելի լավ բան ասեմ. այն մախորկան գիտե՛ս, հասարակ մուծիկի այն թիթիկը. դա ինչպիսի՞ ապրանք ես համարում դու. այր տարիներս նրանից շահավետ ապրանք կա՞ որ. ուրիշները, մտի՛կ արա, դրանով հազարներ են վաստակում, աղյուսե տներ են շինում... Դրա ծախսն էլ ի՞նչ է. մարագիդ մի դատարկ անկյունը դի՛ր, իրեն համար թո՛ղ մնա, մի քիչ բան էլ խանութդ դիր, թող այդ էլ մնա. երբ որ ուրբուն ուրբի չվաստակես՝ երեսիս թո՛ւր... Մի թաթարի մոտ պահար՝ կար. անձարը չգիտեր ի՞նչ աներ. փողի էլ նեղություն ուներ: Դրան իսկույն տունս բերեմ, ու՛ օդի զակուսկա-բան... չորս հարյուր փաթեթը համարյա կես գնով եմ առնում, կեսը կանխիկ, կեսն էլ տասնութ ամսվա... հը՛, լավ է... բա՛-ա՛... այդ ապրանքից, որ երեք հազար չվաստակեմ ուղղակի խե պիտի լինեմ... խանութդ դիր, կամ մարագիդ մի անկյունը գցիր՝ թո՛ղ մնա. հաց չի՛ ուզի, ջուր չի՛ ուզի. դու մի տե՛ս գներն ինչպե՛ս բարձրանան. ուրբուն ուրբի թե չվաստակես՝ երեսիս թո՛ւր... Այդ ծխախոտից էլ մի քանի փաթեթ ուղարկե՛մ, հա՛»:

«Եսաչը վկա, խելքս չի հասնում, ի՞նչ ասեմ»,— ասաց խեղճ մարդը, վախենում եմ նոր առուտուրի մեջ մտնելուց. ապրանքը

Համեմունք:

մոտս մնա ընկած, կամ գինը բարձրանալու տեղ՝ ընկնի, այն ժամանակ ես ի՞նչ անեմ. հո գիտես՝ մեր ունեցածն էլ քանի՞ կոպեկի բան է որ. մենք օր վաստակող, օր ուտող մարդ ենք. ուրբ-լինների ետևից ընկնիմ ու կոպեկները կորցնեմ, այն ժամանակ իմ տերս ո՞վ պիտի լինի»,— ասաց ողորմելին, կարծես, թե հոգին մի վատ գալիք էր վկայում:

Բայց այն դժոխքի կրակ, այն ոչ ու փուշ Իվանուշի ձեռքից պրծնելիք կա՞ր որ, տղրուկի պես կպել էր մարդուն, հա՛յ-հա՛յ բկից բռնել է, թե՛ «ա՛ն ապրանքս»: «Հետո՞, Սարգիս-աղա, ինչ պե՛ս եղավ մեր շթեղների, խալմուխ-չալի ու մախորկայի բանը... վաղը ղրկեմ, հա՛...»: «Մի նայենք, լավ միտք անենք... Սարգիսն ուզում է օձիքն ազատել, բայց խեղճը հնարը չգիտե՛ս»: «Նայենքս ո՞րն է. դու ուզում ես՝ հազար նայե, այսպես շահավետ ապրանք, այսպես հարմար առիթ մեկ էլ գտնելո՞ւ ես, որ... քեզ բան եմ ասում. այս առիթը ձեռքից բաց մի՛ թողնի, մի՛ փախցնի, թե չէ՛ ոսկին բռնեցող պատուհանից փողոց նետած կլինես, քեզ հարմարին զալու բան եմ ասում, ասածս դու հանաք չգիտենաս...»: «Նայենք,— ասաց ողորմելին,— առջևներս օրեր շա՛տ... գուցե մի բան անենք...»: «Քու անելը՝ դատարկ բան է. տեսնում եմ, որ բանը քեզ որ մնա, հինգ տարուց էլ դու քու դանդաղկոտ բնավորությունը թողնելու չես... թե որ այդպես է, ես քեզ վաղը մի փոքրիկ սալ ապրանք կբարձեմ, կղրկեմ, մյուս բաներն էլ վերջը կտեսնենք...»:

Ասաց ու զլխարկն առավ, շտապ-շտապ բարե-մնաք արավ, գնաց:

Ժամն էլ արդեն մեկն էր դառնում: Մարիամն ու Թագուշը, խեղճերը նստած տեղերը խուսիալով քնած էին. իմ քունն էլ սաստիկ տանում էր, բայց էլի ինքս ինձ զսպում եմ, չլինի որ, ասում եմ մտքիս մեջ, ես քնի մեջ խորկնամ ու այս անխիղճը խեղճ Սարգսի զլխին մի խաղ խաղա. գիտե՛ս, մի խոսք կա՝ «մարդ մարդու քահանա, մարդ մարդու սատանա»:

Իվանուշը հենց որ փողոց ելավ, Սարգիսն ինձ ասաց. «Այս ի՞նչ տեսակ բան է այսօրվա մեր խոսակցությունը. այդ մարդու ասածներից բան չհասկացա, գիտե՛ս, կարծես թե միտքը վատ չէ, բայց ինչո՞ւ, չգիտեմ, սիրտս լավ բաներ չի վկայում»: Ես էլ ուզում եմ դրան մի բան ասել, ու հանկարծ փոշտում եմ, բայց մի անգամ... «Տեսա՞ր, ասի Սարգսին, ինչպե՛ս ես հիմա. ես շա-

սի՞ որ Բվանուշը քեզ խաբելու միտք ունի. ահա՛, ասածս Կլավդի,
Սարգիս-աղան էլ ինձ ասում է. «Յերեկվա փոշտալն գեշ է,
թե չէ գիշերվանը գեշ չէ, նույնիսկ լավ է»: «Ի՛, ասում եմ, այդ
փոշտալու բանը դու ի՞նձ ես սովորեցնում. հա՛, գիշեր է եղել,
հա՛ ցերեկ. մի անգամ փոշտալը գեշ է. այդ միջոցին ինչ բան որ
մտածում էիր՝ անելու չե՛ս, վա՛ղ պիտի գաս»: «Չէ՛,— ասում է,—
Սարգիս աղան, կողքի է ընկնում, գիշերը մեկ անգամ փոշտալը
լավ է,— ասում է: Ես չէ՛ եմ ասում, նա՛ հա՛ է ասում»: է՛յ,—
ասում եմ ես էլ,— ինչպես որ գիտես, այնպես արա. բայց որ
գլխիդ փորձանք գա՛ ինձ պատճառ մի՛ բռնե: «Ես էլ,— ասում
է,— հո դեռ գործ չեմ սկսել. խոսք էր՝ ասինք, թե չէ՛ ո՛վ դրս
թիթին ու խալմուխ-շայր ծախելու գլուխ ունի»:

Ասում է, բայց ո՛վ գիտե, գուցե մտքի մեջ արդեն հազար-
ներն է համրում ու սնդուկը դնում: Ահա այսպես բան է փողի զո-
րությունը: Ողորմած հոգի հայրս ասում էր: «Փողը,— ասում էր,—
չար սատանայի հնարածն է. սատանան շատ ջանաց աղամոր-
դուն խաբել, մոլորեցնել, բայց չկարողացավ. վերջը, վերջը, երբ
որ փողը հնարեց, բոլորի հոգիները ձեռքն առավ: Փող ասած բու-
նրդ այդպիսի՞ մարդոց է խելքից հանել. խեղճ աթթար Սարգիսը
ի՞նչ խոսքին ամուր մարդ էր, որ այդքան լավ-լավ հույսերից ես
կենար: Հողեղեն արարածիս ցանկությունը չափ ունի՞ որ:

Մյուս օրը, առավոտը վաղ, արևը դեռ նոր էր ծագել, խա-
նութի ծառան շտապ ներս է մտնում. «Աղա՛, ինք մեծ բարձած
սայլ մեր դարբասի առջև կանգնած են. մի խանութի տղա էլ-
որինն է՛ չգիտեմ— քեզ է ուզում»: Այդ ի՞նչ բան է,— ասում է
Սարգիս-աղան,— մի գնամ տեսնիմ ո՛վ է. գուցե ինձ չէ, ո՛վ գի-
տե ում են փնտրում:

Նա գնում, մենք էլ ետևից ենք գնում: Բայց իմ հոգին զգոմ
էր, ես չտեսած էլ գիտեի ի՞նչ բան եղածը: Փողոցի դռանը չհա-
սած, առաջներս մի ծառա է կանգնում. «Աղաս բարե արավ,—
ասում է,— այս ինք սայլ ապրանքը ընդունեցեք»,— ասում է
«Աղադ ո՛վ է»,— հարցնում ենք ամենքս միաբերան: «Իվանով
Մայասիլովը,— ասում է,— չե՞ք ճանաչում, ի՞նչ է. երեկ իր-
կուն ձեր տանն էր, ո՛ւ...»: Պայթում էի սրտիս նեղությունից
«Ա՛յ տղա, աղայիդ ո՛վ է ասել մեզ ապրանք դրկի. մենք նրան
ապրանք դրկե՞ս ասել ե՞նք որ... Ե՛տ արա, սայլերիդ գլուխը
զարձրու և գնա...»: «Ի՛, այդպես բան կլինի՞ որ. խոսքը վերջաց-

նկուց հետո՞ ետ առնել կլինի՞: Հիմա ես այսքան ապրանքը տա-
նիմ որտե՞ղ դատարկեմ,— ասաց: «Որտեղից բերել ես, էլի՛ այն-
տեղ տար»,— ասի: «Հիմա մեր ամբարի դուռը գոց է»,— ասաց
աղան: «Աղայիդ ասա, թող դուռը բանա»,— ասի ես էլ:

«Այստեղ լինեք կասեի, որ այստեղ չէ՛ հիմա ես ի՞նչ անեմ»,
ասաց: «Որտե՞ղ է, որ», հարցրի: «Քիրումն գնաց», ասաց տղան:
«Ծ՛րբ գնաց», հարցրի: «Երկու ժամ կլինի գնալը, դեռ ավե-
լի, և ամսից առաջ էլ գալու չէ. շատ հարկավոր գործ ունի այն-
տեղ. տան թուղթ պիտի հանեք»:

Երևում էր, որ հարամ-սատկելու Իվանուշն արդեն սկսել էր
իր հնարանքները, բայց միամիտ Սարգիս-աղան այդ սատանայի
հնարքները չհասկացավ: Ես նրա տեղը լինեի, նույն րոպեին
կզնայի մագիստրատ, ու այս խառնակ գործից մաքուր դուրս
կգայի. բայց Սարգիս-աղան այդպիսի մարդ չէր: «Է՛, որ այդպես
է, ասաց, սայլերը բակը քաշեցեք, բերեք, դատարկենք, հիմա
մարդու ապրանքը հո փողոցի մեջ մնալու չէ՞. Քիրումնից որ գա,
անշուշտ մի բան կանենք»:

Ճր՛ո-ճր՛ո սայլերը բակը քաշեցին, կապուկներով ապրանքը
տարան մարազը դարսեցին: Ես էլ սառած, սառույց կտրած մնա-
ցել եմ՝ ի՞նչ կլինի, յարաբ, դրա վերջը...

Վերջն այն եղավ, որ՝ երանի՛ մեռնեի, աչքովս չտեսնեի:
Երբ կապուկները տեղավորում, մարագն էլ կողպում են՝
խանութի տղան Սարգիս-աղայի ձեռքը մի թուղթ է դնում:

«Այս ի՞նչ է», հարցնում է Սարգիս-աղան:

— Չգիտեմ ի՞նչ բան է,— ասում է տղան,— այնինչ՝ սո՛ւտ,
խիստ տեղով էլ գիտեմ,— աղաս ասաց, թե՛ Սարգիս-աղային
տար, տակը ձեռք թող քաշե:

— Զա՛նս,— ասաց Սարգիս-աղան,— ես ամեն տեսակ թրդ-
թի տակ ձեռք քաշելու սովորություն չունիմ. այս թղթի մեջ ի՞նչ
է գրած, չգիտե՛ս:

— Պարզ չէ՞ որ,— ասաց տղան,— «այսքան ապրանք եմ
ուղարկում», գրած է, ուրիշ ի՞նչ գրած պիտի լինի որ:

— Նայե, սուտ շասես, հագուդ մեղք է. գրած չէ՞ մեջք որ՝
այս ապրանքը գնեցի ու փողն այսինչ ժամանակ պիտի տամ,—
հարցրեց Սարգիս-աղան:

— Զէ՛, աղաս խե՛ է, ի՞նչ է, որ այդպես բանեք գրե՛:

— է՛, թե որ այդպես է, բեր ձեռք դնեմ,—ասաց միամիտ, բացբերան Սարգիս-աղան:

Թագուշը թանաք-գրիչի գնաց. ես մնացել եմ մոտը, աղաչում-պաղատում եմ՝ «տաքդ պագնիմ, Սարգիս աղա, այդ թղթի տակ ձեռք մի՛ քաշի, ասում եմ, անհնար է, որ այդ անխիղճը գլխիդ մի փորձանք չբերի»: Բայց ո՛ւմ ես ասում: Թղթի տակը ձեռք քաշեց, տվեց տղի ձեռքը. նա էլ ուրախ-ուրախ ելավ գնաց: Հետո ենք իմանում, որ Իվանուշը հե՛շ էլ Քիրման գնացած չէ. տղին այդպես է պատվիրել ասելու, նա էլ այդպես ասաց:

Ճաշի ժամանակ բոլորս էլ սեղանի շուրջը նստած հաց ենք ուտում: Սարգիս-աղան ինձ է դառնում, ասում. դու չէի՛ր ասողը, թե Իվանուշը իմ գլխին խաղ պիտի խաղա, բայց ասածիդ պես չեղավ: Այսօր խանութիս դուռը բացած-չբացած՝ շորս հինգ հոգի իրար ետևից ներս են մտնում, բարև տալի,— առանջին անգամ տեսած մարդիկս են— դու խալմուխ շայ ունի՛ս, թիթին ունի՛ս, հարցնում են, քանի՛սն է գինը: Ասում եմ, թե դեռ հաշիվը վերջացրել չենք. գինը վերջնական արել չենք, երբ որ ապրանքը պատրաստենք, կսկսենք ծախել, ասի ու ճամփեցի: Տեսա՛ր հիմա. դեռ մարդու էլ բան ասած չեմ, թե՛ այսպես-այսպես ապրանք ունիմ ձեռքս, բոլորը գիտեն, առնող առնողի է. ո՞վ գիտե՛ ապրանքը դուրս որ հանեմ՝ ինչպես պիտի խլեն տանեն... Հիմա էլ չպետք է սպասել. շտապով պետք է գնալ Իվանուշին ու, մեկ կտրողական խոսք ասել, քանի որ մուշտարիները տաք են... Աղջի՛, դու մեծ առուտորի հետ հանաք ես անո՞ւմ. երբեմն մեծ առուտորականի գործն այնպես է հարմարվում, որ մեկ օրվա մեջ այնքան է օգուտ անում, ինչքան մանրավաճառը երկու տարվա մեջը չի՛ անի— դու այդ գիտե՛ս: Հապա՛, սիրականս, առուտոր ասածդ այդպես բան է:

— Աստված բերանեդ լսե, — ասի, — ու է՛լ Իվանուշի վրա խոսք չբացվեցավ:

Այսպես անցավ շորս-հինգ ամիս: Հրեշտակապետի շաբաթն էր: Մի օր, իրիկվա դեմ, մեզ համար նստել ենք, զրույց ենք անում: Սուս-փուս ներս մտավ մի պառավ կնիկամարդ: Բարո՛ւ Աստծո՛ւ բարին: Երևում էր, որ խնամի էր: Ի՞նչ խոսքս երկարացնեմ. երեք օրից Թագուշիս խոսք տվինք մի միջին կարողության տեր մարդու. հարսանիքն էլ այդ ձմեռ սուրբ Սարգսից հետո պիտի անեինք: Օժիտը երեք հազար ուրբի խոստացանք:

Ճնշար հինգ հարյուրը փողով, մնացածն էլ՝ անկողնաշար, հագուստ-բան, արձանեղեն, ոսկեղեն, արծաթեղեն ինչպես որ կարողեն է:

Քեզ մի տարօրինակ բան պիտի ասեմ: Երբ որ ես դրանց տունը գրվեցա, Թագուշը հինգ տարու էր: Երբ որ նշանեցինք՝ տասնհինգից ելել՝ տասնվեցը մտել էր. այնպես չէ՞ անում որ. ինչ որ է. ասել է՝ տասը տարի էր Սարգիս-աղայի տանը եղածս: Կհավատա՞ս, այդ տասը տարվա մեջ մի անգամ Թագուշիս վրա կարգին նայած չէի, մի անգամ չէի տնտղել, թե՛ այդ աղջիկը ի՞նչ տեսք ունի՛ գեղեցիկ է, տգե՞ղ է: Բայց նշանդրեքի օրը երբ որ ընտիր կերպասի շորը հագցրին, մանյակը, զարդերը կախեցին, մեղալիտնը վիզը անցրին, նոր թավիշե, ոսկի ծոպերով ֆեսը գլուխը դրին, վրայից էլ աղամանդյա ծաղիկը դրին, զարդարեցին, բերանս բաց մնաց, այնպե՛ս դարձացա: Կհավատաս, հա՛յ, հա՛յ ութսունս կմտնիմ, օրումս այդքան գեղեցիկ աղջիկ տեսած չէի. ես հո՛ թզուկ կանանցից չեմ, բայց ինձանից դեռ մի թիզ էլ երկար լիներ Թագուշը՝ ի՞նչ կասեիր. քեզ բո՛յ եմ ասում՝ իսկական նոճի. ձեռքերը բարակ, նազուկ մատները, կարծես, մեղրամոմից էին շինած, մազը սև, ունքերը սև, երեսը ձյունի պես ճերմակ— թշերից ալը կկաթեր. նայվածքը, նայվածքը, ա՛խ, այն հրեշտակի նայվածքը... Հա՛յ-հա՛ — երեսունհինգ տարի է դեռ մտքիցս չի գնացել. այնպե՛ս աչքեր ուներ, կհավատա՞ս աղամանդից էլ ցոլուն. արտևանունքները այնքա՛ն երկար էին, որ երեսի վրա շուք էին գցում, այդպես շնաշխարհիկ բան, ո՛չ տեսիլքում, ոչ է՛լ երազումս՝ տեսած չէի. ժամին միջի-մեղա՛յ աստծու, մեղա՛, սուրբ աստվածամոր պատկերը տեսե՛լ ես — ի՛սկը նրա պատկերը, դեռ ավելի գեղեցիկ: Ա՛յ մարդ, չեմ ուզում աչքըս վրայից հեռացնել. նայո՛ւմ, նայո՛ւմ, չեմ կշտանում... Նշանի օրը ինձ համար նստել եմ մի անկյուն, աչքս Թագուշիս վրա, մտքովս ո՛ւ, ո՛ւ հեռուներն եմ պտտվում: «Ափսո՛ս քեզ, հազա՛ր ափսոս, միտք եմ անում», այդ հրեշտակի կերպարանքովդ, մի օր, մի՞թե դու էլ հասարակ մարդու կին պիտի լինիս. դու էլ մի՞թե մեզ պես մի օր ընտանիքի տեր պիտի լինիս, մրոտ, կեղտոտ խոհանոցը պիտի մտնիս-ելլես. այդ նազուկ ձեռներդ պիտի կաշի դառնան՝ խմոր, լվացք ու հազար տեսակ տան գործ անելով. այդ վարդի թշերդ մի՞թե պիտի թոռոմեցնես վառարանի կրակի և օջախի ետև. այդ աղամանդե աչքերիդ շողքը մի՞թե պիտի կորց-

նեւ մի օր, երկանդ կապան ու երեխոցդ շորերը լուսե-լուս հոգով
կատելով... Միտք եմ անում, միտք ու, սրտիցս արյուն է կա-
թում: Վա՛խ, Թագո՛ւշ, Թագո՛ւշ. այսօրվա օրս դու թագավորի
թագը գլխիդ պիտի նստեիր, թագավորի ոսկի պալատի մեջ պի-
տի ապրեիր...

Առաջվա ժամանակները որ լինեք, խա՛ղը վկա, այդ շնաշ-
խարհիկ աղջկան կա՛մ թագավորը կառնեք, կա՛մ թագավորի որ-
դին... Խե՛ղճ աղջիկ, գառի պես կանգնել է, աշխարհիս բանից
հե՛շ լուր չունի. նա կարծում է, թե հա՛ կարգվիլ, հա՛ մեկ տնից
մեկ ուրիշ տուն կրվիլ...

Այն նշանի իրիկունը եւ Թագուշիս լայեղ շէի տեսնում մի
գեղեցիկ երիտասարդ, միջին կարողության տեր մարդու հեռ
կարգվելու. դու մի՛ ասի այդպես որ լինեք՝ հազար փառք էր...
մի՛ ասի գալիք փորձանք կա եղել խեղճ աղջկա արդար գլխին...
բայց էլի ամեն բանի պատճառը այն կարճ-կուտուր Իվանուշը
եղավ:

Այդ վերջին խնդումն էր եղել մեր աստծու օրհնածների, նը-
րանց երեսին է՛լ խնդում շտեսա: Քանի գնաց՝ գործերն ավերվե-
ցան, քանի գնաց՝ խանութի բանը գեշցավ. վերջը-վերջը ամեն
ինչ տակնուվրա եղավ. տնից-տեղից, խանութից զրկվեցին. մի
քանի ամիս քրեհոզ տնից-տուն ապրեցին, մեկ էլ տեսնեմ՝ բո-
լորովին ելել են քաղաքից...

Նշանդրերի մյուս օրը Իվանուշի խանութի տղան գալիս,
Սարգիս-աղային ասում է՝ «Աղաս բարև արա՛վ, ասում է, ասաց
թե՛ վաղը պարտքիդ օրն է, երկու հազար օխտը հարյուր ութը
պատրաստեցեք, թիթինի ու խալմուխ շայի համար, ասում է, դեռ
տան համար էլ խանութից ի՛նչ ասես առել եք: Հա՛, մոռցա ասե-
լու, որ ինը սայլ ապրանքի մեջ կար մի արկղ մողայից ընկած
շորացուններ, ճոռթկած թավիշ, փտած մահուղ ու քթի, գույնը փո-
խած, մետաքս թաշկինակներ— ա՛յն էլ հարյուր ութսունչորս
մանեթի— ուզում եք տվեք, թե չէ՝ փողի տեղը ժամացույցն ու
մատանին ինձ կպահանջե՛ս»:

Պաղած մնաց խեղճ ողորմելին: «Ծն նրանից ապրանք
գնե՛լ եմ, ի՛նչ է»:

— Հապա գնած չե՛ս,— ասաց երեսը պատռած տղան,— Թե
գնած չե՛ս, ապա ինչո՞ւ մեկ արկղ խալմուխ շայ, մեկ փաթեթ էլ

թիթին վրայից ծախել ես: Ահա՛, որդուդ վրայի կապան էլ մեք
ապրանքից է:

Այդ ճիշտ էր. Սարգիսն ապրանքն ասանալու երրորդ օրը
թիթինի ու խալմուխ շայի վրայից՝ մի կապոց մեկից, մի արկղ
մյուսից՝ ծախել էր, և ճոթեղենից էլ մի քանի բան կտրել էին:
Բայց զարմանալին այն է եղել, որ երեք ամսու մեջ Սարգիս-աղան
մի անգամ չի կարողացել Իվանուշի երեսը տեսնել, որ ապրան-
քի մասին կտրողական բան խոսի, թե՛ «այս ապրանքը, որ ինձ
ես զրկել, ի՛նչ ես մտածել»: Տուն է գնում, ասում են խանութ
գնաց, խանութ է գնում, ասում են՝ տուն գնաց. պարզ բան է,
որ Իվանուշը Սարգիս-աղայի գլխին խաղ խաղալու միտք է ունե-
ցել:

Շտապ գնում է Իվանուշի տունը. այս անգամ տանն է
գտնում:

— Պարոն Իվանուշ,— ասում է,— դու իմ գլխին այս ի՛նչ
խաղ խաղացիր:

— Ի՛նչ խաղ եմ խաղացել որ,— հարցնում է Իվանուշը, իբր
բանից տեղյակ չէ:

— Ծն ե՛րբ եմ քեզ ասել, թե տանս համար հարյուր ութսուն
ուրբու ճոթեղեն ապրանք զրկե. ես քեզ ե՛րբ եմ ասել՝ ինձ թի-
թին ու խալմուխ շայ զրկե... այսպես բան չի՛ լինի. ես քո ապ-
րանքը չե՛մ ուզում. շո՛ւտ սայլեր ուղարկի, բարձի, նորից ամ-
բարդ լցրու:

— Ի՛,— ասում է Իվանուշը,— դու առուտուրական մարդ չե՛ս,
ի՛նչ է. դու առուտուրը հանա՛ք գիտես. դու վեքսիլի զորութունը
չգիտե՛ս»:

Վերջապես, խոսքս ի՛նչ երկարացնեմ, բանը դատաստանի է
ընկնում: Խեղճ մարդուն մագիստրատ են կանչում: Իվանուշն էլ
դիմացը կանգնում ու ասում է. «Այս մարդը— մատով ցույց է
տալիս Սարգիս-աղային,— մի օր ինձ իր տունը կանչեց, ասում
է, տան համար այսպես-այսպես ապրանք ապսպրեց, ասում է,
խանութի համար էլ այսքան թիթին ու խալմուխ շայ առավ,
ասում է, վեքսիլ էլ տվեց, թե չեք հավատում՝ ահա նրա ձեռքը,
ասում է ու դատավորների դիմացը դնում վեքսիլը:

Դատավորները դառնում են Սարգիսն. «Սա քո՞ ձեռքն է»,—
հարցնում են: «Հա՛,— ասում է ողորմելին,— իմ ձեռքն է»:
«Այսքան թիթին, այսքան խալմուխ շայ, այսքան ճոթեղեն ապ-

բանք, այս մարդը— Իվանուշին են ցույց տալիս— իր խանութի տղի հետ քեզ ուղարկե՛լ է», հարցնում են, «Հա՛, ղրկել է», ասում է: «է, ինչո՞ւ հապա փողը չես տալիս, տակովն անե՛լ ես ուզում, ի՞նչ է»: Մարդը պապանձում, մնում է: Անամոթ Իվանուշը դառնում, դատավորներին ասում է. «Հո տեսա՞ք, այս մարդը ինձ պարտք եղածը չի՛ ուրանում. հիմի ի՞նչ որ օրենքը հրամայում է՝ արե՛ք»: Օրենքն էլ այսպես է ասում. «Երբ որ մի մարդ պարտունի և փողը կա՛մ չի ուզում տալ, կա՛մ չունի, ժամանակը որ լրացավ՝ խանութը, տունը, ունիւմ-չունիւմը ծախեցեք ու պարտատերերին տվե՛ք»:

Այդպես էլ անում են: Մարդին իր տնից վռնդում են. խանութըն ու ապրանքով լի մարազը կնքում են: Սկզբում թիթիկն ու խալուխ շայն են ծախում, հավատո՞ւմ ես. հազիվ հիսուն մանեթ է բռնում. դու մի՛ ասի, որ երկուսն էլ թրջված են եղել ու, մնալով բորբոսնել ու փտել են: Հետո խանութի ապրանքն են ծախում. այն էլ հինգ հարյուր մանեթ են արժեցնում. վերջը վերջը տանն են հասնում: Տունն էլ հազար երկու հարյուր ոտքի արժեցրին, բայց բանի որ գնող չգտնվեց (այդ կողմից մեր քաղաքացիք լավ են. մինչև որ տեղովը շիմանան, թե տերն իր հոժար կամքով է ծախում՝ ուրիշի տան համար փող չե՛ն տա, չե՛ն առնի), Իվանուշն իր վրա առավ սիրուն տունը: Մնացած պարտքի տեղն էլ ծախեցին տան միջի սարքը, և խեղճ Սարգիսը քնտանիքով, երկու զավակով, բոլորովին մերկ, լալով-լալով ելավ իր տնից ու, երեկվա երնեկ տալու մարդը այսօր վերջին ոգորմելին դարձավ:

Ես նրան ասի՝ «գնանք իմ տունը տեղափոխվենք», բայց նա չուզեց. «Իմ կենալու տեղս,— ասաց,— սրանից հետո սև հոդն է», և քաղաքի ծայրամասում մի փոքրիկ տուն վարձեց:

Այս որ իմանում են թաղի կեցողները՝ խիստ կատաղում են. հայտնի չի՛ ո՞վ, Իվանուշի բակը մի թուղթ է գցում՝ «Թ՛ն կարող ես, Սարգսի տունը վրադ առ, թե չէ, կա՛մ կայրենք, կա՛մ կքանդենք»: Իվանուշին էլ այդ էր պետք. իսկույն հյուսներ է ղրկում, քանդում է տունը, մարազը, խոհանոցը և, ո՞վ գիտե, ում է ծախում:

Այդ միջոցին էլ ես հիվանդանում ու հազիվհազ մահից պրծնում եմ. անկողնիցս որ վեր եմ կենում, հիվանդությունս ամենաքիչը երկու ամիս է տևում, ասում եմ՝ գնամ մի տեսնեմ, ի՛նչ

են անում այն ողորմելիները. գնում եմ, դուռն եմ զարկում՝ դուռը փակ է՝ պատուհանների փեղկերը փակ. դրացու երեխին եմ հարցնում. «Չգիտե՞ս, տղաս,— հարցնում եմ,— այստեղի կենողները որտե՞ղ են»: «Երկու շաբաթ է,— ասում է,— որ նրանք մի մեծ սայլ նստած, գնացին»,— ասում է: «Ո՞ւր գնացին»,— հարցնում եմ: «Չգիտեմ»,— ասում է «Տիկի՞նն էլ գնաց»,— հարցնում եմ: «Տիկինն էլ գնաց»,— ասում է,— բոլորն էլ գնացին»: «Թագու՞շն էլ գնաց»,— հարցնում եմ: «Թագուշն էլ գնաց,— ասում է,— բոլորն էլ գնացին»: «Ո՞ւր գնացին»,— հարցնում եմ,— չգիտե՞ս»: «Չէ՛, չգիտեմ,— ասում է,— գնացին»:

Մեկենիմեկ, ճիշտն ասեմ, չհավատացի. «Երեխան կա՛մ չգիտե, կա՛մ սուտ է ասում»: Դիմացի տունն եմ մտնում, առջևս մի տարեց կին է դուրս գալիս. «Այսպես, այսպես բան, ասում եմ. երկու ամիս սրանից առաջ, այս տունը— մատով էլ ցույց եմ տալիս— Աստվածածնի թաղից, էրիկ-կնիկ, մի աղջիկ ու մի տղա հետևները՝ տնվոր գրվեցան, չգիտե՞ս ո՞րտեղ են»: «Նրանք տնից ելան»,— ասաց կինը: «Ո՞ւր տեղափոխվեցին»,— հարցրի: «Հայտնի չէ, ասաց տարեց կինը, մի կազակի գյուղ գնացին»:

Այսչափ միայն իմացա, որ Սարգիսը, Մարիամը, Թագուշն ու Թորոսը վարձով բռնել են սայլ ու գնացել մի կազակի գյուղ, ո՞ր կողմը, ի՞նչ գյուղ՝ չիմացա: Վեր կացա, տուն գնացի:

Վրայից անցնում է քսան տարի, գուցե ավելի էլ: Ստավրոպոլի կողմից մի մարդ է գալիս և մի հրավերքի հանդիպում ենք. խոսք է բացվում Սարգսի մասին. «Հապա,— ասում է,— այսպես այսպես ստանիցայի անունն էլ ասում է, բայց մոռացա, մտքիցս գնաց, եկան,— ասում է,— սկզբում շատ նեղություն քաշեցին, բայց վերջում կարգի ընկնելու վրա էին. խուրիխայի ժամանակ Մարիամը վարակվում, մեռնում է. նրա հուկից, երկու օր անց, Սարգիսն էլ է մեռնում, մնում են Թագուշն ու Թորոսը մենակ. մոտենրը մի հայ-քրիստոնյա չկա: Վերցնում, երկուսն էլ ուսի տերտերով են թաղում: Դժբախտ Թագուշը մնում է անտեր ու որբ»:

Այդ միջոցին մի կազակ մեծավոր տեսնում է Թագուշին, հավանում: Օխտը ամսից պսակվում են: Թորոսն էլ սկզբում առուտուր է անելիս լինում. հետո առուտուրից ձեռք է քաշում, մըտնում գունդ:

Այդ ստավորուպոլցուց, ահա, այսքան բան իմացաւ:

Անցյալները մի ուրիշ մարդու հանդիպեցի. ասացին որ նա-
յնն՝ դա էլ է եղել նույն ստանիցայում: Քաղուշի մասին ասում
է, որ նա հիմի որբեակայրի է: էրիկը խիստ հարբեցող է լինում.
յուսելուս ընկերների հետ խմում է ու տուն գալիս կնոջը բռնեց-
քով, մտրակով ծեծում, ձեռքն ինչ ընկա՛վ՝ նետում երեսին: Մի
օր էլ էրկանը մեռած տուն են բերում: Քորոսի մասին էլ ասաց,
թե՛ ձիարշավի ժամանակ ձիուց վայր է ընկել, վիզը կտորել ու
երեք օրից մեռել է: Քաղուշը հայերենը բոլորովին մոռացել է,
հավատն էլ փոխել է:

Ահա այս է պաց աղպարի պատմութիւնը:

Աստված կներե՛՞ Իվանուշ Մայասիլովի այս արարմունքը:

ՏԻՐԱՅԻՆՍ՝

— Բարի իրիկուն, դրացի՛:

— Բարի տեսանք, Մկրր-աղա, էս ո՞ւր ես գնում:

— Ոչ մի տեղ էլ չեմ գնում. ներսը տաք կրակ է. նստի՛
կթմրիս, պառկիս՝ քունդ չի գա, կբրտնիս. մանավանդ՝ աման
ճանճերն էլ շատ անամոթն են: Խմբով վրագ կթափվին ու ախ-
պես կկծեն, որ ձեռներից պրծնելիք չկա: Գնամ, ասի, նոր դրո-
ցուս հետ նստեմ, մի քիչ գրույց անեմ... Աման, ախպեր, բեղա-
րեցինք էս ամառվա ձեռքը. աշունը գար՝ օր տեսնեինք... Ի՛նչ
նոր բան կա:

— Բան չեմ լսել: Ի՞նչ է, բան կա՞ որ:

— Չէ՛, այնպես հարցրի, գուցե, ասի, դու լսած լինիս: Կր-
զիր հո ստանում ես: Նեմեցն ու Ֆրանցուզը հաշտվեցի՞ն...
— Նրանց հաշտված լինելը վաղուցվա բան է. հիմա Ֆրան-
ցուզը պատերազմական տուգանքը վճարելու վրա է:

— Հաաա՛, օ՛խ, լավ է. մեկ էլ ջուրը շտեսած թող վարտի՛ր
չհանի... Հորիցդ, եղբայրներիցդ գիր ստանո՞ւմ ես. ինչպե՞ս Ա՛:

— Վաղուց է գիր չունիմ:

— Բա չիմացա՞ր՝ ո՞ւմ մեռելի գանգերը կզարնեին:

— Մեռելի գանգ գարկի՞ն որ. կարծեմ բան չլսեցի:

— Բա՛, դարկին, գարկին, մեկ չէ՛ երկու-երեք անգամ գար-
կին. հայտնի բան է, որ հարուստի մեռել պիտի լիներ. ժամկոչի
գարկելուց էր երևում. պարզ, որոշ, հանդիսավոր կզարկեր. բայց
լավ ուշադիր շեղա՛ տղամարդի՞ էր, թե՞ կնիկմարդու. տեղիս սո-
վորութեամբ, հո գիտես, թե մեռնողը տղամարդ է, առաջ մեծ զան-
գը կզարնեն, հետո՞՞ փոքրը. եթե կնիկմարդ է՝ առաջ փոքրը կզա-
րնեն, հետո՞՞ մեծը: Երբ որ կինս պատշգամբ էր դուրս եկել, առաջինը
նա ինձ ասաց, որ մեռել կա, արդեն մեկ-երկու հատ գարկել էին.
այդպես էլ չիմացանք՝ տղամարդ, թե կնիկմարդ լինելը.
ով ուզում է լինի՛՝ Աստված ողորմի հոգուն: Միտք եմ անում,
միտք՝ արդյոք ո՞վ պիտի լինի— հեշ չեմ կարողանում իմանալ:
Պատուհանիս տակով էլ մարդ շանցավ, որ հարցնեի: Մեկ մար-
դու վրա կասկած ունիմ, նա էլ այդքան տարիքով չպիտի լիներ.
կնիկս էլ նույն բանն է ասում. է՛հ, ով ուզում է լինի՛՝ Աստված
ողորմի հոգուն... Վատացավ մեր քաղաքը, վատացավ, առաջվա
տարիները՝ ամիսը մեկ մեռել որ լիներ՝ ամբողջ քաղաքը ոտքի
կկանգներ. հենց որ մի ջահել տղա կամ ջահել աղջիկ մեռներ, իս-
կույն հորերու կամ մորերու գլխին կհավաքվեին. «Լավ չնայե-
ցիք, ուժերից վեր գործի դրիք, ցավի, դարդի բերեցիք. ջաղուժից
չզգուշացաք». ո՞րը ասեմ, տեսակ-տեսակ բաներ կհնարեինք,
որ ուրիշ ընտանիքների տերերն զգուշանային: Ծիշտն ասենք,
այն ժամանակ մեռնելը քիչ էր պատահում: Իսկ հիմա՞. հիմիկ-
վա բանը պրծած է. ո՛չ թե շաբաթը, այլ օրը մեկ, դեռ երկու մե-
ռել է լինում: Խելքս չի հասնում, թե ի՞նչ բան է սա. մարդի՞կ
են հին ժամանակի պապենական սովորութիւնները մոռացել,
դրանից է, թե՞ բժիշկներն իրենց արհեստի մեջ վարպետ չեն, թե՞
աշխարհս շուտ է եկել, թե՞ հողն ու ջուրն իրենց առաջվա ուժը
չունին... ջանքում, հո սուտ չէ: Խրիմից նոր եկած տարիները ծե-
րերն ասում էին (ես էլ շատ ջահելներից չեմ. Աստծով, մեծ պա-
սը որ գա՛՝ յոթանասունիննս կլրացնեն ութսունի մեջ կլտնիմ),
մենք էլ աչքներովս տեսել ենք, առաջվա տարիները, մեղա-
յաստծու, այսպես ճոճոճ ստոնամանիք, բուք ու բորան մինչև
ապրիլ ամիսը ո՞վ էր տեսել. վերջին ցրտերը բարեկենդանի օրե-
րին էին լինում. ջահելները սահնակներով փողոցից փողոց, թա-
ղից թաղ ման կգային. ցուրտը մի քիչ թշները կկծեր՝ պրծավ գր-
նաց. հենց որ մեծ պասը մտնեինք, ձյունը կսկսեր հավել, եղա-
նակն էլ՝ կմեղմանար: Մոռագարդի կիրակին ուրիները տերևներով

՝ Դրացիս:

կծածկվելին. դու մեկ հիմա նայե, հա՛յ հա՛յ, հազիվ մայիսի տա-
նը հինգին ծառերը կզարթնին...

Մառի միրգն էլ առաջվանը չէ... քաղաքիս մեջ բազ մնա՞ց որ
ո՛րը արմատով շորացավ գնաց, ո՛րը ճիճուն կերավ, ո՛րը ցուրտը
տարավ... Բույսերն էլ առաջվանը չեն. առաջվա հոտոտ բույսերն ու
ծաղիկներն ո՛ւր են. առաջվա տարիները սովորութուն կար մայի-
սին խոտի վրա պառկելու. դա ամեն ցավից, յարա-փարայից կա-
ղատեր. հիմա ա՛յն խոտն էլ չկա, ա՛յն խոտի վրա պառկողները
կէ... է՛, է՛, է՛Ֆ, որդիս, հայի բանը պրծել է...

Էդ չէ, համա լսել եմ՝ հրամանքդ բազ ես ուզում տնկել. լավ
բա՛ն է բազը. աստված աճեցնե. բազ ասածդ Աստված սիրում է՝
ասում էին ծերերը. բազ ու բոստանի համար Աստված շատ ողոր-
մած է. ջուրն ու արևը միշտ անպակաս է անում. Աստված տա,
Աստված տա, միջից միրգն անպակաս լինի. բակի մեջ բազ ունե-
նալը լավ բան է... Բայց տես, շիճի թե բակիդ մեջ ուրի տնկես.
աստ է թե ղորթ է, հորերիցս-պապերիցս լսել ենք, որ ուրի իր
տեկողի վզի հաստությանը դարձավ թե չէ, տնկողը հանկարծա-
կի կընկնի, կմեռնի, շատ փորձած բան է: Մեկ էլ լսել եմ, որ
հրամանքդ հավ կսիրես. դա էլ վատ բան չէ. բայց, կներես, ինե-
նից քեզի խրատ շիճի, աղավնի շպահես, որդիներդ, տնե-տեկ
հեռու, դատարկուն կլինին, որովհետև ամբողջ օրը աղավնիների
եռերից կընկնին, փողոցի փողոց, անկարգ երեխաների հետ կշափ-
չփեն, դրացիների կղմինդրները վար գցելով կտոր-կտոր կանեն,
իբրև էլ գիր-կարդումի հետ հավես չեն ունենա... Ի՛նչ խոսք
այս բաները հրամանքդ մեղանից լավ կհիմանաս: Բայց այդ ինչ
պե՛ս եղավ, որ հավն ու բազը մի բակի մեջ ես ուզում ունենալ
Զգիտեմ, կարծես անհարմար բան է. այդ էլ քո իմանալու բանն
է: Հավը որ կա՝ վարուցանքին խիստ հակառակ է, հնդուհավի
ամենասիրած բանն է ծառերի վրա թառել և գալ տարվա բաց-
վելու տերևներն ու ծաղիկները կտկտել ուտել. սազը որ՝ որով
ման գա, այնտեղ երեք տարի խոտ չի բուսնի. չգիտեմ, դու փե-
տես. կա՛մ մեկին պիտի հավես անես, կա՛մ մյուսին. ասում ես
Երկուսը միասին լինի՞— չգիտեմ: Թե ասես հավերին հավանե-
ցում փակես, դա էլ մի ուրիշ ցավ է, բոլորը կոչլուտին. այդ բա-
նը ես տեղով գիտեմ...

Լավ բան է պարտեզի հավեսը, մեր հայրերն ու պապերը
սը Ղրիմից եկան, ի բնե հավես ունեին պարտեզի և տեսակ-տե-

սակ բույսերի. քիչ կպատահեր, որ կանաչեղենն ու միրգը շու-
կայից բերվեր. խնձոր, տանձ, բալ, կեռաս, սալոր, ծիրան, հա-
ղաբլ, վարունգ, մաղադանոս, սամիթ, բողկ, պաղրիջան, տոլմա-
յի դդում, գետնախնձոր, սոխ, սխտոր, ուրիշ տեսակ-տեսակ
բույսեր, լոբի—բոլորը տանից էր: Այսօրվա պես միտքս է օղոր-
մած-հոգի մայրս ձեռովա պաշարեղենը, համարյա ամբողջովին,
տանից էր հանում, ցանկապատած մի պարտեզ ունեինք. իր ձեռ-
քով կփորեր, իր ձեռքով կցաներ, իր ձեռքով կջրեր, իր ձեռքով
էլ կանաչին ու միրգը կքաղեր. տակառներով վարունգ թթու կղբ-
ներ և պորինջան ազը կղներ. խնձորն ու տանձը ձեռովա համար
կապ-կապ կշորացնեք. սոխ ու սխտորն էլ՝ նմանապես. նրա մա-
ռանն ու նկուղը մտնեիր՝ մրգավաճառի խանութի պես մի բան
էր. շուկայից շատ քիչ բան կառնեինք. մի կով ունեինք, բայց
տարին տասներկու ամիս ո՛վ շուկայից արդար յուղ, սեր, մա-
ծուն, կարագ ու պանիր ներս կբերեր. մեղալաստածու Այս քսան-
հինգ-երեսուն տարի է, որ այդպիսի բաներից ժողովուրդը կտր-
վեց: Հիմիկվա կանաչք ամբողջ օրը պատուհանի առջև կամ փո-
ղոցի դռանը նստած՝ շը՛թ-շը՛թ կուտ կուտեն ու դրացուն կբամ-
բասեն...

Քաղաքիս ծառերն ու պարտեզները վերացան, մարդկանց
էլ— հատկապես երեխաների— հիվանդութունն ու ցավը շա-
տացավ. այս էլ նկատված բան է. ճիշտ է, առաջները մեր քա-
ղաքում հիմիկվա պես մեծ մեծ, թիթեղի կտուրներով, աղյուսի
տներ չկային, բայց այսքան էլ կիսավեր տներ, բաց բակեր չկա-
յին, մայիսը որ գար՝ քաղաքը ծաղկով լիքը մի զամբյուղի էր
նմանում. վարդի, շուշանի, ռեհանի, ցայգածաղկի, անանուխի
հոտը աշխարհ կփռվեր. հազար տեսակ հավեր, բլբուլներ ծա-
ռերի վրա կղայլայլեին. առավոտ կանուխ տեղեղ որ էլլիր,
պարտեզ մտնեիր՝ ժամ գնացածի պես մի բան կլիներ... է՛, է՛,
է՛, բալամ, անցավ այն ամենը, մեկ էլ ետ գալու չէ... Վերջի
եկողները առաջվաններին չհավանեցին, նոր լավ բաներ շո-
վորեցրին, հները մոռանալ տվին. տեսակ-տեսակ, խարդախ մար-
դիկ եկան օտար տեղերից, քաղաքը տակն ու վրա արին. թե
ունեցել ես՝ փնտրի... Կորավ մեր սիրուն, գեղեցիկ նախիջևանը,
վա՛խ, վա՛խ... Դու մի հիսուն-վաթսուն տարի առաջ տեսնեիր՝
այսպե՛ս էր մեր նախիջևանը... հիմի ի՛նչ մնաց որ. մարդիկ էլ
այն չեն, տներն էլ այն չեն, մարդկանց նիստ ու կացն էլ այն չէ,

չուքն էլ այն չէ, հողն էլ այն չէ՝ որ ասեմ՝ օգն էլ այն չէ՝ ասածս սուտ չի լինի...

Առաջվա ժամանակները ցավերի տեսակներն էլ, գիտես, այսօրան շատ չէին: Թորախոր շատ հազվադեպ էր, հազարից մեկ էր պատահում. հիմա ի՞նչ ես ասում. տուն կա՞ որ երկու-երեք հոգի թորախտ շունենա, խոլերան հո՞ մի անգամ մտենուց հետո էլ չելավ քաղաքիցս. հենց որ վարունգի թուփը սկսում է ծաղ-փավորվիլ՝ խոլերան էլ դուրս է գալիս. մեր ժամանակները խոլերան հե՛ն լաված չէր... Սուտ չէ, մարդուս փորացավ պատահում էր. դրա էլ շատ հեշտ ճարն ունենք. կերթալիք շուկայից մի քիչ գիտոր կաններ, հավանգի մեջ մի լավ կծեծեիր, կշորացնեիր, ծաղե կանցներ, ջրի հետ խառնած մի քիչ կիտեիր. մեկ-երկու տր ֆուսեր՝ ցավի իզը-թողը չէր մնա: Զերմ էլ կպատահեր, բայց հիմիկվա պես չիմանաս. շատ հազվադեպ. տարեց կանայք հոգու վարձքի համար ի՛նչ տեսակ ասես տնային դեղեր պատրաստած հունենային, վերցնեին կուտային, իրար ետեից յոթ օր խմեցիր՝ անցավ գնաց, ցավեղ ազատ կլինեիր. խինին ո՞վ էր լսել. մենք մեր սովորութեամբ օշինդր կուտայինք կամ՝ դառն նուշ, դա էլ խինինի բանը կաներ. բայց տալու կերպը գիտեին...

Մտքես դուրս չի գալիս՝ այդ ո՞ւմ մեռելի զանգը կզարնեին... Ափսո՞ս, ափսո՞ս, քիչ առաջ խնձոր ծախող Օվակիմի խանութի տղան եկել էր ինձ մոտ. հարցնեի, իմանայի. ինչո՞ւ մոռաց որ... է՛, է՛, է՛, զխացավանք տվի, թողութուն արա՛, գիտե՞ս, մեկ խոսք կա՝ «ամեն մարդ իրեն տունը, հավին...»:

— Զանրմ, ինչո՞ւ ես վազում, նստի գրույց անե՛նք. տանք հո մանր երեխեքդ շեն լալիս:

— Այդպես է, բայց չէ՛, երթամ, կովերը նախիրեն վաղուց են եկել. գինս կովը կթած, սամովարն էլ պատրաստած ինձ է մնում:

— Չէ՛, չէ՛, մնա՛, այս իրիկուն մեզ մոտ թեյի մնա:

— Մնամ, բայց կինս տանը մենակ է, ո՛ւ...

— Դրա էլ ճարը կգտնենք. ես հիմա կզնամ ծառայիս կասեմ, որ գնա, իմաց տա նրան (այդպես էլ արի). մենք երկուս աչատեղ փողոցի դռանը հովին թեյ կիտենք, կնիկմարդիկ էլ իրենց հաճար, բան շունիս, ներսը թող խմեն: Այդպես լավ կլինի՞

— Վատ չէ, կարծես, բայց հրամանացդ ի՛նչ նեղութուն...

— Նեղութունս ո՞րն է. էդ որ դրացիութուն են ասում՝ բա ինչպե՞ս է լինում. հեշ լած չե՞ս, թե՛ լավ դրացին լավ բարեկամից էլ լավ է:

— Այդ այդպես է. է՛յ տղաս, էդ առաջվա ժամանակն էր. հիմի կհասկանան, թե դրացիութուն ինչ ասել է, դու մի դրանց բա-կեքք մտի՛, որի՞ բակում միջադուռ կտանես. նոր շինած տները մեջ հո էլ սովորութուն չկա միջադուռ անելը. օւնեցողներն է՛ր՝ ո՛րք առջը տախտակ դրել գամել է, ո՛րն էլ քար է քաշել. ո՛չ թե գեալ-գալ, այլ մեկ-մեկի երես տեսնել կուզե՞ն որ. մեկ-մեկի վրա պակասութուն նկատել, մեկ-մեկի վրա խնդալ, մեկ-մեկի հավ ու հնդուհավ գողանաք, սատկած շուն ու կատու մեկ-մեկի բախք ցցել՝ առ է հիմիկվա դրացիութունը: Առաջվա դրացիները մեկ-մեկու հետ հարազատ ախպոր պես կապերին. նրանց կանայք էլ իրար հետ նույնպես սիրով էին լինում: Օրք մեծ է. ամբողջ օրը լույս ցերեկ չի լինի, գիշեր էլ կա. մութ գիշեր ժամանակ, երբ որ, Աստված հեռու անի, մի փորձանք պատահի, ո՞ր բարեկամիդ պիտի վազես, փողոցից փողոց, թաղից թաղ... էհ, ախպերս, ո՞ր մեկը ասեի, ասելով բերանս մազ բռտալ, ասողին էլ լսող է պետք. մեկ ձեռքը ծափ չի տա... Հա՛յ դրա ի՛նչն ասեմ, այդ մեռելի զանգակը մտքիցս դուրս չի գալիս. գիտե՞ս. արդյոք ո՞վ պիտի լիներ այսօրվա մեռնողը, միտք եմ անում, միտք՝ խելքս բան չի կարում: Կեցի՛ր, կեցի՛ր, նայե Մաթոս-ազայի տան մոտով ո՞վ կանցնի, չե՞ս ճանշնար. Աստվածածնի ժամի ժամկոչը չէ՞. նա է. կարծես, կեցի՛ր, ես մեկ պա՛հ երթամ իմանամ... Ա՛յ տղա, այ տղա, է՛, է՛, Պապուկ-աղա, ա՛յ տղա, կեցի՛ր, կայնե՛, բան ունիմ ասելու. այսօր մեռելի զանգ զարկի՞ք:

— Զարկի, է՛ հետո՞:

— Որի՞նն էր:

— Մուլան Ղազարոսի աղջկանն էր, չգիտե՞ս, ի՛նչ է:

— Մուլան Ղազարոսի աղջկանն էր, հա՞. ա՛յ մարդ, փառն արի. կուտարի՞նն էր. ճի՛շտ ես ասում. Աստված ողորմի հոգուն (ժամկոչը գնում է իբ բանին, դրացիս գալիս է մատու նստում): Հա՛յ, ինչն եմ ասել, Մուլան Ղազարոսի՞նն էր, հա՞... վա՛խ, վա՛խ, հոգիս, զոհարի պես աղջիկը գնաց. կամ տասնվեց տարեկան կլիներ, կամ տասնօխտի մեջը... մեռավ, հա՞, Աստված օգորմի հոգուն. թյո՛ւֆ, թյո՛ւֆ, հազար ափսոս, մեռավ, հա՞, երե՛կ իրեն. շուտ ազատվեցավ այս փուշ աշխարհքից, ու մեղք

նից առաջ խոնկի ծառին արժանի եղավ. հա՛յ, ինչ անեմ, լավերը գնացին, գեշերը մնացին. մեռավ, հա՛ա՛...
— Մկրր-աղա, ինչո՞ւ այդպես շատ ես ցավում ազգականդ շպիտի լինի, կարծեմ...

— Ազգականս էլ թող շլինի. ես նրան ազգականիցս ավելի էի սիրում. կինս էլ՝ նմանապես. մի տեսնե՞իր ինչպիսի՞ աղջիկ էր. թե աշխարհքիս վրա մի կատարյալը կար՝ դա Կատարն էր. այնպես աղջիկ ո՛չ եղել է, ո՛չ էլ լինելու է... գոնե իմանանք՝ ե՞րբ պիտի թաղեն, հատուկ գնանք, մի բուռ հող գցենք վրան՝ վարձք է:

(Մտաւ մեկ երկու զավաթ թեյ բերեց մատուցարանով):

— Համեցե՛ք, Մկրր-աղա, լիմոնով կկամենաս, թե՞ սերով...
Թե որ չէ՞ ումով կկամենա՞ս:

— Ախպեր, այս տաքերիս ում կվայելե՞ հեշ:

— Լսե՛լ ես, ասում են՝ սեպը սեպով կհանեն:

— Ուզում ես ասել, որ թունդ ումը ներսի տաքութիւնը կպաղեցնե, ծարավը կկտրե՞: Մեկ էլ ի՞նչ նեղութիւն:

— Նեղութիւնս որն է, վազն արի այդպիսի խոսքերից. աղջի՛, ումին շիշը բեր. գիտե՞ս, էն ընտիր տեսակի ումը, որ ես ինքս եմ խմում (այնինչ՝ սո՛ւտ, կյանքիս մեջ ում կամ պունջ տանս խմած չեմ):

— Վազն արի, դատարկ բան է. խնջո՞ւյք է, ի՞նչ է, որ թանկնոց ումը դուրս ես հանում. հասարակ տեսակի էլ որ լինի՛ կլինի. գիշերվա կերածը կորած է. լսե՛լ ես առաջվա ծերերի խոսքը... Հա՛յ, ի՞նչ ասեմ: Կատարը մեռավ, հա՛... (ծառան ումը բերեց):

— Համեցե՛ք... էդ ի՞նչ է արածդ, շա՛տ լից, ասում եմ. էդ ի՞նչ է դա. մի կաթ բան լցրիր ո՛ւ... Սպասի, ես քեզ լցնեմ: Աղջի՛, շիշը բեր այստեղ...

— Կլինի, հոգիս, կլինի, ասում եմ. էդ ի՞նչ արիր, վրայից թափվեց, ո՛ւ... որ հարբեմ, ինձ ո՛վ տուն կտանի. խի՛, խի՛, խի՛, շեն կենաս, բարի վայելես նոր տունդ. որդիներիդ, թոռներիդ հարսանիքը անես մեջը. ո՛ւՖ, համա թունդ է. ախպե՛ր, շատ լցրիր. ասի՛ բոլ եղավ, շատ է: Կենդանութիւն, բախտավոր լինիս. բարի դրացի լինիս, Աստված բանդ հաջողի:

— Ամեն-ամեն, շնորհակալ եմք, անո՛ւշ: (Աղջի, մի-մի գավաթ էլի՛ բեր):

— Ես հրամանոցդ խեղճ Կատարի բանը պատմեմ. բայց նայե՛, խոստովանք լինի, շլինի որ բերնեդ հանես. մի ականջիցըդ մտնե, մյուսից ելլե. հոգիս, զգույշ եղիր, մարդու բան մի՛ ասի. սուտ է, դորթ է՝ ինչպես լսել եմ՝ այնպես էլ հրամանոցդ կպատմեմ. դորթը, սուտը Աստված գիտե:

Պատերազմի տարին էր. մեր քաղաքից գունդ-գունդ զորք կանցներ. ո՛րը հանգիստ կառներ երկու-երեք օր, ո՛րն էլ այնպես շտապով կանցներ, երբ որ դրութիւնը լուրջ լիներ: Կատարի հայրը, Ղազարոսը, Խարկով տոնավաճառի էր գնացել, այնտեղ մրսել, ցավի էր հանդիպել. ուրիշ գնացողներ ետ եկան. նա, խեղճը, մնաց, երբ որ ետ եկավ, արդեն Ռոստովի դեղձը հասնելու վրա էր. էդ ինչքա՞ն է անում. շորս ամիս է անում. հինգ ամիս է անում... ահա այդքան ժամանակ կնոջ երեսը տեսած չէր. այս բանիս լա՛վ մտիկ արա, որ բանի էութիւնը տեղովը հասկանաս: Բոլորիս տները զինվոր մնաց: Ղազարոսի տանն էլ երեք զինվոր մի սպայի հետ մնացին. շորս օր մնալուց հետո հրաման եկավ, որ գնան. այդ սպան սաստիկ հիվանդանում է. հեքիմ-բժիշկ գալիս են ոնցեպտ են գրում, դեղատնից դեղ-բան բերում— չի օգնում. քանի գնում սաստկանում է. նրա գունդը գնում է, ինքը՝ մնում: Մտալի, կառապանի խոսք ու զրույց է. ո՛վ իմանա սուտն ու դորթը. ասում են, թե սպան Ղազարոսի կնոջը խոսք է նետում, հետը նիստ ու կաց անում, գրկվել, համբուրվել, կողք-կողքի նստած թեյ խմել, հաց ուտել. այս լինում է, ախպերս, հունիսի սկզբին. մինչև օգոստոս այս սպան մնում է և ապա գնում իր տեղը. գնալու ժամանակ, ասում են, Ղազարոսի կնոջը պատուհանից լաց լինելով նայելիս տեսնողներ են եղել. թե սուտ են ասել, թե կնոջ մեղքի տակ են մտել՝ աստված իրենց դատաստանն անի:

Սպան գնում է. տասնհինգ-քսան օրից Ղազարոսն էլ գալիս է: Տեսնում է, որ կինն առաջվանը չէ. վիզը թեքած, երեսի գույնը փոխած, երբեմն տրտում, երբեմն էլ աչքերը լաց լինելուց կարմրած: Ղազարոսը դրացիներին, ազգականներին պատմում է, նրանք էլ մարդու մտքի մեջ կասկած են գցում. ծառաներին իր մոտ է կանչում. հարցուփորձ անում և, մարդը ավելի է կասկածի մեջ ընկնում: «Ո՞վ տվեց այս կերպասի շորդ, ասում է, կարծեմ չունեիր»: «Այս, ասում է կինը, Ռոստով գնացած ժամանակս հա-

նապարհին գտաւ: Կառապանին է հարցնում. «Յոստովի ճանապարհին տիկինդ բան գտե՞լ է», — ասում է: «Չէ՛, այդպիսի բան եղած չէ», ասում է կառապանը: «Այս մեղալիտնք քեզ ո՞վ տվեց», «Սաղաթելի խանութից ատա», — ասում է: Մարդը դիտմամբ գնում է Սաղաթելի խանութը, հարցնում: Այդ էլ սուտ է գուրք գալիս: Նրա կինը ո՛չ խանութ է մտել, ո՛չ մեղալիտն է առել: «Մեղալիտնի մեղքի աղայի նկարը քեզ ո՞վ տվեց», — ասում է: «Գտա», — ասում է:

Մեր Ղազարոսն արդեն տեղով իմանում է, որ բանին մեր բան կա, բայց չի ուզում միանդամից բան սկսել, սուտ է մնում: Բայց եկած օրից (տեսնում ես՝ ինչպես խելքով է շարժվում), մի անգամ էլ կնոջ մոտ չի պառկում. այսօր հիվանդ եմ, ասում է. վաղը տոն է, ասում է, մյուս օրը պասը պատրվակ է բերում. մյուս կողմից էլ սկսում է հետեւել. հեշ բիզը տուրակի մեջ կպարտկվի: Ամառը կանցնի, տեսնում է, որ կինը ծանրած է. ձայն չի հանում. աշունն էլ անցնում է, դեռ երեխան աշխարհ չի գալիս. պարզ բան է՝ եթե իրենից լիներ, վաղուց ծնած պիտի լիներ. էլի ձայն չի հանում. մարտի սկզբին կինն ազատվում է և լույս երեսով, շեկ մազերով, կապույտ աչքերով, գեղեցիկ մի աղջիկ է բերում — երևում է, որ ապօրինի է. ուզում ես ամիսները համրե, ուզում ես խեղճ երեխի երեսին նայե: Ղազարոսը, ինչպես որ գիտես, թուխ է. ողորմած հոգի կինն էլ նրանից ճերմակ չէր, երկուսն էլ թուխ էին. խոսք կա՞ որ: Ղազարոսը էլի ձայն չի հանում, ասում է՝ ազգականներին մեջ կձենձնվի, թե Ղազարոսի կինը ապօրինի երեխա է բերել: Երբ որ մանկաբարձուհին Ղազարոսին հարցնում է՝ աղջկանդ ի՞նչ անուն տանք. նա էլ ասում է՝ «Կատար դրեք անունը, կնոջս անունը թող վրան լինի, որպեսզի կինս որ մեռնի, նրա հիշատակը չկորսվի»: «Այդ ի՞նչ խոսք ես ասում, ասում է մանկաբարձուհին վախեցած, խեղճը ինչո՞ւ պիտի մեռնի որ»: «Այդ էլ աստված գիտի» — ասում է Ղազարոսը: Երեխային տանում են ժամ, տերտերներով, կերտներով, եկեղեցական հանդեսով կնքում, մկրտում, տուն են բերում. ազոցկանն էլ ինն օրից, ինչպես սովորություն է, անկողնից ողտառող վեր է կենում. բայց էրիկ-վնիկ մեկը մյուսին բան չեն ասում, ամեն մեկը իր սրտի մեջ շարունակում ունի. սուտ նստում, սուտ ուտում, սուտ պառկում են (էլի ջոկ-ջոկ):

Մեկ օր, վաղ առավոտ, Ղազարոսը մոտտով է գնում և 4-տը մի սպասուհի բերում՝ գիրկն էլ երկու ամսական մի երեխա: Սպասուհու եկած օրը, ճաշից հետո Ղազարոսի կինը մեկնիմեկ սկսում է կանչել. «Վա՛յ, վա՛յ, սիրտս կեքի, չեզարս կկտաքքտի», օգնություն արեք, հեթիմ կանչեցեք»: Ղազարոսը՝ «Բան չկա, բան չկա, ասում է, երեի կաթո շատ է, գլխիդ է դարկել. մի քիչ պառկի, կանցնի»: Կառապանին էլ պատրվակով Քիրոսանի շախթն է ուղարկում — այնտեղ ածուխն էժան է լինում: Երբ կինը երկու ժամ տանջվում է, Ղազարոսն ինքը գնում է և բժիշկի տեղը մի տերտեր է բերում ճաշակելու. ճաշակ առածին պես, կինը հոգեն տալիս է:

Ղազարոսն անում է աղջկան ու տալիս սպասուհու ձեռքը. «Դու հիմա ծառայություն մի անի, ասում է, երեխայիս ծիծ տուր»: Շտապով մեռել լվացող կնկա եակից մարդ է ուղարկում, ատաղձագործ կանչել տալիս, մի դագաղ է առավիրում: Երբ օր ազգականները գալիս են, մեռելին արդեն սեղանի վրա պառկած են տեսնում, շորս կողմն էլ մի-մի աշտանակ՝ վառած կերտնեկրով: Հայրը, մայրը, ազգական-բարեկամները կասկածանքի մեջ են ընկնում, բայց ձայն չեն հանում, լեզուները կծում են, լուռ մնում: Երբ որ իրիկնադեմին դագաղը պատրաստ է լինում, տերտեր-տիրացուները գալիս, մեռելը ժամ են տանում. մյուս օրը վաղ առավոտյան, ժամը յոթին պատարագ են անում ու, դրանից հետո, բողկի պես կարմիր, առույգ կնոջը սև հողն են դնում: Թաղումի ժամանակ Ղազարոսի աչքից մի կաթիլ արցունք չի կաթում. լաց չիսկը չի գալիս, փայտի պես լուռ է մնում:

Տուն որ գալիս է՝ գրկում է որբուկին, համբուրում է ու ասում (գրացիների խոսք է, սուտ ու դորթն ո՞վ գիտե, դե այդպես են ասում). «Անօրենը երկնավորից գտավ իր պատիժը. խեղճ երեխա, դու ի՞նչ մեղք ունիս, ապրե, Աստված օրդ երկնցնե. ունիմ-չունիմս քոնն է, ինչ-որ պիտի վաստակիմ, այն էլ քոնն է. ես բախա շահես, գոնե դու տես. իմ գավախ էլ որ չլինես, շան լապտ հո չե՞ս, էլի մարդու դաժակ ես. տասը տարի մորդ հետ հաց կերա, Աստված գավախ չտվեց. մաքրումս կար մի հոգեզավակ անելու. դե՛ Աստված քեզ գրկեց. մորդ հոգին էլ Աստված լուսավորե»: Ասում է ու լալիս. շա՛տ է լալիս, ասում են:

Մի որբևայրի, չոր-գլուխ, տարեց կին, հեռու ազգական է ունենում Ղազարոսը, իսկույն եակից մարդ է ուղարկում, տունը,

տեղը; ծառա, կառապան, ձի, սայլ, կով, տան ամբողջ սարքը նրան է հանձնում ծծկեր երեխան էլ նրան է հանձնում, շատ էլ փող է բուռը դնում. «Տե՛ս,— ասում է,— օխտը տարի երեսս տեսնելու չես»,— ասում է ու գլուխն առնում՝ անհայտանում է, հեռանում:

Երեխան, Աստու ողորմությամբ, օրեցօր աճում է, գեղեցկանում, շենք-շնորհք ստանում, մեծանում. վրան նայողները հիանում են. իսկը՝ քաշած պատկեր. մազերը գանգուր, ոսկու նման ցոլուն, երեսի ու վզի վրա կախված. աչքերն ի՛նչ ասեմ, կատարյալ փիրուզ, ունքերը՝ դալամով նախշածի պես կամարկամար, երեսը՝ ալ-վարդ, թշերի վրա մեկ-մեկ մատնահար (փոսիկ). բնույթքը. բնույթքով հո՛հ հրեշտակ որ ասեմ՝ սուտ ասած չեմ լինի: Այս որ ասում եմ, երեխան արդեն երեք-չորս տարեկան կլինի: Մի աղքատ որ տեսնում է, օտարական, դարիք որ տեսնում է, ցնցոտիներով մի երեխա որ տեսնում է՝ վրայի եղած-չեղածը, պահարանից ձեռքին հանդիպածը՝ բոլորն առնում, տալիս է նրանց. բոլոր ծեր աղքատներին գլխին է հավաքում, սամովար դնել տալիս, բոլորին իր ձեռքով թեյ է լցնում, խմացնում և ապա ճամփա դնում. բերանի պատառը հանում է, թաղի տղաներին ու աղջիկներին տալիս. «կերեք, քույրիկնե՛րս, ախպերնե՛րս, ասում է, ես դեռ ունիմ, բայց դուք չունիք»: Մանավանդ՝ երբ լսում է, թե մի տեղ հիվանդ կա. վռազ-վռազ վազում է հիշյալ տարեց կնոջ մոտ. «Մամա,— ասում է,— հիվանդատես երթանք,— ասում է,— գուցե խեղճին դեղ պետք է, գուցե բժիշկ պետք է». զոռով, քաշքշելով պառպով կնկանը տանում է հիվանդի տունը. ինչ որ պետք է հիվանդին՝ բոլորն էլ ուղարկում. դեղատնից դեղ է առնել տալիս, թեյ-շաքար էլ տանից է ուղարկում. ո՞ր մեկն ասեմ, այս աղջկա բանը կատարյալ հեքիաթ էր:

Տես որ՝ քիչ մնաց պիտի մոռանայի... Մի օր, մարտի մեկ կինս Սուրբ Գևորգից ոտով տուն է գալիս. օրը մոռալ էր. առավոտից սկսել էր մանր անձրև մաղել. սայլուղին և տան առջև սալահատակը ծնկան հետ ցեխ էր. դրանց տան առջև որ հասնում է կինս, ոտը հենց որ սալաքարին է դնում, սայթաքում, գետին է փոկում, քիթը դիպչում է քարի, արյունը շոռալով ըսկեսում է վազել, ոտի ոսկորն էլ կոտրվում է, սիրտը նվազում: Կատարը պատահանից որ տեսնում է, իսկույն երկրորդ հարկից ցատկում է ցած (լավ է, որ տունն այնքան բարձր չի լինում,

ձեռք ու ոտքը չի վնասում), ուժը պատածին շափ վերցնում է կնոջը, փեշերով երեսի արյունը սրբում է, մյուս կողմից էլ ձայն է տալիս ծառաներին, որ գան օգնեն: Մարդիկ են հավաքվում, մի կերպ վերցնում են կնկանը, ներս տանում. ներս են տանում, վրայի թաց շորը հանում, ցեխն ու արյունը լվանում: Ոսկրաբույժի ետեխց մարդ են ուղարկում. նա գալիս է, ոտքին դեղ կապում. բոլորից հետո իմ ետեխց են ուղարկում: Գալիս եմ տեսնում— ի՛նչ տեսնեմ. կինս անկողնի մեջ պռկած, հագիվ է շունչ քաշում: Առնել, տուն տանելու հեշ հնար չկա. թողութուն եմ խնդրում, որ այս գիշեր— թեկուզ նեղութուն է լինում— այնտեղ մնա. բայց ո՞ր «այս գիշերն» է. լրիվ ամիս ու կես կինս պռկում է պառավի տանը, ես էլ ամեն օր գնում էի: Ահա՛ ինչ որ պատմեցի քեզ քիչ առաջ, բոլորը աչքովս տեսած, ականջովս լսած եմ այդ ժամանակները: Եթե ասեմ, որ հարազատ զավակն այն չի անի իր հորն ու մորը, ինչ որ Կատարը օխտն օտարին էր անում, Քրիստոսի պատարագը վկա որ՝ սուտ ասած չեմ լինի... Աստված հոգին լուսավորե, Աստված հրեշտակների ու սուրբերի հետ նստեցնե անմեղ աղջկան այն աշխարհքի մեջ: Քաղաքումս մարդ կա՞ր, որ Կատարը կա՛մ լավութուն արած, կա՛մ մի անուշ խոսք ասած չլիներ...

Ի՛նչ խոսքս երկարացնեմ՝ օխտը տարին որ լրանում է, մեր կորած Ղազարոսն էլ երեք եռածի կառքով լեփ-լիք բարիքով Սիպիրից վեր է կենում, գալիս է: Գալիս, տեսնում է իր աղջկանը, աչքին չի հավատում, ի՛նչ խնդում, ի՛նչ ուրախութուն... Հրավերք-հրավերքի վրա է անում, հրաժշտութուն, երգ, պար, հյուրասիրութուն՝ քառասուն օր, քառասուն գիշեր...

Քառասուն օրը որ անցնում է, առնում է Կատարին գիրկն ու ասում. «Այսպես մնալով բան չի դառնա. դու, ասում է, սովորել ուզո՞ւմ ես»: «Ուզում եմ, հայրիկ»,— ասում է ողորմած հոգին: «Քեզ որտե՞ղ աշակերտ տամ»,— նորից հարցնում է Ղազարոսը: «Որտեղ էլ որ տաս, ես համաձայն եմ, չէ չեմ ասի»,— ասում է աղջիկը: «Քե որ այդպես է, արի քեզ Օդեսա տանեմ, ինստիտուտ տամ. այնտեղ հարուստի, իշխանի, գեներալների, կալվածատերերի շատ աղջիկներ են սովորում, դու էլ գնա նրանց հետ սովորի. բայց տե՛ս, ո՛չ մեկից ետ չմնաս. տես՝ հինգ-վեց տարուց տասներկու լեզու, դաշնամուր նվագել, պոլկա, կագրիլ, լյանսե պարել, բարձիկներ նախշել՝ բոլորը սովորիս»: «Հա՛,

պապա,— ասում է,— կսովորիմ: «Թե որ այդպես է, ասում է Ղազարոսը, դե քեզ մի շաբաթ ժամանակ եմ տալիս. լա՛վ միտք արա. երբ որ խոսքիդ վրա ամուր մնաս, այն ժամանակ կանեն, կտանեն Օդեսա»: Քիչ մնաց խեղճի լեղին պիտի պատուեր սրտի արախոթությունից, որ շուտով գիր-կարգալ պիտի սովորի Մի շաբաթն անցնում է, հայրը տեսնում է, որ աղջիկը միտքը հեշ քի փոխել, կառքը պատրաստել է տալիս, ճամպրակները կապում է կրկնը խաշ է հանում, աղջկան նստեցնում է կառքը, ինքն էլ նստում է ու քշում ուղիղ Օդեսա, իրեն ձեռքով տիկնոջն (վարժուհուն) է հանձնում, վարձն էլ ինչ որ հարկն է, տալիս ու ինքը ետ է գալիս: Մի երկու ամսից հետո է՛լ չի մնում Նախիջևանում տունը-տեղը դարձյալ այն հեռավոր ազգականուհուն է հանձնում ու ինքը նորից կորչում:

Ութ տարի հեշ բան չի լսվում ո՛չ Ղազարոսի, ո՛չ էլ Կատարի մասին. սաղ են, մեռած են՝ մարդ բան չի իմանում: Երկու տարի սրանից առաջ մի ուս մարդ է գալիս Ղազարոսի տունը պառավ կնոջն ասում է, թե՛ Ղազարոսը շատ ու շատ բարև արավ ասում է, քանի որ ինքս շուտով պիտի դամ, տունս մեզ համար պատրաստի. ես էլ եկել եմ, որ,— ասում է ուսը,— քեզ օգնեմ: Մյուս օրը ուսը շուկա է գնում, մարդ է վարձում, ո՛րը բահի է ավելում, ո՛րը գոմը, ամբարը, մառանն է մաքրում, ո՛րը տույզ գրսից սպիտակեցնում, ո՛րը ներսից ներկում, ո՛րը քանդված փլած տեղերը շինում, ո՛րը կտորած ապակիներն է դնում: Ռոտովից էլ սալ-սալ ընտիր, բոլորովին նոր կահ-կարասի են բերում, հետն էլ մի թանկնոց դաշնամուր, մեկ-երկու շաբաթիկ մեջ այդ տունն այնպես տեսող, գեղեցիկ տուն են դարձնում, սր գեներալ-գուբերնատորի վայել բան է լինում:

Մի կիրակի կնոջս առնում եմ, Սուրբ-խաշ գնում. իրիկույ տունն որ գալիս ենք, դրացիս ասում է. «Մկրր-աղա, նոր լույ գիտե՞ս»,— ասում է: «Չէ՛, ասում եմ, ի՞նչ կա որ»: «Հասցե ասում է, Ղազարոսը Օդեսայից եկել է,— ասում է,— հասն է աղջիկը»,— ասում է: «Ի՛, ճի՛շտ»,— ասում եմ: «Հա, ասում է բոլորն էլ գիտեն»,— ասում է: «Ափսոս որ մոթ է, նրանք էլ նախապարհից նոր եկած. քնհատ կլինեն, թե չէ, մեղքիդ տեղը քնեմ՝ աչքալույսի կգնայի»,— ասում եմ: Այն գիշերը մինչև բոլոր շուկայի գանգերը՝ քուն չեմ եղել: Չանգերը որ զարկում են, խկույն անկողնից վեք եմ կենում, ժամ գնում, ազաթք անում

տուն գալիս. կինս էլ սամավարը դրել, ինձ է մնում: «Հայդե՛, հագնվե՛, ասում եմ, թեյ-բան չեմ ուզում, վեր կաց հագնվե, գնանք Ղազարոսին», ասում եմ, ու ինքս էլ զնգը-զնգը-զոզում— ահա այդպես էի սիրում Կատարին. Աստված ողորմի՛ հոգուն:

Կինս շատ պահանջում է, դուրս ենք գալիս տնից, ուղիղ Ղազարոսին աչքի լույսի գնում: Ներս մտնենք, արարիչ Աստված, ի՞նչ տեսներ. առաջվա փոքրիկ, նախշուն Կատարի տեղ մի կատարյալ իշխանուհի. ի՞նչ եմ ասել. հա՛յ, հա՛յ ութսունին եմ հասել, շա՛տ աշխարհք ման եմ եկել, շա՛տ մարդիկ եմ տեսել, շա՛տ խնջույքների եմ եզել, բայց այդպիսի հիացք բան հեշ տեսած չէի. տեսնելու բան էր, խոսքով չի պատմվել ոչորմած հոգի Կատարի տեսքը. թագավորի տունը որ մտներ, նրա պալատների գարզը կլիներ, ավելի ինչ ասեմ: Հասակը որ՝ լրիվ մի գրել-խով բարձր կլիներ բազաթիս կանանցից, երեսի ձեռմակությունը որ՝ առաջին ձյունը նրա առջև կեղտոտ-մրոտ կերեր. թուշի կարմրությունը որ՝ վրայից վարդ էր կաթում. նույնպես էլ վրայի շորը՝ կերպաս, թավիչ ու թանկնոց, էն ի՞նչ են ասում, մոռացել եմ անունը, բեհեզի պես բան է. կաղինի շափ խոշոր աղամանդներ ականջին, վզին, մատներին, գլխի մազերի մեջ... Այդպիսի աղջիկը ընկնի՛, մեռնի՛, հը՞, այս ի՞նչ է սա, Աստու դատաստան կա՞... վա՛խ, Կատար, վա՛խ, Կատար...

Էրիկ, կնիկ, երկուսս էլ պալած մնացինք, տեղներիցս շարժվել չենք կարող, բերաններս պապանձվել է... էլի, Աստված ողորմի հոգուն, Կատարն իսկույն տեղից վեր է բարձրանում, գալիս, փաթաթվում է կնոջս, համբուրվում. «Ինձ մոռացել չե՞ս»,— ասում է, գալիս է իմ էլ ձեռն է համբուրում (այն աշխարհում Աստուց ստանա իր խոնարհության վարձքը): Համեցեք է անում. նստեցնում, թեյ են բերում. սկսում ենք մեկս մյուսին հիս ու նոր բաներ պատմել: Մենք ասում ենք, նա ասում է, բոլոր գրել-խով անցածը, բոլոր սովորածը մեզ տեղով-տեղով պատմում է. մենք ո՛րը հասկանում ենք, ո՛րը չենք հասկանում, բայց ալիս ենք ղնում. անմեղ աղջիկը բլրուլի պես անուշ ձայն ուներ... Այսպես մի ժամ, ժամուկես նստում ենք. երբ որ վերկենալու ենք լինում՝ նորից փաթաթվում է պառավիս, հարազատ աղջկանը պես աղաչում-պաղատում է, որ շուտ-շուտ գա. ինձ էլ համեցեք է անում: Դրանից հետո շուտ-շուտ ետներիցս մարդ էր ուղարկում, կամ թե, որ ցեխ էր լինում, կառք էր ուղարկում, մեզ

տուն սանու՛մ: Այսպիսի անուշ վարմունք միայն մեզ հետ չէր, բոլորի հետ էլ այդպես մարդավարի էր վարվում:

Էլի գլխին աղքատներ էր հավաքում, էլի հետները նստու՛վեր էր կենում, էլի ուտեցնում-խմեցնում էր. հիվանդին, աղքատին, դարիբրին սատար-օգնական էր լինում, ո՛չ այնպես, ինչպես հարուստը փողը նետում է նրանց առջևը, մեղայաստծու, այլ իր հարազատ հոր ու մոր նման էր վարվում նրանց հետ: «Տո՛», «աղջի՛», — այսպիսի բառեր չէր լսված նրա բերանից, «սխալներս, հայրիկս, հոգիս, փոքրիկս», — այս բառերով էր գիժավորում աղքատներին ու ճամփու դնում:

Այսպես անցնում է մի տարի:

Մի օր Սախալի տունը աղջիկների հրավերք է լինում. նրան էլ են կանչում: Անմեղ աղջիկը գլխի գալիքը շիմանալով, միտմիտ-միամիտ գնում է:

Այն էլ պիտի ասեմ, որ Կատարը Օղեսայից չեկած, խուրպուշու միջնեկ աղջիկը խիստ գովված էր քաղաքիս մեջ երեսի գեղեցկությունից, վրայի թանկ հագուստով ու զարդարանքով, համարյա թե առաջինն էր համարվում: Երբ որ Կատարը ոտքը նախիջևան է դնում, խուրպուշու աղջիկը մոռացվում է, էլ չի հիշվում. խուրպուշու աղջիկը նախանձում է, սիրտը թուլանով է լցվում ե, տես ինչ սատանայություն է միտք անում:

Հրավերքի ժամանակ մոտենում է Կատարին, երեսանց բուրեկամանում է. սկսում է հետը կոտրատելով ուսերեն գրուցիլ իրր, իմացի՛, եթե քեզ նման Օղեսայում չեմ սովորել՝ քեզի՛ն պակաս էլ վարժված չեմ: Կատարը բարի մտքով նրան ասում է. «Ինչո՞ւ հետս ուսերեն ես խոսում, ասում է, երկուսս էլ հայենք, երկուսս էլ հայերեն գիտենք»: խուրպուշու աղջիկն էլ հենց այդ էր ուզում: Միծաղելով ասում է. «Ես հայ եմ, բայց դու հայ չես», — ասում է: Կատարն էլ դառնում է նրան ասում. «Ես ի՞նչ եմ ապա, որ հայ չեմ»: «Պու խազախ ես», — ասում է խուրպուշու աղջիկը: «Թողություն անես, ասում է Կատարը միամիտ-միամիտ, ես խազախ չեմ. լինելու էլ չեմ, ես խազախ լինել որ ուզե՛լաքի, ո՞վ ձեռիցս կրոնեք, ես Օղեսա կմնայի»: Սատանայի գովակը, խուրպուշու աղջիկը էլի նույնը կրկնում է. «Ձե՛, չե՛, որ հայ չես, դու խազախ ես»: Նորից Կատարը ոչինչ չնկատելով միամիտ ասում է. «Ընդհատ է, ես ուսի վարժատուն եմ սովորել

բայց՝ սուրբ հավատս, մայրենական լեզուս չեմ մոռացել. Օղեսայում էլ հայի ժամ կա, ես միշտ, ամեն կիրակի ու տոնի հայի ժամ էի գնում: Օղեսայում էլ հայի քահանա կա. նա շաբաթը երեք անգամ գալիս էր ինձ մեր հավատը սովորեցնելու. մեր լեզուն շմոռանալու համար հայրս հատկապես ինձ համար հայ վարժապետ էր վարձել, ես նրա մոտ յոթ տարի հայերեն գրել-կարդալ սովորեցի, ի՞նչ իրավունքով դու ինձ ասում ես, որ ես հայ չեմ, խազախ եմ»: Լիրբ անամոթ, շան կաթ կերած խուրպուշու աղջիկը տեսնում է, որ Կատարը բանից անտեղյակ է. հրեշտակի պես անմեղ է ու իր ակնարկները չի հասկանում, դառնում է երեսին ասում. «Պու ի՞նչ ոտիս հայն ես, ասում է, դու պատերազմի տարին ես աշխարհ եկել, ասում է, քո հայրը Ղազարոսը չէ, ասում է, այլ մի խազախ օֆիցեր է, ասում է, դու ապօրինի գավակ ես, ասում է, ինչ ես այդպես գոռոզանում, բան չհասկացող, միամիտ ես ձևանում, ինքզ չգիտե՞ս ապօրինի եղածդ. դու մեզ նման հարազատ հորից-մորից ծնված չես. քո մայրը ուսի հետ է եղել ու քեզ աշխարհք բերել»: Խեղճ Կատարը պաղած երեսին է նայում, նրա ասածից ոչինչ չի հասկանում. այնքան անմեղ էր, որ ի՞նչ ասել է ապօրինի գավակը, ի՞նչ ասել է աշխարհք բերելը, էրիկամարդու հետ լինելը — ամենեին բան չի հասկանում:

Այս բոլոր անամոթ խոսքերը, ասինք որ, խուրպուշու աղջիկը սրտի շարունակից, նախանձությունից է ասում. եթե ուրիշ մարդ մեջ չմտներ, պիտի մոռացվեր, գնար, քանի որ խեղճ Կատարը այդքան դատարկախոսությունից ոչ մի բառ չէր հասկացել: Չա՛ր սատանա. այնտեղ է գտնվում Պապուկի հիմար, խենթությունիկ, շատախոս աղջիկը. մեջ է մտնում սուտ-ղորթ ամեն բան մեկիկ-մեկիկ, հատիկ-հատիկ պատմում: Մեր խեղճ-ողորմելի Կատարի աչքը բացվում է. «վա՛յ աման, մարիկ», — ասում է ու նվաղում: Պաղ ջուր, անուշադր, քացախ՝ չեն օգնում: Շտապ բժիշկ են կանչում, արյուն առնում — հազիվհազ աչքերը բաց է անում, շունչ քաշում: Իսկույն կառք են դնում, կես-կենդան, կես-մեռած տուն են տանում: Աղջիկների հավաքույթն էլ վերջանում է, բոլորը ցրվում են:

Դրանից է, որ Կատարը ցավի է տիրանում, քանի գնում վատանում է, քանի գնում՝ մոմի պես հալվում: Հեռագիր են տա-

լիս՝ Քիրմանից, Քալդանից¹, Խարկովից, Օդեսայից ամենավարձապետ բժիշկները բերել են տալիս. ո՛չ մեկը ցավի ճարը չեն զբաշնում: Բռնված օրից խեղճի լեզու՛ն է պապանձվում, թե՛ ինքք բուրբի մոտ լուսմ է— բայց բերանից ոչ մի խոսք չի լսվում, աշնքանը միայն, որ հա-ն ու չէ-ն գլուխը շարժելով իմաց է տալիս: Այսպես վեց ամիս տանջվելուց հետո, ահա այսօր, ինչպես իմացանք, արդար հոգին Աստծուն է հանձնում... Վա՛խ, վա՛խ, ափսո՛ս աղջիկ...

Աղջի՛, Լուսփիբա, աղջի՛, դե՛ ժողովիր, գնանք տուն. շատով կես-գիշեր է: Թողութուն կանես, դրացի. զխացավութուն տվինք, նեղութուն տվինք: Բարի՛ գիշեր... Վաղը թաղումին կգա՛ս:

— Նայինք,— ասի:

ԿՅՈՒԶԱՌԵ

Բուլվարը շինելուց հետո Լուսավորչի բաղձան բուրբովին մոզից ընկավ. առաջները շենքով մարդիկ էլ որ չգնային, գոնե Բար-թուք խանութի աշխատողներ, դուրս արված բանվորներ, հոռնիշնաններ, ծծո՛ւյրներ, գրագիրներ և գրագրերի կանայք մտն էին գալիս, զբոսնում, մանավանդ մութ, գնդան գիշերները. կամ ամառվա ուժեղ շոգերին, երբ որ ամեն շենքով մարդ տանք փակված կամ քնում է, կամ քառեց² քառեցի ետևից մածունի թան է խրմում սիրտը պաղեցնելու համար: Այդպես ժամանակները միշտ երևում էին զուլգեր, որ ծառերի հովին նստած, կամ ժիտոսի առանձնացած, կամ թիկնած սուս-փուս իրենց համար հետաքրքիր բաներ էին պատմում... Բայց ինչպես որ ասինք, բուլվարը շինելուց հետո այդ ամեն շենութունը վերացավ Լուսավորչի բաղձայից, հիմա այնտեղ արածող հորթերից ու արհեստի ձեռ քաշած մաշկակարներից, ծեփագործներից, դարբիններից բացի ուրիշ մարդ չես գտնի: Ծառերը, Աստվածո՞ղ կսիրես, կոտորտած, ճամփի հենց մեջտեղը կովի թրիքներ, որը շորացած, որը նոր. տեղ-տեղ էլ ժամկոչների կոկլոզները... հենց այդպես առաջ

շենքով մարդը կլինի՞ որ զբոսնի, կամ օդի դուրս գա, իհարկե, ամեն մարդ կամ բուլվար դուրս կգա, կամ Սուրբ խաչ կգնա:

Մաշկակար Ակորը, ծեփագործ Արութինը, կեռ Ասվատուրը, ճաղատ Սարգիսը ու մի քանի այսպիսի նախկին պատվավոր քյոթուկ արհեստավորներ եթե չլինեին, մեր Լուսավորչի բաղձան բուրբովին պարապ-բոշ պիտի մնար տարին տասներկու ամիս: Զգի՛ւնեմ, այդ բուլվարի ի՞նչն են հավանել, հիացած մնացել. ծառերը, Աստվածո՞ղ կսիրես, մեկ մեկ հատ ավել. մի ծայրից շորահում են, կոտորվում ու զարնանը կամ աշնանը նրանց տեղը նորերն են տնկում, որ, իհարկե, նորից շորահում են կամ քամիից կոտորվում են ու մյուս տարին նրանց տեղը նոր-նորից մատիս բարակութունով ճիպոտներ են խոթում... Զէ, եղբայր, ով ինչ ուզում է թող ասի, ես մեր Լուսավորչի բաղձան ոչ մի բուլվարի հետ չեմ փոխի ու գոնե ծառերը ծառերի պես են, միջի օդն էլ բուրբովին ուրիշ բան է: Էն, էն, էն կովի թրիքները ու ժամկոչների կոկլոզները որ չլինեք, դրանից լավ բան մեզ պե՞տք էր որ: Դու մի սպասի, նրա շորս կողմը այն երկաթե ցանկապատը շինենք, որ առում են ամենաքիչը տասնհինգ հազար մանեթ պիտի նստի, մեզն էլ շորս-հինգ հարյուր հատ ծառ տնկենք, ճանփաների հենց մեջտեղը բուսած շոր խոտերը մաքրենք, կովի թրիքները դեղ-դեղ հավաքենք ու արաբա-արաբա տանենք ձորը թափենք, քսան-երեսուն հատ երկար նստարաններ դնենք ժողովրդի նստելու համար ու յասամանի կամ դեղին աքացիի թրփեր փաթաթենք նրանց շորս կողմը հովի համար, հրաման հանենք, որ կառապանները, կամ խանութի աշխատողները հոռնիշնաներին ասելու գողտուկ խոսք որ ունին, գնան ուրիշ տեղ ասեն— դու մի ա՛յն ժամանակ տես, մեր Լուսավորչի բաղձան ինչ բաղձա կլինի:

Հա՛, ճիշտ է. այդ ամենը վերջուցնելու համար գոնե 15—20 հազար մանեթ պետք է. ասենք որ այդքան շատ փողը, քաղաքիս այս աղքատ ժամանակը, հեշ արտաքնոց թափելու փող չէ՛, բայց զատ օրինավոր բաղձա: կունենանք ու հիմիկվա 3—4 հատ պառաված, շորացած, կոտորած աքացիները ու կաղամախիները մեն-մենակ չեն մնա ու իրենց գալու շորս հարյուր հատ եղբայրներիս իրենց այսքան ժամանակվա տեսածն ու լսածը կպատմեն... Ճիշտ, գիտեն, այդ 3—4 հատ ծառը, երբ որ Աստծու հրամանով մի օր լեզու լինեն ու ազամորդու պես սկսեն զրուցել, ո՞վ

¹ Տաղանթոզ:

² Զեղուկի շափ:

գիտի, ինչքան բան պիտի պատմեն իրենց տեսած ու լսածից, որք, հազար ափսո՛ս, պիտի կորցվի ու մոռացվի... նրանց իմացածներից մեկը արի ես քեզ պատմեմ, որ լուսավորչի բաղադրի մեջը ես ինքս իմ ականջովս լսել եմ, սրանից գուցե տասը-տասնեկու տարի առաջ: Այս պատմությունը ինձ պատմեց մաշկակար Ակոբը: Մաշկակար Ակոբը կլինե՞ր այն ժամանակ ամենաքիչը 75 տարեկան, վրան դիր էլի տասնեկու տարի, այն էլ մի մոռանա, որ այս բանը պատահել է նրա ջահելության ժամանակ, ասել է քավականին հին բան պիտի լինի այս ասելու պատմություն:

Քաղաքս դեռ նոր էր հիմնավորված, ո՞ւմ թագավորությունն էր, էն խաչը, հաստատ չգիտեմ, կարծես թե Պողոս կայսերինը պիտի լինե՞ր. է՛հ, ինչ էլ որ լինի, բանը նրա վրա չէ: Հենց այդ ժամանակները դրսից մի հայ ջահել տղա է գալիս, երևի հայի հողից— էրեանից, թե՞ հին Նախիջևանից, էն խաչը, հաստատ չգիտեմ, այնքան որ վրայի հագուստը, տղի իրեն կեցվածքը, խոսածը դուրսեցիի ձևով է, բայց վրայից հայտնի է, որ հարուստ իշխանի տոհմից է:

Այն ժամանակները հիմիկվա պես էքիփած, քառեթ, փոշոտ չկար. ճանփորդները սովորաբար ձիով էին ման գալիս: Այս ջահել տղան հետը ուներ շորս հինգ հատ ոտքից գլուխ գրահավորված ծառաներ, ինքն էլ թանկանոց, տաճիկի սև նժույզը հեծած, զզլբաշի ձևով այն երկար թևով շքեմներ վրան. մեջքին շորս մատիս լայնքով ոսկեթել գոտի՝ ոսկեջրած ճարմանդով. դաշույն, ջուխտ փըշտոֆ, շամի թուր, թվանք, յափնջի— բոլորը նոր, զըլ խին էլ բուխարի սև մորթուց թանկանոց զզլբաշի երկար գոտի: Այս որ ասում եմ, ինքս տեսած չեմ, լսելով եմ ասում, որովհետև պապաս էլ պսակված չի եղել: է՛հ, ինչ էլ որ լինի:

Այս դուրսեցիի անունը Սուլբաթ է լինում, ազգանունը չգիտեմ: Մեր Նախիջևանը խո լավ ես ճանաչում, դրսից եկողը, ով կուզի լինի, մերոնց համար բոլորը մեկ է, կամ տանդալախ են (դրսեցի), կամ մեռելի միս ուտող՝, դրսից եկողը երկնքից ուզում է աստղեր ցած բերի, հեչ մերոնց հավասար չենք ճանաչի, մի մեջը չենք մտցնի, սեր, միաբանություն չենք ցույց տա ու շատ հազվագյուտ հետը գործ կունենանք: Այս նորերս է, որ կամայ կամաց սկսել ենք մի քիչ մարդու աչքով նայել դուրսեցիի վրա:

1 Աղբառ, հոգեհարցով սնվող:

մեր պապերի ժամանակները, հա՛, կամ անհավատ նողայր, կամ դուրսեցի հայը— երկուսն էլ նույն կարգի բան են եղել: Այն էլ մեծ պատիվ պիտի համարե՞ր դուրսեցի հայը, երբ որ նախիջևանցին երկու-երեք անգամ իր տունը բերի նրան ու հետը հացի նբստեցնի— սա է մեր գովական հայի հյուր սիրելի: Իսկ շուտ-շուտ գնալ-գալ, սեր, միաբանություն, աղջիկ տալ-առնել, ազգակցություն սկսել— Աստված պահե:

Այսպես ուրեմն, խեղճ Սուլբաթը հայի քաղաքի, հայ ժողովրդի մեջ մեծ մեծակ, զարիք մնաց: Հին ժամանակներից նկատված է, որ դուրսեցի հայերը շատ սիրում ու խիստ հավանում են մեր տեղի աղջիկներին, չգիտեմ ինչ է սբա պատճառը. թե՞ իրենց կողմերը աղջիկը քիչ է, թե՞ մեր աղջիկները իրենցիններից սիրուն են, կամ մաքուր են բնավորությամբ, կամ մի ուրիշ, ինձնից գաղտուկ մնացած կախարհանք ունեն, չգիտեմ, բայց այդ աշտարխանցիները, զզլբաշիները, թիֆլիսեցիները, մանավանդ այն իմոն ծախող դուրսեցիները— Նախիջևանի աղջիկ են ասում, մեկ էլ չեն ասում: Համաձայն են քոռ, թոփալ, քիթը ծուռ, աչքը շաշ, աղբատի գավակ— բոլորը մեկ է նրանց համար, միայն նախիջևանցի աղջիկ լինի, փող էլ չեն ուզում, բաժինք էլ չեն ուզում մեր տեղի փեսացուների պես: Խեղճ Սուլբաթն էլ այդ օրին էր հասել: Ինչ էլ որ լինի, մի որք աղջիկ են գտնում, ձեռքըն են տալիս, դառնում են ամուսիններ: Այս երկու խեղճը մի աղջիկ զավակ են ունենում, անունը դնում են Կյուլզաղեն: Մեկ ամսից մայրը ընկնում մեռնում է. դրանից հետո մեր Սուլբաթը շատ է մնում Նախիջևան, քիչ է մնում, հաստատ չգիտեմ, բայց օրվա մի օրը, ասում են, ձի է հեծնում ու դուրս գալիս քաղաքից. այդ գնացածը գնացած է, մեկ էլ ետ չի գալիս— Սուլբաթ վար, Սուլբաթ վեր՝ Սուլբաթ չկա. թե՞ հաբամիները մեծցրին ու դիակը ձորը գցեցին, թե՞ ինքը ջուրը ընկավ, խեղդվեց, թե՞ իրենց կողմը փախավ, թե՞ հանկարծ ալիքը խփեց ու ով գիտի որ անկյունում մեռավ մնաց խեղճը, երկար ժամանակ հայտնի չի լինում: Մծի աղջիկը, Կյուլզաղեն, առանց հայր, առայց մայր, առանց ազգականի է մնում. ինչպե՞ս է մեծանում այդ ողորմելի որբուկը, ո՞վ է ուտեցնում-խմեցնում, վրան գլուխը անում, հոգսը քաշում, շատերի վեջն էլ չէ, իմանալ էլ չեն ուզում, այնքանը գիտեմ, որ երբ որ ես 7—8 տարեկան երեխա էի, Կյուլզաղեն տասնվեց տարու, հրեշտակի պես սիրուն աղջիկ էր: Մրևի տեր

Ակորը— լուս իջնի գերեզմանին— որ Սուսբաթի պսակողը, խոստ-
վանահայրը ու մոտիկ բարեկամն է եղել, վերցրել է խեղճին՝ ու
իր ժողովրդից մեկին է տվել, նա էլ ուրիշների ականջն է գցել,
թե հոգու համար տունն եմ առել դրան ու տեր Ակորի մեռնելուց
հետո երևի ողորմելուն օր չի տվել. վա՛յ որբի հալին. է՛հ, ինչ
էլ որ լինի: Ինչպես որ ասի, երբ որ Կյուլզաղեն տասնվեց տարու
է լինում, ես էլ կամաց-կամաց սկսում եմ նրան ճանաչել:

Այն ժամանակները հիմիկվա քարե կուսավորչը Ղար. սրա
տեղը, բայց մի քիչ հեռու, դեպի բազարի կողմը մի հատ փայ-
տե ժամ կար, արևունը կարծեմ էլի կուսավորչի էր, հաստատ միտ-
քըս չի՛: Մանկությանս ժամանակ կուսավորչի բակը հիմիկվա
պես թողված, երեսի վրա զցված չէր: Մեղայաստծու, մեղա. այս
ի՛նչ է այս մեր օրվա բաները, մարդկանց երեսից, կարծես թե
սուրբ մեռունը դասաբի քերիչով հանել են, հեռու այստեղից,
անամոթի մեկը գալիս է, վարտիքի թելը քանդում, փեշը գլխին
է գցում ու... ախր, քրիստոնյա՛, սա ժա՛մ է, սա խա՛չ է, սա
սրբություն է. որի՞ն ես ասում. նա հավատը գիտի՞ որ ինչ ասել
է: Այդ քաղաքը գոլովա՛լ, դատավոր, երիցփոխան, առաջնորդ
չունի՞, ինչ է— բոլորովին անտեր է մնացել, հե՛ն խելքս չի հաս-
նի: Բայց առաջվա ժամանակները այդպես չէր. ժամի բակը, ս-
վարաբար, թեփ-թեմիզ էր լինում ու մանր երեխաները, որ դե-
վարպետ (ղպրոց) չէին գնում, խուսբ-խուսբ այնտեղ էին գա-
լիս, շատերը հեռները ուտելու բան էլ էին բերում ու ամբող-
ջը այնտեղ էին լինում, իրենց համար եղբոր պես խաղում էին:

Մի օր, այսպես շոգերի ժամանակ, ուրիշ փոքրիկ երեխաների
հետ ես էլ էի գնացել կուսավորչի բակը խաղալու: Տեսնեմ ժամի
շուքին շատ երեխաներ են հավաքվել ու նստած սուս-փուս լսում
են: «Գնամ տեսնեմ ի՛նչ բան է»,— ասի մտքիս մեջ ու մտեցա
նրանց: Հիշյալ Կյուլզաղեն, չորսկողմը շատ երեխաներ հավաքած,
տեսակ-տեսակ հեքիաթներ է պատմում, երեխաներն էլ ուրախ
ուրախ լսում են: Գուրբս եկավ, ես էլ խառնվեցի նրանց հետ ու
խելքս վրաս հավաքած, սուս-փուս նստեցի խորի վրա: Կյուլզա-
ղեն պատմում էր, պատմում, ու մեկ էլ տեսնես, խոսքի մե-
ջ որան խրատ էր տալիս, թե ինչո՞ւ գլխարկդ պատռած տնից դուր
ես եկել, նրան թե, ինչո՞ւ քթիցդ միշտ խլիճք է վազում ու չե՛

սրբում, մյուսին՝ թե, ինչո՞ւ շա՛մ-շա՛մ մազտաքի ես ծամում ես
թուքերդ մյուսների երեսին ցքտում. միշտ այսպիսի խրատներ էր
տալիս երեխաներին ու երեխաներն էլ— զարմանք բան— մա-
մաներից, պապաներից ավելի շատ, դրա խոսքն էին լսում ու
կատարում, Կյուլզաղեի սիրտը չցավեցնենք, ասում էին, ու մեկ
էլ չէին ասում:

Երեխա էի, բայց շատ լավ միտքս է— Կյուլզաղեն ճի՛վ-ճեր-
մակ երես ուներ, աչքերը խոշոր-խոշոր բազամի պես, ունքերն
էլ՝ դալամ քաշած, նոր ծնած լուսնյակի կնիմանին. մազերը ու-
կիի գույն՝ ֆա՛ն-ֆա՛ն ցուլում էին. վրայի հագուստն— այն մա-
մանակները ֆիստան էին ասում— միշտ հին էր լինում, բայց
մաքուր ու վրան սիրուն նստած: Ինչպես որ գիտեք, առաջվա
աղջիկները գլուխները ֆես էին դնում, բայց Կյուլզաղեն ֆես չու-
նեք, ձիի պոչի պես երկար մազերը երկու-երեք անգամ վաթա-
թած էր գլխի շորս կողմը. մեկ-մեկ մեջը դաշտի ծաղիկներ էր
լինում խրած:

Նախիջևանցին, ինչպես որ գիտեք, ի բնե ծաղր անող է.
խեղճ Կյուլզաղեին էլ այս ու ուրիշ մի բանի բաների համար բո-
լորովին խենթի տեղ էին գրել, նրան հայ աղջկա հաշիվ էլ չէին
գնում, բայց Կյուլզաղեի հոգն էլ չէր, կարծես թե նա չէր էլ նկա-
տում ուրիշների խոսքն ու կարծիքը իր վրա, այդպես հպարտ
բնավորություն ուներ: Հաստատ գիտենք, որ Կյուլզաղեն հայր,
մայր, բարեկամ, ազգական չունի. բայց որտե՞ղ է ապրում այդ
աղջիկը, ի՞նչ է ուտում, ի՞նչ է խմում, մյուս ուրիշ պետքերը ինչ-
պե՞ս է հոգում, խելքներս չէր հասնում: Իսկական հեքիաթ էր
այդ աղջկա բանը: Ասեիր մուրում է, բայց այնպես աղջիկ չէր
որ մուրար, այնպես մի աղնիվ բնավորություն ուներ որ, կարծես
թե թագավորի աղջիկ լիներ— հետո իմացվեց ում դավակ լինե-
լու: Մի կին մի օր ինչ անի որ լավ է, կանչում է Կյուլզաղեին,
ինչ ասես հին ու մին քուռչեր է դնում առաջը, մի աման էլ խա-
վիժ է բերում՝ «Ա՛ռ, իբր, կե՛ր սրանք էլ հագիր»:

Մեր Կյուլզաղեն է որ կատաղում է, քուռչերը անում է այդ
կոպիտի երեսին է շարտում, ամանով խավիժն էլ գլխին է դա-
տարկում,— դուրսեցի հայերը ի ծնե այդպիսի բնավորության
տեր են, խե՛ են, թե՛ հպարտ են, դեռ կարգին հասկացած չեմ,
այնքանը գիտեմ, որ մեր նախիջևանցիների պես խոնարհ չեն—
Կյուլզաղեն էլ «այս լաթերը,— ասում է,— թող ձեր շորանի ու-

քին փաթաթաններ լինի», այդ կինը զասաբի կնիկ է եղել, ասել է ու տնից դուրս է գնացել: Ահա՛ այսպես ազնիվ աղջիկ է եղել Կյուլզաղեն: Ինչ էլ որ լինի: Հա՛, այդ էի ասում. մեկ էլ շփտեր, թե այդ որբ, զարիբ աղջիկը ինչո՞վ է ապրում: Ոչ թե մուրալ ու մարդուց բան ուզել, այլ ինքը շատ անգամ, հաշվի մի՛շտ, ջեբը լիփ-լիքը կարկանդակ, կաղին, լեբլեբու, քյուֆտեր, քեշեպայւնուզ՝ ու այսպես տեսակ-տեսակ մրգեր էր ունենում ու փոքրը երեխաներին բուռով բաժանում: Մենք էլ նրան այնպես էինք սիրում, որ Կյուլզաղե էինք ասում, մեկ էլ չէինք ասում:

Վաղուցվանից նկատված է, որ կնիկարմատ ասածը նախանձոտ է լինում. համարձակվի հարեանի կինը կամ աղջիկը մի քիչ սիրուն լինի երեսով, կամ ձեռքը հոնուտ, կամ ինքը բանուկ, տուն-տեղ կառավարող. նրանց համար դրանից էլ վատ բան չի լինի. կսկսեն, ջանս, խեղճի միսը ուտել, «ա՛յ նա այսպես, ա՛յ նա այնպես», աշխարհիս երեսին բան չեն թողնում, որ վրաները շառեն. համ երեսը ներկ է քսում, համ ունքերը սուրմա է անում, համ մազը հինա է դնում, համ դերձակի ձևը ու կարը գիտե, ասում են. էլի, ես ինչ գիտենամ, ականջները փակում են, բերանները՝ բացում, այնքան են փրփրում-բամբասում, այնքան են շարժարվում, որ խեղճի անունը ուրիշների բերանն են գցում. Այսպէս շատերը կորել են, շատերն էլ կորցվել են, բայց մեր կանանց իշտահը ուրիշների միսը ուտելուց ու արյունը խմելուց դեռ փակված չէ: Ասում են թե հիմիկվա կանայք առաջվանների պես կոպիտ չեն, դրանք դիրք են կարդում, բան են սովորում, խելքները ավելանում է: Ծիշտ է, հագուստները, կերուխումը փոխվել է, բայց սրտները էլի այն է, էլի այն է: Այսպես էլ հազար ու մի բամբասանք էր պտտվում ողորմելի Կյուլզաղեի վրա, հա՛յ նա Ֆլան տղայի որդուն է սիրում, հա՛յ գետափին քաշ է գալիս, հա՛յ խութուներն² է գնում... Բայց բոլորը սուտ էր: Վերջը-վերջը ամեն բան մանրամասն իմացվեց:

Կյուլզաղեի պապան, երբ որ ղզլբաշի վեճը դուրս է գալիս, իսկույն գենք ու զրահը պատրաստում է— գնում հիշյալ տեղ Ակոբին այսպես-այսպես բան է, ասում է. «Ես Ֆլան իշխանի որդին եմ,— ասում է,— տնօրեն ղզլբաշները պապայի

¹ Այծեղուր, մրգի տեսակ:

² Ագարակներ:

հիսուն գյուղը գրավել են,— ասում է,— իրեն էլ սուտ մահանայով մեռցրել են,— ասում է,— հիմա ես պիտի գնամ ու հայի հողը ազատեմ անհավատների ձեռքից,— ասում է,— առ այս յոթը հազար ոսկին պահի,— ասում է,— մեկ էլ որ ետ չգամ,— ասում է,— զավակիս հայրութուն արա,— ասում է,— այս փողը շահով տուր ու տոկոսով Կյուլզաղեիս պատվով պահի, ասում է, տասնյոթ տարու որ լինի, մի շենքով մարդու տուր,— ասում է,— բայց երբ որ Աստված չկամենա զավակիս այդ օրին հասցընելու ու ժամանակից առաջ հոգին որ առնի,— ասում է,— այս փողով իմ ու նրա հիշատակին հայ երեխաների համար մի վարձարան սարքիր,— ասում է»: Ասում է ու ճամփա է ընկնում մարդը: Դրանից հետո մինչև այս օրվա օրս այդ մարդու անունը չի լավում: Տերտերը ընկնում մեռնում է, փողը աղային է վրատահում ու երգումով ապսպրում է որ, ինչ որ ինքը անելու էր, այն նա անի: Այդ աղաս էլ Կյուլզաղեի փողը պարտկում է, միայն տարին տարենական 3—4 հարյուր ուրբի աղջկա վրա ծախսում, բայց ողորմության ձևով, ոչ թե քու հալալ փայն է ասելով: Է՛յ, ինչ էլ որ լինի: Աղջկան ապրելն էլ այսպես է լինում, ոչ թե, ինչպես ուրիշներն են ասում, ամոթ արհեստներով:

Կյուլզաղեի սիրած բանն էր երեխաներին հեքիաթներ ասելը. բայց նրանից էլ ավելի սիրում էր հայի տաղեր երգել: Չայն էլ այնպես ձայն էր որ, իսկական գարնան բլբլու— լսում էիր ու չէիր կշտանում: Տաղ ասածն էլ մի զարմանալի բան էր. տաղ ասած ժամանակ հա՛մ եղանակին էիր զմայլվում, հա՛մ խոսքերին: Մեր ժամանակներն էլ են հո տաղեր ասում, բայց Կյուլզաղեի ասածները մի ուրիշ տեսակ բան էր. հիմիկվա տաղերի եղանակն էլ ժամանակ-ժամանակ սիրող է մտնում, բայց խոսքը բանի պետք չէ՛, այսինքն ուզում եմ ասել, թե միջից բան չես հասկանա: Կյուլզաղեի ասածից բան հասկացվում էր, այնպես որ, երեխա էինք, բայց հոնգուր-հոնգուր լալիս էինք կամ փորներս բռնած կուշտ-կուշտ ծիծաղում էինք:

Արդյոք,— ասում եմ,— մտքի՞ց էր հանում գանջը, որ լինի, կլինի՞, գիտե՞ս, որովհետև հեշ մեկ էլ այդ տաղերը չլսեցիր: Խոսքերն էլ շատ հասարակ բաներ էին, ծաղիկներ, լալաներ, մանուշակներ, ծիծեռնակներ, կռունկներ, բլբուլներ, մամայի, պապայի կարոտը, որբ երեխայի կամ անտեր զարիբի ապրուստը, դաշտի արոտը, ձորի աղբյուրը, գարնան գալն ու գնալը ցե՛,

այսպիսի, ամենքին հայտնի բաներ: Քանի որ երեխա էի՝ բերաչ
նացի գիտելի այդ տաղերը, բայց հիմա բոլորովին մտքիցս դուրս
է եկել, մանազանս որ վարպետ սկսեցի գնալ, վարպետս շատ
չէր հավանում, երբ որ «խե կյուլզագեր», նրա անունը խե կյուլ-
զագեր էին դրել, տաղերը ասում էինք, մենք էլ շատելով-շատելով
բոլորովին մոռացանք: Բայց հազար մե՛ղք. որովհետև վատ տաղ
պիտի չլինի այն տաղը, որ մարդուս կամ ծիծաղեցնում է, կամ
լացացնում— խելքս այդպես է կտրում:

Ս. աղան հինգ որդի ունեւր, երեքը արդեն ամուսնացած էին.
չորրորդը, Գրիգոր էին ասում, մի օր տեսնում է կյուլզագերին ու
զարկվում: Հայրը, մայրը, սկզբում չէ՛, մէ՛ են ասում, բայց Գրի-
գորը այնպիսիներից չէր, որ իզուր տեղը իր մի անգամ ասած
խոսքից շուտ հրաժարվեր: Տղան անկողին է ընկնում ու արգեն
հոգին փշելու վրա է: Աղջկանը ականջ են հասցնում, որ այսպես
այսպես բան է, բախտդ բացվել է, այսպես աղայի որդին քեզ
սիրահարվել է, հետո պսակվել է ուզում, այսպես հարուստ մար-
դու հարս կլինես. էլ ես ի՛նչ գիտեմ, ասում են, էլի՛, իրենց
ասելիքը: Կյուլզագերն էլ վեր է կենում ու՝ «տղին շտեսած խոսք
չեմ տա՛»,— ասում է: Մարդիկ սարսափում են, այդ էլ ի՛նչ կոր
Ֆենտ է, ասում են, որ մի աղջիկ ինքը իրեն խնամին լինի, ար
էլ ո՛ւմ տողն, հենց իրեն փեսայի: Շատ են շարշարվում, որ կյուլ-
զագերին այդ խենթ մտքից հրաժարեցնեն՝ հա՛յ, ամոթ է, հա՛յ-
հա՛յ, օրենքին հակառակ բան է, հա՛յ ուրիշների բերանը կրնի
ենս, ծաղրուծանակ կլինես», բայց ո՛ւմ ես ասում, այս պատի
մի բան որ հասկացնես, նրան էլ կհասկացնես. իսկական սր-
բար է կտրել, հիմա մարդիկ ի՛նչ անեն. ճարահատյալ գնում են
տղին՝ «այսպես, այսպես բան է»,— ասում են: Տղան էլ՝ «Թող
լինի»,— ասում է,— գնամ տեսնեմ ի՛նչ պիտի ասի»,— ասում է
ու գնում կյուլզագերին: Կյուլզագերն ասում է. «Ինձ հավանե՛-
ես»,— հարցնում է: «Հա՛, հավանել եմ»,— ասում է տղան սիր-
տը, փորը դող ու զանկը՛ն, զանկը՛ն զոզալով: «Վրասս պիտի
պսակվե՛ս»,— ասում է նորից կյուլզագերն: «Հա՛, ուզում էի»,—
ասում է տղան: «Որ այդպես է»,— ասում է կյուլզագերն, «գն
հայի հողը— այսպես-այսպես խրատում է ու տեղը ցույց տա-
լիս— կամ պապայիս կենդանի բեր առչես կանգնեցրու»,— ասում
է,— կամ երբ որ կենդանի չէ, մեռած է, նրա գերեզմանից մի
բուս հող բեր»,— ասում է,— նրան մեռցնողներին ազգով-ս

կով մեռցրու՛, որ հարս մահվան վրեժը սրտիցս դուրս գա»,—
ասում է:

Տղան միանգամից վախենում է, այն է որ բոլորովին պա-
զում է աղջկանից: Աստված կսիրես, հայի բա՛նն է թուր ու դա-
շույն անելը, մայրի դաշտերը ընկնելը, հարսի ղզլբաշի ձեռ-
քից մարդ ազատելը, արյունի տեղ արյուն թափելը, ձեռքի թվան-
քով դուշմանի վրա թվանք քաշելը: Տղան սառույց կուլ տվածի
պես բոլորովին սառչում է այդ սիրուց, էլ մեկ էլ կյուլզագերի
անունը չի տալիս: Գորս ու հինգ ամսից, հանգիստ կերպով, մի
բլիթի պես աղջկա վրա պսակվում է, գլխին գաժակներ է հաժա-
քում ու գունդ-ապուր ու փաստա ուտելով՝ իրեն գաղն ու կշեռ-
քն է ճանաչում: Մայրը... կյուլզագերին էլ, ղզլբաշիներին էլ,
թվանքներին էլ, ասում է:

Մի բանի ժամանակից մի ուրիշ տղա խնամի է դրկում.
կյուլզագերն էլի այդպես է ասում նրան. այդ տղան էլ առաջինի
պես, ետ է քաշվում. երրորդն էլ է զալիս, նրան էլ այդ կերպով
ճամփում է. այսպես-այսպիսով 7—8 հատ փեսացու տղաներ
ճամփա է դնում: Աղջիկն էլ գալիս քսանմեկ տարու է լինում:
Այդ քնթացքում ֆլան աղան ընկնում մեռնում է, կտակ էլ չի
անում, մարդկանց էլ չի հայտնում, թե դրամագլխիս մեջ այս-
պես-այսպես որբի փող կա: Երբ որ որ կյուլզագերն ամուսնավար-
ձի ետևից գալիս է, աղայի որբեայրին ու որդիները թափում են
խեղճի վրա ու տնից դուրս անում: «Ի՛նչ յոթը հազար ոսկի, ի՛նչ
բան, այն քեզ ողորմություն էք, որ անում էք, ասում են, ողոր-
մած հոգին»: Հիմա ի՛նչ պիտի անի դժբախտ կյուլզագերն. տեք
Ակորը վաղուցվա մեռած է, մարդու էլ բան չի ասել, վկաներ
չկա, մեռնողի ձեռքից թուղթ չկա: Այսպիսով մեք աղանիվ կյուլ-
զագերն բոլորովին մերկ, մի կտոր հացի մուր-աղբատ ու փողոցի
մեջտեղն է մնում: Այդ որ լսում է նրան ուղողներից մեկը՝ ուրախ-
ուրախ նորից խնամի է ուղարկում այն հույսով, թե հիմա կյուլ-
զագերի քիթը բավականին կտտրած է: Երբ որ որ խնամին գալիս
է, կյուլզագերն ասում է նրան. «Իմ խոսքը խոսք է. ես այն մար-
դու կինը կլինեմ, որ իմ սուրբ կամքս կատարի: Բայց, եթե ուզում
է, ինձ թող բանվոր վերցնի. ես համաձայն եմ մի փոր հացի ու
մի ձեռք հագուստի համար նրա տանը բանվորություն անելու»: Աղայն
էլ անում է: Հարս լինելու տեղը, քնում է բանվոր է մեռ-
նում այն փեսացուի հոր տանը:

նի՞ վաստակ ես անում», — այսպիսի հարցմունքներ էին անում ինձ շերքեզները: Ես ասի, էլի, ինչ որ որ էի: «Գիտե՞ս, ասին շերքեզները — այն ժամանակ մաքուր շերքեզներն գիտեի — քեզ մի ասելու բան ունենք. երբ որ մեր խնդիրքը կատարես, քեզ մի օրվա մեջ այնքան փող կվաստակեցնենք, որ դու երազիդ մեջ էլ տեսած չես լինի, բայց որ չկատարես, ասա՛ նայիր թուրերիս բերանի սրությանը — ճիշտ որ, շա՛նթ արին, թրերը պատյաններից հանեցին ու աչքիս առջև յա՛լթ-յա՛լթ պտտեցրին, «այս կեղեքնած տեղդ կտոր կտոր կանենք», — ասին: «Ի՞նչ է ձեր խնդիրքը, ասեք տեսնեմ», — ասի: «Մեր խնդիրքը այս է, ասին, ուղիղ կգնաս, կմտնես քոփոսթ, այնտեղից ճարճուր կանես, քսանհինգակն սալգաթի շինել ու քարտուղ կգտնես ու այս գիշեր մեզ կհասցընես. դրանից բացի, մեզ էլ, դեռ լուսը չբացված, քոփոսթ կմտցընես. արիր, հո՛, լավ, հիսուն հազար ոսկու տեղը կդանաս (կհավատա՞ս նիփնոր, ցուլուն ոսկիները տասը-տասներկու տողակից ճընկը՛լ-ճընկը՛լ գետինը թափեցին առջևս ու աչքս մոփ կոխեց), թե չէ ունեցածիցդ բաժանվելուց բացի, քեզ էլ դաշուհար կանենք այսօր չէ՛, վաղը, վաղը չէ՛, մյուս օրը: Հետո, «քանդի՛ր գոտիդ», — ասին: Գոտիս քանդեցի, տվի իրենց. միջից հանեցին 346 հատ հալալ քրտինքով վաստակած ոսկիներս ու տոպրակների մեջը թափեցին. «հանի՛ր զուպունգ», — ասին. — ճարս ի՞նչ էր. այն էլ հանեցի տվի իրենց. բամբակի մեջ խորանկ պահած 500 մանեթանոց կըճը՛ր-կըճը՛ր նոր ացինացիներս՝ հանեցին, ծոցները խոթեցին — սրիկայի զավակները լավ էին նկատել ախմախ հայերիս սովորությունը: Մենք գիտենք որ, ասին, սա քու ունեցած-չունեցածդ է — ճիշտ էլ, այդպես էր, ձիդ էլ կվերցնենք, ասին դու չըր-չըպլախ կմնաս, երբ որ մեր կամքը չկատարես. բայց երբ որ կատարես, ոչ թե քու սոփանի՞՞ ձիդ ու փողդ ետ կտանք, այլ, ինչպես որ խոստացել էինք, հիսուն հազար ոսկին կհամբրենք, կղենք առջևդ, վրան էլ կավելացնենք մի հատ շգանվելիք շերքեզի նժույգ:

Ի՞նչ պիտի անեի — իհարկե ասածներին պիտի համաձայնեի, բայց, Աստված վկա, որ մտքերի սատանությունը շգանի շա՛տ-շա՛տ, միտք էի անում, դրանք ուզում են աֆիցների մեկի

կնկանը փախցնել, որովհետև այդ անհավատ ժողովուրդը, ինչքան որ զզվում է տղամարդ քրիստոնյաներիցս, այնքան էլ սիրում է քրիստոնյա կանանց, այնինչ, որ լավ նայես, իրենց կանայք մերթններից հազարապատիկ շնաշխարհիկ են. մեկ օր կրպչեն, էլ պոկ գալ շունեն — մեղայաստժո՛ւ մեղա՛: Է՛յ, ինչ էլ որ լինին:

Խոսք սովի, որ կամքները կկատարեմ. մովթը կոխածին պես քսանհինգ հատ սալգաթի շինել, քսանհինգ հատ էլ քարթուղ կգտնեմ, կաամ ու բուրթին էլ կամացուկ քոփոսթ կմտցնեմ:

Մեջներեց նրեք հոգի բաժանվեցին ու հետս եկան մինչև բերդից կես վերաթ մնացած. ես ձիուցս ցած իջա, ասնձք իրենց տըվի, նրանք վերցրին ձիս ու ընկերների մոտ գնացին. ես էլ ոտով քոփոսթը մտա:

Ներս մտա, բայց, հիմա ի՞նչ անեմ, ինչպե՞ս գտնեմ շինելներն ու քառթուղները. հարցնեմ, բայց ո՞ւմ. դա ծախու ապրանք չէ, որ փող տաս ու առնես. բարեկամ-սալգաթից ուղեկաս, նա էլ շատ-շատ պիտի հանի իրենը պիտի տա. դա եղավ էլի մի հատ, բայց մնացած քսան շորս հատը ումի՞ց ուղեմ, հե՛շտ բան է՝ քաղաքը տակնուվրա անել ու քսանհինգ հատ սալգաթի շինել հարցնել. այդ հո մաքուր կասկածի տակ ընկնել, ասել է. ո՞վ գիտե, ինչեր մյուսք պիտի անեն մեծավորները: Աֆիցներից հարցնեմ — ասենք թե բարեկամ աֆիցերներ շատ ունեի — դա էլ հո գուշուս շիփ-շիտակ թակարդի մեջ խոթել է, քսանշորս ժամվա մեջ վրաս գատարան պիտի անեն, բանի էությունը պիտի իմանան ու շուտափույթ կախեն ինձ — գինվորականների օրենքը հո գիտե՞ս: Ի՞նչ անեմ, ինքս էլ չգիտեմ: Որ չանեմ, մեկ որ փողիցս ու ձիուցս պիտի բաժանվեմ, դրանից էլ բացի, անհավատների թրին ու դաշույնին փայ պիտի լինեմ: Ասենք որ դրանից ազատվելիք կար... շատ-շատ՝ պիտի ծածուկ փախչեմ նախիջեվան — նախիջևան, որ ոտքս դրի, ո՞ր շերքեզը պիտի կարողանար ինձ գտնել — բայց այն ցուլուն հիսուն հազար ոսկին, որ միջիտե՛ ոտքի ացինացի ասել էր — այն ժամանակները ացինացիով էք համբրվում — այդ մի այնպիսի դրամագլուխ էր, որ դեռ մի հայի ձեռք ընկած չէր. քանի որ այս բանիս վրա միտք էի անում. խելքս թուլում էր գլխիցս, Զիպիր՝, կախաղան-բան, բուրբը հոգս չէր:

1 Ասիականացի, թղթադրամ:

2 Ասիական:

1 Սիրի:

Միանգամից միտքս բան ընկաւ: Քո. հոսթի մեջը մի գող-հարամի բարեկամ ունեի, անունը Իսայլոթ, կնքված ջհուղ, որ փալքավոյ մուզիքի սրնգահար էր: Սալդաթը ուր կա, միշտ խումին մոտիկ է լինում. մեկ շիշ արաղի համար ոչ թե վրայի հագուստ, միջի հոգին էլ կծախի: Բարեկամ ջհուղս սրինգ նվագելուց բացի էլի շատ ուրիշ արհեստներ ուներ, գրավ վերցնել, ամսեկան մեկին մեկ տոկոսով փող տալ, ձեռաց փողի արաղ ծախել, մարդկանց կնիկը, աղջիկը, բանվորը խոսքի պառկեցնելու աֆիցերի սենյակը բերել, բանը որ դժվար լիներ, նույնիսկ իրեն փնկանն էլ մի քանի ժամի գործածութեան տալ. մի խոսքով հնաֆագիտութեան կողմից չգտնվելիք մարդ էր Իսայլոթը:

Ուղղակի գնացի նրան, մի կողմ կանչեցի. «Իսայլոթ, — ասի, — շատ փող վաստակել ուզո՞ւմ ես», — ասի: «Քանի ուրիշ», — հարցրեց նա ուրախ-ուրախ: «Հազար ոսկի պատրաստ եմ տալու», — ասի ու բանի էութունը մանրամասն պատմեցի իրեն:

Ինչ խոսքս երկարացնեմ. երկու ժամ անցած-չանցած, լրիվ քսանհինգ շինել ու քարթուզ մի սայլի մեջ ծալած դրած, վրան էլ մի շերտ խոտ գցած՝ թափու արավ, սենյակիս դիմացը կանգնեց: Ուրախութունիցս քիչ էր մնում լեղիս պատուեր: Հանա՞ք բան է, քսանհինգ տարու կամ լինեի, կամ՝ չէ՞, դեռ ամուսնացած էլ չէի ու մի միլիոնի տեր պիտի լինեի: Ինձանից շիտակ մարդը թող առնի քարը ու գլխիս զարնի, թե որ իմ տեղս լինեի ու իմ արածս շաներ: Երբ որ մի կողմից ազահութունս էր, մյուս կողմից էլ երիտասարդութունս էր հանցավոր. հիմիկվա խելք վրաս: որ լիներ, իհարկե, այդ վիճակում այդքան հիմար ու անփորձ չէի գտնվի. «մեկ էլ որ հարս լինեմ կուկուզ կնստեմ»:

Ողջ-առողջ քոնփոսթի դռնից դուրս եկա. լավ որ այդ բուպեին շասավոյը¹ բարեկամ մարդ էր. որ հարցրեց. «Մոտիկ Միսնոյ տեղն եմ գնում, ասի, յուղ, մեղր, շագանակ բերելու». միամիտ մարդը բան չասաց. կամացուկ շինելի թևը մի շիշ արաղ խոթեցի ու դրանով ողորմելիի աչքերը փակեցի:

Բերդից դուրս երկու-երեք վերսթ հեռու, ճամփայից մի քիչ կողք, պատրաստված կանգնել էին հիշյալ քսանհինգ հոգի չեքեզները. բոլորի երեսն էլ թրաշ էր արած. հայտնի էր, որ մաքրեներին վատ սատանութուն կար. բայց այն բոպեին ես լավ չեք-

կատեցի. իմ խելքը, միտքը այն հիսուն հազար ոսկու հետ էր: Երբ որ որ տեսա, մոտիկացա՝ «Շինելները, քոնփուզները բերի՞ր», — ասին: «Հա՛, բերի՛», — ասի: «Որ այդպես է, ասին չեքեզները, մեր փողն էլ պատրաստ է, եթե ուզում ես համբերի»: Ու առջև գցեցին քիչ առաջվա ոսկիով լիքը տոպրակները. նրանցից մեկը բացի ու սկսեցի համբերել. դեռ երկու հարյուր հատ չէի համբերել, որ չեքեզները վրայի յափնջիները ցած գցեցին, նրանց տեղը բերած շինելներս հազան, իրենց մորթի գդակներն էլ հանեցին, քոնփուզները հազան, հետո «Շո՛ւտ արա, ասին ինձ, ճամփա ընկնեմք, որովհետև մեր ժամը թանկ է, հաշվի մի հաշվի, ջվալներիս մեջը ավելով հիսուն հազար ոսկի է»:

Այդ ճիշտ է. չեքեզ ազգը անհավատ էլ որ լինի, բայց իր խոսքի տեր է. հե՛չ լաված բան չէ, որ չեքեզը ուրիշի պատկանելիքը ուտի: Ոսկիները նորից կաշվե ջվալների մեջը լցրի, տընքալով, տնքալով սայլի մեջ դրի, ինքս էլ նստեցի ու դիպի թոնփոսթ գնացիքը:

Քոնփոսթին որ մոտիկացանք, կես վերսթ չհասած, չեքեզները ձեռքից ցած իջան, սանձերը տվին մի չեքեզ տղի, իրենք ոտով, որը առջևիցս, որը ետևիցս, այսպես դեպի առաջ գնացիքը: Չասավոյը փոխվել էր — ես կարծում էի թե նոր շասավոյը, ինչպես որ կարգն է՝ КТО ИДЕТ պիտի հարցնի, որ ես էլ ով եղածս ասեի. բայց նա մի խոսք շասաց ու բերդի դուռը ինքն իրեն բացվեց առջևներս. ո՞վ էր բացողը, չտեսա: Այս բանը ինձ կասկածելի երևաց, բայց վրայիցս հայտնի չարի, երկար-բարակ միտք աննելու ժամանակը չէր. «Յա բախտ, — ասի, հետո մտա, — ետևվիցս էլ՝ չեքեզները:

Մի բուպեյվա մեջ, կարծես թե գետնի տակից պլ՛լթ արին, առջևներս կանգնեցին հարյուր հիսուն հոգի սալդաթ ու կազակ, որի ձեռքը թուր, որի՞ դաշույն, շատերին էլ փշտով ատրճանակ ու թվանք, քոմենտանթն էլ սկսեց եղբայրս, գոռալ. «լավի, վե՛ժի՛»: Աստված ամենակարող, ինչ իրարանցում է, որ սկսվեց. մի կողմից ուսները, մյուս կողմից չեքեզները՝ շա՛խ, շո՛ւփս, փա՛թ, փո՛ւթ: «Խամամա՞զ», — գոռացին չեքեզները, պատյաններին հանեցին իրենց ծուռ թրերը, աչ ու ձախին կտրտելով, առջևները ճամփա բացին, թողեցին ու փախան. թե դրել ես՝ գը-

¹ Ժամապահ:

¹ Բոնի՛ր, կապի՛ր:

տիր: Կռվի տեղը շորս հոգի շեքքեզ ու երեսունութ հոգի սուս մե-
ռած մնացին. վիրավորներին, հո, թիվ չկար, հաշվիր ամենքն էր
բացի քամենտանթից խոշոր-խոշոր վերքեր: առան:

Առանց մեկ խոսք ասելու երկու ձեռքս, երկու ոտքս հաստ-
հաստ շղթաներ դարկեցին ու ուղիղ քաղաքամթ առարան. կողք
շորս սաղգամ կանգնեցրին, լցված թվանքները ձեռքներին. փոփ-
ված գռան ետևն էլ տասներկու շասավոյ դրին: Մի րոպեյվա մեկ
թմբուկները սկսեցին դարկել, մա՛րդ հավաքվեց, մա՛րդ հավաք-
վեց, որ ասեղ գցելու տեղ չէր մնացել: Բերդի մեջ ինչքան մեծավոր
կար, բոլորին կանչեցին ինձ դատելու: Վճիռը սկզբեց ինձ հայտնի
էր. քսանշորս ժամվա մեջ ինձ պիտի մեռցնեին. բայց ինչ մահով-
այդ էր նրանց իրարանցումը: Որը ասում էր՝ «կախել է պետք»,
որը ասում էր՝ «գնդակահար պիտի անել»: մեջները այնպիսիների
էլ կային, որ սկզբեց կախել է պետք, ասում էին, հետո զլուր
կտրել: Աչս ամենը չտում էի երկաթապատ պատուհանից:

Հիմա, երևի դու կհարցնես, թե ինչպես եղավ, որ ես միլիոն-
չիկ լինելու տեղ, այսօրվա օրը շան պես պիտի սատկեի: Բանը
այսպես է եղել: Ռուսները վաղուց մատնիչներից փնայել էին, որ
չերքեզները միտք են ունեցել բերդը կոխելու. սկզբեց մի քանի
հոգի շորերը փոխած ներս պիտի մտնեն ու մութ ժամանակ դուռ
պիտի բացեն, որ մյուսները 5—6 հարյուր հոգի դրսից ներս մը-
նեն. բայց ե՞րբ պիտի լինի այդ՝ չգիտեին. ու որովհետև մատնիչ-
ները շատ անգամ սուտ խաբարներ էին բերում, դրա համար նը-
րանք արդեն սկսել էին կասկածել, որ չլինի այս անգամն էլ խաբ-
վեն: Այն օրը, որ ես շինելները չերքեզներին տվի, քամենտանթի
էլ միտքն է եղել սալդաթների հավաքել, որ բոլորին անունով-անու-
նով կանչի ու ուղիղ քսանհինգ հոգի պակաս է եղել: Սկսել են
փնտրել ու վերջը-վերջը Բասշոքի տանը բոլորին էլ հարբած պա-
կած գտել են ու հարցնելով-հարցնելով բանի էությունը հասկա-
ցել են:

Մեծավորներն այսպես դատաստան են անում՝ Իսալոքի
գնդակահարել, ինձ կախել, քսանհինգ սալդաթներին էլ իրեք ան-
գամ սքառվ-սթոռվ՝ անցկացնելուց հետո առեսթանթանկի ոտ
գրկել:

1 Сквозь строй.
2 Арестантская рота.

Վանդակի մեջը նստած՝ ինքս ինձ մտքի խորացա՝ «Յա ի՞նչ
փորձանք է, ասում էի, որ եհավ գլխիս. սա ինչ խեղճություն էր, որ
ես արի»:

Կհավատա՞ս, այդ րոպեին, երբ որ ես մեկ ոտքով աչս աշ-
խացեցում էի, մյուսովս արդեն այն աշխարհքն էի մտեր, այդ րո-
պեին ասում եմ, երբ որ խայտառակ մահս, խեղդվելու տանդան-
քը, մարդկանց անեծքն ու ծաղրանքը գլխիս պիտի թափվեր—
թողով խեղդվելուց բացի, ավելի ի՞նչ ուրիշ խայտառակ պատիժ
կա ազամորդու համար— էլի ասում եմ, այդ րոպեին ես մեղա
գալու տեղը, արած հանցանքիս փոշմանելու տեղը, մտքիցս անց-
նում էր, թե ինչու՞ այնպես հարմար շարժվեցի, որ համ գայլերը
կուշտ լինեին, համ էլ գառները՝ սաղ-սալախամթ. իբբ, ինչու՞ չկա-
րողացա այնպես անել, որ համ հիսուն հազար ոսկին սնդուկս մըտ-
նեմ, համ շերքեզներն իրենց ուղեցածը անեին, համ էլ բերդի մե-
ջը եղողները բանից խաբարություն չունենային:

Գիտեմ, շատ հոգու մեղք բան էր այդ թամահությունս՝ առանց
քրտինք թափելու այդչափ ոսկուն տիրանալը. գիտեմ, որ չերքեզ-
ների միտքը վատ էր ու նրանց անելուն շարագործություն էր. այն
էլ գիտեմ, որ բերդը մտնելովս ես շատ մեծ մեղք էի անում, այն-
պիսի մեղք, որ աշխարհիս վրա մի մարդ չէր գտնվի, որ ասեք
թե «էվալլա՛», որովհետև արածս փատլեցություն՝ էր, Աստու ու
թագավորի օրենքին հակառակ բան. բայց ես մեղայի չեկա, չփոշ-
մանեցի: Հիմա էլ, որ վրան գուցե քառասուն, հիսուն տարի անցել
է ու անդադար գրեթե պատին եմ զարկում ոչ թե արած մեղքիս,
այլ անխելք շարժելուս համար: Ինձ որ հարցնես այդ թամահու-
թյուն, շարագործություն չէր, այլ մարդկանց զարմացնելու փա-
փազ: Մենք որ կանք՝ գովասանքի խե ենք. ուզում եմ ասել, թե
գովասանքի, զարմացնելու համար մարդ կա որ ինչ գեշ բան ուղես
կանի, միայն որ նրա բունած ծուռ-մուռ ճամփան շճանաչվի ու ին-
քը խայտառակ չլինի: Շատ միտք անելուց հետո ես գտա մեր ան-
բախտության պատճառը— դա գովասանքի փափազն է. այն էլ
պիտի ասեմ, որ էլի գովասանքի փափազն է, որ մի օր ազգին իր
ամենամեծ փառքին պիտի հասցնի... որ այս բանս ազգի տերերը
լավ իմանային ու ճիշտ օգտագործեին ժողովուրդը այսօրվա օրս
ուրիշ օր պիտի տեսներ... է՛յ, ինչ էլ որ լինի:

1 Ստորություն:

Այս մտքերիս մեջ էի, մեկ էլ տեսնեմ, վրաս դրած շասավոյ-
ները մեկ-մեկ, մեկ-մեկ քաշվեցին ու գնացին. ես մենակ մնացի
վասթոռկի¹ մեջը, ձայն ու ծպուտ չէր լսվում: Իմ կարծիքով ժամը
երկուսը կամ երեքը կլինեք, քունս բոլորովին փախել էր աչքիցս
լսել էի, որ մեռնելու րոպեին մարդս մի քիչ խելքից բաժանվում
է, դմրածի պես է լինում. ուտում է, խմում, խոսում առանց հաս-
կանալու, անասունի պես. բայց դա սուտ է, հե՛շ չհավատաս.
միտքս ոչ թե դմրեց, այլ է՛լ ավելի ուժով ու զարթուն էր. մանկու-
թյունիցս մինչև այն օրը ինչ որ անցել էր, բոլորը մաքուր միտք
էր, բայց մի բան չկարողացա հաղթել— այն միտքը, որ վաղը ան-
պայման մեռնելու եմ՝ շատ էր սարսափեցնում ինձ. պարանի կամ
գնդակի ցավից չէր վախեցածս, ամենևին չէ, այլ այն բանից, որ
խոսքի վրա, հիմա սաղ եմ, հոգիս վրաս է, գնդակը որ խփեն, թե-
կը որ վիզս անցկացնեն ու խեղդեն, հոգիս ի՞նչ կլինի, ճրագի բե-
ցի պես միանգամից կմա՞րի, կչքանա՞, թե՞ մի այնպես մութ զըն-
դան տեղ կսկսի մոլորվել, ինչպես որ մուխը մութ նկուղի մեջը...
Թյո՛ւ, քերականություն չեմ սովորել, որ կարողանայի միտք
ճիշտ հասկացնել, մի բան եմ ուզում ասել, բայց լեզուս չի գա-
նում. սրտիս մեջ ինքն իրեն ասվում է, բայց ինչ օգուտ, դուրս հա-
նել չեմ կարողանում:

Միտք անելով, միտք անելով ինքս ինձ մոռացա. մոռացա որ
վասթոռկի մեջ եմ, մոռացա որ այսօր այսքան փորձանք եկավ զը-
խիս, կարծես թե այդ ամենը ինձ համար չէր, այլ մի ուրիշ, օտար
մարդու վրա եմ լսել, բայց քուն չէր այդ, մի տարօրինակ բան էր...
արդյոք քեզ հետ էլ ժամանակ առ ժամանակ պատահո՞ւմ է...

Մեկ էլ տեսնես, վասթոռկի դուռը ճըրճոռ արավ ու դրսի
կամացուկ մի կին ներս մտավ: Սկզբում շիմացա ով էր:

«Գասպա՞ր, ասաց հայի ձայնով, ինձ այնպես է թվում, որ
ամեն ազգ ջոկ-ջոկ ձայն ունի, որովհետև նեմցեն, կամ ուսը Գաս-
պար ասելու որ լինեին, ուրիշ ձայնով կասեն— Գասպա՞ր, ասող
կինը, ճիշտ է, քու մեղքդ մեծ է, բայց առնելու պատիժդ ավելի
մեծ պիտի լինի. դրա համար իմ բարկությունս եկավ, որ մի հա-
հոգի պիտի կորչի, այն էլ մի ջահել տղա, որ գուցե Աստծով կիբ
բատվի ու վարքը կփոխի: Ինչ որ դու արիր, ամեն մարդ էլ կանի
երբ որ քու տեղը լիներ:

¹ Բանաս:

Գու գիտե՞ս ես ով եմ. ես այն որբ, հայերից բամբասաված,
անունը կոտրած, թքած-մրած Կյուլզագեն եմ, որ հոժար կամբովս
ինքս ինձ դուրս արի հայերի միջից, որովհետև ամբողջ քաղաքի
մեջ մի հոգի չգտնվեց, որ իմ ցավս հասկանար: Ես որ կամ, իշխա-
նի սերունդ եմ, դուք ստրուկ եք. ստրուկն ու իշխանը հեշ մեկմե-
կու կարո՞ղ են հասկանալ: Կնիկարմատ էլ որ լինեմ, էլի իմ երակ-
ների մեջը քաջի արյուն է վազում. հեշ ես լայաղ կանեի՞ այս իմ
ազնիվ արյունս ձեր ստրուկի արյունի հետ խառնելու: Յոթը փեսա
եկան դիմացս. ամենքը հավանեցին սիրուն երեսս, մեկը չգտնվեց,
որ հոգիս ճանաչեր, հավաներ ու սիրեր: Ես քաջ տեղովս կկարո-
ղանայի՞ վախկոտներին սիրել: Գնա ասա բոլորին «նրանք մինչև
այն օրը առած կլինեն համ օտար աղգերից, համ էլ շենքով հա-
յերից, քանի որ այդպես ստրուկի բնավորության տեր են ու իրենք
իրենց շուրից վախենում են»:

Ասաց ու շքացավ:

Վասթոռկի դուռը առջևս բաց էր, շասավոյներ շկային: Ասել
պե՞տք է, որ իսկույն փախչելու տեսա: Սյունին մի թամբած, սիրուն
չերքեղի ձի էր կապած, վրան երկու կողմից լեփ-լիք լցրած խուր-
ջին, ձիի ոտքի տակն էլ՝ թուր, դաշույն, զույգ ատրճանակ ու թը-
վանք: Հեծնելու ու փախչելու մեկ եղսով: Խուրջինի մեջ կար հինգ
հազար հատ ոսկեդրամ: Տասնհինգ տարի պատվեցի Անատոլուի
կողմերը, մինչև որ անունս մոռացվեց: Հիմա անունս էլ, երեսս էլ
փոխված է, ինձ համար անվախ ման եմ գալիս. ով եղածս ասեմ
էլ, մարդիկ չեն հավատա: Որովհետև օրերս արդեն համրած է, այս
պատմությունս քեզ դիտմամբ արի, որ մեռնելուցս հետո կամ զը-
րես, կամ մեր հայերին մանրամասն պատմես:

1868-ին Գասպարը մեռավ ու թաղվեց Լուսավորչի գերեզմա-
նոցում, բայց ուրիշ անունով ու ուրիշ ազգանունով:

ՎԱՐԹԵՎՈՐ.

(Բազազ Փփառնի-պատմածը)

Ես այն մարդկանցից չեմ, քանի որ ինքս պատավել եմ, հի-
նացել եմ, հին մարդկանց, հին սովորություններ ու հին օրենքներ
գովեմ ու ամեն նոր բանի, նոր մարդու վրա մի-մի փոռտ գրտ-

եմ. չէ՛ ես այդպիսիներից չեմ. լափին լավ կասեմ, կուզի հին լի-
նի, կուզի՛ նոր, այդպես էլ՝ վատին վատ կասեմ, կուզի պապե-
րիս պապաների՝ ժամանակվա բան լինի:

Մեր նախնիները դեռ քանի՞ տարվա քաղաք է որ, իմ կար-
ծիքով հարյուր տարի դեռ անցած չպիտի լինի նրա հիմնադրե-
ման օրից (մի անգամ խելքս վրաս, որ մի լավ համբերեմ, հա-
տատ կիմանամ. թյո՛ւֆ թյո՛ւֆ, հետս թղթե՛ս չեմ վերցրել. թե
չէ նրա հաշիվը գտնելը խիստ հեշտ է. ի՞նչ էլ որ լինի): Նախի-
ջեանը հայի քաղաքների մեջ ամենանորն է. Քիֆլիս, Աժտե-
խան՝ — դրանք շատ հին քաղաքներ են. նրանց շինող թագավոր-
ների անունը, երևի, կորցված, մոռացված էլ լինի, որովհետև
նրանց հիմքերը զցողները երևի կամ Հայկի, կամ Տրդատի որ-
դիներն են. Հայկի ու Տրդատի մեռնելը, չէ՛-չէ՛, հինգհարյուր
տարի կլինի, կարող է սովելի էլ, նրանց գերեզմանների քարերը
վաղուց փտել են, ոչնչացել են: Այն ժամանակները գիր, հաշիվ
լինելը շատ կասկածելի է: Հիմա, Աստվածդ կսիրես, առանց գր-
րի, առանց հաշվի դրա հաշիվը ինչպե՞ս կգտնեն մարդիկ... Մեդ-
քիդ տերը լինեմ, որ այդ հիմիկվա՝ հին ժամանակվա վրա պատ-
մություն գրողները բոլորը փորձներից չհանեն — ինձ որ հարց-
եհա — նրանց շղթաժը բոլորք սուտ է, բոլորը հնարած բաներ
են:

Ամմա՛ այդպես շիմանաս աստվածաշունչ-ավետարանը, նո
ճիշտ-ճիշտ դրած բաներ են, գրքի մեջ էլ գրած է, որ մի օր Աստ-
ված նստել է պուլեկենի² անտառի մեջ, պուլեկենի անտառն է
վառվում, շէր վերջանում, վառվում էր վառվում շէր վերջանում
Աստված ասաց. «Մոսես, Մոսես»: Մոսեսն էլ ասաց. «Հրանի,
Տեր իմ»: Աստված ասաց. «Գնա՛, իմ պատմությունը պատմի իմ
ժողովրդին»: Մոսեսն ասաց. «Ինչպե՞ս պատմեմ, որ լեզուս թը-
վատ է», — ասաց: Աստվածն էլ ասաց. «Լեզուդ թլվատ թող լի-
նի էլի՛, մենք դրա ճարը չե՞նք գտնի, ինչ է, ասաց, բերանդ մի
բաց, նայեմ»: Մոսեսը բերանը բացեց. Աստված էլ նրա բերնի
իրեն սունը փչեց շիկացած ածուխի պես:

Սունչ որ ասում են, գրոց խոսք է, որ նեֆես ասել է: Է՛ր
ինչ էլ որ լինի: Երբ որ Մոսեսի փորը Աստծու նեֆեսով լցվեց:

¹ Աստրախան:
² Չիթենիների անտառ:

Մոսեսն էլ, Ֆսեռավնո՛ իմաստուն գիտունի պես մի բան դար-
ձավ՝ (սկզբում պալրիսճի, ձուկ բռնող). անցածն ու գալիքը մի
միևնուտվա մեջ սովորեց. առավ, ջանս, կրկու հատ քարե տախ-
տակ ու նրանց վրա սկսեց գրել-աշխարհիս երեսին լինչ կա,
ինչ չկա, բոլորը գրեց: Թրդատն էլ է այնտեղ, Գրիքոր Լրսավո-
րիչի տասնեկու չարաբանքն էլ է այնտեղ, Պիղատոսի մատնու-
թյունն էլ է այնտեղ, տերն մեր Հիսուս Քրիստոսի տանջանքն էլ
է այնտեղ, առաքելոցների հրեզեն լեռվով քարուղւթյունն էլ է
այնտեղ. կարճ՝ առաջվա բոլոր հին պատմությունը այնտեղ է,
այդ Մոսեսի տախտակների վրա է գրված: Մոսեսն էլ, ջանս, ին-
քը ջճուզ էր, բայց քանի որ այն ժամանակները, հայերիցս բա-
ցի, ուրիշ մի ազգ չիր-կարդում չունեք — նոդայի պես մի բան
էին — առավ ու երևի այդ ամեն պատմությունները հայի խոս-
քով գրեց — բայց այն ժամանակվա հայի լեզուն հիմիկվա պես
խառնիխուռն ու կեղտոտ շէր. այն ժամանակվանը գրափառերն
էր, գրոց էր ասվում:

Վենետիկի ձուկ ուտող վարդապետները, երևի, գտել են այդ
տախտակները, մագաղաթի վրա երեսը հանել են ու հետո տպել
են, տպրելուց հետո էլ ժամերին են բաժանել: Դե, այդ տպած
գրքերն են, որ ավետարան, աստվածաշունչ են ասվում...

Բայց ես կարծես թե մի քիչ խորացա, միտքս բան կար,
ուզում էի ասել՝ մոռացա ու ուրիշ բան սկսեցի...

2

Հա՛, այդ էի ուզում ասել. խոսքի վրա՛ այսօր վարթեվոր է.
ժողովուրդը, ինչպես որ գիտես, սյուրու-սյուրու, որը ֆանթոնով²,
որը թևավոր դողներով, բազարի փոսաթոյ դողով, որն էլ ոտ-
քով դեպի Սուրբ Խաչ պիտի քաշվեին. ինչպես որ հիմա է. առաջ-
վա ժամանակն էլ, նեխն-նման այդպես էր, այնքան որ, սոսա չէ,
այն ժամանակները հիմիկվա պես թանկանոց ձի էքիպած չկար,
իմ ջահելության ժամանակ ամենաթանկանոց ձին երեսունհինգ
ռուբլի արհնացիս էր ու ամենավերի, հիշվական աղան մի բոխ-
քա էր ունենում, մյուսները հասարակ արաբա կամ սայլ էին

¹ Все равно.
² Կարո:

ունենում ու դրանով էին գնում Սուրբ Խաչ ու Սուրբ Կարապետ... Բայց հիմա, ջանս հաշարակ արաբան, սայլը ու բոխչքան մողից դուրս եկան. դու էդ ի՞նչ ես ասում, տոռոշքան էլ մողից դուրս եկավ տոռոշքան, ճիշտն ասեմ, ինքս էլ շատ չէի հավանում. ամենա-առաջ տոռոշքայի մողան մեր ծաղիկ Մառյա էստովնան ու Կուսիկի Թոթայը մտցրին— դրանք երկուսը նախնականի առաջվա մողնիցաներն էին, է՛հ, ինչ էլ որ լինի: Առաջները վարթեվորը ուրիշ տեսակ էինք կատարում... Հա՛, այդ պիտի հարցնեի, այդ վարթեվոր, որ ասում են, արդյոք դրա թարգմանությունը ի՞նչ ասել է. ջուր լցնել շինի՞, որովհետև մեր տեղում, հանաք անելով, մեկ մեկու վրա փայտե ջրամանով, փարշով, մեկ-մեկ էլ դուլով ջուր որ լցնում են, վարթեվոր են ասում ու ծիծաղից մեկնում են, այս մերոնց ամենասիրած կատակն է, ինչպես որ բարեկենդանին փեշը դռակի կամ բարձի կարելը, կամ մարդու միամիտ կանգնած տեղը «կրա՛կ» կանչելը ու լեղին պատռելը Շատ տարօրինակն են մեր տեղի ժողովուրդը:

Հա՛, այդ էի ասում: Որ Սուրբ Խաչ էինք գնում— փոքր էի բայց հիշում եմ— գնում էինք բաղան, մի-մի հատ վայրի շուշան էինք պոկում, դանակով ջրացիր էինք պատրաստում ու Սուրբ Խաչի ջրի մոտ, եղեգնուտի ետևը թաքնվում էինք՝ ջրացիրով անցնող-դարձնողի վրա ջուր էինք ցայտեցնում ու «վարթեվոր» էինք ասում: Այս պատիկներս էինք անում: Մեծերն էլ մեզնից պակաս չէին. տղամարդ, կին, ջահել տղա, երիտասարդ աղջիկ, բոլորն էլ սովորաբար ձեռքներին մի-մի աման էին ունենում, հա՛ այն տղամոտ, կեղտոտ ջուրը վերցնում էին, հա՛ մեկ-մեկու վրա էին լցնում «վարթեվոր» է, իբր: Ժամանակ առ ժամանակ էլ մեկը մեկին բռնում, մանավանդ մարդուս փիին կանգնած ժամանակ, ու ճո՛մփ էին անում, ջուրը զցում: Զուրը ընկնողն էլ այնքան թրջվելուց չէր վախենում, ինչքան որ վրան-գլուխը ցեխավելուց էր վախենում, որովհետև Սուրբ Խաչի ջրի մեջ ջրից ավելի ցելս կա, մեջը որ ընկնես, կասկածելի է, կկորոզանա՞ս ինքդ քեզ վեր կենալ, թե՞ քանի գնաս մեջը խորունկ կխրվես. ցեխն էլ հոտա՛մա՛ծ, մեջը լիքը գորտեր, տզրուկներ ու տեսակ-տեսակ զզվելի ջանավարներ— ճահիճ է, էլի...

Այդպես էր առաջվա ժամանակները: Ինչ էլ որ լինի, փաստ մեր այն ժամանակվա Սուրբ Խաչը: Ծի՛շտ է, հիմիկվա պես շի՛փ շիտակ ու մեջքիս հաստությունով ծառեր չկային՝ ու եզածն էլ

ծուռ-մուռ, բորբոսնած, վրաները սարդի ոստայններ բու՛ծ, թըր-թուրոտ ծառեր էին, բայց էլի, ինչ սուտս պահեմ, մեջը հիմիկ-վանից շեն էր:

Մեկ-մեկ մտքիցս անցնում է, թե ինչո՞ւ մարդս իրեն ջահելություն սովորությունները ավելի է սիրում ու նոր բաների վրա աչք չունի նայելու. արդյոք նրա համար է, որ առաջվա բաները լա՞վ էին, թե՞ իրեն անցած ջահել օրերը միտքը բերելով՝ նրա հետ կապված ամեն խաղերը ու քեֆերը սրտին լավ են գալիս՝ չզիտեմ. բայց ինձ այնպես է թվում, որ աշխարհքս քանի գնում վատանում է... Իհարկե, այս նոր ժամանակներս շատ լավ-լավ բաներ հնարվեցին, բայց դու ի՞նչ ուզում ես՝ ասա՛, այն փակված, տոթ վազոնով տեղից տեղ դնալը ամենաշսիրած բանս է: Աչքը սիրեմ առաջվա թոռյա՛-արաբային. հանգիստ կերպով հինգ-վեց հոգի մեջը տառետի պես սղմվում էինք նստում, ձիերի վիզը մի-մի, երկու-երկու այն զանգուլակներից էինք կախում, «ժա՛նկուռ, ժա՛նկուռ», այսպես ճանապարհ էինք ելնում: Ծամփին էլ ջուր, կամ կանաչ արոտ, կամ ծառի հով էինք տեսնում թե չէ՝ «տղերք, այս շուրի մեջտեղը մի-երկու գավաթ շայի հետ ինչպե՞ս եք»,— ասում էինք ու ձիերը արձակում էինք, արոտի մեջ բաց թողնում, մենք էլ սամովարի հետ էինք լինում, փամիլը՝² դրանից էլ ավելի ուրախություն պե՞տք է որ: Այն ժամանակվա պաղած միսը, կամ հավի բուլը կրծելը, վրայից էլ կեղտոտ ջրով եփած շայը՝ փշրած, թոզ կտրած ու կուպրի հոտ առած լոխումով խմելը, Աստված հավատա՛, որ հիմիկվա մառոծնիի ու փլումպիրի հետ շեմ փոխի... Թե չէ, Աստվածդ կսիրես, այս ի՞նչ ձև է. ժամանակ-անժամանակ քանթութթոռի հրամանքով մաշինը կանգնեցնում են, քանտութթոռի հրամանքով վագոնի դռները բացում են, դուրս են թափում, քանտութթոռի հրամանքով շտապելով պիտի ուտես, լեզուդ, բերանդ էրելով մի սթաքան շայ պիտի խմես ու դրա համար կրակի գին տաս— թքե՛մ ես այսպես ճամփա գնալու վրա. հետո՞, սրա անունը ես ճամփորդություն պիտի՛ ասեմ. այդ հո մարդու՛ յաշչիքը դըրված ապրանքի պես են ման տալիս, ոչ թե ինքը իրեն չեֆին է ման գալիս: Այդ նոր ժամանակվա զարմանալի բաները որ կան,

¹ Եռաձի:

² Помилуй.

բոլորս մեզ պես դազերիս տանջելու, քիսաներս դատարկելու համար են հնարված: Բայց ի՞նչ պիտի անես, ճարգ ի՞նչ է, ժամանակի հարմար պիտի շարժվես, որ ծիծաղելի չլինես:

Խոսքս էլի առաջվա վարժեմանի ու Սուրբ Խաչի վրան է: Այն ժամանակները հիմիկվա ուժոնսը ու պուճեթը չկար, ու ուխտավորներս էլ ամենքս մեզ համար ինչ որ պետք էր, տնից հետներս բերում էինք. օրինակ գիշերվանից դեզ-դեզ սամսաները¹, հացտապակները, դավուրմա, տապկած ճտերը պատրաստում էինք, շալ, շաքար, շիլիմ ձուկ, խավլար, պանիր, ռոմ, գինի, արաղ, քյաբաբի միս, ածուխից ու տաշեղից բացի ամեն ինչ վերցնում էինք հետներս: Սուրբ Խաչ որ գալիս էինք, հանգիստ կերպով, որս ծառերի շվաքին վրան էր խփում, որն էլ որ վրան շունենար, մատղաշ արոտի վրա խալի ու կարպետ էր փռում, առաջվա վարքով, տղամարդ, կնիկ զույգեր էինք կազմում, որո էլ գլուխը բարձին խո՛ւ-խո՛ւ քուն էր լինում. այդ ընթացքում էլ ջահելները սթաքանները, պիլութները, շայինքը, ու ռոմի շիշն էին հանում, սամովարը դնում էին, քյաբաբի կրակը հազիրում, երբ որ սամովարը խըփը՛ւ-խըփը՛ւ թափվում էր ու քյաբաբի մուխը երկինք-գետին մեկ էր անում (այդ կծու մուխը մոծակի ոքո՛ւ ճանճի մեծ թշնամին է), մենք էլ, այստեղ լսի՛ր, քուններիցս զարթնում էինք ու սկսում մեր քեֆը. փամիլը՛յ, արքավութին էր որ կար, դրանից ավելի ի՞նչ քեֆ էր պետք ազամորդուս:

3

Թքեմ ես մարդկանց հիմիկվա քեֆի վրա: Աստվածդ կտրես, այդ ի՞նչ բան է. բաղչայի հենց մեջտեղը մի փայտի տուն են շինել, անունը ութոնտ են դրել, մեջը բավականին ոռա լաքեյներ են դրել սա էլ պուճեթ է, ասում են. տան չորս կողմն են ծառերի հովին տաշեղի հավաքներ են շարել, սա էլ պեսեթքս է, ասում են. մի սթաքան շայ է սիրտդ ուզում խմելու՝ տասը-տասը հինգ կոպեկդ առնում են... Հա՛յ ձեր պուճեթի՛ն էլ, ութոնտի՛ն էլ, լաքեյների՛ն էլ... Սա խոմ ափ-աշկարա, հարամիրություն է՝ դրանց արածը:

¹ Թխվածքի տեսակ:

Հա՛, սուտ չի՛, դու էլի քեզ համար կարող ես հին վարքով արոտի վրա սամովար դնել, քան անել, բայց դու մի նայի, լաքեյները անընդհատ կողքիցդ անցնելիս ինչպես քիթ ու պոռնկ են անում, ծիծաղում վրադ. մյուս կողմից էլ մողնի հաքված աղջիկդ է նազեր ծախում, «դե՛, պապա՛, ուրիշները չեն անում՝ մենք ինչո՞ւ պիտի անենք, դե՛, ուրիշները մեզ վրա վեղու կբարձրացնեն», չգիտեմ ինչ, չգիտես ինչ... Գու էլ ճանճրանում ես, թքում ու մյուսների վարքով շարժվում-շարժվում ես, բայց արի տե՛ս, որ ամեն մի Սուրբ Խաչ գնալդ իննը-տասը մանեթի դուռն է. էն քեֆին ի՞նչ ասեմ, որ մի քանի ժամվա մեջ աչքքան փողից մարդուս հանում է: Այդ պուճեթը ու ութոնտը հնարած գրից սատանա եմ տեսնում մեր այդ Սուրբ Խաչի բաղչում — այնքան աչքիցս ընկել է:

4

Այդ ութոնտը ու պուլվարը շինած ու Ռոստովի ազդը մեջտեղ եկած օրից մեր քաղաքի ծախսը մեկը մեկով եղավ, գուցե դեռ ավելի էլ: Կհավատա՞ս, այն վերջին արապաճիի աղջիկը մողից ետ մնալ չի ուզում. հոժար է տանը քաղցած ուտելու, ուրիշների կար-կարկատնից աչքի լույսը խավարացնելու, միայն թե պուլվարի տեղը, կամ Սուրբ Խաչի բաղչայում, այն երկար պոչով փլաթին՝ Յազած, ծանոթ աղջիկների հետ թե-թեի մտած ման գա, ինչ է որ փեսացուների սիրտը գեպի իրեն տաքացնի. մի քիչ բարձր մարդկանց համար հո ասել էլ չեմ ուզում. նրանք վաղո՞ւց ոռու փամեշչիցաներից կոխել են, անցել են. Մոսկով շտեսածդ այստեղ կտեսնես որ ասեմ, սուտ չեմ լինի:

Առաջները մեր զանգատը կանանց փլաթիցուի խասի ու թանգի վրան էր — ինչ էլ որ լինի, տրտնջալով, բամբասելով, ծիծաղելով՝ թանկանոց փլաթիցուներից հրաժարեցրինք. հիմա փլաթիցուն աժանոց է, բայց կարելու վարձը շատ թանկացավ. դրանից էլ բացի, առաջվա մի փլաթի տեղը, հիմա հինգը-վեցն են հագնում, էլի եղավ են:

Իհարկե, ինչպես որ հիմա, այնպես էլ առաջները այդ բոլոր ֆենտերը ամուսնացու որսալու համար է, բայց մտքիս մեջ ասում

¹ Զգեստ:

եմ, աքոյոք առաջվա տղամարդ է եղել թե կին— խղճմտանքը, նամուսը, երեխաների մեռունը մի քիչ ավելի չէ՞ր հիմեկվանից

5

... Նախիջևանում քեֆի երկու տեղ կա. մեկ սուրբ Գևորգի բակն ու պարտեզը (ես պարտեզ եմ ասում, դու գերեզմանոց հասկացի), մյուսն էլ Սուրբ Խաչ վանքի պարտեզը. երկուսն էլ խոսքը մեր մեջ մնա— աղոթքի և ուխտի պատրվակով՝ տունը մնացած ազապ աղջիկների համար փեսացու փնտրելու համար են: Քանի որ վարթեվորի մասին խոսք եղավ, արի քեզ մի բան պատմեմ՝ վարթեվորի օրը պատահած. լսել եմ, որ դու շատ ես սիրում հին բաներ լսել ու գրի առնել. դա լավ է, գեշ բան չէ. եթե պատմությունը լավ է, մեր որդիքը թող մեզանից օրինակ առնեն, իսկ եթե վատ է՝ թող մեր արած սխալներից զգույշ մնան Ափսո՛ս, որ մեր տեղի մարդիկ վախենում են իրենց պակասությունը ցույց տալուց. ի՞նչ կլինեի հիվանդի վիճակը, եթե նա բժշկից զազտնի պահեր իր մարմնի վերջերը, ցավն ու հիվանդությունը:

6

Հայրս— Աստված ողորմի հոգուն— խանութը եղած-չեղածով ինձ էր հանձնել. ծախսիս-հաշվիս է՛լ չէր խառնվում. ամբողջ օրը կա՛մ սրճարանն էր նստում, ժամանակ անցկացնելու համար թուղթ խաղում. կա՛մ շուկա էր գնում իր հասակակից մարդկանց հետ ժամերով զրույցի բռնվում— մեր տեղի զրույցի էլ ի՞նչ է՝ տերտեր-վարդապետի բամբասանք— այդ էլ չեղավ նստարանին նստած՝ պատին կհենվեր ու ժամերով կխոսկացներ: Շատ քիչ էր պատահում, որ խանութը մտնեի. մտնեի է՛լ մի քիչ կոնար տղոց հետ հանաք-չանաք կաներ ու վեր կկենար, կգնար իր բանին: Ի բն խաղաղ բնույթը ուներ հայրս, Աստված ողորմի հոգուն:

Ինչպես ասի՝ ծախսիս-հաշվիս հեջ չէր խառնվում. «Յոգոս կանես, ասում էր միշտ, քեզ համար կանես, վնաս կանես՝ այդ էլ քեզ համար. այսօրվանից ես քո գլխին հա՛ կամ, հա՛ չէ, իմ բանս արդեն պրծել է. ալյուրս մաղել եմ, մազս պատից կախել

եմ: Զահել ժամանակս բավական աշխատեցի, չարչարվեցի. դո՛նե ծերությունս այս մի քանի տարին ինձ համար հանգիստ անցկացնեմ: Ունեցած-չունեցածս ողջ քեզ տվի. թե քեզնից մի ժանգոտ կոպեկ պահել եմ՝ դժոխքի պահեմ՝ ո՛ւմ պիտի տամ: Հետս մյուս աշխա՛րհքը պիտի տանեմ, ի՞նչ է... եթե իմ ու մորդ ճերմակ մազերին խղճաս ու մեզ դրկցի դուռ չգցես՝ շեն կենաս, թե որ չէ՝ այն էլ դու գիտես, մեղքը-վարձքը վիղդ. էլ ի՞նչ ասեմ, որդիս:

Մինչև այս տարիքդ թե խելքի ես եկել՝ լավ, թե չէ՝ սրանից հետո խելքի գալը դժվար է. այս տարիքիդ քեզ խրատելն ուշ է (այն ժամանակ կլինեի քսանչորս-քսանհինգ տարեկան). արա՛ ինչ որ խելքդ կկտրե, գնե՛, ճախե՛, ա՛ռ, տո՛ւր— վրադ դատավոր չկա. բայց այնպես արա, որ՝ թե ընկնես, նորից ոտի կանգնել կարողանաս, թե կորցնես՝ նորից վաստակելու դուռը գտնես. չլինի թե հույսդ կտրես ու որբեայրի կնոջ պես շվարես... Բայց եթե քեզ համար կին ուզենաս ընտրել՝ առանց ինձ ու մորդ մի՛ ընտրիր. անշուշտ մենք, որ այս տարիքին ենք հասել՝ խոտ ու դարման չենք կերել, կնիկարմատ ասած բանից մենք էլ քիչ ու միչ հասկանում ենք. ուզում եմ ասել, եթե ամուսնանալու միտք ունենաս՝ մեզ խորհուրդ չհարցրած՝ մարդու խոսք չտաս, իսկ եթե չուզենաս՝ այդ էլ դու գիտես, քանի որ կինդ քեզ հետ պիտի ծերանա, չար ու բարին քեզ հետ պիտի քաշե, ուրախություն ու տրտմություն միասին պիտի տանեք: Ասելս այն է, որ եթե տրեներս հարս բերելու լինես՝ մի այնպիսին բեր, որ մենք երեսը նայենք, ուրախանանք...»:

7

Ամեն տարի, Մնունդի ժամանակները, ապրանքի համար Մոսկվա էի գնում: Երբ որ ապրանքն առնում, վերջացնում էի ու գնած բարիս հաջողությունը ճամփա էի գցում, դրանից հետո մի-երկու շաբաթ քեֆիս համար մնում էի Մոսկվայում, այդպես, մի տեսակ, սովորություն էի արել: Շատ էի սիրում մոսկովցի վաճառականների կանանց ու շահել աղջիկների հետ խոսք ու զրույց անել, մեկ-մեկ էլ հետները թատրոն, պարահանդես գնալ. մեղքս ի՞նչ թաքցնեմ՝ վալս, էքսես, ապա քատրիլ էլ էի խաղում հետները և, հորերից ու ամուսիններից գազառնիք... մեկ-մեկ պարտ-

սանքի էինք դուրս գալիս և ամեն տեսակ մանր-մունք նվերներ էլ էի տալիս: Ի բնե հայտնի է, որ կինը կատակ, զվարճութուն շատ է սիրում: Է՛հ ջահելութուն, ջահելութուն...

Ահա այսպես հետները միշտ կատակ ու գրուցք էի անում, բայց մեր գրուցքն ինչից էլ սկսվեր, անհնար էր, որ վերջ ի վերջո պսակի խոսքը մեջտեղ չգար: Թուս կանայք միշտ կատակով ինձ ասում էին, թե հայրս ու մայրս ականջիցս պիտի բռնեն ու զոռով պիտի պսակեն, իմ կամքս հեշ չեն հարցնելու. նրանք ո՛ւմ հավանեն՝ նրա հետ էլ պիտի պսակեն, որովհետև — ասում էին — դա ձեր՝ ասիացիների սովորութունն է: Ես էլ նրանց ասում էի. «Եթե ուրիշ բաների մեջ մորս ու հորս խոսքից դուրս չգամ, ամուսնանալու մեջ նրանց հրամանը ո՛չ լսելու եմ, ո՛չ էլ կամքները հարցնելու եմ»: Կանայք ավելի եռանդով էին կատակում հետս ու ասում էին. «Մի՞թե կհանդգնես ծնողքիդ կամքից դուրս գալ. չէ՞ որ նրանք կանխածեն քեզ, ապա թազավորին կգրեն, թե այսպիսի անառակ որդի ունենք, ու քեզ վիճվոր կտանեն», և այսպիսի խոսքերով այն տեղը հասցրին ինձ, որ մի օր էլ նրանց ասացի. «Ես մարդ չլինեմ, աշխարհքիս երեսին օր ու արև շտեմեմ, ունենալիք զավակներովս չուրախանամ, եթե ես, ինքս ինձ, ատանց նրանց հարցնելու չնշանվեմ»:

Այդ կանանց կատակների իմաստը պարզ էր. նրանք փորձել էին ուզում, թե արդյոք նրանցից որևէ մեկի հետ չե՞մ ամուսնանալու, որովհետև մեր հայր ի բնե իր հավատին կանգնած է. այլազգի աղջիկ առնելը, կամ իր աղջիկը այլազգու մեջ գցելը ո՛չ միայն ամոթ, այլև մեղք է համարում:

8

Վարթեվորի կիրակին էր: Մայրս, հայրս, հայ քրիստոնյայի սովորությամբ, վարթեվորի պատը բռնած, հենց որ նավակառիկ են հասնում, շաբաթ օրը ախորժակով ուտում են մի աման ձիկ հապուր, վրայից էլ անուշ են անում մի մեծ ափսե կաթնապուր գրա վրա էլ մի թավա ձվածեղ. որ ժաքրազարդում են՝ քեֆնիլը ավրվում է, կիրակին տեքալով են լուսացնում, կեսօրին կարգի հիվանդանում և անկողին են ընկնում:

Փանի որ միտքս դրել էի պսակվել, շատ էի ուզում այդ փրակի Սուրբ Խաչ գնալ, գուցե, մտածում էի, երկնավոր տեղ

բախտս բանաւ. Երեսիցս հայտնի էր, որ սրտիս մեջ մի դարդ ունիւմ. մայրս, Աստված ողորմի հողուն, նկատում է այդ, ու չնայած որ հիվանդ էր, ասում է ինձ. «Աեղ համար ինչո՞ւ ես վիզդ ծռած քայլում. դու շահել ես. կառքը լծել տուր, գնա Սուրբ Խաչ ու քեֆիդ նայի. մեզի համար ետ մի՛ մնա, ինչպես էլ լինի, մի օր կանցկացնենք ու Աստծով վաղը ոտքի կելնենք. գնա՛, որդիս, սիրող թո՛ղ բացվի, իրիկվա կողմը տուն գալուդ գուցե մի ուրախ լուր հայտնես»: Իմ ուզածն էլ այդ էր. Իսկույն կառքը լծել տվի: Բայց հորս երեսից երևում էր, որ մորս խոսքերին հավան չէր: «Էդ ի՞նչ ես, ասում, ասաց մորս, ինչո՞ւ տղին, զոռով կողքիցդ քշում ես. գուցե տղան, չի ուզում. զոռ անելդ ո՛րն է: Եղանակն էլ անձրեային է. երեկ գիշերվանից էր երևում. գլուխս կտամ, թե այսօր անձրե չգա»: Բայց ես նրա խոսքերը չլսելու տվի, գնացի սենյակս, Մոսկվայում կարել տված պիջակը, բաճկոնս ու շալվարս շտապ հագա, վրայից էլ՝ ծալքավոր օձիքով վերարկուս, բոլորովին նոր գլխարկս գլուխս դրի, կառք նստա ու ճամփա ընկա:

9

Սուրբ Խաչ որ հասա՝ արդեն ժամը մեկը կլիներ: Վանքի բակը լի էր եռածի կառքերով, սայլերով ու սայլակներով. բոլոր սենյակները բռնած էին. հազար տեղ կրակ էր վառած, որի վրա կաթսա էր կախած՝ տեսակ-տեսակ կերակուրներով, որի՛ վրա էլ խորովածի շամփուրներն էին պտույտ գալիս. վառած փայտի, քակորի, ցախի ու նրանց վրա կաթկթած յուղի հոտը աշխարհք էր բռնել: Զիերի, եզների ձայները (գլուղացիներն այն ժամանակներն ավելի շատ եղածայլ էին գործածում), հարբած գլուղացիների կոխն ու աղմուկ-աղաղակը, տիրացուների տաղերը, բոլորն իրար էին խառնվել, մարդ այնպես էր կարծում, թե դժոխքի մեջառն է ընկել: Դժոխք էր, որ կար:

Նախ, սովորության համաձայն, մտա ժամ, հինգ-վեց սրբերի առջև մեկ-մեկ մոմ վառեցի, մի քանի անգամ երեսս խաչ հանեցի, երկրպագութուն արի. Անիից բերած քարե սուրբ խաչն էլ բանալ տվի, համբուրեցի և աղոթքս ավարտեցի. նորից բակ ելա և, որովհետև մի տարի սուաջ ժամի մոտ թաղված էր ողորմած հոգի Հարություն վարդապետը, և նրա հիշատակը, հիմիկ-

վա նման, ժողովրդի մտքից չէր ելել, մի երկու անգամ նրա գերեզմանն էլ համբուրեցի, հայր-մեր ասի, հետո իջա պարտեզ Սանդուխթներից իջել էի ու մեկ ոտս կամուրջի վրա էր, երբ դիմացս ելան երկու աղջիկ, երկուսն էլ ճերմակ շոր հագած, երկուսն էլ մի հասակի, բայց նրանցից մեկը հրեշտակի պես գեղեցիկ էր, իսկ մյուսը, տնից-դռնից հեռու, սատանայի պատկեր ունեւր՝ սե, տգեղ ու շոփուր, քիթը խիստ երկար ու ծուռ, բերանը մեծ, մինչև ականջների բլթակներին էր հասնում, վիզը բարակ ու երկար՝ իսկը կոունկի վիզ։ Աչքիս ծայրով բավական նայեցի գեղեցիկ աղջկան. քանի ես գեղեցիկիկն էի նայում՝ տգեղ աչքերը լայնացրած վրաս էր շեղ ու, կարծես, ինձ հում-հում ուտել էր ուզում։ Խորշելու բան էր։ Մտքիս մեջ ասում էի. «Տե՛ր Աստված, այսպես էլ անճոռնի, այլանդակ արարած լինի՞. վա՛ղ դրա էրկանը ախորժակիկն»։

10

Ապա ուշքս ու միտքս գեղեցկուհուն դարձնելով, ինքս ինձ այսպես էի ասում.

«Երնե՛կ նրան, ում բախտ պիտի ընկնես. քեզ ոտից զլոփ ոսկով ու մարգարիտով էլ որ ծածկի՞ էլի քիչ է ու շատ չէ. արդյոք հողեղեն ո՞ր արարածին պիտի գրկեն հրեշտակի թևերի պես այդ ձեռներդ. արդյոք ո՞ւմ այտերին պիտի կպչեն այս վարդագույն շուրթերդ. արդյոք ո՞վ պիտի համբուրե, չեմ համարձակվում ասել՝ պագնել, այդ ատլաս, մախմուր այտերդ, ասողի պես ցոլուն աչքերդ... Բախտ որ ասում են՝ սա է բախտը, այս պիտի կնիկ ունենալն է բախտը...»։

Աղջիկները սանդուղքի մինչև կեսը հասել էին— անշուշտ ժամ էին գնում— ես էլ կամրջին կանգնած, աչքս պաղած նրանց էի նայում։ Մեկ էլ ետևիցս մի մարդ անունս տվեց ու ձեռքը ուսիս դրեց. ետ դառնալով տեսնեմ՝ խուժուժի՛ Ասատուրի է։ Մարդը լավ քեֆով էր։ Երևում էր, որ ճաշին, մսաջրի մեջ սոխ ու սխտորն առատ էր եղել. խորովածն էլ նորից առանց սոխի չեղել, քանի որ ամեն անգամ որձկալիս սոխի հոտը քթիս էր դիպչում ու գլուխս պտտվում էր։ Թյո՛ւ, սաստիկ շեմ սիրում, երբ

1 Հողագործությամբ զբաղվող, փոքրիկ կավածխ ունեցող (хутор)։

խողի խոխուալու պես բարձր-բարձր որձկում են, և միշտ զգուշանում եմ ճաշի սեղանից նոր վերկացած մարդու հետ զրույցի բռնվելուց. հեռու լսողաց՝ բերաններից գեշ հոտ է գալիս։ Թյո՛ւ ինչ որ է։

— Որի՞ն ես նայում,— հարցրեց Ասատուրը։

Հայացքս բարձրացրի սանդուղքներին ու սպիտակ շոր հագած երկու աղջիկներին մատնացույց արի։

— Հավանե՞լ ես, ինչ է,— ասաց Ասատուրը։

— Չհավանելու բա՞ն է որ։

— Քու հավանելը հեշ է, մի կոպեկ չարժե, տեսնենք հայրդ ու մայրդ էլ հավանո՞ւմ են։

Իսկույն միտս ընկան մոսկովցի իմ ծանոթ ոռու կանանց խոսքերը և, բարկությունս եկավ։

— Ես որ չհավանիմ՝ հորս, մորս հավանածը կուզե՞մ որ. նրանց ի՞նչ բանն է իմ բախտի մեջ խառնվելը. թո՛ղ ինձ չբարկացնեն, թե չէ առանց նրանց էլ նշանը կտամ... Այդ չէ՞ դու այն ասա, տեղով գիտե՞ս, թե ո՞ւմ աղջիկն է։

— Բա չգիտե՞մ, ես էլ որ չիմանամ՝ ո՞վ պիտի իմանա,— ասաց Ասատուրը։

— Հետո՞, ո՞ւմն է,— հարցրի։

— Ո՞ւմը պիտի լինի, իհարկե՞ իմն է,— ասաց Ասատուրը։

— Ճի՞շտ ես ասում, Ասատուր աղա, թե՞ կատակ ես անում։

— Այդ ի՞նչ հանաքի բան է, որ ուրիշի աղջիկը իմն է, ասեմ։ Իհարկե՞ իմն է. Անուշա է, չգիտե՞ս, ի՞նչ է։

— Առաջին անգամ եմ լսում,— ասի,— անունն էլ ի՞նչպես սազում է՝ Անուշ... Իսկապես վարդի մուրաբայի պես անուշ է։ Իսկ մյուսը, հետը գնացողը (ամաչեցի ասելու՝ տգեղը) ո՞ւմ աղջիկն է։

— Հետը գնացողը, նա աղայիս... ինձ աղջիկն է։

— Հեշ լսած չէի այդպիսի գեղեցիկ աղջիկ ունենալդ. ի՞նչ ծածկամիտն ես եղել. հիմա տեղը չէ՞ քեզանից մաղարիչ առնելը...

— Դրա հաշիվը հետո կտեսնենք,— ասաց Ասատուր աղան,— ուզո՞ւմ ես հիմա գնանք մեր տունը հանդիպենք. գյուղը հեռու չէ. արի կառքս նստենք, մի բոպեղում կհասանենք։

Ճիշտ որ գլուղը հեռու չէր. մի քանի րոպեում հասանք: Ասատուր աղան հրամայեց սեղան սարքել. էլ ի՛նչ ասես բերին՝ տեսակ-տեսակ ուտելեղեն՝ ձուկ, տան երշիկ, տան պանիր, կարագ, սեր, շերտ-շերտ կտրած կարկանդակ, հետն էլ մի շիշ կարմիր գինի և երկու բաժակ:

Ես խմելու հետ գլուխ շունեի, բայց այն օրը Անուշի ազիկ խաթեր համար բավական խմեցի. չգիտեմ՝ յոթներորդ շի՛շն էր, որ դատարկել էինք, թե՞ ութերորդ. օրը արդեն մթնելու վրա էր. գլուխս արդեն սկսել էր կարգին պտտվել: Իմ օրում այսպես քեֆով եղած չէի: Այդ միջոցին իմ տեսած երկու աղջիկը բակովն անցան և մի ուրիշ դռնից ներս մտան. երևում էր, որ Սուրբ Խաչից էին գալիս: Ծոցցող ինքնաեռն էլ ծառան ներս բերեց, որովհետև արդեն թեյի ժամանակն էր: Աղապալին հորինած երգը միտըս բնկավ:

Չայ ասածը խիստ աղեկ բան է,
Քնհատ մարդուն ռահատ կանե:

Մեկ էլ տեսնեմ՝ դուրը կամացուկ բացվեցավ ու շեմքին, մատուցարանի վրա թեյի բաժակները շարած, գեղեցիկ Անուշը երեվաց. նա ուղիղ դեպի մեզ էր գալիս. ամաչելուց երեսը վարդ էր գարձել. անպիտան աղջիկն ավելի էր գեղեցկացել: Թե ի՛նչպես վերջորի թեյի բաժակը, ի՛նչպես սեղանին դրի՝ չգիտեմ, այնքանը միայն գիտեմ, որ այդ րոպեին գժի պես մի բան էի: Թեյը տվեց, և աղջիկը գնաց:

— Ասատուր աղա,— ասի,— այդ Անուշը ճի՛շտ քո հարազատ աղջիկն է:

— Ա՛յ տղա, գի՞ժ ես, թե՞ ուրիշին ես գժվացնում,— ասաց Ասատուր աղան,— որ իմը շի՛ներ, ինչո՞ւ պիտի ասեի, թե իմն է. իհարկե իմն է, ո՞ւմը պիտի լինի:

— Ինձ կտա՞ս,— ասի ամաչելով:

— Ինչո՞ւ չպիտի տամ որ, դու ումի՞ց պակաս տղա ես, իհարկե կտամ, բայց երկու-երեք գավաթ օղի շի՛մած՝ դրա մասին չեմ ուզում խոսել:

Երկու-երեք գավաթ օղու տեղը տասը-տասնհինգական գոտարկեցինք. սենյակն սկսեց շորս կողմս պտտվել. գլխիս մեջ

դեզդեզ էր աճում. ականջիս ետեի և ճակատիս երակները մատիս հաստության ուռել էին:

Գինետնից ելած, աչքերը ծոված, օրորվելով քայլող հարբած մարդ տեսն՞լ ես, որ գնում-գնում՝ վայր է ընկնում, գնում-գնում՝ վայր է ընկնում ու կանգնած տեղը քնում է— այդ իրիկուն ես էլ ճիշտ այդպիսի հարբածի էի նմանում:

Դու մի՛ ասի՛ հյուրեր են կանչել, տերտեր-տիրացու են եկել, նշանդեքս, ինչպես որ կարգն է, կատարվել է և հետո մեղավորիս առոք-փառոք տուն են ուղարկել. իսկ ես ոչ մի բանից տեղեկություն չունեմ: Այդպես էլ ստորություն կլինի՛:

Մյուս օրն եմ իմանում— ինչ իմանամ՝ լավ է— որ այն տրգեղ աղջկա հետ եմ նշանված եղել: Փշաքաղվում եմ: Հայրս ու մայրս տեք են կանգնում, դես-դեն են ընկնում՝ հոգևոր գառարան, մագիստրատ խնդիր են տալիս: Բայց մյուս կողմից էլ Ասատուրը կանգնում է, թե՞ «որդիդ ինքը եկավ, աղջկաս իրեն աչքով տեսավ, շատ հավնեցավ. մարդ նրան զոռ արած չէ. նըշանն էլ իրեն կամքով տվեց (մի՛ ասի՛ դրանք իմ անունով միջնորդից արմատ մատանի են առել ու աղջկա մատն են անցկացրել)». հեշ կարելի՞ բան է Աստու անունով եղած բանը քանդել... Նշանից ետ եղած աղջկան ո՞վ պիտի առնի... ուղում եք խեղճ աղջկանն առանց դանակի մորթե՛լ... Նշանը կես պսակ է: Այսպես ասին իրենց ասելիքը: Ես այդ բոլորը մի գորշի չէի առնի և նշանը ետ տալու ճարն ու ճանապարհը կգտնեի. դրա ծախսը քնդամենը մի երեք հարյուրանոց էր, բայց ափսո՛ս, որ մեղտեղն ուրիշ հաշիվ կար:

Նշանից երեք օր էր անցել. խանութս նստել եմ, մեկ էլ տեսնեմ՝ երեք գաղ բոյով մի տարօրինակ ատգահա մարդ, ձեռքը ձիապանի մի մտրակ՝ խանութս է մտնում. «Ես, ասում է, Անուշի ախպերն եմ»: Սիրտս տապ արավ: «Ինձ, ասում է, երլիւրճի Գեորգ են ասում: Դու նշանից ետ քաշվելու միտքն ես ունեցել. բայց էս դամշիս տեսա՞ր— ասում է ու շաթ-շաթ մտրակը պատին է զարկում— ձեռքիս այս մտրակով կոնակիդ վրա կարմիր խազեր կքաշեմ, բայց էլի օձիքդ բաց չեմ թողնի: Տե՛ս, քեզ մի շարաթ ժամանակ եմ տալիս. պսակվեցիր լավ, չպակվեցիր՝ օձիքիցդ կրոնեմ, դամշիլամիշ անելով ժամ կտանեմ, կպսակեմ ու դամշիլամիշ անելով օտմեն տուն կբերեմ, կհանգեցնեմ ու

քրոջս ծոցը կպառկեցնեմ, լսում ես: Ինձ երլխըճի Գևորգ եւ ասում»:

Երլխըճի Գևորգի տեսքից երևում էր, որ ո՛չ միայն անող, անող էլ էր: Հիմի ես ո՞ր քարին, ո՞ր պատին տամ գլուխս: Ճարըս կտրած, մի շաբաթից, սուս-փուս հարսանիք արինք, պսակվեցինք. այս օրվա օրս էլ ութը զավակի տեր եմ, հինգն էլ թաղել եմ: Բայց՝ ցավն այն չէ, որ աշխարհքիս ամենատղելի, ամենամանձոռնու, ամենաշտիրածիս հետ պսակվեցի, ցավն այն է, որ վարթևվորի իրիկունը, երբ որ ես Սուրբ հաշ վանքն էի, Ասատուրի տանը ինքս իմ ձեռքով բախտս էի փակում, մայրս, հիվանդ-հիվանդ խնամի է ուղարկում X-աղայի տունը ու նրա աղջրկան՝ Մարթային (իմ տեսած գեղեցկուհին նա էր եղել) ինձ համար է ուզում, ու խնամին ուրախ-ուրախ լուր է բերում, թե՛ համաձայն են: Յավս հենց այդ է: Է՛հ, ինչ որ է: Հիմի անցել գնացել է. դու գլխիդ հազար վայ էլ կարդաս՝ ի՞նչ օգուտ, այդ բոլորից հետո:

Այդ օրից վարթևվորի անունը որ լսում եմ՝ կարծես մահվանըս գայն եմ լսում:

ՊԱՊԻ

(0. Խ.-ի պատմածը)

Իմ կարծիքով Ղրիմից մրգերը եկած պիտի լինեին, որովհետև հուլիսը արդեն անցնելու վրա էր: «Մի բազար դուրս գամ, ասի, տեսնենք ինչ կա, ինչ չկա»: Որ գնացի, հեռվից էլ պարզ եղավ, որ սակավամարդ պիտի լինի, միրգ ծախողները կիտրոնի, նարինջի դատարկ արկղների մոտ, կրճկրճ արևի տակ պսակած՝ խոս-խոս քուն էին լինում. բան առնող մի հոգի չկար. այն էլ ասենք, ապրանք չեղած ժամանակ ժողովուրդը ի՞նչ պիտի առնի, իհարկե բազարը դատարկ կլինի:

Տնից որ դուրս եկա— ես հազվադեպ եմ բազար դուրս գալիս— մանր երեխաներս հատկապես տալսարեցին պարապ-բոլ ձեռքով ետ չգալ, ես էլ, բան չունես, բոլ-բոլ ամենքին իրեն սիրած միրգը խոստացա, որին ծիրան, որին դեղձ, որին սալոր, որին սեխ, որին ձմերուկ: Այդ ընթացքում կինս էլ հպծել է թե՛

«անպայման բամիա, բադրիջան, թազա պատինձ (լոբի) որ տեսնես, սալա-սալա գնի, տուն բեր, որովհետև նրանց չորացրածը, կամ աղածը ձմեռվա համար շատ հաճելի պաշար է»:

«...Ես ձեր պաշարը»,— ասի մտքիս մեջ ու գնացի: Ախր մարդու բարկությունը ինչպե՞ս չգա. ասում էլ են, ճիշտ էլ է եղել. «Կին ասածդ դիշերը մեկ է ցույց տալիս, ցերեկը— հարյուր»: Աստվածդ կսիրես. հիմա ես ի՞նչ երեսով ետ գամ ու ասեմ թե բազարում բան չկար, հեշ կհավատա՞ն: Այդպես ժամանակ, ուզած-չուզած, ինչ որ աչքիդ ուստ եկավ պիտի առնես տուն բերես, որ խեղճերը սրտները մաշելով իզուր սպասած չլինեն: Այս անհաջող եղանակը որ կա, այս տարի շատ բան փչացրեց. ծառերի ծաղիկները, որը փետրվարի ցրտից զարկվել էր, որն էլ ապրիլին շոգ արևից այրվել փոթոթվել էր, այնպես որ՝ մեր տեղի պարտեզները այս ամառ հեշ բան չտվին: Մտածում էլինք, թե հեշ չլինի, մոտիկ տեղերից միրգ կբերեն, բայց երևի այնտեղ էլ մերից լավ չէ: Ինչ էլ որ լինի, բազարը մտանք:

Մանր խանութների մեջը, շուտ, կեղտոտ ջվալներով երկու-երկու, իրեք-իրեք օխա՛ բան դրած էին, թողոտ շորկոկամ, ճիճուն զարկած քեշեպույնուզ², չորացած, կաշի կտրած թուզ, դե՛, այսպես բաներ. թարաքների վրա շարված էին թոռոմած, բորբոսնած լիմոններ, ընկույզի չափ դառը զեհիր, տառնիճներ³, ահա այս տարվա մեր բազարի միրգը. հավանածո առ ու տուն տար երեխաներիդ փորը լցրու, հետն էլ հազար տեսակ ցավեր... հեքիմների աչքը լույս:

Լավ էր, որ մի մառուշքա (ոռու կին) թայգանից բամիա էր բերել, կրակի գին տվինք, մի հազար հատ բան առինք. մի քիչ այն կողմ մի ուրիշ մառուշքա Ասխայից մի արաբա խիյար էր բերել, ծախս արինք, այդտեղից էլ առանք հարյուր հատ բան, մի քիչ էլ այն կողմ, երրորդ մառուշքան բադրիջան էր ծախում, այնտեղից էլ առանք քսանհինգ հատ բան: Ահա՛ այդ օրվա տարածս. գոնե դատարկ ձեռքով էլ տուն չեմ գնա: Հիմա արի տես, որ այս անհագին բանը ո՛վ տուն պիտի տանի: Ի՞նքս. բայց դու գիտե՞ս հո, մեր տեղի աղաթով, որի անունը մի անգամ որ աղա է դուրս

¹ Ծանրության չափ, որը հավասար է 3 ֆունդի (1 կգ. 200 գր.):

² Մրգի տեսակ:

³ Վայրի տանձ և խնձոր:

եկեք, ես ուզում է տասը անգամ սնանկացած թող լինի, իրեն ձեռքով բազարից բան տանելը շատ ամոթ է, մանավանդ կանայք որ տեսնեն, այնպես կծիծաղեն, ծաղր կանեն, որ մեկ էլ չես համարձակվի աչքերին երևալ, ամեն տեսածներին մատով վրադ ցույց կտան:

Ի՞նչ պիտի անե՞ք. պարզ չէ՞ որ, մարդ պիտի գտնվեր, հետք բարիշովեր հինգ-տասը կուպեկի, որ այս առած ապրանքս տան առանձին: Այնպես էլ արի: Հեռվից փայտը ձեռքին՝ քրտալ՝ քրտալ՝ ո՞ մի ծեր պապի էր գալիս:

Հնգուհավ ծախող մանրավաճառներից մեկը, բանի մեջ մբտավ աչքիս լավ մարդ երևալու համար. «է՛յ, պապի, կանչեք այս ջվալը որ շալակես տանես, աղան ժամուցդ ինչ որ որ է կտա. քառորդ ժամվա մեջ կգնաս էլ, կգաս էլ, այն ինչ է որ երկու քայլ տեղ է— այդ ընթացքում քանի՞ կուպեկ պիտի մտբաս որ՝ դոնեդուր քայլելով»:

— Այդ էլ սուտ չէ՛,— ասաց այդ պապին, արագ մտանալով,— բեր, հայդե տանես:

Ես առջև ընկա, պապին էլ գնած բաներս շալակը առած, հեալեն-հեալեն ետեկիցս գալիս էր:

Ողորմելին շատ ծեր էր, գոռով էր կարողանում օտքերը շարժել, օրն էլ այնպես տաք էր որ, ազամմերկ տկլորվեիր էլ, կվրայիցդ հեղևդի պես քրտինքը կվազեր, բայց դու արի նայե, որ այս մեր մարդու մեջքին հաստ մահուցից, երկար փեշերով, ծանրը խալաթ կար. զլխին էլ հազար տեղ ծակած, ծակծկած մաթթուց գդակ:

Երեսի ու ձեռքերի գույնը հեշ ազամորդու մսի գույն չէր. սև ասես՝ սև չէր, դեղին ասես՝ դեղին չէր, կարմիր ասես՝ կարմիր էլ չէր, իսկական հին այրած դաբանի կաշի: Թողը ու բերտինքը սկզբից շաղ-սխվել էին, հետո էլ շորացել էին ողորմելի մսի վրա, այդպես էլ շերտ-շերտ մնացել էին. տեսնես այդ մարդու մարմինը մի օր ջրի ու սապոնի երես տեսնել է, կասկածել էր: Մեղայաստծու, մեղա՛, գայլի առչըր գցեիր այդ թշվառին ախալը, դունչը կդարձնեիր, կզգվեր իրեն շար գայլ հալովը: Ախր շափ զգվելի աղքատություն— հեռու տնից տեղից— կյանքիս մեջ առաջին անգամ տեսածս էր. մազն էլ այնպես ճերմակ էր, որ ես դեռ այդպիսի ճերմակ մազ հանդիպած չէի: Բայց ավելի վարձ մանալուն այս էր. ատամները սափ-սաղ, մի հատ փտած կամ

կոտրած, կամ թափած ատամ չկար բերանում, այնպես էլ մաքուր ու սպիտակ, որ իսկական փղոսկրից շինած, աչքերն էլ այնքան ցուլուն, որ հիմիկվա տասնութ կամ քսան տարեկան, Մոսկովի ու Ռոստովի սաղի համը առած մեր ջահելները, Աստված համբարություն տա նրանց հարսներին, մեր ջահելները, ասում եմ, որ տեսնեին, Աստված վկա, կնախանձեին, կարծես թե միջից կայծ ու կայծակ էր թափում: Առաջվա մարդկանց, ինչ սուտ ասեմ, շեմ տեսել, բայց հիմիկվա ժամանակ, քիչ կտեսնես ցուլուն, կրակոտ աչքեր:

Բազարից որ դուրս եկանք, ուղիղ դեպի վար իջանք, մադիստրատի կողմից անցնելու ժամանակ, երբ որ դումին՝— այն Մառեա Կոռովնայի տունը չկա՞, որ հասանք, այդ պապին կանգնեց այն փոս-փոս, քանդված, տեղ-տեղ էլ բուրբուրվին կործանված խանութների դիմացը ձեռքը երկարացրեց այդ քանդվածներին ու սրտից խորունկ ա՛խ քաշելով՝ ասաց.

— Այս փոսերը, այս փշրված քիրամիտներն ու աղյուսները տեսնո՞ւմ ես, հա՛յ վախ, ժամանակով այս տեղերում ես էլ մի հատ խանութ ունեի ինձ համար, բայց...

— Դու ի՞նչ ապրանքով էիր առևտուր անում,— հարցրի:

— Ես առևտուր չէի անում,— ասաց պապին,— իմ արհեստը անագազործություն էր, այս տեղում, որ ասում եմ, մի հատ այսչափ խանութ ունեի. մուշտարիներս այնքան շատ էին, որ դեմս շորս-հինգ վարձով մարդ էի բանեցնում. որ ուզենում էի ինքա էլ էի բանում, չէ՛, չէի ուզենում՝ գնում էի տունս, աղավարի սամովար էի դնել տալիս, արթայություն պե՞տք էր որ... Դու ի՞նչ ես ասո՞ւմ, թագավորի պես մի բան էի— սրա վրա էի կանչկոտում, նրա վրա էի բարկանում, մոտիս մարդիկը, ընտանիքս, բուրբուր տիրի՛լ-տիրի՛լ դողում էին ինձնից... հայ վա՛խ... այն կրակը տեսա՛ր ամբողջ ունեցած-չունեցածիցս բաժանեց ինձ ու այս դրություն հասցրեց...

— Ինչպե՞ս եղավ, որ խանութդ այրվեց,— հարցրի:

— Մեռակ ի՞մս այրվեց, ինչ է... այս երկար-երկար քունթոռ-մոնթոռ տեղերը, փոսերը, քիրամիտի, քարի ու աղյուսի կտորտանքները տեսնո՞ւմ ես, խաչատուր աղայի սրճատնից բրունած մինչև այն մի հատ աղյուսե ամբարը որ կա, այս ամբողջ

¹ Дума.

տեղը կողք կողքի տեսակ-տեսակ խանութներ էին, բոլորն էլ այրվեցին, բոլորի տերերն էլ ինձ պես այսօր ունևոր պառկեցին, վաղը անկողիններից շունևոր վեր կացան... Ա՛խ վախ, գալիք էր, էլի՛, եկավ գլխներս...

— Ինչպե՞ս եղավ, որ այդքան հարստությունը, ապրանքը միանգամից վառվեց. կարծես թե հավատալն էլ դժվար է, որ ահագին քաղաքը այրվի ու մի դուռ չգտնեն ժողովրդի դարդին դարման անելու. այդ ինչպե՞ս է եղել այդ, խելքս չի հասնում, բանի մեջ շարություն չկա՞ր արդյոք...

— Ո՞վ է իմանում, սիրեկանս, ժողովուրդը ասում է, սուտը, դորթը Աստված գիտի, ժողովուրդը ասում է, թե հարամիները դիտմամբ կրակ են տվել, որ հրհրուքի, խառնակության ժամանակ քաղաքը թալանեն. այդ գիշերն էլ թուլուսբայի ձիերն էլ գողանում են, փախցնում. հետո՞, խելքդ ինչպե՞ս է կտրում, իհարկե դիտմամբ արածի է նմանում... Ուրեմն մի կուպեկի խավն ու քիփրիտը, այն ժամանակները դեռ սեռնիք՝ չգիտեր ժողովուրդը, հարյուրավոր մարդու ունեցվածքից ու հարստությունից բաժանեց ու ինձ նման շոր հաց ու մի ժանգոտած գրոշ մուրդ դարձրեց:

— Հետո՞, մեկ էլ անագագործությունդ ձեռք չվերցրի՞ր, ինչ է,— հարցրի:

— Չէ՛, այն էր որ վերջ տվի քսանհինգ-երեսուն տարվա արհեստս. անխելքություն, էլի, պարզ չէ՞ որ: Մենք, հայերս, գիտե՞ս, դավանանքով քրիստոնյա ենք, բայց կոապաշտի հավատից էլ մի քիչ բան պահել ենք: Ինչ բան կուզի սկսնք, եթե իսկույն այն ժամին չկարողացանք, անհաջողակ է, ասում ենք ու նստում մի կողմ: Հիմիկվա խելքս այն ժամանակ որ ունենայի, ես այս օրիս չէի հասնի: Բայց ի՞նչ անես, որ անհավատ տաճիկը վաղուց մեզ համար ասել է. «Աչքը սիրեմ հայի վերջի խելքի»:

Հրդեհի մյուս օրը, ուստաբաշիին վերցրինք, գնացինք և Մաթիյոսին, որովհետև գոլովաներս շարհոգի մարդ էր. ոսնչ պար աղքատին օգնության հասնելու տեղ, դեռ ջանք էր դնում վերջին շապիկն էլ կոնակից քաշել հանելու, դրա համար նրան չգնացինք, Մաթիյոս— ային գնացինք. «Աղա՛, ասինք, այսպե՛ս»

¹ Լուցկի:

այսպես բան է, ասինք, վերը Աստված, վարը դու. իհարկե, գիտենք, դու գոլովա չես, դատավոր չես, այնքան էլ շատ հարուստներից էլ չես, բայց լսել ենք, որ մեզ պես աղքատների տերն ու տիրակալանն ես. ով գիտենա, չգիտենա, բայց դու լավ գիտես, որ մենք խաղնա շունենք, մեզ ուտեցնողը, խմացնողը, վրաներս գլուխներս անողը, մեր ընտանիքը պատվով ու նամուտով պահողը մեր արհեստն էր. մեր խանութները, արհեստներիս գործիքները այրվեցին, սրանից հետո ի՞նչ կլինի մեր հալը»,— ասինք:

Մաթիյոս-ան էլ— Աստված ողորմի հոգուն՝ «որ խանութներդ այրվեցին, ձեռքներդ, գլուխներդ էլ շայրվեցի՞ն հո, ասաց. հե՛ն հոգ շանե՛ք, այդ դուք մեր եղբայրը չե՞ք, ինչ է, ասաց, մեր հասարակի մարդ չե՞ք, ինչ է, մեր հավատակից, Լուսավորիչ պապիի զավակը չե՞ք, ինչ է, խանութներդ թող էրվի, էլի, նորերը սարքելը դժվար բան է, ինչ է: Չլինի որ թերահավատվեք, վերջներդ էլ թող չլինի. Աստծով էլի կսկսեք ձեր առաջվա արհեստը. շատ-շատ մի քանի շաբաթ պարապ պիտի մնաք. դրա վերջը մարդագլուխ տասնհինգ ուրլի չէ՞ որ, երբեք դրա դարդը չանեք: Մարդ ենք, աշխարհ է, ամեն բան էլ կպատահի. դուք սրտներդ ամուր պահեցեք, ջուրը ընկածի պես չլինի որ սարսաղանաք. վերը ողորմած Աստված կա, վարը հոգեսեր մարդիկ կան. գնացե՛ք ընտանիքներիդ ուժ ու սիրտ տվե՛ք, ես էլ այս օրերս իմ շրջանի մարդկանց հետ կտեսնվեմ, կխոսեմ, կարող է գարադանաշալնիկին՝ էլ պետք գա խնդրելու, որ խաղնայից, ինչքան որ լինի, օգնություն հասցնի»:

Մեռնեմ բերնիդ, Մաթիյոս-ա, Աստված լուս կաթեցնի գերեզմանիդ վրա, բայց այն ժամանակ քու գինը չիմացանք... Ես էլ վեր կացա, որովհետև արհեստակիցներիս մեջ ամենախելոքն ու լեզվանին էի համարվում. «Աղա՛, ասի, քեզ մի բան ասե՛մ, ասի, այդ հրդեհը որ կա, Աստված է ղրկել հո. երբ որ ողորմած Տերս կամեցած չէ՛, որ մենք մեր ձեռքի արհեստից հաց ուտենք, մենք կարո՞ղ ենք նրա կամքին թարս գնալ. խոսքի վրա-ես՝ անաղագործ եմ, մյուսը դարբին է, էն մյուսն էլ աթթար է, երբ սք Աստված ամենակարողս շուգեց, որ ես իմ անագագործությունով հաց ուտեմ, կամ ուրիշը՝ աթթարնոցի առևտուրից, ուզած-չուզած, մենք էլ արհեստներիցս պիտի հրաժարվենք, որովհետև

¹ Քաղաքագլուխ:

ինչ որ աղամարդու աշխարհք եկած օրը ճակատին գրած է, այն էլ պիտի լինի: Իհարկե, կարգացած էլ որ շինես, լսած կլինես ևս, որ «Երկինք ու երկիր անցին և բանք իմ մի անցին», — ասած է սաղմոսի մեջ. աչսինքն՝ ինչ որ մի անգամ ասել եմ, լավ վատ, այն էլ պիտի լինի, ուզում է երկինք ու գետին տակնուվերջ թող գա:»

Ասի ու հպարտանալով քնկերներին վրա նախնային իբր թե «ապրատ էլ որ լինեմ, տեսա՞ք, ինչպե՞ս իրելոք պատասխան ամբ աչս հարուստ աղային, ասանց պարան կապեցի»:

Մարդը չկարողացավ խոսքիս դարձք տալ, վրայից հայտնի էր, որ մի բան է ուզում ասել, բայց սուս մնաց, այնքան, որ քիթը-քեղանքը ծոմեց, շատ չհավանեց ասածիս. մի քիչ հետո «Լավ, ասաց, ես իմ գլխու բան չեմ սկսի, մի բանի աղաների հետ կխոսեմ. երևի դրա մի ձևը կգտնենք. բայց ինչ որ սկզբում ասել էի, դուք մի լավ միտք արեք, գուցե չեք փոշումանի»:

Ես արդեն սիրտ էի առել, աներեսացել էի. ինչպես որ ասում են՝ «Կատուն առաջ պետք էր պատռել», — հիմա ուշ էր: Մաթիյոս-ան փափուկ մարդ լինելով, ես նրա ատամները վաղուց էի համբրել: Մենք, հասարակ հայերս, միշտ սարթ մարդուց ա՛ն ունենք, փափուկ մարդ որ հանդիպեցինք, աշխատում ենք ծածրակին հեձնել...

— Աղա՛, — ասի, — այն քու ասածդ դատարկ բան է. մեկ էլ ո՞ր խնր անհաջող, հին արհեստին ձեռք պիտի զարկի. մենք Աստված չե՞նք ճանաչում, ի՞նչ է, նրա դավանանքը չե՞նք պարտում, ի՞նչ է. մեզ խելքի բերելու համար սկզբից նա մեր խառնաթները այրեց. նրա կամքին հակառակ գնանք ու պատժե աքհեստին նոր-նորից ձեռք որ զարկենք, գուցե մեզ էլ ամբողջապես այրի»:

Ասի ու նորից արհեստակիցներին վրա նայեցի, աղբյուրների երեսների գույնը իսկական մեռելի գույն էր եղել վայրերից: Այ այդպես օձի լեզու ունեի, խելքով էլ օր շատ հարուստ շինեի:

Ի բնե մեր ժողովրդի մեջ նկատված է, որ մարդ ինչքան ապրում է խելոք, լավություն կամեցող, ուրիշին սրտացավ լինի, բեքանք՝ լեզու, բնավորությունը անպատկառ, եթե չեզավ, բան չի կարող անել. մեր բառքը հղի պէս պատողները առաջ էի հիմա էլ մի բանի անամոթ, անօրենք, հաստապլուխ, բայց լեզվից ճարտար մարդիկ են: Ես էլ հենց այդպիսիներից էի իմ կար-

դի մարդկանց մեջ: Լավ որ այդ ճարտար լեզվիս ու անամոթ բնավորութանս հետ Աստված ինձ խաղնա չէր տվել, թե չէ Արուսիյայի պես ամբողջ քաղաքը քար ու քանդ կանեի. շեն տները ավերակ կգարձեի, որքի ու անտեր որբեացրիի հարկիտենական լաց ու արտառուքի պատճառ կլինեի: Լսե՛լ ես, մի խոսք կա՛ «Հարու տվող կողմի կոտորները միշտ կտրած է շինում», — ես էլ ճիշտ այդպես էի:

Աղայի մտտից դուրս եկանք, գնացինք հրդեհի տեղը: Տեղտեղ դեռ այրվում էր, տեղ-տեղ էլ խանութների տանիքը ու առատաղը բանդվել էին, կիտվել գետնին ու տակից գերանները մխում էին: Խանութների տերերը իրենց կանանցով, երեխաներով եկել էին ու լաց լինելով տաք մոխիրն էին քրքրում, որ գոնե մեխերը ու երկաթները փրկեն: Ես էլ իմ խանութի առջևը ապուշի պես կանգնել, նայում եմ:

Մեկ էլ տեսա մեկը եկավ, ձեռքը ուսիս վրա դրեց, ետ դառնամ տեսեմ՝ Մաթիյոս-ան է:

— Տո՛, Ասվատու՛ր, — ասաց, — արի գնանք, քեզ բան պիտի ասեմ, — ասաց, — Աստված օղորմի հոգուն:

— Ասելիքդ ինչ որ է, ասա, էլի՛, — ասի երես առած երեխայի տես նազ անելով:

— Յյատեղ մարդիկ կան, կլսեն, — ասաց Մաթիյոս-ան, արի՛ գնանք Լուսավորչի բակը. ազատ տեղ կանգնենք, քեզ գաղտուկ բան պիտի ասեմ, ասաց անուշ ձայնով, Աստված օղորմի հոգուն, պարզ էր որ սիրտս շահել էր ուզում:

Ջրուց անելով մենք արդեն տուն էինք հասել. ես նստեցի աստիճանի վրա, ուռիների շվաքին. Ասվատուրը գլուխը բաց, առջև կանգնած, ցուպի վրա հենված իր նազլն էր անում: Մեր տեղի օրենքով աղա մարդը իրեն ծանոթ պահել պիտի գիտենա այդպիսի ունչպարների դիմաց, որ նրանք երես շթոնեն, իրենց շափք ճանաչեն ու մեծերիս պատիվը ոտքի տակ շառնեն: Յյգպիտով որ ինքդ քո աղայությունը չպահես, հապա ինչո՞վ պիտի հիշվես: Խելքով որ, ուսումով, գիտությունով որ, աստիճանով որ: Գիտե՛ս ևս, մեր տեղի ժողովուրդը բոլորը մի աստիճանի մարդիկ են, այնքան որ Սեղապուր, Կիրակոսը գաղտնիքն ու ձեռք գտել են հազարներ ձեռք գցելու, Գանիելը-Մանիելը դեռ չեն գտել, թե չէ իշխանի ու ունչպարի, աղայի ու մշակի տարբերությունը շատ մեծ չէ... ինչ որ է:

Ասվատուրը նորից սկսեց իրեն նազը: Կարգ
Երբ որ որ ժամի բակը գնացինք ու մեզ համար ազատ տեղ
կանգնեցինք, Մաթիոս-ան, լուս կաթի գերեզմանին, ասաց ինձ.
— Տո՛ւ, Ասվատուր, հենց նոր ես նկատեցի, որ արհեստա-
կիցներդ քո ջրով են գնում, այսինքն խոսքիդ լսում են, հավա-
տում ու այնպես էլ անում. դրա համար ես դիտմամբ եկել եմ
քեզ հետ այդի՝ խոսելու, որ հետո դու ինձանից լսածդ աշխա-
տես ընկերներիդ ուղեղը մտցնել: Տե՛ս, բալաս, շիկի որ արհեստ-
ներիցդ հրաժարվեք ու ուրիշ բանի ձեռք գարկեք: Դուք պատկ
երեխաներ չեք, մեկ էլ ե՛րբ նոր արհեստ կամ նոր առևտուր պի-
տի սկսեք: Մեկ էլ որ, շորս, հինգ տարուց հետո իսկապես որ
սովորեք մի ուրիշ, նոր արհեստ, բայց այդ ընթացքում ձեր տուն-
տեղը ո՞վ պիտի կառավարի, ձեր բողազը ո՞վ պիտի նայի, ո՞վ
պիտի անի ձեր վրա-գլուխը, նոր առևտրի համար ձեզ ո՞վ դա-
մագլուխ պիտի տա: Ինչ որ որ ասում եմ, ականջներիդ օղ արե՛ք
Երբե՛ք, Ասվատուր, ձեռներիդ արհեստից չհրաժարվեք, չտե-
նեմ, չլսեմ, որ այդ խենթությունը անեք: Թե չէ, մեկ օր, այս մու-
րացկանին տեսնո՞ւմ ես,— ասաց,— դրանից բեթար կլինեք:

Վա՛խ, վա՛խ, շուտ կատարվեց օղորմած հոգիի ասածը: Սուտ
չէ՛, դուրթ է, ասաց Մաթիոս-ան, ձեր արհեստը հիմա այնքան
չի վաստակեցնում ձեզ, ինչպես որ առաջվա ժամանակները,
բայց դրա մեղքն էլ ձերն է, որովհետև աշխարհքս քանի գնում
լուսավորվում է, իսկ դուք էլի աթաղան-պապադան սովորած
արհեստը մի աստիճան առաջ չեք տանում. ինչպես որ մեր պա-
պերը հարյուր, երկուհարյուր, գուցե չորս հարյուր էլ տարի
առաջ անում էին, դուք էլի այն ձևով, այն դալիպով եք բանում,
բայց մի աշքներդ չորս կողմ դարձրեք, մի նայեցե՛ք ուրիշ քա-
ղաքներին, օտար ազգերը ձեզնից մի քիչ օգուտով չե՞ն անում
արդյոք, նրանցից քիչ-միչ բան սովորելու չունե՞ք արդյոք. այդ
պես է, այդպես, ձեր ձեռքի արհեստից հրաժարվելու տեղը մի
քիչ լրացրեք, կարգի բերեք, նոր մարդկանց, նոր աշխարհի վար-
քով որ անեք, իհարկե ձեր ձեռքի շնորհքից առած շահը մեկին-
մեկ կլինի, գուցե ավելի էլ: Ես, տե՛ս, ինչպես լավ բան եմ միտք
արել. մարդկանց տունս պիտի կանչեմ, նրանց հասկացնեմ, որ
քաղաքիս շահից չորս-հինգ օգտակար արհեստների վարպետներ,
նեմցե՛մ, կամ ֆրանցուզներ տեղը բերել տանք, որ հայ էսնաֆը

նցից բան սովորի. երբ որ քաղաքը չէ՛-մէ՛, ասելու լինի, ես
իմ քսակից էլ կանեմ այդ լավությունը: Դու, գուցե լսած կլինես,
որ ես միայն մի հատիկ՝ տղա զավակ ունեմ, այն էլ այսօր՝
առողջ, վաղը հիվանդ է. ես ինքս ինձ ուխտ եմ արել, երբ որ այդ
մի հատիկ, աչքիս լույսի պես տղաս Աստված որ ինձ բախշի,
սուրբ Հակոբի անունով մի պատլիկ ժամ շինեմ. բայց հետո միտք
արր, որ մեր հայի հոգին արքայություն տանելու համար վեց
ժամով մի վանքն էլ կբավարարի. ավելի լավ է, որ մեկ այնպես
հիշատակ թողնեմ ազգիս մեջ, որ նրան հավիտենական մի դի-
լիմ հացի տեր անի. շատ միտք արի, վերջը-վերջը այդ մտքի
վրա դադարեցի: Տե՛ս, Ասվատու՛ր, այս ինձանից լսածդ խել-
քիդ մեջ տեղ թող անի. ես ձեզ դուռման չեմ, ես ձեր լավությունն
եմ ուզում: Ինձ ի՞նչ շահ ձեր աղքատ, քամբախ լինելուց, բայց
ձեր լավ օրեր վայելածը ինձ մխիթարություն կլինի այս ու անդի
աշխարհի կյանքի մեջ: Դու լսած չե՞ս, մենք պապենական մի
խելոք խոսք ունենք՝ «արհեստ ասած բանդ ոսկի ապարանջան է».
ով որ այդ ապարանջանը ունի ձեռքին, կյանքը քաղցած, դուռ-
դրացիի ողորմությանը չի մնա: Պատահում է, որ փող ունես ու
հարուստ ես, բայց մեկ էլ տեսար, կամ մարդիկ կերան, կամ
գող-հարամիները տունդ մտան, գողացան, մնացիր աղքատ: Պա-
տահում է, առևտրական ես, ապրանք ունես, քեզ համար առև-
տուր ես անում, մեկ էլ տեսնես, Աստված հեռու տանի, խանու-
թըդ կամ ամբարդ կրակ է ընկնում, ոչնչանում. երեկվա իշխանդ
այսօր տնով-տեղով մի դիլիմ չոր հացի կարոտ է լինում: Բայց,
արհեստավոր մարդը քիչը քիչից, շատը շատից տարին տարեկան
ունի իրեն ապրելու շափ կարողություն: Իսկ երբ որ ձեռքիդ ար-
հեստը չէ-չէ, հինգ-տասը տարին մի անգամ աշխարհիս պահանջ-
ունքի համեմատ շուտ տաս, այն ժամանակ դու տես հավ ու
դուռնավ ուտելիքը, մերսինի ու աթելեթի լավագույն տեսակ-
ները քո՛ւ սեղանի վրա կգա, թե՛ այն օտարի տունը շինող, իրեն
հիմքերը քանդող վաճառականի:

Տե՛ս, դու քսանհինգ-երեսուն տարի է անազագործություն ես
անում, բայց մի օր ասե՛լ ես թե «արի սամովար էլ շինեմ, կամ
էլի այն թիթեղից կամ մի ուրիշ ձևի բանից շայնիկներ շինեմ».
Ֆառֆուռի, կամ ֆայանսի ամանները ի բնե կտորվող է, քանի
գնում է մոդից ընկնում է. աչքը սիրեմ այդ շնորհքով նեմցե-
ֆոանցուզին, իրենք մեզ պես չայի, փունջի այնքան էլ հավես

չեն, բայց մեր սամովարի ու շայնիկի լավերը նրանք են շինում ու կրակի գնով մեզ ծախում: Ի՞նչ կլիներ որ մեր արհեստավորները հոգ տանեին, որ մեր քաղաքը դրսից քիչ ապրանք մտնե, երբեք ձեռքերից գար, իրենց ձեռքի ապրանքը տանեին օտար քաղաքներ: Դեռ էլի, այդ ոտնաման կարողը, այդ մարդը հեշ լի՞նկատում, որ ժողովուրդը քանի գնում հրաժարվում է ոտնամանից և կալոշին է անցնում. ճիշտն ասած ո՞ր խեղ սիրուն կալոշը կթողնի ու այդ այլանդակ ոտնամանները ոտը կանցկացնի: Իբր թե ի՞նչ դժվար բան է ոտնաման կարողի համար կամաց-կամաց ոտնամանից հրաժարվել ու կալոշ կարելը սովորութուն անել, ձեռքը, կարելը նրա համար նոր արհեստ ևս չէ՞ր. այնքան որ դալիպի ու ձեռ մի քիչ պիտի փոխի... Այդպես էլ մյուս արհեստները:

Շատ այսպես օգտակար, խելոք ու խելքի պատկելու բաներ ասաց օղորած հոգի Մաթիյոս-ան. ես որը լսում էի, որը ականջիս կողքից բաց էի թողնում. վերջը-վերջը ձանձրացա ու սկսեցի ամուր-ամուր հորանջել... Մեկ էլ ի՞նչ անեմ որ լավ կլինի... երեսս պնդացրի ու այդ անուշ խոսքերի պատասխանը դյուպ գյուղ ասի:

— Աղա՛, ես քեզ մի բան ասե՛մ,— ասի,— խելքս, փառ Ասածո, քունից պակաս չէ, եթե ավելի չլինի, լեզվիս կողմից էլ քեզնից վեր չլինեմ, վար չեմ, ի՞նչ ես այդ դատարկ խոսակցութուններովդ մարդու գլուխ հոտացնում. իմ դարդը ինձ բավական չէ՞, որ դու էլ քո անօգուտ խոսակցութուններովդ մարդու սիրտ ես մխկտեցնում. խրատ տալուց հեշտ բան կա՞ աշխարհիս երեսին, եթե լավ մարդ ես, դու ինձ մի այնպիսի լավութիւն արա, որ ես էլ մի օր անունդ հիշեմ ու դու որ շատ ապրիս լինե՛ս, օղորմիս տամ հոգուդ:

Խեղճ մարդը ամոթով մնաց. հեշ մտքով չէր անցկացնի, որ ինձ պես սրիկայի զավակից այդպիսի անամոթ խոսք լսի:

— Է՛, ի՞նչ լավութիւն ես ուզում որ անեի,— ասաց ձայր փորից հանելով:

— Հարուստ մարդ ես,— ասի,— ի՞նչ կլիներ մի հիսուն, վաթսուն մանեթ տայիր, գնայի ինձ համար մի առևտուր սկսեի, դու որտեղի՞ց գիտես, գուցե թե դամբաս առևտուրից է. որ իշխան ես գլխներիս վրա Աստված չեղա՞ր հո, քիչ մարդ, այստեղ նա-

յի, քառասուն-հիսուն մանեթով սկսել է ու այսօրվա օրս աղյուսե տանք տեր է եղել... բայց, մի արհեստավոր մարդ տեսե՛լ ես, որ լուսե լուս աշխատելուց հետո, հաց ունենա, աղը չպակասի, կապան, որ նոր լինի վարտիքը չլուտ չլինի...

— Հա՛յ ես քու աչքիդ թքեմ, հիմար եղածովդ,— ասաց Մաթիյոս-ան,— Ես կարծում էի, թե ուսիդ վրա գլուխ կա, մի՛ ասիլ որ դուում է եղել...

Ասաց ու ծոցից բռնածնիկը հանեց, սկսեց համրել. որ համրեց մի կապոց ացինացի շպրտեց երեսիս. որ տուն գնացի համրեցի, ուղիղ երկու հարյուր ուրբի էր:

— Ա՛ն քեզ, հարամ սատկելու,— ասաց,— ամա խոսքս շմոռանաս, այս փողը շիմանաս որ մուրագիդ պիտի հասցնի. այս ացինացիները քեզ համար կլինի այն տուրակը, որ մուրացկանները շալակները առած, բերանները օրհնելով, սրտով անիծելով դռնեզուտ են քայլում:

Ասաց, թքեց ու գնաց:

Այն օրը մտքիս մեջ շատ եմ ծիծաղել Մաթիյոս-այի վրա. բայց այն մեկ-երկու ժամվա ծիծաղելս, ահա քառասուն տարի է անում, ամեն օր, ամեն ժամ, արուն-արտասուքով լվանում եմ, բայց խղճմտանքս դեռ մաքրել չեմ կարողանում: Նրա վերջին խոսքերը, մինչև այս օրս, ականջիս մեջ ժո՛ւլ-ժո՛ւլ լսվում է:

Հա՛յ վախ. հայի խելութունը հազար տեսակ է լինում, դու մի ասի:

Այն երկու հարյուր ուրբին շատ չգնաց: Չմեռվանից գարուն գուրս որ եկանք՝ ձկի առևտուր սկսեցի: Այն տարին բռնված ձրկան հաշիվը չկար. գինն էլ այնպես էժան էր, որ ձրի տվածի պես բան էր: Առևտրի մեջ դեռ անփորձ էի:

Օրերը դեռ տաքացած չէին, ասել է՝ վախ չկար. հանդիպած ապրանքը մի ծայրից առնում էի ու ձուկի շանաները լցնում. երբ որ բավական հավաքեցի, տարա բազար, տեսնեմ ինձանից բացի էլի շատ մարդիկ բերել էին ձուկ. սկզբից գինը մուր բռնել եմ, մյուսները էժան-էժան տվին պակսեցին-գնացին. իմ ուզածն էլ այդ էր՝ «գե՛, հարմար ժամանակը գտա»,— ասում եմ մտքիս մեջ, բայց ծախողները նորից ետ եկան նոր ապրանքով. ես փստ մնացի. հիմա ես համաձայն եմ պզտի վաստակով տալ ապրանքը, բայց առնող չկա, որովհետև ձուկս մի քիչ սկսել էր ծանր հոտ արձակել: Վրայից տասը-տասնհինգ կոպեկ կտրում եմ, էլի

1 Մեռնեա:

չեն առնում, մուշտարին ձկի էժանը շի ուզում, թարմն է ուզում, որովհետև հարամ սատկելու հեքիմները ասել են, թե հոտած ձուկը ամենաթունդ թուլնն է: Ձուկն էլ մի ծայրից էժանանալու վրա է, ինչ գին որ մեկ շաբաթ առաջ տասը հատին էին տալիս, նա հիմա հարյուրին են տալիս, համա էլի առնողը քիչ է: Ընկերներս տեսան, որ ձուկը ձեռքերին պիտի մնա ու պիտի կորչի, շուտ շուտ աղեցին, բայց ես այդ էլ չկարողացա անել, որովհետև ամբողջ դրամագուրխս ձկան վրա էի պառկեցրել, աղի համար մի կոպեկ առած մնացած չէի. ո՞ւմ մտքից կանցներ, որ զոռի պիտի գամ, պիտի աղեմ: Հիմա ես ի՞նչ անեմ այսքան շատ ձուկը. «եկ, ասի, տանեմ Քիրման. ինչ լինելու է թող լինի»: Տարա Տեսնեմ, այնտեղի բազարը մերից էլ ավելի ձկով լիքն է ու գինն էլ այնպես էժան, որ երևի ձկնավաճառը մշակի գինը զոռով հաներ այն տարին: Երկու օր Քիրմանում մնացի, շանաներս ինչպես որ լիք-լիք բերել էի, այնպես էլ լիքը մնաց, վրայից մի հատիկ բան չկարողացա ծախել: Օրերն էլ այդ արանքում տաքացան: Ապրանքս սկսեց ուժեղ հոտել, ամբողջ բազարը լեշի հոտ փրվեց. բազարբաշխները եկան սրա-նրա շանան հոտոտեցին բան չգտան, երբ որ իմին մոտեցան, քթները բռնած փախան: Իսկույն ձիավոր կողակներ եկան, ձիերիս պա՛ս մտրակը, պա՛ս մտրակը, իմ կոնակին էլ մի-երկու հասցրին. այսպես անբավականությունով ճամփա դրին. բազարի մարդիկն էլ սկսեցին, աղբերըս, վրասս ծիծաղել. ազգներիս վրա էլ ավել-պակաս անպատիվ խոսքեր ասին: Այդ հո այդպես, դեռ օձիքիցս պոկ չեկան. դիտմամբ հետս մարդ տվին, որ շլինի թե այս հոտած ձուկը միամիտ մարդ գտնեմ ու գլխին փաթաթեմ: Հետս տված մարդուն պատվիրված էր, որ տանեմ շուր, մի խորունկ փոս փորել տամ ու թափեմ, հետո հողը նորից տեղը լցնեմ:

Ձեքս կոպեկ դրամ չունեի, ամբողջ դրամագուրխս այդ հոտած ձուկն էր. ես հիմա ի՞նչ փողով մշակներ բռնեմ. ճարս կորած այստեղ, այնտեղ աղաչելով հազիվ մի բահ գտա, սկսեցի, ջանս, փորել գետինը: Կհավատա՞ս, այդ փոսի վրա օր ու կես շորշարվեցի, հազիվ կարողացա այդ հոտած ապրանքից զուրկ ազատել:

Այսպիսով, շաբաթ, շաբաթուկեսվա մեջ երկու հարյուր բարիս կորավ:

Այլևս լուս-ցերեկով մարդկանց աչքին չէի երևում, որ վրաս չծիծաղեն. մութ որ լինում էր, գողի պես տնիցս դուրս էի գալիս: Այսպիսով մեկ ամիս անցավ: Կինս, ամեն բան ծախել-ծախծր-խելուց հետո, իրեն զուժում պահած դեյրան գրավ էր դրել, դրանից առած փողն էլ թիփ-թեմիզ կերել էինք, քոշա-պուճախ հեշ բան չէր մնացել. քլունդից, փուռի թիակից բացի ծախել էինք, կերել էինք: Օրուկես բերանս փշրանք բան դրած չէի: Տնից դուրս եկա, գետափ գնացի, ինքս էլ չգիտեմ ինչու:

Ուշ ժամանակ որ ետ եկա, տեսնեմ երեխաներս, ձեռքներին մի-մի կտոր բազարի հաց, վրան էլ որը պանիր, որը երշիկ դրել ուտում է: «Ախի՛ր, Մուպուկ,— ասում եմ,— փողը որտեղի՞ց գրտար»,— ասում եմ: «Հոռոմսիման տվեց»,— ասում է: Հոռոմսիման՝ որբեկայրի, անունը կոտրած, պառավ կին էր: Կասկածեցի, բայց կհամարձակվեի բերանս բացել, փորս այնպես քաղցած էր, որ այն հեքիաթի սատանան գար «հոգիդ ծախի՛ր», որ ասեր, պիտի ծախեի:

Ի՞նչ խոսքս երկարացնեմ. այն օրից սկսած այդ հարած-վարած Հոռոմսիման ըրպեն մեկ տունս էր մտնում դուրս գալիս, նշանածիս էլ օրը մեկ, երկու, այնպես էլ լինում էր որ, օրը շորս հինգ անգամ հետը տանում էր ու ժամերով առնում մնում: Հարևաններիս մեջ իրարանցում է ընկնում, բայց ես սուտ շիմացողս եմ լինում: Այդ ընթացքում ես էլ թունդ խումի զարկվեցի: Մի օր Հոռոմսիման էլի ներս մտավ, ես էլ նոր մեկ շիշը դատարկել եմ, երկրորդն եմ սկսում: «Ո՞ւմ ես ուզում, ասում եմ»: «Ում որ որ ուզում եմ նա գիտի»,— ասում է շան կաթ կերածը: Կատաղեցի: Միանգամից տեղիցս վեր կացա, անկյունը վազեցի, որ փայտս առնեմ ու այդ առասպելի գլուխը փորից կակուղ անեմ, բայց կինը զը՛վ արավ, փախավ: Խոհանոց գնացի. կինս այնտեղ էր. տեսնեմ խոհանոցի մեջտեղը ցածրիկ սեղանն էր դրված, վրան մի կտոր միս, կողքին էլ մեծ դանակը ածելի պես սրած: Աչքս մութ կոխեց . . .

Հարցնողին ասի, թե սայթաքել է, դանակի վրան է ընկել: Մյուս օրը սև հողը դրի անբախտ կնոջս, հետը ուժ տարի հաց ուտելուցս հետո:

Կինս բավական բան էր հավաքել, սկսեցի նորից ծախել ու այդպիսով էլի երկու-երեք շաբաթ յուրա գնացինք, բայց նորից

չունենալով զոտ արա՛վ: Երկու օրվա մեջ շորս դա՛վակս— երեք տղաս, մեկ աղջիկս— իրար ետևից ընկան մեռան. որ ասեմ ինչի՞ց՝ չես հավատա— քաղցածությունից. խեղճերը երեք օր բերանները հացի փշրանք դրած չէին. ողորմելիները այնպես էլ ամոթով էին, որ մեռան, բայց հարեաններին շիճացրին, թե քաղցած են...

Մի օր դուրս եկա բազար ու այն կշեռքի մոտ կանգնեցի: Մի ջրհոր փորող եկավ առջևս. «Ի՞նչ ես պարապ բոշ մնացել, ասաց, փա՛ռք Աստծու, ձեռք-ուտք ունե՛ս. ամոթ չէ՞ մի շոր գլուխդ պահել չես կարողանում: Քայլի՛ր, գնանք, ես մի ջրհոր եմ վերցրել փորելու, արի օգնի, այն հեշտ արհեստ է. սովորե՛լ չի ուզում, բան չի ուզում, մեջքումդ ուժ ունե՛ս՝ եղավ գնաց. օրը երեսուն կոպեկ վարձդ կլինի»: Համաձայնեցի, գնացի՛ք. սգեսցի բանել, փոսը բոլորովին վերջացրինք, ջրի տամարին հասանք, մնաց քար բռնելը, բայց դրան արժանի չեղա: Երբոր որ սկսեցին վերևից զամբյուղով քարերը ջրհորի մեջ թափել, ես մեջն էի— թե՛ պարանն էր փտած, թե՛ մաշվել էր, չգիտեմ, մեկ էլ տեսնե կտրվեց ու քարերով լիքը զամբյուղը փոթյուռ-քոթուռ վար ըկավ. մի ահագին քար գլխիս կպավ... էլ միտքս չի: Երկու-երեք օրից աչքս բացի: Այդ օրվանից սախաթվեցի ու անկյալ եղա: Գրանից հետո, ահա քառասուն տարի է անում, իրիկուն, առավոտ ժամերի դուռն եմ կանգնում, ժամը արձակվելուց հետո՝ դռնն դուռ եմ մուրում: Այն ժամանակ— միտքս է ընկնում Մաթյոս-այի խոսքը թե. «մուրացկանից բեթար կլինես», բայց ի՞նչ «մեկ էլ որ հարս լինեմ, կուկուզ կնստեմ»: Ծիշտ էլ, մուրացկանը իմ առջև թագավոր է. մուրալը նա իրեն համար այնպես արհեստ է արել, ինչպես որ, խոսքի վրա, վաճառականը իրեն առտուրը, կամ տերտերն իրեն աղոթքն ու շարականը. մուրալու ձեռք, ճանապարհը այնպես վարպետ գիտի, որ մի գրոշի հույ շունեցած տեղից նա կոպեկներ է հանում. մեզ պես անշնորհ մարդը, ինչպես որ պարապ ձեռքով ներս է մտնում, այնպես էլ պարապ ձեռքով դուրս է գալիս: Դու մի ասի, որ ամեն արհեստ իր շնորհքը ունի: Կհավատա՞ս, օր է լինում, որ գուցե հարյուր դուռ եմ բացում փակում, ոչ թե փող, մի կտոր հաց ձեռքս չ'ընկնում. քաղցած փորով պառկած վեր կացածս շա՛տ, հոգնելու ուժասպառ լինելս, ամբողջ օրը շան պես լեզուս կախած բա՛լ գալս՝ այդ էլ այն օրվա օգուտս: Այս վրաս գլուխս մի նայի՛-

ասաց, — այն մահուղե խալաթի փեշը բարձրացնելով: Ի՞նչ տեսնեմ. վրայի շապիկը, Քրիստոսի պատարագը վկա, խոհանոցիս շնչոցից սև ու կեղտոտ էր. մնացած հագուստն էլ դրա նման: Ոչ թե խղճալու, սասանելու բան էր այդ ողորմելիի վրա նայելը: Ի՞նչ մեղքս պահեմ, որ տեսա, շատ զարգանդեցի, մարմինս վրաս փուռ-փուռ եղավ:

Այ թե քեզ ինչ ասել է լավ մարդու խոսքը մտիկ շանելը, ասաց Ասվատուրը: Բայց արի, ես քեզ մի ուրիշ բան էլ ասեմ: Երբոր որ դեռ խանութս վառված չէր, առջևս մի պստիկ ուս տրդա ունեի, որ ուժը պատածի չափ, ինչ ասես կտոր-մտոր բան էր վերջացնում: Երբ որ Մաթյոս-այից երկու հարյուր ուրբլին վերցրել, ուրախ-ուրախ տուն էի եկել ու նրա տված բոլոր խրատները տնազ տալով, քիթ-պրունկս ծովոճելով, մասխարա անելով մերոնց որ պատում եմ, այդ ուս տղան լսում է ու մտքի է գալիս. ու բանի տեղ շեմ դնում: Մյուս օրը գալիս է, ձեռքս համբուրում. «Բարով մնաք, — ասում է, — ես մամայիս պիտի գրենամ», — ասում է ու ճիշտ էլ մամային է գնում: Զգիտեմ նրան ի՞նչ է ասում, ինչ չի ասում, այն է որ մեկ էլ այդ տղին շեմ տեսնում: Շաբաթ-շաբաթուկեսից մորն եմ հանդիպում (մայրը թագե թագ բուրբիկ էր պտտեցնում): «Ախ՛ր, որտե՞ղ է որդիդ», — հարցնում եմ. «Հապա՛, — ասում է, այսպես բան է, — ասում է, — որդիս Տուլա գնաց», — ասում է: «Ի՞նչի համար Տուլա ղրկեցիր», — ասում եմ: «Ինքը այնպես ուզեց, — ասում է կինը, — մի շնորհքով հայ մարդ ասել է թե, որդուս ասածից, «ամեն մարդ պիտի աշխատի իրեն արհեստը կարգին, լավ, լրիվ սովորել, որ մի օր հացի տեր լինի» ու որովհետև անագագործների ամենալավ վարպետները Տուլայում են, ուզեց Տուլա գնալ, որ այնտեղից լավ վարպետ դուրս գա»: Ահա կնոջ խոսքերը: Հիմա ի՞նչ լսեմ որ լավ է. մեր այդ տղան Մոսկով մի ահագին, միլիոննոց զավոդ ունի ու մեջը յոթը-ութը հարյուր հոգի մարդ է բանեցնում:

Ախր ինչպե՞ս շտաբես:

ՊՈԶԱՄԻ ԿԱԼՈՒՍԷ՝

Անցյալ օրը, եղբայրս, չգիտեմ ինչ բանի վրա էի, մեկ էլ լսեմ որ փողոցում իրարանցումի ձայն դուրս եկավ: Շտապով

և Կարեկալուր ծախող Գալուստ:

զուրս եկա, տեսնեմ ժողովուրդը՝ տղամարդիկ, կանաչք, բազմաթիվ թաղի երեխաներ, գոռալով, գոռգոռալով դեպի Ասխալի կողմըն էին վազում: Քոռ բախտիցս, մեջները մի այնպես ծանոթ մարդ չկար, որ հարցնեի թե, ո՞ւր եք գնում, ինչո՞ւ եք այդպես վազում: Արդյոք հրդեհ կա, մտածում եմ, բայց հրդեհ պիտի չլինի, որովհետև եթե հրդեհ լիներ՝ զանգերը կխփեին:

Արդյոք տո՞ն է, բայց երեկվանից նայել էի օրացույցը, որ իզուր տեղը շնորհավորելուց ետ շմնամ ու սրտացավության առիթ չլինի. այն օրը հեշ մի տոն չկար՝ զբ. ած. խթ. լուսնի 12, պրծավ գնաց:

Գուցե մոտիկ տեղ հարսանի՞ք կա, բայց երաժշտության, դճուլ-զուռնայի ձայն չէր լսվում. պարզ էր որ հարսանիք էլ պիտի չլիներ, թե չէ մեր օրենքով հարսանիք լինի ու երաժշտություն չլինի՞. չլիներ գոնե. կմուրանք, դռնեղուռ ման կգանք, տներս գրբավ կդնենք, հարյուրին հիսուն տոկոս կբաշենք, էի հարսանիքներս առանց երաժշտության, առանց շքեղության ու աղմուկի չենք անի: Ի՞, մեղա, այդ իշխաններն են անում ո՞ւ, մենք ինչո՞ւ նրանցից ետ պիտի մնանք որ. այնքան պատվից ընկած մա՞ր ենք, ինչ է:

Գուցե մի մարդու կին, այն օրը, փոփոխության համար բարձր փոխել էր, ամուսինը վրա էր հասել, դուռ-դրացի իրարանցում են գցել, տունը չորս կողմից շրջապատել են ու մեր խեղճ պասակեր կնոջը խայտառակ են անում... որ լինի, կլինի: Իսկ ժողովուրդը մյուս կողմից խումբ-խումբ գնում էր. այդքան մարդկանց միջից մի հոգու էլ չճանաչեցի, որ կանգնեցնեի, հարցնեի, մանրամասն իմանայի. այսպես էլ բա՛ն. բարկությունս եկավ:

Թանի էությունը չգիտեի, բայց մարդկանց երեսից երևում էր որ շտապ գնալու պատճառը մի հասարակ, սովորական բան չէ պիտի լիներ. հոգիս վկայում էր, որ դրա տակը մի շատ ծիծաղելու, կամ լալու, կամ սասանելու բան կար՝ խոսքի վրա մի մարդ են կախված գտել. խեղդված մարդու դիակ են ջրից հանել, լի այդ էլ չլինի, սայլուղու վրա կամ ձորի մեջ, ո՞վ գիտի ում են մորթած գտել, ուրեմն, այդ տեսակ մի բան պիտի լիներ: Իմ տեղը, սո՞ւտ է ասածս, ով էլ որ լիներ, կուզեր իմանալ, ո՞ւմ էլ որ լիներ, փորը որոտ կընկներ: Զգիտեմ ինչպես եղավ, որ այդ տեղում այդպես անցավ, թե չէ ուրիշ անգամներ հեշ չէի վատանում:

ուզում է մութ գիշեր լիներ, ուզում է մինչև ծնկներս ցեխ ու ճահիճ լիներ, ոտք էի զարկում, գնում... գոնե, բազարի տեղը, կամ խանութների անկյունը մեկին որ հանդիպեի, բավական ժամանակվա զրույցի պատճառ կունենայի. «Լսե՛լ ես... տեսե՛լ ես... ասում են թե Ֆլանի կինը... Ֆլանի աղջիկը... Ֆլանի կառապանը, Ֆլանի գրագիրը», բան չունե՛ս, սուտ, դորթ դուրս տուր, կեր ուրիշի միսը, սևացրու ուրիշի անունը, դրանից անուն կոտրելու բան որ լինի. բեզ չի՞ լինի հո՞, ուրիշին կլինի, որ հանդիպի, տեսնե՞ք նրանք քեզ կափսոսե՞ն. մե՞զ են դրել շոք Երանելի լինելու. դու քու բանիդ կաց, կե՛ր ուրիշի միսը, հե՛շ մի մեղքանա, նրանք էլ մի օր քունը կուտեն. Աստծով մեկս մեկի միս ուտելով բոլորս էլ մի օր այս աշխարհից պիտի վերանանք:

Նախիջևանցի չե՞նք որ. այսպես եկել ենք, այսպես էլ պիտի գնանք:

Այս սովորությունը մեր մեջը շատ է տարածված, ես շատ եմ միտք արել, թե ի՞նչ է դրա պատճառը ու վերջի վերջո գտել եմ: Բայց այս բոլորը իմ կարծիքով:

Բանը որ կարծիքի մնա, մարդու մտքից, մանավանդ հայերիս մտքից, հազար տեսակ բաներ էր անցնում, մեկը մեկից վատ, մեկը մեկից խայտառակ: Ինչի՞ց է այդ. միամիտ, սրտացավ լինելուց չլինի՞ հանկարծ: Սարգիսի համար ասում են թե արջի փողը յուրացնելու նոր ձև է գտել— դրա խոսակցությունը ամենիս բերնում է. մի հանդիպեմ հարամ սատկելուին, գլուխը լա՛վ պիտի լվանամ... Մեկ էլ տեսնես, իսկական այն առակի պես՝ «Անունը տո՞ւր, փայտը առ գլխին տո՞ւր», այդ Սարգիսը թա՛նս է անում, դիմացս է դուրս գալիս, դեռ բարև շասած «Գիտե՛ս, լսե՛լ ես, Ֆլանի համար ասում են թե, անցյալ օրը, գիշերվա մի ժամանակ, յոթը հատ հարամի բակն են մտել, սկսել են լումերով, կացիններով դռները կոտրել, ներս մտնել՝ արդեն այն ննջարանի դուռն էլ պիտի կոտրեին, մեկ էլ տեսնես պահակների ձայնն է գալիս, այդ յոթը հարամին տի՛թ պապամ թողել են փախել, բանը այն չէ, որ փախել են ու մարդուն հեշ վնաս չեն տրվել, բայց դու այս բանը լսի, դեռ երեք հատ էլ մեծ ջվալ են թողել բերնե բերան լցրած, որը փողով, որը արծաթ ամաններով, որն էլ տեսակ-տեսակ թանկանոց բաներով, ասում են չէ՛ չէ՛ երեք հարյուր հազարի փող ու ուզնի ապրանք են թողել փախել... Ի՞... չե՞ս լսել այս բանը...»:

Դե՛, դու էլ մարդ ես. այսպես հեքիաթի պես բան որ լսես, սառույց կուլ տվածի պես շե՛ս լինի, մեկ էլ երեսդ կբռնի՝ մարդուն խայտառակ անել: Ծիրտ է, մի քանի ամսից իմանում ես, որ այդ յոթը հարամիքի ու երեք ջվալ հարստության զրույցը սուտ է եղել, բայց արի տես, որ մեր Սարգսին ուրիշ բան պետք չէր. նա այդ երկու ամիսը ժողովրդի աչքը փողի լցրեց, բերաները փակեց, ժողովրդի բերանը ծամելու ծամոն գցեց, այդ ընթացքում իրեն հանցանքը հնացավ, մոռացվեց, ուրիշ բան պե՞տք էր որ նրան, նրա ուզեցածն էլ այդ էր: Ասելս ի՞նչ էր. մեք միշտ այսպես բաներով մեր հանցանքը ծածկում ենք: Սա դեռ ինչ... մենք այնպիսի բաներ ենք հնարում ու պատմում, որ նրանց առաջ անցյալի դեերի, ջինների ու խոռթխանների հեքիաթը փոքրիկ երեխաների զվարճալիք է:

Հիմա հասկացա՞ք, գլուխներիդ մեջ տեղ արա՞վ. սա է մի մեկ մեկու նոր խաբարների պատմելու ամենամեծ պատճառը:

Այդ մտքիս մեջ էի, որ տեսնեմ հեռվից մեր պողաճի Կալուտըն է գալիս, ինքն իրեն զրույց անելով ու ձեռքերը թափ տալով. նկատե՞լ եք, մարդ երբ որ «բաց թող օձիքս» է ասում, ձեռքն ի՞նչ է անում, Կալուտան էլ հենց ձեռքը այդպես էր անում: Երևում էր, որ մտքի մեջ ում որ կռիվ, կոտորոց է անում, նրան էլ ձեռքով դուրս էր անում: Այդպիսի մարդիկ հեշ շե՛ք տեսել, ինչ է: Հազվագյուտ ծերունի այս ծիծաղելի սովորությունը չի ունենում: Մեղախատո՞՛մ, մեղա՛. շփծաղենք, մի օր, Աստված հետու անի, մենք էլ այդպես պիտի լինենք: Դրան ասում են՝ ցրե՛ղե՛լ:

— Բարև, Կալուտա-ա,— ասի— ժողովուրդը այսպես շատ ո՞ւր է գնում:

— Ժողովուրդը,— ասաց Կալուտա-ան ու քնից նոր զարթնածի պես աչքը ժողովրդի վրա դարձրեց:— Հը՛մ,— ծիծաղեց քթի տակ, բայց այն ձևով, որ մարդու փոր ուրտ գցեց, նշմարքով հասկացրեց, որ բանի տակ շատ խայտառակ բան կա: Բայ մուրազիս չհասցրած է՛, մնաս բարո՞վ,— ասաց ու ուզում էր ի ճամփան գնալ:

— Տո՛, ո՞ւր ես գնում,— ասի ու մեր սովորությամբ, առանց այլևայլության մարդու փեշից ամուր բռնեցի. հիմա՞ր էի այդ պատահմունքը ձեռքիցս բաց թողնելի. մեկ է ո՞վ ինձ բան պիտի պատմեր. մարդու քիթ ու պուռնկից երևում էր, որ իմ ուզած բա-

նքս մանրամասն գիտեք: Այդ բանը շատած, ձեռքիցս շես պրծնի:

— Դե բաց թո՛ղ գնամ,— ասաց սուտ-մուտ նազ անելով, այնինչ վրայից երևում էր, որ ինչքան ես շէի ուզում բաց թողնել, այնքան էլ գուցե և ավելի նա ինքը չէր ուզում, հազիր մեկս մեկիս գտել էինք. ինչպես որ գիտեք, իմ աշխարհս զրույց ու պատմաբանություններ լսել է: Կալուտա-ան էլ, լսել էի, շատ սիրում է ծնուտը խաղացնել:

— Ինչո՞ւ հիմա դու էլ բանի մեջ ես լինում, նազեր ես ծախում,— ասի,— պողադ փշանալուց շե՛ս վախենում հո, այսինքրն, ամառ է, այս ժամանակ հո պողա շե՛ս շինում... Դե՛, պրծա՛վ գնաց, նազ մի անի, պատմի այդ ժողովուրդը ո՞ւր է գլուխ տառած վազում:

— Ժողովուրդը,— ասաց Կալուտա-ան նորից...— դրա խոսքը, ջանս, մի քիչ երկար է, որ ասես ներսից երկու հատ աթոռակ բերեն՝ նստենք, կպատմեմ:

— Ի՛, այդքան երկար բա՞ն է, ինչ է,— ասի ու մի քիչ փողմանելու պես եղա:

— Չէ՛, երկար չի՛, ինչո՞ւ երկար պիտի լինի որ, մեկ շնչում կասեմ կվերջացնեմ. այնքան որ այսօր ամբողջ օրը ոտքի վրա եմ, հոգնել եմ, մի քիչ կհանգստանամ, արանքում էլ մի քիչ զրույց կանենք:

— Որ այդպես է, ասեմ բանվորին, թող գնա, մի աթոռակ բերի,— ասացի:

— Ինչո՞ւ մի հատ, երկու հատ թող բերի, էլի, դու շե՛ս նքատում, ինչ է:

— Չէ՛, ես կանգնած էլ կարող եմ լսել,— ասի:

— է, ինչպես ուզում ես,— ասաց մարդը,— բայց որ բերեիր, լավ էր: Բանվորին ասի, որ մի աթոռակ բերի: Կալուտաը հանգիստ կերպով նստեց, մեկ «էօֆ» արավ, ինչպես որ հոգնած, ծերուկ մարդիկ են անում, աչքերը ցած գցեց ու հետո վեր բարձրացրեց:

— Հա՛յ, ես դրանց...— ասաց,— այս տարվա ամառը մի տարբերակ բան էր:

Ես դիտամբ նրան պատասխան չտվի, որ ամառվա բանը շերկարացնի ու շուտ սկսի իմ ուզեցածս, բայց Կալուտաի համար, ինչպես հետո իմացա, բոլորը մեկ էր՝ դու լսել ես, թե չէ,

առջևը մարդ կա, թե չկա, նա իրեն ասելուն պիտի ասի, պիտի վերջացնի:

— Հա՛յ, ես դրանց, ամառ չեղավ՝ պատիժ-պատուհաս եղավ մեր գլխին. սա ի՞նչ ասել է, եղբայր, շոգերը արդեն վերջանալու վրա են, դեռ անձրևի երես չտեսանք, հա՛յ, ես դրանց... էս երկընթին նայի, դու մի այս երկնքին նայի, դեղի համար փընտրելու որ լինես, մի ամպ չես գտնի— այսպես էլ անբերրի տարի՛... Ո՞վ գիտի, հացը ինչպես պիտի թանկանա. հանդերում, ասում են, խոտ չի մնացել, բոլորը չորացել է, փոշի է դարձել, խելքս չի հասնում, ի՞նչ են ասում, որ կովերը հանդ են դրկում. հայվաններս ի՞նչ են ուտում, թյու՛ր, ես դրանց... այսպես էլ պատիժ... վաղուց է այսպես պատիժ չէինք տեսել... Այն չէ, բայց այդ մեր վարժատների համար բան չի՞ լսվում, գոնե այս հոկտեմբերին, նոյեմբերին բացեին, էլի (ես էլի լուռ մնացի) մղբայր, տում՝ հավաքվեցին, տարին-տարենական քսանհինգերեսուն հազար մանեթ առան, ասի՛ն, կովեցի՛ն, աղմկեցին, մաղ մաղի եկան, թղթեր վազեցրին Օդեսա, Պետերբուրգ, բայց մեջտեղը բան չկա... Հայերիս բանը միշտ այդպես է, մեկ տեսնես, կրակից ավելի շիկանում ենք, մեկ էլ սառուլցից էլ շատ պաղում... էօ՛Ֆ, էօ՛Ֆ, խելքս չի հասնում... Այն չէ բայց, ճի՛շտ է, այն մեր հարամ սատկելուի համար, ասում են, թե Քիֆլիս են կանչել, մեծ-մեծ բաների վրա վերակացու պիտի դնեն²... Քող գնա, թող գնա մի թիֆլիսեցիք էլ այդ ձուկ ուտող սրիկայի համը թող առնեն, մեզ պես նրանց էլ երկու-երեք հարյուր հազար մանեթի տակից թող մտնի, վրայից թող դուրս գա... Բայց ի՞նչ թիֆլիսեցիները, ասում են, մեզ պես վախկոտ չեն, նրանք հանաք շատ չեն սիրում, մեկ էլ տեսնես, այն ծեծը կտան, այն ծեծը կտան, որ մկան ծակին հազար ուրբի կտա, չի գտնի. տե՛ս, այս խոսքս խոսք է. այդ մարդը մի ոտքը Քիֆլիս թող դնի, հիսուն տարվա բեղը այնտեղ չթողնի ու ետ չգա, ես պողաճի կալուստը չլինեմ:

Հա, քիչ էր մնում պիտի մոռանայի, լսել ես, չէ՞, ասում են թե Ֆլան մարդուն, անունը ի՞նչ է, մահ փաթաթվի անունին, չգիտե՞ս ինչ է, այն որ երկու տարի առաջ կեղծ դրամով բռնվել

¹ Դումա:

² Ակնարկում է Գաբրիել վարդապետ Այվազովսկուն:

էր... ջանմ, շե՛ս լսել... այն որ կեղծ դրամը ծոցը, գյուղից գյուղ էր գնում ու ոչխար էր հավաքում. հետո ծախողի մեկը իսկույն գլխի է ընկնում, հետը փալից՝ է առնում ետևներից է ընկնում, մինչև մեր սահմանին որ հասնում է, այս մեր սուտ դրամ սարքողն էլ տեսնում է, որ պրծում չկա իսկույն այդ կապոցով փողը ծոցից հանում է եղեգնուտի մեջ է գցում. այդ բանը շե՛ս լսել. հետո քողակները վրան են թափվում, ձեռքը ոտքը կապում են. կապոցով փողն էլ գտնում են, բոլորը միասին օրենքին են տալիս... Դե՛, դրա համար են ասում, թե որոշումը եղել է, այսօր-վաղը ցուրտ կողմերը պիտի դրկեն... շե՛ս լսել, ինչ է (ես սուս մնացի): մղբայր, տարօրինակ բան է այդ մեր հայի արարմունքը, այդ ողորմելիին ո՞վ է ասել սաղ գլուխդ ավետարանի տակ դիր... շնորհք չունես, չես կարողանում անել, տեղդ վեր ընկիր. էլի. հիմա լա՞վ է, տնից, ընտանիքից կբաժանեն, ջհաննամի մեջտեղը կգցեն... Ո՞վ է ասում, դու է՛լի արա, բայց այնպես արա, որ հարմար լինի, այնպես, որ աչ ձեռքիդ արածը ձախ ձեռքը չիմանա, թե չէ այդպես իշավարի... Մեր հայը որ կա, ամեն բանի մեջ, այ այդպես կոշիկով է մտնում... Այ, նստի՛ր, աչքը սիրեմ Համբարձում-այի, համ ինքը օգուտ տեսավ, համ ազգականներին ու մոտիկ մարդկանց հարստացրեց. մեռնելուց հետո ահագին դրամը, ունեցվածքը ու հարստությունը թողեց հիմարների, հիմա տես, ինչպես թագավորի նման ապրուստ ունեն, այն առաջվա շինկյանները, մի սյուրու խենթ ու վայրենիները այս օրվա օրս փամեշչիկի հաշվի մի բան են, ձեռքները տաք ջրից սառը ջուր չեն դնում ու քաղաքիս մեջն էլ ամենապատվավոր տեղը նրանցն է... Եթե անելու ես, ա՛յ, այդպես արա, բանը այնպես բռնի, որ տեսնողն էլ շտեսածի պես լինի... անցյալ օրը խեղճերի մեկը թե. «Այն, իբր, աշխարհքին քոռ ժամանակն էր, իբր, այն ժամանակները ամեն բան էլ հեշտ էր, իբր...»: Ինչպես չէ, հեշտ չլինե՞ր գոնե: Այն ժամանակները փալից, ժամատառ², օրենք, դատաստան չկա՞ր, ինչ է: Հա՛մ կար, ու հա՛մ էլ ավելի խիստ էր, բայց դու արի տես, որ հնարագետ մարդու համար ժամանակը ժամանակ է, նրա քոռը ու բացաչքը չկա: Կեղծ դրամից էլ ավելի շահավոր ապրանք կա՞ որ, բայց նրան վայելելը շնորհք է

¹ Ոստիկան:

² Ժանդարմ, ոստիկան:

ուզում... Ով որ ուտել է ուզում, նա ուրիշին էլ պիտի ուտեցնի, որ փրեն կերածը անուշ մարսական լինի, ոչ թե հիմիկվա մեր խեղճի նման, քթներից-բերաններից դուրս գա... Չէ՛, դու ինչ ուզում ես՝ ասա, ժողովուրդը քանի գնաց՝ առաջվա իրեն սուր խելքը կորցրեց. խելքի, շնորհքի կողմից հիմիկվա երիտասարդները իրենց հայրերի ոտքի եղունգին շարժեն... Հա՛յ, գիտի հա՛յ

— Կալուստ-ա,— ասի,— դու կարծես թե մոռացար՝ ինչ համար քեզ առի մնացի:

— Ինչի՞ պիտի մոռանամ որ, շատ լավ էլ հիշում եմ,— ասաց Կալուստը... դե, այն է ասածս... Անցյալ օրը իրիկվա զանգերի ժամանակ. պլուվարթի՛ կողքից անցնում եմ... Օղորմած Աստված, ժողովուրդ, ժողովուրդ, որ եթե ասեղ գցեմ ասես, ասեղ գցելու տեղ չկա. հայ, ռուս, յանկա, բանվոր, մեծավոր, գրադետ, վաճառական, սպասավոր, արժում, շարժում, բոլոր խառնվել են, իրար անցել, այնպես որ շունը տիրոջը չի ճանաչում... Եղբայր, այս էլ բան չի... չեմ կարծում, որ այսպիսով մեր հայը երկար դիմանա. մեր կանանց բանը շատ դժվար է... Արդյոք, մտածում եմ, այս մեր նախիջևանցին մի քիչ ավելի փառուքի՞ չէ՞՞՞ ռոստովցիից: Որ լինի, կլինի, գիտե՞ս, որովհետև վարքերս միանգամից շատ բացվեց: Պասվա օրերից մի օր, փարչը ձեռքիս, դուրս եմ եկել գնում եմ ինձ համար, երբ որ փողոցը անցնելու էի, տեսնեմ դիմացս երկու կին դուրս եկան, մեկ ռուս, մեկը հայ, դեռ գետինը չէր շորացել, ցեխ ու ճահիճ էր. ուսը մի քիչ բարձրացրեց քղանցքը, որ չկեղտոտվի, այնպես էլ դիմաց անցավ. մեր հայրը, մեղայաստժո՛ւ, մեղա՛, մինչև ծունկը բարձրացրեց քղանցքը, կարծես թե պատրաստվում էր սենյակի տախտակները լվանալու, այնպես բարկացա որ, քիչ էր մնում թքեի այդ անամոթի վրա... Դե՛, իմացիր, հայերս չափ ու սահման չունենք, ամեն բանի մեջ էլ այդպես ենք... Զահեկների ալքը լույս, այսուհետև մեզ պսակ, բան պե՛տք է որ... Անցյալ օրը մի մարդ ասում է. «Որդուս համար հարս եմ փնտրում»,— ասում է: Ես էլ վեր կացա ու «աղջիկների պակասություն»-ն ես հանդիպելի՞նչ է, ասում եմ, դրանից էլ շատ ի՞նչ ունենք որ, ասի, մեկ մը

¹ Բուվար, գրոսայգի:

² По русский.

սավաճառի շների հաշիվը չկա, մեկ էլ տանը նստած փեսա ըսպասող աղջիկներին»,— ասի ծիծաղելով: «Այդպես է բայց, ասում է մարդը, էլի, շատ վախենում եմ... հազարից մեկն է, ասում են, ասում է, ես հիմա ինչպե՞ս որդուս արյան մեջ մտնեմ ու թեղճիս անասնական կրակի հանդիպեցնեմ»: Մի կողմից մարդու ասածը ճիշտ էլ է. ես էլ իմ որդուս այս աշնանը պիտի նշանեմ, բայց, Աստված որ տա, միտք ունեմ կողքի գյուղիցից աղջիկ առնել, մի քիչ գունեղի ձևով էլ որ լինի, գոնե սաղլամ ապրանք կլինի՞՞ հո. մարդու ասածի վրա չգա՞մ, հազարից մեկն է, ասում են, ես ի՞նչ անեմ, բայց արի տես որ...

— Կալուստ-ա՛,— ասի,— դու կարծես թե այն չես ասում, ինչ որ քեզանից խնդրել էի,— ասի խոսքը կտրելով,— մոռացել ե՞ս, ինչ է...

— Ինչո՞ւ պիտի մոռանամ, շատ լավ հիշում եմ,— ասաց Կալուստը,— ինչի՞ ես անհանգստանում, սպասիր, կամաց-կամաց հերթը նրան էլ կգա... Հա՛, այդ էի ասում... իբր՛ըր... անցյալ օրը մարդու մեկը, իբր, այս ինչո՞ւ ես պողպախից հրաժարվել, իբր: Ինչո՞ւ պիտի հրաժարվեմ որ, ասում եմ, պողան մեծ պասին ու պաս շաբաթներն եմ ման բերում, ասում եմ, մանավանդ որ օրը մի քիչ ցուրտկեկ է լինում. պողպախ լավ ժամանակը այդ է. ամառը պողան երկար չի դիմանում, քացախում է, փրչանում... մեկ էլ որ հիմիկվա ժողովուրդը բանի մեջ է մտել, պողան շհավանոզս է դարձել. մի ծայրից «քուվա՛ս՝ տո՛ւր»,— ասում է. ես էլ դե, այս քանի տարի է, շոգերի ժամանակ միշտ քուվասս եմ ման ածում... Ա՛յն էլ եմ ես շինում, ա՛յն էլ, բայց ինձ որ հարցնես՝ պողպախ պես խմելու բան կա՞ որ. աչքը սիրեմ պողպախ, մանավանդ որ մի քիչ մոմոռուկ լինի, նրանից էլ վեր բան կա՞ որ, պողա եղած տեղը ք... է կերել արաղն ու գինին. պողա ասած բանը համ փորդ է կուշտ պահում, համ մարդուս վրան ուժ է բերում, համ ծարավն է կտրում, համ սիրտդ հանգրստացնում, համ էլ հոգիդ է փառավորեցնում: Ղորթ է, սուտ չէ, գույնը մի քիչ անշահ է, գինու կամ արաղի պես մաքուր լուս չէ, բայց դու գույնին ի՞նչ ես նայում, դու համին նայի: Չե՛ չեմ հավանում, որ այդ հայերն էլ ռուսների նման սովորություն են արել. բոպեն մեկ քուվասս խմելու, քուվասս էլ ի՞նչ հորս

¹ Կլաս:

ցավն է, որ մարդ խմի, բայց դու գնա այդ խեղճին խելք սովորեցրու, ի բնե այդ տրմտրմաների մեջը որ չկա, դու հազար ասա՛, օգուտ չի անի: Բայց ես էլ հիմար չեմ. այդ մողի ետևից ընկնողների գլխին ես էլ լավ օջիհներ եմ խաղում: Երբ որ քուվասս վերջանում է, նորն էլ դեռ պատրաստ չի, վերցնում եմ մի օխա փողին օխրա, մի դուլջ քացախ, մի լավ խառնում եմ, լցնում եմ մի մեծ տակառի մեջ, պա՛ս վրան ջուրը, պա՛ս ջուրը. մի քիչ ժամանակ այդպես մնում է, կեղտը տակն է իջնում, մաքրվում է, հետո լցնում եմ փարչերիս մեջ, սառուլցն էլ վրան եմ դնում, սկսում եմ եղբայրս, փողոցից փողոց ման գալ ու գոռալ. «Քուվա՛ս առե՛ք, սա՛ռը քուվա՛ս, թթո՛ւ քուվա՛ս, սա՛ռը քուվա՛ս»: Ու ժողովրդի փորը օխրայով ու քացախով եմ լցնում, նրանք էլ են ուրախանում, ես էլ եմ ուրախանում... Լավ չի՞ արածս... տե՛ղն է, ինչո՞ւ են հապա պողպախից հրաժարվում ու այդ կեղտոտ քուվասին են կպչում... Դու, պողան, գիտե՞ս ով է հնարել մեր Գրիգոր Լուսավորիչ պապան— մեռնեմ նրա անունին— որ ժողովուրդը գինի ու արաղով չհարբի ու տեսակ-տեսակ այլակերպություն ու առասպելություն չանի...

Արդեն ես ոտքի վրա կանգնելուց հոգնեցի. շատ ափսոսացի, որ բանվորիս մի աթոռակի տեղ երկուսը չէի բերել տվել. ես ի՞նչ իմանայի, որ այս շատախոսը ինձ այսքան ժամանակ պիտի շարձարի: Ինքս գնացի ներս, մի աթոռակ վերցրի, բերի Կալուստի դիմացը դրի, նստեցի:

— Ա՛յ, այդ լավ միտք արիր,— ասաց Կալուստը,— ես քեզ քիչ առաջ ասի, որ երկու հատ աթոռ բերել տաս, դիմաց-դիմաց նրոտենք այնպես զրույց անենք, բայց դու խոսքս բանի տեղ չդրիր, բայց էլի գնացիր եկար, իմ ասածս արիր: Միշտ այդպես է, ծերերի խոսքը, խրատը չլսողը, միշտ փողման է լինում: Դու դեռ լավ է, որ շուտ հասկացար մեղքդ ու դարձի եկար, բայց այնպիսիներ կան որ մի անգամ որ հակառակվեցին, այդպես էլ կմնան, այդպես էլ կմեռնեն, այդ հակառակությունը հայերիս սովորության մեջ կա... Հա՛, այդ էի ասում... անցյալ օրը քուվասով փարջ ձեռքիս դուրս եմ եկել ինձ համար գնում եմ: Տեսնեմ ետևից կնոջ ձայն է գալիս՝ «Կալուստ-ա՛, Կալուստ-ա՛»: Ծտ դառնամ տեսնեմ խարայովի նշանածն է: «Պարով: «Աստծու պարին» «Ի՞նչ ես ուզում»,— ասում եմ: «Հապա, Կալուստ-ա, ասում է երկու շաբաթ է անում, ասում է, բանվոր չունեմ»,— ասում է

«Ի՞նչ եղավ»,— ասում եմ: «Հարամ սատկելուն գետափ գնաց աշխատելու,— ասում է,— երևի այնտեղ օրը հարյուր քսան են տալիս»: «Հետո՞, ի՞նչ անեմ»,— ասում եմ: «Ման եկող մարդ ես,— ասում է,— մի ուս կին որ հանդիպի, ա՛ռ բեր»,— ասում է: «Ինչո՞ւ չէ, որ հանդիպեմ, բերեմ, էլի»,— ասում եմ,— ժամուցս քանի՞ պիտի տաս»,— հարցնում եմ ծիծաղելով: «Այդ ի՞նչ խոսք է,— ասում է կինը,— վարձը իհարկե, չեմ ուտի,— ասում է,— ինչ որ՝ ուրիշին, այն էլ քեզ կտամ, էլի՛»,— ասում է կինը համարյա լալով: Մեղքս եկավ, այդ բանվոր ասածդ որ կա, հենց ծովը սառուլցից քանդվում է ու օրերն էլ մի քիչ փափկում են, արդեն եռք են ընկնում, կատաղում են, զցում են, թողնում իրենց յանկաներին, որը հանդ է դնում, ազարակներում ցրվում, որն էլ գետափ է գնում բուրդ լվանալու, տոպրակ կարելու՝ ու ցորենը կամ աճարը մաքրելու... յանկան բազմաթիվ մանր երեխաներով մնում է. կովն էլ է ինքը կթում, տախտակն էլ է ինքը լվանում, սամովարն էլ է ինքը դնում, գետինն էլ է ինքը ավում, կերակուրներն էլ է, խեղճը, ինքը եփում, թափում... Շատ դժվար բան է, եղբայր... Ո՞վ էր լսել առաջվա տարիները ամսի վճար. տարին՝ ութը, շատ-շատ տասը մանեթ էիր տալիս, կինդ իր մեջքի մի հին, շուտ դեյրան էր տալիս, ոտքից էլ՝ մի կոշիկ, պրծավ զրնաց. դու մի հիմա տես. ամիսը ութ մանեթ են վերցնում ու քիթ ու պոռնգ էլ են անում, դեռ տոնի ու զատկի էլ մի-մի շորացու, գլուխներին մի-մի թաշկինակ, այդ հո այդպես, կես քաղաքն էլ տարին տասներկու ամիս առանց բանվորի է մնում: Շատ դժվար բան է, եղբայր, բայց որ լավ նայես, էլի հանցանքը մերն է: Ես այնպես հայ կին եմ ճանաչում, որ ամուսինը սայլապանություն է անում, ստացածը հազիվ ձիու, խոտի ու վարսակի է բավարարում, բայց այդ հարամ սատկելուն էլի քար է կտրել, տանն է նըստել. համաձայն է փորը՝ քաղցած, մեջքը տկուր մնալու, միայն տանը մնա, ծուլություն անի: Ասելով բերանս մազ բսավ, անընդհատ ասում եմ. «Լսի՛ր, ինչո՞ւ մարդու մոտ չես մտնում,— ասում եմ,— համ աղայի տանը տնիցդ մաքուր կապրես, համ վրադ-գլուխդ հիմիկվանից կոկիկ կլինի, համ փորդ կուշտ կլինի, համ ձեռքդ փող կունենաս, համ էլ ամուսնուդ մեջք կլինես»,— ասում եմ, էլի, ինչքան որ կարողանում եմ, բայց ո՞ւմ ես ասում, եթե սպանը սեկն կսպիտակեցնի, այս հիմարին էլ խրատը կխեղճացնի... Այն օրերը...

— Կալուստ-ա՛,— ասի,— դու բուրբուկին մտքիցդ հանել ես՝
ինչու համար քեզ կանչած լինելս, կամ վրաս ծիծաղում ես,
կամ...

— Ջանմ, ինչո՞ւ ես շտապեցնում, դե՛, նստել ենք մեզ հա-
մար հանգիստ կերպով զրույց ենք անում. համբերի, հերթը կա-
մաց-կամաց նրան էլ կգա... Ինքդ էլ կտեսնես որ սուս շեմ մնա-
ցել. մի ծայրից բերանս փրփրալով ասում եմ...

— Շնորհակալութուն, ասում ես, բայց,— ասի,— այն չես
ասում, ինչ որ ես իմանալ էի ուզում...

— Է՛հ, հիմա ի՞նչ շտապելիք է, երևի հերթը նրան էլ կհաս-
նի... Հա՛, ինչ էր ասածս... Այն եմ ասում, այս քանի տարի է մի
տեսակ է եղել, հեշ առաջվանին չի նմանի... Անցյալ օրը դուրս
եմ եկել ինձ համար. փողոցի մեջ հանդիպում է Պետրոս-ան...
Բարև, ի՞նչ ես անում... դե՛, սկսեց, եղբայր, մի զրույց, մի զրույց
որ ծայրը, ճոթը չկա. չհավատա՞ս, լրիվ շորս ժամ այն կանգնած
տեղս մնացի, ոտքերս փայտ կտրեցին, արևն էլ վերևից բիդ
պես մարդու գլուխ է ծակում: Շատ շեմ սիրում դատարկ զրույց-
ներ անել, ուրիշի միսը ծամել, դրանց դատավորը մե՞ղ են դրել,
ինչ է... Հա՛, ինչո՞ւ չէ, մի քիչ քեզ համար շափավոր զրույց
արա, մարդ ես, իհարկե կուզես հանկարծ մի քիչ սիրտդ բացել,
զվարճանալ, բայց ժամերով, օրերով՝ դա արդեն հոգու էլ մեղք
է, գրպանի էլ վնաս է, որովհետև հայ ասածդ փամբռչիկ չի, որ
ճորտերը դատեն, իրենց տան, նա էլ պատրաստ ուտի, միլիոն-
չիք չի, որ փողի տոկոսը նստի ուտի, մենք հայերս, օր դատող,
օր ուտող մարդ ենք, մեզ համար ժամանակ ասած բանդ փող է,
որին սազի, չսազի, հայերիս հեշ չի սազի ժամերով նստել ու
դատարկ-դատարկ խոսել... բայց անցյալ օրը անցնում եմ խա-
նութների շարքի առջևից, այն անկյունը չկա՞, բավականին տղա-
ներ հավաքվել են, ժամերով զրույց են անում... այդ մեկ չի, եր-
կու չի՛, երեք չի՛, ամբողջ օրը առավոտից գալիս են, այդ ան-
կյունում զրույցի են բռնվում, հազիվ մինչև կեսօր լեզուները
անգաղղում լըպը՛ն-լըպը՛ն-լըպը՛նից հրաժարվում են, այնտե-
ղից գնում են տուն, ճաշները ուտում են, նոր-նորից հավաքվում
են, նորից սկսում են զրուցել... Մի հարցնես, ի՞նչ է այդ ասած-
ները մեղքդ լամ որ, բուրբուր դատարկ է, կամ հնարած սուտ բան
է, կամ ուրիշի բամբասանքն է: Խեղճ մեք կանանց անունն է բամ-
բասող դուրս եկել, այնինչ ամուսինները նրանցից ամբողջ շա-

են. այդ հայի դատարկախոսութունը որ կա, ամենաշտապած բա-
նըս է... Ռոստով, ասում են, բազարի մեջտեղում մի ուսի ժամ
են շինում, ասում են... Հա՛յ գիտի, հա՛յ. մեր ոսկի նախիջևանը
հիմնահատակ կործանվեց, բայց առաջվա գյուղերից էլ վատ
Ռոստովը քանի գնում մեծանում է, զուգվում է, գեղեցկանում,
հարստանում է... բայց այդ բուրբուր պատճառը էլի մենք ենք...
Այն մեր ժամերի փողի կոփը որ կա՛, բուրբուրին կորցրեց մեր
քաղաքը. հա՛մ փողներս կորցրինք, հա՛մ անուններս կտրեցինք,
հա՛մ էլ աշխարհի առջև խայտառակ եղանք, հա՛մ էլ մինչև այս
օրս արած սխալներս չենք հասկանում ու բանը ուղղել չենք կա-
րողանում... Աստված գյուղբազյոռ անի այս ամեն կոփվները
մեջտեղ հանողին, ինչպես որ մեր քաղաքը ու քաղաքացիին գյուղ-
բազյոռ բարավ... Այսպես բան կլինի չեղած տեղից. մեկ էլ տես-
նես, քաղաքը երկու մասի բաժանվեց. սա ասում է՝ «ես աջա-
կողմյան եմ», նա ասում է՝ «ես ձախակողմյան եմ». մեկմեկու
հետ կոփվ, իրարանցում, ծեծկոտուք, քիչ է մնում քաղաքը տակ-
նուվրա լինի... Դրանց կոփվը, երևի ժամի փողի վրա էք. քանի
որ այդ աչ ու ձախ կողմի մարդիկ իրենց մեջ կոփում էին, փողը
իրեն համար հանգիստ կերպով սալամաթ մնացել էր պապուկ-
այի սնդուկում: Մարդու մեկը գալիս է. «կուզե՞ք,— ասում է,—
ձեզ հաշտեցնեմ,— ասում է՞,— այնպես որ բուրբուր էլ գո՛հ մը-
նաք»: Մեր ապուշներ էլ՝ «Ամա՛ն, ոտքերդ պաքնենք,— ասում
են այդ մարդուն, այդ լավութունը արա մեզ»,— ասում են:
«Տվե՛ք ինձ այս փողը»,— ասում է այդ մարդը: «Ա՛ն, վերցրո՛ւ»,—
ասում են պատվական խելոքները ու իրեն են տալիս այդ փայ-
լուն, հարյուր տարվա մեջ հավաքած ահագին փողը: Մարդը
վերցնում է այդ փողը, ծալում, ծոցն է մտցնում: «Ձեր կովի պատ-
ճառը,— ասում է,— այսուհետև ձեր միջից դուրս եկավ,— ասում
է,— որովհետև այս փողը,— ասում է,— որ ձեր ձեռքում էր,—
ասում է,— ձեզ բուրբուրին կատաղեցրել էր,— ասում է: Արանից
հետո տեղներդ հանգիստ նստեք, ձեր բանը իմացե՛ք, մեկ էլ այդ

¹ Ակնարկում է քաղաքագլուխ, մեծահարուստ Հարութուն Խալիբյանին:
² Նկատի ունի Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանին, որին ներսես Աշտարա-
կեցին ուզարկել է այդ հարցի կապակցությամբ տեղում քննություն կա-
տարելու:

փողի երեսը տեսնելու շեք»,— ասում է ու գնում իրեն բանին: Մեր ապուշները միանգամից չեն հասկանում, սուս են մնում, շատերն էլ «փա՛ռք Աստծու» են ասում, շարը խափանվեց, բարին կատարվեց,— ասում են,— բավական ժամանակ բոլորն էլ տեղներում անհոգ հա մնում են, վրայից անցնում է քսան տարի. մեր խելոքների միտքը նոր է ընկնում, թե այդքան դրամագլխով ինչե՛ր կկարողանային անել քաղաքի շահի համար ու սկսում են, եղբայրս, լալ, գոռալ ու թյո՛ւ-թյո՛ւներ անել: Բայց ինձ որ հարցնես, այդ կորած դրամը մերոնց ձեռքը որ լինեք, հավատա, բան անել չէին կարողանա, ինչպես որ էր, այնպես էլ կմնար. ինչպես որ, ահա՛, քսան տարի է անում այդ Հինդի փողը ու էլի շատ ուրիշ փողեր պարապ բոշ մնացել են ու մի մարդու մի կուպեկի շահ չեն տալիս. այն փողն էլ էլի դրանց մոտ պիտի գնար, պիտի մնար... Այդ այդպես է, բայց, փառավոր քաղաքներս ոչրե՛շացավ, ավերակներով լցվեց: Հա՛յ վա՛խ...
— Կալուստ-ա, քեզ մի բան ասե՛մ,— ասի,— ինչպես տեսնում եմ դու այսօր մտքիցդ հանել ես ինձ...
— Մեղայաստծու, ի՞նչ ես այդ մի կողմից մարդու բերդ բերդում. դե՛ կասեմ ո՛ւ...
— Ասում ես, բայց,— ասի,— այդ բոլորը ես վաղուց գիտեի, իմ ուզածս այդ չէր...
— Համբերի, հիմա, նրա հերթն էլ կգա... Ի՞նչ էի ասում որ... հա՛... անցյալ օրը գնացել եմ այն, գիտե՛ս Լուսավորչի մոտիկ, որ դատարկ կառքերը կանգնում են... հենց այն տեղն եմ գնացել, սալլապաններին քուվաս եմ ծախում, մեկ էլ տեսնեմ, կառը՛լ-կառը՛լ մի շորս ձի լծած, երկար, վրան էլ փակ տոռկ է գալիս, հենց այն անկյունը, քլուպի դիմացով կանգնում է... Առաջին անգամ էի տեսնում: Սրան-նրան հարցնում եմ. «Մա էլ ի՞նչ նոր բան է,— ասում եմ,— որովհետև սալտաթի իրարանցումը սկսվել էր, շինի՞»,— ասում եմ,— մեր ջահելների ետեք է ընկել, սալտաթ պիտի տանի»,— ասում եմ: «Չէ՛,— ասում են,— այս նոր մոդնի կառք է,— ասում են.— ուրիշներին բառասուն-հիսուն կոպեկ տալու փոխարեն, սրան տասը կոպեկ կբտաս, մեջը կնստես քեզ համար հանգիստ կերպով ուղիդ մտտով կգնաս: Հարմար, տան պես, վրան փակ, անձրևից էլ չես վախենա, արևից էլ: Վատ չէ, լավ բան է, բայց սկզբից կարծես թե, մարդու տարօրինակ է թվում օխտնօտարի հետ նստել

գնալը: Չգիտեմ ի՞նչ եղավ, որ միանգամից սիրտս շատ ուղեց մի անգամ մեջը նստել, քաշաթ անել (զբոսնել). վաղուց է արաբա չէի նստել. ճիշտն ասեմ, մյուս կողմից փողս էի ափսոսում: Կամացուկ մոտեցա ձի քշողին, ձեռքով բանով հասկացնում եմ, թե այսպես-այսպես բան է, ջեբս փող շունեմ,— ասում եմ,— բայց սիրտդ ինչքան ուզի քուվաս կտամ,— ասում եմ.— ուս ասածդ էլ քուվասի համար կորած է. մարդը համաձայնում է. երկու-երեք դավաթ լցնում եմ, տալիս եմ իրեն, խմում է ու հրամանք է տալիս այդ հսկայական տոռկի մեջ նստելու: Գնում եմ անկյունում նստում, փարշով քուվասն էլ ծնկիս եմ առնում: Ոտքս անհաջող էր, ինչ էր, այդ անգամ մի մարդ շնստեց, հըսկայական թառանթասի մեջ կոշանի՛ պես մեն մենակ նստել եմ ու տանկը՛ն-տանկը՛ն գնում եմ: Ճիշտն ասեմ, ինձ էլ շատ տարօրինակ թվաց: Փողոցի մանր երեխաները, որովհետև բոլորն էլ ինձ ճանաչում էին, ետևերիցս ընկան, մի ձայն, մի գոռոց. «Կալուստ-ա, ո՛ր ես գնում, քուվասդ կթափի, փարշդ ճաքել է, պուզադ հոսում է»: Դե, այսպիսի անհավատ երեխաներ են մեր փողոցի երեխաները: Տեսնես ե՛րբ այդ ուռյալի՞ վարժատունը, կամ հոգևորական դպրոցը պիտի բացվի, որ այդ անկարգներին մի անգամ մեջը փակեինք ու մեկ էլ դուրս շթողնեինք, որ մենք էլ հանգստանայինք... թե չէ, սա ի՞նչ բան է, մարդ չի համարձակվում տեղից շարժվել, իսկույն խայտառակ են անում: Այն էլ սուտ չի, ո՞վ է ինձ ասել թե բանդ գործդ թող, մոստով գնա...
Շատ սիրուն բան էր պողաճի Կալուստը այդ նոր մոդնի թառանթասի մեջը... Քանի որ թառանթասի մեջ մենակ ես էի ու մընացած մյուս տեղերը պարապ ու բոշ էին մնացել, մի այնպիսի աղմուկ էր, որ քիչ էր մնում ականջս խլանար. հազիվ մոստով հասա, այնտեղից ոտքով ետ դառա: Մեկ էլ ո՞վ պիտի նստի այդ մեռելի արաբայի մեջ. իսկական մեռելի արաբա է որ կա: Բայց հիմա, ասում են թե, տերերը հրաժարվել են տանել-բերելուց, որովհետև մտածած օգուտի ութերորդ մասն էլ կասկածելի է որ առնեն: Մեր հայր փող ծախսում է, բայց այդ տեսակ բաների համար չի ծախսածը: Մի սպասիր, մեր կառապանները ու ձիերը մեր քսակները թող մի լավ դատարկվեն, այն ժամանակ այդ

¹ Կաղամբի գլուխ:
² Թեալնի:

չորս ձիով թառանթասը, գուցե, նորից մեջտեղ կգա. մեր աղաները ու մեր յանկաները, իրենց ֆաեթոնը թողած, շնատեին լավ էր այդ էժանանոց արաբան...

Օրը արդեն մթնելու վրա էր. կովերը, ինչքան ժամանակ է, նախիրից եկել էին, վաղուց ետ էին գնացել. լուսինը երկնքի վրա ցուում էր, աստղերն էլ ամենքը իրենց տեղը պլթ-պլթ էին անում. պահակները այն շաքուշուքան ձեռքներին սկսել էին փողոց փողոց քայլել, շներն էլ իրենց գիշերվա եղանակով, որբ բաժիր, որբ բարակ ձայնով, իրենց մուզիքն էին սկսել:

— Հետո՞, Կալուստ-ա,— ասի,— ֆլան բանը ալսոր շնե լսելու, ինչ է, ասի ու վեր կացա տեղիցս:

— Սպասիր, եղբայր, ինչ ես շտապում, ըհը՛, հերթը նրան է հասավ, նստի՛ր տեղք, նստի՛ր... Ի՞նչ էի ասում, իզուր խոսք կտրեցիր... ամենաչսիրած բանս է այդ. երբ որ մարդս բան է սկսում, ձեռ աչն է, որ պիտի թողնես վերջացնի... մը՛ց... խոսք ինչի՞ վրա էր որ... հա՛, աչն եմ ասում... անցյալ օրը բազարի միջից անցնում էի... եղբայր մի արաբա փտած, քացխած, տրորված ծիրան էին բերել թաշղանից... միտք եմ անում՝ «այդ ի՞նչ հորս ցավն է, որ փող են տալիս առնում. մեղք շն՞ն խեղճ երկխաները, իհարկե ջեթմը վրաներից շի գնա, ինչո՞ւ գոլովան կամ փալիցը...»:

— Կալուստ-ա, քեզ մի բան ասե՛մ,— ասի,— եթե որ ասելու ես, ասա այն բանը, թե չէ, մնաս բարով, ես գնում եմ, պտակելու ժամանակն է:

— Ասեմ, ասեմ,— ասաց Կալուստ-ան ու մտքի մեջ ընկավ... բայց ի՞նչ ես ուզում որ ասեմ, հարցրեց:

— Քիչ առաջվա բանը, էլի՛,— ասի:

— Ի՞նչ քիչ առաջվա բան,— հարցրեց նորից:

— Դե, քիչ առաջվա բանը, էլի, որ ժողովուրդը դեպի Ասիայի կողմն էր գնում:

— Հետո՞,— ասաց:

— Դե, ասա ինձ,— ասի,— ինչո՞ւ էր գնում:

— Ես ի՞նչ իմանամ ինչի էր գնում, գնում էր, էլի, իրեն համար,— ասաց:

Սառույց կտրեցի մնացի: Հապա ինչո՞ւ ես ժամերով լսեի այս խաբեբայի բլբլոցը: Այդ հո այդպես, դու հիմա բանի վերջը լսի՛:

— Որ այդպես է, մնաս բարով,— ասի:

— Ո՛ւր ես գնում,— զոռաց վրաս,— այդ ինձ մեն-մենակ փողոցի մեջտեղն ես գցում ո՞ւ:

— Բա ի՞նչ կուզեիր, ներս կանչեի՞,— ասի:

— Քեզ ներս կանչիր ասե՛լ եմ որ,— ասաց:

— Բա ի՞նչ ես ուզում,— ասի:

— Կառապանիդ ասա, թող ուղեկցի ինձ,— ասաց:

— Ինչո՞ւ,— հարցրի:

— Այսպես ուշ ժամանակ, այս մութ գնդանին, այս ջիներով լցված փողոցների մեջ մենակ կքայլվի՞,— ասաց վախվխելով չորս կողմը նայելով:

— Մենակ էլ որ քայլես, իբր թե ի՞նչ կլինի որ, մեծ մարդ ես ու վախենալս ո՞րն է,— ասի:

— Ի՛, այդ ինչ հեշտ բան է, հապա գողե՞րը, հապա հարամիները, հապա կատաղած շները...

— Այդքան որ վախենում ես, մի հաստ փայտ տա՛մ,— ասի:

— Փայտով ալեղի մեծ փորձանք է,— ասաց դողալով մեր Կալուստ-ան. մի օր— այս կանի հաշվի քսան տարի— մի օր ես ու կինս Համբարձումի թաղից դուրս ենք եկել, տուն ենք գալիս. մեկ էլ տեսնես երկու հոգի վրաներս ընկան. նրանցից մեկը քաշեց ձեռքիցս վերցրեց ձեռնափայտս, պա՛ս մեջքիս, պա՛ս կոնակիս, պա՛ս ծոծրակիս, ի՞նչ պիտի անեի, թողեցի փախա, հեռվից նայում եմ, որ մեկը մի ձեռքից բռնեց կնոջս, մյուսը մյուս ձեռքից քաստը՛ս-քաստը՛ն վերցրին ուղիղ դեպի դաշտը տարան. երեք օրից զոռով եմ գտնում յանկայիդ այդ աղյուսի գործարանի մոտերում... տասը տարվա շբեր խեղճ կնոջս արգանդը վախից բացվում է ու պատճառավոր է լինում: Այդ էր որ ուխտ եմ անում, որ մեկ էլ գիշերով քայլելու լինեմ, մենակ չքայլեմ, մեկ էլ որ ձեռքս փայտ շունենամ... Դե՛, շո՛ւտ արա, տաա կառապանիդ որ հետս գա:

— Զանեմ, ես կառապան չունեմ,— ասի,— դու գիտես հո, ես ձի-արաբան վերջ եմ արել:

— Է, ի՞նչ ունես հապա, բանվոր ունե՞ս հո,— ասաց:

— Զէ՛, բանվոր էլ չունեմ,— ասի: Ճիշտ որ չունեի:

— Բա ի՞նչ ունես, հարցրեց մարդը հայ-հայ լեղին պատռելով:

— Աի տասներկու տարեկան ուս աղջիկ ունեմ,— ասի,—
ծծի երեխայիս նայող:

— է, ասա նա թող գա. էլի մարդ է, ախր, գոնե մեն-մենակ
չեմ լինի. զրույց անելով, զրույց անելով մեզ համար կգնանք:
Թե չէ, մութ վնդան ժամանակ, եղբայր, մարդուս մտքից ինչ
ասես վատ բաներ է անցնում՝ խոնձորոզներ, տեեր, տունի տե-
րեր, ճիններ, պողոճներ, խոռթլախներ, եղիատիներ, ծովի մարեր,
մեզմեն աղեկներ, մոմոսաներ, դե՛ սրանց նման սատանոցներ:
Այդ կողմից երեխայի պես բան եմ, շատ եմ վախենում: Աստվա-
ծըդ կսիրես, ասես այդ ուս աղջկանդ գա ճամփու դնի ինձ:
Ճարս կտրած, ասածի պես արի:

ՆՈՐԸՆԾԱ

Վաղուց է կուսավորիչ չէի գնացած. Համբարձումի ժողովրդի
խիստ կարոտել էի. այն օրն էլ քանի որ կիրակի էր, առավոտը
կանուխ բազար էի դուրս եկել, որ բան-ման առնեմ, բանվորիս
տամ, որ տուն տանի, ինքս էլ գնամ կուսավորիչ. մեկ էլ տեսնեմ
պատարագի զանգերը սկսեցին խփել, բավական չէ, որ բազարի
ժողովուրդը միայն թուրքեր էին, զանգերի ձայնն էլ որ լսեցին,
մի քանի հոգին էլ իրար ետևից եկեղեցի քաշվեցին: Կողքիցս
շտապով պողաճի թորոսը անցավ:

— Բարե, ո՛ր ես այդպես արագ գնում:

— Ժամ, էլի, չգիտե՞ս, որ այսօր տերտեր պիտի օրհնեն ո՛ւ
լսած չե՞ս ինչ է,— ասաց:

— Չէ՛, բանից խաբար չեմ, ո՛ւմ:

— Ասվատուր սարկավագին, էլի՛, դե շուտ, արի գնանք,
հիմա ի՞նչ բազարի ժամանակ է, բազարը մեզնից չի փախի:
բայց տերտերի օրհնելու տեսարանը ամեն ժամանակ չի լինի
եթե գալու ես՝ շուտ գնանք:

— Ջանս, մի կարգին ասես, ո՛վ է այս Ասվատուր սար-
կավագը:

— Չգիտե՞ս, ինչ է, Ասվատուր սարկավագին, մոմճի Սիմ-
փոն էին ասում, էն որ սուրբ Թորոսի թաղում էր ապրում, հենց
նրա փոքր որդին...

— Տո՛, էն կոծլուտ քթովը շինի՞...

— Չէ՛, ջանմ, էն տիրացու խաչիկն է...

— Հապա ո՞րն է Ասվատուրը... էն այժի ձայնովը շինի՞:

— Չէ՛, ա՛յ մարդ, էն տիրացու Պողոսն է:

— Հապա Ասվատուրը ո՞րն է...

— Ասվատուրը. էլի, չգիտե՞ս, ինչ է, էն որ սուրբ Հակոբի
օրը մատաղի խորոզը գողացել էր...

— էն տիրացու Կիրակոսը չէ՞ր որ...

— Հըր՛. լսել ես, բայց կարգին չես լսել. տիրացու Կիրակո-
սը ոչ թե խորոզ, մատաղի միս էր գողացել, բայց այդ ե՞րբ, այդ
վաղուցվա բան է. Ասվատուրը որ ասում եմ, հերու չէ մյուս տա-
րի էր գողացել խորոզը, բայց բռնեցին, մի քիչ մութնածեծ արին,
բաց թողին. առաջնորդին էլ պիտի գրեին, բայց որովհետև Մի-
նաս աղային հեռու ազգական է գալիս, ձայնները դուրս չեկավ-
ա՛յ մարդ, այդ բանը լսած պիտի լինես ո՛ւ...

— Հա՛, հա՛, հա՛, ա՛յ, հիմա իմացա. Ասվատուր որ ասում
են նա է, հա՛, դե, իմա՛ցա, իմա՛ցա: Որ այդպես է գնանք:

Գնացինք. ժամը լիփ-լիքն էր, ասեղ գցելու տեղ չկար: Հեռ-
վից աչքերով փնտրում եմ այդ տերտերացուին, բայց չեմ գրո-
նում, ո՞ր մեկին, եղբայր, ճանաչես, շնից շատ են, մեկ մեկու էլ
այնքան նման են, որ բանդ-գործդ պիտի թողնես, նրանց ետևից
պիտի ընկնես, որ ամեն մեկի ով լինելը իմանաս. ականջը կան-
չի, կողքս բախկալ Սրապն էր կանգնած.

— Տո՛, Սրապ, մի ցույց տաս, ո՞րն է, որ Ասվատուր սար-
կավագ են ասում:

— Ա՛յ, այն շոփուր երեսովը, կարճ բոյովը, ճլար-ճլար գո-
ղի աչքերովը, տեսնո՞ւմ ես... չէ՛, չէ՛, այն կողմը մի նայիր, աչ
կողմդ նայիր, տեսա՞ր, որ կողքի տիրացուի հետ զրույց է անում,
հենց այդ է:

— Ի՛, Մատուրն է, իմացա, իմացա, հիմա արդեն ճանաչեցի:
Սրանից քսան տարի առաջ Մատուրի պապան ընկնում մեռ-
նում է. ողորմելիի որբեայրին երեք տղով, երկու աղջկով մնում
է. Մատուրը մեջների ամենափոքրն է: Մայրը առաջնեկին վերց-
նում է դեմիրճիի է տալիս, բայց տղան հավես չի ունենում, ինչ
է, դեմիրճիից դուրս է գալիս ու բավական ժամանակ պարսպ
բոշ ման է գալիս, բայց վերջը-վերջը խելքը գլուխն է գալիս, իրեն
համար արհեստ է ստեղծում, այսօրվա օրը բազարի մեջը կվա-
ս է ծախում— էլի իրեն համար բան է: Միջնեկին բազազի է տա-

լիս. նա էլ է անպետք դուրս գալիս, մեկ էլ լսում ենք, ի՞նչ ենք լսում, ծովը ընկել խեղդվել է: Մովի ասիին խաղալու ժամանակ շարունջուն է արել, պուտարների վրա է բարձրացել, մեկ էլ տեսաք ոտքը սահել է ճո՛մփ, ջուրն է ընկել, ընկածի պես, զը՛վ է արել պուտարների տակը մտել, կորել է. մինչև որ մարդիկ են հավաքվել, մինչև որ փնտոտոցի են դուրս եկել՝ ժամեր է անցել. իրիկվա ղանգերի ժամանակ զոռով-մոռով ջրից հանել են հիշյալ տղան. հիմա սավան որտեղի՞ց գտնեն, առաջի պատահած խսիրի վրա են դրել, շորս ծայրից շորս հոգի բռնել են, սկսել են, ազբերս, այդ խեղդվածին թափ տալ. բավական ժամանակ թափ են ասվել, բայց իզուր, խեղճը մոս-մոս է կտրել, մեջքն անգամ կապտել է, պարզ է, որ հոգին այն աշխարհն է թռել, ինչ էլ որ լինի, մեռելը զրոգի վրա են պառկեցրել, վրան խսիր են փռել, տարել են մորը հանձնել, դե նա էլ, ինչպես որ կարգն է, լացել է լացել, հետո տարել են թաղել: Հերթը այս ծաղիկին՝ Մատուրին է եկել:

Որովհետև առաջնեկը անպետք է դուրս գալիս, միջնեկն էլ քանի որ շատ ապրես է լինես, խեղճ կնոջ ամբողջ հույսը Մատուրի վրա է մնում. բայց արի տես, որ Մատուրն էլ տեսնում է որ մամայի մի հատն է, սկսում է աներեսանալ. ողորմելի կնոջ զգիլն թե ինչ օյիներ է բերում, այն էլ Ասաված գիտի: Ինչ էլ որ լինում է, տասներկու տարեկան որ դառնում է, մաման առնում վարպետի է տալիս: Մեկ, երկու գնում-գալիս է «Մամա՛, տեսում է,— ես այս վարպետին շեմ ուզում, մյուսին եմ ուզում» Մաման էլ ի՞նչ պիտի անի, այդ վարպետից հանում է, մյուսին է տալիս. «այդ վարպետի մոտ էլ մի քանի օր մնում է նորից՝ «Մամա՛, տեսում է,— այս վարպետի մոտ էլ շեմ ուզում գնալ, ինչ ուզի՞ր վարպետի տուր»: Մայրը այնտեղից էլ է հանում, ուրի վարպետի է տալիս, տղան էլի հակառակություններ է անում, այնտեղից էլ է դուրս գալիս, շորորոգ վարպետին է մտնում: Ի՞նչ խոսքս երկարացնեմ, երկու տարվա մեջ մի քառասուն վարպետ փոխում— մեր տեղում, գիտես հո, ով այբը ճանաչում է՝ խալի է, բեն այբ բան իբար կապեց թե չէ՝ վարպետ է. այդ կողմից մեր հողի ուժայր՝ վատ չէ, լավ է, շներից ավելի շատացել են վարժապետները— է՛հ ինչ որ է, բանը այն չէ. երբ որ տղան տասնըհինգն է մտնում, կմկմալեն կարգում է, ճանճի ծոտածի գի՛

էլ ճզմզում է— դե ուրեմն գրել-կարդալը թոս-թամամ է արել: Վարպետից դուրս է գալիս: Մաման տունում է բազազխանա, մի վաճառականի մոտ. «Աղա՛, դե մի հատիկ որդիս է, աչքիս լույսն է, ծերությունս նեցուկն է, որբերուս հույսն է... Աստծու խաթրին, հորդ, մորդ հոգուն, ա՛ն սրան, մարդ արա»: Վաճառականը չէ՛ չի ասում, համաձայնում է:

Այն ժամանակները բազազխանան այսքան ընկած չէր. մոտավոր մի պստիկ քաղաք էր. ամեն կողմից ապրանք գնելու նախիջևան էին գալիս: Տղան մի օր է հավեսով գնում, երկու օր է հավեսով գնում, երրորդ օրը խանութ չի գնում. տերը խանութի տղին ետևից ուղարկում է, ուզում է հաստատ իմանալ, ինչո՞ւ չի եկել: Տղան գնում է Մատուրի մոտ. «Այսօր Մատուրը ինչո՞ւ խանութ չի եկել»,— ասում է: «Ի՛, ասում է մայրը, հապա որտե՞ղ է, խանութ չեկա՞վ, ինչ է»: «Չէ՛, չեկավ»,— ասում է տղան: «Տո՛, ճի՛շտ ես ասում»,— ասում է մայրը, դարձանալով: «Էն խաչը՛ չեկավ»,— ասում է տղան,— տերս հատկապես դրկեց ինձ որ բանի էությունը իմանամ ու իրեն ասեմ»: Մայրը մի տեսակ է լինում: Տղան գնում է «այսպես, այսպես բան է»,— ասում է տիրոջը: Տիրոջ միտքը բան է ընկնում. «Տո՛, էն վեց գազ քաթանը ո՞ւր է, ասում է տղին, աչքիս չի երևում ո՛ւր, երեկ այս տեղը չէ՛ր որ»: Տղան սկսում է փնտրել, թե դրել ես՝ գտի՛ր, քաթան վար, քաթան վեր, քաթանը չկա: «Տո՛, այն թելի կծիկը ո՞ւր է»: Կծիկն էլ չկա, շքացել է: Էլի մի քանի այսպիսի բաներ էլ աչքի չեն երեվում: «Այս բանը, բան չէ»,— ասում է տերը. սիրտը, փոքր ըսկըսում է հոալ. բարկությունից սկսում է բեղը կրծոտել:

Կեսօրին Մատուրը տուն է գալիս. «Տո՛, որտե՞ղ էիր»,— հարցնում է մայրը: «Որտեղ պիտի լինի որ, խանութում էի, էլի՛... ո՛ւրի, մամա, այնպես հոգնել եմ որ... ամբողջ օրը շիթ թուր թեկս տակը, գազը ձեռքիս մուշտարիներին տներն եմ զընացել»: Մաման մտքի մեջ ասում է. «Տե՛ս, տե՛ս, անհոգի անհավատները ինչպես շառ գցեցին որդուս վրա. խեղճիկս ամբողջ օրը գործ է արել, հոգնել է, նրանք էլի անունը կտրել են ուզում, վրան սուտեր են հնարում. մի սպասիր, ճաշից հետո ինքս կզընամ տիրոջ մոտ, սև ձյունը գլխին կբերեմ, այն ժամանակ նա կիմանա ինչ ասել է որբ տղի անունը կտրել»:

Ինչպես որ միտք է անում, այնպես էլ անում է: Ծաշից հետո հագնվում է ու գնանք, բալաս, տանեմ տիրոջը, մի լավ

ամաչեցնեն նրան, որ մեկ էլ շահամարձակվի ետևիցդ մարդ վազեցնեն: «Մամա, ես այն տիրոջ մոտ մնալ չեմ ուզում, ասում է որդին, եթե ուզում ես ինձ մի ուրիշի մոտ տար»: «Ձէ՛, մի սկզբից գնանք տիրոջը մոտ, կարողացածիս չափ նրան մի լավ խայտառակ անեմ, էն դուրս գալը կամ մնալը հետո կտեսնենք»: «Ձէ՛, մամա,— ասում է տղան,— մեռցնես էլ, մեկ էլ ես այն տիրոջ երեսը նայել չեմ ուզի, եթե ուրիշ տիրոջ տանելու ես՝ կզենամ, թե չէ նրա խանութը ոտքս չեմ դնի, որովհետև այս երկու օրը նա ինձ շատ տանջեց, ուժիցս վեր գործի էր դնում»:

Տղան մնաց տանը, մայրը գնաց տիրոջ մոտ: Խանութ մտած շմտած սկսում է այդ մարդուն շլուժած խոսքեր ասել... «Դե՛, դու իմ որդուն լավություն չես ուզում, դե՛ դու նրան ուժից վեր գործի ես դնում, դու նրան կասկածի տակ ես գցում, որ մի օր նա էլ քեզ պես հարուստ չլինի»: Ես ի՞նչ գիտեմամ, ասում է, է՛լի կին ասածդ, երևի, լսած կլինես, երկար մազ ունի, բայց խելքը կարճ է: Խեղճ տերն էլ ի՞նչ անի. սուս մնացել է, նայում է, խեղճ դատաստան կա՞ որ:

Այսպիսով տղան տիրոջից մի երեք ուրբուր բան է գողանում ու մեկ էլ աչքին չի երևում. մայրն էլ այն համոզմունքով է մնում, թե մեղքը որդունը չէ, այլ տիրոջն է: Գողության ձայնը դեռ փրված չէր:

Մայրը տուն չգնացած այդ տիրոջից ուղիղ խաֆաֆ Պետրոսի մոտ է գնում. «Այսպես, այսպես որդի ունեմ, ասում է, դե՛ գրել-կարդալու շատ վարպետ է, առևտրից էլ բավականին բան է հասկանում, վերցրու խանութդ»,— ասում է: Պետրոսը համաձայնում է, «Վաղը բեր»,— ասում է: Մյուս օրը մայրը վերցնում է որդուն, ուղիղ խաֆաֆ Պետրոսի մոտ է տանում: Այնտեղ է Մատուրը միայն մի օր է մնում, մյուս առավոտյան, խանութը գնալու ժամանակ, սկսում է այս տիրոջն էլ վատ ասել ու տեսակտեսակ մահանաներ է մեջտեղ բերում ու չի ուզում խանութը գնալ. այդպես էլ մնում է: Տերն էլ խանութի մեջ մի քանի պակաս բան է նկատում՝ մի դույզ կոշիկ, մի դույզ ոտնաման, երեք զույգ էլ մուճակ: «Ո՞վ է դողացել, ո՞վ է գողացել», կասկածը Մատուրի վրա է ընկնում. խանութի տղին ետևից են զոկում, բայց Մատուրը խե՛ է որ գա. գող՝ սիրտը դող. վեր է կենում մայրը գնում խանութ, ականջը փակում է, բերանը բացում, շլուժած բաներ ասում ողորմելի Պետրոսին:

Գրանից հետո էլ Մատուրին տալիս են մի մահուդի վաճառականի. այնտեղ էլ երկու օր է մնում, նրանից հետո էլ մի բախկալի են տալիս. այնտեղ էլ ինչ ասես գողանում է. գողությունը բռնում են ու դուրս անում: Այսպիսով տարի շանցած մեր Մատուրը քսան, երեսուն տիրոջ մոտ մտնում ու դուրս է գալիս, մի տեղ էլ տիտիկ չի անում: Արդեն մայրը սկսում է տեսնել, որ հանցանքը որդունն է: Ի՞նչ անի խեղճը: Տղան էլ արդեն տասնհինգից դուրս է եկել, տասնվեցն է մտել. այս էլ ե՞րբ խելքի պիտի գա— միտք է անում մայրը— այդպես երեսի վրա գցել չի լինի. շարին մի ճար պիտի գտնվի: Ազգականները հավաքվում են, ով ինչ իմանում է, խելքը կտրածի չափ մի բան է ասում. վերջի վերջո այնպես են մտածում, թե արի այս տղին օտար, հեռու տեղ զրկենք, որ երես տվող ու մեջք չունենա, գուցե խելքը զուտը հավաքի. այդպես քանի-քանի օրինակներ են եղել. ասածը արած է, առնում են Մատուրին Կերչ են ուղարկում մի բազազի մոտ, բայց տարին անցած-չանցած այնտեղից էլ են դուրս անում. համ գող է, գրում են, համ ծուլ է, համ էլ առևտրից բան չի հասկանում: Մի քիչ ժամանակ անց մայրը նորից վերցնում Քաթարինաթար¹ է ուղարկում. շորս ամսից հետո այնտեղից էլ են ս... անում. զլուխը հաստ է, ասում են, ծուլ է ու համառ, ձեռքն էլ մաքուր չէ: Մայրը չի իմանում ինչ անի, քիչ է մնում խեղճ կնիկը: Լավ է, որ այդ ընթացքում մի թոփթեցի² է հանդիպում. «Այդ տղին ինձ տվեք,— ասում է,— ես դրան խելքի կբերեմ, մարդ կանեմ, մեր արհեստը առևտրի նման դժվար բան չէ,— ասում է,— ով էլ որ լինի, շուտ գլխի կընկնի»: Առնում է Մատուրին գյուղ է տանում: Ճիշտ էլ, գյուղացու արհեստը ինչ շատ խելք մաշելու բան է որ, միայն թե մարդ անկյալ չլինի, դրանից հեշտ բան կա՞ որ. գութանով վարել, ցան ցանել, բերքը հավաքել, կալսել, խոտ հնձել, աթար կտրել— դե՛, այսպիսի բաներ. բայց դու այն տես որ շորս-հինգ ամսից այդ գյուղացին էլ հետ է բերում տղին ու ասում մորը. «Ես բթամիտ շատ էի տեսել, բայց այսպիսին հեջ հանդիպած չէի, այս ավանակը շորս ամսվա մեջ չկարողացավ ձանաչել, թե որն է ցորենը, որն է գարին, զլուխը շատ հաստ է եղել, ես դեռ այդպիսի ցուցանք չէի տեսել, այս առաջին

¹ Եկատերինոպար, ներկայումս Կրասնոդար:
² Գյուղ նոր-նախիչկանի մոտերքում:

բան կարողանաս հավաքել», — ասում է կինը: «Ինչո՞ւ, — ասում է մարդը, — օրը չէ՛-չէ՛, 3, 4 փութ միշտ գտնում եմ, այնպես օր է լինում, որ ութը փութ եմ հավաքում — պատահմունքը գիտի, մեծ պասին, սուտ չէ, քիչ է ոսկոր ասած բանդ, բայց սողումի ժամանակ, միայն հավաքել կարողացիր, քսան փութին էլ համաձայն չեմ»:

Կնոջ միտքը իսկույն բան է ընկնում. «Արի, — ասում է մըտքում, — որդուս այս արհեստին դնեմ. համ հեշտ բան է, համ հաշիվ չի ուզում, համ խելք չի ուզում, համ գրագիտություն չի ուզում, իսկական ծուլ մարդու արհեստ»: «Փասլյուշի, — ասում է, — ինչ վարձ կտաս որդուս, երբ որ մոտդ տամ». «Բողազին նայելուց բացի, — ասում է մարդը, — տարին քառասուն մանեթ կտամ, միայն թե գործին ուշադիր լինի ու օրե օր ջանա ավելի ու ավելի ոսկոր հավաքել»:

Ուրեմն, մյուս օրը, վերցնում է մայրը որդուն ու այդ ոսկոր հավաքողի մոտ բանվոր է տալիս: Երկու օր է անցնում. տղան վայնաչարի ոսկոր է հավաքում ու բերում տիրոջ տունը լցնում: Երրորդ օրը տերը ահագին բան հավաքած գալիս է, Մատուրին է հանգիպում, տեսնում է, որ դատարկ տոպրակով է քայլում. «Տո՛, ինչո՞ւ տոպրակումդ բան չկա», — ասում է, — մի տես իմ տոպրակը բերնե բերան լիքն է: «Քաղաքի մեջ ոսկոր կա՞ որ, բոլորը շները կերել են», — ասում է Մատուրը: Մարդը բարկանում է. պարզ բան է, որ տղան սուտ է ասում: «Որ այդպես է, շալակդ առ այս լիքը տոպրակը ու տուն տար, ձեռքիդ դատարկը ինձ տուր», — ասում է մարդը: Մատուրը նրան է տալիս իր դատարկ տոպրակը, նրա լիքը ինքն է վերցնում. մարդը գնում է նորից հավաքելու, դա էլ դեպի տուն է գնում: Մի քիչ հետո ետ է նայում, տեսնում է, որ տերը աչքից կորավ, մի պատի տակ է մտնում, տոպրակը գետնին դնում, «մի քիչ թիկն տամ», — ասում է ու պառկում ու պառկած տեղը խոռ-խոռ քնում: Էլի անցնում է բավական ժամանակ: Մեկ էլ տեսնում է մեկը փայտով կտկտացնում է. տղան աչքերը բացում է, ի՞նչ տեսնի, տերը լիքը տոպրակը մեջքին դիմացը կանգնել է. «Տո՛, այստեղ ինչ գործ ունես», — ասում է մարդը: «Մի քիչ թիկն էի տվել, հոգնություն էի առնում», — ասում է Մատուրը:

«Ջվալդ տուն տարա՞ր», — հարցնում է տերը: «Չէ՛, հիմա կտանեմ», — ասում է տղան ու շորս կողմն է նայում տոպրակը

փնտրելով. ի՞նչ ոսկոր, ի՞նչ ջվալ, արաբաճա՞րի վրա պատրուտած լաթերն են քաշ գալիս: Մինչև որ մեր Մատուրը իր համար անուշ-անուշ քնել էր, թաղի քաղցած շները թափվել են դրա ջրվալի վրա, պատառ-պատառ են արել, մեջի ոսկորները որը կերել են, որը առել տարել, ջվալն էլ այնպես են կտրտել, որ ճանաչելու բան չի: Տերը բարկանում է, մի լավ գանահարում է Մատուրին ու վռնդում. «Հայդե, ս... աչքիցս, — ասում է, — դու այս արհեստի համար անպետք ես»:

Մատուրը նորից մամային է գնում: Ինչ խոսքս երկարացնեմ, դրանից ջրկիր էլ է դարձնում, հող փորողի էլ է տալիս, բազարի մեջ մանրավաճառություն էլ է անել տալիս, բայց մի բանի էլ պետք չի գալիս մեր Մատուրը: Էլ աշխարհիս երեսին արհեստ չի մնում որ դրան շտան — տղան մեկին էլ հավես ու հասկացողություն չունի. մնում է, որ քարը առնեն, վզին կապեն ու ծովը գրցեն: Հա՛. այս էլ ասեմ որ լրիվ լինի մեր Մատուրի առակը, որովհետև իսկական առակ է այս տղի բանը, մարդու որ ասես՝ չեն հավատա: Մի օր մայրը գնում է աղաների մոտ, ոտքերն է ընկնում, աղաչում է, պաղատում. «Որդուս պահակ դարձրեք», — ասում է: «Թող լինի», — ասում են ու տնից քսան կոպեկ վարձ են կապում, այնպես որ՝ ամիսը երկու մանեթի չափ բան պիտի առներ: Բայց առաջին գիշերը գնում է Մատուրը մի դարպասի տակ պառկում — պառկածն էլ այն է, որ մյուս առավոտն են արթնացնում... այդ գիշեր, թարսի պես, հենց այդ տունը, որի դարպասի տակը որ պառկել է, գողեր են մտնում, տունը դատարկում — երեկ միջի ապրողները պահակ ունենք ասել են ու դրոները, կամ պատուհանները լավ չեն փակել: Մատուրի օձիքից բռնում են, չեն պոկվում: «Այս ինչպես է եղել, որ, — ասում են, — այսքան ժամանակ պահակ չունեինք, մի փորձանք էլ եղած չէր, այս պահակ բռնած օրը խաթա պիտի գար մեր գլխին» — հասարակ բան չէր:

Մեր Մատուրին բանտ են դնում և տարի ու կես պահում: Նրա հոգն էլ չէ. պատրաստի հաց, պատրաստի շուր, պատրաստի սենյակ, դրանից էլ լավ ի՞նչ բան կա: Ամբողջ օրը ոտքերը նրստարանի վրա երկարացրած պառկում է, աչ կողմից ձախ կողմը, ձախ կողմից աչ կողմն է շուռ գալիս, այսպիսով այն տարի ու կեսը, ժամ ու կեսի պես անցնում է մեր Մատուրի համար: Վերջի վերջո դուրս են անում բանտից, մի հատ բռունցքով ծոծ-

բակին խփում են. «Գնա՛ բանիդ, անշնորհք ապուշ», — ասում են ու թշում:

Էլի մամայի վրա է գնում մեր Մատուրը: Մաման էլ, ինդճը, ի՞նչ պիտի անի. Ասածու պատիժն է, ասում է ու նստում մի կողմ: Մի օր տղան քնից հանկարծակի զարթնում է. «Մա՛մա, — ասում է, — մի զարմանալի երազ տեսա, — ասում է: Երազիս մեջը տեսա, որ ծոծրակիս մի երկար, կնկա մազ էր բսել, ի՞նչ պիտի լինի այդ»: Մայրը միտք է անում, միտք է անում, Ֆալ գրցել է տալիս, հայելի նայողին է գնում, դուռ-դրացու է հարցնում, վերջի վերջո այսպես միտք են անում. «Երեկ Մատուրի բախտը ժամից է, կամ տիրացու պիտի լինի, կամ տերտեր, որովհետև երկար մազով տղամարդիկ տերտերներն ու տիրացուներն են»: Մարդկանց ասածը ասած էր: Մյուս օրը առնում է մայրը այդ հիմար Մատուրին ուզիլ ժամի երեցփոխանի մոտ է տանում. «Վերը Աստված, վարը դու, — ասում է, — որգուս բախտը ժամից է երազում ծոծրակին երկար մազ է բսել, Ֆալը ասում է, թե տերտեր պիտի լինի: Դու որ շանես, ո՞վ մեզ պիտի անի այդ լավությունը: Երեցփոխանը հավատով մարդ էր — այդպես երազների, Ֆալերի, աչք, ունք խաղալու, ձեռքի ափը քոր գալուն շատ հավատում էր. «Որ այդպես է՛ այդպես թող լինի», — ասում է. դառնում է տղին ու՝ «Կարդալ գիտե՛ս», — հարցնում է: «Մի ժամանակ գիտեի, բայց...», — ասում է տղան կտարատվելով: «Է՛հ, լավ, — ասում է երեցփոխանը. — իմ կարծիքով, տերտերի, կամ տիրացուի համար կարդալը այնքան էլ պետքական բան չէ... այնքան որ... գե... Ձայնդ ինչպե՛ս է, լա՞վ է»: Տղան քթի տակ մամուռ է... «Է՛հ, լավ, այդ հետո կտեսնենք»:

Խոտքս ինչ երկարացնեն. ժամ մտածն էլ այն է, մեր այդ հիշյալ Մատուրը, իհարկե, ինչեր չտվող Աստված է, մեռնեիս անունին, բուրբուռն ուրիշ մարդ է դառնում: Վրան գուխը նոփ նոր, փորը կուշտ, ամեն հոգու հացի, ամեն կնունքի, հարսանիքի, խնջույթի ու ամենարարձր մարդկանց հետ է նստում վեր կենում, ուտում, խմում, մի տարի անցնելուց հետո այդ երեցփոխանի ազգից աղջիկ է առնում, տուն տեղ լինում ու մարդու շարք անցնում:

Դրանից հետո աշակերտ է հավաքում, սովորեցնում, տակից էլ ահաջին փող է հավաքում: Ախօբվա օրս էլ դե՛, տերտեր պիտի լինի: Ինչե՛ր չտվող Աստված է, մեռնեիս գորությանը:

Ափսոս, որ շահել ժամանակս չգիտեի, որ տերտեր լինելը այսպես հեշտ բան էր, ես էլ որ տերտեր լինեի, ինչո՞վ ուրիշներից պակաս պիտի լինեի: Բայց, Աստված տա, որդիս որ մեծանա, մտքումս կա նրան տերտեր անելու, մանավանդ որ տեսնեմ ուտումի կամ առևտրի հավես չունի, որովհետև իմաստուն տերտերի — այդ շատ ստուգված բան է — բախտը միշտ փակ է լինում:

ՎԱՐԺԱԳԵՏ

Այն օրը մի տարեց ծեր մարդ ներս մտավ. առաջին անգամ տեսած մարդս էր: Մուգ կապույտ, կեղտոտ, բռնոթիի հետքերով թաշկինակի մեջ փաթաթած կլոր բան ուներ թևի տակը: Բարով-Աստծու բարին:

— Ի՞նչ ես ուզում:

— Քեզ մի խնդիր ունեմ, վարժապետ, — ասաց:

— Ասա՛, տեսնենք ի՞նչ է խնդրածդ, — ասի:

Մեր տեղի սովորությամբ հրամեցեքի շապասած, մարդը աթոռը քաշեց նստեց ու վաղուցվա բարեկամի պես գրուցցի բռնվեց: Մենք այդ կողմից շատ հասարակ մարդիկ ենք. մեկ մեկու հետ ցեռեմոն, պատիվ-բան չգիտենք, այլ ուստի կամ մի ուրիշ օտար մարդու հետ է, որ մեզ շենքով պահել գիտենք. հայի որ հանդիպեցինք, ով կուզի թող լինի, շուղեցած տեղից էլ բերաններիցս դռհ՛իկ, անկարգ խոսքերը ջրի պես վազում են. մեկս մեկի հետ նստած ելածներս էլ խախտից էլ վատ է լինում. «եև՛, ապու՛շ, զավգա՛կ, հայ բու... մայրդ-հայրդ այսպես-այնպես», սա մեր ամենօրյա խոսքերն են, մեր գրուցցի ու սոյբաթի աղն ու տաքդեղը. իբր թե մենք մեկ մեկի շատ սիրում ենք ու պատիվ ենք տալիս, որովհետև սուտմուտ ցեռեմոններ չենք բանեցնում, մեկ մեկին չենք խաբում, ինչպես որ ներսից մաքուր ենք, այնպես էլ մաքուր դրսից ենք ցույց տալիս... Է՛հ, ինչ էլ լինի, խոտքս այս էր, որ այդ ներս մտնող մարդը, առանց հրամեցեք անելու աթոռ վերցրեց նստեց: Քեֆս հարցրեց, պապայիս, մամայիս, տիկնուջըս, երեխաներիս «ինչ անելները» իմացավ, հեռավորներս լա՞վ են, հանգի՞ստ են, վաղո՞ւց է գիր չեմ առել: Պարզ երևում էր, որ մարդը առաջին անգամ հանդիպած էլ որ լինեի, էլի շատ պիտում

էր ինձ: Սրանից հետո կարո՞ղ ես, կհամարձակվե՞ս ասել, թե մենք հայերս մեկս-մեկիս սրտացավ, բարի-կամեցող շենք:

— Վարժապետ, ես քեզ մի խնդիրքի եմ եկել,— ասաց նորից: Ես էլ նոր-նորից, ի՞նչ է խնդիրքդ, հարցրի:

— Խնդիրքս,— ասաց խոսքը երկարացնելով,— խնդիրքս... երկու մատով քթի ծայրը բռնեց, երեսը անկյունին դարձրեց՝ բո-նոզանի՛ ձայն հանելով բավականին բռնութեամբ քիթը մաքրեց նոր լվացած գետնին: Հետո փեշովը քիթը, բեղը սրբեց... խն-դիրքս,— ասաց,— խնդիրքս այս է. լսել եմ, որ Պետրբուրգի գեներալ եղբայրդ եկել է... այդ չէ, բայց դու գեներալ եղբայր ունե՞ս, ինչ է, լսած չէի:

— Հա, ունեմ, հետո՞,— ասացի սրտնեղութեամբ:

— Մեղա, առաջին անգամ եմ լսում, դա ո՞րն է, Իվանուչը չլինի՞:

— Չէ, Իվանուչը չէ,— ասի:

— Հապա ո՞վ է, Ավագը չլինի՞...

— Չէ, չէ, նա իմ հարազատ եղբայրս չէ, հորեղբորս որդին է:

— Ո՞ր հորեղբորդ, էն մի մեծ Գևորգ հորեղբայր որ ունեիր, նրա որդին չլինի՞...

— Չէ,— ասի,— տեր Պետրոսինն է:

— Այ մարդ, վերջ տուր, այն Սթառափուլի² տեր Պետրոսի որդին է... տես է, չգիտեի, մեղա, պռավա՞, տեր Պետրոս, որդին գեներալ եղավ, հա՞...

Բարկացա:

— Այ մարդ, արի ինչ որ ասելու ես, ասա, հիմա մե՞զ են գրել ուրիշների գեներալ որդիքը համբելու:

Ասի ու վեր կացա տեղիցս, որ խոսքը կարճ կտրի, բայց հյուրիս վեջն էլ չէր...

— Այն չէ, բայց,— ասաց հյուրս,— վարժապետ, հրաման-քրդ սովորութուն ունի՞ արադ խմելու:

— Չէ՛,— ասի,— արադ էլ չեմ խմում, գինի էլ չեմ խմում, փունջ էլ չեմ խմում:

— Հապա ի՞նչ ես խմում,— հարցրեց:

Սիրտս քիչ էր մնում տրաքեր, բայց էլի ինքս ինձ պահեցի: — Ի՞նչ պիտի խմեմ,— ասի,— դե, ինչ որ մարդիկ խմում են՝ չայ, խաֆե:

— Խահվե՞, նիշեվո, այն էլ գեշ չի:

— Ուզում ե՞ս, ինչ է,— հարցրի:

Ինձ պատասխան չուվեց, դռան մոտ որդիս էր կանգնած:

— Տո՛, պստի՛կ,— ասաց որդուս,— գնա յանկային ասա՛, մի-մի գավաթ խահվե թող ղրկի... պատի մոտ հենց նոր մի դեղ կովի թրիք տեսա, երևում է, որ կով ես պահում, կաթի-մաթի փող չես տալիս, տո՛, պստի՛կ, յանկային բարև արա՛, ասա որ Թաթիոս-ան բարև արավ, ասա՛ խահվեն ջրի կաթով շտաս,— ասաց,— ասա՛ էն հյուրերի համար ամանով հաստ սեր պահած որ ունես, ասա՛, այն ղրկե,— ասաց,— ասա՛, կլսե՞ս, դե գնա՛, այդպես ասա՛... խե, խե, խե, խե...

Արդեն ժամանակը հասել էր այս անամոթի թեկի բռնելու ու դրսի դուռը ցույց տալու, բայց էլի ինքս ինձ պահեցի. ի՞նչ մեղքս պահեմ, հայի լեզվից վախեցա:

— Այդ չէ, բայց,— ասի,— Թաթիոս-ա, դու կարծես մոռա-ցել ես թե ինչի համար ես եկել:

— Չէ՛, ինչի՞ պիտի մոռանամ որ, հեշ էլ մոռացած չեմ, ես քեզ մի խնդիրքի եմ եկել:

— Այս ինչքան ժամանակ է ասում ես, ասում ես, չես ասում,— ասի:

— Առաջ թող խահվեն բերեն, ուրախութեամբ կասեմ: Աղ-բատ էլ որ լինեմ, ինչ մեղքս պահեմ, լավ բաներ շատ եմ սի-րում... Ափսո՛ս, ափսո՛ս զավետենի՛ չես արել տանդ գինի կամ արադ պահելու, դա ի՞նչ հորս ցավն է որ, մի-երկու կոպեկի բան կառնեմ, մի կողմ կդնեմ, զուրբի անկյունը թող գնա, թող մնա... Մարդ ես, աշխարհ է:

— Թաթիոս-ա, քեզ մի ճիշտ բան ասե՞մ,— ասի,— արդեն դանակը ոսկորին էր հասել,— ես շտապով տնից պիտի դուրս գամ, ինչ որ ասելու ես, ասա՛ վերջացրո՛ւ, ես գործի տեր մարդ եմ:

— է, ի՞նչ այդպես շտապ. գործը քեզանից պիտի փախչի, ինչ է. այն գործը երբ էլ որ լինի, կլինի, գործից ազատվել կա՞

¹ Զուռնայի նման երաժշտական գործիք:

² Ստավրոպոլ:

³ Բռավո:

¹ Սովորութուն:

որ... Ամեն օր գործիդ հետ ես, մի օր էլ իմ հետս եղիր, էլի, ի՞նչ կլինի որ...

— Այդ ասելիքդ անպայման այսօր պիտի ասես, ուրիշ օր չի՞ լինի, ինչ է,— ասի,— բայց միտքս այսպես էլ. «Մի ես քեզ հիմա գլխիցս ցանեմ, մեկ էլ երեսու որ տեսնես, թող լինի երկուս»։ Բայց հարամ սատկելու սրիկայի զավակը միտքս հասկացավ։

— Մեկ էլ քեզ ո՞վ պիտի տանը գտնի, հազիվ այսօր թավը գցեցի, այն էլ ուզում ես պոչ խաղացնել. դու գիտե՞ս, քանի օր է ետևիցդ եմ ընկել, առավտը գալիս եմ, ասում են՝ «Սապլիների Ակոփջանին է գնացել, նրա երեխաների՞ն ես սովորեցնում, ինչ է, իրիկվա կողմ եմ գալիս, էլի ասում են այնտեղ է գնացել. ժամանակ առ ժամանակ դարպասիդ մոտ կես ժամ իզուր սպասել էլ է եղել, բայց չէիր երևում, պարզ բան է, որ ուշ ես գալիս...

Մարդը, վրայից հայտնի է, որ օձիքիցս պոկ գալու միտք չունեիր, մի ծայրից զրույցի էր բռնվել ինձ հետ։ Շատ շարժարկեցի այս բողբոջադին օձիքիցս քանդելու, բայց դուռը չգտա, նա իրեն ուզեցածը արավ, ես իմս չկարողացա անել։

Այդ ժամանակ խաֆեն էլ առոք-փառոք ներս բերին, փառավոր հաստ սերն էլ, որ անուշ, սիրելի հյուրերիս համար էի պատրաստել, սկուտեղի մեջտեղում էր դրված, կանայք ի՞նչ իմանան, թե ե՛լողը ով է, կարծել են թե անուշ սիրելիան հյուրերիցս մեկն է, այնինչ, եթե որ ատրճանակով էլ դուրս անելու լինե՞ս, ատրճանակի ամենավատը պիտի փնտրես այդ տեսակի հյուրի համար։

Երբ որ ծաղիկ Քաթիոս-ան սկսեց ծանր բարակ, ինչպես որ ինքը ասաց, հաճույքով խաֆեն կում-կում խմել, մեկ էլ տեսնես քթից մի պուտ բռնութիոտ ջուր կաթեց գավաթի մեջ, որ տեսա, քիչ մնաց պիտի փսխեսի... Ֆը՛յ... փնթի եղածովդ... — ասի մըտքիս մեջ, բայց Քաթիոս-այի սկի վեջն էլ չէր, մոր կաթի պես հալալ-հալալ խմեց այդ կապլիով խաֆեն, ու խմելուց հետո կեղտոտ բեղը սկսեց լիզել, լեզվի ծայրը մինչև քթի ծակը հասցընելով...

Մեր տեղը այս սովորությունն էլ տղամարդոցս մեջ շատ փռված է, ինչ էլ որ լինի, էլի բան է իրեն համար, ջեբի օգուտն է, ջրի-սապոնի շատ փող չի գնա, թե չէ, Աստվածդ կսիրես, քիթի մաքրել որ ուզենաս փլաթոքիդ մեջը, քիթ ու պոռուկդ սրբել որ

ուզենաս, փլաթոքովդ սրբես. դա ինչ հեշտ բան է, դրան, Աստվածդ կսիրես, ջուր ու սապոն կբավարարի, այդքան գործածելուն փլաթոք կդիմանա, այդ սապոնը, ջուրը, փլաթոքը ձրի՞ է, ինչ է... գուն բռնիդ նայի՛, մեզ այդպես ցեղեմոններ շատ չի վայելի, անցյալի սովորությունները, եթե միայն դրանք էլ լինեն, ամուր պահենք... Աստվածդ կսիրես, խարչներս քանի գնաց շատացավ. մանեթի առած ապրանքը բերում ենք յոթանասունհինգի ենք տալիս, դե ու դեն ընկնելն էլ մեզ օգուտ, դրան փող կդիմանա, հա՛, տե՛ս, թեև վոր դրոգից հրաժարվեց Ֆանթոն կամ լինելի մեղտեղ բերեց, կարող ես դու էլ շանել, ուրիշները տասնհինգ-քսան մանեթանոց կառապան են բռնում, գոմում երկու-երեք վարգածի են պահում, կարող ես դու էլ այդպես շանել. ուրիշների կանայք, աղջիկները բուլվար են գնում մուզիկ լսելու-մուզիկն էլ մուզիկ լինի գոնե, Մոսկով որ բակերը մուրալու համար շրջում են, իսկական նրա նման բան — դրա համար էլ կոստյում է պետք նրանց, կարող ես դու էլ ետ մնալ մյուսներից, մյուսները... ա՛յ մարդ, դրա ո՞ր մեկը ասեմ, հիմիկվա ձեռքի տեսակները շա՛տ, է՛հ, լավ, նրան էլ փառք, որ գոնե մեր խելոք տղամարդիկ դուռը գտել են սապոնի ու փլաթոքի հաշիվը ամուր բռնելու։ Որպեսզի փլաթոքը զրպաններում մաքուր, սոսուն մնա, մեր հնարագետ նախիջևանցին մի ուրիշ ֆանտ էլ է գտել. փսիլներ քաշում է վար թքում. մի քիչ զզվելի բան է, բայց էլի նիշելո, ջեբի օգուտ է. այդ սովորությունը — ես քեզ ասեմ, դու մարդու շասե՞ս — մի քիչ էլ մեր կոտորատվող կանայք էլ ունեն, աշտո՛ժ, նիշելո, շեն կենա, երևում է, որ տղամարդկանց աշխատանքը, ջանքը ափսոսում են...

— Հետո՞,— ասի Քաթիոս-ային, երբ որ դատարկ գավաթները ետ տարան, կարծես թե դու մի խնդիրք ունեսիր...

— Հա՛, խնդիրքս... ես քեզ, ջանս, վարժապետ, նեղություն էլ որ լինի, այս բանը պիտի խնդրեմ. գեներալ ախպորդ համար ասում են թե Փեթուփուրկ¹ ամենաբարձր նեվեոսեթները², երեխաներ է սովորեցնում... այդպե՞ս է, թե չէ...

— Է, հետո՞, թող այդպես լինի, ի՞նչ ես ուզում ասել։

— Ես էլ մի որդի ունեմ։

¹ Գետերուրդ։

² Университет.

— Հետո՞...

— Կարողալու շատ հավես է, այնքան կարողալու չէ՛, որքան որ գրելու, շարագրելու. ա՛՜-վե՛-լի՛ է սիրում այդ շան երեսը գրել,— ասաց ու այն պլաթոքով փաթաթած կլոր բանը սկսեց կամաց-կամաց քանդել. մի կողմից քանդում էր, մյուս կողմից ասում.

— Առավոտից մինչև իրիկուն թուղթը, թանաքամանը, գրիչը, առջևը ճր՛ո, ճր՛ո, ճր՛ո գրում է, գրում է, գրում է ու հետո սկսում է այդ շարագրանքը կարդալ, այնպես անուշ եղանակով է կարդում շան զավակը, որ մարդու հավես է գալիս. մի անգամ արի, մտիկ արա՛, շատ կհավանես:

— Հետո՞, ինչ է գրում, կարո՞ղ եմ մի աչքի անցկացնել որդու գրածը:

— Հայա, հայա, դրա համար առել բերել եմ ո՛ւ, այս դատա թուղթը տե՛ս,— ասաց և իսկապես մեկ դաստա ծայրեծայր գրած թուղթ հանեց, այսքան բանը նրա գրածի հարյուրերորդ մասն է, տանը դեռ շա՛ա՛ա՛տ, բոլոր պահարաններս, դարակներս, նստարանի յաշիկները բերնե բերան լցված են...

— Բեր մի նայեմ ի՞նչ բան է դա,— ասի:

— Ա՛ո,— ասաց,— ու այդ դաստա թուղթը ձեռքս տվեցի Առա ու սկսեցի աչքի անցկացնել:

Առջևի երեսի վրա այսպես էր գրված.

«Փառավորյալ, օրթնափանյալ, ժամանակյալ
Քրիստոսի ծառա Քորոս Քոխմախովս ամեն»:

Սրանից բան չհասկացանք: Մյուս երեսը դարձրի, դրանից էլ առաջինից ավել բան չհասկացա, այնտեղ էլ այսպես էր գրված.

«Ձծամանակ, գթաբավոր, դրազմամեղ,
Ջրոխթթա, գիլիլպոս և զառաբյալ,
Ձավետարան զաստվածաշունչ և զնարեկ,
Ձհորթանան, զմկրտյալ և զովանես»...

Մի՛ քանի երես գցեցի ու հետո այս խոսքերը կարդացի.

Եվ երես զաստուած, զի քրնացյալ է,
Ձձեփն և զոտին համփուրյալ է,
Ձմախթան վերին նա ասացյալ է,

Ձհեթնոց, զվերչնոց նա կործանեալ է,
Համփանամ քառին, վասն մեր մեզուր,
Օծութեամբ Քրիստոսի և հույժ տանչանաց,
Մեզա երորթութեանըդ առալի սեղանին
Փազմամեղ մարդույս զաթամա որդին...

Քանի որ ես աչքի էի անցկացնում այս խենթ գրվածքը, հայրը կարծում էր, թե կարողացածս մի զարմանալի բան է, բերանից շողինքը վաղելով, աչքերը շրոտած, ուրախ-ուրախ երեսիս էր նայում, կարծես թե ուզում էր ասել. «Հետո՞, տեսա՞ր, ասածս ճի՛շտ եղավ, ինչպիսի գիտուն որդի ունեմ, սո՛ւտ էի ասում, ոչ որդիս իմաստուն է»:

Դաֆտարը մի կողմ դրի ու ասի Քաթիոս-այլին.

— Ինչի՞ համար ես այս դաֆտարը բերել ինձ:

Մարդը վախեցավ, հեշ մտքից չէր անցկացնի, որ ես այդպես հարցմունք անել կհամարձակվեմ:

— Հը՞,— ասաց կես հարցնելով, կես զարմանալով:

— Ես քեզ ասում եմ, ի՞նչ պատճառով ես այս դաֆտարը ինձ բերել:

— Ձհավանեցի՞ր, ինչ է,— ասաց Քաթիոս-ան, անպատկառ վրաս նայելով. բուրի աչքերը այնպես էր կատաղությամբ վրաս տնկել, որ կարծես թե հում-հում ուտել էր ուզում ինձ:— Ի՞նչ է, չհավանեցի՞ր, ինչ է,— հարցրեց նորից:

— Այստեղ հավանելու բան կա՞ որ,— ասի:

— Ի՞, ճի՛շտ,— ասաց ծաղրելով,— այդ միշտ ձեր գրածը, շատ գրած բան, լավ է որ չունեք հո— բանի կարգ է լինում, դրանով անուն, պատիվ, շին բան եք առնում, ուրիշներինք բանի կարգ չի լինում... ինչի՞ց է այդ... որդուս գրածը ինչքան որ տեսնում ես այդքա՛ն է, ինչ է, դու մի արի, ինձ լսի՛ր, պահարաններում տեղ մնացե՛լ է որ, բոլորը լցրել է խեղճը, դու դեռ չես հավանում... ես որ այստեղ եկա խեղճս դեռ գրում էր... եթե չես հավատում, իրիկվա կողմ մի զամբյուղ բան որդուս շալակը դնեմ զրկեմ աչքովդ տե՛ս...

— Ո՞վ է ասում, ես հավատում եմ, որ որդիդ գրել է ու գրում էլ է, բայց...

— Որ հավատում ես, լսի՛ր ինձ, մի լավություն արա, եղբորդ գրի, այդ նիվեոսեթ է, ինչ հորս ցավն է, որդուս առնի կամ

վարպետ¹, կամ վերակացու թող դնի... Այ, այն ժամանակ կի-
մանանք, որ դուք էլ մարդու ձեռքից եկած լավությունը չեք
խնայի...

Տեսա, որ այս մարդու հետը քաղցրությամբ բան անել չես
կարողանա, պետք էլ դրան շիփ-շիտակ բանի էությունը ասել

— Ծա քեզ մի բան պիտի հարցնեմ,— ասի:

— Տեսնենք ի՞նչ պիտի հարցնես,— ասաց Թաթիոս-ան:

— Վաղո՞ւց է որդիդ այդպես բաներ է գրում:

— Յոթը-ութը տարի պիտի լինի իմ կարծիքով, բայց հաս-
տատ միտքս չէ, ի՞նչ է որ:

— Որդիդ որտե՞ղ է սովորել:

— Մի առ ժամանակ Խոնախ² գնաց-եկավ. այնտեղից քա-
շեցի հանեցի տիրացու Ասվատուրին տվի՝ այնտեղ էլ, շատ-շատ
երեք շորս ամիս մնաց ու ձեռ քաշեց վարպետ դնալուց: Ծա քեզ
մի զարմանալի բան ասեմ. որդիս բնութքով կարգալու սեր չու-
նեք. միտքն էլ շատ կուլ էր, բայց ինչ որ որ գիտե, բոլորը իր-
նից է. Աստու շնորհքն է. գիրք ասած բանդ հիմա էլ հազվա-
դեպ է կարդում, նրա արհեստը գիշեր-ցերեկ գրել-շարագրելն է
ինչ որ այդ կարդացիր, պահարաններիս, դարակներին միջի բու-
լորն էլ, մտքից է հանել: Չիմանաս, որ ուրիշների պես կամ սո-
վորած բանն է գրում, կամ՝ գրքից սերտած բանը, չէ՞, ա-մե-նե-
վին. նա ինչ որ գրում է, բոլորն էլ իրեն սովորելի՞ գլխից է գրում.
գրում է, գրում է, դադարում է. մի քիչ գրչի ծայրից կրծում է
նորից սկսում է գրել. ա՛յ, այսպես տարօրինակ բան է որդու
բանը. ես քեզ խաշով, ավետարանով կարող եմ երդում անել, որ
որդուս գրածը բոլորը սովորելի իրեն մտքից է... հասպա գու ի՞նչ
էիր կարծում: Ծա քեզ ասում եմ ա՛լ, այնպես իմաստուն տղա է
որ հազարի գլուխ է:

— Քանի՞ տարեկան է,— հարցրի:

— Որդի՞ս,— ասաց Թաթիոս-ան, աչքը առաստաղին դար-
բեց ու սկսեց համրել, երբ որ մեծ պասը գա քսանշորսից դուր
կգա, քսանհինգը կմտնի... այդ ինչո՞ւ համար հարցրիր որ:

¹ Ուսուցիչ:

² Այստեղ՝ դպրոց:

³ Собственныя, սեփական:

— Ծա իբր թե ուզում էի ասել, թե որդիդ գուցե դեռ փոքր է,
աշխատենք աղա կազարովի վարժարանը խոթելու, որովհետև
այնտեղ, լսել եմ, այդ տեսակի ընդունվում են. այնտեղ մի վար-
ժապետ կար, նա էլ, ասում են այդ տեսակի դաճարները դեղե-
րով էր գրում, հիմա, երևի, միտք ունեն տպելու, փող են հա-
վաքում...

— Մրցցը՛, երբեք,— ասաց Թաթիոս-ան,— որդիս այնպես
մեծքիթ է որ, իսկական ինձ է եկել. նա՞ գնա մարդուց բան սո-
վորի, շքնար գոնե... նրա ուզածը այդ չէ ո՛ւր... մենք լսել ենք,
Փեթոնիուրք, ասում են, մի տուն կա, այն քու աղբորդ նիվեոսե-
թից ավելի վեր, անունը լեզվիս վրա է, բայց չեմ գտնում, է՛յ,
ինչ որ է, թազավոր կայսրի հրամանով այնտեղ բավականին
այդպես շարադրող մարդիկ են հավաքվել, շինից, պատվից բա-
ցի, որը շորս հազար մանեթ է առնում խաղնայից, որը հինգ հա-
ւար, ա՛յ, այնտեղ էի ուզում որդուս տեղավորեցնել, որ իրեն
ժալովինին՝ գիտենար ու գիշեր-ցերեկ իր թուղթին-դալամին հոգը
տաներ... Եթե որ լավություն եք ուզում անել, այդտեղը խոթե-
ցեք որդուս, ի՞նչ կլինի, հոգիներիդ վարձք է:

Նոր հասկացա, որ դրանց իշտահը Փեթոնիուրկ կայսերական
ձեմարանի վրա է բացվել: Որդին խե է, խե է, բայց հայրն էլ
նրանից ավելին չէ՞: Արդեն ժամանակ էր այս բանի վերջը անելու:

— Ծա քեզ մի բան ասե՞մ,— ասի,— ձիշտ է, որդիդ Փեթեո-
փուրկ պիտի դրկվի, բայց քու ասած տեղը չկարծես, քաղաքից
տասներեք վեռսթ հեռու, մի սրբիշ մեծ տուն կա, գույնը դեղին,
դրա համար անունը «Դեղին տուն է». ա՛յ, որդուդ հարմար տեղ.
համ ձրի, համ էլ նրան օգտավետ:

— Այնտեղի վճարը քանի՞ է:

— Այնտեղ վճար չկա, որովհետև այնտեղ որդուդ պես հի-
վանդներին ճար են անում:

— Որդիս հիվանդ է, ինչ է. խեղճի ոչ մի տեղն էլ չի ցա-
վում, բողկի պես սալլամաթ տղա է...

— Որդիդ ոչ թե հիվանդ, այլ բոլորովին, ոտից գլուխ խե է...

— Ի՞, որդիս, Թորո՞ւր, Թորո՞ւս խե՞ է... Սուտ ես ասում,
բերանդ բռնվի, դու ինքդ ես խեք...

Մարդը կատաղեց: Բանը նրան հասավ, որ կատապանիս կան-

¹ Աշխատավարձ:

չեցի, բոթելով, բոթբոթելով Թաթիոս-ային դարպասից փողոց դուրս գցեցի:

Այնտեղ էլ մարդու սիրտը շիջավ. բավականին ժողովուրդ հավաքեց գլխին ու ժամ ժամուկես, քֆրեց, անիծեց ինձ:

Վրան անցավ մեկ շաբաթ:

Մի օր հաճույքի համար բազար էի դուրս եկել: Հեռվից X-ի ժամի իրիցփոխանը առաջ դուրս եկավ ու ծիծաղելով ասաց.

— Դու, իբր թե, Թաթիոս-ային որդուն՝ Թորոսին, խե ես ասե՞լ:

— Հա՛, ասել եմ. ի՞նչ է որ:

— Փամիլը՛, այդ մարդն էլ որ խե լինի, մեզպեսներին հո բոլորովին շղթայակապ պիտի անել:

Սուս մնացի, բան չասի:

— Այդպես մարդ մենք շատ ունե՞նք որ, փամիլը՛, խեղճ հեջ բան չի սովորել, բայց մտքից այնպես բաներ է հնարում, որ մարդ, փոռսթո, զարմանում մնում է. շարադրութունն էլ, թա՛մամ նարեկի կամ շարականի ֆաստնով է, խոսքերը բոլորը գրաբար՝ խրթին, հեջ բան չես հասկանա. միտք բանին բոլորը ասածաբանական է... Չէ՛, ինչո՞ւ մարդու սիրտը ցավեցրել ես որ, փամիլը՛, մարդը իրեն համար աշխատում է, թող գնա, թող գրի, գրանից վնաս չի գա, օգուտ որ շլինի: Այդպիսիներին, որ ուստ գանք, մենք նույնիսկ պիտի սիրտ տանք, առաջ քաշենք, հացի տեր անենք, ոչ թե անունը խե հանենք, քանֆուզ անենք ողորմելիին... Ես նրան իմ ժամի դպրոցի մեջ վարժապետ դրի: Այն առաջվանին, միտքդ է, այն դրսեցիին, էլի, դուրս արի: Գիտության կողմից, մեղք առնել չեմ ուզում, նիչեվո, գեշ չէր, լավ էր, ահագին բան գիտեր, բայց այն ազիաթսքի կեղտոտ մանեղ շատ էր գործածում տղաների հետ, քանի որ ուղղորնի վարժապետ չկար, վրայիցս չհասկացողս էի լինում, բայց այս Թորոսին որ հանդիպեցի, իսկույն ֆլան մունդառ սովորութունը պատճառ բերի ու դուրս արի: Այս Թորոսը, դու ինչ կասես, չեղած վարժապետ է: Ժամից տասներկու մանեթ տալուց բացի, ջբբիցս էլ հիգը մանեթ նվեր էլ եմ տալիս. թող գնա, թող աշխատի խեղճը: Այնպես էլ աշխատում է որ, իրիկուն, ցերեկ ոտքը վարժատնից դուրս չի դնում, ամբողջ օրը այնտեղ է, ավելի դուրս այն եկավ

որ բավական չէ որ ինքը շարադրում է, դեռ աշակերտներին էլ ֆաստնով ուրիմաներ՝ է սովորեցրել ու գրել: Տղաները գրքերը դուրս են հանել. ուժե գիրք չեն կարդում. ամբողջ օրը ուրիմա են գրում. այսչափ (ձեռքը վար իջեցրեց, պստիկ երեխայի բոյ ուզեց հասկացնել), շան լակոտները նարեկի ֆաստնով գրաբար ուրիմաներ են գրում... Չէ՛, նիչեվո, լավ մարդ է այդ Թորոս վարժապետը: Իզուր խեղճի սիրտը ցավեցրել ես...

ԽՆՁՈՐ ԵԱԽՈՂ ԱՍՏՎԱՏՈՒՐԸ

Խնձոր ծախողների մեջ երևի նկատած կլինեք Ասվատուր-ային: Ասվատուր-ան կարճիկ, մի քիչ շոփուտ, հաստ-հաստ, առույզ, մեծահասակ մարդ է, կլինի, գուցե, հիսունհինգ, վաթսուն տարեկան. միշտ հանապազ երեսը ուրախ է, ինչի՞ց է այդ, հեջ չկարողացա իմանալ: Մյուսները գանգատվում են՝ առուտուր չկա, բաններս վատ է, հացը կամ միսը թանկ է, անձրևը չկա, ձուկ չի բռնվում, ժողովրդի մահանան շա՛տ՝ Աստծու վրա տրտնջալու: Բայց ոչ մի օր Ասվատուր-այի բերնից այդպիսի գանգատներ լըսած չեմ: Կարծես թե վրայից այնքան էլ ուրախ լինելու էլ բան չունի խեղճ մարդը. ապրանք միշտ քիչ է լինում դիմացը, հաքվածն էլ շատ միջակ է. կապույտ նանքայից կապա, հաստ քաթանից վարտիք, գլխին՝ հնացած մորթե գլխարկ. իր ընկերներից միշտ ցած՝ ու բարձր չի, բայց ինչո՞ւ աշխարհք արարած քթները կախած է լինում ու Ասվատուր-ան միշտ ուրախ պիտի լինի, ամենևին խելքս հասած չէ: «Ասվատուր-ա,— ասում եմ մեկ-մեկ,— բանդ ինչպե՞ս է»: «Փառք ստեղծողիս, վատ չէ՛, լավ է»,— ասում է: «Ասվատուր-ա, այս տարի ձուկը ինչպե՞ս է, որովհետև նա թառանով էլ էր ժամանակ առ ժամանակ առևտուր անում, բո՞լ է, թե՞ չի բռնվում»: «Բռնվում է, ինչո՞ւ չպիտի բռնվի,— ասում է Ասվատուր-ան.— Իհարկե, մյուս տարիների պես չի՛, բայց, էլի փառք ստեղծողիս, լինում է եղածի չափ, բռնողները ու բազար բերողները դեռ քաղցած մեռած չեն»: «Ասվատուր-ա, ասում եմ, այս ի՞նչ պիտի լինի մեր հալը, ցորենը բոլորովին չորանալու վրա է, անձրևի երեսից կարոտ մնացինք, էլի երկու-երեք օր էլ

¹ Помилуй.

¹ Прифмы.

որ լինի ի՞նչ կլինի մեր հալը»,— ասում եմ: «Ի՛, անձրև եկածը վաղուց է, ինչ է,— ասում է Ասվատուր-ան,— դեռ գետիներ չորացել է որ. դու հողի երեսը մի նայիր, նրա տակը նայի, տակը պետք եղածի չափ նամություն փա, օրեր չէ, շաբաթ էլ գուցե կբավարարի: Բայց դու մի այն կողմը նայի, կարմիր ամպերը տեսնո՞ւմ ես, փառք ստեղծողիս, այսօր չէ՛ վաղը այնպես տեղատարափ կգա, որ բոլոր բույսերը կես գազ միանգամից բոկ կգցեն. այդ դու ժողովրդի ասածին ի՞նչ ես նայում. ժողովուրդը միշտ տրտնջալ է սիրում»:

Այսպես տարօրինակ մարդ էր Ասվատուր-ան:

Ճիշտ է, Ասվատուր-այի ապրանքը մյուսներից քիչ էր լինում, բայց եղածը միշտ լավն էր լինում, երբ որ օխայի գլխից մի երկու կոպեկ չափստացիր՝ տանձի, խնձորի, ծիրանի, դեղձի, բալի, կեռասի ամենաքաղցրերը, ամենախոշորները, ամենասիրունները, ամենահոտովները տուն կտանեիր:

Ասվատուր-ան սուտ ասել շուներ, երգում էլ մի օր չեմ լսի բերնից:

«Ղրիմի գերտալու՛ ունե՞ս»,— ասի մի օր: «Ունեմ, հապ շունե՛մ»: «Քանի՞ է օխան»: «Օխան, ջանս, այս տարի մի քիթ թանկ է, այս տարի քիչ են բերում, թե՞ բերք չկա, թե չէ ուրի տեղեր են տանում— բայց մեր կողմերը չեն բերում, չգիտեմ ինչից է: Բայց դու ինչո՞ւ ես Ղրիմի գերտալու՛ի վրա խոսում, որ Ղրիմ է, ուրեմն այնտեղից եկած ամեն գերտալու լավն է լինում, ինչ է. Ղրիմն էլ գոված ու չգոված տեղեր ունի: Ես քեզ իմ բաղչայիս գերտալուն տամ, որ համը բերանդ մնա»: Ասաց ու մի շորով փակած արկղից հանեց մի հատ դեղին, թուշը կարմիր, բլրդոտ ծիրան. «Այ, զարմանալի գերտալու. դու ծամի-ծամի ու բլրից միջից շունչդ դուրս տուր, մի տես թե ինչպիսի բուրմունք է: Բերանս տարի այդ ծիրանը, ճիշտ որ շատ քաղցր ու բուրավետ միրգ էր. այդպիսին դեռ հեշ չէի կերել: «Ասվատուր-ա,— ասի,— ճիշտ սա քու բաղչայիցդ է»: «Ինչո՞ւ սուտ պիտի լինի. իհարկ իմ բաղչայից է»: «Դու իսկապե՞ս բաղչա ունես», ասի զարմանալով: «Հապա շունե՛մ, ասաց, փոքրիկ բաղչա է, բայց հոգ չափն է, դրա համար էլ միրգը ընտիրն է լինում, ջուրն էլ չեմ խուսալում, աշնանն ու գարնանն էլ կարողացածիս վրան աշխարհում»:

տանք եմ թափում»: «Որ այդպես է, մի անգամ գամ, էլի», ասի: «Գլխիս վրա, ասաց, մի անգամ չէ՛, միշտ էլ արի, նստենք, մեզ համար աղայավարի շալ խմենք իրիկվա հովին. այդ արանքում էլ ես քեզ ինչ ասես բաղչայի բանից կսովորեցնեմ էլ»:

«Որ այդպես է, տուր այդ քո բաղչայիդ ծիրանից երկու օխա երեխաներին տանեմ»: «Ինչո՞ւ չէ, տամ. թող բերանները համ տեսնի: Այն չէ, բայց դու աղջիկ ունե՞ս»,— հարցրեց Ասվատուր-ան: «Ունեմ,— ասի,— ի՞նչ է որ»,— ու զարմանալով երեսին նայեցի: «Հե՛շ, այնպես հարցրի, սա էլ տար աղջկանդ, թող մի ջրով բաժակի մեջ դնի»: Ասաց ու ձեռքս մի մեծ ծաղկի փունջ տվեց: «Որտեղի՞ց ես առել այս սքանչելի ծաղիկները»,— ասի ու քթիս մոտեցրի: «Բաղչայիցս էլի՛»,— ասաց: «Դու ծաղիկ էլ ես սիրո՞ւմ, ինչ է»,— ասի զարմանալով, որովհետև մեր տեղը մրգի ծառեր սիրողներ շատ են, բայց ծաղիկը շատ հազվագյուտ է, այն էլ թաք-թաք հարուստներն են. աշխատավոր մարդու ծաղկի սեր ունենալը դեռ հեշ լսած չէի: «Հապա չե՞մ սիրում,— ասաց,— ծաղիկ ասած բանդ ես այնպես եմ սիրում որ, մեկ-մեկ մանեթ չեմ ափսոսում ու ծաղկի մի արմատի համար տալիս եմ. ծաղիկների լավը որ ուզում ես, իմ բաղչայի մեջ կգտնես»:

Փնջով ծաղիկը, սուտ շասեմ, երբ որ մի բան հասկացողից տայի իրեք մանեթ կարծեցնեիր: Ի՞նչ տեսակ ծաղիկ ասես որ չկար մեջը, համ հոտովը, համ գեղեցիկը, համ երկու տարվա, համ էլ շատ տարվա, ինչ սիրտդ ուզում է: Ափսոս որ անուսնեքը չգիտեի:

Երբ որ տուն տարա այդ քնած ծիրաններս ու նվեր ստացած ծաղիկները, մերոնք զարմացած մնացին. այդպես միրգ էլ տեսած չէին, այդպես ծաղիկներ էլ: Միտքս դրի, վաղը իրիկվա զանգերի ծամանակ անպայման էլի բազար գնալ, Ասվատուր-ային առնել ու ուղիղ նրա բաղչան գնալ:

Այդպես էլ արի: Զանգերի ծամանակ բազար դուրս եկա. թաք-թուք մարդիկ էին պտտվում ածուխով արաբաների մոտեքը: Միրգ ծախողները խոռ-խոռ քնած էին, որը ապրանքների մոտ, որը խանութների մեջ, որն էլ արաբաների տակը: Վաղուց անձրև չեկած լինելով՝ փոշին այնպես շատ էր, որ մարդու մինչև կոճն էր հասնում, կարծես թե գետնի վրա շորացնելու համար փուլած ցորենի մեջ ես քայլում:

Սղանակը տո՛թ, շորացրած թառանի հոտն էլ այնպես էր փրվել բազարի մեջ, որ մարդ զգվում էր, քիչ էր մնում սիրտ ետ տար: Ասվատուր-ան էլ պարապ-բոշ նստած թիակի վրա ընկն մեկ հորանջում էր ու բերանը խաչ էր հանում (որ սատանան ներս չմտնի): «Բարի իրիկուն (արդեն զանգերը զարկում էին), Ասվատուր-ա, ինչպե՞ս ես, առևտուրդ ինչպես է»: «Փա՛ռք ստեղծողիս, լավ է, վատ չէ՛»: «Շատ ծախեցի՞ր»,— ասի: «Չէ՛, իրեք օխա զերտալու եմ ծախել, երեսուն հատ էլ՝ թառան»: «Դա քիչ բան է ո՛ւ, ասի, դրա համար փառք ստեղծողիսը ո՞րն է»: «Է՛, զգուշ մնա, ասաց մարդը վախենալով, հապա որ հեշ չծախի, դրա հետ ինչպես ես: Զգուշ մնա, մեկ էլ այդպես խոսք բերանիցը չհանես: Աստծու վրա տրտնջալս ո՞րն է: Հեշ օրը օրին կգա՞ այդ, Աստված կսիրես, մի ձեռքի մատները անգամ մի շափով չեն, մեկը մեծ է, մեկը փոքր է, դու Աստծու օրերը ուզում ես, որ մե՞կ լինեն: այդ ամեն օր հաջողութուն, հաջողութուն որ լինի, աղոթքն էլ կմոռանանք, Աստված էլ կմոռանանք, հեշ այդպես բա՞ն կլինի»:

«Լավ, լավ, ասի մարդու խոսքը կտրելով, ես հանաք արի Այն չէ, բայց գիտե՞ս ինչի եմ եկել, եկել եմ քեզ վերցնելու, որ ինձ տանես բաղչադ ցույց տաս, որովհետև երեկ շատ գովեցիր» «Ես գովե՞լ եմ որ, ասաց մարդը կարմրելով, ես ասի, թե որ գաս, գլխիս վրա եկած կլինես, բայց բաղչաս չեմ գովել: մեր բաղչան ի՞նչ բաղչա է որ, դու մի անգամ իմ պապայիսը տեսնիր, ա՛յ գովելու բաղչան նա էր: իմս ի՞նչ է որ, նրա ութերորդ մասն էլ չկա: է՛հ, եթե գնալու ենք, գնանք, մուշտարիի ժամանակը անցավ: մինչև այս ժամանակը որ չկան, սրանից հետո հեշ չեն գա»: Մի ընկած հավաքեց շարքի վրայից ապրանքները (ինչ ասես պտուղներ, շոր միրգ, շորացած թառան, սոխ, սխտոր, ու ծաղիկ սերմեր), մի մեծ պահարանի մեջ դրեց, օղակներից կողպեքը անցկացրեց կողպեց, երեսը խաչ հանեց ու ճամփա ընկանք:

Համբարձուսի թաղում էր ապրում Ասվատուր-ան, տունը փողոցի վրա չէր բացվում, բակի մեջ էր, բակ էլ որ ասում եմ, բակ չկարծեք, ամբողջ բակը բաղչա էր: այնպես որ տունը շոր կողմից փաթաթված էր ծառերով: ինչպես ասի, դուրսը շոգ, փոշի ու տոթ էր, բայց Ասվատուր-այի բակը մտած-չմտած, կարծես թե ամառ ժամանակ ջրի մեջ մտածի պես եղա, այնպես հով էր: մեքն էլ այնպես մաքուր ու սոսուն էր որ, խսկույն կարծեցի

թե դիմացս կանգնածը հայ չի, և որ մի գերմանացի է, որովհետև միշտ մաքրութունը ես գերմանացու մոտ եմ տեսել:

«Է՛յ, Մա՛րթա, կանչեց Ասվատուր-ան, սամովար դի՛ր, էն անկյունի տանձի ծառի տակն էլ խալի փոխ՛, մենք այնտեղ շայ ենք խմելու»:

Հիմա ես ձեզ ասեմ ինչպիսի բաղչա էր Ասվատուր-այի բաղչան: Բակի մեջտեղը շինված էր նրա փոքրիկ տունը: մի կողմից տան պատշգամբից դեպի պատը, պատը մյուս կողմից, էլի այն պատշգամբից դեպի ջրհորը ցանկապատած էր: այսպիսով տունը ամեն կողմից փաթաթված էր պարտեզով: շրջապատի մեջ թողնված էր մի փոքրիկ բակ, այն էլ տասնհինգ-քսան տեղ մերդգի հսկայական ծառեր կային, ցանկապատի եզերքով, բակի մեջտեղը ու մի քանի ուրիշ տեղեր տախտակներով կտրած էր ու մեջը ծաղիկներ էին ցանած, այնպես որ, որտեղ էլ նայեիր, աչքդ ծառ ու բույս էր տեսնում, ու տունը կարծես թե կորել էր կանաչ տերևների մեջ: Նախիջևանի մեջ հեշ այդպիսի բան չէի պատկերացնի:

Շատ հավանեցի, որովհետև ես ինքս էլ բաղչայի սիրահար եմ: «Լավ բաղչա ես ունեցել»,— ասի Ասվատուր-ային: «Մեր տեղն էլ որ բաղչա չունենաս, բոլորովին կորչելու մարդ ես,— ասաց Ասվատուր-ան,— քանի որ միայն շորս ամիսը ներսը չպիտի ապրես, մնացած ութ ամիսը ներսը ապրե՛լ կլինի որ: ճանձն էլ է այնտեղ, լուն ու փայտոջիլն էլ է այնտեղ: ներսը շունչ կարո՞ղ ես որ առնես: Դու մի պապայիս բաղչան տեսնիր: սա նրա դիմացը ի՞նչ է որ: պապայիս բաղչան ութ շուպաղա տեղի վրա էր: այնպես տարի եղել է, որ մինչև ութը հարյուր մանեթի ծախել է երեսը, միայն վարդից ու զամբախից (առաջները վարդի ու զամբախի մուրաբաները գովական մուրաբաներ էին) հարյուր մանեթներ է առել: Խեղճ մարդը յոթը տարի ցավ քաշեց, հետո վեր չկացավ (այդպես էլ մեռավ): մամաս շուպաղա-շուպաղա սկեսեց ծախսել ու երբ որ պապաս դու շատ ապրես եղավ՝ այսքան բան մնաց ինձ: Առնողներն էլ ծառի հարզը չգիտեին, կացնի տակը հրաշալի ծառերը կյուսի-կյուսի ցած ընկան: այն վարդերը, զամբախները ու հազար տեսակ ծաղիկներն էլ կտվեր, հորթերը ու խոզերը կերան: քանի որ հիշում եմ, սրտիցս արշուն է կաթում: Հեշ մրգի ծառը կկտրե՞ն: դա-հո մարդ մեռցնելու պես բան է: Մրգի ծառը տասնհինգ տարի հետո անպետք բան էր հա-

մարվում. մեր ծախսած տեղերի վրա ծառեր կային, որ 25-ական տարեկան էին ու ամեն մի ծառը ամենաքերը չոթը փութ տանձ ու խնձոր էր տալիս: Ափսո՛ս, հազար ափսո՛ս, շատ տեսակ մրգեր ոչնչացան: Պապաս ի բնե բաղչայի բանը լավ էր հասկանում: Նա լավ մրգերի տեղն էլ գիտեր: Մերոնք կարծում են թե մրգի տեղը Ղրիմն է. այնինչ այն մեռելի միս ուտողներն տեղն են լավ, տեսակավոր մրգերը: Պապաս, Աստված ողորմի հոգուն, միշտ պատվիրում էր այդ մեռելի միս ուտողներին, որ գալու որ լինեն լավ խնձորի ու տանձի տնկերը աշնան ժամանակ քարթոֆիլի մեջը խոթեն ու բերեն. բայց բալի, կեռասի, ծիրանի, դեղձի, եղևնու, սալորի տնկերը չէր ուզում, այլ կորիզները, ու ապրուպրում էր, որ ամենալավերից ընտրեն բերեն. նա էլ որ շիիներ, պատվիրում էր, որ եթե մի լավ, գարմանալի միրգ տեսնեն, այս ծառի տունկը ուղարկեն, այն մրգի կորիզը. ինքն էլ նրանց համար ինչ ասես լավություն էր անում: Վաղուցվանից նկատված է, որ դրսից եկած մրգի ծառը մեր հողի վրա կամ չորանում է, կամ մրգի համը փոխում. քանի գնում, թոռում է, բարակում է, բույրը կորցնում. մի խոսքով անպետք բան է դառնում: Բայց կորիզից առաջացածը համ ծառն է ամուր ու ամուռ լինում, համ էլ միրգը իր բույր ու համը չի կորցնում, համ միրգն է շատ լինում, այնքան որ մի քիչ մանր է լինում. բայց դրա ճարտ էր գտել պապաս: Ծառի համար փոսը լայն ու խորունկ էր փորում, ամենաքերը 2 1/2 գազ, տեղի հողը դուրս էր թափում, դրա մեջը լցնում էր թուշունի, մարդու ու կովի աթար ու մի լավ հողով խառնում էր ու այդ փոսը մնում էր տարի, տարի ու կես: Ժամանակով այդ աթարի վառ հոտն էլ գնում, միջի կեղտն էլ էր վերջանում, դառնում էր անապատ տե հող. հենց այդ ժամանակ էր տեղում էր ծառը, կամ դնում էր կորիզը:

Բայց միրգն էլ ինչ միրգ էր լինում, միրգ չէր, իսկական մուրաբա, ափսոսա մտախոռոչ ու քաղցր: Այս ծառերս, ինչքան որ տեսնում ես, բույրը այդ տեսակ հողի մեջ են. մի աստվածածնի օրերին քեզ տանձեր ցույց տամ որ, ահա այս շափ, ամեն մեկը ֆունտ ու կես, խնձորներ ունեմ, որ մի պատվով ձմերուկի շափ:

1. Նոր-նախիչանցիները այդպես էին անվանում իրենց քաղաքից և երաշխակա գույզերից դուրս բնակվող հայերին, որոնք օտարական և արքատ լինելով, մասնակցում էին հանգուցյալների հիշատակին արվող հոգեհացերին:

երկուսը մի ձեռքով շնա բռնի— այնպես խոշոր, համն էլ՝ շաքար: Պողտրղան ունեմ, որ մեզրի պես գղալով պիտի հանես: Այստե՛ղ եկ, այստե՛ղ, դու մի այս ծիրանը տես, պոկի կե՛ր, մի՛ վախենա, շատ կա, փառք ստեղծողիս. այս տարի միրգը քիչ չէ. իհարկե անցած տարվա պես: շի, անշած տարի, ինչքան որ ասես մի ծառը, ամենաքերը երեքական փութ տվին»:

Իսկպես որ, այդպես խոշոր ծիրան դեռ չէի տեսել— իսկական բունցքիս շափ— հեովից, սուր հոտը քթիս էր դարկում, համը անո՛ւշ, բույրն էլ ժամերով բերանիցս չէր գնում:

«Այս ապրանքդ ինչո՞ւ բազար շնա հանում»,— ասի: «Ա՛յ մարդ, սրա հասկացողը կա՞ որ. մեր ժողովրդին համ շատ պիտի տաս, համ՝ էժան. դու ինքդ ասա, ինչպես դժեմ այս շգտնվելիք, քահրիբարի պես բանը օխան տասնութ կոպեկի տալ, այս բանը Մոսկոֆ որ կարողանաս հասցնել, գուցե մի հատը 30 կոպեկով աննող հտնվի»: Մարդու ասածը սուտ չէր. Մոսկոֆ ես ինքս գնել եմ հատը հիսուն կոպեկի, բայց սրա դիմացը իսկական կաղամբ: «Հապա ո՞՞ր ես ծախում»,— ասի: «Բոստով մի քանի հարուստ ուսներ կան, նրանք են մեկ-մեկ գալիս առնում, այդ էլ շեղավ՝ թոռներս են ուտում, անուշ իրենց, ո՞ւր է թե հասկանային, ինչչո՞ւ բազար պիտի: Հանե՛ի որ:

Յղբայր, բերանները որ համ չունեն, ես ի՞նչ անեմ, նրանց համար դամ լոբջի կտոր, կամ դառը ծիրան է եղել, կամ սա, բուլորը մեկ է, միայն շատ տուր, միայն էժան տուր. ասում եմ, էլի տեղը դեռ լավ ապրանքի, ջանքի հարգը իմացող չկա. այս որ ասում եմ, միայն մրգի համար չէ՛, ամեն բանի համար էլ այդպես է: Գու այս վարդին նայի, ասաց ու մի վարդ պոկեց ձեռքս տվեց, մի մեծությանը նայի ու մի հոտ քաշի»: Ճիշտ որ, վարդը երկու բոխ շափ էր ու այդպես հոտոտ վարդ դեռ տեսած չէի: «Այս վարդի արմատից Եր տա՛ ինձ, ինչքան ուզես կվճարեմ»: «Ցավդ տանի, ինչո՞ւ չէ, դրա համար փող պե՛տք է որ: Բայց այն էլ իմացիր, որ քու բաղչայիդ մեջ այսպես խոշոր ու հոտավետ վարդ շնա պոկի, որովհետև քու հողդ էլ այն հողը չի՛, որ վրայի բուսած վարդին այս հոտը տա: Իմ վարդերի տակի հողը տարիներով է պատրաստած. այն էլ իր ձեռ ունի»: «Վարդի համա՞ր էլ այդ աթարով հողն է պետք, ինչ է»,— ասի ծիծաղելով: «Հապա ի՞նչ գիտեիր»,— ասաց Ասվատուր աղան,— այն ու դեռ շատ էլ սապոնաչիւր. մեր տեղի ժողովուրդը լվացքի ջուրը կամ բակն է

լցնում, կամ փողոցը ու ցեխից ու հոտից չզիտես ինչ անես. այնինչ ամեն մարդ բակում վարդի ծառ ունենար ու տակը որ թափեր համ այսպիսի կեղտոտություն չէր լինի քաղաքներումս, համ էլ վարդի հոտը աշխարհք կփռվեր: Ասում եմ, ասում՝ լսող չկա: Դու գիտե՞ս սա ինչ ծաղիկ է», — ասաց ու ձեռքս մի շքնաղ տեսքով ձերմակ ծաղիկ տվեց: «Մի հոտ քաշի»:

Հոտ քաշեցի ու բերանս բաց մնաց — օրիս մեջ դեռ այդպես հոտավետ բան չէի տեսած. վարդի հոտը որտե՞ղ է մնում:

«Սա ի՞նչ ծաղիկ է», հարցրի: «Դրան նարգիզ են ասում», — ասաց: «Ի՞, ասի, նարգիզը ճերմակ է լինում, ինչ է, կարծես թե դեղին է լինում»: «Չէ՛, — ասաց, այն քու իմացածդ նարգիզ չի, հայերեն չգիտեմ ինչ են ասում, ոուսը նրան նայաթքի է ասում, նա վայրի, հոտած ծաղիկ է. մի անգամ որ բաղչաղ մտքրիր, մեկ էլ ձեռքից չես պրծնի, բսնում է, բսնում է, հետո էլ թոռոմում ու անհաշիվ սերմ է ցած թափում. ու այդ սերմերը անձրևից հետո նորից բսնում են. թո՛ղ դրան, անշահ, աներես բան է. նա ի՞նչ հորս ցավի նարգիզն է. նարգիզն, ա՛յ, այս է: Սա սերմ չի ունենում, սրա սողանք պիտի գտնես ու տնկես, մյուս տարի այս ծաղիկը դուրս է գալիս. ամեն մի սողանք մի հատ ծաղիկ է տալիս, շատ քիչ՝ երկու. ինքն էլ շատ քնքուշ բան է. հասարակ հողի մեջ չի բսնի, բսնի էլ այն հոտը ու ծաղիկը չի ունենա. մի քիչ էլ այն կողմ գնացինք, մի հատ ծաղիկ էլի քաղեց. «Սա էլ գիտե՞ս ինչ ծաղիկ է», — ասաց ու ծիծաղելով երեսու նայեց: «Ծառից որ պոկած լինեիր յասաման է կասեիր», — ասի: «Յասամանը այսպե՞ս է լինում», — ասաց, — դու մի հոտ քաշի»: Հոտ արի, դա էլ մի ուրիշ հոտ ունեք, գուցե նարգիզից էլ լավ: «Սա ի՞նչ է, — ասի»: «Պապան դրան հորուտ-մորուտ էր ասում, — ասաց, — բայց մեր տեղի բառով դրա անունը չգիտեմ ինչպես են ասում, ոուսը հիացինթ է ասում. դա էլ սերմ չունի, սողանից է բսնում, մեռելի միս ուտողի մեկը, պապային ասածին, նվեր է բերել հայի կողմերից. ասածներից այնպես է դուրս գալիս, որ այնտեղի դաշտի ծաղիկ է, երբ որ օրերը գալիս են, ամբողջ աշխարհք փռվում է այս ու այսպես ծաղիկների հոտով: Հապա այս երկուսը ի՞նչ ծաղիկներ են», — ասաց ու ձեռքս մի կարմիր ու մի դեղին ծաղիկ տվեց. հոտ քաշեցի, մի քիչ սպասեցի, մտքիս մեջը տվի, թե արդյոք ինչի հոտ է, վերջը ասի. «Գուցնը որ ձերմակ լինեք, զամբախ կասեիր, բայց գուցնը զամբախ չի»: «Հա՛, գտար»:

ասաց, — երկուն էլ զամբախ են, մեկը կարմիր զամբախ է, մյուսը՝ դեղին, այս դեղինն այն կողմի հայերը ոսկի մանուշակ են ասում. այս երկուն էլ Աննա՛ քաղաքի դաշտերից է բերված: Սուրբ Կարապետ գնացողներն են բերել: Բա այս ի՞նչ ծաղիկ է», — ասաց ու ձեռքս մի գեղեցիկ ծաղիկ տվեց, բայց հոտը լավը չէր: «Չգիտեմ, — ասի, — առաջին անգամն է տեսածս», — ասի: Զարմանալի գեղեցիկ բան էր, գուցնը բաց կարմիր ու կերպարանքը իսկական թագավորի գլխին դրած թագ: «Ինչ սիրուն բան է, — ասի, — թագավորի ձեռքը տաս, չի ամաշի բռնելու»: «Հա՛, այդ էլ գտար, — ասաց, — դրան երկու անուն ունի, մեկը սուրմըկան են ասում, մյուսը Տրդատի թագ. դրա սողանն էլ մեկը նվերով զրկել է Վա՛: անունով հայ քաղաքի դաշտերից: Հապա այս ի՞նչ ծաղիկ է, — ասաց ու ձեռքս տվեց մի ծաղիկ, որ շատ նման էր մանր-մանր զանգերի, գուցնը ձյան պես սպիտակ էր, հոտն էլ՝ շատ անուշ»: «Սա էլ չգիտեմ», — ասի: «Սա էլ մի դրացի հաշիմամա ունեի, նա է բերել Երուսաղեմի դաշտից, դրա անունը հովտաց շուշան են ասում. Ռասեյ էլ սրանից շատ կա, բայց այսպես լավը չկա, սա ուրիշ տեսակի բան է: Բա սա՞ ինչ ծաղիկ է», — ասաց ու ձեռքս տվեց մի փունջ կլոր տերևներով ու մեջը մանր մոռ գուցն ծաղիկներ: Սրա հոտն էլ շատ անուշ էր, բայց ուրիշ տեսակ: «Չգիտեմ, — ասի, — բայց շատ լավ հոտ ունի»: «Սրա սերմը զրկված է Երուսաղեմից. դրան մանուշակ են ասում. տաճիկը մենեշմե է ասում: Սրա շատ տեսակներ կա, ահա քեզ ոսկի մանուշակ», — ասաց ու պոկեց մուգ դեղին ծաղիկ. ճիշտ որ երկուսի հոտը մեկը մեկին մի քիչ նման էր, բայց տերևները տարբեր էին, ոսկի մանուշակի տերևը երկարունկ էր, մյուսինը՝ կրկուկլոր: Մի քիչ էլ որ այն կողմ գնացինք, մի հատ պստիկ ծառից պոկեց փնջով սպիտակ ծաղիկ և ձեռքս տվեց. «Հապա իմացիր սա ի՞նչ ծաղիկ է», — ասաց: Հոտ արի, սա էլ շատ հոտավետ ծաղիկ էր, բայց անունը չգիտեի. «Դրան հայերեն յասաման են ասում, բայց սա էլ ղզլբաշի հողից է բերած մի խամխալաթա գնող մարդ գիտամբ քոբով-մոքով բերել է հորս համար: Դե իմացիր հորս հավեսը: Իհարկե, ինքն էլ մի բանի պետք է եկել, որ մարդը նրա համար ջանք է արել, բերել: Հե՞շտ բան է, խուրջինի մեջ, ուրիշի համար, վրան դողալով, նշան դնել ու բերել:

Այն ժամանակները, հո գիտես, մերոնք կափկազ միշտ ձիով էին գնում գալիս: Մի քիչ էլ այն կողմ որ գնացինք մի եղբւանա զույնով մանր ծաղիկներ, պոկնց. «Հապա այս հավանո՞ւմ ես Հոտ-հոտ արի, դա էլ շատ հոտոտ բան էր, բայց էլի անունը չգիտեի, այս օրիս մեջ տեսած էլ չէի: «Զարմանալի հոտ ունի,— ասի,— բայց անունը չգիտեմ ինչպես է»: «Դրան պապաս արեաքեմ էր ասում. ինքս էլ չգիտեմ ինչ ծաղիկ է, բայց ձմեռը ներս պիտի բերես, թե չէ կսառի, ցուրտ չի սիրում. սա էլ հայի կողմերում Ալաշկերտ անունով մի քաղաք կա, այնտեղից մի մարդ է ուղարկել, բայց հաստատ չգիտեմ սերմն էր դրկել, թե՛ արմատը, այնքանը գիտեմ, որ դրան սերմից աճեցնել կարելի է, մյուս սողանների պես չի»: Մի քիչ էլ առաջ որ գնացինք, առջևս մի նախշուն խալիչայի պես բան փովեց գետինը— մի զարմանալի բան էր. գետնի վրա հազար ու հազար տարբեր-տարբեր, ծաղիկներ էին բսած՝ կարմիր, սպիտակ, նախշուն, մոռ, կապույտ, դեղին, ո՞ր տեսակը սիրտդ կուզի: «Սա ի՞նչ բան է»,— ասի «Սա էլ,— ասաց Ասվատուր-ան: լալաներ են: Հայի կողմերը մի տեղից, Մաղկաձոր են ասում, այնտեղից մի ձանաչված վարդապետ պապայիս է դրկել սրա սողանները, սրանք մյուսների պես հոտ չունեն, բայց երբ որ բացվում են, զարմանալի տեսք ունեն»: «Ասվատուր-ա,— ասի,— էս դու սողան, սողան որ ասում ես, ի՞նչ ասել է սողանը»: «Հապա,— ասաց Ասվատուր-ան,— պիտի իմանաս, որ ծաղիկ կա, որ սերմ չունի, բայց արմատ ունի ու որովհետեւ այդ արմատը ուրիշ արմատների չի նմանում, այլ սոխի, կամ սխտորի կերպարանք ունի, դրա համար դրսեցի հայերը սողան են ասում, սոխ ասել չի լինի, քանի որ սոխ ուրիշ բան կհասկացվի, սոխը, սովորաբար կերակուրի մեջ են ուտում, սողանը, դա ծաղիկների արմատն է: Այ, զամբախը, լալան, նարգիզը, հովտաց շուշանը, ոսկի ու կարմիր շուշանը, հորուտ-մորուտը, Տրդատի թագը, էլի մի քանիսը՝ սողան ունեն ու սողանից են առաջանում ու շատանում, մյուսներինը սերմ է, բայց սերմից բացի, նրանց արմատն էլ է շատանում, խոսքի վրա այ տերևը, նունեն, մանուշակը, յասամանը և ուրիշները»:

Արևն էլ արդեն մայր մտնելու վրա էր. ծաղիկները սկսել էին հոտը շորս կողմը փռել. զամբախի, նարգիզի ու հորուտ-մորուտի բույրը քանի գնում ավելի ու ավելի շատանում ու վարդի հոտի

հետ խառնած կարծես թե քթիդ տակը շշուվ անուշահոտութուն բռնած լինեին, մարդ շշուում էր:

Լսել էի, որ հարուստների ապրելաձևը արքայության պես բան է, բայց մի խնձոր ծախողի՞ այսպիսի արքայության մեջ տեսնելը՝ չհավատալու բան էր: Դու մի ասի, որ միշտ խեղ ու ծուլը իրեն օրը դժոխքի օր է դարձնում. մարդ ջանքը որ մի քիչ շինալի, ամեն տեղ էլ իրեն համար մի բախտ կգտնի:

Դեռ շատ ծաղիկների անուն տվեց, բայց ո՞ր մեկը միտքս պահեմ, մոռացա գնաց: Իրեն ասելով, բաղձայի ծառերը ու ծաղիկները, բուլբուլ էլ հայ հողից բերած սողանից, արմատից ու սերմից էին:

Հիմա ես միտք եմ անում, թե երբ որ այստեղ այսպես են, իրենց տեղը ինչպես պիտի լինեն: Ասում են էլ, հայ հողի վրա է եղել դրախտը, չհավատալու չի, կարծես:

Կեռասը արդեն հասել էր, բալն էլ հասնելու վրա էր, սալորները, տանձերը, խնձորները դեռ խակ էին, բայց բավական խոշորացել էին, հիմիկվանից երևում էր, որ եթե որ հասնեին, ինչ անթիքա բան պիտի լինեին. իրեն ասածին որ նայեիր այս տարի բերքի տարի չէր, բայց որ ինձ հարցնեն, շատից էլ շատ էր միրգը, ասել է, ազնվացեղ ծառեր էին, հողն էլ իմանալով էր այնտեղ բերված:

Այդ ընթացքում էլ հիշյալ զինճիրոնի տակը խալիս փռել էին, մի քիչ էլ հեռու ծառերի տակ կրակ էին վառել, երկու շամփուր միսն էլ պատրաստ դրված էր. թեյ խմելու որ նստեցինք, շամփուրներն էլ կրակի վրա դրին ու սկսեցին պտտեցնել, քյաբաբի հոտն էլ մուխը ու բույրը որ սկսեց պյուրում-պյուրում փրովել բաղձայի մեջ, այդ էլ իրեն համար մի ուրիշ քեֆ էր:

Արևն էլ մայր մտավ, լուսնկան էլ դուրս եկավ, այն ցուրտն աստղն էլ, որ միշտ ասում են արևի հետ է փայլում, փայլուն ազամանդի պես ցուրտ էր երկնքի վրա: Հեռվից պահակի թմբուկի ձայնն էլ կարծես թե դիտմամբ մեզ համար զարկելու լիներ, այնպես անուշ էր գալիս, որ այդ բույրին, կարծես թե նոր աշխարհ էի եկել:

Արդյոք մեր տեղի պես ուրիշ տեղեր էլ կա՞ն այսպիսի տխուր գիշերներ: Մայիսի առավոտները, հունիսի գիշերները արքայութուն է որ կա: Արագ թեյը խմեցինք ու վեր կացանք զբոսնելու կես ժամ գուցե ման էինք եկել, մեկ էլ տեսնես խաբար արին,

թե քայքայը պատրաստ է: Գնացինք նորից նստեցինք ու կերանք քայքայը մաղղանոսով, թարխունով ու նենեով: Բաժակս գինով կողթիս դրած էր, այդ ժամանակ ինչպես է լինում, որ Ասվատուրի թոռը, ձեռքը մի փունջ ծաղիկ բռնած կողթիս խաղում էր, ծաղկի թերթիկները թափվեցին ու ընկան բաժակին մեջ. միտքս եկավ այն հին քեֆի տաղի մի խոսքը՝ «Քասի մեջ ունենք ծաղիկ սպիտակ»:— ասի «Նոյ սաղլը դու որտե՞րից գիտես, — հարցրեց Ասվատուր-ան, այդ հո շա՛տ հին տաղ է, Աստված ողորմի հոգուն, պատվայիս ամենասիրած տաղն է, միշտ, պահապան ծամանակ, երբ որ ծառերը սկսում էին ծաղկել, ամբողջ օրը բաղչայի մեջ քայլում էր ու երգում, երևի Ղրիմից է բերված, որովհետև պապաս ինքը Ղրիմից էր եկել: Ղրիմ ասի, միտքս բան ընկավ, այն չէ, բայց դու Ղրիմի բաղչաների նաղլը լսե՞լ ես. եթե չգիտես, նստիր ես քեզ մանրամասն պատմեմ, որովհետև այս բանը շատ մարդ չգիտի — ես էլ ծեր եմ, այսօր կամ, վաղը չըկամ այդ էլ ինձնից քեզ հիշատակ. մի օր որ մեռնեմ, օղորմի կտաս, բայց ինչ որ ասեմ լավ միտք պահի ու հետո գրի, որ մեր որդիք կարգան, իմանան, շնորհակցի, որովհետև այդպիսի բաներ շատ են մոռացվել գնացել են: Ինքս էլ պապայիցս եմ լսել, պապաս էլ մեծ պապայիցս է լսել: Չգիտեմ քանի պորտ է դեպի վեր գնում, բայց այնքանը գիտեմ, որ այս ասելու բանս իմ պապերիցս մեկը աչքով տեսել է: Եթե ուզում ես՝ խաչով, ավետարանով երգում կանեմ, որ ես եղել եմ, պապաս եղել է, մեծ պապաս եղել է, փորներիցս չենք հնարել ինչ որ ասելու եմ, բոլորը ձիշ է. գուցե պակասեցրել են, բայց վրան հեշ ավելացրած բան չկա, այդ կողմից կարող ես միամիտ լինել:

ԶԵՐՏԱԼՈՒ՝

Զարմանալի բան է, ջանս, այդ գերտալու կոչված մրգի բունը: Զերտալուն որ կա, ուղղակի հայի հողից է բերվել. սկզբում Ղրիմ, հետո էլ, երբ նախիջևանցին գաղթել է այս կողմերը, առկ հետը բերել է, որովհետև ասում են, թե գերտալուն հայի ամենասիրած միրգն է: Զերտալու տաճիկի խոսք է, նրա հայերենն է

՝ Սիրան:

կա, ամա հիմա ո՞ւմ միտքն է. հատուկ-անվանց բառագրքի մեջ եթե փնտրես, կարող է գտնես, բայց մեր տեղի հայը միշտ գերտալու է ասում: Զերտալուի ծառը արագ աճում և մեջտեղ է գալիս, բայց ցուրտը նրա թշնամին է. ծառի հաստ բունը եթե չի փշանում, մատաղ ճյուղերը ծաղիկների աչքերը խիստ ցրտից այրվում, ոչնչանում են, որովհետև նա շատ տաք տեղից է, և արմատը՝ շատ քեքուչ:

Աչքովս չեմ տեսել, բայց լսել եմ, որ Ղարա-տենիզից այն կողմ, դեպի արևմուտք (արևմուտքի անունը հայերեն ինչպես է, չգիտեմ), սարից էլ որ այն կողմ անցնես, հենց այդ է հայի հողը. ասում են, թե այնտեղ մեր տեղերից շատ տաք է, ջրի էլ առատ վայր է, մատով էլ եթե մի քիչ գետինը փորես, իսկույն շա՛խոշա՛խ կսկսի բխել ու վազել. գերտալուի ծառը ջրոտ տեղ է սիրում, բայց շորոթյունից էլ առանձնապես վախ չունի:

Հայի ապրած տեղում երևի մեզ նման վառելիք շատ չկա: Այնտեղացիները տոպրակներով այդ գերտալուի դառը կորիզները հավաքում են (քաղցրները նրանք նուշի նման ուտում են) և աշնանը ցանում են. մի երկու տարուց հետո, երբ այդ ցանածները թփերի չափ բարձրանում են, կացինը առնում են ու բոլորը կտրում — ահա՛, այդ է նրանց վառելիքը:

Հայի ապրած տեղում, ասում են, ծառի ճյուղերի վրա գերտալուն այնքան շատ է լինում, որ ծառի կանաչ տերևները չեն երևում, ծառը վերից վար դեփ-դեղին է լինում մրգից: Մեծ ու փոքր կուշտ ուտելուց հետո այնքան բան է մնում, որ դնելու տեղ չեն գտնում: Վերցնում են գերտալուն, ձեռքով կիսում են, միջից կորիզը հանում և շարք-շարք շորացնում ձմեռվա պաշարի համար: Հենց այդ շորացած գերտալուն է, որ մանրավաճառները կուրագա են ասում և ծախում օխան 30—40 կոպեկով, այնինչ իր տեղում փութն էլ այդ գինը շարժի: Չէ, դու ի՞նչ կասես, հայի հողին հող կհասնի՞ որ... Խելքս չի կտրում, եղբայր, ի՞նչ են ասել մեր անցյալի ապուշ հայերը, որ այնպիսի Աստուծու օրհնած հողը զցել են ու այս կողմերը գաղթել:

Ճիշտ է, սուտ է, չգիտեմ, ասողները ասում են, թե էրզրումի կողմերում մեկ հատ ցորենին քառասուն-հիսուն վերցրածը բոլորովին էլ հազվագյուտ բան չէ:

Ինձ որ հարցնես, աշխարհի երեսին գերտալուի ծառից ավելի գեղեցիկ ծառ չկա, մանավանդ ծաղիկները, մայիսից սկսած մին-

չև աշնան վերջը կափ-կանաչ կփայլեն պարտեզիդ մեջ, մյուս ծառերը՝ խնձորը, սալորը, բալը, պատառոտված, ժանգոտած, կեղտոտ, մարդու վրանները նայելի չի գալիս, իսկ գերտալուն, աչքը սիրեմ, մաքուր, գեղեցիկ, սոսուն, իսկական մեր խաթուն հայկնոջը կնամանի, որ միշտ գործի մեջ է, բայց միշտ էլ վրան գլուխը մաքուր կլինի, բողկի պես կոթ-կոթ մատղաշ:

Զերտալուի ծառը պարտեզի մեջ մյուս ծառերից շուտ է ծաղկում. արդեն հենց մարտի ցրտերը անցան թե չէ, գերտալուի բողբոջները կսկսեն բշտել, մեկ էլ կտեսնես, որ ծառը վերևից վարձեփ-ճերմակ կդառնա— այդ հենց նրա ծաղկելն է: Ափսոս որ մեր տեղի ապրիլ ամառն այն պաղ քամիները շատ ծաղիկներ են թափում, եթե այդպես չլիներ ու ամեն մի ծաղկից մի-մի պտուղ գոյանար, ոչ թե ժողովուրդը ուտելուց պիտի տրաքեր, այլ թափելու տեղ չպիտի գտնեին մարդիկ— այդպես Աստծու օրհնած միրգ է հայի գերտալուն: Բացի դրանից, գերտալուն շատ նման է մեր կնոջը: Աստվածը կսիրես, տասնհինգ տարեկանից կսկսի, ջանս, տղա աշխարք բերել, մինչև քառասունհինգ-հիսուն տարին, տարին մեկը, մեկ-մեկ էլ զույգ, հա՛ կբերի, հա՛ կբերի: Եթե մեր ջահելները Մոսկովի կամ Ռոստովի այգու սոխակների ձայնով չզմայլվեին, մեր հայը կասեմ որ հրեաներին էլ կանցներ այդ կողմից: Քամիից բացի, գերտալուի մեծ թշնամին է այդ ու ու փուշ, կորչելու ճնձուկը: Եղբայր, հարյուրներով, հազարներով գալիս են թառում ծառի վրա ու կտուցով, կտուցով այնքան ծաղիկ թափում վրայից, որ ծառը մերկացնում մի կողմ են դնում:

Այդ ճնձուկը որ կա, իմ շատ շիրածս թռչունն է. մեկ դր մեկ էլ այն կաշաղաղկը. մեղա՛յաստծու, մեղա՛, դա ինչ է, որ Աստված մեջտեղ է բերել. ձայն ասես, ձայն չունի, միսը, հո, հի բանի պետք չի գա. շունը որ շուն է, նա էլ չի ուտում. նրանց տված վնասը, հո, չեփ չունի: Նրանց մայրիկը... Ծննդուկի ու կուշաղակի երեսից մեր աչքը բալի ու կեռասի երես իսկի տեսնում է որ: Տեսնես դրանց համար էլ «փեռուցիկի փառաշող» չկա՞, որ լվի ու փայտոջիլի պես սատկեցնենք, ձեռքներից ազատվենք:

Անի քաղաքից դեռ դուրս չեկած, մի մարդ իր պարտեզում մի գերտալուի ծառ է տնկում ու տնկելուց հետո տարիներ են անցնում, բայց մարդը այդ ծառի պտուղի երեսը տեսած չի լինում ու այն տարին, երբ գարնանը այդ ծառը ծաղկոտ է, ժողովրդի մեջ լուր է արածվում, թե Անիի հայերը միտք առնեն քա-

ղաքը թողնելու և գնալու Ղրիմ, գաղթելու, որովհետև թշնամին բազմաթիվ ազգեր հավաքած գալիս է ու Անի քաղաքը թալանել, մեջի ժողովուրդը գերի տանել է ուզում: Այդ մարդու սիրտը կրակ է ընկնում, թե ինչու այսքան տարի ես այս ծառի վրա այդքան ջանք թափեցի ու նրա միրգը չկերա: Ասում են, մարդը մտած-մտնքից այնքան է նեղվում, որ քիչ է մնում խելքը թոցնի: Որդիները, կինը, ազգականները գալիս են մարդու սիրտը շահելու, բայց ոչինչ չի օգնում. մարդը սիրահարվածի պես մի բան է դառնում: Երեկոն որ գալիս է, տեղերն է մտնում ու քնում: Որ քնում է, ջանս, քնի մեջ երազ է տեսնում, երազի մեջ մի հրեշտակ է գալիս ու ասում. «Ո՛վ մարդ,— ասում է,— դու ինչու ես վիզդ ճկել, անձեցրած ծառիս պտուղի համը չուտի ասելով, դու ե՛րբ ես տեսել, որ Աստծու առջև աղամորդու արած աշխատանքը, կամ թափած քրտինքը իզուր անցնելու: Աստված ինձ ուղարկեց, որ քեզ հայտնեմ,— ասում է,— քանի որ դու իմ ստեղծած բույսին այդպես սիրել ես ու ճակատիդ քրտինքը, ձեռքիդ ուժը նրա վրա թափել չես խնայել,— ասում է,— ես վաղվա օրը քեզ հրաշքս պիտի ցույց տամ».— ասում է հրեշտակը ու չբանում: Մարդը հանկարծակի վեր է թռչում: Գեռ լույսը նոր բացվելու վրա է լինում, աղամալուս են ասում, հենց այդ էր: Ուղղակի գնում է պարտեզ ու մոտենում այդ գերտալուի ծառին ու ինչ է տեսնում... Ճյուղի վրա յոթ հատ խոշոր, բրդոտ, դեղին ու ալ գերտալու է կախված, փառք է տալիս Աստծուն: Գլխին մարդիկ է հավաքում, տերտեր, վարդապետ, կարգավորներ է կանչում, բոլորն էլ տեսնում են այդ հրաշքը ու աչքերին չեն հավատում: Հավատալու բա՞ն է որ է, ինչ որ է. մեր այդ անեցի հայը յոթը գերտալուն պոկում է, մեկը ինքն է ուտում, մյուսը տալիս կնոջը, հինգն էլ երեք տղային ու երկու աղջկան է բաժանում. ուտում են ու կորիզը տալիս իրեն, նա էլ վերցնում է մի շորի մեջ փաթաթում ու ծոցը դնում: Ու հենց այդ օրը ճամփա են ընկնում:

Խոսքս ինչ երկարացնեմ, երբոր Ղրիմ են գալիս ու ամեն մարդ իրեն համար տուն տեղ է լինում, որը կեղողովում, որը Փրազարում, որը Քեֆեսում, որը Ահմեդլիում. մեր մարդն էլ գալիս է Բահաարայ է մնում ու այն ժամանակ, երբ պարտեզ է գրցում, այդ յոթը հատ կորիզը իր պարտեզի մեջ ցանում է: Աստծու հրամանով կորիզները ծլում ու ճյուղեր են գցում, մեծանում ու ծառ են դառնում (դրանից առաջ, ասում են, Ղրիմի տեղը գեր-

տալուի ծառ դեռ եղած չի եղել) ու երբ որ զերտալուի կորիզները ծառ են դառնում ու պտուղ տալիս, առաջին պտուղը այդ մարդը տանում է այդտեղի թագավորին, անունը Քերեյ խան անելիս են լինում, մի սինիի մեջ դրած ընծա է տալիս: Խանը որ տեսնում է միրգը. «Սա ի՞նչ է», — հարցնում է. նա էլ՝ «հայերեն այսպես են ասում, — ասում է, — բայց ձեր լեզվով անունը չգիտեմ», — ասում է: Խանը մի քանի հատ ուտում է, շատ հավանում է, մուլաներին, գիշ կարդացողներին (դրանք այնտեղի համ տերտերներն են, համ փոսփեսորները) կանչում է: «Այս մրգի անունը տաճկերեն ինչպե՞ս է», — ասում է: Մուլանները զարմացած վրան են նայում, ձեռքների մեջ պտտեցնում են, քթներին են դնում հոտ քաշում, լիզում են, վերջն էլ թե, «չգիտենք, — ասում են, — դրա անունը», որովհետև իսկապես մարդկանց առաջին անգամ տեսածն էր: Սալոր ասես, սալոր չէ, տանձին է բոլորովին չի նմանում:

Այն ժամանակ խանը վեր է կենում ու ասում. «Որ այդպես է, սրանից հետո սրա անունը թող զերտալու լինի, ասում է, քանի որ գույնը ոսկու նման դեղին է, համն էլ մեղրի պես անուշ է: Որովհետև, եթե զերտալու հայերեն թարգմանելու լինես, մեղրոտ ոսկի պիտի հասկանաս: Այսպիսով զերտալու, զերտալու ասելով այդ մրգի անունը տաճկերեն մնում է զերտալու: Հայերեն էլ գիտեի, բայց մտքիցս դուրս է եկել, բլբլ է, թե ծիծեռնակ, դե՛ նման մի բան է:

Հա՛, մոռացա ասել, թե խանը այնպես է հավանում զերտալուն (որովհետև մարդու առաջին անգամ կերածն էր), որ հիշյալ հայի սինին ոսկով լցնում ու ճամփա է գցում:

Այս է զերտալուի պատմությունը: Ասում են այս պատմությունը մի հին ձեռագիր Աստվածաշնչի վերջում է գրված եղել վաղուց նկատված է, որ զերտալուի առատ տարվան համ ցորենը աճ չի ունենում, համ էլ ժողովրդի մեջ տեսակ-տեսակ հիվանդություններ են տարածվում՝ ծաղիկ, խոլերա, ջերմ, փորհարիք, շնչարգելություն, բան:

Ճիշտ է, սուտ է՝ չգիտեմ, բայց մեր պապերը ասում էին, թե եբբ դեռ հայը իրեն հողից չէր գաղթել ու այս կողմերը չէր եկել: Թշնամին շատ մարդ հավաքած գալիս է հայի տեղը՝ գրավում ու բոլորին գերի դարձնում: Կտրիճ հայերը խոսքը մեկ են անում, որ թուր վերցնեն, վեճ բացեն և թշնամուն դուրս վունդեն իրենց

երկրից: Այդ ժամանակ մի սուրբ ճգնավոր երազ է տեսնում. երազի մեջ սպիտակ ձիով սուրբ Գևորգը գալիս ու ասում է նրան՝ «Լսել եմ, որ հայ կտրիճները ոտքի պիտի ելնեն, թուր պիտի բարձրացնեն թշնամու վրա ու արյուն պիտի թափեն, — ասում է, — նայիր, որ այդ բանը չլինի անեն, — ասում է, — որովհետև Աստված ուզում է իրեն հրաշքով ազատել հայի հողը թշնամու ձեռքից», — ասում է: Ասում է ու չբանում: Ճգնավորը գնում է հայ կտրիճների մոտ այսպես, այսպես բան է, — ասում է: «Երազիս մեջ սուրբ Գևորգը եկավ ու այսպես այսպես ասաց, — ասում է. — տեղեիդ սուսուպուս մնացեք, տեսնե՞ք Աստված ի՞նչ հրաշք պիտի անի», — ասում է: Չմեռը անցնում է, գալիս է գարունը: Թշնամին չափազանց շարձարում է հայերին, սակայն նրանք լուռ, վզները ծռած մնացել են, հույսները այդ երազի վրա դրած ձայն չեն հանում: Այդ ընթացքում զերտալուի ծառերը սկսում են, եղբայրս, ծաղիկ. այնքան շատ ծաղիկ են տալիս, այնքան շատ ծաղիկ են տալիս, որ հայի հողը բոլորովին կաթի պես ճերմակ է դառնում: Գ՛ւ ա այդպիսի շեն տարի տեսած չեն լինում հայերը: Թշնամին խիստ գոճ է, ոտքերս շատ խերով է, ասելով: Նրանց ամենամեծը (խան են ասում) հրաման է առձակում, որ այդ տարվա պտուղը, քանի որ իրենց բախտից էր այդպես առատ միրգ բռնել, միայն տաճիկներին բաժին լինի, հայը չհամարձակվի մատով անգամ դիպել: է, ի՞նչ պիտի անեն ողորմելիները, վատ է, լավ՝ թագավորի հրաման է. Բուքերը կույ տալով նայում էին իրենց ձեռքով աճեցրած ծառերին:

Ծաղիկը բացվում է, բացվում, թափվում, թափվում ու տակից այն կանաչ պտուղը սկսում է երևալ. այն կանաչ պտուղն էլ քանի գնում մեծանում է, խոշորանում ու սաթի պես դեղնում ու հասնում, ամեն մեկը բունցքի մեծությամբ ճյուղերի վրա հարյուրներով, հազարներով կախվում: Ասում են, թե այն տարին ոչ մի ճնձուղ, կամ ուրիշ վայրի թուղուն չի գալիս ու ծառի ծաղիկը չի փչացնում, ոչ մի կողմից էլ քամի չի փչում ու չի թափում: Երբ որ պտուղը հասնում է, անկշտում թշնամին վրա է տալիս, ջանքս, այդ զերտալուի վրա, սկսում է խոզի պես ճաքել, այնքան է ուտում, այնքան է ուտում, որ փորը տկի պես ուռում է, տկոտում. մյուս օրը նորից է սկսում ուտել... Խոսքս ինչ երկարացնեմ, ամբողջ պտուղը հասած-խա՛կ՝ բոլորը ուտում է, մաքրազարդում: Մեկ էլ տեսնում են, որ այդ տաճիկները սկսում են ճանձի պե՛ս

վական բաները լսելով, սիրտ շառնեն ու շուտ վզները ճկեն, ճորտի շարք անցնեն: Այսպես էր ասում օղորմած հոգի մեծ պապայիս պապան՝ դեռ Ղրիմից այս կողմերը չգաղթած ժամանակի Հոռոմներն էլ, երևի, այդ տեսակ հայի տաղերին, նաղլներին, հեքիաթներին շատ դեմ են եղել. այս որ ասում եմ, դրանից էլ առաջ էր եղել: Ուրեմն այս օրվա օրս քիչ մարդ կգտնվի, որ հին բաներ իմանա: Խոսքի վրա, հիմա հայտնի է, որ Ղրիմի խնձորն է եղել, տանձն է եղել, շագանակն է եղել, շամն է եղել, զկեռն է եղել, օվաղն է եղել աշխարհի մեջ գովվածը, ամենալավը, բայց մի նայեք, ո՞վ է այդքան Աստու բարությունը այնտեղ բերողը, ինչպես է եղել, որ այդ մրգերը բերվել է: Եթե ուզում ես, ես քեզ դրա պատմությունը մանրամասն պատմեմ:

Սրանից, գուցե, շորս հարյուր տարի առաջ Ղրիմի խանի դիմացը մի հայ մարդ է եղել, որ նրա փողի հաշիվը պահելիս է եղել, դե, ասում են թե նրա գանձարանապետն է եղել, կամ դրա պես մի բան: Ինչպես է լինում, որ մի օր խանի քեֆը շատ տեղի է լինում, ով գիտե ինչ պատճառով. կամ գուցե թշնամիներին իրեն երկրից փախելն էր լսել, կամ գուցե նրա հարեմը մի սիրուն աղջիկ էին բերել, կամ մի լավ երազ էր տեսել այն օրը, ո՞վ գիտե, բանը այն է, որ այն օրը խանը շատ ուրախ է եղել ու ինչպես որ այն ժամանակվա խաների սովորությունն էր, խանը իրեն ուրախություն օրը ուզեցել է, որ շորս կողմի մարդիկ միրզաներբաներ, բոլորն էլ քեֆ անեն:

Է՛հ, մենք գիտենք, հո, նողայի ու թաթարի քեֆը ինչպես է լինում. հարյուրներով ոչխարը մորթում են, որի դմակը մանրացնում, փլավի տակն են դնում. միսն էլ, որը պղնձի մեջ եփում են, շորվա են անում, մեջը հաց են փրթում, թերփի անում, ոչխարի մյուս մասն էլ շամփուրի են քաշում, կրակի վրա ման բերում, խորոված անում. սա է, էլի, նրանց քեֆը, նողային կերակուրի համ ու հոտով շես զարմացնի, նրա շատությունով ես հավանեցնում: Նողայի փորն էլ, հո, հայտնի է. մի նողայ մի ոչխար համ կուտի կվերջացնի, համ էլ աչքը քու պնակիդ տնկած կլինի:

Նողայը այն ժամանակները, որ ասեմ, գինին, արաղը, ինչ ասել է, դեռ չգիտեր. նրա սիրական խմիչքը բուզան ու ղոսիզն էր. բուզան կորեկից էին շինում. համը մի քիչ էն մունդառ բուզասին էր նման, բայց մեկ որ պինդ էր, մեկ էլ որ գույնը շատ զզվելի բան էր — իսկական էն բարակ ցավ մարդու պլզած, թյո՛ւ...

ինչպես էին կարողանում այդ բանը ոչ թե խմել, վրան նայել... Ղոսիզն էլ, ջանս, նրանից բեթար, վերցնում են, ջանս, ձիի կաթը, լցնում են, սկսում են խնոցու մեջ հարել. այնքան շա՛փո, շա՛փո հարում են, որ սկսում է մածնի պես թթու լինել, բայց չի մակարդվում, ջրի է մնում — դե, այդ է դրանց գոված ղոսիզը. ինձ որ հարցնես, զզվելի բան է. մաքրություն ասած բանդ նողայը ի՛րեն չգիտի...

Նիշյալ մեր հային էլ հրամանք է անում խանը մի մեծ գավաթ այդ բուզայից, մեկ էլ ղոսիզից հետո շարք-շարք դրած քաղցրեղեն ուտելու (քաղցրեղենն էլ ինչ է, վայրի խնձոր, որ մենք տառնիճ ենք ասում, գելաթ):

Այն ժամանակները դեռ հիմիկվա Ղրիմի միրզը չկար. անտառների մեջ բուսնում էին այն դառը ընկույզի շափ տառնիճը, մանր, շոր փայտի պես ախլաթը, ուտելի շափ մանր, հաստ կճեպով կաղիներ, մեկ էլ այն դառը յովեզը, որ հիմա էլ Ռոսեյի կողմերը աճում է ու որ արաղի մեջ են դնում: Դե, այն ժամանակվա Ղրիմի միրզը, այս վայրի խոզի ուտելու բան էր:

Մեր հայը մեկ բերանն է անում բուզան, իսկույն թքում է, այդ մունդառ բանը կոկորդից ներս չի գնում. հետո ղոսիզն է վերցնում, գուցե սա նրանից լավ է, ասում է, այն էլ բերանը առած է լինում, կո՛ո՛ւ է անում, փսխում. բերանը մի քիչ քաղցրացնելու համար հիշյալ տառնիճն է վերցնում, մարդու բերանը պուտուկ-պուտուկ է լինում — այն էլ կուկ տալ չի կարողանում, ցած է թքում:

Խանը նստած տեղը կրակ է կտրում: Նա կարծում է, թե մեր հայը ծաղրում է նրա թագավորական հյուրասիրությունը ու քեֆը: Իսկույն դահիճի ետևից է ուղարկում. «Շուտ այս մարդու գլուխը կտրի», — ասում է:

Այդ մեր հայը ոտքերն է ընկնում խանի, թե. «Աման մի անի ինձ այս շարությունը, որովհետև ես ուզեմալով չզզվեցի ու փրսխեցի քու ուտելիքդ ու խմելիքդ, այլ սովորած չէի դրանց, դրա համար կոկորդիցս ցած չգնաց, թե չէ՛: Ես բան չունեմ, որ քեզ պես խանի դիմաց այդպես աներեսություն ու անմարդկություն ցույց տամ»:

Խանն էլ ասում է նրան. «Երբ որ դու իմ մրգին ու խմիչքին շես հավանում, հապա պապայիդ տանը ի՞նչ զարմանալի բաներ են կերել. որովհետև իմ հողի վրա որ եկաք, ձերինից լավ համա-

բեցիք որ եկաք, թե չէ ինչո՞ւ ձեր լավը պիտի թողնեիք ու իմի մեզը ապաստանեիք»:

«Խան, ապրած կենաս,— ասում է հայը,— դու աջնպես չես ասում. մենք մեր հողը թողեցինք ու քոնը եկանք ապաստանեցինք. դրա պատճառը մեր հողի՝ վատ ու քու հողի լավ լինելը չէր, այլ դուշմանի ձեռքից մենք փախանք եկանք: Իսկ հողի կողմից որ ուզում ես իմանալ, մեր հողի նման աշխարհիս երեսը փնտրես չես գտնի: Խոսքի վրա, ձեր տեղը խաղող չկա, դրա համար դուք կամ ղուսիզ եք անուշ անում, կամ՝ բազա. այդ բանը մեր տեղը լիներ, մեր խոզերն էլ չէին խմի. միտք եմ անում. ձեր տեղի տառնիճը դառը թույն է, ձեր ախլաթը փայտի համ ունի, մարդու կոկորդից ներս չի գնում, ձեր կաղինը մեք տեղի ուտելից մանր է ու խոշոր չէ՞. ձեր տեղը նսւռ չկա, սերկեկիլը ինչ ասել է՝ չգիտեք, այնպես էլ շագանակը, այնպես էլ ընկույզը, այնպես էլ յովուզը, այնպես էլ զկեռը, շամը. ո՞ր մեկը ասեմ. ձեր հողը գեռ վայրի է, վարպետ բուսուհիչու Նսք դեռ չի ընկած: Դու մի մեք խաղողի գինիից խմեիր, տեսնեմ մեկ էլ բուզայիդ ու դուսիգիդ թթել կուզենայիր, դու մի մեք տեղի միբզը ուտեիր, տեսնեմ մեկ էլ քու վայրի պտուղներից վրա կնայեիր: Դե՛, դրա համար ես չկարողացա քու բուզադ ու դումիզդ խմել, ախլաթդ ու տառնիճդ կուզ տալ»:

Խանն էլ վեր է կենում ու՝ «Զի՞ կաթելի այդ քու ասած փնից ու մրգերից իմ հողի վրա էլ աճեցնեի»:

ՉՈՔ՝

(Ա. Կայծակից առաջ)

Մեռնեմ նրա անունին, նրա ողորմությունը չափ, հաշիվ ունի՞ որ, միայն թե ազամորդին ինքը իրեն ճանաչի, միշտ իրեն ստեղծողին մտքից չհանի, իրեն ժամը, աղոթքը, մոմը ու ժամուցը գիտենա: Նա էլ, դե, այնչափով հողեղեն մարդուց իր ձեռքից եկած լավությունը անպակաս կանի... Թե չէ, Աստվածդ կսիրես, ժամից

¹ Մատուղ — պատարագ:

ետ մնաս, պասից զգուշ չլինես, տերտեր, կարգավորի պատիվ չգիտենաս, Աստված էլ խե՛ղ է, ինչ է, այդքան վատությունը քթիցդ-բերնիցդ չհանի. հազար չի՞ հանի, այնպես կհանի, որ մայրդ էլ... Խոսքի վրա՝ մարդկանց վրա ստանալիք ունես, այդ ընթացքում էլ մուրհակներիդ ժամկետները հասել է. մուշտարիներդ չեն բերում պարտքը— ինչ կարող ես անել, մուրհակդ էլ դատավորին կտան, կգա խոմոթի կկնրի. բոնթիզդ կկեղտոտի— այ այսպես մամադ... հասկացա՞ր. կամ խոսքի վրա հողամաս կամ ցանք ունես, քեզ համար երեսուն, քառասուն տեսթին տեղ ցան ես արել ու ուժայի հույս ունես. դե, չի՞ դրկում վերևից անձրև, ի՞նչ կանես... Այն էլ չլինի, ոտքով ապրանք ունես, ամայի տեղեր արածելու ես ուղարկել, մեկ էլ տեսար ոչխարներիցդ որը վերքոտվեց նիհարեց, մսից ընկավ, որն էլ փորացավ եղավ, որի էլ դնչից սկսեց այն հոտած թարախը վաղել, հետո ամենքն էլ ընկան սատկեցին... Ի՞նչ պիտի անես... Զի՛, խելքդ գլուխդ ժողովի՞ր: Աստու՛ հետ հանաք չի լինի... Ազամորդու վատությունը շատ է, բայց Աստու՛ համբերությունն էլ շատ է. հեթաթների մեջ լսե՛լ ես սապո-թաշի տրաքելը. Աստու՛ համբերությունն էլ հենց իսկը նրա պես է— մեկ էլ տեսնես Աստու՛ համբերությունն էլ սապո-թաշի պես կտրաքի— այն ժամանակ держись— մայրդ... մայրդ... որ մուկի ծակին հազար ոտքի տաս՝ չես գտնի... բա ինչ էիր կարծում... Արդեն մայիսից պիտի դուրս գայինք հունիս պիտի մտնենք, լավ լսիր, մի պուտ անձրև չկաթեց վերևից— դա ինչի՞ց է: Ժողովուրդը պա՛ռ-պա՛ռ գոռում է. «Արի՛շը վնասելու վրա է, ցորենն էլ զոռով-զոռով կդիմանա՝ չորս օր էլի այսպես գնալու որ լինի, ողորմելի ցան անողների ապրանքը բոլորովին պիտի ոչնչանա». ինչի՞ց է այդ, չէ՞ որ մեր մեղքից է: էլի շնորհակալություն Ալթիթով Օվանեսին, Զուպուռին Օհանջանին, երրորդի անունը մոռացել եմ, չգիտեի՞, ինչ է, այն մի սուտ վարդապետ որ կա, միշտ եպիսկոպոսների, կաթողիկոսների դրույցներ է անում, հենց նա, այս օրս մեջներս եթե հավատ մնացել է, էլի այդ երեքի մեջ է մնացել: Աստված բանները հաշողի. երևի փող են հավաքել, գառներ են գնել, Լուսավորչի բակը վրան են դրել, այդ աշտարխանցի սրբազանին էլ խնդրել են վաղվա օրը պատարագ անել, պատարագից հետո էլ զոհ պիտի մատուցեն, հետո էլ ժողովրդին մատաղ պիտի բաժանեն... Իհարկե, այդպիսով Աստու՛ սիրտը կշահեն, կփափկացնեն. խոնարհությունդ, լաց ու գոռումով նրա ողորմությունը ցած կբերեն. Աստված

բանները հաջողի, մեկ օրերը հազար լինի... թե չէ մյուսներին որ մնար, վաղուց մեր բանը պրծած էր... Ախր, ինչպե՞ս չճաքես, գարունը անցնելու վրա է, ուր որ է շողը կգա, այս ամառ դեռ մի պուտ անձրև չի կաթել. այսպես բան ո՞վ է տեսել... այս քանի տարի եղավ, որ բերքի երեսից կարոտ ենք մնացել... Անձրևն էլ իր համար սովորություն է արել, հենց որ ցանքերը վառվում ոչնչանում են, նա էլ սկսում է դուլլերով վրաներս լցվել. այնինչ հեղ պետք չէր. իզուր տեղը փողոցներս, բակներս ցեխ ու ճահիճ է դարձնում... մեղա՛յաստծու... մեղա՛, ժամանակ-ժամանակ մարդու բարկությունը այնպես է դուրս գալիս, որ ստեղծողի հայրն ու մայրը մեկ ես անում: Քանի տարի եղավ, որ առաջվա կայծակները շեն լսվում, հազարից մեկ ամպի գոռոց որ լսենք՝ մուգիկ լսածի պես ուրախանում ենք...

Խելքի մեկը թե. «Ռաժայ ուզո՞ւմ ես, ցանի տեղը, իբր թե ձիու, կամ տավարի փեյին, կամ մարդու աղբով լցրու: Հիմարի մեկ, ասա, նեպուժելի՞ Աստծու պատիժը կոպի թրքով ուզում ես վերացնել, այնինչ իզուր տեղը դաշտը հոտեցնում ես, անարատ հողը վնասում ես: Մի մարդ հավատացել է այդ խրատողին, պարտեզի ծառերի տակը փորել է, արտաքնոցի աղբն էլ դուլլերով հանել է արմատների վրա լցրել, ողջ-առողջ ծառերը շաբաթ էլ չեն դիմացել, բոլորովին չորացել են... Այ քեզ, հիմիկվա ուսում առնողների շահը: Մի ուրիշ խելոք էլ, թե՛ «Անձրև ուզում եք քաղաքներիդ մեջ մոտիկ դաշտի շորս կողմը ծառեր տնկեցեք, թե ծառեր անձրև են քաշում»: Տո՛, հիմար ողորմելի, երբ որ Աստված չի տալիս, դու հիմար խելքովդ, ծառերո՞վ ես ուզում երկնքից անձրև վար բերել, անձրև որ ասում են, այդ ձո՞ւկ է, ինչ է, որ կարթով բռնես քաշես վար բերես, այդ շո՞փ է, ինչ է, որ ավլես ու ուզածդ տեղը տանես... քեզ, աղբով ուժած՝ կլինի, ծառով հեշ անձրև՝ վար կբերվի... ափսոս որ, այդպես անամոթ խոսողները այսպես ողորմած կայսրի օրին են հանդիպել, մի առաջվա խաների, միրզաների, շահերի, սուլթանների ժամանակը որ լիներ մենք գիտեինք դրանց հետ ինչ օյին կխաղայինք. «Սուլթանն ապրա՛ծ կենա, կասեինք, այսպես, այսպես բան է, կասեինք, դու արա մեր դատաստանք, կասեինք, նոր մարդիկ մեյդան են եկել, միամիտ մարդկանց մոլորեցնում են, կասեինք, Աստծու անելու բանը աղբով ու ծառով են ուզում անել, կասեինք. սուլթանն էլ մի դրանց գլուխը որ կտրեր, այն ժամանակը կիմանային այդ զավզակները, թե ինչ

ասել է աղբով ուժայ անելը, ծառով անձրև վար բերելը... Այդ անձրև ասածդ դո՞ւր է, ինչ է, որ ծառի ճյուղը տեսավ թե չէ՞ գա վրան թառի... Անձրև որ ասում են, այսպես մի բան է. նրան սաղանախ՝ են ասում. սաղանախ ասածդ դուր չի, մարդ-անասուն էլ չի, թե էլ շունի, ոտք էլ շունի, իրեն համար այնպես մի բան է. երբ որ ծարավանում է, Աստծու հրամանով ծովի հենց մեջտեղն է գրնում ծխնելուցի՞ պես վար է իջնում, կուշտ խմում է. դրանից հետո սկսում է երկնքի երեսին ման գալ, այդ ընթացքում եղիա մարգարեն էլ այն իրեն երկու անիվով, շորս հրեղեն ձի լծած արաբայով սաղանախի առաջից գնում է. անիվները որ սրաքարի կպավ, ինչ է, սկսում է տանկը-տանկը գոռալ ու կայծակներ դուրս տալ. սաղանախն էլ որտեղ որ բերանը բացեց, այն տեղը շառղ-շառղ անձրև է գալիս: Ահա քեզ ամպի գոռալու ու անձրևի ճիշտ մեկնությունը. դրանից էլ խելք պառկելու բան էլի կա՞ որ: Հիմա, Աստվածդ կսիրես, ասա մի տեսնենք, այստեղ աղբը կամ ծառը ի՞նչ բան ունեն, բայց այս էլ պիտի ասեմ, որ ամեն բան Աստծու հրամանով է լինում. Աստված հրամայեց՝ անձրև կգա, չհրամայեց՝ չի գա՝ փեյլինով ու աղբով ուժայ չի՞ լինի, ծառով անձրև չի՞ գա. դրանք դատարկ խոսքեր են, գովացնել ես ուզում, գնա գիժ գտիր, նրան գովացրու, մեզ այդբան գծերից չիմանաս: Այն աղբը, որ կա, երբ որ ձիու կամ կովի է, աթար պիտի շինես ու վառես—բայց նրա մուխն էլ այնքան անշահ է, որ մի քիչ բան որ վառում ես, ամբողջ քաղաքը հոտը փոզում է. նրա լավը այն է, պիտի առնես փոսը լցնես: Մարդու աղբը հո, այն շատ կեղտոտ բան է. արտաքնոցդ որ լցվեց, վրան մի գազ հող պիտի լցնես, պիտի փակես, մի քիչ հեռու նորը պիտի փորես... պամիլըյ, այդ մենք չգիտե՞նք, ինչ է... Մառը, հո՛, ոչ թե երկնքից ջուր է վար բերում, այլ դեռ իրեն տակը ահագին ջուր պիտի լցնես, որ շորանա... այս բոլորը դատարկ բաներ են... Ամենալավը որ ուզում ես, այ, ինչպես որ վաղը պիտի անենք. շուկայից շատ գառներ առնենք, մատաղ անենք, անցնող-դարձողին բաժանենք, դրանից հետո տերտեր, տիրացու, վարդպետ, եպիսկոպոս կանչենք, ժամկոչները զանգերը թող զարկեն, խաշ-ավետարան, խաշվառներով, սաղմոս-շարականով թաղե թաղ քայլենք, ժողովուրդը թող միշտ լացի, թող գոռա ու դրանից հետո դու մի տես անձրև կգա՞, թե չի գա... աղբով ու-

¹ Ուժեղ անձրև, տեղատարափ:

ժայ է ուզում մեջտեղ բերել, ծառերով երկնքից անձրև է ուզում վար ֆալիս...

Վայժակից Ռեսո

Աստվոտվանից սկսեցին զույգ զանգերը պարկել: Լուսավորչի բակը նրկար սյուններ էին տնկել. այդ մի քանիսն էլ խճուղու վրան, մի քանիսն էլ պարտեզի մոտ, մի քանիսն էլ գոլովայի տան առջև: Ժողովուրդը խումբ-խումբ դեպի ժամ էր գնում. Բանչարները ու թաղի հայհոյասներ տղաները այդ վրանի շորս կողմը ման էին գալիս. պարզ բան է, մատաղի հոտը քթներին անուշ էր գալիս... Մշտարխանցի սրբազանը առոք-փառոք հագնված, բարձր երգելով պատարագ է անում: Մարդու երեսից հայտնի է, որ ինչ-որ կարգում է հավատով է կարդում, որովհետև խոսքը մերոնց պես կու տալով, կամ քթի միջից չէր դուրս բերում, այլ պարզ հատ-հատ էր հանում բերանից. արդեն, կամկած չկար, միանգամայն պարզ երկվում էր, որ Աստված նրա խնդիրը լսել էր... Երբ որ պատարագը վերջացավ, ժողովուրդը խումբ-խումբ ժամից դուրս թափեց. աչքըս Կրկինք գարձրի, ինչ տեսնեմ, մեռնեմ ողորմությունիդ, Աստված, արևմուտքի կողմից սև-սև աճպերը դուրս են եկել, դեպի մեզ են գալիս, բայց ո՛չ ուղիղ, կողքով: Այդ ընթացքում, սրբազանն էլ աչքը վերցրեց, ամպերը տեսավ, կարծես թե մարդու երեսը պայծառացավ. մեջքը ուղղեց, աչքը շորս կողմը դարձրեց, իբր թե՝ «Մարդիկ, տեսնո՞ւմ եք Աստծու ողորմությունը, նկատեցի՞ք աղոթքիս զորությունը, հետո՞, ինչպե՞ս եք, վրաս մեկ էլ կբամբասե՞ք. ես որ չլինեի՞ ձեր հալը Կրկինք պիտի լինեի. հիմա տեսա՞ք որ ջրհորի մեջ թքել չի լինի, գուցե մի օր նրա միջի ջրին կարիք ունենաս»: Ժողովուրդն էլ սրբազանի վրա նայեց. աղաներից մի երկուսը, որոնք որ նրան ավելի մոտ էին՝ «Վալլա՛, սրբազան հայր, — ասին, — աղոթքդ շատ իմաստուն էր, չգիտեինք, նոր իմացանք, ավել-պակաս թողություն կանես»: Այս այն աղաներն էին, որ խեղճ սրբազանի վրա ինչ ասես անշահ բաներ բերաններից բաց էին թողել: Բայց սրբազանը չլի լավ մարդ էր, նրանց արած վատությունը բողոքով մոռացել էր: Երբ որ ժամի շորս կողմը թափուր արեցին, շոքեցին, աղոթք արին ու շարականներ ասին, ամպերը եկան ամբողջ երկինքը փակեցին, ինչքան որ արևի երեսը փակվում էր,

այնքան մեք աշտարխանցի սրբազանի երեսը ուրախությունից փայլում էր: Տեղումները, սարկազանները, տիրացուները հո՛ւ ամեն մեկը իրեն մի-մի հրաշագործ առաքյալ էր երևակայում. «Ին, տեսա՞ք, մենք էլ մեզ համար բան ենք, մեր աղոթքի, մեր պատարագի կախարհանքը վաղուց ցույց չէինք տվել, դե, իմացեք մեր զորությունը ու մեկ էլ մեզ բերաններիդ ապուր մի աներ»: Ժամկողը ի՞նչ է որ, այժ օրը ժամկողն էլ իր Ժամկող հալով մի փոքրիկ հրաշագործ առաքյալի բան անող էր երևում ժողովրդի աչքին, ժամերով զույգ զանգ զարկելը հե՛շտ բան ես կարծում:

Չենց մատաղ-պատարագը վերջացավ թե չէ, մեկ էլ տեսնես հեռվից, էլի արևմուտքի կողմից, մի քիչ ամպի գոռալու ճայներ լավեցին: Մարդիկ նորից զխարկները հանեցին, երեսները խաչ հանեցին. «Օրհնյալ է Աստված»՝ ասելով. հողամաս ունեցողները և վար ու ցան անողները, հո, խեղճերը քիչ էր մնում թռչկոտեին ուրախությունից: Արդեն կեսօրվա ճաշի ժամանակն էր. յոթը-ութը տեղից սրբազանին կանչեցին. մարդը ի՞նչ անի, որ մեկնում եկի խաթը շկոտրի: Միջներից ամենահարուստին ընտրեց, կեսօրվա ճաշին նրան գնաց. նրանից մի քիչ պակասին էլ խոսք տվեց իրիկվա շային գնալու. մյուսներն էլ մի-մի կամ երկու-երկու տերտեր ասան տուն տարան: Այդ օրը տերտերների պատիվը մի քիչ բարձրացավ, թե չէ, խեղճերը շատ էին աչքից ընկել... Ժամը այսպես երեքին էր մոտենում, որ մի ամպ, մի քամի, մի փոթորիկ, մի դրոշմ, մի կաթմակ, որ Աստված հեռու տեղի, քիչ էր մնում երկինք-գնտին խառնվեին: Մեր սրբազանը արդեն չկարողացավ դիմանալ — նա էլ ասի հողեղեն մարդ է. կլինի՞, որ մի քիչ էլ նա լվփանա: «Չը՞, ինչպե՞ս եք, այժմ Աստված, կրոն, սրբեր, հավատացի՞ք, չկարծեք որ Աստված չկա, չկարծեք թե աղոթքը տկար և անզոր է. չէ՛, սիրեցյալք: Աստված կա, աղոթքը և առ Աստված մաղթանքը հույժ զորեղ է. միայն թե պետք է իմանալ նորան ազդու եղանակով կարդալ: որ այդ կարողալովն Աստծու սիրտը շահենք, իմաստուն կերբիկոսի սրբազանագույն պարտքն է աղոթքը ջերմեռանկությամբ կարդալ... Օհ՛, քրիստոսասեր ժողովուրդ, հազար փսոս, որ դուք լավը վատեն. չոկե՛լ չգիտեք, և լավին, կամեմ ասել ընտրյալին, ըստ արժանավույն գնահատել չգիտեք»...

— Սրբազան հայր, — ասին մի քանիսը, — դու ինչո՞ւ ես այդպես ասում ես, դե մենք, լսի՞ք, շափարվաք, ինչպես որ պետք է... փառք Աստծու... թոյիս, ամբազ շունենք... բայց, լսի՞ր, ժողովուրդ

ղը, իհարկե... մալը շեվո նեթ... մեջները, դե, տեսակ-տեսակ... դու ամենքի դուրս տվածին բանի տեղ մի դնի... մենք, նիշևո, քու պատիվդ...— Դե, այսպես անուշ խոսքերով մարդու սիրտը շահեցին ու սև կատուն միջներից դուրս եկավ:

Փոթորիկն էլ քանի գնում սաստկանում էր, ամպերի որոտ-մուռը քիչ էր մնում ականջներս խլացներ. սև ամպերը վերևից, թոզն էլ՝ վարից այնպես էին արել, որ երկու քայլի վրա անցնող դարձողը մեկ մեկի երես չէին կարողանում տեսնել, զանգերն՝ էլ հա խփում էին: Տանտիկին կանայք ախոռներից, մառաններից դատարկ փայտե դուլերը դուրս հանեցին, ջրհորդանների տակ դրին, որ նախ շփշանան, որովհետև շորովթյունից բոլորովին բացվել էին ու օղակները լախ-լախ խաղում էին, մեկ էլ որ լվացքի համար անձրևի ջուր հավաքեն: Թաղի երեխաներն էլ, երեսները երկինքին դարձրած, երգելով կանչում էին՝ «Անձրև, անձրև, ցա՛ծ, ցա՛ծ, անձրև, անձրև, ցա՛ծ, ցա՛ծ»:

Այսպիսով իրիկվա զանգերի ժամանակը հասավ. փոթորիկն ու ամպերի գոռալը շղաղարեցին, իսկ վերևից մի պուտ անձրև չկաթեց. բայց դեռ մեծ հույս ունեինք, որ բոպե առ բոպե անպայման անձրև պիտի գա:

Էլի կես ժամ անցավ. ամպերը սկսեցին Պաթայսքի վրա գնալ արևմուտքը մաքրվեց, քամին էլ դադարեց:

Մեր սրբազանը— ախր շունը խելոք մարդ է— բանի էությունը շուտ հասկացավ, մայասուլը մեջտեղ բերեց, արագ-արագ ֆարաջան ու փուփուկիկը հագավ ու կամացուկ Սուրբ-Խաչ դարձրեց քեղինները— ո՛ւյ, հնարագետ մարդիկ են եղել այդ ուսում առնողները. բայց գնալու ժամանակ ասաց. «Հիմա էլ՝ չգա, երևի մթնելու կողմ կգա անձրև»: «Աստված լսի բերանիցդ»,— ասին ետևից ու առող-փառող կառք նստեցրին, ճամփեցին: Երկինքը քանի գնաց մաքրվեց, քիչ էլ որ անցավ, բոլորովին մաքուր դառավ, ամպերի հետքն էլ չմնաց, քամին էլ այնպես դադարեց, որ մի թեթև բեմբուլ պցեիր ինչ է, քարի պես գետնի վրա կընկներ: Հա՛յ ես քու... սա ինչ զարմանալի բան էր... Մեկ էլ, տեսնես տանկ, տանկ, տանկ սկսեցին ժամերից հրդեհի զանգեր խփել:

Թյու, ...մատաղ-պատարագ արինք, ահագին փող թափեցինք, իզուր տեղը ժամերով թող կուլ տվինք ու գլուխներս բաց կընկըճո արևի տակ էրվեցինք, անձրևի Թրես շտեսանք, այս հրդեհ էլ ի՞նչ հորս ցավն էր...

Մատաղ-պատարագից էլ բան չհասկացանք: Արի հիմա այդ աղբի ու ծառի բանը տեսնենք. երևի այդ ասողները բան գիտեն, թե չէ, Աստվածդ կսիրես, ինչո՞ւ իզուր տեղը պիտի ասեն որ. նեոժելի՞՝ այդ մարդիկը տասը-քսան տարի սովորել են, գլուխները պատռել են, աչքերի լույսը մարել են, որ գան ու մեզ մոլորեցնեն... Մյուս կողմից այն էլ միտք եմ անում, եղբայր, այդ աղբն էլ ի՞նչ հորս ցավն է, որ ուսուց տա, ծառը ի՞նչ ֆենտով կկարողանա ամպերից անձրև վար բերել... խելքս չի հասնի... այնքան գիտեմ, որ այս բոլորը մեր մեղքերի պատիժն է:

ՓԼԵՎՆԱ. ՓԱՅԱՒ:

Բազարի տեղը գիտե՞ս— էն Բառբոյի թոպաթիոի² դիմացը, որ արաբաչիներն են կանգնում. հենց այնտեղ, երեկ չէ մյուս օրը ահագին մարդ էր հավաքվել (մարդ որ ասում եմ, դու արաբաչիներ պիտի հասկանաս, որովհետև բազարը որ ցրվում է, բազարի տեղը արաբաչիներից բացի ոչ թե մարդ, շուն չես գտնի), հա՛, այդ էի ասում, բավականին մարդ էր հավաքվել ու վայնայի³ խոսակցությունն էր անում:

Հայ արաբաչին որ կա (դա վաղուցվա նկատված բան է), այնքան էլ շատ հայվաններից չէ, ինքը աշխատավոր, աղքատ էլ որ լինի, էլի ինչ բանից ասես խաբարություն ունի. որի որդին դուրի աղջիկը Եպիփանի պենցիոնն է գնում ու մադամներից ինչ որ լսում է տուն է գալիս պատմում— սա մեկ. դրանից էլ բացի, ինքն էլ միշտ նախիջևանի գինետներից սալդաթ, տասնապետ, ցած կարգի գրագիրներ է տանում Ռոստովի գինետները ու ինչ որ նըրանք ճամփու վրա վայնայի զրույցներ են անում, բոլորը սուսփուտ լսում է, միտքը պահում ու երբ որ նորից իրեն տեղն է գալիս՝ կանգնում մանրամասն իր պես արաբաչիներին է պատմում: Հիմա

¹ Պլենա— բաղաբ Բուլղարիայում.

² Трактир — պանդոկ:

³ Պատերազմ:

ես ուզում եմ ասել, թե, Բաղբոյի Թախթոյի առջևի էն մեյդանը, մեր արաբաշինների համար Ֆսեռավնո քլուբի կամ մատենաթարանի պես մի բան է, ու թագա խաբար սիրողը միշտ կկարողանա այնտեղ բան լսել:

Այդ ես վաղուց գիտեի, բայց ի՞նչ մեղքս թաքցնեմ, չէի վրասահում գնալ ու նրանց գրույցը լսել: Ու երբ որ քաղաքիս մեջ խաբար փոփեց թե ուսանե՞րը Փլենան առել են, իսկույն վազեցի բազար (որովհետև պիլեթենը շատ կարճ էր ու միջից բան չհասկացա): Յոթը-ութը հոգի, որը հարուստ էր՝ մուշտակ հագած, այն էլ որ մի քիչ աղքատ էր, կնոջ վերարկուն վրան գցած՝ Սեխպուսայի ու Տնկոյի Քիրբորի (այս երկուսն էլ քոթով, քառեննոյ արաբաշիններ են, այսինքն գրուցասեր ու հայհոյասեր) շորս կողմը հավաքվել էին ու նրանց գրույցն էին լսում:

Ես որ եկա, երևում էր, որ նրանք արդեն վայնայի գրույցը վաղուց սկսել էին, բայց ինչ էլ որ լինի, ահագին բան իմացա այն օրը: Չասեք թե այս պատմածս փորձես եմ հանել, մեղայաստժու, սուտը սատանայինն է, ինչ որ լսել եմ, բոլորը ձեզ կպատմեմ առանց մի սուտի կամ ավելացնելու: Ինչ էլ որ լինի:

Տնկոյի Քիրբորը ասում է:— Աստուծով արդեն կվերջանա, որովհետև Փլենա փաշայից բացի, ինչպես որ ասում են, ուրիշ այնպես ուժով ու խելոք գեներալ չունի տաճիկը. մնացածը բոլորը փորները քաղցած, վրաները, գլուխները պըտըրոտած, չուտ, յարափարայոտ ողորմելիներ են...

Սեխպուսան. (Տնկոյի Քիրբորի խոսքը կտրելով) Քիրբոր-ա, այդպես ես ասում, բայց իմ լսածը որ կա, Փլենան փաշա չի կարծես թե, քոեփուստ է¹, որովհետև, այն օրերը, մի ուս գրագիր էի Թոստովից բերում...

Տնկոյի Քիրբորը (Սեխպուսայի խոսքը կտրելով) ես քու գրագրիդ ուզում եմ որ, շաշ, Փլենա-փաշան չէ՞ր որ, լսիր, երբ որ մեր հայ Տեր-Խուկասով գեներալը, այսքան փուշքաններ, բաներ, Աստվածդ կսիրես, շալիս է ուղիղ Դունայ քաղաքի գիմացը կանգնում է ու իրեք ամիս գիշեր-ցերեկ տանկը՝ ու-տանկը՝ ու, այդտեղ նայի, թուփերը զարկում է ու մեջից պատռում է անցնում, այդ ընթացքում էլ երկու-իրեք հատ մեծ, երկաթե ունիթոններ էլ, իմացար, երկինք է բարձրացնում ու ողորմելի Փլենա-փաշան տեսնում է որ այս բա-

նը բան չէ, իսկույն գնում է, իմացար, Կրդրում կամ Աբարս (ճիշտ միտքս չէ) քաղաքի մոտ, մի մեծ սարի տներ պահվում է...

Փաղովորից մեկը. Ի՞նչ ես ասում, եղբայր, Աբարս որանդ, Դունայը որտեղ... Ղարսը՝ էն Երուսաղեմի ճամփան է: Երուսաղեմ գնացող ուխտավորները նավից որ դուրս են գալիս ցամաք ոտք են դնում՝ այն Աբարս չէ՞ որ...

Սեխպուսա— Ձէ՛, եղբայր, Երուսաղեմի ճամփան փն Տրապիզոնն է, Աբարս որ ասում են, գաֆսեմ ուրիշ բան է...

— Ձէ, Սեխպուսա, սխալ ես, Աբարսն է. Երուսաղեմ գնացողների հետ հեշ գրույց արած չե՞ս, ինչ է մեկը է, հա փորներիցս չենք հանում. ինչ որ ասում ենք, նրանց ասածն ենք ասում. ուխտավորները ասենասակցից Թիֆլիս մեկ գնում, այնտեղից՝ Քաֆրա՛, այնտեղից՝ կամ էրևան, կամ՝ Հին-Նախիջևան (չավ միտքս չէ), այնտեղից էլ դուրս են գալիս— Աննա— քաղաք են գալիս— այն մեր հին հայի քաղաք է, հիմա ավերակ է դարձած. մեզը հարածներ են ապրում. շատ էլ, ասում են այն թստան-բողոճի նըման, երկար պոշով ջանավարներ կան, մի անգամ որ կծում է, երկու միմու՛թ չի քաշում, կփած տեղը կապտում է ու սոտում, մարդըն էլ ընկնում մեռնում է...

— Ձէ՛, ախպեր, այդ Ասիրը կարողեսի խոսքն է ասածդ...

— Էս հիմարի՛ն նույնի, իրեն խելքով մարդու բան է սովորեցնում. սու՛, Այտասաղեմ, Առաք-Արարապետ, էլ միտքին— բոլորը մի բան չե՞ն, փնչ է. ջառնեղ տղաները Ասարք-Արարապետ մեկ ասում, կանայք Երուսաղեմ մեկ ասում, փոստովիկով վարդապետներն էլ էջ-միտքին են ասում, անտեղ փուք հատ է, բայց էտեթլունը էլի մի բան է: Հա՛, սուտ չէ, ճամփորդները ուղիք ճամփով են գնում, բայց դրա էլ պատճառը կա, որովհետև մի խուճք ջահեկ տղաներ, որբաշի կնիկներ, վարդապետներ ճամփու վրա քարվասարայում որ հանդիպեն, մեկ էլ նրանց Թոստովի սազ ունե՞տք է որ... Աստված կսիրես, կին ասածդ, ի՛ բնե, հո՛մ, աչտոնը նայե, ինչ որ է, ամայի տեղ, հարևանների աչքից հեռու... ամիսներով մարդու կրես շտեսած... մեկ էլ տեսնես, տուտեճնացած տեղ հանդիպում են մի խումբ ուրախ ջահելների կամ քաղցած վարդապետների...

¹ Крепость.

¹ Կովկաս

պամիլը՝ յ, քարն էլ չի դիմանա... Դրա համար է, էլի, խելոք մարդիկ ուխտավորների ճամփան տարբեր կողմերով արել են, որ մեկ մեկու չհանդիպեն ու հողիները ազատելու տեղը՝ սատանային փայ շանեն...

— Ի ի ի ի՛ ա ա, այդպես է եղել. ես կարծում էի թե...

— Հապա ի՞նչ էիր կարծում... ես քեզ ասում եմ ո՛ւ իզուր սփռո՛ւ արածդ ո՛րն է:

Երբ որ Տանկոի Քիրբորը այսքան իմաստուն մեկնությունները լսեց, էլ խոսք չգտավ պատասխանի, լեզուն կծեց, սուս եղավ, որովհետև Սեխպոս-ան լեզվի տակ մնացող մարդ չէր:

— Հա՛, այդ էի ասում,— ասաց Սեխպոս-ան,— Աննա քաղաքի այն կողմը էրզրում կամ Ղարսն է. ու Տեր-Խուկասով գեներ...

Այդ բուպեին ժողովրդի միջից մի ջահել արաբաջի վեր կացավ ու հիմա էլ նա կտրեց Սեխպոս-այի խոսքը: Այդ ջահել տղան մի ժամանակ ղոնախ վարպետ է գնալիս եղել, բայց թամբալ լինելու ու մի քանի անշահ բաներ անելու համար այնտեղից դուրս են արել առաջին դասարանից: Ինչքան էլ դուրս արված լինի, այդ տղան մի բան էլ որ լինի, ծուռ, շիտակ սովորե՞լ է, հո— հայ մարդ ու իմացածը բազար չհանի՞, դա լինելու բա՞ն է: Դե՛, մեր ղոնախում սովորած արաբաջին էլ, բան չունես, խոսքի մեջ է մտնում:

— Սեխպոս-ա,— ասաց ջահել արաբաջին,— սուտ չէ, Տեր-Խուկասովը, ինչպես որ ասիր, Դունայը անցավ, բայց նա Ղարս չեկավ, այլ Մեց² եկավ. որովհետև Մեցը, յակուաֆի³ մեջը, կամ քառթի վրա որ նայես, մի մեծ բռնակուսթ է, շորս կողմն էլ տասներկու մանդր բռնակուսթներ ունի, պատերը, հեշ որ շլինի, շորս-հինգ վերսթ բարձր, վրան էլ կողք-կողքի շարած բուրփ փուշքաներ, սքառասթուկներ մաշիններ, ռեդուլթ, շանց, քոանշթաթ, այսպես, էլի, ռազնը վայեննյ մաշիններ, մեջն էլ լեփ-լիբը ինժեներներ, փալթովիթներ, գեներալներ, աթյութանթներ բաներ...

Սեխպոս-այի բարկությունը եկավ. ու ճիշտ էլ մարդը իրավունք ուներ, որովհետև այդ փիճը ինչ համարձակություն ուներ զրույցի մեջ մտնելու ու մարդու խոսքը կտրելու:

¹ Спор

² Քաղաք-ամրոց Լոթարինգիայում:

³ География.

— Ի՞նչ է այդ դուրս տվածդ,— ասաց.— Ի՞նչ այդ իմացած-չիմացածը խառնիխուռն բերանիցդ թափում ես. Մեց որ ասում են, այն Ղզլբաշի հողի վրա է, բուրփն էլ. այստեղ նայի, փուշքա չէ, նավամոդնի թվանքի անուն է, որ շախմայի տեղ մի սուր ասեղ ունի. ռեդուլթն էլ այնպես շեն ասում, ճիշտը որ ուզում ես իմանալ, ռեդուլթ չի, Ռեդուլթ-Կալե է. այն Թիֆլիսի կողմերը գուռջիի Ֆոդյ՝ վրա մի բռնփոստ է... հետո՞, կերա՞ր հիմա: Ի՞նչ էր այդ իմացած-չիմացածդ, մարդու սուտ հանածդ. ինչ է, որ ղոնախ ես գնացել, ամեն բան էլ իմացած եղա՞ր, ինչ է... Հիմա մայրդ, մեռելդ... տեղը չէ՞:

Էլի ինչ էլ որ լինի, լավ որ մարդիկ մեջ մտան, այդ տղին կտկտելով հեռու քշեցին, անուշ խոսքերով Սեխպոս-այի սիրտը շահեցին:

— Է՛հ, լավ, Սեխպոս-ա, սիրտդ թող շուտ չգա փիճի համար. նրա խոսքին լսող կա՞ որ,— ասին մյուսները:

Ու Սեխպոս-ան իրեն խոսքը առաջ տարավ:

— Դե՛, ախպերս, երբ որ Տեր-Խուկասովը գալիս է այդ Փլենա-փաշային Մեծ սարի ետևը տեսնում է, իսկույն սթոածնի է բացում ու փաթափա՛թ-փաթափա՛թ-փաթափա՛թ...

— Սեխպոս-ա,— ասաց մի ուրիշը,— խոսքը շմոռանաս, բայց կարծես թե Տեր-Խուկասովը չէր, այլ Լոռիս-Մելիթովն էր... Այդպես չէ՞ որ, կարծես թե այդպես է միտք գալիս...

— Լսել ես, բայց այնպես չես լսել,— ասաց Սեղպոս-ան.— Լոռիս-Մելիթով որ ասում են, նա ուրիշ գեներալ է, նա գիշեր-ցերեկ թագավորի մոտն է, որտեղ նա գնում է, նա էլ այնտեղ է գրնում...

— Սխալ ես, Սեխպոս-ա,— ասաց Տնկոի Քիրբորը,— թագավորի մոտինը Լոռիս-Մելիթը չի, Շուլթովնիթովն է:

— Չէ՛, ախպե՛ր,— ասաց Սեխպոս-ան,— Շուլթովնիթովը զավսեմ ուրիշ կողմ է. նրան թագավոր-կայսրը հատուկ հրամանք է տվել, որ հայ-քրիստոնյային հարամու ձեռքից ազատի— հայի թագավորություն տա:

— Մեջտեղում, կարծես թե հայի անունը չկա,— ասաց Տրն-կրոի Քիրբորը,— բուլղար լսել եմ, բոսնի լսել եմ, սերբ լսել եմ, բայց հայի անունը, շթոթը, լսած չեմ:

— Քեզ ո՞վ է ասում,— ասաց Սեխպոս-ան,— ես քու լսածդ ուզո՞ւմ եմ որ, երբ որ ինքս աչքովս տեսել եմ գազեթը ու աղան-

Լուսավորչի գերեզմանոցը որ հասա՞ իմս էլ ինձ հասավ. շապիկս շուր էր կտրել. երեսիցս փոշոտ քրտինքն այնպես էր վազում, որ երբ թաշկինակով սրբեցի, թաշկինակս աման-շաման սրբելու ջնջոցի նմանվեցավ, հազիվ շունչ էի քաշում՝ այնպես էի նվազել: Տերտերը, — շնորհակալ եմ, — «նեքս համեցեք» արավ: «Ձէ, — ասի, — այս տոթին ներսը մնալու բա՞ն է որ. խեղդվի՞մ, ի՞նչ է»: «Որ այդպես է, — ասաց տերտերը, — դու այստեղ կեցիր, ես գընամ շայի պատրաստութուն տեսնեմ: Թե կուզես, գնա մի քիչ գերեզմանոցը ման արի»:

Տերտերը գնաց թեյ պատրաստելու, իսկ ես՝ դեպի գերեզմանոցը: Ելա մոտակա բարձր բլուրի վրա. հեռվից տեսնում էի քաղաքի մրջնային եռուզեռը, իսկ ոտներիս տակ կար մի ուրիշ՝ լուռ ու խաղաղ քաղաք, որ բան ու գործը վերջացրած, ամենքի հետ ու խաղաղ քաղաք, որ բան ու գործը վերջացրած, ամենքի հետ ու կապերը խզած, բլուր հաշիվներն ավարտած, ինչպես ասում են՝ ալլուր մաղած, մաղն էլ պատից կախած՝ հավիտենական քնով քնած էր:

Գերեզմաններից շատերի վրա միայն հասարակ արշիննոց քար էր դրած, վրան էլ գիր չկար. հայտնի չէր՝ հարուստ իշխանի՞ էր, թե՞ ժամի դռանը մուրացող աղքատի, աղայի կնո՞ջ էր, թե՞ հասարակ մի գեղջկուհու, գիտնական վարդապետի՞ էր, թե՞ մի պարապորդի:

Կային ուրիշ գերեզմաններ էլ մարմարե, երկաթե՝ վրաները ոսկեզօծ գրերով, թիվն էլ գրած էր, թե հանգուցյալը երբ է ծնվել, երբ է վախճանվել. բայց թե՞ ի՞նչ է արել, ո՞ւմ է օգուտ տվել, իրենից հետո ի՞նչ բարի գործ, կամ ի՞նչ բարի հիշատակ է թողել՝ հեշ հայտնի չէր: «Մկրտիչ Կուլչով», «Գաբուել Զեվզեկով», «Մկրտիչ Կիսարով», «Կարապետ Տուտուկով», «Մայրամ Խովվաթովա», գնա՛ ու սրանից բան հասկացիր: Շատ, շա՛տ դժվար էր գտնել «Աստված ողորմի հոգուդ» ասելու արժանի գերեզման, որովհետև կենդանի ժամանակները դրանք հոգի (այսինքն՝ խղճմըտանք) ասած բանը հազիվ թե ունեցած լինեին, ո՞ւր մնաց մեռնելուց հետո...

Ահա, առջևս են հա՛մ մեռած, հա՛մ ապրող քաղաքները. երկուսից ո՞րն է լավ, ո՞րը՝ վատ, Աստված վկա՛ դժվար է ասելը: Ի՞նչ լավ բան է արել ոտքիս տակի մեռած այս քաղաքը. ի՞նչ լավ բան է անելու այն ապրող քաղաքը. երկուսից ո՞րն է ավելի օգտակար, ո՞րն է հայ ազգին ավելի պատիվ բերում: Հին քա-

ղաքացին կերել, խուել, քեֆ արել ու մեռել է. ապրողն էլ կուտի, կխմի, քեֆ կանի և այսօր վաղը պիտի ընկնի-մեռնի: Տարբերութունը շա՛տ է:

Աչքս դեպի Սուրբ Խաչի կողմը դարձրի, տեսա մեր կովերի նախիրը, որ հեռվում արածում էր: Միտք արի. այդ կովը ուտում, խում, կաթ է տալիս, ծնում է, մի օր էլ պիտի ընկնի, սատկի (եթե ծերության ժամանակ մսագործի դանակին շհանդիպի), բայց սատկելուց հետո էլ անօգուտ չի, տե՛ս, կոշիկիդ ներբանը կովի կաշուց է. ասել է՝ կովը սատկելուց հետո էլ մի օգուտ ունի՞ս Եթե կովը հոգի ունենար, կոշիկիս ներբանին նայելիս, ամեն անգամ՝ «կո՛վ, Աստված ողորմի հոգուդ» կասեի. բայց ինչո՞ւ պիտի ողորմիս տամ այն անօգուտ մեռածների հոգուն, երբ նրանք իրենց կենդանության ժամանակ մի լավ գործ կատարած չունին:

Սաստիկ տրտմեցի:

Քայլելով-քայլելով եկա մի հին գերեզմանի մոտ: Վրայի քարը բավական մեծ էր. կլիններ, գուցե, երկու արշին ու կես, բայց կեսից ավելին գետնի մեջ էր խրված, մյուս կեսն էլ պետք եղածից ավելի էր բարձրացել: Այդ դեռ ոչինչ: Վրան մի տարօրինակ բան նկատեցի. քարի վրա գերեզմանի աջ ու ձախ կողմերը լիքն էր կովի հին ու նոր ապականութունով. կարծես անասունները խոսք մեկ էին արել՝ իրենց հարկավորութունը միայն այդ խեղճ գերեզմանի վրա կատարելու: Դա բավական չէր. քարի վերև բարձրացած ծայրից սաստիկ գարշահոտութուն էր գալիս. անամոթ շները սովորութուն էին արել անպատճառ գալու և ետևի ոտները վերցնելու: Խոզերն էլ հանգիստ չէին տվել այս անբախտ գերեզմանին: Նրանք էլ հալվա շինելու իրենց շնորհքն էին ցույց տվել: Մի խոսքով՝ անբան անասուններն այս գերեզմանն իրենց վատերկրզետն էին դարձրել Sic transit gloria mundi!՝, — ասի ու նրա մոտ մի բարձրիկ քարի վրա նստեցի, որովհետև, ինչպես ասի, սաստիկ հոգնած էի:

Քարի վրա նստելուս պես, հենց որ աչքս բարձրացրի, ի՞նչ տեսնեմ՝ լավ է: — Հեռվից մի աղա (քայլվածքից ու խոժոռ դեմքից հայտնի էր աղա լինելը), ձեռները մեջքին դրած, առջևից ու հետևից՝ գլուխները բաց երկու տերտերներ, երեցփոխներ, ժամկոշներ՝ ուղիղ դեպի ինձ էին գալիս: Այդ աղային, կարճես, ճա-

¹ Այսպես է անցնում աշխարհի փառքը:

— Լավ շորացրի՞ք, — հարցրեց աղան:

— Ի՞նչ ես խոսում, մոտ ութը օր սալլերը կանգնեցրել էինք թե՛ արևի տակ. ամեն սալից համարյա մի փութ շորացավ:

— Այդ շատ լավ արի՞ք: Վար առնելու ժամանակ բուրդը մի լավ (ձեռքով ցույց է տալիս) թափ տվի՞ք:

— Թափ չտվինք, բա ի՞նչ արինք. կաշին էլ հանեցինք. ամեն մի սալից համարյա մի-մի ձեռնասալակ հող ու աղբ թափեցինք. ամեն սալից դա էլ փութ, փութ ու կես տարբերություն արավ: Մալաքանները կեցած տեղերը քիչ էր մնում լաց լինելին — БОЛЬНО ОБИДНО БУДЕТ — ասում էին ողորմելիները, բայց մերոնք անդադար թափ էին տալիս, ցեխն ու մանր բուրդը կարկտի պես վար էր թափվում... Այս առտուտուրից էլ մանեթին-մանեթ որ չվաստակենք, ուղղակի հիմար պիտի լինենք:

— Է՛յ, լա՛վ, — ասաց աղան, — մնացած փողի համար կանս, որ վաղը երեկոյան կողմը դան առնեն: — Ասաց ու դեպի ինձ գարձավ: Ամբարի մարդը գնաց:

— Հը՞, հավանո՞ւմ ես տունս, — ասաց պարծենալով:

— Չհավանելու տո՞ւն է որ, — ասի...

Խոսքս դեռ չէի վերջացրել, որ վախվխելով ներս մտավ սև շորով, գլուխը հին լաշակ կապած, դեմքի համեստ արտահայտությամբ, միջին տարիքի մի կին:

— Բարև, աղա՛, — ասաց, ձայնը հազիվ բերանից հանելով և գլուխ տվեց.

Երևում էր, որ աղան դժգոհ էր, որովհետև բարևը շատով, և խոժոռ դեմքով ասաց.

— Ինչի՞ ես եկել:

— Աղա՛, քեզի մեկ խնդիրք ունիմ, ոտքդ պագնեմ, չէ՞ մի ասիլ: Աղջիկս, Մարգարիտը, հայ-հայ տասնիններ կմտնի. դուր-դուրացու բերնի մաստաք եղավ խեղճը. այս հինգերորդ ուզողն է. մեր ուժի շափով օժիտ պատրաստել ենք. միայն թե՛ սա էլ մյուս-մեր պես, մի քիչ փող է ուզում, ընդամենը յոթանասունհինգ ների պես, մի քիչ փող է ուզում, ընդամենը յոթանասունհինգ ների պես: Աղա՛, ոտքդ պագնեմ, չէ՞ մի՛ ասիլ. տո՛ւր այդ փողը, պայտիդ-մամայիդ հոգուն մատաղ, դավակներուդ արևուն համար, խեղճ աղջկաս վիզը մի՛ կտրիլ: Խալիը տասներկու-տասներեք խեղճ աղջկաս վիզը մի՛ կտրիլ: Խալիը տասներկու-տասներեք տարեկան աղջկանը տանից դուրս է հանում, մերը՝ տունը մնալով, ամոթից ու դարդից օրեցօր ճրագի պես հավում է, թե որ էլի մնա, ո՞վ գիտե խալիը ինչեր պիտի հնարի. հո գիտես մեր

խալի լեզուն: Հայտնի է, որ մարդս իր ձեռքի արհեստովը զո-ռով-շառով տուն է կառավարում. խեղճը կոպեկներով ե՞րբ պի-տի կարողանա յոթանասունհինգ մանեթ հավաքել: Քեզի չեկած, մեկ-երկուսին գնացի, ոտներն ընկա, բայց օգուտ չեղավ. բոլո-րը քո վրա են ցույց տալիս, այսինքն թե՛ մոտիկ ազգականդ թո-ղած, ինչո՞ւ օխտն օտարի դուռը կընկնիս... Աղա, ոտքդ պագնիմ, սրբե՛ արդար աղջկաս աչքին արտասուքը:

Ասում էր և հոնգուր-հոնգուր լաց լինում խեղճ կինը. քարն էլ կշարժվեր տեղից, չէ՛ թե մարդու սիրտը: Բայց աղայի պետ-քը չէր:

— Աղջի՛, — ասաց նա, — էդ ինչե՛ր ես դուրս տալիս. բեր-նեդ ելածը ականջդ էլ կմտնե՞: Քեզ ո՞վ ասաց, որ իմ վզի պարտ-քն է իմ աղքատ ազգականներիս աղջիկների համար էրիկներ ճարել: Դուք զավակ գոյացուցած ժամանակներդ ինձնից հրաման առե՞լ էիք որ: Թե որ զավակ պահելու կարողություն չունիք, ին-չո՞ւ եք նրանց աշխարհք բերում. միայն աղքատ շատացնելու հա-մա՞ր: Այս մեկ: Մեկ էլ՝ այդ ի՞նչ հանդգնություն է, շեմ հասկա-նում. հենց որ ազգականներիցդ մեկը շորս-հինգ կոպեկի տեր է դառնում, իսկույն գալլերի պես վրա եք թափվում, կտրտում, պատռոտում, թալան-թալան անում, ու ժամանակ չեք տալիս, որ մարդը շունչ առնե: Այս էլ երկու: Քեզ ո՞վ է ասել, թե իմ ունե-ցածս այնքան շատ է, որ ո՛չ միայն իմ ընտանիքիս պետքերը կարող եմ հոգալ, այլև իմ բոլոր ազգականներիս պետքերն էլ: Այս տարի, լսած չե՞ս, ի՞նչ է, ո՛չ միայն վաստակ չենք անում, այլև ունեցածներիս գլխից պիտի ուտենք: Հիմիկվա ժամանակը, շանս, վաստակի ժամանակ չէ: Ապրանքը թանկ-թանկ ենք առ-նում ու վնասով ծախում. բա՛, մարիկա: Առաջվա տարիները լի-ներ, ինչո՞ւ չէ, почему не так, իհարկե, մի հնար կգտնեինք. բայց հիմա, կուրանամ, կույր ման գամ, թե սուտ եմ ասում՝ գործերս շատ վատ են:

— Աղա, թե որ այդպես է, տունս գրավ վերցրու:

— Ինչքա՞ն տամ:

— Տուր հարյուր հիսուն մանեթ:

— Դա շատ մեծ փող է. տունդ այդքան չարժե. ուզում ես հարյուր մանեթ կտամ: Հետո՞ քանի՞ տոկոս պիտի տաս:

— Կտամ ամիսը մի կոպեկ:

— Քիչ է. ուրիշից երեք կոպեկից պակաս չեմ առնում. բայց

քո խաթեր համար, քանի որ ազգականս ես, երկու կողմէ կանոնն
Գարձյալ դուր ճոռաց և մի ուրիշ բեռնակիր ներս մտավ:

Աղան կնոջը ձեռքով արավ:

— Աղջի՛,— ասաց,— հիմա ես ժամանակ չունեմ քեզ հետ
սթիտի մասին խոսելու. գրպի օրինավոր թղթերը պատրաստի,
երեք-չորս օրից հետո հանդիպե:

Կինը բան էր ուզում ասել, աղան խոտոտ նքան նայեց. խեղ-
ճի խոսքը շրթունքին սառեց: Վիզը ծած, փեշով աչքերը սրբ-
լով դուրս գնաց: Կարծես սիրտս, աղիքներս ժանգոտ ակիշներով
շանգոեցին:

— Աղա,— ասաց ներս մտնողը (տեսքից երևում էր, որ դա
էլ ճարպիկ մարդ էր. գողի աչքերը շորս կողմն էր պտտեցնում).
էլ ճարպիկ մարդ էր. գողի աչքերը շորս կողմն էր պտտեցնում).
աղա՛, հա՛մ տասնութ հազար խաիր Վալյանին հանձնեցինք, հա՛մ
էլ պահեստից քաններեք հազարը ամբարներս դատարկեցինք:

— Ընդունողը բան շասա՞ց, այսինքն, ուզում եմ հարցնել,
թե՛ մեջերդ վեճ-բան չեղա՞վ,— ասաց աղան:

— Ե՛կ եմ, ի՞նչ է, որ դրան բերան բանալու ժամանակ տամ,—
ասաց բեռնակիրը, պարծենալով,— ամենից առաջ դրան տարա
Պատպոյի գինետունը, երաժշտությամբ, պարուհիներով լուսե-լուս
հետը քե՛ք արի. ամենաքիչը երեսունհինգ պունջ (ջերմօղի) խմեցրի.
ամեն ինչ տեղովը եղավ. դրանից հետո էր, որ բաց արի ամբար-
ները և սկսեցի հանձնել: Կհավատա՞ս, այդ հինգ հազար պարկի
թրջված պարանքն առաջին տեսակի տեղ գնաց. ամբողջ պաքսի-
մատը պարանքի հետը խառնելուց դատ, մոտ հարյուր շափ էլ հող
ու ավազ դարկի: Մինչև հիմի մարդը դեռ ուշքի չի եկել:

— Նիշե՛տ, մաբարեց,— ասաց աղան:

— Բա քու խրատներդ հեշ ես կմոռանա՞մ:

Աղան երեսն ինձ դադարեց ու ասաց. «Տեսա՞ր, մարդ ո՛րքն
կասեն. այսպիսի մարդիկ դր շատ լինեին՝ մեք քաղաքի քանը ոս-
կի էր: Թե չէ՛ մեկից-մյուսից ողորմություն մտրաբուց, կամ ամ-
բողջ կյանքում չը՛ք-չը՛ք-չը՛ք աշխատելուց խոշոր կապիտալ
հեշ չի գոյանա: Աշխարհքը, ջանս, աչքաբաց մարդունն ք. ուտիս
ու պաս նայողի փորը միշտ վեց-վեց կանի. դա վաղուց փոր-
ձած բան է:

Աղան դարձավ բեռնակիրն ու հարցրեց.

— Բա պահեստի պարանքն ինչպե՞ս դատարկեցիք մեր ամ-
բարները:

— Դա, հո, հեքիաթի պես բան էր,— ասաց բեռնակիրը,—
մեկ որ՝ ո՛չ մի շափ չորս, հինգ անգամ փայտով շղարկած, ներս
չտարանք. շափի փայտն էլ այս անգամ սաստիկ ծած էր. յու-
րաքանչյուր շափի մեջ չորս մատ ավել էր մնում. դա հեշ. ամե-
նածիժաղելին այն է, որ հիսունութը, հիսունինը հաշվելուց հետո,
նորից նոր քառասունից էինք սկսում. այսպես՝ ամեն մի հարյուր
շափի մեջ. այնպես որ՝ մարդու պարանքը համարյա կես արինք-
հա՛, հա՛, հա՛...»

— Այդ էլ վատ չէ,— ասաց աղան:— Երևում է, որ մի օր դու
քաղաքիս աղաների շարքը պիտի անցնես: Մարդ դարձողը տես-
քից է երևում: Իրան առևտրական տաղանդ են ասում:

«Ձէ, ասի մաքիս մեջը, տաղանդ չեն ասում, այլ խարդա-
խություն ու սրիկայություն», բայց համարձակություն չունեցա
բարձրաձայն ասելու. վախեցա, որ ազգասեր աղաները Արվես-
տական դպրոցը փակելու հարցը դումայի մեջ նորից կբարձ-
րացնեն:

Բեռնակիրը գնաց: Քիչ հետո նորից բացվեց դուռը ու ներս
մտավ հիսունհինգ-վաթսու՛ն տարեկան մի մարդ. վրայի հագուստը
շատ տեղ այրված էր, անգամ գլխի մազերը, ունքերը, արտևան-
ունքները խանձված էին:

— Ա՛յ տղա, Ասատու՛ր,— ասաց աղան,— այս ի՞նչ է եղել
քեզ. կրակի մե՞ջ ես ընկել, ի՞նչ է:

Մեր մարդը, բերանը դեռ չբացած, պո՛մփ արավ, աղայի ոտ-
ներն ընկավ ու սկսեց մղկտալով լաց լինել:

— Ամա՛ն, աղա,— ասաց,— դու էլ որ շհասնես, տնով-տե-
ղով պիտի կորչեմ... Այս գիշեր տունս կրակ ընկավ. ինչպես որ
կամ՝ այնպես դուրս եկա, ունիմ-չունիմս ամբողջը հեշ եղավ. երեկ
լով-գեշ պարում էի, այսօրվա օրս կնոջով ու օխտը զավակով
քաղաքիս վերջին աղքատը դարձա...

— Այդ ինչպե՞ս եղավ.— հարցրեց աղան:

— Ջանս, գիշերը կինս օջախ վառեց, ուզում էր բանջար տա-
լակել. ինչպես է լինում, թավայի եղը բռնկում է. կինս իսկույն
վազում է, թավայի կոթը բռնում է, որ օջախի վրայից իջեցնի.
Ը՛ք սատանա. թավայի կոթը նույնպես տաքացած է լինում, ու
ինչո՞ւ ձեռքն այրում է. թավան ձեռքից ցած է ընկնում. բոցա-
վազված յուղը թափվում է տաշեղով լի՞քը զամբյուղը՝ լվանալու

համար հավաքված փոխնորդի վրա. մի բուսի մեջ, — կնոջս պատմածն եմ ասում քեզ, — խոհանոցը լցվում է կրակ ու բոցով. կինս հանկարծակի ներս է վազում՝ «հրդեհ, հրդեհ... ջո՛ւր, ջո՛ւր» կանչելով, և ուշքը գնում է: Բանի էությունը չեմ հասկանում: կնոջս վրա շուր եմ լցնում, ճակատին, ականջների ետևը քացախ եմ քրվում, նաշադիր եմ դնում քթին: Այդ միջոցին կրակն իր անելիքն սում է. բռնում է տանս առաստաղը: Ես դարձյալ բանից տեղանում է. բռնում է տանս առաստաղը, կանչում է. «եռյակ չեմ: կինս հենց որ աչքերը բաց է անում, կանչում է. «եռյակ չեմ... հրդեհ... շուտ ջո՛ւր, ջո՛ւր»: Արդեն բանը բանից անհանձնեց... հրդեհ... շուտ ջո՛ւր, ջո՛ւր»: Երբեք բանն «վա՛յ, վա՛յ» ճշարտվեցի էր. տունս ծխով է լցվում, երեխաներս «վա՛յ, վա՛յ» ճշարտվեցի և կնոջս ձեռքերիս վրա եմ վերցնում, անցնում բոցերի միջով և հանգիստ հազ ազատվում եմ ողջ-ողջ այրվելուց: Տանիցս մի հասկով հազ ազատվում եմ ողջ-ողջ այրվում է, ու ես, տիկ ասել չեմ կարողանում ազատել, ամբողջն այրվում է, ու ես, այսօրվա օրս, քաղաքի ամենավերջին աղբատն եմ: Ամա՛ն, աղա, հիմա դու գիտես, վերևն Աստված, ներքևը՝ դու, ո՛չ տեր ունիմ, ո՛չ տիրական. տերս էլ դո՛ւ ես, տիրականս էլ դո՛ւ ես. ամբողջովին մերկ ընտանիքովս քու հույսով ենք մնացել ու քու ձեռքն ենք նայում...

Աղան մտածությունքի մեջ ընկավ. բավական ժամանակ լուռ մնաց, և ապա ասաց, — հա՛յ, մարդ լամ, այսպես էլ բա՛ն:

Գարձյալ մի առժամանակ լռեց, ու նորից սկսեց.

— Ա՛յ տղա, — ասաց, ես քեզի մի բան ասեմ: — Ասատուրը նրա բերանին նայեց այն հույսով, թե օգնության մի խոսք պիտի լսեր: Ծիշտն ասած, ես էլ այդպես կարծեցի:

Աղան ասաց.

— Մեկ էլ որ թավա առնելու լինիս՝ շլինի թե երկաթի կոթովն առնես. դրա փայտե կոթովն էլ կա. ա՛յն առ. թե որ չգիտես էլ՝ հյուաններին շինել տուր, քանի՞ կոպեկի բան է որ, թե չէ՝ երկաթը շուտ է տաքանում և մարդու ձեռ է այրում: Այս մեկ: Քեզ տալու երկրորդ խրատս էլ այն է, որ կնոջդ պատվիրես՝ թավայի մեջը շատ եղ շղնի, որովհետև եղը, հալելուց հետո՝ կթափվի կրակի վրա և դժբախտություն կպատահի: Այս էլ քեզ երկրորդ խրատս: Երրորդ խրատս էլ այն է, որ տաշեղ ասած բանը միշտ օջախից հեռու պիտի պահես, որովհետև, Աստված շանն, մի կայծ մեջն ընկնի թե չէ, ամբողջը կթռնկի: Դեռ ուրիշ բան էլ պիտի ասեմ. մեկ էլ որ խոհանոց շինելու լինես՝ օջախի առջևը թիթեղ քաշի

որ — մարդ է, աշխարհք է — թե կրակ կամ կայծ ընկնի՝ տախտակը շայրվի: Բայց ամենալավն այն է, որ խոհանոց ասածը տանդ մեջը չպիտի անես, այլ տանիցդ ամենաքիչը տասնհինգ քսան գազ հեռու: Մեկ էլ՝ շատ վատ սովորություն է, որ մերոնք խոհանոցը փայտից ու տախտակից են շինում. աչքը սիրեմ աղյուսե խոհանոցի. հեշ կրակից չի վախենում: Հա՛, մոռացա ասել. պիտա էլ որ շինելու լինես, տե՛ս պատահական վարպետի չկանչես. այստեղ մեկը կա, Յագոռ են ասում, ճիշտ է, շատ սրիկա մարդ է, բայց վառարան, պիտա կամ փուռ շինելում վարպետ է շանորդին: Ահա՛՝ քեզ իմ խրատս: Բայց դո՛ւ գիտես՝ ուզում ես կատարի, ուզում ես՝ մի՛ կատարի. այս որ ասում եմ, քո շահի համար եմ ասում: Իսկ ինչ վերաբերում է օգնելուն, ինչո՛ւ չէ, մենք էլ մեր կողմից մի բանով կօգնենք: Գու մի թուղթ պատրաստիր, տար աղաներին. ամենից վերջը մեզ էլ կբերես, մենք էլ, այստե՛ղ նայի, մեր կողմից, չափավոր մի բան կանենք: Դե՛, ինչպես որ ասի, այնպես էլ կանես:

— Այդ բոլոր շատ լավ, — ասաց Ասատուրը, — բայց մինչև այդ թուղթ պատրաստելը, մինչև աղաների տները ման ածելը, ախր կինս յոթ զավակով մերկ ու բոբիկ, փորները քաղցած, բակի մեջտեղը, գետնին նստել են. ախր նրանց տուն պետք է, նրանց շոր պետք է, ուտել պետք է...

— Գիտեմ, — ասաց աղան, — որ այդ ամենը պետք է, բայց ի՞նչ ես ուզում հասկացնել:

— Հասկացնելս այն է, — ասաց Ասատուրը, — արդյոք դու մի լավություն չէի՞ր անի...

Մարդը դրանից ավելի չկարողացավ ասել. Լրևում էր, որ պատվով-նամուսով մարդ էր, ձեռք պարզելը դեռ սովորած չէր:

Աղան գնաց մյուս սենյակը. սեղանի դարակը շրխկացրեց, բացեց, փակեց, ու ետ եկավ. ձեռքին երկու հատ տասր կոպեկանոց կար:

— Առ առայժմ սա, — ասաց ու քիթը-պոռնկը ծոմակելով տեղը նստեց:

Ասատուրը հիշյալ երկու տասր կոպեկանոցը ափի մեջ բռնած — խելքը կորցրածի պես. վրան էր նայում: Հինգ թոպի շափ ամենքս էլ լուռ էինք:

Ասատուրն ասաց.

— Աղա՛, բաւ կոպեկով ես ի՞նչ անեմ մերկ ու սոված ըն-
տանիքիս:

— Ինչ գիտես ա՛յն արա,— ասաց աղան,— ինչո՞ւ ես ինձ
հարցնում, որ: Ի՞նչ է, ե՞ս եմ այրել քո տունը, ի՞նչ է:

— Ես քեզ ասե՛լ եմ, որ դու ես այրել,— ասաց Ասատուրը:

— Ապա այդ ավել-պակաս խոսքերդ ինչացո՞ւ են,— ասաց
աղան՝ խոժոռ:

— Ասելս այն է,— խոսեց Ասատուրը,— դու որ չօգնես, ես
տնով-տեղով պիտի կորչեմ. բայց եթե այս նեղ օրիս մի քիչ հաս-
նես, ես նորից տունուտեղ կլինեմ, ձեռքիս վաստակով կամաց-
կամաց կարգի կրնկնեմ, ու մի օր էլ, անունդ օրհնելով, տված փո-
ղըդ, առչեղ կդնեմ:

— Գու առաջ հարցրո՛ւ՝ ազատ փող ունե՞մ: Շատ բան՝ անու-
նըս հարուստ է ելել... դուք միայն մեր օգուտն եք հաշվում,
վնաս արածներիցս էլ խաբա՞ր եք:

— Աղա՛, վնաս ես անում, թե օգուտ՝ չգիտեմ, դա ինձ հա-
մար մտնի է. բայց գիտեմ, որ առաստաղից կախված այս մի
հատ ջահի փողով մեզ պես մարդու տունը կշինվեր...

— Հետո, ի՞նչ ես ուզում հասկացնել,— ասաց աղան աչքե-
րը կկոցելով և հպարտ-հպարտ վրան նայելով:

— Հասկացնելս այն է՝ դու էլ, որ մոտիկ ազգական ես, ինձ
չօգնես, ապա ո՞վ պիտի օգնի:

— Գե տե՛ս մեր հիմար խալխի դատմունքը,— ասաց աղան,
խոսքն ինձ ուղղած.— մեղավո՞ր եմ, որ կարողացել եմ իմ ապ-
րուստի համար երկու-երեք կոպեկ հավաքել. ես մեղավո՞ր եմ,
որ խալխը պսակվում է, շատ երեխաներ է աշխարհ բերում ու
ժամի դուռն մուրացկանների թիվն ավելացնում...

— Է՛հ, աղա՛, աղա՛,— ասաց Ասատուրը,— երկնքին Աստ-
վածք ձեռքդ հնար էր տվել, որ դու երկրիս վրայի Աստվածը լի-
նեիր. բայց ինքդ քեզ զոռով սաղաթել-սատանա ես դարձնում:
Մնա՛ս բարով. ամո՞ւր պահի միլիոններդ. գուցե մի օր բախտա-
վոր լինես. բայց այս րոպեիս, ինչպես տեսնում եմ, դու ինձա-
նից հաղարապատիկ անբախտ ես, որովհետև դու քո ունեցած փո-
ղիդ տերը չես, նա՛ է քո տերը. գու նրա գեղին ես...

Ասաց ու գնաց:

Աղան դարձավ ինձ ու ասաց.

— Տեսա՞ր մեր հայերի բնավորութունը՝ պնա՛ ու հիմա այս՝

պիտի մարդկանց լավությունն արա: Մարդու հետը նստում, ախ-
ար պես խրատներ եմ տալիս, աշխարհիս մեջ ապրել եմ սովոր-
եցնում, ձեռքը փող եմ դնում, շնորհակալ լինելու տեղը՝ դեռ
ինձ անհիժում է: Ինչո՞ւ, որովհետև նրան ունեցած-չունեցածս չեմ
տալիս ու փնքս իրեն պես չեմ աղքատանում: Զէ՛, ինչ ուզում ես
ասա՛, մեր հայը կորչելու ազգ է. նրա արյունը ապականվել է
ձեռք չեմ հավատում, որ դրանից մի օր օրինավոր մարդիկ դուրս
գան: Մրանց միջից պիտի փախչել, թե չէ գայլերի պես մարդու
պատառ-պատառ կանեն: Միշտ դավակներուս խրատում եմ, որ
որ իրենց հեռու պահեն այս փշացած, անօգուտ խալխից:

Մի քիչ շուռ մնալուց հետո, ասաց.

— Գա՛ հեշ, բայց գիտե՛ս, որ այսօր աղջկաս հարսնախոսու-
թյան օրն է:

Ի՞նչ խոսքը մարդու բերանն էր, որ մեկ էլ տեսնեմ՝ տունը
լցվեց հագված-զուգված հյուրերով: Զահերը, Մեծ ու փոքր մո-
մերը, լամպերը վառվեցին, կատարյալ ցերեկվա լույս եղավ.
Կանանց, աղջիկների գլուխները, ականջները, կրծքերը արևի շո-
ղերի պես ցուլցացին: Երաժիշտներն սկսեցին նվագել, ներսա-
սարդներն ու աղջիկները՝ պարել. թեյ, օղի, կանֆետ, մուրաբա,
տեսակ-տեսակ միրգ, խորտիկներ մեշտեղ եկան. տերտերներ ու
տիրացուներ եկան. հարս ու փեսա դեմ-դիմաց կանգնեցին, մա-
տանիներ օրհնեցին, նրանց մատերն անցկացրին. խնդում, ծի-
փազ, պար, խմել-հարբել, գոգոռոց, ուռաններ՝ ամեն ինչ, ամեն
ինչ կատարյալ էր:

Աղան երաժիշտներին անգաղար նոր-նոր եղանակներ էր
եփագել տալիս, ինքն էլ հեսները երգում էր, նվագածուների գըլ-
խին փողը ջրի պես էր թափվում. տասնեցները, քսանհինգանոց-
ները, հիսունանոցները, հարյուրանոցները աղալի ծոցից կարկտի
պես դուրս էին թափվում և օխտ-օտարի գրպանը մտնում:

— Հիմա իմացա՞ր իմ ինչ մարդ լինելը,— ասաց ինձ,—
տես՝ ես այսպես եմ. քե՛ք, ուղտխուժիցուն, փարթամություն՝ իմ
շատ սիրած բաներն են: Եղբորդ իման, ցուցածքի համար ես հեշ
փող չեմ խնայում. իմ առատածեռն, ողորմած լիճիս աշխարհը
գիտե. ես ուզում եմ, որ իմ անունը, իմ ազգանունը հավիտյանս-
հավիտենից հիշվի ժողովրդի մեջ, աղա՛ ասեն, աղա՛ լսեն: Այս
տունս, միջի կահկարասին, այս օսպրուստս, այս քե՛քերս կռու-
նե՛ս, ես ուզում եմ, որ որդիքս, ֆոռներս, ֆոռներիս ֆոռները

տարին տասներկու ամիս այսպես ապրենք քե՛ք անեն, մարդկանց զարմացնեն և խալխի բերանից անպակաս լինի գովասանքը: Իսկ երբ մեռնեմ՝ հրամայել եմ, որ գերեզմանիս վրա մարմարե մի մեծ եկեղեցի շինեն, արտասահմանից բերած գերեզմանաքարիս վրա ոսկի տառերով անուն-ազգանունս ու կատարած գործերս գրեն, հարյուրավոր ու հազարավոր տարիներ գերեզմանիս առջև անշեջ կանթեղ վառվի, ամեն տարի տերտերները պատարագ անելիս անունս հիշեն ու օրհնեն, որ՝ քանի հայ ազգը կա աշխարհ-քիս վրա՝ անունս ու պատմությունս անմոռաց ու անմահ մնա նրա մեջ:

— Աղա՛, — ասի, — այդ այդպես՝ բայց ես մի բանի չեմ հավանում. մեկ որ՝ քո վատ անունը խալխի բերանում խոսվում է, մեկ էլ որ՝ քիչ առաջվա տեսածներս, այսինքն՝ ծառաներիդ խարդախությունը և թշվառ-աղքատների հետ անխղճմտանք վարվելը շատ գովական բաներ չեն: Ինչպե՞ս ես ուզում ժողովրդի մեջ լավ մարդու անուն թողնել, երբ գործերդ գովելու գործեր չեն: Ժողովուրդը մի՞թե կարող է գովել խարդախությունը, խաբեբայությունը, անխղճությունը, շռայլությունը:

Աղան կատաղեց:

— Մեր քաղաքի մեջ ո՞վ պիտի հանդգնի ինձ գեշ ասել. ո՞վ է ինձնից մաքուր, ասա՛ մի տեսնեմ:

Ես լուռ մնացի. չկարողացա պատասխանել. որովհետև քաղաքիս մեջ լավի լավը շա՛տ, շա՛տ, շա՛տ հազվագյուտ է, բայց... վատից վատը ամեն քայլափոխիդ տասներով-քսաններով կգտնես:

— Դատա՛րկ բան է, — ասաց աղան. — քանի սաղ ենք՝ քե՛ք-ներիս նայենք. մեռնելուց հետո՛ էն էլ այն ժամանակ կտեսնենք... Խոսքը դեռ աղայի բերանն էր, որ մի մարդ հանկարծակի ներս մտավ: «Աղա՛, — ասաց, — մի կազախ տղա հարսիդ փախցրեց, Խարկով տարավ ու հետը կարգվեցավ»:

Աղան մնաց սառած:

Մի ուրիշ մարդ էլ մյուս դռնից մտավ. «Աղա՛, — ասաց, — փեսայիդ բանտը դրին, շուտով Միպիր պիտի ուղարկեն, որովհետև կեղծ վեբսիլ է տարել բանկը ու փող է առել»:

Աղան, նրա տունը, հյուրերը, բոլորն անհետացան:

Տեսնեմ՝ շուկայումն եմ: Հեռվից, հազիվհազ քայլելով, մի աղքատ ծեր մարդ է գնում, կեղտոտ գդակով, մաշված, ձեթոտ, հին վերարկուով, փողքերը պատառոտած շալվարով, տասը տեղ

կարկտած կոշիկներով, երեսը երկու շաբաթ չսափրած, քթախոտից սևացած թաշկինակի մեջ դրած մեկ, մեկ ու կես գրվանքա կարտոֆիլ և մի կտոր էլ լյարդ. սկզբում շիմացա ով լինելը. հետո լավ որ նայեցի, ճանաչեցի՝ հիշյալ աղան էր:

«Են՛դ՞ մարդ, — ասի, — ինչո՞ւ այդպես շուտ աղքատացավ»: Այդ էլ անհետացավ:

Փողոցումն եմ: Մի ծեր տերտեր ու մի քնձոտ տիրացու մեռել էին տանում: Մեռելի դագաղը կարգին սարքած էլ չէր. տախտակները մի կերպ գամած էին ժանգոտ մեխերով. դագաղի ետևից, սև ցնցոտիների մեջ փաթաթված, մի պառավ էր գնում. շորս աղքատ էլ տնքալով տանում էին դագաղը: Երբ հարցրի՝ ո՞վ է, ասին թե՛ հիշյալ աղան է: Ես էլ մեռելի ետևից գնացի: Տարանք ու թաղեցինք Լուսավորչի գերեզմանոցը:

Այդ էլ անհետացավ:

Ես մի փոքրիկ տան մեջ եմ: Սև շորով մի ջահել կին (միտս եկավ, որ դրան աղայի տանը տեսել էի՝ աղջկան կարգելու համար փող ուզելիս), ամուսնուն ասաց.

— Ա՛յ մարդ, ախր ես դուռ-դրկիցներից ամաչում եմ. խալխը անդադար երեսովս եմ տալիս, թե՛ քանի ժամանակ է աղայի մեռնելը, բայց դեռ վրան քար դրած չէ. ինչ էլ լինի՝ էլի մեր ազգականն է. մենք չհոգանք՝ ո՞վ պիտի հոգա. գնայիր Սուրբ Խաչ, մի քար կտրեիր ու բերեիր, դնեիր գերեզմանի վրա. հա՛մ հոգիներուս վարձք կլիներ, հա՛մ էլ խալխի լեզվից կազատվեինք:

Քարը դրվեց. միայն երկու հոգի լաց եղան աղայի գերեզմանի վրա. լացողներից մեկը այդ սև շորերով կինն էր, մյուս էլ այն խեղճ մարդը, որի տանը հրդեհ էր բնկել:

Դրանից անցավ հիսուն-վաթսուն տարի. գերեզմանը իջավ. քարի մի ծայրը հողի մեջ թաղվեց. աղայի անունը չհիշվելով՝ մոռացվեց, որովհետև քարի վրա ոչինչ չէր գրած: Կովերը, խոզերը, շները գալիս էին ու...

...Մեկ էլ զգում եմ՝ սկսեցին ձեռքս թոթվել և բարձր-բարձր անունս տալ: Աչքս բանամ, տեսնեմ՝ տեր Մկրտիչն է. — Ինքնաեղ պատրաստ է, դե՛հ գնանք, թեյ խոհեք, — ասաց. — քնե՛լ էիր, ի՞նչ է:

Դու մի-ասի՛ այս բոլոր տեսածս երազ էր եղել:

Իրավասու, հոգաբարձու, բամբասարանի անդամ և ճանապարհորդ

— Հետո՞,— ասացի Փոստուխ Ավագին.— վերջը-վերջը արժանի եղար այդ զագրանից՝ ասած տեղերը տեսնելու: Հա՞, հա՞ մայրդ լամ, Փոստուխ Ավագ, արտասահման էլ գնացիր, հա՞:

— Հա-պա շը-զը-նա-ցի՞, կաշին էլ քերթեցի.— ասաց Ավագը հորթային աչքերը թարթելով և հորթի պես խնդալով, այնպես որ բերնից լորձուներ թափվեց և ճպոտտ աչքերը սեղմեցին ու ճիշտ պատաված սամսայի նմանեցին:

— Հայ մայրդ լամ, Փոստուխով, հետո՞, այդ արտասահման ասածդ ի՞նչ հող է. մեջը ապրող մարդիկ ի՞նչ տեսակ են, մերոնց նմանո՞ւմ են, թե՞ ուրիշ տեսակ բան են... Հա՛, մոռացա հարցնել. քանի՞ ամիս մնացիր այնտեղ:

— Արտասահման մնացի, ջանս, ընդամենը երկու ամիս, մեկ ամիսը վեննա անցկացրի. մյուս մեկ ամիսն էլ շրջեցի Փարիզ, Ստրասբուրգ, Ուլմ և շատ այդպես տեղեր: (Փոքր-ինչ լռելուց հետո) Հաժե՛, ես ձեր խելքին ի՞նչ ասեմ. արտասահման որ ասում եք՝ մի՞թե կարծում եք մի տարօրինակ բան է. այն բոլորը, ինչ որ տեսա, Աստված է վկա, մեր Ռոստովին չարժե: Այդ որ Ստրասբուրգ են ասում, կարծում եք թե մի չգտնվելիք քաղաք է: Մեր Մեծ-Սալան՝ տեսնել ես, համարյա այդպես մի բան է. փողոցները նեղ, տները սեղմված, քիչ է մնում միմյանց վրա ելնեն, նեղվածք: Քաղաքի միջի ամենագլխավոր բանը նրա ուռնան է, նրա էլ հնարքը շտեմած մնացինք. ներկայացրո՞ւմ է— ինչ հորս ցավն է, ժամը չորսին պիտի սկսեր, մենք էլ ժամանակ չունեինք մնալու. և այդպես էլ շտեմած մնացինք: Ուռնա որ ասում են, մի մեծ ժամացույց է. ասելուն նայելով՝ մեջը տեսակ-տեսակի ներկայացումներ են լինում: Երբեմն մեր փողոցներով շե՞ն մանածում այն հայելիով արգանը, մեջը փայտե տիկնիկներ են խաղացնում. ահա այդ տեսակ բան է, շտեմանկուս համար էլ ըզըջացի. փորս խո չէր կշտացնելու: Միջի (այտինքն Ստրասբուրգի)

1 Արտասահման:
2 Նոր-Նախիջևանի մոտ հայկական գյուղ:

մարդիկն էլ վատուծ, ճուզած, փորները քաղցած... իճարկե. կերածները ինչ է որ...

— Այդ ի՞նչ է ասածդ, Աֆանասիյ Յակուվիչ, մի՞թե ամբողջ աշխարհի գոված Եվրոպան ոչ մի լավ բան չունի, գուցե դո՞ւ չես տեսել:

— Ո՞վ քեզ ասաց. ամեն տեղ շրջեցի, ամեն բան տեսա. շրջածս տեղ, շիմացած բանս չմնաց. բայց ինչ որ ասես՝ ամենը մեր տեղում կա. այնտեղ սկի այնպես բան չկա, որ կամ Նախիջևան կամ Ռոստով չլինի: Եվրոպայում ձիաքարը կա— Ռոստով էլ խո կա այդ բանը, այսօր-վաղը Աստուծով Նախիջևան էլ կլինի: Այնտեղ բուլվար կա— մենք էլ ունենք խո, չգտնվելու բան չէ որ... Այնտեղ գազի լապտերներ կան— Ռոստով էլ խո կա. այնտեղ հագուստը և կտորները էժան են— Ռոստով էլ խո պատրաստ հագուստ ծախում են և սկի էլ Եվրոպայից թանկ չէ. Ռոստովի նովլը-բազար գնացել ես, հրեաների փոքրիկ խանութները մտնել ես. լավ ապրանքը այնտեղ էլ թանկ է, բայց եվրոպա էլ էժան չէ: Հետո՞, էլ ի՞նչ մնաց Եվրոպայում զարմանալու բան... Սակայն այստեղի եղածները այնտեղ ցերեկը լապտերով չես գտնիլ: Այնտեղ ո՞վ կտա քեզ մեր եղոտ, թաժա, կաթի պես մատղաշ ոչխարի միսը, ո՞վ կտա քեզ մեր բազարի կակուղ, տաք, էժան հացը. որտեղի՞ց պիտի գտնես մեր ասետրան. որ խաշած շոգարձակ, մեծ ափսեով բերում են, սեղանի վրա դնում, դու էլ, այստեղ նայիր, կտրում ես վրայից մի մեծ կտոր, վրան մի լավ լիմոն քամում, ափսեից կոզքին մանանեխ ու աղ դնում, առնում ես մեծ կտոր հացը՝ մեկդի քաշվում և սկսում քեզ համար ուտել.— ասաց Փոստուխին Ավագը՝ բերնից ջրեր վազեցնելով— փամի՛լը՝ ի՞նչ է քո ասածդ, Եվրոպան շատ հեռու է Ռուսիային հասնելու: Հաշվիր որ երկու ամիս մնացի Եվրոպա, բայց չեղավ մի օր փորս կուշտ հաց, կամ միս, կամ այդ տեսակ բան տեսներ:

— Աֆանասիյ Յակուվիչ,— ասացի, ասենք, որ հացի և մսի կոզմից մեր տեղը Եվրոպայից լավ է, բայց մի՞թե այդ՝ աշխարհի գոված տեղը ոչ մի լավ բան չունի: Երբ որ այդպես է, ապա ինչո՞ւ Ռուսաստանից մարդիկ ամեն տարի հազարներով են վազում այնտեղ. իճարկե մի բան կա, որ ամենքը տեսնել են ուզում այդ Եվրոպա ասած տեղը:

— Կա, ինչո՞ւ չէ, ամեն բանն էլ կա, միայն թե փող չխնայես. թատրոն էլ կա, մասկարադ էլ կա, ես ի՞նչ գիտեմ— բանիկ

հանգես: Հա՛, սուտ չէ, ճիշտ է, նրանց գործարանները, նրանց մեքենաները գոված են, նրանց հնարած մոդան ամենքն էլ ընդունում են, բայց այդ գործարանները, այդ մեքենաները այդ մոդան հագուստները կուտվի՛ն, ի՛նչ է, նրանք մարդու փորը կկշտացնեն: Ո՞վ է նրանց ավել մեր Աստծո օրհնած տաք-տաք յուզոտ մատաղի միտքը. դա հասնը. նրանք գիտե՞նք նրանք մեր թաքնախորհրդի երեսը տեսե՞լ են, մանավանդ, եթե վրան լավ տեսողի լիմոնը քամած, հետն էլ մանանեխ լինի: Ո՞վ է նրանց տվել մեր ձմերուկը, որին եթե դանակի ծայրը կպցնես՝ ինքն իրեն կճաքի: նրանք իրենց կյանքի մեջ տեսե՞լ են մեր՝ շաբա մատիս հաստովսյամբ սերը... Թքեմ ես նրանց մեքենաների վրա, երբ ողջ օրը փոքս պիտի քաղցած մնա: Չէ՛, ես ինչ ասել եմ, նորից կասեմ— Ռուսիայի պես հող աչ մի աշխարհքի մեջ չկա. մեր թագավորն էլ Ռուսիայի թագավորներից օւժեղ է, մեր զորքերն էլ նրանց զորքից օւժով, մեր հողն էլ նրանց հողից պտղաբեր է: Պաշարի, այսինքն հացի, մսի, ձկան համար եթե ասես՝ մեր Ռուսիան Եվրոպայից վեր է ու վեր: Աստվածդ սիրես, մեր գյուղացին եթե գործել կամենա— հողը նրա առաջ շա՛տ— վարիք, ցանիք որքան ուժեղ ներես: Եվրոպայի հողը ինչ հորս ցավն է. նրանց գյուղացին 10—12 արշին հող ունի— այդ է ա՛հա նրա ցարեն ցանելու էլ, խոտ քաղելու էլ, իրան ապրելու էլ, տավար արածացնելու էլ տեղը. բացի գրանից սերիշ ոչինչ՝ չունի: Ասա՛ խնայեմ, մարդ ինչպե՛ս պիտի կարողանա դրանով թե՛ ինքը կուշտ լինել, թե՛ բնտանիքը կերակրել, թե թագավորի տուրքը տալ. ուրեմն տարին 12 ամիս՝ սղաբմելին քաղցած փորով պիտի մնա, էլի՛, դե՛ ինչ ես ասում, Եվրոպան շատ հեռու է մեր Ռուսիայի հետ կուլելուց. քաղցած կատկեցնենք. նրանց դեմ ի՛նչ հարկավոր է զորքով գնալ. հաց չտվիր՝ բոլորն էլ մեկ-մեկ կսատկին: Գու Ռուսիայի հետ կատակ մի անիր:

— Ավագ աղա, ես նկատում եմ, որ ինչ բանի վրա էլ հարցնում եմ, դու միշտ խոսքը կերակուրի վրա ես դարձնում. իբր թե Եվրոպան ուտելու բան չունի և խելքը-մխտքը կերակուրի վրա է Եվրոպացին, քո ասելուն նայած, ամբողջ օրը եթե քաղցած է անցկացնում, ապա ինչպե՛ս կարողացել են նրանք այսքան գետովուն, մեքենաներ, գործարաններ, ես ի՛նչ գիտեմ, այսքան օղապարիկներ, էլեկտրական լուսավորություն հնարել. Աստվածդ սիրես, քաղցած մարդը կարո՞ղ է այդքան իմաստովյան հասնել:

— Ո՞վ է ձեզ ասել Եվրոպացու այդքան գիտուն-իմաստուն եղածը. ես ամբողջ Եվրոպան շրջեցի, երբեք մեկ այնպես զարմանալու մարդի չպատահեցի, բոլորը հասարակ մարդիկ էին: Մեր տեղն էլ գալիս են նրանցից. չե՛ս տեսել սկի, որ գալիս են և ծախում մեզ մկան թակարգներ և երկաթաթիլերով շինած ամանները— ճիշտ դռանց էլ, իրանց տեղում, Եվրոպայում տեսա:

— Ուրիշ լավ մարդիկ, լավ բաներ չտեսա՞ր:

— Կա՞ր որ տեսե՞ի...

— Ապա ինչո՞ւ գնացող-տեսնողներն այնքան զո՞վում են:

— Ո՞վ է այդ զո՞վողը, ասա տեսնեմ տեսնենք:

— Ես ի՛նչ գիտեմ. գնացող-տեսնողները շա՛տ. ո՞ր մեկը տեսեմ. ահա՛ Ղազարոսը, ահա՛ Մինասը, ահա՛ Գեորգ աղան...

— Թքել եմ ես նրանց վրա, նրանք իրանց կյանքում շնորհքով բան տեսե՞լ են որ. շտեսը այդպես կլինի. ինչ նոր բան տեսնե՛ իսկույն կզարմանա: Մեր Նախիջևանը, մեր Ռոստովը, մեր Թզնասն տեսնողը Եվրոպայում զարմանալու բան կտեսնե՞ սր... Ասա խնդրեմ, ի՛նչ զարմանալու բան ես գտել Եվրոպայում— նրանց քաղցած ժողովո՞ւրդը, նրանց նեղ փողոցնե՞րը, նրանց թանկ-կրակ հա՞ցը, մի՞տը, հեղհահա՞վը:

Այլևս չկարողացա համբերել, քիչ մնաց տրաքելիս

— Հա՛ժե, Ավագ, — ասացի, — ես քեզ մի բան ասե՛մ. դու այդ Եվրոպա գնալու փոխարեն եթե Ռոստովի աբժուրեյ յաղը՛ մտնեիր, ավելի շահ կտեսնեիր և բավական կլինեիր: Քե՞զ էր մնացել Եվրոպայի պես լուսավորյալ աշխարհը իր քաղաքավարի ժողովրդովը տեսնելու. դու նրանից բան կհասկանա՞ս որ...

— Է՛, մեկ էլ ասա տեսնե՛մ. — ասաց բարկացած Փոստոխովը — քեզ ո՞վ ասաց որ Եվրոպայի ժողովուրդը քաղաքավարի է իբր թե. նրանից անամոթ, նրանից էլ երեսը պատռած, նրանից էլ լիրբ, մարդու պատիվ շիմացող ժողովուրդ կա՞ որ. մեր հասարակ գյուղացին նրանց համեմատությամբ — աղնվական է... Աստվածդ սիրես՝ լաիր. մեկ օր, ինձ համար էլել գնում եմ: Այս բանը Փարիզի մեջ եղավ: Չորս կողմս երեխաներ հավաքվեցին, այնքան ծրեխոտ, որ եթե սուտ շասեմ, հարյուր հիսուն հոգի կլինեին. երեխաներն էլ խոշոր չգիտենաս. մանր (ձեռքը գետնին մտնեցին) այսքան փոքրիկներ, ետեիցս վազում են, փեշերիցս քաշո-

Պարամոնների շուկան

տո բերում են ճնճղակի շափ դաշտային թռչուն տապակած» — «այս էլ բերասն է», — ասում են: Հետո բերում են մի գդալ շաքարոտ խլիճք — «այս էլ ժելե է», — ասում են: Ամենից վերջը բերում են այդ «պապաբուժ-մամբաստ» ապուժ խոտը, «այս էլ սալաթ է», — ասում են: Այդ եղա՞վ ցերեկվա՞ ճաշը, որի համար առեւած են 5—10 ֆրանկը: Հա՛, մոռացա՞ առե՛լ, հացից հետո էլ բերում են մատնոցի մեծությամբ զավթով, առանց կաթի սուրճ: Հետո՞, ուստիացի մարդը ինչպե՞ս կարող է կշտանալ այդ դեղ-ձանկի դաշով: Կամ-ակամ գնում էի առեւքին ծախած ճաշարանը, որ գոնե փորիս ճիճուն հանգստացնեմ: Հա՛, սուտ չէ, ճիշտ է, սեղանի վրան դիմացդ դնում են մեկ-մեկ շիշ գինի, բայց շիշը մեր շիշերի շափ չգիտենաս — այն հոֆմանիա կաթիլների շիշ չկա՞, ճիշտ նրա մեծությունով մի շիշ են տալիս քեզ. մեջի եղածը ատամներդ թրջելու բավական չէ, ի՞նչ մնաց խմելու. բայց ա՞նձեր մեծ է. «գինիով ճաշ է», — ասում են եղել: Դու մի՛ ասի՛ր՝ որ եթե նրա փոխարեն մի մեծ ամանով հասարակ կվաս որ տան՝ ավելի բավական պիտի լինեի: Գոնե մարդուս թե՛ ծարավը կկտրի, թե՛ փորը կլեցնի: Չէ՛, դու ի՞նչ ես ասում. գնա ամբողջ աշխարհը քայլիր, մեր Ռուսիայի պես տերություն գտնել չես կարող. մարդուս ափնից պետքակամ բանը թե՛ առատ և թե՛ էժան: Այդ Եվրոպայի քաղցածները կոհվ պիտի մղեն մեր ուստի հետը. վա՛յ նրանց գլխին. մեկ շաքաթ չի անցնիլ, ամենքը ձմեռվա ճանճի պես կսատկեն կոշիչանան: Մեր զինվորը, ինձ նայիր, լավ հաճարի հացը կուշտ կուտի, վրայից էլ կաշան, նրա վրայից էլ լավ կխմե թթու կվասը, հուռա կանչելով վրա կտա — մի բոպեի, մի ժամվա մեջը բոլորին թրի կառնե: Դու Ռուսիայի հետ կատակ մի՛ անիլ...

— Այն չէ՛ բայց, — ասացի — ինչպե՞ս եղավ որ դու Եվրոպա գնացիր. կարծեմ դու այնտեղ գործ չունեիր, չէ՞. ապրանք տարա՞ր, թե՞ բերիր. թե՞ որն է հանձնարարություն ունեիր:

— Ապրանք էլ չտարա, ապրանք էլ չբերի, հանձնարարություն էլ չունեի: Իմ Եվրոպա երթալս հեթաթի պես մի բան էր, բարեկամիս մեկը մի ավրված ժամացույց ուներ և որովհետեւ մեր կողմերը նրան նորոգող վարպետ չէր գտնվում, բարեկամիս խելքին փչեց տանել Եվրոպա: Ժամացույցի կոթը չկա՞ — այդ բանը ըշտե փչացել էր. մեր տեղի ժամագործները շատ վրան կտորներ գրին. այնպես որ կոթը հաստացել էր ու ներսի անիվ-

ներին նեղութուն էր տալիս. ժամացույցը Եվրոպա տարինք, այնտեղ մի լավ վարպետ գտանք, որ զգուշութեամբ ժամացույցի հաստացած կոթը բարակացրեց, ձևի բերեց:

— Բանդ-գործը թողած ինչո՞ւ ելար գնացիր. դու այստեղ պաշտոն ունեիր, չէ՞:

— Եվրոպա որ գնացի, պաշտոնս արգեն վերջացել էր. ամիսը 100 ուրլի ոռճիկ ունեի, գործս էլ շատ թեթև բան էր. քաղաքային վարչությունը խե՛ճ հրաման էր արել ժողի եզերքը կանգնելու և ջրի միջով անցնող ձկները համքելու. հեշտ արհեստ: Բայց, թշնամիներս հրապարակ ելան և ժողովրդին հավատացրին, որ դրանից քաղաքը մի կոպեկի օգուտ չունի. ինչ պետք է գուր տեղը դրամ վատնելը:

— Մովի ձուկը համրելուց առաջ ի՞նչ ծառայություն կամ արհեստ ունեիր: — Հարցրի նրան:

— Նբանից առաջ, հոգիս, այդ անկյունը չկա՞, — բամբաստանից քիչ վեր. քշտե, այնտեղ առաժոտյանից մինչև երեկոյան զանգերը՝ փանգեռա՞մ էի և անցնող-գաբձողների վրա կատարած շան պեռ հաշում:

— Այդ ի՞նչ տարօրինակ արհեստ է... ամոթ չէ՞ օրինավոր մարդուն՝ շան պարտավորություն վրան տանելը, — ասացի վարձացած և նեղացած:

— Չէ՛, հոգիս, այդպես մի գատի: Ինչպես երևում է, դու կարծես մեր քաղաքը երբեք չես ճանաչում: Այդքան հասակ առած՝ դեռ չգիտե՞ս, որ մեր տեղում հաշելը անօգուտ և ստոր արհեստ չէ: Հաշելով չէ՞ որ այսքան մարդիկ, ո՛րը ձայնավոր եղավ, ո՛րը անդամ, ո՛րը հոգաբարձու, ո՛րը նրեպոխան, ո՛րը պատվի հասավ, ո՛րը շատ ստակի տեր եղավ, ո՛րն էլ արդունավոր պաշտոն ձեռք բերեց. բոլորը հաշելուց էր: Բայց հաշելու մեջ էլ շնորհք կա: Հաշելուց չէ՞ որ մեր սափրիչ Օվանեսը թե՛ իրեն մեջքը տաքացրեց, թե՛ իրեն օգտակար բարեկամներինը. կարծում ես թե՛ իր արհեստի շնորհքն է՞ — շատ ես սխալվում: Ե՛հ հաշիլ, տանդ գրաված նատիր և տես դրանից ի՞նչ կգոյանաս: Կարչես բոլորովի: Լսե՛ր ես, մի առած կա, որ ասում է. «Իրեն անդ ժանր կեցած քարին տակեն ջուր չի վազիլ». այդպես էլ մեր բանն է. եթե շճաշես, քեզ ոչ ոք մարդու կարգը չի դնի: Դու ինչ ես ասում, հաշելու մեջ շատ բան կա: Մեկ շորս քովդ նայիր. այս ճեղք խոշոր-խոշոր տղաները բոլորն էլ իրենց փառքին և պատվին հասել են կամ հաշելով և կամ իրենց մոտիկ մարդոցը հա-

չեցնելուց: Այսօր-վաղը, գիտես արդեն, քաղաքիս մեջ ձայնավոր-ներ, անդամներ, քաղաքագլուխ և քարտուղար պիտի ընտրվի-դու մեկ նայիր, թե որքան հաշող շներ հա՛որը-հա՛որը հրապարակ պիտի ելնեն: Դու լավ հաշելը կատա՞կ ես համարում:

— Լավ, համաձայն եմ, որ մարդիկ հաշելով կամ հաշել տալով՝ տեսակ՝տեսակ օգուտներ են փնտրում և գտնում. դու ի՞նչ օգուտ ունիս դրանից:

— Ե՛ս,— ասաց քթի տակից խնդալով և աչքերը փոքրաց-նելով՝ Փոռսուխին Ավագը:

— Հա, դու,— ասի:

— Ես ի՞նչ օգուտ ունիմ.— ասաց նա նորեն.— Իմ օգուտն էլ եթե ավելի չէ ուրիշներից պակաս էլ չէ: Ախր դու մի լավ միտք արա. ես ինչ չգտնվելիք մարդ եմ, ո՞ր աղային որդին եմ, ո՞ր համալսարանն եմ ավարտել, ծոցս մի՞թե լիքն է փողով, թե՞ գեղեցկությունն ու երիտասարդությունը երեսիցս կաթում են... Բայց այսօրվա օրս, ինձ նայիր, մեր բամբասարանի ամենաառաջին անդամն եմ, քաղաքային վարչության մեջ՝ ձայնավոր և դպրոցի մեջ հոգաբարձու: Էլ ի՞նչ կուզեիր: Այս բոլորը գիտե՞ս ինչու ձեռքս ընկավ. նրա համար, որ առավոտյանից մինչև երեկո, անկյունը կանգնած, չարս կողմս էլ մի կարգ ախմախներ ժողոված, աջ ու ձախ հաշում եմ: Հա-պա, որդիս, դու ի՞նչ գիտեիր: Վարպետությանը հաշելու մեջ շատ բան կա: Դու նորից կրկնիր, կվայելի, չգիտեմ ի՞նչ՝ չգիտես ինչ: Չէ՛, հոգիս, չես հաշիլ, չես ուտիլ: Ինձ նման մեծ փորով և գայլի ախորժակով մարդուն կարելի՞ է քաղցած օրեր անցկացնել:

— Ասենք որ հաշելուց ձայնավոր և անդամ եղար. հետո, ի՞նչ շահ դրանից. կամ թե ուրիշը քեզնից ի՞նչ շահ պիտի ունենա:

— Ձայնավոր լինելս չգիտեմ ուրիշներին օգուտ ունի՞, թե ոչ, բայց ինձ մեծ օգուտ է:

— Ասա տեսնենք. ի՞նչ օգուտ ունիս:

— Օ՛, օգուտը շատ մեծ է: Այո՛, մեր քաղաքային վարչու-թյան մեջ այնպես չէ՞ որ ինձնից բացի յոթանասունմեկ ձայնավոր կա. այդ ձայնավորներից յուրաքանչյուրը անուն ունի՞, թե ոչ. անուն ունեցողը տո՞ն էլ ունի, թե ոչ. տոն ունեցողը տարվա մեջ գոնե մի անգամ ճաշ կտա՞, թե ոչ: Եղավ որ այդպես տարին յոթանասունմեկ ցերեկվա ճաշս ապահովված է և տանս մեջ ծախսելու փողը գրպանումս կմնա: Ո՛վ մարդ, ի՞նչ է քո ասածդ. Աստ-

ված մեր սուրբ հայրապետների հոգիները արքայութուն տանե, որ նրանք այդպես խելոք օրենք են մտցրել մեր մեջ: Ամեն երեկո օրացույցը բաց կանեմ, կնայեմ թե վաղը տոն կա՞, թե ոչ: Եթե մեր ծանոթների անունների տոները եղան, մեջներիցը երեք չորսը ընտրում եմ. բայց այնպիսիները, որոնք սովորութուն ունին լավ սեղան սարքելու և մյուս օրը, ժամը 11-ին— 12-ին նշանակված աղաների (օրինակ՝ Ակոբ, Մարկոս, Կարապետ) տունն եմ գնում. ներս մտած-չմտած, գաղտագողի աչքի կանցնեմ սեղանի վրա եղածները. եթե սեղանի մեջտեղը տեսա մեծ ամանով խաշած ասետրան և քիչ էլ հեռու տեսակ-տեսակ գինի-ներով շշերի բատարեյը, այն է որ այնտեղ կմտադրվեմ հաստատվելու, իբր թե շուգենալով՝ կմոտենամ թանկանոց կոնյակին, մեկ-երկու կիսեմ տոնավորի կենացը, հետո կանեմ մի ափսե, պատառաքող, դանակ, ափսեի մեջ առաջ կքամեմ լիմոնի ջուր, քիչ էլ մանանեխ ու աղ կղնեմ, կմոտենամ ասետրային, դանակով շորս մատիս հաստությամբ կկտրեմ վրայից, կքաշվեմ մի առանձին լուսամուտի առջև՝ մեջքս դեպի հյւրերը արած՝ կսկսեմ իմ բանը: Եթե առածս կտորը ֆունտուկես կամ 2 ֆունտ եղավ, այն է, որ այն օրվա հացիս փողը գրպանումս մնաց: Այդ որ վերջացրի, կերթամ կմոտենամ շշերին, որովհետև ձկան վըրա լավ գինին հարմարում է. նորից կմոտենամ տոնավորին, ինչ որ ասես օրհնութուն կանեմ, որ եկող տարի էլ Աստված ողջառողջ այդ օրին հասցնե երկուսիս էլ և կխմեմ գինին: Դրանից հետո՝ երբեմն կմոտենամ մանր զակուկաներին. այստեղ պանիրի փոքրիկ կտոր կղնեմ բերանս, այնտեղ գդալի ծայրովը մի քիչ կառնեմ խավիարից, էլի այն կողմը բողկը կթաթախեմ աղի մեջ և բերանս կղնեմ— իբր թե մանր բաներ ուտող եմ, որ մարդիկ չնկատեն թե տոն շնորհավորության անունով՝ փոքրս լեցնող եմ: Այդ օրը կերակուրի հոգը հոգացի, դրամը մնաց գրպանումս: Երբ որ այդպես, տարվա մեջ գոնե հարյուր տեղ մտնեմ-ելնեմ, ահա քեզ ձայնավոր լինելու օգուտը. էլ ի՞նչ ես ուզում: Տարվա մեջ հարյուր թանկանոց և կուշտ զակուկա իր կոնյակով և գինով— դա անօգուտ բան է: Այս մեկ: Այժմ դու ասա. տարին 2—3 անգամ թագավորական տոն, աչքալույս, պսակ չի՞ լինիլ: Է՛յ,— ըլտե, մաղթանքից հետո ձայնավորի անունով առք-փառք կերթաս քաղաքագլխի տուն (իհարկե նա էլ թագավորի պատվի համար սեղան սարքած կլինի), այնտեղից էլ խո ետ չե՞ս դառ-

նալ տուն դատարկ փորով: Այս էլ քեզ երկու Տարին 3—4 ան-
 դամ գրեցի մի իշխանավոր վամ մեծավոր չի՞ գալ բաղաքը. մեր
 հարուստ աղաներից մեկն ու մեկը նրան հաց չի՞ տալ. դու էլ
 ինձ լսիր, ձայնավոր անունով կպատահես այդ թանկանոց հա-
 շին: Այս էլ քեզ եքեր: Բաղաքային վարչախնայն ժողովի ժամա-
 նակ աղաները կոկան մի հասարակ քանի վրա վիճել, կտան-
 վասնեն և վերջ ու վերջ՝ կկտուվեն. դու մեջնեքը կմտնես, լավ
 մտքով կլինես, կհաշտեցնես. մեջտեղը երկու կողմից էլ մաղաքի
 լինում է— կեք, խում, երաժշտություն, դու էլ մեջներն ես՝ ձայ-
 նավոր անունով. Աստվածդ սիրես, քեֆ է ու... մեռնել պե՞տք է
 որ Այժմ հասկացա՞ր, թե ինչո՞ւ ես ամեն ջանք գործ եմ գնում,
 որ ձայնավոր քնարով եմ: Ինչ ասում ես, թե ինչո՞ւ անկյունը կանգ-
 նած՝ հաշում եմ Հածե՛, ոխմաք, եթե չհաշեի՞ ո՞վ ինձ ձայնա-
 վոր պիտի ընտրեր: Հուզա այն մոռացա՞ր, որ բամբասարանի
 տեղամ գինեկոցա էլ քավական շահ կա փորիս. որ տարին մի
 անգամ ժողովրդով՝ պարտիքի մեջը քեֆ ենք անում՝ այդ ոչինչ.
 դու այդ ասա, որ մեր 5—6 հարյուր անդամներից տարին 3—4-ը
 չի՞ մեռնի: Մեռելի ցանքը լսում եմ թե չէ՝ մի քանի մարդ ժո-
 զովում եմ զլխիս, շխտակ քնում մեռելի տունը, սգավորների
 խրատ ավող եմ գինում, ջրան հանգուցյալին պատիվ տվող եմ լի-
 նում. կասկե կարդացող գինում, է՛լ ըշտե, բան չունես, բամբա-
 սարանի կողմից, սուա-զորգ, բանի մեջ եմ լինում: Տնեցիք տես-
 նում են, որ հանգուցյալի շատ սրտակից բարեկամն եմ եղել, և
 հոգու-հացի, այգազքի, քառասունքի, տարեգլխի, հարցերին կան-
 ջում են ինձ: Այդ էլ թե՛ պատիվ և թե՛ փոր կշտացնելու թանկա-
 նոց դեպք: Այժմ հասկացա՞ր հաշելու զորությունը: Բայց հաշել
 կա, հաշել էլ կա: Մի քանիսը այնպես են հաշում, որ ամբողջ բա-
 զաքը իրենց թշնամի են դարձնում. այդ տեսակ հաշելը օգտակար
 չէ. Հաշելն էլ իր տեղը, հնարքներն ունի: Հաշելու ժամանակ պի-
 տի ջանաս ցույց տալու, որ իբր թե ժողովրդական օգտի համար
 ես հաշում: Այս մեկ: Մեկ էլ այնպես պիտի հաշես, որ ո՛չ հո-
 թուստների սիրտը ցավացնես, ո՛չ էլ գատարկ զրպանով մարդ-
 կանց կողմը անցած լինես...

Միթե մի քանի անխիղճանցի, մի՞թե դու գնա շես հասկացել, որ ի՞նչ
 բանի ձեռնարկես՝ բողբոջ թերատ և անշնորհք է լինում: Ինչո՞ւ
 ես գարմանում, որ թո բաղաքը տարեցտարի առաջ գնալու փո-
 խարեն ետ է զարնում: Դու ինչո՞ւ ես գարմանում: որ հերվան

գյուղից վատ մոտտովք աչտարվան օրս նախեղևանից տասն ան-
 գամ մեծ է և նրա մեջը ապրողները նախիջևանցին երկրա հարյուր
 անգամ ավելի հարուստ են: Դու ինչո՞ւ ես գարմանում, որ նա-
 խիջևանք աճելու, ծաղկելու փոխարեն՝ բանի գնում է՝ բորբոս-
 նում է, թուամում է և փչանում քո ձեռքի մեջ: Առաջ մեկ տեսնեմ,
 տարին-տասներկու ամիս դու որի՞ խեղքով ես կասավարվում—
 Փոռուխ Ավագների: Ովքե՞ր են թո բաղաքը կասավարողները—
 Փոռուխ Ավագները. ովքե՞ր են բունկո շահագործողները— Փոռ-
 սուխ Ավագները. ովքե՞ր են թուրքաբի վարչախնայն ձայնավորնե-
 րը— Փոռուխ Ավագները. ովքե՞ր են թո քաղաքի հարցադր-
 ձուները— Փոռուխ Ավագները:

Հետո՞, ի՞նչ գարմանաբու բուն կա, որ ամբողջ քաղաքը դուր-
 ձել է մի 5—6 հարյուր Փոռուխ Ավագներով ըջված աղբատեց...

ՔԱԼԱԿԱՆ ՄԵՌԵԼՆԵՐ

I

Սարգիս-աղան

Սարգիս-աղան ժամը տասի մոտերքը վերի բուլվարն էր
 եկել ու նստել ամենաառաջին նստարանին, որ տնցնող-դարձո-
 ղին ճաչի: Սարգիս-աղան, հո գիտեք, տեղիս եթե միլիոնատերը
 լիքնի, էլի ամենահարուստների շարքումն է:

Մինաս Գրիգորիչը հեռվից նրան տեսնելով, շտապ մոռե-
 ցավ, գլխարկն հանեց ու բարև տվեց:

(Մինչև օրս էլ դեռ չեմ հասկացել, թե Մինաս Գրիգորիչները
 Սարգիս-աղանի պես ժլատ, ազահ, մի կոպեկի վրա դողացող
 մարդկանց առջև ինչո՞ւ են գրոխ խոնարհում, պատիվ տալիս:
 Մի օր նրանցից լավագույնը տեսնել եմ— մեղա Աստծու: Հոչո
 ունի՞ն, որ դրանք մի օր իրենց նեղ օրին հասնին: Ամենևին ոչ
 Ազա ինչո՞ւ համար ամբողջ օրը թծնող շան նման նրանց առաջ
 ետեի թաթերին են կանգնում: Խեղք չի հասնում):

— Թարին արևիդ, — առաջ Սարգիս-աղան: Ի՞նչ կա, որ
 տեղից ես գարմա: Այսօր բաղաք ելե՞լ եիր:

— Հրամար ես, ելել էի,— ասաց Մինաս Գրիգորիչը, ձայնը փորձեց հանելով:

— Ի՞նչ կար,— հարցրեց Սարգիս-աղան:

— Ուրիշ այնպես բան չկար,— ասաց Մինաս Գրիգորիչը,— բայց շատ հնդուհավ էին բերել, գինն էլ այնքան թանկ չէր— զույգը իննսուն կոպեկի էին տալիս: Բավական առնող եղավ:

— Իհարկե կառնեն,— ասաց Սարգիս-աղան, վիզը, աղա-յավայել, մի կողմի վրա դարձնելով.— արդեն ձմեռն էլ մոտե-նում է. տոներն սկսվում են: Ոչի՞նչ, հատը քառասունհինգ կո-պեկ (այդպես չի՞ անում): Թանկ չէ... էլ ի՞նչ կար...

— Կարծեմ՝ էլ այնպես, աչքի ընկնող բան չկար... Հա՛, եր-կու սալլ եղած միս կար. կապակներն էին բերել...

— Լա՛վն էր, եղո՞տ էր,— հարցրեց Սարգիս-աղան:

— Չէ, եղոտ չէր, անպետք բան էր, բայց լավ գնով էր ծախ-վում՝ հարյուր քսանով... հա՛, ինչպե՛ս մոռացա՝ մի մեծ թառափ էին բերել...

— Թառա՞փ, այս ժամանակ... Հետո՞, ո՞վ առավ:

— Ուզողներ շատ եղան, բայց գինը թանկ լինելու համար չառան. վերջը, վերջը Եղիա-աղան զարկեց առավ:

— Քանիսո՞վ առավ...

— Առնելու ժամանակը ես հեռու էի,— ասաց Մինաս Գրի-գորիչը,— բայց հետո որ Եղիա-աղան առավ, գնացի, մոտեցա բազարնիկին (որովհետև նա մոտը կանգնած էր),— «Քանիսո՞վ տվեց» հարցրի. «վեց ու կեսով», ասաց: Այդպիսով իմացա, որ վեց ու կեսով է տվել: Ծիշտ է, մեծ ձուկ էր, բայց վեց ու կեսն էլ բավական կապիտալ է... Տոնական սեղան բաց անելու լինե՞ր՝ ուրիշ բան, բայց հասարակ օրը վեց ու կես ուրբի ձկան տալ— խելքս չի հասնում: Մի՞թե չորացնելու է: Բայց ձուկ չորացնելու ժամանակն է, որ...

— Չէ՛, դեռ ի՞նչ ձուկ չորացնել, ի՞նչ ես խոսում. այս ժա-մանակ ձուկ չորացնե՞լ կլինի, խե՞ է, ի՞նչ է: Ձուկը մայիսին, հունիսին են չորացնում: Ձկան թանկ-կրակ ժամանակը ո՞ր խեղ ձուկ կչորացնի: Միևնույն է, թե զատկի շաբաթը մատղաշ գա-ռան մօտից, երբ որ դրա ֆունտը 15—20 կոպեկ է լինում, երշիկ, ապուխտ շինել տաս... Ձուկ չորացնե՞լ, չէ՛ մի՛ հորս ցա՛վը...

Այդ պահին Փոմովի որդին մի գեղեցիկ սև ձի լծած, բոլո-րովին նոր կառքով ներքևից գալիս էր: Հագին՝ ասեղի տակից

նոր դուրս ելած վերարկու, նորածն գլխարկ, ձեռներին՝ ձեռ-նոցներ:

— Այս ո՞վ է սա,— ասաց Սարգիս-աղան, աչքերը կկոցած, կառքի ետևից նայելով և, չճանաչող ձևանալով, այնինչ շատ տե-ղով գիտե՞ր երիտասարդի ո՞վ լինելը:

— Չճանաչեցի՞ր, ի՞նչ է,— ասաց Մինաս Գրիգորիչը,— Փո-մովի տղան է:

— Ստեփա՞նը,— հարցրեց Սարգիս-աղան:

— Հա՛, Ստեփանն է,— ասաց Մինաս Գրիգորիչը, թթի տակ ծիծաղելով:

— Հա՛յ, զարմացք բան է,— ասաց Սարգիս-աղան,— դե տե՛ս, տե՛ս, Սիպիր գնալու տեղ, դրանք այստեղ պամեշչիկի քեֆ են քաշում: Դրա հայրը չէ՞ր, որ հիսուն հազարի կեղծ՝ փողերը սաղացրեց, դրանից հետո էլ բավական ժամանակ Յոդեսայի բան-տը նստեց՝ ոտքերին շղթա զարկած... Հիմա որդին կառքով է ման գալիս, հա՞... Սպասի, սպասի, տղաս, հարամ եկած փողը շատ չի դիմանա. մի օր էլ քեզ պատահոտուն շորերով ու ծոմոված կրունկով կտեսնենք... Հա՛յ ոչ ու փուչ Ստեփան: Այդ տղան աղա-խիններից վազն եկե՞լ է, թե՞ դեռ հետևերը քաշ է գալիս...

— Ո՞վ գիտե դրանց բանը,— ասաց Մինաս Գրիգորիչը ծի-ծաղելով: Անցյալները, մթնով, էլի կառք նստած մի կնոջ հետ (տեսքից երևում է, որ հայ չէր) ուղիղ դեպի վեր էին գնում, բայց չիմացա կնոջ ո՞վ լինելը... հայտնի չէ...

— Այ տղա, ես քեզ բան եմ ասում. այդպիսի խարդախ սրիկայի որդին ե՞րբ ես տեսել, որ օրինավոր մարդ լինի. դրանց բոլորի վերջը բանտն է կամ աքսորը: Աստվածդ կսիրես, տղան հա՛յ-հա՛յ 25—26 տարեկան կլինի, դեռ առևտուրի ձեռք զարկել չէ. սրանից հետո՞ պիտի այդ բամբառակը խանութ մտնի, կամ մի առևտուրի կալչի. երանի՛ շանի: Այսպես, ահա, ամբողջ օրը կառք նստած տեսակ-տեսակ անառակության ետևից պիտի ընկ-նի, մինչև որ հոր հարամ վաստակած կապիտալի տակից մտնե, վրայից ելլե: Մեղա՛ Աստծու, մեղա՛. չգիտեմ, ախպեր, խելքս բան չի կտրում: Մեկ էլ որ՝ այդ ապուշին ո՞վ իր աղջիկը կտա. ավելի լավ չի՞ լինի՞ մի քար կապեմ աղջկաս վիզը, խեղճ-ողոր-մելուն չուրը գցեմ:

Սարգիս-աղան ու Մինաս Գրիգորիչը մի քիչ էլ զրույց արին ու բաժանվեցին. մեկը գնաց դեպի վեր, մյուսը՝ ներքև:

Գեպի վեր գնացողը Սարգիս-աղան էր։ Նա ուզող գնաց շուկա, մտավաճառ Ասատուրի մոտ, որ ծառայի ձեռքով երկու հատ թոք տան ուղարկի, ասելով թե՛ իբր քրանվորներին համար է՛ս։ «Իսկ ձեզ հատա՞ր, հարցրեց մտավաճառը, միս պետք չէ՞, շատ թարմ է, իսկը կաթ»։

— Մենք այսօր խաշած թառափ և տաղակած հնդուհավ ունինք, — ասաց Սարգիս-աղան և շտապ դուրս եկավ մտավաճառի խանութից։ Տեղովը սուտ։ Թառափ նրա տունը հեշ մտած չե՛. հնդուհավ էլ այն ժամանակ կամսի, երբ զույգը հիսուն կուպեկ կլինի։ Թորթից, ձկնականջով ապուրից, աղը դրած մսից բացի, նրա ընտանիքը ստիչ բան տեսնո՞ւմ է որ։ Սարգիս-աղանի երկու հարյուր հազարը բկից առաջամից կտրած փող է։ Բայց բանը դա չէ։ Բանն այն է, որ երեք-չորս ամիս շանցած նրա տունը Փոճովից խնամաբխառ եկավ և Ստեփանի համար նրա աղջկան՝ Մարիամին ուզեց։ «Բախտը դա է», — ասին հայրն ու մայրը և Մարիամին ավին հայտնի Ստեփանին։ «Փա՛ր Ասաճու, — ասին, — ձեր զավակին հարուստ տուն գտեցինք. սրանից հետո, թե Աստված կամեցել է, մեք Մարիամը խանութի ապրուստ կունենա։ Զար լեզունեքը շատ բան են տտում, խաշխր ո՞ր հարստին չի բաժրասել։ Տղան էլ, ի՞նչ պակասություն ունի որ խեղճը. գեռ նրա վատությունը տեսած չենք։ Աստվածք կսիրես՝ ո՞ր երիտասարդը ըստհյուսիսն չի արել։ Ժամանակը կզա, կխելոքանա, մարդու ջարդ կմտնի, կուրի անդամ կզրվի, կուրի ստարչինա կզանա, ձաշվիլ կուրիանի անդամ կլինի, իրավասու կընաբվի, առ մի օր էլ, քուցե կակաթի ուսումնարանի հոգաբարձու լինի առ (ինչե՞ք չի տեսա՞ւ Աստված) մի գեղեցիկ օրդեն էլ կկախի»։

II

Գործի տեղ մարդիկ

Մի կիրակի, ի՛նչպես եղավ, կուր մտաւ ժողովուրդը ժամից գեռ նոր էր գալուս եկել։ այդ օրը պատարագ կտրե. կարծեմ թագավորական տուն էր։ Մանդուղթի կեսը գեռ չէի հասել, որ աչ կողմից շատ ուժեղ ձայներ լսեցի. աղմուկով խոստում էին և բարձր բարձր ծիծաղում։ Ազգասպառնակն էլ մատուցարաններով՝ որը թեյի բաժակներով չէր, ո՞րք գատարկ՝ կու. ու. առաջ էին վազում։

Ցերեկ էր, բայց կուրում մեծ բազմութեան կար։ Երբեմն այդպես է լինում։ Անցա թղթախաղի կողմը։

Միքիթ Յազորիչը, դիմացն էլ Յազոր Սերգեիչը՝ ծիծաղելով, աղմուկով դրույց էին անում. մյուսներն էլ ո՞րը կանգնած, ո՞րը նստած՝ լսում էին։ Զրույց անողները կանաչ սեղանի շուրջն էին նստած. զրույցի նյութը երեկ երեկոյան տեղի ունեցած թղթախաղն էր։

Միքիթ Յազորիչն ասում էր. «Չայն տվի, բայց ինքս էլ օտարիկ վարեցեմ եմ, քանի որ, ախպեր, թե փեշն տանես, ընդամենը 120 կուպեկ է, թե շառնեա, հա՛նա՛ք է, ի՞նչ է՞ տասնհինգ մանեթը պիտի հանես։ Յազոր Սերգեիչը ինք սրտիկ է հա՛նել. ետ, լա՛վ, հերթը իմն է. ես էլ դեռ եմ բարբնի թագավորը, Յազոր Սերգեիչը մեկնոցն է դնում, Սարգիս Աֆանասիչը կողքի ութնոցն է դնում սե ազոսպի տասանոցը, հանում. Յազոր Սերգեիչը վրան ադապի մեկնոցն է դնում, ես ճա՛ռք եմ անում, սրտիկի օխտնոցն եմ գնում վրան ու նորից բորբոխ հանում. Յազոր Սերգեիչը թագավորն է դնում, այն կողմից Սարգիս Աֆանասիչը կողքի իննոցով է խփում, և այսպիսով ինք սրտիկ խաղացողը մնում է առանց երկուսի, ու այդ խաղի մեջը մարդը երեւուն մանեթ տանու է տալիս, բանի որ կուպեկից էին խաղում»։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեցին շուրջը կանգնածները. Յազոր Սերգեիչը իննով՝ առանց երկուսի մնաց, հա՛, լա՛վ խաղ եք խաղացել մարդի գլխին։

— Ախպե՛ր, ես ի՞նչ իմանամ, — ասաց զվարած Յազոր Սերգեիչը, — ձեռիս մեկնոց, թագավոր...

Նա էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց աղմուկի մեջ նրա ձայնը կորավ։

— Չէ՛, աչգոփս չէ՛, — խրատում էր նրան կանգնողներից մեկը, — աչգոփսի խաղի մեջ դու ինք չարտի խաղայիր... Բայց ազմուկը դրա խոսքն էլ կիտ-կատար թողեց։

— Դու բոլորովին սրտիկ չպիտի խաղայիր, դու պիտի հայտարարեիր՝ հասարակ, առանց կողքի, սրովհետեւ Սարգիս Աֆանասիչը... Դրա խոսքն էլ ուրիշները կարեցին, ու գրանից հետո մենքն էլ ուզում էին իրենց կարծիքը հայտնել, բայց լսող չուկար. «Մեկնոց, կողքի, սրտիկի ութնոց, խաշի երկուսնոց», լրսվում էր, և մեկը մյուսի բաճկոնի կոճակից բռնած՝ պրեֆերանսի հնարքներն էր սովորեցնում։

Թղթախաղի խոսակցութիւնը վերջանալուն պես, հավաք-վածները ցրվեցին և առանձին-առանձին սեղանների առջև, երկու-երկու, երեք-երեք հոգի նստած, ամենքն իրենց խելքի ու պետքի համապատասխան սկսեցին զրուցել:

— Այդ չէ, բայց, — ասաց սեղանի առջև նստածներից մեկը, — այս ի՞նչ տարօրինակ բան է, այս տարի հնդուհավն էժանացավ, բայց բազմ ու սազը շատ թանկ են: Անցյալները երկու բաղ էի ուզում առնել, բայց յոթանասունհինգից մի կոպեկ պակասով շուկեց տալ, ես էլ վազն եկա: Ախր, բազմ ի՞նչ հորս ցավն է, որ դրա համար 70—80 կոպեկ տամ. ավելի լավ է հնդուհավ առնեմ. հնդուհավի ամենալավը, գառան-շափը, զույգը հարյուր քրսան կոպեկ է:

— Այսպես ես խոսում, բայց, — ասաց նրա հետ զրուցի բռնվողը, — բազմ բանն ուրիշ է. բազմ, այստե՞ղ նայի, լավ տապակած, հետն էլ սերկևիլի սոուս — հրաշալի նախաճաշ է...

— Է՛, իհարկե, բայց գառան տապակածն էլ վատ չէ, այն էլ փոքրը, կաղամբի թթու, շամիշ լցրած...

— Այդ էլ վատ չէ, բայց ինձ որ հարցնես, տանը պատրաստած կարկանդակը, վրան առատորեն հալած արդար յուզ ու քամած մածուն լցրած...

Երկրորդ սեղանի առջև նստածներն այսպես էին խոսում.

— Հոգիս, — ասում էր մի բավական տարեց մարդ մի ուրիշ տարեց մարդու, — դու Տարաս Արտեմիչի աղջկանը ճանաչո՞ւմ ես. ինչպե՞ս է, օժիտ ունի՞, փողի ձայն լսվո՞ւմ է:

— Չլինի՞ մտքովդ անցնում է որդուդ համար ուզել: Քավ լիցի: Արի մոտեցիր, ականջիդ ասեմ (ականջին ասում է):

— Ի՞, ճի՞շտ, — ասաց մարդը սարսափած, — մի՞թե: Ա՛յ, զարմացք է. վրան որ նայես՝ գառան պես բան է, արդեն բողկեր է ուտո՞ւմ, հա՛, այդ անզգամը:

Երեք շաբաթից այս վատ լուրեր տարածողը նույն աղջկա հոր մոտ խնամախոս է ուղարկում ու օժիտից բացի, չորս հազար կանխիկ փողն էլ հետը՝ առնում է իր որդու համար:

Ֆադեյ Կարպիչ

Ֆադեյ Կարպիչին ճանաչո՞ւմ եք. այդ շեկ-շեկ մազերով, կարմիր-կարմիր թշերով, միշտ խնդումերես մարդուն: Ինչպե՞ս չեք ճանաչում Ֆադեյ Կարպիչին. նա շճանաչելու մա՞րդ է որո՞նա, որ ամենքի հետ անուշ երեսով զրուցում է, միշտ լավ-լավ խաբարներ է տալիս իրեն բան հարցնողին: Մաշալլա՞՝ ձեզի, ախպե՞ր, մի՞թե Ֆադեյ Կարպիչին չեք ճանաչում. նրա մասին ասում են, որ այստեղ կամ Ռոստովի գետափը, չգիտեմ՝ կղմինդրո՞վ, թե՞ աղյուսով, թե՞ թիթեղով պիտի ծածկե. կարծյոք սև ձի էլ պիտի ունենա, քանի որ նրան միշտ տեսնում եմ կամ հասարակ կամ փակ կառքով՝ սև ձի լծած:

Դեռ մեկ ուրիշ, ուշադրության արժանի բան էլ ունի Ֆադեյ Կարպիչը: Ամեն աստուծու օր կլուր կգա և, անպատճառ — մեկ կամ երկու ձեռք թուղթ չխաղացած՝ չի գնա: Եվ այնպիսի էլ բնութք ունի, որ մարդու քեֆը զալիս է: Ֆադեյ Կարպիչը միշտ տանում է. բայց մինչև այսօր էլ դեռ մեկը նկատած չէ, որ նա վարպետ խաղացող է. ժամանցի համար թուղթի նստողներից չէ. տարած փողը մի այնպիսի հնարքով է քսակը դնում, որ տարվողն իսկ կխաբվի ու կկարծի, թե նա էլ իրեն պես դատարկվել է: Մարդ տեսած չեմ, որ Ֆադեյ Կարպիչի հետ վինթ կամ պրեֆերանս խաղացած չլինի. մարդ տեսած չեմ, որ Ֆադեյ Կարպիչը նրան տարած չլինի: Բայց մի տե՛ս մեկը նրան լեզվի տակը առե՞լ է, մեկը նրան բամբասե՞լ է. մեկը նկատե՞լ է, որ Ֆադեյ Կարպիչն իր առուտուրից ավելի մեր կլուրի ապուշներից շահ ունի:

Ֆադեյ Կարպիչն այնպիսի ձեռքով է կլուրի հանդերձարանը մտնում և, վրայի վերարկուն կամ մուշտակն հանած ժամանակը դեմքին այնպիսի արտահայտություն է առիս, որ տեսնողը կկարծի, թե այս մարդը հեշ թուղթ խաղացող չէ. թե կլուր էլ եկել է՝ մի շատ կարևոր առևտրական գործի համար է եկել, որ իրեն հարկավոր մարդու հետ տեսնվի, վերջացնի թե չէ՝ շտապով տուն պիտի գնա: Երբ որ տուն գնալու էլ լինի, այնպես շտապով կվազե դեպի վար և վերարկուն կհագնի, որ կկարծես թե մի առևտրական մարդ է եկել, հետեից մարդ են ուղարկել և նրան են սպասում:

Երբ որ Ֆադեյ Կարպիչը թղթախաղի սենյակն է մտնում, ըսպասավորներն անգամ մտքներով չեն անցկացնում, թե նա հատ-

կայես թուղթ խաղալու համար է եկել: Բայց Յաղեյ Կարպիշի վարվեցող բնութքի համար նրան ձեռք-ձեռք են քաշում, ամեն-քրն ուզում են նրա կողքը նստել: Եղած բան չէ, որ Յաղեյ Կարպիշը կուրբ գա և մեկ-երկու ձեռք շխաղացած ետ գնա: Լսված բան չէ, որ Յաղեյ Կարպիշը ասած լինի. «Դե, արիք մի ձեռք սկսենք»: Ամեն թուղթ խաղացողի համար մեծ բախտ է Յաղեյ Կարպիշի հետ թղթախաղի նստելը:

Յաղեյ Կարպիշն այսպիսի մի սկզբունք էլ ունի. թուղթը խաղաց, վերջացրեց թե չէ, տեղից վեր կկենա, ձեռքերը անդրավարտիքի գրպանները դրած, մի-երկու պտուլտ կանի սենյակի մեջ ու կնայի՝ արդյոք մի ձեռք էլ խաղալու մարդ կա, թե ոչ. երբ լինի՝ շտապով մեջները կմտնե՝ նազեր ծախելեն. իսկ երբ չկա, այնպես շտապով տուն կվազե, որ տեսնողը կհարծե, թե այդ մարդը հե՛շ պարապ ժամանակ չունի, օրվան քսանչորս ժամն էլ հարկավոր գործերի մեջ է: Յաղեյ Կարպիշը երբեք զրույցի մեջ չի մտնում: Այս տարիքիս եմ հասել. դեռ լսած չկամ, թե այս կամ այն բանի մասին ես ի՞նչ կարծիք ունի: Բայց նա դումայի ժողովի ժամանակ իրավասունների մեջ, այնպես խելոք-խելոք լուռ մնալ, խնդալ կամ դիմախաղ անել գիտե, որ իսկույն մտքիդ մեջ ասում ես. «Յաղեյ Կարպիշը որ ժողովից բացակայեք, ո՛ր մի հարց վճռվելու չէ, ո՛չ մի արձանագրություն կազմվելու չէք»:

Զարմանալի դիվանագետ է մեր Յաղեյ Կարպիշը: Ինչպես գիտեք, երբեմն-երբեմն, մեզանից մեկը կամ մյուսը գրպանից ստորագրության թերթիկ է հանում և սկսում է փող հավաքել՝ կա՛մ մի հաչ օրաթերթի, կամ պանդխտի, կա՛մ մի խեղճ աշակերտի հագուստի, կա՛մ մի աղքատ ուսանողի ապրուստի և կա՛մ մի ուրիշ բարեգործական նպատակի համար. այդպիսի թղթերի տակ հե՛շ տեսե՛լ եք մեր Յաղեյ Կարպիշի անունը: Մեղա՛ Աստծու: Այդպիսի բարեգործական նպատակով փող ժողովողներից խույս է տալիս Յաղեյ Կարպիշը: Գիտե՞ս որ հիմա այստեղ էր նա. բայց թուղթն ստորագրելու ժամանակ, հենց հերթը հասնում է նրան, տեսար՝ չբացել, անհետացել էր մեր դիվանագետ Յաղեյ Կարպիշը, վեր, վար, դես, դեն՝ չկա ու չկա՛: Յաղեյ Կարպիշու. «С пол минуты как ушли-с».— կպատասխանի ծառան, երբ որ մարդ դրկես, հարցնես:

Այդ այդպես է, բայց երբ Յաղեյ Կարպիշի ձիծաղկոտ, բարի, անուշ երեսին նայես, այնպես կհարծես, թե՛ նախիզանի բոլոր

բարի արծեքը կատարվում են Յաղեյ Կարպիշի գրպանի հաշվին: մեր օխալը ժամերի ցանձանակները լցվում են նրա փողով, մեր բազալքի բաշտը ազքատեները ապրում են նրա տված ողորմությունով: Թե որ անկեղանոց կամ ազքատանոց է շինվում, նույնիսկ այդ էլ, կարծում ես, թե Յաղեյ Կարպիշն է շինում իր հաշվին:

IV

Ամուսնը ու թագում

Երեք կառք են անցնում իրար ետևից:

Առաջինի մեջ ետատած են երկու տարեց կին: Թե՛կի ձեռներին, թավշյա կարմիր վերնազգեստի մեջ փաթաթած, ինչ-որ բան կա: Պարզ երևում է, որ եկեղեցուց նոր կնքած երկուսն են տանում՝ հետևի երկու կառքերի մեջ դարձյալ երկու կին են նստած, բայց ավելի երիտասարդ: Գրանք էլ, պարզ երևում է, որ երկուսի հոբաբույրները կամ մտաբաբույրներն են:

Ասել է՝ մի մարդ է աշխարհ եկել. բայց ո՛վ է նա՝ չենք տգում գիտենալ:



Հեռվում, համարյա շորա-հինգ փողոց հեռու, տերտերներ, տիրացուներ և բազմականին մեծ բազմություն, բոլորը գլխաբաց, դեպի դաշտ են գնում, և, կարծես թե մի ինչ-որ բան են տանում: Ա՛յդ էլ իմացանք. պարզ երևում է, որ մեծել են տանում թաղելու (Աստված ողորմի հոգուն): Բայց ո՛վ է այդ մեծողը՝ դարձյալ չենք ուզում գիտենալ:

Ինչո՞ւ չենք ուզում գիտենալ, ինչո՞ւ մեկի աշխարհ գիլով չենք տրափանում, մյուսի էլ՝ աշխարհից հեռանալուն չենք արտմում. ամոթ չէ՞ մեզ: Ինչո՞ւ չենք ուզում գիտենալ, որ մի նոր քաղաքացի աշխարհ է եկել, մեկ ուրիշն էլ աշխարհից ձշել է...

Այս ի՞նչ անհոգի, անխղճմտանք, անտոհմ, անհաճատ մարդիկ ենք մենք: Այնպես չէ՞: Քէ՛, այդպես չէ. որովհետև ի՞նչ շահ ենք տեսել, տեսնում ենք կամ պիտի տեսնենք այս ԴՕՕՐ հոգուց, որ մեր աչքի առջև կան, ո՛րը հարուստ, ո՛րը իբր թե աշխատավոր, ո՛րը լավ մազուրկա պարող, ո՛րը տարին տասներկու ամիս բամբասարանի անկյունը կանգնող, ո՛րը ջահել որբևայրի, ո՛րը մեծ օժիտով աղքիկ, ո՛րը լրագրի միայն նկարները տեսնելու համար կուր եկող, որը չհասկացած բանի վրա միշտ դատողություն

ու զրույց անող, ես ի՞նչ իմանամ, մարդ-անասունների մի ամբողջ նախիր: Գրա համար էլ ասում եմ՝ սրանցից ի՞նչ շահ տեսանք, որ այդ նոր աշխարհ եկածից տեսնենք. կամ ի՞նչ շահ ենք տեսել այդ դիակից, որին տանողները բոլորն էլ քայլող դիակներ են:

Գիտեմ, շատ տեղյակ գիտեմ, որ դու ասածիս չես հավատում, դու կարծում ես, թե ես սուտ եմ ասում, թե ես բամբասում եմ և՛ նոր աշխարհ եկած այդ խեղճ-երեխին, և՛ աշխարհիցս հեռացած այդ ողորմելուն և թե՛ մնացած 7000 հոգուն:

Թե որ այդպես է, ախպեր, ականջդ բա՛ց արա և լսի ասելիքս:

Այդ փոքրիկ երեխան (որին հիմա եկեղեցուց տուն են տանում) մեկ տարի թող մոր ծիծը ուտե, դրանից հետո էլ մեկ-երկու տարի թող սողա ու քաշ գա տան կեղտոտ գետնի վրա և բակի ու փողոցի ցեխերի մեջ: Գրանից հետո էլ մինչև ութ տարեկան հասակը, պատառոտուն շորերով, գլուխը բաց, ոտաբոբիկ թող վազվզե՛ մերթ օդապարիկ բաց թողնելով, մերթ էլ՝ վեզ խազալով: Այդ տղան հետո պիտի սովորի շուկա գնալ՝ միս ու հաց գնելու, և շուկայում ծախսելիք փողերից մնացած (կամ գողացած) մեկ-երկու կոպեկով իր համար պիտի գնե սալոր ու ծամելով տուն պիտի գա: Երբ ճամփի վրա կով կամ շուն, կամ հավեր հանդիպեն, այդ տղան իր սուրբ պարտավորությունը չի՞ համարի գետնեն քար վերցնել ու նրանց մի լավ քարկոծել:

Մի քանի ամսից, հատկապես օգոստոսի 16-ին, երեխայի հայրը կամ մայրը տան տերտերից ծննդյան վկայական կվերցնեն, տիրացուին էլ մի խնդիր գրել կտա, երեխայի ձեռից կրոնն (նախ երեխայի հագի լավ, նոր շորերը կհանն, ինքն էլ պատառոտուն շորեր կհագնի, որ չքավոր, խղճալի երևան, որպեսզի վարժապետին վարձ չտան) ու կտանի կա՛մ Գալուստ Զարբխյանին, կա՛մ Ռափայել Պատկանյանին: Եներին, կատուններին, կովերին, հավերին քար նետողը մտնում է վարժատուն և իր շնորհքը սկսում է դասընկերների վրա ցույց տալ: Պատկանյանը և Զարբխյանը գանգատվում են, որ տղան չար է, անհնազանդ է, ծուլ է, բութ է, ուսման սեր չունի, խելքն ու միտքը միշտ խաղի է, շարության է. պետք է նրան վարժարանից հեռացնել, որ ուրիշներն էլ նրան չնմանվեն. երեխայի հայրն ու մայրը, ազգականներն ու բարեկամները կթափվեն Պատկանյանի և Զարբխյանի վրա ու կսկսեն իրենց գանգատները, թե նրանք իրենց ծագիկ որ՝

դուն բան չեն սովորեցնում, հոգ չեն տանում, գլուխը խելք ու իմաստություն չեն մտցնում, նրա՛նց պետք է հեռացնել վարժարաններից և փոխարենը ուրիշներին բերել-դնել և այլն, և այլն: Այսպես կանցնի 3—4 տարի: Այս ասածիս մեջ սուտ կա՞:

Երբ որ տղան վեց հատ ընթերցարան պատառոտե ու 4—5 հարյուր թաբաղա թուղթ փչացնե ու կոկոմալով կարդա և ճանճի թանաքոտ ոտներով կեղտոտած թղթի նման գրել սովորի, հայրն ու մայրը կվերցնեն նրան և վաճառականի խանութը աշակերտ կտան: Խանութում տղան վաճառականից նախ և առաջ սուտ խոսել ու հաճախորդին խաբել կսովորի. ապա այդ նույն շնորհքը կթափե իր տիրոջ՝ վաճառականի վրա: Թե որ անշնորհք է՝ հո՛ կրոնվի, նախատինք ու ծեծ կերած խանութից կվռնզվի. կգնա կամ սայլապան կլինի, կամ բեռնակիր. եթե աչքաբաց է, և հնարքները լավ կսովորի՝ մարդ կդառնա, այսինքն, ուզում եմ ասել՝ կդառնա կա՛մ Սարգիս-աղա, կա՛մ Փոմոլի Ստեփան, կա՛մ Միքիթ Յազոուիչ, կա՛մ Յակոբ Սերգեիչ, կամ Ֆադեյ Կարպիչ, կամ մեկ ուրիշ այս տեսակ աղա, որոնց դեմքը, անշուշտ, մի օր ցույց կտամ:

Այստեղ էլ սուտ բան կա՞:

Հետո՞, ասացեք՝ այդ նոր աշխարհ եկած երեխայի համար ինչո՞ւ պիտի ուրախանանք, կամ՝ դազաղով դեպի գերեզմանատուն տարած մեռելի վրա ինչո՞ւ պիտի տրտմինք:

Բոլորը մեկ չէ՛, ի՞նչ է. մեկը մեռել է, մյուսը՝ մեռելցու, մենք բոլոր 7000 հոգիս էլ քայլող դիակներ ենք: Այս էլ սուտ չէ՞ հո:

Չէ՛, սիրելիներս, այսպիսի մարդկանց ձեռքով էյֆելյան աշտարակ չի՛ շինվի:

ԲԱՐԵՎԱԳՐԵՐ

Սեփանմփերի ի 26 և 1874 ամի.

Փաշեհնի՛ Սերկի Յաֆալիչ.

ու է Սազաբել զոզին մեր:

Հայրս Օրս Պապուկին որդին Թորոսը, որ է Թառաս Փավլիչը, ուղարկեց մեզ ձեր բարեակրին, որ ի Մոսկոֆից գրել էիք և կամ իմացանք ձեր առվողջությունն և դամննայն սաղ-սալա֊աթ, ամեն, հանուն Աստծո:

Почтенный — հարգելի

Եվ կամ կցանկանանք զմեր կողմանե որպիսութեանն հարցանիլ կամք Տն. մենք ամենքս՝ զմամադ և ըզՎանես աղագ, զՄուպուկ ճիճադ՝ իր կողակիցն միասին և ըզԼղսափերթ ու զՄայրամ բուրերդ և ըզՎակիմ էմճեդ՝ զՍիմոն աղա՝ մեր աջ կողմի դրացին, զԲիրբոր աղա, որ է այժ-հեծնողի Քիրբորթ — մեր ձախ կողմի դրացին և կամ նրա տիկինը՝ Կեռճանի քայրք: Մայրամը և կամ ձեր Մկրտիչ տեր-պատարաչա ամենն կամք և մնանք ողջ և առվողջ և ձեզ գոհությամբ, հրամանացր որպիսութեանն են հարցնում և կամ ամեն հանդիպողներին բարի անունդ են հիշում և զամենայն բարեմախթություն, ամեն:

Փաշթեննի Սերկեի Յաքովիչ, նմանապես զհայրական օրհնութեանն եմ զրկում զձեզ ամեն աղոթութե և կամ քարեխոսութեամբ զսուրբ Մինասն զձեզ սաղ-սալամաթ տեղս հասցնի, մամագ էլ խոստմունք է աքիլ սուրբ Կարապետի և Մայրամի սուրբ պատկերին բռպիկ ու ոտքով և կամ մի հարա գառ մատաղ. Աստված ընդունելի արասցե, ամեն: Հայսմ հետե հայտնում եմ ձեզ, որ մեր ըզԼղսափերթին խնամի եկավ, բայց տղան, երեխ, շատ անշահ փեսացու է, հարած-վարածի մեկն է, թաքուն ասաց խնամին, աման Ըղսափերթի ականջը չհասնի-բայց ի՞նչ պիտի անես. քաղաքս մի տեսակ է դարձե. փեսացուների սակավության ենք հանդիպել. կարող է, խեղճի երեք ջրին Աստված կողորմա ու ամուսնանալուց հետո կարգի կգա, թե չէ այսպես որ մնալու լինի, վատ բան է, ամբողջ օրք թու հարցած, պանդակից օտքը դուրս շի դնում, ասաց էլի այն խնամին. Ասենք թե՛ հե՛շ, որա ձեք գտնելը հեշտ է, բայց դու արի տե՛ս, ոք շատ փող է ուզում, մենք, բաժինքից բացի, հարյուր հիսուն տալու համաձայնվեցինք — առեալ զձեռս Եվայի ասելու ըզպեին, թե չէ ո՞վ գիտե, փող առնող ու փախչողներն էլ շատ են, բայց շան ցղանձը երկու հարյուրների անուն է տալիս — դա մի քիչ հարմար չի: Մեր տվածին որ համաձայնվեր, կարելի է բարիկենդաններին խեղճին ձուր փա կղնեիք ու գաղտնիքը մեջտեղ դուրս չէր գա, թե՛ չէ, պատարաստ, բերնիցդ խոսք դուրս չգա — ուժե գոտին սկսել է կարճ գալ, բողբոջիք խաչատուրի կայնենք, կնստենք մի կողմ: Ինչ էլ

1. Հորաբայր:
2. Հորեղբայր:

ար չինի, գրա ճարը պիտի գտնվի: Ըղսափերթին իրեն որ հարցնես, ողորմած հագին դեռ մաքից դուրս չի՝ նկել, ամբողջ օրը ալքը արցունքից չի ցամաքում, ինքն էլ, ողորմեկին, մի չոր կակաչ է կարել:

Իհարկե, ո՞վ է ասում, ողորմած հոգի իվանուշը, այս անպետքի հասար չէր, բայց ի՞նչ անես, որ Աստծու կամքը այդպես է ձեզել. էն էլ առենք, դրանց ո՞վ է գոտի դրել իրենց-իրենց, առանց մուղիքի, առանց մամ առ օրենքի հարսանիք կատարեն ու կտուրենրում, նկուղներում, արտաքենացի ա դարպասի մտաերի, շների պես փրար կողջեն. ասն չգիտեի՞ն, սրիկաները, որ որտեղ եղկուար լինեն, այնտեղ երբորգը մեջտեղ գալու կգա ու կգա: Դե՛, թող չիզեն:

Մայրամն էլ շատ վարգինը չէ, գիտե՛ս: Անցյալ օրը, իրիկվա կազմ հարամ սատկածը իբր թե ճեկարը շոգ է», փողոցից ներս չի գալիս. արքեն վեադիչեր էր «Փնամ տեսնեմ ի՞նչ է անում», — ասի. մայրն էլ, հիմարը, «ի՞նչ պիտի անի, իբր, հովանում է էլի»: Դունից պատշգամբ դուրս եկա «Մայրամ» կանչեցի «Մայրամ» կանչեցի, ձայն չկա, երբորդ անգամ, էլի ամուր «Մայրամ» ասի, տեսնեմ, ի՞նչ տեսնեմ, մի ազդիտակ բան, սկզբում ես շուն կարծեցի, կամացուկ դեպի պատն է դնում ու թեկ էլ պատից հարեանի բակը լոք է տալիս ա շքանում. մեր ծաղիկն էլ պատկած տեղից դեռ նոր վեր է կենում ու ձեռքով, ձեռքով փլաթին է թափ առախ, ջտկում... պարզ չի՞, դա էլ, ո՞վ գիտի որ շան լակատի հետ սկսել է... Այսօր-վաղը դրա շարշարանքն էլ պիտի բաշենք: Աստված ավելի բեթարից ազատի:

Շատ է վատացել քաղաքներս: Ճիշտ է եղել հին խոսքը, թե՛ «Լղջիկը տասնվեց տարու որ եղավ, կամ սև հողը դի՛ր, կամ ամուսնու ծոցը»: Հիմա, ես ինքս ինձ միտք եմ անում գոնե այդ դանջը Մայրամի հավանածը մի շենքով երիտասարդ տղա լինի. պսակից հետո՝ ջահելովթուն է, կատենք, բան է, կասենք, կատակի կվերաթենք, Կժհոտարենք միտոսցվի կգնա, իսկ փառապան-մանապան, ռուս փլոթնիկ, կամ զվոշիք-արաբաջի որ լինի՞ մենք մեր գլուխը ո՞ր բարին, պատին խփենք այն ժամանակ... Աստված հասնի, չգիտեմ, փեղքս բան չի հասնում...

Մենք էլ էինք երիտասարդ, մեղք, բան արել նեք, չեմ ասում չենք արել. բայց այդքան երեսներս պատուած չէր, մեղայաստծո՛ւս խոսքի վրա, մենք էլ մամայիդ հետ, մեղքս ի՞նչ պահեմ,

պսակից առաջ մեր հաշիվը տեսել էինք, ճիշտն ասած, դժվար բան է լրիվ մի տարի հարս ու փեսա մնալը, բայց այնպես գաղտուկ, այնպես ամոթով, այնպես առաջ ու ետև նայելով, որ մինչև մեր բերանով (հարսանիքներիցս շատ հետո) սկեսուրիս, սկեսուրարիս որ շասեինք, հեշ իմանալու չէին: Բայց, հիմիկվա ժամանակ աղջիկներն իրենց սիրողներին այնքան որ պապայի, մամայի պառկած սփալին շեն բերում ու ճրագը դեռ չհանգցրած... շեն լինում: Աստված պահի, շարից, փորձանքից, ամեն:

է՛յ, Սերկեի Յաքովիչ, եթե կամք ունենաս, երկու դանջղների համար մի-մի թեթև փլաթիցու ու մի-մի միջակ շլափա առնես բերես, գուցե խենթուկիկ, ցածր դասի երիտասարդներ, սնանկացած ու խանութը փակած վաճառականների սպասավորներ, աշակերտներ ցրած վարժապետներ, դրսեցի, արհեստի չկպած քամի... ներ այսպիսի երիտասարդները շատ շուտ են կարթի ընկնում, որովհետև 100—150 մանեթի համար լոք-լոք են անում, հետն էլ մի պառոշնա որ լինի, այդ միամիտներին դրանից էլ ավելի էլ ի՞նչ բախտ է պետք որ...

Մենք էլ, միայն թե ժամը մտցնենք ու ժամից սալամաթ դուրս հանենք, մյուս օրը տղան ֆլան սախաթության համար որ ձայն հանի, մի չեթվեռանոց էլ քթին կգնենք, եղավ գնաց պարտապանաց, դրանից հետո ի՞նչ լինելու է թող լինի: էն խաշը, դժվար բան է տանդ աղջիկ զավակ ունենալը. հա տունդ աղջիկ ես ունեցել, հա խանութդ պոք ապրանք, գիշեր-ցերեկ միտք պիտի անես մեկնումեկի գլխին փաթաթել:

էհ, ինչ էլ որ լինի, Աստված բուրբիս վերջը բարի անի՝ Ամեն: Կամ և մնամ խոնարհ հայր քո էզեկ խուրմայիլովս.

ԲԱՐԵՎԱԳԻՐ

2 օգոստոսի թվին, 1875-ին ու ի խառնովա Առաժանապատյալ Եփրատեյա Առքյումովնայիդ, ծանիր:

Նվ հայտնեմ զցեզ մեր որպիսությունն, թոյիս¹ մենք ողջ և առվողջ հասանք խառքովա, որ ի խոթիի համար, այսինքն ճուհայի և ուզնի թոթո ապրանքի:

То-ссть — այսինքն:

Մեր բեհի իրիկունը ես բարի հրամանոց խոստացել էի, այսինքն ապեշշանի էի տվել մի թանգնոց սյուտփրիդ. զայն գրաբերիս ձեռքը տվի մի թանգնոց ֆեռմալ¹ ու մի հատ էլ տիադեմ². քուպ-բալին բարի վայելք և կամ առաջին կլյանսինն, կամ քատոիլը մեզ հետ կպարեք, թոյիս անկաժիռավաթ:

Խառքովա կմնանք ամենաշատը յոթ օր. այնտեղից ուղիղ Մոսկոֆ կգնանք՝ Զ-ից վեքսիլներ գնելու, որ մեկ էլ չհամարձակվի իր շեկք-ձկանը հրամանոցից մոզնի թյունիք հագցնելու: Ես նրանց կսովորեցնեմ ով եղածս:

Զայս բարեագիրս գաղտուկ հրամանոց կհանձնի մեր Մուպուկը և կամ հրամանքդ էլ գաղտուկ նրան կհանձնես դարձը. զգուշ, մարդ չիմանա. ինչպես որ ուսանների մեջ կարդացել ենք, որ ի մատենադարան, այնպես էլ մեր մեջ թող լինի, թե չէ փաշ-թալիոնի բերած տվածը, վսե ուզնա, վերջին արաբաջին էլ կբերի կտա: Ես մի քիչ փառուսքի վարժված եմ, հարսի հետը գաղտուկ շարժվելը և կամ բարեագիրը հիմա— այժմ ամենամոտնի բանն է:

Մնամ խոնարհ ծառա Մրապիոն ձիվեկեկովս.

Ի Նոր Քաշևան, ավիուսքի 9, 1875, Քրիստոսի.
Առ ամենապատվելի Սեմեն Փավլովիչ, ծանիր:

Հայտնում եմ հրամանոցդ, որ Մուպուկը, թոյիս Ուսթիան Փավլովնան, հանձնեց մեզ ֆեռմալը, հետը տիատեմ, հետը բարեագիրդ. հիմա ես հաստատ իմացա, որ հրամանքդ մեզ հավանել ես, ես գաղտուկ ցույց տվի Մուպուկին, մամայիս, պապայիս և մի քանի ուրիշ մարդկանց, բայց բերաններից երդում առա, որ մարդու բան չասեն, մեր մեջը գաղտուկ մնա, դրա համար դու միամիտ եղիր: Եթե ինձ էլ ավելի ես սիրում, անպայման Քամպովից փառա ոխաք³ բերել տաս, գույնն էլ կապույտ լինի, սահակի փեշերն էլ արջի մորթի, թե չէ երեսիդ շեմ նայի: Ես պապայիդ սալակովը զբոսանք շեմ անի. մահա տեսնեմ, եթե այս խնդիրքս անտես անես: Ասածս որ կատարես, այն իրիկվա պես

¹ Ֆեռմուար— մանյակի թանկագին ճարմանդ:

² Դիադեմա— թանկագին քարերից պատրաստված գլխազարդ:

³ Մի գույք ձի:

պատշգամբ դուրս եկողս կլինեն (վր՝ ձյունը գլխիս, ամս՝ բան) գազտուկ գրկվել յւ պաքնել կտամ ինչքան սիրող կամենա, թե չէ...

Հա՛, քիչ մնաց պիտի մտանայի, երեկ չէ անցյալ օրը երեկոյան կողմ միջնադին մեզ խնամի եկավ տեր Սարգիսը, բեհը ետ արեք, իբր. Պելպեքովի միջնեկ սքգին, իբր, Հոտոսիմային ուժեղ սիրահարվել է: Պապաս-մամաս մազ մնաց պիտի համաձայնվեն, բայց ես իմ կողմից մեծ խոստումներ չտվի: Երևի Պելպեքովները ձեզնից հարուստ են: Տեսնենք այն զուգ կապույտ ձիերի ու արջի մտքով սահնակի քանք ինչպես կցինի: Արը որ բախտն է, Աստված այն կատարի:

Յգոտասի 15 քվին, 1875-ին որ ի Մոսկոֆ. Առ արեւնարժանապատվելուի նֆրամեյա Առքեմովնայիդ.

Մանի՛ր:

Հայտնում եմ, ձեր բարեկազիբը ստացանք և կամ ուրախությունով կանենք, ինչպես որ կամք է հրամանոցդ: Լավ որ շուտ հասավ ձեռքս, թե չէ երկու ժամ էլի որ սշտաբար մեզ մոտի եղած դրամը Մառոզովին պիտի տանեիք տայինք վեքսիլի ժամկետին: Հիմա այժմ գնացինք, շորս ամսվա աթոռոջա վեքսիլը փոխեցինք. հազար ութը հարյուր մանեթ սխաբների համար թամպով փոփոխովատիթ՝ արինք, օխտը հարյուր էլ այտեզ— Մոսկոֆ տրվինք ու հրամանոց հավանած սահնակից մի հատ առանք— տակը կես անիվ, վրան արջի մորթի, փնքը լեսոսների² վրա— բոլորը նոր: Կողպեթլընի կարապետի սահնակին չի պիշի: Չնայիթ՝ ումանի նմանազուսյամբ, մի համբույր ենք գրում հրամանոց վրա մեր դաֆթարի մեջ մուծ պատշգամբում, գազտուկս Ալլես զայս գրաբերիս հանձնեցինք մի խաս զոմաջի փլաթի կտտեան ձեռքով վեշիֆթա, զգինն աքոտ շորս հարյուր ասուրի փող: Չայս փատառքիս համար էլ մի ուրիշ համբույր մուծ պատշգամբի մեջը, ինչպես որ գիտես. այժմ այդ մեղք չի հաշվում, նրա համար որ, ֆսե-նավնո այսօր չէ վաղը մենք հրամանոց ամուսինն ենք: Եվ կամ

¹ Препроводить — փոխադրել:

² Ресор.

ամեն նեժնի պառագովաննի ժենիխնեվեսթաե սիշաս այդ բանը անուտ են Մոսկոֆի մեջը՝ ումանի ֆատոնի համար: Աստված կամենա, եթե նախիջեան եկանք ես Պելպեքովի հատանելիբը տեղը կղնեն, որ մեկ էլ ուրիշի պարանքի վրա աչք շտնկի:

Մնամ խոնարհ ծառա Արապիոն ճիվկեցեկովս.

Ի նաք Քաչեան Տոնի վրա, ավուստի 23, 1875 Քրիստոսի. Առ արժանապատվելի Սեմեն Փավլովիչ, ծանի՛ր.

Հայտնում եմ, զումաշի փրաթին տեսանք, բայց չենք հագներու, որովհետեւ Սքաշովի հարար սրտնից երկու շաբաթ առաջ ուղիղ վիեննայից բերել է ավել զոմաշի փլաթիցու, աքոտ հինգ-հարյուր մանեթի: Սիրտս շատ ցավեց հրամանոցիցդ, այսօր ամբողջ օրը աչքս արտատուրից չի ցամաքել, ամբողջ օրը անիծել եմ քեզ այնպիսի խայտառակութեան համար: Ոչ թե համբույր, հոտանել չեմ տա երես. դու դեռ, վա՛յ գլխիս, ուրիշ բաների վրա ես աչք դրել, մատաղի անուտ ես լսել, բայց ո՞ր ժամի զոանը բաժանած լինելը չգիտես. հոգիդ կաթով շա՛ց է ուղում... երեի մին ու սահնակի էլ անպետք բաներ պիտի լինեն... թյո՛ւֆ, թյո՛ւֆ, ինչո՞ւ այն օրը Պելպեքովի որդուն աչքաթող արի. ես հաստատ գրում, որ նա ինձ համար մի քանի ժանգոտած կուպեկ չէր խնայի... Չայս դրված փրաթիցուր ինչպես որ ծալած փաթաթած զրբի էիք, աչքս ել ծալած մնացել է- կրտս կվերցնես ու մի տոֆյանքայի՛, կամ հառնաշնայի երես տեսնեա դին փեշքեղ կանես. մեր քուլպ-պալի սովորությամբ այդպիսի փլաթիները արտաքինների որբեկայրիների վրա է լինում... Եթե ասմանի ձեռով համբույր ու մյուս մողեի ֆատոնները մտքիցդ հանի. այն ուրիշ ջանկների համար պահած իմացիր:

(Ա՛ն քեզ).

Սեկեմփերի 2, 1875-ին, որ ի Մոսկոֆ. Առ արժանասիրելի և բազմասրտյալ նֆրատեյա Առքյամովնայիդ: Մանի՛ր:

Ձիտնարհաբար հայտնում եմ: Աթե փրաթին չհաղանեցիր՝ առ ու փեշը գցի. մեզ համար այն, ֆսե ումնո, մի սկուտեղ սոխի

¹ Կատարարի կին:

կճեպ է. այդ դատարկ բանի համար զաշե՛մ սիրտդ ցավացնում
ես որ. փամիրլյ. մենք ե՞րբ ենք ասել, թե փող ենք խնայում:
Մենք մեր հետը, որովհետև ժամկետը հասել էր, փող էինք բերել
վեքսիլի մասին համար. թե չէ նեվո՞ւժելի շորս-հինգ ամիս ուս-
ուռչքա չէինք կարող անել առաջի անգամի համար, քսան-քսան-
մեկ տարվա մեջ: Աքաշովի վեննայից բերել տված փլաթեցուփ
վրա թքիմ, այդ ի՞նչ է որ ես դրա համար հարսիս առջևը սեներես
մնամ... Ես ելուտովի քանթոուր յոթը հարյուր մանեթ տվի
որ նառոշը, Փարիժից ամենամոտնի փլաթիցուն պատվիրեն ու
էքսթոնենի փոշտայով աթփոռավիթ անեն, որ սիրտդ չկոտրվի. ձիե-
րի համար էլ, որովհետև կասկածում ես, վրան էլի հազար մա-
նեթ ավելացրինք, որ երկուհազար ութհարյուր մանեթանոց—
հարցնողներին, ո՞վ է քեզ ասել շորս հազարների անուն շտալ—
ուխաքներ ունենաս, որ ոչ թե Ռոստով—Նախիջևան, Թայլան՝ էլ
չգտնվելիք բան լինի: Սահնակն էլ յոթը հարյուրանոցը ետ տվինք,
հազարանոցը առանք նրա տեղը. արջի մորթու տեղն էլ՝ նասթա-
յաշնը խափլանի, թիկոնվը՞ են ասում— նրա սուտն էլ է լինում,
կաշնը խափլանի, թիկոնվը՞ են ասում— նրա սուտն էլ է լինում, տան-
պաշայից, բայց այս ասածս՝ նասթայաշնըն է— մեռնեմ, տան-
կը՛ւ-տանկը՛ւ հարյուրհիսուն մանեթ եմ հաշվել տվել: Նեվոժելի
Եֆրասեյա Առթյումովնա, ես հրամանոցդ համար փող պիտի խնա-
յեմ, ամո՞թ չի ինձ... էլի ձեր սիրտը շահելու համար երեք կա-
ռաթանոց մի լավ պոխլյանթի մատանի պատվիրեցի որ գուցե
Նախիջևանը հիմնադրման օրից հետո այդպես հազվագյուտ բան
չի տեսել. այդ էլ մութ պատշգամբում ձեր մատին կհագցնենք,
երբ դու և այլն:

Կամ և մնամ ցվերջին գերեզման

զբո խոնարհ ծառա Արապիոն ձիվելենկովս

Նոյ-Նախիջևան, սեկտեմբերի 8, 1875-ին
Ամենապատվելի Սեմեն Փավլովիչ
Քաղաքատ ուղի մեր ի ձեռքդ.

Ահա հայտնում եմ զձեզ, որ հրամանացդ հավանած Հոռոմ-
ախմա չեղածը, որ երեք տարի փանցիոն է գնացել այն անամոթ
անանակ Ա. Փ.-ի մոտ, դեռ... հոտը շտա՛ծ, փեռվը՛ պողի ֆա-

¹ Տազանրոգ:

² Тигровый — վագրի մորթի:

սոններին վարպետ է դարձել, չլինի թե, բալաս, սիրտդ ցավի:
Բանը մանրամասն ուզում ես իմանալ, այսպես է. մեր մեջը բա-
վականին պաղություն մտավ, բայց սիրտդ ամուր պահի, կտրիճ
եղիր: Նրանց տունը, լսել ենք, սրիկա տեր Սարգիսը, գնալուցդ
ի վեր, հենց մութը կոխեց թե չէ— գը՛վ է անում, ներս է մտնում
ու ժամերով մնում: Դու մի ասիլ, որ Պելպեքովների կողմից կա-
վատություն է անում հարամ սատկածը, հարսիդ նրա միջնեկ որ-
դու համար է ուզում, թող գնան, թող առնեն, Աստված բարի պը-
սակի արժանի անի: Այդ մենք, այստեղ նայի, որ հարս փնտրենք
ասինք, հարսի սակավության հանդիպեցի՞նք, ինչ է. նրանց մա-
րը... Քեզ մարդ չեմ ասիլ, եթե չգաս ու բեհի մատանին երեսնե-
րին շարտես ու քու տված նվերներն էլ միտավոյի հրամանքով,
դատավորի ձեռքով չկոխես շառնես:

Ձայս բարեկազիրս ստացածովդ նստես գաս: Տեղս առևտուրը
վատ է. մամադ բավականին պոմիդոր արևին կախեց, հիմա էլ
նստել մսի ենք սպասում, որ ձմեռվա համար աղած միս ու լեզու
պատրաստենք: Անցյալ օրը Մուպուկի համար խնամի եկավ Ա...-ից,
կեսկատար մնաց. վեճը յոթհարյուր հիսուն մանեթի վրա էր-
միանգամից հակառակությունս բռնեց. բայց, լավ մարդ են, մեկ
էլ կգան: Այնքան էլ չգտնվելիքներից չեն: Որ գաս, հետդ մի եր-
կու արկղ Մոսկոֆի սուխարի բեր, ասում է մամադ:

զհայր քո Փանոս ձիվելենկովս

Ամենաձեռողյալ զհայր մեր Փավլ Մամեիշ. Մանիր:

Ձայս բարեկազիրովս հայտնում եմ Ձեզ, որ ես ինքս էլ վա-
ղուց նկատել էի, որ Հոռոմախման իմ հավանած աղջիկներից չէր.
հեշ մի մանիեո¹ և կամ փառուսկի² վարմունք չունի. ափսոս նրա
հուռումին և երեք տարի փանցիոն գնացածին:

Այժմ խնդրում եմ հրամանացիցդ, որ զայս գիրս իբենց ցույց
տաս և մեր կողմից ուղղակի հրաժարվես և կամ տված փեշքեշ-
ներս հաշվով ետ առնես և կամ ժամանակ առ ժամանակ ուղղի
ծախսերս ու քանֆեթ, փեռո՛մնի— բան չոթքի վրա հաշվես (հա-

¹ Манера — ձև:

² По русский — ռուսական վարմունք, այստեղ եվրոպական:

շիզոս տետրապի մեջ մանրամասն ամսաթվով գրած է), հաշիվը Մինաս Խաչիպովին տաս ու արվարթով (այդպիսի շթուք բաների շատ վարպետ է Տեր-Քրիթորյանը) կոխես-անես և կամ իմ կողմից երեսներին հատուկ հատուկ կոտորով քրես...

Յոք որ բանը այս վիճակին հասավ, մասնա էլ թող դրկի տեր Աստատուրին ուզիլ Մ...-ին, նրա աղջիկը մեզ ավելի է հարձար, որովհետև ավելի բաց է (մերոնց պես պատի արանքներից նաչող չի) և կամ վարժվածքը ավելի փառասաքի է, մուղիքա էլ ավելի դիտի, քուպ-բալերին էլ հեշ շի եղած, որ փրտտ արած նրատած չինի: Եթե Ասաված հարձար է տեսել, նա նրան ավելի նմ հավանում: Գուք այն մի նայեք, որ անունը կարած է, իբր, ինձ համար այդ դատարի բաներ է. մեր հային գիտն՝ս հո. աղջիկը իրավունք չունի մի քիչ նոր ֆաստնով շարժվալ, մեկ էլ տեսնես խեղճին անուն են կայցնում: Այնքան որ մասնա բաժինքի խտակցությամբ մասնակ թող զգուշ չինի, որ հետո սրտացավություն դուրս չգա. դրա համար խոտքի մեջ աղչա կատրած անունը շատ-շատ մեղան էլ թող հանի, որ պապան, մասն մեզ այնքան հիմարներից շիմանան ու բաժինքը մի քանի հազար ավելացնեն. տմեն:

Մեզմ խանհարտար արգի ձեռ Մուսղիան ձիվեղեկավալ

ԲԱՐԵՎԱԳԻՐ

Գառվելի Ա. ֆանասի Արտեմիչ.

Եվ շատ բարև ունիմ ձեր հրամանաց նշանածին՝ Աննա Կարպովնային, և շատ բարև ունիմ ձեր որդուն՝ Միքիթին, և շատ բարև ունիմ ձեր օրիորդին՝ Մաշինկային ևս. և շատ բարև ունիմ կրնքահորս՝ Նրիստաֆոր Մերգեիին և շատ բարև ունիմ նրա նշանածին՝ Մուպուկ Միքիթուովնային, և շատ բարև ունիմ նրանց օրիորդին՝ Սրբուհուն ևս. և շատ բարև ունիմ տեր Մոսես տերտերին և շատ բարև ունիմ նրա նշանածին՝ Եղսաբեթ Բրիգիդին և կամ նոցա օրիորդին՝ Վառուշին:

Մանի՛ր: Ուրեմն: Հայտնի լինի ձեր բարի հրամանաց, որ մենք հայ-հայ 15 տարի է, որ այս կողմերը բաշ ենք գալի. և կամ մեր առուտուրը, փա՛ռք Աստուծո, իրեն կարգով գնում է, և կամ՝ օղի,

բուրդ և ուրիշ ուրիշ ապրանքներ, ինչպես որ գիտես: Եվ կամ կապիտալ, փա՛ռք Աստուծո, նմանապես: Ա. ֆանասի Արտեմիչ, մենք այստեղ մենակ ենք, և կամ կնիկ-երեխա չունենք: Ամօթ չինի՛ ուզում եմ հասկացնել, թե՛ հրամանքը եթե մի էնպես, հարմար աղչիկ կձեռնաչեա, օրինակի համար. չէ առաջ չենք, շնորհակալ կրնինք: Եվ կամ իսկույն Մարտուշ-աղաչի խանութից, մոսթով, մի լավ աղամանդ մատանի երեսուն մտնեթ կուսա կուսնես և կամ կհագցնես մատին, խոտքի վրա՝ նշան: Ահեք էլ հուրիսի մեջ, Մա-կարթա գեաղթա, Եսիբեղան կհանդիպինք, կտեսնինք, կհավանինք. գուցե պսակն էլ վերջացնենք: Խնդրեմ: Ամեն: Թողու՞թյուն տեսա:

Խոնարհ՝ Արտեմի Քուլբայով.

Գառվելի Արտեմ Մերգեիչ.

Նախ՝ շատ բարև է մատուցանում ձեր հրամանաց մեր նշանածը՝ Աննա Կարպովնան, շատ բարև է մատուցանում մեր որդին՝ Միքիթը, շատ բարև է մատուցանում մեր օրիորդը՝ Մաշինկան: Եվս, և շատ բարև է մատուցանում կնքահայրը՝ Նրիստաֆոր Մերգեիչը, և շատ բարև է մատուցանում նրա նշանածը՝ Մուպուկ Միքիթուովնան, և շատ բարև մատուցանում նոցա օրիորդը՝ Սրբուհին: Եվս և շատ բարև է մատուցանում տեր Մոսես տերտերը, և շատ բարև են մատուցանում նորա նշանածը՝ Եղսաբեթ իրիցկինը, և կամ նոցա օրիորդը՝ Վառուշը:

Մանի՛ր: Ուրեմն: Եվ կամ մենք ձեր բարևագիրը ստացանք և կարդացինք, կամ ձեր միտքը հասկացանք: Աստված բարի կատարում տա: Ամեն: Եվ կամ մենք վաղուց մի ջահել աղջիկ ենք ճանաչում: Խոտքի վրա՝ անունը Լուսիբա և կամ տարիքը 20 կամ 21, գուցե մի քիչ ավելի, քանի որ աչքի շարժով ենք առում:

Եվ կամ մեր նշանածը՝ Աննա Կարպովնան նրա մորը մի քիչ հասկացուց: Գործը գլուխ գալու բան է, թե որ Աստված կամեցել է: Եվ կամ՝ թե որ տեղով բաժնի մանանք, մատանին էլ իսկույն կգենք, կտանք: Գու միամիտ եղիր: Ամեն:

Խոնարհ՝ Քորոս Աշխիշով.

Պատվելի Աֆանասի Արտեմիչ:

Եվ բարև ունիմ ձեր հրամանոց նշանածին՝ Աննա Կարպովնային, և շատ բարև ունիմ ձեր որդուն՝ Միքիթին, և շատ բարև ունիմ ձեր օրիորդին՝ Մաշինկային: Եվս. և շատ բարև ունիմ կրնքահորս՝ Խրիստաֆոր Սերգեիչին, և շատ բարև ունիմ նրա նշանածին՝ Մուպուկ Մխիթարովնային, և շատ բարև ունիմ նոցա օրիորդին՝ Սրբուհուն: Եվս, և շատ բարև ունիմ տեր Մոսես տերտերին, և շատ բարև ունիմ նրա նշանածին՝ Եղիսաբեթ Իրիցկինին և կամ նոցա օրիորդին՝ Վառուչին:

Մանի՛ր: Ուրեմն: Եվ կամ մենք ձեր բարևագիրն ստացանք և կարդացինք, և ձեր միտքը հասկացանք: Աստված բարի կատարում տա: Ամեն: Տեսած էլ որ չլինինք, պատվելի Աֆանասի Արտեմիչ, մենք այդ Լուսիբային շատ ենք հավանում, և կամ հոժար ենք նրան մեզ ընկեր անելու: Եվ կամ մեզ այնպես է թվում, որ շտեսնված գեղեցկուհի է, և այլն: Զեր արած լավությունը մինչև մահս շեմ մոռանա:

Խոնարհ Արուփին Թուլյուլով.

Պատվելի Արտեմ Սերգեիչ:

Նախ՝ շատ բարև է մատուցանում ձեզ մեր նշանածը՝ Աննա Կարպովնան, շատ բարև է մատուցանում ձեր որդին՝ Միքիթը: շատ բարև է մատուցանում ձեր օրիորդը՝ Մաշինկան: Եվս. շատ բարև է մատուցանում կնքահայրդ՝ Խրիստաֆոր Սերգեիչը: շատ բարև է մատուցանում նրա նշանածը՝ Մուպուկ Մխիթարովնան, շատ բարև է մատուցանում տեր Մոսես տերտերը, շատ բարև է մատուցանում նրա նշանածը՝ Եղիսաբեթ Իրիցկինը, և կամ նոցա օրիորդը՝ Վառուչը:

Մանի՛ր: Ուրեմն: Եվ կամ Լուսիբայի բանը գլուխ չեկավ: քանի որ ձեր գլուխը, ո՞ր շան հարամ կաթ կերածը քո մասին տեսակ-տեսակ խոսքեր է տարածել, իբր դու գնալ-գալ ունիս արժույթ-շարժում կ...անց հետ և կամ խանութիցդ, ծառայիդ ձեռքով, շորացունք, թաշկինակներ ես նվեր ուղարկում: Թքի այդ Լուսիբայի վրա ու հանն մտքիցդ, այն էլ իմացիր, որ սկզբում մենք չէինք նկատել, հետո իմացանք, որ նա շեշտ է եղել ու դեռ նազեր է անում... Մենք քեզ համար ուրիշ հարս գտանք, անունը

Պայար. հասակը մի քիչ ցածր, բայց այն անպիտանի պես շեշտ չէ: Տարիքը ասում են 23, գուցե մի քիչ ավելի, այդ վնաս չունի: Աստված բարի կատարում տա:

Խոնարհ՝ Թորոս Աշխմիչով.

Պատվելի Աֆանասի Արտեմիչ:

Եվ շատ բարև ունիմ և այլն:

Մանի՛ր: Ուրեմն: Եվ կամ մենք թքել ենք Լուսիբայի վրա, որ շեշտ տեղովը դեռ նազեր է անում, և կամ այսուհետև ո՞ր շունը նրան պիտի հավանի, և այլն: Մենք Պայարին շատ ենք հավանում. վնաս չունի նրա 24 տարիքը. այնքան որ՝ տներին մեջ Աստուծով լավ տանտիկին լինի մեզ, և կամ աչքը դուրսը չլինի և կամ ուրիշ այդ տեսակ հեթաթ-բաներ— բուլվար գնալ, ջահել տղոց հետ գնալ ու գալ. որովհետև մենք հասարակ մարդ ենք, մեկ էլ տեսար հերսներս ելավ՝ մտրակը պատից վար առնող ենք: Աստված տնից-դռնից հեռու պահի: Խոսքս ի՞նչ երկարացնեմ, նշանը շուտ տվեք, որ սա էլ ձեռքներիցս չփախչի: Ամեն:

Մեամ խոնարհ՝ Արուփին Թուլյուլով.

Պատվելի Արտեմ Սերգեիչ:

Նախ՝ շատ բարև է մատուցանում ձեզ, և այլն:

Մանի՛ր: Ուրեմն: Եվ կամ Պայարի գործը գլուխ չեկավ: Շատ էլ լավ եղավ, որովհետև նոցա դրացիներից շատ վատ բաներ լրեսցինք ու շատ ուրախ եղանք, որ այդ ցուցանքին գլուխը չփաթթեցինք, իզուր մեղքի մեջ պիտի մտնեինք: Նա այս շաբթուս մեջ պիտի նշանվի: Բամբառակի մեկը, որ ամառները մեր շուկայում սայլով խաղող է ծախում, Կարաուլով Կարպուչ են ասում, նրան պիտի առնի: Թո՞ղ գնա, թո՞ղ պակսի ծամը կտրածը ու իր գիտցած խաղերը թո՞ղ խաղա այդ ավանակի չլինի: Սիրող հե՛շ թող չցավի այդ փեշը-կարճ, ծամը կտրածի համար: Աննա Կարպովնան մի սիրուն աղջկա վրա է աչք դրել, ու հավատա, գլուխ գալու բան է: Ասածներով 25 տարեկան կլինի, գուցե մի քիչ էլ

ավելի, բայց ասում են, թե շատ համեստ է: Ճիշտ է, թե սուտ է՝ ասում են՝ մի քիչ աչ ոտից կաղում է: Այդ էլ ճիշտը չգիտենք, գուցե սուտ լինի, քանի որ՝ դու հո գիտե՞ս մեր խալխի շար լեզուն: Մեկ էլ որ՝ թե մի քիչ էլ կաղացել է, ի՞նչ մեծ բան է. գյուղի մեջ դրանից գեղեցիկը ինչ է անում. բան չունիս. բայց քեզ լավ ընկերություն կանի: Աղջկա ուրիշ տեղերը առողջ լինեն, թե չէ ոտքն էլ ի՞նչ հորս ցավն է, որ նրա երկար կամ կարճ լինելու համար սիրտ մաշեմ: Եթե աղջիկը հոժար լինի, մենք իսկույն նշանը կտանք, որ բանը էլ չքանդվի: Ամեն: Հա՛, մոռացա ասել՝ անունը Կատար է:

Մնամ խոնարհ՝ Թորոս Աշխմիշով.

Պատվելի Աֆանասի Արտեմիշ.

Եվ շատ բարև ունիմ հրամանոցդ նշանածին և այլն: Մանի՛ր՝ Ուրեմն: Պայարի էլ հերն անիծած, նրա օխտը պորտի էլ: Մենք Պայարին չենք ուզում. մանուկանդ, քո ասածով, թե նա պար խաղալու վարպետ է՝ թքել ենք նրա վրա: Մենք պսակվելու որ լինինք՝ մեզ համար աղջի՞կ չենք գտնի— ասացեք խնդրեմ: Եվ կամ, հավանում ենք Կատարին: Վնաս չունի նրա 25 տարեկան լինելը կամ աչ ոտից մի քիչ կաղալը: Կոշիկի կրունկը մի քիչ երկար կանենք՝ եղավ գնաց, դրա համար մաշվելու հո չենք. թքած. միայն թե իր տանտիկնությունը գիտենա ու աչքը դուրսը շինի. մեզի համար ամենակարևորը դա է: Շուտ արեք, խնդրեմ, ժամանակ մի՛ կորցնեք ու Կատարին ձեռից բաց մի՛ թողնեք. թե չէ ամիսներ են անցնում ու մենք դեռ չենք բաշարել: Ընկերներին մեջն էլ ծամելու մաստաք եղանք, իբր փեսա ենք: Խնդրեմ:

Մնամ խոնարհ՝ Արուրին Թուլույով.

Պատվելի Արտեմ Սերգեիշ.

Նախ՝ շատ բարև է մատուցանում, և այլն:

Մանի՛ր: Ուրեմն: Կատարի գործն էլ գլուխ չեկավ. այսօր կամ վաղը սև երեսով քաղաքից պիտի դուրս գա, գնա ո՞վ գիտե ո՞ր քարի տակ թաքնվի, որ խալխի առջև շխայտառակվի. հասկացա՞ր: Բայց Աստված ողորմած է: Մի շնաշխարհիկ որը աղ-

ջիկ կա շատ սիրուն, շնորհքով, ջանասեր. այսօրովս օրս էլ Սարգիս-աղայի տանը խոհարարուհի է, բայց ոչինչ, իրենց հարազատի պես են հետը վարվում. իրենց հագած բոլորովին նոր շորերը, կիսակոշիկները միշտ նրան են տալիս: Ինքն էլ ասում են, ճարտար տնտեսուհի է: Նրա խոհարարուհի լինելուն մի՛ նայի, հավատա, գյուղում նա առաջին տանտիկինը կլինի, միայն դու բաց բերան մի լինի ու խեղճ աղջկա գաղտնիքը (խոհարարուհի լինելը) ինքդ մի՛ տարածի: Տարիքը կլինի գուցե 26—27, ավելի չէ. անունը Մարթա է: Թե հավան ես, մենք իսկույն խոսք կանենք ու նշանը կտանք: Շուտով իմաց արա: Այն խայտառակ Կատարին մտքիցդ հանի, որովհետև նա շատ երեսը պատռած աղջիկ է: Փեշը կարճ այդ աղջիկը ինչ ասե՛ լավ է, իբր, ասում է. «ես այն բամբառակ Արութինին ճանաչում եմ. բակումս մի շուն ունենալի, նրան կին տալն անպատվաբեր բան կհամարեի»: Անառակ, Կինս ասում է՝ ամբողջ քաղաքի մեջ որ նրան շխայտառակեմ, ես Աննա Կարպովնան շինեմ: Միով բանիվ, ինչ-որ գիտեինք մենք քեզ տեղով-տեղով ասինք. հիմա ինքդ գիտես անելիքդ:

Մնամ խոնարհ՝ Թորոս Աշխմիշով.

Պատվելի Աֆանասի Արտեմիշ.

Եվ շատ բարև ունիմ հրամանոցդ նշանածին, և այլն:

Մանի՛ր: Ուրեմն: Այդ Կատար կոշվածը աչքերիցս սաստիկ ընկավ: Սկզբում մենք նրան հավանել էինք, բայց նրա մասին այդ խայտառակ բաները որ իմացանք՝ սրտներս խիստ ելավ: Այդ վընաս չունի. գուցե այս անգամ ներող լինեինք, բայց քանի որ նա մեզ բամբառակ է ասում և բակի շնից էլ ցածր է դասում, մենք է՛լ նրան չենք հավանում և անունը լսել չենք ուզում. և նրա չզրուձեր հավանած Մարթային ենք հավանում ու մեզ ընկեր լինելու արժանի տեսնում, և մեկ օր էլ Աստծով, կբախտավորեցնենք նրան: Խնդրում եմ, Աֆանասի Արտեմիշ, եղածը եղավ, գոնե այդ Մարթայի գործը շուտով ու վայելուչ կերպով գլուխ բերեք, որ մենք էլ խալխի լեզվից ազատվենք, քանի որ մեր ջահելների ձեռքից օր-արև չունենք. ամեն տեսնելիս մեզ ծաղրում են, թե նախիջեանում մի ամուրի երիտասարդի վրա հինգ աղջկա աչք կա, բայց մեզ ո՛չ թե հինգը, մեկն էլ մարդի տեղ չի դնում: Այս ի՞նչ լա՛ր ասողի հանգիպեցինք. գնացինք-եկանք մի անունը կոտրած

աղջկա էլ արժանի չեղանք: Այդ Մարթան աղախին է, ինչ է, ինչ չէ՝ իսկույն գլխի տակ փափուկ բարձ դրեք, նշանը ձեռքը դրեք, այդ էլ չեղավ՝ ասենք, որ նրա անունով 1500 մանեթ բանկը փող կդնենք, կարճ՝ ինչ ուզում եք արեք՝ Մարթային ձեռքներինց բաց մի՛ թողնեք: Մենք էլ արդեն եկանք, քառասունին մոտեցանք, մի՛ լին լավ-վատ սուրբ պսակի արժանի չպիտի լինենք, աչքերովս մեր ընտանիքը չպիտի տեսնենք ու հալալ վաստակներս շնորհի, գայլերի բերանը պիտի ընկնի: Խնդրում եմ, Աֆանասի Արտեմիչ, դու էլ, տիկին Աննա Կարպովնան էլ, ոտքերդ պագնեմ, ջանք արեք, այդ Մարթայի բանը գլուխ բերեք: Մենք օրիորդներից վաղուց արդեն վազն ենք եկել, գոնե այդ որբին ու աղախինին էլ ձեռքներիցս բաց չթողնենք: Հատուկ խնդրում եմ, ձեր արածը հուր-հավիտյան շեմ մոռանա:

Մնամ խոնարհ՝ Արուսիկե Թույլույով.

Պատվելի Արտեմ Սերգեիչ.

Նախ շատ սիրով ու կարոտով բարևս եմ մատուցանում ձեզ, ե ալլն:

Ծանի՛ր: Ուրեմն: Ծիշտ որ դու շար աստղի տակ ես ծնվել. ա՛յ տղա, այս անգամ էլ գործդ թարս գնաց, այս անպիտանն էլ քեզ չուզեց: Զեր գյուղից Մարգիս-աղան, իբր, մի գիր է ստացել, ինձ՝ այսպես-այսպես բան, մի հայ խանութպան, անունը Արտեմ, գողացած ապրանք է գնել ու սեղանի տակ թաքցրել: Գյուղի տաճարները զինվորներ է ղրկել, խանութը տակն ու վրա են արել, այդ գողացած ապրանքը գտել են, քեզ էլ ձերբակալել են ու դատի տվել: Աղջիկը լսում է այդ սև լուրը, սարսափում է, իսկույն Աննա Կարպովնայի ետևից մարդ է ուղարկում՝ «Ա՛յդ է ձեր գողացած տղան, — ասում է. — ես բռնվածի կին լինել չեմ ուզում», — ասում է: Նշանը-բանը բոլորը ետ է տալիս և ամոթով ճամփու է գնում մեր տիկնոջը: Ա՛յ քեզ պսակ: Եվ կամ ամո՛թ քեզ, Արտեմ Սերգեիչ, ի՛նչ երեսով դու գիր ես գրում, աղջիկ ես ուզում, երբ որ պատիվդ չես ճանաչում, հայերիս պատիվն էլ օխտն օտարի առջև ոտի տակ ես գցում: Ամո՛թ քեզ, հազա՛ր ամոթ, երեսդ սև լինի. քեզ մտրակ է պետք, ո՛չ թե հարսնացու աղջիկ: Մեկ էլ չհամարձակվե՛ս մեզ բարևագիր գրել ու հարսի անուն տալ: Ամեն:

Մնամ խոնարհ՝ Թորոս Աշխմիչով.

Պատվելի Աֆանասի Արտեմիչ.

Ծանի՛ր: Ուրեմն: Թքել եմ քո վրա էլ, Աննա Կարպովնայիդ վրա էլ, Մարթա կոչեցյալի վրա էլ, ապուշ Մարգիս-աղայի վրա էլ: Եվ կամ ի՛նչ հեքիաթներ է ասածդ, և կամ ե՞րբ է տանուտերը զինվորներ ղրկել մեր խանութը ու սեղանի տակից գողացած ապրանք գտել: Բոլորը փորիցդ հանած ստեր են և կամ նախանձություն: Եվ կամ՝ ի բնե նախիջևանցիքդ մարդու անուն կոտորող եք: Ամոթի ամենախոշորը ձեզ, որ պարապ-դատարկ նստել եք տարին տասներկու ամիս ու, սրտերիդ նեղությունից մարդոց վրա ստեր եք հնարում: Երբ որ դու ինձ հետ ծանոթություն ունենալ չես ուզում, ես վաղուց քեզ նման ապուշի հետ չէի ուզենա ծանոթ լինել: Մեկ էլ քեզ բարևագիր ղրկեմ՝ թող ձեռս կոտորվի ու լեզուս բերանիս մեջ չորանա: Ամեն:

Մնամ խոնարհ՝ Արուսիկե Թույլույով.

Պատվելի Արտեմ Սերգեիչ.

Նախ՝ շատ սիրով և կարոտով բարևս եմ մատուցանում ձեզ, ե ալլն:

Ծանի՛ր: Ուրեմն: Խնդրում եմ Արտեմ Սերգեիչ, թողություն անես, որովհետև սխալանք է եղել: Սուտ չէ, ճիշտ է, որ այդպիսի մի գիր եկել է, բայց եկած գիրը ձեր Բրյուսովեցի գյուղից չէ, այլ Ստիբլեկայից. խանութպանն էլ հայ չէ. միայն թե՛ ահա անունների այդ նմանությունից է առաջ եկել աղմուկը: Աննա Կարպովնան, ես, Մարթան, Մարգիս-աղան — բոլորս շատ ենք ցավում, թե այդ դատարկ բանի համար ինչու՞ պիտի խափանվի ձեր բախտավորությունը: Խնդրում եմ — Արտեմ Սերգեիչ, սրտիդ թող դժվար չգա, և ինչ-որ արժում-չարժում խոսքեր գրել էինք՝ մտքիցդ հանի ու մոռացիր: Եվ կամ շուտով իմաց արա մեզ, որ պսակվելու մասին միտքդ փոխել չես: Թե չէ խեղճ Մարթան մեղք է. արդեն սերն անցնում է. և կամ ամբողջ օրը սուգ ու արտասուքի մեջ է խեղճը ու գիշերները չի քնում, այլ հոնգուր-հոնգուր լաց է լինում: Եվ քեզ ով էր ասում հայկական Արուսիկե անունը Արտեմ թարգմանես, որ միջից այսքան աղմուկ դուրս գար:

Մնամ խոնարհ՝ Թորոս Աշխմիչով.

Նախիջևան Գոնի վրա: Աֆանասի Արտեմիչ Աշխիշովի: Թա գիտեի, որ դա թյուրիմացութուն է: Հաշտվե՛ք: Պատրաստվեցե՛ք հարսանիքի: Չորս օրից հետո կլինեմ Նախիջևանում: Իմ հարսնացուին և բոլորին խոնարհ ողջույն և բարև: Կեցցե:

Հարուստան Քալյույան

Սրանից 6—7 տարի առաջ շրջագայելիս, Բրյուսովացիի գյուղքն էլ այցելեցի: Մի գնամ, ասի, տեսնեմ ինչ է տնում մեր Արտեմ Սերգեիշը: Հարցուվորձ անելով խանութը գտա: Ինքը չկար, տուն էր գնացել թեյի, որովհետև գեռ վազ էր: Աչքովս վեր-վար գննեցի խանութը՝ շատ զարմացա. գյուղի համար շատ էր ու քիչ չէր, մոտ քառասուն հազարի ապրանք կլիներ մեջը: Հաճախորդները ապրանքը իրար ձեռից էին խոլում: Փանի որ փող ասածը գյուղի մեջ քիչ է լինում, գյուղացիները փողի տեղ ցորեն, բուրդ, խոզի մազ, աճա այսպիսի բաներ էին բերել: Խանութի ապրանքը թանկ էին ծախում, իսկ գյուղացու բարին համարյա ձրի էին առնում: Ու՛կի էր մեր Արտեմ Սերգեիշի գործը: Մի քիչ մնացի խանութի մեջ, հետո իր տունը գնացի:

Դիմացս ելավ նրա կինը՝ Մարթան, մաքուր ու գեղեցիկ հագնված. հավատալու բան չէր, որ այս կինը մի օր ուրիշների մոտ աղախին եղած լինի, կատարյալ տանտիկին էր դառել, այսօրվա օրս ձեռի տակ 2—3 ծառա ուներ և հրամաններ էր տալիս: Հատակը մաքուր, կահավարսին մաքուր, պատուհանները մաքուր, առեն տեղ երևում էր խելք տանտիկինի աչքն ու ձեռքը:

Պակու պես ցորեն ինքնաեղ սեղանի վրա խլթխլթ հոռում էր: Ափսեաների մեջ շարած էին շերտ-շերտ կտրած եփած ձվերը, կարագը, մեծ մատուցարանի վրա էր առատորեն տապակած միսը: Մի փոքրիկ աղա և մի՛ մի քիչ մեծ աղջիկ, կողք-կողքի նստած էին, թեյով չի բաժանեցին առջեները՝ դայակը դիմացները կանգնած հացով սեր էր ուտեցնում նրանց: Կալվածատիրոջ ապրուստ էր, որ կար:

Մեր Արտեմ Սերգեիշն էլ, գրասենյակի ծառայի հետ առջև գիւժած պղնձագրամն էր համրում:

Երկու օր մնացի Աստծու օրհնած այդ տան մեջ ու արտասուրով քաժանվեցի բարեկամիցս:

Հանուն հոր և որդու և հոգվույն արքո, աժեն. հը՛, հը՛, հը՛ (սուտ հազ՛) ձայնը մաքրելու կամ միաքը ժողովելու համար): Քրիստոսասեր ժողովուրդ, Քրիստոս տերը մեր, հրք որ ավանակ ձիի վրա հեծած սուրբ Երուսաղեմ կմտներ նը՛ հրեա կամ ջհուղ ազգը՝ թե՛ էրիկմարդ և թե՛ կնիկմարդ, թե՛ տղա և թե՛ աղջիկ, թե՛ մեծ և թե՛ պզտիկ, ամենքը, հը , հը՛, ամենքը օվսաննա կանչեցին և այդպես առք-փառք առին տարին տաճարը և կուզեին տերն մեր Հիսուս Քրիստոսին, օրինակի համար ասենք, եպիսկոպոս կամ կաթողիկոս ձեռնագրել: Բայց քահանայապետները և գպիրները, ժողովուրդին միտքը իմանալով, նախանձեցին, սիրտները ելավ, իսկույն բռնեցին տերն մեր Հիսուս Քրիստոսին, աղեկ մը ծեծեցին ու ետքն ալ խաչեցին, «աճա՛ քեզի կաթողիկոսութուն»,— ասին, ու երեսն էլ թուք ու մուր արին. քացախ ալ խրմցուցին, մեծ խաչափայտն էլ կոնակը զարկին, որ քաշաքաշ պիտի տաներ մինչև Գողգոթայի տեղը, աշակերտներն մեկն էլ ուրացավ նրան ու ասաց. ЗНАТЬ НЕ ЗНАЮ. ետքը տերն մեր Հիսուս Քրիստոս դատավորին ասաց. «Երբ որ մեղավորիմ նը՛ դատե, — ասաց, — թե չէ դուն ի՞նչ իրավունքով ինձի խալխին առչըր ամոթվոր կանիս, շամառ կղարնիս»: Թագավորն ալ դարձավ ու տերն մեր Հիսուս Քրիստոսին ասաց. «Ապա դուն, — ասաց, — ինչո՞ւ կոլխեղ մեծ... կուտիս. ինչո՞ւ խալխին բերանը լեզու կղնիս գոլովաներուն, նաչալնիկներուն դեմ, — ասաց. — ինչո՞ւ դպիրներուն դիմադարձութուն կանիս, — ասաց. — դուն ո՞րին շունն իս, որ կայսերին փրիվելեկը փրիզնավաթ շես անիլ, — ասաց. — դուն ի՞նչ մարդ իս, որ կայսերին ստակին համար կասիս, որ կեղծ է և կամ մի խեղճ որբևալու կոպեկը, կասիս, անկից արդար է. դուն ինչո՞ւ միամիտ ժողովրդին կխրատիս, որ փատուշնի՞ չի տան, հը՛, դե բու... ատպես քեզի խաչ կհանենք, ոտքերդ ալ մեծ գերանով աղեկ մը կկապենք, որ չփախչես»: Ետքը դարձավ տերն մեր Հիսուս Քրիստոս ու ասաց անոր. «Աղե՛կ, աղե՛կ, — ասաց, — դուն խեղճ մարդ գոիլ իս, — ասաց, — անոր համար կչարչրկիս, — ասաց. — հա՛. մի կեցիր երթամ երկինք, հոնեն դատաստանին

¹ Քարոզ:

² Գլխահարկ:

օրը հարյուր հրեշտակ առնեմ հետս ու գամ, ան ատենը մենք կրտեսնինք՝ ո՞րս որի՞ն...: Դուք ինչո՞ւ խարդախություն կանիք, աշակերտիս համին կուտեցնուք, մարդուս միամիտ վրան կթափիք, կրոնիք, ձեռքը ոտքը կկապիք, փատելցուցնուցն է ձեր արածը, ամոթ չէ՞ ձեզի: Աս խոսքերը, որ լսեց դատավորը, սիրտը ելավ, կատղեցավ. «Աս քանի՞ մեկ քանի սիրտս պիտի հանիս,— ասաց,— ատ լիրք խոսքերովդ. պելլիններ, տարեք իսա բունտովը չիկին մայիսրաթ փակեցեք»: Մեկալ քովեն ալ ժողովուրդը կանչեց. շուգինք դրա հոս կեցածը, Փառապասին թող քակին. Քիրստոսին, մենք մեր օրենքով կխաշինք, որ մեր պասեքի տոնին, ամառը, խալխը տեսնի»: Դատավորն էլ ասաց. «Ինչ որ գիտիք նր, անպես արեք»,— ասաց ու հրամայեց ջրամանը բերել ու ձեռքը լվաց:

Քրիստոսասեր ժողովուրդ, անշուշտ ամենքս ալ մեղավոր ինք Աստծու դատաստանին առջևը ու միշտ պիտի ասինք. «Տե՛ր, մեղա՛ քեզ»: Մարդս որ կա, վսեռավնո, ճանճի պես բան է Աստծու առջև. երբ որ ուզենա Աստված, մեզի կապրեցնե, շուգենա նր՝ կմեռցնե. ինչպես որ ճանճը ճզմես՝ հոգին կփչե: Աս պատճառով մենք գիշեր-ցերեկ պարտավոր ենք Աստծու աղոթք անիլ, աղքատին ողորմություն տալ, ժամ ու պաս ճանչնալ, որ արժանի ըլլանք օրն դատաստանի երկնից արքայության: Մալը շթո Մոսքովեն, Փեթերպուրքեն նոր եկած մարդիկ կասին. «Հավատը դատարկ բան է, ժամը, պասը, մոմը, խունկը, տերտերը— բոլորը դատարկ բաներ ին»: Սուտ է նոցա ասածը. դուք ձեր բանը նայեցեք, նոցա ասածին հեշ չի հավատաք. հավատը դատարկ չէ, նոցա զըլուխն է դատարկ, որ ատպես անիրավ ու Աստծու հակառակ բաներ կհնարին: Հավատը դատարկ ըլլար նր՝ ջհուղները մի՞թե, ինչպես որ քիչ առաջ ասինք, տերն մեր Հիսուս Քրիստոսին կտանչեին: Դուք ատ մարդոցը ասածին մի նայիք. անշուշտ կգա այն օրը, որ Աստված ալ ատ մարդոց դատաստանը կանե ու հատուցումը կուտա: Ատպես անամոթ, անհավատ անօրենները շատ եկիլ ին, շատ ալ գնացիլ ին, բայց Աստված արել է նոցա դատաստանը, ամենն ալ շունի պես սատկոց եղիլ ին. այսօր նոցա հոգին սատանային ճանկն է, ոչ մեկը դժոխքից պրծած չեն. ատ ես տեղովը գիտիմ, բայց հավատքին ամուր մնացողները երկրնից արքայությունը ժառանգել ին ու խունկին ծառին վրան նըս-

տած՝ սուրբ Կարապետի հալվա կուտին ու Հորդանանին ջուրը կխմին: Ո՞րը աղեկ է ես ձեզի կհարցունում, հավատ ունենալք: Ենորհ ե օրհնություն տյառն մերույս Հիսուսի Քրիստոսի ընդ ձեզ, ընդ ամենեսին և՛ հավիտյանս և՛ հավիտենից, ամեն:

— Ապրի՛ս, ապրի՛ս, տեր պապա, խիստ աղեկ ասիր, մեանիմ բերանիդ. ատ նոր եկած մարդոց շատ տեղովը խայտառակեցիր, ապրիս, տեր պա: Ատ ի՞նչ անուշ լեզու ունիս եղեր... ասացին քարոզիչին, երբ որ ժամը վերջացավ և ամենքը բակը ժողովվեցան: Մարդիկ շրջապատեցին տեր X-ին և սկսեցին շնորհավորել, որ նորա մեջ այդպիսի քանքար կար ընդ գրվանավ:

— Մալատեց, տեր պա. ատ գիտությունդ դուն ինչո՞ւ այսքան ատեն մեզիմեն գաղտուկ կպահեսիր: Ապրի՛ս տեր պա, սիրտներս փառավորացիր, դուն այսօր ժամը շենցուցիր:

— Վազն արիք, ախպարըը՛ս, մեկ բան էր, շտե, ասինք՝ փնաց,— պատասխանում էր պարկեշտությամբ տեր X-ը,— ես ինքս չգիտեի, որ ասպես աղեկ կելլե, արի, արի, այսօր ժողովուրդիս մեկ քարոզ ասիմ, գեշ ըլլա նր՝ լնձի թողութին կանին, աղեկ ըլլա նր՝ խոմ իրենց հոգուն փրկութին է. պացի բերանս, ո՞րը ավետարանեն, ո՞րը մտքես, շտե, գիտես թե գեշ չէր, աղեկ բան եղավ... ամա, սկզբից շատ կվախենայի, քանի որ առջի անգամն էր, միտք կանեի, թե՛ ըլլա որ ամոթով մնամ. ամա Աստված ողորմաց, ամոթով չմնացինք: «Քարոզ», «քարոզ» կասին, մեմալ չեն ասիլ. իբր շատ դժար բան է, մի՛ ասի՛ շատ հեշտ է եղել. ասկից ետքը ես ամեն կիրակի ալ կասիմ ան. ի՞նչ բան է որ... հի՛, հի՛, հի՛, հի՛:

— Հեշտ է, դժար է, ատ մեր խելթին բան չէ, ան դուն գիտիս. մեզ համար շատ աղեկ բան էր ասածդ, ան նոր մարդոց վերան, որ ասիր, ան ամենեն ավելի հավնեցանք ամենքս ալ. ապրի՛ս, տեր պա, ապրի՛ս. մալատե՛ց, տեր պա. այսօր փառավորեցիր մեր ամենիս սիրտը: Բարի, հազար բարի տեսանք:

— Աստված օրհնե, բարի երթաք:

ՊԱԶԱՐԻ ԿԱԼԱԾԻ՛

Այսօր վաղ առավոտվա զանգերին բազար էի դուրս եկել: Ապրանքով սալեքը նոր-նոր էին գալիս: Մառախուղը դեռ վեր չէր

¹ Զրույց շուկայում:

բարձրացել: Տիկինս ինչ բան ասես ապսպրել էր. որդիս Եյսքից եկել էր, տարի ու կես չէինք տեսել, ո՞վ գիտեմ, ասենք, գուցե գրացի. բարեկամ աչքալուսի կզան. սեր պիտի առնեի: Էն մատուց-բաների շարքով նստած տեղում Չլիթիկի Արուսիկնք կանգնել, չգիտեմ ինչ էր ծախս անում: Գնացի մտալ:

— Բարի...

— Աստժուբարին:

— Ի՞նչ կա:

— Հեչ մի բան էլ չկա,— ասաց: Ո՞ր քամիից ես այսօր կանուխ վեր կացել եկել:

— Հա՛, — ասի,— որդիս եկել է...

— Ո՞րք, Մեղքո՞նք:

— Չէ՛, մեծս, Գիրքորը, Եյսքի էր, վաղուց է տեսած չէինք. կարող է, ասինք, աչքի լուսի կզան. զայՖեի համար սեր ու ինչ ասես բան պիտի առնեմ. կնոջ սովորութիւնն ճո գիտես, գիշերը մեկ... են ցույց տալիս, ցերեկը՝ հարչուր: Գո՞ւ ինչպես ես:

— Փառք Աստծու, մեղքերովս տանջվում եմ:

— Նոր բան կա՞, այդ սյունները շարքով ինչո՞ւ են տնկել:

— Այ մարդ, բանիդ նայի, այդ էլ մի նոր գոլովայի մի ֆենտն է. նայեցեք, իբր, ձեզ համար ինչքան եմ մտածում, շասե՛ պիտի չիկեմ. այնինչ՝ սո՛ւտ. ժողովից հետո ամեն բան իրեն առաջվա համարով կզնա...

— Այն չէ, բայց տեր Գևորգի բանը լսե՛լ ես:

— Չէ՛, ի՞նչ տեր Գևորգ...

— Ծի՛շտ, տո՛, շե՞ս լսել, այ մարդ, ի՞նչ է ասո՞ւմ. այդ դու դաշտից ես գալիս, ինչ է, մարդ կա՞ որ, այդ չիմանա:

— Ո՞ր տեր Գևորգը. Բալաբանի համար չէ՞ ասածդ:

— Հա՛, հա՛, Բալաբանի տեր Գևորգի, տո ճի՛շտ ես ասում, բան շե՞ս լսել:

— Էդ ժամը, սուրբ պատարագը վկա, որ հեչ մի բան չեմ լսել:

— Ո՞վ գիտեմ, եղբայրս, սուտ է, զորթ է, ասում են թե երեկ իրիկուն մարդուն մի լավ մութնուծեծ են արել:

— Տո՛, ճի՛շտ, ինչո՞ւ...

— Ով գիտի, եղբայրս, այդպես են ասում. դրանց սուտը-դորթը հեչ հասկանալ չի լինի... Սրիկայի զավակը, հնդուհու՛մ գնա-դրս է եղել ու կղմինդրագործ Ասվատուրի տունն է գնացել, մաս-ծել է, թե ինքը տանը չի լինի. կնիկը դեմն է դուրս եկել, ի՞նչ ես ուզում, ասել է: Մեր տեր Գևորգը, շուրը շտեպած իսկույն վար-տիքը հանել է, թողութիւն անես, ասել է, ես եկել եմ քեզ մի խոտ-տովանանք ասելու: Ի՞նչ խոտովանանք ունես ինձ ասելու, հարց-րել է կնիկը զարմանալով (ճիշտն ասենք՝ զարմանալու էլ բան է, էլի):

«Հապա, այսպես-այսպես, ես քեզ միշտ ժամում տեսնում եմ... շատ հավանել եմ... սիրահարվել եմ... գիշերները քունս կորցրել եմ... ցերեկներն էլ սիրուցս ցնդածի պես եմ: Ջանս, յան-կա, վերը Աստված, վարը դու, ինձ այս տանջանքից ազատի, հո-գիս, մարմինս քո ձեռքին է... արդեն, ինչպես դու գիտես... փող ես ուզում՝ առ, մանեթ կասես, երկու մանեթ կասես, երեք կասես, ես քեզ համար փող չեմ խնայի, միայն թե դու ինձ այս մուրադիս հասցրու»:

Շան կաթ ծծած կնիկն էլ, անառակի մեկը, սպասիր, ասել է, գնամ տունս-տեղս հավաքեմ, անկողին բան թափ տամ, պատրաս-տեմ, դրանից հետո կգամ քեզ լուր տալու: Ուղիղ գնացել է, ամուս-նուն մեկ-մեկ, ինչպես որ լսել է, պատմել է, այս ու այս լսեցի, ասել է: Ամուսինն էլ՝ ոպասիր, ասել է, այդ մարդու գլխին մի օլին գանք, դու գնա՛ հույս տուր, վրայիցդ հեչ բան հայտնի մի անի, ես նրա հախիցը կգամ, որ միանգամից ուրիշի կնոջից պոկ-վի. այս քանի անգամ այդ այլանդակ սրիկան իր կարգը պիտի մո-ռանա ու փառլետի արաբացիի շանելու բանը անի: Կնկանը այս-պես է խրատում. դու,— ասում է,— նրան ներս կտանես, ես էլ փողոցից կանչվոտելեն ներս եկողս կլինեմ: Չայնս լսածիդ պես վախեցողս եղիր, լեղիդ պատաածի պես, գլուխդ կորցրած, ամա՛ն գլխավորս եկավ, ասա, շուտ պահվիր, տեր պա, թե չէ վաղը մեռ-նելու կտեսնես: Որտեղ գնամ, որտեղ գնամ, որ ասի, հավաքունը մտիր, ասա ու մեր հնդուհու՛մի (Ասվատուրի կնիկը հնդուհու՛մ խնամելու խիստ վարպետ է, որովհետեւ գլուխից է, գիտե՞ս) բունը փակի, վրայից էլ փականը անցկացրու: Հետո ես գիտեմ ինչ անելու:

Ինչպես որ ամուսինը ասում է, կնիկն էլ այնպես է անում. տերտերին ներս է առնում. քառորդ ժամ անցնում է չի անցնում, մեկ էլ տեսնես փողոցից ամուսնու ձայնն է գալիս:

«Աման, կո՛րանք»,— ասում է կնիկը ու ինչ արածը չի իմանում. «Լսի՛ր, շուտ պարտակի ինձ»,— ասում է տեր Գևորգը: «Գե՛, շո՛ւտ, տեր պա, հավաբունը մտիր». նա էլ միամիտ-միամիտ գրնում է հավաբնում պահվում: Ամուսինը դեռ ներս չմտած՝ բակի մեջ կանգնում է. «Տո՛, — ասում է, — այդ հարևանի խողը էլի մեր բակն է մտել, կեղտոտել, փորփրել. այդ մունդառ հավանից ազատվելու՞ եսք, թե՞ չէ». ասում է ու վերցնում մի ահագին փայտ ու բակի անկյուններում խոզ փնտրողս է լինում: Հավաբունին է մոտենում: «Տեսնե՞ք այստեղ չի՞ մտել»,— ասում է ու փականք քաշում է ու դուռը բացում: «Հա՛, կարծես թե այստեղ է ու սկսում է պասապա՛ս, պասապա՛ս, ուժը հասածին չափ այնքան խփում, այնքան է խփում, այնքան խփում, որ ինքն էլ է ուժից ընկնում, ահագին կոպալն էլ է փշուր-փշուր անում: Երբ որ մի լավ ծեծում է, գնում է պատշգամբ ու դռան արանքից զգուշությամբ այդ հավաբնի կողմն է նայում: Տեր Գևորգը գլուխը կամացուկ վեր է բարձրացնում, նայում է մարդ կա՞, չկա՞: Իմանում է, որ մարդ չկա, արագ տեղից վեր է կենում տնքալով-տնքալով, թոփալ-թոփալ, տի՛թ պապամ, հայդե՛, ուղիղ տուն:

Կնիկ-բան վրան են թափվում. «Ի՞նչ եղավ, երեսդ կատարյալ մեռելի գույն է, ինչու՞ ես տնքում, այս ի՞նչ է, վրագ-գլուխդ պատռտած, ցեխոտված, փետուրոտ, երեսդ արյունլվա, շո՛ւտ հեքիմի ետևից... դե՛ղ բերեք...»:

— Ի՞նչ ես աղմուկ բարձրացրել, ա՛յ մարդ, բան չկա, բան չկա. ճաշակելու էի գնացել, մութ էր (այս շոգերին հեշ ժամը վեցին մութ կլինի՞, սո՛ւթ) սայթաքեցի, փոսը ընկա (այնինչ, ինչ սայթաքել, ինչ փոս). սուս մնացեք,— ասում է,— ձայն չհանեք, դուռ դրացի բան չիմանա. ո՞վ գիտե ինչ վատ բաներ կհնարեն. մեր ժողովրդի շար լեզուն չգիտե՞ս, ինչ է. թող գնա, մոռացվի:

Բայց ո՞ր մոռացվելն է, որ մարդ չիմանալն է. կես ժամ չի անցնում, որ ամբողջ քաղաքը իրարանցում է ընկնում, մա՛րդ է հավաքվում, մա՛րդ է հավաքվում որ՝ աշխարհը ոտքի տակ են առնում. «Հա՛յ, տեր Գևորգը ծեծ է կերել, հա՛յ տեր Գևորգը ծեծ է կերել...»:

— Հա՛յ, ես դրա... տո՛, հեքիաթի պես բան է եղել:

— Հեքիաթից էլ վատ, ի՞նչ է քու ասածդ: Հիմա տես, որ բանը առաջնորդի, կամ կաթողիկոսի ականջը չհասնի. կամ մոռուրը ետ կվերցնեն, կամ փիլոնը: Այսպես էլ բան, եղբայր, հե՛շ լաված չէր. ամո՛թ մեր հոգևորներին, դրա՞նք բարի օրինակ պիտի լինեն իրենց ժողովրդին. ամո՛թ, հազար ամո՛թ. թյու՛ֆ, անառակ շուն:

— Այս չէ, բայց մենք զրույցով ընկանք, մարդիկ բազարը դատարկեցին. գնանք մենք էլ մեր բանը տեսնենք... Այդպես, հա՛, մեր խաշակիր ավագ քահանան ծեծ է կերել հավաբնի մեջ, ամո՛ւշ իրեն:

— Ինչպես է ես...

— է է է՛, բարև մնաս... հա՛յ, ես դրա... ինչ զարմանալի բան:

— Բարով գնաս... հապա՛, հապա՛, զարմանալի որ, զարմանալի:

ԵՐԵՎԱՆ

Էրևան եկանք թե չէ, մեզ բերին մի քարվանսարա, «դե, այս է այստեղի հասթինիցան»¹,— ասին... Մի մեծ տուն, մեջտեղը բակ, իրար ետևից շորս կողմը սենյակներ. բակի մեջտեղը էշեր, ուղտեր, հայ, տաճիկ, թաթար, ղզլբաշ, հակերով ապրանքներ. բոլորը խառնիխուռն, այնպես որ՝ շունը տիրոջը չի գտնի, այդ է գրանց գոված քարվանսարայր. դվոռ ասես, դվոռ չէ, հասթինիցայի հո հեշ չի նմանի, ուրիշ տեսակ մի բան է... Մի հատ նեղ պատուհանով սենյակ ցույց տվին: «Եթե ուզում ես, այստեղ դատարկիր իրերդ»,— ասին: Չամադանս-բանս ներս առի, արագ-արագ ճամփի շորերս հանեցի, նորը հագա, սենյակիս դուռը կողպեցի, բանալին ջեբս դրի, գնացի բազար:

Գրանց բազարը մերին չի նմանում, մատուշկաներ հեշ չկան, մանր-մունր մթերքները այստեղ ահագին մարդիկ են ծախում, ամուր-ամուր գոռալով: Մարդու մեկը կպել է թե՛ «այս ձուկս, անպայման առ»: «Ո՞վ մարդ,— ասում եմ ես դրան,— ձուկդ ի՞նչ

¹ Հյուրանոց:

Սուս մնացի, սուս մնացի մեկ էլ բռունցքս վերցրի փոյամբ այդ ասողի երեսին խփեցի... Մարդը կատաղեց. վրաս վազեց, մահերս բռնեց, երկու ապտակ էլ նա ինձ կպցրեց, վայր գցեց... է՛հ, շնն կենան, մարդիկ մեջ մտան, հազիվ քաշեցին հանեցին ինձ տակից... Չէ՛, նիշեվո՛ւ, լեզուները մաքուր հայերեն չէ, բայց իրենք ուժեղ մարդիկ են... Դու ինչ կասես, էրեանի գինին շատ թունդ է, նրա անուշ եղածին մի նայի...

ՔԱՆԿԵՆՈՆ

— Այդպես ես ասում, բայց Սիմավոն-ա, այդ ավետարանի մեջը չի գրած, որ երբ Քրիստոսը լրիվ երեսուն տարեկան որ եւա՞վ՝ Հորդանան մկրտվելու եկավ...

— Այ մարդ, ես մկրտվելու չեկա՞վ, ասել եմ, ինչ է... Իհարկե, մեռնեմ զորությանը, դե՛, ինչպես սովորությունն էր որ քսանինից դուրս եկավ երեսունը մտավ, մկրտվեց...

— Եղբայր, ի՞նչ դատարկ բաներ է ձեր ասածը, ասաց այն կողմից Սեղպոսի Մատուրը, տերն մեր Հիսուս-Քրիստոսը աշխարհ գալուց հետո քառասուն օրից շմկրտվե՞ց որ... միտքս է գալիս, որ Սիմոն Մերունն էր նրան մկրտող քահանան... թե՛ սխալ եմ...

— Չէ՛, էլ ինչ, ասաց Սիմավոն-ան, այն Սիմոն Մերունը տաճարի մեջ երկրպագություն արավ, նրա մկրտողը սուրբ Կարապետն էր...

— Է՛հ, չգիտեմ, որ լինի, կլինի, տեսածս բանը չի... ես գոնե այսպես եմ միտք անում, որովհետև երեսուն տարու մեծ մարդ... մեղալսաստ՞ո՛ւ... մեղա՛... մե՛րկ... բա՛ց... խելքս չի հասնում...

— Եղբայր, ի՞նչ դատարկ բաներ ես ասում, Քրիստոսը մա՞րդ էր մեզ պես, նրա հղությունը, այստեղ նայիր, ինչպես որ զըրված է Սամոցի մեջը, Քափոնի հրեշտակը, էլի, հոգին սուրբ-մեռնեմ զորությանը, Քեղիսեհեմի մուսլուղը, էլ ի՞նչ ասեմ՝ մոգեր, բաներ, դե՛ այսպես եղավ, ոչ թե հողեղեն աղամորդու պես՝ հարս, փեսա, հարսանիք-բան— այդպես բաներ չկար. այդպես մտածողին ու ասողին այս կողմում քարկոծում էին, հերետիկոս էին անում, այն կողմում դժոխքի մեջ կարող պղնձի մեջ եփում էին:

— Կհամարձակվեի՞ր բերանդ բացել...

— Ինչո՞ւ բոլորս էլ որ Քրիստոսին ենք հավատում, բայց հոռոմը մի ձևով է Աստված ճանաչում, հայը՝ մի ձևով, ճուղկուտողն՝ էլ՝ մի ձևով,— ասաց Մատուրը:

— Դրա խոսքը երկար է,— ասաց Սիմավոն-ան,— բայց ամեն վատության պատճառը անօրեն, անհավատ Քաղկեդոնն էր...

— Բա Արիոսն էր,— ասում են ո՛ւ...,— ասաց Սըրբայի Մելքոնը:

— Լսել ես, բայց կարգին չես լսել. Արիոսը՝ այն առաջ էր, երանից հետո Քաղկեդոնը եկավ. Քաղկեդոնն էր ամեն բան կեղտոտողը. Քաղկեդոնը որ շլիներ, հայերիս բանը զաֆսեմ ուրիշ կլիներ. մեր հայի տունը հիմքից քանդող՝ էն-էն-էն անհավատ, անա՛զգ, մունդառ Քաղկեդոնն էր... Քաղկեդոնը չեկած՝ հայ, ուս, ֆռանցուզ, նեմոցե, հոռոմ չկար, բոլորն էլ մի լեզու, մի հավատ էին. այն կեղտոտ Քաղկեդոնը որ եկավ, հենց նա մարդկանց մեջ դուշմանություն գցեց. «դու հայ ես,— ասաց,— քու ժամդ իմացիր, դու հոռոմ ես,— ասաց,— քու ժամդ իմացիր, դու ֆռանցուզ ես,— ասաց,— դու էլ քու ժամդ իմացիր»... դե՛, այսպիսով բոլորն էլ իրենց տեղը քաշվեցին. սե՛ր, միաբանություն կորավ ու դրանից հետո սկսեցին մեկը մեկի վրա թուր ու թվանք քաշել...

— Ի՞նչ ես ասում, այդ աշտարակն էր, Քաղկեդոնը չէր որ,— ասաց տեր Բարսեղը:

— Չէ՛, շանս, տեր-պա, սխալ ես, Քաղկեդոնն էր. աշտարակը ե՛րբ, Քաղկեդոնը ե՛րբ. աշտարակը՝ այն ամայի տեղն էր, Քաղկեդոն որ ասում են, այն զաֆսեմ ուրիշ մարդ է... որ տերտեր չենք՝ գրքի երես էլ չենք տեսն՞լ, ինչ է. տերտեր ասածդ, սիրտըդ լցավի, տեր-պա, գրքի մի երեսն է կարդում, էլ մյուս երեսը որ դարձնում է, ասում է՝ կնունքի են կանչում. մենք՝ աշխարհականներս, գրքի երկու երեսն էլ կարդում ենք... Քաղկեդոն որ ասում են՝ մի աներես, կովարար, մարդ շհավանող, անպետք հոռոմ էր. սկզբից թագավորի սիրտը առավ, իրեն լավ, խելք մարդ ճանաչեցրեց, հետո սկսեց, հղբայրս, հանդիպողին քյուֆուր անել, հանդիպողի հավատը գետնին խփել. դո՛ւք, իբր, Աստված չե՞ք ճանաչում, դո՛ւք Աստծու գոյությունը, միությունը, անցիներ, Որդին, Հոգին սուրբ կարգին չգիտեք, ես ի՞նչ իմանամ, բոլորին

Կաթուիկ:

ցեխն է խոթում հանում... մի մարդ դեմը դուրս եկող, պատաս-
խան տվող չկար, բոլորն էլ հիմարի պես սուս էին մնացել... Այն
ժամանակը, հորվիրապից դուրս է գալիս եղբայրս, մեր Գիրքոր
կրսավորիչը. «Դո՛ւ ես, ասում է, իմ հայ-քրիստոնյայիս անունը
կոտորողը, դո՛ւ ես իմ տված հավատիս չհավանողը, ցած խփողը»,
այն հիշյալ սուրբ գեղարդովը պա՛ս դրա գլխին, պա՛ս դրա գլխին:
Սեր Բաղկեղունը դունչը, պոռնկը արյունլվա, ուղիղ Հոռոմի թա-
գավորին է գնում. «այսպե՛ս, այսպե՛ս բան»,— ասում է,— հա-
յերը ինձ անպատիվ արին, դուրս արին ու մեր հավատի վրա թը-
քեցին»,— ասում է: Թագավորը կատաղում է. «այս բանը բան
չի»,— ասում է,— հայի խելքը գլուխը պիտի բերեմ»,— ասում է:
Մի կոնդակ է գրում, իրեն շինովնիքները, սենսթուռները ստորա-
դրում են, ուղիղ մեր Տրդատ թագավորին են դրկում:

Թուղթի մեջ այսպես է գրված եղել՝ «Բանի որ իմ Քաղկեղոն
եպիսկոպոսին այդպես եք արել ու նրա սովորեցրած հավատի վը-
քա այդպես թքել եք, այդ բոլորը նույնն է, որ ինձ եք անպատիվ
արել, գրում է, քառասուն օր ձեզ ժամանակ եմ տալիս. այդ քա-
ռասուն օրվա մեջ երբ որ չհաշտվեք ու Քաղկեղոնի առջև մեղայի
չգաք, ես թոփ ու թվանքով վրաներդ կգամ ու ձեր քաղաքը— այն
ժամանակները հայերը դեռ Աննա քաղաքում էին ապրում, մե՛ծ
քաղաք էր— տակն ու վրա կանեմ, ձեզ էլ գերի կքշեմ»,— գրում
է: Հայերը սարսափում են: Մեջների ամենամեծերը գնում են թա-
գավորի ոտքերն են ընկնում. «Անա՛ն թագավոր, — ասում են,—
արի այդ բանը մի անի»,— ասում են: «Որ այդպես է, — ասում է
Հոռոմի թագավորը, — անունը չգիտեմ Դանիել է, թե Մանիել է—
այս բոպեիս Քաղկեղոնի առջև մեղայի պիտի գաք. — ասում է
ու սովորեցրածը ընդունեք»: Հայերն էլ վեր են կենում ու ասում.
«Թագավոր, ապրած կենաս, ասում են, մենք մեր գլխու չենք,—
ասում են,— այնտեղ մեր թագավորը կա՛, — ասում են,— կաթո-
ղիկոս կա՛, — ասում են,— եպիսկոպոս, տերտեր, ժողովուրդ կա,—
ասում են,— մեկ տեսնենք նրանք էլ ի՞նչ կասեն, համաձայն կլի-
նե՞ն արդյոք»: «Որ այդպես է, — ասում է թագավորը, — շուտ գը-
նացեք, դուրս ժողովեցեք, ձեր բոլոր իմաստուններին, գիր-կար-
դացողներին հավաքեք, — ասում է,— ես էլ իմ կողմից Քաղկե-
ղոնին կղրկեմ. թող մի կողմը ասի, մյուսը լսի, մյուսը ասի, մեկը
լսի՝ ճիշտը որի կողմը որ լինի, նրա ասածին ամենքն էլ թող հա-
մաձայն լինեն: Լա՛վ է, թե՛ Լավ չէ ասածս»,— ասում է: «Շա՛տ

Լավ է»,— ասում են հայերը. համաձայնում են ու գնում են իրենց
տեղը. «Հոռոմի թագավորը այսպես-այսպես հրաման արավ»,—
ասում են: Հայերիս բնութքն ևս գիտե՞ք, մեր աչքը ի բնե թուր ու
թվանքից վախեցած է, բայց լեզվով կոխվ անելը իսկական մեր
շնորհքն է, այդ բանին մենք խիստ վարպետ ենք: Ի՞նչ խոսքս
երկարացնեմ, ինչպես որ Հոռոմի թագավորն է ասում՝ հայերն էլ
այնպես են անում, ամենքն էլ Աննա քաղաքի մեջ են հավաքվում.
Քաղկեղոնն էլ է գալիս, սկսում են կոխվն ու իրարանցումը. սա
ասում է, նա չի լսում, նա ասում է, սա չի լսում, բոլորն էլ ասել
են ուզում, մեջտեղումը լսող չկա, հոռոմը գոռում է, հայը՝ ավելի
շատ, այնքան են գոռում, այնքան են աղմկում, որ մարդկանց
բերանների թուրը շորանում է, ձայները խաղում— այդպիսով
վերջանում է դրանց կոխվը: Այդ օրից էլ հոռոմները մեր անունը
Արիոս են դնում, մենք էլ նրանց Քաղկեղոն ենք ասում:

— Լա՛վ, իմացանք, որ Քաղկեղոնը հավատներիցս դարձնել
էր ուզում մեզ... բայց նրա ասածի իմաստը ի՞նչ էր... այսինքն
ուզում եմ ասել, թե նրա ուսմունքի էությունը ի՞նչ էր... գուցե
մարդը, ո՛վ գիտի, միտքը մի բան ունեւր... Իհարկե մեր լուս հա-
վատին հավատ չի հասնի՝ այդ ո՛վ չգիտի, բայց ուզում եմ ասել,
թե Քաղկեղոնը ի՞նչ էր ասում,— ասաց խաֆաֆ Պողոսը:

— Քաղկեղոնը պապայի գլխից մեծ էր... ուտում, — ասաց
Սիմավոն-ան, — ապուշը իրեն ասածը ինքը հասկանո՞ւմ էր որ,
ժամորդը, իբր, սկիհի մեջ գինու հետ ջուր էլ թող լցնի, հեջ այդ-
պես բան կլինի՞. սուրբ Աստվածի մեջ, իբր, խաչեցավ մի ասեք.
այդ ի՞նչ տեսակ բան է. հա՛վ է, ի՞նչ է, պոշը կտրես, բաց թող-
նես. հեջ գաջաջ աղոթք կլինի՞. այդ ի՞նչ խայտառակ բան է.
ծնունդի օրը, իբր, ջուր մի օրհնեք. նշխարքի խմորի մեջ, իբր,
մայա խառնեցեք... մա՛մա՛ յիդ... ասելու տեղը չի՞. շան երես,
նշխարք ասածդ կարկանդա՞կ է, ինչ է... մեղայաստծո՛ւ, մեղա՛...
Դե, այսպես արեղ-ցփեղ բան էր նրա ասածը... հետո էլ ուրիշ
բաներ էլ էր ասում. «Մրկու բնություն՝ մեկ գոյություն, միու-
թյուն, անձին, բանին, մարդեղություն, մարմնառություն, գոյու-
թյուն, հայրը առաջ, որդին ետևից անժամանակ... մարմինը
մարդկային... հոգին աստվածեղեն... մարմինը շարժարկեց... հո-
գին ու մարմինը... ես ի՞նչ իմանամ, եղբայրս, այսպես խառնի-
խուռն բաներ է... այդ մանրամասն իմանալ որ ուզես, մի օր Պե-
տրոսը որ գնաս, այնտեղ մի քոռ գեներալ կա, խուղաբաշով են
ասում, թագավորի էլ մոտիկ մարդն է, նա այդ բոլորը լավ գիտեք»:

ՀՈՂՎԱԾՆԵՐ, ՀՈՒՇԵՐ, ՃԱՌԵՐ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵՋՈՒ

Նորերումս դուրս-եկավ Մոսկովումը «Հիշատակարան կազար-
յանց Տոհմի» անվանած գիրքը, որ լույս-ընծայել է կազարյանց
ազգայույս ճեմարանի կրոնի դասատուն (Մսեր Մագիստրոսը):
Հիրավի որ այս գիրքը մեծ ուրախություն պիտի պատճառե ամեն
մի բարեմիտ հայի, մանավանդ նոցա, որոնք կենում են Ռուսաց
Տերութեան մեջ. պատճառ որ՝ հազիվ թե կգտնվի որպես և իցէ
հայաբնակ քաղաքներումը այնպիսի տուն, ուր-որ մտած չլինի
այս բարերար տոհմի առաքինագործ նշույլը: Բայց այս անգա-
մին ոչ գրքի ներքին պարունակությունը տվեց մեզ շարժառիթ խո-
սել (որ մենք պարտ անձին համարում ենք ուրիշ անգամ՝ ավելի
մանրամասն ճառելու նորա վերա), այլ նույն հեղինակի խոսքերը,
որով վերջանում է հառաջաբանությունը:

«Ի մատենագրութեանս յայսմիկ, ասում է գիտնական Մսեր
Մագիստրոսը, զգրոյն, այն է, զհինն, զկանոնաւորն եւ զհարա-
դատն մերի կիր ասի բար-բառ, եւ ոչ զնորն շճակեալ, իմա՝ զոսմ-
կացն զկողմանց կողմանց զաշխարհիկն անուանեալ, աղիազուր լե-
զու, զի որքան համեղական եւ ազգոյ եւ գեղեցիկ է առաջինն,
այնչափ անհամ է վերջինն, թոյլ, տգեղ, անհեթեթ և զուրկ միան-
գամայն ի կարի կարեւորացն կանոնաց ուղղախօսութեան, որպես
եւ շատք իսկ ոչ յաննշանից արանց՝ որ քաջահմուտ լեզուիս ճա-
նաչին, վկայեն անաշառապէս»:

Այսպիսի սաստկությունը, այսպիսի խստությունը ընդդեմ աշ-
խարհիկ լեզվին (թող ներե մեզ հարգելի հեղինակը), որքան ավե-
րորդ, այնքան ևս զարմանալի երևեցավ մեզ Ավելորդ այնու հա-

մար, որ մինչև ցայսմ, թվի մեզ: չի եղեր այդ սովորությունը, ոչ
հին և ոչ նոր հեղինակաց մեջ, որ յուրյանց գրքի յառաջաբանու-
թեան մեջը հիշեն՝ թե ինչո՞ւ համար են գրոց լեզվով հորինել և
ոչ հասարակ խոսակցութեան բարբառով. իսկ եթե ընդհակառակն,
աշխարհիկ լեզվով գրողը, որպես տեսանում ենք, սորա համար
խոսում են, պատճառը այն է, որ սոքա հին սովորությունը չհե-
տեկելով՝ պարտավոր են համարում հայտնել յուրյանց նպատակը,
որ իբր նոր իմն հնարք է՝ լուսավորությունը ազգի մեջը տարա-
ծելու համար: Արդա՞ր են մի սոքա կամ մեղապարտ՝ հետևյալ տո-
ղերումը փոքր ի շատե կտեսնամք, և հարգելի հեղինակը գուցե
կտեղեկանա՝ թե ինչո՞ւ համար զարմանալի ևս համարեցինք սո-
րա վերոհիշյալ խոսքը:

Հարգելի հեղինակին չէ անհայտ թե ի Ռուսաստան, ի Տաճ-
կաստան և այլ տեղիք, ուր և ժողովու՞ծ են հայազգի բնակիչք, շատ
գիրքեր են հայտնված աշխարհիկ լեզվով, ուրեմն նոցա հորինող-
քը, որոց մեջ կան բավական երևելի անձինք, չկարացին հասկա-
նալ յուրյանց աշխատանաց զուր և անարժան լինելը, և կամ գրոց
լեզվի թշնամի՞ք էին, հուսամ թե՛ չեք ասիլ՝ այո: Գուցե թե աշ-
խարհիկ լեզվի գործածությունը ազգի հարկավորություն համարե-
ցին, կամ նորա պահանջողության իրավունքը ճանաչեցին:

«Զ է մշակեալ», — ասում է հարգելի հեղինակը, — «այդ լեզուն
անհամ է»: Ծճմարիտ է, բայց եթե այդ շճակյալ լեզուն բոլոր
ազգը յուր բերանումը ունի և փոքր ի շատե հասկանում է միայն
այդ լեզվով գրած գրքերը. հա՞րկ է արդյոք այդ լեզվով նորա
հետ խոսել և նորա համար գրել, թե այն հին և մշակյալ լեզվով,
որո համար նա ասում է՝ «կարելի է լավ է, բայց ես չեմ հասկա-
նում»: Ակնհերև չէ՞ արդյոք ևս, թե ազգը բան հասկանալով պիտի
լուսավորվի, գուցե նորա լուսավորության մեջը հետզհետե մըտ-
նի յուր հին լեզվի գոնե մասնավոր տեղեկությունը ևս: Եթե ան-
համ է այդ լեզուն, ինչո՞ւ ուրեմն խոսում է ինքը հարգելի հեղի-
նակը, որ շատ լավ գիտե դրոց համեղական լեզուն: Կարելի է ասե
նա՞ «Այնու համար, որ ազգը չի հասկանալ իմ գրոց բարբառը»:
Եթե այդպես է, ուրեմն պետք է համաձայնի՞ թե հարկ համարե-
լով աշխարհիկ լեզվով խոսելը՝ ոչ միայն անվնաս է, այլ և շատ
օգուտ է նորա համար գրքեր ևս հորինելը, մանավանդ որ գրքի
մեջ ըստ մեծի մասին ավելի բան կհասկանա, քան թե խոսակ-
ցութեան: Սորանից հետևաբար երևում է, թե լուսավորությունը և

եւրոպական քաղաքականութիւնը անշուշտ միջնորդութեամբ աշխարհիկ լեզվին պիտի տարածվի մեր ազգի մեջ. և եթէ այդ ճշմարիտ համարե հարգելի հեղինակը՝ ուրեմն աներկբայ պիտի լինի նա, թե աշխարհիկ լեզվի մշակումը այդ միջնորդութեան մեջն է, որովհետեւ դեռ ևս իբրև անգործ երկիր է:

«Ռամկաց է»,— ասում է հարգելի հեղինակը.— բայց միթէ հարգելի հեղինակի խոսակցական լեզուն ռամկաց է, ո՛չ. բայց հայտնի է՝ թե գրոց ևս չէ՛. ուրեմն այժմյան ժամանակի համար էրբեր է հարմարել մեկ այնպիսի եղանակ կամ ձև խոսելու ու էրբեր ևս հորինելու որ գրոց լեզվի նման ազգին անհասկանալի չլինելով՝ կարե ռամկաց ևս չլինել. բայց ռամիկ ժողովրդոց բայականապես հասկանալի լինել: Մի գուցե ծիծաղելով մեր վերա՛սսե հարգելի հեղինակը՝ «Թող այդ ձևը լինի քո գրույդ ձևը, որո՛ւնքը անդադար երևում է միևնույն բառից զանազանակերպ հոլովումները և խոնարհումները, և որ ամենևին զուրկ է այն գեղեցկութունից, որով գրոց լեզուն կարե պարծիլ»: Այդ պակասութիւնները մեք խոստովանում եմք. բայց եթէ հրամայե հարգելի հեղինակը՝ փոքր ինչ կարեմք արդարանալ ևս ասելով թէ՛ որովհետեւ աշխարհիկ լեզուն շունի սահմանավորյալ կանոններ, ուրեմն նորա խորութիւնները հարկ է հանձնել ժամանակին, որ մեզ համար թերևս անխմանալի հնարյուր մշակելով այդ լեզուն, որպէս վերը ասացինք, նորա կանոնները ևս կրեն սահմանի մեջ կրնե, իսկ եթէ ոչ այդպէս՝ գուցե զորացուցանելով մեր մեջը գրոց լեզվի տեղեկութիւնը՝ փոքր առ փոքր սովորական կշիռն մեզ համար վերջնույս կանոնները: Այդ լեզուն, որով մենք գրում եմք և որով հարգելի հեղինակը խոսում է՝ գրոց բառերից չէ՛ բաղկացած արդյոք և նորա ձևն չէ՛ միայն հարմարացրած ռամկաց խոսակցական ձևին, եթէ միջնորդութեամբ այդ ձևին ազգը կարող էր փոքր ի շատե մեր խոսքը հասկանալ, կարող է նմանապես ընտելանալ փոքր ի շատե նաև մեր գործածած գրոց բառերին, և այս կերպիվ կարելի է նորա հույսը կկատարվի՝ թե գրոց բառերի հետ ընտելանալով՝ այդ լեզվի կանոնները և ձևերը ևս կարեն երբեմն խորթ չլինել նորա համար: Այս միտքի հաստատութեան համար եկեք տեսանեմք՝ թե Տաճկաստանի մեջը,— ուր ավելի է գործածած աշխարհիկ լեզուն,— ի սկզբանե մինչև ցայժմ այս գործածութիւնը վնասե՞ց գրոց լեզվի տարածութեանը, այսինքն՝ եթէ աշխարհիկ լեզուն գիրքերի և օրագիրների մեջը գործածած

չլինեին՝ գրոց լեզվի տեղակալը ավելի՞ կլինեին այժմ, թե պակաս: Ըստ մեր՝ կարծյաց պակաս կլինեին, որովհետև գրոց լեզվով գիրքերը և օրագիրները չէին կարողալ և այդ կնշանակե թե՛ ոչինչ չէին կարողալ. իսկ կարողալով աշխարհիկ լեզվով գրած բաները ավելի ևս ընտելացան գրոց լեզվին և շահաբեր համարեցին նորա ճիշտ ուսանելը: Չիցե թե հարգելի հեղինակը կամենա մեզ ցուցանել Միտիարյանց միաբանութիւնը, որ առանց այդպիսի հնարից հասավ գրոց լեզվի տեղեկութեան վերին աստիճանը: Սորա պատասխանը ի մերույս կողմանե այն է՝ թե նոքա լեզվի ուսումները իբրև արվեստի պարագեցան. իսկ բոլոր ազգը ոչ կոշկակար կարե լինել և ոչ դերձակ: Եթէ աշխարհիկ լեզուն շունի գեղեցկութիւն, այդ կնշանակե՛ թե սա շունի դեռ կարոտութիւն գեղեցկութեան. այսինքն՝ այդ լեզվով խոսողը ուսումնասիրական կենաց մեջ չլինելով, դեռևս շունին սովորութիւն խոսելու զանազան ուսմանց, զանազան գյուտից և կամ քաղաքագիտութեան վերայ: Երբ որ այդ ամենայն բաները փոքր ի շատե կլսեմք սոցա բերանիցը կտեսնենք, որ նոքա նույն լեզվով չեն խոսում, որով հառաջ էին խոսում. ուրեմն զարմանք չէ՛ եթէ աշխարհիկ լեզվով գրութիւնը և հորինվածք ևս այդ աստիճաններովը ելանեն կատարելութեան,— իհարկե և գեղեցկութեան վերին սանդուղքը. ուղղախոսութեան կանոնները ևս, որք այժմ կան ամենայն խոսակցութեանց մեջ՝ այն ժամանակ կդաշնավորին և կարեն առարկա ևս լինել ուսման: Ուրեմն մեր այժմյան կենդանի ազգի համար հա՞րկ է մեզ արդյոք հետ վազել այն կանոնները ըմբռնելու համար որ մեռյալ սերնդոց կպատկանեին և որոց օտարութիւնը այժմ ազգը կոր ի գլուխ խոստովանում է: Հառաջ երթամք այլ լուսավորյալ ազգաց նման, որովհետև մեր հառաջումը ևս, որպէս տեսանում եմք, կան կանոններ և կարոտում են միայն կարգավորութեան և դաշնավորութեան. եթէ մեր խոսակցական լեզուն մենք չեմք ամալիլ գործածել՝ շուտով կտեսնեմք, որ ուղղախոսութեան, գեղեցկախոսութեան և քաղցրախոսութեան կանոնները կհայտնվին: Ով թե ինչպէս գեղեցիկ կլինին այդ կանոնները, ի՞նչպէս կսիրեն նոցա մեր ազգը, որովհետև յուր կենդանի լեզվիցը կբխեն, ի՞նչպէս յուր կյանքը կսկսեն նորանցով զարդարել՝ իբրև գեղեցիկ հագուստով: Եթէ այդ ամենայնը անընդունելի է հարգելի Հեղինակին և անախորժ, ուրեմն նա ավելի պիտի հավանի ազգիս այժմյան աննախանձելի գրութիւնը, երբ որ մեր եղբորը կամ բարեկամին հարցնում եմք՝

ինչո՞ւ համար են միշտ այլազգի գիրքերը կարդում և հայերեն ոչինչ չեն կարդում՝ նոքա պատասխանում են մեզ՝ «Ի՞նչ կարդամք, որ ոչինչ չեմք հասկանում, օտարինը էլի փոքր-մոքր հասկանում եմք և կարդալով գոնե խոսել եմք սովորում», այսինքն՝ օտարի լեզուն սովորում են և հայինը մոռանում: Քող հարգելի հեղինակը տեսնե Մոսկովի (ուր որ ինքն է բնակում) բնակիչ հայերի գերդաստանը, որպես և մենք տեսնում եմք Պետերբուրգի հայոց տները, ուր ծնողք գեղեցիկ կխոսեն հայերեն, իսկ զավակունք հազիվ մեկ քանի բառ գիտեն, և հարցնելու ժամանակը ամոթով միայն ասում են՝ «խասկանում եմ»: Մի՞թե ազնվամիտ հեղինակի սիրտը չի ցավում, խղճմտանքը չի շարշարվում՝ այդպիսի խոսակցությունից: Մենք ևս խոստովանում եմք՝ այդ միտքը, այսինքն աշխարհիկ լեզվի գործածության հարկավոր լինելը մերը չէ, և շատ ժամանակ չէ անցած, որ պատվելի հեղինակի նրման կատեխիմա մեր անհամ աշխարհիկ լեզուն. բայց շատ անգամ խորհրդածությանց մեջ լինելով այս առարկայի վրա և խոսակցելով այլոց հետ՝ տեսիմք, որ այդ միտքը հզոր է և նորա զորությունը չի խոստովանողը հատկապես չէ կարեկցում ազգի սգի-տությունը. որովհետև չէ կամենում նորա լուսավորությունը. կարելի է այլով կերպիվ ևս ասել՝ թե շատ բան ավելի է սիրում, քան յուր ազգը:

Հարգելի հեղինակը կարե ասել ոմանց հետ ի մասին՝ թե մեր աշխարհիկ բարբառը զանազան է այլևայլ հայազգի ժողովրդոց մեջ: Ճշմարիտ է: Բայց մի՞թե իրավունք է մեզ այժմ իսկ պահանջել, որ մեր Ռուսաստանի աշխարհիկ լեզվով գրած գիրքերը ամենայն երկիրներումը կարդան, երբ որ մեզ հայտնի է, որ գեո Ռուսաստանի հայոց մեջ շատ չեն ընթերցողքը, իսկ եթե նույն Ռուսաստանի հայոց մեջ կա զանազանություն, այդ տեսանում եմք Ռուսաց մեջ ևս, որ երբեք խափան չէ լինում մեկ լեզվով նոցա գիրքերը գրվելույն: Ուրեմն՝ թող մեր գիրքերը, որ Ռուսաստանի աշխարհիկ լեզվով կգրվին, միայն մեր ժողովուրդը կարգա և սորա համար ևս կարեմք լիասիրտ փառք աստուծո ասել և հավատացնում եմք հարգելի հեղինակին թե՛ երբ որ Ռուսաստանի մեջ մեր գիրքերը ուրախությամբ և բավականությամբ կկարդան՝ նոցա արժանավորությունը չի թաքցվիլ օտար երկրացի հայ ժողովուրդից, — նոքա ևս կկարգան մեր գիրքերը, որպես և մեր նորանց գիրքերը: Այլ ահա այստեղ է բացվում հազիմանակի հան-

գեսը. — ինչ-որ նոցա գրվածոց մեջը մեզ քաղցր և գեղեցիկ կերպի՞ մեք կընդունենք և գործ կածենք. այսպես ևս օտարք մեր գիրքերի հետ կվարվին: Նպատակը ակներև է թե՛ փոքր առ փոքր կարգամք, եթե ոչ միտքյան, գոնե այն աստիճանին, որ լավ գիրքը, լավ հորինվածքը արեցեք երկրի՝ միօրինակ լավ կլինին նոցա և մեզ համար. անկասկած պիտի լինիմք՝ թե այդ հազողությունք բավական կօգնե կանոնների և գեղեցիկության համար ևս:

Արդարև կմեղանչեինք, եթե քարոզեիմք այժմ իսկ ուսումնա-րանաց մեջը աշխարհիկ լեզուն ուսուցանել, որովհետև այդ լեզուն շուրի գեոևս ուսանելի կանոններ, և ի մանկությունն գրոց լեզուն ուսանելով՝ մենք հասնում ենք այն նպատակին, որ ուսկի հետ խոսելու ժամանակը, թեև հատկապես նորանից լավ եմք խոսում, նա կարողանում է յուր խոսակցությունը մեզ հետ շարունակել և ցանկանում է ինքն ևս լավ խոսել. այս բանիս հաստատությունք կարող եմք դուրավ երևաբերել շատ օրինակներով, որ կգտնեմք երկար շեղեցիկում: Եթե կհավատա հարգելի հեղինակը՝ թե մեք անհաշտ թշնամի չենք գրոց լեզվին, կարեմք ասել՝ թե այժմյան ժամանակի համար նա պիտի լինի իբրև հանք, որո միջից պիտք է դուրս բերեմք ոսկի և արծաթ, որոց կարոտությունը զգում է մեր աշխարհիկ լեզուն: Գրոց լեզվի կանոնավոր և գեղեցիկ լինելը ամենքյան ընդունում են. բայց արդյոք մեր կյանքը մտանո՞ւմ է այդ լեզվի մեջը: Հարգելի հեղինակը և յուր պաշտոնակիցք այնպես քաջ գիտեն մեր գրոց լեզուն, որ մուսաստանի հայկաբաններից միին են, ուրեմն միմյանց հանդիպած ժամանակը ինչո՞ւ համար չեն խոսում գրոց լեզվով. այդ չէ՞ որ՝ նոցա կյանքը և վարքը ևս չէ տանում այդ լեզվին, և ժամանակը ինքք օտար է համարում նորան: Կամեի ասել ևս՝ թե գրոց լեզվի գրքի մեջ գործածությունը սովորությունամբ մնացած լինի մինչև ցայժմ կամ նույն կարծյոք թե՛ գեղեցիկ է, ազգու է և ազն. այլ ոչ անշուշտ հարկավորությունը:

Ավելորդ չենք համարում այստեղ բերել հարգելի Ախվերդյանի երևելի խորհրդածությունը այդ մասին, որ մեծ լույս ձգում է գրոց և աշխարհիկ լեզուաց վրա, որի նմանը մեր տակավին չէինք կարգացել հայոց գիրքերից ոչ միևի մեջ:

«Անհաստատ է մեր կարծիքն իբր թե բոլոր Հայաստանի հայերն մեկ ժամանակ խոսում ըլին ելել՝ մեր հինգերորդ դարու թաղականիչներու ու սրանց թաղականած Աստվածաշունչ գրքի»

(Նվեր բարեկամակաճ Գևորգ Քանաճյաճիճ)

լեզվով: Կարելի է հինգերորդ դարու հայերն մեզանից հարյուրապատիկ ավելի հեշտութունով էին հասկանում էն լեզուն, բայց խոսելով շեն խոսել: Էնդոր որ՝ ինչպես հիմի, նույնպես և ամեն ճամանակ ու ամեն ազգի մեջ սովորելու է եղել գրավոր կամ գրականական լեզուն: Թե ելել է և ժամանակ, որ ամեն հայերն էլ խոսած ըլին եղել մեկ լեզվով էն էլ Հայկի ժամանակին ու շատ շատ մի երկու դար նրանից հետո: Ազգն բազմամալով ցրվելիս ու գավառ գավառ բովանդակվելիս: Հենց էն գլխեն համեմատ թե աշխարհագրական, թե կենցաղավարական հանգամանքներու, ինչպես տեսնում ենք ևս ուրիշ ազգերու մեջ, կամաց փոխած պիտի ըլի իր մայր լեզուն, ու ժամանակով հարևանիցն էլ բան սովորելով պիտի նորան տված ըլի ամեն տեսակ նոր ձևեր ու դարձվածներ էնպես, որ լավ որոշվել են գավառական լեզուներն մեկ մեկուց: Հայաստանու հնուց բազմալեզու ըլիլն՝ կարծիք չէ: Էս գավառական բարբառներուց մեկն, կարելի է հենց էն, որն որ ավելի կու լի պահել իր մեջ մայր լեզուի հատկութուններն, քուրմերու ձևերին, արքունեաց կամ նախարարներու դրանն ավելի գործ դնելով ու քաղաքականության մեջ աճելով դառել է գրավոր, ու գրվելով էնպես կոկվել ու հարստացել է ճոխ ձևերով ու դարձվածներով, որ ևս նույն գավառի բնակից պահանջել է իրեն հասկանալու ու բանեցնելու համար՝ իր սովորիլն: Էսպես մայր լեզվից կամ մեկ գավառական լեզվից գոյացել ու մեծացել է մեր գրաբառ ասած լեզուն, որն՝ երանելի Մեսրոպի մեր նշանագիրներու գտնելուց շատ առաջ գրավոր ըլիլն ամենին լավ հայտնի է, էնդուր էլ անկարելի է որ Ագաթանգեղի ու Սուրբ Գրոց վարպետ ոճն՝ հեշտ հասկանալի ըլեր ամեն շտովրած ու անկիրթ, թեպետ և ժամանակակից հայուն»:

Վերջապես, հարգելի հեղինակին քաջ հայտնի է՝ թե որքան սիրել և գովել եմք նորա ամեն մի շարագրութունը, որ մինչև այսօր լույս-ընծայվել են. ուրեմն գեղեցիկ գրոց լեզվով հորինվածք անախորժ շեն մեր ճաշակին. թող գրե նա, որքան և կամի այդ լեզվով, բայց և թող հավատա որ՝ ազգը, այսինքն ժողովրդոց բազմութունը, չի կարողալ նորա գրքերը, այլ միայն հանքերը կավելանան: Բայց այս ևս թող իմանա թե՛ որքան նդովք, անեծք և զրպարտություն հրապարակե յուր գրքերի հառաջաբանության մեջը՝ նորա ամենայն ճգնությունը ունայն և անգոր կլինին ազգի բերանիցը նորա լեզուն խլելու և կամ տպագրութամբ շերտելու համար:

Կյանքը մի մարդու, որն ավելի քան թե կես դար անդադրում և քրտնաջան վաստակել է հայկական մտավոր ասպարեզի մեջ. որն ազգային գործունեության մեջ միշտ գլուխ կանգնած է եղել, անշուշտ, այդպիսի մարդու կենցաղը իր համազգիների համար խրատական և հրահանգիչ է: Ակնարկությունս Մկրտիչ էմինի վրա է:

Մի տարի առաջ Մկրտիչ էմինի պաշտոնակիցները կամեցան նրա հիսնամյա մանկավարժական և գրականական գործունեությունը հրապարակավ պատվել և պատվեցին իսկ՝ առ մեծի ուրախության բոլոր հայ բանասիրաց և ի պատիվ հայության: Այդ դիպվածով հիշվեցան նրա ամեն ցույց տված երախտիքն թե՛ հայ մանկության, թե՛ Լազարյանց պանծալի ճեմարանին, թե՛ հայկական գիտության նրա գործունեությունը. նրա վարքը, նրա խոսքերը հիշեցին այնպիսի անձինք, որոնք ազգերու մտավոր առաջողիմության մի մի պարագլուխ են ճանաչված, այնպես որ այսուհետև Մկրտիչ էմինի մասին մի որևէ բան խոսելն կամ գրելն՝ իբր լրումն նրա կենսագրության և այդ մանավանդ ինձ նման մի անընշարելի անձին, առ սակավը ավելորդ է. շուղեմ ասել ծաղրաշարժ է: Այսուամենայնիվ, ես ևս կամեցա իմ լուման ձգել այդ գիտնականաց կաճառի դիզած ճոխ մտավոր դանձարանի մեջ, և առաջվանն ասում եմ, որ այս իմ կատարածը Մկրտիչ էմինի գլուխը զարդարող դափնյա պսակը մի տերևով անգամ չի ճոխացնիլ:

Հայրս՝ Գաբրիել Պատկանյանը, իր ժամանակումը և իր քաղաքի մեջ համարվում էր երևելի քարոզիչ, հայկաբան և պատմագետ. այս որ ասում եմ, օրես 45—50 տարվա բան է. իսկ գիտցողը գիտե, թե 50 տարի առաջ ի՛նչ վիճակի մեջ էր հայկական մրտավոր զարգացումը: Ի պատիվ հորս այսքան միայն կասեմ, որ նա նոր-նախիջևանի համար ամբողջ 30 տարի մի տեսակ բարոյական արեգակ էր, որ իր շուրջը սփռում էր լույս և ճշմարտություն: Այն ընդհանուր հարգանքը և զարմանքը, որ շրջապատել է հորս, կարծես պիտի դարձներ նրան անձնասպան, ինքնահամարվան, եսամոլ, բայց իրոք այդպես չեղավ. հայրս միշտ մնաց համեստ՝ և որ գլխավորն է, նա չկուրացավ և չկուրացուց իր շորս

կազմ եղողներին. նա միշտ ասում էր, որ նա լուկ աշակերտ է. հարց
Մխիթարյանց. Միքայել Սալլանթյանին և այդ միջոցներին նոր
ծագող աստղին— Մկրտիչ էմինին:

Ամեն անգամ, որ հայրս իր աշակերտներին պատմում էր թե՛
քերականությունից և թե՛ պատմությունից, նա միշտ ասում էր,
գառնայով ինձ՝ «Աստուծով, երբ որ Մոսկվա կերթաս՝ առավել
լավերը, առավել կատարյալները կլսես Լազարյանց ճեմարանի
հաշակավոր Մկրտիչ էմին վարժապետից: Եվ այս բանը այնքան
հաճախ կրկնվում էր և Մ. էմինի անունը ամեն հետաքրքիր և
եշանավոր գիտելիքի մեջ այնքան շատ հիշվում էր, որ այնուհետև
իմ երևակայության մեջ էմինը դարձել էր մի այնպիսի անձն, որ
իմ ամեն հոգեկան պահանջներին լիուլի բավարարություն պիտի
տար:

Ես անշափ շնորհակալ եմ հորես, որ իմ մեջ ներշնչեց հեղի-
նակության առջև երկրպագություն անելու զգացմունքը, որ այս
օրս մեր հայ պատանեկության և երիտասարդության սրտերեն բու-
լորովին անհետացած է: Մխալվել եմ, թե ոչ, շգիտեմ, բայց այն
գիտեմ, որ մանկությանս և պատանեկությանս միջոցին՝ իբրև
անսխալական էակների խոսք, կարգացել եմ Եղիշեն, Խորենացին,
Փավստոսը, Ղազար Փարպեցին, Լերմոնտովը, Տուրգենևը, Գոգո-
լը, Ժան-ժակ Ռուսոն, Բեռնարտեն դը սեն Փիևոը, Մոլիերը, Շե-
քսպիրը, Շիլլերը և այլն, և այլն. հավատացել եմ նոցա զգաց-
մանց սրբությունը և իմաստասիրել եմ նոցա ասացվածքի ձևը:

Այս համոզմունքով մտել եմ, ինչպես աշակերտ, վեհազնյա
Լազարյանց ճեմարան և այս համոզմունքով աշակերտել եմ Մկր-
տիչ էմինին ընթաց 1843—1849 թվականներին:

Ես մտադիր չեմ, ինչպես վերը հիշեցի, Մ. էմինի վարքը գրե-
լու, նախ որ՝ չեմ զգում իմ մեջ այնքան հմտություն, որ կարող
լինիմ հիմնովին և մանրամասնորեն պատկերացնելու նրա ման-
կավարժական, գրականական և գիտական գործունեությունը. և
երկրորդ՝ գիտեմ, ինձմեն շատ ուժովները պատրաստ են կատա-
րելու այս բեղմնավոր գործը. ես այստեղ կուզեի ինչ ու ինչ նորա-
այն գծերը նկարելու, որն ըմբռնելի էին միայն մանկական հասա-
կին և որն չէր նշմարիլ ավելի հասակավորը. իսկ այն, ինչ որ ես
այժմ մտադիր եմ պատմելու, ոչ այլ ինչ են, եթե ոչ մանկական
հիշողություններիս ինձ համար սուրբ և թանկագին նշխարները:

Բախտը ամեն մարդու ճակատագրած չէ, բայց ամեն մարդու
վիճակված է եղել մանկություն և պատանեկություն, երանի մեր
այդ տարիքին, որի հիշատակը միշտ քամում է մեր աչքերեն սփ-
փարար արտասուք:

Ինչպես այժմ, այնպես էլ գրեթե կես դար առաջ, վարժապե-
տի դասախոսությունը շարունակվում էր մի ժամ. բայց Պ. էմինը
միշտ մտնում էր դասարան հինգ րոպե առաջ և դուրս էր գալիս
տասը կամ ավելի րոպե հետո. մենք ոչ ձանձրանում էինք նրա
դասերի երկարատևությունից և ոչ հոգնում էինք նրա պատիած-
ները լսելեն, վասնզի Պ. էմինին ծանոթ էր այն հազվագյուտ
գաղտնիքը, որով վարժապետը հետաքրքրելի դարձնում է իր դաս-
ախոսությունը: Ինչպես հայտնի է, վարժապետի ժամը երկու
հավասար մասի է բաժանված, մինը կիրարկվում է անցած դաս-
ը հարցնելով աշակերտներին, և մյուսը՝ նորը մեկնելով նոցա:
Պ. էմինի դասաժամը այնպես չէր անցնում. դաս հարցնելը շատ-
շատ 1/4 ժամ էր տևում. մնացած մեծագույն մասը անցնում էր
հետևյալ դասը մանրամասնորեն, հազար ու մեկ օրինակներով
բացատրելով, պարզելով, մեկնելով և դասին վերաբերյալ զա-
նազան հետաքրքիր մանրամասնություններ պատմելով: Պ. էմինի
պատիածը, եթե ասեմ, թե լսում էինք՝ սխալ առած կլինեմ.
մենք ամբողջապես կուլ էինք տալիս այն, ու հետ դասին օրերով
ու շաբաթներով մեր ընկերական զրույցի և վիճաբանության
առարկա էինք դարձնում: Պ. էմինի սիրած բանն էր ծանոթացնել
մեզ հայոց բառերի արմատներին, նոցա բաղադրվելուն ու ածանց-
վելուն. նմանապես սիրում էր նա համբուն բառերը իրար մոտ
դասավորել և հազար տեսակ օրինակներով ցույց տալ նրանց տար-
բերությունը:

Շաբաթվա մեջ մի կամ երկու անգամ սովորություն ուներ նա
ամբողջ դասաժամը մի բան կարդալ և կարդացածը պատմել,
դժվար (խրթին) դարձվածները պարզել: Երկրորդ դասարանումն
որ էինք, այս կերպով կարդացինք չորս ավետարանները և գործք
առաքելոցը, երրորդ դասարանի մեջ կարդացինք գեղեցիկ Հով-
սեփի պատմությունը, Գանիել մարգարեի (Շուշանի պատմությու-
նը) և Հովբա գիրքը. չորրորդումը՝ Գաբրիլ Ալվազովսկիի օսման-
յան պատմությունը, իսկ հինգերորդ և վեցերորդումն արդեն մենք
ինքներս ազատորեն և գրեթե առանց բառարանների օգնության
կարողանում էինք կարդալ և հասկանալ Եղիշեն, Խորենացին,

ՓաՎստոսը, Հովերոսի՝ Եղիականը, Մահ Աբելին, Տելեմաքը, Միլտոնի Գրախտ կորուսյալը և շատ ուրիշ հայոց հեղինակներ և ընտիր թարգմանություններ: Շատ լավ միտքս է, որ Ալիշանյանի «Բլբուլ Ավարայրին» և նրա մյուս գեղեցիկ բանաստեղծություններն առաջին անգամ կարդաց մեզ համար Պ. էմինը և ծանոթացուց մեզ նրա գեղեցկությունը և սեր ձգեց մեր մեջ ժողովրդական բանաստեղծության:

Պ. էմինի դասախոսությունները մի շարք գրական, պատմական, կրթողական քարոզներ էին, որոնք խորունկ տպավորություն գործում էին մեր պատանեկական զգայուն սրտերու վրա, որ շատերիս մեջ անջնջելի մնաց և շատերիս համար թերևս մի տեսակ ուղեցույց աստղ եղավ:

Այն վեց տարին, որն Պ. էմինը մեզ հետ անցուց, գուցե նորա մանկավարժական գործունեության համար ևս ամենագեղեցիկ ժամանակամիջոցն էր գուցե նա ինքն էլ երկար ժամանակ թերևս և առ միշտ, անմոռաց պահեց իր մեջ... Չեմ կարող ասել, որ Պ. էմինի այն միջոցի աշակերտքս մեր մայր-Հայաստանի համար չնաշխարհիկ էականեր հանդիսացանք, ո՛չ. բայց այն համարձակ կարող եմ ասել, որ մեզ նման հայկական շահերին անկեղծ մտերիմ խումբ էլ մյուս անգամ չտեսավ մեր հարազատ հողը: Փափազյան, Աղափիրյան, Ասկարյան, Միրիմանյան, Ռոտինյան, Սիմեոնյան, Միանսարյան, Քերովբե Պատկանյան և այլն, և այլն աննշան և անհետք չի մնացին հայկական կյանքի մեջ: Այս ամենքին, Պուշկինի տողերը հայացնելով, կարելի է «էմինի արժիվների փառավոր երամը» անվանել:

Այսօրվա պես հիշում եմ ուրիշ պատկեր ևս (անմոռանալի՝ օրեր սուրբ մանկության): Հունիսի պայծառ օր էր. ճեմարանի պարտեզը, հետ տաք և հորդահոտ անձրևի, փայլուն և դալար տերևներով զարդարվել է. պարտեզի ավազացան շափղինները մաքուր, արեգակը վերեն թափում է առատ, բայց մեղմ ճառագայթներ. փոքրիկ աշակերտները խումբ-խումբ բաժանված, ո՛րը խաղում են ծառերի հովանիի տակ, ո՛րը կարդում և ո՛րը իրար պատմում իրանց հեռավոր, բազմակարոտ ընտանիքի մասին: Հանկարծ ներս է մտնում Պ. էմինը. աշակերտները իսկույն թողնում են իրանց խաղերը. ընթերցանությունը և խոսակցությունը և գալիս խոնավում են նորա շորս կողմը և մեծ խումբ կազմած՝ սկսում են ճեմելու: Այստեղ ոչինչ առաջվանե նախագծած խոսակցության

նյութ չիկա. խոսում են ամեն բանի վրա, խոսում են ճեմարանի վրա, խոսում են Վենետիկի հարց Մխիթարյանց ուխտի և մեր սուրբ էջմիածնի վրա, միով բանիվ՝ ամենայն ինչ դառնում է նյութ նոցա խոսակցության: Պ. էմինը այս երեխայական զրուցին տալիս է ուղղություն, նպատակ և իմաստ. առարկան քննվում է ամեն կողմից՝ աշակերտաց հասկացողությանը հարմար՝ իսկ որ գրված խավորն է՝ ստանում է ազգասիրական ուղղություն: Երեխան սովորում է յուր հայ լինելը. երեխան դառնում է հարազատ սերունդ Հայկի և Արամի, նա դառնում է ուղղափառ հետևող Գրիգոր Լուսավորիչի մեկնած քրիստոնեական վարդապետության. տակավ առ տակավ պատրաստվում է նա հետևող լինելու Ղևոնդ Երեցին և Հովսեփին, որ Խոխոցիմ ավանեն էր: Այս շրջագայության միջոցին պատմության շատ խրթին տողեր պարզվում են և շոշափելի դառնում հայ երեխայոց և աշակերտաց առջև: Եվ, իհարկե, այսպիսի վայրկյանները հավիտյան անջնջելի մնում են մարդու սրտի մեջ և նորա բոլոր կյանքը արձագանքներ են հընչեցնում մեջը:

Մերերս շատ սիրում ենք մեր կեցած ժամանակը. մեր բարեկամներին, մեր անցած ուրախությունը, միով բանիվ՝ մեր ապրած կյանքը ավելի բարձր դասելու, քանց նորերը. այսօրվանները. այո՛, այդ ներելի և հասկանալի պակասությունը ունի մեր հասակը. բայց կարելի չէ մերժել և այն, որ հազիվ երբեք գտնվում են այնպիսի անցյալներ, որոնք լավագույն են քան ժամանակակից օրերը: Ո՛վ կարող է ժխտել, որ այժմվա կազարյանց ճեմարանի ուսումը, դասատվությունը, աշակերտաց առաջադիմությունը, նոցա ապրուստը, նոցա մեծաքանակ համալսարան մտնելը և այլն, և այլև որևէ նմանություն ունի առաջվա գծուծ զարգացման. քա՛վ ինձ այսպիսի ստություն բերնես հանելը. այժմվա կազարյան ճեմարանը շատ, շատ կողմանե վեր է, քան թե 35—40 տարի սրանից առաջ. երբ ես աշակերտում էի նորա մեջ, Բայց մի բան կա ճեմարանի անցյալ օրերու մեջ, որն ամեն անաշտ մարդ կասե, որ անցյալը այժմվանե վեր է, և այդ «մի բանն» է այն հայկական ոգին, որն աներևույթապես թագավորում էր ճեմարանի մեջ, որն այժմ նվազել է: Քառասուն տարի սրանից առաջ մեք ավելի հայ էինք, հայերենի ավելի տեղյակ էինք. հայոց շահերը թանկ էին մեր սրտերին. մենք զարգանում էինք հայկական գրականության մեջ. մեր իդեալները միայն մեր նախնիքն էին, առաքինության

օրինակներ մենք որոնում և գտնում էինք մեր պատմության մեջ, լայն հոսանքով ծծում էինք հայկական օղը ճեմարանի մեջ և մի-լայն հայ գործողներ լինելու համար էինք պատրաստվում. ֆա-փազյանը եղավ քահանա, քարտզիչ և մանկավարժ հայ ժողովրդի և հայ մանկանց. Աղափիրյանը եղավ եպիսկոպոս և տեսուչ հայ դպրոցի. Պետրոս Սիմեոնյանը եղավ հրապարակախոս հայ լրագ-րի, Քերովբե Պատկանյանը բազմեցավ հայկական դասախոսի աթոռի վրա, և այլն, և այլն. սոքա մեր ժամանակվա հայկական երկնքի խոշոր լուսատուներն էին, դոցա ետևից գալիս է բազմա-թիվ խումբ մանր գործողների, որոնք ցրիվ ընկած հայոց ընտա-նյաց, դպրոցների, եկեղեցիների մեջ զանազան ազգային պաշ-տոններ վարեցին, տարածելով ազգի մեջ լույս, հայկական խոսք և հայկական ոգի: Այս դեպքը էլ մյուս անգամ չի կրկնվեցավ և համարյանց ճեմարանի մեջ, և համարձակ կարելի է ասել, որ 1843—1849 թվականը Պ. էմինի մանկավարժության ոսկե դարն է:

Մի ուրիշ բան էս ունիմ ասելու Պ. էմինի մասին, որն սպա-սում էի, որ այլ՞ քանց էս առավել հմուտները, գիտունները՝ ասեին. սպասեցի շատ ժամանակ, բայց որովհետև նոքա լուսվյուտն պահեցին, ահա էս, որքան որ ուժս կպատե, կասեմ, խնդրելով կարգացողներես ներողամտություն դեպի իմ տկար գրիչը:

Մինչև 1843 թվականը, ինչպես երևում էր, Միքայել Սալլանթ-յանը ճնշող ազդեցություն է ունեցել ճեմարանի վրա. սույն թվին (այդ էս կարող եմ վկայել) նորա ազդեցությունը անհետացավ. պ. էմինը ավելի ուժ ստացավ և հետևապես նրա ազդեցությունը շատացավ: Մինչև այն ժամանակ ճեմարանի աշակերտաց հայ-կական բարբառը զանազան պատճառներով աստրախանական էր. մենք կարծում էինք, թե շատ սիրուն դուրս է գալիս, երբ որ միա-միտ-միամիտ ասում էինք, զնացիմ, բերամ, տրվամ, կերեցիմ, տըվեցիմ, յաղուս, քթացամ, պետքա տրված, պետքա բերած, դարշու, բիրդան, հուչաթ, ատա և այլն, և այլն: Հենց որ Մ. էմինը առաջին անգամ ոտքը կոխեց մեր դասարան, մեր խոսակցության լեզուն օրեց օր սկսավ մաքրվելու, կանոնավորելու, կոկվելու, շատ կամ սակավ դաշնակավորություն ստանալու, և ստացավ այն կեր-պարանքը, որն մենք այսօր տեսնում ենք անարդարապես արա-րատյան կոշված բարբառումն, որն ըստ ամենայն իրավանց և արդարության պետք էր նեմարանական բարբառ անվանելու և

որի, եթե ո՛չ ստեղծողը, գեթ կերպարանք և շքեղություն տվողը Մ. էմինին ճանաչելու:

Եթե ժամանակակից եղբարք անփութությամբ մոռացման տը-վին այս պարագան, հուսալի է, որ գեթ մեր երախտագետ ապագա անրունդը կիմանա և կխոստովանի այս ճամարտությունը, որն իմ կարծիքով պ. էմինի գլուխը զարդարող դափնյա պսակի ամենա-մեծ և ամենագեղեցիկ և ամենափայլուն տերևն է:

Մ. էմինի գեղեցիկ և պտղավետ երիտասարդական ծաղկյալ հասակը գրեթե անցավ մեզ հետ. ինչպես երևում էր, միշտ մեզ հետ լինելը, մեզ հետ հաղորդակցելը, իր իդեալները, իր տպավո-րությունները մեզ հաղորդելը նրա համար հոգեկան պահանջ էր դարձած: Եստ անգամ դասարան էր մտնում խորամանկ ժպիտը երեսին՝ թաշկինակի մեջ մի բան փաթաթած, ու մենք նրա դեմ-քից նկատում էինք, որ էլի մի նոր բան ունի մեզ կարդալու: Երբ որ սովորական աղոթքը կարդացվում-պրծնում էր ու մենք հետա-քըռքիր աչքներս ցցում էինք նրա վրա. էմինը սկսում էր «Hyc (այս նորա le mot favorit-ն է) համարներդ պատրաստե՞լ եք», «Այո՛, այո՛», որոտում էինք աչքերս չհեռացնելով նրա բաղդափ թաշկինակից: «Hyc,— կրկնում էր Մ. էմինը,— եթե այդպես է, ուրեմն էս ձեզ այսօր մի լավ բան կը կարդամ», և բացում էր թաշկինակը. միջից դուրս էր գալիս մի անծանոթ բրոշյուր՝ վեր-նագիրը Բազմալեզու: «Տեսեք, տղերք,— ասում էր էմինը,— մինչև ո՞ր աստիճան ճկուն, ուժեղ, արտահայտիչ և ճոխ է մեր գրաբար լեզուն, որ կարողանում է մինչև անգամ մրցելու մեր օրվա ամե-նահռչակավոր բանաստեղծի կենդանի խաղացկուն լեզվի հետ և նկարել այնպիսի պատկերներ ու կենցաղ, որն հինգերորդ դարու հայ լեզուն մշակողներին բնավ անհայտ էին». և կարդում էր Կոփլավի էլ և սոխակը, երածիշտեք, Լուսնոստվի Հյուսիսայգը և Իզմայլովի Յուսեֆը և այլն. և մենք հիանալով լսում էինք այդ գեղեցիկ «կտորները» և գտնում էինք, որ նոքա ո՛չ միայն հա-վասարվում էին ուսերեն բնագրին, այլև շատ ու շատ գերեզան-ցում են (անմեղ ազգասիրական մոլուկներն) ու, իհարկե, երկու-երեք օրից արդեն անգիր էինք անում: Եվ պ. էմինը ուրախ էր, որ նորից ու նորից արծարծեց մեր մեջ սեր, ախորժակ և հիացումն դեպի մեր պանծալի գրաբար լեզուն:

Պ. էմինի գովական հատկություններից միան էլ այն էր, որ նա «բարեպաշտ զգացմունքով» հիշում էր իր մի ժամանակվա

վարժապետների անունները. երբեք լսած չէինք նրա բերանից պարսավանք, ծաղրանք և շարախոսություն կամ որևէ ստորացուցիչ դատմունք դեպի իր մանկության վարժապետներն, երբ նա սովորում էր եղել Կալվաթայում և թե իր պրոֆեսորներն՝ Մոսկվայի համալսարանումն գտնված միջոցին. միտս է, թե նա ի՞նչ հարգանքով խոսում էր հանգուցյալ Թաղիաթյանի և Ավդալյանի մասին, թեև այդ միջոցին արդեն քաջ ճանաչում պիտի լիներ երկուսի գիտությանց աստիճանը:

Այսպիսի երախտագիտություն դեպի իր երախտավորները խորին տպավորություն էր գործում մեր մանկական հոգիներու վրա: Եվ իրոք պետք է ասել՝ այս շատ գեղեցիկ գիծ է որևէ մարդու և մանավանդ նոցա, որոնք մանկավարժության և դաստիարակության գլուխ են կանգնած: Այս խոսքերս լսելով մեր օրվա երիտասարդ մանկավարժներին հարկ է փոքր ինչ շառագնիլ ամոթից, իրանց մանկության վարժապետի վրա միոխություն, կապկություն և խեղկատակություն անելը մի տեսակ սխրագործություն է դարձած այդ պարոններից շատերի համար, որոնց բոլոր գիտնական պաշարը, վկա է աստված, որ հազիվ մի մկան բեռ է և ոչ ավելի:

Պ. էմինը, ինչպես ասացի, սիրում էր մեր առջև կարդալ իր հավնած շարադրություններին. այդպիսի գրվածքներից մինն էր նաև Եղիշեի Վարդանանց պատմությունը: Այսօրվա պես միտս է՝ ինչպես հանդիսավոր տխուր ձայնով կարդում էր նա «Իսկ կանայք երանելյաց»-ը, ուր նորա ընթերցվածը սգավոր մեղեդիի ձև էր ստանում. ասես թե մեր լսածը խոսքեր չէին, գիրքը, դասարանի մեջ գտնված առարկաները և նույնիսկ վարժապետի երեսը անհետանում էին և մեր բորբոքված երևակայության առջև բացվում էր մորմոթիչ և արտասովելի պատկերների մի շարք. մեր մանկական երևակայությունը տանում էր մեզ հինօրյա ժամանակները. մեր նախնիք գալիս հանդիսանում էին մեր առջև մերթ իբր զրահավորված դյուցազներ. մերթ իբր դափնեզարդ նահատակներ, մերթ իբր դառն գերուստան մեջ շղթայած, հալ ու մաշ եղած կալանավորներ և մերթ իբր նժդեհներ օտարության մեջ ձգած՝ իրանց սիրականների կարոտը քաշելիս: Պ. էմինը նայում էր մեր վրա և գուցե մտքի մեջ ասում էր՝ «Ես իմ սուրբ պարտքը կատարեցի և իմ սիրելի Հայաստանը կործանողներին վրեժխնդիրներ պատրաստեցի»:

Մեր օրերումը շատ սովորական բան է դարձած, ամեն քայլափոխին, պետք ու չպետք տեղը և այդ մանավանդ, մեր իբր-

գիտնական, իբր-քաղաքագետ, իբր-ազգի թշվառությանց ցավակցողների բերաններեն լսել՝ «է՛հ, պրծե՛լ է մեր հայի բանը» և կամ՝ «էլի հայություն արի՛ր», այսինքն՝ ամոթալի գործ գործեցի՛ր և կամ «հայ-վա՛յ» և կամ «հայը թակե Վարդանին», թուրքը թակե Վարդանին» և անվերջանալի այսպիսի հուսաբեկ խոսքեր: Նկատելի է, որ երբեք լսած չէինք պ. էմինի բերանից հայի պատիվը ստորացնող, հայի մասին անախորժ և հուսահատական որևէ դատմունքներ: Դարձյալ ժամանակակից «փլավի-ազդասերներին» աջ և ահյակ չէր գովաբանում ու խունկ ու զմուռս ծխում հայության. բայց և առանց մի հիմնավոր պատճառի չէր վատաբանում ո՛չ հայ վարժապետներին, ո՛չ հայ քահանաներին և վարդապետներին, ո՛չ մի հայ հաստատություն, մեկ խոսքով մենք ճեմարանի մեջ, էմինի մոտ սովորելիս մեր մեջ երկրորդ բնություն էինք դարձրել, հարգել և պատվել ամենայն ինչ, որ իր վրա կրում էր հայի և հայության անունը. հայ լեզու, հայ ազգ, հայ գրականություն, հայ մատենագիր, էջմիածնա աթոռ, Վեհափառ կաթողիկոս, Մխիթարյանց ուխտ— մեզ համար մի-մի ազգային պարծանքներ, մի-մի սրբություններ էին առանց երկմտության, առանց թերահավատության, առանց կասկածանքի, բայց և ընդ նմին առանց մոլեռանդության: Թեև այս այսպես, բայց երբեք նկատած չէինք պ. էմինի մեջ նաև մի թեթև նշույլ օտարաալյացության. ասածիս ապացույց այն է, որ Պուշկինի և Լերմոնտովի գրվածքը առաջին անգամ մեզ ծանոթացուց նա. շատ անգամ, հենց իր դասի միջոցին, ձեռքը առնում էր նոցա շարադրությունները և կարդում էր մեզ համար, և այդ կերպով մեր մեջ սեր և ճաշակ էր ձգում այդ և ուրիշ ոուս հեղինակների մասին: Եվ այդ իսկ էր պատճառը, որ պ. էմինի աշակերտների մեջ բավականին շատ թվով բանաստեղծական ոգով և ճաշակով երիտասարդներ երևան հկան. ինչպես Ասկարյանցը, Փափաղյանը, Միրիմանյանը (Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ), Դոդոխյանը՝ (Միծեռնակ), Շահազիզյանը և այլն:

Մի ուրիշ հազվագյուտ հատկություն էլ ուներ պ. էմինը: Երբ նա կարդում էր մեզ համար որևէ պատմական գիրք, զորօրինակ՝ Խորենացի, Փարպեցի, Փավստոս և այլն, կամ իրանից մի պատմական դեպք էր պատմում, նա այնպես հմտությամբ նախապատրաստում, հարդարում էր մեր միտքը, որ մենք բոլորովին մոռանում էինք, որ մեր կարդացածը կամ լսածը վերաբերում է

մեզանից շատ տասնյակ դարեր առաջ կեցող մարդոց. մենք կարծում էինք, որ այդ անցքը, այդ պատմութիւնը հերու կամ երկու տարի առաջ կատարված բան է. հազար տարի առաջ ապրած մեր նախնիքը երևում էին իբր մեր մոտավոր արեւնակից ազգականները. մենք մեր հազար տարի առաջ նահատակված գուղացիների թշնամիներուն պտրտում էինք մեր շորս կողմը. կարճ՝ պ. էմիլը գարձնում էր մասնատած, փոշիտած հայոց պատմութիւնը մեր հայրերից մեզ թողած հրիտակ և մեզ ինքներու՝ հարազատ ժառանգորդ Հայաստանին... Հուսամ որ պատմաբանի և մանավանդ աղգային պատմաբանի հանճարը երբեք չէ կարող դորանից վեր սաճառնել. և էմիլը ուներ այդ արգասավոր հանճարը: Որ հայոց պատմութիւնը շոր ու ցամաք է, որ նորա մեջ չիկա մեր նախնայաց առօրյա կենցաղը, նորա կյանքի վայելքը, նորա երկրավոր ուրախութիւնը և այլն և այլն, այդ ոչ ոքի համար գաղտնիք չէ: Մովորելով հին հունաց և հռովմայեցից ժողովրդական պատմութիւնը՝ մենք շատ անգամ դիմում էինք պ. էմիլին այս հարցմունքով՝ «արդո՞ք մեր հայերն էլ ունեցե՞լ են կյանքի վայելքներ, խրախութիւններ արե՞լ են, երգեր երգե՞լ են, Հոմերոսի, Օրփեոսի, Հեղիոդի նման երգիչներ ունեցե՞լ են. ունեցե՞լ են հայկական նշագարան, նվագի արվեստը գիտցե՞լ են արդյոք և այլն, և այլն. իհարկե, մեր հարցմունքները անպատասխան չէին մնում, և շատ կարելի է, որ մեր հարցմունքները առաջին անգամ հղացուցին նորա «վեպի» խորհուրդը, որով քանի մի տարի հետո նորա անունը հռչակվեցավ եվրոպայի գիտնականաց կաճառումն:

Ասացի, որ մեր աշակերտած տարիները (1843—1849) պ. էմիլին մանկավարժական գործունեութիւն ոսկե դարն էր. և կարծում եմ, որ չի սխալվեցա. հատուկ մեզ՝ այն ժամանակվա աշակերտացրա խմբի համար՝ գրեց նա իր «Քերականութիւնը»: Միտս է, ինչպէս պ. էմիլը ամեն անգամ դասարան մտնելիս, հետը բերում էր փոստայի թղթի վրա գրած բնագիրը, իսկ թղթի լուսանցքները, որ թղթի ուղիղ կեսն էր, հենց դասարանի մեջ, դասատուութիւն միջոցին, շատ անգամ ուղղվում, լցվում և փոփոխվում էր: Պ. էմիլի «գափնիեն և ոչ մի տերև խլած շեմ լինիլ, եթե ասեմ, թե նա մեզ սովորեցնելով ինքն էլ կատարելագործվում էր: Վերջին և բարձրագույն գասարանումն սույն օրինակ գրվեցավ նորա «Ճարտասանութիւնը», որ լույս տեսա՞վ արդյոք, թե ոչ, չգիտեմ:

Մի վարձանալի երևույթ, որն մինչև այսօր ինձ համար ան-

լուծելի առեղծված մնաց, պ. էմիլը ինչպէս որ վերը հիշեցի, թե ինքը հիանալի կանոնավոր, գեղեցիկ և մաքուր աշխարհաբար էր խոսում, բայց բնավ չէր խոստովանում և չէր ուզում ճանաչել նորա գոյութիւնը և նորա ժողովրդականութիւնը ընթացքը և ուղղութիւնը տալու չէր աշխատում, թեև, կրկնում եմ, ինքը յոչ կամաց, աշխարհաբարի ամենահզոր հովանավորին էր: Մեր օրոք՝ քլաս մտնելը. «փառախոտով ճանապարհորդել», «փոթեքսթավաթ անել», «չայ կամ քոֆե խմել», «բուլիլքան օսաքուփովաթ անել» և այլն, և այլն, արդեն համարվում էին կոշտ խժժաբանութիւն, և մենք՝ էմիլի աշակերտքս, առաջինն էինք, որ ամաչելով (իբր թե արածներս աններելի մեկ հանցանք էր) սկսանք հայ կենդանի բարբառի մեջ մուծանել դասատուն կամ դասաւան, թեյ, սուրճ, համալսարան, դասախոսութիւն և այլն բառերն, որոնք հետո՝ մեր հետնորդների համար՝ դարձան սովորական գործածելի բառեր, և այժմ մինչև անգամ հայաբնակ քաղաքների ամենաստոր դասակարգի մեջ մուտք են գործած:

Պետք է խոստովանել, որ այստեղ ևս նշմարվում է պ. էմիլի ազդեցութիւնը, թեև, ինչպէս ասացի յոչ կամաց: Ես այժմ մտածում եմ թե որքա՞ն մշակված և ծաղկած պիտի լիներ մեր այժմվա աշխարհաբարը, եթե պ. էմիլը ըստ արժանվույն ուշք դարձներ...

Պ. էմիլը ասում էր՝ թե այն ճեմարանում, ուր ինքը սովորել է հոտս Ավտալյանի և Թաղիաթյանի, հայոց խոսակցական լեզուն գրաբարն է եղել: Արդյոք այստեղ պետք չէ՞ որոնել այս առեղծվածի լուծումը...

1887, հունվարի 11, Նոր-Նախիջեան:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՂ

Մանկական պարտեղ ասելով պիտի հասկանալ այնպիսի վարժատուն, ուր երեխաները կմեծանան, կզարգանան հոգով ու մարմնով այնպէս ինչպէս որ բնութիւնը որդին կմեծանա մեկ պարտեղի մեջ, ամեն ազգի երեխա կսիրե յուր ազատ ժամանակը

անցնել պարտեզի մեջ. նա յուր բոլոր զվարճութունը կգտնե մի-
այն պարտեզի մեջ: Ա՛ն երեխային, բնակեցո՛ւր ամենագեղեցիկ,
ամենազարդարուն, շքեղ պալատի մեջ. կարճ միջոցում նորա սիր-
տը կնեղանա, բայց պարտեզեն երեխան երբեք չի զզվիլ: Ինչո՞ւ
Պատճառը շատ պարզ է: Թե պարտեզը ու թե երեխան բնության
ձևունդ են, մինչդեռ տունը, պալատը և ամեն հոյակապ շինու-
թյունքը արվեստական, մարդու ձեռքով հառաչացած են:

Ի՞նչ պիտի անե երեխան Մ. Պր. մեջ: Ամբողջ օրը բաց և
առողջ օդի մեջ պիտի անմեղ խաղա և, առանց հոգնելու, աշխա-
տի ու սովորի:— Ի՞նչ պիտի սովորի: Այն, ինչ որ նորան այսօր,
վաղը, մեկ ամսեն, մեկ տարին պետք է և պետք պիտի գա:
Մանկական պարտեզի մեջ երեխան պիտի սովորենա այն բաները,
որ կան նորա շորս կողմը՝ օդը, ջուրը, հողը, բույսը, քարերը, թու-
լաները (աղյուսները) և նոցա բերած պտուղները և նոցա սված
վնասն ու օգուտը, քամին և նորա սված վնասն ու օգուտը, անձ-
րևը, նրա պատմությունը, նորա օգուտը, նորա վնասը, և այլն, և
այլն, մեկ խոսքով, այն ամեն բանը, որոց իմանալը կասվի գի-
տություն և որոց շիմանալը կասվի տգիտություն:

Երեխան հետաքրքիր է և ամեն բան կուզե ճանչնալ ամեն
բան քննել, ամեն երևույթ հասկանալ, ամեն գործողության պատ-
ճառը իմանալ. նա յուր մտքը մի րոպե հանգիստ չի տալիս, ինչո՞ւ
ամպը կքալե, ինչո՞ւ լուսինը գիշերը կերևա և ոչ ճառագայթ արև
եղած միջոցին. ինչո՞ւ ավազի վերա խոտ չի բսնիլ. ինչո՞ւ ջրհորի
ջուրը աղի է, ինչո՞ւ սոխակը միայն գարնան կերգե, ինչո՞ւ ձմեռը
թռչուններ չիկան, վա՛յ այն երեխային, որո անթիվ հարցմունք-
ները կամ անպատասխան, անբավարար կմնան, կամ ձախ ու
ծուռ մեկնություն կստանան հավատացեք, ազգը այդ կերպով
ամեն տարի կկորցնե հարյուրավոր և հազարավոր Բիսմասքներ,
Պիքանսֆելդներ, Ստեֆենսոններ, Գամբեթթաներ, Այվազովսկի-
ներ, Լորիսմելիքովներ, Լազարյաններ և այլն, և այլն: Մանկու-
թյան օրերը երեխայի տպավորությունը ոչ միայն խոր, այլ ան-
ջընջելի է երեխայի սրտի, հոգու, ուղեղի մեջ: Մի հատիկ հաջո-
ղակ կամ անհաջողակ պատասխանեն կախյալ է միևնույն տղին
կամ Բիսմասք, կամ քրեական հանցավոր լինելը: Ա՛խ, լուսավոր-
յալ մայր, մեծ է քու ազդեցությունը հրեշտականման երեխայի
վերա, բայց հայ ժողովուրդը շա՛տ լուսավորյալ մայրերն ունի
արդյոք:

Ո՞վ կարող է հերքել, որ մայրը ու հայրը յուր զավակներին
չեն սիրել. ոչ մի հրեջ չէ կարող արտասանել այդ խոսքը, մանա-
վանդ հայ կանանց պարծանքն այն է, որ նա առանձին մեկ զգաց-
մունքով կսիրե և կգուրգուրե յուր զավակներուն, բայց խնդիրն
այն է, թե ի՞նչ արտահայտություն ունի այդպիսի սերը: Կա մայր,
որ յուր սերը կհայտնե առավոտե մինչև երեկո կյուլենկի (քաղց-
րավենիք), եմիշ (պտուղ) ուտեցնելով: Այդպիսի սերը փրկավե՞տ
է արդյոք երեխային. կա մայր, որ յուր սերը կհայտնե պաճուճա-
պատանքի (խամաճիկ) պես հագցնելով յուր զավակներուն: Օգ-
տավե՞տ է արդյոք զավակին այդպիսի սերը: Կա մայր, որ ոչ մի
զրոսանքե, ոչ մի խնջույքե, ոչ մի հացկերույթե, ոչ մի պարա-
հանդեսե, ոչ մի տոնավաճառե, ոչ մի կառքով կամ սահնակով
ճեմելչե (քաշաթ) չի զրկիլ յուր զավակին: Ի՞նչ բարոյական օգուտ
է այդ զավակին: Կա մայր, որ յուր կոկորդեն կխլե, ինքն իրեն
ամեն զրկանքի կենթարկե ու յուր զավակի ամեն մանր մունր հա-
ճույքը կկատարե: Օգտավե՞տ է արդյոք այդպիսի քնքշությունը
զավակի համար:

Շատ ուրիշ զոհեր կան, շատ ուրիշ արտահայտություն սիրո
կա, որ կանն մայրը յուր զավակին ու այդ ամենը ոչ միայն օգ-
տավետ... այլ շարաշար վնասակար է:

Երեխային պետք է մաքուր օդ, անդուլ և կանոնավոր շարժ-
մունք, սննդավոր կերակուր, անդորր քուն, աստիճանաբար մտա-
վոր զարգացում, հասակակիցների ընկերություն, անպաճույճ հա-
զուստ և խոհեմ մոր անդուլ խրատ ու հովանավորություն:

Ինչ որ դորամեն ավելին է, թույն է երեխայի համար, որ եր-
բեմն կսպանե նորա մարմինը և գրեթե միշտ՝ հոգին:

Ինչո՞ւ մեր ազգը լուսավորության մեջ հետամնաց է: Դրա
միակ պատասխանն է, որ մեր երեխաներն դաստիարակություն
չունեն: Իսկ երեխայի դաստիարակիչն է լուսավորյալ մայրը: Ման-
կական պարտեզն է բազմության երեխաների լուսավորյալ մայրը:

Այս ասածներես հետո, կարծեմ, ամենին արդեն պարզ ու
հասկանալի է մանկական պարտեզի նպատակը և ուղղությունը:

Այս դրություն մեջ, ուր կա ներկա ժամանակս Նախիջևանը,
մանկական պարտեզը մի հատիկ հնարն է նոր գալոց սերունդին
հասցնելու և՛ նյութական, և՛ բարոյական բարօրություն:

**ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋ ԵՎ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՄԵՋ**

Պատիվ ունիմ ծանուցանել Նախիջևանի պատվելի հասարակության, որ ճերկա 1879-ի օգոստոսին, ըստ թույլատվության Օդեսային ուսումնական շրջանի, պ. հոգաբարձվի կը բացվի քաղաքիս մեջ երկսեռ երեխաներու համար «մանկական պարտեզ» անունով ուսումնարան, որ կընդունին երեխայք (տղա և աղջիկ) հինգ տարեկանեն սկսած մինչև ութ տարեկան հասակները:

Այսպիսի վարժարանի կարոտությունը ի վաղուց հետո կըզգաս ՚եր ժողովուրդը, որ պակասությունն է միակ արգելքը նորս վաճակների թերի եղանակով զարգանալուն՝ բարոյագես և ֆիզիկապես:

Ճերկա ժամանակիս պահանջներն այնքան սաստիկ են մարդուամեն, որ գրեթե անհնար է նոցա լրացնելու, եթե մենք հին ձևով առաջ տանելիք կրթությունը մեր մանկանց. որոնք կամ ազնու պիտի մնան, կամ վատառոզը: Այս երկու անհարմարություններն ազատվելու համար իմաստուն մանկավարժները հնարել են մանկական պարտեզ, որ երեխան շատ կանուխ և համարյա խաղով ու դրսուտնքով կսովորի այն, ինչ, ուրիշ հանգամանքի մեջ նա պիտի սովորի առավել տարեց հասակի մեջ, անտանելի դժվարություններ կրելով և միանգամայն ժամանակե առաջ սպասեցնելով յուր մտավոր և մարմնավոր ուժը: Վաղուց ճանաչած ճշմարտությունն է, որ «երեխային կանուխ գիրքի նստեցնելը» կնշանակե, գրեթե չի հասնիլ առաջադրած նպատակին, իսկ ուշ սովորան տալու վնասը մեր քաղաքացին այնքան լավ գիտե, որ զորս մասին երկարաբանելն անգամ ավելորդ է, ուրեմն ի՞նչ պիտի անեն ծնողք, եթե զավակներուն կանուխ ուսման տալը վնասակար է, իսկ ուշը՝ սակավապատու: Ահա այստեղ մեծապես և կարելի է ասել՝ եղականապես կօգնե մանկական պարտեզը, որ ոչ միայն չի հոգնեցնիլ կամ չի թուլացնիլ երեխայի մտավոր և մարմնական ուժը, այլ ընդհակառակը, բազմակողմանի կզարգացնե և կամրացնե այն: Այստեղ ոչ առանց պատճառի ասացինք «բազմակողմանի», վասնզի մանկական պարտեզի ուրիշ դպրոցների համեմատ ունեցած գերազանցությունը հատկապես այն է, որ նորս մեջ գտնվող երեխան խաղալիքներով կսովորի ոչ միայն գիր

կարգում, այլ և նկարչություն, տեսակ-տեսակ ձեռարվեստներ, երգեցողություն, երաժշտություն, կանոնավոր խոսել հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն, պար, մարմնամարզություն, և այդ ամենք կանոնավոր և աստիճանաբար, և որ ամենազխաժորն է՝ անզգայի կերպով: Մանկական պարտեզի տված նյութական և բարոյական օգուտները մանկանց՝ անթվելի է, և մեզ անհնար է այս սահմանափակ հայտարարությանս մեջ լիովին գազափար տալ նորս մասին. միայն աչքան կասենք, որ ամենալուսավորյալ ազգերը համարել են նորան միակ հնար կանոնավոր դաստիարակության և հիմնավոր նախապատրաստություն գեպի կրթություն և լուսավորություն:

Մեր մանկական պարտեզը, առաջին, ունի բավականին շատ ուսումնական առարկաների մասին. ընթերցանության, գրության, թվաբանության, աշխարհագրության, արջեստների և ձեռագործների. բացի դոցանից ունի նաև քաղցնախմբով ժողովածուք և պատկերների մասին կենդանաբանության, տնկաբանության, բնագիտության, բնական պատմության և քիմիայի: Ունի մի բավականին հարուստ մանկական մատենագրաբան, վերջապես ունի մի շաքավոր մեծություն պարտեզ, ուր կան ավելի քան թե վեց հարյուր տեսակ զանազան բույսեր և տունկեր: Միով բանիվ՝ մեր մանկական պարտեզը մի փոքրիկ աշխարհ է երեխայի համար, որ նա միայն աչքով և ականջով (տեսնելով և լսելով), առանց հոգնեցնելու և բռնաբարելու միտքը, կստանա շատ այնպիսի գիտությունց տարրեր, որոնք հաստատուն հիմն կլինին նորս ապագա մտավոր հարստության:

Ցանկացողք իրենց զավակները զետեղելու մեր նախակրթական վարժարանի մեջ, թող բարեհաճին այցելել նույնիսկ մեր վարժարանն, որ կգտնվի մեր սեփական տան մեջ (Սուրբ Թորոսի փողոցը, տուն N 8), և տեսնելով մեր հիմնարկությունն՝ իմանալ մեր պայմաններն և հայտնել մեզ իրենցը:

ՊԱՐՈՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Մենք մի այնպիսի քաղաքի մեջ կկենանք, ուր մարդուս ամեն քայլափոխը ճիշտ հաշված է մեր ամեն քաղաքակիցներեն, այդ դեռևս վնաս չունեն, թե նոքա այս մեր քաղաքակիցները, իրենց

դատմունքի մեջ առավելապես դեպի վատը շինենին հակված: Ի՞նչ պիտի անել այդպիսի դիպվածին. զգուշանա՞լ. իզուր աշխատանք, անցնող դարձողի առջև արդարանա՞լ, աստված մի արասցե. ապա՞ ինչ. А ты своей дорогой ступай. полагют да отстанут. Այս է ամենախելոք պատասխանը մեր տեղի ձախ ու ծուռ դատմունքին:

Պարոններ, ամենքդ ալ լավ նկատած կ'լինիք, որ մեր Նախիջևանի մեջ կա մեկ անտաննիկ կախյալ դրուձյուն, որով կարծես թե ազատ խոսելը, ազատ քեֆը, ուզեցածի պես շարժելը կը պատկանի քանի մի աստծո սիրելիներուն և ընտրյալներուն, իսկ մնացած 12 հազարյա ժողովրդի բերանը հավիտյան փակած է, լեզուն կտրած է, ձեռքերը կապած է: Յուր կարծիքը ազատ հայտնելը Նախիջևանի մեջ վախ է, ամոթ է, վնաս է, լրքութուն է, վերջապես հիմարութուն է: Նայեցեք ձեր շորս կողմը, կ'տեսնեք վիզերը ճուկ քաղաքացիք, լուռության սովորած, բերանները պապանձված հայեր գերդաստանի, ձեռքերը խաչ կապած երիտասարդներ—ասես թե աստված սոցա տված չէ այն պարզեր, որով մարդս կ'չոկվի կենդանիեն, որով ազատ մարդը կ'չոկվի եսիրեն: Ահա 20 տարի է, որ ռուս крепостной-ը ազատվեցավ յուր ստրկության վիճակեն և այժմ համարձակ կ'հայտնի յուր կամքը և կարծիքը генерал-ի առջև, իսկ մեր ժողովուրդը լեզուն կու տվել է, բերանը չի՞ բանալ, կարծիքը չի՞ հայտնիլ մի քանի ընտրյալներու առջև: Ի՞նչ է այդ, ազնիվ երիտասարդներ, այդ ստրկության մեկ ձև չէ՞: Եթե նա բարոյական ստրուկ է, ապա ուրեմն կարելի՞ է մեկ ստրուկ ժողովրդի հետ գործ ունենալ, նրա մեջ բարվոքումն, հառաջդիմութուն մտցնել: Դուք չգիտե՞ք, որ մոլութուններն (порок) սեփականութուն է ստրուկ ժողովրդին: Մինչև որ մարդս յուր ստրկական վիճակեն չազատվի՝ նորան անօգտավետ են և՛ գրակարդացություն, և՛ լուսավորություն, և կյանքի ամեն հարմարությունք (комфорт): Պարո՞ն երիտասարդներ, ես ձեզ համարձակ կասեմ, որ մեր քաղաքի ընկած դրուձյան միակ և միակ պատճառն է մեր ժողովրդի բազմության կախյալ դրուձյունը (зависимы положение). և եթե գործը այսպես շարունակվի՞ մեր ժամանակվա ամեն նորոգութուններ ոչինչ շահ չեն բերիլ մեր տեղի հայ ժողովրդին: Խոսքս մեկնեմ:

Հայաբնակ քաղաքներու մեջ հազիվ թե մեկ ուրիշը կ'գտնվի, որ մեր Նախիջևանի պես միմիայն լցված լինի գնող ու ծախող վաճառականներով. իսկ օտար քաղաքներու մեջ, կարծեմ, ամենե-

վին չի գտնվիլ այս՝ ինքնըստինքյան մեծ անհարմարութուն է. սորա երկրորդ անհարմարությունը այն է, որ նախիջևանցոց բուր հարստությունը գումարված է մեկ քանի ձեռք, իսկ մնացած ժողովուրդը շատ կամ քիչ, ուղղապես կամ անուղղապես փողի ու շահի կախումն ունի այդ մեկ քանի հարուստներեն:

Հարուստը երբեք յուր փողը առանց շահի չի տալ յուր փոքր չքավոր եղբորը. որքան որ կարող է՝ յուր փոխատվության փոխարեն կ'առնու նորամեն տոկոս (այլըխ) կամ մաքուր փողով, կամ աշխատանքով, կամ բարոյական ընկճումով: Առուտուրը ինքընըստինքյան ենթարկված է (подворжено) անդադար փոփոխության, այսօրվա հարուստը վաղը հեշտությամբ կարող է սնանկանալ, ուրեմն յուր փողի պակասելովն՝ աչքը միշտ տնկած ունի յուր դրացիի օգնությանը, և այդ ակամա բարոյական կախված դրության ենթարկված է քաղաքիս բոլոր բնակիչքը. ամենքը առուտուրական կրիզիսը, փողի հարկավորությունը աչքերի առջև ունին, ուրեմն և հարստի օգնության հույսը երբեք չի ելել նոցա մտքեն, և այդ պատճառով միշտ պատրաստ են զո՛հ բերել իրենց ազատ կամքը, խելքը և դատմունքը հարստի հաճույթին (капризы):

Այժմ դուք պարզ կ'տեսնեք, որ մեր քաղաքացիներեն մեծագույն մասը ստրկական կախումն ունի մի քանի հատ անհատներին (индивидуум): Ես ձեզ կ'հայտնեմ, կարելի՞ է որպիսի և իցե գործ կատարել այդպիսի ժողովրդի մեջ: Իհարկե չէ կարելի: Ի՞նչ գործ և հառաջացնելու լինիս, պարտավոր ես ոչ միայն խորհրդակցելու քու սիրական խելքիդ և ազնիվ ձգտումիդ (стремление) հետ, այլ քանի մի կամակոր, համառ և բխամիտ հարուստներուն ձեռքը ու ոտքը լվելով: Հոժարեցե՞ք, որ այդ ցած հնարներով ազնիվ ձեռնարկությունը առաջ չի երթալ: Ի՞նչ անես, որի՞ն օգնության կանչես, ի՞նչպես դուրս գաս այս կախարդական շրջանակեն (закалдованный круг): Լուսավորություն, կասես: Գուցե դու կարծիք կանես թե, եթե քաղաքիս մեջ реальный վարժատուն բանանք, քաղաքիս մեջ 400 տղաք գիմնազիական մունդիր որ հազնին և այդ 400-են միայն 200-ը մինչև երրորդ դասատուն երթան և այդ 200-են միայն 100-ը մինչև վեցերորդ դասատանը արժանի լինի և այդ հարյուրեն միայն 15—20-ը արժանի լինի օրինավոր կերպով իրենց ուսումը ավարտելու և այդ 20-են միայն 10-ը համալսարան երթան և այդ 10-են միայն 7-ը ավարտե վերին ուսումն, այսպես և սորանեն ուղիղ 15 տարիեն եթե 7 համալսարանական

տղաք ունենաք և 13 ГИМНАЗИЧЕСКИЙ курс-ով, կարծիք կանեք քա-
ղաքս կատանա յուր ազատությունը... Հավատացեք, պարտենեք,
եթե պեկ¹ պատվական օր քաղաքիս մեջ հազար հոգի տկտր հա-
մալարանական երիտասարդներ ունենայինք, դարձյալ հայի բազ-
մությունը չի պիտի գտներ յուր ցանկայի ազատությունը, վասնզի
Նախիջևանի մեջ մինչև ցայժմ օտար փողներս բերողը գարձյալ
նույն ստակն է: Կարճ ասեմ, մենք ստակով ստակ կվաստակենք և
ո՛չ ուրիշ հնարով և այդ է մեր քաղաքի մեկ հատիկ անբախտու-
թյունը:

Մեմը լավ նայեցեք ձեր շորս կողմը, մենք ունինք քանի քանի
բժիշկներ, ունինք և քանի մի ուսումնականք, ունինք քանի մի
վարժապետք, ունինք շատ քահանաներ, տիրացուներ, ունինք քա-
ղաքագլուխ, գատավորներ, այսինքն այնպիսի մարդիկ, որոնք վա-
ճառական չեն: Ես ձեզ կհարցնեմ, ապահովա՞ծ է եղաց ապրուս-
տը, նոքա կախումն չունի՞ն ժողովրդի հաճույքին, մի քանի հա-
րուստներու կամքին: Նոքա բազմության ինատին խաղալիք, տան-
դիլիկ չե՞ն: Ո՞ր տերտերին չէ կարող ժողովուրդը, եթե կամենա,
օրական հացն զրկելու, մեմը թող փորձե պահանջելու յուր մարդ-
կային իրավունքները: Ո՞ր վարժապետին չի կարող առանց հաց
թողնել, եթե նա համարձակի յուր գլխու մեջ սեփհական կարծիքը
ունենալու, որ համաձայն չէ այս կամ այն աղայի կարծիքին. ո՞ր
քաղաքագլուխը կհամարձակի յուր խելքի կտրած բարենորոգու-
թյունը մտցնելու քաղաքիս մեջ, եթե այս կամ այն հարուստը յուր
հոժարությունը չի տա: Այսպիսի վիճակի մեջ կարող է լինել
զաստիարակիչ եկեղեցի, դաստիարակիչ թատրոն և դաստիարակիչ
լրագիր կայանալ: Քահանային թույլ տված է միայն գո-
վելու ժողովրդի առաքինությունը, իսկ եթե փորձ փորձե մուս-
թյուններուն հետ պատերազմել համան իջեաքը ու տուն օրհնենքի
աածայը կբիշանա. թատրոնի մեջ իրավունք ունիս Արշակներու ու
Վաղարշակներու վրա խոսել, եթե աղայի էքիփածի քոփհակին
խոսեցիր իսե՛ տոմսակդ գնող չես գտնիլ: Ով որ այցելություն
կանե դոմսքոյե զասետանիները, պարզ կտեսնե մեր խեղճ քա-
ղաքագլխի հալը: Ես կհարցնեմ ձեզի, եթե այս բռնակալության
ամենաանտանելի ձևը չէ, ապա ուրիշ ի՞նչ կերպ կլինի բռնակալու-
թյունը:

¹ Մի լավ օր:

Գիտե՞ք ո՞վ է մեր տեղը ազատամիտը, մեկ՝ հարուստը, մե-
մալ նահատակը: Մեացած ամենքը ստրուկներ են:

Լուսավորությունը չէ՛ կարող սղգը այս դրությունեն ազատե-
լու, վասնզի լուսավորությունը փող չի տալ: Օրինակի համար,
եթե մեկ պատվական օր քաղաքս մտնուն 100 բժիշկ և 100 փլոթ-
նիք, խելքներդ ի՞նչ կգտնե՞ ո՞րը շուտով իրեն համար գործ և ապ-
րուստ կգտնե: Նմանապես, եթե քաղաքս մտնեն 100 գուվեռնանքա
և 100 քուխարքա՝ ո՞րը շուտով գործ և ապրուստ կգտնեն: Հավա-
տացեք, որ քաղաքիս պետք է 2 կամ 3 բժիշկ, 15 կամ 20 գուվեռ-
նանքա, մի փաստաբան, մի ճարտարապետ, 10—20 վարժապետ,
10—18 քահանա, մեկ խոսքով, ընդամենը 50 հատ ուսումնական
մարդ, ավելի որ գան՝ մեկ մեկե գործ և հաց պիտի խլեն: Կհարց-
նում, լուսավորությունը քաղաքիս վիճակը ի՞նչպես պիտի բար-
վորե:

1) Մեր շինելու ուսումնարանը չէ կարող հացատու գիտու-
թյունները տալու հայ տղին, և եթե տա ևս՝ շատ քիչերուն. մնա-
ցածները քաղաքիս մեջ հաց գտնելու չեն:

2) Մեր ուսումնարանը վաճառականներ պատրաստել չէ կա-
րող. վերջապես, եթե առանց անձնախաբության կուզեք իմանա-
լու՝ շխարհիս երեսին ոչ մի տեղ չիկա մի այնպիսի ուսումնա-
րան, ուր գործնական (практический) կերպով սովորեցնեն վա-
ճառականությունը: Առուստուրը կսորվվի նույնիսկ շուկայի, խա-
նութի մեջ:

3) Մեր ուսումնարանը չի կարող պատրաստել Ֆապիբանթ-
ներ, զավոտչիքներ, վասնզի դորա համար պետք է վերին արվես-
տական, — մեքենական, — քիմիական ուսումնարաններ, որոնց շի-
նությունը, պահպանությունը մեծ միլիոններու գործ է, մեր ուժեն
շատ վեր է:

Ի՞նչ կ'ենա: Մեր ուսումնարանը կուտա հայ տղին միջնակարգ
ուսումնարանի գիտություն, այսինքն մի փոքր ավելի ստորին
ուսումնարանն, բայց շատ, շատ, շատ վատ վերին ուսումնարան-
ներեն, այսինքն կարդացող, կարդացածը հասկացող և թեթև կեր-
պով յուր միտքը հայտնող և ոչ ավելի, այսինքն խանաթները փե-
տած ծիծեռնիկ, որ ոչ քալել կարող է և ոչ թռչել:

Այս չէ՛, այն չէ՛, ապա ի՞նչ պետք է մեզ:

Մեզ պետք է այնպիսի ուսումնարան, ուր տղան կարդալու
հետ մեկտեղ սովորի մեկ հացատու ձեռարվեստ (ремесло) ևս, որ

վարժատունեն նոսր դուրս դրած չի դրած՝ ոչ ոքի օգնության կարոտ չլինի, ոչ ոքի առջև յուր ազնիվ գլուխը չի ճկի, յուր մատղաշ հասակեն շիմանա ի՞նչ ասել է ПОДЛЫЙ խոնարհությունը, այլ յուր պետքը ինքը յուր ձեռքով հոգա, յուր կամքը, յուր կարծիքը, յուր արդար դատողությունը, չի զոհե մարդոց օգնության յուսեալին, ազատ մարդ լինի և ոչ թե ակամա ստրուկ:

Պարոններ, եթե ձեր մեջ կա եթե ոչ սեր դեպի ազգը (ազգը շատ մեծ է, նորա թիվը 5 միլիոն է, քու ուժդ չի հասնիլ այդքան բազմությունը սիրելու), գոնե քու ծնած քաղաքը, շանացքը, որ մեր նախնիներին մեջ օր առաջ բացվի ձեռարկեստի վարժատունը կամ եղած վարժարանների մեջ ստիպողապես մտցնել տալ քանի մի ամենահարկավոր ձեռարկեստները, որ այս բոլորիս առավել հարկավոր է, քան թե այն շոնթուխ ուսումը, որ պիտի դարձնե մեր քաղաքի տղոց բազմությունը (երկու-երեք հարստի որդոց հետ ևս գործ չունիմ) ոչ աստծու առջև վառելու շրախ և ոչ սատանային ձեռքը բռնելու կելպերի, այսինքն ամենաթշվառ արարածներ, որոնց վիճակը, կհավատացնում ձեզի, առավել վատ կլինի, քան թե մեր մահալանները քաշ եկող դուսեցի լիմոնճիներուն: Այս այն վարժատունն է, որ մեր քաղաքին մեկ օր կյանք, վերանորոգություն և շարժունք պիտի տա: Ես չեմ ասել, որ реальный վարժատուն չունենանք. աստված մի՛ արասցե, реальный վարժատունը մեզ այնքան պետք է, ինչքան որ լավ ճաշեն ետքը կերակուրը մարսելու համար պետք է մեկ թաս խաֆե ու մեկ տեսք սիկառ. բայց ձեռարկեստի վարժատունը՝ պետք է ինչպես ամենօրվա հաց:

Ճշմարիտ է, реальный վարժատունը մեր զավակներուն պիտի ազատե 6 տարվա սալտաթությունեն. այդ շատ մեծ թեթևություն է քաղաքիս համար, բայց ձեռարկեստի վարժատունը մեր խեղճ հային մինչև կյանքի վերջի բոլոր ակամա պիտի ուտեցնե, խմեցնե ու հագվեցնե:

Ես կցանկանայի, ազնիվ երիտասարդներ, որ այն զաղափարը ձեր մեջ տարրանար, արյուն և միս դառնար, ձեր համոզմունքը դառնար, որ դուք ամուր քարոզելիք ամեն հրապարակի մեջ սորա պետքականությունը և ուրիշներին ևս համոզելիք և վերջ ի վերջո կատարումն տայիք:

Իմ կարծիքովս ազգ սիրողը ամենեն առաջ նորան հաց պիտի տա, միայն կուշտ մարդը ընդունակ է խելոք մտքեր սեփականելու. քաղցած փորը փիլիսոփայության համը չգիտե: Տվեք ազգին

հաց. ազգի հացը նորա ձեռքի ճարտարության մեջ է: Գլխու զարգացումը ժողովրդի շատ փոքր մասին ձեռնհաս է. գլխու զարգացման համար շատ դժվար պայմաններ պետք են. իսկ հաց ու հալավ ամեն մեկ մարդու է պետք:

Ամեն ազգի մեջ վարժապետները աշակերտի կպատրաստեն, միայն մեր խեղճ քաղաքի համար աշակերտներ կպատրաստենք մի քանի մեր հավնած վարժապետներու համար: Աչքներդ բացքը, շիկի որ բոլոր շահըդ միայն այն լինի, որ որդուդ 10 տարեկան վարժատուն մտցնուս և 16 տարեկան հանես: Եթե անդառնալիքան շատ կա, նոցա մեջ ամենաանդառնալիքն է մանկության ժամանակ անօգուտ կորուցած ժամանակը: Չիմանաս որ՝ ի՞նչ տղետ վարժապետները կխոթեն որդուդ գլխու մեջ՝ այդ ուսում է: Չիդ չի սախտելու համար դուն քուշուտ բռնելու ժամանակ խիստ մոխպեթ ես, նույն զգուշությունը բանեցրե՞լ ես քու որդուդ վարժապետներու մասին:

Ինձի հարցնուս նե, մեր ձեռքի տակ գտնված վարժապետներուն համար պետք էր շիկել անկելանոց, իսկ մեր տղայոց պետքականները ցորեկով ֆենեկով փնտրվելու: Ես գիտեմ, իմ ասածս չեք հավատալ, բայց երբ որ ավանակներդ էշիկ կդառնան, այն ժամանակ կասեք. «թյո՛ւֆ, թյո՛ւֆ, մարդուն ասածը խորդ էր եղել»:

Ասածս նորեն կկրկնեմ. 1) քեզի պետք է քու եսիր վիճակեդ ազատվելու, որ շենքով մարդոց սրբա անցնես, դորա համար պետք է 2) ձեռարկեստ սովորեցնեք քաղաքիդ տղոց. 3) այժմ քու զավակիդ ստացածը ուսում չէ. հա՛պա ժամանակի և ուժի կորուստ. 4) այժմվա քու ունեցածդ վարժատուն չէ, այլ վարժապետներուդ богодельня որդոցդ՝ смирительный дом:

Ես ասելուս ասի, անժամ դուն անելուդ արա՛:

Անող չի մոռանա, որ վեհափառ կաթողիկոսի փլանեն ու հրամանեն հեռացողին...¹

ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՊՐՈՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՄԵՋ

Ներկա տարվույս սեպտեմբերի 28-ին առ մեծի ուրախության բոլոր քաղաքացիներին, բացվեցավ նոր-նախիջևանի մեջ Արվեստ-

¹ Երկու բառ անընթեանելի:

լինելով՝ յուր բարձր գնովն անձեռնահաս էր գնել ցանկացողին: Այսպես հայի ձեռագործ ապրանքը, քանի գնաց, մոզայե ընկավ և վերջապես բոլորովին կորուց յուր գնողներին:

Արվեստը, այդ «ոսկի ապարանջանը»¹, այդ միջակ ժողովրդի հաց և ամենակարևոր պիտույք հայթայթողը— փախավ հայերի ձեռքեն, և հանկարծ մի պատվական օր ³/₄ մասը հայ ժողովրդին մնաց առանց հանապազօրյա հացի: Այս ցավալի անցքը տևեց (գոնե ն. Նախիջևանի համար) 40 տարի:

Ժամի սանդուղքները լցվեցան մուրացկաններով. մի ժամանակվա փարթամ արվեստավորները աղքատության պարկը շալակած, ընկան դռնե-դուռ՝ օրվա հաց մուրալու. ամոթխած հայ տանտիկինը ի սեր յուր ընտանիքին երեսը պնդացուց, ավանդական պարկեշտութունը մոռացավ, նմանապես ընկավ տնե-տուն՝ մի-նին մյուսին հայտնելով յուր տան մեջի ալյուրի, եղի, հալավի, վառելիքի և այլն պակասութունը: Քանի մի հարյուր ունևորների տարեց-տարվա առատ զոհաբերութունը չբացվեց հազարավոր անգործ մարդոց բազմանդամ գերդաստանի պիտույքը լցնելու...

Տնանկութուն, սնանկութուն, չքավորութուն և նոցա հետեւվանք հիվանդութուն, տարափոխիկ ցավեր, երևխայոց մահ տարեց-տարի շատացան այն քաղաքի մեջ, որ մի ժամանակ պարծանքն էր ամեն հայերուն նևային ափերեն բռնած մինչև Գանգեսի ափերը:

Բարեմիտ քաղաքացիները մտախոհության մեջ ընկան. սկսան փնտրելու այս ամեն տարաբախտությունների սկզբնապատճառը և... հիմնվեցավ ն. Նախիջևանի «Արվեստական դպրոցը»:

Ճշմարտասիրութունը ստիպում է ասել, որ թեև արվեստական դպրոցի կարևորագույն գաղափարը և նորա հիմնելու ցանկութունը դեռևս շատ տասնյակ տարիներ կը մնային ինչպես գաղափար և ցանկութուն (cia desideria), եթե այստեղ հասարակաց ցանկության և ակնկալության զորավիզն չի գային պ. Սերովբե Հարությունյանի² աշխույժ և անխոնջ աշխատանքը, որն գրեթե գերմարդկային ուժ թափեց այս բարի գործին կյանք տալու համար: Պ. պ. Նախիջևանցիներու հավիտենական երախտագիտութունը պիտի կապվի այս ազնիվ և հայասեր երիտասարդի անվան

և հիշատակի հետ: Ոչ պակաս եռանդ և աշխատանք ցույց տվին այս Արվեստական Դպրոցի հաստատության նաև պ. պ. Գաբրիել Տրապիզոնցյանը և Հովհաննես Պապասինյանը, և մեր շնորհակալութունը դեպի այս պատվամեծար անձինքը ոչինչ պակաս չի պիտի լինե առաջինն: Գործունյա և արթուն վաճառականին շաբաթներով և ամիսներով յուր սեփական գործն ու զբաղմունքը թողած, հասարակական գործով ձրի պարապել, ստեպ ստեպ արտաքո կարգի ժողովների ներկա գտնվիլ, ճշմարիտ պետք է ասես, ամեն մարդու գործ չէ. բայց ով որ անում է, իհարկե, մենք չենք կարող այդպիսի մարդու անվան չհարել առաքինի և բարեմիտ ածականը, կային և ուրիշ զոհեր, որ ես չեմ հիշում. այս կողմանե պ. պ. Տրապիզոնցյանի և Պապասինյանի երախտիքը անփոխարինելի և հավիտենական հիշատակի արժանի են:

Ներկա տարվույս սեպտեմբերի 28-ին քաղաքացւոյց խումբ բազմութունը ժողովված էր բացվելու դպրոցի մեջ. դասարանները և արհեստանոցները այցելուններով ծփծփում էին, և ինչպես ասում են «ասեղ ձգելու տեղ չիկար»: Սպասում էին Արհեստական դպրոցի բացման հանդիսին:

Երբ որ հոգևորականաց դասը օրհնության կարգը կատարեց պրծավ, պարոն Հարությունյանը կարդաց ժողովրդի առջև մի ընդարձակ ճառ, որի մեջ ամփոփված է դպրոցի հիմնարկության գրեթե ամբողջ պատմութունը և նրա կանոնադրության հիմնավոր մասունքը: Հետո նույն պարոնը, խոսքը դարձնելով տեսչին, պ. պ. վարժապետներին և վարպետներին համառոտ, բայց ազդու կերպով ցույց տվեց¹ այն շավիղը, որով հառաջ գնալով, մի օր նոր պով ցույց տվեց¹ այն շավիղը, որով հառաջ գնալով, մի օր նոր նախիջևանը պիտի ունենա բարեկիրթ և հմուտ արվեստագետներ: Վերջապես պարոն Հ. Հ. Պապասինյանը սերտ բարեկամաց նեղ շրջանումն կարդաց մի համառոտ, բայց տեղացիներու սրտին մոտիկ ճառ:

Այս ամեն ճառերը և նույն իսկ Արվեստական Դպրոցի կանոնադրութունը յուր պարագաներով ընթերցողը կը գտնե ստորև, որոնք թերևս մի օր կարող լինին պետք գալ նոցա, որոնք կը կա-

¹ Նախիջևաներեն՝ օսկի ապրճան (ծ. հեղ.):

² Ն. Նախիջևանի քաղաքական խորհրդարանի ատենադպիրը:

¹ Այս ճառը ասաց նա ուսուցիչներ, ըստ որում շատ ուսուցիչ և օտարազգի ներկա էին այդ հանդիսավոր օրը Արվեստական դպրոցի դահլիճումը:

մենային ինչ ու ինչ մեր նորահաստատ դպրոցի նման մի բան ունենալ իրանց բնական տեղումն:

Հաղիվ թե հայերուս մեջ այժմ գտնվի մի մարդ, որ հերքե ուսման և գիտութեան կարևորութիւնը՝ մի որևէ ազգի մտավոր մակերևութիւնը բարձրացնելու համար. այնուամենայնիվ չէ կարելի ասել, որ ուսումը և գիտութիւնը որ աստիճանի և լինին մատակարարված մի անհատի՝ անշուշտ պիտի ապահովացնեն նորա ապրուստը: Տարրական և միջնակարգ ուսումը թեև շատ պետք են մինը ժողովրդի բազմութեան և մյուսը՝ միջնակարգ դասին, բայց ոչ առաջինը, և ոչ վերջինը անմիջապէս կարող են ապահովացնել նորա (ժողովրդի) կյանքը. միայն արվեստն է, որ առանց իրիք բացառութեան ոչ միայն ապահովացնում է ժողովրդի հանապազօրյա սնունդը, այլև հասցնում է նորան աղքատ կյանքի և շատ անգամ՝ անբավ հարստութեան. ասածիս հաստատութիւն՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և՛ մանավանդ Հյուսիս-Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Գիտեմ, անպատճառ ասողներ պիտի լինին. «Եթե այդպես է, ապա ինչո՞ւ մեր պապերը, որ ունեին արվեստներ, այդ երջանիկ վիճակին չի հասան»: Ես էլ նույնը կպատասխանեմ. «Այո, մեր պապերը թեև հմուտ էին իրանց ավանդական արվեստների մեջ (որն սովորել էին լոկ նմանութեամբ և անդադրում կրկնութեամբ և ոչ գիտակցաբար), բայց որովհետև ուսումն ու գիտութիւնն զուրկ էին, չէին կարող տեղի և ժամանակի պահանջմունքներին համաձայն կատարելագործել կամ հարմարեցնել իրանց արվեստը, որ դարի և ժամանակակից մարդոց պետքի հետ հավասար ընթանային, և այդ պատճառով նոցա արվեստը տևողական արդյունք չի տվեց նոցա»:

Միայն Արվեստական դպրոցն է, որ զույգ արվեստների հետ մատակարարելով տղայոց նաև ուսումն ու գիտութիւն, առհավիտյան հացատու արդյունաբեր կարող է անել նոցա հմտացած արվեստը:

Հային ուրիշ փրկութիւն չի կա, եթե ոչ արվեստի և լուսավորութեան միջոցներով հարթել և հորդել յուր ճանապարհը՝ կենցաղույս փշալից և տատասկոտ դաշտի մեջ: «Որ ունի ականջս լսելոյ՝ լուսից է»:

Սրտի հրճվանքով հիշում եմ ուղիղ 14 ամիս առաջ վեհափառ Կաթողիկոսի հետ ունեցած երկարատև խոսակցութիւնս այս մա-

սին, երբ նա երիտասարդական աշխույժով և ժամանակակից գիտնականի համոզմամբ խոսում էր արվեստի արդինաբերութեան մասին և ցանկանալով ցանկանում էր յուր բարձր հովանավորութեան տակ գտնված ամեն դպրոցներումն մուծանել 4—5 արվեստ: Այսօր մենք նոր-նախիջևանցիքս ահա կատարեցինք նորա կամքը և ցանկութիւնը, սպասելով նորա սուրբ օրհնութեան, և ի բոլոր սրտե կը բաղձանք, որ մեր բարի օրինակին հետևեին մեր ամեն համազգիք, բնակված թե բուն Հայաստանումն և թե ցրված զանազան աշխարհներ, տերութիւններ և քաղաքներ:

Նոր-Նախիջևան, հոկտեմբերի 2. 1880:

ՄԵԾԱՊԱՏԻՎ ՊԱՐՈՆՆԵՐ

Լոենք, չհասկացող ձևացնենք այն մասին, թե ինչ էր ներքին, գաղտնի շարժառիթը, որ Ձեզ ընտրեցին քննիչք իբրև Արվեստական Դպրոցի բարեփոխութեան համար. թե դուք և թե ես միամըկանութեամբ հավատանք, որ ընտրողները, առանց բացառութեան, ի նկատի ունեին միայն քաղաքացոց ընդհանուր օգուտը, իսկ վնաս ոչ ոքին, և այդ եղանակով նայենք դպրոցիս անցյալ գործունեութեան վրա և աշխատենք նորա առջև հարթելու առավել լավագույն ճանապարհ:

Ավելորդ իմն է ասելն, որ ենթալուսնյա աշխարհիս մեջ չիկա ոչինչ անթերի, կատարյալ. կատարյալը միայն աստված է. իսկ մահականացուն միայն մի հատիկ հնար ունի առջևն, որ է մինչև աշխարհիս կատարը, միշտ ձգտել դեպի իդեալը:

Արևմտյան Եվրոպան հազար տարիներ ավելի է, որ ունի բարեկարգ դպրոցներ, և ամեն օր նորանոր կատարելագործութիւններ կմուծանեն նոցա մեջ, նայելով ժամանակի պահանջին և յուր ձեռքը գտնված միջոցներին: Աններելի հանցանք և ծիծաղելի հիմարութիւն կլինեն, եթե մենք հայերս մեր ծխական ժողովրդական դպրոցներն պահանջենք որևէ անթերի վիճակ, մինչ մեր դպրոցների կյանքը 10—15 տարիներ ավելի չէ, և այն թշվառ կուպեկների գնով: Բժախնդրութիւնը դատողութիւն չէ:

Պարոններ, հայի ծխական դպրոցներին շատ բան պահանջելը կնշանակե կամ ծայրագույն սոցիալիզմ, կամ գիտակցական շարամտություն: Միջին ճանապարհ չի կա:

Ամեն դպրոցական գործող (թող լինի նա լիազոր վերատեսուչ, կամ համեստ վարժապետ) շատ լավ գիտե, որ դպրոցի ամենախիստ դատավորներն հատկապես նոքա են, որոնք ուսման և գիտության մասին ոչինչ գաղափար չունին, թե կարդալու և թե գրելու 2—3 տողի մեջ տասը-քսան սխալ կանեն, իսկ նա, որ կանոնավոր և իսկական լուսավորություն է ստացել, շատ լավ գիտե, որ մարդկային ստացական հմտությունների մեջ գիտությունը (наука) ամենադժվարին և ամենատաժանականն է, վասնզի նորան ձեռք բերելու համար շատ հաջողած պայմաններ են պետք:

Վարժարանի հառաջադիմության համար վարժապետի ամենագեղեցիկ հատկությունները տակավին ամենափոքրիկ պայմանն է, դորա համար պետք են աշակերտների բարուց մաքրությունը, ծնողաց ուշիմությունը, նոցա շրջանի բարոյականությունը, նոցա ապրուստի ապահովությունը և այլ անհամար բարեհաջող պայմաններ:

Այս ամենը տգետ ամբոխը (թեև լինի նա առաջնակարգ հարուստ) հասկանալ կարող չէ: Ամբոխը կկարծե թե՛ բավական է, որ երեխան 4—5 տարի դպրոց երթա ու գա, այնուհետև նա անպատճառ օրինավոր մարդ պիտի դառնա, թե՛ բարոյականությունով և թե՛ մտավոր զարգացմունքով: Եթե ամբոխի այսպիսի կարծիքը արդարացի լիներ, մի՞թե հզոր պետությունները չէին կարող (թեպետև ծանր զոհերով) մի պատվական օր իրենց երկրի մեջ գտնված բոլոր երեխաներին հավաքել և փակել դպրոցների մեջ և կարճ միջոցում (օրինակի համար 6—7 տարվա մեջ) ստանալ բարեկիրթ, իդեալական ժողովուրդ: Բայց, ավաղ, հազարավոր փորձերով ապացուցված է, որ այն շատ տխմար և անհեթեթ պահանջ-մունք է: Բնության մեջ այդպիսի ուսումներ չի կան: Ամենայն ինչ և ամեն ոք քայլ առ քայլ կատարելագործվում է, և շատ անգամ այդ քայլը մի փոքրիկ ճնճղուկի քայլ է: Առանց իմ ասելուն ալ դուք շատ լավ գիտեք, որ Պետրոս Մեծը յուր բոլոր հսկայական ուժը թափեց, որպեսզի կարճ միջոցում կարողանա լուսավորել յուր ազգը. փող, զավազան, հաստատուն կամք, եռանդուն սեր, բարի ցանկություն, մտաց հանձար— ամենայն ինչ ուներ. շատ բան ջարդեց, փշրեց, կործանեց, բայց ավա՛ղ, նորա փափագած ու-

սաց մտազոր կանոնավոր զարգացումն սկսավ փոքր առ փոքր երևան գալու միայն մեր օրերը, այսինքն՝ դարուս վերջին բառորդում: Եվ այն, ինչ որ մենք այժմ կտեսնենք, ասացեք, խնդրեմ բարեխղճաբար մանկավարժության վերջին խոսքն է. երաշխավոր եք, որ ներկա ձեր շարունակ հինգ տարի տևի:

Արվեստական դպրոցը նախիջևանի մեջ ինն տարվա կյանք ունի: Արվեստական դպրոցը յուր տեսակում առաջին փորձն է մեր ազգի մեջ: Բնական է, որ նորա առաջին քայլափոխները չէին կարող այնպես համարձակ, հանձնապաստան լինել, ինչպես որ հարյուրավոր տարիներ կյանք ունեցող հասարակ ուսումնարաններու: Այս խոսքերս շատ հասկանալի է ամեն բարեխիղճ, լուսավորյալ մարդու, մանավանդ փորձված մանկավարժին:

Այնուամենայնիվ, Արվեստական դպրոցը, յուր նյութական հնարներին և աշակերտաց ընդունակության նայելով, արել է այն, ինչ որ ներելի էր ակնկալելն: Եվ եթե նա ունի ինչ ու ինչ թերությունք, այդ թերությունքը, ինչպես կտեսնեք, կառավարիչներեն անկախ պատճառներեն են հառաջացած:

Ահա Արվեստական դպրոցի պիտույքը:

Նախ՝ կարի հարկավոր է, որ դպրոցի մեջի շքավոր աշակերտները փոքրիքատե սննդարար կերակուր ունենան: Պարոններ՝ մի՞թե կարիք ունի. Ձեզ բացատրելու, որ քաղցած տղան ոչ սովորել է կարող և ոչ բանել (աշխատել): Խոսքիս բառական իմաստով հասկացեք, որ աշակերտաց 6%—ը յուր տանը մեջ սննդարար կերակուր չունի: Դպրոցիս շնչին հնարեն մենք կուտանք տղայոց մեկ աման թեյ, երկու կտոր շաքար և 1/2 ֆունտ հաց: Ինքներդ դատեցեք, կարող է 10—14 տարեկան տղա այս շնչին սնունդով ամբողջ օրը անցնելու և ընդ նմին աշխատելու: Արվեստական դպրոցի աշակերտներին սնուցանելու համար կարի հարկավոր է, որ քաղաքը ավելցնեն այլևս 1000 ու:

Երկրորդ՝ Արվեստական դպրոցի աշակերտը 4 տարվա մեջ ավարտելով յուր ուսման և արվեստի ընթացքը՝ շատ անգամ 15 տարեկան եղած թողնում է դպրոցը: Ասացեք, կաղաչեմ Ձեզ, կարո՞ղ է 15 տարեկան տղան անկախորեն որևէ արվեստով պարապել և յուր վիճակը անխախտ պահել: Պետք չէ՞ր նորան այլևս 3 տարի առսակավը կատարելագործվել, հմտանալ: Ո՞ւր են այն արվեստանոցներն բարեխիղճ վարպետներով, ուր մեր տղայահասակ ուսումնավարտը կարողանար յուր սովորած արվեստի մեջ

կատարելագործվել է միևնույն ժամանակ յուր բարոյականությունը մաքուր պահելու: Սուրբ պարտք չի կա՞ արդյոք Արվեստական դպրոցի վրա, գոհնե, փոքրիկ ամսական տալով, 3 տարի պահել դպրոցիս մեջ, կատարելագործել, հմտացնել յուր արվեստի մեջ և այնպես արձակել աշխարհ: Այդ բանի համար ևս պետք է ուրիշ 1000 ուրլի, որով դպրոցը կարող է պահպանել 16—17 ուսումնավարտներ:

Արվեստական դպրոցի երրորդ պիտույքն է շինվածքի վերանորոգությունը: Ուշադրութեամբ նայեցեք, կաղաչեմ, այս կիսավեր, քայքայված պատերին, առաստաղին, այս մաշված, ծակծկած տախտակամածին, այս պատառոտած ծածկույթը կտրին, ուստի առանց արգելքի ներս կուգա անձրևի կաթիլը և ձյունի հալած ջուրը, այս հնացած, անպիտանացած հնոցները, որ ամբավ վառելիք կուլ կուտան, իսկ տաքություն ամենևին չեն տալ:

Ազնիվ և բարյացակամ պարոններ, ահա դպրոցի ներկա աննախանձելի վիճակը, նորա անհրաժեշտք պիտույքը և նորա բարեփոխութեան ամենահարկավոր կետերը: Եթե Ձեր մեջ կա բարյացկամութեան ամենափոքրիկ կայծ (որի մասին ես ամենևին չեմ կասկածում) դուք պարտավոր եք այս ամենը հասցնել այն մարդոց ականջը, որոնց տված է հնար և միջոց այս քանի մի անհրաժեշտ պիտույքը դպրոցիս լցնելու:

Ես լիահույս եմ, որ դուք թույլ չեք տալ, որ մի քանի շարամիտ անձինք Ձեզ խաղալիք դարձնեն իրենց կեղտոտ կրթերին և գործիք իրենց նենգժոտ խորհուրդներին:

Մի քանիսը խորհուրդ կուտան Արվեստական դպրոցի աշակերտներին, իբր թե նոցա հառաջադիմութեան համար, գիշերօթիկ դարձնել: Դուք, պարոններ, շատ լավ գիտեք փակ վարժարանների մարդկային բարք ազդեղող վնասները: Նմանապես Ձեզ անհայտ չէ, որ կոմս Առաքելը շատ բարի դիտավորություններ ուներ, երբ հիմնեց յուր զինվորական գաղթականությունները, որն փոխանակ երկրավոր դրախտ լինելու, ինչպես ինքը կհուսար, տաժանական զժոխք դարձավ ողորմելի զինվորների համար: Հիշեցեք Ֆրանսիայի կուսանաց վանքերը, նույնպես լատինադաս կրոնավորների մենաստանները. մի մոռանաք նաև Ռուսաստանի ոսթոգները...

Այս ուսումնարանը, որ վաղվան օրեն պետք է սկսե յուր գործունեությունը, մեկ օր կյանք պիտի տա ամբողջ քաղաքին: Անհնար է, ապագան մարգարեանալու, բայց մի քանի հայտնի երեվույթների վերա հիմնված, կարելի է մտաւորապես ենթադրություններ անել, եթե ուշք դարձնենք հանգուցյալ բարերարի նպատակներին, եթե մտադրութեամբ կարդանք նորա կտակը և եթե տեսնենք վարժատան կառավարիչների ուղղությունը, արդեն կարող էինք այս բացվելի վարժատան մասին գուշակություն անելու կանխավ: Հայերին ի՞նչ է պակաս. հայերիս շատ բան է պակաս, բայց զլիավորապես աշխատասեր և կրթված կանայք են պակաս: Մի՞թե հայք տակավին աշխատասեր կամ կրթյալ կնանիք ունեցած չեն, ո՞չ, ունեցել են, բայց և կրթված, և աշխատասեր ունեցել են շատ սակավ, այնքան սակավ, որ այն բազմութեան մեջ կարելի են այդպիսյաց ազգերը (մատով համարել): Եթե մի աղջ կուլե կամ ընկած, կամ ստոր դիրքե ոտքի կանգնելու և բարձրանալու, անշուշտ յուր մեջ երկու առաքինություն պիտի զարգացնեն— լուսավորություն և աշխատասիրություն: Լոկ լուսավորությունը, առանց աշխատասիրութեան, նույն արժեքն ունի, ինչ արժեք որ ունի թանկագին ակը տակավին հանքի (մադան) մեջ կեցած. աշխատանքը, առանց գիտակցութեան, շատ կնմանի ստորկի դառն տանջանքին:

Այս դպրոցը պիտի ընծայե ազգիս աշխատասեր լուսավոր կանայք, ո՞վ ավելի, քան տեղվույս Արվեստական դպրոցի գործույթը կարող են համակրել այսպիսի սփոփարար գործին. որ կատարվի նոր-նախիջևանի մեջ: Նույնիսկ Արվեստական դպրոցը յուր ծնունդը ստացավ ժողովրդի այն գիտակցությունեն թե՛ որեւէ ազգ պահպանելու համար, պետք է նորա մեջ զարգացնել աշխատավոր բարեկիրթ ժողովուրդ:

Ենամատարք, ուսուցիչք, ուսանողք Կոկոյան վարժարանի՛ Արվեստական դպրոցը կուղարկե Ձեզ յուր բարեմաղթությունները, կցանկա Ձեզ ամեն կերպ հաջողություն կհայտնե յուր բերկրու-

թյունը ըստ դիպաց բացման այնպիսի վարժարանի, որո նմանը և ինքն է, և կանվանեն սոցա մեջ կրթվողներին իրենց քույրերը. և ի՞նչ ավելի քաղցր անուն է աշխարհքի երեսին, քան թե քնքուշ խոսքը քույր, վասնդի ինքը Արվեստական դպրոցը եղբայրն է Կոկոյանց վարժարանին մեջ սովորողներուն: Արվեստական դպրոցի սաները կիսնդրեն իրենց քույրերին՝ Կոկոյան վարժարանի սանուհիներին խորունկ արմատացնել իրանց մեջ բարեկրթությունը և աշխատասիրությունը, որպեսզի ժամանակն անցնելով, երբ երկուս ևս շափահաս, մարդիկ և քաղաքացիք կլինեն, իրենց կողմանե պարզերես և գիտակցաբար կարողանան հորդորելու իրենց ժամանակակից երեխայքին նույն առաքինությունքը:

Մեր քաղաքը ընկած է, ժողովուրդը բարոյապես և նյութապես աղքատացած է. այստեղ ոչինչ չի օգնիլ ժողովրդին վերստին ոտքի կանգնելու, բացի ժողովրդական ընդհանուր լուսավորությունն որն ընդամին ամուր կապված լինի աշխատանքի հետ: Իսկ աշխատանքի և բարեկրթության սերմնացաններն են Նախիջևանի համար Կոկոյան աղջկանց վարժարանը և Արվեստական դպրոցը. քանի որ այդ եղբայրք և քույրք ձեռք-ձեռքի տված կլինեն, Նախիջևանը ոչինչ ներքին և արտաքին վտանգներն երկյուղ չունի և նորա ապագան ապահոված է:

Օրհնություն, գովություն և փառաբանություն այդ երկու վարժարանների շինողքը, պահպանողքը և քաջալերողքը. եթե մենք իսկական ազգասերներ, հայասերներ կփնտրեինք, ահա սոքա են:

ՄԵՏԱՊԱՏԻՎ ՊԱՐՈՆ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ

Ամենիդ շատ լավ հայտնի է մեր քաղաքի ընկած դրությունը, այն ևս հայտնի է ձեզ, թե ի՞նչ է պատճառը մեր քաղաքացիոց օրեօր հետ մնալը աշխարհին առաջադիմության մեջ և զրկվելը այն շափավոր բարեկեցությունն որն կվայելին մեր պապերը. այս ամենն ազգային տարաբախտության միակ և միակ պատճառն է մեր ժողովրդի բազմության տգիտությունը:

Սուտ չէ՛, այսօրվա օրս մենք 4-5 ավելի կամ պակաս բարեկարգ դպրոցներ ունենք, որոնք ժամանակով, իբր թե մեր ժողո-

վրդի մտավոր զարգացումի մակերևույթը պիտի բարձրացնեն: Բայց ես ձեզ կասեմ, որ այդ առերևույթ ցուլքովը մի խաբվիք. մեր պապերն ալ ունեցել են դպրոցներ, մեր պապերն ալ ժամանակե ժամանակ ուղարկել են իրանց որդոց հեռավոր տեղեր ուսուսն ստանալու: Բայց այդ ամենը հասուցած չէ մեր ժողովրդին այն աստիճանին որ լուսավորությունը ընդհանուր լիներ մեր քաղաքացոց մեջ. եթե մի փոքրիկ մասը ստացել է սրտաքին ցուլք, մնացած մեծագույն մասը մնացել է խորին տգիտության մեջ:

Պատվական քաղաքացիներ, մեր ազգի թշվառության միակ պատճառն է ուրեմն տգիտությունը:

Մեր ժողովուրդը, սուտ խոսք պետք չէ, գրեթե ծայրեծայր, կարդալ գիտե, շատ քիչ մարդ կգտնվի քաղաքիս մեջ, որ մեկ օր դպրոց գնացած չլինի և կարդալ սովորեցած չլինի, և եթե այդ գրակարգացությունը մնացել է մեր ժողովրդի համար անօգուտ, սորա պատճառը այն է, որ նա ունեցած չէ կարդալու բան:

Ձեզ ամենիդ հայտնի է, որ հայ ազգը ունի երեք լեզու, մեկն է մեր գրաբարը, որ կգործե մեր ժամերուն մեջը. այդ լեզուն ժողովրդին համար միանգամայն մութ է: Մեր երկրորդ լեզուն, որ կասվի նոր գրականական, այն է, որով կզրվեն մեր օրերը գանազան լուսավորիչ երիտասարդներն զանազան գրքեր և լրագիրներ, նմանապես անհասկանալի է մեր տեղի ժողովրդի բազմությանը: Մեր երրորդ լեզուն այն է, որով կխոսե մեր ժողովուրդը. ահա այդ իսկ լեզվով մեր նախիջևանցին կարող է կարդալ և հասկանալ, ամեն օր օգուտ քաղել և տարաբախտաբար ոչ մի գրվածք չունի այդ լեզվով:

Ես ձեզ կառաջարկեի քաղաքիս մեջ ունենալ մի շաբաթական լրագիր այդ լեզվով գրած, որ մեր ժողովուրդը կարդար և նորա միտքը բացվեր զանազան օգտավետ գիտություններով: Այդպիսի լրագիրը եթե կյանք ունեցավ քաղաքիս մեջ 5 տարի, կարող եմ Ձեզ հավատացնել, որ այդ 5 տարին, լուսավորության կողմանե կհավասարվի ուրիշ հիսուն տարվա, եթե դուք միտք ունիք միայն դպրոցներով հառաջացնել մեր ժողովրդի մտքի զարգացումը:

Մեկ քանի մարդոց անխոնջ աշխատանքով ահա 18 տարի է, որ մեր քաղաքը ունի քուլա, ահա մոտ 5 տարի է, որ այդ քուլային մեջը 40—50 հոգի անդու կպարապին լրագիրներու ընթերցանությանց. և դուք արդեն կնկատեք, թե որքան բացված է մեր այդ 40—50 հոգու միտքը համեմատությամբ այն մարդոց, որոնք թեև

այսմանի մեջ են, բայց նոցա պես չեն դադարած կտրուցուց: Այս արդեն ձեզ ակներև ապացույց է, թե որքան օգտավետ է լրագիրը մեր ժողովրդի համար:

Ես կառաջարկեմ Ձեզ ունենալ քաղաքիս մեջ մեկ լրագիր, որ գրված լինի տեղական բարբառով, որ մշակե գլխավորապես տեղական խնդիրները և բովանդակե յուր մեջ այնպիսի գրվածքներ որ հետաքրքրելի լինի մեր ժողովրդին՝ թե՛ մեծ և թե՛ փոքր, թե՛ աղքատ և թե՛ հարուստ, թե՛ այր և թե՛ կին:

Կառաջարկեմ Ձեզ՝ այդ լրագրի բոլոր ծախքը առնուլ քաղաքի վրա, որն կարծեմ 1500 մանեթեն ավելի ծախք ունենալու չէ: Այդ լրագրի ստորագրութեան գինը պետք է նշանակել շատ աման, որ ձեռնհաս լինի ամեն խեղճ մարդու, զորօրինակ տարեկան 2 կամ 3 մանեթ, իսկ երբեմն մինչև անգամ ձրի տրվի շատ խեղճերուն:

Ես կառաջարկեմ Ձեզ այս գործը գլուխ բերելու համար կազմել քանի մի բան հասկացող անձինքներե մասնաժողով, որ մշակեն այդ խնդիրը, Ձեզ առաջարկեն ի հաստատութեան և ի կարգադրութեան իրենց մշակած ծրագիրը:

Պատվական քաղաքացիք, ահա՛ ես Ձեզ ցույց տվի մեր յարաներեն մեկը. կուզեն մեկ քաղաք շինելու, դեռևս իրենց համար տուներ չի շինած, նախ կհիմնեն մանկանց համար դպրոց, և ժողովրդի համար լրագիր. երբ այն բանը կավարտեն, հետո արդեն միտք կանեն պազար, քարվածք, տուներ, փողոցներ, ֆենեաներ, թատրոններ, խանութներ, և այլն, և այլն շինելու: Նախիջևանը 100 տարիեն ավելի է, որ արդեն կարոտ է և մինչև այսօր յուր ծոցի մեջ տեսած չէ տեղական լրագիր: Ինչո՞ւ կզորենք որ նա լուսավորութեան մեջ հետ մնացել է և ժողովուրդը հարստանալու տեղ օրեօր կաղքատանա: Դպրոցը շատ լավ բան է, ո՞վ կասե, բայց դրպրոցի մեջ սովորածը տղան անպատճառ կմոռանա, եթե չափահաս ժամանակ լրագիրներու մեջ քաղվածք չանե:

Պատվական քաղաքացիք, ահա՛ ես ձեզ ցույց տվի մեր յարաներեն մեկը. այժմ այդ յարան բժշկելը ձեզ գործն է:

Նախիջևանին պետք է լրագիր և շատ պետք է, — ի՞նչ կասեք:

ՊԱՐՈՆ ԵՐՈՏԱՅԱՐՆԵՐ

Ես կկամենայի ձեզ մի անգամ առ միշտ հաշտեմել իմ դիտավորութեանը և հայացքը այն լրագրի վրա, որն իմ կարծիքով, պետք էր հրատարակել նախիջևանի մեջ, որն առավել օգտավետ կլինի մեր քաղաքակիցներուն, թեև հակառակ նոցա կամավոր ցանկութեանը:

Մեր լրագիրը պիտի խոսի այն բաներու վրա, որ միայն և միմիայն նախիջևանցիներուս կենսական հարցերն է, այսինքն նոցա հրապարակական և առտնին կյանքը, նոցա ազգեցութեանը յուր զավակաց, յուր բնականաց և յուր քաղաքակիցներու վրա. ուրիշ զավակաց, յուր բնականաց և մեր ուրիշ քաղաքներ բնակող ազգակիցներու ունեցած կարծիքը և հույսը մեր նախիջևանցիներեն: Կարճ ասեմ՝ ես կկամենայի եթե ոչ ընդհանուր մարդկութեան անդամ դարձնել մեր առանձնացած հետ ընկած նախիջևանցիներու, գո՛նե, իմ կարողութեան շափ, ցույց տալ ճանապարհը դեպի այդ:

Ես քաջ գիտեմ, որ այդ բանը ինձ առավել դժվար է, քան թե որին եկեց ձեզ մեջն, գիտեմ այդ ո՞նե գործի մեջ իմ ուժի բոլոր պակասութեանը, գիտեմ և իմ ձեռնարկած գործի բոլոր դժվարութեանը, այսուամենայնիվ ես միտք ունեմ գործը սկսելու. ինչո՞ւ, գիտեք, վասնզի ուրիշ մեկ մարդ չիկա, այս անպտուղ աշխատանքի համար ոչ մեկ մշակ չի գտնվում: Բայց, սասցե՞ք, խնդրեմ, կարելի՞ է թողնել 20 հազարյա ժողովուրդ անտեր, անօգնական, զրկած ամեն կերպ բարոյական վտանգի և շրջապատած հազար ձև թշնամիներով, որոնք առավելապես այն մասին վտանգավոր են, որ ամենախաբեբա կերպով կձևանան միամիտ և թեթևամիտ ժողովրդին անկեղծ բարեկամ, իհարկե, սրտերի խորքերու մեջ պահած իրենց նուրբ անձնային շահերը, որ միտք ունեն ստանալ ժողովրդի աղքատի տոպրակեն:

Դեռ գործը չի սկսած՝ ես ձեզ բացասիրտ կասեմ, «եթե դուք կարծիք կանեք և կտանեք, որ լրագրի հրատարակութեանը կուտա որիդ եկեց կա՛մ փողի շահ, կա՛մ ազգային փառք ու պարծանք, կա՛մ ժողովրդի հարգը, պատիվը և սերը», առե՞ք ինձնեն խմբագրչի և հրատարակչի իրավունքները և՛ ընդմիջեմ վստահ եղեք, որ ես և՛ աշխատանքով, և՛ գրչով, և՛ տպարանիս միջոցով ամեն հնարավոր օգուտս և նպաստսս կհասցնեմ: Կա՞ ձեզ մեջ մի այդպիսի ցանկացող: Փնտրեցեք և գտեք: Իսկ եթե չեք գտնիլ, այն ժամա-

նակ եւ վրաս կառնում լրագրի բոլոր ծանրութիւնը, իսկ փառքը, պատիվը և նորամեն ստանալու ամեն արտոնութիւնքը կբաշխեն ձեզ և ինձ պլիկ մատի ծայրով օգնողին:

Եթէ համբերութիւն ունեք՝ լսեցեք, խնդրեմ իմ կարծիքը, թե ինչ եղանակով հառաջ պիտի տանենք մեր ձեռնարկութիւնը: Նախ և առաջ մենք միտքերիս մեջ հաստատ պիտի որոշենք, որ հայի թշնամիներուն (այսինքն տեղի քանի մի աղաներուն) շատ լավ հայտնի է լրագրի մի օր ունենալու ազդեցութիւնը ժողովրդի վրա. այդ պատճառով նոցա հոգին շատ լավ կվկայե, որ անշուշտ պետք էր չի ծլած՝ արմատախիլ անել նորան, որ նոցա ապօրինի ստացած մեծութիւնը մենք ահա շի փորենք (подкопать): Ուրեմն մեր լրագիրը տակավին լույս չի տեսած՝ առջև ունի հզոր թշնամիներ: (Клуб-ի մեջ նոր անցած անցքը ձեզ ապացուցց տվեց, թե մինչև որ աստիճան շատ են տպած խոսքի բարեկամք և մինչև ո՞ր աստիճան հուսալի է հայոց jeune ne done-ն երիտասարդութիւնը): Գուք շատ լավ կհասկանաք, որ այն живые картины-ն վերջինը չէր, որ պիտի ելլէ իմ գրչի տակեն, это еще цветочки: Ես հուսամ, դուք ինձ չեք ասել թե՛ պետք է շափավորել գրիչը, և այլն: Ազնիվ երիտասարդներ, դիցուք թե ժողովրդի մոլութիւնը զեմ լուելով՝ ես ստանամ նոցամեն պատիվ և շահ, դուք ինձ կգովե՞ք, եվրոպայե զարգացած մարդը ինձ կգովե, թե՞ ինձ կղեն ի թիվս ստոր ազգախաբի, մարդախաբի, վերջապես ասե՞ք, շողոքորթութիւնը կբերե ում կիցե (բացի շողոքորթողին— льстец) շահ: Ո՛ր: Ուրեմն ինձ իբր խոհեմ, իբր խելոք, իբր օգտավետ խրատներ և խորհուրդներ մի՛ տաք. ես արդեն 46 տարեկան եմ, ինձ 5 միլիոնավոր ժողովուրդ այնպես կճանաչե, ինչպես որ կամ. ես չեմ կարող և չուզեմ կյանքիս մնացորդը և այդ՝ մի քանի խելացնոր աղաներու խաթրին փոխվել: Խնդրեմ, աղաչեմ ձեզ, եթէ ձեր աչքումն ուղղութիւնը, (направление) և համոզմունքը մի բարոյական նշանակութիւն ունի— ուրեմն մի՛ խտորեցուք ինձ ոչ իմ ուղղութիւնեն և ոչ համոզմունքեն: Եթէ ես կսխալիմ, գոնե՛ ասեք որ՝ այս մարդը կսխալի, բայց խարդախութիւն (фальш) չի գործածել: Կարճ կասեմ, ես լրագիրը կհասկանամ ոչ թե մի այնպիսի միջոց, որով ժողովուրդը ինչպես դպրոցի մեջ բան պիտի սովորի, այլ ես նորան կերևակայեմ մի арена, որի վրա համոզմունքի նահատակը ցմահ կպատերազմի յուր ախոյանի հետ:

Իմ բարոյական ուղղութիւնը մոտ ի մոտո դուք արդեն գիտեք. ի՞նչը ես բարի կճանչնամ և ի՞նչը չար— այդ ձեզ արդեն հայտնի է մասամբ. ի՞նչ ես կատեմ, ինչի և որոնց ես պատերազմ հայտնել եմ և հայտնելու եմ— այդ ևս գիտեք: Ահա՛, կամ ձեր առջև այնպես ինչպես որ եմ, եթէ կզգաք, որ կարծեմ գլուխ կայնելու նախիջևանի աղնիվ, բարի, օգտավետ նկատմունքին— ընտրեցե՞ք ինձ պայքարող (боец) եթէ կզգաք իմ թուլութիւնը, իմ անկարողութիւնը, իմ տգիտութիւնը և կամ կգտնեք ձեր մեջ առավել ընտրյալին և արժանավորին, ընտրեցեք նորան պարագլուխ և մենք լինենք նորան օգնական և զինակից: Ժողովրդի համար աշխատելեն, կտեսնեք, ես չեմ փախչիլ:

Ինձի համար պետք է զենք, այդ զենքն է գրաշար, տպող, թուղթք, թանաք և տպած թերթերը բաժանող, եթէ այդ անձնավորութիւնքը և նյութը փողի դարձնելու լինենք՝ ինձ պետք է ուղիղ 2000 մանեթ տարեկան փող, [որպեսզի] իմ իղեան շոշափելի բան դառնա:

Իմ բոլոր ունեցածս է մոտ ի մոտո 2500 մանեթ (տեղյակ չգիտեմ, մի փոքր ավելի, մի փոքր պակաս) որ պիտի դառնա քանի մի օրեն մամուլներ, տառեր և ուրիշ պիտույք տպարանական, ուրիշ փող շունիմ: Ինձմեն, հուսամ, չեք պահանջիլ, որ եթէ մի քանի հարյուր մանեթ վաստակի տպարանս, տպելով կողմնակի գործեր, այդ ստացած փողն ևս դնեմ լրագրի վրա. ապա ես ի՞նչ գործեր, այդ ստացած փողն ևս դնեմ լրագրի վրա. ապա ես ի՞նչ պես ապրեմ 6 զավակով, ես և կինս: Ուրեմն լրագիրը էացնելու համար պատրաստի պիտի ունենալ 2000 մանեթ փող, որն անհնար է 4-ական կամ 5-ական մանեթ ստորագրիչներէ մուրալով գոյացնել: Այստեղ պետք է գոհ: Շատ կարելի է որ շողոքորթին մեկը, որ խոստանար մեր տղաներու դիմաց տարին տասներկու ամիս, խունկ ու զմուռս ծխելու, այդ գումարը զհարդ կիցե ձեռք բերել. բայց ևս առջևեն կասեմ, որ իմ հրատարակելու լրագիրը պիտի լինի խամի խղտրմիշ արած տամղա, позорный столб, կախաղան, эшафот, гильотина (իհարկե, այդ դուք բարոյապես պիտի հասկանաք) մեր տեղի միլիոնիք мироед-ներու, самадур-ներու, монополист-ներու, эксплуататор-ներու համար:

Ո՞ր տեղեն մենք պիտի գտնենք այդ 2000 մանեթը: Ահա խնդիրը:

Ես կուտենամ շորս կողմս հայոց երիտասարդութիւնը, որոնցմե կհավաքեմ ուժ, միլիթարութիւն, կարծիք և հավանութիւն:

վաստհ եղեք, որ ոչ մի տողս չի տպվիլ, նախ լավ չի որոճած (переработать) մեր ընկերության մեջ. ամեն բան նոցա հավանությանը և ձայնի շատությանը կկատարեմ: Բայց ես տեղյակ գիտեմ, որ այդ ազնիվ-երիտասարդք ինձ կամ ավել ճիշտ ասել, ազգին նյութապես օգնել առժամանակապես չեն կարող: Դարձյալ կհարցնեմ, որտեղեն պիտի գտնենք մեզ հարկավոր 2000 մանեթը: Ե՛րբ թշնամին յուր թշնամիի ձեռք ավել է հարկավոր գենքը: Կրկնում եմ, ահա՛ խնդիրը, այն վճռելը բավական դժվար է:

1875 թ.

ՄԵՆԱԳԱՏԻՎ ՏԻԿԻՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՈՆՆԵՐ

Այն օրեն, երբ նախիջևանի ազնիվ երիտասարդության զգայուն սրտի մեջ ծագեցավ թատերասիրաց ընկերություն կազմելու խորհուրդը, այն օրեն, համարձակ կարելի է ասել, դրվեցավ սկիզբը տեղացի հայերի լուսավորության. վասնզի լուսավորության իսկական նշանը ոչ այլ ինչով կարելի է ցույց տալ, եթե ոչ ազատ արվեստների և գեղարվեստների մուտք ունենալովը մի ազգի մեջ, եկեղեցի, դպրոց, լրագրություն, և այլն, մեր օրերը, տակավին լուսավորության նշաններ չեն կարող համարվել, վասնզի ամեն փոքր ի շատե կիսավայրենի վիճակե դուրս եկած ցեղերու մեջ կմտնին այդ հաստատությունը. միայն թատրոնն է, որ ազգի մտավոր մակերևույթի աստիճանի բարձրությունը կցուցանե, ըստ որում նա գեղարվեստների և ազատ արվեստների յուր մեջ ժողովողն ու հովանավորողն է: Ինչևիցե: Իմանալով, որ այս տարրական ճշմարտություններն ամենքիդ ալ հայտնի է, ես խոսքս կարճ կկտրեմ և կշտապեմ շնորհավորել ձեզ այս նոր հաստատության հիմնադրությունը, որ այսուհետև գնալով պիտի ճոխանա և ընդընթին պիտի քաղցրացնե մեր ձանձրալի կյանքը և պիտի ուղղե մեր վարքն ու բարքը:

Այս րոպեիս չենք կարող նեղ շրջանիվ սահմանափակել մեր ապագա գործունեությունը այս ազնիվ ասպարեզի մեջ, չենք կարող առաջվնե որոշել թե ի՞նչ ու ինչ պետք է մշակել և գործունեության ռ՞ը տեսակը կլինի մեզ առավելապես օգտավետ. ժամանակը և փորձը ավել լավ կցուցանեն մեզ ճանապարհը, քան թե

որիէ խելոք մարդ կամ նախորդների խրատ: Այնքան դժվար չէ գերձակին շտեսած մարդու հալավը կարել, որքան դժվար է բանաստեղծության և գեղարվեստին ծառայողներուն ապագա գործունեության ծրագիրներ հորինելը:

Այստեղ հնարավոր է միայն մի բան խնդրել թատերասիրաց ընկերության անդամներին, անկեղծ և ի բուր սրտե աշխատել մեր հայկական թատրոնի համար՝ ո՛վ որ յուր մեջ որքան ուժ կզգա, որը դրամատիկական քանքարով, որը պոետական քնարով, որը երաժշտական ընդունակությամբ, որը աստվածաշնորհ ճարտարությամբ լեզվի և նմանության ձիրքով, որը յուր հարստությամբ և որը խրախուսանքով, և ամենքն անձնվիրությամբ այս ազնիվ գաղափարին:

Թատրոնը մի մաքուր հայելի է, որ կցուցանե ժողովրդի առջև նորա ամեն կերպ մարմնավոր և հոգեկան շարժումները— որքան ճիշտ, այնքան լավ, բայց այն զանազանությամբ, որ հայելին չի ցուցանիլ մարդուս մտածմունքը, գաղտնի խորհուրդները և բացարձակ արտասանած խոսքերը, մինչ թատրոնը այդ ամենը մասնավորապես կցուցանե և ցուցանելը նորա սուրբ պարտքն է: Թատրոնը գրականության ամենաճարպիկ, ամենագործունյա ու ամենասիրուն որդին է: Թատրոնը կասե՛ «Տիկին, պարոն, օրիորդ, երիտասարդ, կկամենա՞ք արդյոք ձեր շարժումները, ձեր վարմունքը, ձեր դատմունքը, ձեր մտածմունքը տեսնել ու լսել, արիցե՞ք համեցեք մեզս, տեսեք ինքներդ ձեզի՛ կհավանի՞ք թե ոչ»: Մարդս ինքնիրան տեսնելով թատրոնական բեմի վրա՝ կամ ողով կբարձրանա կամ կընկճվի, և այսպես՝ թատրոնի բեմի վրա երկու տեսակ մարդ կբարձրանա կամ նա՝ որի կյանքը ու կենցաղը մեզ համար օրինակելի գաղափար պիտի լինի: Այս ևս տարրական ճշմարտություն է, որն ամենիդ, առանց բացառության հայտնի է:

Թատրոնի հաստատուն հիմնադրությունը մեր սիրելի նախիջևանի մեջ երախտապարտ ենք մեր ժամանակակից ազնիվ երիտասարդներուն, որոնց գործը ու գործունեությունը, անշուշտ, մի օր ոսկի տառերով պիտի գրվին քաղաքիս տարեգրության էջերի մեջ: Տալով մեր երիտասարդներուն նոցա արժանի հարցն ու պատիվը, մենք երբեք մոռանալու չենք, որ ժամանակե ժամանակ զանազան ավելի կամ պակաս հաջողակ փորձեր արդեն եղած են մեր քաղաքի մեջ թատերական ճաշակը մտցնելու, ինչպես, զորօրինակ 30 թվականներին Խաղամյանը, Տիգրանյանը, Քուշնարյանը

նը, թե թատերական հողվածներ շարադրելով, թե ինքնիրը խաղալով և թե աշակերտներին խաղացնելով, աշխատել են այս ազնիվ ասպարեզի մեջ, 60 թվականներին եղբարք Արծաթապանյաններ իրենց ընկերներովը, նույնպես զանազան փորձեր փորձել են թատերասիրությունը մտցնելու նախիջևանի մեջ. վերջապես քանքարավոր Տասուլիճյանը և նորա կինը, Պայծառը իրենց ընկերներովը բավականին աշխատել են մշտական թատրոն մտցնելու համար, բայց, ցավելով պետք է ասել, այն ամենը միայն փորձեր էին և ավել ոչինչ, այն ճամփով, որոնք այդ հիշյալ անձինք կտանեին թատրոնական գործը, երբեք ունենալու չէր տեղականություն և հաստատություն, որովհետև նոցա գաղափարը ամուր հողի վրա դրած չէր և զրկված էին այն բարեբախտ մտքեն, որ միայն ծագեցավ ձեր մեջ, ազնիվ երիտասարդներ, և այդ բարեբախտ միտքն է՝ ընկերական ուժով մտցնել այդ գաղափարը ժողովրդի մեջ: Անհատի կամ մի քանի անհատների ուժը որքան և մեծ լինի, այսուամենայնիվ, նա չէ կարող կառուցանել այն ահագին շենքը, որին մեկ խոսքով կասվի թատրոն. դրա համար պետք է ձգտումն մտաց և լարումն բոլոր ուժերին մի ամբողջ ընկերության, վասնզի թատրոնի գործունեությունը շատ լայնատարած է և շատ բազմակողմանի: Այս հանգամանքը թող մեզ և բոլոր Հայաստանին խրատ լինի, որ միայն այն բանը կծլի, կաճի և պտուղ կուտա, որ բանն որ ընկերությունով կկատարվի:

Այստեղ ես չեմ կարող մի հանգամանքի մասին լուռ մնալ, և սուրբ պարտք կհամարիմ հրապարակավ հայտնել ձեզ, արգո տիկնայք և պարոններ:

1870 թվականներին, երբ Տասուլիճյանը կաշխատեր պարոն Փոփովի ամպարը թատրոնի ձևակերպելու, մի օր եկավ իմ մոտ պարոն բժիշկ Սահակ Ալաճալյանը և տաք-տաք ինչպես որ նա սովոր է— կհամոզեր ինձ թատերասիրաց ընկերություն կազմել, որպեսզի նորաշեն թատրոնը հաստատուն հիմքի վրա կանգնի, և այլն: Սաստիկ կցավիմ, որ ես սեփական գործերով զբաղված լինելով, պետք եղած ուշադրությունը չի դարձուցի մեր ազնիվ քաղաքակցի ամենաազնիվ խոսքերու վրա... խղճմտանքս մինչև այժմ կտանջե ինձ. շատ կարելի է, որ մենք այսուհետև ունենալու թատրոնը, տասը տարի առաջ կունենայինք. ես իմ ուժը և աշխույժը շատ լավ կձանաչեմ: Եթե մի բանի ետևե եղա՝ ես սովորություն ունիմ չի դադարելու, մինչև որ զլուս չի բերեմ: Դորանով ես ուզե-

ցի ձեզ հասկացնել, ազնիվ տիկիներ և պարոններ, որ մեր ժողովրդի մեջ, որքան և փոքր լինեինք թվով, երբեք պակասած չեն փայլուն ուղեղներ— միայն թե այդպիսիներուն գնահատողներ լինեին:

Այժմ ես խոսքս կդարձնեմ ձեզ, պր. պր. բարեկարգիչներ: Փառքը, պատիվը, և մեր նախիջևանցոցս հավերժական երախտապարտությունը ձեզ լինի որպես թույլ վարձատրություն ձեր աշխատության և եռանդին. դուք ձեր պարտավորության ամենածանր մասը կատարեցիք, այժմ կմնա ձեզ ամենաթեթևը կատարել և այնուհետև դափնիներով զարդարված վայելել ձեր գեղեցիկ գործի արդյունքներովը: Ես ասացի, որ դուք գործի ամենադժվար մասը կատարեցիք, և հուսամ որ չի սխալվեցա. վասնզի ս՞վ չգիտե, թե՛ որքան դժվար և ծանձրացուցիչ բան է մարդոց հորդորել:

ԲՈՒՈՐ ԻՄ ՀԱՆՑԱՆՔԸ

Սովատանջ վագրը, քանի օրեր ունայն թափառելով դաշտերու ու անտառներու մեջ, վերջը վերջը կդառնե իաղաղ մարդի մեջ արթածած միամիտ կով. կհարձակվի վրան, մի թաթի վարնելովը կսպանե խեղճին, և քաշաքաշ կտանե յուր տեղը. դեռևս սկսած չէ լափելու, թարմ միսի և արյունի հոտը ավելի և ավելի կատաղեցնում է նորա զազանական քաղցքը. արդեն արինոտ դունը մտցրել է յուր որսի խորունկ վերքի մեջ, լնդերքը սասանական եռք են գալիս մոտալուտ գործունեությունեն նորա դաշույնի նման ատամներին. քաղցը հասել է յուր վերջին կատաղության աստիճանը. մոմոում է վագրը և նորա մոմալեն անտառները և սարերը ամպրոպի արձագանք են տալիս, լի ահեղ սպառնալիքով... Այդ միջոցին հովիվը փնտրելով իր կորած կովը, ախ ու վախով սար ու ձոր է ընկել և պտուում է յուր կորուստը, տեսնում է վագրին և նորա առջև փռված յուր սիրական կովը, որի վրա էր հույս մի ամբողջ գերդաստանի... ոչ մի մահաոթի զենք չունի հովիվը, այդ վագրը տեսնում է. նա նորա ժանիքներեն և մագիլներեն չի կարող խլել որսը. այդ նա գիտե, բայց հովիվը յուր լաց ու կականով խլում է վագրի անգորրությունը՝ հանգիստ վայելելու ավազակորեն տիրա-

պետած յուր ավարը... հովիվը նորան յուր գանգատներով, անպտուղ հայհոյանքով, անեծքով դադար չի տալիս ախորժակով պատառոտել յուր զոհի միսը և խմել նորա արինը... մեղավոր է հովիվը, այո՛, վագրի դատաստանի առջև հանցավոր ևս է... ի՞նչ արավ վագրը. կրկնապատիկ կատաղությամբ թռավ հովիվի վրա և մի ակնթարթի մեջ դադարեցուց նորա լացը, կականը, գանգատները, հայհոյանքը...

Մինաս Խաչիպով, Միքայիլ տեր-Գրիգորյան, տեր Եղիա, Սերոբ Հարությունով, Գևորգ Խոճաև ճանաչեցի՞ք ձեր պատկերը վագրի մեջ, տեսա՞ք ձեր ամեն քաղաքական գործունեությունը անմեղ կովի պատառելովը... ճանաչեցի՞ք հովիվին, համոզվեցա՞ք նորա հանցանքին. գիտե՞ք ո՞վ է այդ միամիտ կովը, որ դուք ամեն օր լափում եք. իմացե՞ք, թեև դուք հաղթեցիք և միշտ կհաղթեք, բայց խաբել չեք կարող: Կան մարդիկ, որոնք ձեզ այնպես կճանաչեն, ինչպես որ դուք եք իսկպես, և ոչ թե ինչպես դուք կաշխատեք երևել: Ձեր անունը վագր է, միշտ ծարավ անմեղ արյունի, Ձեր կյանքը ազգին միշտ թանկ կնստի. դուք ազգի արյունով ապրող եք, դուք՝ միշտ հալածող և սպանող եք նորա հավատարիմ հովիվներուն. ձեր զազանային անձնը և ձեր կորյուններուն ապրեցնելու համար պետք է ամբողջ քաղաքի և գավառի բնակիչներու արյուն և բրտիքը. ով որ ձեր գործի, ձեր սարուկը չէ՞ նա ձեր արյունալի զոհն է. ով չէ սիրում ձեզ, նորա ճակատի վրա գրած է արտը, հալածանք և մահ:

Այո՛, դուք հաղթեցիք ինձ, ես ձեզ ոչինչ անել չեմ կարող, ես ուժ չունիմ, և ոչինչ զենք չունիմ, դուք քաղաքի տեր եք, ձեր հրուշակը մեծ է. դուք ունիք այն ուժը բռնի՝ սևը սպիտակ և սպիտակը սև երևեցնել, դուք չեք ամաչում, այլ հրամայում եք հավատալ և անել ձեր հրամայածի պես... այսուամենայնիվ, դուք հրեջ եք, դուք զազան եք, դուք այն վիշապներեն եք, որոնցմե աշխարհն ազատելու համար երկիրքը ուղարկեց Հերակլեսին, Թեղեսուին, Ապոլոնին և շատ ուրիշ կիսասատավածներ և դյուցազներ: Իմ ետեվես հիշատակ, «օղորմի» կմնա, ձեր ետեկն՝ անեծք և նզովք:

Վայելիցեք ձեր արյունաթաթավ որսը: Խեղճ Նախիջևան, ինչպես նման ես քու պապ Ահրին, շարմաղանները, կիրակոսները, վեստ սարգիսները երբեք չպակասեցան քու մեջնե:

«Գամառ-Քաթիպայի աշխատությունների» առաջին թվահամարի հառաջարանություն մեջ ես պարզորեն հայտնեցի պատճառը, որ ինձ ստիպեց լույս ընծայել իմ գրավոր աշխատությունները: Երբ որ իմ բանասեր հայրենակիցները սիրով ընդունեցին այդ թույլ վաստակը՝ հարկը պահանջում է, որ ես ուշք դարձնեմ դեպի այն, որ արդարանա նոցա ակնկալությունը: «Գամառ-Քաթիպայի» հառաջադիմությունը ավելի պատիվ է անում հայոց ընթերցասիրության, քան թե իմ քանքարին: Հայր կարոտ է մտավոր զբոսանքի. նա գիտե, որ ինքը «ազգ» է. ուրեմն՝ պիտի ունենա ազգեցության ամենագլխավոր պայմանը, առանց որին ազգը ազգ չէ, այլ խոժան, խաժամոժ, այդ պայմանը — մի ընդհանուր և ամենուն հասկանալի լեզուն է: Հիմի օրեօր սակավանում են «գրաբառամունքի» թիվը, որոնք եզրպատասխան քուրմերի նման սեփականացրել էին իրանց բոլոր գիտությունները և արվեստները անմատչելի անելով ժողովուրդի համար գիրը և տպագրությունը: Հիմի ամենն էլ գիտեն, որ գիտությունը սեփականություն չէ միայն ընտրելոց, այլ համայն ազգի և մարդկության: Ժամանակն է, որ հայն ունենա գիտության գլխավոր միջոցը, որ ինչպես ասացինք՝ գիրը և տպագրությունն են: Այս երկու թվահամարը, որ մենք մեր զորության չափ կարողացանք լույս ընծայելու՝ ինչպես տեսնում ենք — զանազան անձանց վրա զանազան ներգործություն ունեցավ. այն բարեմիտ մարդիկ, որոնք գիտեն զանազան լեզուներ, ուրեմն՝ ունին միջոց կարդալու զանազան գրյանք՝ նոքա ընդունեցին ներողատությունը և վեհանձնությունը, որ պատիվ է անում նոցա ազնիվ հոգուն, ուրիշները, որոնք այնքան գիտակ չէին լեզուներու, և այդ պատճառով գրեթե զրկված էին այն վայելությունից, որ տալիս է մեզ ընթերցանությունը, այդպիսիները ընդունեցին ուրախությամբ, բարի և մեծ հույսերով. բայց կային կամ տարաբախտաբար — գտնվեցան նաև այնպիսիները, որոնց համար աշխարհումս չի կա մի սրբազան բան, մի վեճ ըզգացմունք, մի բարի նպատակ կյանքումը՝ որոնք ամեն տեղ՝ ամեն գործումը ընտրում են բաժնի վատ կողմը, մարդուս և նորա վարմանց, ինչպես ասում են սեվ կողմը, որ կարողանան յուրյանց անսանձ բերանին և անգործունյա կյանքին նյութ գտնել՝ այդպիսիները իհարկե գտան մեր սխալները, որ մենք արտաքո մեր բա-

րի կամաց արինք *errare humanum est*, ասած է մեզանից շատ առաջ. թող նա ձգե մեր վրա քարը, որ ինքը անբիծ է. ահա մեր բարեխառն պատասխանը այսպիսիներուն:

Մեր բարեկամները թե մոտի և թե հեռավոր՝ թախանձաբար խնդրում են, որ մենք անդու շարունակենք այս բարի նպատակով սկսած ձեռնարկությունը: Հոժար ենք և պատրաստ կատարելու նոցա ազնիվ ցանկությունը: Առաջի թվահամարումը մենք հայտնել էինք, որ մեր գլխավոր արգելքը շարունակելու — մեր չքավորությունն է: Բարեկամներս հանձն առին հեռացնել այդ դժվարությունները, խորհուրդ տալով մասնավոր ստորագրություն բանալ և հայտնել իմ պայմանները:

Այդ նպատակով ահա գրում ենք այս հայտարարությունը և մտադիր ենք կանխիկ հավաքած գումարով ստանալ միջոց առանց դժվարության և անարգել հետզհետե լույս ընծայելու «Գամառ-Քաթիպա»-ի թվահամարները, ընդարձակել նորա պարունակությունը և զարդարել պատկերներով, ինչպես խոստացել էի առաջի թվահամարումը:

Իմ պայմանները դոքա են.

- 1) Գամառ-Քաթիպան դուրս կգա տարին 16 թվահամար:
- 2) Յուրաքանչյուր թվահամարը բաղկացած կլինի 1—1¹/₄, 1¹/₂, և վերջապես 2 թերթից՝ տեսնելով նորա գումարի մեծանալը:
- 3) Յուրաքանչյուր թվահամարի գինը 20 արծաթ է:
- 4) 16 հատի կանխիկ — 3 մանեթ 80 կոպեկ արծաթ:
- 5) Կանխիկ վճարողը 16 թվահամարին միանգամայն միասին՝ տարեպտուտին կստանա մի անակնկալ պարգև (сюрприз) կամ գիրք, կամ պատկեր:
- 6) Գ. Քաթիպան կարելի է ստանալ հետագա քաղաքներումը, հետագա անձանցմե N N N:
- 7) Ճամփու ծախսը ստացողը պետք է վճարե:

Հարկը և պարտքը ստիպում է մեզ՝ որ մենք մեր կարողություն չափ աշխատինք, որ քանի գնա այնքան ավելի ընտիր և օգտավետ նյութեր զետեղենք Գամառ-Քաթիպայի թերթերու մեջ, որ մենք սիրով կկատարենք:

Անցյալ երկու նամակներս մին-մինի քամակից գրած՝ կարծեմ որ քեզ փոքր ինչ անհանգստացրած կլինեին ֆլան առաջարկություններին համար. ես գիտեմ՝ դու ինձ չէիր մեղադրել, այլ կդանգասերիր մեր անձուկ դրուձյանը վրա, որ մեզ ստիպում է այդպիսի մտածողություններ անել, որոնք փոքր ինչ խլում են մեզանից մեր արժանավորությունը և հպարտությունը. կարծեմ որ չեմ սխալվում: Այդ միտքը ինձ ևս շարշարում էր, բայց երբ որ այն ևս միտք էի անում, որ այդ հնարը մի անգամով կազատե մեզ անընդհատ և հաճախ կրկնվելու խնդիրքներից, կարոտությունից և ալլն, և ալլն, ես լավ համարեցի ցույց տալ կամ ավել ուղիղ ասել՝ միտքդ բերել առաջիկա նամակումս մեր կարիքը. մի անգամ էլ մտնել ցխի մեջ և իսկույն և *набек* լվացվել ազնվության ավազանի մեջ. թե չէ՝ ինքդ ասա ո՞ւր պիտի տանե մեզ մեր անվերջ աղքատությունը և ուրիշից ակնկալությունը: Ասել չուզե՞ որ մեր առաջարկությունը ու մտադրությունը վերին աստիճանի համարձակ և այլոց համար անհնարին բան է. 650 մանեթը մի այնպիսի գումար է հայերու համար, որ նոքա շուտով թույլ կտան փոքի աղիքները դուրս բերել, բան թե գրպանից այդ գումարը. թե՛ և ամեն միևնր նոցանից կյանքերումը 10 անգամ այդպիսի փողեր սպառել է պեսպես շույլ և զզվելի գործերու համար: Թե՛ պեստե մեր ուխտի ձեռնարկությունը, նորա ակներև պտուղը և օգուտը նոքա քաջ ճանաչում լինին. պարզապես ասելով՝ հայր սիրում է լավ գործ, լավ աշխատանք, լավ պատմություններ, անցքեր, անուշ խոսքեր, *только что бы даром*. էլ նա չի՞ հարցնում և չի ուզում իմանալ՝ ինչ հնարով պիտի կատարվին այդ բարի բաները. նա կարծում է, եթե դաշտը բացնում է առանց մարդու աշխատանքին խոտ, ծաղիկ, սունկ և այլն, ուրեմն՝ նույն կերպով էլ պիտի գրվեն նորա համար լավ գրքեր. պիտի տպվեն, և մեր պատվելի հայր միայն պիտ կոանա, որ հավաքե ցանկացածը: Երբ որ ես այսպես եմ մտածում՝ շատ ուրիշ ներհակով մտքեր ևս գալիս են վրաս: Արդյոք ծիծաղելի չէ՞ մեր ձեռնարկությունը, արդյոք վաղ չե՞նք սկսել, արդյոք ծուռ չե՞նք բռնել մեր ճանապարհը, արդյոք սխալ չե՞նք հասկացել ազգի ոգին և նորա կարիքը, եթե այսպես է՝ ուրեմն մեր բոլոր ճիգը ունայն է: Իհարկե՞ մենք ունինք մի քանի կարեկից բարեկամներ, որոնք մեզ օգնում են, խրախուսում

են. բայց ա՞յդ է արդյոք մեր խնդրածը. նորա ընտրյալքն են. նորա ազգի ցրո՞ւներն են. այնինչ մեր միակ իրձը և ազգի, populus-ի օրգանը լինել, նորա մեծ սիրվել, նորա բարեկամը լինել, նորա մտքին առաջնորդը լինել, և ի՞նչ. լինո՞ւմ ենք արդյոք, կլինե՞նք արդյոք, կա՞ արդյոք հույս լինելու. ոչ և ոչ պատասխանում է անդադար ներքին ձայնը. ինչո՞ւ ոչ. ահա՛ ինչու Ազգը մեզ կտիրեր, եթե տեսներ մեր գործը համաձայն մեր խոսքին և խոստումներին և այն ակնկալությունը, որ նա կարող է ունենալ և պիտի ունենա տեսնելով մեր գիտեցածը և գործ կատարելու եռանդը. մեկ խոսք՝ եթե նա վստահ էր, որ մենք ամենևին վայրահալ և շառվատան մարդիկ չենք, որոնք այսօրվա օրս լըցված են ամեն տեղ և իրանց ցնորական խոսքերով զզվացրել են ամենին. մեր տարաբախտությունը այն է, որ մենք ունինք что то общее այն անպիտաններու հետ. և հայք չեն կարողանում մեր և նոցա մեջ разительные черты գտնել. մեր գործը մեր աչքում վե՛հ է, ազնիվ է, մեծ օգուտներ պիտի բերե՛ն՝ նոցա համար երեսխայական է, шуточный է. ինչո՞ւ, էնդուր որ նոքա գիտեն մեր գործի ո՞ր աղբյուրից դուրս գալը: Բայց այդպես մենք չի կարողացանք սկսել մեր գործը, որովհետև հենց էն զլխից աղբատ էինք և կարոտ էինք կողմնակի նպատակներու: Մենք ստիպված էինք մեր բոլոր գաղտնիքը, միտքերը, քամակի pensée-ները հայտնել մի քանի կոպեկի համար, որ մեր գործը հասկանալով մեզ օգնեն. բայց մենք սխալվում էինք: Մեզ չէին օգնում, այլ ողորմություն էին անում, ինչպես որ աղբատը ստիպված է յուր փորը լցնելու համար մի ըստ միոչե հայտնել հարուստին՝ որ քանի օր է բերանը բան չի դրել և հարուստը խղճալով նորա զզվելի դրությունը, քամահարներով ձգում է մի կտոր հաց, այդպես և մեր երեսին ձգեցին մի քանի կոպեկ, на возьми только отвяжись со своей млои физиономией! Մենք մեր կերպ էինք հասկանում և թարգմանում նոցա եղեռնական (злойский) ազգասիրությունը (?): Ի՞նչ դուրս եկավ մեր գործից— զզվանք և հուսահատություն. բայց ա՞յս պիտի լիներ մեր մտաց և ինչպիսի ազնիվ մըտաց պտուղը: Ես քեզ շատ անգամ խնդրեցի вочтобы ни стало անկախ դավանանք. դու հասկացար գուցե իմ միտքս, բայց աղբյուրը ցույց չի տվիր. մենք ոչինչ նորոգություն չէինք անում մեր զղվելի դրությունը, միայն թե զանազան ձևեր էինք տալիս մեր մտրացկանությունը. խնդրեցով ստորագրություն էինք անում.

խնդրեցով զիրք էինք ծախում, խնդրեցով զիրք էինք ցրում, խնդրեցով մեր քրտնաջան վաստակի շնչին վարձն էինք ստանում. մենք մեր СИМВОЛ-ը ընտրել էինք ազնվությունը, բայց իրոք մեր СИМВОЛ-ը ցածություն էր: Ով որ մեզ չի պատահեր՝ մենք նորան մեծ նշանակություն էինք տալի և ազգասիրության ամեն պայմանները մեկնում էինք, ինչու, որ 20 կոպեկ տա և առնու մի հատ Գամաու: Հասկանո՞ւմ ես դու՛ ինչ ուզում եմ ասել: Մենք մինչև այժմ խիստ ծուռ ճամփայով ենք հառաչ գնում թեև մեր արածը մեր պարագաներով ոչ ոք չէր կարող անել. այդ էլ շատ է, ինչ որ մենք ասինք իմ գլուխս եմ տալի, որ թե նազարյանցը, որի սխալագործությունը կախարդել է քեզ, ձեռնարկեր մեր հնարներով՝ չէ թե տպարան ունենալ, մի թերթ բան չէր կարող տպել: Բայց մենք մի թերթից ավել բան տպեցինք, բայց այդ չի պիտի մեզ խաբե, այդ չի տանիլ մեզ մեր նպատակին... այդ կերպի շարժումները մեծ ճիգն է պահանջում, որին շատ չի դիմանալ նաև հանճարի զորությունը: Այժմ հասել է այն ժամանակը, որ մենք պիտի ահագին кризис տանք մեր գործին. պիտի ձեռնարկենք կտրական, վճռական և օրհասական նորոգություն, революция մեր գործումը և մտածողությունումը. ժամանակը հասել է. или пан, или пропал. միջին ճանապարհը զզվելի է արդեն, գոնե մեզ նման եռանդոտների համար: Մեզ պետք է տպարան. մեզ պետք է մեծ գումար՝ 650 մանեթ խիստ սակավից. եթե գտանք այդ գումարը— լավ, բայց եթե չի գտանք՝ ես կգտնեմ, ինչպես որ գտա տառերը: Բայց այդ այնպիսի лото է, ուր 100 բիլեթից 70 пропал են, և 30 пан: Այդ դեռ մեծ բան չէ. մենք պիտի տպենք այնպիսի գիրք, որի վերջ պիտի ցույց տանք как на капитальный труд: Ուրեմն ես կտպեմ բառարան, որի տիպը միայն կարժե 2000 մանեթ. եթե այս երկու գործը հաջողի՝ մենք կարող ենք դուրս գալ այն երեսխայական կարգից, ուր մեզ դրել են ազգի տգետությունը, նորա նախապաշարմունքը, մեր երեսխայական միամտությունը և մի քանիսի նախանձը: Եթե հավանում ես առաջարկությունս, և եթե խոսասնում ես ամեն հնարի գործ դնել օգնելու լավ. թե չէ՝ ես միայն հանձն կառնում այդ ահագին բեռը վրաս, որին կամ տեղ կհասցնեմ, կամ կընկնեմ, կկորչեմ նորա ծանրությանը ներքո. բարեկամությունը նեղ դրություն մեջ է ճանաչվում:

Քու նամակները ինչպես միշտ նույնպես և այժմ իմ հոգով մեջ անմեկնելի մխիթարար զգացմունք թափեց, ոչ թե այն նյութական օգուտների հույսը, ո՛չ այլ այն մարդասիրական կարեկցությունը, որ ես վաղուց նկատում եմ քու մեջ դեպի ինձ. շնորհակալ եմ. սրտանց զգում եմ, ինչպես քու բնածին ազնիվ բարեւորությունը, այնպես և հազվագյուտ անկեղծությունը: Քու առաջարկությունը հանձն կառնում, եթե իմ անձնասիրությունը չի խայթվիլ նորանով. եթե օգնություն է, բարի է. եթե ողորմություն՝ ես մուրացկան չեմ, այլ միայն չքավոր: Եթե ես քեզ համար թանկ եմ, ուրեմն հուսով եմ, որ դու ինձ ամոթի մեջ չես ձգիլ: Թողնենք այս:

Քու իլյուզիաները արտաքո քու կարծյացը, ինձ խիստ սովորական և հնարավոր, և եթե կամենո՞ւմ ես — կարևոր երևացան. Գամառ-Քաթիպան պիտի լինի ճիշտ պարբերական. պիտի ունենա արդյունք. պիտի լինի պատճառ մեծ հետևանքներու. մեկ խոսքով մեր՝ (էն գիշերվա) խորհուրդը չի պիտի ունայն անցնի. ես ինչպես ասել եմ քեզ, պատրաստ եմ ամեն կերպ առաջարկություններուն, որոնց հետևանքը մեր ազգի օգուտը կլինի. մեղք է ասելը: որ իմ մեջ չի կա էներգիա. ուրեմն ամեն բանին ես ջերմությամբ ձեռնամուխ եմ լինում, և եթե թուլանում եմ ժամանակ առ ժամանակ, պատճառը, հավատացի՛ր, ես չեմ:

Ունիմ, ես էլ ունիմ պոռոժեկտներ, որոնք միայն իմ մեջ են: Որովհետև դու քուները ինձ հայտնեցիր, ես հանցանք կհամարեի իմերը քեզանից թաքցնել: Ապագա պլանները փոքր ինչ հետո կհայտնեմ. ավել մոտինը և ներկան ահա համառոտ կաշխատեմ հայտնել, մանավանդ քու աշխատությունների դիպվածով: Գամառ-Քաթիպան անպատճառ պիտի ունենա ուղղություն ներքին պարունակության կողմանն. նա պիտի լինի մեր օրերու, սեփական մեր կարծիքների և մեր նվիրական խորհուրդների արձագանքը. նորա կարողացողները թող չի գտնեն մեջը այնպիսի հատվածներ, որոնք կարող են պատճառ լինել հային անդորր կենցաղ սիրող լինել. թող չի անեն նոցա կրոնասեր քրիստոնյա, զավակասեր կամ բնառանձանք ծնող, այլ ամեն մի դորա մեջ պարունակած հողվածք թող կարողանա արծարծել նոցա սրտի մեջ, եթե ոչ ուղղակի կերպով հայրենասիրությունը, գոնե թո՛ղ հիշեցնեն սոցա նոցա կորց-

րած երջանկությունը. թո՛ղ [հայը] կամաց կամաց սովորի պաղարյուն նայել այն մահվան վրա, որ նա կարող է ստանալ զոհելով անձը ազգի ազատությունը. մեկ խոսքով այն ամեն զգացմունքները, որոնք խորը տպավորվել են մեր մեջ, որ մենք չենք համարձակում հրապարակավ քարոզել և որն որ հային ըստ մեծի մասին անհայտ է, թո՛ղ անզգա կերպով սերմանվի նոցա սրտի և հոգվո մեջ: Ուստի՝ մենք պիտի աշխատենք մուծանել Գամառ-Քաթիպայի մեջ վարք երևելի արանց՝ ինչպես որ էին Գուստավ Ադոլֆը, Վիլլգելմ Թելը, Բոցարիսը, Գիմիտրի Գոնսկոյը, Լեոնիդը և շատ ուրիշները, որոնք փառք են իրանց հայրենյաց: Ընդհակառակըն, եթե մենք կտեղավորենք այնպիսի շարադրություններ, ուրտեղ որ ապստամբությունը (ազգասիրական) համարվում է հանցանք, կսովորեցնենք հային խաղաղ, առտնին կյանք վայելել՝ այն ժամանակ ինչի՞ պիտի նմանին նոքա. ո՛չ ապաքեն այն ատելի հայերուն, որոնցմով առատ են, մանավանդ ներկա դարուս՝ Մուսկով, Պետերբուրգ, Ղզլար, Հաշտարխան: Իմ կարծիքով ավելի լավ է նկարագրել ապստամբ ավազակների կյանքը, զորօրինակ Պուգաչովի, Ստենկա-Ռազինի, Օտրեպիևի՝ քան թե գերմանական կյանքից առած մեղր ու կարագով ծեփած և սերով կոկած էռնեստներու, Վոլդեմառներու և Դյուվալյներու: Երգերս թող պարունակեն իրանց մեջ հուսահատություն, կասկածանք (սկեպտիցիզմ), կյանքից զզվումն՝ քան թե բնության և աստծո ողորմությունը, բարոյականության հաղթանակի: Թող հայ աղջիկը սիրե քաջություն, քան թե բարոյական առաքինություն, սև և խուճուճիկ մազեր, զգայուն հոգի, տափոտ (страстный) աչքեր, քան թե փայլուն ուսադիրներ, հարուստ կամ աստիճանավոր փեսա: Գիտեմ՝ մեզ կհայհոյեն, անբարոյական կանվանեն, խելացնոր կկարծեն. բայց մենք եթե չի հասնենք էլ մեր նպատակին, գոնե կմոտենանք, հնար չի կա, որ հետևողներ չունենանք: Տեսա՞ր, ուրեմն, իմ օղակառույց ամբողջները ավել խելացնոր են, քան թե քուները: Եթե երեք հոգի ինձ համաձայնել են, կարեկից են եղել կարողավ Ազգասերը, հայ և հայությունը, Արաքսի արտասուքը, Հայրենիքը, օրորոցի երգը Հայաստանի՝ ես կիսով չափ հասել եմ նպատակիս: Բայց քանի՞սը որդյոք կան, որոնք համարում են ինձ ապստամբ, ազատախոս, վնասակար, շառչատան, գուցե 1—1000, բայց ես չեմ վհատում: Այս է ներկա ժամանակուսու կատարելի պլաններս:

Ահա սիրական Գևորգ, մեր դուցազնի վարքի շարունակությունը ներքե, որ ես կանգնեցա իսկ այնտեղը, երբ որ դու թերևս սպասում էիր տեսնել նորան յուր բոլոր հասակովն հանդիսացած քու առջև. ավա՜ղ, դուցազունք տարիներով են աճում, սունկերն են միայն առավոտ բանում՝ իրիկունը՝ թառամում, որքնոտում, ուրեմն մի շտապեցնուր ինձ, որ իմ դուցազը կենդանի մարդ դուրս գա և ոչ անշունչ արձան: Մեկ նկատմունք ես քեզ անեմ, որ ապագայում ազատիմ մեզ այն հարցմունքներից, որ մարդիկ անշուշտ անելու են. իմ այս անգամովա գրվածքիս մեջ խիստ առատ են պարսկի և տաճկի բառերը. դու, իհարկե, իմ գիտավորությունը հասկանում ես. բայց մարդիկ չեն հասկանալ, և իհարկե, նոցա չհասկանալը՝ զենք պիտի տա մեր ոսոխներուն, ինչպե՞ս ես դու պաշտպանելու, արդարացնելու քու բարեկամին. էդ խո մեղալամ կբարկոծեն մեզի թե՛ մուլամիտ հայերը և թե սուտ ազգասերքը, թեև վերջինքը հասկանան ևս մեր խորհուրդը: Եղբայր սիրական, դու պիտի իմանաս, որ մեր Քոռոզուն կենդանի պատասխան է այն հաճախ կրկնված գանգատներուն; որ մենք անդադար լսում ենք կես գրագետ հայերու բերնեն, թե հայոց աշխարհիկ լեզվով անհնարին է որպես իցե վերացական միտք հայտնելու: Ես շատերուն երես առ երես աշխատել եմ հասկացնելու թե՛ երբ գաղափարը որոճած է մարդուս մտքումը՝ արտահայտելու համար պատեպատ ընկնելը ավելորդ է, ե՛թե միայն մենք ի մոտո գիտենք այն ազգի ոգին և լեզուն: Կես-գրագետները ինձ ասում էին՝ թե միակ հնարն է բառ առ բառ քարգմանել օտարի լեզվին և այդ օտարոտի դարձվածները աշխատել բռնաբար օտարականել տալ ժողովրդին. ես անհամաձայն էի այդ անհիմն կարծիքին, բայց և հնար չունեի նոցա կարծրացած ուղեղի մեջ հեղափոխություն անելու: Այդ և դորա նման խորհրդածությունց հետևանքը ելավ, որ ես հանձն առի գրելու Քյոռոզուն, որո լեզուն գիտությունը ընտրեցի ամենաաղճատածը, գրե՛թե նույնը, որ խոսում է հայոց ամենաստոր վիճակի մարդը: Ապագայումը կտեսնենք՝ մեր Քյոռոզուն կունենա՞ արդյոք իրավունք մեր սուրբ ուխտի ազնիվ ծնունդներեն մինը կոչվելու. կունենա՞ արդյոք իրավունք կարեկից սրտեր դեպ ինքը ձգելու. կապագուցանե՞ արդյոք մեր տխմար գրագետներուն, թե հառաջ քան թե գրիչը ձեռքդ առած

մտնում ես ազգի դպրության ասպարեզի մեջ՝ ունենաս պիտի անկեղծ սեր դեպ ազգդ և անանձնասեր գիտավորություն նորան բարոյապես օգտելու: Ես իմ վրա հույս չունեմ, ես գիտեմ որ քնտրած առարկայիս, և առավել լավ ասեմ՝ գիտավորությանս մեջ միայն բարի ցանկություն ունիմ, իսկ գիտությունը քեզնեն եմ ուզում սովորելու: Իհարկե, սիրական Գևորգ, եթե իմ հոգին որպես և իցե ազնիվ խորհուրդ ըմբռնում է, հանուն քու ազնիվ բարեկամությունը է իմ մեջ հյուրընկալություն գտնում: Եթե քու ջերմ հոգին շաղղեր իմ սառած հոգու վերա, կունենայի՞ արդյոք իրավունք ես երբ և իցե գրիչն առնուլ ձեռս, որ հայի, մեր սիրական հայի վրա կամ համար երկու տող բան գրելու: Այդ է ահա՛ պատճառը, որ ես ասում եմ մեր Քոռոզուն. և եթե երբ և իցե դու այլազգ կոչես, կնշանակե որ անխառն ես ինձ և ես իսկույն պիտի զգամ իմ թուլությունը՝ մենակ այդ ծանր բեռնը մինչև նպատակ հասցնելու:

Ռափայել

ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ՀԱՅՐ ԻՄ

Ժամը երեկոյան 6-ն էր, որ հասա Անի: Իջևանեցի լուսանկարիչ Քյուրքճյանի վրանումը, որ հարած էր ավերակ-մայրաքաղաքի քայքայված Կաթողիկե ասված եկեղեցվո աջակողմյան խորանումն (մատուռ): Այնքան դրապուրեն 4 ժամու ճանապարհ է կառքով և համարվում է 30—40 վերստ. ճիշտ չգիտեմ: Եկանք Անի հյուսիսային կողմից, անցանք գրեթե բոլոր ավերակների միջից, իսկ իմ կեցած եկեղեցին թափ ծայրումն է Ախուրյան ձորին, մոտից միջնաբերդից և, իմ կարծիքով, հայոց մեծամեծաց խորհրդարանից, իսկ այլոց կարծիքով, իբր թե տաճկաց մզկիթից: Ինչ և իցե, լույսը նվազելու վրա էր, ամեն բան երևում էր կիսաձև ու մառախլապատ: Մինչև շայ պատրաստեին, մինչև նեղ վրանի մեջ ինձ համար օթևան ու տեղ կպատրաստեին ժամը ութը-ինն եղավ. հյուրասեր Քյուրքճյանը, կարծելով, թե ես ճամփից հոգնած կլինեմ, համոզեց շուտ մտնեմ անկողին. ես այդպես էլ արի: Հետս եկող պարոն նաչատուրը շուտ խրխուաց, ես օրվա ծանր տպավորություններեն պաշարված քունս աչքես կորուցի, մնացի անքուն ուղիղ մինչև գիշերվա ժամը 11, պտուտ, պտուտ գալով անկողնիս մեջ, ինչպես որ սովորություն է ամեն մտատանջ մարդու: Փչեց հյուսիսի քամին, բայց ինչ քամի, նրան պատահողը միայն գի-

տե, խոսքով շատ դժվար է մեկնելը,— քամի, որ կանգնած մարդուն ոչ միայն գետին է գորում, այլ առնում առնում է ու ձորն է ձգում, քամի, որ վրաններու շվանները կարտում է և բարձրացնում է երկինք, քամի, որ արգիլել է արգավանդահող Շիրակին ունենալու անառանք ու պարտեզներ (Անիի շուրջը, որքան հեռագիտակն էր հասնում, ոչ մի թուփ չէի նկատում): Անգուռն առապատահան կաթողիկեի փուլ եկած և քանի քանի տեղեց ճաքճաք պատերեն քամին ներս էր մտնում ու գիշերային սոսկալի ժամերգություն էր անում արձագանքոտ տաճարի մեջ, մազս տիգ տիգ էր կանգնում, գլուխս ու բուր մարմինս փառ փառ էր լինում. թեև ոչ մահու երկյալուն: Դժվար է երևակայելը, բայց տեսնողը գիտե, որ ավերակը մարդու վրա քամանելի ազդեցություն է կատարում գիշերային խորհրդավոր ժամերումն, ուր մարդ, որ հասակին կուզե լինի, ինչպես դաստիարակված կուզե լինի, խելույն կենդանացնում է յուր մտքի մեջ այսերուն, շար ոգիներուն, թաղած մեռելներուն և տունի տերերուն: Անբնական բան է, որ մարդ, որ հազար դժվարությունք յուր համար շինում է մի աղքատին և խարխուլ խրճիթ և հանկարծ տեսնե նա ահագին քաղաք, մեջը լցրած հսկայաձև տաճարներով, հոյակապ պալատներով և բյուրեք բյուրեք մեծագին ջենքերով, չի սարսափի. ինչու՞ թողին ու փախան մարդեկ այսպիսի հարստությունից. մի՞թե մարդս հեշտ բաժանում է յուր պապերու սրբազան տեղերեն, յուր ծնած տեղեն, յուր դավաճանների օր ու արև սիրած առջևն: Այսօր լքած թողած քաղաքը, առեն ու տաճարը ամենի վրա, գիշերվա ժամին ահ ու սարսափ է բերում, բայց դարձյալ ասում եմ, մահվան երկյուղը չէ ինձ պաշարողը: Ծառարի ահագին բարձրությունից հանկարծ գոռաց բուն յուր տխրալի ու շարագուռակ ձայնով, որ խիստ հարմար էր քամիի ունենալուն ու տեղի մեռելանման լուսթյանը, և ահա, նույն հեռավոր գիտակից (որ կարծվում է տաճկի մինարե) պատառտանեց նրան ուրիշ բու... Լուսթյուն, բայց այնպիսի լուսթյուն, որից բուսի մեջ սպիտականում է մարդու գլխու մազերը... Հանկարծ մի փոքրիկ քար վայր ընկավ, նրա արձագանքը 5—6 անգամ կրկնվեցավ տաճարի մեջ. լուսթյուն, ահա հաշեց հեռուումը վայրի աղվեսը, բայց այնպիսի ողբալի, իբր թե վճուկներու մագիլներեն օգնություն է խնդրում: Քամին հանկարծ դադրեց փչելու, ափսո՞ս և իզո՞ւր, գունե գիտեի, որ քամին քամի է, մի սովորական երևույթ է, բայց նրա լուսթյան ժամանակ ավերակի կողմից ամառի ձորերի մեջեն,

քաղաքի փլատակների տակերեն սկսան լավել գիշերային անորոշ ձայներ, այն ձայներ, որ էական կյանքի մեջ, բնության մեջ, օր ցորեկով երբեք չեն լավում. այն ձայները, որն երբեք մարդիկ կարողացած չեն իմանալու, որի ձայնն են, և որին ժողովուրդը կոչել է գիշերվա արհավիրք: Ընկերս խրխում է, հյուրասեր տանուտերս նույնպես անուշ քուն է վայելում, ես մենակ քուն չեմ լինում. սոսկալի ահագին պատերը թեև աղոտ լուսավորված են լապտերի լուսեն, բայց ակնհայտնի երևում են ինձ, աչքս փակում եմ, կոպքիս մեջեն տեսնում եմ. ավելի տեսնում եմ, քան թե աչքս բաց ժամանակը... տեսնում եմ անձնավորված ամեն հայկական մոլուկությունք, որք կործանեցին ապառաժաշեն Անին: Անին շունի ոչ փայտ, ոչ աղյուս, ոչ գամ, Անին շինած է լոկ քարե, շինած է ապառաժյա վիմի, ինչպե՞ս քանդվեցավ, զարմանալի բան: Անհնար է այդպիսի հրաշակերտ շինելու հասարակ մահկանացվի ձեռքով, Անիի շինողք հսկաներ և դյուցազներ են եղել, բայց և քանդողք եղել են ոչ պակաս հսկաներ շարության և մոլության կողմանե: Հայոց շոր ու ցամաք պատմությունը ամենեկին արտահայտիչ չէ հայոց կյանքին ու մահուն. ես այս սոսկալի ժամուն հոգիով և երևակայությունք ըմբռնեցի այն ամեն գաղտնին, որ վարդապետների գրիչը երբեք հասկացնել չէր ինձ: Ես հասկացա շատ բան. այս քարերեն ես ավել բան հասկացա, քան թե մեր բազմահատոր գրքերեն: Ժամը 2-ն է գիշերվա, քունս չի տանում: Չայները շատացան, քամին ու բուերը ոռնում են, կարծես թե Քուղրիլը, Արփ-Ասլանը, Չարմաղանը ու Մասիսի գետնաշարժը նորից պիտի ցույց տան խեղճ Անիին իրանց կատաղի բնավորությունը: Ողջ լերուք և աղոթեցեք Ձեր Ռափայելի ողջության համար:

Հոկտեմբեր 1, 1879 թ. Անի կաթողիկեի ավերակների մեջ,
ժամը 12-ին գիշերվա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԲՈՓՉՅԱՆ 3

ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈՅՄՆԵՐ

Զարմայր նահապետի մահը	21
Շինականի առավոտյան երգը	26
Շինականի երկույան երգը	27
Օրորոցի երգ գյուղական այրի կնոջ	28
Ունայնության վրա	30
Գանգատ բաղզնե	30
Իմ քնարին	32
Իմ երգը	32
Երկու քույր	33
Օրորոցի երգ	35
Աղեն տա՛նն է	36
Հայ և հայություն	37
Արաքսի արտասուքը	40
Նկարիչ	43
Հայ աղջիկ	44
Քյոո-Օղլու	45
Անվնաս մարդ	50
Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ	52
Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ	54
Բարի խրատ	55
Վարդը բացվել ա	56
Բռնի պսակ	58
Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը	60
Աղասու մոր երգը	79
Դե մրուս	80
Հայ պատաճին երգում է	83
Երգ	86
Տաճկի բանտ	87
Մշեցու Նեկեկանքը	88
Վանեցի մոր երգը	89
Վանեցի գեղղուկի տաղը	89
Բողոք առ Նվյուզա	90

Հայերու թուքը	92
Նոր տարի	94
Հայերու բաղձանքը	95
Հայի վիշտը	95
Ազգասեր	97
Քայանած գեղ	99
Մեծ	100
Հ ու յ ս	102
Ա մ ի ր ա	102
Օրորոցի երգ	105
Տաճկահայերի օրհաս	106
Մի՛ կարծեք որ ես	107
Գ. Սունդուկյանին	107
Նոր-Նախիջևանի բնար	108
Աղային սյուրեթը	110
Կ ո լ ո վ ա	110
Մանկական բանաստեղծություններ	111
Նոր տարի	111
Զ մ ե ո	111
Գ ա թ ու ն	112
Ա ն ձ ը	112
Միծեռնիկ	112
Զ յ ու ն	113
Պատուհեք	113
Գ ա ո ն ու կ	113
Խեչոք երեխա	114
Ա շ ու ն	114
Վարժատուն	114
Կ ա տ ու	115
Բ ա դ ի կ	116
Գ ա թ ու ն	116
Ա թ կ	116
Մ ու յ լ	117
Զ յ ու ն	117
Մանիշակ	117
Տխուր երեխա	118
Ժրաշան տղա	118
Վանիշկա	118
Արձակ երկեր	120
Ծա նշանած էի	190
Փառասեր	231
Տիկին և նաժիշտ	298
Մոնթենի մինչև վեր	316
Բոմաս Բոցարիս	316

Նոր-Նախիջևանի պատմվածներ

Չ ա խ ու	323
Պոց ազգար	350
Տիրացինս	390
Կյւղզաղե	406
Վարթեվոր	425
Պ ա պ ի	440
Պողանի Կալուստ	455
Նորընծա	472
Վարժապետ	483
Խենթոր ծախող Ասվատուրը	493
Ջերտալու	504
Ինչ պատճառով են Արիմի մեջ բաղչաներ առաջ եկել	510
Չոր	514
Փլենա փաշա	521
Նոր տուն և Հին տուն	526
Փռատխին Ավագը	542
Բալական մեռելներ	555
Բարեկարգեր	565
SERMO	583
Պաղարի կալանի	585
Էրեան	589
Քաղկեդոն	594

ՀՈՒՎԱԾՆԵՐ, ՀՈՒՇՆԵՐ, ՃԱՌԵՐ ԵՎ
ՆԱՄԱԿՆԵՐ

Աշխարհաբար լեզու	598
Մանկական հիշողութիւններ Պ. Մ. Էմիլիի մասին	605
Մանկական պարտեզ	615
Մանկական պարտեզ և տարրական դպրոց	
Նոր-Նախիջևանի մեջ	618
Պարոն Երիտասարդներ	619
Արվեստական դպրոց Նոր-Նախիջևանի մեջ	625
Մեծապատիվ պարոններ	631
Արվեստական դպրոց	635
Մեծապատիվ պարոն ձայնավորներ Նոր-Նախիջևանս բաղաբական խորհրդարանի	636
Պարոն Երիտասարդներ	639
Մեծապատիվ տիկիներ և պարոններ	642
Քոլոր իմ հանցանքը	645
Հայտարարութիւն	647
Հոգեհարազատ եղբայր Քանանյան	649
Ազնվահոգի բարեկամ Քանանյան	652
Միքրեկան Գևորգ	656
Ամենասիրելի հայր իմ	657

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

Երկեր

РАФАЭЛ ПАТКАНЯН

Сочинения

(На армянском языке)

Издательство «Советакан грох»,

Ерван—1980

Կազմող՝ Խ. Մ. Մուրադյան
 Խմբագիր՝ Ս. Գ. Սահակյան
 Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
 Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
 Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
 Վերատպող արքայգրիչ՝ Կ. Ա. Շաղբարյան

ИБ—3342

Հանձնված է շարվածքի 20.10.79 թ.: Ստորագրված է տպագրության
29.10.80 թ.: Յորմատ. 60 × 84¹/₁₆: Քուղթ՝ տպագրական № 1: Տառատեսակ՝
«Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 32,3 հրատ. մամ., 38,59 պլամ. տպ.
մամ.: Պատվեր՝ 984: Գինը 3 ռ. 40 կ.: Տպաքանակ 51000:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երե-
վան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Меганарта Госкомитета по делам изда-
тельств, полиграфии и книжной торговли, Арм. ССР. Ереван-9, ул. Теря-
на, 91.